Ի ԳՐԱՑ
ՀԱՄԱՐԱՆԻՍ-ԼՅՄԻՆԹՆԻ
Թ.

ՍՏՈՒԳՎԱԾ Է
1952 թ.

305

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՆԱԽՆԱՑ

ՆԵՐԱԼԱՄԱՐՈՒԹԻՒՆ

28(Գ)
Հ-63

ՍՐՄՈՑՆ ՆԵՐՍԵՍԻ

Լ Ա Մ Ա Ր Ո Ն Ա Ց Ի Ո Ց

ՏԱԲՄԱՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ


Ի ԿԱԲՊՈՍ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՔՒ
ՀՀԱ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ԽՈՐՀՐԴՈՑ ՊԱՏՄԱՐԳԻՆ

2007
Հ
901



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՍ

ԹՄՂԶ—1847



1429

ՅԻՇԵՑԱԿ

ՄԵՂՅԱԼԻ

ՏՈՀՄԻԿ



4530

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Զի թէ ինչ ոք ի պարս վերջնոցն հարց մերոյս մանրենագրութեան որ հանգուցանտիպ մեծի Խորենացւոյն փառս յաձախիցէ ազգիս իւրումն հանձարով, և սեպհական ասացուածոյն ոճիւ, և լուսաւոր վարդապետութեամբն, և խոհական աշխուժիւք, և զուարթադէմ ազգասիրութեամբ, և ազդոյ պերձախօսութեամբ և այլովք բազմապատիկ բարեմասնութեամբք, ասացքէն սուրբն Ներսէս և Ամբրոնացին արքեպիսկոպոս Տարսոնի։ Ուշադիր չնմարիտ է բանս և անյերկուանալի, ըստ նմին և խոստովանեալ է յընտրողացն և յանահնառու քննաբանից, զի ընտրելագոյն ի վաստակս երանելոյս՝ յետ Ճառիցն հռետորականաց կամ թէ զոյգ իսկ նոցին և հաւասար՝ դրուատից և զարմանալոց արժանի մատեանս այս է բացատրութեան խորհրդոյ սրբոյ պատարագին։ Վասնզի ի սմա աստուածային հոգի նորա և եռանդն ամենայն ուրեք փայլէ. ի սմա բազում ուրեք և բնիկն Ճարտասանութիւն ինքնագարդ գեղովն պերձանայ. ի սմա և դիւրիմաց պարզութիւն ընդ նախնի հայկազեանս վեհ բարբառոյ գեղեցկապէս զօդեալ։

Ի դէպ էր մեզ արդեօք առաւել քան զամենայն զկարևորութենէ մատենիս՝ ըստ առաջարկութեան բացատրելոյ իրացն՝ երկարաբանել աստանօր. քանզի ամենայն ոք որ վեհագոյն ի սուրբ խորհուրդս եկեղեցւոյ դասանէ զխորհուրդ սրբոյ պատարագին՝ պարտի զիմաստս աղօթիցն հետազօտել և կրկտել ի բա-

ցաստուԹիւնս սրբոց Հարց, որոց միայն է զբնիկ իմաստ ուսած այնոցիկ քօղափնդրեալ Հոլանել։ Ա՛նաւանդ զի և այլ ինչ առաւելագոյն կարևորուԹիւն է գրոցս՝ պատկանաւոր Թշուառ ժամանակիս, յորում՝ ազանդաւորք ունիք առ՛ի լուծն աղետից ազգիս՝ ի նեղըս սպըղդեալք՝ զսրբոց և վեհական և ահաւոր խորհրդոյս ուրանան զէուԹիւն, և յօրինակ ինձ առաստաբերակիր զայն նուաստացուցանեն։ Ա՛կայն մեր այլում Թողեալ պատճի զբացատրուԹիւն իրացս և զՀոխաբար խորհրդածուԹիւնս զվարդապետուԹեանց երանելւոյս, զայն միայն յուշ արասցուք աստէն մերոցս ընԹերցասիրաց, եԹէ զիարդ և ընդդէմ օտարածին աղանդաստարաց մերոյ ժամանակիս կանխատես ինձ Հոգւով սպառազինեալ երանելիս, զիսկապէս փոխարկուԹիւն զգոյացուԹեան Հացին և գինւոյ՝ ի Ջնմարիտ մարմին և յարիւն փրկչին այնպէս՝ ի նախաշաւիղ պատրաստուԹենէ արարողուԹեանցն և բանից, և՝ ի Հետևորդ պաշտամանցն և յաղօԹից՝ ի յայտ ածէ, զի մարԹէր այսմ ևԹէ մատենի ընդդէմ զրահեղեղ ուղիւից մոլորուԹեան յազգի մերում Թումբ և ամբարտակ կանգնել։

Հանդերձ սոքիմբք զիարդ գեղեցկապէս և քանի իրաւամբք յանդիմանէ՝ ի մատենի սատ և զայնոսիկ, որք զիմաստս ինչ աղօԹից քահանային և զպաշտօնէից կամակորեն, և ոչ ըստ սրբոյ եկեղեցւոյ վարդապետուԹեան կամին իմանալ զայնոսիկ կամ մեկնաբանել. զորս՝ ի գէպ է այսր խակ հրաւիրել առ ոտս բնիկ վարժապետի, որպէս զի ուսցին մի զՀարցն իւրեանց զվարդապետուԹիւն տգիտաբար կամակորել, և մի դարձեալ զօտարացն պարտաւել զուղղափառ իմացուած և զդաւանուԹիւն, և իբրև՝ ի մոլորելոց ոմանց ուծանալ՝ ի նոցանէ։

Ո՛չ այլոց դրաւոր երկասիրուԹեանց սրբոյ Հայրապետիս ծանօԹուԹեամբք, որպէս և զՀոխագոյն պատմուԹեամբ չնարհաղարդ վարուց նորա զանց արարեալ,

Համառօտ յիշատակութեամբ ևեթ անցից կենացն շատացուք առ տեղեաւս։

Ընտաւ Աբրահս յամին 1153. և էր հայր նորա (Ա)շին իշխան Լամբրոնի, յորմէ Աբրահս զմեկանունն կալաւ Լամբրոնացի։ Մայր նորա Շահանդուխտ Պահլաւունի, դուստր եղբօր Շնորհալւոյն, յարգանդէ նուիրեաց զնա Աստուծոյ. այլ յետ ծննդեանն ստրջացեալ՝ մինչդեռ տատանէրն ի խորհուրդս իւր, անկաւ մանուկն ի վտանգ մահու. յայնժամ վերստին մայրն բարեպաշտոն հաստատեալ զուխտ իւր, յառողջանալ մանկանն ընծայեաց զնա ի վանս Կևռայ, ուր և զարգացաւ նա՝ հրաժարեալ յաւագութեանց յորս ինքնակալն Մանուէլ հրաւիրէր զնա։ Այլ յառաջադէմ լեալ ի գիտութիւնս, ուսաւ նա և զյոյն և զլատին և զեգիպտական դպրութիւնս։

Ձեռնադրեցաւ նա յուխտատեղեաւն քահանայ ի հօրեղբօրէ մօր իւրոյ ի Շնորհալւոյն. և ի յաջորդել նորա ի Կղիմոզ Ձղայոյ ձեռնադրեցաւ արքեպիսկոպոս Ցարսոնի ի տիս քառնեւերից ամաց։ Այլ ի յաջորդ ամի, ըստ իւղրոյ միանձանց՝ առ որս երթեալ ստէպ և առանձնացեալ Ներսէս, ձեռն էարկ ի վաստակս յայս մեկնութեան սրբոյ պատարագին, որ նախընծայ եղեւ խայրիք են երկասիրութեանց երանելւոյս։ Ոմանն որոյ և ինքն իսկ ի մատենի սոցա առ միանձունսն բարբառելով ասէ. "Զայնեմ զիջանել առ իմ տկարութիւն և մանկական խնամոց, որ ի սիրոյ ամենեցուն եկի յայս յանդգնութիւն՝ ծերունեացն և կատարելոցն հասանել ուսուցիչ լինել"։

Ի դիմել խաչակրաց լատին զօրաց ընդ Փրեդերիկեայ արևմտեան կայսեր յարևելս, և յառնուլ զԱնտիոքն քաղաք փոքուն Սիսոյ, Լևոն Ա իշխան Հայոց յղեաց զերաձնելին առ Փրիդոր կաթողիկոս, հրաւիրել զնա առ ինքն՝ առ ի գնալ ի միասին ընդ առաջ կայսեր։ Այլ ըզնա նապարհայն սպանին աւազակք զուղեկիցս նորա, և

զկահս նորա յափշտակեցին, ընդ որս և զմատեան մեկնութեան սրբոյ պատարագին. ընդ որ յոյժ տրտմեցաւ երանելին, զի չունէր զնաւատար նորա։ Այլ յետ ամաց իրը երկուց գտաւ այն՝ի Ջահան գաւառի առ ուխտին՝ի Մերաշնեայց. և՝ի ձեռն եպիսկոպոսի տեղւոյն գնեալ զայն երանելւոյն, "եղև վշտացնեալ հոգւոյ նորա սփոփանք մեծ և միխիթարութիւն,,, որպէս ինքն իսկ զայս այսպէս գրէ։

Ալ ախձան երանելւոյս, վաղահաս վասն վշտակրութեանցն առ՝ի յոսոխաց ճշմարտութեան՝ի Հաղբատացւոց և՝ի Զորագետացւոց, եղև յամին 1198 ՚ի հասակի քառասուն և հինգ ամաց։

Համեմատութեամբ երից ձեռագիր օրինակաց զառաջինսդ յերիւրեցաք զտպագիրս. առաջինն բոլորագիրս գրեալ յամին ՉԾԵ (1306) ՚ի Զորոյ վանս Կարմիրջոյ. երկրորդն և այս բոլորագիրս գրեալ յամին ՉՁԱ (1332) ՚ի վանս Կուքոյ. երրորդն նոտրագիրս գրեալ ձեռամբ երանելւոյ տեառն Կոմիտասայ քահանայի։ Հանդերձ այսու ամենայնիւ խոստովանիմք, զի առ վրիպակագիրս թերութեանց երեցունցս և օրինակաց՝ կարօտի մատեանս ուղղագրութեան ուրեք ուրեք ըստ հայեցողական օրինակաց, որ գտանին աներկբայապէս յաղգի մերում, և որոց ստացօղք մարթեն ջնորհապարտ իւրեանց զազգն կացուցանել՝ եթէ ոչ զայնոսիկ անպատուս ունիցին՚ի պահեստի։

Ո՛չ խորհրդատեաւր սրբոյ պատարագին որպէս և էրն՚ի գրչագրին անփոփոխ կալաք՚ի կարգին. ոչ օրէնս իմն և կանոն աւանդել զայն կամելով, այլ զայն այնպէս կալեալ իւր բնաբան մեկնիչն և ըստ այնմ առնոյր բացատրել։

ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

Խորհրդածութիւն վասն ուղղափառ հաւատոյ եկեղեցւոյ, որ ի սուրբ Երրորդութիւն և ի անօրէնութիւնն Քրիստոսի . 1

Ի խնդրոյ հայցման երիցակից եղբարց քննութիւն կարգաց եկեղեցւոյ, և բացատրական որոշումն արտաքուստ մատչել ի սա նորաձեւութեանց 21

Դարձեալ վերստին խորութիւն նորաձեւութեանց որ մերն յեկեղեցի, և քննութիւն պատուոյ և աշխատանաց զորութիւն ի սմա վիճակելոցն պարզաբար, ընդ որս և ընդդիմադրութիւն . 41

Քննութիւն օրինակաց, հաստատութիւն հարցն առանդութեանց որք սահմանեցին յառիւծոյն տեղիս քրիստոնէից նստել եպիսկոպոսի ի քաղաքս, և ոչ եթէ ի վանս. ընդ որս և պատասխանի ընդդիմադրութեանց պատասխանի 54

Որոշումն ինն գաւազ աստիճանաց եկեղեցւոյ և յատկութիւն գործառնութեանց նոցա և զգեստուցն. ընդ որս և ընդդիմադրութիւն այսոցիկ խորհրդոց ունայնացուցանողաց . . 80

Ընդդէմ յաղթոյ և ոչ ի կաւազ զգեստ քահանայական . . . 92

Խնամառնախրութեամբ բացայայտութիւն առաւելածայնին խորհրդոյ պատարագին, և առ ունայնացուցչան զնոյն՝ ընդդիմադրութիւն 93

Ընախօսութեամբ քննութիւն յաղագս զորութեան ազգին, և հաստատութիւն թէ պատ է նեղրգործութեամբ մատաղ ի նոյն կանխել 109

Ցինչ նշանակէ անուանեալն զաւազ Աստուծոյ եկեղեցի . . . 120

Ցինչ նշանակէ իգական անուամբ զեկեղեցիս կոչել և հարան անուանել, իսկ զԲրիստոս փեսայ. քանզի առաքեալ ասէ . 121

Ո՞րպէս և այլ ազգաւ մերս եկեղեցի անուանի գուստր վերին Սիոնի և Երուսաղէմի 123

Թէ պատ է հաւատալ զեկեղեցի Աստուծոյ երկին յերկրի . 125

Ցի յորժամ մատանեմք ի տաճարս սուրբ, պատ է հաւատալ անընդմիջապար զմիշ առաջի Աստուծոյ, որպէս և հրեշտակք . 126

Ցինչ նշանակէ ձեւ եկեղեցականաց սրբոյ տաճարի եկեղեցւոյ, զի անջրպետեալ է խորանն ի հաստարակաց խմբապարանէ տաճարին . 128

Ցինչ նշանակէ և սեղանն սուրբ . . . . . —

Ցինչ նշանակէ զգեստ կերպասեայն զոր ի վերայ սրբոյ սեղանոյս սփռեմք 130

Ջինչ նշանակէն առաքեանք աեծուցն չուրջ զպրոմ սեզանոցն
ի միմեանց որոշեալ, ի վերայ որոյ քահանայական աեծու
հատատեալ . . . . . —
Ջինչ յայտ առնեն լուացմունք ջահիցն և լապտերացն և բու
բասն խնկոցն ի սուրբ եկեղեցիս 131
Դատակարգութիւնք եկեղեցւոյ համառիպ երկնաւորացն կար
գաց 133
Ջինչ բացայայտ անուն էրէց կոչել զվերակացուս ժողովրդոց
եպիսկոպոս և քահանայ 135
Ընդէր քահանայ անուանին երիցունք . . . . . —
Ջինչ զօրութիւն եպիսկոպոսին անուն ցուցանէ 136
Ջինչ է սիրապէս քահանայագործութիւն սոցա 137
Յորմէհետէ հատակաց իրաւացի է առնուլ զանազան աստի
ճանան 139
Որո՞վ որոշեալ ճանաչին եկեղեցի այսօրիկ գոյք 140
Ջինչ նշանակէ բացաւ գլխով կալ սոցա ի սան Աստուծոյ ի
ժամ ազօթիցն ի խորհրդական սեղանոջ, քննելի է զասոյդն . 141
Ջինչ են և որպէս այլ մարմնոյ զգեստք որով պատճառեալ բա
ցագլուխ վերնհրդական պաշտօնն կատարեն ժառանգաւորք
եկեղեցւոյ 145
Ջինչ նշանակէ անուանել զսուրբ զպատարագն խորհուրդ . 153
Ջինչ յայտ առնէ անուանելն զայս խորհուրդ պատարագ . . 155
Ջինչ ցուցանէ զպատարագս անուանել գոհութիւն . . . 156
Ջգոհութիւնս հաղորդութիւն առ ինչ հայի անուանելն . . 157
Որպէս պարտիմք հաւատալ թէ Ճշմարտապէս Քրիստոս է սա
առ որ հաղորդեցաքս, և մարմին Քրիստոսի և ոչ օրինակ մար
մնոյն Քրիստոսի 158
Որպէս կարասցուք հաւատալ թէ յամենայն սիրելեցսդ եկեղե
ցիս զնացագն ազգայ մի Քրիստոս է և մի մարմին Քրիստոսի
պատարագի 162
Եթէ պարտ է հաւատալ ի ձեռն անարժան քահանայի զպատա
րագն կատարեալ, որպէս զսրբոցն 165
Որքան շնորհ է ի պատարագին ի բացուստ սեռութիւնսն ա
նանց Ճաշակման 167
Որասի՞ եմուտ այս սովորութիւն զկիշատակ մեռելոցն ի պատա
րագն խնդրել և էր վասն 168
Խորհրդաժողութիւն ի նոյն և վասն նորին 171
Բազդատութիւն առ միմեանս սահմանադրութեանց եկեղեցւոյ
քրիստոնէից, Հռոմոց Փռանկաց և Հայոց, և առ մի դիտա
ւորութիւն ցուցակ նոցին աւարտման 180
Օրինք արկանելոյ ազատ եկեղեցւոյ 193
Խրատ և սահման վերոյ գրեալ գործոյս բարեաւ ազատուս . . 227
Սրբոյն Դիոնեսիոսի յաղագս եկեղեցական աւանդութեան և
գիտութեան նոցին 229
Ջինչ յայտ առնէ քահանայիցն հանդերձ սարկաւագօքն յա
ւուրս պատարագելոյ 237
Մեկնութիւն սպասուն որ նախ քան զգեստն . . . . . —
Ջինչ քարոզութիւն սարկաւագին յետ այսորիկ 244
Մեկնութիւն քահանայական ազօթիցն 245
Ջինչ յայտ առնէ յետ զգեստից առ Հոգին սուրբ ազօթելն . 248
Մեկնութիւն ազօթիցն որ առ սուրբ Հոգին ասէ քահանայն . 250

Ջինչ նշանակէ զառաջադրութիւն նուիրացն յիշատակ կոչել Վրիսաոսի 260
Մեկնութիւն ապօթիցն զոր քահանայն ասէ յընծայարան սեղանոյն 261
Ընդէր սարկաւագն ծածկէ զսպասն և նա բերէ ի սեղանն, և նոյն դարձեալ բանայ յետ կատարմանն և մատրէ 263
Ջինչ է խնկելն զընծայսն, և մեկնութիւն նորին ապօթիցն . . 264
Ջինչ նշանակէ քահանային նոյն և քահանայապետին շուրջ գալն խնկարկութեամբ զամենեքումբք և դարձեալ ի բեմն ի սուրբ գառնալ և մատնել ի խորանն 265
Ջինչ սարկաւագին առ քահանայն ձայնելն որպէս զի օրհնեացէ զակիզբն ապօթիցն 267
Ընդէր ի միասին սկսանին սարկաւագն ի մէջ եկեղեցւոյն զքառոզելն և զոյգ նմին քահանայն ի խորանն սուրբ զաղօթելն . 268
Մեկնութիւն քարոզութեան սարկաւագին 269
Ընդէր քահանայն ծածուկ խորհրդաբար ասէ զաղօթս . . . 280
Մեկնութիւն առաջին ապօթիցն 282
Ջինչ նշանակէ առաքնոցն քաղբրաձայնութիւնք, նոյն և ընթերցուածքն յետ այնորիկ 283
Մեկնութիւն առաքնոյ առաքնոցն 285
Մեկնութիւն ապօթիցն որ յետ առաջին առաքնոցն ասի . . . 295
Մեկնութիւն երկրորդ առաքնոյ երգոյն որ յետ առաջնոյն . 296
Մեկնութիւն երրորդ ապօթիցն 302
Մեկնութիւն երրորդ առաքնոյն որ ի ծանն երգի 303
Ընդէր քահանայապետն յետոյ գայ ի մէջ ժողովրդեանն, կամ զինչ նշանակէ նորա ի գրուանն կանդնել ի յետին աեղին և ապա ի խորանն սուրբ մատնել և յառաջին աեղոյն բազմել . 309
Ջինչ արբեբգենութիւնն յետ մատնելոյ ի խորանն 312
Մեկնութիւն սրովբէատացութեանն ապօթիցն 314
Ջինչ նշանակէ յետ այսորիկ ի քահանայապետական աեղոյն զետեղումն աեւտարանին 316
Ջինչ նշանակէ միայնակ ասել առաքնոցին զմեսեդի առաքելոյն և զալելուն աեւտարանին 317
Ո՛ր վասն առաւաձայնոյ գրոյ վերծանութիւնք 318
Ընդէր նախ քան զաեւտարանն քահանայն խաղաղութիւն ասէ ժողովրդեան ի նեբբառս ի բեմն . . . . . —
Ջինչ ուսանիմք ի սրբոյ աեւտարանի ընթեռնուլն 319
Ջինչ և այլ ազգաց քրիստոնէից սովորութիւն յետ աեւտարանին . . . . . —
Ընդէր քահանայապետն յետ աեւտարանին հանգերձեալ իջանէ յաթոռոյն առաջի սրբոյ սեղանոյն, նախ ի բաց հանէ զպատառուհան եմիփոռնն և ապա եկեալ ապօթէ զիսորհուրդ պատարագին 324
Մեկնութիւն ապօթիցն զոր առաջի սրբոյ սեղանոյն ասէ . . 325
Ընդէր զաւորութիւն եկեղեցւոյ ասա միայն բանիւ պահեմք ասելով, մի ոք յերախայից, և ոչ զոք արտաքս առաքեմք յետ այնր ի սահմանս սրբոյ յանապատին 328
Ջինչ յայս առնէ այժմ վերսրբէրել սարկաւագացն յընծայանոց սեղանոյն զնուէրս պատարագին ի սեղանն սուրբ . . . 329
Մեկնութիւն երգոյն զոր գոչեցն այժմ եղանակեն 331
Մեկնութիւն ապօթիցն զոր այժմ խոնարհեալ ասէ քահանայն . 332

Ջ ինչ կէտ այսորիկ լուանալ զձեռն առաջի սրբոյ սեղանոյն ազգէ խորհուրդն, ի Վիճնեափոսէ 338
Ընդէր այսուհետև ոչ Հայր մատչի աղօթիւքն Եւտականապէս և ոչ առ Որդի կամ առ Հոգի 340
Մեկնութիւն առաջին աղօթից պատարագին Ս Ղեանասի . . 347
Ջ ինչ սարկաւագին կէտ այսորիկ հրաման առ ողջունիցն և ողջունելն զիմեանս 353
Ջ ինչ գրանցն կէտ ողջունին հրաման տալն առելով զգրուանս ի մատուռն Ձեամբ և զդուշութեամբ . . . . . —
Ընդէր հաւատոյն դաշն կէտ այսորիկ երգի ի կենդանացոյն . . 354
Ջ ինչ զդուշութեամբ կալոյ վերատայնութիւն սարկաւագին, այսինքն բարիոք 355
Ջ ինչ գարձեալ յաւելուած ազգօգտական հրամանի սարկաւագին 357
Ընդէր այժմ քահանայն գառնայ և շնորհս բաշխէ ժողովրդեան . 358
Ջ ինչ կէտ այսորիկ գարձեալ զդուշական հրամանն ի սարկաւագին առ ժողովուրդն 360
Ջ ինչ հրամանն գարձեալ գոհանալոյ զաւետեաց բոլորով սրտիւ . 361
Մեկնութիւն խորհրդական աղօթիցն զոր ասէ քահանայն . . 363
Ընդէր այժմ զբովէական երգն աղաղակէ ելեղեցի . . . 366
Մեկնութիւն քահանայական աղօթից 367
Ընդէր այժմ ապա ժողովուրդն գոհանայն ողբ նախ ապրժան զնոյն գառեցան 384
Մեկնութիւն խորհրդական աղօթիցն զոր այժմ ասէ քահանայն . 385
Մեկնութիւն աղօթից զոր խոնարհ քահանայն և ասէ . . 388
Ընդէր այսուհետև ոչ բանական պատարագ, այլ էրևելի նուիրեալ ազաչէ 397
Մեկնութիւն խորհրդական աղօթիցն 402
Ջ ինչ կայտ առնէ այժմ զբերանն անուանդ դիշեսական առընթեր սեղանոյն վերատառել սարկաւագին ի լուր ժողովրդեանն . 417
Մեկնութիւն քահանայական աղօթից զոր ընդ այսր մատուցանէ խորհրդաբար 421
Ընդէր կէտ այսորիկ գարձեալ քարոզութեան սարկաւագին ևհաս ժամանակ 445
Մեկնութիւն խորհրդական աղօթիցն զոր ընդ քարոզութեանն քահանայն մատուցանէ 446
Ընդէր ապա ժողովուրդս զաւետեանական աղօթս Հօր նուիրեն . 449
Մեկնութիւն աւետեանական աղօթից զոր ազօթէն ժողովուրդքն . 451
Ընդէր զատարատեն աւետեանական աղօթիցս քահանայն ասէ, և ոչ ժողովուրդն որք աղօթեցին 465
Ո՞րպէս էառ առ Հայր աղօթեալս զվախճան 468
Ընդէր այժմ խոնարհեալ քահանայն աղօթէ առ Հոգին սուրբ, և ամենայն ժողովուրդն ընդ նմին հրամանաւ սարկաւագին . 469
Մեկնութիւն աղօթից որով խոնարհեալ քահանայքն ընդ սրբոյ Հոգւոյն խոսակցի 471
Ջ ինչ և կէտ այսր ձայնել սարկաւագին պատսխանէն, և որ կէտ այնորիկ կասարի 473
Մեկնութիւն աղօթից զոր կէտ այսր խոնարհի քահանայն և առ Ք բիսառս ասէ 478
Ընդէր կէտ աղօթից երկրպագեալ համբուրէ զսեղանն . . 479
Ջ ինչ նշանակէ կէտ այսր կրկին գարձեալ քահանային բարձրա-

ցուցանել զեկեղեցական մարմինն ի աւազութիւն եկեղեցւոյն . 480
Ջինչ սարկաւագին այսուհետև գպրացն դասու հրամանատարութիւն 482
Մեկնութիւն երդոյն որով գովքըն պաշտեն 483
Ընդէր կամ ո՞յր աղագաւ սարկաւագն այժմ զժողովուրդն յառաջ կոչէ ի հաղորդութիւն 486
Արդ՝ յօրն մերոյ Յոհաննու Ոսկեբերանի յԵփեսացւոց գրոցն խրատ յորդորական վասն զգուշաբար հաղորդութեան, զոր կարեւոր համարեցայ առ դնել և փոքր փոքր զբօսութիւն առաջելոցս յայտնել 487
Ջինչ ծանեաք զփառանգաց առնօրութիւն ի հաղորդութիւն խորհրդոյս 497
Ընդէր յետ Ճաշակմանն սարկաւագն ժողովրդեան գոհանալ հրամայէ, և քահանայն ծածուկ աղօթիւքն գոհանայ . . 499
Մեկնութիւն քահանայական աղօթից գոհութեան . . . . —
Ընդէր գաբռնեալ քահանայապետն զգեցեալ զեմփորոնն պատոյ ի մէջ եկեղեցւոյն իջեալ աղօթէ 501
Մեկնութիւն բարձրաձայն աղօթիցն օրհնութեան, զոր իջեալ ի գրունս եկեղեցւոյն օրհնէ քահանայն 502
Ջինչ այժմ եկեղեցւոյն ասել, եղելի անուն առաւն օրհնեալ յայտ հետէ մինչև յաւիտեան 504
Մեկնութիւն աղօթիցն զոր ի վերայ ժողովրդեանն ասէ քահանայն 505
Ջինչ նշանակէ այժմ բաշխել նշխար ժողովրդեանն 506
Մեկնութիւն սաղմոսի օրհնութեան զոր այժմ ի բաշխելն ասեն . —
— Հալոցաքննութիւն առ օրէնս Քրիստոսի, և հաստատութիւն թէ ոչ է պարտ զմեծաւակ եկեղեցական ասութեանն ձգել ընդ մարձական առհասարակ 517
— Վերամին հաստատութիւն ոչ ժառանգեցուցանելոյ ազգատոհմի զառաջնորդական պատիւ ի պատուհասենէ հարցն մերոց . 532
— Ի նոյն խորհուրդ գարձեալ, յորում թէ և զմեր ազգս ունիմք իշխանութիւն գաւակ և ոչ զայլս 544
Ցիշատակարան 556

ՆԱՀԱՊԱՏԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՏՐԴՈՄԱՆ ԿԻՒ ԿԱՆԽՅՈՒՑ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ՎՃԱՌ ՈՒՂՂՈՒԹԱՆ ՀԱՒԱՏՈՑ
ԵԿԵՂԵՑԻՈՑ, ՈՐ Ի ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵԻ Ի
ՏՆՕՐԻՆԱՒԹԻՒՆՄԷ ՔՐԻՍՏՈՍԻ

եանիցէ յերկինս , կամ ոմն ի քէնանիցէ յանդունդս խա-
նալ զԱստուած ,, : Աւրպէս ասէ Պօսկս , "Երջ է
բան գիտութեան նորա՝ի սիրտս մեր և յանձինս ,, , որ-
պէս նկարագիր կենդանւոյն՝ի կենդանագիրն . և գի-
տեմք պատկեր Աստուծոյ զիմանալի բանականս հոգի
և զանձնիշխան , որ է էութիւն պարզ և անխիւթ , ան-
ապական և անմահ , իմաստուն յընտրութիւն բարւոյ
և չարի և հանգուցեալ՝ի բարին , և սա տիրէ՝ի վե-
րայ անբանս շնչոց , որով ներգործէ՝ի զգայարանս և
իշխէ մարմնոյս , և ինքն ըստ արդարութեան վարելով
պարզ մնայ և սոցա գեր՝ի վերոյ :

Արդ զի ասացին ոմանք զնոյն զոգիս եռամանեայ ,
բան գոլով , ցասուցին և ցանկութիւն , սակայն մեր խօսս
՝ի վերայ նորին նոյն էութեանն է , որ զեռամանեայ
ունի զօրութիւնս . և ահա նա անմահ բնութիւն և
պարզ , որ և բերէ յինքեանէ յառաջ բան եթէ ըստ
խոհականութեանն , եթէ ըստ ցասման , եթէ ըստ ցան-
կութեան . այլ բանն որ՝ի նմանէ յառաջ գայ յեռա-
մանեայ հոգւոյն , և գոյացեալ անձնաւորի՝ի նմանէ , և
այլ է [1] առինայն իրօք քան զնա տեսանի [2] , որ ոչ՝ի նմա
է որպէս զծնունդ , և է առ նմա որպէս զհամաբնու-
թիւն : Յայսմէս ասէ և աւետարանիչն վասն Աստուծոյ
բանին Քրիստոսի . "Ի սկզբանն էր բանն , և բանն
էր առ Աստուած , և Աստուած էր բանն . նա էր՝ի
սկզբանէ առ Աստուած ,, : Յայսէս և՝ի յարատեցեալ
է տեսանել Աստուածային քննողի , և նշմարելոյն հաւատալ
իսկ , զի այս բանս որ անձնաւորեցաւ՝ի միտն , և է առ
նմա , կամաք ծնօղի մտացն արտաքս բղխէ , և ելանէ
առ Աստուած իմանալի խօսութեամբ [3] , կամ իմանէ
՝ի զգայարանս և սիրէ՝ի մարդկէ լեզուոյ պաշտամանաբ ,
և ձեռին սպասաւորութեամբ : Այս է խօսս բղխեալ
այլ քան զբանն ծնեալ , զի ոչ եթէ յելանելն սորա՝ նա
՝ի մտացն պակասէ , այլ՝ի ձեռն ներգործութեան մի-
տացն և բանին որ՝ի նմա՝ սա բղխէ , և նա՝ի ծնօղ
միտն անշարժ մնայ , և անձնաւորի՝ի մտացն . և՝ի բա-
նէն՝ անձնաւորութիւն խօսիցն , եթէ առ իմանալիս խ-

1 Ա. յայնպէս՝ կակ կամ էութիւն , խակութիւն :
2 Բ. տրին . Որոշ՝ի նմանէ :
3 Ալ տր . խօսակցութեամբ :

մեցականապէս, եթէ առ զգալիս սպառաւորութեամբ զգայարանացս որպէս և առացաւ. այսպէս Աբրիտոս ասէ և յաղագս Հոգւոյն սրբոյ. "Հոգին Աչմարտութիւն որ ի Հօրէ ելանէ, և յիմմէ անտի առնուցու և պատմեսցէ ձեզ.." Զոր ըստ էութեան և բնութեան անմարմին տեսանի, Հոգին ծնօղ և բանն ծնեալ և խօսքն արտաքս բխեալ. սակայն տրամորոշին յերից Հատուածս, ի Հոգի, ի բան և ի խօսս: Այս պատկերաւս ի նախագաղափարն Աստուած Հպիմք խնայմամբ. և իմանամք զմի աստուածութիւնն և զմի զօրութիւնն և զբնութիւն, երից անձնաւորութիւնս կատարեալս: Սակայն ի ստորև ճոխ յարացոյցս ի նախատպէն բազում իրօք, զի Աստուծոյ բանն անձնաւոր է ի նմա անյնդելի. իսկ մերս ցնդի Հանապազ. և Աստուծոյ բխումն՝ լնու զարարածս գիտութեամբ նորա, և առ ծնօղին է անաղաւաղելի', իսկ մերս աղաւաղեալ ստուերանայ. քանզի ապականացու և աղցաւոր բնութեանս Հարկ է, զի ծնունդ բանի և արտաքս բխումն խօսից ապականացու լինիցի. իսկ անապականին է և անուանի անապական և անփոփոխ և անցնդելի և անշարժ և յամենեցունց ի մէնջ խոստովանեալ երկրպագի:

Այս երից անձնաւորութեանս ի մի բնութիւն և յաստուածութիւն մի է կամք, մի զօրութիւն, մի տէրութիւն, մի իշխանութիւն, մի թագաւորութիւն, մի անեղութիւն, մի' ի վեր քան զժամանակ էութիւն: Պատճառ է Հայր միածնին՝ որպէս Հոգի ի նմա ծնեալն բանի, բայց ի վեր քան զժամանակ, և ոչ որպէս մեր միտքս, զի ընդ առնել մարմնական Հասակին ապա ներգործէ զծնունդ բանին. մի լոկի զայս յանմարմին պարզութիւն աստուածութեանն կարծել, և ժամանակ ի նեղքս ածել յանժամանակին ծնունդ, զի "Ոչ սկզբանն էր բանն..: Այլ մեք այսմ կարօտիմք՝ վասն ընդ աղցաւոր մարմնոյս բարեւտոհմութեան ոգւոյ շարամանութեան. ապա թէ' ի սմանէ արտաքս էր, ոչ կարօտեր ժամանակի առ' ի ծնունդն բանի, զի և ոչ ինքն ժամանակաւ կատարի, որպէս ոմանց արտաքնոցն Թուի, այլ կատարեալն վասն անկատար մարմնոյս, որ անձնաւ խառնուածն առ նա

1 Ցպրինակի միում Աստուածէն:

ունի, ՚ի ներկոծելոյ խաչանի, մինչև յօդուած սորա կատարի։ Սակ առ Ա՛ստուած ոչ մարմին և աձումն նորին և ոչ անկատարութիւն, այլ լոյս է փառաց նորա միածինն և նկարագիր էութեան նորա. և արտաքս առաքեաւն ՚ի նմանէ Հոգին՝ և քննող է խորհրդոց նա և որպէս խօսիցի գիտութիւն արտաքս գայ ՚ի մտացն ՚ի լսողն՝ և չինքեանէ ոչ պակասէ, այսպէս և Հոգին սուրբ իմանաւոցացանէ զերկնաւորս և զերկրաւորս խորոցն Ա՛ստուծոյ, և առ բնութիւն միշտ է։

Ո այս երեք անձինս՝ և զմի աստուածութիւնս խոստովանիմք երկնի և երկրի արարիչ, որ և ասէզձ յերկինս զՀրեշտակս և յերկրի զգալեաց զսեռս. "Եւ արար զՀրեշտակս իւր հոգիս, և զպաշտօնեայս իւր բոց հրոյ,, ասաց մարգարէն։ Ա՛յլ զի նախ է իմանալեացն սեռ քան զգալեացս, կարծեմ ՚ի բանն Ա՛ստուծոյ որ առ Մովսէս աւետարկեալ ուսանիմք. "Մովժամ եղիցի, ասէ, աստեղք ծերք՝, ամենայն հրեշտակք աստեղայ օրհնեցին զնա մեծաձայն, և ամենայն հրեշտակք իմ գովեցին զնա,,։ Ա՛յդ յայս իմանալի էութեանցդ հրեշտակայդ որք կան շուրջ զԱ՛ստուծով ՚ի պաշտօն նորա, մինն ընդվզեալ յանցեաւ ՚ի սահմանեալ կանոնէն, որպէս մեզ անհաս է տեսակ յանցանացն, և ՚ի ստորև կործանեալ աստուածութեան, և չարացեալ ինքնիշխան կամօք՝ զբնաւակ չարեաց եղև։

Մետ որոյ արար Ա՛ստուած զոր ՚ի վերոյ երկրի զարդս ՚ի պէտս մարդոյն տէրութեան զոր ստեղծ. և արար զմարդն ՚ի պատկեր իւր ըստ իմանալին բնութեանէ, խառնեալ ընդ զգալի նիւթս հողոյ, զի նիւթական և զգայական արարածոցս լինի իշխան, այլ և յօդակապ իմանալոյ և զգալի աշխարհացս բնակչաց։ Ասէ՝ ետ աչս՝ բանական հոգւոյն զմիտս, հայել նմանաւ յիմանալի աստուածութիւնն, և ձգել յինքն զնաւագայթս Հոգւոյն սրբոյ ընդհաց, այլ և ձայնակել զիմանալի խորհրդոցն Ա՛ստուծոյ զտեսութիւն. ետ և զգալի ասէ՝ ձնաւագայթիւք արեգական վայելել յերևելի արարածոցս վայելչութիւնն։ Ընդ այս մարդոյս՝ որ եղաւ գործել զդրախտ իմաստից Ա՛ստուծոյ և պահել ՚ի դրախտն

1 Մի օրին. Ընդհատուածին։ 2 Մի օրին. Ձեր։

նիւթական, մխիթարեաւ բանտարկուն, և պատրանօք դա-
ւաճանեաց. և սողացաւ [1] մարդն ի կանացն Յ.ստուծոյ
և յօրինացն խաբողին կամօք, և ոչ իւրովք ախոր-
ժականօք [2] իբրև զնա. քանզի սպանող է՝ ոչ իւրոյ
անձինն մարդն, որ զատասպարտեցաւ մահու, այլ սատա-
նայ, որպէս ասաց Քրիստոս. "Նա մարդասպան է ի
սկզբանէ.,: Նակ մարդն զի պատրանօք մեղաւ, ընդ պար-
տիլն զղջացաւ և ընդ պատիժ մահուն վշտացաւ և եր-
կիւղիւ մահուն կայր վտարանդի ի ծառայուն. յաղագս
որոյ և յարդար իրաւանցն Յ.ստուծոյ վերատին ի կեանս
կոչեցաւ, իբրև պատրանօք և ոչ կամօք մեղուցեալ:

Նա ոմն երևեցաւ զղջումն, ասիցէ ոք արդեօք. ի
նոյն ինքն Ադամ և ի ծնունդս նորա, որպէս գրէ խնա-
տունն. "Նա զնախաստեղծն զՀայրն աշխարհի զմիայն
հաստատեալ պահեաց, և փրկեաց զնա ի յանցանաց
իւրոց.,. իսկ յորդիսն՝ Աբրահամ և ի տոհմ իւր, ի
Մելքիսեդեկ, ի Յոբ և յայլս ի հեթանոսաց, ըստ
որում գրէ առաքեալ. "Հեթանոսք որ զօրէնս ոչ ու-
նէին, բնութիւք զօրինացն գործեցին.,: Ըդ նոքա որք
իմանալի մտացն հաւանէին, Նանաչէին զիմանալին Յ.ս-
տուած, և լուսաւորէին ի Նառագայթից նորա. իսկ
որք ի զգայարանաց և ի հեշտութենէ մարմնոյ գե-
րէին, օտարացեալք յարարչէն՝ բանտարկուին կամաց
տային զանձինս ի գերութիւն. և այսպէս յաձախեալ
մարմնասիրութիւնն յաշխարհ՝ պակասեաց գիտութին
Յ.ստուծոյ. և գրեթէ ամենեքեան զաչս մտացն, որում
անկ էր ի վեր հայել, զգայարանօք ընդ ստորինս ցնդե-
ցան, և սատանայի պատրանացն ծառայեցին, թիւրեալ
զբնութիւնս յիւր բնական գեղոյն վայելչութենէ. և
արարչին զսատանայ բազմապատիկ մեղօքն չարախօս իւ-
րեանց առաջի Յ.ստուծոյ. իբր թէ կամօք սիրէն սոքա
զչարութիւն, որ արտաքոյ է բնութեանս, որպէս և ինքն
սիրեաց. և էր վկայ նորա ստութեանն ամենեցուն ան-
խըտրաբար ընդ մեղս բերիլն: Յոբ զի արդար երևեցաւ
մարմնով, ի հարցանելն Յ.ստուծոյ՝ նորա պարսպելոյն
տայր զբնորհն, և ոչ արդարոյն անձնիշխան կամացն,
յորմէ և խայտառակեալ պարտեցաւ:

1 Մի օրէն. Ա-ՆԻ--: 2 Մի օրէն. Խ-ՐՈ-Ի-ՈՒ-ՅՈ-:

Աշխ Թիւրեցան մարդիկ ինքնիշխանութեամբ յու-
զիչն շատ զայ՝ հաւանեալք պատրուզին, և զտիզմ մար-
ճնոյն հեշտութեան արկեալ քոզ հոգւոյ՝ խաւարեցու-
ցին զնմանալոյն հայեցողութիւն. սակս որոյ և բարկա-
ցաւ Աստուած ՚ի վերայ նոցա, ըստ առաքելոյ. «Ար-
կութիւն և սրտմտութիւն Աստուծոյ ՚ի վերայ ամե-
նայնի որ գործէ զչար ...: Այլ էր բարկութիւս իրաւամբք,
զի էր կար նոցա հպել հոգւով յիմնատս Աստուծոյ ՚ի
յօրանալն մարմնով յիրս աշխարհիս. բայց ոչ կամեցան,
և եղեն ատելեալք յԱստուծոյ վասն զհոգի սպանանե-
լոյ ՚ի մեզս մարմնոյ, և գոան մեռեալք, ըստ առաքե-
լոյ, «Ինչ գեռ մեռեալն էաք ՚ի մեզս մեր ...: Ասաի և
արգել արդարութիւն նորա զողորմութիւնն յայնցանէ որք
ոչ խնդրեցին զնոյն. զի անկար էր, որպէս և կափուցե-
լոց աչօք, ՚ի քաղցրութիւն լուսոյ նայելն: Ահա յառաջա-
նալ՝ գարուց ժամանակացն երևելոցն ունիք՝ որք սկսան
հայել ՚ի բնութեանս ուղղութիւն, և բացատրել ՚ի
նմանէ իմաստից քննութեամբ զարտաքուստ մտեալ
զվատթարութիւնն. որք և սահմանեցին անկրաւութի
հոգւոյ զչարութիւնն՝ և զորս ՚ի նմանէ ծնունդ՝ արդա-
րութիւն, զառաքինութիւն, և զորս ՚ի նմանէ ծնանի,
և այնպիսի ջանալ տնօրինել զսահմանադրութիւնս ոչ
կարացին տիրապէս Հանապչել, թէ թոյնք սատանայի
խառնեալ ընդ մեզ ստիպէ առնել զանկրաւութիւնն.
այլ միայն նայելով ՚ի կամ հոգւոյս Քրիստոսի բնութեանն ա-
նօսրութեամբ՝ անկրաւութիւն եղիս նմա զմեզս. զի
՚ի պահելն զբնութիւնս ուղիղ, և ՚ի պատահելն մեզաց՝
զղջմամբն յուցանիմք՝ թէ արտաքոյ բնութեանս սայ-
թաքեցաք. և զառաքինութիւնն արդարութիւն, զի
ուրախ լինելն ՚ի նոսին յայտնէ բնական կիրս, և բնու-
թեանս՝ըստ ուղղութեանն ներգործութիւն. ըստ այնմ
ցուցանեն զգործս օրինացն գրեալ ՚ի սիրտս իւրեանց
վկայութեամբ մտաց իւրեանց, և յանդիմանեալ զմի-
մեանս ՚ի խորհրդոց իւրեանց:

Այսպիսի վկայութեամբ մտաց և առանց ուսման
գտաւ ՚ի մէջ նոցա քաղաքական[1] օրէնք, իշխանու-
թեան կարգ, բարւոյ գովութիւն և չարի պատուհաս.

1 Մի օրէն. Յատկանշով: 2 Մի օրէն. Քաղաքականութեան:

և Համառօտ ասել օրինացն կամաց որ Յ[ստուծոյ՝ լուսին, որ քան զամենայնս օգնականք էին մնացին խնամատա[ր]ել և՝ վերհայեցողութեան, որով և ինդրեցին զՅ[ստուած ունել ըստ բնականս կամաց փափաքման, և նմա վասն առեղծանելոյն և նախախնամելոյն չնորհ ունել պաշտամանք։ Սակայն ոչ կարացին զՀնմարիան գտանել. զի Հաճեցաւ խնամատարութիւնն Յ[ստուծոյ ոչ Հանապազ աշխարհի խնամատարութեամբ իւրեանց զՅ[ստուած, որպէս զի մի պարծեցի մարմին առաջի նորա. բայց մարդիկ զաստուածսիրութեանն փոխն ոչ Թողին անպտուղ, այլ առին՝ ի պաշտօն զորս և սիրեցին, և յորոց օգուտ ունել վարկանէին. և այս է՝ ի տեառնէ ասացեալ խոկումն անառակին, որ մտածէր. "Դարուցեալ գնացից առ Հայրն իմ,,. քանզի ընթացքն է սոցա յառաջնոյն՝ ի բարեգործութիւնն և յաստուածսիրութիւն։ Այս տես, զի նախ նա խորհեցաւ գալ առ Հայրն և ընթացաւ, և ապա Հայրն տեսեալ գնոյն՝ ի Հեռուստ՝ ընդ առաջ եկն և գԹացաւ. այսինքն զի նախ մարդիկ ինդրեցին ունել զՅ[ստուած և գիտել զարարիչն իւրեանց և զնախախնամիչ, և ապա երևեցաւ Յ[ստուած նոցին և ծանուցաւ, զի մի տեղի գտցէ բանսարկուն բամբասել զՅ[ստուած որպէս առ Դօքն. իբր Թէ ակամայ և բռնի ուղղեաց զմարդկան փրկութիւն, որ էր զրկումն անձնիշխանականի բնականս մեր առեղծուածոյ. ուստի գտանէր և իւր գատելն անիրաւութիւն. վասն զի կարելի էր Յ[ստուծոյ և զնա ակամայ՝ ի պատժոց Հողոպրել. այլ զի մի այս լինի, արդարութիւնն Յ[ստուծոյ Թոյլ ետ՝ յորժամ կամեցաւ անձնիշխանա՝ զմեզանչելն, և վատնել զամենայն գանձս առաքինութեան անառակութեամբ։ Այ յորժամ խոկաց զառնա գարձն և ընթացաւ, ապա ընկալաւ և յայտնեաց զգթութիւնն չափ աբանչելի։ Այ մինչ Հեթանոսք սովեալք աստուածսիրութեամբն՝ ի հայրենի տունն բարւոք կարգօք Հանապարհ արարեալ փութային, նախահօգակն Յ[ստուած զիրկութիւն նոցին՝ ի բերանս մարգարէիցն նախաձառեալ նշանակէր ուրուականօք առակաց, զանխոս՝ ի չարութեանն Հօրէ. իսկ անառակ որդին որ գայր առ Հայրն, Եհաս Հանապարհատն մինչև յօդս՝, ուր զչրջանս

1 Մի օրին. Ցօդս, որ ընդ[ունին]։

աստեղաց և լուսաւորացն քննեալ առ ի գտանել ի մէջ նոցին զարարիչն՝ եւ ի յերկրէ, անց ընդ ծով, կոխեաց զտարերս, եթող զզարդս սոցա, և հասեալ յեթերդ՝ այլ ոչ կարէր յառաջել. յոր հայեցեալ ի բարձանց ի սրբութիւն իւրմէ Հայրն երկնաւոր՝ ի հեռուստ գթացաւ, և յարուցեալ եկին ընդ առաջ նորա, անկան զպարանոցսն և համբուրեաց. այսինքն՝ զի ընդ բնութիւնս խառնեալ սիրով՝ մարդացաւ. քանզի համբոյրն՝ միութեան է նշանակ ի ձգմանէ սիրոյ. և այս եղև ներմարդութեամբ բանին Աստուծոյ ի սրբոյ կուսէն. ուստի յայտնեալ մարդ յաշխարհ՝ տնօրինեաց մարդկան ազգի զփրկութիւն. և տնօրէնութիւն զայս վարկանիմ՝ Զանգի ցուցաք նախ ի բանս՝ թէ մարդիկ ծանեան զբնութեանս ուղղութիւն, և բացատրեցին զչարն ի բարւոյն ուղղակի, զոմն անուանեալ անիրաւութիւն կամացս և զոմն արդարութիւն. սակայն ոչ կարացին արդար լինելոյն յանիրաւութէ խոտորել. Ի արդեօք զի ոչ կամեցան. և ապա ընդէր գովեցին զարդարութիւնն և պատժեցին զչարութիւնն. ահաւասիկ յայտ է զի կամեցան զլինելն արդար, և այնր աղագաւ գովեցին զնոցին. բայց սակայն զդատաստանիչ բանտարկուն զկնի ունէին, որ զինեալ զօրէնս իւր զչար՝ հակառակ օրինացս մտացն նոցա, եպերէր և գերէր զնոսա յօրինացս մերացն վէհս՝ անդամոց մարմնոյս հարկաւոր կրուքն. Ասկայն նորա ոչ կարացին ձանաչել, թէ այս նորա է դատաստանութիւն. այլ միայն անիրաւութիւն և չարութիւն եղին բանական հոգւոյս զյանցանսն. և թէ ո՛ եր որ առիթ լինէր սորա անիրաւելոյ զինքն, տպիտացան։

Այն բանն Աստուծոյ համբուրեալ զբնութիւնս և ընդ սմա խառնեալ. որպէս զի զայս, զոր մարդիկ վկայեցին արդար գոլ բնաւորապէս և ոչ կարացին արդարանալ, պահեսցէ ի բնական արդարութիւնն՝ և զհայր մեղացն խայտառակեսցէ. և զի զաստուածադիր օրէնսն, զոր կարելի էր մարմնաւորացս պահել և տկարացաւք ի խաբանաց թշնամւոյն, պահեալ ի գլուխ հանցէ, և զարդարութիւն օրինացն ի վերայ մեր սփռեալ՝ դատապարտեսցէ ընդ խաբեբայիցս զխաբողն, որպէս գրէ առաքեալն։ Այս այսր խորհրդոյ հաւատամբ զանձն մեր

մին եղեալ, որ և բնակեաց ի մեզ ... զորոյ մարմին լինել ... Եւ զի յիշեսցուք աշխարհիս այսորիկ ծանեաւ. զի թէ էր ծանուցեալ, ոչ արդեօք զեկեղն փառաց ի խաչ հանելին ... , որպէս ասէ առաքեալ: Այլ էր այս խորհրդոյ իմաստ առ Աստուած ծածկեալ յամենայն եղակացս, ի հրեշտակաց ասեմ և ի դիւաց և ի մարդկանէ. զի հրեշտակաց ի ձեռն եկեղեցւոյ յայտնեցաւ. և զկնի թէ գիտէին ոչ մարտնչէին ընդ նա որպէս ընդ մարդ, զեթէն ի մէջ գնելով որդիութեանն Աստուծոյ, եթէ տէր փառաց զնա գիտէին:

Յօպէս յայտնեցաւ Աստուած ի վերայ երկրի մարդ՝ անհաս և յետ մարմնանալոյն յեղականացս, զի տայէ տեղի բանսարկուին մարմնոյս հատկաւոր կրիւքն մարտնչել ընդ ինքեան. քանզի նա զինքն Աստուծոյ մարտակից ոչ գիտէր, և ոչ պատերազմէր ընդ Աստուած քաղցիւ՝ թէ ծանուցեալ էր զոլ զնա Աստուած. այլ վանէր որպէս ընդ մարդ և ատիպէր ըստ հարկաւոր կրից խոտորեցուցանել յաւելորդն. սակայն լոյս աստուածութեանն ի խաւար մարմնոյն լուսաւոր գոլով խաւար մեղացն ոչ հպէր ի նա, որ անհաս էր ի խաւարի հօրէն. զի մարմինն հոգւոյն հանդերձ կրէր զիւր բնական կիրսն յիւրաքանչիւր հատակս փրկչին, և աստուածութիւնն անհաս ի թշնամւոյն էր խառնեալ ընդ նմին: Ոչ անայր աստանայ պատրել և խառնել զաւելորդն ընդ բնականն՝ և ոչ կարէր, զի լոյս աստուածութեանն խառնեալ ընդ լուսոյ մտացն՝ և նուաւ ընդ մարմինն, զիսաւար նորին բնական կրից պահէր ի սահմանս իւր, և ոչ տայր չարութեանն հօր սերմանն առ ինքն մերձենալ. այլ ծանուցեալ զաւելորդն՝ առ ոտն կոխէր ի կրեն զբնականն. ուստի և եղև տղայ, և զտղայական ախտից մարտն վանեաց, տղայական կրիւքն անհնեցուցեալ զթշնամին: Անուկ, և ի վարժուն հնազանդութեան ծնօղացն ոչ կարաց յողդողդել զնա, չարհասարդ, և ցանկութեամբքն ոչ կարաց գայթակղեցուցանել զնա. և մարտն ոչ եթէ մարմնոյ առ մարմին, այլ հոգւովքն չարք ընդ հոգին Աստուծոյ մարմնացեալ, և հոգւոյ նորա կամաց՝ որ անչարժ եկաց ի ներհակացն՝ ոչ եղև կոխան. ըստ որում և ասէ Տէրն. Ինչ չև ծանուցեալ իցէ մանկանն զբարւոյ կամ զչար,

անարգեսցէ զարն և ընտրեսցէ զբարին ,, . և այսպէս պարտեալ յանձն եղև սատանայ և դնէք նորա վերա- կացուք ախտից , ’ի նմանէ՝ որ երևեցաւ ’ի նմանութիւն մարմնոյ մերոյ , և դատապարտեաց զնոսա մերոյ աշ- խարհի պարտապանս մարմնոյն իւրով : Վասնզի չա- րախօսէին զմարդկանէ առաջի Աստուծոյ , թէ կամօք և բնութիւք բերին ’ի մեղս . և ահա մարմինն Քրիստոսի ’ի բնականն՝ պարապեալ ’ի ներգործութենէ նոցին դաւաճանութեանցն՝ արդար գտաւ և անարգող չարին և ընտրող բարւոյն . և այսու հռչակեցաւ Աստուած ’ի բնութեանս արարչութենէն՝ թէ ոչ ստեղծ չար և բնու- թեամբ չարակամ : և մարդիկ ստուգեցան ’ի բնական առաքինութեանն բաղձանս , թէ զոր սիրէնն բնութիք՝ խափանին ’ի ներգործելոյ , ոչ բնութեամբ կամ կամօք , այլ ’ի գայթակղեցուցանող թշնամւոյն որոգայթից , որ պատճառս առեալ զպատուիրանն վանն ապստամբեցու- ցանելոյ ’ի նմանէ՝ գործեաց ’ի մեզ զամենայն ցանկու- թիւնս ախտից :

Ա՛րդ յորժամ զայս հանդիպ ած ’ի գլուխ Աստուածն մարդացեալ , ներեաց մեզ . ըստ այնմ՝ “ Ի ներելն Աստուծոյ ’ի հանդիպ արդարութեան նորա ’ի ժամանա- կի աստ յայսմիկ , զի եղիցի նա արդար , և արդարա- ցուսցէ զայնոսիկ որք ’ի հաւատոյն Յիսուսի ,, . քանզի որպէս ասացաք , ինքն արդար ցուցաւ հանդիսիւ ար- դարութեանն Քրիստոսի ’ի ստեղծուածս իւր , և մեք առ ’ի նոյն հաւատով : Ցեսին զայս և հրեշտակք ըստ ա- ռաքելոյ . “ Որ երևեցաւ մարմնով , արդարացաւ հո- գւով , յայտնեցաւ հրեշտակաց ,, : Այլ ’ի լնուլ ամաց երեսնից , որ է հասարակութիւն ընթացից կենացս , և անցք ընդ եռացումն բնութեանս , ածեալ ’ի գլուխ զչար- չարութիւնն բանին մարմնացելոյ , և կոխեալ զամենայն ախտս որ ասելանսն ’ի կիրս մարմնոյս , ած Աստուած վկայ նմին յանապատն զչառաջընթաց մկրտիչն Յով- հաննէս . առ որ եկին տէրն մեր ’ի մկրտութիւն ընդ այ- նոսիկ՝ որք խոստովանէին ’ի ջուրսն Յորդանանու զմեղս իւրեանց առաջի նորա : Այլ տեսեալ Յովհաննու ’ի հե- ռուստ զօրինօք բնական կրից անմեղութիւն նորա , հրա- ժարէր ’ի մկրտելոյ զայն , որ անկարօտ էր մաքրութենէ , Ասէ նա առեր , “ Ասէ տուր , զի այսպէս մեզ վայելէ

ընել զամենայն արդարութիւնս ... այսինքն թէ զըտ-
վանդակ արդարութիւնս՝ զոր եդ օրէնքն մարմնոյ, և
ծանեան հելլենացիքն Հոգւոց, զի ես միայն՝ ի մարդկա-
նէ գործով կատարեցի. արդ թոյլ տուր կալ առաջի քո,
և դ՚ի գլուխ ածեալ արդարութիւնս յերկուց և յերկից
վկայից հաստատել ըստ կամաց օրինացն։ Եւ ասա՝ ի
ջուրն. և զի ոչ ինչ ունէր խոստովանել, եւ՝ վաղվաղա-
կի. տեսին հրեշտակք տեսին և ամենայն դևք, թէ միայն
՝ի մարդկանէ բնական կրիւք վարեալ՝ արդար է, ոչ ինչ
սայթաքեալ. յամօթ եղև և սատանայ՝ չարախօսն բնու-
թեանս, զի յանդիմանեցաւ ինքն առիթ մեզաց, և ոչ
սա։ Զայնեաց Այր՝ի յերկնից. «Սա է որդի իմ սիրե-
լի, ընդ որոյ տնօրինութեան գործոյն հաճեցայ ... այս-
ինքն, զի մարմնով դա միայն զկամն իմ հաճոյացոյց՝։

Արդ ըստ աստուածութեանն անկարօտ էր այսմ
վկայութեան ամենեւին. սակայն մարդկութիւնն կա-
րօտ էր տնօրինաբար ունել զվկայութիւնն Աստուծոյ,
թէ արդար է. զի անաստուտ բնութիւնն չէմարիտ է, և
չէմարտութիւնն վկայ է։ Եւ սորա հաճոյ լինելոյ վկայ-
ութիւնն՝ հաճոյ գտաւ իւրև զամենայն մարդկութիւն.
ուստի և Հոգին սուրբ զոր փչեաց Աստուած՝ ի մարդս
և յետ յանցանացն բարձաւ, եկն վերստին և եկաց՝ ի
վերայ բնութեանս նորոգողին Յիսուսի, և օծ՝ի նա
զամենեսեան զմեզ շնորհօք իւր. քանզի նովաւ՝ի մեզ
անցանէ շնորհն։ Արդ ոչ չափով տայ Աստուած զՀո-
գին Որդւոյ. և նա ինքն ոչ կարօտի իւրոյ Հոգւոյն, և
առնու զնա իբրև զշնորհ. սակայն ըստ տնօրինութեն
և սպասաւորութեան զոր ակաւ առնել բնութեանս
մեր՝ իրաւամբք և արդարութեամբ նորոգութիւն, և
առնու և կարօտի, զի՝ի նա մեք առցուք։ Վասնզի նոր
Ադամ էր, ցոյց թէ այս այն մարմին է Ադամայ, որ
զրկեցաւ՝ի Հոգւոյն սրբոյ ըստ յանցանացն, և առ զնոյն
վերստին արդարութեամբ մարմնոյ ըստ արդար իրա-
ւանցն Աստուծոյ. ըստ այսմ խորհրդոյ առ զիւր Հոգին
ինքն Յիսուս և օծաւ Քրիստոս։ Եւ դարձեալ,
ոչ թէ զի որ՝ի Քրիստոս մարդկութիւնն այսմ կարօտ
էր, կամ ընդ բանն միացեալ մարմինն Հոգւովն որպէս

1 ՄԻ օրէն. Հ-ՁԵՐՈՑ։

կարօտ զօրանայր, մի լեզի. քանզի և զամենայն յաղթութիւնն ի գլուխ էած նախ քան զկռուիլն Հոգւոյն. այլ որպէս ասացի, մեզ քահանայապետ եղեալ՝ մեզ էառ և ի մեզ անցոյց զնոպտէն. ըստ այնմ, "Ի վերայ սոցա ես սուրբ առնեմ զանձն իմ, զի եղիցին և սոքա սրբեալք ճշմարտութեամբ,,։ Արդ առ զՀոգին, և օծաւ նովաւ անօրինաբար, որ անկարօտն էր. սակայն ասացաք որ ոչ գիտէր զԱստուած ընդ մարմինն միացեալ, որպէս զլուսին կարօտութեան հանարէր նմա զՀոգւոյն ընդունելութիւն, և իբր զյաղթութեան փոխարէն, ըստ այլ մարգարէիցն։ Աւ տես, զի նախ քան զՀոգին ոչ ինչ արար Քրիստոս նշանս և սքանչելիս, զի մի երևեսցի մարտակցին, թէ առաւել է քան զմի որ ի հասարակաց մարդկանէ, որ և ընդ նմա որպէս ընդ մարդ մաքառեցաւ, և զիւր յաղթահարիչն ի մարդոյ գիտէր. իսկ ապա զգեցեալ Քրիստոս զՀոգին, և որպէս թէ կարօտ նովաւ զօրացեալ, կրկին զրդեաց նահանձն զմարդասպան թշնամին ի մարտ ընդ նմա. որ և եկաց ի լերինն առաջի փորձել զնա զգայապէս, որ միանչև ցայժմ իմացականապէս. զի այս է նորին սովորութիւն, յորժամ ի նեղըս պարտի, յերեսս երևի, որպէս և սրբոցն, որք զօրացան Քրիստոսիւ, արար ի յետոյ։

Արդ կացեալ ի լերինն առաջի՝ փորձէր զնա ըստ քաղցոյն որպէս զմարմնաւոր, և ագահութեամբ որպէս զընչաւոր, և մեծախառութեամբ որպէս զՀոգևոր. զի յայս պարփակի ամենայն գայթակղութիւնք նորա. և եղեալ նմանն ոչ աստուածեղէն իշխանական զօրութիւք, այլ մարդկեղէն իմաստիւն խոհականութեամբ. զոր չընտրութիւն ձգեալ՝ զնորա խորհրդակցութիւնն՝ խաւարնակ գառաւ յօրինացն, որոյ կատարողացն հեռևէր զղջումն և խղճի ստգտանք. և նա ոչ հաւանեցաւ. զի մի ստգացի յօրինացն, որ ասաց՝ բանիւ Աստուծոյ կալ և ոչ փորձել զԱստուած, և նմանն միայն երկիր պագանել. յաղագս որոյ և ի բաց եկաց ի նմանէ՝ որ զրոյց վկայութեամբքն եկաց ընդդէմ; և օրինաբն առաքար զպատասխանին։ Աւ կատարեալ զյաղթութիւնն՝

1 Ա՛յլ օրին. Ձ֊է։ 3 Մի օրին. կ֊ե։
2 Ի մի օրին. խ֊ր֊դ֊կ֊ց֊ու֊թ֊ե֊ն։

գարձաւ ՚ի Գալիլեա, և զօրութեամբ Հոգւոյն բարկիցն զարար նշանագործութեանն, որով և ՚ի մարմնոյն որ պարտեաց զդևսն՝ սկսաւ հալածել զնոսին ի բառնալոյ. զի թէ ուստի այնր կոխան եղև նոցին, զի խաբեցաւ և մեղաւ, ապա իրաւացի է այսօր զերծանել ՚ի նոցանէ, զի չարքաշարեաց, և անխաբ մնալովն անմեղ ցուցաւ։ Զի նոքա անուանէին զնա որդի Գաւաժոյ, ոչ սակայն գիտութեամբ, այլ կարծեօք և երկմտութեամբ. ՚ի գործոյն տարակուսելոք, և ոչ յերկից խորհրդոյն հաւանելոք։ Եւ կամ Գրիտաս ընդ սատակել զԻեսուայն և բժշկելով զախտան և զմեղս Թողոյր, ասելով. "Օ՛ի գիտասջիք թէ որդի մարդոյ ունի իշխանութիւն ՚ի վերայ երկրի Թողուլ զմեղս ,,. քանզի դաստիարակութեամբ աստուածութեանն՝ մարդկութիւնս որ չիս՝ զանմեղութիւն ուղղեաց, և սա իշխանութիւն ամենայն մարդկան, որք յերկրի պատրանօք և ոչ բնութիւնք են մեղաւորք, Թողուլ զնոսին։ Եւ կամ զԵսքն զդրդիչն զդրպիրան ասել. "Ի կարէ Թողուլ զմեղս եթէ ոչ մի Գաւաժ ,,. զի ինքն յանձն առեալ զանուն, և ՚ի կարծիս հաստատեալ զնոսա. իսկ նա տակաւին և ՚ի սկսս անօրէնութեանն անսիրտ առնէր զայայանելն, և բանիւ վարդապետութեանն զերկնից արքայութիւնն աւետարանէր. այսինքն թէ ինև ՚ի աստանայի իշխանութենէն ելէք, և երկինից Թագաւորն մերձեցաւ տիրել ձեզ՝ եթէ հաւատայք։ Եւ այլ հաւատայր և ոչ ոք, զի Հոգւոյն չնորհի էր լուսաւորել զմիտս առ Հաւատս իմանալի յուսոյն. և զայս ոչ ունէին մարդիկ. և Գրիտաս միայն յինքն առ, և այլոց ոչ կարէր ըստ իրաւանցն տալ, զի ինքն միայն գտաւ արդար. և այլ մարդիկ ՚ի ներքոյ գաստիարակութեանն վասն հաւանելոյ չարին, որում նա նմանիլն մարմնոյս յաղթեաց։ Եւ ասն այսորիկ ոչ բառանէր սերմն բանին առանց ցօղոյ Հոգւոյն յանգաստանս մնայ մարդկան. և Հարկ էր նմա զանմեղ իւր մարմինն պատարագել, և զմեղս մարդկան քաւել, և զՀոգին յաշխարհս սփռել. և այս անօրինեցաւ ՚ի Հակառակամարտ հնարից Հնութեանն. քանզի յորժամ յանձն և ՚ի մարմին փրկչին ընթացուցեալ ոչ կարէր մերձենալ պատրանօք, զդպիրան և զփարիսեցին զիներ նախանձու նմին Հակառակ։ Այլ աչքն գիտելով զիւր

մարտակից, ՚ի ձեռն մարդկանն յամօթ առնէր զնա ամենայն ուրեք հեզութեամբն և խոնարհութեամբ. մինչև ոչ հանդուրժեալ ՚ի գլուխ ածել զմխիթան, փութացուցանէր մահուանն հնարիւք. քանզի լսէր ՚ի նմանէ, զի ասէր. "Ա՛վ ՚ի ձէնջ յանդիմանեսցէ զիս վասն մեզայ ... և գիտելով զՀնմարտութեի հրամանին՝ քաջքինէր. ուստի և հնարեցաւ զնա ՚ի չարչարանաց մատնել նախատանս. զի գոնէ զՀեզն առ բանիցն այսպանումն՝ ՚ի կրեցն մարմնով զվիշտս՝ զինեալ պատժական զօրութիւք սայթաքեցուցէ բարկութեամբ: Ա՛յլ նա փոխանակ յարութեանն և փառացն՝ որում ըստ գործոց իւրոց արժանի էր ՚ի մարդկանէ՝ յանձն առ զխաչ, արհամարհեաց զամօթ:

Այս մի որ փորը կարծեսցէ զարհամարհութիւն ամենից ՚ի տեառնէն վիշտս. զի որպէս մարմնով զչարչարանացն վիշտս կրեաց, նոյնպէս և հոգւով զամենից, ըստ երկոցունց աշխատեալ հեզութեամբ. նա որ զբնութենէնն տունկ չորացոյց զօրութեամբ, հնազանդեալ Հօր մահու չափ և մահու խաչի փոխանակ անհնազանդութեանն Ա՛դամայ. վասն այսորիկ որպէս անհնազանդութեամբ հնոյն մեղաւորք բազում եղեն, նոյնպէս և հնազանդութեամբ նորոյս Ա՛դամայ արդարք եղեն հաւատացեալքն ՚ի նոյն: Այս թէ այս որպիսի յեղանակաւ՝ ասելի է:

Ա՛նմեղ երևեցաւ Վարիստոս ինքն միայն, ուստի և Հոգին սուրբ հանդեաւ ՚ի նա միայն. և արդարութիւն Ա՛ստուծոյ բարեհաչակ եղև ՚ի նորին անմեղութիւնն. և թէ ոչ ունի ստեղծուած բնութեանս բնաւորական զարթութիւնն, այլ եկամուտ է. և օրէնքն՝ բնութեանս օգնական է և ոչ հակառակ. ըստ այնմ: "Ո օրէնն ետ յօգնականութի՛ւ ... և ընդ օրէնն անցանելն՝ և բնութիս սահմանի է դրժումն, սակս որոյ և զգջումն: Երևեցաւ սերմանող ՚ի մեզ վհակառակն օրինացն և բնութես սատանայ, որ և մարդասպան ՚ի սկզբանէ, և յաղագս սպանութեան և դաւաճանութենն գոտա դատապարտ. յայնմանէ՝ որ եկն դատաստան առնել աշխարհի, և ընկենուլ զնա արտաքս. որ և ասէր, իշխան աշխարհիս այսորիկ դատախազութեամբ անմեղութես իմոյ յարդար իրաւունն Ա՛ստուծոյ և Հօր և Հոգւոյն դատա-

պարտեալ է. իսկ մարդիկ դատապարտք էին վասն հաւանելոյ կամաց նորին, և արտաքոյ բնութեանս և օրինացն Յուժոյ յանիրաւութիւն խոտորելոյ. և յայսմ պատճոյ որոյ մեք պարտապանք, Քրիստոս որ անմեղն էր և անպարտ՝ էր և գեր ի վերոյ մահուն որ մեղացն խայթոց է. սակայն ետ զկիր անմեղ մարմինն պատարագ Յուժոյ Հօր փոխանակ մեղաց մերոց: Այս վասն զի նա որ անպարտն էր մեղաց, և գեր ի վերոյ մահու՝ մեռաւ, մեք որ պարտաւորքս էաք՝ ի մահուն պատճոյն զերծաք, և քաւեցաք արեամբ նորա, որ ետ զանձն ի վերայ ոչխարաց իւրոց ըստ առաքելոյն. "Օ որ յառաջն եղ Յուժած քաւութիւն ի ձեռն հաւատոցն արեամբն նորա,,:

Յառաջ, ասելով, զկանխահաւատութիւն՝ մարգարէիցն նշանակէ. յորոց ասէ Եսայի. "Ձեր մատնեաց զնա առ մեզ մեր, և մտադիւր ծառայեաց բազմաց, և զբազմաց նա վերացուսցէ,,. և Յուժած Հայր ած զնա՝ի չարչարանսն. քանզի "Ինձէս սիրեաց Յուժած զաշխարհ՝ մինչև զորդին իւր միածին ետ,,. զի ամենայն որ հաւատասցեն ի նորա անօրէնութիւն մահուն՝ մի կորիցեն, այլ ընկալցին զկեանս յաւիտենականս. իսկ որ ոչ հնազանդին Հրոյ, բարկութիւնն Յուժոյ մնայ ի վերայ նոցա. քանզի զնորաւացի բարկութիւնն նորա չիջցէ[2] յաշխարհէ միայն նորա մահուն պատարագին, որ վասն մեր տուաւ Հօր:

Լուր եկեալ Քրիստոս ի խաչն, եցոյց Հօր թէ ոչ եմ մահու արժանի, վասն զի մահն խայթոց մեղաց է, և ես անմեղ եմ: Նա և ոչ կամիմ զնոյն՝ չարչարելի ունելով մարմին, որ վշտանայ մահուամբն. սակս որոյ և երկնչի ի նմանէ: Անեիմ և շունչ զգայական՝ որ խորչի յամենայն նախատանաց. իսկ բանական հոգիս յօժար է տալ զանձն իմ պատարագ, և զաշխարհս քաւել: Հայր եթէ հնար է ձրի արդարանալ աշխարհի, անցո յինէն զբաժակս մահու երկիւղի. ապա թէ ոչ կամիս, այլ ի քեզ զսա, զի եղիցին կամք քո, զոր իմովք յերկնից զի մարմնով արարից: Հայց Հայրն ոչ ձրի արար զմեր քաւութիւնն. որոյ աճեցան յարդարութիւն և յիրա-

1 Մի որ. կանխատեսութեան: 2 Ի միում որին. Զքնոյց:

ւանս հաստատեալ է. այլ զողորմութիւն Աստուածութեամբ՝ որդւոյն տնօրինութեամբ ուղղեալ առաջի՝ ի գլուխ աճ զարդարութիւնն. և առեալ գին զսուրբ և զպատուական արիւնն, կշռեաց ի գիտութիւնն իւր, և յաղթող եհաս մեզաց ամենայն աշխարհի. և մեք այնր գնոց տուաք ՝Արիստոսի սեպհական ժողովուրդք, ըստ գրելոյ առաքելոյն. "Ո՛չ ապականացու արծաթեղինօք փրկեցայք, այլ պատուական արեամբ ամբիծ և անարատ գառինն,,. և գնոց գնեցայք, փառաւոր արարիք զ՝ստուած ի մարմինս ձեր և յոգիս. և հովուել զժողովրդ տեառն զոր ապրեցոյց արեամբն իւրով. վասն որոյ և օր ըստ օրէ զայս արիւն պատարագեալ ՝օր՝ քահանք՝ի պարտեաց մեզացն՝որպէս գրեալ է. "Զ՝րիւնն Քհաւսի սրբէ զմեզ յամենայն մեզաց,,. քանզի ետ զինքն Ա՝ստուծոյ ՝օր փոխանակ ամենեցուն մեր. և ՝այր առեալ յիւր հնազանդութիւնն մահու չափ մատնեաց ըստ մարգարէութեն՝ի ձեռս թշնամւոյն. "Ձեր, ասէ, մատնեաց զնա առ մեզս մեր. և նա առ վշտին ոչ բանայ զբերան իւր,,: Զդ լցեալ՝ի նա զբաղց թշնամւոյն որ՝ի ներքին մարդն՝ յաղթեցաւ մարմնոյն չարչարանօք. ոչ բանայր զբերանն պատժողական հրամանաւ չարչարողացն, որ և վշտանայր. զի հնազանդեցաւ ՝օր մինչև՝ի մահ խաչի. ՝ի վերայ որոյ յարոյց սատանայ զաշակերտն մատնութեամբն, զքահանայսն և զգրպիրան զրպարտութեամբն, զդատաւորն անիրաւութեամբն, զգինուորսն նախատանօքն. և տէրն յաղթեաց իւրաքանչիւրոցն հեզութեամբն և խոնարհութեամբն. և պարտաւորելովն ըստ մարմնոյ՝ զանասարկուն իրաւամբք և արդարութեամբ պարտեալ կործանեաց. որպէս և առեր նախ քան զնոսն. "Դ՝եմիկ դատաստան է աշխարհիս, այժմիկ իշխան աշխարհիս ընկեցեալ արտաքս,,: Ա՛ւ առաքեալ "Ա՝ղբկեաց զՀոգիսանութիս և զպետութիւնս, յայտ յանդիման խայտառակեալ նշաւակեաց զնոսա յանձին իւրում՝ի յարութեան իւրում,,: Խայտառակեալ զայն իմանամք, զի մինչև՝ի խաչն բևեռելն սպասէր սատանայ նմին ըստ երիւրել. յորժամ խաչին մահ մարմնոյն կատարեցաւ, մեղքն որ բնութեանս կործանիչ էր՝ բարձաւ և ունայնացաւ, ՝ի միջ հեռացեալ, և ՝ի գայթակղեցուցանողին վերայ

զարձեալ. և սատանայ մերկացաւ յիշխանութենէն որ
'ի վերայ մեղանչականացս, և նշաւակեցաւ թէ յան-
ցանքն՝ նորին որոգայթ է, և ոչ մեր կամաց կամ քնու-
թեան պտուղ. և ստուգեցաւ այս, զի մարմինն՝ որ կա-
մաւ իւրով մեղաւոր մեռաւ, վասն անմեղութեանն՝ ա-
պականութեանն անկերակրելի մնացեալ՝ յարեաւ. զի
"Մարմին նորա ոչ ետես զապականութիւն, և ոգին ոչ
ըմբռնեցաւ 'ի դժոխս,, որպէս և գրեաց Պետրոս:
Վասն յորժամ աւանդեցաւ 'ի ձեռս Հօր, եկն իշ-
խան աշխարհիս ընդ առաջ՝ որպէս և այլ հոգւոց, և
'ի նմա ոչ ինչ եգիտ յիւրոյն. յայնժամ ապա ծա-
նեաւ, թէ մեռաւ ոչ ըստ իւր յաղթութեանն կամ
ըստ բնութեանն տկարութեան', այլ վասն Հօր հնա-
զանդութեանն, որ ասաց նմին առնել զայս: Յայն-
ժամ զամենի հարեալ նշաւակեցաւ անմեղութեամբն
Քրիստոսի պարտականն մեղաց աշխարհի, և նիզակ
յուսահատութեանն լուծանն, փականք դատապարտու-
թեանն բացան, դրունք պինձիք իշխանութեան դի-
ւացն փշրեցան. և ոգին Քրիստոսի "Ազատն որ 'ի
բանդին էին՝ երթեալ քարոզեաց ազիրկութիւն,, որ-
պէս գրեաց գլուխ առաքելոյն Պետրոս: Այս զիշխանն
աշխարհի կործանեալ առ ոտս, առ յինքն զիշխանու-
թիւն քնութեանս մերոյ յերկինս և յերկրի. 'ի կատար-
ման տնօրէնութեանն յարութեամբն որ տուաւ նմա
իրաւամբք և արդարութեամբ 'ի տնօրինելն զայս աքան-
չելի հնազանդութիւն Հօր, որ և զնոյն ինքն առ բար-
ձրացոյց և նստոյց ընդ աջմէ իւր և արար իւր երկրպա-
գուս զերկնաւորս և զերկրաւորս և զանդարամետա-
կան մեռեալսն. և զնա եդ գլուխ 'ի վերայ ամենայն ի-
րիք եկեղեցւոյ: Յաղագս որոյ և օծումն հոգւոյն էջ
'ի գլուխն և 'ի մարմին նորին և յանդամս, քահանայա-
գործելով նորին զմարմինն իւր ըստ կարգին Մելքիսե-
դեկի Քահանայ Հօր. ըստ որում ասէր. "Յորժամ կա-
տարեմ զտնօրէնութիւս, ապա երթամ և զմխիթարիչն
առաքեմ առ ձեզ,. զոր և առեալ Հօր առհաւատեալ՝
եհեղ 'ի մեզ զնորին հոգւոյն, որ վկայէ հոգւոյս մե-
րոյ, թէ եմք որդիք Քահանայ. նա և զոր ոչ հանդար-

1 Այս ինքն, ոչ որպէս թէ յաղթեալ էջե գնն տկարութէ փրկչին:

տէաք առանց նորին Հաւատացեալքին տանել ՚ի Վրիաստոս՝ եկեալ ուսոյց մեզ և յիշեցոյց և հաւանեցոյց զտիեզերս առ ՚ի նորին հաւատն, որով և պետրոս զանհաւանսն տեառն նշանօք խաւնեալ վարդապետութեն երեք հազարս ՚ի միում աւուր աշակերտեաց. և այսպէս միշտ ՚ի Վրիաստոս իջեալ յեկեղեցի իւր ընորհք Հոգւոյն յայտնէ բնաւից զիտոս խորհրդոց նորա. ըստ առաքելոյ. "Այլ մեզ յայտնեաց Աստուած Հոգւովն իւրով, զի Հոգին զամենայն քննէ, և զիտոս Աստուծոյ,, Քայսմ Հոգւոյ լուսաւորեալ մարգարէքն և առաքեալք և վարդապետք եկեղեցւոյ, հարքն զայսր խորհրդոյ զօրութիւն ետուն մեզ յիւրաքանչիւր բանս. զոր ընչաւոր մարդ ոչ կարէ ընդունել, քանզի յիմանալութի է նմա. իսկ մեր համեմատեալ ընդ Հոգւոյ ըզՀոգևոր բանս նոցին՝ հաւատամբ ասացելոցս, և խօսիմք նոցին սրբոցն համաձայն. և գիտեմք և վկայեմք խորհուրդ մեծ գոլ զտնօրէնութիւնն Աստուծոյ. յայտնի իսկ և մեծ ըստ առաքելոյ. "Ի կայէ և Դաւիթ. "Ընակս զի մեծ են գործք քո տէր,, և խոր յոյժ խորհուրդք, և այր անզգամ ոչ ծանիցէ, և անմիտն ոչ առնու ՚ի միտ. զի ոչ աքանչելիք զգայարանաց առաջի, այլ արդարութեամբ փրկագործութիւն ըստ բազմապատիկ իմաստութեն. և ոչ զօրութեամբ, զի մարմնոյն որով մահ՝ նովին լիցի և յարութիւն մեռելոց,

Արդ ՚ի գլխաւորելս զՀաւատս, զբանն մարմին խոստովանիմք, և զմարմնոյ բնութիւն ընդ նմին անձառ միացեալ ՚ի կուսական արգանդին. և ՚ի կրեն զկիրս մարդոյ ոչ առանձինն ՚ի բանէն, այլ Նորատարապետաւ բանին վարեցաւ յամենայն մարդկութիւնն, Աստուած գոլով Համանգամայն և մարդ, բանն էր՝ որ ներգործէր և կրէր մարմնովն, խոստովանիմ. բայց զյատկութիւն բնութեան մարմնոյն ոչ զլանամ յանձառ միութիւնն, զի մի խորհրդոյս զօրութիւն աղաւաղեսցի. այլ կրեաց անձառ միացեալ բանն ՚ի մարմինն մարմնովն զմարմնոյ կիրս. և թոյլ ետ մարմնոյն յիւր բնական ներգործութիւնն և ՚ի կամն վարիլ, զի անմեղ ճնալով մարդացեալն Աստուած ՚ի հարկաւոր կիրսն և ՚ի ներգործութիւնն և ՚ի կամն, բնութեանս արդարութիւնն հրաշակեսցի. քանզի Աստուծոյ զինչ մեծ արդար լինել,

բայց մարդոյ մեծ. վասն այսորիկ և մեծ է մերս աստուածպաշտութեան խորհուրդս, որք հաւատամք յայն՝ որ երևեցաւ մարմնով արդարացաւ հոգւով. զի նորա արդարութեամբն փրկեցաք. և արդարութիւն հոգւոյ ոչպէս ուղղեր առանց ունելոյ տարբերութիւն յաստուածայինն կամաց ընդ Որդւոյ աստուած խառնեաւն ոգի ըստ իւրն կամաց։ Որ զի ունէր, երևեցոյց ի ներգործութիւնս. և զի արդար գտաւ, նովին յաղթեաց թշնամւոյն. նա և զիարդ մարմնոյն կրից անմեղութիւնն զմեզ փրկեր, թէ ոչ տարբերութիւն ունէր բնութիւն յաստուածայինն անմեղն բնութենէ. և զի էր այս, եցոյց ի ներգործելն մարմնով, և ճեալով անմեղ ի հարկաւոր կիրսն յոր ամենեքեան մեղաք։ Փութաց զարդարութիւնն ի վերայ ամենեցուն մեր, սակայն յայսոսիկ ոչ տարբերութիւն աստուածութեանն և մարմնոյն անձնաւ խառնմանն, այլ մի Քրիստոս, մի տէր, մի անձն, մի Որդւոյ դաւանեմք զՈրդւոյն հասանն զամսոյն և մարդ ըստ միաւորութեանն բնութեանցն յատկութեանցն հայեցողութեամբ. քանզի Որդւոյ ոչ է բնութեան անուն, այլ փառացն. և բնութեանն անուն է սքանչելի և անհաս. ուստի և մի Որդւոյ աւելով զանան մարմնացեալ, ոչ շփոթեմք զբնութիւնսն. քանզի գնաց Այր կնքեաց Որդւոյ. և որ Քրիստոսն է ըստ մարմնոյն, նոյն է ի վերայ ամենեցուն Որդւոյ օրհնեալ յաւիտեանս։

Որպա ընդէր է ոմանց յանդգնել և ապաշնորհ առնել զերախտիս արդարութիւն փրկագործութենէն Որդւոյ, նրբելով և ի կարծիս ձգելով զխորհուրդ ներմարդութենն, կարծելով մեռոտիախորհողացն այնու զՈրդւոյ բարձր երևեցուցանել, անպիտացեալ՝ թէ նուաստացուցանեն մանաւանդ, այլ և զիւրեանց փրկութիւն յաչաղեն. զի Որդւոյ խոնարհութիւնն բարձրացաւ. և ընդ այս բազմապատիկ իմաստութիւնս՝ որ յայսմանէ երկնաւորացն յեհեղեցոյ՝ հիացան, Որդ որք Որդւոյ տան զներգործութիւն մարմնոյ և զկամս իբրև զմիոյ բնութենէ, և ոչ որպէս Որդւոյ վերբերութեամբ կրեալ զնոյնն մարմնով, երիս մեզս մեղանչեն. նախ՝ զի զանչարշարելի

1 Մի տրին. Երեւ. բոխանմամբ։

բնութիւնն չարչարանաց և կրից մարմնոյ ՚ի ներքոյ գնեն, ապա զի մարդով եղև մահ և ոչ մարդով յարութիւն մեռելոց, որոյ խափանեալ էր կամքն և գործն. և Ա՛ստուածոյ ամենայն ինչ հնարաւոր է. և ոչ վասն հնազանդութեն բարձրացաւ մարդկութիւնս. զի և ըստ նոցա չհնազանդեցաւ՝ ոչ ունելով կամն, որոյ է այս ներգործութիւն։

Ասէ երրորդն և այ թշուառութի, զի նա բուռն եհար զբնութենէս և ամենայնիւ եղբարցս նմանեաց, զի ողորմած լեալ մեզ քահանայապետ փորձիւ չարչարանացն. իսկ նոքա արտաքս ձգեն զնա ՚ի վշտակցութենէ և յեղբայրութենէ և յողորմածն լինելոյ հաւասար կրից փորձիւ. որ և քան զամենայնս է ողբոյ արժանի։ Ասկ մեք հաւատամք զԱ՛ստուած մարդացեալ և մարմնացեալ անյեղաշրջելի բնութեամբ. զի "Անոյն եմ, ասէ, և ոչ փոփոխիմ,,, և ոչ մարմինն որդւոյ մարդոյ այլայլեցաւ ՚ի բնութիւն Ա՛ստուծոյ. այլ նոր և աբանելի խառնուածով միացան երկու բնութիւնքն ՚ի մի անձնաւորութի՝ պահելով և յեթ միութեանն անշփոթ զտարբերութի բնութեանցն յատկութեան. և վասն այսորիկ անուանի խառնումն նոր և աբանելի. և անօրինեաց արդարութեամբ զփրկագործութիւնն, որոյ բանդ վերոյ եղև պատմիչ. և այս անհաս ՚ի հրեշտակաց խնամատութիւնս Ա՛ստուծոյ նոցին յայտնեցաւ՝ խոնարհութեան բանս, զոր նոքա անմարթ Ա՛ստուծոյ գիտէին. որպէս արքունեաց սպասաւորք՝ թագաւորի զտրկանացն։ Ասմեք առ ՚ի սոյն հաւատալովն արդարացեալ խաղաղութիւն և հաշտութիւն կալաք առ Ա՛ստուած ըստ առաքելոյ. քանզի վերջացեալքս ՚ի գործոց օրինացն պատահեցաք Ա՛քրիստոսի ընորհին. և զնորին հաւատոցն արդարութիւն ունիմք, որ յԱ՛ստուծոյ տուաւ մեզ. և մեզք այսու հետև մեզ ոչ կարեն տիրել, զի եմք յայսպիսի խոստովանողս և ընորհիս հաւատոյն և ՚ի գիտութիւնն. որով և սրբիմք հանապազ ըստ առաքելոյ. "Ա՛րիւնն Ցհսուսի՝ որ ՚ի ձեռն Հոգւոյն մատոյց զանձն անարատ պատարագ Ա՛ստուծոյ, սրբեսցէ զխիղճ մեռոց ձերոց ՚ի մեռելոտի գործոց ձերոց պաշտել զԱ՛ստուած կենդանի,,. որ և նոր ուխտիս իւրով արեամբն հրաւիրելոցս ժառանգութեան յաւիտենից։ Արժան և զմեզ արժանի արասցէ նոյն ինքն ամենատուրք և երկրպա-

զելի տերութիւն Թագաւորականի Աչքորդութեանն, վասն որոյ բանս գլխաւորեցաւ ՚ի պատիւ և ՚ի գոհութիւն անուան իւրոյ և աստուածութեանն փառաց, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։

Ի ԽՆԴՐՈՑ ՀԱՑՑՄԱՆ ԵՐԻՑԱԿԻՑ ԵՂԲԱՐՑ

ՓՆՆՈՒԹԻՒՆ ԿԱՐԳԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ, ԵՒ ԲԱՑԱՏՐԱԳԻՍ ՈՐՈՇՈՒՄՆ ԱՐՏԱՔՈՒՍՏ ՄՏԵԱԼ Ի ՍԱ ՆՈՐԱՁԵՒՈՒԹԵԱՆՑ

Ա ԿՒԶԲՆ առաջի եդեալ բանիս՝ գոհութի՛ւ Աստուծոյ կարգեալք, որ շարժեաց զտղայական իմաստ եղբարց մերոց բանադատել զմեզ ՚ի խնդիրս. որ զօգուտն տնօրինեալ հաւատով քննողաց, ոչ անիրաւացի խորհեալ վասն այսր գգոհութիւն ՚ի Քրիստոս կացելոցս, և ընդ հեռանորա զշաւիղս ուղղել խրատելոցս՝, զի ահա և նա յայսպիսի դիպող ժամանակ յօրինակ մեզ արար զսոյն՝, այն որ առատացեալ հոգւոց և մարմնոց բժշկութեամբ անգոհանէր յիմաստնոց և ՚ի գիտնոց. որոց Աստուածել գնոյն վայելուչ էր. և հաւատարմանայր յաչս մանկամիտ առաքելոցն, որոց ուսուցանելն գնոյն անյոյս էր։ Զնոյնպէս ասա Տէրունի սրբով և ասէր. "Գոհանամ գքէն Հայր տէր երկնի և երկրի, զի ծածկեցեր զայս խորհուրդ յիմաստնոց, որպէս և հաճոյ եղև քեզ, և յայտնեցեր տղայոց.,,։ Աչ գիտեմ նա որ ՚ի ծոց Հօր միշտ, յայնժամ միայն գնանանէ գոհանայր, եթէ ոչ մեզ տալով բարիոք ապացոյց. զի յայնժամ տիրապէս յայտնի կարութիւն զօրութեանն Աստուծոյ, և մեզ պարզապէս երևի՝ յորում անյոյսքն լինիցին հնարաւորք։ Ուստ առ որս ներգործութեանն զօրութիւն ՚ի ներգործելն ըստ նմին բազում անգամ բնական կրիցն տամք գկատարումն, և վերջանամք ՚ի գոհութենէն Աստուծոյ. զոր օրինակ եթէ ոք ՚ի փշոց խաղող քաղէ, կամ յան-

1 Մի օրին. Ի ժամանակս։ 2 Մի օրին. Ձոյն։

պտուղ յանդաստանէ պտուղ ատոր՝ զոյգ յուսահատութեանն ձգի և յուրախութիւն, ըստ այսմ ցնծացաւ նա յայնժամ զպտուղ հաւատոյն զոր ակն ունէր գտանել՝ ի գալիրան և յօրինականն ձեռնտուութեամբ գլոց. զի եգիտ՝ ի նոսա ոչ զրկեալ էին յայսպիսի մարդկային իմաստութենէ, տալայք գոլով արհեստի բանաւորութեան. սակս որոյ և զՅօրէ գոհանայր, թէ այս՝ ի քէն ընդէր սոցա և յայտնութիւն, և ոչ մարդկան իմաստից գիւտ. որում և զգոհացողականս մատուցանեմ փոխարէն քեզ Տայր։ Պատ մեզ արդարև արժան է զնմին իսկ զյուսոյն մերոյ զՔրիստոսէ գոհանալ՝ առ՝ ի խնդիրս ձեր հայելով, որ հանդերձեալ է ընդրկօքն Պատուծոյ տալ պտուղ քաղցր և ախորժ ձեզ, և բազմաց օգուտ՝. զիաւրդ և ոչ ցնծասցուք յայսմ ժամու տեսեալ, զի ծածկեալն՝ ի բազմաց փափաքելի կրօնիցդ և կարգաց ուղղութի՝ ձեզ ըստ որում են սիրելի քաղցր և ախորժարար, մինչ զի զլուր բանի որ վասն այսորիկ, արձանագրութեամբ մաղթիք անջնջելի՝ ի միտս ձեր ամբարել Աչմարտութեամբ. լի բերան գոհանամ զՔրիստոսէ և զՀոգւոյ նորա սրբոյ, որ ընդէ յոր կամի և յորս ախորժէ՝ ի փառս Պատուծոյ Հօր։ Այս նախ՝ թէ ախորժէք, զայս քննեսցուք։

Այլ աղագաւ ծածկեցաւ բան՝ ի դպրացն և՝ ի փարիսեցւոցն, և յայտնեցաւ առաքելոցն տղայոց. զի թէ ըստ սպարզ մտաց՝ Հօր տամք զնոցին, անմեղադրելի մնանն նոքա՝ ի մեղանչելն, այլ Հայր միայն զայս հաճեցաւ, զի յորժամ նոքա կամակոր մտօք անպտուեցին զնոցն, յայտնեաց նոցա ոչք փափաքելին ուսանել, և բնաւորական իմաստիւ ոչ ունէին զօրութի։ Այս չիմաստնոցն էր արհամարհեցաւ, ասիցէ ոք. ոչ թէ կամք Հօր՝ զոր մի լինչի կարծել, այլ զի ծառայեցուցիչ նախանձով զայս մտաց խաւարեցուցին, և աւանդութեանց ջատագով լինէին. ոչ որոց Պատուծոյ ունէին, այլ ծերոցն. զի՝ ի նոյն վարդապետական աշխատ նատէին, յորում և Քրիստոս երևեցաւ, և ուսուցիչք էին ժողովրդեանն. յորժամ տեսանէին զտէր մեր՝ ի նոյն ընդրկս առաւել քան զինքեանս պայծառացեալ՝ քննել զՁչմարտութիւնն, ՝ինա-

1 Յօր. մեռամ Ո-ԹԷ։

խանձէ անտի տկարանայիւն, և հայհոյութեամբն զնա անգոնէին. ըստ որում և ասէ խնամատունն. "Լսխանձ առն՝ի մերձաւորէ իւրմէ... և զի կամս տգիտանայիւն, որպէս ասացաւ, և ոչ քնութեամբ, ծածկեաց՝ի նոցանէ և Աստուած զնոյնն։

Վարձեալ և սիւնք օրինացն էին երկու աթոռքն, քահանայութիւն և թագաւորութեանն. և ահա այս վաղ ժամանակօք բարձեալ էր՝ի նոցանէ յաղագս գեղութեանն և տառապանացն. առ որս տեղի գտեալ ներգործութիւն չարին իբր յանպահապան քաղաք, զանազան աւանդութիւնս եմոյծ՝ի մէջ նոցա, առ այս մարդկան ահարկու, և առաջի Աստուծոյ փոքունս և արհամարհեալս։ Յորժամ զայնոսիկ լուծանէր Քրիստոս, քանզի փառասէրք էին՝ դժուարէին։ Այլ տես զինչ ասէին. "Հակերտքն քո անցանեն, ոչ զօրինացքն Աստուծոյ, այլ զաւանդութեամբ ծերոցն... այսպէս է տեսանել և մերս անբարի ժամանակ, աւանդութեանցն զբաղումն անբերելի վրէժխնդիրս, և օրինացն և ոչ քնաւ քննողս։ Այլ ինձ յայսմ վայրի տարակուսանս մեծ. քանզի թէ՝ի մէջ առնում դատել, ահա զբնակեր քննելով զանձն իմ կշտամբեմ և անաչառն առնէի մատնեմ, հաւատացեալ ասացելոցն, "Որով չափով չափիք չափեսցի ձեզ... և թէ զանց առնեմ զայսմանէ, ընթացք բանիս ոչ պարզաբար կարող է տալ զիւրն զօրութիւն առանց ընդդիմադրութեանցն լուծմանց և պատասխանեաց։

Այդ նախ առաջին՝ի սկզբանս աղաչեմ զամենեսեան զթածն Քրիստոսի Յիսուսի, մի ոք համարեսցի զիս անզգամ կամ բժիշկ մեղանչական առ՝ի զայլս դատելով զանձն արդարացուցանել. այլ զիջանել ձեզ առ իմ տկարութիւն և մանկական իմաստ, որ՝ի սիրոյ ամենեցուն շարժեալ եկի յայսպիսի յանդգնութիւն, որ իմն նուաստութեան՝ անմարթ էր՝ ծերունեաց և կատարելոց հասակաւ ուսուցիչ լինել. և մի յորժամ լսէք զդիմումն բանիցդ պէսպէս անկարգութեանց յայտնիչ, ՝ի նեղըլոյնոցին կացեալ զընդդէմ յառնելն ախորժէք՝ իբր թէ անձանց լինիք վրէժխնդիր. քանզի վրէժխնդիր ա-

1 Յայսմ օրին. Ն---աց անյն։

մենեցուն մեզ այս է, որ զօրհնան Աստուծոյ փափաքէ նորոգել. և ոչ այն որ արտաքին արկածիցն լինի ջատագով. զի այն յայտ է, Թէ ինքն ընդ անձին իւրոյ ոգոլի, Աղիատաի գոլով անգամ, և օրինաց նորա Թշնամի, Աի, և վասն զի մանուկ հատակաւ և մեղսասէր անձամբ սպառաւորեմ ընորհայ Յոգւոյն, և հարց մերոց կանոնական սահմանաց, որք առ իս բերիք՝ ըստ արժանի իմում՝ սաստիւ, իմ աղագաւ աստուածամարտ գտանիք ցիք, և Յոգւոյն սրբոյ հայհոյող, որպէս ասաց տէրն. այլ՝ի մերենոյ ընկալարուք պտուղ, և՝ի տատասկէ Թուզ. քանզի Աստուծոյ և ոչ մի ինչ անհնարին՝ի մարդկան տալ ակաւելեաց. և Թէպէտ ես անարժան, ՝ի ձերն բազմապատիկ շահ օգտի հայելով ետ ինձ՝ի սոյն ձեռնադրել՝ի փառս անուան իւրոյ սրբոյ, խնդրեմ յամենեցունց, մի կշտամբեցայք յումեքէ վասն որոնելոյ զաստանայական սերմանեալ անկարգութիւնս. զի Թէ այս ոչ՝ի սկզբանն գաստեցի եղբարք, և անպտուղ լինի այժմ առկայացեալ մոլար օրինադրութեանն, յորժամ՝ի խնդարկ դիմեալ բանս զանազան նորաձեւութիւնն ուսուցանէ՝ի ժամանակիս կարգացն հեռի, յաչագկոտքն և տգէտքն զմեզ ոչ եղծեալ օրինաց նորոգիչք համարին, այլ նոր աւանդութեան մուծիչք. որք ոչ գնահանեացն քննեցին ուղիղ ընթացս, և ոչ գլեա նոցա մոլորութե պատճառս. վասն այսորիկ ախորժ բանս բժշկութե՝ զի խոր խոցոտեալն կսկծելի դեղովք առողջացուցանել և յիմարական Թմբրութենէն զարթուցանել, զի բազում անգամ և զայս տեսանեմք՝ի բժշկական արհեստ առեալ՝ի կիր։

Աս մի ոք համարեսցի զիս ընդ մարդ կապել, կամ զեղբարս իմ Թշնամանել, զորս առի հրամանի իբրև զանձն սիրել. այլ՝ի դէմն նոցա խօսիմ ընդ ախտն որ՝ի ներգործութենէն սատանայի՝ի մէջ մեր սերմանեցաւ։ Աբդ յորժամ լսես զհակառակադրութիւնս, և դատիս՝ի խղձէ մտաց՝ ունել լինչ յայնցանէ զորս առ Թշնամանէ, քեզ վշտակից տես զբանս, և ախտին յորմէ չարչարիս՝ կշտամբիչ. զի Թէ մարմնոյ բժիշկք բազում անգամ զնոսին իսկ զանդամս մեր խաբելով և հատանելով ոչ Թողուն Թշնամիք, որչափ աս առաւել սա որ զհոգւոյ բարեաոհմութիւն ախորժէ

կակծելի բանիւք պայծառացուցանել և զոգեղացուցիչ
ՀՀՀան զաղրաթ որմիք՝ օծութեամբ Հոգւոյն ի նմանել
սատակել, սիրելի լինի ամենեցուն որոց կամին զիրկու-
թիւն։ Եւ դուդ խորշին ի մէնջ եղբարք մեր և ազգա-
կիցք՝ տեսեալ զի ի ժամանակականս առանդութեանց
հրաժարեմք. և բամբասիմք ի բազմաց ի նոցանէ ի
բացակայ լինելն, եթէ օրինս քակտեմք. և յորժամ
մերձ առ իրեարս լինիմք, նկուն լինին ի Հնմարտու-
նէն և զառանդութեց բուռն հարկանեն։ Եւ ա և յայտ
տամք նոցա տեղի. զեղեցիկ դատիմք ի ձէնջ եղբարք,
քանզի գրեալ է. ...Ի փոխեացես զսահմանս զոր եդին
հարքն քո. և որ քակէ զցանկ, հարցէ զնա օձ... բայց ասա,
զորս խոստովանիս դու հարս քո. եթէ զառաքեալն և
զՀայրապետսն որք աստուածաշունչ բանիւք դեռ ևս
կենդանի են ի միջի մերում, և առ ամենայն Հնմարտու-
թիւ առաջնորդեն, և ես եմ նոցա ջատագով, և առ ի
նոցանէ վարժեալ և աշակերտեալ։ Եւ այս թէ այլ ո-
մանս, որոց ոչ անուն երևի ի միջի մերում, և ոչ արձա-
նագրութիւ բանից վկայ իւրեանց ուղղութեանն, զիմաս-
տասիրութիւն պարտիմք յայտ վայրի ի գործ արկա-
նել, և ընտրութեամբ Հնանալ, մի գուցէ լինիցին
մեզ մոլորեցուցիչք ի սրբոյն Հետոց, որպէս ծերքն Հա-
բայէլի ի Նաբսխէ։ Եւ դՀոգի Հեզութեան և զխո-
նարհութեան զգեցեալ՝ եկ և քննեացուք ընդ միմեանս
համեմատութեամբ զօրինս վերջնոցս որ առանց գրոյ,
և զառաջնոյն որ գրովք և առաքինութեամբք նոցա
փայլեն ի մէջ մեր։ Այլ քանզի որ Հաւատոյն էր բան,
յայտնեմ վայրի Հատուցաք, և զսիրոյն որ առ ազգս քրիս-
տոնէից. այժմ առաջի կայ մեզ գտանել զՀնմարտութի
կարգաց եկեղեցւոյ որ ըստ Հարցն մերոց սրբոց և երա-
նելեաց ընթացից։

Նուռն Հարցուք նախ զժամանակականս առկայա-
ցեալ անկարգութեանց. ոչ մտեմք՝ ասեն յեկեղեցի
աղօթել, բաւ որում և առաջինքն։ Որ առաջինքն եղ-
բայր, տուր ինձ պատասխանի. տուրբն Նրիգոր, եթէ
Ներսէս, Նահակ, կամ այլ ոք յորդւոց նորա, զորս փո-
խանակ Նստուածոյ ունիմք, և ի վերայ նոցա հիմնացեալ

1 Մի սրին. Մատն.

եմք. եթէ ոչ մոլին, հաւանութեամբ ընդունիմ զՀաւատոյ պարտութիւնդ, և գովեմ զչնմարտութեանդ լինել օժանդակ. ապա թէ այլք ոմանք հուսկ յետոյ՝ օտար ի սրբոյն ցուցին մեզ ձանապարհ, որոց ոչ բան ունիմք և ոչ յիշատակ, բարիոք համարիմ զբարեյիշատակացն նախապատուել զօրինադրութիւն։ Այս զայս ուստի առ սէ հաւանեցուցես, եթէ նոքա յեկեղեցի աղօթէին՝ի գիշերի և՝ի տուընջեան։ Յարձանագեալ խորանացն որք կան մինչև ցայսօր հաստատուն, և ոչ ունին առընթեր ժամատուն. և Հայկ տուրք հայրն մերձ առ սեղանն տէրունական նստելով՝ ետես զՀրաշագանն տեսիլ, ըստ որում ասէ պատմութիւնն. նա և Թագաւորքն բազրատունեաց, և որ առ նոքօք Հայրապետք՝ ընդ նոյն գնացին շաւիղ՝ եկեղեցիս միայն շինեալ տունս աղօթից. Հաւանեցուցանեմ զքեզ այսոքիւք. գիտեմ զի Հաւատնական բանիս Հաւանիս, քանզի զմերոյն բուռն Հարի՝ի սկզբանն՝ զինջանելով ըստ քումդ տկարութեան։ Այլ թէ ոչ ազգ քրիստոնէից նախապատիւ քան զմեզ և յառաջագոյն՝ և այսօր իսկ առ մեզ աղաւաղեալ օրինաւքս պայծառանան. բայց իմդ եղբօր տկարացեալ է Հայեցողութիւն առ՝ի նոցայն Հայել Հնմարտութիւն. վասն այսորիկ՝ի մերս գանձէ Հանցաւք զնոսն և զՀինն՝ աշակերտեալ գալիցս։ Այ, ասէ, այս այսպէս յառաջագոյն, բայց յետոյ լուծին զայն օրէնս. ո՞ւր, ՚ի մէջ անցցէ, որպէս զի տեսցուք զառաւելութիւն խնամոյն, և ուսցուք զպատճառս խորհրդոյն. մի գուցէ այլ ինչ յայտնեցաւ նմա զոր նոքա ոչ ծանեան. գիտեմ զի ոչ գիտեմք զլուծանողն, և ոչ զառ՚ի նա ուղղութիւնն։ Այլ զայս ասեն, մերս եկեղեցիք մեռանած է և օրհնած։ Այարիւք ասես. և ո՞ր աղաւաս մեռանեցաւ, եթէ ոչ զի որոշեացի տուն Այստուծոյ. կամ թէ մեք մեռանեմք, և նոքա ո՞չ։ Այս յայտ է թէ թիւրեցաք յուղիղն շաւղաց զայս առնելով. ապա թէ Հաւատաս ինձ, նոքա նախ զայս արարին, և մեզ ուսուցին։ Այ կամիս և զմեռանիսն խորհուրդն քեզ ուսուցից, և զեկեղեցւոյս զյատկ պատուոյն՝ որպէս ինձ թուի։

Այէք մարդիկ մեռեալ էաք՝ի մեղս մեր, կենդանի գոլով աչխարհի, և մեռեալ Այստուծոյ. ապա յոր

ժամ հաւատացաք ՚ի նա, մեռաք ՚ի ջուրս աւազանին
աշխարհի, և կենդանացաք Քրիստոս. և յետ յառ-
նելոյ ՚ի ջրոյն առաք զկնիք սրբոյ Հոգւոյն ընդ ի-
գոյն սրբոյ առ մեզ իջուցին, որ տուաւ մարդկան ՚ի ձեռն
Քրիստոսի, և եղաք այնուհետև տաճար Քրիստոս.
բաւ այսմ և եկեղեցիս անշուշտ տարր էր և անզօր, ա-
զօթեմք ՚ի նմա, և մեռանիւն զնորս Հոգւոյն սրբոյ
՚ի նա տպաւորեմք, և զանզօրն զօրացուցանեմք, և զան-
կենդանն՝ հոգւով կենդանացուցանեմք, և նոյն Հոգի
է՝ որ ՚ի մեզ բնակեցաւ և ՚ի նա, և արար զնա մեօք
հանդերձ տաճար Քրիստոս, և մնայր մեր ամենեցուն.
ապա միով Հոգւով զօրացեալքս զիա՞րդ ՚ի միմեանց
խորշիմք, Սարկաւագն, ասէ, յամենայն աւուր ձայնէ.
«Ա՚ի որ յերեխայից, մի որ ՚ի Թերահաւատից, և մի որ
յապաշխարողաց և յանմաքրից մերձեսցի յաստուա-
ծային խորհուրդս...» Ընդունիմ զայսպիսի աստուածայ-
ին բարեկարգութիւն ՚ի հարցն իջեալ առ մեզ. սակայն
բաւ չէմարիտ խորհրդոյն զօրութեան և զքեզ նմին կա-
միմ հաւանել, զի ՚ի խորհրդոյն վարէ արտաքս՝ գիտաս-
ցուք, և ոչ յեկեղեցւոյն. յայնժամ հրաման տայ ՚ի բաց
գնալ, յորժամ խորհրդածութիւնն կատարի, և ոչ Թէ
յամենայն ժամ՝ որպէս քեզ Թուի: Այս առնէ զայս
և նոյն ինքն սարկաւագին հրամանն, Թէ ՚ի նեղքս էիր
մինչև ցայնժամ, և ՚ի նեղքին վայրկն զքեզ արտաքս
առաքէ. ապա Թէ միշտ էր սովորութիւն նոցա արտաքս
ՁՆալ, որպէս և այժմ մեք, աւելորդ էր զայս հրամանս
սահմանել, Թէ որք արտաքս էք՝ արտաքս գնացէք, և
մի մերձենայք. այլ էին ՚ի տաճարս, և յայնժամ մեր-
ժին, Ա՛ւ ո՛վք ոմանք էին՝ որք առաքին ՚ի դուրս. Թէ-
րևս իշխանն տաճարիս, կամ քահանայքն, կամ կրօ-
նաւորքն ընդ Քրիստոսի մեռեալքն, որպէս կարծես.
և ոչ երբէք. այլ չև ևս մկրտեալ էրախայքն, և ան-
հաւատքն՝ անզեղջ կամօք շաղախեալքն ՚ի մեղս, որոց
Թոյլ ետ բարեկարգութիւնս միշտ ՚ի միաբանութիւն
եկեղեցւոյս լինել յաղօթս տուընջենային և գիշերոյ,
և միայն ՚ի խորհրդոյն արձակաց: Ահա քեզ քահանայիդ՝
որ երկուք պատարագիչ, զիա՞րդ այսօր իշխանութիւն ու-
նի զնոյն հրամայել՝ ընդ երեխայսն արտաքս գնալ. կամ
քրիստոնէիդ և կրօնաւորիդ ընդ անհաւատսն հրաժա-

բել՝ Այս և դու զինչ կրես խղճմտութիւն, հարցանեմ, որով յեկեղեցւոյս արտաքս աղօթես այսօր, և վաղիւն մտանես. զբամբասէն, և ոչ բնաւ. զխեղկատակէն, և ոչ երբեք. զի զսոսին որպէս կարծեմ, և ոչ՝ ի մեզայ հա մարս գնեմք: Այս զինչ, կամիմ ուսանել. յորժամ բնութեանն օրինաւք փորձիս. բարիոք է և այդ զգուշութիւն. բայց իրատեսար ոչ լինել քան զօրէնսն օրինաւոր, Աստուածարհ գնալ զարքունի, և ոչ խոտորել յաջ կամ յահեակ: Այլ արդ, եղբայր, եկ և ուսիր յինէն զձերմարտութիւնն. եթէ ըստ կարգի զամենայն մեզս խըրբեկիր, որպէս և հրաման ընկալայ, բարիոք էր և զայս իտրութիւն ներքոյ իւրումն սահմանի պահել, և ոչ զեր օրինացն անցանել. իսկ ապա թէ բանիւք յանցանելն, խեղկատակութեամբն զՔոգին սուրբ տրտմեցուցանելն, նախանձու զեղբայրն սպանանելն, դատելովն դատապարտելն՝ անխտիր՝ ի մէնջ կատարին, և ոչ՝ ի խորհրդոյ հրաժարեցուցանեն. և զգուշութիւնն միայն յայս մեզս է, խորշեացուք սոսկաւ, ըստ որում՝ ի սրբոցն հրաման ընկալաք. և ո՞ է որ ըստ այսմ մասին յանցանոց լինի մեզ օրինադիր: Սուրբն և մեծն Աստիլիոս՝ ի գիրս հարցողացն, յորժամ հարցեալ վասն այսր՝ պատասխանէ յերեք հարիւր յիսուն և եօթնեերորդ հարցումն, թէ «Երազոյն ելոյք բնութենէ օրինաց՝ ի Քրիստոս մկրտեալքս. սակայն զգուշութիւն պարտ է ունել, և յայնմ աւուր՝ ի խորհրդոյն հաղորդութենէ հրաժարել, և ոչ եթէ յեկեղեցւոյն»: Արդ ո՞ր քան զսուրբս զայս յայտնեցաւ մեզ զգուշութեան ուղղիչ, անցցէ՝ ի մէջ, նախ զնորայն կորզեսցէ՝ զանուն և զօրէնս, և ապա իւր զմեզ աշակերտեսցէ. ապա թէ Աստեղ և աւ՝ ի նմանէ պատուիրանն հաստատուն է, և նա որ յամենայնի ուղղադատ և անսխալ դատաւորն է, ըստ այսմ նուազի զայս միայն ետ մեզ զգուշութիւն. բայրիոք համարիմ նմա հաւանել՝ քան յայս միայն գերազանցել, որ զբովանդակ սահմանն որ աւ՝ ի նմանէ տկարացայ կատարել: Այլ ինձ թուի, թէ որ զայս միայն քննէ, ոչ տիրապէս զաչս մտաց աւ գիրս հարցողացն յառեալ է. ապա թէ ոչ՝ կարողանայր ընտրու-

1 Ալ. գրն. կորնթեացոց:

Թիւն առնել մեղանչելոյն, զի ահա զոր նա մահու չափ սահմանեալ է մեզ, և անհատատութիւն զանհնազանդութիւնն, զմիաբանս գաւեղն, և զառաջնորդին արհամարհութիւնն, և զկրծնատուրին աչխարհի կենդանի լինելն, մեք ոչ եթէ մեզ միայն չհամարիմք, այլ պակս զբարեպաշտութիւն ոգջունեմք. և յայսմ մասին միայն գերազանց կանգ հօրն սրբոյ զգուշանամք, յայտ առնելով՝ թէ ընդ այլն և յայսմ զսուրբ հայրն անգոհանեմք. որպէս յայլն թուլութեամբ և արհամարհութեամբ, և յայս տարտադէպ զգուշութեամբ. որպէս զի յամենայնի նորին իրաւամբքն կշտամբեսցուք. քանզի նա զայս գիրս կատարելոց ետ կերակուր, և ոչ սրբոյոց. որպէս զի ինչ զիջանելով հրամայեսցէ, այլ ամենայնին է, որպէս և ընթերցողն իմաստութեամբ ձանաչէ։

Յաւելուն դարձեալ. և զինչ թիւրութիւնն է, նոյն զաղօթսն կատարեմք զոր յեկեղեցին և արտաքոյ. և այն զի Պօղոս ասաց. "Յամենայն տեղիս բարձցեն ըզսուրբ ձեռս առանց բարկութեան և երկմտութեան"։ Եւ թէ նոյն էր այս տուն աղօթից, ոյր աղաչաս որոշեցար յառաջին սրբոցն. տգիտաց և անհաւատից նոյն է. բայց հաւատովք խնամատացելոց այս յերկիրս երկին է. նա և թէ նոյն էր, ընդէր խորհրդածութիւնքն որ աստ կատարին՝ արգելեալ են յամենայն տեղիս կատարել. ընդէր և ինքն Պօղոս ամին զնախապատուութիւնն տայ՝ ասելով. "Ես է տուն տեառն տեղի ձեզ հայ ուսեալ"։ բայց չէ նոյն, որպէս և հանդերձեալ եմք ցուցանել. սակայն նախ առաջին բարիոք համարիմ փոքր ինչ զպատճառս այժմու որոշելոց մեր յեկեղեցւոյ քննել, որ ոչ էր առ հարսն մեր, որպէս ահա ցուցաք։ Ընդ Թուխ թէ յորժամ ըստ մեզաց մեր 'ի ծառայութիւն մատնեցաք այլազգեաց, և տիրեաց հասարակաց 'ի վերայ աշխարհին՝ այլոց սուրն Ասայէլացւոց, փախստական եղեն բնակիչք աշխարհին՝ տարաբերեալք յերկիրս յորում եմք, որ էր Հռոմոց. և ոչ ունելով ընդ նոսա հաղորդութիւն՝ զորոց պատճառն քննեալ է յայլում վայրի, ոչ թուլացուցին նոցա Հռոմք յիւրեանց սեպ-

1 Ի միում օրին. Թէոդոսիոս։

հական յեկեղեցիս որք են յայսմ աշխարհի՝ աղօթել. իսկ նոցա Թափառական գոլով, և բարեյոյս՝ ի վերստին դառնալոյ յաշխարհն հայրենի, շինեցին միայն ըստ ժամանակին պիտոյից մատրունս փոքրիկունս, որպէս և տեսանեմք. և զի ոչ գոլին վերստին դարձ, և աստ սկսան բազմանալ, տկարանայր եկեղեցին ամփոփել զնոսա, և՝ ի հարկէ շինեցին առ ընթեր զտունն. իսկ այն շինութիւն տանց որ՝ ի հարկէ՝ փոփոխմամբ ժամանակի առ յետինս արմատ չարի եղև և հեշտութեան. քանզի յաղօթելն յեկեղեցին՝ զգոյշ լինէին որպէս՝ ի տուն Աստուծոյ, և յարտաքոյն Թուլանային որպէս՝ ի տուն ի հասարակաց։ Յաղթեաց հեշտութիւն զչմարիտ օրինացն, և սկսան ընդ ամենայն տեղիս շինել զայս տունս՝ իբր առաւել զգուշութեան տալով կարծիս. և հարկաւորապէս ձգեցին զանձինս արտաքոյ ամենայն բարեձեռութեան, Ահա զի անխտիր զաղօթան սուրբ յամենայն տեղիս կատարեմք, որ ոչ է բարեվայելչութիւն առաջին սրբոցն, ըստ որում ցուցաք. քանզի թէ միայն տուն Աստուծոյ սա է՝ զԱստուած՝ ի սմա հաւատասցուք լինել, որպէս զԹագաւորն որ հանուր աշխարհին տիրելով զօրութեամբ՝ սակայն ինքնութեամբ գտանի միայն յարքունական ապարանսն։ Արդ որպէս որք են՝ ի նեղքոյ զօրութեան արքային, յիւրաքանչիւր տեղւոջէ հարկաւորապէս եկեալ՝ միայն առաջի արքունական գահոյիցն խօսին ընդ նմա, այսպէս և մեզ՝ ի տաճարն Աստուծոյ պարտ է առ Նա աղօթել առաջի տիրական բեմի սրբոյ սեղանոյն. իսկ եթէ ծուլանամք՝ ի տուն նորա մնանել, զիարդ կարեմք զերեսս նորին տեսանել։

Վասն[1] զի, արտաքոյ եկեղեցւոյ աղօթելով, միայն բարբառ արձակեմք, և ոչ զուշ խնամոյ՝ ի նոյն պարփակեմք, համարելով թէ հեռի եմք Աստուծոյ արտաքոյ եղով տան նորա, և ծոյլ և հեղգ յաղօթելն լինիմք։

Արդարդ, զի զմեծ և զամենածայրագոյն փրկանս՝ խորհրդոյ պատարագին արտաքոյ կալոյն արհամարհեցաք, անձնաշահ լինելով՝ ի կցորդութենէ մատուցողին և՝ ի քաղցրութենէ խորհրդոյն։

1 Մի՛ արն. փխ. Վասն։

Ո՞րպէտ, զի՞ մեծագոյն մեր արժանաւորաց և անարժանից արտաքոյ եղեալ եկեղեցւոյ, մեզաւորքին ոչ եղև երբէք պատշաճ և մերժուիլն սակս մեղանացն, որով հարկաւորապէս զամենի հարկանէր և զիրձան աձեցուցանէր առ Ի՛սուած, տեսեալ զի՛ ի հասարակաց միաբանութենէս մեզացն վասն բահտեցաւ. և տիրեալ՝ յամենի՝ զիւրաքանչիւրն տայր զղջմանն տեղի։

Ինգերորդ, զի ոչ միայն անձանց, այլ և աշխարհի եղեալ նիւթ գայթակղութեան՝ հարկաւորապէս ըզտեառնն եղկութիւնն բերելով՝ ի վերայ մեր. զի տեսեալ զքահանայսն ժողովուրդքն յումմէ և պետ տեղիս աղօթել, ինքեանք բնաւ անփոյթ արարին զգալն յեկեղեցիս, այլ ուսեալք՝ ի նմանէ՝ զտանիս և զմահիճս արարին տեղի աղօթից, առ մեզ հանելով զայսոսիկ պատճառան. բազում և այլ որ ընդ սոքօք անկարգութեան նիւթ եղև արտաքոյ եկեղեցւոյ աղօթելն. և ևս առաւել չար այս, զի հեղգութեան մեր և տարտամութեան պատճառ զերկեւղն և զաստուածպաշտութիւնն առդնեմք. յեկեղեցի չաղօթեմք վասն մեղկութեան և հեշտութեան, և որպէս զի՛ ի տախտակամած որմանն յեցեալ հանգիցուք. և յորժամ ստիպիմք ընդ Ի՛սրհատոսի խաչելաքս, աշխարհի մեռեալքս, հարքս և կրօնաւորքս և աշխարհի բարեաց օրինակքս, հրաժարիմք խոստովանեալ՝ թէ չեմ պատրաստ Ի՛ր որ հարցանէ բանս. և ոյր աղագաւ սգոյ տեսակ ձեւդ և աշխարհի մեռելութիւնդ. յորժամ՝ ի հասարակաց տունս[1] մտանել անպատրաստ գտանիս. այս տունս քրիստոնէից և անհաւատից է տեղի խրախճանութեան. քանզի ասէ իմաստութիւնն որ չինեաց զայն. «Ո՛ր ոք իցէ անզգամ, եկեսցէ առ իս և արբցէ, և ցպակասամիտսն ասէ, եկայք կերայք՝ ի հացէ աստի իմմէ ... իսկ ապա դու ընդէր խորշիս կատարեալդ՝ ի Ի՛սրհատոս և անցեալդ ընդ հասակն տղայական, որ պատրաստական ես միշտ յիմանալի տունն Ի՛սուծոյ մտանել իմացականապէս. արդ՝ ի զգալոյս ընդէր հրաժարես՝ որ այնմ է պատկեր, Ա՛յնէ՛ ոչ քրիստոնեայ չէ, և գնաս եմք պատրաստական կոչել աստ, որպէս զի եկեալ տեսցէ զքրիստոնէից զբարեկարգու-

1 Ա՛ի օրին. Տիրեալ։ 2 Ա՛ի օրին. Տուն։

Թիւնս . զու ընդ Աբրահամի խաչեալդ ոչ չիկնիս բա-
ցակաց ի նմանել լինել : Այս Թէ ի հատարակական ժո-
ղովրդոց ոք իցես , և ոչ զբեզ հրաժարեցուցանեմք ի
քաղցր լծոյս . տէրն իմ կոչեաց առ ինքն զաշխատեալս
և զբեռնաւորս հանգուցանել , եր վասն հեզգայք առ
նա ժողովել : Արդասպան ես կամ շնացող , և այնր
աղագաւ երկուցեալ խորհիս . մի եղբայր . Թէ նեխեալ
ես Թէ փտեալ , իմոյ գլխոյն ես անդամ , բժշկել եմ
պարտական և ոչ հատանել : Այլ մնա համարձակ ի
տունս Աստուծոյ , և լուր ի նմանէ զայդպիսեացն պա-
տիժ և զպատուհաս : Յետ որոյ ի խորհրդոյն արտաքս
վարեալ ի ձեռն սարկաւագին՝ գիտեմ զի զամենի հար-
կանիս գղջանաս , Թէպէտ և ապառում ես սրտիւ , տե-
սեալ զախտաւոր հեշտութիւնն քեզ յամենաւրեայս
բարւոյ սեղանոյս բաժանիչ . ինձ Թուի Թէ սարսափես ընդ
քիրան հարեալ , յորժամ կորացուցեալ զպարանոց մե-
կուսի ի բազմացն լինիս : Այս Թէ քահանայ ես ,
սարկաւագ , կամ ժառանգաւոր , տանս տէր ես , ի քում
իշխանութեան տեղւոյս արտաքոյ ընդհէր կամիս զլի-
նելն , և անհատտիցն զատակդել : Այլ ահա անհա-
տաքն՝ միայն ի խորհրդոյն , և ոչ Թէ յեկեղեցւոյս ո-
րոշեցան . զու միշտ արտաքոյ սորա լինելով անձամբ
զանձն զատապարտես : Ահանայիկ աԹոռ է , ժա-
ռանգաւորաց իշխանութիւն է , կրօնաւորաց աղօԹա-
րան է , աշխարհականաց մայր է , մեղաւորաց քաւարան
է : Վենեցուն է այս տեղի , ամենեցուն պարտ է ի սմա
աղօԹել , ամենեցուն պարտ է մտանել , բայց ոչ յամե-
նայն ժամանակս : Ո ժամանակս կալցյ յեկեղեցիս ու-
սաք խորել , և ոչ Թէ զեկեղեցիս՝ քրիստոնէից ընդդէմ
փակել , որպէս և երանելի Հայրն մեր Յովհաննէս ա-
շակերտն Պօղոսի եղ զչիմն այսորիկ կարգաւորութե-
ի մէջ ամենայն աշխարհի : Այս ամենայն սուրբք յիւրա-
քանչիւր ժամանակս ի վերայ նորա շինեցին զհաստատս
իւրեանց . ապա յայտ է՝ Թէ որ օտար յայս շաւղայս
ընԹանայ , հերձուածող է , և նոր չարեայ գտակ : Այլ
մեք զկնի Աստուծոյ զնորայն ունիմք բանիս առաջի նը-
պատակ զկան . և գիտեմք հաստատապէս , զի բարւոք
միտս ունիմք , կամիմք և զայս բարիոք գնացս ամենե-
ցուն ցուցանել ,

Այսպէս եղկելի ես հակառակ այսմ վիճելով ոչ գիտեմ զնա՛ւ ինքն առ ինքեան՝ թէ բարիօք միաս ունի. այլ միայն աւանդութեանցն սովորութեանց լինի ջատագով: Ապա՝ այն ես էի երբեմն իւրև զքեզ. զայդպիսիկ առեալ եմ զիտրձ անձամբ. և զայսմանէ գիտեմ՝ թէ այր ազգապատ հին սովորութեանցն լինիմ անպոռնիչ, և նոր օրինաց գտակ. և որպէս կարծեմն, ոչ անբանաբար՝ ի սոյնս շարժիմ, այլ միայն զի Աստուծոյ առաւել ակն առնում՝ քան՝ ի մարդկանէ, և ձշմարտութեանն անապատառ լինիմ մտօք խուզող: Արդ զոր վերոյ յիշատակեցաք երանելի հայրդ մեր Փոռնեսիոս գրելով առ Տիմոթէոս, զեկեղեցի՝ պատկեր երկնաւորացն կարգաց և դասաւորութեանց ուղղեաց՝ ի յերկրի, զորոյ պէսպէս վկայութիւնս հանդերձեալ բանն՝ ի պատշաճ ժամու առցէ օժանդակ. իսկ այժմ ախորժեմ զգալի և հաւանական յարացոյցի պիտոյիւք խօսել առ տղայաբարոյ թանձրութիւն մտաց այնոցիկ՝ է որք անպոռնեն զուղղապէս խորհել:

Այլ նախ զայս յորդորեմք քննել՝ զինչն ասացեալ բանն, "Արար Աստուած զմարդն՝ ի պատկեր իւր. ըստ պատկերի Աստուծոյ արար զնա,,. իբր թէ ոչ է վայրապար և կամ առ անառնեղէն մարմինս իմաստ գրոյն քահանայի, այլ յայտ է՝ թէ անձնիշխան կամօք եմք պատկեր Աստուծոյ. և կարող եմք՝ ի զգալի պատկերէ արքունական ապարանից իմանալ, և յարացոյցիս դնել առաջի զԽոգևոր և զբարձրագոյն կարգս եկեղեցւոյ. զի թէ Վրիատոս Աստուծոյ զօրութիւնն և իմաստութիւն այսպիսի առակօք զԹաքուն և զխորին խորհուրդս կամաց իւրոց յայտ արար, մեզ ընդէր է հեղգալի. երբեմն առեալով, "Ումն է արքայութիւն երկնից առն Թագաւորի որ առնիցէ հարսանիս,,. և երբեմն, "Այնժամ նմանեսցի արքայութիւնն երկնից փեսայի և հարսին, որոց կուսանքն ելին ընդառաջ,,: Հաւասիկ ես մեզ համարձակութիւն բացայայտել զխորհուրդ տան իւրոյ արբոյ՝ պատկերաւ Թագաւորական իշխանութեանն, ի մէջ կայցէ այժմ մեզ պաղատ Թագաւորական կամ տուն իշխանի, ուր զառեան դատողութեանն գնէ: Արդ թէպէտ և զօրութիւն տէրութեան Թագաւորին՝ ի վերայ ամենայն աշխարհացն է, բայց սակայն ինքնութի՛ ա-

ռաց նորա յայնմ տան է պարփակեալ. և ամենեցուն հարկ ՚ի վերայ կայ անդամոյր նմին զերկրպագումն մատուցանել. ապա թէ արտաքոյ այնմ տեղւոյ նմին կամ ի ոք երկրպագել, յայտ է թէ կամ անարժան էր մատնել յաղքատական ապարանն, կամ արհամարհեաց զթագաւորն և պատժապարտ գտաւ: Ա. յապէս և Ա. տուածոյ իշխանութիւն, նախախնամութեանն զօրութիւն՝ է ՚ի վերայ ամենեցուն, բայց ոչ և ինքնութիւն փառացն յամենայն տեղիս, այլ միայն յայս տուն՝, զոր որոշեալ նմին՝ աղաչեցաք ՚ի սմին բնակել: Ա՚ր արտաքոյ սմին ընդ նմա խօսի՝ յայտ է թէ կամ որիշ է ՚ի հաւատոցն որ առ նա, կամ արհամարհեաց զտէրն իւր: Ա՚ր որպէս ՚ի տաճար Թագաւորին ծառայիցն մտերմից և օտարացն համարձակելի է մտանել, և կալ նորին առաջի և լսել զբարբառ աղքային, և յայտնել զիւրաքանչիւր վիշտս. բայց միայն ՚ի խորհրդական ժամն լինի բացորոշութիւն մտերմացն, և որոց ոչ այնպէսն իցեն. զի ակնարկելով նորա քարոզն աղաղակէ. ՚ի բաց կացէք, արտաքս գնացէք, ահ աղք, խորհուրդ է Թագաւորիս. և ապա ոք ՚ի նեղբս էին արտաքս ելանեն, և որոց անկ է ինաքն՝ գիտեն յանձինս իւրեանց. իսկ սոքա յեղանելն գժուարին և զամօթի հարկանին վասն անարժան գտանելոց խորհրդակցութեանն. և յայտ է թէ զմտաւ ածեն ջանալ առ ՚ի նա հաւատարմութիւ, մինչև յայնմ կարգէ ոչ որոշեցին: Ա՚յապէս և տանս Ա՚ստուածոյ՝ ուր բնակեալն է նա, համարձակելի է մտանելն ամենեցուն, և խօսել ընդ տեառն իւրեանց, մեծամեծաց և փոքունց, չարագործաց և բարեպաշտից, և ՚ի գիշերային աղօթիսն և ՚ի տուընջենայինս և յամենայն ժամու:

Իսկ ապա յորժամ հանդերձեալ լինի երկնաւոր Թագաւորն խորհուրդ առնել ընդ արժանապատիւ ծառայսն իւր՝ զպատարագին կատարողութիւն, և զձեռնադրութիւն երիցանց, և զմեռանին կատարողութիւն, յայս երիցս խորհրդոցս ժամանակ սահմանեաց առաքն Հայրն մեր [1]Ա՚խանեսիոս, ըստ սովորութեան ժողովել ամենեցուն յեկեղեցին՝ անհաւատից և հաւատացելոց,

1 Ա՚յսինքն յեկեղեցւոջ առաւել հանդիսանան փառքն Ա՚ստուծոյ, քան արտաքոյ, ըստ նմին և անդ՝ քան այլուր պատշաճագոյն է կալ յաղօթս:

մեղաւորաց և արդարոց, սրբոց և պղծոց, չարագործաց և բարեպաշտից։ Այլ թէ ինձ յանդգնութիւն հատանիս զասացեալս, սո՛ւր զգիրս նորա ընթերցիր և գտցես, զի ոչ լուծանեմ ՚ի պատուիրանացն Աստուծոյ, և երկիւղ ունիմ յայնպէս ուսուցանելոյ զմարդիկ՝ անառակ դատաստանի գոլով պարտական. և մի կցորդութեամբ կատարեն զաղօթսն և միա դնեն ընթերցուածոցն՝ կըշտամբեալ ՚ի նոցանէ անարժանիցն, և զօրացեալ արժանաւորացն, և խօսին ՚ի հասարակաց պաշտամունն ընդ Թագաւորն երկնաւոր՝ իւրաքանչիւր զհայցուածս իւր և զինդրուածս։

Այլ տես և այլ չնգրտութիւն յարացուցիս. քանզի անդ նախ իշխանքն խօսին զկամն արքային առ ժողովուրդն ըստ իւրաքանչիւր պատուոյ և աշխատանի, և ապա ՚ի բարբառելն նորա՝ ամենեցուն լինի լռութիւն, և վասն սակ բան Թագաւորին իւրաքանչիւրոցն խընդրելոց. քանզի զոր ինչ ասէ, անյապաղ կատարի. և ոչ կարէ ոք երկրորդել ՚ի վերայ հրամանի նորա։ Այսպէս և աստ ՚ի Թագաւորին մերոյ Յիսուսի կայսրանս՝ նախ խօսին առ ՚ի նմանել պատուական իշխանքն, և հազարապետք խորհրդոյ նորին՝ մարգարէքն և առաքեալքն ՚ի դիմաց Աստուծոյ առ մեզ յայտ արարողք կամաց նորին, և յետ նոցա ամենեցուն լինի լռութիւն և զգուշութիւն ՚ի ձեռն հրամանատար սարկաւագին. և ապա զսոսկալի և զսքանչելարար աւետարանական հրամանն վրկչին Հասարակաց խօսի առ ամենեսեան՝ ուղղելով և միխթարելով զիւրաքանչիւր մեր զտարակոյս։

Այժ մեղաւոր ոք է, և անմխիթար սպայ վասն մեղայ իւրոց, ձայնէ առ այնպիսիսն. «Ի խռովեցին սիրտք ձեր և մի զարհուրեցին, այլ հաւատացէք յԱստուած և յիս հաւատացէք. ՚ի տան հօր իմոյ օթևանք բազում են...» և հաստատէ յամենայն ցուպ զղրդեալ միտս նոցա։ Այժ պաշտօնեայ ոք է, և կամի ուսանել զՀաստուածային աշխատութենն, լսէ զի ասէ. «Ուր եմն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի...» Այժ խաչեալ ընդ Յիսուսի կրօնիւք, և նա միխթարեցոյ բարբառով յուսոյն իւրոյ, յորժամ խօսի ընդ նմա. «Ա՛ր ոք ե՛թող զաշխարհ վասն իմ, հարիւրապատիկ առցէ, և զկեանսն յաւիտենականս ժառանգեսցէ...» Այսպէս բարբա-

ռեալ քաղցրալսելի և հեզ Թագաւորս մեր, զԺողովեալ ծառայս իւր միխիթարեալ ըստ իւրաքանչիւր վշտաց՝ բա րեյոյս առնել, և աւետեաքն զուարճացուցանել, և զծան րութիւն տրտմութեանն թեթեւացուցանել։

Զդդ քանզի այն Թագաւորի հարկաւոր էր՝ յետ տե սութեան բազմութեան ժողովրդոյն և լսելոյ զգանա նոցա՝ ի խորհրդեան լինել, զի ունի պատմեալ՝ թէ ա ւազակք աստիճանակեցին յայսմ անուն կողմ աշխար հիս, այլ ոք՝ մերն աշխարհի անդաստան ոչ ետ գվայ ելչականն պտուղ և երկնչիմք ի սովոյ, իսկ ոմանք կաց ուցին և հակառակութիւն, և իրաւունս խնդրեն ի նմա նէ, նա հարկաւորապէս զամենայնն ի հանդականն հանդէս միաբանութեամբ՝ ըսէ, և ապա վախճան ա ծեալ հանդիսին՝ զոչ մտերիմն հրամայէ արտաքս հա նել. և ինքն առեալ զխոհական իշխանն՝ ի խորհր դեան մտանէ վասն հասարակաց գաւառին փրկութե, թէ որպէս ասպատակացն յաղթեսցեն, և զսովեալսն արձակեսցեն, և զերաւունս արասցեն ի խաղաղութե աշխարհին պէտս։

Զայսպէս և այժմ հոգևոր տեառն և Թագաւորի ա ռաջի՝ ի սուրբ եկեղեցի իմացականապէս խօսեցան ո մանք ի ժողովրդոյն, թէ միշտ ասպատակ էած ի վե րայ մեր սատանայ՝ գերելով զմիտս մեր ի չնութիւն, ի սպանութիւն, յարծաթասիրութիւն, և յայլ տե սակս մեզայ. և այլք ոմանք՝ թէ խորշակահար առնէ խեթիւ հայեցեալ արեգականն՝ զոյսս բարեպաշտու թեան մերոյ զանապան փորձանաւք. իսկ են և որ ի մի մեանց ունին մարդիկ զպատերազմ ներգործութեամբն սատանայի։ Զայսոցիկ զամենեցուն հայցուածս լուեալ Զդիտաւոր՝ խրատեաց զնոսա պատգամաւորաբ մարգա րէիւք և առաքելովք, յասելն՝ «Ի խաբէից, ամե նայն պոռնիկ կամ պիղծ կամ ագահ, որ է կռապարիշտ, ոչ ունի ժառանգութիւն յարքայութեանն Զդիտաւոր և Զստուծոյ»։ Զա առ նոսա ոչք ի խորշակէն հարան սերմանաքն՝ ձայնէ այս պատգամն. «Զ օրացարուք տե րանէ և կարողութեամբ զօրութեան նորա, և զգեց եալ զսպատառազինութիւնն Զստուծոյ, զի կարող լինիք

1 Մի տրին. Մատթ.-ին։ 2 Մի տրին. Ի տ.-ին։

ջիք ընդդէմ հնարիցն սատանայի կալ.. : Իսկ որք ընդ միմեանս մի՛ լինիմ մարտեան, տես թէ զինչ ասէ. “Ո միմեանց բեռն բարձէք, և այնպէս կատարեցէք զօրէնսն Քրիստի.. : Իսկ յետ սորա յաւելեալ Թադէոսն զմիութեարականն, սիրով զնոսա զորս ծառայս Նորին երկեցոյց, որպէս կանխաւ ասացաւ. և յետ այնորիկ ախորժէ խորհուրդ առնուլ՝ թէ որպէս օժանդակեսցէ այսոցիկ նեղելոցս. զոր ծանուցեալ Հաւատարիմ և մեծիմ ծառային և Հրամանատարին սարկաւագին՝ բարձրացուցանէ զաչսդբառ իւր՝ի լուր ամենեցուն. ով ժողովուրդք, լուայք զպատգամաւորութիւն ծառայից տեառնս մերոյ, և զնորին իսկ զաւետաբեր Հրամանսն: Արդ այսուհետև խորհուրդ է լինելոց Թադէոսին. և բազումք՝ի ձէնջ անկար են տանել զնորա իմաստիցն զօրութիւնն: Ապրք տղայամիտ երախայքդ էք, այսուհետև արտաքս գնացէք, զի մի՛ անկատար Հասակաւ հոգւոց՝ի կատարեալ իմաստ հոգևորականս ձեռնադրկիցէք: Այլ ապա յետ զայս ասելոյն, նոքա որք էին յերկեղեայս՝ գնան արտաքոյ, խորհրդոյն գտեալ անարժանք, և ոչ թէ տանն. ըստ որում և ինքն բանն յայտ առնէ. “Ա՛ի որ յերախայից մերձեացի.. ասելով, ոչ թէ՝ի տունս Աստուծոյ, այլ՝ի խորհուրդս Նորին:

Սակայն մեք, ոչ գիտեմք թէ ուստի վարժեցաք ըզտունն փոխանակ խորհրդոյն պատուելով: Այսպէս զրէ և երանելին Կղիմեսիոս՝ թէ յետ աւետարանին գնան արտաքս երախայքն, և որք ընդ ապաշխարութեամբ են: Այս զինչ յայտ առնէ. առաջին, զի մի՛ի տըղայաբարոյ հեթանոսացն՝ որք յայնժամ գային յեկեղեցի Աքիստոսի, դեռ ևս երախայ եղով և անհաւատ՝ խորհրդածութիւնս մեր արհամարհեցի, և դարձեալ՝ զի՛ի ներս եղով, այժմ բաժանեալ՝ի հաստատակաց եկեղեցւոյս և արտաքս առաքեալ, ծանիցեն զիւրեանցն վատթարութիւն և զանօթի հարկանիցին, թէ ըստ մերում չար գործոց պատահեաց մեզ այս անպատուութիւնս. և յորժամ զայս զնոսա ածէն, հարկաւորապէս՝ի սուրբն և յանառձին լինել փութան ապաշխարութեամբն և՝ի միանականութենէն. ըստ այնմ զոր առաքեալ գրէ. “Շ ատ է նմա ածմունքն որ՝ի բազմաց անտի է. այսուհետև հաստատե-

ցեք ի նա զսէրն զի մի յառաւել տրտմեցեալն ընկղմեսցի ։ Տես եթէ որքան էր նման տրտմութիւնն առաքելոյ միաբանութեան եկեղեցւոյն լինել փոքր ինչ առաւել ։ Այլ մեք և ամն բազում լինիմք, և ոչ բնաւ տրտմիմք. էր վասն. զի նոքա յեկեղեցին միաբանք էին, և յանցաւորն միայն արտաքս. իսկ մեք միաբան արտաքս, և մին միայն ի ներս, և ոչ լինի որոշումն. զի եթէ ոչ մտանեմք և ելանեմք հրամանաւ՝ ոչ խայտառակիմք վասն մեղացն. և յորժամ ոչ յանդիմանիմք, ոչ ամաչեմք. և յոչ ամաչեն՝ և ոչ յապաշխարութիւն յորդորիմք. զի մեծ նիւթ է բարիոք նախանձու, յորժամ ի միասին գոլով զոմանս վասն պիղծ գաւելոյ՝ արտաքս վարեմք, և զայլս վասն բարիս ի ներսս պահեմք ։ Օ այս գիտելով սահմանեցին զելանելն. այսր աղագաւ՝ և ոչ եթէ արհամարհանօք, ըստ որում այժմ վարիմք. զի կամ ոչ մտանեմք բնաւ, և կամ մտեալ ելանեմք առանց ամօթոյ և պատկառանաց ։

Այս վասն էր ոչ պատկառեմք, ախորժեմս ուսանել ։ Յանգիր զոր սուրբս գիտեմք և պարկեշտս վարուք, նոքա միշտ արտաքոյ էն. և զորս յանդուգն և պիղծս, նոյա է եկեղեցիս խմբարան. վասն այսորիկ մեք ի կցորդութիւն սրբոյն և վարդապետացն արտաքս գնալովին՝ ոչ ամաչեմք. ապա թէ նոքա աստ էին՝ և ի կցորդութիւն խորհրդոյն, ըստ որում առին զաստիճանն և ըզգործ, և մեզաւորացս միայն էր մեկուսանալն, ամենայն պատկառանք պաշարէր զմեզ յայնժամ՝ և երկիւղ ղջմնան ։ Իսկ յորժամ դու ի հաւատացեալ քեզ գործոյս խորհիս անձամբ անձին՝ և ոչ հրամանաւ այլոց կամ սահմանաւ ապաշխարութեան, այլ զծուլութիւն և ըզկամն մարմնոյն պաշտելով ՝, օտարացն և տգիտացն զինուդ զնոյնս կարող ես առնել փախաքելն, ըստ որում էսդ պարտական՝ յառեղն Աստուծոյ, « Ի՝խիթարեցէք միթարեցէք զժողովուրդ իմ, քահանայքդ. խօսեցարուք ի սիրտ Երուսաղեմի, և միխիթարեցէք զդա ,, . և միխիթարիչ չէք այլ ինչ, բայց միայն այս փրկանք խորհրդոյ, Վհնեալն է և այս, եթէ զոյս ունիս սահմանել հայրն մեր ի պատշաճ ժամուն արտաքս գնալ՝ Ասիս առաջին

1 Մի օրին. պարբերվ.

զերախայն, որք անհաւատ գոլով չև ևս էին միրտեալ. ընդ նոսին և կրս ի շաղախումն մեղայն անպէղք էն, և զորս զղջացան՝ և ոչ կատարեալ ապաշխարութեամբ մաքրեցան։ Ակ մեք, տգիտութեան աշակերտք, երիցունք մանկական խորհրդով, յորոց եմք ի սոցանէ. որք յերկիւղ պատարագիչ և խորհրդածու, և այսօր երախայինն կցորդ արտաքոյ. և վաղիւն դարձեալ ի նոյն գործ կանխեալ, զգոյշք միայն խորչելոյն Աստուծոյ և ոչ մերձենալոյն. և այս երանի թէ երկիւղիւ և ոչ հեղգութեամբ և անհոգանդութեամբ, որ գլուխ է ամենայն չարեաց, որք ոչ զուգիւն ապաշխարութեան ողջունեմք, և ոչ մեղայն թողութեան հաւատամք. զի ապաշխարութիւնն օրինօք պիտի. և մեք զիսդ օրինաւորք, որ դատաւոր մեզ կեան ունիմք և ոչ օրէնս, զանձինս և ոչ զառաջնորդս, որոց արժան է նախ զանհաւատութիւնս ապաշխարել՝ և ապա զմեղս։ Աչ զինչ է հաւատն, եթէ ոչ յուսով գտանել՝ ապաշխարութիւնն որ ըստ հրամանի առաջնորդին զթողութիւն ի մարդասիրէն Աստուծոյ։ Այլ ոչ որ վասն զանձն մեղանչական գտանելոյ յեկեղեցւոյս հրաժարէ. զի ահա ցուցաւ ի նոցանէ որք զսա չինեցին՝ թէ հաստարակաց տուն աղօթից սահմանեցին, և մեծ քան յեկեղեցի մտանել և զքահանայական աղօթսն ի մէջ ժողովրդեանն մատուցանել. զի եկեղեցիս և աշխարհականաց է համարձակելի, և այդ քահանայից միայն։ Որդ եղբայր եթէ ի տունս Աստուծոյ մտանել ոչ ես արժանի՝ զմիջնորդութիւդ ընդ մարդիկ և ընդ Աստուած զիսդ ժպրհիս կատարել։ Որ ընդ թագաւոր՝ խօսելով թագաւորական ապարանիցն զանձն ոչ վարկանի արժանի. և խօսք այդպիսի, ըստ որում քոյդ է քահանայիդ՝ անընդմիջաբար սիրելութեամբ զքահանայագործութիւնն կատարես, և ի տեղիս որոշեալ նմին գործոյ ոչ մտանես։ Հրեշտակ ի ժողովրդենէդ առ Աստուած առաքիս. եթէ ի տաճար նորին ոչ մտանես, խօսել ոպէս կարող ես։

Ակայն ներողութեամբ քննեսցուք և զայս, ուստի եմուտ չարս ախտ. ոչ իբր այպանելով զեղբարս մեր,

1 Մի օրին. ընդ Նոյեմբերի։

զոր մի լեզի յոգունչ անարժանիս զմտաւ ածել, այլ զախտս հնարելով ի բաց ձգել։ Ահա թուի թէ յանխնամեսո առաջնորդաց և ի տգէտ վերակացուաց, որք թերաւական մտօք առաք զայցելութիւն եպիսկոպոսութեան. ոչ իբր զտեսութիւն պատուոյ, այլ պրպտս զմարմնական իշխանութիւն, շահավաճառս համարելով զաստուածպաշտութիւնն, անբաւական ագահութիւք արծաթոյ և փառաց. որոց հարկ էր զախտ մտացն յաղթեցուցանելով անփոյթ առնել եղծման եկեղեցական օրինաց. և նոյն սովորութեան մեր հետևեալ, ի սովորութիւն պրպտս ի բնութիւն վարժեալ, տկարանամք տալ տեղի զբաւորական հրամանաց. մանաւանդ ի բազմաց որք անկիրթ են խնամոց, և ի բարուցն՝ մերոց եալս և նորաձևութիւն թուի հարցն սրբոց հրամանացն հետևողութիւնս։

Ո՛վ չար ներգործութեան բանսարկուին, և արտասուաց արժանի ախտիս, որով հիւանդացեալս զնիմք. ընդարմացեալ ի տգիտութէ, և զեղբարս ջատագովս օրինացն՝ քակտիչ նմին համարիմք, և զսէր մեր գործով խաչատեալ իբր զատելի թշնամանեմք, և զմարդասէր և հեշտ լծոյն հոչակող՝ անմարդի մտօք այպանեմք։ Այլ ինձ մի լեզի զրել զեղբարց իմոց անարգանս. զի թէ մարմնական բժշկաց այս սովորութիւն է, քանիսն առաւել պրպ՛ի Վրիտոս բարեպաշտութեամբս եմք պայծառացեալք. այլ միշտ ըստ կարի պատրաստեմ՛ի պէտս նոցա զառողջարար դեղս՝ի փառս Վրիտոսի։ Ճանաչեմ թէ և ուսեմ և զպատուղ աշխատութեան իմոյ զձեր զարթնուլն առ Աստուածութիւնն Վրիտոսիւ Յիսուսիւ տերամբ մերով, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։

1 Ա յապէս յօրինակն։

ԴԱՐՁԱԼ ՎԵՐՍՏԻՆ ԽՏՐՈՒԹԻՒՆ ՆԱՐԱՁԵՒՈՒԹԵԱՆՑ ՈՐ ՄՏԻՆ ՅԵԿԵՂԵՑԻ

ԵՒ ՓՆՆՈՒԹԻՒՆ ՊԱՏՃԻՒՈՑ ԵՒ ԱՀՏԻՃԱՆԱՑ· ՉՕՐՈՒԹԻՒՆ Ի ՍՄԱ ՎԻՃԱԿԵԼՈՑՆ ՊԱՐՉԱԲԱՐ, ԸՆԴ ՈՐՄ ԵՒ ԸՆԴԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆ·

Որոց դիտաւորութիւն ակնկալութեան մտաց ՚ի մտոքի մարմնական փառացս յուսոյ պատրի, հարկաւոր է միշտ զայն հնարել ընթացս կենաց և բանի, որովք առ ՚ի տեսողացն գովութենէն պարարեսցի· արդարև Թշուառական մտաց վհատակեալ և ունայն աշխատութեան, և բազում և անհատատարիմ տերանց, զորս ՚ի սպառ և ոչ բնաւ է կարող ողոքել· Իսկ որք առ մի տէր զակն ոգւոյ ամբարձին, ծանեան զայսոցիկ նանրութիւն, և ապա առ նա զկատարեալ հաւատս բոլորեցին· վասն այսորիկ դատաւոր հաւատացեալ՝ զայն յորոյ ձեռանէ ոչ է կարող խաւսել՝ անփոյթ առնէ զայսոցիկ գովութեան կամ պարսաւանաց, և նպատակ առաջի աչացն ունի զնորա կանոնն լուծին· Յայսոցիկ Վրիատոսի առաքեալն յերբեմն կուրութենէն եղեալ տեսող, աղաղակէր ասելով· «Մեք տակաւին մարդկան հաճոյ լինիմք, ապա Վրիատոսի ծառայ ոչ էի»· յորմէ մեք կարի վերջացեալ՝ ջանասիրաբար միշտ մարդկան հաճոյ լինել՝· և յերկոցունցն վրիպիմք, կամաք՝ Յաստուծոյ հաճոյիցն, և ակամայ՝ ՚ի մարդկանէ· իսկ նա՝ զի զմիոյ տեսանն ընտրեաց զկամ, ստացաւ սերիական ըզփառսն Յաստուծոյ և զհատարակայ մարդկան·

Մարդ զայսպիսի ծանր բեռն՝ սպառ ինեալ ՚ի խնամեն Յաստուծոյ, և յապացոյց բարեացն Պօղոս, փոքր ինչ յապդերկ մերմէ Թափել ջանացաւք, և դուն ինչ նկատել զկամեն Յաստուծոյ· Թերևս կարասցուք անփոյթ առնել զկամաց մարդկան և խոսել զօգուտ նոցա, ոչ անձամբ անձին, զոր և ոչ Հոգիբնկալքն Քրիստեան,

1 Յօրին· միւսմ Հաճոյանալ·

այլ զկնի աղդողականս ժողովեալ յաստուածային
զրոց՝ ի սկսա առաջնոյ մինչ ի վախճան ամ-
բիւնեացս։ Այլ նախ զայս գնեմք, թէ քահանայական
կարգ և կրօնաւորութեան՝ անջրպետութեամբ հեռի
են՝ ի միմեանց, վասն զի քահանայութիւնս նախապա-
տուութիւն է և երիցութիւն՝ ի մէջ ժողովրդեանն.
իսկ կրօնաւորութիւն՝ մեռելութիւն է զինի Աբե-
տոսի, կարգ խոնարհութեան և լռութեան՝ և ոչ իշ-
խանութեան. որպէս յայտ առնէ Երանելին Ափռնե-
սիոս յիւրաքանչիւրոցն օրինադրութիւն կատարողու-
թեանց. նաև բարեձեւութիւն զգեստուցն և քահա-
նայական աղօթքն՝ ի վերայ իւրաքանչիւրոցն։ Այլ պարտ
է գիտել, թէ զայս լուծ խոնարհ կրօնաւորութեան ա-
մենեցուն է տանուձակելի առնուլ յիւրաքանչիւր հա-
սակէ և վարուց՝ յօժարութեամբ կամաց. բայց զքա-
հանայութիւնն ոչ տանուձակեցուցանէ բանս ամենե-
ցուն, և ոչ թոյլ տայ ընտրութիւն իւրոցն կամաց, այլ
՝ի կամն և յընտրութիւն վերակացու հօրն և Աստիկո-
պոսին ապաստան առնէ։ Յորժամ նա դատէ զոք պա-
տուելոյ արժանի՝ յառաջ գալ յայս չնորհս, որ անուանի
կամաք դատէ զբաւականութիւն կատարելութեան հա-
սակին՝ իմաստութեան և արդութեան։ Օ՛ի այսպէս
տայ մեզ տարացոյց Երանելին Ափռնեսիոս, թէ միան-
ձնացեալ կրօնաւորքն դասակարգին միայն յեկեղեցիս
նախապատիւ քան զժողովուրդն. իսկ քահանայք և
սարկաւագունք՝ իշխանք և հրամանատուք են նոցա և
ժողովրդեանն։ Այսոցիկ վկայ ունիմք և զերանելի
Տարսն Եգիպտացիս. զի զձև կրօնաւորութեան ամենե-
քեան ունէին, բայց ՝ի յերիցութիւնն դժուարաւ ոք
՝ի նոցանէ ձեռն արկանէր, և ՝ի մէջ բազմանդն և բիւ-
րաւորացն մի երից լինէր. որպէս զիրք նոցա ուսուցա-
նեն։ Այլ Երանելին Ափրեմ կրօնաւոր էր, բայց ՝ի սար-
կաւագութեան պատիւ մեծ թախանձանաւք եհան զնա
սուրբն Բասիլիոս։ Այլ զայսոսիկ ոչ ապագաւ ՝ի մէջ
առաք. որպէս զի յայտ լիցի հատանական վկայութեամբ՝
թէ փոքր և յետին է կարգ կրօնաւորութեան քան զ-
պատիւ քահանայութեան. զոր ամենևին տեսանեմք

1 Ցօրին. փոխ Յ---ծ---ն։

զայս սահման օրինի ՚ի ժամանակս մեր ՚ի հակառակն փոխոխեալ. ։ զանչափառամ ընդ հատարակաց մեր կու-
թիւն. զի ՚ի կրօնաւորութենէն ամենեքեան որպէս
՚ի ծանր և ՚ի դժուարին գործոյ հրաժարիմք, և ՚ի քա-
հանայութիւն ամենեքեան ձեռներէց լինիմք. և արան-
չելի, և ծաղու արժանի այս գործ, զի քահանայանա-
լով զձև կրօնաւորութեան առնումք. և զայն չածեմք
զմտաւ՝ թէ այս ձևս այն օրհնութեանն պատշաճի. և
անօրինութիւն է զձևս ՚ի սէտս փառաց մարդկան առ-
նուլ, և յօրհնութենէն հրաժարել. նա և խաբէութի
է Աստուծոյ և մարդոյ. զի երևիմք նոցա ձևովս աբե-
զայք, և մեք յանձինս ոչ գիտեմք զմեզ յայն կարգ ա-
բեզայութեան։ Վ՚ի Թշուառ անմտութես, և աշխարհանաց
արժանի յիմաստնոցն. որոյ տգէտ յիմարութեան և ոչ
զայլ ոք տեսանեմք յաղգաց գրաւել ՚ի նեըքոյ, բայց
միայն զմերս Թշուառութիւն, զի ամենեքեան նորա ՚ի
վանորայս և ՚ի կրօնաստանս կրօնաւորս բազմացու-
նեն, և նովին օրհնութեամբն կնքեն, և զձևն շնոր-
հեն. իսկ քահանայական և սարկաւագութեան պատ-
ուոյ՝ սակաւս զոմանս ՚ի նոցանէ ընտրեալ վիճակեն։ Ա-
կայն զմերս ոչ գիտեմ տգիտացեալ յամենեցունց այ-
սոցիկ զհակառակ բերութին, զի ՚ի հոլովական՝ ցպոյ, և
՚ի մանակալութեան գործոյ, և յայլոց անբան արհես-
տից առեալ զմանկունս տգէտս՝ փոխանակ միանձնու-
թեան քահանայս կատարեմք. և զկրօնաւորութեան
օրհնութիւնն յաչս այնպիսեացն ծանրացուցանեմք՝ մե-
ռելութիւն կոչելով։

Ա՛ս արդ եկ և քննեսցուք զիւրաքանչիւր սոցա զօրու-
թիւն, և բանաւորապէս որոշեսցուք զմեծն և զփոքրն
՚ի միմեանց, և նախ զայս դնեմք։ Վ՚որ մեռելութիւն
կոչես զկրօնաւորական աբեին, և վասն այնր խոսեալ
՚ի նմանէ, զիարդ ապա զմկրտութիւն ոչ խորես. թէ-
լեւս այն ևս է այսպիսի մեռելութիւն. և ուր գիցուք
զՊօղոսի ասելն. "Ամք մկրտեցայք ՚ի Յիսուս Քրիս-
տոս՝ ՚ի մահ անդր նորա մկրտեցայք, Թաղեցաք ընդ
նմին մկրտութեամբն ՚ի մահ,,։ Ա՛ս նոյն գարձեալ.
"Ա՛ռաւօտք, և կեանքն ձեր ծածկեալ են ընդ Քրիս-

1 ՚ի միում օրին. Հոլովութիւն։

տասիս Աստուած. և որք մեռանիք մեղացն, զինքդ տա-
կաւին ի նմին կացեալ ... Այսպէս առնէ զայս՝ և խորհրդա-
ծաժուեթիւն Սկրտութեանն, օծանելն, և ի հանդէս
մտանելն, և ապա ի ջուրն ընկղմել և մեռանել. ապա
յայտ է պատաբելական վկայութիւնս՝ թէ և ի նոյն ինքն
Սկրտութիւնն մեռանք որք և կանգնեալք՝ աշխարհի և յան-
կութեանց նորա, և ապա թողութիւն մեղաց ընկա-
լաք, և Աստուծոյ կենդանացաք։ Սակ եթէ այս այսպէս
է, ասիցէ ոք, զինչ է յաւելուած կրօնաւորութեամբս
վերստին մեռելութիւն. եկ զինջանելով կաց առնեթէր
բանիս, և ասացից՝ քեզ, ոչ զիմ ինչ՝ այլ զՀարցն սըր-
բոց։ Սկրտութեամբս է մեռելութիւն աշխարհի, բայց
և ոչ ցնորից սորա. զի զիրք սուրբք առաւել քան զկար
մեր ոչ ինչ օրինադրեցին, այլ ի կամ ասպատան ա-
բարին, ասելով տեառն, «Որ կարող է տանել տարցի»
զկուսութիւն. և Պօղոս՝ թէ «Պատուական է ամուս-
նութիւն և սուրբ անկողինք. ես վասն կուսանաց
հրաման ինչ ի Տեառնէ ոչ ունիմ, բայց միայն խրատ
տամ։ լաւ է նոցա եթէ կացցեն իբրև զիս»։ Զի զայս
ընելով մարդիկ և անընդմիջաբար կամելով ի սէրն Աս-
տուծոյ վայելել և սուրբ հոգւով և մարմնով հաճոյ նմա
լինել, անձամբ անձին ընտրեցին զկուսութիւն, և ոչ
եթէ հարկաւոր օրինաք. և զայս որպէս զի յամենայն
ցնորից և ի զբաղանաց աշխարհի հրաժարեսցեն, և
միայն զտեառն հոգւացեն. վասն այսորիկ և յետ այսր
զիտան հաւանեցուցանել զայս առ քահանայն և կամ
առ հայր վանացն, ասելով, որպէս ի Սկրտութեան մե-
ղաց որ յաշխարհի մեռայ, այժմ կամիմ և ի զբաղա-
նաց նորին մեռանել. այս ինքն օրինաւոր ամուսնութէ,
վաճառաց, տուրեւառից, դատարկաբանութեան [1], և
պոյ ընդ սոքօք բերի. և այս կանոնս յօժարութիւն
խնդրէ օժանդակ զաղօթից և զօրհնութիւն։ Սակ նա
առեալ ածէ յեկեղեցին, և հարցանէ՝ թէ կամիցօժար
մնօք հրաժարել յաշխարհէս. և յետ հաստատակ խոս-
տովանելոյն զինոյն՝ յապաւէ զՀերան. որ նշանակէ՝ թէ
որպէս զայս ի մարմնական զվնասս հատի, նոյնպէս և
ի մտացս՝ որ է զվէս ոգւոյս՝ զամենայն խորհուրդ ցան-

1 Մի օրին. Ո[illegible]ն։ 2 Յօրին. միւս յարի հ[illegible]։

կութեան աշխարհի։ Եւ վտիտ զհանդերձն սգաւոր սակ, զորմէ՝ կ՚ի մկրտութեանն փոխեն բեհեզ և լուսաւորեալ, սոյնպէս և այժմ Թխատիպ. յայտ առնելով Թէ, պանդուխտ և՛ ի սուգ եմ՝ ի նահիրս կեանք, մինչև հասից առ ուրախութիւնն իմ՝ ։ Յաքան է կարգ աբեղայութեան, ոչ առեալ պատիւ և ոչ իշխանութիւն, և ոչ հարկաւորի ունել բան վարդապետութեան և ոչ վանս տպիտութեան ձշնամանի ։ Եւ է պարտական զայլս լուսաւորել, և ոչ այլոց բժիշկ լինել. այլ միայն անձին լինել ուղիղ և դաստիարակ ։ Ակ քահանայն այսմ ամենայնի պարտական է, և՛ ի պատիւ վիճակեցաւ. զի զինչ այլ բարձր պատիւ քան զայս, զՔոգին բաշխել, և զնիւթս ։ Ստուածոյ կատարել. և ըստ առաւելութեան պատուոյն՝ և կատարելութեան է պարտական. ոչ միայն սուրբ լինել, այլ և իմաստուն. և ոչ անձամբ զանձն, այլ և զայլս լուսաւորել ։ Ստուծոյ գործակից լինել, որպէս ասաց Պօղոս ։

Այսպա յայտնի երևեցաւ կարի բացատրապէս հեռի՛ ի համեմատութենէ միմեանց խոնարհ կարգ աբեղայութեան, և բարձր պատիւ վիճակաւորութեան յաստիճանս եկեղեցւոյ ։ Սակայն աղաւաղեցաւ, բարձաւ, առ ի ետ այս բարեկարգութիւն՝ ի մէնջ, որպէս կարծեմ՝ ի վաղ ժամանակաց. և այնչափ ծառայք եղեալ մահասանց՝ ընդ առնոյն քրիստոնեայս մրցելով, մինչ զի ոչ բնաւ խոնարհիմք ընդ ուղիղ նոցա ընթացս նահանձել, որոց և մեբս գրեանք վկայեն ։ Յլ կուրութեամբ կուրացս առաջնորդեմք. քահանայս օծեմք, և հիւսուղ տամք, ՚ի պատիւ հանեմք, և զգլուխն պատրաստեմք, անգիտացեալ տպիտութեամբ յիմարելոյս՝ Թէ այս կընկուղ խոնարհութեան է նշանակ և պատկառանաց, և ոչ հանդրժակութեան և իշխանութեան ։ Եւ որք գտին զսա և ուսուցին, ոչ քահանայութեան ետուն նշանակ, այլ կրօնաւորութեան. և յետ՚ի սուգ լինելոյն և առնելոյն՝ որով ծածկեցան դէմքն՝ ըստ հաՀոյիցն ։ Ստուծոյ ծառայելոյն, ապա եթէ ազգեցութիւնն ։ Ստուծոյ ասիցէ նմա, “ Յարեկամ՚ի վեր մատիր .., աճեալ զնա՛ ի խոնարհութենէն յիշխանութիւն, և յամօթոյն՚ի համարձակութիւն՝ այսինքն՚ի քահանայութիւն, ոչ Թէ ծածկեն զգլուխն այլ բանան. քանզի տան նմա

իշխանութիւն յաղօթս կալոյ և մարգարէանալոյ . և պատուի ոչ ծանկել զգլուխն, զի մի յանձն արասցէ զգլուխն իւր զՔրիստոս, որպէս ասաց Պօղոս . քան զոր չիք ինչ մեծ աղետից արժանի զնա անհնազանդեցուցանելոյ. նա և ընդ հազարապետ խորհրդոյ նորին մըտել, որ ոչ միայն հրամանաւ այլ և բնաւորական օրինօք զմեզ առ ի սոյն հաւանեցուցանէ , եթէ " Ոչն մարդոյ ոչ է պարտ ծածկել զգլուխ իւր , որ պատկեր և փառք Աստուծոյ է,, Ազդ ածելով զոք ի պատիւ և յաստիճան Եպիսկոպոսն , ոչ միայն բանալ զգլուխն , այլ և գՀերան յապաւէ , յայտ առնելով թէ ոչ միայն իրրև զմի ոք ի հասարակաց մարդկանէ է սա՝ որոց հարկաւոր է բացաւ գլխով լինել, այլ և օժանդակ լինի կամացն Աստուծոյ. որպէս հրամայեաց նոցին առանց գլխոյ լինել. որպէս կինն որ գգէսն ընկալաւ և ծածկութիւն ի վերայ նորին , օգնէ հրամանին , այսպէս և սա որում գէսն անարգանք է՝ օգնէ օրինացն . և գգէսն ի բաց հատանէ , և խրոխտանալով պանծանօք ' յարդարութիւն գրէ նոյն իւրոյ Քրիստոսի՝ բացաւ գլխով և պարզ դիմօք առանց ամօթոյ աղօթէ և մարգարէանայ : Այս թէ ոք այս խորհրդածութեանս հակառակ գինի , պատասխանէ նմա Պօղոս . " Մեք չունիմք այսպիսի սովորութիւն , և ոչ եկեղեցիքն Աստուծոյ ,, Տեսանե՞ս թէ որպէս հաձոյ թեամբ մնայ՝ ի սովորութենէ ի չաւղայ հարցն քո պատաքոյ գոյար . զի " Ոչ ի փոքուն անփոյթ է և ի բազումին անփոյթ է ,, Եթէ զփոքր կարծեցեալս և զդիւրագործելի օրէնս լուծաք , զմեծն և զնեղհակին մարձինոյս որպէս լկսուք հաւատարիմք ըստ ձեմարտութեն ուղղել : Եթէ զգլուխս վանն Աստուծոյ օրինացն զժուարիմք բանալ , որոյ որպէս զնոյն մատուցանեմ, որպէս հրամանն ընկալայ : Այս ո՞ օրինադիր այսմ, հարցանես . Պօղոս բերանն Քրիստոսի , որ ամենայն յանցանաց պատիժ միայն գնէ փոխարէն, և այսմ զծանրն և զժուարինն . զՔրիստոս , ասէ , առնչեցուցանէ : Այս զինչ առաւելութիւն ի բանալն կամ յոչն : " Այս ոմ ես ոմ մարդ՝ որ պատասխանի տաս Աստուծոյ . միթէ ասիցէ՞ ստեղծուածն ցստեղծիչն իւր՝ թէ ընդէր այդ-

1 Մի օրին . պ=բ=ա=ր=ա=ն=ա=ր=ա=ն=ա=ր=ա=ն

պէս առաքեր զիս : Այսուամենայնիւ .. . Այսուհետեւ օրհնայն խորհ[1] և քննող էրը առեր հրամայեր լինել՝ մարդ գոլով . այլ թէ, անցանես ընդ նոյնն, յայտ է թէ արհամարհեցեր և մեղար : Այս զի փոքր ինչ ընդարձակութիւն տայ բանիս, ասա և պոռնիկք աստուածն ոչ գոլ զանազանութիւն ամենատեառն և պոռնկութիւն, և անխտիր մեղուցեն . նոյն և այլքն որ ընդ սոքօք բերին : Այսուհետեւ սահմանեալ, թէ այր գոլով յորժամ աղօթես, բաց զգլուխդ . և Պօղոս զընտութիւնս նմին վկայ առ և ուսուցիչ . և դու երկոցունցն ընդդէմ մրցելով ոչ առաւելութիւն գկատարելն հանդերս, և ոչ նուազութիւն զոչ կատարելն : Մի անբերելի տգիտութեանս և ապառում բաղուցս : Այդ Աբեմիա ցաւակից մարգարէ, և վշտակցելով ողբա զբեկումն իմ և ժողովրդեան իմոյ :

Սակայն աբեղայ եմ ասէ, և ոչ է պարտ ինձ զօրհնեալ քոզ՝ ի բաց ընկենուլ : Պետեցիկ, եղբայր, և ես այդմ վկայեմ, զի աբեղային ոչ իշխանութիւն ունի՝ ի մէջ ժողովրդեանն աղօթելոյ, և ոչ զպատկառանացն զգեստ վերացուցանելոյ : Այսպա թէ ընդ խոնարհ կարգիկ՝ վհատակեցար և՝ ի բարձր ատենէն, յայտ է թէ կրկին փոխոխումն առեր . որպէս աբեղութիւն յաչխարհէ, այսպէս և քահանայութիւն յաբեղութենէ . և՝ ի քահանայագործել աբեղայիդ՝ պարտիս քահանայական համարձակութեամբն երևել . ապա թէ դեռ ևս ամօթոյ գործով ծածկիմք, և յատուհանս մի ձեռնարկեսցուք՝ ի բաց խուսեալ յանմեղացն շաւղաց, և մերս փոքրկութեան կրճատութեանս ճնասցուք :

ՆԵՐՍԷՍ ասէ . Պարձեալ և այլ ինչ խնդրեմ ուսանել, ոչ իբրև հակառակելով, այլ հակառակութեան զնշանագրութիւնն պարզել ախորժեմ ինձ՝ ի կռուից՝ և յանդիմանութիւն . քանզի իմ է եղբօրն վէրն և բժշկութիւնն . ապա որչափ և առաւել հասարակաց ազգիս տանդրդութիւն, որոց փոխան և զանձն թէ լինիմ արժանի դնել՝ երանելի եմ : Այդ զինչ, լուայ զի ասացեր, աբեղայ գքեզ գոլ . հաւատամ և ձևով գգեստուցդ տեսեալ զմտամիոք պատճառեալ . սակայն խըն-

1 Յօր . միտս ի խոհս :

զրեմ ուսանել, ոմր և որպիսի օրհնութեամբ ընկալար զմեռելութեանդ ձեւ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ։ Եկեղեցիս։

ՆԵՐՍԷՍ։ Քարիւզ, քանզի ասաի բաշխի ամենայն ընդ՝ Նա որպիսի օրհնութեամբ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ։ Քահանայականաւն. զի քահանայ օծեալ զնա Եպիսկոպոսն՝ ետ զկնկուղս։

ՆԵՐՍԷՍ։ Այդ զնոքդ լսեցի, զքահանայութիւնն կրնկղով ձեւացուցանել, որոյ պատուական ուրարն է և սուրբըն նախորան իշխանական զգեստ, և ծածկոյթ գլխոյն Եպիսկոպոս, և ոչ կնկուղ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ։ Սակ ապա օրհնութիւն՝ որով զկնկուղս ընդունիմ, ոմր է եթէ ոչ այս՝ ուսուցես։

ՆԵՐՍԷՍ։ Քարի, եղբայր, ի նոյն ինքն ի գիրն օրհնութեանց ընթացիր, և ուսուցէ քեզ. զի նախ հարցականքն են բանք, որպէս ի մկրտութեանն, և ապա քո կամաւ խոստովանելն, անձամբ անձին զկտրոյն տալ՝ զկերպ յապաւել և յետ այնորիկ զկնկուղդ առնուլ։ Այլ իւրաքանչիւր զգեստուցն ոչ ես լուեալ զօրհնութիւն, զի ասէ. "Օ գենու եղբայրս մեր զկնկուղս սազաւարտ փրկութեան, և զաբեմն կնիք խաչակցութեն Եպիսկոպոսի,,. նոյն և այլն. և ապա տան զիւրաքանչիւրան նոքին պահապան և նշան։

ՅՈՎՀԱՆՆԷՍ։ Այս և ոչ զմիոք յայդցանէ ոչ եմ լուեալ, այլ միայն կացուցեալ զնա և զմիւս ևս այլ Եպիսկոպոսն առաջի սրբոյ սեղանոյն՝ ինձ զաբեղութեան ետ ձև յետ օծելոյն քահանայ, և զնա եթող նովքին աշխարհական պատմաճանաւն։

ՆԵՐՍԷՍ։ Ով մեծի աղետից, և ծաղու ապիկանի մանաւանդ գործոյս. և ունայն արար զայսքան մեծ շնորհս ի հարցն առ մեզ եկեալ. զնոքդ և ժպրհեցաւ առանց այնքան բազմադիմի խորհրդական աղօթիւք զօրացուցանելոց զքեզ՝ այդպէս կերպարանել։

ՅՈՎՀԱՆՆԷՍ։ Այո կերպարանեաց Հնամարտութիւն, որպէս ասացի, չև ևս օրհնեալ։

ՆԵՐՍԷՍ։ Այսպա յայտ է ի բարբառոյ բերանոյ քո՝ թէ խաբ եղար, և ոչ կրծեաւոր, միայն մերթով ոչխարաց զմարդիկ պատրել, որպէս տէրն ասաց։

1 Յով. միտմ ընթերցիր։

ՅՈՎՀԱՆՆԷՍ· Լաւ ինձ այսպէս թուիմ, յետ՝ի քէն ուսանելոյ։

ՆԵՐՍԷՍ· Վարդանեմ և զայս. և յօծանելն զքեզ քահանայ և յաբեղայ ձեւացուցանելն՝ ուստի և կամ յորմէ գրոց սասց ընկալեալ զայս աւանդութիւն։

ՅՈՎՀԱՆՆԷՍ· Ես գիտեմ։

ՆԵՐՍԷՍ· Հաւասիկ տարակոյս ինձ արկանես. զի ահաւասիկ Փոխեսիոս այսոցիկ կարգաց պատմիչ՝ ոչ զայսպիսիս տայ տարացոյց. այլ մեծաւ անջրպետութիւբ որոշէ զմիանձնութիւն և զերիցութիւն. և զգեստ փոփոխել՝ի միանձնութեանն ասէ, և ոչ՝ի քահանայութեանն. նա ուստի եգիտ զնորաձեւութիւնն։ Լաւ հարքն եգիպտացիք սովաւ զկրօնաւորութիւն՝ և ոչ զքահանայութիւն քանակեցին։

ՅՈՎՀԱՆՆԷՍ· Յայտ է եթէ՝ի տգիտութենէ։

ՆԵՐՍԷՍ· Դարձեալ և այլ ինչ կամիմ քեզ յայտնել։

ՅՈՎՀԱՆՆԷՍ· Ասա, զի կարօտիմ ուսանել։

ՆԵՐՍԷՍ· Ըեաճ է քո երբէք՝ի ձեռս զգիրն, որով զօրհնութիւնն քաչխեմք, և ընթերցեալ գտեր երբէք՝ի նմին՝ թէ յօրհնելն կրօնաւոր՝ քահանայական պատիւ ունի. կամ՝ի ձեռնադրելն քահանայ՝ աբեմ և հնկուղ զգեցցի։

ՅՈՎՀԱՆՆԷՍ· Լաւ ոչ բնաւ։

ՆԵՐՍԷՍ· Ապա զինչ է գրեալն՝ի քէն, կամիմ ուսանել։

ՅՈՎՀԱՆՆԷՍ· Ընդ գրեալ է. յորժամ որ՝ի կրօնաւորութիւն գայ, աղօթել՝ի վերայ նորա զանազանապէս որպէս՝ի վերայ մեռելոյ, և ապա զայս ձև մեռելութեան ողջովք և արտասուօք նմին չնորհել. իսկ զքահանայն ցուցանէ՝ թէ ընտրութեամբն Աստուծոյ և ժողովրդեանն յիշխանութիւն հանեալ՝ եպիսկոպոսն, և սարկաւագն ձայնէ զնոյն, թէ "Աստուածային և երկնային չնորհն կոչէ զայս՝ի քահանայութիւն ըստ վկայութեան անձին իւրոյ և ժողովրդեանս... յետ որոյ ապա նմա զաստուածական իշխանութիւն եպիսկոպոսն՝ զմեզս թողուլ, զպատարագն կատարել, և զայլն

1 Մի օրն. Հ-ԱՒԷ։

որ ըստ նմին։ Օ գեստուն փոխոխումն յայսմ վայրի ոչ երբէք ընդՀերցայ։

ՆԵՐՍԷՍ. Արդիոք ասացեր. եթէ այսպէս է, աւ ինչ հայելով ՚ի զրեալն արհամարհեաց։

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Ինձ թուի զայն պատճառել՝ թէ աբեղութիւնն մեռելութի է, և այս քահանայութիւնս իշխանութիւն. ՚ի մահուանէն հրաժարեն ինդրողքս, իսկ զպատիւս ախորժեն։

ՆԵՐՍԷՍ. Այ եթէ ՚ի մահուանէն կամօք հրաժարեցին, զնա մեռելութեանս ոյր աղագաւ զգեցան. թէ բնաւ ՚ի պատրաստս տեսողացն։

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Օ այս ասեն, թէ աբեղայութեան նա ՚ի մէջ մարդկան Հաճելի է և փառաւոր։

ՆԵՐՍԷՍ. Յայտ առնես եղբայր, թէ Հաճոյից մարդկան են ծառայք այնպիսիքն և ոչ Աստուծոյ. զոր Աստուծոյ ոչ կարացին առնուլ՝ անձամբ անձին յափշտակեալ և ՚ի պէտս փառաց մարդկան նուաճ ձեւացեալ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Արդարև։

ՆԵՐՍԷՍ. Այս մեծ մոլորութիւն և արտաստուած արժանի յիմարութիւն՝ զաստուածային օրէնսն մնոտի կամ ոչ մարդկան ծառայ առնել։

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Այլ ասեն և զայս ևս՝ թէ քահանային պարտ է զի որշեսցի ՚ի հասարակական կրօնաւորացն, որպէս զի մի անկարգութիւն տիրեսցէ. վասն այսորիկ դիցեն զվնկուզն։

ՆԵՐՍԷՍ. Այ զինչ անուանին կրօնաւորքն, ասա ինձ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Աղբարք։

ՆԵՐՍԷՍ. Ի մէջ եղբարց մեծ և փոքր գգեստուց որոշումն եղեալ՝ յայտ է թէ լուծանեն զերարեձևութիւն հասարակութեան, և զհոնարհագոյնսն՝ ՚ի նախանձ բարձրագոյն պատուոյն շարժեն։

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Այդպէս լինի ձշմարտապէս. զի մանկունք փոքրկունք տեսեալ զպաճուճանս կնկղին՝ թախանձելով զնոյն ձև խնդրեն։

ՆԵՐՍԷՍ. Այ էր վասն ոչ տայք։

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Վանզի ասեմք, եթէ միանգև քահանայասցիս, ապա այսպէս ձևասցիս։

ՆԵՐՍԷՍ. Ով յիմարութեանս. և Ընտան, Աակաբ, Պաբմիոս որք էտուն մեզ զսա, և ինքեանք այսպէս էին

ձևացեալ. և ոչ սարկաւագ չէին, թող թէ քահանայ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Ապա հրամայեաս առանց քահանայու-թեան կնկուղ և պեմ տալ։

ՆԵՐՍԷՍ. Ես, այլ աստուածաշունչ գիրք և հարցն սրբոց աւանդութիւն գրովք առ մեզ հասեալ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Ա՛ն զիարդ ապա որոշի քահանային և կրօնաւորն 'ի միմեանց 'ի վանս կուսանաց։

ՆԵՐՍԷՍ. Ա՛ն ոչ մի իրօք ոչ է պարտ որոշել. զի ձևս որոշիչ կրօնաւորացն յաշխարհականացն է, և ոչ թէ նոցին 'ի միմեանց. որպէս զի մի լեռի 'ի մէջ եղբարցն մեծ և փոքր. և մի վանն սիրելոյ զձևն անպատշաճապէս՝ ժպրհեսցի 'ի բարձր պատիւ երիցութեանն։

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Արի ինձ պատշաճ է պահել զայս սովորութիւն։

ՆԵՐՍԷՍ. Հարցանեմ և այլ ինչ զքեզ. զձև և զկարգ կրօնաւորութեան կամ զպատիւ քահանայու-թեան Հայք անձամբ անձին գտին՝ եթէ յայլոց ազգաց ընկալան։

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Այդ յայտնի է. քանզի հուսկ յետոյ 'ի ձեռն սրբոյն Կրիգորի հաւատացին, և 'ի Յունաց զամենայն բարեձևութիւն եկեղեցւոյ ուսան, և անա-գան ուրեմն առ սրբոյն Ահակաւ զգրեանսն Աստուծոյ և 'ի նոցանէ թարգմանեցին, և ըստ այլոց քրիստոնէից սովորութեան վարէին, նոցա գրովք և աւանդութեամբ պայծառացեալ։

ՆԵՐՍԷՍ. Ա՛ղիշ ասացեր. ապա զիարդ ըստ այսմ մտանին օտար 'ի նոցանէ գնան շատիշ. քանզի իմ իսկ տեսեալ է զՅունացից վանս, զՀռոմից և զԱստուծոյ՝ հարցեալ ձեզ և ուսեալ, զի նախ կրօնաւոր օրհնեն, և ապա կնկուղ և պեմ տան. և անհնար է միում ու-մէք 'ի նոցանէ առանց օրհնելոյ կրօնաւոր զոք յեկեղեցին պեղեալ ձևացուցանել։ Այլ թէ քահանայ կամ սար-կաւագ գայ յաշխարհէ ասացին, թէ մինչ չև եմք զհրա-ժարումն յաշխարհէ խնդրեալ և աղօթիւք կատարեալ, անհնար է զնա այս գործոյս ձևացուցանել։ Ահա պրք էին 'ի վանս նոցին՝ զորս տեսի աչօք իմովք, ծերքն և երի-տասարդքն՝ քահանայք և սարկաւագունք և պրք ոչ վի-նակեալ աստիճանի զանազանապէս, զմիօրինակ զգեստ

ունէին ըստ իւրաքանչիւր սեռի սովորութեան անխտիր համարձակութեամբ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Այլ ասեն որ առ մեզ իմաստունքս՝ թէ նոքա ի հաւատոյն Թիւրեցան, և ոչ է պարտ նա- խանձել ընդ նոսին։

ՆԵՐՍԷՍ. Ա՛յս ասեմ զայդ և ոչ բնաւ, թէ մեք միայն եմք Քրիստոսի ժողովուրդ. և իմաստութիւն քննեալ ոչ գտաք առ նոսին գոնեայ սակաւ ինչ այլափառութեի, այլ են ձգնարտապէս ուղղափառք։ Ա՛յլ համարեայ թէ ի հաւատոյն Թիւրեցան, ի կարգացն ոչ ար աղա- գաւ. զի այլ է հաւատոյն բան, և այլ է աւանդութեի կրօնից։ Ա՛յս թէ Թիւր են, մերս գրեանք, որպէս վե- րագրեցաւ, էր վկայեայ նոցա, զորս անմիաբն Թիւրս կարծեն։ Վարձեալ Թիւր մի ազգն կամ երկուսն, ե- րեք ազգ քրիստոնէից և որ ընդ նոքօք բազմապատիկ ազինք հաստատունք աշխարհօք և աթոռովք, զիարդ վերոյ եցան ի ձգնարտութենէն, և առ յեղյեղեալ և տատանեալ՝ ազգս մեր նոյն միայն ճշմայ հաստատուն։

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Ընդհատանիմ եմ։

ՆԵՐՍԷՍ. Ա՛յս զի և այսոցիկ վարդապետք զՆոռան աղաղակեն Թիւրեալս, Ա՛յորիքն էր վասն դեռ ևս փայ- լեցուցանեն զայս սովորութիւն ուղիղ. և Ֆրանգք արդ ևս եկեալ ի մէջ մեր՝ զիարդ է զի նոցին համաձայնին ի սոյն կարգ, և ոչ մեզ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Ո պարտութիւն խոստովանիմ։

ՆԵՐՍԷՍ. Ա՛յս է՛կ, եղբայր, նախ քան զայլս դատել՝ անձանց լիցուք բժիշկ և անաչառ դատաւոր, ծանու- ցեալ՝ թէ կրօնաւորն միայն առանձինն ինքն իւր նուի- րեաց զանձն Ա՛ստուծոյ, և բաւական է նմին անձինն առաքինութիւն. իսկ քահանայն՝ թէ զկնի իւր կատա- րելութեան և զայլս ոչ ուղղէ՝ անկատար է, և զարիւն նորա ի ձեռաց իւրոց խնդրէ Ա՛ստուած. նա թէ զաս- տիճանն որ նմին հաւատացաւ՝ մինչև ի մահ ոչ պա- հեսցէ[1], զրժեաց ուխտին և դաշանցն, զոր եդ առաջի Ա՛ստուծոյ և եպիսկոպոսին։ Ա՛յլ զայս ծանուցեալ, զմանկունս նուիրեալս կրօնաւորութեան՝ ի կրօնաւո-

1 Ի միում օրին. յաւելու՝ — 2 Մի օրին. պակաս։

թութեան բարեձեւութեան լուծ դիցուք, և յոր ըստ նմին և կարէ՛ զգեստ. և ոչ՝ ի քահանայութեանն պատիւ, զորոյ պաշտօնն ոչ կարողանան կատարել. քանզի որպէս մեծ է թագաւորութիւն քան զերկրագործութիւն, այսպէս մեծ է քահանայութիւնն քան զաբեղութիւն. և որպէս նմա բազմապատիկ իմաստութի՛ պիտոյ է՝ որ թագաւորն է, և զայլոց օգուտն տնօրինէ, այսպէս և երիցուն յետ սրբութեանն պիտոյ է և իմաստութիւն, գիտել զառաւելութիւն իւրաքանչիւր գործոցն զոր կատարէ. և ըստ որում երկրագործին սխալանք՝ անձին միայն վնասէ, իսկ թագաւորին ամենայն աշխարհին, այսպէս սխալանք աբեղային փոքր է առ քահանային՝ որ յ[՝]ստուծոյ պաշտօնն է կարգեալ, և հայեցողացն պատկեր գծեալ՝։ [Այ փոքր է կրօնաւորութիւն ոչ միայն քան զքահանայութիւն, այլ և քան զաարկաւագութիւն. զի սա և կանանց է համարձակելի, որպէս և սուրբն [՝աւետիս գրէ. իսկ սարկաւագութիւն և ոչ բնաւ։ [՝Ո աբեղային՝ քահանային տայ հրաման [՝Վհնեսիոս օրհնել. բայց զսարկաւագն եպիսկոպոսն ձեռնադրէ։ [՝Այս որ սարկաւագ է, իշխանութիւն ունի յեկեղեցիս զվարդապետէն. և կէս սարկաւագն զերդմնեցուցանելն. բայց նա և ոչ զմի ոք՝ ի սոցանէ. ուստի և [՝յստուած՝ ի նմանէ սակաւ պահանջէ, քան յորոց կարգեալ են յիշխանութիւն։ [՝Այսոքիկ պարտ է մեզ հարցն սրբոց բարեկարգութե՛ն հետևել, և մանկանց՝ որ գան՝ ի լուծ կրօնաւորութե՛ զօրհնութիւն և զձև կրօնաւորութեան տալ, այսինքն զկնկուղն և զսքեմն և զփիլոնն, և աճել զնոսա՝ ի լուծ խոնարհութեանն քրիստոսի. և զի այս է զգեստ սորա, և ոչ բնաւ առ երիցութիւն զուգին, բաւականապէս յուցաւ. և ազգ քրիստոնէից այս օրինաւք այսօր վարին. և ապա յորժամ առնու զչափ հասակի զարթութեան և զիմաստութեան, ոչ կամաւ՝ այլ բռնութեամբ և՝ ի հարկէ վինձակել զնա՝ ի պատիւ, որում արժանի դատեն, թէ կէս սարկաւագութեան կամ սարկաւագութեան, և ապա քահանայութեան. զի անդատապարտ և իմաստուն լիցուք՝ ի գործ և՝ ի պաշտօն [՝Քրիստոսի [՝յստուծոյ մերոյ, որում փառք յաւիտեանս. ամէն։

1 Ի միում օրին. Գործ. ։

ՔՆՆՈՒԹԻՒՆ ՕՐԻՆԱԿԱՑ. ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ՀԱՐՑԻՆ ԱՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ

ՈՐՔ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ՑԱՄԵՆԱՑՆ ՏԵԳԻՍ ՔՐԻՍՏՈՆԷԻՑ ՆՍՏԵԼ, ԵՊԻՍԿՈՊՈՍԻ Ի ՔԱՂԱՔԻՍ, ԵԻ ՈՉ ՏԹԷ Ի ՎԱՆՍ· ԸՆԴ ՈՐՍ ԵԻ ՊԱՏՄԱԳՈՒ ԸՆԴԴԻՄԱԴՐՈՒԹԵԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԻ·

ՊԱՐԶԱԲԱՐ [1] որպէս կարծեմ, եղ առաջի բանս ըզբացատրութիւն քահանայութեան և կրօնաւորութե. սակայն կարևոր է ուսանել, ո՞ր աղագաւ եմուտ այսպիսի անբարեձևութիւն [2] ի մէջ մեր, և այլ բազումս առ սոքօք՝ զորս ուսաք և հանդերձեալ եմք քննել· [3]յօդիկ բացայայտիչ լինել կամելով երկայն կարօտանամք բանից, մնաւանդ թէ և ոչ լսել իսկ ունիմք առանց հակառակութեան, և հաւանութեամբ զնոսին ուսանել [4], որք ստացաք միտս իբրև զանմիտս ի մանկանց· զի որպէս նոքա զխրատն և զյանդիմանութիւնն ի սկզբան հասակին անգոնեալ՝ յառաջատելով առ տուրցն ի վախս անհաւթութեան և անզգամութեան կոծանին, և այնուհետև ուղղել դժուարին է զնոսա՝ որ զբար սովորութիւնն յերկարութեամբ ժամանակին իբրև զերկրորդ բնութիւն ստացան· այսպէս և մեք ի վաղ ժամանակաց հետէ սկսեալք կոխել զեկեղեցական բարեկարգութիւն և զսահման հայրենի, մինչև յայս անզգամութիւնս վտարեցաք, յորում եմք ի ծագաց միոյն ի ծագս աշխարհի· [5]չափակոպաք մեր մաքառապետք անօրինաց, և զհնաւանձառու ընդհանուր՝ կապկեք պոռնկաց· յաշխարհէ աստուածպաշտութիւնն բարձած և յանապատս վտարած· այսու հետև յուղղութիւն ջանալով ծիծաղելի լինիմք իմանալովն յայս անմտաց [6], որք կարծեն ոչ զպատաւորութ մտեալ չար սովորութիւն մեզ ուղղել, այլ զբնութիւն փոփոխել· [7]Վ աղետից· ես և ոչ առանց արտասուաց

1 Ի միւսմ օրին· Պ-ր-ծ-բ-ր· 3 Մի օրին· Մ-ր-ց·
2 Մի օրին· Տ-ն-ել·

կարող եմ բերել զվտանգս. քահանայքս իբրև զժողովուրդն յիմն[1]ցաք. որպէս ՚ի նախատեղն ուրեմն զ|ա-
բայել առաց մեղադրելն։

|ակ մեր յայս ընկղմեալ, զժողովրդոյն արբեցութի և չար յիմարութիւն զինչ պարտ է ասել, որք բարւոյ օժանդակ միմեանց լինել լուաք՝ յ|ստուծոյ, ումեմն զՀոգւոյ օգուտն տնօրինել, և ումեմն մարմնոյ սպասաւորել, ընդ հակառակս եղեալ իրերաց՝ չարի և մեղայ միմեանց գտաք տնօրէնք։ |ապիկոպաքս զողք եղաք և գայլք, որպէս ետես Հայրն մեր վանն մեր. և զժողովրդեան գիշատեմք։ |ս ժողովուրդքն գազանաց ստացան բարս, և ընդդէմ մեր մնաքառին։ |ծերևս զժուարբին Թուի լսողացն առացեալս։ |Թէ զօտարաց էր չարախօսութիւնս, կարի անպատշաճ. իսկ եթէ զանձին իմոյ վերս անագան ուրեմն ծանուցեալ խոստովանիմ, ոչ ինչ հրաշափառագոյն անձամբ զանձն կշտամբել. մանաւանդ Թէ և ներողութեան արժանի յարդարն դատաւորէ։

|Այլ Թէ կամիս, եկ և քննեացուք զզօրութիւն բանիդ. մի արդեօք անպատշաճ առացեալդ՝ ոչ ունի ըստ նմին և զգործն։ |յդ ո՞ր լաւ զ|գիտաս Հովիւ, որ այնչափ սիրեաց զՀօտն, մինչև զանձն դնել ՚ի վերայ նոցա. և առաքեալ զինքն և զորս ընդ իւր արածողս Հօտին կոչէ. "|՚ոք, ասէ, արածիցէ խաչն, և ՚ի կամանէ խաչինն ոչ ուտիցէ.."։ |ակ մեք զարածելոյ և ոչ բնաւ փոյթ արարեալ, այլ բնակելով յայրս և ՚ի ծերպս վիմաց, ըստ որում գողոցն է սովորութիւն, յանկարծակի մի անգամ ՚ի տարւոջն կամ երկիցս յարձակիմք ՚ի վերայ Հօտին, զոմանս գիշատեմք, զայլս կեղեքեմք, և զսակ արծաթոյն ժողովեալ, փութապէս իբրև զգող յորջս մեր արագապէս եկեալ դադարիմք, պատճառելով Թէ վանական եմ, և ոչ բնակեմ յաշխարհ. իսկ գնոցայն զաշխարհի և զժողովրդոց գազանային բարս որպէս կարող է բանս յայտ ածել վանս առաւել և գերազանց չարութեան. զի ամենևին անգամեալ և արհամարհեալ է յաչս նոցա եկեղեցական իշխանութիւն. և ոչ ունին հաւատ կամ յոյս առ առաս գոնեայ որպէս

1 Ցոր. միամ տ---։

առ մարմնական իշխան։ Ա՝ոտասցեալ և աղօտացեալ է ամենևին՝ ի մտաց նոցա, թէ մեզ հարկաւոր է ըստ մարմնական պիտոյից՝ եկեղեցւոյ վերակացուաց հպատակել. և այնչափ յանձախեցին չար և պատճառամիտ է սիկոպոսաք յաչս սոցա ատելութիւն և ամբիրատութիւն, մինչ զի բարձաւ՝ ի մտաց սոցին Աստուածահաճութեան յիշատակն, մոռացեալ ամենևին զհաւատ գիտելոյ՝ թէ եպիսկոպոս կամ քահանայ վասն օրինացն Աստուծոյ առաջնորդէ ժողովրդեանն։

Ա՝յլ զինչ պարտ է զսոսին տեսանելով ասել, քան թէ ափ՝ ի բերան լինելով համրանալ. զինչ այլ, քան թէ յաւուրս չարութեան խնամանոցն լռել, և մի անգամ խօսելոյն զերկրորդն ոչ յաւելուլ. զի յորժամ մեք եպիսկոպոսաք և քահանայք ոչ գիտեմք զմեր պատիւս և զդիտաւորութիւն գործոյ, աշխարհականացն որպէս կարող եմք զնոյն ուսուցանել. մանաւանդ այսպիսեացս՝ որք խոստովին ընդդէմ պատասխանեն, "Ո՛ա նաչել զձանապարհս քո ոչ կամիմ,,։ Ա՝յլ սակայն մի ինչ ունիմ աշխատութեամբ միխիթարութիւն. յարձան յաւիտենական և յազգս որ գալոց է Թողուլ զնոսն և զնոսոյն ազգիս զարիս. և Թերևս հասարակաց աշխարհի նոյնս, որպէս առ Ջրհեղեղսն, և՝ Ա՝յլ միայն արդար։ Ա՛ս ոչ երբէք, այլ հակառակ նմին. զի հասարակ ազգ ըստ այսմ մտոյն գեռ ևս բերէն զՀարցն աւանդութիւն. և տեսանեմք այսօր մերովք յաւիտենայն քաղաքս նոցա և՝ ի տեղիս եպիսկոպոսս, և եպիսկոպոսարանս ազատ՝ ի հարկաց՝ որք ընդ օրինօք էն, պաշտելով զպատիւ իւրեանց, և առատացեալ պատարագօք որ ընդ քրիստոնէից Թագաւորօք և իշխանօք. բայց մերս՝ որ ընդ անօրինօք՝ լռութիւն կնքեսցի. և որք՝ ի սակաւաւոր քրիստոնէութիւնս՝ ի վանորեայս Թաքուցեալք, և աշխարհ ամենայն անհոգիս և անպատուղ նոցին։ Ա՝յս և բնաւին ապէտ եմք, Թէ եպիսկոպոսին հարկաւոր է՝ ի մէջ ժողովրդեանն լինել, մոռացեալ բնաւին զառաջնոցն սովորութիւն, և զայսց մերոց առ այլ ազգս զտեսութիւն. նա և զվտանգն որ յայսմանէ՝ և ոչ բնաւ զմնաս ածել յազգս տգիտութեան հեշտացելոցս։ Ա՛ սոյն այսորիկ հարկաւորի բանս Թանձրամտութեանն, մարմնական իշխանութեան յարացուցիս զսոյն երևեալն առ

նել. Թերևս ՚ի մեղսուԹեանս ելով ծանիցուք զնոյնն, և մի որպէս զՀԱՐիսիաս խրոխտասցուք. սակաւ ինչ և ՚ի վտանգիցն տեղեկացեալ, միԹէ կարասցուք զօրուԹեամբն Ա՛ստուծոյ և յայնցանէ խուսել։

Ա՛յլ պարտ է գիտել՝ Թէ անվայելուչ է և ամենևին անիրաւուԹիւն առ օրէնսն եպիսկոպոսաց որք վիճակեցան յաԹոռս քաղաքաց, արտաքոյ նոցին լինել, կամ վանորէից զաշխարհն ծառայեցուցանել. այլ նստել ՚ի քաղաքաց և յաւանաց եկեղեցիս, և հոգալ զհոգւոց նոցա գործն, զոր օրինակ մարմնական իշխանն զմարմնոց. և որպէս այն իշխանն յաղագս մարմնոց տնօրէն լինելոց հարկ հանել յաշխարհէն, և զինուորսն նոքօք ՚ի պէտս մարմնական նոցա խաղաղուԹեան՝ նուաւս պահէ, այսպէս և սմա հարկաւոր է ամենեցուն պտղաբեր լինել եկեղեցին. զի հպատակելով պաշտօնէիցն՝ միշտ անզգաստ յաստուածակոյս կոչմանն լինիցին սոքին խաղաղարարք. որպէս և տայ վասն այսորիկ մեզ տարացոյց օրէնքն Ա՛ստուծոյ ՚ի ձեռն Ա՚ովսեսի. զի զևտացոցն ոչ էտ Ա՛ստուած ժառանգուԹիւն մարմնական, բայց ՚ի տասանորդաց ժողովրդեանն՝ առ ՚ի ծառայելոյ զնոսա առանց զբաղանաց։ Ա՚չ առաքելական կարքն ՚ի բազում տեղիս. “Ա՚ պարածիկ, ասէ, խաչն, և ՚ի կաԹանել խաչինն ոչ ուտիցէ. կամ տնկիցէ այգի, և ՚ի պտղոյ նորա ոչ վայելիցէ,,։ “Ա՚յնպէս, ասէ, և տէր հրաման էտ որոց զաւետարանն աւետարանէն՝ յաւետարանել անտի կեալ,,. նոյն դարձեալ՝ և արժանի գառեցաւ մշակն կերակրոյ իւրոյ։

Ա՛յլ որպէս վերագոյն ասացի, յորժամ ՚ի հովուուԹեան և ՚ի մշակուԹէ գործն կանխեն և սքնին վանդուցն այնպէս՝ որպէս Թէ ընդ նոցա համարս տալոց իցեն, որոց պարտին այսպիսեացս սիրով և յօժարուԹիւ ժողովուրդքն և իշխանք նոցին զՀպատակուԹիւն կատարել. քանզի նուրբ է բնուԹիւնն Ա՛ստուծոյ և խնդալի, անկար է ոտցա ՚ի մարմնական զբաղմունսն վերադրել և արժանապէս ընդ նմա խօսել. և յորժամ՝ նա ոչ ըստ որում պարտն է խօսի և միշտ աղօԹիւք իւրովք զմեզս ժողովրդեանն քաւէ, բարկուԹիւնն Ա՛ստուծոյ փուԹայ ըստ մեղացն ՚ի վերայ նոցա, ոչ ունելով բաւ ըստ ինքեան զի զայն միշտ ինքն նա։ Ա՚Թէ ոչ հաւատաս,

զգիրս առ՝ի ձեռս և ուսիր. զի յորժամ եկաց Ա՛տարան բուրվառով առաջի Ա՛ստուծոյ, անց՝ի ժողովրդենէն պատուհան։ Օ՛այս գիտեալով առաջինն սրբոց Թագաւորացն՝ հարցն և հայրապետացն՝ սահմանեցին յամենայն գլուխս գաւառաց՝ ուր իշխանքն լինին, նստել և յեկեղեցիսն եպիսկոպոս. զի որպէս նա մարմնոյն ընթացից աշխարհին առաջնորդ լինի, և Թագաւորական իրաւանցն տնօրէն և ուղիչ, այսպէս և սա հոգւոց առաջնորդ և առ երկնաւոր Թագաւորն Ա՛ստուած յուսոյ նոցին և հաւատոց առաւատուիչ՝, և բարեկարգութեան պայծառացուցիչ։ Ա՛յս որպէս այն իշխանն՝ի Թագաւորական ապարանսն բնակէ, և յամենեցունց փոխանակ նորին մեծարի, և որք կան՝ի տան Թագաւորին երկրպագեն նմա, և չնորհ երկրպագութեան առ Թագաւորն վերանայ, այսպէս և սա փոխանակ Ա՛ստուծոյ բնակէ՝ի տաճարս նորա, և հարկաւորապէս պահանջէ յամենեցունց գալ աստանօր, և՝ի ձեռն իւր զերկրպագութիւն նուիրել՝ Ա՛ստուծոյ։ Ա՛յս որպէս իշխանն միշտ խուզէ՝ թէ որ գող կամ անհնազանդ կամ ապստամբ՝ի Թագաւորէն՝ և ուղղէ, այսպէս և սմա հարկաւոր է միշտ քննել զանազանաբար ապստամբ բեաղն Ա՛ստուծոյ, և հոգածութեամբ յուղղութիւն ածել. և ըստ որում առանց իշխանին ոչ կարէ կեալ քաղաքն՝ի խաղաղութեան ըստ մարմնոյ, այսպէս և ոչ առանց եպիսկոպոսին ըստ հոգւոյ։ Ա՛յս որպէս նա՝ի գիւղս և յաւանս իշխանութեան իւրոյ Թագաւորական շահիւն զհաւատարիմ ծառայսն վերակացուս առաքէ, ըստ այսմ և սա աստուածային գանձուցն փրկութեան հոգւոցն՝ի գեղս և յաւանս, ՝ի վանս և յամենայն տեղիս երիցունս և սարկաւագունս կարգէ՝ տնօրինել նոցին ըստ մեծի եկեղեցւոյն օրինաց։ Ա՛յս օրինաւք մինչև ցայսօր առաջի աչաց մերոց գնան ազգ քրիստոնէից, բայց՝ի մերս Թշուառութենէ. վասն այսորիկ և մարմնական նոցա իշխանութիւն ամրապահակեալ հոգևորաւն ճնաց՝ի հաստատութեան. իսկ մերս օր ըստ օրէ քակտեցաւ, և դեռ ևս քակտի, ոչ ունելով զհոգին՝ նեցուկ և լծակից մարմնոյն։

1 Մի օրին. Ո-ւէ։ 2 Յօրին. Միւս՝ Ն---ն։

Ա՛տյց չէ ինչ օգուտ զայս բան յերկարել, քանզի փոխանակ շահելոյ անելոյ զլսողն՝ ինձ Թուի Թէ գայթակղեցուցանեմ. ոչ Հայրն ՚ի աստուածութիւն բաղնիս՝ այլ յիս, որպէս Թէ իմն ախտի փառասիրութեան առնուամ ջատագով զօրէնսն Ա՛ստուծոյ։ Ա՛յլ ես համարձակիմ զառաքելոյն ասել։ "Ա՛ղբարբ եթէ առանցաք ինչ, այն Ա՛ստուծոյ է, և եթէ զգաստանամք, այն ձեր է.,. քանզի Թուիմ ինձ՝ եթէ սերն Ա՛քիտոսի և քրիստոնէից ստիպէ զիս քննել զայս։

Ա՛յդ զառաջին բանէն բուռն հարցուք վերստին, իշխանին՝ որ փոխանակ է Թագաւորին ՚ի տաճարի նորա, անկար է զամենայն գործն անձամբ կատարել. այլ ՚ի պէտս Թագաւորական իրաւանցն և իշխանս պատուակից լինքեան ունել հարկ է, որպէս զի խորհրդեանն կցորդ լինիցին նատելով ընդ նմա և առնմա. և այլ են ՚ի նոցանէ որք զՀրամանս նոցին հրատարակեն յունկն ժողովրդոցն. և են ոմանք որ զդրունս պահեն, և այլք որ ըստ իւրաքանչիւր արժանեաց ՚ գործ կատարեն։ Ա՛յս կայն փոքունքն և մեծամեծքն՝ հաւասարապատիւ ծառայակիցք են և ծառայք Թագաւորին։ Ա՛յսպէս և յայսմ Հոգևորական իշխանութեան աթոռս սուրբ եկեղեցի՝ նախապատիւ և փոխանակ Ա՛ստուծոյ է եպիսկոպոսն, իշխանակից և աթոռակից են նմա քահանայքն, Հրամանատարք են սարկաւագունքն, Հպատակողք դրանց և ՚ի բաց առաքիչ անարժանիցն կէս սարկաւագունք. բայց սոքա ՚ի զանազան ընծայից միոյ Ա՛ստուծոյ ծառայք են, և իրերաց Համապատիւ ծառայակիցք։ Ա՛յս որպէս նոքա զոր ինչ առնուն ՚ի պէտս իւրեանց յաշխարհէն, ոչ աշխարհին՝ այլ Թագաւորին ընդոհ ունին՝ զորոյ և զգործն կատարեն, և նոքին իսկ Թագաւորին տան զայն ՚ի ձեռս նոցա, այսպէս և եկեղեցւոյ իշխանք զոր ինչ առնուն ՚ի ժողովրդենէն՝ Ա՛ստուծոյ ընդոհ ունին, յորոյ գործն կանխեալ են, և ոչ սոցա, և սոքա պարտին Ա՛ստուծոյ տալ և ոչ մարդոյ։ Ա՛յս ըստ որում նոքա զպատիւն իւրեանց և զփառան ոչ անձանց Համարին և վասն նորին Հպարտանան, այլ Թագաւորին, այսպէս և սոքա զպատիւ և զփառս ժողովրդեանն Ա՛ստուծոյ պարտին տալ և ոչ անձանց։ Ա՛յս որպէս նո-

1 Ա՛յլ գրի. Ընդ-ան-ս։

քա յանապդաց ոք գոլով անուն Թագաւորին զինքեանս յարդեաց, և Թագաւորն ամենայն մտոյ և ելոյ հանարս պահանջէ 'ի ձեռաց նոցա, այսպէս և մեք յանարգաց ոք գոլով և յոտնակաց՝ անուամբն Ի:ստուծոյ որ 'ի վերոյ մեր՝ փառաւորեցաք 'ի մէջ մարդկան, և ընկալաք 'ի նոցանէ զպատիւ և զնուէրս. և ամենայնիւն հանդերձեալ է Ի:ստուած հանարս պահանջել 'ի մէնջ, ըստ այմմ. "Երբ շատ տուաւ շատ խնդրեսցի 'ի նմանէ,, : Վասն ձեալ որպէս իշխանին անհաւատութիւն է առ Թագաւորն, եթէ յումեքէ կաշառս առեալ՝ նախ քան զարժանաւորութիւնն գնա 'ի պատիւ և 'ի գինուորութիւն կարգէ, և զտերունի գանձն յանպատշաճ ձեռս մատնէ, այսպէս և եպիսկոպոսին անհաւատութիւն է առ Թագաւորն իւր Ի:ստուած՝ Թէ վասն կաշառաց կամ վասն փառաց զոք նախ քան զարժանաւորութիւն 'ի տանս Ի:ստուծոյ 'ի պատիւ և 'ի հոգևոր իշխանութիւն գինուորեցուցանէ, և զաստուածային գանձուն ընտրն յանմնաքուր ձեռս մատնէ: Վասն Թէ և գիտէ որ իշխանն արժանի, ոչ վաղվաղակի 'ի ծայրագոյն պատիւն հանէ, և ընդ իւր նստուցանէ. զի մի անփորձ գտեալ իշխանական կարգին՝ անձին և պատուոյին նախատինս լինի:

Ի:ԱԼ գինչ. Թէ յարքունական զարմէ է և յառօդ հասակ մանկանց, զօրէնսն ամբողջ պահելով ոչ համարձին նմա նախատինս՝ նախ շանց և Թուչնոց սպասաւորել, և յետ այնր կրթելոյ՝ յոտն կայ առաջի այնոցիկ որ նստին, և ապա փոխեալ յայնմանէ, կապարձակիր լինի իշխանին և սպասաւոր բաժակի նորա, և յետ այսորիկ վարժելոյ և հասակաւն կատարելոյ՝ ապա լինի ձիաւոր, և 'ի կարգ իշխանացն հաւասարի: Ի:ՍՊԱՀ և Պօղոս խրատէ զեպիսկոպոսս՝ պահել զհրամանս իւր, զոր վկայութեամբ Ի:ստուծոյ և հրեշտակաց՝ գնել 'ի վերայ նոցա առանց մնահաձութեան, մի ինչ առնել այսառանձ, ձեռս վաղվաղակի յուրուք վերայ մի գնել, և ոչ լինել կցորդ մեղաց օտարաց: Ի:ԱԼ Թէ և հաձելի վարս ունիցի և 'ի պատուականաց ոք իցէ, նախ 'ի խոնարհագոյն աստիճանան փորձել. զի "Կէս, ասէ, մարդիկ որոց մեղքն յառաջագոյն հասեալ են 'ի դատաստան, և են որոց գինի երթան,,: Վասն մի երագես

1 Մի որին. եր-գե-ցե-:

զձեռնադրելն, և յետոյ ծանուցեալ զմեզն զղջանալ. այլ փոյթ առեալ ի մարմնական իշխանէն, ծանուցեալ՝ թէ որքան է քոյդ անօսրագոյն խորհուրդ քան զնորայն. զի այս հոգի է, և այն մարմին։

Քոյդ եթէ նա՛ի դիւրինն զաւարեկարգութիւնն առ բողջ պահէ՝ զիւրն օգուտ խոկալով և զնորայն որ՛ի կրթութենէն լինի, դու մի մանկական կարճմտութեան զիմաստութիւն քո, ո՛ եպիսկոպոս, հաւատաս, կամ արծաթոյն պատրանաց, և օտար մեղաց կցորդիս՝։ Այլ որպէս նա շանց կարգեաց զմանուկն սպասաւոր նախ, դու զրանց եկեղեցւոյս արասցես և կէս սարկաւագութեան կարգին, և յետ յայն վարժելոյ և կրթելոյ, ապա զիր զնէն քո զիսաչն՛ի ձեռս, և արա զնա սարկաւագ և սպասաւոր քոյդ սեղանոյն և տէրունական բաժակին, զի և ինքն զպատուոյն առաւելութիւն ծանիցէ, և դու զփորձ նորին գիտիցես. հասակաւ կատարեացն, և խնամոիւք զարգացեալ, և յետ այնորիկ թէ լինի արժանի ծայրագոյն վիճակի քահանայութեան, և քոյդ աթոռակցութեան, ըստ որում և լի են առաւածաշունչ գիրք այսպիսի խրատուք և կանոնական սահմանադրութիւնք հարցն. թերևս վայրապար գրեցին, կամ զընդէմն սահմանեցին բնութեանս. և ոչ երբէք, այլ զդիւրինն և զհեշտականն։ Ասաի յայտ է. ես ցուցից։

Յորժամ մանուկ և անփորձ խնամոյ ձեռնադրեմք քահանայ, որչափ տղայ է և անկիրթ յընտրութիւն բարւոյ և չարի, պաշտէ զնոյն վասն հարկի մարդկան և փառաց. իսկ յառաջացեալ հասակին և ծանուցեալ զառաւելութիւն գործոյն և զունայնութիւն փառացն, հրաժարէ անձամբ անձին՛ի նմանէ. և ունի այնու հետև միայն զպատիւն՝ իբր՛ի դատապարտութիւն և՛ի կշտամբանս. ըստ այնմ, "Ընդէ՞ր զգործ տեառն հեղգութեամբ ,,։ Այսպա բարիոք և ամենավայելուչ կարծեմ, մինչ գեռ՛ի տղայական տարիքերումն է, պարապել զնա խոնարհութեամբ կրօնաւորական աբեմունքն, և փոքր փոքր յառաջանալ խնամոյին՝ պատուել. զի թէ մարդիկ մարմնաւորք գեռ ևս ամբողջ պահեն զայս

1 Ցորն. միում կարդ ԼԲԽ։

սովորութիւն, քանիո՞ն առաւել մեզ հարկ է։ Օ՛ինչ պարտ է ասել։ Օ՛ո տեսեր մանուկ, իբրև զքո քահանայդ, ՚ի ձի նստեալ և պատերազմական զինուք պարփակեալ։ Օ՛ո տեսեր մանուկ, յիշխանաց աւ միմեանս հրեշտակ առաքեալ. էր վասն. զի ոչ ունի զբաւական իմաստն, զի դիւրապատրելի է դեռ. իսկ մեք մանկունք ոչ ՚ի մարդկանէ աւ մարդ, այլ ՚ի մարդկանէ աւ Յ՛ս տուած միշտ հրեշտակս մեռեմք. զոր ոչ ՚ի կամն կարողանամք վասն անհմաստութեան գիտել, և ոչ բնաւ զկորհուրդն՝ որում խորհրդակցիմք։ Օ՛ինչ ունիմք աւ այս ասել, որ վատթարացուցաք զօրինս հոգևոր քան զմարմնոյ։ Յ՛երցուք ՚ի մէջ։ Յ՛յլ վասն այսորիկ օձեմք քահանայ, զի դեռ եւս անմեղ է որպէս զի այսու հնարեսցի։ Յա՛ հնիք անմեղութեան ոչ հասանիս քաւական զձև կրօնաւորութեան և զկարգ։

ՆԵՐՍԷՍ. Գ՚արձեալ ոչ գիտես, թէ անմեղ և սուրբ վասն այնորիկ է, զի մանուկ է և անհմաստ և դեռ անփորձ չարի. յորժամ փորձի կարէս զայն հաւաստանացուցանել՝ թէ պահէ զանմեղութիւն։

ԳՐԻԳՈՐ. Ա՛յնէ երբէք։

ՆԵՐՍԷՍ. Յա՛ թէ աւ այս ՚ի կարծիս ես, զինչ ստիպէ զքեզ ոչ Թողուլ զնա, մինչև փորձեսցի և մարտիցէ, և ապա օրինօք պահեսցի. կամ թէ պարտեսցէ, ազատ ՚ի հարկէ և ՚ի պարտուց բարձրագոյն աստիճանիդ լինիցի։

ԳՐԻԳՈՐ. Գ՚անգի ինքն ստիպէ և խնդրէ։

ՆԵՐՍԷՍ. Յա՛ ուր ուսար դու զկամն մանկանն՝ ձեռոյ կատարել. մանաւանդ թէ ոչ գիտես՝ թէ շոյտափոյթ և ջերմ հասակին՝ որ ջերմին խնդրէ, վաղվաղակի ունի յագենալ։ Գ՚արձեալ և գիտէ զնոյն՝ թէ զինչ խնդրէ, եթէ պարզմտութեամբ խնդրէ։

ԳՐԻԳՈՐ. Պ՚արզմտութեամբ՝ սմենայն իրօք։

ՆԵՐՍԷՍ. Ճ՚այտ է ասա՝ եթէ յանցանիս պարզամտացն հաւանեալ. և զնա փոխանակ պատուոյ ՚ի խորխորատ չարեաց ձգես։

ԳՐԻԳՈՐ. Ո՚ղջոյն և աղգատոհմն պահանջէն զոչնոյնս քահանայութիւն որդւոյն։

ՆԵՐՍԷՍ. Յա՛ զինչ դիտաւորութիւն մտաց նոցա, թերևս երկեղն Յ՛ստուծոյ։

ԳՐԻԳՈՐ. Ա՛յ բնաւ, այլ միայն զի կրօնաւորական ձևացայի, և յայս մարդկան պատուեցայի։

ՆԵՐՍԷՍ. Ո՞յս յառաջագոյն ցուցաք՝ եթէ զձև կրօնաւորութեան և զօրհնութեան պարտ է տալ մանկան և ծերոյ, որք գան ՚ի վանս կուսանաց, զկնկուղն և զաբեղն ըստ սովորութեան հարցն, որպէս Հաստատեցաք վերագոյն. եղիցի յայս կամք ծնողացն և իւրն յօժարութիւն. և յետ փայլելոյ ՚ի նոյն առաքինութիւնէ և հնազանդութեամբ, ապա թէ բռնութեամբ վինակեսցի ՚ի պատիս և յաստիճան եկեղեցւոյ։

ԳՐԻԳՈՐ. Ա՛յլ և այլ ինչ սակն ընտանիքն։

ՆԵՐՍԷՍ. Ո՞ ինչ, յայտնեա ինձ զայդ։

ԳՐԻԳՈՐ. Ա՛յո, ասէն, վասն այդորիկ որոշեցաք զոր-դիս ՚ի վանականութիւն, որպէս զի եղեալ քահանայ, մեզ յետ մահու պատարագ արասցէ։

ՆԵՐՍԷՍ. Ա՛պա յայտ է՝ եթէ ոչ Ա՛ստուծոյ ետուն զնոսն, այլ ինքեանց ՚ի մշակութիւն վարձեցին. և դեռ և ս նոցա տիրելով ոչ է ՚ի ծառայութիւն Ա՛ստուծոյ. զի "Ա՛ր ոչ, ասէ, ուրացայ զհայր և զմայր (յայտ է՝ թէ զկաս նոցա,) ոչ է ինձ արժանի ,,, ասաց տէրն։

ԳՐԻԳՈՐ. Ա՛կ եթէ և նոքա ոչ բռնադատեն, մեզ հարկաւոր է օծել զսոսա քահանայս, որպէս զի զսակ հատնոյց պատարագացն յանդ հանիցեն, և զպարտսն մեր վճարեսցեն, զոր պարտիմք աշխարհի։

ՆԵՐՍԷՍ. Ա՛յ զինչ պարտիմք. զի տէրն մեր ասաց, "Զբի առէք, և ձրի տուք ,,. և առաքեալն խրախուսէ. "Ա՛ւթէ մեք ՚ի ձեզ զհոգևորն սերմանեցաք, մեծ ինչ է եթէ ՚ի ձէնջ զմնրմնաւորն հնձիցեմք ,,։ Ա՛պա յայտ է՝ թէ աղօթք ձեր և պաղատանք ոչ վասն անձանց միայն, այլ առաւելապէս վասն աշխարհի քաղաքավարելոցն. զինչ պարտականութիւն է սակաւ պիտոյիցն մնրմնոյ, որով սպասաւորեն ձեզ. այլ մանաւանդ արժան է. վասն զի ձրի տայք զաղօթս նոցին, ձրի առնուք ՚ի նոցանէ և զողորմութիւնն կարևոր պիտոյիցն ըստ տեառն մերոյ հրամանի. և ոչ ՚ի նեղքոյ պարտուց գրաւեալ։

ԳՐԻԳՈՐ. Ա՛յց ունկն դիր այժմ ինձ, և ասացից քեզ. սովորութիւն իմն է յաշխարհի զկնի մահուն ողորմութիւն տալ յեկեղեցիս և ՚ի վանորայս, և այնմ

հաստուցումն խնդրել քառանեւրս պատարագաց։

ՆԵՐՍԷՍ. Ողորմելի՛նդ բարիոք սովորութիւն է և առաքելական օրէնք. քանզի ուսուցանէ մեզ Պօղոս յամենայն՝ ի Թուղթն՝ եթէ ողորմութիւն առնէին և կեղեցիքն հեթանոսաց՝ ի ձեռս նորա աղքատացն, որ էին Ա՛յրուսաղէմ՝ և աղօթիցն էին պարապեալ. իսկ զհատուցումն պահանջել և ոչ երբէք՝ ի գլոց լսաք։

ԴՐԻԳՈՐ. Ա՛մէն պարզաբար ուսանել՝ զինչ էին աղքատքն, և կամ որպէս լինէր նոցա ողորմութիւնն։

ՆԵՐՍԷՍ. Ա՛ոքն առաքելոցն պատմէ մեզ զայս, զհատատաքն, ՝ի Պենտեկոստէին յիջումն Հոգւոյն, կանգնեցան և արանցն՝ Ա՛յրուսաղէմ՝ և մկրտեալ տոցա, աստ պատմութիւնն. "Ա՛յր սիրտ և անձն մի. և ունէին զամենայն ինչ հասարակաց. վաճառէին զրաք ունէին ստացուածս, և գնէին առ ոտս առաքելոցն,,. և նոքա՝ ի ձեռն ընտրեալ սպասաւորացն՝ ի հասարակաց սփոյտոյս մատակարարէին։ Ա՛ոկ անհատատ հրեայքն յափշտակէին զամենայն ստացուածս նոցա, որպէս գրեաց առաքեալ. "Ո՛ յափշտակութիւն ընդ ձերոց խնդութեամբ ընկալարուք,,. և այնքան բազմութեանն պատրաստեալ աղօթիւ միայն՝ կարօտանային մարմնական սփոյոյն։ Ա՛ոկ գլխաւորքն առաքելոցն Պետրոս և Պօղոս յորժամ բաժանեցին զաշխարհս՝ ի քարոզել, Պօղոս՝ ի հեթանոսս և Պետրոս՝ ի հրեայս, ուխտ եդին զաղքատսն Ա՛յրուսաղէմի հասարակաբար հոգալ։ Ա՛յս ասէ Պօղոս՝ եթէ "Ա՛յս փութացայ զնոյն գործել՝",, զորոյ զփոյթն մեզ՝ ի մէջ առնուլ երկայն կարօտանամբ բանից. զի երբեմն պարտապան գնէ զհեթանոս նոցա, ասելով՝ "Ա՛ւթէ հոգևորացն նոցա հաղորդք եղեն հեթանոսք, պարտին և մարմնաւորացն կցորդ լինել,,. և դարձեալ գրէ կորնթացւոցն՝ եթէ "Ի՛քայեցիքն, ՝ի հերուն հետէ ասացի այլոց եկեղեցեաց, թէ պատրաստ են. և ձեր նախանձն զբազումս յորդորեաց,,. նա և ՝ի բովանդակ Թուղթս առաքելոյ է զնոյն գտանել։ Ի՛սկ և աղօթից յանձնէր հռոմայեցւոցն. "Ի՛ղօթս արարէք, ասէ, զի պաշտօնն իմ որ Ա՛յրուսաղէմ ընդունելի լինի

1 Մի օրին. փոխանակ կանանց և արանց՝ ունի նշեա հաղորդն և հինգ հաղորդն։

2 Մի օրին. կոփարել։

սրբոյն ,, ։ Ա.յսպէս ընկալեալ զնուէրս պատարագաց յամենայն հեթանոսաց՝ ի հոտ անուշից հաձոյ Ա.ստուծոյ ածէր Ա,գրուսաղէմ, արժանի դատելով զնոսա այսոցիկ . իսկ նոքա ըստ մարմնոյ բաւականացեալ ընծայից հեթանոսաց՝ ոչ երբէք զանձինս նոցա պարտական վարկանէին . և յառաջանալով քրիստոնէութեանն՝ ոչ Ա,գրուսաղէմ միայն , այլ և Ա,գիպտոս և յամենայն տեղիս սկսան այսպէս որիշ յաշխարհէ առանձինն ընտրել ։ Ակ ազգ քրիստոնէից՝ ի սկզբանէ վարժեալ առաքելոյն օրինաց՝ առնէին նոցա զձիրս ողորմութեան . և առնեն մինչև ցայսօր՝ հատուցման ակն՝ ի մարդկանէ ոչ կալեալ, այլ Ա.ստուծոյ՝ որ ասաց . ,, Որ արբուցանէ ձեզ բաժակ մի ջուր ցուրտ յանուն այս՝ ի դուք Ա,քրիստոսի է՛ք , ամէն առեմ ձեզ , ոչ կորուսցէ զվարձս իւր ,, ։

ԳՐԻԳՈՐ . Ա.ղեքսիկ այս ասացելոց օրինացս արտաքոյ գնասք մեք ։

ՆԵՐՍԷՍ . Ո՞րպէս ։

ԳՐԻԳՈՐ . Ա.նպէ յորժամ առնեն զողորմութիւն՝ ոչ յաշխարհէ՝ յեկեղեցիս կրօնաւորաց , թուղթս սահանջեն , և սակ համարոյ ըստ չափոյ տրիցն թախանձանօք խնդրեն ։

ՆԵՐՍԷՍ . Ա.յն իրօք անհաւատութեանն տեսանեմ զայս պատուղ , և բարեկարգութիւնք քրիստոնէից քակտիչ . զի հարկ է նոցա ի կարծիս լինել , թէ յորժամ ոչ գլխեմք զթիւն , և ոչ ողորմութիւն գտին Ա.ստուծոյ , յայնմանէ որ էառ ի ձեռն մեր զողորմութիւն . և մեր զի ի պէտս լցուցանելոյ զնոյն լիցի ի հարկէ , և ոչ վասն Ա.ստուծոյ պատարագել . և զՀաղորդութիւն քահանայիցն ի խորհրդեանն ՝ թուղթն վասն ի զանազան տեղիս պատակտել . նաև վասն այսորիկ զանպատշաճն յաստիճան վիճակել . մանաւանդ և փակեմք ըզձեռս աշխարհականաց յողորմութենէն հատատով , ուսուցանելով զնոսա ի համարոյն պէտս վաճառել ըզտուրս՝ և ոչ Ա.ստուծոյ ձրի տալ ։

ԳՐԻԳՈՐ . Օ որ ինչ ասացեր բանիւ՝ գործով լինի ա՛մենայնի ի մէջ մեր ։

1 Յորին . Ա.ուտ ի հաղորդեան ։

ՆԵՐՍԷՍ · Ա՛յո զորս ՚ի սրբոցն կամ ՚ի գրոց առաջնորդ ունին այսպիսի խոստովանակ ընթացից, ուստ լինաՀ։

ԳՐԻԳՈՐ · Ի հարցն ասեն եկեալ առ մեզ այսպիսի աւանդութիւն։

ՆԵՐՍԷՍ · Ա՛ստիւք՝ թէ ՚ի նոցանէ. սակայն զանուանս հարցն կամիմ ուսանել, զի նոքա ամենեքեան կենդանի են ՚ի մէջ մեր գրեցեալքն վարդապետութեամբքն։

ԳՐԻԳՈՐ · Յանուանէ ոչ գիտեմ զայսոցիկ աւանդիչսն։

ՆԵՐՍԷՍ · Ա՛յս յայտ է թէ մոլորին, եղբայր, ՚ի չնմարտութեանն շաւղաց՝ զորբազան և զանուանի առաջնորդան թողեալ, զոր ունիմք ՚ի մէջ մեր զորբոյ հայրապետին Ա՛ստղի սահմանն կրօնաւորաց միանգամ ՚ի ընկին և յոմանց պատ ՚ի իրան հարկաւորապէս գրեալ։ Այլ և հարցն եգիպտացւոց ամենայն բան և վարք ՚ի գրեանս ժողովեալ. և այսոցիկ ոչ բնաւ տան տարացոյց գկրօնաւորս աշխարհականաց պարտական լինել. այլ միայն թէ արժանի առնեն ընդունել զողորմութիւնս նոցա ՚ի պէտս իւրեանց, երանելիք են. և զայս ուստեք ցանեն իւրաքանչիւր գրեալքն խնամատուն քննողաց. և մէր՝ թէ ոչ յերկարութիւն բանից ՚ի շատախօսութիւն կրթիկը, ՚ի մէջ առնուաք զամենայն կշռաքիչ այսպիսի խորհրդոց։

ԳՐԻԳՈՐ · Ա՛յս փոքր լինիչ, աղաչեմ։

ՆԵՐՍԷՍ · Վրեալ է ՚ի պատմութիւն հարցն եգիպտացւոց՝ թէ մեծատուն ոմն ոսկի երեք ՚ի Աղեքսանդրիա, և ելեալ երիցուն ՚ի դրունս եկեղեցւոյն՝ ասէր. "Աղքատիք, առէք ձեզ պիտոյ է ՚ի սմանէ ,,. և ոչ ոք հայեցաւ ՚ի նա, և բնաւ ոչ մերձեցան։ Ա՛յսպիսի կամն մեզ պարտ է առանալ։ Ասէ առ հայրն մեր Ա՛սիլիոս հարցումն արարեալ վասն միաբանակեցեալ բազմութեան, "Ա՛րդ պիտեացի, ասեն, հասարակաց եղբարցն կարօտութիւն լինել մարմնական պիտոյիցն ,,. Հրամայէ առնուլ յայնցանէ զոր տան յօժարութեամբ, և զպիտանացեանն, ասէ, Ա՛ստուծոյ հատուցանել։ Ա՛րդ ո՞ր ժպրհեացի ՚ի վերայ սոցա երկրորդութիւն օրինաց

1 Մի օրին · Յոհան։

յաւելու. բայց թէ յանմնաց ոք լինիցի, որպէս կար-
ծեմ։

ԳՐԻԳՈՐ. Արժի և այլ ինչ ասել զնոցա մտացն. քանզի ասեն՝ թէ Փիլիպպոս առաքեալն յետ վկայու-
թեանն ըստ բարկութեանն հրամանին ծանեաւ զինքն արտաքոյ արքայութեանն լինել, և հրաման ետ քառա-
սուն օր պատարագ կատարել, և զինքն յիշել. նաև Ա-
փրեմ թէպէտ և յամենայն սպասուց յետ մահուն հրա-
ժարեաց, ոչ և 'ի սմանէ. և աստուածաբանն առ Աթաթիոս ուսումնակիցն 'ի բանն գերեզմանական ասէ. «Օ ենուամն ոք աստ վասն ձեր ննջեցելոցդ պատարա-
գի, և զկեանս ձեր այդանօր ցօղէ»։ Եթէ ասեն առ այս յուսալով տանք զողորմութիւն նուէր վասն ննջե-
ցելոցն յուխտս կրօնաւորաց, և պահանջեմք զթիւս քա-
ռասնից պատարագին 'ի նոցա թողութիւն մեղաց մա-
հուանէն Քրիստոսի։

ՆԵՐՍԷՍ. Երդ եկ զպարզմտութեամբ առացեալդ խնաստասիրաբար քննեսցուք, զի մի լոյծ ջատագով դիպք սուրբքն տուութեան. յորժամ ոչ տան մեզ զտուա
ղորմութեան՝ խափանեմք յեկեղեցւոյ զխորհուրդ պա-
տարագին՝ թէ ոչ։

ԳՐԻԳՈՐ. Այո ոչ բնաւ։

ՆԵՐՍԷՍ. Այո զպատարագն ոչ խափանեալ՝ յիշեմք զննջեցեալսն ձրի, եթէ ունայք՝ միայն զողորմութիւնն առնումք։

ԳՐԻԳՈՐ. Յիշեմք անդադաղ։

ՆԵՐՍԷՍ. Ապա յայտ է եթէ պատարագն ոչ վասն նոցա՝ այլ 'ի փառս Աստուծոյ կատարի, և յիշելն զննջեցեալսն զամենեսեան 'ի նեղբոյ աղօթիցն փակեմք առանց վարձու. և դու եթէ տաս զողորմութիւն, ըստ քումդ հաւատոյդ գտանես Աստուծոյ՝ մանաւանդ եթէ ղեալ 'ի տալն զողորմութիւնն յայս եկեղեցիս՝ ամենայն եկեղեցեաց աղօթից, որք միով բարբառով յիշատակեն զպատարագեալսն եկեղեցւոյ. զի «Մի է պատարագն և մի է աղօթքն, մի Տէր Յիսուս Քրիստոս, ասաց Պօղոս, որով ամենայնն, և մի եկեղեցի նորա ընդ տիեզերս»։ Այս սուրբքն որ յանձն արարին յիշատա-

1 Ցորին. միւսմ պակասէ դ-ոբ-ոփ։

կելոյ կամ յիշատակելոյն, ոչ թէ՛ ի տուր և յառա վարձ կանուխեան զԱբրիատոս ձգեցին, այլ միայն ընդ հաստատակաց փրկութեան և զինքեանս յանձն ալարին հաւատով յիշել. և ընկալան Յաւուծոյ ըստ իւրեանց հաւատոյն։ Իսկ այսոքիկ գատարկացեալք ի հաւատոյն՝ միայն ի թիւսն լինին ապաստան սատանայական խորհրդակցութեամբ. և զմեզ ձգեն ընդ յանցանօք ընդհաւաճառութեան, և կամին զպարգևսն Յաւուծոյ արծաթով ստանալ որպէս գԻնան. զոր այնքան կրճատեաց առաքեալն Աբրիատոսի՝ տեսեալ ի կնձիռն անիրաւութեան։

ԳՐԻԳՈՐ. Յապա որպէս արասցուք զտուրևառան Յաւուծոյ ի ձեռն կրօնաւորաց, ուստ ինձ զուղիղն և զճշմարիտն։

ՆԵՐՍԷՍ. Ահ ես՝ այլ նոյն ինքն վէմն եկեղեցւոյ Պետրոս առ այս եկեալ հաւանեցուսցէ զքեզ։ Վասնզի ասէ պատմութիւն Գործոց առաքելոցն. «Ի բազմութեան հաւատացելոցն սիրտ և անձն մի, և ունէին զամենայն ինչ հասարակաց։ Իսկ որք ունէին գեղս և ագարակս՝ վաճառէին, և բերէին դնէին զգինսն առ ոտս առաքելոցն...». և նոքա ընդունէին սիրով և յօժարութեամբ[1], և ոչ հրաժարէին ի տրից և յոտկոյն. և ոչ նոքա փոխարինս հատուցանն պահանջէին։ Իսկ իջեալ Պետրոս առ եղբարսն ի Սամարիա, տայր նոցա զՅոգին ձրի, և առնոյր ի նոցանէ ձրի զողորմութիւնն. իսկ Սիմոն տեսեալ զայն՝ առ արծաթ և եկն առ Պետրոս՝ ասելով, առ զայս ի քեզ՝ և տուր ինձ փոխանակ այսորիկ Յոգի. նա ի բաց վարեաց ասելով. «Տեսանեմ զքեզ ամենևին ի կնձիռն անիրաւութեան, զի զպարգևսն Յաւուծոյ արծաթով կամիս առանալ...։ Յոգ եթէ կամիս եկ և քննեսցուք, էր վասն սա Պետրոս որ յայլոցն առնոյր, և զՅանանիա այնր աղագաւ մահացոյց, ի տուր տրից հրաժարեաց։

ԳՐԻԳՈՐ. Ակրի յօժարութեամբ պատրաստ եմ։

ՆԵՐՍԷՍ. Արդկային բնութիւնս յանցանօք անարժան գտաւ Յաւուծոյ շնորհացն. Աբրիատոս վասն մեր անմեղ մեռաւ, և դարձեալ արձակեաց զայն շնորհ-

1 Ի միում օրին. Խաչատուրեամբ։

սըն՝ի վերայ աշխարհի՝ հաստարակաբար աղքատաց և մեծամեծաց։ Եւ զդէպ պարգև գներդործութիւն Յոզեփայ՝ Արիմաթեա իւր մահուն փոխանակ էառ, և մեզ ձրի ընծրհ ետ գնոյն՝ յորժամ խնդրեմք հաւատովք։ Եւ զդէպ եթէ արծաթն էր որ գնոյնն գներ, աղքատակիցքն Քրիստոսի զրկեին՝ի ընծրհացն. բայց այս ոչ է. այլ տայր Պետրոս գընծրհն Քրիստոսի զթողութիւն մեղաց և զՀոգին՝ աղքատաց և մեծատանց ձրի, թէ տայ ինն իւր զողորմութիւն՝ և թէ ոչ։ Կակ նոքա հաւատովք բերէին զողորմութիւն, որք նախ ընկալան զաստուածայն՝՝ի պէտս եղբարցն իւրեանց աղքատացն։ Որ մեզ զայս հաւատս առ ընծրհն Քրիստոսի ոչ ուներ, թէ նա մահու իւր պարգև առ գնոյն՝ և ձրի բաշխեաց աշխարհի։ Այլն առ Պետրոս՝՝ի վաճառաւորութիւն, տալ զարծաթն և փոխանակ այնորիկ առնուլ զընծրհն՝ զոր ձրի ոչ հաւատայր առնուլ։ Այլ Պետրոս, ես եմ որ զմահուամբ Քրիստոսի գնեալ հաստարակաց ընծրհս արծաթոյ վաճառեմ, ի բաց գնա անիրաւողդ ձեմարտութեան։ Եւ զդէպ նոյն ընծրհս դեռ ևս յաշխարհ փայլէ, զոր ետ մեզ Քրիստոս ձրի. և մեք քահանայք՝ի Պետրոսէն գոլով վիճակ, և կրօնաւորքն որ ընդ մեզ, յաղքատացն որոց նա ապաստարէր, և բաշխեմք ձրի յամենայն աւուր զթողութիւն մեղաց հաստարակաց՝ մահուամբն Քրիստոսի՝ կենդանեաց և մեռելոց, աղքատաց և մեծատանց։ Այս ունին ամենեքեան զընծրհն Քրիստոսի՝ի ձեռն մեր նախ քան զիւրեանց տանն. զի միշտ կատարի պատարագն՝ի փառս Աստուծոյ՝նոցա փրկանք՝ թէ տան և թէ ոչ։ Կակ եթէ յետ առնլոյն զայն, և միշտ առնլովն զմեռաւ ածէն զՔրիստոսին, «Արդարև արարէք միում՝ի փոքրկանցս յայսցանէ՝ ինձ արարէք...» և այսու յուսով տան զողորմութիւն, շատ և բիւրապատիկ պարգևացն Քրիստոսի զընչինն՝ ընկալցուք սիրով. որպէս Պետրոս զայնոցիկ՝ որք վաճառէին զգեօղսն և դնէին առ ոտս նորա։ Կակ եթէ ոք զանձն արտաքոյ դիտէ ընծրհիս, որպէս և Անանիան, և արծաթով կամի գնոյն առանալ կամ իւր և կամ մեռելոց, որպէս թէ տալով զարծաթն՝ ապա վայելէ՝ի նոյնն, ինքն ընդ Ան-

1 Ի միում օրին. հ-փ--ը. պակասէն այլք։

մեզի դատապարտութեամբն գրաւի, և զմեզ ի հնարս վաճառութեան պարտին [1] կործանել։

ԳՐԻԳՈՐ. Հաւանական է բանդ ամենայն իրօք, բայց և ձգրտել ինոյնդ կամիմ։

ՆԵՐՍԷՍ. Ա՛յլ զինչ այլ սորին հաստատութեան խարիսխ տացուք որպէս զՊետրոս, այլ՝ ի պէտս տգիտութեամբ թշուառացելոցն և յաւելցուք։ Ո՞չ արաբաք Յ՛ստուծոյ [2]. ո՞չ ետ քեզ զաշխարհս՝ ի վայելս. ո՞չ մեռաւ վասն քո Քրիստոս. ո՞չ խոստացաւ քեզ զանձառ բարիսն։ Ա՛յդ ընկալեալ զայս ամենայն, քանի՞ բիւրս տաղանդոյ կարող ես կրեալ նմին փոխարէն. յայտ է թէ զպարտութիւն խոստովանիս։ Ա՛յս զարթիր՝ ի թմբրութենէդ, և միշտ զողորմութիւն առնելով՝ ի ձեռն նորա յեկեղեցիս և յաղբատս, գիտեա զի դեռ ևս դու ես պարտական նախաւելոցն, նա թէ և զանձն ևս տաս փոխարէն. զի նախ նա մեռաւ, և ապա դու։ Ա՛յս թէ զանձն պարտիս Յ՛ստուծոյ՝ որպէս գրէ Պօղոս առ Փիլիմոն, զողորմութիւն առնելով վիճակելոցն յաստիճանն Պօղոսի և խորհրդակցացն Քրիստոսի, նախ քան զքե՞զ տալ կարծես թշուառականն մնօք՝ և՝ ի նոր ցանել փոխարինի համարս պահանջես. ո՞չ գիտես՝ թէ միշտ՝ ի նոցա զուգական ձիրսն վայելես՝ և տալով և ոչ տալով։

ԳՐԻԳՈՐ. Լուղիղ և անսեթևեթակ դատանեցեր զՀնարտութիւն. սակայն ասեն՝ թէ զՀանարն ոչ փոխարէն պահանջեմք, այլ որպէս զի պատարագն յայն աւուրս՝ ի մեր անուն լիցի, և մեք առաւել գոցուք զողորմութիւն քան զայլ ննջեցեալսն։

ՆԵՐՍԷՍ. Ա՛վ թշուառութեանս և չիմարութեամբ աղբեալ մտածութեանս. Քրիստոս՝ ի՞ օր անուն մեռաւ, և նմա՞ նուիրեաց զիւր մահ, և դու՝ ի քո՞ անուն կամիս զնա սպանանել. ամենայն աշխարհի կեանս պարգևեաց, և դու՝ ի քե՞զ միայն կամիս զՀնարտ նորա քանակել. ո՞չ երկնչիս թէ և առ քեզ ասասցէ, «Ա՛յն քո չար է, սակայն ես առատ եմ»։

1 Յօրին. միւսմ պ-ից։
2 Թերևս, ո՞չ արարար յ-ից։ կամ թէ ու արարած ես յ-ից։
երկու օրին. ո՞չ արար Ա-ից։ կամ Ա-ից, և ի այլ արարած։

ԳՐԻԳՈՐ. Այսպէս հաւատասցուք՝ եթէ մեք վասն տրիցն մերոց առաւել գտանեմք ընդրկս ի պատարագէն՝ քան ի յոչ տալն։

ՆԵՐՍԷՍ. Օ՜ինչ այլ այսմ բերցուք ուսուցիչ, բայց եթէ զնոյն ինքն զտէրն. «Արբուսցէ միում, ասէ, ի փոքրկանցս յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ, ամէն ասեմ ձեզ ոչ կորուսցէ զվարձս իւր»։ Նմին և ի զգալի իրաց առցուք ապացոյց։ Օ՜ր օրինակ գետ՝ որ ընդարձակեսցէ հոսի ընդ հարթաձև դաշտ, և մարդիկ կամեցեալ առնուլ ի ջրոյ նորա, որ մեծ թակուկով երթայ՝ բաղում առնու, և որ փոքրո՝ սակաւ. այսպէս և խորհուրդ մահուս Քրիստոսի հասարակաց ի վայելս տարածի, և ըստ իւրաքանչիւր հաւատոյն ամենոց ընդունի մեզ, և ոչ ըստ տրիցն։ Այլ զտուրս յեկեղեցի պտուղ հաւատոյն ծանիցուք և սիրոյն, զոր և առ մարդիկ է տեսանել. զի անկարօտ գոլով ոք և արտաքոյ աշխարհաւթեան ախտի, զնչչին պատարագ բարեկամին ընդունի՝ ոչ վասն կարօտութեան, այլ զսէրն դիտելով և այնու ձանձրանալով։ Այսպէս և Այսուածընդունի զսէրն մեր տրօքն, և ոչ եթէ զտուրսն առանց սիրոյ. ըստ որում գրեաց Պօղոս. «Եթէ բաշխեցեմ զամենայն ինչս իմ աղքատաց, և մատնեցեմ զմարմինս իմ յայրուձին, և սէր ոչ ունիցիմ՝ ոչինչ օգտիմ»։

ԳՐԻԳՈՐ. Այսպէս իրաւունս դատես տալ զնուէրս պտղոյն յեկեղեցիս ամենեցուն, և ոչ համարս պատարագաց պահանջել. նաև նոցին յոչինչ հաւատացանելն զայն մեղանչել։

ՆԵՐՍԷՍ. Յայտնի և բազմապատիկ վկայութեամբ գրոց զոյն հաստատեցաք՝ և ոչ անձամբ անձին, հաւանեալ տեառն՝ որ ասէ. «Այնոցայն տունկ զոր ոչ անկեաց Հայրն իմ երկնաւոր, խլեցցի և ընկեցցի արտաքս»։ Այլ զի ոչ է պարտ զայս առնել, ի պտղոյ գոր ծոյն ծանիցուք. զի եկեղեցիս տուն վաձառու և տուր և առից եղև փոխանակ հոգևոր կարգացն։ Այլ որպէս կրպակատուրն շահիցն աղագաւ զկրպակսն բազմացուցանէ, այսպէս և մեք վասն այս ախտի թուոց բազմանալ ի մի կրօնաստան[1] ծաղռեալ եկեղեցիս ի միաբանց

1 Մի օրն. կրօնաստրատան։

բաժանեցաք . և զՔրիստոսի խորհրդոց զօրութիւն տգիտացեալ՝ միայն վասն մեռելոյն զպատարագս վարկաք , ի կենդանեացս փրկանաց անհատաք եղեալ . զմանկունս տգէտս և զանպատշաճն ի պէտս սորին քահանայութեան վիճակեցաք , որոց բարեկարգութիւն և ոչ զգայրութիւն վիճակէ . և սորին ագահութեան վասն զպէսպէս աստիճանս եկեղեցւոյ և Քրիստոսի խորհրդեանն զլացաք . յաշխարհականսդ զյոյս և զհաւատս որ առ Աստուած՝ բարձաք . և փոխանակ անսխալ տուեալ ախտաւորք յաչս նոցա գտաք . զի տեսանէն սրծալեալ փոխան և զին մեզ զՔրիստոս տուեալ , և ինքեանք վասն սորին տան զնոյն , և զգինս խնդրեն բազմապատիկս՝ Աստ յայտնի և երևելի պտուղ մոլորութեանս . իսկ եթէ առ Աստուած ուրան յանցանեմք այսպիսի շռայլութեամբ , ինձ անկար է ասել առաւել թէ նմանանացս յաղթահարեալ ,

ԳՐԻԳՈՐ . Ահ ինչ ունիմ առ ասացեալդ երկբայութիւն՝ տեսող գոլով պղտոյ խոտորնակ ընթացից , որպէս և ասացեր . սակայն ոչ ինչ զանպաղիմ և զոր առ կրօնաւորս կրի այսորիկ վասն ախտ՝ ի մէջ առնուլ ,

ՆԵՐՍԷՍ . Աստ ձիգըտիւ . քանզի յոյժ տեսանեմ զքեզ ի վերայ սորին վշտացեալ ,

ԳՐԻԳՈՐ . Ահմանն է ի մէջ նոցա՝ յետ վախճանին երիս քառասունս կատարել զեղբօրն յիշատակ պատարագն ,

ՆԵՐՍԷՍ . Աչ զինչ հաւատան ընդդէմ լինել մեռելոյն ի պատարագէն ,

ԳՐԻԳՈՐ . Օ ինչ այլ , բայց եթէ թողութիւն մեղաց , զայս զմնաւ ածեալ՝ եթէ մի մանկն Քրիստոսի զամենայն աշխարհ ի ծառայութենէ մեղացն ազատեաց , քանիցն առաւել յորժամ բազմապատիկ և զերիս քառասունս մեռանի վասն միոյ մեռելոյ . եթէ ի նեղբին անդպարաւեստս գժոխոցն իցէ , ի վեր ածիցէ ,

ՆԵՐՍԷՍ . Ա՛վ տգիտութեանս և ամենևին անբանութեան ! . և բազմապատիկ մանկք Քրիստոսի . ապա եղիցին և բազում Քրիստոսք ըստ իւրաքանչիւր մանուցն . նաև ո՞ր դիցուք զառաքելոյ ասելն , թէ « Ա՛ա

1 Ի միում տպին . ՀԲան գԽ--ՐԷ- .

մի անգամ՝ի վախճան յաւիտեանից իւրով պատարագն յայտնեաւէ, և սրբեաց զխիղճ մտաց ոչ զմեռելոյն՝ այլ զկենդանեացդ՝ի մեռելոտի գործոց անտի՝ պաշտել զԱստուած կենդանի ,, ։ Այս զի ասէն՝ Թէ մանչն Աբրահամու զաշխարհ փրկեաց. հարցանեմ, զնա՞ փրկեաց, զմեռեա՞լս Թէ զկենդանիս. և զկենդանիսն զաւետեան եթէ զոր հաւատացին և ընդ նմա մեռան։ Այլ Թէ ամենեցուն էր փրկանք՝ այնքան բիւրք հեթանոսացն անհաւատից՝ որ աղագաւ փրկութեանն գոյն արտաքոյ. յայտ է Թէ զի վասն ոչ հաւատացին ։ Այս Թէ անհաւատ էս, յաստուածակոյս կողմանէն արձակ է փրկութիւնն, իսկ դու անձամբ զանձն՝ի նմանէ զրկես. իսկ եթէ հաւատացեր, զինչ է հաւատոյդ ուսուցիչ, բայց եթէ կատարումն պատուիրանին. ,, Որ սիրէ զիս, ասէ, զպատուիրանս իմ պահեսցէ ,, ։ Այլ եթէ կատարեցեր զպատուիրանն, վայելեցեր՝ի ընդրկս նորա կենաց և յետ մահու. իսկ եթէ առ այն հեղգ գտար մինչև՝ի մահ, զիա՞րդ հաւատաս յետ մահու Թողութեան, գնացեալ յընդունելութեան օրէս և՝ի փրկութեան ժամանակէս՝, ըստ որում գրէ խորհրդոյն Աբրիտոսի հազարապետն. ,, Այս է ժամանակ ընդունելի և այս է օր փրկութեան ,, , և ոչ եթէ այն ։ Այլ նոյն գարձեալ. ,, Այսանել և ընդ Աբրիտոսի լինել լաւ համարիմ ,, , բայց զկեանս մարմնոյ պատուղ գործոյ ունիմ։ Այսուհետև նա տպիտացաւ՝ի մերս իմաստութենէ, որք յետ մահու կարծեմք բարեգործել և Թողութիւն գտանել, որ աղաղակէ գարձեալ. ,, Ահաբանչիւր զոր զայն գտանիցէ զոր իւրով մարմնովն գործեաց՝ եթէ բարի և եթէ չար ,, ։ Ասացեալ են այսպիսիքն և զողորմածին Աբրահամու՝ մեծատանն յետ մահու զանողորմութիւն, և զիւր առեան զչինար կուսին անառես առնել զարատասուն, և աղաղակել մեծաձայնեաւ՝ եթէ ոչ գիտեմ զձեզ ։ Ասասցայի ամենայն իրօք կարծեմ զայս սերին, որ Քանայ զայնպիսիսն անպտուղ յաշխատութենէ ապրիլնութեան առնել. զի որ յետ մահու Թողութեան մեղաց յոյս ունիցի, զկեանս մարմնոյն էր վասն՝ի չընդունս մնանել. և որ հաւատայ Թէ ստացուածոց զոր

1 Ցօրին - միւսմ գնացեալ՝ի իւրաքանչիւր օրէս և յընդունելի ժամանակէս։

ժողովեալ եմ, յետ մահու ողորմութիւնն ընդունելի է, կենաց էր վասն զնոյնն վաստակ, և զգանկութիւն զննչաց սիրութեանն քաղցեալ պահէ ։

Այլ ահա այս կարծիք ելոյծ և յերկիւղ կործանեաց զամենայն խորհուրդս քրիստոնէից, և՝ ի դերեւս արար զնահն Քրիստոսի և զուսումն վարդապետութեան առաքելոցն և նոցին հետեւողացն, որք զայս յոյս ամենեւին բարձին, և խրատեցին՝ ջանալ միշտ եւ այսօրդ առաջի կայ, և անդ հոչակեցին ոչ լինել ողորմութիւն, այլ իւրաքանչիւր գործոյ հատուցումն։ Այլ թէ յետ մահու թողութիւն մեղաց, էր վասն կրօնաւորիս, սգաս, արտասուես, տառապիս ձգնութեամբ. կեր, արբ և ուրախ լեր. և յորժամ մեռանիս, զոր ոչ կարացեր ուտել և ըմպել՝ տուր վասն պատարագի, զի՝ ի հետ ոչ կարես տանել, և արդարացիր ։ Այսպա որպէս կարծեմք, բազումք՝ ի կրօնաւորաց այսու յուսով անփոյթ արարեալ զկրօնաւորութիւնէ՝ գործեն և ժողովեն զարծաթ, որպէս զի յետ մահու պատարագասուս արդարասցին ։ Ո՛ր որս առասցուք, մնջորեալ էք ոչ գիտելով զդիրս և ոչ զզօրութիւն Աստուծոյ. կամաւ կափուցանէք զաչս առ լոյս գիտութեանն, և՝ ի բարւոքս հեշտանայք. չէ բազում մահ Քրիստոսի ըստ Թուղց աւուրցդ, որպէս կարծէք, և ոչ հատեալ գիշերատիւ՝ ։ Աստուծոյ օր է, առ որ ոչ մերձենայ խաւար. այլ այս բովանդակ կեանքս մի օր է նման համարեալ, ըստ որում գրէ Պօղոս. "Մինչդեռ այս օրդ առաջի կայ.. ։ Յայս՝ ի մի օրս եկն Քրիստոս և մեռաւ վասն մերոյ փրկութեան առաջի [1]օր, և դեռ ևս մեռեալ է նման համարեալ. զորոյ գիտութիւն ոչ հնութիւն ժամանակի աղօտացուցանէ ։ Այլ մեք իւրաքանչիւր աղգ որ ծնանիմք յաշխարհ, զմի մահու խորհուրդ նմին՝ ի յուշ ածեմք. և առ մերս մտածութիւն նորոգելով զնոյն հաւատս և գիտութիւն՝ գիտեմ Աստուծոյ ասեմք, և գտանեմք՝ ի նմանել ողորմութիւն վասն սորա ։

Զորդ է խորհուրդս Աստուծոյ, և խմաստուն և մանուկ մտաց կարօտի. ապա թէ ըստ ձեր պարզմտութեանդ քառանեղով նոր՝ ի նորոյ Քրիստոս մեռանիմ,

1 Ի միում օրին. գիշեր. թե։

եղեցին բաղում Քրիստոսք ։ Եւ այլ Քրիստոս Հո-
ռոմոց յիւրեանց աշխարհն , և Հրանդայց յիւրեանցն ,
և մեզ ի մերն . զի և զայս կարծեն՝ որք զաղգայ բրիս-
տոնէից պատուարագս անկատար կարծեն ։ Այլք ոչ է
ձշմարտութիւն այսպէս . " Այլ մեզ մի է Քրիստոս , և
մի մահ նորա ի վախճան յաւիտեանից ,, ասաց Պօղոս ։
Եւ միով մահուն յիշատակ , որչափ այս օրս առաջի կայ ,
որբէ զերիզմ մատոյց մերձեցելոցս Հաւատով և սրբու-
թեամբ , և ոչ եթէ զմեռելոցն ։ Այլ և եկեղեցի նորա
ընդ ծագս տիեզերաց բազմութիւն աղգաց , որք յայս
խորհուրդ Հոխանան . և Թէպէտ ասէ ձեռն ցոան՝ Թէ
չես ի մարմնոյ աստի , կամ ակն ցունկն՝ Թէ չես ինձ
պիտոյ , ոչ եթէ այնու քակտին անդամքն ի միմեանց՝
որք ի մի գլուխն Քրիստոս պատկանեցան , և ի նո-
բայն Հաձութիւն և գառաստան յուսան , յորոյ և ի
ջնորհն Հասարակաբար վայելեն և վայելեսցեն ։

ԳՐԻԳՈՐ . Ոչանեայ զառացեալս Հաստատութեամբ
մի գոլ զմարն Քրիստոսի , և զմեզ օր ըստ օրէ նմին
յիշատակի ընդոգիչք . արդ խնդրեմ ուսանել Թէ ա-
մենևին անյոյս են մեռեալքն ի փրկութէ յետ մահու։

ՆԵՐՍԷՍ . Այս ուստի յոյս նոցա Թողութեան . բեր
ի գլոց , և Հաւանեցայց ։

ԳՐԻԳՈՐ . Ալ կարեմ։ Այլ ապա ոյր աղագաւ նոցին
Հանգստեան վասն աղօթել ուսաք , և ի պատարագն
զնոսին խնդրել ։

ՆԵՐՍԷՍ . Ահեր զգիրս առաքելականս այսորիկ վկայ
որ Հրամայէ զայս մեզ ։

ԳՐԻԳՈՐ . Ալ գտանեմ. զի Թէպէտ և գրէ Յովհան-
նէս , " Լթէ ոք տեսցէ զեղբայր իւր մեղուցեալ Խըն-
դրեսցէ և Թողցի նմա ,, . և Յակովբոս , " Յոյժ զո-
րաւոր են աղօթք արդարոց յօգնականութիւն ,, , կեն-
դանեաց վասն ասէն , և ոչ մեռելոց , զորոյ կցորդու-
թիւնն ապաշխարութեան՝ի ձեռին ունիցի աղօթողն[2] ։

1 Մի օրէն . Յիշողութիւն . և պա-
կասէ Նորփէր ։

2 Այս ձև բանից ընդգեմ այ-
նոցիկ կարգեալ է՝ որք անփոյթ
առնեն զվարուց ուղղութիւնէ , և
զամենայն յոյս իւրեանց եդեալ
են յաղօթս այլոց յետ իւրեանց
մահուն , և՝ի պատարագն . և ոչ
խորհին՝ Թէ աղօթք և պատարագք
օգտեն միայն այնոցիկ՝ի ննջեցե-
լոց՝ որք ուղիղ Հաւատով և բարի
վարուք ննջեցին՝ի Քրիստոս՝Հան-
գերձ ձշմարիտ զղջմամբ՝ի վերայ
մեզացն գործելոց ։

ՆԵՐՍԷՍ . Ա՛յդպէս է , ըստ որում ասացերդ , ձըմեռնապէս . բայց և այս սովորութիւն վասն մեռելոց աղօթել ոչ է արտաքոյ եկեղեցական աւանդութեան , այլ ի սրբոյն առ մեզ իջեալ ։ Այս թէ ծո՛ր աղագաւ , ասացիր , որպէս կարծեմ։

ԳՐԻԳՈՐ . Արթօտիմ ուսանել ։

ՆԵՐՍԷՍ . Սուրբն և մեծն Ա՛թանաս գրէ ի վարս երանելոյն Անտոնի , թէ երբեմն գինն ժամու աղօթից կատարելով ձերոյն յարիշտակեցաւ մինչև յօդս , և յընթացս տեսանէր զգունդս գունդս դիւաց ընդառաջ եկեալ նմա , և չար թուոնօք ժպրհել պատնառս մեղանաց զմանկութեանն ի վերայ նորա բաղդատել . և ձայն եղև յերկնից , « Օ՛այն եթող նմա Անտուած . զմիաբնակեցութեան ընթացսն քննեա , թէ ինչ ի քոյոցն գըտցես ի նմա ,, . և նա ասի ի բերան եղև ամենեքին , և զերծաւ երանելին ի մեղսասէր ձեռացն ։

Այլ դարձեալ հայրն տեսանէր երկայն զոմն մինչև յօդս , և զձեռս տարածեալ՝ զհոգիս մարդկան որք վերանային՝ ըմբռնէր , և զորս ոչ կարէր ըմբռնել՝ կըրճատէր ի վերայ նոցա զատամունս ։ Ա՛րդ զայսպիսի մարտ պատերազմի որ յօդս նորա ընդ հոգիս ծանուցեալ , աւանդեցին աղօթիւք օգնել ննջեցելոցն մեզ յընթացս նորա՝ յետ վախճանին , զի զերծցին ի չար հրեշտակացն որպէս աղօթեացն Յովհաննէս . « Ի գալ իմում առ քեզ տեր Յիսուս յամենի լսցին հրեշտակք չարին , սատանայ պարտեսցի , բանսարկուն պապանձեսցի ,, ։ Ա՛սան այսր նեղութեան նոցա , յորմէ և առնոյն սուրբքն զգուշացան , տամք զաղօթս մեր նոցա օժանդակ , և ոչ որպէս կարծիքն է ոմանց՝ Թողութեան մեղաց հաւատամք մեք լինել ննջեցելոցն . և ոչ զայն ուսաք ի սրբոյն խնդրել . քանզի ոչ լսցի , և ընդդէմ է այսպիսի աղօթքս կանոնն Ա՛նտիոքայ [1] , որպէս գրեաց սուրբն Ա՛թանեսիոս ։ Ա՛յլ զինչ , Տանգիստ խնդրեմք . և ամենայն աղօթք՝ նոցա Տանգստեան վասն է սահմանած ,

1 Եւ այս բանիք են ընդդէմ այնոցիկ որ անհոգ վարեն կեանս՝ ապաւինելով յօժանդակութիւնս յետ մահուան . քանզի և առ արժանի լինելոց այդոցիկ պիտոյ է ըստ Անտուծոյ կեալ , և ի շնորհս Անտուծոյ մեռանիլ . ապա թէ ոչ՝ որ ոչ կամեցաւ զանձին փրկութիւն՝ ոչ ինչ օգտի ապրուստ ։

և ոչ Թողութեան. այսինքն թէ զոր վարուքն իւրեանց և կենցաղն աշխատեցան՝ զերծո՛ւ ի դիւային պատեբազմանցն որք յ՚ետ են, և հանեալ՛ի խաւարային իշխանութենանցն՝ ընդ սուրբս քո պայծառացո. որոց խոստացար և խնդրեցեր և ասացեր, թէ ՝՝ Կամիմ զի ուր եմն իցեմ, և որքա ընդ իս իցեն ,, , և քո կամքդ գործ է կատարեալ. և այսմ ապացոյց առցուք՛ի մարմնական իրաց. զոր օրինակ որ առաջի արդարատատ Թագաւորի ընդ Թշնամւոյ և ընդ ոսոխի յիրաւունս մտանէ, Թէպետ և ունի գործոց իւրոց արդարանալ և վստահ է՛ի նոյնն, սակայն երկնչի՛ի չարաԹոյն՝ ոսոխէն և յանուանէ կամայ Թագաւորին, և ակնարկէ որոց մերձ են յարքայն՝ օգնել իւր. արդ սոցա օգնելն ներգործէ՝ զիւր ուղղութիւնն ունելով նիւթ։

Արդ մեռեալ մեր՝ ընԹանամբ ընդ այնպիսի Թըշնամւոյ յիրաւունս, յորմէ և Յովհաննէս ամենամանրուքն խնդրեր զզերծանելն. և յԱյտնուԹի վերայ պատմեաս բազմացեր՝ Ահա կենցաղ պարտիմք մեհու չափ գոն գործել յասպաշխարութիւն առաքինութեան, և ապա յետ մեհու զաղօԹս եղբարց մերոց առաջի պատարագին Աբրիստոսի խնդրել Հաւատով օժանդակ. որպէս և սուրբքն որ խնդրեցին, գնոյն և արարին. և ոչ զԱբրիստոս պատարագել վասն միոյ հոգւոյ[2]։ Արդ զի հարկաւորապէս պատարագի Աբրիստոս, խնդրել ընդ բազմացն և նմա զերծուն՛ի դիւաց՝ և հանգիստ՛ի փառս։ Այսքան օգտեցուցանեմք աղօԹիւք մեր զմեռեալն ըստ Ճշմարտութեանն, անկարացեալ՝ յորժամ ինքն ոչ աշխատեցաւ՝ մեր զոք՛ի գժոխոցն զերծուցանել կամ փրկել. այլ յորժամ ըստ պատուիրանին արար զընԹացսն քաղաքավարութենէն, ընդունի Աստուած զաղօԹս մեր օժանդակ նմին ըստ չափոյ Հաւատոյ մերոյ։

1 Մի օրին. Ձ-ՐՓՈՅ։

2 Այսինքն՝ոչ է պարտ այնպէս դնել՛ի մտի, Թէ՛ի պատարագել վասն միոյ հոգւոյ՝ այլուամ ուստի ոչ հասանէ անտի նպաստ, կամ հոգին այն հարկաւ ազատի, այլ Թէ արժանի իցէ նա, այցելութիւն առնէ Նմա Աստուած որպէս և գիտէ, զորութենանէ պատարագին և աղօԹից և կենդանոյ և վասն լաւութենան նախընԹայ վարուց անձին։

3 Պակասէ յորինակի միւսմ հաստատգ Հաւատով օժանդակ միջև՛ի Բրիստոս խնդրել։

ԳՐԻԳՈՐ. Ասայ խորհուրդս գովելի և հաւանական. բայց կամիմ և զայն ուսանիլ՝ զքառասնից աւուրցն Թիւ յիշատակի։

ՆԵՐՍԷՍ. Զգահուիճեան ախտի ծառայելով մոլորեցան ի Ձենգտուհինէն բազումք. քանզի զքառասնեան Թուել կրաւացի էր, ոչ ըստ համարոյ պատարագացն, այլ ըստ աւուրցն՝ յորէ յորմէ վախճանեցաւ մինչև ի քառասներորդն յիշատակել զնա յաղօթս, և ոչ այլ առաւելուլ երիցս և չորիցս և բազմապատիկս. և այսմ կարծեացս սկիզբն Թուի լինել ի հնոցն ունել. քանզի "Ձլաց,ասէ, ամենայն ազգ զՀարունաւուրս երեսուն,,։ Զդէզ փոխանակ նոցա լալոյն՝ մեք զաղօթեն առնեմք, պայծառացեալ յաւուր յարուԹեան ի վերայ եղբարցն՝ սկսեալ ի վախճանէն զայն աւուրս օժանդակեմք նմին յառաջիկայ Ձանապարհն։

ԳՐԻԳՈՐ. Զայս որպէս կարծեմ, անպատշաճ դնես զառանձինն առանձինն եկեղեցիս, և ի սակաւ աւուրս զԹիւ քառասնից լցուցանել։

ՆԵՐՍԷՍ. Զմենևին իսկ, նաև զբազմապատիկ քառասնեան, զոր գնեն տուրևառիկքն. որպէս ընդարձակագոյնն լուծաք ի բանն զայսպիսի կարծիս։

ԳՐԻԳՈՐ. Զայս ոչպէս կալցուք զայսպիսի սովորուԹիւն աշակերտեալք Ձենգտուհեանն։

ՆԵՐՍԷՍ. Զսա որում վերագոյնն ասացի, ոչ զԶրիւտոս վասն մեր պատարագել, այլ զի պատարագի Զրիւտոս վասն մեր իւրով աստուածեղէն կամաքն միշտ յայսմ յաւիտենիս, յորժամ մեռանի ոք ի մէնջ՝ ինդրել ի պատարագն Զրիստոսի աղօթիւք զՀանգիստ զաւուրս քառասնեան ամենայն եղբարցն, և ոչ զԹիւս. զի բազմացն աղօթիցն մի է ի նոյն օրն, և ոչ բաժանի և ի քանակուԹիւն փայտի պարսիակի. և ԹԷ այլ ոք Հաւատ ընդ առաջնումն վախճանի, ընդ նմին և զսորա յիշատակն բերել, և ոչ ԹերուԹիւն վարկանել յիմարեալ մտաց։

ԳՐԻԳՈՐ. Ակ զնաւէրս տրոց աշխարհականաց ոչպէս ընկալցուք։

ՆԵՐՍԷՍ. Զհանգամանն ասեմ, ԹԷ բիւրաւորս և հազարաւորս տայցեն Զստուածոյ ի ձեռս մեր պատուոյ,

1 ի միում օրն. Յ—Է—Լ։

ոչ բնաւ զմեզ պատահական արարին . այլ ինքեանք պատահան գոլով Աստուծոյ՝ նմին հատուցին զսակաւն , և առ նա ակն կալցին փոխարինին , և ոչ ի ձեռս մեր , որ ասաց . “Ալյսափ արարէք միւմ եղբարց իմոց , ինձ արարէք ,, : Աչ մեր ընկալեալ զնոյն երկեղածութեամբ ի լուծն պիտոյին՝ և ոչ սխտիւ ազատութեան , արժանի դատեսցուք զնմանէն կեբակրոյ իւրոյ , և ազատ մտօք ի նոյն վայելեսցուք :

ԳՐԻԳՈՐ . Ապա թէ ասէն , ոչ տամք ողորմութիւն՝ այլ ի պէտս պատարագացն , եթէ արժան է առնուլ :

ՆԵՐՍԷՍ . Աթէ մինչև ցայն ոչ պատարագէաքն , և նորա վասն շարժիմք ի նոյն՝ մեզանչեմք ի յառնուլն . իսկ եթէ պատարագն ամենայն իրօք լինի ի փառս Աստուծոյ , և նա տայ , նորին վասն զայն առեալ՝ լցուսցուք զպէտս եղբարցն . և նման Աստուած պատարագաւն ըստ իւրում հաւատոյն հատուցէ . և այնուհետև կցորդ է խնդրուածոյն՝ զոր առնեմք ի պատարագն , “Ելիցեա տէր և օրհնեա զպտղաբերիչս եկեղեցւոյ քում սրբոյ ,, :

ԳՐԻԳՈՐ . Ասկ ի թիւ և ի համար ըստ չափոյ տրիցն զպատարագն ոչ է պարտ արկանել :

ՆԵՐՍԷՍ . Աև ամենևին ոչ . և զարձեալ ասեմ՝ ոչ . զի մի չնորհաւաճառ լիցուք , որ հրամանն առաք ձրի առնուլ և ձրի տալ , ինքն Աքրիստոս գլխովին հրամայեաց . և զինչ այլ ձրի առնուլն և ձրի տալ , եթէ ոչ այս , զի մի թուեսցուք պարտապան գոլ և ի հատուցումն փութալ տգիտութեամբ , որք միշտ հատուցանեմք զԱստուծոյն տալով , և ոչ զմերն . և յԱստուծոյ առնուլ պարտիմք և ոչ ի մարդկանէ : Ասպիսի հայրենի աւանդութեանս հետևեալ պայծառապէս փայլեցուսցուք զփառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի գործս մեր՝ և զՕրէն նորա Հոգւովն սրբով , որ է օրհնեալ յաւիտեանս . ամէն :

1 Մի օրէն . Հ---ԲՀ :

ՈՐՈՇԻՄՆ ԻՆՉ ԴԱՍՈՒՑ ԱՍՏՒԾԱՆԱՑ ԵԿԵՂԵՑՒՈՑ

ԵՒ ՑԱՏԿՈՒԹԻՒՆ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆՑ ՆՈՑԱ, ԵՒ ՉԻԵՍՏՈՒՑՆ· ԸՆԴ ՈՐՍ ԵՒ ԸՆԴԻՄԱՐՈՒԹԻՒՆ ԱՅՍՈՑԻԿ ԽՈՐՀՐԴՈՑ ՈՒՆԱՑՆԱՑՈՒՑԱՆՈՂԱՑ·

Լ՚ԿԵՂԵՑԻ քրիստոնէից առաքելական խօսիւք հաստատեալ երկնաւոր փեսային իւրոյ Յ՚Քրիստոսի՝ յօրինեաց զանեակ իւր պեսպես սպասուորաց պատմուձանօք՝ ի պատիւ և ի փառս սրբոյն իւրում Յ՚Քրիստոսի: Այլ զոր օրինակ խօսեալ ոք ի հարսնութիւն որդւոյ թագաւորի՝ հարկաւորապէս նման թագաւորական սպասրանիցն պաճուճէ զառագաստ իւր, այսպէս և սա խօսեալ երկնաւոր սրբոյն որդւոյ, և սպասեալ մնալոյ առագաստ նորա, այժմ՝ ի դասակարգութիւն հաւատացելոց երկնաւոր քահանայապետութեանցն ուղղեաց զկանոն և զաստիճան պաշտօնէից իւրոց· քանզի նոքա՝ որպէս այնորիկ խորհրդազգացքն պատմեցին մեզ, ունին անընդմիջաբար ի շուրջ զՅ՚աստուծով, այս ինքն աճապարն անուանեալ և քերովբէից և սերովբէից դասակարգութիւնքն, որոց համատիպք են սրբեպիսկոպոսք՝ եպիսկոպոսք և քահանայք· և այլք յետ նոցա՝ տէրութիւնք, զօրութիւնք, իշխանութիւնք, զոր զաւրաբէն սարկաւագք և կէս սարկաւագք և սաղմոսերգք· երրորդ դաս՝ ի նոսա՝ պետութիւնք, հրեշտակապետք, հրեշտակք, որոց ապագոյց են կրօնաւորք, ժողովուրդք և երախայք· որպէս զի լոյծ և սաստ լինի դասակարգութիւն պաշտօնէից Յ՚աստուծոյ՝ զանազան պատուովք և իշխանութեամբք: Այլ դու տես ինձ և այլ ձգտութիւն՝ իմաստից, զի որպէս նոքա առաջինքն երեք կարգն, և նախապատիւ զան թէպէտ ունին ինչ զանազանութիւն անուանց, սակայն հաւասարապատիւ գոլով անընդմիջաբար են շուրջ զՅ՚աստուծով, և՝ ի նոցա

1 Յօրին· մուտ պաճուճանաց: 2 Մի օրին· ձգտութիւն:

լուսափայլութիւնն վայելէին, և երկաւեսակ բնութիւն յերկրորդան մնատակարարէն զնոյնն,

—Կոպակս և այլ երեք կարգս արքեպիսկոպոսաց, և պիսկոպոսաց և քահանայից Հպատ և անուամբ զանազանին՝ ի միմեանց, բայց սակայն՝ ի մի դաս և յիշխանութիւն պատուոյ են՝ կալ շուրջ զԱստուծով անընդմիջաբար, այսինքն զսրբով սեղանովն, յորում տարկացեալ զօրութիւնն Աստուծոյ, և վայելել հանդարձակաբար՝ ի կատարողութիւն խորհրդոյ սրբոյ պատարագին և՝ ի մնաւորական գիտութիւնն Աստուծոյ՝ մնատակարարէն զնոյն յերկրորդան որ զկնի իւրեանց՝ ի դաս պաշտօնէիցն։ Սակ նոքա ունելով զմիջնորմն աստուածատեսակութեան բեմին՝ ոչ ունին հանդարձակութիւն կամ պատիւ հայել անընդմիջաբար յԱստուած, այլ՝ ի նախատաս կարգէն ընկալեալ զնոյն լուսափայլութիւն բարեփոխակս՝ ոչ յաչալեն պահել զնոյնն առ իւրեանս, այլ հեղուն զսրբազան գիտութիւնն յերկրորդն՝ որ ընդ ինքեանք և դասակարգութիւն ժողովրդոյն. սարկաւագն զվարդապետութիւն քարոզութեանն հռչակեցուցանելով առ նոսա, կէս սարկաւագն զաստուածաշունչ գրոց ընթերցողութիւն, երգեցողն զաղմոսացն քաղցրաձայնութիւն։ Սակ նոցա ընկալեալ, որք մի են դասով և զանազան պատուոյն, բարեվայելչապէս՝ ի նոյն վայելէին, և առ ինքեանս քանակեալ սահմանեն՝ ոչ ունելով պատիւ կամ իշխանութիւն առ այլս զնոյն իջուցանել, բայց եթէ ինքեանց նուաւս պայծառանալ։ Ո՞ այս գիտելով խորհրդոյն Քրիստոսի քահանայապետն Պօղոս՝ յերիս մնատունս զոսա որոշեաց, ասելով. «Ո՞ որս եդ Աստուած յեկեղեցւոջ, այս են. նախ զառաքեալս՝ որք են եպիսկոպոսք, երկրորդ զմարգարէս՝ որք են քահանայք, երրորդ զվարդապետս՝ որք են սարկաւագքն»։ Այլ ոչ ինչ վայրապար կարծեմ առնուլ զոսա բան կարգի պատուոյն և աստիճանի, և զիրաքանչիւրոցն խորհրդական զգեստ, և գործառնութիւն ցուցանել. զոր այժմ աղօտացեալ ամենևին՝ ի մէնջ տեսանեմ; Թերևս՝ ի ձեռն այսր գոնեայ տեղի տացուք Հնմարտութեանն, և ոչ ընդ խաբս գնալով՝ լիցուք ներկակ նմին զինուորք և արհամարհիչք։

Զդդ առաջին աստիճան և յեկեղեցի դաս սա-

տրիարգայ, որ Թադիանոսին առաջին հարք, այսինքն հայ
րմնադիր: և Նատին Նոքա ընդ տիեզերս ի չորս մասս բա-
ժանեալ չորս աթոռս, ուր աւետարանիչքն գրկին
զաւետարանն: Ա. վասն զի նախ Մատթէոս գրեաց
Ա՛նտիոք, պատրիարգն Ա՛նտիոքու զնախապատուու-
թիւն ունի քան զայլսն. իսկ յետ Նորա Մարկոս Ա-
զեքսանդրիայ, յաջորդ Նորա պատրիարգն յետ սորա
դասակարգեցաւ. և Ղուկաս ի Հռոմ գրեաց. որ Հռո-
մայն է՝ ըստ կարգի երրորդ էր պատուով, Թէպէտ և զօ-
րութեամբ առաջին. այլ Յովհաննէս Հուսկ յետոյ
Ա՛փեսոս գրեաց. որ Նորայն եղև պատրիարգ, վերջին
էր աթոռով քան զերիսն: Ա՛յս կարգաւորութեամբ
վարեցաւ եկեղեցի տիեզերաց մինչև ի ժամանակս
Յուստինոսի Թագաւորի, ըստ չորս աւետարանչացն
ընդ չորս բաժանեցաւ աշխարհ յիշխանութիւն չորից
հայրապետացն. բայց Յուստինոս իբրև Թագաւո-
րեաց, կամ եղև նմա փոխել զաթոռ սրբոյն Յովհան-
նու Ա՛փեսոսի ի Կոստանդինուպոլիս, և հաւանեցու-
ցեալ զԺողով եպիսկոպոսացն կատարեաց զնոյնն: Ա՛ր
Յուստինոս դարձեալ փոխեաց զաթոռն Մարկոսի
Ա՛զեքսանդրէ Ա՛լուսաղէմ. քանզի մինչև ի սորա
ժամանակն՝ Կոստանդինուպոլսի և Ա՛լուսաղէմի եպիս-
կոպոսք՝ ինքնագլուխք միայն էին, այսինքն ոչ ինքեանք
ընդ այլոքք և ոչ այլք ընդ Նոքօք. Կոստանդինուպոլսին
վասն Թագաւորեալ քաղաքին, և Ա՛լուսաղէմին՝ վասն
զի քաղաք է երկնաւոր Թագաւորին. ըստ այսմ և ի
Ա՛ւիկայ Ժողովոյն սահմանս գտցես:

Ա՛յդ ահա առասպաւ զառաջին դաս եկեղեցւոյ՝ որ են
հայրապետք, և կոչին յունարէն պատրիարգք. սորա
ունին զգեստ զառաքելականն, որ եմիփորոնն է հինգ
կրկին՝ հինգ կրկին խաչիւք զարդարեալ. իսկ նախորդ
գգենու բաղմախաչ, ի վերոյ՝ որոյ արկանէ զպատուա-
կան եմիփորոնն: Ա՛ր գործ և իշխանութիւն է պատ-
րիարգին ձեռնադրել զարքեպիսկոպոսս, որք են ընդ
իւր վիճակաւ. և ի չորս բաժին տիեզերաց Նոքա տան
հրամանս վասն Ժողով լինելոյ:

Ա՛րկրորդ դաս աստիճանի եկեղեցւոյ են արքեպիս-

1 Ա՛ի պին. ի վերոյ:

կոպոսք, որ Թարգմանին եպիսկոպոսապետք կամ առաջին եպիսկոպոսք. և զգեստ է նոցա նոյն նափորան բազմախաչ, և ի վերայ եմիփորան չորեքկին. և գործ է նոցա ձեռնադրել զմետրապոլիտս, և օրհնել զմեռոնն սուրբ. և երեք արքեպիսկոպոսքն ունին իշխանութիւն ձեռնադրել զպատրիարգն իւրեանց։ Ի սոյն աստիճան են կաթողիկոսք, որ Թարգմանին ընդհանրականք. բայց ունին առաւելութիւն պատուոյ քան զարքեպիսկոպոս, զայս՝ զի ոչ եթէ յիւր վիճակին միայն, այլ ընդ ամենայն տեղիս՝ ուր ազգքն իւր և հաւատեղքն են, ունի իշխանութիւն ձեռնադրել նոցա եպիսկոպոս և տալ զմիռոնն, վասն այնորիկ անուանի և կաթողիկոս։

Արկր դաս աստիճանի եկեղեցւոյ մետրապոլիտք, որ Թարգմանին մայրաքաղաքացիք, և զգենուն նափորա միայն՝ առանց խաչի, և ի վերայ եմիփորան երեք կրկին. և գործ է նոցա ձեռնադրել եպիսկոպոս, և օրհնել զմիռոնն՝ արկանելով ի նա զպատրիարգական միռոնն, զոր պահէ եկեղեցի յաւելուածով, և երեք մետրապոլիտ ունին իշխանութիւն ձեռնադրել զարքեպիսկոպոս իւրեանց, սակայն ի նախապատիւ պատրիարգէն պարտի առնուլ զօրհնութիւն՝ ոտա հաձութեամբ և վկայութեամբ։

Ընդրորդ դաս աստիճանի եկեղեցւոյ եպիսկոպոսք՝ որ Թարգմանին այցելուք կամ տեսուչք[1], և զգենուն զնա փորան, և ի վերայ եմիփորան կրկին միայն. և գործ է նոցա ձեռնադրել զամենայն վիճակաւորս, և զեղեցն օրհնել և զխաչ և զաւազան և զիւղն օծութեան. մինչև յայս է եպիսկոպոսի իշխանութիւն։

Երիգերորդ դաս աստիճանի եկեղեցւոյ երէփոսունք և պապասք, որ Թարգմանին քահանայք և երիցունք. քահանայք ի քաղաքս լինին, և երիցունք ի գեղս և յաղարակս. մի են երկոքեան, բայց յաղագս պատուոյն՝ անուամբ զանազանին. և զգեստ է նոցա նափորան միայն առանց եմիփորանի, զի ոչքս ուրար միայն արկանեն զերկոսին ուսովքն. և գործ է նոցա պատարագ մատուցանել, և բաշխել զնոյն ժողովրդեանն, մկրտու-

1 Յօրին. միւռ փնտրէ։

թիւն առնել, և աղօթս մնաուցանել, և խաղաղութիւն տալ ժողովրդեանն, առաջնորդել և զմեզս թողուլ. և ոչ յայլ ինչ համարձակել, այսինքն ոչ օրհնել սեղան և ոչ վիճակել զոք առաքելոցն. զի այս եպիսկոպոսին պատիւ է և իշխանութիւն։

Վեցերորդ դաս եկեղեցւոյ՝ դիակունք, որ Թարգմանին սպասաւորք, այսինքն սարկաւագունք. և զգեստ է նոցա պատմուճան հոլանի առանց գօտւոյ, և ուրար արկանեն զահեակ ուսովքն միայն. և գործ է նոցա հրամանաւ քահանային աւետարան կարդալ, և քարոզել և վարդապետել, և զնայ պատարագին պատրաստել. և զմաղզմայն և զսկիհն և զքշոցն բերեն 'ի սենեկէն 'ի սեղանն, և 'ի սեղանոյն ածեն արտաքս 'ի բաշխումն. նոցին իշխանութիւն է և խունկ ածել, և որ ինչ միանգամ սպասաւորութիւն է՝ սպասաւորեն, մինչև 'ի կատարել կարգաց ժամուցն ամենայնի։ Եւ հրամայէ քահանայն ձեռնադրեալ սարկաւագին և կէս սարկաւագին գիրս ընթեռնուլ ժողովրդոյն և քարոզել զև և այս խաղաղութեանն, և ընթեռնուլ զաւետարանն. նոքին են աստուածայնոյ նուիրացն և պատարագի սպասաւորք և քողաձիգք, այսինքն սարկաւագք. իսկ կէս սարկաւագքն զքահանայապետականն պահեն զսպասաւորութիւն. և սոքա բերեն քահանային ջուր առ 'ի լուանալ՝ յառաջ քան զվարհոսդ պատարագին, քահանային մերձ կալ և մոմեղէն ունել. և յորժամ սարկաւագ օրհնեն, կոչել, և քահանայապետին անսայթաքելի կատարել սպասաւորութիւն։

Եօթներորդ դաս ընթերց եկեղեցւոյ՝ դիակունք, որք են կէս սարկաւագաց. և ունին զգեստ որպէս զսարկաւագին՝ հոլանի անգօտի, բայց զուրարն սոքա զահեակ բազկաւն ածեալ կապեն վերոյ արմկանն 'ի կախ ունելով կրկին. և գործ է սոցա առաքեալ կարդալ, և զխաչագլուխ գաւազանան կրել և զմոմեղէնսն. և զեկեղեցին նոքա զարդարեն և զդրունսն պահեն։

Ութերորդ դաս եկեղեցւոյ՝ անագանոսք, որ Թարգմանին ընթերցողք. և ունին զնոյն զգեստ պատմուճանի հոլանի, բայց յօրարէն, և սոքա ոչ առանց գօտւոյ, այլ գօտի կապեն 'ի վերայ պատմուճանին, որք սպասաւոյ եկեղեցւոյն ելեալ, Թէ կամին՝ մեկնակս զգենուլ

մարթ է. և գործ է սոցա ընթեռնուլ զմարգարէս և զնոագիրս և զվարդապետականս։

Իսկ եթէ որոյ եկեղեցւոյ՝ վասն որ թ արգիանին երգեցողք. և զգենուն որպէս զընթերցողն. իսկ գործ է նոցա կանգնել և միայն երգել զաղէլուն և զմեսեդին։

Իսկ յա յուրաւ ինն դաս պաշտօնէից վինակելոց յեկեղեցի, և գործ նոցին, և զգեստ խորհրդականք, որք ոչ եթէ վայրապար են, կամ միոյն՝ ի մարմնական նշանակն միայն, այլ մարմնաձև կերպարանօքն յուցանեն զվսեմական խորհրդոյն զօրութիւն, զոր ասել սակաւ ինչ՝ ոչ դանդաղիմ։

Արդ եղոյց բանս՝ ի պատրիարգէն մինչև՝ ի կէս սարկաւագն իջեալ Հարկաւոր ամենեցուն նոցա և վայելուչ զգօտելոյծ պատմուճանան, զի նախորան գօտելոյծ՝ է քահանայական կարգին զարդ, և պատմուճանն՝ սարկաւագաց։ Իսկ զինչ այլ այս ուսուցանէ մեզ, եթէ ոչ զպատիւ և զիշխանութիւն նոցա՝ ի տաճարիս. քանզի գօտին ծառայական նշանակ է. ըստ այնմ՝ "Գօտի ա ծեալ պաշտեսցէ զնա". նաև՝ ի պաղատ Թագաւորի ինքն միայն գօտելոյծ՝ ի գահոյն բազմի, իսկ որք մնեն առաջի նորա՝ հոլանի ոչ ունին իշխանութիւն կալ, այլ գօտով. յայտ արարեալ, թէ իշխան և հրամանատար՝ ի վերայ մեր՝ միայն արքայն է, իսկ այլքս ծառայք և պաշտօնեայք նորա։ Արդ որպէս նա յիւրում իշխանութեանն, վասն զի իշխան է՝ գօտելոյծ լինի, այսպէս և սոքա յեկեղեցիս ըստ իւրաքանչիւր արժանեաց իշխանութեան վինակեալ՝ գօտելոյծ կան իբրև իշխանք՝ ի վերայ ժողովրդեանն, և ոչ որպէս ծառայակիցք միայն. յայն կարգն գոլով զոր տէրն առ առաքեալսն ասաց. "Ո՛չ եզ ոչ ևս կոչեմ ծառայս, զի ծառայն ոչ գիտէ զինչ գործէ տէրն նորա. այլ զձեզ կոչեցի բարեկամս, զի զամենայն զոր լուայ՝ ի հօրէ պատմեցի ձեզ"։ Վասնզի սոքա ըստ իւրաքանչիւր դասու արժանեաց՝ պատմելոյ՝ ի տեառնէ խորհրդեանն՝ խորհրդակիցք դասան արժանի լինել. եպիսկոպոսքն զ՝ոգին բաշխել, քահանայքն պատարագել, սարկաւագքն ուսուցանել. և այսպէս գործակցեալք Աստուծոյ և ժառանգակիցք են նմա, և բարեկամք յեկեղեցիս, զոր գնեաց արեամբն իւրով անպրանիկ եղբայրն սոցա Քրիստոս։ Այս վասն

պատճառ լինելոյն Հաստատապէս քննութիւն։

Յետ այսորիկ պարտ է գիտել, թէ և արկանել զուարան զանազանապէս՝ ըստ իւրաքանչիւրոցն զինչ ունի պատրաստական զազդեցութիւն իմաստից. ապա թէ ոչ՝ զինչ վտանգ էր ամենեցուն յերկուս ուսանել զայս զայն հոչակել, թէ այս լուծս քաղցր է, զոր առաց Քրիստոս առնուլ մեզ ի յանձին։ Այլ ես կէս սարկաւագս տղայ գոլով իմաստից աստուածային, դեռ և տկարացայ զնոյնն բառնալ. այլ միայն բուն եմ հաւատալ զնմանէ տկար գործով ձախու ձեռամբս, որ ցուցանէ զնեղըմին մարդոյն իմոյ տղայութիւն առ գիտութիւն պատուիրանին. վասն այսորիկ և ըստ իմ արժանեաց՝ միայն այս վիճակեցաւ ինձ պատիւ՝ զայլոց բանս ընթեռնուլ ժողովրդեանդ, և պահելով զդրունս՝ առնել իշխանութիւն զանմաքուրն ի մաքրոյն զատանել։ Սակ սարկաւագն ոչ միայն բուն եհաս, այլ զօրացաւ և ի յուն գնել. բայց ոչ ի տիրապէս գործիականն, այլ ի ձախ միայն, որով տայ տարացոյց, թէ զօրացայ ընդհօքն Աստուծոյ՝ ի նեղըմին մարդոյս ուսն բառնալ զլուծ քաղցր պատուիրանին, և զօրացեալ նուաճ՝ երիտասարդապէս մրցիմ ընդ թշնամւոյն. յաղագս որոյ ետ ինձ Հոգին Աստուծոյ իշխանութիւն՝ յետ զանձն մաքրելոյ՝ և զայլս խրատել վարդապետութեամբ և ուսուցանել, պաշտել զնուիրագործութիւն պատարագի՝ թագաւորին մերոյ Յիսուսի պատասխանատուութեամբ։ Այլ քահանայն երկոքումբք ուսովք զնոյնն բարձեալ՝ լիապէս ցուցանէ զանձն պատուիրանին կատարիչ. վասն այսորիկ և տուաւ նմա իշխանութիւն Աստուծոյ լինել խօսակից խորհրդական աղօթիւք, և ոչ եթէ միայն որպէս զսարկաւագն ընդ ժողովուրդն։ Այլ եպիսկոպոսք զի ի վերայ ուրարին ունին և զպատուական եմիփորոնն խաչիւք շուրջանակի պաճուճեալ՝ զայն յայտ առնեն, եթէ մեք յետ զբաղդը լուծն բառնալոյ՝ զօրացաք և զխաչն բառնալ և գնալ զհետ Քրիստոսի. և որպէս այս ձեւացեալ խաչս է ի վերայ լանջից մերոց երևելապէս, այսպէս և նեղըմին մարդս մեր համարձակապէս աղաղակէ. "Ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ինձ աշխարհ ի խաչ եղեալ է, և ես աշխարհի.." Այլ զի այսպէս ի

խաչն Վրիտոսի հեղուսաք յօժարութեամբ զանձինս, տուաւ մեզ այս չնորհ ի տեառնէն՝ փոխանակ նորա նստել ի մէջ ժողովրդեանս, և զաթոռ իշխանութեան՝ զոր արեամբն իւրով գնեաց Վրիտոս, իբրև զընտանի հարազատ նորա և զիաչակից եղբայր՝ ժառանգել. ունիմ և զՅոգին հրաման բաշխել՝ զոր առ նա խաչիւն իւրով, և ետ յիս, և սովաւ պատուեմ զիւրաքանչիւր ոք ըստ արժանեաց աստուածայնապէս։ Ակ հինգ խաչն յեմիխորէն, թէ հինգ զգայարանքս խաչեալ է աշխարհի և ցանկութեանց սորա։

Օ այսքան բարեզարդութիւն աստիճանաց դասուց եկեղեցւոյ և զգեստուցս վայելչութիւն՝ ճնեալ ի տա- տանեալ ազգս, և ոչ քնաւ գտի ի մէջ սոցա. այլ աղա- ւաղեալ և վեր ի վայր վրդովեալ. և մեր այնքան ի յուղիղ պողոտայէն անընդելութեամբ մոլորեալ, մինչ զի ոչ ըղձամբ ի նոյնս՝ իբրև խաւարեալքն՝ լուսոյ. այլ և հակառակիմբև ոտն հարկանեմք այսպիսի աստուածա- վայելուչ մաքրագործութեանս, ասելով ոմանց, աւե- լորդ են այսոքիկ։ Ա՛ մոռացեալ է քնաւին ի մտաց մերոց՝ թէ այլ աստիճան կայ եկեղեցի բայց ի քա- հանայից և եպիսկոպոսաց։ Ա՛վ թշուառութեանս և արտասուաց արժանի մոլորութեանս. վասն այսորիկ և քահանայք եղեալ ի դպրաց իմաստութէ կարգ թերևս կատարանամբ լինել. և եպիսկոպոսք՝ քնաւ և ոչ ձգտա- կեալ զքաղցրութէն բարեկարգութեանս. զոր բովան- դակն ասել հեղգանամ, բաւականացեալ ի լինելն սո- ձամբ անձին իմոյ կշտամբիչ։ Այլ զինչ պարտ է ա- սել և զայպանելն և անգոմանելն զբարեզգեստութիւն հայրենի աւանդութեանս յիմարեալ մտօք. զոր ասեմ, ասեմ և ոչ ամաչեմ, ինձ ի նախատինս և ի զաւա- պարտութիւն. զի են ոմանք ի մէնջ՝ որպէս ասացի, յորոց ամենևին այս խորհրդածութիւն աղօտացեալ է, թէ հարկաւոր է եպիսկոպոսին պատուական զգես- տիւքն պաճուճիլ ի փառս Աստուծոյ. և քահանային առանց այսր ոչ ի խորհրդածութիւն ժպրհել։ Ակ յորժամ զգաստացուցանեմք զինչ, թերևս տեղի տան յանձինս ձշմարտութեանն հաւանել. և ոչ երբէք. այլ ընդդէմ բերեն զկարծեցեալ զօրաւոր պատասխա- նին՝ Հոգին, ասէ, լեցի սուրբ, թէ ոչ՝ այլ ամենայն ա-

ւելորդ է։ ¶Վ Թշնամանադիր և ունայնացուցիչ Հնմար-
տութեան. և մեք զայս ոչ ևթէ անմեքուր Հոգւոյ
տաճ ունել, այլ քուա՛ տուրբ Հոգւոյդ կատարելութէ.
որ անկատար է մարմնաւորիդ Հոգւոյդ սրբութիւն՝ ա-
ռանց մարմնոյդ բարեզարդութեան։ ¶Այս թէ բաւա-
կան Համարիս զՀոգւոյ սրբութիւն առանց զգալի նշա-
նակաց, այսուհետև աշակերտեա զմեզ քեզ՝ մկրտել ա-
ռանց ջրոյ, ազօթել առանց եկեղեցւոյ, պատարագել
առանց Հացի։ ¶Այս թէ այսոքիկ ընդ Հոգւոյն մարմնա-
կան նիւթքս խառնին, և չունիս ինչ պատասխանի, յայտ
է թէ ունայն ձայնիւ աղաղակես զձայն՝ զոր ոչ կարես
Հաստատել. և որպէս անՀնար է առանց ջրոյ մկրտել
և առանց Հացի պատարագել, այսպէս և քահանային
անՀնար է առանց այսպիսի խորՀրդական զգեստուց ՚ի
քահանայագործութիւն ժպրՀել. զի նոքին որ զայն
սահմանեցին՝ և զայս ուսուցին. և ¶ստուած՝ թէ Հա-
ւանիս ուսանել, ուսոյց ¶Մովսէսի զայս ձև պատմու-
Հանաց։ ¶Զոր նոքա անբան արեանդն սուրբ Հպատա-
կէին, և դու ՚ի բանական պատարագիս պաշտօն՝ Հեղ-
գանաս։ ¶Ով կամիս, և այլ ինչ զարՀուրելի առացիս
քեզ. զորիկն ¶Տարունի՝ Հուր քաւութեանն ՚ի նեղոյց
քահանայական պատմուճանացն այրեաց, և ՚ի պատ-
մուճանն ոչ ժպրՀեցաւ մերձենալ. Թերևս աւելորդ
էր այն, որպէս քեզ Թուի։ ¶Վ իմոյ Թշուառութեանս
և մեղուցութեանս, ուր վարդապետեցայ խոնարՀ երևել
՚ի գոհէս մարդկան, զՀանդոյս նոցա ջանամ ՚ի գձուձն
որսալ կերպարանք. իսկ աստ ուր փառքն և զգեստն
փառաց ոչ է իմ այլ ¶ստուծոյ, կամ զգենուցմ որպէս զիմ
փառս զարդուց, և կամ արՀամարՀեմ որպէս ՚ի փա-
ռասիրութենէ Հրաժարեալ, ըստ որում և է մասին ընդ
պատուիրանազանցութեամբն գրաւեալ. որ ՚ պարտ էի
ունել զայն ՚ի փառս ¶ստուծոյ և ոչ յիմ. և Հարկ ու-
նէի յանգամանէին՝ փառացն ¶ստուծոյ Թերութիւն Հա-
մարել և ոչ իմումն։

Տես ինձ գարձեալ և այլով օրինակաւ զանՀարմու-

1 Ա՛ի օրին. ունի առաւելու- Թեամբ այսպէս. ըստ որում և է մա- սին ընդ պատուիրանա-, ւէ գա-

Տես տուրբ Հոգւ և եղիցուք, Ի գեղա- ցանցումիցն գրաւելոյ որ։

Թիւն խորհրդոյս . քանզի որք յայսմ վայրի գՀոգին մաքուր նախապատուեցաք և զքահանայական զգեստն անպոռնեցաք , զինդուղ կրօնաւորական կարգին՝ որով ՚ի պէտս մարդկան ձև ացաք , և ոչ օրհնութեամբ զնոյն ընկալաք , այնքան զգուշութեամբ պահեմք՝ մինչ զի և ՚ի խօսելն ընդ Աստուծոյ աղօթիւք՝ հեզգանամք զնոյնն ընծաղրել : Այլ յայսմ վայրի գարձեալ ընդդէմ գառնամք ՀՀմարտութեանն Քառագովաց՝ զսրբութենէ հոգւոյ Հարեալ բառն , առ որ ժպրհի բանս յառնել առարկու : ՀՀ եղբայր , գովութեամբ Հոգւոյ զօրհնս Հոգւոյ տապալիչ , ուստ մեզ Թէ որպէս ընկալցուք զաղաչանդ քո աւանդութիւն . եթէ սուրբ Հոգիդ ոչ կարօտացար քահանայական զգեստուն , պարտ էր զի և Հնկղիդ մի լիցի կարօտ . ապա Թէ անդ զօրհնան արհամարհեաց ոչ զգենլոյն , և աստ անպոռնէ զգենլով , յայտ է Թէ ոչ սրբութեան ունիս Քառագով զմաքուր Հոգիդ , այլ պատուիրանացն Աստուծոյ արհամարհութեան , որպէս զի ամենևին սկզբնաւորն զքեզ իւր պատերազմակից օրինազանցութեամբդ ստացի՝ նովին խաւարեալ խորհրդով . զի որպէս նա միշտ մեղանչէլոյն՝ ընկղմեալ յամբարտաւանութիւն՝ ոչ զգայ , այսպէս Քանայ և զծառայդ ՀՔրիստոսի խարդաւանել . ապա Թէ ոչ զինչ դանդաղեցուցանէ զմեզ առ օրհնան Աստուծոյ բացաւ գլխով աղօթել . զոր Պօղոս ՚ի սահմանէն՝ և ՚ի բնական վկայութիւնն ապաստան առնէ . ՙՙ Այլ ոչ բնութիւնդ , ասէ , զքեզ ուսուցանէ , զի այր եթէ գիսաւոր է , անարգանք են նմա ,, : Արդ եթէ զգեստ՝ որ բնական փառք էր գլխոյդ , հաւանեալ օրինացն հատեր , զարտաքին ծածկոյթդ ո դանդաղեցուցանէ յաղօթէն ՚ի բաց ընկենուլ : Այլ ևս եթէ Հարցն սովորութիւն : Այլ ո է Հայր քո Հաւատարիմ . Պօղոս , որ աւետարանաւն ծնաւ , Թէ այլ ոք . ապա Թէ գնա ախորժեմք լինել՝ նմին Հաւանեացուք , որ ասէ . ՙՙ Աստենայն այր յորժամ յաղօթս կայցէ կամ մարգարէանայցէ , և գգլուխն ծածկեալ ունիցի , զԱրիստոս զգլուխն իւր անպատուեցուցանէ ,, : ՀՀվ Թէ ոչքան մեղանչեմք Հեշտ և դիւր օրինացս դրժելով . որով ոչ միայն մեղանչեմք , այլ և զիաւան երկնի և երկրի տմարդութեամբ մեր անպատուեցուցանեմք . Հեշտ կարծես , և

վան այնորիկ կոխեա՝ զպատուիրանս, և ոչ գիտեա թէ և առեղծն օրէնքն Աստուծոյ դիւր են և զկնի բնութեան. և այնր ազագաւ պատժապարտ լինիմք, զի բնութեան կամաց և նորա օրինացն լինիմք յանցաւորք, և հրամայեաց մեզ առել զկրեարս և ոչ զրկել և ոչ սպանանել, որք ընդդէմ են կամաց մեր. այլ զսէրն և զմիաբանութիւնն՝ զոր բնութեամբ ախորժեմք. այսպէս և առաջ բնութիւնս զգիտաւոր այրն խոտէ, Աստուած հետևեցոյց զօրէնս իւր՝ կամաց նորին. դու, ասէ, որոյ գէմն անարգանք է, յորժամ ընդ իս խօսիս կամ զբանս իմ, բացաւ գլխով խօսեա՛:

Այդ քննեացուք, զինչ բնութիւն ասիպէ զմեզ առնարգել զօրէնս Աստուծոյ, ի վերայ որոց մեռանել հրամանն ընկալաք, բայց եթէ անխմաստութիւնն: Օ՛ինչ դարձեալ զղուանս կրեմք՝ անգոնանել զքահանայական զգեստն, առանց որոյ և ոչ սուրբքն կարացին Աստուծոյ խօսակցել, զոր ոչ դանդաղիմ յիշել. զի զ՛ագաբատ ո՛ այլ՝ քան թէ այս փայլեցոյց յաչս քաղաքապետին ընիփատոսի իբրև զՀուր. զ՛ապեղ ո՛ այլ այնքան աբանչացոյց յաչս Աստուծոյ, զորոյ և զպատկերան նովին պատուականն պատմուճանովքն ունիմք գծագրեալք: Ոչ քա՛ են՝ որ զբարեկարգութիւն քրիստոնէից այսու օրինակօք ուղղեցին, և ոչ եթէ յանկիշատակաց ոք. զոյս օրէնս առ ոտս կոխելով՝ գնասին յայտ է թէ արհամարհեմք: Ա՛յբատ են ասեն՝ ազգս, և՝ ի սարկուել մանանեալ, և վասն այնորիկ լքին զօրէնս: Ա՛կայեմ և ես արտաստաւոք աղբատութեանս և ծառայութեանս. և աղաղակեմ առ արդարագատն Աստուած, արդարութեամբ և յիրաւի ածեալ զայս՝ ի վերայ մեր վասն մեզաց մերոց, զի ոչ պահէցաք զպատուիրանս, որով բարի լինէր մեզ. վասն այսորիկ և մանանեցաք՝ ի ձեռս տերանց խստասրտաց: Ա՛սյց որպէս կարծեմ, ոչ թէ վասն աղբատութեան միայն՝ գոսաք սուրբ պատուիրանիս զրժող, այլ տիրապէս վասն արհամարհութեան. քանզի ո՛մ ումեք՝ որ փոյթ առնէ, ոչ է դիւրաւ գտանել՝ ի կտաւիս կամ՝ ի ստէպ ոչխարաց զայս զգեստ պատրաստել: Այդ եթէ զմտաւ ածէաք, որպէս թէ

1 Մի օրին. ՃԻԵ:

2 Մի օրին. ՌՀ:

չեմք քահանայ առանց զգեստուցն՝ որպէս և ոչ առանց հնկղէ կրօնաւորք , այսպէս հարկաւորելով՝ դիւրաւ պատրաստէաք զնոսին , թէ և դժուարագիւտ լինէր ։

Կամիմ և զայլ նիւթ հակառակութեան խզել ամենևին՝ բաղձացեալ չնմարտութեանն ուղղութէ . քանզի լուայ յոմանց առացեալ . Զաքեալ զօրէնս բացատ զըլխով աղօթելոյ աշխարհականաց սահմանեաց , իսկ մեք զկրօնաւորականս ունիմք հնկուղ , զոր հրեշտակն եցոյց առըք հօրն Պաբիմոսի , և առաց Օ գեղո զդա կրօնաւորաց , և ՚ի ժամ հաղորդութեանն նովքին հնկղովքն կացցեն ։ Զո որ համառօտ զայս գնեմք , եթէ ՚ի կրօնաւորէ ումեքէ կամ՚ի հրեշտակէ ունէաք զօրէնս բացատ գլխով աղօթելոյն , պարտ էր զի միոյն բան զմիւսումն լուծցէ . իսկ եթէ ՚ի նոյն ինքն ՚ի Պօղոսէ , յայնմ առաքելոյ՝ որ գրեաց , “ Եթէ մեք կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր աւետարանեցաքն՝ նզովեալ լիցի ,, ։ Ուրեմն լուար , զի փակեաց ՚ի մէնջ Պօղոս զհաւանելն հրեշտակի կամ մարգոյ՝ որ ներհակ իւրոյն վարդապետէ օրինաց առելով . “ Օ որ առացի , ասէ , և դարձեալ ասեմ , եթէ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ՚ի ձեզ աւելի քան զոր աւետարանեցաքն՝ նզովեալ լիցի ,, ։ Այս այսորիկ ասիր և զայս , զի հրեշտակն զհնկուղն կրօնաւորացն առաց ունել՝ և ոչ եթէ երիցանցն . և բազում անգամ ցուցաք , թէ որիշ է կարգ կրօնաւորութեան յաշտիճանաց եկեղեցւոյ ։ Զոր եթէ կրօնաւոր ես միայն , թերևս դրաւեալ ես ընդ օրինաւքն Պաբիմոսի , և ոչ ունիս իշխանութիւն աղօթել կամ վարդապետել , այլ լռութեամբ ընդ միտս և ընդ Զառաւած խօսել . իսկ եթէ յետ խոնարհութեանն ՚ի պատիւ աստիճանի վիճակեցար յեկեղեցի՝ լինել քահանայ կամ սարկաւագ , մեծն գիտցին եղյծ և ինքն էառ տեղի . զի որպէս զաշխարհական զգեստն ծածկեաց աբեմ կրօնաւորութեանն , որ վեհագոյն էր քան զնա , այսպէս զսահման կրօնաւորական առաքինութեանն՝ համարձակեցոյց եկեղեցական իշխանութիւնն՝ որ բարձրագոյն էր նմին ։ Այլ քանզի առաց բանն , յերկուց և յերից վկայից հաստատել առաջութեանն , կարևոր է առացելոյ պատուիրանիս և ՚ի կենդանեաց ածել վկայս , որք ամենևին բացերևապէս

փայլեցուցանէն զՀնամարտութիւնն. և վկայ ոչ զմի մարդ կամ զերկուս՝ այլ զբովանդակ ազգս ամենայն քրիստոնէից ըստ իւրաքանչիւր աեռի, որք այսու պարծանօքս առաջի աչաց մերոց պանծան։ Վարանդք յապաւիչք զիւոյ և բացագլուխք. և Հոռոմք մեծարիչք օրինացս և հնազանդք. իսկ մեր օտար՝ի նոցանէ ընթացք՝ և՝ի գրոց յայտ է, թէ մոլար է և զարտուղի. ուստի դառնալ աղաչեմք և հաշտել ընդ Քրիստոսի, զոր խոովեցուցաք ընդ մեզ յանձնի առնելոյին. և զնա ունել պատակ գլխոց մերոց որ պատուականագոյն է քան զականս պատուականս. և ոչինչ է չար՝ որ հակառակ կայ նմա, ըստ առաքելոյն. որում յերկրպագուաց ծառայիցս փառք ընդ Հօր և սուրբ Հոգւոյն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԸՆԴԻՐ ՅԱՄՐՈՑ ԵՒ ՈՉ Ի ԿՏԱՒՈՑ ԶԳԵՍՏ ՓԱՀԱՆԱՅԱԿԱՆ։

Ի հինն օրէնսն միայն չէր երբ Աստուած ընդ ծնանելի բնութիւնս խառնեալ, կտաւի հրամայեաց առնել զգեստ քահանայիցն, որ յերկրէ բոյս, և՝ի մարմնոյ կենդանեաց մաքուր՝ և ոչ յախտէ ծնեալ. իսկ յորժամ Քրիստոս սիրեաց զմեզ՝ և ընդ մեր բնութիւնս խառնեցաւ, և՝ի կուսէ ծնաւ, և զամուսնութիւն սրբեցաւ, և զախտից նիւթոց մարմինս ընդ անախտ աստուածութիւն միաւորեալ՝ գառն անուանեցաւ, առնումք այսուհետև ոչ զանչնչից տարրն նիւթ քահանայական զգեստուց, այլ և զսուտ գառանց ընչաւորաց, քահանայագործել զՀնմարիտ գառնն՝ որ բառնայ զմեղս աշխարհի։

ԽՈՒՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ ԲԱՑԱՑԱՑՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՑ ՊԱՏՄԱԲԱՐԻՆ, ԵՒ ԱՌ
ՈՒՆԱՅՆԱՑՈՒՑԻՉՍՆ ՉՆՈՑՆ՝ ԸՆԴՒՄԱՏԻՐՈՒԹԻՒՆ։

Վ[1]ԱՆԶԻ որ մինչև ցայժմ հաստատելոյ զՀնմարտութիւն բանն կարօտեալ՝ ի պէտս այնոցիկ այսր անդր Ձարակեցաւ, զիսուխ և զիսուշ որոմնացան միակին յանդաստանէ մնաց մեր առտուածային հրովն մաքրեալ, զուտ և պայծառս յօրինեաց զիմանալիս Հոգւոյս պարզութիւն, որ կարօտի այսուհետև այլ ինչ նշոյլ իմաստից՝ ի վերայ իւր արտափայլել. ըստ որում և զարծաթոյ է տեսանել զնիւթ, որ այնքան զնշոյլս արեգականն ոչ կարէ տանել՝ որչափ ազտուին է ժԺգտնեալ. իսկ յորժամ զայն լուացողական աՁառօք[2] ՚ի բաց մաքրեն, շողացուցանելով զնոյն ընդդէմ արեգականն՝ վաղվաղակի յինքն ընդունի զծագումն Ձառագայթիցն, և նովաւ գեր քան զնմութիւնն պայծառանայ. այսպէս և բանականս ՚ի մեզ մարդ ժանգահարեալ և տգեղացեալ օտարոտի վարդապետութեամբք և ստայօդ աւանդութեամբ՝ տգեղ և անմաքուր էր ՚ի բնականն ՚ի լուսափայլութենէ. իսկ այժմ զի զօրացեալ տերամբ՝ ըստ կարի զայն Ձառաւս նախագրելոյդ ՚ի տանէ լուացեալ Հանաք, և տեսանեմք զոյն բնական գեղուին պայծառացեալ, բեր այսուհետև նպատակ դիցուք զաս առաջի ծագմանն Ձառագայթի իմանալի արեգականն Հոգւոյն Ս[3]ուրբ. Թերևս ըստ յուսոյ մեր և Հաւատոյ, արձակեալ ՚ի սա զնշոյլս իմաստից՝ փայլեցուսցէ զնոյնս, Ձնձանչել իւրով պայծառութեամբն, առ ՚ի կարող լինել զառաջի եղեալ խորհրդոյս քննել զօրութիւն. և ոչ միայն լոյս լինել, այլ և լուսաւորել զայլս տացէ զօրութիւն, ըստ որում անարժան Հոգւով ժպրհեալ՝ առի զպատիւ և զիշխանութիւն՝ անձամբ անձինս կրօփանս և դատապարտութիւն։ Վերևս լեցի ինձ այ-

1 Մի օրն. Խոսքիս։ 2 Մի օրն. Օձառ։

սուիկ փոքր ինչ յերկիւղէ այսր պարտուց խուսափիլ, և զօգուտ խորհելով եղբարց՝ ի սիրոյն զմիմեանս կարգն դասել։

Ասաք ի գրոց՝ Աստուծոյ զմարդկային բնութիս իւր պատկերակից ստեղծանել։ Եւ Աստուած յորժամ ասեմ, զՀզորզութիւնն փառս բանիս յայտնեմ, որ աղբիւրն և պատճառն է եղակացոց՝ իմանալեաց և զգալեաց. նոյն որ և զայս կենդանի խառնուած և հաղորդ արար երկուցն բնութեց, յետ յանցանացն ոչ արար անտես, զի մի զրկեսցի արդարութիւն՝ ի մարմին եղելոցս թշուառութիւ. այլ ողորմեալ վտանգելոցս՝ ըստ տանելոյ՝ տղայական հասակին յիւրաքանչիւր ժամանակս վարժեաց օրինաց, խրատեաց մարգարէիւք, և փրկեաց որդուոյն ըստ յառաջադրութեն ծածուկ խորհրդոյն։ Զդէմ քանզի ծանեաք զԱստուած արդար՝ այլ և ողորմած, և մարգարէն յողորմութիւն և յիրաւունս օրհնէ զնա. և դարձեալ՝ «Ողորմութիւն և ճշմարտութիւն, ասէ, զնասցէ առաջի երեսաց քոց Աստուած, որոյ աթոռ յարդարութիւն է հաստատեալ և յիրաւունս»։ և որք քննեցին զնոյնս հարք սուրբք հոգելից՝ այսպէս ասացին, այսինքն սուգ արդարութեանս և ողորմութեանս, որ նախաշաւիղ ընթանան երեսացն Աստուծոյ, ոչ զրկիլ ի միմեանց՝ կամ զընկենուլ զիրաւունս իրեարց. որպէս. քանզի միշտ զնահատութիւնն տայ ողորմութիւնն արդարութեանն, և ինքն ոչ երբէք քան զնա յառաջ ընթանալ. իսկ ընթացեալ արդարութեանն յորժամ ինչ խորոց ընդդէմ նորա ձգեն մարդիկ փոքր և կամ մեծ անխտիր, մինչև ի հնչին իրաց կասեալ նհանգչի, և ողորմութեանն այնուհետև տայ տեղի՝ ներգործել պէսպէս և զանազան շնորհս փրկութեան։ Այլ սակայն կարօտիմ ապացուցիւ զբանս յայտնել. և զայս ոչ յարտաքնոց, այլ ի նորին ի տեառնն գործոց։

Աղաւնին մինչև ի վերջին շունչն ոչ ձգեաց խորոց սիրոյ կամ հաւատոց ընդդէմ արդարութեանն Աստուծոյ, վասն այնորիկ անընդհատ սիրէր ի վերայ նորա արդար իրաւունքն, և ածէր զնա ի պատիժ յաւիտենից զատապարտութեանն. իսկ յորժամ արտաքս եբեր յանձնիչեան կամաց զիւրքն բան, «Մնեա զնա տէր

յարքայութեան քում՝,, , այս ընդին մէտ կրսոց զու-
գեալ ընդ արդարութիւնն Յ:ստուածոյ՝ յաղթեաց նմին ,
և արձակ զողորմածիւնն՝ առնել առ նա Հանապարհ ,
և ասել . " Յ:յսոր ընդ իս եղեր ի դրախտին ,, : Ա՛վ մեծ
և անկշռելի ողորմութեանն՝ որ Թափեալ հեղաւ ի
վերայ նորա : Յ:յսպէս և այս արդար իրաւունք տիրեր
ի վերայ մարդկան , և փակեալ պահէր զողորմութիւն
փրկագործութեանն ի սոցանէ մինչև ի վախճան յա-
ւիտեանցս և ի յեռինս շունչ . իսկ յորժամ ինքեանք
անձնիշխան կամօք խնդրեցին զնա , արկելին զարդա-
րութիւնն , և արձակ զողորմութիւնն զայն զմեծն հե-
ղին . որպէս ասէ Պօղոս . " Յ:ստուած , որ մեծն է ո-
ղորմութեամբ , մինչ դեռ մեռեալն էաք ի մեղս մեր ,
կենդանիս արար զմեզ ի Ա՛րիստոս ,, : Նա խնդրեցին
որպէս . առ նոյն ինքն Պօղոս ընթացուք ուսանել .
" Հեթանոսք , ասէ , որ ոչ գիտէին զօրէնս՝ բնութիւ
զօրինացն գործեցին . նոքա ցուցին զգործս օրինացն
գրեալ ի սիրտս իւրեանց վկայութիւն մնաց իւրեանց ,,.
Թերևս ոչ վարկցուք խնդրել զ Յ:ստուած օրինացն նո
բա կատարողաց :

Կամիս ուսանել , Թէ և զ Յ:ստուած որպէս խնդրե-
ցին . Եկ զկնի նորա Ա՛րիսպագոսն աթենացւոց , և
լուր զինչ ասէ . " Յ:նք աթենացիք , զ Յ:ստուած զոր
դուք յանծանօթս պաշտէք՝ ես զնա քարոզեմ ձեզ ,,.
ապա յայտ է , Թէ խնդրեցին ամենայն իրօք մարդիկ
զ Յ:ստուած , և ապա Յ:ստուած ծանուցաւ նոցա :

Վերևս ոչ դանդաղելի է ի պէտս ասացելոցս հաս-
տատութեան ի մէջ առնուլ զաւակ անաւակ որդւոյն
ի փրկչէն ասացեալ . որ զինչ այլ յայտ առնէ , քան
զուշ ունել մարդկան աստուածգիտութեանն . քանզի
անագան ուրեմն ասէ եկին ի միտս իւր և ասէ . " Դա-
լուցեալ գնացից առ Հայր իմ ,, . և որ էր այս խոկումն ,
եթէ ոչ ընտրել ի մէջ պաճարամիտ հեթանոսաց ա-
նանցն խնաստասիրաց՝ այնոցիկ՝ որք դատեալ զնու-
թիւնս , ծանեան զէութիւն սորա բարւոյ՝ որոշեցին բա-
ցատրապէս քննութեամբ , և զարտաքուստ արկեալ ի
սա սերմանս չարին Հակառակ քնութեանս , կարգեցին
Թագաւորս , պրեցին օրէնս քաղաքականս , պատժեցին
զսպանութիւն , դատեցին զյափշտակութիւնս , պա-

տուեցին զողջախոհութիւն, գովեցին զխաղաղութիւն, հաստատեցին զմիաբանութիւն. և արդարև եկին ի միտս իւրեանց՝ խոկացեալ զՀայրենի տանն պայծառութիւն, [1]յև զընթացսն գիտեաս գիտել, զի ասէ. "[1]Ե յարուցեալ եկին առ Հայրն ,,. զոր շաւիղ թողին նոքա, զորս ոչ յաղագս գիտելոց զ[1]յառաւած կոխեցին, [1]յն յոյն և խուզողական՝ վարանումն արար զնոսին երկրաչափս, երաժիշտս և համարողս. նոյն որ կայր ի բնութիւնն՝ Հայրենի տանն փափաք՝ վերացոյց զնոսա ի ներքնջանականացն տեղեկութիւն: [1]յդ ի Հանապարհ առնելն մարդկային մարմնոյ առ [1]յառաւած՝ մինչև ցոր վայր կարէ ընթանալ. բայց թէ յոր նոքա ձկտեցան, յօդդ եղին և զնութիւնս տարերց քննեցին, զիրս աստեղաց քանակեցին, և զընթացս լուսաւորացդ ծանեան. և տեսեալ Հայրն ողորմած ի Հեռուստ, այսինքն յանհասն վայրէ և ի հողմային թևոցն թեթևութենէ, զի որդին վարաներ ի գիտութիւն Հայրենեացն Հանապարհի, շրջեր ի մէջ լուսաբերսյ՝ և աստեղացն պարուց, և զՀայրն բոլորեցուսյ արարչութեամբ և իմաստիք ոչ գտանէր. քանզի զիարդ [1]յառաւած ի մարդոյ Հասանի. իսկ սա բազմախոյզ լինելովն ի Հասանելոյ ոչ յուսահատեր. վասն այսորիկ Հայրն յարուցեալ եկն ընդ առաջ նորա, գու, ասէ, և ևս առաւելապէս աշխատելով առ իս ոչ կարես Հասանել միանգամ որոշեալդ. ես զամ ընդառաջ սիրեցեալ որդւոյդ. մինչև ցայն թաքուցանէի զսէրն, մինչ ոչ իմացեիրն, իսկ այժմ և զպարանոցդ Համբուրեմ, այսինքն զէութիւնս իմ ընդ քոյդ խառնեմ: [1]յև ծառայիցն հրամայէր զպատմուճանն առաջին Հանել և սմա զգեցուցանել. և զինչ այլ էր մեր առաջին պատմուճան, բայց եթէ Հոգին զոր փչեաց [1]յառաւած ի մարդն առաջին. և նա զրկեալ ի նմանէ զմահկանացուն փոխանակ այնորիկ ընկալաւ, այժմ հրամայէ պաշտօնեայ Հոգւոյ հրեշտակաց զուսափայլութիւն Հոգւոյն որ լինէին առ ձեզ միջնորդութեամբ միմեանց զանազանապէս իջանել, և առ դա ածեալ բան իւրում՝ տանելոյն զգեցուցիչ, և միոյ Հոգւոյ Հաղորդեալ՝ այսու Հետև խառնուրդ ընդ միմեանս

1 Մի օրին. Խոշորաբան.

արարէք. և զայն եղիր որ պարարեցաւ խաչիւն, զերա-
ցաւ չարչարանաւքն, աճէք և օր ըստ օրէ ի պէտս ու-
րախութեան և ցնծութեան դորա բաշխեցէք։

Ի՞նչ են պատուով և իշխանական անուամբ հրեշտակք և քահանայք, որպէս կոչեաց մարգարէն. որք զայս պաշտօն գործոյ ի պէտս ուրախութեան եկեղեցւոյ հե-
թանոսաց՝ գործակցութեամբ միմեանց հրաման առին միշտ կատարել. և տես զի ոչ սահմանէ ղեկնուին, այլ թէ զենէք, և միշտ անքանակ. յայսմ յաւիտենից նուաւս ուրախ լիցուք, դուք ի զենելն ուրախացեալք, որդիդ՝ որ է հաւատացեալ եկեղեցիդ՝ յառնէն և ի սրբիլն, ես յրնդունելն և ի հաձելն, և եղիցն ի միշտ պատարագելն։ Այս հնոյ անզուգական պարգեւաց՝ առաւ Աստուծոյ ազգի մարդկութեանս, զորոյ իմաս-
տիցն քաղցրութիւն խուն մի ձաշակեալ բանս զնայլե-
ցաւ։ Այլ թէ որո՞յ աղագաւ ոչ բաւական համարե-
ցաւ որդւոյն հնոյ՝ զպարանոցին համբուրելն և զպատ-
մուձանին զգեցուցանելն, այլ և զորդին միածին ետ միշտ ի խրախութիւն, համառօտիւ ասել բանս յօժարի։

Արդեայն բնութիւնս մարմին գոլով՝ անմարմին ունի թշնամի և չարախօս բազմամեքենայ, և ամենա-
չար մախանաւքն միշտ ընդդէմ սորա զինեալ, և պատրա-
նաւքն զաս ոչ եթէ վայրապար խարդաւանէ, այլ որպէս զի միշտ առ Աստուած չարախօսեսցէ. ըստ այնմ. ... Անգղի նստան իշխանք և չարախօսէին զինէն առ քեզ տէր, սակայն ծառայ քո խորհէր յիրաւունս քո ... և Ա՛զ զի չէզև ուժք կար ի նորա մեքենայիցն զգուշա-
նալ կամ զերծանել, այլ Թագաւորեաց մահն հոգւոյ ի վերայ ամենեցուն, և Աստուած տրտմէր, զի ստեղ-
ծեալ ի նմանէ բարի բնութիւնս, ակամայ կամաք և խաբէութեամբ չարագործի՝ չարեաց կցորդէր, և առ նա հայել ոչ զօրէր, ողորմեցաւ սմա արդարապէս. քանզի թէ տիրապէս յանցանէին և սկիզբն մեղացն և բաղձանքն ի սմանէ էր՝ անարժան էր ողորմութեան որպէս կամակոր բանաարկուն. ապա թէ ընդ խաբս մո-
լորէր, և զարն տգիտութեամբ որպէս զբարի կարծէր, պարտ էր զի յարարչէն ածցի ի գիտութիւն ձշմարտու-
թեան, և ի չարախօսին մեծաբանելոյ զերծցի, որ զիւրն նեղդործութիւն սոյա առաջի իրաւանցն Աստու-

ծոյ գնէը. յորմէ Թուի Թէ ձանձրացեալ մարգարէն՝ ասէը. "Ի նանիր Թագուցին ինձ որոգայթ, ՚ի նանիր նախատեցին զանձն իմ, և յարեան ՚ի վերայ իմ վկայք չարեաց։ Ի.րդ դու տէր զերծո զիս ՚ի խորամանկու-Թենէ նոցա, և յառիծուց զմիամօրուԹիւն իմ. և զարԹիր և հայեաց տէր յիրաւունս իմ, Ի.ստուած իմ և տէր իմ ՚ի դատաստանս իմ, և իրաւ արա ինձ ըստ արդարուԹեան քում.,։ Յայսպիսի զգուանս գոլով ՚ի նոցանէ մարգկուԹիւնս՝ ՚ի ձեռն հայեցողաց աչաց մարգարէին Թախանձէը զԻ.ստուած. իակ նա զարԹուցեալ ՚ի քնոյն՝ յաղաչանս նորա հայեցաւ յիրաւունս, ոչ բացատրապէս, այլ բնաւորականն փորձիւ. զի անբատզիւտ արդարուԹեամբ լինի զոր պահանջեաց փրկուԹիւն. և առաքեաց զընուԹենակից որդին խառնել ընդ բնուԹիւնս, զորոյ վկայքն չարեաց ՚ի նանիր չաբախօսէին. որ եկեալ՝ զհաւատացեալ նմա գործ ՚ի Ֆօրէ առնել և կատարել, խառնեցաւ ընդ հողեղէնս բնուԹիւն անչփոԹ միուԹեամբ, կրեաց զամենայն կիրս սորա ՁչմարտուԹեամբ. և անհաս ունելով բանսարկուին զէուԹիւն աստուածուԹեանն՝ տայր Թոյլ մարմնոյն ներգործել զիւրն բնական կիրս. իակ նա՝ Թըշնամին, ըստ չար սովորուԹեանն մերձենայր և ընդ սորա անմեղ կիրս՝ զներգործուԹիւն ԹիւնիցՀն խառնել. և պարտեալ յետս ընԹացրէը. քանզի էր լոյն և ՚ի խաւար աշխարհի լուսաւոր. և զիարդ խաւար նմին հասանէը։ Ի.յր ԹէպէտՀ նա չարն տգիտացեալ ընդ լոյն՝ որպէս ընդ խաւար հարկանէը, միշտ զամՀԹի հարեալ կործանէը. և որդին Ի.ստուծոյ մարմնացեալ և զկիրս մարմնոյ կրեալ՝ արդար առաջի Ֆօրն նուաւս երևէը, Ծանեաւ և զմեքենայս չարին դատաստանաւ անձին իւրոյ, և իրաւ արար մեզ ըստ արդարուԹեան իւրոյ, Ի.ւ իրաւունքն զինչ. բայց Թէ անմեղն և կենդանին փոխանակ մեր մեռաւ, և զմեզ ՚ի մեղաց և ՚ի մահուանէ յանմեղուԹիւն և ՚ի կեանս վերադրեաց, և զմեռեալս ընդ հինն Ի.զամայ՝ նորոգեաց նորն Ի.զամ. ըստ որում գրեաց Պօղոս. "Արդէն միոյն յանցանաւք յամենայն մարդիկ դատապարտուԹիւն, այսպէս և միոյն արդարուԹեամբ յամենայն մարդիկ արդարուԹիւն կենաց,,. և "Ո՛ւ Թէ միոյն յանցանաւք՝ մեռաւորք բազումք

եղեն, պարտ և արժան էր՝ զի և միոյն արդարութիւ արդարք բազումք եղիցին,,. որ և եղև իսկ. քանզի առնելոյ որք՝ ի Քրիստոս մկրտեցան՝ արդարացան, և ընկալան զՔրիստոս զգեցան, և յորդիգրութիւն Աստուծոյ հաւատով և յուսոյն գրեցան։ Այլ զի չև ևս է յայտ որդիութիւնն, որպէս գրեացն Յովհաննէս. "Սիրելիք, այժմ որդիք Աստուծոյ եմք, բայց դեռ չև ևս է յայտ, թէ զինչ լինելոց եմք. Թէպէտ և հաւատով գիտեմք՝ եթէ նման նմա լինելոց եմք,,. այլ այսօր պարտիմք այնպէս լինել, որպէս և նա եկաց յաշխարհի, զի ի մէջ կարճաց շրջիմք ի վայրս պանդխտութեան, ըստ որում ասաց Աստուած առ Ազեկիէլ։ Աչ պանդխտեան յայլ աշխարհ ակն ունի ուրախութեան, և ոչ եթէ յայն՝ ուր բնի ածաւ. այլ աստ իրաւացի է՝ ի հետս ընթացից չարչարանաց նորա կոխել, և անդ ընդ նմա փառաւորիլ։

Աչ զի այս կայր մեզ առաջի չաւիղ յաւիտենական կենացն, եառեալ նա՝ տէրն մեր Յանապարհն և Ճշմարտութիւնն, որով ձգեցաք առ Հայրն, բազմադիմի զնեաս մուխս չարին ի վերայ Յանապարհի կենցաղոյս տեղատարափ խաղացեալ. ծանեաւ փորձիւ, և փորձելոցս օգնական եղև աղօրմածն և հաւատարիմ քահանայապետն. զի միայն իւր կարելի եղև զանմարմին Թշնամւոյն ներգործութիւնն խայտառակել, և գերազանց նմին գտանել. իսկ մեր զգալի մարմնոյս պէտս էր կարելի ընդ աչխարհակալիս անմարմին իշխանութիւն և պետութիւնն առանց իւր օժանդակութեանն պատերազմել. վասն այսորիկ օգնական եղև տկարացս՝ իւր սուրբ մարմնովն և արեամբն, զի մի չարախօսն ի վերայ մեր մեծաբանեսցէ և վայ վայ աղաղակեսցէ։ Աչ օգնութիւնն պէտս. բայց եթէ միշտ ի մէջ մեր մեռանելովն։ Աչ միշտ՝ ասելով, ոչ եթէ զնա նորոգապէս կարծեմք մեռանել, "Ար մի անգամ՝ ի վախճան յաւիտեանցս, որպէս ասէ առաքեալ, իւրով պատարագաւն յայտնեցաւ,,. այլ զինչ, խորհրդածութիւն է բանս. և զայս ո՞ այլ ուսուցանէ մեզ, եթէ ոչ հաղարապետն խորհրդոյն Աստուծոյ։ Քրիստոս էառ մարմին և զկիրս նորա Ճշմարիտ, և յաւուրս մարմնաւորութեանն՝ որպէս ասէ Պօղոս. "Աղօթս և պաղատանս առ Հայր մատու-

ցանէր, որ կարէր զնա ապրեցուցանել... ոչ թէ զի կա-
բօտ էր, որ որդի նորա էր և Յ[ստուած, այլ զի զմար-
մինն՝ ընդ ացս Ձանապարհի ուսուցէ մեզ։ Ա[յս յոր-
ժամ կատեցաւ և նա ինքն անմեղ մեռաւ, "Ա[յզև ամե-
նայն հնազանդելոց իւրոց, ասէ, պատճառ փրկութեան
յաւիտենից.." ։ Ա[յ հնազանդելոց, և ոչ եթէ միոյ ժա-
մանակի մարդկան, այլ ամենեցուն որք յիւրաքանչիւր
ժամանակս հաւատան 'ի նա՝ կայ բարեխօս յաստուա-
ծակոյս կողմ անդ[1], և բարեխօսէ ոչ թէ յամենայն
ժամ՝ այլ յորժամ մեք խնդրեմք։ Ա[յս մեր տկար գո-
լով՝ անկարի է անապաօր միշտ պահել զմահու նորա յի-
շատակ, որ առ Յ[ստուած անապաօր է. վասն այսորիկ
ուսոյց զմեզ, թէ առաջի ամենատես գիտութեան Ի[օր
իմոյ՝ իմ արիւնս և մահս անծերանալի և անչնանալի
քահանայապետ և բարեխօս է ձեր. և ես չարչարակից
և վշտակից ամենեցուն ձեր՝ ընդ աջմէ նորա նստեալ,
և ոչ կասիմ կամ ձանձրանամ 'ի նմանէ. նաև ոչ եթէ
'ի մի ժամանակն առաւել բարեխօսեմ կամ 'ի միւսն
նուազ, այլ ինչպէս իմ մահուն շնորհն անպոծ՝ և բարե-
խօսելն և Ի[օրն իմոյ ողորմելն, յորժամ դուք մոռա-
նայեալ՝ ոչ խնդրիցէք զնոյն. և մարմնաւոր գոլով՝ գիտեմ
զի մոռանայք, վասն այսորիկ առէք զհացս զայս, այս
է մարմին իմ. զայս միշտ արարէք մահուն իմոյ 'ի միտս
ձեր վերստին յիշողութիւն առաջի Ի[օր. և այս բա-
ժակս է արիւն իմ նորոյ ուխտի. և որպէս նոր ուխտ,
այսինքն հաշտութեան, միշտ ընդ ձեզ և ընդ Յ[ս-
տուած միջնորդ և առհաւատչեայ, որպէս զի դուք յու-
տելն և յըմպելն զսա՝ զմահ իմ՝ որով զՅ[ստուած հաշ-
տեցուցի ընդ ձեզ, անձնիշխան կամաց յօժարութեամբ
առաջի նորա պատմիցէք. և յորժամ դնիցէք զհացս և
զգինիս՝ որ է մարմին իմ և արիւն, և զմահն պատմի-
ցէք առաջի Ի[օրն, զի՞նչ լինիցի. ձեր յիշողութեամբդ
և նա զմեռաւ ածէ զանմոռացն յինքեանէ զյիշատակ մա-
հուն, և առաքէ զաստուածեղէնն զօրութիւն ներգոր-
ծութեան Ի[ոգւոյն. և զարիւնն և զմարմինն՝ զոր տայք
դուք նմին, հոգիացուցեալ՝ Յ[ստուած կատարէ, առ որ
վերընծեցեալդ աստուածեղէնն զօրութեամբն մաքրէ,

1 Մի օրին. յաստուածութեան խոմանէ.

և սրբեալ կենդանացուցանէ . ըստ այմմ . " Եր ոչ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, ոչ ունի կեանս յան- ձին . իսկ որ ուտէ՝ և ըմպէ , նա յիս բնակեսցէ և ես ՚ի նմա ,, . քանզի ես կենդանի եմ վասն Հօր , և որ ուտէ զիս՝ և նա կեցցէ վասն իմ. այսինքն , ես կեն- դանի եմ վասն աստուածախառն մարմնոյս . իսկ որ հաղորդի ինձ , ՚ի վերայ նորա իմն մահու ընդհն սիրէ , ըստ որում գրեաց աւետարանիչն . " Քրիստն Յիսուս սրբեսցէ զմեզ յամենայն մեղաց ,, :

Եւ դդ՝ որպէս ունի խորհրդական աւանդութիւնս մեր, ոչ է պատարագս Քրիստոսի՝ նորին որ է իսկական էութեան նորա մահ . այլ զի նա մի անգամ մեռաւ , և իւրով արեամբն եմուտ ՚ի սրբութիւն սրբութեանցն ՚ի նեղքին կողին վարագուրին , զօրացաւ այն մի մահն զյաւիտենից փրկութիւն գտանել մարդկան , որպէս ասաց Պօղոս :

Եւ փրկութիւնն որպէս . զի միշտ գնելով զսա՝ որ- պէս ասացաւ , առաջի Աստուծոյ մահուն նորա յիշա- տակ և պատմաբանութիւն , աղօթիւքն իջուցանէ ՚ի վերայ նուիրացն զՀոգին . և եղեալ հացն՝ Աստուծոյ մարմին , սրբէ զնիւթ մտաց մերձեցելոցս ՚ի մեռելոտի գործոց անտի :

Եւ զու տես զնշդրտութիւն խմաստիցս ՚ի Պօղոսէ ասացեալ . " Քրիստն Քրիստոսի , ասէ , որ ՚ի ձեռն Հո- գւոյն յաւիտենականի ,, . այսինքն թէ յայսմ յաւի- տեանս Հոգւոյն Հնոր որ տուաւ մեզ վերակացու , կա- տարէ զսոյնս Քրիստոս և արիւն Քրիստոսի . և առնէ զանարատս պատարագ՝ իւղՀի մտաց մերոց անդէղայ : Եվ մեծ և անբաւս Հնորհաց , առ որ տկարանայ բան ի- մաստիցս ձգտել , և ՚ի գոհութիւնն երկրպագութեամբ լինի ապաստան . քանզի որպէս ասացաւ , գնելով զսուրբ նշանական ՚ի վերայ աստուածընկալ սեղանոյն և յիշա- տակաւ մահու տեառն զկամն Հօրն Թախանձեալ՝ կա- տարեալ Աստուած և մարմին Աստուծոյ ընդունիմք Հնոյնն Հոգւովն՝ միջնորդ խաղաղութեան յերկինս և յերկրի : Եանզի աստուածութեամբն երկնաւոր՝ և մարմնովն երկրաւոր , յարտիսաւնիմք անդամքս մար- մնոյն ընդ գլխին մեր և Աստուած ընդ Քրիստոս . և ապա որպէս անբան ոչխարացն արիւնն բոլոր Հնոյ ու-

սին փոխանակ մատուցանողացն հեղոյր և զնոսա ըստ մարմնոցն սրբէր , այսպէս և բանաւոր գառինս սրիւն մատուցեալ և հեղեալ փոխանակ մեր , ոչ միայն զմարմին , այլ և զհոգիդ մեռաց պատարագողացս մաքրէ , և զմերձեցելոցն սրբէ , և յեկեղեցիս Աստուած յամենասին եղեալ՝ զամենասին կատարէ , և զտարաիսօս Թշնամին ամօթով ընթացուցանէ . զի եթէ յիւր որդին ոչ խնայէ Աստուած՝ որ զմեզ արդարացուցանէ , զիա՞րդ ոչ նուաստ հանդերձ զամենայն ինչ մարդկայինս բնութեան շնորհեսցէ ։

Այսց տես և այլ խորհրդոյ զօրութիւն յառաջիկայ շնորհիս քննութիւն . քանզի ասաց առաքեալ , "Որ մեռանին՝ արդարացեալ է ի մեղաց , զի զպատիժ պարտուցն հատոյց ,, . և մեք զի միշտ մեզանչականք ըստ տկար բնութեանս՝ հարկ է և միշտ մեռանել . եդ Տիւնն քաջ զանձն իւր ի վերայ Խօտիս , և փոխանակ մեր մեռանի հանապազ . քանզի ըստ որում ասացաւ՝ և դեռ ևս մեռանի . զի որքան այս օր՝ յաւիտենից այսորիկ առաջի կայ , և մարդիկ նորոգ յաշխարհ ծնանին , մահ նորա չէ կատարեալ , քանզի գլուխ է մեր , և մեք անդամք նորա ի մարմնոյ նորա և յոսկերաց նորա որ է եկեղեցի ։ Այդ որքան անդամոց մահ չէ սահմանեալ , և ոչ գլխոյն . և որքան կարօտիմք մեք ըստ մեզացն մեռանել և արդարանալ ի նմանէ , նա և դեռ ևս փոխանակ մեր դնէ զանձն ի մահ առաջի Հօր ի վերայ սրբոյ սեղանոյն , և մեք կցորդ լինիմք մահուն՝ հաղորդութեն խառնմամբ . և մեռեալ՝ զօրութեամբ կամացն՝ արդարանամք ի մեռելոտի գործոցն՝ որով խիղճ մատցս չարչարի ։

Այլ զի նուրբ է խորհրդոյս զօրութիւն , Թերևս կարասցուք յարացուցիւ զսոյն ստուգել ։ Օ որ օրինակ արեգակնդ որ յերկինս՝ յառաջին արարչութեանն ստեղծաւ , բայց միշտ նոյն է լուսաւորիչ , և ոչ ոք ասէ ի վերջին ժամանակս աղօտացեալ զլոյսն Հառաջայթիցն կամ նուազեալ . բայց հայեցողքս և ընդունողքս լուսոյն ոչ եմք նոյն , որք ի մարմին աչաց զնոյն պարսիակեմք . և ոչ ոք ասէ , այլ արեգակն յերեկեանն յայս օրս որիշ է , այլ ուխք ընթացից ժամանակիս են այլ և այլ , և ոչ նա՝ որով նորա սահմանին . այսպէս

ինձ իմա և զնահն Աբրիատոսի. իմանալի արեգակն և լուսաւորիչ մարդկային բնութեանս եղեալ յիւրում ժամանակին, բայց[1] ոչ եթէ յայնժամ էղև և այսօր աղօտացաւ զօրութիւն նորա. այլ զոր օրինակ արեգակն անաղօտ է առ վերջինս որպէս յառաջինսն, այսպէս և մահն Աբրիատոսի անաղօտ կենդանացուցիչ և լուսաւորիչ է միշտ ծնելոց յաշխարհի՝ ըստ որում առաջնոցն, և ոչ հնացաւ. Թէպէտ և այլ և այլ են իւրաքանչիւր ժամանակի մարդիկ որ ի նմանէ վայելեն, սակայն նա նոյն է և անաղօտ կեանք և կենդանարար. և զոր օրինակ նա ծածկի ընդ երկրաւ, և դարձեալ նոյն լոյս ծագէ օր ըստ օրէ, և զխաւարն հատանէ, և զհայեցողսն լուսաւորէ, այսպէս և սա ծածկի յիմանալի աչաց մերոց, մինչ չև է բաշխեալ. իսկ յորժամ պատարագի, նոյն Աբրիատոսն՝ որ երէկ և այսօր, նոյն և յաւիտեանս զիմանալի աչս հոգւոց հաւատով հայեցողացն և մերձեցելոցն լուսաւորէ, և զխաւար մեղացն ի նոցանէ փարատէ։

Այսքան յարմարութիւն ասպացուցիս զօրեաց. իսկ ի սա հասանէ միայն հաւատ և տուփուն, և ոչ եթէ յօդուած բանի կամ օրինակաց. զի «Հոգի է, ասէ, Աստուած ...». մերձենան ի նա հոգիացեալքն՝ և ոչ պիտառութիւնք[2] զգալեացս հայելեաց. այլ զի Թանձրացաք մնօք՝ և ի զբաղմանց աշխարհիս Թակարդեալ, հարկաւորիմք երևելեօք զաներևոյթսն խնաստասիրել։ Արդ այս երևելի արեգականս լոյս առաջի կայ՝ ի վայելումն պայծառ աչաց՝ որք կարեն զլոյս նորա սրբապէս տանել. իսկ եթէ ումեք ախտացեալ է հայեցողութիւնն, պատրուակաւ և աղօտաբար զլոյսն ձգէ, զի մի յառաւելութենէ լուսոյն վշտասցի։ Այս դարձեալ՝ և ոչ որ ի խաւար արգանդի մօրն գոլով նմին տեսող կարող է լինել, մինչև պատշաճ ժամանակաւ ծնցի. այսպէս տարացոյց տայ մեզ սուրբն Աթանեսիոս, զերախայն կարծել յարգանդ մօրս եկեղեցւոյ, դեռ ևս ի ստեղծուածն և ի կենդանութիւն հաւատոյ և տկար և անզգայ եղով ի տղայութեան. վասն այսորիկ անօգուտ է՝ մինչ չև վերատին ծննդեամբն ածեալ եմք զնոսին ի

1 Մի օրին. պէտ է բայց։ 2 Մի օրին. ի իւրաքանչիւր պէտ է։

լոյս՝ յիմանալի արեգակին հայել. որպէս և մանուկն, Թէ յանդաստանս՝ ժամանակին ծնողի՝ ոչ կենդանի, այլ վիժած անուանի. զորոց զօգուտն խորհելով սարկաւագն՝ 'ի խորհրդականին ժամու հրամայէ նոցա զարտաքս գնալն. նոյնպէս և այնոցիկ որք զաչս մտացն ախտիւ մեղացն հիւանդացուցին, և անզեղջ կամօք 'ի նոյն հեշտացան, անմնարիմ է ախտաւոր մտօք յանախատ լոյսս հայել. որոց բարեկարգութիւն եկեղեցւոյս քող արկանէ զանկըճռետութիւնն, զի մի յառաւելութենէ լուսոյն յաղթահարեալ՝ և նա խաւարեսցի. ապա Թէ որ մաքուր ունի զհայեցուածսն, և հեղգ և դանդաղ մտօք 'ի նմանէ վերջանայ, ինքն կամաւ ձգէ զանձն 'ի խորխորատ խաւարի, և զրկէ 'ի լուսոյս քաղցրութենէ. և նիւթ ունի դանդաղութեանն զանհաւատութիւն, Թէպետ և անզգայեալ ոչ ձանձէ. զի Թէ հաւատայր զսոյն լոյս գերազանց գոլ քան զգալիս, որպէս և է տիրապէս, երբ ողջոյն հրաժարման տայր սակս և արտաքս կամաւ գնայր 'ի տաճարէս ընդ այնոսիկ որք ելինն ակամայ. բայց զի ոչ հաւատայ և տգէտ է խորհրդոյս զօրութեան, ահա այսուիկ յայտ է։ Այլ ոչք են սոքա, եթէ ոչ նուիրիչք խորհրդոյս, քահանայք որք այսօր պատարագեն, և վաղիւն 'ի կարգ երախայիցն զանձինս դասեն. և երանի Թէ յայնժամ միայն, յորժամ զհրամանն միայն առնուին նոքա յելանել. այլ և բնաւ իսկ ոչ մտանեն յեկեղեցիս այսօր, որք յերկիւղ յիշխանական յանձոյն էին բազմեալ 'ի բարձրութեան բեմին։ Այլ Թէ ուստի գտին զայսքան խուսափելս 'ի սմանէ, 'ի զրոց ոչ կարեն ցուցանել. զի գիրք ըստ որում բազում անգամ ցուցաք, ոչ միշտ արգելու զեկեղեցիս անարժանին՝ ըստ Թիւրն կարծեաց, այլ ունելով զնոսա 'ի նեբա՝ միայն 'ի խորհրդականին ժամու արտաքս առաքէ։

Օ զինչ ասասցուք և զայնցանէ, որք ոչ միայն յեկեղեցւոյս, այլ և 'ի հաղորդութենէ խորհրդոյս զամ մի ողջոյն և զևս բազումն հրաժարեն. ոչ միայն որք ընդ կեանս աշխարհիս շաղախին[1], այլ և նոքին՝ որք զձև մեռելութեան Քրիստոսի զգեցողք՝ կրօնաւորք և քահանայք։ Այլ ողջոյ արժանի այս, զի յանցանելով ոչ

[1] Մի օրին. պ-ռ-ղ-ի։

որպէս զյանցաւորս ամաչեմք, այլ և պանծամք և պարծիմք ՚ի հրաժարելն։ Զայն զի մեծ և աստուածեղէն է այս խորհուրդս ։և ես ոչ կարեմ սմին պատրաստել։ Զվ մարդ՝ և դու գիտես տիրապէս զՅաւուծոյ մեծութիւնն, եթէ ինքն Յաւուած։ Զբդ ինքն կոչեաց զքեզ կոյրդ իւրոց խորհրդոցն, և դու կամաւ հրաժարիս։ ոչ և զառ Զոմանս սասան լուար, և այն զի երկիւղած էր այրն. և մերս բազում անգամ ոչ երկիւղն, այլ հեղգութիւնն և անհաւատութիւնն՝ այսորիկ բարբառոյ արմատ, որպէս գիտեմք իւրաքանչիւր ոք՝ ՚ի խիղճ մտաց անտեսաւ եղեալ գատաւոր։ Զակայն պարտ է ապա զուղիղն խոստովանել. ոչ եթէ բարիոք երկեղն հրաժարեցուցանէ, այլ զի յոյսն և հաւատն և սէրն որ առ Զքրիստոս՝ գնաց յամենեցուն մեր մտաց. և ոչ առնենին հոգամք խուզել և քննել զանօրէնութիւնն նորա մատակարարութիւն, թէ ոյր աղագաւ եղև առ մարդիկ. այլ պարզամիտք, անյոյսք և անխնամոտք, որպէս ՚ի չար գործան, նոյնպէս և ՚ի բարին։ Զայլ ազգք թէպէտ և յանցանեն, զկայծակն յուսոյ և հաւատոցն՝ որպէս կարծեմ, ոչ չիջուցանեն։ Զայց մեք ՚ի ծառայական երկիւղ և ՚ի խոտորնակ կարծիս վարանեցաք՝ միայն. ոչ բնաւ կամեցեալ զակն ոգւոց ՚ի սոցանէ բարձրացուցանել, այլ զարիւնն ԶՅիսուսի, որով վկայքն աղաղակեն, թէ "Զրբէ զմեզ յամենայն մեղաց.," և ինքն ձայնէ, թէ "Զր ոչն ուտէ զիս, ոչ ունի կեանս յանձին. և յիս բնակէ՝ որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ.," մեռեալ մնաք՝ ՚ի մեռելոցն պէտս միայն կատարեմք, և ընդ նոսին Թաղեմք զկեանքն, որք ոչ ուտել զնա կարեն և ոչ ըմպել. իսկ զանձինս գաւտարիկ և անշահ ՚ի չնորհէն վարկանիմք։ Զվ ողոց արժանի կարծեացս, ով սոգոմայական գինւոյս արբեցութեան, որով այսչափ ժամանակս Թմբրեցաք։ Զկ Զասայիաս և ծանո մեզ զախտիս այսորիկ չարիս։ Զսկ Զասայի. "Զվ է խուն, եթէ ոչ ժողովուրդն իմ. և ով է կոյրն, եթէ ոչ որ ստիրեն նոցա.,։ Զդար և Զնմարտապէս. քանզի ուսուցիչքս կուրացաք տեսանել զՁնմարտութիւնն, և որք ուսանել կարօտին՝ զսկանջս իւրեւ խժի և քարբի

1 Մի օրին . ա՞ր՞ն՞ց՞։

առ նոյն իսկին ։ Ա այ մեզ զի վազեցաք զ՚ստուածով, որպէս ասաց ուրեմն Աւետ . և եղուկ զի անպարտեցաք ՚ի վրկիչն , և բամբասեցաք զնա սուտ . զի զոր նա մեզ կենաց գրաւական ետ , իբրև զոչինչ պիտանացու ՚ի մեռեալս ձգեցաք , իբր թէ չես կենդանեացս օգուտ , Հաւասիկ Հմարիտ բամբասանք ՚ստուծոյ սուտ . առ որ ասէ սոյն մարգարէ . “ Ա ման այսորիկ Հնձեցի զմարգարէսն ձեր , և կոտորեցի ՚զնոսա բանիւ բերանոց իմոյ , զի իրաւունք քո իբրև զլոյս ծագեցան , և դու զայս քո կատուցեր . ասէ , անցեր զուխտիս իմով և յօրէնս իմ ամբարշտեցար , և եղեր իբրև զաղաւնի մի միամիտ սրտաթափ , որոյ ոչ իցէ սիրտ . Թագուցին քահանայք զՀանապարհս գիտութեան . վասն այսորիկ ասէ եղև ժողովուրդ իմ իբրև զքահանայ Հակառակող , Հայց դու քահանայ , զի մերժեցեր զգիտութիւն՝ մերժեցից և ես զքեզ , զի մի քահանայասցիս ինձ . և զի մոռացար զօրէնս ՚ստուծոյ քո , մոռացայց և ես զորդիս քո . զմեզս ժողովրդեան իմոյ կերար , և ոչ ուսուցեր . վասն այսորիկ և անօրէնութիւնք նոցա սիրեն ՚ի վերայ քո . և եղիցիս քահանայդ իբրև զժողովուրդն յիմարեալ ,, ։ Սա ախտի մերում չարի՝ ընկալաք ՚ի քէն, աստուածայինն մարգարէ, դյանդիմանութիւն . վասն այսորիկ և զամենի հարեալ՝ կատուցեալ զչարութիւնս՝ ոչ կարեմք խօսել ։ Հկեցէք և այլ ոք ՚ի Համապատիս քոյ մարգարէիցն՝ սատել և նոցա յիմարութեան ։ Խօսի և աստուածայինն Աղաքիաս զայս ինչ առ ժողովուրդն . “ Հցէ Թէ խաբիցէ մարդ զ՚ստուած , զի դուք խաբեցիք զիս . և ասիցէք , ի՞ խաբեցաք զքեզ . զի տասանորդք և պտուղք առ ձեզ են , և չարկանելով չարկանէք , և խաբէք զիս . և տարին կատարեցաւ , և զարդիւնս ամենայն ՚ի շտեմարանս ձեր ժողովէք ։ Հդդ դարձարուք այդուիկ , ասէ տէր ամենակալ ,, . աՀաւասիկ որ ունիցի ականջս լսելոց լսիցէ . զի իւր Համարի ՚ստուած զխաբէութիւն անպաղութեան ժողովրդոյդ , յայտ է Թէ զպտուղն . իսկ դուք զրժեցիք Հմարտութեանն . զտանն՝ մեզ Համարիք , և զիմիտն ուժգութեամբ պահանջիք . և կամ առնևին զձեռս ՚ի պղտաբեր լինելոց ՚ստուծոյ կորացուցանիք . զրկք ՚ի վերայ մեր զՀնչին պատարագն՝ զոր

տայք Աստուծոյ, որք տառանորդելոյն էք պարտական, Հնհատատութեամբ խարխափէք. զԱրիստոս առանց հաւատոց ոսկուվ, հայն կամիք գնել. ոչ գիտէք, թէ նա սիրով գնի, և ոչ արծաթով. սիրոյն լեցի պատուղ պատարագդ. ապա թէ ոչ՝ ոչ ինչ օգտիս ի ջամբէդն գինեցագ աղքատաց. ապա թէ սէր ունիս, և նուաւա շարժեցար օժտաբեր լինել Աստուծոյ, հանարս տուրևառից՝ ի սիրելոյն ոյր աղագաւ պահանջես. միթէ ոչ գիտես զնա հարուստ, միթէ տկարանայ առ փոխարկնն. արդեօք տկարացաւ զծածուկս սրտի քո գիտել, և յինէն կարօտանայ ուսանել, թէ այն անուն զայս ինչ ետ քեզ ի ձեռն իմ: Վասն մտաց այս կարծիք. զամենատես գիտութիւնն Աստուծոյ տկարացուցանել:

Ա.յլ աղօթից առես կարօտել. բարւոք. և հանար իմոյն աղօթից ոյր աղագաւ խնդրես. ոչ գիտես՝ թէ հարկաւորապէս յայս գործ որոշեցայ՝ միշտ անդադար առ Աստուած վասն քո խօսել՝ ի գիշերի և ի տուընջեան կանխելս առաջի նորա՝ քո է բարեխօսութիւն. ընդէր ոչ ամաչես այսքան աշխատութեանս զփոքրդ փոխարկն ի հանար արկանել: Ապա թէ կամիս զաղօթըս պատարագին գնել, պահանջեմ և ես զայլ ժամանակն՝ յորս առանց գնոց՝ ի վերայ քո թափանձիմ՝ ահա հակառակութիւն առտանայական:

Ի՛, եղբարք, զայս զմտաւ առէք. տուք զԱստուծոյն՝ որ ետ ձեզ ձրի՝ ձրի Աստուծոյ, և առէք և գնորայն ձրի. և մի զմեզ վասն մարմնական պիտոյից ընդ աստուածատաճառութեամբ ձգէք. մի է զԱստուած վաճառել, և զձիրս հնորհաց նորա: Հանար տուրևառիցն՝ կրպակաւորացն է գործ. յեկեղեցիս՝ որպէս ի կրպականոց, մի հարկաւորէք զմեզ փայտ հանարոյ կախել, և գհնորհ ողորմութեան Աստուծոյ ի թիւ արկանել: Աղաչեցէք գոնէ անագան. զի ոչ է առ մարդ մեղանչելս մեր, այլ առ Աստուած. Հեղի՝ որդւոցն խրատով լեցի մեզ վարդապետ. եթէ մարդ մարդոյ յանցանէ, առ Աստուած մաղթեն և Թողու. իսկ որ առ Աստուած մեղանչէ, ո՞վ աղօթեսցէ վասն նորա. չէք այլ որպէս զայս առ Աստուած յանցանք, գհնորհ նորա ի թիւ արկանել. և առաւել վասն այնորիկ զի ի յանցանելս ոչ գիտեմք զմեզ յանցաւորք: Անկիւնս է-

կեղեցւոյս սեղանովք ՚ի պէտս այսորիկ լցաք, և ոչ դա-
տեմք զանձինս ազատս. արծաթասէրն ազահ է հա-
մարեալ, և ՚ի պէտս արծաթոյ պատարագողն՝ ոչ դատի
մեղանչական: Կոստանդնուպօլսի մեծ եկեղեցին մի
սեղանովն բաւականացաւ, և Ղնուդ կաթողիկէն, և
Աքուսաղեմի սուրբ Յիսուն, և Ղնտիոքայ սուրբ Պե-
տրոս, և Տարսոնի սուրբ Յովին. և բազմապատիկ
սպասաւորքն Աերևւս արժանի վարկանին այժմնապէս
զայն պաշտել. և ՚ի վաներս քան զԹիւ քնակողացն
զսեղանսն բազմացուցաք, և բարեպաշտութիւն զնոյն
համարիմք. որքան ծակոտեալ կրպականոցքն բազմա-
նան, փառս շինութեան դնեմք. և ոչ որ է՝ որ խմանայ,
և ոչ՝ որ զմտաւ ածէ. "Ղմենեքեան խոտորեցաք ՚ի
միասին և անպիտանացաք,,:

Ղննելս զոյն՝ յանդգնութիւն կարծի, և խոտեն՝
նորաձեւութիւն. և որք հնոյն աշակերտք զանձինս
դնեմք, ՚ի նոցա շաւղացն որպէս երկինք յերկրէ հեռի
ընթանամք. ոչ խորհիմք, Թէ միոյ Ղրիստոսի մի սե-
ղան բաւական է, և բազմապատիկ պաշտօնեայք նմին
սակաւք. և եկեղեցիք բազումք՝ վասն աստուածասի-
րութեան մարդկան շինեցան, և ոչ ՚ի պէտս համարոյ.
որպէս զի ՚ի մի եկեղեցին բազումքն հաղորդեսցին, և
ոչ Թէ միութիւնն պառակտեալ՝ ՚ի յորջս ծակուց Թա-
գիցեն:

Հաղորդութիւն անուանեմք զայս խորհուրդ, և ոչ
դիտեմք՝ Թէ հակառակ անուանն ընթացք մեր լինին.
զի որ միմեանս ցայսմայր միաւորք էաք և հաղորդք իրե-
րաց, յայնժամ քակտեալ բաժանիմք և յայլ և այլ
տեղիս պառակտիմք: Ղա զինչ այլ ունիմք այսմ պատ-
ճառ ասել, եթէ ոչ զսխալ համարոյն, որք զմիանձնու-
թիւն աղօթակցացս անպօր Թուեն, և զբաժանելն զօ-
րաւոր: Ա՛յ Թշուառութեան խնդ. և ոմն կատարի
Պօղոսի ասելն, "Ա՛խաբանութեամբ ՚ի մի բերան
փառաւորեցէք զՏառած,,. ոմն և տեառն նորա,
"Աւր երկու և երեք ՚ի ձէնջ միաբանիցին՝ զամենայն
որ զինչ և խնդրեսցեն՝ եղիցի նոցա,,: Աւաղ գառա-
մեալ այս հիւանդ քակտիչ կրօնքս. Էր վասն ընկղմեցաւ
օրէնք Հոգւոյն կենաց՝ յօրէնս մեղացն և մահու: Ո՛
ուսոյց զմիաբանութիւն քակտել յաստուածազանիցն.

չկայ ոք և ոչ երևի . զօրէնս միայն պինդ ունիմք , զորոյ սահմանիչն ոչ բնաւ Ձանազեմք . բայց մի, եղբարք , և այլ ևս , բաւական՝ ընդ խաբս մեղուԹիւն . տացուք անագան ուրեմն տեղի ՁշմարտուԹեան յանձինս . տատուցուք մի միայն զաղաւնոյ պարզուԹիւն յանձինս , այլ և զօձի իմաստուԹիւն . քննուԹեամբ Ձանազեսցուք օրինացն , և մի չհմարուԹեամբ . զպատուէն տեսցուք զծառին , արդեօք տատմակ իցէ Թէ խաղող , և ապա արմատոյն Ձաւատասցուք . մինչև ցայժմ տատատկովք խոցոտիմք , Թէպէտ և ոչ զգամք : Լ՚Թէ քննեմք , ապա զատացելոցս զօրուԹիւն Ձանազեմք . որոց տացէ Ա՚ստուածոյ՝ իմաստ ատացելոցս և զիտուԹիւն քան զԹշնամիսն առաւել , և քան զամենայն ուսուցիչսն և զծերսն իմաստանալ , և յամենայն Ձնազանդարհաց չարաց զոտս արգելուլ , զանազ նորին զՀՀմարիտս պահել , և՝ի քիմն մտաց զոյն քաղցրացուցանել , և իմացեալ զԹիւր շաւիղսն՝ առել , և Ձրագ զոյն ունելով՝ ՚ի յաւիտենական կեանսն լուսաւոր շաւղօք ժամանել՝ ընդ Ձոգւոյն Ա՚ստուծոյ , որ է օրհնեալ յաւիտեանս ՚ :

ԲՆԱԽՕՍՈՒԹԵԱՄԲ ՓՆՈՒԹԻՒՆ ՅԱՂԱԳՍ ՋՕՐՈՒԹԵԱՆ ԱՂՕԹԻՑ

ԵՒ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԹԷ ՊԱՐՏ Է ՆԵՐԳՈՐԾՈՒԹԵԱՄԲ ՄՏԱՑ Ի ՆՈՑՆ ԿԱՆԽԵԼ.

Ա՚ՐԱՐՁՆ Ա՚ստուած՝ զեղական ազարածոյ կենդանեացս ազգ՝ յերիս սեռս զանազանեալ որոշեաց . նախ է զերոյ Հոգեղինացն զօրուԹեանց զվերին կայեանն՝ առ ինքեամբ և Հուպ ընդ իւր տալով տեղի բնակուԹեան . իսկ զգալեաց և անասունն կենդանեաց որ յերկրէ՝ սահմանեաց ՚ի սոյնս , յորմէ ստեղծան՝ բազմանալ , և ՚ի

1 Բանիցս կարգ ինքնին իսկ յայտ առնէ , զի գիտասցի մանաւանդ ոչ պախարակել և զյամառողսն պատարագս մատուցելոց ՚ի մեռեալ եկեղեցւոջ , այլ խափանել զանկարգն և զչարաչար կերպառուԹիւնն նորա , որ և առ ամենայն ազգամիս քրիստոնեայս պախարակելի է :

ծոց անդ մերն զարձեալ լուծանել։ Ա.յլ զանաւորս զայս մարդ յետոյ քան զընաւան ի ներս մուծեալ՝ որպէս ոտաք ի պատմութենէն, շաղկապումն և խառնուած արար սովաւ իմանալեաց և զգալեացն էութեց. քանզի առ Հող յերկրէ՝ ուստի անաւնոցն ջոկք գոյացան, և փչեաց յերեսս նորա շունչ կենդանի, որով ի մանալի պատկերն Աստուծոյ ի նա էացաւ, և եղև մարդն՝ հողեղէնն որպէս զանասունսն, և պատկերակից Աստուծոյ՝ որպէս զհրեշտակս իմանալին այն հոգւով. ոչ վայրապար զայս անօրինեալ, որ սեպհական զանուն իւր մարդասէր յորջորջէր, “Ես Աստուած մարդասէր եմ,, ասէ. այլ որպէս աղօտապէս ձգտիմք յանհաս խորոյն քննութիւն, զի նիւթ և պատճառ ունիցի մարդն զմարմինս ապաշխարութենէ, և ներողութենէն Աստուծոյ. ներելի յԱստուծոյ, վասն զի բնաւորապէս ունի զինեալ զօրէնսն հակառակ օրինաց մտացն, և գերիչ յօրէնսն մեղաց. և զի գերի ի մեղն՝ և ոչ թէ յօժարի, արդար իրաւունքն տայ նմա տեղի ապաշխարութեան։ Ասէ ապաշխարէ, քանզի հաճեալ է ընդ օրէնսն Աստուծոյ բատ ներելին մարդոյն. և ի կործանելն յոչ հաճոյն՝ բնաւորապէս ունի զղջումն։ Ա.յսպէս մարդն իմաստնացաւ զյանցանելն զգալ, և ապաշխարել. և արդարն Աստուած՝ պատեցաւ յետ այնորիկ նմին զթողութիւն. բատ այնմ, զոր տէրն ասաց. “Ուրախ աշխատիմ իմաստնագոյն են քան զորդիս լուսոյ յազգս իւրեանց,,։

Ա.րդ քանզի ասացեալ հաստատեցաւ լինել մարդոյս ի բանական և յանբան էութենէ մի կենդանի, պարտ է գիտել, ո արդեօք իցէ բան սորա. մի արդեօք յիմար լինօք՝ կարծել զարարեալս ի մարմնոյս ազատաբս հընչեալ, և ընդ փողս բախեալ, լեզուաւս յերիւրեալ և ի յօդս ցնդեալ՝ զոչ բան. քանզի զայս և առ անասունս կենդանիս է տեսանել. նա զի և Աստուած, յորոյ պատկերն ստեղծաք, և հրեշտակք՝ որոյ նմանեցաք, ոչ ունին զայսոսիկ զգործս մարմնեղէն՝ որ զբանն յօդացուցանէ, սակայն տիրապէս են բանականք և ասին։ Արեմն ասա ոչ այս բան՝ որ կերպարանի շրթամբք, այլ ձայն նիւթական՝ որ զգենու զիմանալին բան, և նիւթականացս երևելի առնէ։ Ասէ եթէ էաք անիւթ

միայն, որպէս զնոսա՝ որոց կցորդիմք բանիւս, ոչ կաթոսանայոյք ձայնին, այլ միայն իմացականապէս զնոր գործութիւն բանին միմեանց ազդէաք. որպէս և՝ ի համասեռ ազգս է զայսոցիկ զտարացոյցն գիտել. զի ահա որ զհռոմայեցին խօսի՝ ի լուր ինձ առ համազգին ձայն, զձայնն զգալի հաւասար ընդունիմք՝ ի յունական զգայարանս. սակայն իմանալին բան միայն առ նա ազդէ՝ որ զլեզուժուն ունէր նախակրթութեան։ Այլ և այժմ ահա զտառս գրոյս յարմարելով ազդումն ձայնիս խափանեալ է, և բանականս ներգործէ զիւրն. և սոյն տառ ոչ տեսանողացն միանգամայն ամենեցուն է գիտելի, այլ միայն վարժմամբ ներկրթութեամբ բանականին՝ ի սոյն խորհողաց։

Օ այս նախաշաւիղ բանիս բնախօսութիւն առ՝ ի պէտս՝ ի խոնարհ դիմելոյ Ձառիս արարաք, ոչ արտաքուստ, այլ՝ ի բնութենէ խրատել մեզ առ արհեստ սահմանի աղօթից. որոց մաղթեմ լսողացդ և ըստ այմմ մտանին զկնի անել առ ունկնդրութիւն, զոր՝ ի պէտս օգտի հասարակաց մեր հիւսեմք։

"Յառաջ հոգի է,, , ասաց տէրն, և յերկրպագուացս ոչ զպարանոցի խնդրէ կորացումն կամ զծնգաց մաճուցումն, կամ զձայնի բարբառումն, այլ հոգւով և ճշմարտութեամբ զերկիր պագանել։ այսինքն զիմանալի միտս առ իմանալին Յառաջ վերաբերողապէս ձրգտեցուցանել. զի այս է որ զնա հաշտեցուցանէ՝, և ոչ բարբառ բերանոյ։ Յովաւ Յովսէս լռութեամբ առաջակէն զՅառաջ ձանձրացուցանէր, մինչ ասէր. "Օ՛ի գոչես առ իս,, ։ Յվերևս ձայնի գոչումն կարծիցես՝ ի նրբաձայնէն յերկինս հասեալ. և ոչ երբէք, այլ հոգւոյն աղաղակ։ Այս ձայն էր՝ որ՝ ի յոչ շարժել շրթանց, քահանայապետին՝ զՅինս արբեալ երևեցուցանէր։ Յովաւ և Յհաւիթ յաղաղակէն ասէր. "Լսորհուրդք սրտի իմոյ առաջի քո յամենայն ժամ, տէր օգնական իմ և փրկիչ իմ,, . քանզի ոչ եթէ բացակայ է՝ ի մէնջ Յառաջ, որպէս զի ձայնիւն զգաստացուսցուք, այլ մերձ է յամենեսեան. ըստ որում ասաց. "Յառաջ մերձաւոր եմ ես, և ոչ հեռաւոր.

1 ի փոխ օրին. հեղաշրջեալ։

մերձեցարուք առ իս, և ես մերձեցայց առ ձեզ ,, : Այլ պարկս զնորա մերձ առ մեզ լինելն հաւատամք, այսպէս և մեք մերձեցուք առ նա . և մերձ է Աստուած առ մեզ իմացականապէս և ոչ զգալի կերպարանօք . պարտ է և մեզ խօսել առ նա և մերձենալ առ նա՝ իմանալի հոգւով և ոչ զգալի բարբառոյս ձայնիւ . այլ նախ ամ բառնալ զիտս առ նա՝ և ապա թէ կարօտիմք, ընթացակից տալ զձայնս՝ մտացն ։

Լակ եթէ միտքն՝ որիշ է Աստուծոյ և ձայնն զգալի միայն առ նա խօսի , շատախօսութիւն է աղօթքն մեր հեթանոսաբար , որպէս ասաց տէրն . սակայն ընդ ուղիղն ախորժելով գնալ պողոտայ , նախ զայն հաւատացուք՝ թէ մերձ է յամենեսեան Աստուած , ըստ որում ամենայն աստուածաշունչ գիրք հաստատեն . և ոչ է երկիւղ պատրուակ արարչին իւրոյ՝ առ՝ի թագուցանել զմեզ յամենատեսն աչաց . իսկ մեք ոչ եմք մերձ՝ի նա , վասն զի մոլորեցուցաք զմիտս մեր՝ի զանազան ընթացս կենցաղոյս , զայս որում կարելի էր զԱստուած տեսանել ։ Այլ դարձուցեալ զայն և ամիտիեալ՝ի վայրապար ցնդմանէն՝ի վեր Ճանապարհ նմին արասցուք, ամենասուրբ պատեհութեամբ անպղտոր խորհրդովք խօսել ընդ Աստուած աղօթիւք , և մերձենալ՝ի նա , ըստ որում հրամայն ընկալաք ։ Անդր նմա զիսաւրդ է հաւատալն յէից զօտարանալն , որ զանգործան տեսանէ՝ և նախ քան զպիտեն մեր , և զօրութիւն ազգման քննութեան անցանէ մինչև ցոքոչումն շնչոյ և ոգւոյ , յօդից և ուղղոյ ըստ որում գրեաց առաքեալ ։ Որ ոչ ինչ զանդադելի է օրինակաւ հաստատել ,՝ի պէտս գիտութեան մերձ նորա լինելոյն՝ և ուսուցանել զմերն առ նա մերձենալ ։ Որ պարտ է համարել , որպէս թէ լուսաւոր ինչ լար յերկնից՝ի տորին վայրս երկրի կախեալ , և մեր բուռն հարեալ զնմանէ , և զձեռս ձեռամբ փոխեալ, կարծիս տամք՝ի սկզբանն՝ որպէս թէ զլարն՝ի մեզ քարշեալ ածեմք . իսկ նա քանզի յերկինս արմատացեալ է , ոչ թէ՝ի տորև բերի , այլ սնդագոյն փոխոխմանէն և բուռն հարկանելոյն՝ զմեզ յերկրէ՝ի ձառնանչել վայրս երկնից վերացեալ . այսպէս է և գիտութիւն Աստուծոյ հաստատեալ աստուածաշունչ գրովք՝ մերձ առ ամենեսեան զնա գոլ։

Աղդ եթէ ոք այնմ ատացելոյն տիրապէս սրտիւ հաւատայ, և գնանիկ որ մերձ է առ ամենեսեան՝ ձեռօք մեռեալ աղօթիկ բուռն հարկանիկ, ի կարծելն զԱստուած մերձ ինքեան՝ և այնպէս ընդ նմա խօսել, ինքն ընդ աստուածային գիտութեան՝ բարձրանայ ի լուսաւոր վայրս երկնից աստուածային կայանին։ Ա՝ ան այսորիկ նախ քան զուսանելն զառաջակայ խորհրդածութիւն աղօթից սրբոյ պատարագին՝ զաղօթելոյ Հանապարհն պարտիմք գիտել, թէ մեռացն է ներգործութիւն աղօթք, և իղձք սրտին առիման, և ոչ բարբառոյ կամ բերանոյ. և ոչ կարեմք գնա լսելի առնել Աստուծոյ, բայց եթէ միաք արտաքոյ եղեալ ամենայն զբաղանաց՝ զիւրն ներգործեսցէ խնայութիւն. որ է այլ ոչ ինչ, որպէս կարծեմ, բնաւորապէս նմա, բայց միայն առ Աստուած համբառնալն, և նորա լուսոյն ընդունիլն. յետ որոյ և այնպէս ուղղել կարող է զմարմնոյս Հանապարհ։

Աղդ պատարագիւք եւմ ծանիցուք զպատարագելն ոչ այլ ինչ, բայց միայն խօսակցութիւն Աստուծոյ. և խօսիմք ընդ Աստուած՝ ոչ եթէ զոյն ինչ զոր նա ոչ գիտէ՝ ի յուշ նմին ածելով, այլ զգիտելի նմա խորհուրդն մեր՝ յօժարական կամօք ի պէտս փրկութեան աշխարհի առ նոյն խօսել։ Այթէ մեք մեռաւորապէս գնոյն ոչ ծանիցուք, և զիղձս փափաքանաց ընդ աղօթելն ոչ զուգեսցուք, այլ վարանեալ խորհրդով միայն՝ Աստուծոյ վարկցուք ուսուցանել, Աստուած մեռոյ և այնպէս յիւրում գիտութեան յոչ մեր Հանաչելն, և մեք զատարկ և անշահ զառնամք յերեսաց նորա, գնա ոչ տեսական աչօք մեռոյն տեսեալ, և ոչ պարգև ընկալեալ։ Որ ծանուցեալ՝ որոյ Հաւատացաւ այս գործ պաշտամանն, ոչ ինչ այլ այսպէս զգուշալի լինի, որպէս զմիտս մաքրել. մանաւանդ զի և ամենայն սպասաւորութիւն պաշտամանն պարկեշտութեան մերոյ՝ սորին վանն պատրաստեցաւ, եթէ կուսութիւն, եթէ զգեստուց բարեձևութիւն, եթէ յաշխարհական կենաց ողջողութիւն. որպէս զի յապահովացեալ միտքն առ ինքն եկեսցէ, և զիւր լոյսն տեսանիցէ։ Այսակ եթէ յամենայն աղօթից ժամանակս այս պահանջի ի մէնջ, որքան առաւելապէս ի խորհուրդ սրբոյ պատարագին,

յորում ոչ թէ սոսկ միայն աղօթեմք, այլ հարատա-
պէս և ընտանեբար ընդ Աստուած ի խորհուրդ մտա-
նեմք, և բարեկամաբար ընդ նմա խօսիմք։ Այն
սոսկալին այն ժամ աղնիւ և մաքուր միտքն ոչ լինիցի՝
յանձին ցաւոց և արտաքին զբաղմանց, յանդգնու-
առաւելապէս է մեզ կարծել զաղօթելն, քան թէ փըր-
կութիւն. այլ պարտ է որպէս զի ի խորհրդակցելն
իմանալի մտացս՝ ձաշակելով զքաղցրութիւն խորհրդոյն
ըմպիցեմք, և ապա այլոց հրամայիցեմք, “Ճաշակե-
ցէք և տեսէք, զի քաղցր է տէր,,։

Այս այս ոչ եթէ գժուարին կիրք, կամ արտաքոյ
բնութեանս, այլ բնաւորապէս և ընտանի. քանզի ի-
մացող մտացս վէր այլ ինչ մնունդ կամ կերակուր ան-
զեղջ, բայց եթէ գիտութիւն Աստուծոյ. քանզի յա-
մենայն յայլ իրս ածեալ՝ ապաշաւն է զկնի. իսկ առ
Աստուած վերացեալ՝ ուրախութիւն և ցնծութիւն և
անտարակոյս զուարճականութիւն, այն զոր ետ մեզ
Պօղոս. “Ուրախ լերուք ի տէր յամենայն ժամ, և
դարձեալ ասեմ, ուրախ լերուք,,։ Սակ եթէ օտար յայս-
պիսի մաքրութենէ մտաց՝ և այլով խորհրդով, և ոչ
յաստուածայինն սիրով ի սրբագործութիւնս ձգտիմք,
յիրաւի է ոչ քաղցրանալն սորա ի քիմն մեր, և մեծ
պատիժն առ Աստուած մեզանչելոյն։

Ընդէր և ոչ յանձանց իսկ տամք զիրաւն՝ ըստ առա-
ջելումն. քանզի ընդ մարդ խօսելով՝ զուշ մտաց հար-
կաւորապէս ընդ բարբառն ուղերձեմք, մի արդեօք ի
վայելչական կարգէ բանն խոտորեալ՝ այպանիցիմք. իսկ
զԱստուած սոսկ բարբառով առանց գործակցութեան
մտաց կարծեմք հաշտեցուցանել։ Ալ թէ պղտան յի-
մարութիւն ըստ այսմ մնալոյն այսօր մնծեալ զմեզ
տեսանեմք, և ի քննել վնասն ոչ վհերիմք, որպէս զի
զղջումն ըստ յանցանացս թերևս կարասցուք յանձինս
ձգել։ Ալ բան ոչ ողբասցէ զմեզ՝ որ ջանամք ջանալով,
և նուիրեմք և համբարեմք զոչինչ։ Այս այս պղպէս.
քանզի ջան մեր և աշխատութիւն ոչ թէ առ ի զմիտան
յաղօթեն ուղղել, այլ միայն զմիւս սաղմոսացն գլխել,
և ի բազմացուցանելն զնա երագընթաց լեզուաւն մի-
տեալ. և կատարումն աղօթից զայն համարիմք, իսկ
թերութիւն՝ զոչ նուիրն յանձնելն։

Ասաի ուսաք, ուսաի վարժեցաք, ոչ ստայաւ զմեզ այսպիսի մեռոի բանջաղմանցս աշակերտ։ Աղմռաերգուն հրաման տայ սաղմոս ասել նման՝ ոչ բաղումս, այլ իմաստութ, ոչ աղաղակել, այլ ի միտ առնուլ. և առաքեալ՝ գոհանալ և սաղմոս ասել Աստուծոյ ի սիրտս՝ հրամայեաց։ Որ էր օրինադիրն որ զսոցայն տապալեաց և զիւրն ուղղեաց, բայց թէ սկզբնաւորն սատանայ։ Որպէս հաւատամք իմանալոյն Աստուծոյ զբարբառ ձայնիւ քաղցրացուցանել, կամ զիարդ յուսամք այնուիկ զաղօթսըն կատարել։ Զէրն Ճրագ մարմնոյն լուսատու՝ ոչ զձայնն ասաց, այլ զիիտն. նորա առատանալովն մեզ լուսաւորել, և ոչ անհանճար կցորդիցն աղաղակաւ, ուստի ոչ միտքն քաղցրանայ, և ոչ լսելիք հեշտանայ։ Զայնք և եղանակք ողբականք և ուրախականք յեկեղեցի՝ մեռոյն լուսաւորութէ օգնական՝ երաժշտական արհեստիւքն տուան, և ոչ թէ զաղօթիդ սահման կարող են լնուլ։ Ուսկ մեք զմիտս նոցա յերիւրմանն և բեկբեկելոյն համարոյ ծառայ տուեալ, և ի մեծ և ի ծայրագոյն բարւոյն ի լուսաւորութենէ աղօթիցն թափուր գտաք. զոր օրինակ որ զձէնմարտութիւնն թողու, և և ընդ նորին օրինակն պչնու։

Ոչ թէ սրբան է թմբրութիւնս։ Այլ գիտէք եղբարք՝ զձայնս աշխարհականաց սպարարիչ երաժշտական զօրութեամբն յեկեղեցի սահմանեալ, որպէս զի զօրութիւն արհեստին քաղցրացեալ սրտից նոցա՝ կակղացուսցէ զնա և մեղկացուսցէ. որպէս մրմունջք խաղուցն ի չարն, այսպէս և այս ի յերկիւղն. իսկ ի մեր եղանակաց այսպիսի համեղութիւն ամենևին տեղի ետ, ընդ որս ոչ թէ միայն չքաղցրանան լսողքն, այլ և ընդ լսելն տաղտապեալ տագնապին և տեղի տան. և մեք անզեղջ կամաք որպէս բարեկարգութիւն զնոյն հանդիսիմք, և զնուաղութիւն՝ աստուածայինն պատուիրանացն Թերութիւն։

Այլ եղբարք՝ ոչ է ընթացս մեր ընդ Հանապարհն Ճշմարտութեան, և ոչ ի հետս սրբոց Հարցն, որք զայս կրօնաւորութեան Հանապարհս գտին, նոքա զորակութիւն աղօթիցն խրատեցին գիտել, և ոչ զքանակու-

1 Այլում օրին. Աստրեն։

թիւն։ Այլ մեք հակառակ այնմ՝ զսաւ հանդերձ սաղմոսերգութեանն՝ երաժշտութեանն զրեմք, և այնպիսւոյ ի յերկար ժամանակաւ սերմանելոյ զնոյն պտուղսիմք. քանզի պտուղ աղօթից է սէրն և խնդութիւնն և խաղաղութիւնն առ Աստուած։ Ակ մեք զայս և ոչ ընդ երկար ժամանակաւ կարողացեալք ստանալ, զոր հաղթեմեր ի դիմի ժամանակս ընդդրկեցին։ Պարտ է ապա զգալ զտկարութիւնս, և մի կապել մարմնոյ և լեզուի ծանրութիւն բեռանց սաղմոսաց դժուարակրաց, և մտաց մտատանջ ոչ խթել ի նոսա. այլ այնչափ Աստուածկել զերկարութիւն աղօթից, որչափ սա զօրէ հալել և ծաւալել, զի մի լծոյք անբան պաշտօնեայք Աստուծոյ, իբրև զնոսա՝ ողք առ կուռան անմռունչս երթային և գային։

Որպէս կարողանամք զայս ուղղել՝ ասիցէ ոք. կարծեմ ոչ ինչ այլ այնպէս մարզիչ զմեզ յուղիղս Աստուածպարտ, քան զերկարութիւն աղօթիցն. զոր ի հակառակէն ստուգեացուք. զի արտաքոյ սորա լինիմք մտածելով՝ թէ հեռի լինիմք յԱստուծոյ, քան զորս ծառայն արտաքոյ տաճարին յերեսաց արքային։ Եւ առ այս կարծիս անզգոյշ լինիմք յաղօթիցն, խառնելով ընդ սաղմոսիցն գործ և ընդ գործն շատախօսութիւն, ուստի ծնանի դատարկաբանութիւն, և անտի խեղկատակութիւն. լեալ այնուհետեւ փոխանակ հաշտելոյն ընդ Աստուծոյ աղօթիւքն՝ խռովութիւն կրկին, զոր զնկուցանէ Պօղոս. «Ի տգեղ բանիւք տրտմեցուցանէք զՀոգին սուրբ Աստուծոյ, որով կնքեցարուքն»։ Եւ զիսիրդ հնար է ոչ միայն զմիտս՝ այլ և զլեզու տուեալ նամարութեան ծառայ՝ մտաւորաբար աղօթել. ուստի զգուշացեալ՝ հարկաւորապէս զեկեղեցի տեսցուք խոսակցութեան Աստուծոյ պատշաճ, ուր հպատակեմք լեզուոյ առ լռութիւն, և մարմնոյ առ արիութիւն։ Ի յամենայն տեղի է Աստուած, հաւատամ և ես, բայց ես ոչ յամենայն տեղւոջէ առ նա՝ այլ միայն ատ հաւատամ կացեալ զանձն առաջի նորա. ուր և զպտուղ հաւատոյն տամ զգուշութիւն մարմնոյս. իսկ յորժամ սա զգուշանայ օր ըստ օրէ, առաջնորդ լինի մտացս մարդութեան առ ի կարող լինելոյ և սմա մտանել յիմանալի կայանն Աստուծոյ, ըստ որում մարմինս ի զգալիս. ա-

պա թէ ոչ՝ և դեռ ևս մարմինս զգուշանայ երկնչի և ինդրէ զգալի տունս, որպէս հաւատացից, թէ հրեշտակ աղօթիցն տեղանէ զերեսս Հօրն իմոյ որ յերկինս է. իսկ նորա ոչ ապաքեաւ զերթևեկութիւն անդր՝ի խաղաղութենէն որ ընդ Որդւոյն, դեռ ևս բացատրութեամբ հեռի եմ, ոչ ունելով ապա զծանօթութիւն խաղաղութեամբն՝ որպէս Հայր առ Որդի, անպտուղ եմ՝ի խօսելոյն առ նա, և դեռ ևս ընդ ծառայութեամբ երկիւղին զրաւեալ. և որ երկնչի, չէ կատարեալ՝ի սէրն, աստուածաբանն գրեաց Յովհաննէս։

Որդ որ դեռ ևս զմեր սէրն չեմք կատարեալ առ աստուած ուղղել կամ զխաղաղութիւն, այլ՝ի ներքոյ եմք տանջանաց, որքան ժպրհութիւն է այլոց բարեխօսել պատարագաւն։ Օ՛ինչ պարտ է ասել, բայց թէ զլեզուս՝ի քիմն կցել. և որ ոչ եմն՝ որպէս նայն էր յաշխարհիս յայսմիկ, զիարդ առ նա համարձակաբար խօսել կարիցեմ։ Այլ պարտ է զծառայական երկիւղ՝ որոց՝ի բարեկամաց կարգի Որդւոյն դասեցաք, ՝ի բաց ընկենուլ, և սիրել զՈրդուած, վասն զի նա նախ սիրեաց զմեզ, ամաչել՝ի նմանիլ պատուիրանազանցութեամբն, և ոչ երկնչել միայն. զի այսքան անօսրութիւն առաքինութեան քննել և ունել քահանայից հարկաւոր է, որք ծայրագոյն խորհրդոյն են պաշտօնեայք, և Որդւոյն սակս փրկութեան մարդկան խորհրդակիցք։ Ես մոռանամ զտէրունականն առ իս ասացեալ. "Ի բերանոյ քումմէ դատեցայց զքեզ ծառայ չար,,. սակայն անձամբ անձինս յօժարիմ գրել զդատապարտութեանս կռուի՝ քան պաճարապէս լռել, և ընդ լոյս պատուիրանին՝ որպէս ընդ խաւար սլանալ։ Որ և ասացից իսկ. Ո՛վ անձն, թերևս բռնադատեցար յումեքէ. ոչ լուար՝ի կամն ապաստանեալ զկուսութիւնն, ասելով, "Ով կարող է տանել տարցի,,։ Ո՛ւ ինքնին գերազանց օրինացն Հաստարակականի կարգեցեր քեզ շաւիղս, ընտրեցեր զտեառն հոգալ և ոչ զմարդոյ, սուրբ լինել ոչ միայն մարմնով այլ և հոգւով, և հաճոյ Որդւոյն, ընդ այնր և՝ի սուկալիդ ժըպրհեցար աստիճան։

Որդ եկ և կացուցից զքեզ ընդդէմ բանիս դատախազի. զինչ է որ խափանէ զքեզ՝ի հոգալոյն զՈրդւոյ

ծոյ, այսմ առաջի բազում վկայից եղեալդ պարտական։ Ա՛ւ ինչ ըստ Աշմանուեանն, այլ թէ ըստ քումմ կամացդ դանդաղուեի։ Ա՛վ Թշուառական, և թէ հեշտուեանդ սիրէիր ծառայել և աշխարհի լինել կենդանի, մեռար՝ ի յոմանէ բռնադատելոյ նմին ձեռվ և կրծնիւք անձնիշխան կամացդ տիրող. որ փառք, որ հեշտութիւն, որ պատիւ կամ իշխանութիւն, երախտիք, կամ սիրելութիւն, միանձնաւորութի՞ կամ անմահութիւն առ ի զ[illegible]ստուած սիրելոյն զքեզ զղջացոյց։ Ա՛յլ անմաքուր, և ատենին Աբրիատոսի իրաւամբք պատժապարտ, թերևս ոչ տեսեր, և կամ լուար խաւարեալդ յիմնաստութենէ, զի նմին վասն Թագաւորք զփառս երկրորդ վարկան՝ իբր զանցաւոր առ մշտընջենաւոր. և իշխանք տնանկացան, մարդիկ առոյգք և զուարթք ընդ սուր և ընդ հուր որպէս ընդ շուշանս հովտաց խաղացին, հաստատուն զոյս անվախձան կենացն՝ առաջի արթուն մնացն արձանացուցեալ։ Թերևս դու իմաստնացար քան զնոսա, վերջինդ ծնունդ՝ ժամանակի վերջնոյ՝ ապաքան միակ անպիտան։ Ա՛յ գիտես ի հանդէս կարգեալ զքեզ, և ոչ ի հանդիստ։ Ա՛ն զիտեն անդանաղ է, ուր Պօղոս բազում աշխատութիւք ասէր մնանել։ Ա՛յս ընդ սուր մարտեաւ, և դու յաղթամարտանաց յաղթիս. նա զաղանամարտիկ եղև, և դու ի սրտմտութենէ պարտիս. նմա ի ծովէ և ի ցամաքէ վիշտ և տառապանք, դու յամենայնի զփառս և զհանդիստ խնդրես[1]. նա աշխարհի խաչեալ՝ որպէս և աշխարհ նմա, իսկ քեզ աշխարհ խաչեալ, և դու նմին կենդանի։ Ա՛ոգին հեծութեան քում բարեխօս սիրով, և դու խեղկատակութեամբ և ատելութեամբ նմին սրտմտեցուցիչ։ Ա՛րեշտակք պահապան շուրջանակի, և դու անզգուշութեամբ՝ նոցին զարհուրեցուցիչ։ Աեան քըզ երագ ցնդմամբ խաւսիեալ ի քէն, և դու բրտութեամբ կամաց նմին ընկրկիչ։

Ա՛վ յիմարութեամբ քան թէ յանցանօք թշուառացեալ, հայեաց յայսկոյս և յայն, թէ զո՞վ տեսանես ի սոքին ըմբռնողացն առանց դրժելոյ պահապանս. տես զի բազումք ջանացան և ոչ կարացին զայս գանձս հոգ-

1 Յօդնակի միւսմ պահանջէ.

մոյ ինքեանց սեփականել. այնպէս և դու ես նժդեհ և անցաւոր, ըստ որում ամենայն հարքն քո։ Ապա որպէս քեզ գՏանդչէրն ի մեղայ, մինչ չև երթեալ իցես. և մի որպէս պատկերի շրջողդ՝ այդքան ի զուր յամենայն տեսակս ախտից խռովիր. Ծանիր ստուգապէս ի Քրիստոս Յեսու՝ զի Տամար ունիս տալ ընդ ամենայնի մինչև ի հնչին դատարկաբանութիւն և ի մերոյն անուանադրութիւն. գիտեա զի քոյին չափով՝ յահէզն ատեան չափելոց է քոյդ գործոց քննութիւն յարդարն դատաւորէ։ Պերանակիր ակն թշուառացեալ՝ զարձի ապա զգաստաստան քո առ քեզ. ուսիր, զի զանձն քո դատապարտես՝ որով զընկերն դատիս. գիտեա, զի չես ապրելոց ի դատաստանացն Աստուծոյ՝ որ խիստ և անզեղջ սրտիւ զանձեցեր քեզ զբարկութիւն։ Ընձանացիր ի յոյն, մինչ գեռ ժամանակս ի ձեռս է, մատիր առ արքայն ահաւոր, մինչ գեռ ի ընդհայն աթոռ է, հաւատա գտանել ընդհայն ի դէպ ժամանակի օգնականութեան։ Դաշամբք ուխտեցեր ծառայել, մի հեղգասնար. հրաժարեցեր յամենայնէ, մի կարծեր ողորմութեամբ արդարանալ. յաշակերտութեանդ ես կարգի, մի ի տեառն ընթացակցութենէ նհանջիր. խաչին ես աւետարանիչ, մի յաչաց քոց նորին տեսութիւն ստուերացայն. սրբոյն ես բանից ուսուցիչ, մի վարք նոցին եղիցես ծանրացայն. ի միանձնաւոր կեանս հրաւիրեցար, մի քեզ առօրեայս քաղցրացայն։ Աղերութեամբն առ մանն վարժեաց, հանգստեամբն զՏանդերձեալսն խնամատարիցես, փառաց զանվախճանն կշռեա, և այսպէս յամենայն իրս զՏանապարհս ոտից քոց ուղղեա, անսայառ մատնեալդ դատաստանի։

Ալ դու նայեա յիս ամենակարող տէր իմ Յիսուս յաճախոյ փառացդ և ընդհայ, տալով անարժան քո ծառայիս զանխոռով միտս՝ ի յոյս Տանդերձեալ քո յուսոյդ։ Ցես, տէր, թէ ուրբան վտանգիմք յաղցաւոր կենացս կրից՝ ի զանազան հողմոց բազաբեր ընչանց՝ երեքաւեանն խռովութեամբ թշուառացեալ մնացս երեքեալ. չունիմ տէր պտուղ գործոյ՝ քեզ նուէր հաշտութեան, քանզի զոր ունել կարծէի, մնչեալ պակասեաց ի քում ահաւորութեանդ եկեալ գիտութիւն. և ես մերկ և թափուր կիսամեռ և ոգեկոծան, միայն զմար-

պահպանեան ոտիցդ կախիմ՝ քուն հարեալ զքնանել, և ոչ երբեք զԹողուլն ախորժեմ։ Ձան զիս ՚ի չարս շաղայ՝ զորս բերանով իմով աղաւտեմ. և ուստ զձնապարհս քո ուղիղս՝ որում կամք սրտիս վկայեմ։ Ընկայ ՚ի մանկին մեղաց, և ես ինձէն զգաստութիւն մեղացս ՚ի բողոքեմ. տուր զժշկութիւն ախտացեալ հոգւոյս, որ առողջացուցանել զայլս խոստեմ։ Օ ուխտս հոծեալս բանի յեկեղեցիդ անդրանկաց՝ առաջի ամենայն երկիւղածաց քոց նուիրեմ. կերիցեն տնանկք, և յագեսցին ՚ի սմանէ, և օրհնեսցեն զքեզ՝ որ զտերդ խնդրեն։ Օ աղօտացեալ քո լոյս բարեկամացն ցուցանեմ. յիշեսցեն սովաւ, և զարձցին առ տէրդ, որք ՚ի ծագայ երկրէ քումդ գիտութեան փափագեն։ Վէզ փառք, պարծանք և գրաւ աշխարհի, ՚ի յերկինս վառաւորեալ յաւիտեանս. ամէն։

ՋԻՆՁ ՆՇԱՆԱԿԻ ԱՆՈՒԱՆԵԼՆ ՋՏՈՒՆ ԱԱՏՈՒԾՈՑ ԵԿԵՂԵՑԻ

Եկեղեցի անուն տիրապէս ՚ի վերայ ժողովրդեանն առնու՝ քան ՚ի տանն. բայ այնմ, զոր Աստուած առ Մովսէս ասաց. «Ակեղեցացո ինձ զԺողովուրդդ», այսինքն ժողովեա։ Ա՛ր զերկը ժողովողն եկեղեսիաստէս կոչի, որ է ժողովող։ Ապա բայ պարզ տեսութիւնէ ժողովին մարդիկս, և ոչ եթէ տունս. և սա համանուանաբար սոցա կոչի եկեղեցի՝ իբր ժողովարան. նա զի և մի հոգի ընկալան ՚ի հնորհացն Աստուծոյ տունս և մարդիկս. և անձնաւորեցաւ և սա զօրութեամբ հոգւոյն Աստուծոյ ՚ի ձեռն օրհնութեան հաւատոյ նոցա. և զմի հոգի ունելով՝ միով անուամբ կոչէ տանս և բնակչացն վայելուչ է, զոր և ուսուցանէ մեզ պատմութիւն գործոց առաքելոցն հաւանաբար, թէ յօրն պենդակոստէից սաստիկ հնչումն Հոգւոյն որ ՚ի յերկինից՝ նախ զտունն եղից յորում նստէին առաքեալքն, և ապա նստաւ իւրաքանչիւր ՚ի վերայ նոցա, զաւետս խորհուրդն աղդելով. այսինքն զի ամենայն եկեղեցի նախ ինքն ընդունի զՀոգին Աստուծոյ, և ապա զմեզ

1 Յոր. միամիտ վիճակ։

ծնանի աւազանին սրգանդաւ Հոգեպէս, և աձեցու-
ցեալ վարդապետութեան ստեամբք, ՚ի զանազան վի-
ճակս աստիճանաց, յետ կատարման Հոգևոր հասակին՝
վիճակիլ զամենս։ Իսկ զոր ոչ առ սոյնն զօրէն, նոքօք
հովուէ, և ընդ յարկաւ իւրով միշտ ամրափակեալ
պարսպէ։ Այսպս ուրեմն մի մասնին են յանչնչական սր-
ձանաց տաճարս՝ կանգնեալ, և որդիքն առ ՚ի սմանէ
ծնեալք միով Հոգւով կենդանացեալք։ Աւասի և գիրք
սուրբք և օրհնութիւնք երգոց՝ եղակաւսպէս որպէս
ընդ մի գէմն անձին խօսին ընդ նոսա զուրախարար և
զաւետեաց հնչմունս։ Վասկայն մեզ պարտ է իմանալ,
Թէ առ մեզ են ամենայն խորհրդածութիւնք բարբա-
ռոցն, որք ՚ի գիրկս նորին մնեալք խրախանամբ ՚ի
Քրիստոս ՚ի փեսայն նորա։ Օ այս և առաքեալ գը-
բեաց. "Յորժամ գայցէ եկեղեցին ամենայն ՚ի մի վայր,
ոչ է տուն տեառն տեղի ձեզ հայ ուտելոյ ,,։ Այս տէրն
առ Պետրոս. "Ի վերայ քո շինեցիցէ զիմ եկեղեցի ,,, ու-
զիղ դաւանութեանէ հետևեցուցանել զքրիստոնէիցն ժո-
ղովուրդս նշանակեալ։

ՉԻՆՉ ՆՇԱՆԱԿԻ ԻՄԱՑԱՆ ԱՆՈՒԱՄԲ ՉԵԿԵՂԵՑԻՍ ԿՈՉԵԼ, ԵՒ ՀԱՄՈՆ ԱՆՈՒՆԵԼ ԻՍԿ ՉՓՐԻՍՏՈՍ ՓԵՍՑՑ ՔԱՆՉԻ ԱՒԱՖԵԱԼ ԱՒԷ

Տէրն մեր ասաց յաւետարանին. "Ամենեցուն ար-
քայութիւնն երկնից առն Թագաւորի՝ որ առնիցէ հար-
սանիս որդւոյ իւրոյ ,,։ Այս առաքեալն նորին ՚ի հպա-
տակութիւն առն և կնոջ խրատելով զերիեսացիսն՝ յա-
ւելու. "Ամուսնոցդ այս մեծ է, բայց ես ասեմ ՚ի
Քրիստոս իսկ և յեկեղեցի ,,. Համարձակութիւն
տան մեզ՝ զեկեղեցի և զՔրիստոս ՚ի տիպ փեսայի և
հարսին օրինակել, այնու զի օտար և մաքուր ՚ի կար-
ծեաց սխտաւոր Թուլութեան ամենասուրբն միաք։
Պարտիմք և մեք այսմ վերհագոյն բարձրանալ, և զխոր-
հըրդոյս քննել զօրութիւն. զի ոչ Թէ միայն ՚ի նոր կտա-
կարանս, այլև ՚ի հնոյն է զսոյն ուսանել, ըստ որում
ասէ Հայրն. "Արդեօք ուրախ լինի փեսայ առ հար-

1 Ցոբին. Միում Ընդելոյն սրդան Խոհեալ։

սին, այսպէս ուրախ լինի ՚ի քեզ տէր Յաւուրս քո ,, : Եւ ,, Օ՜ որ օրհնակ բնակիչ երիտասարդ ընդ կուսի, այսպէս բնակեսցեն որդիք քո ՚ի քեզ ,, : Եւ և Պօղոս դարձեալ գրէ . ,, Խօսեցայ զձեզ առն միում իբրև զկոյս մի սուրբ յանդիման առնել Քրիստոսի ,, : Եւ այսպէս ամենեքեան նորա համեմատեն զձանապարհ մեր խօսանն հարսին, և հարսանեաց : Յանգի յորժամ խօսեալ լինի կին առն՝ հեռի է ՚ի նմանիլ տեառն, և միջնորդք հարսնացուաք գան և առնեն զնա, յորոց լսէ վասն մեծութեան փեսային և վասն փառաց գեղեցկութեան նորա, և ՚ի խօսից անտի առնացն կաթէ և սերմանի սէր փեսային ՚ի սիրտ կուսին. և գերեալ վարի միտք նորա ՚ի սէրն որ առ նա, և թողու զհայր իւր և զմայր, և առ նա ընթանայ : Այսպէս եկեղեցւոյ քրիստոնէից առիթք եղեն մարգարէքն և առաքեալքն. խրատեցին մոռանալ զժողովուրդն և զտուն հօրն, և պատմեցին սէր զմեծվայելչութիւն մեծութեանն Քրիստոսի, և վասն գեղոյ աստուածութեն նորա. և հաւատացաք մեք ՚ի նա : Եւ ըստ որում նորա ոչ միայն զփեսային հարսինն, այլ և զհարսն գովէն փեսային, այնպէս և առաքեալքն որ պատմեցին զմեծութիւն տեառն մերոյ, և նմա մատուցին բանս բարիս վասն եկեղեցւոյ հեթանոսաց, և աղօթս և խնդրուածս հաշտութեան առաջի բարձրելոյն :

Եւ ըստ որում յետ սոցա զխաղաղութիւնն խօսելոյ՝ ՚ի մի անձնաւորութիւն գան հարսն և փեսայն, այսպէս յետ գերելոյ զմիաս հեթանոսաց ՚ի հնազանդութիւնն Քրիստոսի առաքելոցն, ամենեքեան ՚ի Քրիստոս մկրտեցան, և մարմին նորա և ոսկերք անուանեցան, և ընդ նա յօդակապութեամբ Հոգւոյն խառնեցան : Եւ որպէս փեսայն յետ այնորիկ բերնաւորէ որդիս ՚ի հարսնէն զանազանս, այսպէս և Քրիստոս արկ զվարդապետութիւն իւր յարգանդ մտաց եկեղեցւոյ իւրոյ սրբոյ, և ծնաւ ՚ի նմանիլ որդիս բազումս և հասակս զանազանս՝ զգաստս հարց և հայրապետաց, մարտիրոսաց և ճգնաւորաց, արդարոյ և սրբոց : Եւ որպէս մայրն յետ ծնանելոյ զորդին՝ առ ՚ի կատարելութիւն մնուցանել զնոսա, ըստ այսմ և առինք միտաբուխս եկեղեցւոյ միշտ դիւցազանել զորդիս իւր, և մնուցանել մինչև հասուցել զամենեսեան յայր

կատարեալ ՚ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի։ Պարձեալ որպէս չէ օտար փեսային՝ որ խօսեալն ինչ նմա, զի ՚ի միջոցէ բնութենէ են. այսպէս և մեք չեմք օտար տեառն մերոյ, այն զի մարմնակիցք նորա եմք։ Ա՛ւ որպէս չէ օրէնն կնոջ փոխանակել զանկողինն առն իւրում ընդ այլում, ապա թէ ոչ՝ շուն համարեալ լինի, այսպէս եկեղեցւոյ ոչ է պարտ տեղի տալ յինքեան օտարոտի վարդապետութեան, որ զներհակն ուսուցանէ օրինացն Քրիստոսի։ Ա՛ւ որպէս հարսն հանդերձիւ զարդարի, և ինքն գլխովին մերկ պիտոյ է փեսային, սոյնպէս և գործք մեր բարիք լինին մեզ զարդարանք, զի հաճոյ լիցուք նովաւ տեառնն, և մեք միայն եմք պիտոյ նմա։ Ա՛ւ որպէս կին յորժամ զարդարի, ոչ հարցանէ ընդ ընկերսն թէ գեղեցիկ է, այլ առնու հայելի, և ինքն որոնէ զզարդ գոնոյ իւրոյ. այսպէս և եկեղեցի ոչ ընդ այլ ոք հարցանէ, այլ ՚ի հայելիս սուրբ գրոց յառեալ զաչս մտացն՝ զպաճուճանս առաքինութեան իւրոյ նովաւ ուղղէ։ Արեւին կարի վայելչապէս խորհելով առաքեալ՝ անուանեաց զեկեղեցի հարսն Քրիստոսի։

ՈՐՊԷՍ ԵՒ ՈՅՐ ԱՂԱՂԱՒԱ ՄԵՐՍ ԵԿԵՂԵՑԻ ԱՆՈՒԱՆ ԴՈՒՍՏՐ ՎԷՐԻՆ ՍԻՈՆԻ ԵՒ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

Սիոն վերին և Երուսաղէմ՝ ուսուցանեն մեզ գիրք սուրբք խորհրդականապէս առաքելոց և մարգարէից՝ զժողովս սրբոցն որ առ Յաւուրսն. ըստ այնմ զոր գրէ առաքեալ. «Ա՛լ երինն Երուսաղէմ ազատ է, որ է մայր մեր ամենեցուն...». և Ովսէ աքարիաս, «Ուրախ լեր յոյժ դուստր Սիոնի, քարոզեա դուստր Երուսաղէմի...», առ եկեղեցիս հեթանոսաց ասելով։ Քանզի զսա ծնան դասք մարգարէիցն հնոյ օրինացն աշակերտք. և նոր օրէնքս և վարժեալք սուրբ՝ ՚ի նախ եղելոցն՝ դուստր կոչեցան, զի նովաւ ծնան։ Եւակ այժմ անուանիւք դուստր ոչ նեղբիւրն Երուսաղէմի՝ այլ վերնոյն։ Յատ Պօղոսի. «Յառուցեալ էք ՚ի Սիոն լեառն և ՚ի քաղաք Յաւուրց կենդանւոյ Երուսաղէմ երկինս...». խորհրդոյս առ այն վարժելով զմիտս՝ ՚ի սուրբքն աստուածահաճոյք այժմ առ Յաւուրսն են, յետ նախուն առնելոց զզօրութի

աստանայի, և մարդկան յերկիւնս Աստուածոյ հոդելոյ, ըստ այնմ զոր ինքն ասէ Թէր. «Հայր, կամիմ զի ուր եմ եմ և սոքա ընդ իս իցեն»։ և առ աւազակին, «Այսօր ընդ իս իցես ի դրախտին»։ Ոչ պօղոս, «Ոչ լանել և ընդ Քրիստոսի լինել լաւ համարիմ»։ Ոչ Յովհաննէս աւետարանիչն ասէ Թէր. «Ի գալ իմում առ քեզ տէր Յիսուս զնանապարհս իմ անփորձ պահեա յօդային այսոցն»։ զոր և սուրբն եռես Նոնիոս, և գրեաց Ադամսա։ Ասացեալ և այլ ունիմք առակացոյց այսմ, բայց կարևորապէս սուղ ինչ բնախօսել է պարտ։

Հոգին իմանալի բնութիւն է և անմահ զգայուն և անձնաւոր, ի մեկուսանալն ի մարմնոյս և ի լքանելն զսա՝ յայտ է Թէ առ Աստուած դիմէ. իսկ ի գնալն նորա՝ գայ աստանայ և քննէ՝ Թէ գոանէ ի նմա ինչ յիւրոցն, մինչ զօրել ըմբռնել, որպէս և եռեսն Նոնոն։ Նման ի տեղի ինչ, ըստ որում գրեաց սուրբն Եփրեմ ի Ձառ մանանխին, մինչև յօրն դատաստանի անվտանգ ի աստանայէ, և անփառս Աստուծոյ։ Ասացյ առ որս ոչ գոանէ նա յիւրոցն, ըստ որում ասաց Քրիստոս, «Վայ իշխան աշխարհիս այսորիկ, և յիս ինչ ոչ գտանէ»,[1] և որպէս ոչ եգիտ Նոնոն, զերծանելն և առ Աստուած և ընդ Աստուծով հանգչիլն ի սէր և ի գիտութիւն նորա վայելեալ։ Ասացյ զնիւթապէս փառն ըստ գործոցն ոչ ընկալեալ մինչև յօրն դատաստանի, «Աստուծոյ վասն մեր լաւագոյն համարեալ զի մի առանց մեր կատարեացին»,[1] և առանց վշտակից մարմնոյս փառաւորեացին։ Այլ որպէս յայս կեանս ողջ անօսրանան մնաք, իմացականապէս տեսանէն և զուարձանան ի սէրն Աստուծոյ մարմին գոլով, սակայն մարմինն հեշտութեամբ ոչ կցորդի այսմ ուրախութեան, այլ մնասանդ վիշտն սորա ծնանի զնոյն, այսպէս և արքոյն մարմինքն ճնան ըստ անհաս իմաստիցն Աստուծոյ հեռքոց ապականութեան մինչև ի դատաստանն. և ինքեանք ըստ որում ի մարմնոյս կատարան՝ հակիրն Աս-

1 Աչխինքն առանց փառաց մարմնոյ։ Իսկ բանք Եփրեմի այս են. «Ի տեղի ուրեմն ճնան ոգիքն իւրաքանչիւր մարմնոյ, զի իբրև առանձ եռեսն երկրի զմարմինս՝ ի Ձառն մանանխին, էջ 363. հատ. Բ։ Տես անդ և զծանօթութիւնն։

տուած անձնապէս, առաւելապէս այժմ են առ նա՝ ա-
զատեալ ի կապանացն։

Այս այն ժողովն նոցա՝ վերին Սիոն և Երուսաղէմ ա-
նուանի՝ այսմ եկեղեցւոյս մայր, զի սա ի նոցանէ ծնաւ՝
և դուստր է նոցա՝ որք Հոգւոյ երկամքէն ծնան ըստ
Պօղոսի. "Արդեակք իմ, զորս դարձեալ երկնեմ,,. և
որպէս ծնունդքն միշտ յառաջանալով ծնանին յայլոց,
և ինքեանք զայլս ծնանին, և որ յետոյ՝ զնախն ունի
մայր, այսպէս առաքեալքն ծնան զՀետևողսն իւրեանց
և զնացին. որք միացին՝ զնոսա մայր կոչէին. և յետ նո-
ցա մի ըստ միոջէ ծնանէին սուրբք զմանկունս եկեղեցւոյ՝
և մեռանէին և գնան ի մի ժողովն. և սա Հանապազ
զնոցա ժողովն իւր մայր անուանէ. զորոց յիշատակն կա-
տարելով Հանապազ, որպէս որդին զի Համարձակաբար
ընդ մայրն խօսի քան ընդ Հայրն՝ երկնչելով ի նորա իշ-
խանական սաստէն, այսպէս և մանկունք եկեղեցւոյ
Համարձակաբար խօսին ընդ մայրն իւրեանց ընդ վե-
րինն Երուսաղէմ՝ ի ժողովս սրբոցն, և թ ախանձեն զնո-
սա բարեխօսել առ Քրիստոս Հայրն և Աստուած վասն
ինքեանց. իսկ նոքա ընդունին սիրով, և մայրենի գթո՛ւն
մաղթեն առ նա. զորոց պատուղ աղօթիցն բազումք պէս-
պէս աբանդելեօք Ձաշակեցին, և զայսպիսի կարծիս յան-
ձինս մեր Հաստատեցին՝ մայր անուանել մեզ զվերինն
Սիոն և Երուսաղէմ։

Թէ պարտ է Հաւատալ, Եկեղեցի աստուածոց երկին ցերկրի։

Աստուած մարդ եղև, և երկնաւորն երկրաւոր, ա-
պա և երկիրս երկին եղև. և զի այս է Ձնհպատապէս,
լի են գիրք սուրբք բանիւք որք ածեն զմեզ յայս Հա-
ւատս թիւն։ Աղաղակեցին և Հրեշտակք. "Փառք ի
բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, և ի
մարդիկ Հաճոյութիւն,,։ Ասէ և Պօղոս. "Օ միջնորմին
յանկոյն քակեաց, և եկն աւետարանեաց խաղաղութի
ձեզ Հեռաւորաց, և խաղաղութի մերձաւորաց,,։ Այլ
թէևս ասիցես՝ թէ այս յայնժամ էր մինչ տէր մեր
մարմնացեալ էր ի վերայ աշխարհի. և ահա ապա դիցուք
զասելն նորա, "Ահա ընդ ձեզ եմ՝ ո՛չ մի ժամանակ կամ

երկուս, այլ միևնոյն ի կատարած աշխարհի ,, . և "Որ երկու կամ երեք ժողովեալ են յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա ,, : Սմնատուն մնաց ոչ ինչ այս զարմանալի. զի նոյն տէրն է երկնի և երկրի, և այնպէս ստեղծուած նորա մարդն՝ ըստ պատկեր և հրեշտակք. այլ մեղքն էր պատճէ ի մէջ մեր և Աստուծոյ, և զատակնիքք յանցաց նոցին Աքաանայ, զոր բարձեալ Աքրիստոս՝ հաստատեաց զհաշտութիւն արեամբ խաչին իւրոյ, և երկայ զհետ մարդկան՝ Աստուծոյ Հայր կարդալ, որոց և ինքն Որդին սեփականեաց բուռն հարեալ զգաւակէն Աբրահամու. ուրեմն կարելի է հաւատալ երկնից իմանալ զհկեղեցի Աստուծոյ, ուր բնակէն հաւատարեալք հրեշտակաց յուսոյն մարդիկ, և փառաբանեն զնա նոցին կերպիւ: Պարտ է գիտել, զի իսկութեանն Աստուծոյ հասանի՝ որպէս ի մէնջ է ծածկեալ և ի հրեշտակաց. զի "Ո Աստուած ոչ ոք ետես երբէք ,, ասացաւ. բայց յորժամ սիրեմք զնա, զօրութիք և ի մեզ բնակէ, ըստ պատմ ի նոսա: Աև զի բնակեաց՝ ահա բազումք աղաղակեցին. "Ո փորձ խնդրիք զ Աքրիստոսի՝ որ խնամ ընդ ձեզ խօսի. և դուք տաճար էք Աստուծոյ, և Հոգի Նորա բնակեալ է ի ձեզ ,, . Հաւատամք զի Աստուած բնակէ ի մարդիկ որպէս և ի հրեշտակս. և մարդիկ բնակեն յեկեղեցիս և ի տաճարս սուրբս, ըստ պատմ և նոքա յերկինս. և միաձայնութիք երկնաւորացն և երկրաւորացս պաշտի սոցին արարիչն, որ է ի մէջ երկուց և երից ժողովելոց՝ ըստ անսուտ խոստմանն. և մարքեալ աչաց իմանալի լեալ յայտնապէս երևի, որպէս պք բազում անգամ տեսին, որոց բաց և անախտ էին միտք:

ՉԻ ՅՈՐԺԱՄ ՄՏԱՆԵՄՔ Ի ՏԱՃԱՐՍ ՍՈՒՐԲ ՊԱՐՏ Է ՀԱՒԱՏԱԼ, ԱՆԸՆԴՄԻՋԱՐԱՐ ԶՄԵԶ ԱԻԱԶԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՈՐՊԻՍ ԵԻ ՀՐԵՇՏԱԿՔ:

Փաւթն Աստուծոյ, և ներգործութիւն խնամոյն և զօրութեանն հասանի առ երկնաւորս և երկրաւորս. իսկ գիտութիւն բնութեանն և ոչ ումեք յարդ և ես եղև հասանելի յեղականացս, ոչ մարդկան և ոչ գերագունիցն քան զմեզ հրեշտակաց: Այլ ի զօրութիւնն՝ ամենայն

*ոք որ մնքրի՝ հոլի Յ[ստուծոյ և ՚ի գիտութիւն՝ ըստ առաւելութեան մնքրութեանն առաւելապէս հասեալ, ըստ որում զձայնս և իմանալ. զի որք մերձաւորք են առաւել լսեն, և որչափ հեռի են մարդիկ՝ աղօտանայ առնոսա, այսպէս իմանալիք և զլոյս արեգականն, զի իսկն նորա և բնութիւնն անհաս է ՚ի մէնջ, բայց ՚ի նշոյլս Աստուածայնութիւնն ըստ չափոյ մնքրութեան աչաց վայելեմք, ըստ այմ և իսկութիւնն Յ[ստուծոյ անհաս է ՚ի մէնջ, սակայն նշոյլ գիտութեանն մերձաւոր: Այլ ոչ տեսանի, որչափ զաչս իմանալիս ՚ի խոնարհ կոյս պղտցեալ՝ դանդաղիմք առ նա բարձրացուցանել ՚ի զբաղանոց աշխարհի պատրեալ, յապահովացեալ ՚ի սոցանէ՝ երևի մնաց լոյն իւր՝ առաւելապէս քան յամենայն տեղիս՝ ՚ի տունս որոշեալ անուանն Յ[ստուծոյ և փառաւորնա լցեալ. ուր ոչ երկու կամ երեք, այլ բազումքս զլոյս երեսաց նորա խնդրեմք տեսանել, և հաւատով յանուն Քրիստոսի՝ որպէս առաք հրաման, զ՚այր Թախանձեմք, Այոյց նախ մնանելն է, և ապա խնդրելն. գամք ՚ի տաճարս՝ որ է տուն Յ[ստուծոյ, և խօսիմք ընդ նա հանդարձակաբար արեամբն Քիստոսի մեզ զայս հանդիսութիւն:

Այայտ է ուրեմն զի Յ[ստուած ՚ի մէնջ ոչ ծածկի, այլ միայն մեղսութիւն մնաց հեռանայ ՚ի նմանէ. իսկ որ անառելիս ունէր զսա, տես թէ զինչ աղաղակէր. «Լանեմ յերկինս, և դու անդ ես. իջանեմ ՚ի դժոխս, և անդ ՚ի մօտ ես. յեղեսս ծովու թևաքս թռչիմ, և անդ ձեռն քո տիրէ ինձ...» Գանեաք զի և սիրելեացն իւր առընթեր էր, և յորժամ խօսէին՝ պատասխանէր. և ոչ է երկինք պատրուակ իմանալի հայեցողութեանն Յ[ստուծոյ որ զսիրտս և զերիկամունս քննէ. պարտ է ապա հաւատալ Հանգիստ փառաց նորա զգրոչեալ տունս, ուր ՚ի մնանելն առաջի նորա ծանիցուք լինել կոյրդութեամբ հրեշտակաց, որք իմացականապէս գիմանալի խոնկ մերոց աղօթիցն առնուն, և Յ[ստուծոյ նուիրեն, ըստ որում ուսաք ՚ի յայտնութենէ անտի Գովհաննու:*

ՉԻՆՉ ՆՇԱՆԱԿԻ ՉԵՒ ԿԵՐՊԱՐԱՆԱՑ ՍՐԲՈՑ ՏԱՃԱՐԻ ԵԿԵՂԵՑՒՈՑ ՉԻ ԱՆՋՊԵՏԵԼ Ի ԽՈՐԱՆ Ի ՀԱՅԱՐԱՆԱՑ ԽՈՐԱՐԱՆԻ ՏԱՃԱՐԻՆ

Այրկին՝ ի յերկիր հաւատացեալ գոլ զսուրբ տունս. վասն այսորիկ և՝ ի տիպ կայանի երկնաւորացն ձեւա-կերպեցաւ պատկեր սորա. ըստ որում՝ ուսեալ յառաքելոյն սուրբն Յովհաննէսէ առանդէ մեզ այսպէս. «Յան զի նոքա, ասէ, երանելիքն առաքեալք, անմարմնապէս մաքրութեամբ յերկրի հոգւով գոլով հրեշտակաց՝ կարող եղեն զերկնայնոցն կարգաւորութիւն մաքուր մտօք ձանաչել, և՝ ի ձեռն միջնորդութեան և գրոյ բանի աշակերտաց իւրեանց առանդել։ Այլ զի անկար էր մարմնաւորացս և աշխարհի վիճակելոց զվերնականացն դիտութիւն նոցա նմանաբար ուսանել, կարևոր Համարեցան մարմնական՝ նշանակօք մեզ զնոցին տալ՝ որպէս զի ուսցուք զգալի պատկերօք զերկնայինս, և բազմազանութեամբ՝ զծածուկսն, և նիւթովք զանխիթան, և մերովքս զգերագոյնսն, զրով և առանց գրոյ վարժեցին»։ Ո այս ասելով երանելոյս, զարթուցանէ զմիտս մեր ի մանաւանդ զեկեղեցի պատկեր երկնի, և զխորանն սուրբ և զսրբարանն բեմ ապացոյց փառաց աթոռոյն Ա՛ստուածոյ, զորով չուրջ կան անընդմիջաբար աթոռքն, քերովբէքն և սերովբէքն։

ՉԻՆՉ ՆՇԱՆԱԿԻ ԵՒ ՍԵՂԱՆՆ ՍՈՒՐԲ

Այի զսեղանն սուրբ՝ պատկեր Ա՛ստուածոյ. քանզի որպէս խաչն պատկեր նորա անուանի՝ ընկալեալ՝ ի նմա զօրութիւնն իւր, այսպէս և՝ ի սմա տպաւորեցաւ զօրութի և ներգործութիւն Հոգւոյն սրբոյ՝ քահանայապետականն օրհնութեամբ և կատարողականն մեռոնիւ։ Ասացանէ և զայս մեզ սուրբն Յովհաննէս՝ ի խորհրդածութիւն մեռոնին այսպէս ասելով. Ակն եթէ ընդէր սեղանն սուրբ, յորոյ վերայ նուիրագործութիւն պատարագին կատարի՝ սրբի մեռոնիս օծմամբ,

1 Մի օրին. Մարտիոս։ 2 Ցօր. միում Բազմաբէմ։

այսպէս իմանալոք, թէ ամենայն փրկագործութեան մերոյ պատճառ և սկզբնաւորութեան սկիզբն Քրիստոս է. որ և յետ ամենայն ճշմարիտական խոնարհութեանն՝ հաճեցաւ լինել սեղան վասն մեր. սեղան բոլ աստուածութեանն, և զմարդկայինն անձառ միացեալ ընդ հինքեան բնութիւնն՝ պատարագ ընծայեաց մահուամբ՝ ի վերայ աստուածութեանն, որպէս՝ ի վերայ սեղանոյ՝ Հօր. ուստի և եբեր կոտակ ազատութեան ամենայն մարդկան իւրով խորհրդաբար ողջակիզելովն. բոլ այսմ ինձ առցես զսրբութեան սեղանն, որով կատարի պատարագն նախ՝ ի ձեռն աստուածայինն օծութեան կատարեալ, որպէս թէ ինքն Քրիստոս բոլ մեռանիս հնարհաց իմացականապէս բնակի՝ ի սեղանն, և կատարէ զնա բոլ գերունակ աստուածութեանն նըմանութեան. ՝ի վերայ որոյ և մատուցանէ զինքն բոլ մարմնոյ պատարագ՝ որպէս և յայնժամ, և արդ օր բոլ օրէ բերելով՝ ի Հօրէ մեզ քաւութեան մեզոյ գնորհս, զի ամենայն սրբութեամբ լցուցէ զմարդիկ. առ այս հայի նաւիրական սեղանոյն արձանացումն՝ ի մէջ սրբոյ խորանին, և դնելն՝ ի վերայ նորա զաւետարանն սուրբ, այսինքն զՔրիստոս. և որպէս շուրջ զՔրիստոսով և անջրպետապէս՝ ի նմանէ կան հրեշտակք փառաբանիչք, այսպէս շուրջ զսեղանոյն անջրպետութիւք բեմին պարեն դասք պաշտօնէից. և որպէս զերպս օրհնութեան նորա՝ ի խոնարհ վայրէն առ Աստուած առաքեն՝ ի բարձունս, այսպէս երգք և պաշտամունք՝ քաղցրաձայնութեան սոցա արտաքոյ խորանին կատարի. և բոլ որում՝ ի նեղքին կողմ վարագուրին միայն կատարեան մեր եմուտ Քրիստոս՝ յանդիման լինել երեսաց Աստուծոյ վասն մեր, այսպէս՝ ի նեղքին կողմ խորանին միայն քահանայն մտանէ՝ ի պատկեր նմանութեան Քրիստոսի խորհրդական աղօթիւքն առաջի սեղանոյն բարեխօսել վասն մեր. և որպէս յոյս մեր այժմ Քրիստոս է կախեալ, բոլ որում գրի առաքեալ, որ գլուխ կանն է մարդկան՝ ի յերկինս, այսպէս յոյս ամենայն եկեղեցւոյն զքահանայն է կախեալ աղօթից՝ ի խորհրդածութեանէ պատարագին, յոր մաղթէ Աստ վասն նոցա:

1 Ի մի տրին. Պատճ.:

ՉԻՆՉ ՆՇԱՆԱԿԻՆ ՉԳԻՏԱՑ ԿԵՐՊԱՍՈՒԻՑՆ ՉՈՐ Ի ՎԵՐԱՑ ՍՐԲՈՑ ՍԵՂԱՆՈՑՍ ՍՓՈՒԵՄՔ

Ա՛ՍՈՒՆՑ խորհրդոյ աւանդութիւն՝ յընդհանուր եկեղեցի քրիստոնէից ոչ է, այլ առաուածայինն ինն ազգեցութեամբ՝ ի հարցն հաստատեալ. և մեզ թէ և էր կարելի անձամբ անձին զգօրութիւն նոցա խուզել, վայելուչ էր վասն հաւատարիմ զբննութեանս առնելոց զնացային առնուլ բան. ոչ թէ զի ամենևին տկարութիւնս կարօտի առ զօրաւոր մրցակիցս, մանաւանդ զի առաջադրութիւնս՝ ոչ եթէ վարդապետութիւն է, այլ օրինադրութիւն։ Ա՛յդ զայս խորհուրդ սուրբն Կղիմոս առաուածաբան յայտնէ՝ ի թուղթն որ առ Կորնթէոս կոմն այսպէս գրելով. "Ա՛ստքագոյն մնդոյն սիրեալ յաստուածեղէն պատարագին՝ արիմնութացոյն է սպասաւորութիւն Յովսեփայ. զի որպէս նա զմնդմինն պատեալ զտեառնն եդ՝ ի մնդոնի և՝ ի գերեզմանն յուզարկեր, յոյր ձեռն ամենայն ազգի մարդկան յարութիւն պարգևեաց, այսպէս և մեք՝ ի վերայ մնդոնի կտաւուն զՏայն առաջադրութեան և զբաժակին օրհնութեամբ սրբելով՝ ձնմարտապէս զնա մարմին և արիւն տեառն առանց յերկուանալոյ ձաշակեմք հաւատովք. և նա մեզ զանապականութիւն շնորհէ, որ՝ ի Յովսեփայն մեզ ընծայեալ տուաւ՝ ի թողութիւն մեղաց մերոց Աբրիատոս»։

ՉԻՆՉ ՆՇԱՆԱԿԻՆ ԱԱՏԻՃԱՆՔ ԱԹՈՌՈՑՆ ՇՈՒՐՋ ՉՄՐԹՈՎ ՍԵՂԱՆՈՎՆ Ի ՄԻՄԵԱՆՑ ՈՐՈՇԵԼԵԱԼ Ի ՎԵՐԱՑ ՈՐՈՑ ՓԱՀԱՆԱՑԱԿԱՆՆ ԱԹՈՌ ՀԱՍՏԱՏԵԼԵԱԼ

Ա՛ՐԲՈՂՋ պահելով զկարգ բանիս՝ և զայս կարեմք[3] ձնգրիտ[2] ուսանել. քանզի զեկեղեցիս երկին ուսաք, և զխորանն երկնից երկին և տեղի Ա՛ստուծոյ. և չէ պիտոյ վերստին հաստատել. այլ և զսեղանն պատկեր աստուածութեանն։ Ա՛յդ որպէս անդ շուրջ զԱ՛ստուածով

1 Մի օրին. Ա—ն—ր է—ս։ 3 Մի օրին. ձ—գ—ր—ի—։
2 Մի օրին. կ—ն—։

են անընդմիջաբար երեք դասք սերովբէից և քերովբէից և աթոռոց, այսպէս և որք են ի պատկեր նոցա քահանայք՝ բաղձեալ հանդչին ի տուտ ի խորհրդա-կանն ժամու։ Ասէ ոմն քահանայապետն մեր Կիւրիա-տոս «Ոչ ընդ երկինս, որպէս գրէ առաքեալ, և վեհա-գոյն նոցա նստաւ ընդաջմէ Աստուծոյ ..», այսպէս քա-հանայապետն որ է պատկեր Քրիստոսի, գայ յարտա-քին վայրէս յետ կատարելոյ զպաշտօն խնկարկութեն, որպէս և Քրիստոս զտնօրէնութեանն, և նստի վեհա-գոյն ամենեցուն ի բարձրագոյն աթոռն, որպէս ընդ աջմէ Աստուծոյ։ Ասանիմք զայս ի պատուութենէ սըր-բոյն Պետրոսի Ալեքսանդրու հայրապետին. քանզի նա երանելին մեծաւ ունելով զհայեցուածսն՝ ոչ կարէր համարձակել ինքն ի պատկեր Քրիստոսի նստել յա-թոռն, ուր յայտնապէս գնա տեսանէր։ Այլ ընդհա-զարդ հոգւոյն .. Պատկառեմ, ասէ, ի վերայ պատուանդանին նստել, և ոչ եթէ յաթոռն ..։ Ահա ձեզ գրեաւք սուաւ, թէ յամենայն քահանայապետական յաթոռ բազմի Քրիստոս. և ուր նա է, առ նովաւ և ընդ նո-վաւ են պաշտօնեայքն իւր հոգւիք հրեշտակք՝ առ ընթեր համագասիցն իւրեանց քահանայիցն, որպէս ասացաւ։

ԶԻՆՉ ՅԱՑՏ ԱՌՆԵՆ ԼՈՒՑՄՈՒՆՔ ՋԱՀՒՑՆ ԵԻ ԼԱՊՏԵՐԱՑՆ ԵԻ ԲՈՒՐՄՈՒՄՆ ԽՆԿՈՑՆ Ի ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՍ

Ա ՊՏՍ ծայրագոյն և անմերձենալի է Աստուած անհաս և անձառելի. և լոյսք յետ նորա երկրորդ գոյա-ցան յառաջին լուսոյն՝ հրեշտակացն դասակարգութիք. լոյս երրորդ հաստատեցաւ մարդս, որպէս ուսուցին վար-դապետք եկեղեցւոյ, և գրեցին արտաքին բնախօսքն, որ և է տիրապետ յաղագս իմանալոյն որ ի սա ներքինն մարդոյ։ Այլ քանզի եղաք զեկեղեցի ապացոյց երկնից առաջի հաւատոցն ասաց, լուցանեմք ի նա զլոյս ջա-հիցն, ոչ եթէ իբր Աստուծոյ առ ի նմանել լուսաւորել, որ անկարօտն է, այլ նշանակեն սոքա բազմութեամբ պայծառութեան իւրեանց զգումար բազմութեան հա-

1 Մի օրին. ի խորհրդեան։

ւատացելոյն որք կան ի տաճարն առաջի Աստուծոյ, Ա-
նա զայս պատկեր զգալի արարին իւրեանց խմանալի
լուսոյ մտացն, որ իմացականապէս արծարծի հրով սի-
րոյն Աստուծոյ։ Ա-նա զոր օրինակ ջահն որ ի խարուկէն
լուցեալ բորբոքեալ արծարծի՝ միշտ ի վեր կայս ձկտե-
լով, այսպէս և որք են յեկեղեցիս ժողովուրդք յաս-
տուածային սիրոյն կայծականց բորբոքեալ միշտ առ
նա վերանան՝ լուսաւոր խորհրդովք զվերինն խորհելով,
որպէս և հրեշտակք. քան զորս ամենայն զառաքեալն
լոյս անուանեաց, և ի ձեռս կուսանացն զլապտեր վա-
ռուց նոցա առակեաց, զմանս անդ պայծառացեալ՝ որք
առ ի փառս Աստուծոյ վառեալ պահեցան, և զայլս
խաւարեալս և շիջեալս՝ որք ի պէտս փառաց մարդկան
պահնեցան։

Արդ որպէս լոյն առ Աստուած սիրոյն արծարծելոյ
մտաց մեր կերպացաւ, այսպէս և խնկոյն անուշահո-
տութիւն բարդելոյ ծխոյ աղօթիցն նոցին տայ զտարա-
ցոյց. զի որպէս սա զգալի անուշահոտութիւնս մաքրա-
պէս հոտառելովքն հեշտացուցանէ զընդունողսն, այս-
պէս և մեր աղօթքն խմանալի խունկ ծխեալ առաջի
Աստուծոյ՝ զուարձացուցանէ զկամն նորա և ուրախա-
նայ ի նոցին։ Ա-ստ այսմ առնու Հայրն մեր «Եզոս ի
գլուխն որ վասն աղօթից» ի յայտնութենէ անտի Յո-
հաննու վկայութի այսպէս. «Ոսկեայ խնկոյն՝ աղօթք
սրբոցն, զոր քահն և չորք ծերքն կրէին. և տաշտ հա-
մարեալ սերն որ առ Աստուած, այսինքն հոգևորական
սէրն, յորում զաղօթսն ներգործեն հոգւով և ճշմար-
տութեամբ»։ Ա-յս և ի հին գլոց լուսաբ. «Հոտոտեցաւ
տէր ի պատարագն Աբելի ի հոտ անուշից». ոչ թէ
միայն ի զգալի ծուխ ձենձերոյն, այլ ընդունէր ընդ ի-
մանալի ծխոյ աղօթիցն և զգալի պատկեր նորա զպա-
տարագն ի հոտ անուշից. զի հոգևոր նուիրագործու-
թիւն Աստուած միայն ի հոգեղինաց հրեշտակացն պա-
հանջէ։ Ա-րդ մեր խառն զոլով ի հոգւոյն և ի մարմնոյ,
կամի և ի մեզ զմարմնաւոր հպատակութիւն՝ ըղձից հո-

1 Բան առաք Հօրն Եզեքիէլ այս-
պէս ունի. «Եր որ կամեցայ անու-
շահոտ խունկս կազմել, զերեքի
կնդրուկն և զկաթիս և զբունգն
և զտաշին առ հաւասարակ հանդեր-
ձեսցէ ըստ օրինացն. այս և չորից
առաքինութեանցս ցոյցք ե. Ճառ
ԺԸ։

գոյ ընթացակից. որպէս արարչին սուրբքն և աւանդեցին մեզ. ապա թէ ոչ զինչ կարօտանայ Աստուած մեզինացն և խնկից, զոր քրիստոնեայք ընծայս բերեն ի տուն նորա: Այլ սակայն ընդունի զսպացոյց հաւատոցն և սիրոյն, տալով նոցա նշանակ թէ այսպէս ընկալաւ և գմնաւորական խնդիրն: Ապա թէ առանց սիրոյ և հաւատոցն լինիցի, այսպէս պատասխանէ. "Խոնկք ձեր պիղծ են ինձ,,: Ակ եթէ հաւատան և սէրն առանց սոցին՝ ասէ. "Ձ մատուցեր ինձ խոնկս ի Սաբայէ,,: Այլ զուղիղն խնդրելով՝ երկոքեանս պարտ է, զի միմեանց վկայք լինիցին. մարմնաւորս հոգևորին, և հոգևորն մարմնաւորին, ի մարմին և ի հոգի եղելոցս անստգիւտ սիրոյ նշանակ:

ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹԻՒՆՔ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՀԱՄԱՌՕՏ ԵՐԿՆԱՒՈՐԱՑՆ ԿԱՐԳԱՑ

Օ՛ երկին յերկիր է տաճարս սուրբ՝ ահա ցուցաս որպէս կարծեմ: պարտ է գիտել զի և բնակչաց սորա դասք՝ ըստ նոցա սահմանեցան ի սրբոցն, զոր հաստատաբար գնել իրաւացի է. սակայն գնոսա նախ պարտ է ի մէջ առնուլ՝ որոց մերս ապացոյց է: Արիս դասս գնոսա ուսաք ի միմեանց անջրպետեալս կայանօք տեղւոյ. իսկ զերիսն դարձեալ զանազանեալ յիւրաքանչիւր կայանս յերիս երիս, ոչ կայանօք՝ այլ միայն անուամբ և պատուով:

Ա՛րդ նախ քան զամենեսեան և առաջին դաս ոզք շուրջ զԱստուծով կան անընդմիջաբար ամենայնքն և սերովբէքն և քերովբէքն, յինքնակատար աստուածային ենէն սոցա լուսաւորեալ և իմաստնացեալ՝ իջուցանեն աննախանձ կամօք զլուսաւորութիւն գիտութեանն և զչնորհս ի խոնարհագոյն դասուն, կոչեցեալ զնոսա իւրեանց գիտութեան: Արկերորդ զկնի նոցա դաս՝ իշխանութիւնք և զօրութիւնքն և տէրութիւնք, ոզք յառաքեալ լուսապիտութիւնն ի վերհագունեցին ըստ չափոյ զօրութեան իւրեանց վայելեալ՝ տան յեւս կրաւորագոյնսն: Արորդն գոլով յետ նոցա և վերջին դաս՝ պետութիւնքն և հրեշտակապետքն և հրեշտակք, առ որս իջեալ լուսաւորութիւնն ի նախակացելոցն՝ ի նո-

սին նահանջի. և այսպէս՝ ի ձեռն միմեանց միջնորդութեան ամբառնան և յետինքն՝ ի գիտութիւն առաւածայնութեանն բան կարի ընդունելութեան, որով և կատարեալք լինին և անուանին։ Իսկ յետ սոցա քահանայականս կարգաց՝ ամենառատ բարեգործութիւնն կալցի և զմնարդկան ազգ հաղորդեցուցանել այսպիսի կարգաց և շնորհաց, որպէս զի և զմեզ իւր գիտութեն առասցի հաղորդս և զարդարեսցէ փառացն շնորհօք, ուսոյց՝ ի ձեռն վերնոցն խորհրդազգածաց՝ գնեերքին և կեղեցի իւր այնպէս յօրինել յերիս դասս և յինն իշխանութիւնս պատուոյ և անուանց։

Զի ուսոյց բանս զեղանն պատկեր Աստուծոյ, և զբեմն տեղի նմին. ՝ի տեղի իսկութեանն Աստուծոյ շուրջ զնովաւ դասակարգէ բարեզարդութիւնն զեպիս կոպոսապետս, զեպիսկոպոսս, և զքահանայս, որք թէպէտ և անուամբ զանազանին և իշխանութեամբ, սակայն ՝ի մի դաս քանակին հաւասարապէս կալ շուրջ զսեղանոյն, և անբնդմիջաբար խօսել ընդ նմին խորհրդականն աղօթիւք, և ՝ի նմանէ ընկալեալ զլուսափայլն գիտութիւն՝ ի լուսանեն բարեյօժար կամօք ՝ի խոնարհագոյն դասն, այսինքն զքահանայութիւնն, զնաղորդութիւնն՝ և զայլ քահանայական կատարմունքն։ Արկղոյդ յետնոցս անչըպետութեամբ լեալին որոշեալ՝ սարկաւագք և կէս սարկաւագք և սաղմոսերգուք, լեալ ՝ի նոցա շնորհացն՝ հեղուն յևս յետինսն զնոյն. ոմն զքարոզութեանն վարդապետութիւն, ոմն զընթերցողութիւնն, այլ ոմն սաղմոսերգութեամբն զնոսա լուսաւորեալ։ Իսկ վերջին դաս կրօնաւորացն և ժողովրդոյն և երախայիցն զանազանութիւն՝ ընկալեալ ՝ի սոցանէ զշնորհ գիտութեան խմաստիցն՝ բան իւրաքանչիւր չափոյ լուսաւորին, և սոքա ինքեանս զնոյն նահանջեն։

Զայսպիսի աստուածանուագ կարգօք զարդարեալ մերս եկեղեցի՝ երկնայնոյն եկեղեցւոյ հանդերձակը զաստուածատեսակութեն նոցա մարմնական մասամբք նկարագրեալ։ Զի թերևս ասիցես, թէ ոչ գոյ առ երկնաւորսն կարգ որ մաքրութեան կարօտին, որպէս զերկայնոցն. և զայս ձշմարտեալք ոչ գոյ առ նոսա անսուրբ կամ կարօտ մաքրութեան, այլ մաքրութիւն ՝ի վերայ երկնայնոցն ասեալք զառաջնոցն հեղեալ առ յե-

սինան զլուսափայլութիւն, որովք աստուածային հանձարոյն զան տոքա 'ի գիտութիւն և 'ի լուսաւոր տեղեկութիւն։

ԶԻՆՉ ԲԱՑԱՏՑԱՑՏԻ ԱՆՈՒՆՆ ԵՐԻՑ ԿՈՉԵԼ, ԶՎԵՐԱԿԱՑՈՒՍ ԺՈՂՈՎՐԴՈՑ ԵԳԻՍԿՈՊՈՍ ԵԻ ՔԱՀԱՆԱՑ

Երէց՝ ծերունեացն է անուն, փոխեալոյն յերիտասարդական հասակէն և 'ի ծերութիւն յեզաչրջելոյն. այսպէս է տեսանել և յաստուածակոյս կոչին՝ տղայութիւն, երիտասարդութիւն և ծերութիւն հոգւոց. որպէս ասէ Պօղոս զանձնէ. "Երբ տղայն էի, իբրև զտղայ խօսէի և հանճարէի, այժմ եղեալ այր՝ զտղայութեանն խափանեցի.,։ Եւ որ միջամուխն էր աստուածային խորհրդոյն, զանուն իւր երէց գրէր. և զայս կերտոն յայս երիս հասակս որոշէր, որովք ուսանիմք ընթացս հասարակաց հոգւոց, որպէս և մարմնոյն, զի զնոր եկեալն 'ի հաւատս՝ մատաղատունկ առին կոչել գիրք։ Երդ որ զբ նորոգ որոշեալ 'ի խաւարէ աշխարհի և մերձեցեալ յօրէնսն Աստուծոյ՝ տղայ է այնպիսին, թէպէտ և հասակաւ մարմնոյն ծեր է։ Իսկ յառաջացեալ յայնմանէ առաքինութեամբ և գիտութիւն զօրացեալ, ոչ միայն զանձն այլ և զայլս խրատել, այնպիսին երէց է 'ի հասակ հոգւոցն. վասն այսորիկ զբահանայս երէցս անուանեմք՝ թէպէտ և մանկունք են, ծերունեացն մակարդութեամբ. յայտ առնելով կոչմամբն՝ կատարեալս զնոսա ըստ աստուածային հասակի առաքինութեանն, ոչ միայն անձանց, այլ և այլոց հրատարակելով զնոսա ուսուցիչս. վասն որոյ և ծերոց պատիւ առին 'ի մէջ ժողովրդոցն, որպէս հայր 'ի մէջ հոգւոց՝ երկամբք ծնեալոց մանկանցն նախադասեալք։

ԸՆԴԻՆ ՔԱՀԱՆԱՑ ԱՆՈՒԱՆՔ ԵՐԻՑՈՒՆՔ

Քահանայ՝ ըստ մերում պատշաձեալ լեզուի՝ մաքրող կամ սրբիչ անուանի, և մաքրագործութիւն երիցանց է՝ նախ զգործս ամենայն հօտին սրբել, և ապա զանձինս նոցա։ Քանզի ամենայն մարդոյ անկար է խրթին խորհրդոցն Աստուծոյ հասանել. իսկ սա նորին

ընտրութեամբ և ժողովրդեանն վկայութեամբ՝ իբրև զինեալսն առեղեակ նորին, ՚ի բաց որոշեցաւ ՚ի հասարակական կարգէ՝ միջնորդ լինել ընդ Աստուած և ընդ մարդիկ. այսինքն մաքրութեամբ մնաց առ Աստուած հպել, և վշտակցութեամբ մարմնոյ առ ժողովուրդն, և զհաղագութեի սոցա խոհական տրնութեամբ տնօրինել հանգուցատիպ քահանայապետին մերոյ Քրիստոսի՝ որ նստի ընդ աջմէ Աստուծոյ, և այնպէս փորձ է մերում տկարութեան, որպէս գրեաց Պօղոս. որոյ փոխանն գոլով քահանայ՝ հարկաւորապէս յոր գործէ՝ նայեցեալ՝ անտի ուշ ունի ժողովրդեանն, և առանձինն ինոսա ցնդեալ և զայրեալ ՚ի հոգս աշխարհիս և վերջացեալ վասն այնր ՚ի կանխեալցն առ Աստուած. վասն այսորիկ սա վշտակից գոլով նոցա մարմնով՝ և բնութեամբ Աստուծոյ մօտ, փոխանակ նոցա կայ առաջի Աստուծոյ, զամենեցուն համար պարտուց յանձն իւր ընկալեալ խոստովանի, և աղեկիզութեամբ զհասարակաց փրկութիւն հայցէ. այս է առաջին մաքրագործութիւն:

Ակ երկրորդն և վեհագոյնն՝ զառնն անարատ Քրիստոս, զոր մատուցանէ վասն նոցա Աստուծոյ Հօր պատարագ, և մաղթէ վասն նոցա այդ առնել ողորմութիւն Հօրին, որով գյաւիտենական ընկալաւք զփրկութիւն. զոր ընկալեալ պարգև ՚ի Հօրէ՝ բաշխէ ժողովրդեանն. և զպատմուճան հոգւոց նոցա ՚ի կրից մարմնոյն ազատեալ՝ այսպիսի լուացողական աձառով՝ սրբէ. ըստ այնմ: "Քրիստոս Յիսուս սրբէ զմեզ յամենայն մեղաց ,, : Արբէ զարձեալ և զերախայան մկրտութեամբ, զմեզոք շաղախեալսն թողութեամբ, զլարեգործան օրհնութիւն. ուստի և սիրապէս առ զմաքրողականն անուն, որ է քահանայ:

ՉԻՆՉ ՉՕՐՈՒԹԻՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՆ ԱՆՈՒՆ ՅՈՒՅՍՆԻ

Նոյնանգս այսորիկ ոչ եթէ բնաւորն էութեան է, այլ նեղգործութեան գործոյն, յորմէ վերջացեալք՝ պիտակ զանունն կրեմք անձանց նախատոհնս, ըստ որում եմք իսկ: Որ օրինակ իշխան ոք կոչի՝ յորժամ

1 Մի օրն. Օ՜՜՜

ունի որոց իշխէ, և ապրայ՝ յորժամ ունի որոց առաջնորդէ։ Այսպէս առանց նմին Թոյն սակ անուն է նմին այսպանումն, այսպէս և Եպիսկոպոսն անուն՝ ի հելլենացի լեզու է, իսկ առ մեզ այցելու Թարգմանի. և այցելութիւնն՝ ընդարձակութիւն առաստութեան է առաջնորդելոյն, վասն այսորիկ զտիրապէս գԹուԹեանն առ զանուն. զի առաջնորդել է՝ միայն հովուել զորս՝ ի ձեռն, իսկ այցելութիւն՝ ի սահպելոյ գԹոյն, և կորուսելոյն միշտ՝ ի խնդիր ելանել և զամենեսեան ողորմած կամաք սիրել. ըստ այնմ այցելութեանն յորժամ այց արասցէ ձեզ Աստուած, այսինքն այժմ անտես եղելոց յայտմ մանաւ խնամոց։

Արդ սա հոչակ անուամբն՝ Թէ միշտ այց առնէ և նախախնամէ սիրովն Աստուծոյ զամենեցուն հոգւոց փրկութիւն։ Այլ վերջացեալ յայսմանէ և ընդ այլ Ճանապարհ գնացեալ՝ ոչ կարօտիմ՝ ի բանէն զոր խօսեցաւ Վարիտոս ընդ իս դառել, այլ նոյն ինքն անուն իմ դառի զդառապարտեալս յաւուրն յետնում։ Այլ զիարդ միխԹարեցայց յուսակտուր կործանեալս՝ ի կամս իմոց։

ՉԻՆՉ Է ՏԻՐԱՊԷՍ ՓԱՀԱՆԱՅԱԴՈՐԾՈՒԹԻՒՆ ՍՈՑԻ

Հրեշտակ լինել Աստուծոյ առ մարդիկ, և՝ ի սոցանէ միջնորդ խաղաղութեան առ Աստուած. ըստ այնմ զոր մարգարէն ասէ առ սոսա. «Ե՞ր ըԹուն քահանայիւղ զգուշացոյն գիտութեան, վասն զի օրէնս խընդրեսցեն՝ ի բէն՝ որ հրեշտակ ես տեառն ամենակալի..։ Այսպէս արար՝ Թէ չէ բաւական սորա միայն սրբութիւն անձին, այլ պարտի գկատարեալն ունել զգիտութիւն աստուածայնոցն. զի՝ ի խնդրելն՝ ի նմանէ զՃանապարհս ընԹացիկ օրինացն Աստուծոյ ժողովրդեանն՝ կարող լիցի ցուցանել զուղիղն։ Այլ ցուցանէ՞ պակս, եԹէ ոչ յորժամ ապացոյց բարբառոյն զանձն տայ, և զակռսիս խնամատարութիւնն նմին օժանդակ, զոր դիւրաւ մի ոք հաստատեսցի ստանալ. այլ զոր օրինակ հրեշտակ Թագաւորին ոչ միայն ուշ ունի ուր առաքի պարզաբար գՀրաման ասել, այլ այնպէս ձևացուցանէ գնոյնն որով հնարաւոր կարծիցէ գՀաւանութիւնն, և ջան նորա ոչ

միայն ՚ի պատմելն՝ այլ և ՚ի հնազանդեցուցանելն. պարտական է ամենայն իրօք և կարգեալն յայս պատիւ Աստուծոյ հրեշտակ և հրամանատար նորին՝ քահանայք, նախ զամենայն կամն և զպատուիրանս Աստուծոյ որ ՚ի հին և ՚ի նոր կտակարանս ամիծսիեալ յանձինս իւրեանց ամբարել, և ըստ նոցա զընթացս քաղաքավարութեան կերպացուցանել. և ոչ այնու բաւականանալ՝ այլ ուսելոցն հրեշտակ լինել, և ՚ի դիմաց Աստուծոյ միշտ վայելչապէս ժողովրդեանն զնոյն պատմել. այսինքն այլով օրինակաւ խօսել ընդ մանուկն, և այլ ընդ ծերն, այլ ընդ յանցաւորն, և այլ ընդ բարեգործն. ոչ զնոյն օրինադրել ամենայնեցելոյն և կուսին, ըստ որում գրէ պարզաբար առ Տիմոթէոս՝ առաքեալն: Այսպա որպէս յարացոյցն հրեշտակ Թագաւորին՝ նուաձեալ զաշխարհն խնամատութեամբ առ նոյն վերտին դառնայ փոխեալ զբարբառ իւր. և որ աստ զթագաւորն ահաւոր և բուռն ցուցանէր, և առ որս եկն՝ զնոսա ըստամբակս, մնեալ առ նա զթագաւորին քաղցրութիւնն այնուհետև յիշէ, և զաշխարհին հնազանդութիւնն. այլ և պատարագ ածեալ ՚ի նոցանէ՝ ՚ի հաշտութիւն նուաւա աղերսէ. ըստ այսմ և սա քահանայս՝ յետ ժողովրդեանն ցուցանելոց ահաւոր զօրէնսն և զհրամանս Աստուծոյ, դառնայ առ նոյն աղօթիւքն, և զմարդասիրութիւնն նմին յուշ ածելովին՝ յիշէ զպէտսն ողորմութիւնն ՚ի վեր քան զարժանն մարդկան եղեալ. և խոնարհ կերպարանօք և արտօսրալիր հայցուածովք՝ թաւխանձէ զնա, մնանաւանդ և զոյացն տառապանսն պատմէ առ որս եկն հրեշտակ. Ալ տանգին, տէր, անմարմինս ունին թշնամի, անզէնք չարագործ՝ մարտակից. ներեա զթելոյն սոցա քում պատուիրանի. մարմնոյ վիճակեցան աղցաւոր կրից, նախախնամեա զսոսա յիւրեանց տառապանսն:

Այսպիսի է զօրութիւն ամենայն քահանայական աղօթից փոխանակ ժողովրդեանն և վասն նոցին պաղատանաց. ապա տայ և պատարագ ՚ի սոցանէ Աստուծոյ Հօր՝ պատճառ և միջնորդ խաղաղութեան: Այս սա ոմն այլ ոք, եթէ ոչ այն որ եկն ոչ դատել զաշխարհ, այլ

1 Ա՛ի օրին. Հայերեաց. և այլ օրին. Հաւատան.

փրկել, որ կայ ընդ աջմէ Աստուծոյ բարեխօս վասն մեր. և միշտ կենդանի առնել կարող է զինքեամբ մատուցեալն առ Աստուած. որպէս գրեաց Պօղոս. Յիսուս Քրիստոս Աստուած Հնամարիտ և գլուխն եկեղեցւոյ իւրոյ. զոր առեալ ի մէնջ որպէս զգլուխ՝ նովաւ զամենայն անդամն գնէ, նուէր ի վերայ սրբոյ սեղանոյն Աստուծոյ Հօր՝ ասելով, տակաւացան տէր, հեղգացան, ծոյլ գտան առ կատարումն քո սուրբ պատուիրանին. մեզաք և անօրինեցաք. և սահմանեցեր "Ինձն որ մեղիցէ նոյն և մեռցի ... արդ այս տէր մեր և գլուխ մեռանի վասն մեր մարմնով, և մեք ամենեքեան մեռանիմք ընդ սմա կամօք. արդարացո զմեռեալքս ի մեղաց մերոց, զորոց դատապարտութիւնն սա յանձն իւր ընկալաւ, որ անմեղս է. և սրբեա սովաւ զնիւթ մնաց մերոց՝ կենդանապէս պաշտել զքեզ Աստուած կենդանի. քանզի տեսանես, ահա մահ եղև վասն ուխտին, որում յանցաւորք գտաք՝ առցուք զաւետիս հրաւիրեալքս ի ժառանգութիւն կենացդ յաւիտենից. այս է քահանայապծելն։

ՅՈՐԳԻՍԵԱՆՑ ՀԱՅԱԿԱՑ ԻՐԱՒՈՑԻ Է ԱՒՆՈՒԼ ԶՆՆԱՁԱՆ ԱՏՏԱՃԱՆՄՆ

Յատն է այս Հնամարտութեամբ օրհնային, և բնութեան կրիւք, զի տէրն մեր որ աւետականն է բնութիւն, լռեալ գաղարեաց ի վարդապետականն գործոյ, մինչև սահման մարմնական հասակին զլուսն առեալ ի թիւ երեանից ամանց ժամանեցաւ. և զՅովսէփ մինչև ցայս կէտ ընդ կիրճ փորձանաց անցոյց, և ապա ընտիր գտեալ՝ թագաւոր կացոյց Աղեքսոս. նոյն և զԱւթէ և զՈվսէս. որովք ուսանիմք՝ թէ անմարթ է վազվաղել և զոք ի մանկանց վասն Հմտութեան յերիտասարդութեան աստիճան վերացուցանել, որպէս և զծերն յաղագս տգիտութեան. այլ երկոքումբք հարկ է լինել կատարեալ. որպէս զի մի մատաղ հասակն իւիք փորձեալ յառաջադիմանալոյն՝ ի գատաստան անկցի սատանայի, վասն այսորիկ նախ մինչ դեռ մանուկն է՝ ըզպաշտպանութեան գործն կատարեսցէ, զընթերցողութեանն, զաղմռողութեանն, յետ որոյ և զսարկա-

ազութեանն. և ապա փորձ և ընտիր գտեալ բարիք, և անցեալ ընդ երիտասարդական հասակին յեղյեղուկ դիւրաշարժութիւնն, առցէ զպատիւ կատարելոյն. որպէս զի զգուշագոյն լինիցի նմա ընտրելն, և մի դիւրաւ գտանելոյն դիւրաւ արհամարհելի։

Եւ այս և Սաղոմոնն բազում անգամ խրատէ զմեզ յառակին՝ զընութեանս փորձ ունդեալ. քանզի ասէ՝ որպէս ոչ գիտաս նաւուց ծանեալ ի ջուրս կամ զարծուոյ յօդս, այսպէս և ոչ գիտաս մանկան յերիտասարդութեանն. այն զի ընդ մանկութեան փոփոխման և միտքն տատրաբերեալ մնայ զառաջնորդական պատիս հաւատոյ՝ զգուշալի է։ Եւ մի՛ ի միջ կացցէ այժմ մեզ Դանիէլ կամ Տիմոթէոս, վասն զի ոչ մի ծիծառն գարուն առնէ՝ ասէ Յոհաննէս Ոսկեբերան։ Պատուիրանն մեզ ամենայն կարգաց և կրօնից Աբրիտաս տուաւ, և ոչ այլ ոք. իսկ մեք տեսաք այժմ օրինաւոր սահմանի ի նեղբոյ կացեալ մեզ առ ի խրատ։

ՈՐՈՎ, ՈՐՈՇԵԱԼ, ՀԱՆԱՁԻՒ ՑԵԿԵՂԵՑԻ ԱՑՍՈՒԻԿ ԴԱՍՔ

Ընդունացական և իշխանական տեսակ զգեստուցն յայտնապէս զանազանէ զսուտ ի միմեանց. քանզի ամենայն որ ժառանգաւոր է, զօտելոյծ զգեստուն տատրացոյց տայ՝ թէ հաւատացեալ լինի գործոյն իշխան եմ ի միջ եկեղեցւոյս. իսկ կրօնաւորքն և աշխարհականքն և երախայքն զօտուով կացեալ յաղօթեն՝ զծառայական իւրեանց կարգն խոնարհութիւն ցուցանեն։ Այլ տես և այլ զանազանութիւն, զի մի զանն և երեք կարգն, այսինքն երախայիցն հաւատացելոյ և սրբոյ ժողովրդեանն, և կրօնաւորացն կուսանաց՝ զօտուով կան յաղօթեն. իսկ կէս սարկաւագացն և ընթերցողացն և սաղմոսագաց երեք կարգն և մի զանն՝ զօտելոյծ և թեւանեօք պատմուճանաւ։ Այլ որ ի նեղբս են ի խորանն սուրբ՝ մի զանն և երեք կարգն, այսինքն քահանայքն և եպիսկոպոսք և եպիսկոպոսապետք՝ զօտելոյծ պէսպէս ունին զպատմուճանսն և առանց թեւանեաց. որ զայս նշանակեն, թէ որք զօտուին՝ են պատրաստական սուրբ հրամանին, որպէս զծառայս կատարել զոր ինչ պատգամաւորութեամբն իւրեանց բերէն Աստուծոյ

բան հրամանի։ Այլ սոքա ոչ զկնի նոցա ժառանգաւորք են և իշխանք, բայց ոչ սիրապէս հրամայողք ժողովրդեանն, այլ պաշտօնեայք նոցա՝ ի ներքոյ քահանայական գաւազն հրամանի. զի զոր ինչ նոքա բանիւ հրամայեսցեն, սոքա գործով առ ժողովուրդն կատարեն, վասն այնորիկ և Թէզանեօքն պատրաստ առ՝ ի գործ ունին զձեռս։ Այլ զինչ է գործն սարկաւագին. խոնկ արկանել, և զխորհրդական սպասն բերել. զպատցն զմոմեղէնան և զայլ ինչ կրել. կէս սարկաւագացն զգեղսունն պահել։ Այլ քահանայական կարգն յայտնի՝ ի գործոցս որիշ է, միայն գործ է նոցա առ Աստուած պատգամաւորութիւնն, և խօսելն աղօթիւք վասն ժողովրդեանն, և իշխանութեամբ հրամանն տալ պաշտօնէիցն զիւրաքանչիւր գործ. յաղագս որոյ պէղնաւոր և առանց Թէզանեայ ունի զպատմուճանն, յայտ արարեալ՝ Թէ բանի միայն է սպասաւոր, և ոչ մարմնական գործոյ. բանական աղօթիւքն միայն պաշտօն տանի Աստուծոյ և ժողովրդեանն, և ոչ զգալի գործով. քանզի խնկարկելն անօրինութիւն է նմա, և երկրորդին առաւձանի, որպէս ցուցաւ, և ոչ սեպհական գործ, այլ զիջումն՝ ի պէտս հօտին։

ՉԻՆՉ ՆՇԱՆԱԿԷ ԲԱՑԱՒ ԳԼԽՈՎ ԿԱՄ ՍՈՑԱՒ Ի ՏԱՆ ԱՍՏՈՒԾՈՑ Ի ԺԱՄ ԱՂՕԹԻՑՆ Ի ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՏԵՂԻՈՑ ՓՆՆԵԼԻ Է ՉՍՏՈՑԳՆ

Հեթանոսաց առաքեալն Պօղոս կրթելով զնոսա յօրէնս Չմարիտս, կարի լինի կարևոր հրամայէ նոցա ունել զայս կերպարան. «Աչն ամենայնի, ասէ, գլուխ Քրիստոս է. և յորժամ՝ սա յաղօթս կայ, եթէ ծածկէ զգլուխն՝ յանօթ Համարի ինքեան զգլուխն իւր ըզՔրիստոս. վասն այսորիկ ոչ պարտի ծածկել զգլուխն, զի պատկեր և փառք Աստուծոյ է...։ Հետոյ և՝ ի բնութիւնն ապատանեալ՝ վկայութեամբ նորա Հաստատէ զասացեալն. «Աչ ոչ բնութիւնդ իսկ ուսուցանէ զձեզ, զի այր եթէ գիսաւոր է՝ անարգանք են նմա, բայց կին եթէ գիսաւոր է՝ փառք են նմա։ Աչպա Թէ ոք այսմ հակառակի, մեր սովորութեանն պատաբոյ գոյանի, և եկեղեցեացն Աստուծոյ որ չՆախօք և չԱչառաջեմ...

առաց ՚ի վախճան օրինացն ։ Արդ զի մի իւիք հակառակ ամբարձցի եկեղեցի հեթանոսաց օրինադրին իւրոց Պաղտոսի և ընութեանն սահմանի, ոչ ծածկէ զգլուխն ՚ի մտնելն ՚ի տուն Աստուծոյ աղօթել. այլ և զաւելորդսն ՚ի գիսացն՝ ՚ի որ անարգանք են նմա՝ յապաւէ. որպէս և կինն՝ զի գէսքն փառք են նմա՝ ծածկութիւ օրինացն օժանդակէ. սակս այնորիկ ամենեցուն հասարակաց առանց հարկ է զաւելորդսն ՚ի գլխոյ հերացն յապաւել և ՚ի ժամ աղօթիցն բացաւ գլխով լինել. զի մի իւիք լիցուք առաքելական օրինացս դրժող ։ Յապէս տեսանեմք այսօր զընթացս նախապատիւ աղգին Յունաց, զի հասարակաց են բացագլուխ և առանց յաւելուածոյ հերաց. և զայս փառս ինքեանց ունին, որպէս և գրեաց առաքեալ ։ Սակ ժառանգաւորք եկեղեցւոյ ոչ թէ միայն որպէս զհասարակաց ժողովուրդն՝ զհերսն յապաւեն, այլ և զգագաթունսն ամենևին ՚ի հերաց մաքրեալ ջնջեն, զոր մի կարծեսցես վայրապար և առանց խորհրդոյ, այլ եկ և քննեսցուք ըստ կարի, զինչ հարկ եղև առաքելոյ սահմանել զայս, և զմեզ ՚ի սոյնս կրթել. և իմանանամք այսպէս ըստ կարի մեր ։

Աստուած զմարդն ՚ի հողւոյ և ՚ի մարմնոյ մի կենդանի արար, և զերևելի մարմինս գործի ետ իմանալին մտաց, որպէս զի սորա յայտնի կերպարանքն զնորա ծածուկ կամն հրատարակեսցէ. այսինքն ջրով զմարմինն ՚ի մկրտութեանն լուանալովն՝ զմտացն յաղտոյ սրբելն հաստատեմք, և իւղով զմարմինն կնքեալ՝ զնոգին սուրբ ՚ի միտս դրոշմեմք, և զպարանոց յաղօթս կորացուցեալ՝ զմտացն առաջի Աստուծոյ զխոնարհելն ցուցանեմք, և զձայն բարձրացուցեալ, զնորա առ Աստուած աղաղակն յայտ առնեմք. զի մարդ և պատկեր Աստուծոյ՝ նա է, և սա համագոյ նմին և զգալի կերպարան ։ Արդ որպէս ամենայն տարացոյցք արտաքին մարդոյս ներքնումն ներգործութեան է յարացոյց, այսպէս և այս. քանզի որպէս գլուխ ՚ի մարմնին է առաջին և իշխանական ՚ի վերայ այլոցն, այսպէս և ՚ի բանականսն հոգւոյ մասունք առաջին և իշխանական է անձնիշխանն միտք, ընդ իւրով ունելով զմարմինս զդայարանովք և զգալի ընդ-

1 Մի օրին. Ի գլխոյ ։

և զցասմնական տեսակն և զցանկականն, զի սորա հրաման ետուն ըստ Հնմարտութեանն վարին. և որպէս ՚ի գլուխս բազմապատկիկ է հեղձն և միշտ ՚ի յաճումն, այսպէս և ՚ի միտս անթիւ են խորհուրդքն և հանապազաձինք։ Այլ որպէս զհերացն աւելորդն ՚ի գլխոյս հատանեմք, այսպէս և առ Քրիստոս յուսովն ՚ի մտացն զաւելորդ խորհուրդսն յապաւեմք. և որպէս զգլուխ ՚ի բաց ունիմք առանց նիւթեղէնն ծածկութիւ, այսպէս և ամենայն քրիստոնեայ՝ զմիտսն ՚ի բաց ունի առաջի Աստուծոյ, և զխորհուրդս նորա առանց մարմնական ցանկութեանց. և ոչ է ծածկեալ զնա ինչ յաշխարհէ և ՚ի սորա կրից, բայց միայն առ յոյսն իւր Քրիստոս սէրն և հաւատն. զի սորա է նա գլուխ, և ասի Յակոբեայ՝ մտացս, և սորին գիտութեան նախ և առաջին առ նա հաւատն։ Այլ եթէ ծածկէ զգլուխ մարմնոյն յաղօթեքն, որ է ապացոյց գլխոյ հոգւոյն մտացն, յայտ առնէ թէ և միտքն է ծածկեալ ՚ի մարմնական նիւթաւոր խորհրդոց և ցանկութեանց. և որ այսու զմիտքն ծածկէ, զՔրիստոս և զառ նա զյոյսն և զսէրն ամաչեցուցանէ։ Այլ յորժամ լսես՝ «Քրիստոս ՚ի ձեզ է, և զՔրիստոս զգեցեալ էք, և տաճար Աստուծոյ էք...», զմիտսն իմա. զի նորա գիտութիւնն հաւատն և սէրն զօտսա ընդունի և տաճարանայ. և պարտ է մարմնական գործոյ զնորա ծածուկ ներգործութիւնն հռչակել. այսինքն, թէ որպէս չիք մարմնական ծածկոյթ ՚ի վերայ իշխանական անղամոց գլխոյս յաղթելս առ քեզ, Աստուած, այսպէս և չիք հիւթաւոր խորհուրդ ՚ի վերայ մտացս, այլ միայն Քրիստոս, և առ նա դաշն և սէրն և հաւատն և յոյսն։ Իսկ զի առնեցուն քրիստոնէից անկ է զաւելորդս հերացն յապաւել, բայց ժառանգաւորացն զամենայնն մաքրել ՚ի գագաթանէն, զայս իմանամք՝ թէ մեք որոց մտաց եղև գլուխ Քրիստոս, վասն առ ՚ի նա սիրոյն և յուսոյն հատաք ՚ի խորհրդոց մերոց զամենայն աւելորդ ցանկութիւնս աշխարհիս, այսինքն զշնութիւն, զգողութիւն, զպղծութիւն, զսպանութիւն, զագահութիւն և զայլ տեսակս մեղաց, և միայն հարկաւորսն բաւականանամք, սուրբ ամնանութեամբ, և արդար ստացուածովք. զնոսին և խորհիմք, և ոչ զանիրաւսն, որպէս հերձդ զկշիռն ու-

նի՝ և ոչ աւելի։ Այսոյ ժառանգաւորքն զի սակրեն զայն, յայտ առնեն՝ թէ ամենայն ցանկութիւն աշխարհի պակասեաց ՚ի նեղբին խորհրդոյ մերոյ և ընդհատաւ. յաղագս այսր եղաք յեկեղեցիս ժառանգակից և եղբայր Աբիստոսի և բարեկամ, ՚ի ծառայական կարգին վերացեալ. զի "Այնչեցաք զամենայն գիտութի՝ հպարտացեալ ՚ի վերայ գիտութեանն Աստուծոյ, և գերեցաք զամենայն միտս ՚ի հնազանդութիւն Աբիստոսի...

Այսոր եթէ հերքն տարացոյց է խորհրդոյ մտացն, բազումն է այսր ՚ի գրոց ածել վկայութիւն. իբր զայն՝ "Ազգա՛տ եղեն քան զհեր գլխոյ իմոյ՝ ոչք առեին զիս տարապարտուց... և "Փրկէ Աստուած զգլուխս Հինամեացն, և զհերն կարձնովին... և տէրն, "Ձեր և ամենայն հեր գլխոյ Թուեալ է, յայնմանէ որ քննէ զծոշումն ընդց և ոգւոց։ Այդ քանզի եկին Աբիստոս, և զմեզաց զորոյ Աովսէս զկատարումն եհատ, նա զարմատն և զցանկութիւնն. և կատարումն մեղացն է մարմնով, իսկ արմատն մտօք, վասն այսորիկ Աովսէս յօրինակ հատանելոյ զկատարումն մեղացն՝ զմարմնեան Թլփատեաց. իսկ առաքեալ յառաջոյց զարմատն հատանելոյ խորհրդոցն՝ զհերսն ՚ի գլխոյն։ Այսց մի՛ ոք ներհակ բերցէ բանիս, Թէ վասն զի արդեամբք տկարացեալք առ խորհրդոյս զօրութիւն, նշկահեացուք և զօրէնս. քանզի եթէ զայս այսպէս խորհիս, ապա և մկրտիս մի, զի մեռելութեան նշանակ է ընդ Աբիստոսի, և մահու նորա տնկակցութիւն։ Այլ ահա Թէպէտ և այսպէս ուխտեմք արդեամբք, ըստ խորհրդոյն սակաւուց է մեռանել. և քահանայանամք, բայց ՚ի գլուխ օրինացն որպէս պարտիմք՝ ոչ ժամանեմք. այսպէս և զայս օրէնս՝ զխորհրդոյս զօրութիւն գիտել պիտի, և զմարմինս ըստ առաքելական օրինաց կերպարանել. իսկ եթէ մտօք տկարանամք հաւատալ նմին և առանց պատրուակի խորհրդոյ լինել, այսպէս հաւատացուք՝ Թէ մարմնոյս ձև զկան ցուցանել՝ Թէ զայս ախորժեմ բացագլուխ լինել և ըստ նեբբին մարդոյս, որպէս արտաքինս է. իսկ Թէ ծածկի սա ոչ յիմ՝ ախորժակաց, այլ ՚ի Թշնամւոյն ներածութեանց։ Այլ առեալ յուսոյն մեր Աբիստոսի զկան մեր նշանակաւ ապացուցին, զտկարութիւնն չնորհօքն իւր արդարացուցանէ ՚ի ձեռն

հաւատոյն. զի նա է միշտ արդարութիւն մեր, և ոչ գործն. այլ զհաւատսն տամք և՛ի նորա գործսն վայելեմք. ըստ այնմ, "Ը նորհօք նորա էք փրկեալք՝ի ձեռն հաւատոյն. և այս ոչ՝ի ձէնջ՝ այլ Աստուծոյ պարգև է, ոչ՝ի գործոց՝ զի մի ոք պարծեսցի.,: Արեմն որ անգոմանէ զօրէնս, զհաւատն առ ընդոյն արհամարհեաց, և՛ի գործս իւր յուսացաւ, և՛ի մարմին բազկի իւրոյ ապաստան եղև, որոց տկարացեալ՝ ոչ հաւատոյ ընդոհօք արդարութեանն. իսկ որ կատարէ և զգործն՝ որ ըստ ապացուցին ոչ կարէ, հռչակէ՝ թէ կամիմ զնոյն, բայց ըստ տկար բնութեանս վերջանամ. և՛ի ընդոհիդ Քրիստոս՝ի ձեռնտուութիւն յուսամ զոր հաւատն և ակն ստանայ սեպհական: Քրիստոնէից արդարութի՛ն Քրիստոս է և առ նորա ընդոյն և յոյսն և հաւատն. "Օ՛ի թէ գործովք արդարութի՛ էր, ապա Քրիստոս զուր մեռաւ.,, ասէ առաքեալ. իսկ զի չէ զուր մահն, յայտ առնէ՝ թէ զոր ինչ տկարանայք յօրինաց խնդ կատարել, առ խա յուսացիք, և սրբեմ. զոր գիտելով առաքեալ նորին ասէ. "Արիւնն Յիսուսի սրբէ զմեզ յամենայն մեղաց.,:

ՋԻՆՉ ԵՒ ԵՒ Ո՞ՐՊԻՍ ԱՅԼ ՄԱՐՄՆՈՑ ՋԳԵՍՏՔ ՈՐՈՎ ՊԱՃՈՒՃԵԱԼ ԲԱՑԱԳԼՈՒԽ ՋԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՊԱՇՏՕՆՆ ԿԱՏԱՐԵՆ ԺԱՄԱՆԳԱԿՈՐՔ ԵԿԵՂԵՑԻՈՑ

Յոյժ ահասարակ բանիւ՝ թէ ամենայն ժառանգաւորի է զգեստ գօտեղոցն, և իշխանականն, և գլուխն բաց, և առանց հերացն պատրուակի, այսու հետև խընդրելի է, ուստի եգիտ զայս տեսակ ձևոյ կերպարանսդ եկեղեցի, և կամ՝ի յոյնքան տարազս կերպարանի՛ի մէջ իւր բաժանեաց: Արդ խուզեալ Հիմարտասակս գտանեմք զոյն Աստուծոյ հրամայեալ Մովսեսի. ըստ այնմ՝ զոր առաքեալ ասէ. "Ամք առակաւ և օրինակաւ երկնաւորացն՝ի վրան ժամուն պաշտեին.,: Այլ դու մի զայն ընդդէմ բերեր՝ թէ զատուեր հանդերձելոցս ունեին օրէնքն, և հինն անց. քանզի է ինչ՝ որ անց՝ի հնոյն, և է՝ որ առաւել ևս հաստատեցաւ: Այլ քանզի յերից որոշեաց Մովսէս զվրան ժամուն, ՝ի սրբութիւն սրբոյն, և՛ի խորանն սուրբ, և՛ի սրահ խորանին, ՝ի սրբո-

բութիւն սրբոյն եղ զտաճարակին և զսեղանն քաւութեան, յօրինակ աստուածութեանն, որ յերկինս երկնից՝ ի սրովբէից պաշտեցեալ. իսկ յաւրնութեր խորան եղ զսեղան հացիցն, և զսեղան խնկոցն, և զաշտանակին յոսկոյ կազմեալ սոցա, որ էր երկնի օրինակ և անապական՝ ի նմա պաշտօնէիցն պաշտամանն. իսկ՝ ի սրահն արտաքին եղ զպղնձի սեղանն ուր զոհքն և պատարագքն մատչէին յօրինակ երկրի. արդ զապացոյցն երկրի և զերկրաւոր զոհից սովորութիւն եթող եկեղեցի, համանեալ Աստուծոյ որ ասաց. "Ողորմութիւն կամիմ և ոչ զոհս" ... բայց զներքին խորանն որ երկնի և երկնից երկնի յարացոյցք էին, ըստ առաքելոյ առ և ընկալաւ, և զիւր սովորութիւնն այսպէս հաստատեաց, զի ըստ սրբութեան սրբոյն ուղղեալ զխորան տաճարիս, և ըստ երկրորդ սրբութեանն զտաճարս, եղ՝ ի ներքոյ զսեղան քաւութեան զտէրունի մարմնոյն զոհարանն, և արտաքոյ զխունկն և զաշտանակս լուսոյ, և զընծայարան սեղան տէրունի հացին, որպէս և ուսաւ:

Արդ որպէս զտաճարս և զսեղանս որ՝ ի սմա՝ ուղղեցաք ըստ երկնից օրինակի և նախատիպն գաղափարի, այսպէս և զՔրիստոսի պատարագիս քահանայագործօղս պատուեալ փառաւորեցաք քահանայական նոցա զգեստուքն, զոր ընկալան՝ ի հրամանէն Աստուծոյ: Աւ տես զհաստատութիւն օրինակին, քանզի յորժամ արտաքոյ խորանին՝ ի սրահն և՝ ի սեղան զոհիցն որ խափանելոյ էր՝ պաշտէին, ոչ եթէ այսու զգեստուբս զարդարեին, այլ զայս զգենոյր քահանայապետան Հարան և որդիք նորա քահանայքն՝ յորժամ՝ ի խորանն խունկ արկանէին, և զաշտանակսն լուսանէին, և՝ ի սրբութիւն սրբոցն աղօթել մտանէին. քանզի ասաց, ասէ, Աստուած ցՄովսէս, "Աւ արասցես պատմուճանս Հարոնի եղբօր քումմ և որդւոց իւրոց, որովք քահանայասցին ինձ..., Աւ այս օրինակ սրբոց պատմուճանացն՝ զոր առնիցեն. "Պճղնաւոր պատմուճան, և՝ ի վերայ այնորիկ վակաս զուսովքն և զանջօքն, և զտախտակն զատատատանաց յեռեալ ընդ վակասին առ լանջօքն, և վտուակս պճղնաւոր և զօձիսն պրապանաս. և զինքն բոլորակ ձևեացես շուրջանակի. և վակասն լինի՝ ի կապուտակէ և յոսկոյ և՝ ի կարմրոյ մանելոյ և՝ ի բեհեզոյ նուիթելոյ գործ ա-

տայնի նկարակերպ երկու վակասք ընդ միմեանս յե-
ռեալս, և վերջք նոցա մանուածոյս ծաղկեալս, գործ
հիւսակին ,, . այսպէս, ասէ, լեցի և տախտակին դատաստա-
նաց 'ի զանազան երանգոց, յոր և երկոտասան ակունքն
ընդ վակասն յեռեալ. իսկ վտաւակին որ է 'ի վերայ սո-
ցա, ասէ, համակ կապուտակ լեցի, և ստորոտն զանգա-
կովք և նռնաձևովք զարդարեալ ,, :

Ի յայսմ և ըստ այսմ օրինակի է և նորա քահա-
նայից պատմուճանք. զի զգենուն 'ի նեղքոյ զպնդնաւոր
պատմուճանն, և 'ի վերայ նորին արկանեն զվակասն,
որ այժմ կոչի առ մեզ ուսանոց, այնպէս ըստ որում
հրամայեալ է 'ի զանազան նիւթոց նկարակերպել :
Իսկ զտախտակն դատաստանի ունին միայն քահանայա-
պետք յաջակողմ կախեալ 'ի վերայ բարձին, և զվը-
տաւակն պնդնաւոր 'ի վերայ այնորիկ՝ զոր այժմ կոչեմք
նախոտ : Իւրեմն ապա աստուածաշունչ է օրէնն զգես-
տուց եկեղեցւոյ առաջնորդաց, և ոչ մարդկեղէն խնամ-
ւոյ գիւտ, և արհամարհելով զսա առ օրէնս Իստուծոյ
մեղանչեմք. զի թէ նոքա անբան արեանցն պաշտօ-
նեայք այսքան զգուշութիւն ուսան. իսկ մեզ ամբիծ
զառինն որդւոյն Իստուծոյ սպասաւորաց՝ քանիօ՞ն ա-
ռաւել պարտ է ունել հպատակութիւն մարմնոյ և հոգ-
ւոյ 'ի քահանայագործելն :

Իզդ պարտ է գիտել՝ թէ պատմուճանն պնդնաւոր
ամենեցուն է ժառանգաւորաց եկեղեցւոյ զգեստ, և
հոլանի կալն ըստ իշխանական պատուոյ և առանց գօտ-
ւոյ : Իսկ սարկաւագացն պատուոյ և իշխանութեանն
առաւելութեան նշանակ այս է, զի զվակասն միայն 'ի
վերայ ահեակ ուսին արկեալ 'ի վերայ պնդնաւոր պատ-
մուճանին : Իսկ քահանայիցն և քան զնոսա գերա-
զանցութի՛ւ, զի երկու ուսովքն զնոյնն բառնոյ զքաղցր
տէրունական լծոյն ապացոյցն, և զպնդնաւոր վտաւակն.
այսինքն զնախոտան 'ի վերայ այնորիկ զգենուցու : Իայց
քահանայապետից՝ կրել ընդ վակասին և զտախտակն
դատաստանաց, որ է ծայրագոյն պատիւն. և ոչ միայն
զգենուլ զնախոտան վտաւակ պնդնաւոր, այլ առնուլ
'ի վերայ նորին զպատուական եմիփորոնն խաչիւք զար-
դարեալ. որովք Իհրիտոսի Իստուծոյ յուսոյն մերոյ
պատկեր զանձն ցուցանէ. քանզի նա զիաչն փառս իւր

անուանեաց. «Այժմ, ասէ, փառաւորեցաւ որդի մարդոյ, և Աստուած փառաւորեցաւ ի նմա...» զրէ և աւետարանիչն. «Ելեր էր հոգի, քանզի Յիսուս չէր եր փառաւորեալ...»:

Այս ընդէր էր խաչն փառք Քրիստոսի՝ ինդրելի է. այսինքն՝ զի ի նմա էտ զմարմին իւր Որդի պատարագ կամաւոր վասն մեղաց մերոց, և զձեռագիրը յանցանաց մարդկան պատառեաց. և ազատեալին զմեզ ի գատակնիռ մահուն՝ փառաւորեաց զանուն իւր ի մէջ աբեառք իւր փրկեալ Հօտիս, և վասն մեր առ ամենայն գաս հրեշտակաց:

Արդ նորա՝ որպէս փառաւորեցաւ, նատաւ յեկեղեցւոյ մէջ յաթոռ իւր քահանայապետն փոխան ի մէջ այս Հօտիս. զոր Քրիստոս ոչ վայրապար՝ այլ մահուամբ ժառանգեաց. վասն այսորիկ և զեմիփորոն զարդարեալ խաչիւք զգենու, յայտ արարեալ՝ թէ ընդ Թագաւորին մերոյ Քրիստոսի և ես որ փոխան եմ նորա՝ զհինգ զգայարանս իմ ի խաչ հանի ամենայն ցանկութեանց աշխարհի. և կենդանի եմ ես՝ ոչ ինձէն, այլ կենդանի է յիս միայն Քրիստոս: Այս զայս մահս իմ որ ընդ նմա՝ ունիմ փառք ինձ, և առիթ պատուոյ և իշխան ի մէջ Հօտիս նորա լինելոյ. վասն այսորիկ և յաթոռ նորա նստիմ յաջորդ ի մէջ եկեղեցւոյս. զի և ինձ աշխարհ ի խաչ ելեալ է, և ես աշխարհի: Որպէս նա կամաւոր մահուամբ մարմնոյն ժառանգեաց զոս, և եղև առաջնորդ ի յերկինս, այսպէս և ես կամաւ մեռայ ընդ նմա աշխարհիս ըստ հինգ խաչիցս ապացուցի հինգ զգայարանաքս, և կեամ միայն մարմնով վասն պաղղ գործոյ և Հօտիս առաջնորդելոյ. ապա թէ ոչ՝ կամքս և ցանկութիւնս բովանդակ ի խաչ է ելեալ աշխարհիս: Ահա եպիմաթիկոն զոր կոչեմք բազպանս, որ է և այս քահանայապետական պատուոյն՝ վասն պատրաստ առնելոյ զձեռն ի քահանայագործելն՝ սահմանեցաւ, զի մի թերանիք պատմուճանին սայթաքեցուցանէ զնա ի պաշտօն պատարագին. այլ զի այն զապեսցէ զձեռն, և պատրաստ սպասաւորութեան արասցէ. իսկ տախտակն գաւազանին՝ զոր կրէ սա ի վերայ բարձիցն, ըստ որում և ի հնումն քահանայապետն ի վերայ ծանրացան, զայն տայ մեզ տարացոյց՝ թէ որպէս նա երկո-

տասան ակամբք զերկոտասան նահապետացն անուանս տանէր առաջի Աստուծոյ վասն քառութեան որդւոցն բարեխօս, այսպէս. և ես զանուն փրկչին մերոյ Քրիստոսի՝ որ է ի սորին վերայ, տանիմ առաջի Աստուծոյ միջնորդ հաշտութեան. իսկ վասն լանջացն և նախորան վտաւակ՝ երկրորդ դաստն որ յետ քահանայապետին՝ քահանայիցն կարգի տուաւ որպէս և քահանայապետին. և զվասն ուսանոց՝ իմանամք քաղցր լծոյն Քրիստոսի տարացոյց, զոր բարձին ի վերայ պարանոցին իւրեանց, և ի գործ պատուիրանին վաստակին անաչխատ. վասն այսորիկ և արժանացան առ ի նմանել զվերակացութիւն և զառաջնորդութիւն ժողովրդեան իւրոյ ժառանգել. զի մի միայն ինքեանք, այլ և ի սեղանաւորս զարծաթի վարուց իւրեանց արկեալ բազմապատկեցուացեն։

Վասն նախորան վտաւակ զարքունական պատիւն հրաշակէ. այսինքն թէ վասն զի գնեերքին մարդս բոլանդակ ի նեերքոյ լծոյ օրինացն Քրիստոսի եղի, վասն այսորիկ արտաքոյ ետ ինձ իշխանութիւն ի տունս իւր և յեկեղեցի առաջնորդ լինել առենեցուն վերակացու, և նորին առ սոսա հրամանացն հրեշտակ, որպէս և ցուցանէ գօտեզգեցն պատմուճանաւ՝ թէ ոչ եմ ի կարգ ծառայութեան, այլ ի բարեկամացն դաս և ի խորհրդակցացն Քրիստոսի. և ոչ ևս կոչէ զիս ծառայ, այլ բարեկամ. զի ունիմ զօրութիւն իմաստից՝ տանել զբանից նորա զօրութիւն, զոր ինձ աւանդեաց։ Այսոյ խոնարհ քան զսոսա սարկաւագացն աստիճան, թէպէտ և ունին զվտաւակ պատմուճանն և զխոհականն՝ այլ թէ պանեօք, և զվասն լանջանոց ի վերայ ահեակն ուսի միայն, յայտ արարեալ՝ թէ մեք զլուծ պատուիրանին կարողացաք մի ուսով միայն բառնալ ի նեերքին մարդս. վասն այսորիկ և իշխանք կարգեցաք պաշտելոյ և սպասաւորելոյ, և ոչ թէ առաջնորդելոյ. յաղագս այսորիկ և թեզանեօքս զձեռս պատրաստ առ ի գործ արարաք, առնուլ զնուէր ժողովրդեանդ և տալ Աստուծոյ, և զնորա պարգևն նշանակաւ խնկարկութեանն ըստ հրամանի քահանայիցն բաշխել ձեզ. նոյնպէս և այլ պաշտօնէիցն դասք՝ որք յետ սոցա կարգեցան, ցուցանեն թէ իշխանք են ոչ տիրապէտք, այլ գործաւորք և պաշ-

ածնեալք քահանայապետին և քահանայիցն հրամանի. ումն զղրուձան պահել, այլ ումն զմեռելոցն և զջահն կրել։

Ա՛րդ զայս զգեստուց նիւթ ազգ քրիստոնէից՝ի զանազան երանգս նիւթոց փոխեցին. և քանզի՝ի հնումն Ա՛ստուած կատարս հրամայեաց առնել զպատմուճանն, վրանգք անփոփոխ պահեցին զաւանդութիւնս և կատարս զգենուն. նա և խոյր՝ի գլուխս դնեն, և յաղօթից ժամն վերացուցանեն։ Իսկ Հռոմք առ՝ի միտս յառեցան՝ թէ յայնժամ մինչ Ա՛ստուած մարմին ոչ էր զգեցեալ և ոչ մարդ ծնեալ, ՚ի դէպ էր յանծնանելի նիւթոց զնորա պաշտաւնն զգեստ պատշաճել. իսկ ապա այժմ զի Քրիստոս գառն եղև և անուանեցաւ, վայելուչ է զնոյն պաշտողացս՝ նորին ստեղծ առանց պաճուճանաց զարդարել. իսկ վակասն ուսանոց եմիփորոնն և այլն ամենայն մի և նոյն է հասարակաց առնեցուն. այսինքն՝ի զանազան որակութեանց թելոց կատարեալ, ըստ որում և զմեզ ես տեսանել. նոյնպէս և զգեստուցն ձև և կերպարան։

Ա՛րդ որովհետև այժմ յեկեղեցի Ա՛ստուծոյ քրիստոնէից ժողովուրդ չերիս դասս, ՚ի ժողովուրդն, ՚ի պաշտօնեայսն, և ՚ի քահանայսն. և նորին դարձեալ յիւրաքանչիւր դաս զանազանին յերիս աստիճանս. քահանայիցն կարգ՝ յեպիսկոպոսապետս, յեպիսկոպոսս և ՚ի քահանայս. քանզի սոքա պատուով մի են, և միայն անուամբ և աստիճանաւ զանազանին։

Ա՛րկրորդ դաս սարկաւագացն որովհետև յերիս աստիճանս, ՚ի սարկաւագս, ՚ի կէս սարկաւագս և ՚ի դպիրս։

Ա՛րկրորդ դաս ժողովրդեանն՝ ոչ բաց աստիճանի, այլ միայն հաւատով զանազանին, ՚ի կրօնաւորս, ՚ի սուրբ ժողովուրդս և ՚ի հաւատացեալ երախայսն։

Ա՛յս տեղ կայանի է քահանայական դասուն շուրջ զԱ՛ստուածով կալ ՚ի խորանն սուրբ, որպէս զաթոռան, զսերովբէին, զքերովբէին, անընդմիջելի հպատակութիւն։ Իսկ սարկաւագացն ընդ միջ նոցա և ՚ի խոնարհ դասու ժողովրդեանն. այսինքն մնանել ՚ի խորանն հանդիսակ և հաղորդել քահանայական խորհրդոցն և բերել զնոյն արտաքս և մատակարարել ժողովրդեանն, ումն զբարեզուարթիւնն, ումն զընդհերցուին, ումն զսաղմո-

սերգութիւնն։ Ակ ժողովուրդն լինելիս առընթեր սոցա և ուսանիլն զաստուածային զանազանաբար հպատակութիւն. քանզի ի կրօնաւոր պարտն իջանէ ի սուրբսն, և ի սրբոցն յերախայսն, և առ նոսա նահանջի, որպէս երկնայինն գիտութիւնն առ հրեշտակս։ Այսոյիկ երիցս գասու ի վեր բայ կարգելով զգլուխն առաքելոց, Արիստոս, զԱստուած՝ յանձն արար գտանին նմին արածել ըստ զանազան սիրոյն զօրութեանց. Ամէն, ասէ, սիրեա զիս,, և յորժամ խոստովանեցաւ, ապա ասաց՝ թէ Արածեա զգառինս իմ,, այսինքն զհաստատակաց ժողովուրդսն։ Ակ երկրորդ պահանջել զհաստատութիւն սիրոյն յաւել, թէ Արածեա զոչխարս իմ,, այսինքն քահանայական պատուոյն իշխել գառանցն և ընդ նոսին պաշտօնէիցն գասու։ Ակ և առաւել զսերն գրաւական առեալ՝ ապա ետ նմա իշխանութիւն քահանայապետութեան, տիրել քահանայիցն և որ ընդ նոքօք պաշտօնէիցն և ժողովրդոց։ Այլ զինչ այլ յայտնել ուսուցանէ մեզ աղբիւրն իմաստութեան՝ քան զայս, եթէ ոչ է բաւական այլ իրք պատուիրանի զոք ի մարդկանէ յարածելոյ զՀօտն Արիստոսի յաստիճան հանել, բայց միայն առնա սիրոյն հաղորդութիւնն։ Արանզի մինչև զայս ձեռնադրութեամբ իշխանութեան, դիւրաւ ունի զնա գրժել հակառակամարտն, իսկ ի սմանէ հաղորդեալ՝ զօրանայ ի վերոյ մարտին՝ օգնականութեամբն Աստուծոյ։

Այս այս որ սէր է. այն՝ զոր Պօղոս տայ տարացոյց. "Եթէ ունիցիմ, ասէ, գիտութիւնս և գիտութիւնս, և ջամբիցեմ զինչս իմ աղքատաց, և մատնիցեմ զմարմինս իմ յայրումն, և սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ օգտիմ,։ Ոմանէք և Յովհաննէս գրէ. "Արկիւղ ոչ գոյ ի սէրն. այլ սէրն կատարեալ ի բաց մերժէ զերկիւղն,։ Որժամ յայս սիրոյս սահման ժամանեմք աշակերտքս, ապա տէր մեր առեալ զնոյն գրաւական՝ զգառինս իւր տայ մեզ յարածել, և կացուցանէ յաստիճանս սարկաւագութեան և յիշխանութիւն եկեղեցւոյ իւրոյ։ Ակ զի սիրոյ սահման և չափ ոչ է, այլ օր ըստ օրէ առ բազձալին զաձելն է բնաւորեալ, յորժամ յայնմ աստիճանի և այ աձեցուցանէ զսէրն, և ազատի առաւելապէս ի մարմնական վայրաբարբութենէ, ապա առեալ սեռանն

զանձն առաւելութեան սիրոյն՝ տայ նմա զպատիւ քահանայութեան, իշխել և ոչխարացն պաշտօնեից, և առաջնորդել նոքօք հանդերձ զառանցն ժողովրդոց. ո՛րոյ յառաջագիւն նկրտեալ սիրոյն՝ որպէս և Պետրոս, և ըստ երկուց առաքինացն անսայթաք ընթացեալ առ տէրն իւր բաղձանօքն, և՛ի նա ապաստանեալ զգիտութիւն առաւելութեան սիրոյն, լինի արժանի՛ ի ծայրագոյնն եղանել յառաքինան քահանայապետութեան, և արածել զխոյսն՝ զդասս քահանայիցն, և զոչխարան՝ զկարգս պաշտօնեիցն, և զգառինս՝ զխումբս ժողովրդոցն։ Եթէ որոյ լինի հանդրձակ ըսել՛ի Պետրոսէ, թէ եկ զինի իմ՛ի հայրենի փառսն, և՛ի խոստացեալ աթոռսն։

Այսպէս ընթացք և զանազանութիւն են սիրոյ, և այսպէս ըստ իւրաքանչիւրոցն չափոյ որոշեցան՛ի Պետրոսէ առաքինանք հովուութեան. զորովք ոչ է պարտ զանց առնել, այլ վինակելոցս գիտել, և զտկարութիւն տգիտութենէ մերոյ աշխարել. իսկ ոչ վինակելոցն՝ ձանձնալ և առ կամն օրինացն տեառն իւրոյ զգուշաբար բերիլ. քանզի գառաւատան կայ ամենայնիս և հատուցմունք արդար իրաւամբք։ Այլ կարի անտեղութիւն է՛ի պէտս մարմնոյ հեշտութեան՝ յԱստուած մեղանչել, որ պէս և ասէր Հեղի առ որդիսն իւր. «Ըդեակք յորժամ մարդ առ մարդ մեղանչէ, առ Աստուած աղօթէն վասն նորա. իսկ յորժամ յԱստուած մեղանչէ, առ ո՞վ աղօթեսցէն ընդ նորա»։ Ամենայն յանցանք մեղք է, և մարմնոյ տկարութիւն առաջի Աստուծոյ և նեբելի՛ի նմանել վասն հարկաւորապէս լինելոյն բնութեանս ախտակիր. իսկ այս ոչ մեղք միայն, այլ և զզուանք և անիրաւութիւն Աստուծոյ՝ զկնի պատիւն յափշտակել՛ի նմանել առանց իւրոց կանոց, և առնուլ զնոյն ոչ՛ի պէտս փառաց իւրոց, այլ՛ի մեր. պէք կարէաք և առանց այնր զհարկաւոր կեանս կատարել. և այս յանդգնութիւն ճանաչի յարհամարհութենէն Աստուծոյ և՛ի կարծիս ձգելոյ զվրէժխնդրութիւն նորա։

Ո՛վ թշուառութեանս, և եթարձ յուշոյ մնաց մերոյ բանասիրութեն զարարչէն ապաւոյն լինել զանազանապէս. որպէս և զրէ առաքեալ. «Ո՛յն օրինակաւ լինէր առ նոսա, և գրեցաւ՛ի մեր վարդապետութիւն»։ Օ՛ի՛

այլ տուաւ բերանոյ երկրի նոր պանծելեօք կերակուր, եթէ ոչ ինքնայօժար կամօք իսղրոդին զպատիւ և զիշխանութիւն և զ·ստիճան քահանայութեան, զոմանս Կորխայ ասեմ, զԿադմոյ և զԱբիրոնի. որոց և բուռ վառքն պահեցան յիշատակ չարեացն ի մէջ Կորայելի։ Այլ զտապանակն Աստուծոյ արար գերի այլազգեացն, թէ ոչ քահանայիցն առ ի պաշտօնն իւրեանց հեղգութիւնն. և այն ի միս կաթոգայի արհամարհութիւն. քանիօն մեռա առաւել՝ առ որդւոյն Աստուծոյ պաշտօն ժպրհութիւն, և առ Հոգւոյն սրբոյ ընդհս վայրապար ծախումն։ Եւ այլ ումեք մեղք էր, որ ոչ քաւեցաւ զոհիւք և պատարագօք, բայց թէ քահանայիցն. Եղեք տանն Հեղեայ, ասաց Աստուած, ոչ քաւեսցի զոհիւք և պատարագօք... Զի քանի առաւել տեսանի առ մեզ յանդգնութիւն ի պաշտօնս մեր քան զորոցն Հեղեայ։ Այս, եղբարք, զտեառն առ մեզ զերկայնմտութիւնն փրկութիւն համարեացուք, և ձողոպրել միշտ յանառաւ առեներն զգուշացուք։

ԶԻՆՁ ՆՇԱՆԱԿԻ ԱՆՈՒԱՆԵԼ, ԶՍՈՒՐԲ ԶՊԱՏԱՐԱԳԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Խորհուրդ ի մարմնականս սովոր եմք կոչել զժամանակն, յոր Թագաւորն զիշխանակիցսն առանձինն առնու ի հասարակաց ամբոխէն, և խորհուրդ առնու ընդ նոսին զնաւս խաղաղութեանն աշխարհին և զիմաստ չաղթութեան թշնամեացն, և որոց ի սոյն չարին կարեւոր խնդիրք։ Այս հարկ է չայնժամ իշխանացն առ տէրն իւրեանց համարձակ խօսել վասն ուղղութեան խորհրդոյն և օգտի աշխարհին, զոր առաջի բազմացն ոչ համարձակէին։ Քահանայապետս և վիճակեալքն ի քահանայականս կարգ՝ Աստուծոյ գործակիցք են, ըստ որում գրեացն Պօղոս. մնասատնդ և աշխատակիցք, զի նորա փոխան վարեն զիշխանութիւն հոգւոյ ի մէջ մարդկան։ Զի հարկաւոր է սոցա ըստ աւուր աւուր առանձնանալ ի հասարակաց ամբոխէն, և առ տէրն իւրեանց ի խորհուրդ մտանելով՝ զընթացս գործոյն որ ի ձեռս առնին՝ յուցանել. ուստի և առանձնանան ի պատշաճ ժամու պատարագին ի խորանն սուրբ՝ չուրջ կացեալ զԱ-

տուծով. զորոյ զօրութիւնն հաւատացաք ՚ի սեղանն գերագոյն ապացեալ. և թագնաբար յուշ ածէն նմա զմեծամեծ երախտիսն, որ արար ՚ի վերայ աշխարհի. այնպէս սիրեցեր, ասէն, զաշխարհ, մինչև զորդիդ միածին ետուր. և ոչ միայն ետուր, այլ և ընդ կիրս տալ կարութեանս սահմանեցեր անցանելոյ. յետ որոյ և խաչի վասն մեր մատնեցեր. որ կատարեալ զհնազանդութիւնն՝ մերոյս ընդ աջմէ քումմէ առհաւատչեայ փրկութեան բազմեցար։ Ընդ աղաչեմք զքեզ խորհրդապէս, մի զայսքան անզուգական երախտիս՝ փոքունց յանցանացն հաւասարեր, և վասն մեզայ յաստուածային շնորհացդ զրկեր. այլ որոց զսէրն ՚ի թշնամութեան մահուամբ դորա յայտնեցեր, առաւել կենօքն առատացո. և թէ մինչ թշնամիքն էաք՝ հաշտեցաք ընդ քեզ մահուամբ որդւոյ քո, ապա այժմ առաւելապէս ապրեցուք սուաւ յարդար իրաւանցդ բարկութենէ։

Յոպիսի թախանձանօք խորհրդապէս շարժեն զքեզ թութիւնն Ընտուծոյ յողորմութիւն աշխարհի. և զի շարժի՝ ուսոյց մեզ խնաստութիւն նորին Ասրիստոս. "Օ ամենայն զոր ինչ խնդրէք յանուն իմ ՚ի հօրէ, տայ ձեզ,, ։ Ա զայսպիսի առատութի զթութենն ոչ դատեցաւ բարեկարգութիւն եկեղեցւոյ հատարակաց ժողովրդեանն լսել. զոր սոքա ՚ի սէրն Ընտուծոյ համարձակեալ վասն նոցին պաղատին. և որպէս և ոչ մարմնական իրաւունք զնորհուրդ արքայի. այլ միայն քահանայիցն անմեռնոյ ձայնիւ և սրտի աղաղակաւ առ Ընտուած հառաչել հարազատապէս, և ոչ ՚ի նեղքոյ ծառայականն երկիւղի։ Ա այս երբ լինիցի, եթէ ոչ յորժամ սիրոք մեր ոչ բատգանիցեն զմեզ, բատ որում զրեաց Ընտուածաբանն. "Սիրելիք եթէ սիրոք մեր ոչ բատգանիցեն զմեզ, համարձակութիւն ունիմք առ Ընտուած. և զոր ինչ հայցեմք, առնումք ՚ի նմանէ, զի զպատուիրանս նորա, ասէ, պահեմք, և զհաճոյս առաջի նորա առնեմք,, ։

ՉԻՆՉ ՑԱՑՑ ԱՄՆԻ ԱՆՈՒՆԵԼՈՅ ՉԱՑՍ ԽՈՐՀՈՒՐԴ ՊԱՏԱՐԱԳ

Պատարագն հաշտութեան նուէր է, ի ծառայէ տեառնն մատուցեալ, և ի խաղաղութիւն նուաճիչ. և ըստ չափոյ մեծութեան պատարագին յորժամ մատուցանէ՝ հաւատոյ զողորմութիւն գտանել։ Զդր քանզի մարդիկ ի սկզբանն յանցաւորութեամբն խռովեցան ընդ Աստուծոյ, և խորոց թշնամութեան եղին զմեզն ի մէջ իւրեանց, եկն այն՝ որ ոչն գիտէր զմեզ, և վասն մեր մեզք անուանեցաւ, նահանջել զթշնամութիւնն ի մարմնի իւրում, և արար հաշտութիւն արեամբ խաչին իւրոյ, աւետարանել ձեզ խաղաղութիւն հեռաւորաց և խաղաղութիւն մերձաւորաց. իսկ մեք որք կոչեցաք աւետարանաւն, և նուաճեցաք միով հոգւով առ Հայր, յուսով խնդամբ, այլ մարմնով գոլով՝ դեռ ևս ունիմք զհակառակն օրինաց մտաց և գերիչ յօրէնս մեզայն. զոր ծանուցեալ որ զփորձն էառ ամենայնի ըստ նմանութեան մեր առանց մեզայ, աւանդեաց մեզ զիրկաւործ իւրոյ մահուն յիշատակ՝ ի նշանակ հայիս և գինւոյս, իբր թէ ասելով, առէք զայս, սա է մարմին իմ և արիւն, որ նոր ուխտ խաղաղութեան եղև ընդ ձեզ և ընդ Աստուած. և յորժամ թշնամանադիքն ուխտին ջանայ մեզոք զձեզ յանցաւորս առնել, դիք զայս պատարագ առաջի Աստուծոյ, և իմոյ մահուն յիշատակ ապրարէք առ նա, թէ քո միածինդ մահու չափ և մահու խաչի, Հայր սուրբ, քեզ՝ վասն զմեզ արդարացուցանելոյն հնազանդեցաւ, որով և արդարացաք. բայց սակայն վերստին մեզքն Աստուծոյ տիրեալ դատապարտեաց զմեզ։ Զդր աղաչեմք, առաւել քան զնոյնն առաւելութեամբ բարձրացի ընդէր թողութէ միածնին քո որդւոյ՝ նորոյս Աստուծոյ. և վերստին զմեզ արդարացուցէ, զորս պատրիքն Աստուծոյ դատապարտեաց։ Օ Հայս առ ի Աբրիաոսէ ուսեալ, և առեալ հրամանն, կատարեմք, և տամք զմահ նորա միշտ փոխանակ մեր պատարագ Հօր. և յորժամ տամք, հաւատամք գտանել զողորմութիւն. զի թէ Աստուած ինքնին է՝ որ զմեզ սովաւ արդարացուցանէ, որպէս գրեաց Պօղոս, ոմն է որ

դատաստարան առնիցէ։ Այս տես, զի ոչ ասաց՝ Թէ արդարացցէ, այլ զիշխանչէնաւոր յարակայութիւնն ընդհին ցուցանելով արդարացուցանէ ասէ, այսինքն միշտ յիշատակաւս. քան զնա ոչ միանգամ, այլ միշտ բարեխօսէ ընդ աջմէ Հօտուածոյ վասն մեր։

Արդ զրբան նա բարեխօսէ, և մեր զնոյնն պատասխանեալ՝ զնորին Թողութեան մեղացն բերել, և բարեխօսել մինչև վերստին դարձեալ գայ. վասն այսորիկ և հրամայեաց, մատուցէք զիմս պատարագ փոխան ձեր Հօր, և զնմանէ իմ յուշ ածէք նմա, որպէս տերս եմ ձեր՝ մինչև եկիցէ դարձեալ. իսկ իմ ունելով զկամս ձեր օժանդակ՝ և զՀայեցուածսն, պատրաստ եմ՝ի միշտ բարեխօսելն։ Արբեմն արդեամբք և Հնմանութեամբ է նա պատարագ փոխանակ մեր. և մեք մի կարծեսցուք՝ի մատուցանելն զնա՝ ունայն՝ի Հատուցմանէ Հնարհի դառնալ, այլ Հաւատասցուք քաւութիւն լինել ըզնոյն մեղաց մերոց, այլ և աներեսյն աշխարհի, որպէս ասացաւ։

ԶԻՆՉ ՑՈՒՑԱՆԷ ՉՊԱՏՄԱՐԱԳՍ ԱՆՈՒՆԵԼ ԳՈՀՈՒԹԻՒՆ։

Յորժամ քննեմք զազգսումն գոհութեանս, ուստի ծնեալ արդեօք՝ի բազմապատիկ երախտեաց զնոյն գտանեմք. յոր վայելողն ոչ կարացեալ զկրկին Հատուցմանն չափել՝ի գոհանալոյն ապաստան լինի բարբառ. և տուող պարգևին նուաճ Հեշտացեալ[2] պարարի ցընծալով։ Այլ է սովորութիւն մարդկան, որ՝ի խնդիրս առ որ՝ի սիրելեաց կանխեն, զառաջին երախտիսն նախ նմին գոհութեամբ յուշ ածեալ՝ զմիտան քրքրեն, և ապա զայժմուս խնդիրս Հայցուածոց ընդ նմին կցորդեն. իսկ նա թերևս ոչ դանդաղի առ տալն՝ պարարեալ՝ի բարւոյն գոհութեանց և յիշատակաց։ Այսպէս և մեր գտեալ յԱստուծոյ և՝ի Հօրէ մեծ և անզուգական բարիս, զամենայնն միահամուռ այժմ գոհութեամբ նմին յուշ ածեմք, զյոյսէից գոյացուցանելն, զօրինօք դասս տիարակելն, զորդուոյն փրկելն, զՀոգւոյ նորոգելն, յորդիութեան պատուն զՀանելն։ Այս ամենայն՝ի

1 Ակն է Թարգմանութիւն յն. Ձայնիս, εὐχαριστία.

2 Մի գրի. Հ-ւնեալ։

խորհրդականն ժամու քահանային լիշատակեալ գոհութեամբ չտրհակալ նմին լինին, բերան եղեալ ամենայն մարդկային ազգի, որ յայս վայելեցաք հասարակաբար ի պարգև, և զայսպիսի գոհութիւնս նուիրել Աստուծոյ, որպէս հրաման ընկալաք. "Աղաչեցէք, ասէ, լինիջիք զԱստուծոյ և զՀօրէ... և դարձեալ, "Առաջ արարէք զԱստուած ի մահկանացու մարմինս ձեր... և նոյն վերատին ասէ. "Աղաչարուք յամենայն ժամ ի վերայ ամենայնի յանուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զՀօրէն և զԱստուծոյ..: Այսպէս ուրեմն ի Քրիստոսէ զՀօրէն առաջի Հօր զՔրիստոս՝ նուաւս գոհանամք զնմանէ ի վերայ ամենայնին, և պարարեալ զանկարօտն ծայրագոյն մեր բանականն ալըտզուլ, այնուհետև ի խնդիրն առնեմք Հանապարհ. դու, ասելով, որ զմեծամեծան ետուր, և լցեր զբերանս մեր գոհութեամբ ի վերայ այսոցիկ օրհնել զփառս քո, տուր և զայս խնդիրս, այսինքն զորս ի քոյ միոջէ խորհրդածութիւն ցուցանէ, սէր, խաղաղութիւն եկեղեցւոյ և աշխարհի, և բնակելոց ի սոսա զիրկութիւն, սուաւ զոր տամք քեզ ընծայ:

Այսպէս քանզի մարդասէր է վկայեալ Հանապազ, և միջնորդ խնդրոյս սիրելին որդի, Հաւատամք Հաստատաբար ոչ լինել անտես, այլ առնուլ զգոհութիւնն գթութեամբ, և տալ զինդրուածսն առատութեամբ. ըստ որում ասացն. "Ով է Աստուած մեծ իբրև զիս կարող Թողուլ զմեղս և ջնջել զանօրէնութիւնս..:

ՋԳՈՀՈՒԹԻՒՆՍ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՒՐ Ի՞ՆՉ ՀԱՅԻ ԱՆՈՒԱՆԵԼՆ

Հաղորդութեան յորջորջումն յայտ առնէ, թէ զանազանութիւն բազմութեանն ի մի անձնաւորութիւն գան սուաւ, և որք մարմնական վայրաբարձութեամբ այլայլեալ են, ի ձեռն այսր Հաշակման ի մի տեսակ աստուածանմանութիւն փոխեսին:

Վարձեալ ըստ այլում տեսութեան Հաղորդութիւնս անուն, քանզի ի Քրիստոս մերձենամք սուաւ և անդամք, որ խորոց արարեալ զմեզս բաժանեցաք ի նմանէ, այսու վերատին դարձեալ ի գլխոյն ինքնէ առ

մէզ կենդանութիւնն յետ առողջարար դեղոյն ապաշխարութեան, և հաղորդիմք ի կեանսն՝ կենդանացեալք ի մեզանէն մեռելութենէ. եղեալ մի հոգի ամենայն և կեղեցւոյն բաժանեալ մարմնոյն։ Նա այնմ զոր գրէ առաքեալ. "Ոչ մերձենայ ի տէր, մի հոգի է,.. և դարձեալ առ կորնթացիսն. "Նաժանին օրհնութեան հաղորդութիւն է արեանն Քրիստոսի. հացն զոր բեկանեմք հաղորդութիւն է մարմնոյն Քրիստոսի,.. և մեք բազումքս որ զմի հացն կերաք՝ մի, ասէ, լինիմք մարմին. այսինքն զի ի միոջէ հացէն վայելեմք. և յեղաշրջեալ բուն նորին սրբութեանն տարրանամբ հաղորդեալք իբերաց և միացեալք ի Քրիստոս։

ՈՐՊԻՍ ՊԱՐՏԻՄՔ ՀԱՒԱՏԱԼ, ԹԷ ՃՇՄԱՐՏԱՊԻՍ ՔՐԻՍՏՈՍ Է ՍԱ ԱՒ ՈՐ ՀԱՂՈՐԴԵՑԱԲՈՒ ԵՒ ՄԱՐՄԻՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ՈՉ ՕՐԻՆԱԿ ՄԱՐՄՆՈՑՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Նաջուխմ և պէսպէս բանք վասն այսր ի տեառնէ ասացեալ և յառաքելոց նորին՝ կարող են ածել զմտաւունս ի հաւանութիւն. զի ասաց բարձրաբարբառ ի ժողովուրդն յուսուցանելն ի Կափառնաւում։ "Ոչ ոչ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, ոչ ունի կեանս յանձին,.. զի մարմին իմ ասաց, և ոչ զօրինակ մարմնոյն. "Ոակ որ ուտէ և ըմպէ, նա յիս բնակեցէ, և ես ի նմա,.. Ցետ որոյ զբանիւ ասացեալն գործով կատարեաց, զի "Ընդ, ասէ, հաց, գոհացաւ օրհնեաց սրբեաց, և եւ աշակերտացն, և ասէ. Ընդէք կերայք ի սմանէ, այս է մարմին իմ,.. և ոչ օրինակ մարմնոյն. նոյնպէս և զբաժակն արիւն անուանեաց, և ոչ օրինակ արեանն զոր Նաշակողքն աղաղակէին. "Ընդ բիւնն Ցիսուսի սրբէ զմեզ յամենայն մեղաց,.. և "Ոչ ուտէ և ըմպէ զնա անարժանութեամբ, ոչ թէ զօրինակն ոչ խորէ, այլ զմարմինն տեառն,.. քանզի օրինակ է մարմնոյ գծագրին պատկեր, և Ընտուծոյ՝ արեգակն կամ այլ ինչ ի լեինս, զոյս բաղդատեմք։ Ընդ որպէս գծագրեալ պատկերն ոչ է կենդանի, և ոչ կենդանացուցանել ունի զօրութիւն, այպէս և սա թէ սուկ օրինակ էր, ոչ ինքն կենդանի և ոչ զայլս սրբէր. որպէս գոչեաց աստուածաբանն. և որպէս արեգակն օրինակ

Աստուծոյ՝ չունի աստուածական զօրութիւն, և նայեցողն ի նա ոչ դատապարտի, յորժամ անխտիր յօրինակին Աստուծ ոչ մերձենայ, այսպէս և ի սուրբ Հաղորդութեան ոչ դատաստան անձին ուտէր ըստ Պօղոսի, թէ օրինակ էր. քանզի օրինակ անուանի, որ զգալապարտ գոյին ունի, և ոչ զգօրութիւնն, որպէս ասացաւ, նկատողիւք և կենդանոյն։ Սակ մարդ մարդոյ ոչ օրինակ՝ այլ Հանաբնութիւն կոչի. այսպէս և սա Հանաբնութիւն է Աստուծոյ, և ոչ օրինակ. վասն այնորիկ և ունի զօրութիւն զմեզս սրբել՝ որպէս և զԱստուած. ապա թէ օրինակ էր, ոչ սրբէր, որպէս և ոչ պատկերն խօսի։

Այլ զի Թանձրամիտ գոլով, թէպէտ և բերանովք սին Հաւատամք, և ոչ սրտիւք։ Վերն ասացեալ՝ ի Հոգին Աստուծոյ՝ զիմանալի խորհուրդս ըզգալի օրինակաւ երկիւղած մնայ Հաւանական արասցուք. զի յորժամ զայն տեսանեմք գոլ Հնարաւոր, կարող ևմք Հաւատալ՝ թէ և այս յամենակալ մարդասիրութենէն Աստուծոյ տնօրինի առ ի մերն փրկութիւն։

Զբեգակնդ ստեղծուած Աստուծոյ նիւթական լոյս ի վեր քան զմտմտմինս՝ օր ըստ օրէ սիրէ զՆաՀանջս Ձառագայթին ի վերայ աշխարհի, յորմէ լուսաւորին աչք մեծաց էքս արտաքուստ կոյս. այսինքն քար և փայտ և որք ըստ նոցա. իսկ չինեբեանս զլոյսն ոչ կարեն տանել և նմին Հանատիպ լինել իւրովք լուսով. բայց միայն անօսրագոյն տարր ապակւոյ և մաքուր քարինք՝ զոր ակունս կոչեմք՝, քանզի սոքա ընդունին չինեբեանս զլոյսն, և նուաւ զօրացեալք՝ լոյս ծագեն ի տեսողսն, յառաջոյ կուսէ ընկալեալք, և յետոյ սիրեալք. զոր այլ նիւթ ոչ կարէ առնել։ Այդ Համարեսցուք գոլք խաւարչական ինչ տուն, և լուսանցոյց յարկին յապակւոյ. յորժամ ծագէ արեգակն, ոչ ապաքէն ի վերայ ամենայն տանն փայլէ, սակայն չինքն զՆաւառագայթն ապակին միայն ընդունի, և զի՛ն ներքս կացեալն յարախտանեալ լուսովն՝ ընդ էութիւն իւր լուսաւորէ. և ոչ ոք կարէ տեսութեամբ զանմարմինն արեգակն կամ զմարմինն ապակոյն՝ որ խառնեցան ընդ միմեանս՝ բացատրել։ Այսպէս խնամոյք խմանալի արեգակն զիսկութիւն աս-

1 Ա՛ի տրին · Ընդունին։

տուածութեանն սրբոյ Հոգւոյն գերագոյն և-
թիւն գերագոյն լոյս քրիստոնէից վերատեսուչ. զ-Հայրն
անակիզըն, զԱրդին միածին և զ-Հոգին համամիտ յան-
Ձնան իակութի և փառս գերապայծառ հաստատեալ.
իսկ կամեցեալ բարեաց ախորժեալ զնախախնամութիւն
արարածոց՝ արտաքս բխել առ՝ի յինքենէ զերկրու-
Հոգւոյն՝ արարածոց լուսաժպտելութիւն, որ նախ առա-
ջին զօրանայ և պայծառացուցանէ զՀրեշտակական զո-
րութիւնսն և զերկնայինսն ըստ իւրաքանչիւր դասու և
կայանի, որպէս արեգակունդ զնախ քան զմեզ զօդդ, և
անտի եղէն նոքա սուրբք և մաքուրք և բնակարան ա-
մենայն բարութեանց. իսկ մեր գոլով՝ի խաւարչին
տանս, այսինքն՝ի Հոսանուտ կեանս, և՝ի բնաւորական
ախտից ապականութիւնս, անկարանամք զՀանձանել Ձա-
ռագայթի Հոգւոյն տանել որպէս զնոսա առանց միջ-
նորդի, այլ առաջի դնեմք ընդ մեզ և ընդ Հոգին միջ-
նորդ զսուրբ նշանակ հացիս և գինւոյս, որպէս ասա-
ցոյցն զապակինն արեգականն, և՝ի յուշ ածեմք զխոս-
տումն փրկչին մերոյ Քրիստոսի՝ Յաստուածոյ Հօրն, և
զկիրս նորա փրկագործս. յոր Հայեցեալ՝ ծագէ զարե-
գակն իմանալին զՀոգին՝ի վերայ աշխարհի. և նա փայ-
լեալ աստ միայն զայս նիւթ գտանէ ներընդունակ, որ
տիրապէս ընդ նա խառնի որպէս արեգակն զապակին,
և խառնի անձառապէս. որպէս զի ոչ կարել որոշել
զզգալի նիւթս յիմանալի Հոգւոյն, ըստ որում և ոչ
գնա՝ի Ձառագայթից արեգականն. այլ է նոյն Յա-
տուած Հայս, որպէս և Հոգին. ըստ որում նոյն լոյս
ապակին՝ որպէս և արեգակն. և այս որ Հոգի է, եթէ
ոչ այն՝ որ զՏէր մեր իբրև զպատուական զօրացուցա-
նէր և՝ի սքանչելեացն ներգործութիւն կցորդէր. որ
տուաւ մեզ մատակարար շնորհաց մինչև յաւիտեան.
ապա ուրեմն Յաստուած Հոգին ընդ մարմին Հայիս խառ-
նեալ՝ Քրիստոս և Յաստուած զսա առանց յերկուանա-
լոյ օծանէ. և է ոչ յատկացեալ Յաստուծոյ, որպէս արե-
գակն զոր առաք և ապակին, այլ նախատպին զօրու-
թեան ընդունակ, և մարմին, ըստ որում և անուանե-
ցաւ արիւն Քհուսի, և ոչ արեանն յատկացեալ. և զօ-
րութի ունոյ Հոգւոյ զմեզ որպէս զՅաստուած՝ Հզդ
որպէս արդելեալքն՝ի տանն՝ յապակոյն, որպէս յարե-

գականէ պայծառացան լուսովին զոր ընկալան. այսպէս
և մեք՝ ի խաւարային կեանս գոլով՝ սա սուրբ ընծայս
քահանայապետն աղօթիւքն ընդունի յինքն զնեղոց-
ծութիւն լուսոյ իջմանն Հոգւոյն, և զՀայեցողն՝ ի յինքն
Հաշակմամբ մտայ և մարմնով՝ լուսաւորէ, սրբէ և ար-
դարացուցանէ, Ա.յլ ձև ասիցես. ընդէր միայն այս
նիւթ և ոչ այլ ոք յէից նմին ընդունակ, առաւօք.
և ընդէր միայն այն նիւթ արեգականն և ոչ այլ ոք.
զի այն Աստուած որ զնա զգալի լուսոյ՝ արար պարու-
նակիչ, զսա առ բարձրացոյց, օրհնեաց և սրբեաց, և
իմանալի լուսոյ աստուածութեանն զօրացոյց լինել պա-
րունակող, և ոչ այլ ոք կարէ տեսանել զնա, բայց միայն
սա՝ զոր անուանեաց իւր մարմին քան այամ խորհրդոյ.
Վարձեալ մանր խուզելով ձև ասէն ոմանք, ընդ այն
մարմին Աստղին միացաւ և ընդ այս Հոգին, առաւօք,
ձև բնութիւն աստուածութեանն և փառաց ոչ ունին
զանազանութիւն՝ անձնաւորութեամբ որոշեալքն, և
ընդ այս Հոգին խառնեալ որ բնութենակից է Աստուծոյ,
բնութիւն Աստուծոյն խառնեցաւ, և Վրիստոսի եղև մար-
մին, մանաւանդ զի Հոգին Վրիստոսի էջ առ մեզ, և
նա ետ զնա նախ առաքելոցն և նոքա աշխարհի. զի իւր
արդարութեանն ընկալաւ զնա ի Հօրէ փոխարէն, և
սփռեաց ի յաշխարհս, որում խորհրդազգածն առա-
քեալ՝ գրէ "Աչ ձև որ զՀոգին Վրիստոսի ոչ ունի, սա
չէ նորա,,. և աստուածաբանն Յովհաննէս, "Ա.յ-
սուիկ, ասէ, գիտեմք եթէ ի նմա եմք, զի ի Հոգւոյ
իւրոյ ետ մեզ,,: Աստի յայտ է ձև զմարդիկ սկսաւ
ձեամբ, և զՀայն առաքելութեան Հոգին ներգործէ
մարմին Վրիստոսի. և զմեզ և զնա նոյն ինքն լինի յո-
դակապ և խառնէ, և չէ պարտ վասն այսր Հակառա-
կել զգրոց զօրութիւն գիտողաց: Ասէ ձև որ ասէ, մար-
մինն Վրիստոսի միս էր և արիւն, և այս Հայց և գի-
նի, առաւօք ձև զօրութեամբ և էութեամբ բնու-
թեան մի մարմին անուանի միսն և Հայն, Համագոյ գո-
լով իրերաց ի չորից տարերցս գոյացեալքն. և որպէս ա-
րիւնն մարմին, այսպէս և գինին բնութեամբ մի, ձև-
պէտ և ոչ պատկութեամբ. զի ձև արտաքոյ էր սա-

1 Ա՛ի օրին . Նխ-Խ։

բերցս մի ոք ՚ի սոցանէ, յայտ է Թէ ԹեւուԹիւն ունէր միւնն քան զմիւսն. ուրեմն արմատ մի ունելով և պատճառ մի, անուանին մարմին, և միոյ Քրիստոսի մարմին՝ միոյ հոգւոյ պղծով ընդունակ։

ԱՐՊԷս ԿԱՐԱՑՅԻՒՔ ՀԱՒԱՏԱԼ, ԹԷ ՅԱՄԵՆԱՅՆ ՏԻԵԶԵՐԱՑ ԵԿԵՂԵՑԻՍ ՋԱՆԱԶԱՆ ԱՋԳԱՑ ՄԻ ՔՐԻՍՏՈՍ Է ԵՒ ՄԻ ՄԱՐՄԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՏՇԱՌԱԳԻ։

ԱՅՆՄԻՔ և այսմ բազմապատիկ ՚ի գրոց վարդապետութիւն, սակայն ստուեր հակառակասիրութեանն ազօտացոյց զիմանալի լոյս մտաց մերոց առ ՚ի նոյնն յառնել. ասպա Թէ ոչ ոք դիցուք զառաքելոյ ասելն, "Արի՛ Քրիստոսք եթէ հեթանոսաք՝ ամենեքեան զմի Հոգւոյ արբաք. և չիք խտիր, զի ամենեքեան դուք մի էք, յորոց վերայ անուանն Քրիստոսի կոչի, և զինա զգենուլով քրիստոնեապէս անուանեցայք. քանզի մի է տէր, մի հաւատք, մի մկրտութիւն, մի եկեղեցի ՚ի զանազան ազգաց որոշեալ և մկրտութիւնն ծնեալ և Քրիստոսի անուանեալ։ Այլ ասիցես, զպղծս զանազան ազգաց պատարագ մի պատարագ է, նա զի և զանազան հացքն։ Ուր որ ասացուք. մի տղայք լինիք մտօք, այլ ՚ի չարեաց տղայացեալ՝ մտօք կատարեալ լերուք առ ՚ի քննել զՀնմարտութիւն և նմին հաւանել։ Օ ի եթէ զանազան Քրիստոսք էին կամ զանազան Աստուածք զանազան զօրութեամբ իւրաքանչիւր ազգացն տիրեալք՝ Հնմարիտ էր կարծիքն, և ունէր զանազանութիւն պատարագն հակառակամարտ Աստուածոցն զօրութեամբ կատարեալ, զի այն ազգին Աստուածն զիւր զօրութիւն փառացն ՚ի նորա պատարագն տպաւորէր, և այսմ ՚ի տղայն։ Ասէ Թէ, Քրիստոս մի է՝ բայց առնա հաւատալն սոքա զանազանապէս բերին, ծանիր զի զօր վասն այսր բան ընդարձակագոյն քննեալ ուսուցաք Հաւանապաւ՝ որպէս զՔրիստոս մի, և զսոցա հաւատն առ նա միապէս. ասպա Թէ Քրիստոս մի է, և մեր ամենեցունն յոյն առնա միով օրինակաւ, և մի հոգի՝ անուանեալքս յանուն նորա յիւրաքանչիւր ազգս ընկալաք, և չիք խը-

1 Մի օրին. Պատրաստ և նուէր։

տէր՝ի հաւատոյն Ա.բրահամու որդւոյս Ծնեալոց, յայտ
է Թէ մի է եկեղեցի ընդ տիեզերս, և մի միով Հոգւովն
՝ի նոսա կատարեալ պատարագն. զի որպէս դու խնդրես
զՀոգին կատարիչ քոյմ նուիրացն, այնպէս խնդրէ և
նա իւրումն. և Թէ զանազան են լեզուքն, բայց ոչ Թէ
զանազան Հոգիս խնդրէք, այլ զմին, մանաւանդ և մի
բանիւք աղօթից, և մի ձեւակերպութիւն առ՝ի նոյն
ամենայն աղգաց քրիստոնէից խորհրդածութիւն: Ա-
րեւն զմին Հոգին խնդրելով քո և նորա՝ նոյն միոնն էջ
՝ի վերայ և զօրացոյց և կատարեաց՝ զիմն, որ Հայ եմ,
և զնորայն որ Վրացի և զայլսն որ Հոռոմ. և մի է ու-
Թիւն զիւրաքանչիւրոցս նուէրք տարբերացոյց: Ա՛վ պարտ
է, և զառաջին օրինակէն դարձեալ բուռն Հարցուք.
որպէս մի արեգակն է որ զիմն զգալի աչք և զնորայն
լուսաւորէ, այսպէս մի Հոգի զիմ պատարագս և զնո-
րայն սրբէ, և իմանալի աչաց լոյս Հնարէ: Ապա Եթէ ոք
՝ի չարութենէ դրդեալ՝ ասիցէ, Ես միայն տեսանեմ
զարեգակն և ոչ դու, միայն զիւր չարութիւնն ցուցա-
նէ, և ոչ զիս ՝ի համաստիւռ լուսոյն զրկէ՝ որչափ մա-
քուր է Հայեցուածս. այսպէս և ազգ որ զազգ անկա-
տար և Թերի յաչալէ, յորոյ վերայ անուն Ա.բրահա-
մի է, զիւր չարութիւնն ցուցանէ՝ և ոչ զնա ՝ի հաւա-
րակաց Հնարէն զրկէ, բայց Թէ ինքն զիմինալի Հայե-
ցողութիւնն կամաւ կտրուցանէ: Ամէն ասա զանազա-
նութիւն միոյ Ա.բրահամի պաշտօնէիցս ՝ի մի խորհր-
դածութիւնն. և որք զայս ոչ այսպէս կարծեն, զան-
ձինս զատապարտեն, և ոչ Թէ զՀեզութեան Հոգին
յաչալանայ աիսի ծառայեցուցանել կարեն, կամ Հա-
կառակութեամբ գործակից ստանալ: Ա.յլ նիւթքն, ասեն,
զանազան են պատարագին: Ա՛Թէ հայ և գինի ոչ են
ըստ որում ՝ի Ա.բրահամէ մեզ աւանդեցաւ, յայտ է
Թէ ոչ կարեն զնեղգործութեամբ Հոգւոյն ըստ այսմ խոր-
հրդոյ ընդունել, և մարմին Ա.բրահամի անուանել. ա-
պա Թէ հայ է և գինի, տանի ստուգապէս զլոյս զօ-
րութեան սուրբ Հոգւոյն, որպէս և ապակին զարե-
գակին: Ա.յլ խնդր է ընդ նոյն խառնեալ և ջուր: Ա՛վ
յանդգնութեանդ և անօգուտ Հակառակութեանդ, որ
ձգէ զմեզ ՝ի շատախօսութիւն. ած զվերոյգրեալ օրի-
նակին ՝ի մէջ. Եթէ խառնեմք ընդ ապակին որակութի

ինչ գոնոյ ՚ի սէտս վայելչութեան՝ թէրևս այն տակաւ
բացուցանէ զնա տանել զլոյսն արեգական, կարծեմ և
ոչ բնաւ. ապա մի զգջութիւն Հոգւոյն նիւթոյ ապա-
գաւ քան զարեգակնս եղական տկարացուացուք։ Ա.Յ
ինդրես պատճառս մի մարմին է Աբրիատոսի ՚ի զանազան
աշխարհս և յեկեղեցիս պատարագք. և այսմ գնահա-
գիծ ապացոյցն ՚ի մէջ առցուք ուսուցիչ։ Ասիցէ բանս
՚ի տանն ոչ մի ապակի, այլ բազում յիւրաքանչիւր կող-
մանս և յանկիւնան, նոքա թէպէտ և ՚ի քառակողմ
կոյսն որոշեցան, այլ լոյսն որ ծագէ ՚ի վերոյ և գնա-
կէ ՚ի ներսին, մի է, և մի անուանին որոշեալքն, և միոյ
զօրութեան լուսոյ ընդունակքն. գոլով նիւթոյն ազ-
գակից, և լոյսն որ բնակեցաւ ՚ի նոսա՝ մի. այսպէս և
յամենայն կողմանս աշխարհի թէպէտ և զանազան են
եկեղեցիք, սակայն մի նիւթ գնի ՚ի նոսա նուէր պա-
տարագի հաց և գինի, ՚ի վերոյ որոց ծագի մի արեգակն
համասիրտ իմանալի Հոգին Ա.ստուածոյ, և տարբերու-
ցանէ զոսա մի Ա.ստուած և մարմին Ա.ստուծոյ. որպէս
զգալի լոյսն զընդունակ նիւթին. և ըստ որում որք
յայսմ կողմ՝ որ զհարաւոյս է՝ հային ՚ի պարունակող
լուսոյ յատակին՝, և որք յայն՝ որ յարևելից է, միայն
տեղեաք տեսանեն զնոսա որոշեալս. ապա թէ ոչ բնու-
թիւն նիւթոյն մի է, և լոյսն որ ընդ իւրաքանչիւրսն
խառնեցաւ՝ անորիշ, մանաւանդ և զորոշեալսն ընդ ին-
քեան և ընդ միմեանս խառնէ։ Ա.յսպէս որք ՚ի ծագս
տիեզերայ իմանալին աչօք ընդ տուրբ այս խորհուրդ
յառնին, մի բնութիւն մարմնոյ հացի և գինւոյ տեսա-
նեն, տեղեաք բաժանեալ և ոչ էութեամբ. ՚ի վերոյ
որոյ ծագեալ Հոգին՝ խառնէ զոսա ընդ ինքեան, և
զմեզ Ձեռակիտանին ընդ իւեաս, և առնէ միոյ զլխոյն
մերոյ Աբրիատոսի մի անդամ զիւր տուրբ եկեղեցի, որք
ընդ տիեզերս զանազան ազգաց քրիստոնեաք։

Եւ զի այս այսպէս է Ձեմնարտապէս՝ ահա ցուցաւ հա-
ւանարար, որպէս կարծեմ, և չէ բաժանեալ Աբրիատոս
՚ի Պօղոս և Ա.պօղոս. և ոչ եկեղեցի նոքա ՚ի հայ կամ
՚ի հռոմ կամ ՚ի փռանգ, թէպէտ և տկարացն կար-
ծիք այսմ ծառայէ. զի բաժանեալ էաք՝ թէ առ այլ

1 Մի պին. Ադ.։

Աստուած յոյս ունէաք իւրաքանչիւրքս։ Ակ միոյ տեառն Աբրահամի անուն կոչեցեալ՝ ի վերայ մեր՝ մի էիք ա- մենեքեան. որիշ՝ ի մէնջ որ խորշի յանուանէն Աբրա- համի, Ակ որ Համարի զինքն քրիստոնեայ և՝ ի հան- նուն քրիստոնէի վասն տարաբերութեան խորշի, յայտ է թէ կամաւ զինքն՝ ի գլխոյն Աբրահամ որոշէ, և՝ ի նորա անդամոց։ Ապա խաղաղութիւն առեալ՝ ի Աբրա- համ, կտակ յետ մահու՝ մի նմին պտուղ տացուք զաս- տանեայական հակառակութիւնն, և այն զի զմիջնորդն խաղաղութեան ամենայնիւն հնարեաց ունել՝ նիւթ ա- տելութեան, քան զոր չիք ինչ ապետից արժանի։

ԵԹԷ ՊԱՐՏ Ի ՀԱՒԱՏԱԼ Ի ՁԵՒՆ ԸՆԴԱՐՁԱԿ ՓԱՀԱՆԱՅԻ ՁՊԱՏՄԱՐԱՆՆ ԿԱՏԱՐԵԱԼ ՈՐՊԻՍ ՁՄՐԲՈՑՆ

Այսուհանդ յառաջին արարչութենն արեգակն ստեղծ մարմնոցս՝ ի վայելս, առանց որոյ չիք էիցս կենդանու- թիւն։ Ակրկորդ ստեղծուած արար, կամ թէ պարտ է ասել նորոգութիւն հոգւոց մարդկան և լոյս ետ իմա- նալի նորոգելոցն՝ իմանալի զԱրդին միածին որ ձայնէր բարձրաբարբառ. "Ես եմ լոյս աշխարհի, որ գայ առ իս՝ ի խաւար մի մնասցէ.."։ Արդ եթէ որքան յառաջ- նումն բազմացան չարիք մարդկան առաջի Աստուծոյ, գիտեմք ամենեքեան. զի ոչ միայն զարարիչն արարա- ծովքս ոչ ծանեան, այլ մանաւանդ և հակառակ նորա առաուածս գտան. Թողցի ապա՝ ի բնութեանս օրինաց՝ ի պէսպէս վատթարութիւն նոցա մոլորումն։ Ակայն բազմամոլորմ արարիչն տեսեալ զայնքան նոցա անա- ւակութիւնն զղջացաւ, ոչ բնաւ ընդ իւրն արարչու- թիւն. այսինքն ոչ ամփոփեալ պարսուբեաց զպատճառ մարմնաւոր կենացս զարեգակն՝ ի մարմնով վատթարա- ցեալցն, այլ ներէր նոցա երկայնմտութեամբ, զղջա- ցեալ մանաւանդ՝ ի պատուհասէն և ոչ թէ՝ ի բարե- գործելն, տեսեալ զմիտս մարդկան՝ ի խնամն չարին հաստատեալ, զոր և տէրն ասէր. "Ոչազգ զարեգակին՝ ի վերայ չարաց և բարեաց.."։ Ակ եթէ զայն ընդ կենաց պատճառ և լոյս մարմնոյ՝ չարութիւն մարմնա-

1 Ա՛ի պին. Հնարեցուցանել։

*ւորացն ոչ արգել, այլ ծագէ միշտ զԹուԹեանց Հայր, քանիծն առաւելապէս այսմ պարգևի պարտիմք հաւատալ, եԹէ ոչ զղջանայ Աստուած վասն մեզաց մարդկան զնոյն արգելուլ, այլ միշտ ծագէ ՚ի վերայ Հոգւոց՝ քահանայական աղօԹիւք. և որպէս զզգալի արեգակնս ոչ արգելու ՚ի չարացն, ըստ որում և ոչ ՚ի բարեացն, այսպէս և ոչ զիմմանալին՝ յանարժանին կատարելն, ըստ որում և ոչ յարժանաւորին։ Սակ եԹէ ասիցես, Հոգւոյ աչօքն խաւարեալ է, ասեմք. այս խորհուրդ ոչ ԹէՀ նորա Հոգւոյն միայն է լոյս, այլ բնաւ աշխարհի. նա ԹէՀ խաւարեալ է՝ ոչ տեսանէ, բայց սակայն զնորն ըստ իշխանուԹեան պատուոյն առեալ սիրէ. զի ոչ ԹէՀ իւր է այլ Աստուծոյ, և նա աստուածայնոցն մատակարար. ծառայքս Աստուծոյ ՚ի միջնորդուԹիւն նորա ըստ Հաւատոյն իւրեանց վայելէն, իսկ նա տեսանն իւրում պարտի զգաստաստանն՝ զոր անմաքրապէս պաշտէ. և ըստ որում նոքա որ ՚ի լոյս զգալի ծանեան զԱստուած և ոչ իրրև զԱստուած փառաւորեցին՝ անզգ դատապարտին, այսպէս և իմմանալի լուսոյս Հայեցողք՝ ԹէՀ անզեղջ մնայ ՚ի չարիսն նանրացեալ խորհրդովք, սակայն լոյսն ոչ ԹէՀ զիւրն ներգործելոյ դադարէ։ Այս և զայս պարտ է Հաւատացելոցս յայտնի առնուլ, զի ԹէՀ սուտ և անզօր մնայր ՚ի ձեռն անարժան քահանային պատարագն, ընդէր նա որպէս զոչ խորոզ մարմնոյն տեսանն՝ դատապարտեր կամ դատաստան անձին իւրում ուտէր և ըմպէր. այլ դատի վասն այնորիկ՝ զի անզեղջ խոստումն Աստուծոյ տայ ՚ի ձեռն նորա վասն առաքելական պատուոյն զՀոգին, և նա ՚ի սուբբն անմաքրապէս և շաղախեալ վարուք Հպեալ, գտանի դատաստանի պարտական. և ոչ ԹէՀ որպէս ՚ի սուտ Հայ և ՚ի գինի, որ ամենեցուն Հանդիսակելի։

ՈՐՔԱՆ ՀՆԱՐՀ Է Ի ՊԱՏՄՈՒԱԾԻՆ Ի ԲԼՑՈՒԹԻՍ ՏԵՂՈՒԹԵԱՄԲՆ ԱՆՈՒՆՑ ՀՈԳՈՒՆ ՀԱՄԱՐԵՑԱՒ

Ցուցեալ մաքրութիւն և ոչ բնաւ՝ ոչ կինդանոյ և ոչ մեռելոյ, որպէս ոմանք կարծեցին՝ զի որ ասէին զնա՝ ձայնել սա առ մեզ, և ընդել՝ ունի կեանս յանձին, և ոչ թէ որ տեսանել, ՝Կա և յորժամ բաշխեաց, ոչ բաւական համարեցաւ զտեսանելն առաքելոցն, այլ եւս Հաշակել. "Առէք, ասէ, կերայք՝ ի տանել ,, . ուրեմն զկնի տարեալ սրբութիւն՝ առանց արժանապէս սորին Հաշակմանն՝ ոչ կինդանոյ որ յեկեղեցին է, և ոչ մեռելոյ՝ Այլ սակայն և ոչ զայս Հաստատեմք, զմեծ՝ այս ժամանակ աղօթից իբրև զի՝ ի գիշերային կամ՝ ի տուընջեանային պաշտամանէ նոցա, որք առընթերակացեալ սրբոյ խորհրդածութեանն՝ աղօթեն. այլ որքան Հոգի առ մեզ տեսանեմք զԱստուած այժմ քան յառաջին ժամ, այնքան երագ Հաւատասցուք զաղօթսն առ նա ժամանել, և զողորմութիւն նորա սեթափ՝ ի վերայ մեր ծագել. զի մեծ է բարեխօսն, և յորդառատ այժմ խնդրուածք պատարագողին առ Աստուած վասն առքեթեր կացելոցն՝ Սակայն և այնպէս մեզ պարտ է անկատար զանձինս համարել, մինչդեռ ոչ եմք արժանապէս յայս սեղան վայելեալ, և զկեղտ մեղացն որով ըզշնորհ որդեգրութեանն աղտեղացուցաք՝ լուացողական աւազանիս վերատին մաքրել. այլ միասցուք վերջացեալք բոլ մեզայ յայս շնորհէ մեծէ՝ սրտակուր և սրտաթափ իբրև զորդիս ատամբակս՝ ի սեղանոյ հօրն և՝ ի կցորդութենէ եղբարց բաժանեալք, առեալք զՀաղորդութիւն զօրութեան հանդերձելոյ կենացն, և վերստին՝ ի դրունս մանկու դարձեալ մեղայ շաղախմանք։

1 Եբկ. օրին. Ձէ ձեռ այս։

2 Յանդիմանէ բանս զայնոսիկ, որք ընդ մի համար գրէին զՀաշակոցն և զտեսողն սրբոյ խորհրդոյն, և միօրինակ մատակից զկինդանին և զվախճանեալն, յորս կայ ոչ սակաւ խորհ։

3 Մի պրին. յառաջս կամ՝ ձեռն Հանդերձել ինդանոյին։

ՈՒՍՏԻ ԵՄՈՒՏ ՂԱՅ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ ՉՑԻՇԱՏԱԿ ՄԵՌՈՒԼՑՆ Ի ՊԱՏԱՐԱԳՆ ԽՆԴՐԵԼ, ԵՒ ԷՐ ՎԱՍՆ

Սովորութիւնս այս՝ի սրբոց անտի առանդեցաւ յառաջնոցն հարցն երանելեաց, ըստ որում պատմեաց Թեանցն ուսուցանեն քանք. բայց ուղիղ մտօք և ոչ ստերիւրեալ կարծեաք, որպէս այժմ բազումք տեսանին. այսինքն զի պատարագն հարկաւորապէս մատչի ի՝ստուածոյ, և յանուն ի՝ստուածոյ յանձն արարին զինքեանս՝ որպէս կենաց, նոյնօրինակ և յետ մահու լինել, և ոչ եթէ զհասարակաց փրկանն միայն յիշեսցեն պրաւեցին, կամ զի՝ստուած փոխանակ մարդոյ տրիցէ հատուցին և կամ յանուն մարդոյ նուիրեցին զնաղանդեալն ՚ի օր մահու չարի և մահու խայտի, և ՚ի նորա յանունն մեռեալ։ Ո՛ի թէպէտ և ասեմք ընդ հետս նոցա զմեր սովորութիւն, մեծ զանազանութիւն տեսանի ՚ի դիտաւորութեան կամաց նոցա և մերում. քանզի որպէս զբազում լինչ յուղիղ շաւղաց ստերիւրեաց չարն, և բազմաց զթիւրն որպէս զուղիղ եղոյց պողոտայ, այսպէս և յայսմ մտանին մեզ սրար։ Ո՛րդ եթէ ոչ առցուք զչինն արդարութեան՝ որ յաջմէն և յահեկէն. արդարև մտցուեցաք ՚ի Ճանապարհին որպէս յանապատի։ Վասն կարծեմ զապացոյցդ ՚ի զանազան դէմս, և հեղդանամ երկրորդել, զի սուրբքն զ՝երկրորդութիւնն յերիս անձնաւորութիւնս որոշեցին, նա խրատեաց զ՝երիս ըստ անձանցն և բնութեամբ բաժանեալ. և նաքինն զերիս անձինսն աստուածութեամբ մի խոստովանեցան, յորդորեաց զ՝աբել և անձամբ շփոթել. և սաքա հակառակամարտ հերձուածս աստուածաշունչ պրօվք յախան ջար զօրանային, և սրբոցն կարծէին զանձինս հանախօս՝ պէսպէս վկայութիւնս առեալ ջատագով՝ որոց ոչ հաւանեցան Ճշմարտութեան աշակերտքն, այլ յերկուցն Թիւրեալ՝ զմնքուրն պահեցին հաւատս։ Յ՝այսէս և այս գտեալ ՚ի մէջ եկեղեցւոյ նորաձեւութիւնն՝ աւանդութիւնս ՚ի սրբոցն է, ՚ի պատարագն յիշել զինեալեացն. բայց ոչ այսպիսի սովորութեամբ ՚ի մեռելոցն յանուն զնոյն կատարել՝, և ՚ի վաճառաշա-

1 Կշռաւորութիւնս ընդգէմ ասմանցոց է, որք կարծէին թէ պատարագն մատչի առաւել վասն ննջեցելոց՝ քան կենդանեաց։

հուԹիւն զ՚Քրիստոս ձգել, և կենօք հեղգանալ, և յետ մահու՛ի սոյն ապաւինել. նա զարձեալ և ոչ զայս լուծանել կարելով՝ անպատուզ զմեռեալն յօգնականու-Թենէ խնդրուածոյն կարծել կամ զրկիլ յիշատակե-լոյն՛ի պատարագս. իբր Թէ փախչել ՚Քրիստոսի բա-ժանմանէն, և՛ի Աբելի շփոԹելն ապաւինել, որ եր-կոքին չարք. այլ պարտ է ընդ ուղիղն գնալ պողոտայ, և ոչ լուծանելով՛ի պատուիրանացն՝ այնպէս ուսուցանել զմարդիկ, նա և ոչ երկնչել՛ի զուղիղն գոչելն՛ի կուրացն գայԹակղել. վասն հաւանեալք ՁնմարտուԹեն, հաս-տատեմք զնոյնն այսպէս։ Ո՚Քրիստոս գիրք սուրբք յայտնապէս Ոչակեցին վասն կենդանեաց մեռեալ. զի "Աղոց հաւատացեն, ասէ, յանուն նորա՝ ետ նոցա իշ-խանուԹի որդիս Ա՚ստուծոյ լինել, որք ոչ յարենէ և ոչ՛ի կամաց մարմնոյ, այլ յ՚Ա՚ստուծոյ ծնան.։ Ա՚ռայց ուսաք զարձեալ՛ի նոցանէ խորհրդաբար և ոչ յայտնապէս, ԹԷ և մեռելոցն արար՛ի մահուն ազատուի. ըստ որում գրեաց առաքեալն Պետրոս, "Աղուն որ էին՛ի բանդին՝ երԹեալ քարոզեաց,. և աւետարանիչն, "Ա՚ազում մարմինք ննջեցելոց սրբոց յարեան, և մտին՛ի քաղաքն սուրբ.։ Ա՚յդ եԹէ՛ի գնալն առ մեռեալն՝ որքան և որ պիսի էր շնորհն առ նոսա, մեզ՝ նոքա զորս կարծեմ գիտողս՝ ոչ բնաւ կամեցան յայտնել. կամ Թէ՛ի քա-րոզելն՝ զամենեսեան ազատեաց, Թէ զոմանս. կամ Թէ ո՞ք էին որ ծանեան զնա. կամ ո՞ք ոչ՛. նա զի և որ Ա՚Քրիստոսի խորհրդոյն քահանայագործոյն էր, ոչ բնաւ զայս բան առ՛ի մէջ։ Ա՚յլ զի գնաց Ա՚Քրիստոս առ մեռեալն հաստատուն է. և զի ոգիքն՛ի զգայու-Թեան են, երանելին Ա՚նտոն յայտնապէս ետես. բայց Թէ շնորհ ոմանց եղև առ նոսա, ստուգապէս ծանեաք ոչ բնաւ։ Ա՚յդ ընդ այն շաւիղն զոր ցուցին մեզ՝ պար-տիմք անտեսիւր գնալ և ըստ այսմ խորհրդոյ. այս-ինքն պատարագել զ՚Ա՚Քրիստոս՝ ըստ որում հրամանն ընկալաք, իւր մահուն յիշատակ և նոյն փրկագործուԹեն

1 Վասն այսպիսւոյ անյայտու-Թեան Թաքուն իւրացս՝ ելն պէս-պէս տնտիպ Թէ և մերս կարծիք առ ոմանս վասն ազատուԹեան մեռելոց նախ քան զՔրիստոս. Ձմին իրի չէ պարտ յածիլ յօտարոտի բանս, այլ ըստ սուրբ գրոց և ըստ սրբոց Հայոց խմանալ, Թէ ազա-տուԹիւն եղև հոգւոց արդարոցն ևէՀ։

անջինջ առ մեզ կնիք, և հաւատալ հաստատապէս, ըստ որում ինքն ուսոյց. որ ուտէ զմարմին իմ արժանապէս, և ըմպէ զարիւն իմ արբապէս, յիս բնակեսցէ, և ես՝ ի նմա. և սիրապէս և Հնմարիտ և առոյգ Հաւատոյն փրկանք և մաքրութի՛ւն ի մեզաց. ըստ այնմ. "Արիւն Յիսուսի սրբէ զմեզ յամենայն մեղաց.." Յր զի Հարկաւորապէս յիշէ միջնորդութեամբ Քրիստոսի առաջի Հօր քահանային՝ զկենդանիս ամենայն ըստ իրաքանչիւր կարգի և աստիճանի, յետ այնորիկ և զմեռեալսն, Հաւատամբ դարձեալ օգտել յաղօթից նորա ըստ իւրաքանչիւրոցն Հաւատոց և յուսոյն՝ կենդանեաց և մեռելոց։ Այլ զայս ընծայս տալ Պատուոյ՝ ի ձեռս նորա՝ յուսոյ է պտուղ և Հաւատոյ. թէ կենդանի տայ վասն իւր Հաւատով, առնու ըստ չափոյ սիրոյն, և թէ վասն մեռելոց, և մեռեալ վասն իւր առնու և նա Պատուոյ Հատուցումն՝ որպէս տեսանէ Պատուած զՀաւատս նորա։ Սակ նշանակ Հաւատոցն որ է։ Այլ առնել տուրևառութեան Համարս և շահավաճառութի՛ւն և ջան առ՝ ի զրկել և զթիւան բազմացուցանել. այլ տալ զպատուղ սիրոյն, որպէս ետ պտուղիկն զիւղն, և կցորդ նմին զարտաստուն։ Այլ բնաւ զայս զմտաւ ածել, թէ կա՛ զայս քեզ, և փոխան ամին պատարագի՛ զՔրիստոս ինձ. այլ թէ զի պատարագի Քրիստոս՝ ի ձեռն քո ինձ՝ ի փրկութիւն, նախ քան զիմն տալ՝ արժանի լինի այս իմ նուէրս՝ նորին՝ ի սպաս պիտոյից. և ոչ բնաւ անհաւատութեան տալ կարծիս Համարս պահանջելով։ Յր մեզ՝ որոց սպասաւորել բանի վիճակեցաւ՝ պարտ է սրբոյն հետևել. և որպէս նոքա հնազեսին ամենևին փակել զայս բաւութի՛ւն մեզաց յետ մահու՝ աղաղակելով և ասելով. "Այս է ժամանակ ընդունելի՝ այս օր փրկութեան, ջանացարուք՝ մինչդեռ այս օր առաջի կայ.." "Աղաւմբ ասիցեն յաւուր յայնմիկ, տէր տէր յանուն քո մարգարէացաք. և առացից, ոչ գիտեմ զձեզ.." Իրաքանչիւր որ առնու փոխարէն՝ զոր ինչ իւրով մարմնոյն գործեաց, եթէ բարի և եթէ չար։ "Աղբայր ոչ փրկէ և ոչ մարդ. ոչ օգնեն ինչք յաւուր պատերազմի, այլ արդարութիւն փրկէ՝ ի մահուանէն յաւիտենականն.."

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Ի ՆՈՑՆ ԵԻ ՎՃԱՄ ՆՈՐԻՆ

ՎՐՒՍՏՈՍ խնդրեաց վասն առաքելոցն, «Հայր կամիմ, զի ուր եմն իցեմ, և սոքա ընդ իս իցեն, զի տեսցեն զփառսն իմ...» և Պօղոս վկայէ նմին. «Կամեալ և ընդ ՎՐԻՍՏՈՍԻ լինել լաւ համարիմ...» Յովհաննէս աղօթէր, «Ո՛վ գալոյ իմում առ քեզ, տէր Յիսուս, աջակողմանքն կացցեն, և ձախակողմանքն ամաչեսցեն...» և տուր զձանապարհս իմ առ քեզ անբռնադատ վճարել, առնուլ զայն՝ զոր խոստացար սիրելեաց քոց։ Յոքիւք և այլ բազմօք խորհրդական բանիւք՝ ի գրոց ուսանիմք, զի սուրբք որ ընդ հետ չաւղաց ՎՐԻՍՏՈՍԻ գնացին, յորժամ ելանէն՝ ի մարմնոյս՝ հոգիքն առ Յուսած գնան, որ ետ գնա։ Յելոյդ վարկանիմ ասել և զտեսիլ կրօնաւորացն յերկուց լերանցն զՀոգի սրբոյն Ղեսխի, որ բարձրանայր հրեշտակաց բանակօք, և զՆտանի, զՊօղոսի, և զՄանի, նա և զիւրն իսկ, ըստ որում գրէ մեծն Թանաս՝ Թէ եհաս հոգւով միանգամ և երկիցս մինչև յօդդ տեսեալ զներգործութիւն սատանայի մինչև ցայն կէտ ժպրհեալ այժմ, և այնուհետև նահանջեալ, որովք հաստատեմք զառաքելոց ասել՝ ըստ իշխանի իշխանութեան օդոյս այսր։ Զդ այս խորհուրդ չարութեան նորա՝ մարտ որ յօդդ, գիտելի էր սրբոցն. վասն այսորիկ յանձն արարին մեզ՝ յետ մահու խորհրդական աղօթիւք զերծանելոյն կցորդել։ Օ այս և տէր ուսոյց յաւետարանին. «Պայ իշխան աշխարհիս այսորիկ, և յիս ինչ ոչ գտանէ. այլ զի ծանիցէ աշխարհ Թէ սիրեմ զՀայր, և որպէս ետ ինձ պատուէր՝ այնպէս առնեմ...» այսինքն ես ոչ Թէ ըստ դատակնքի մեղացն Ադամայ մեռանիմ, քանզի մեղք ինձ ոչ բնաւ տիրեաց. այլ Հօր հնազանդիմ մահու չափ, և որպէս ետ ինձ պատուէր՝ այնպէս առնեմ. զի փոխանակ ամենայն աշխարհի փրկութեան մեռանիմ անմեղս, և զայս ծանիցէ աշխարհ յետ այս սակաւ ժամուց՝ յորժամ արձակեմ զհոգիս առ Հայր. և գայ իշխան նորա չար բանսարկուն ընդ առաջ, և յիս յիւրայոցն ոչ ինչ գտանէ։ Այս խորհրդապէս ուսանիմք Թէ՝ ի կարծիս էր սատանայ Աստուծոյ մարգեղութեանն և

անմեղութեանն, տեսեալ զնա մարմնով և բնաւորական կրիւք նորա վարեալ, և զանհաս էութիւնն պատրուակեալ։ Այսպա յորժամ արձակեաց տէրն զՀոգին որպէս եղոյցն կանխաւ, էին ընդ առաջ՝ որպէս սովոր էր ամենայն հոգւոց, թերևս գոցէ ինչ յիւրոց ներգործութեանցն՝ ի նմա, և եգիտ և ոչ ինչ. ապա խոյսառակեալ նշաւակեցաւ առաջի Աստուծոյ և հրեշտակաց՝ ի մարմինն Քրիստոսի՝ կեղծիք նորա լինել մեզաց մարդկային բնութեանս՝ ի նորա ներգործութենէն, և ոչ՝ ի բնաւորական կրից, և մերկացուցեալ էհան՝ ի նմանէ Քրիստոս զիշխանութիւն իւր և զպետութիւն, որպէս գրէ առաքեալ. այս է զիշխանութիւնն՝ որ ունէր՝ ի վերայ Հոգւոցն, և չարչարէր զմեղուցեալսն, որպէս զմեծատունն և պահէր՝ ի նեղքոյ դատաւճիռն Աստուծոյ զարդարսն, որպէս զԱբրահամ։ Եբարձ զայս իշխանութիւն՝ ի նմանէ, և արդարութեամբն իւրով մի մարդն Յիսուս Քրիստոս առ յինքն իշխանութիւն՝ ի հոգւոց կերկինս և կերկրի, ըստ որում ասացաւ առաքելոցն, «Տուաւ ինձ իշխանութիւն կերկինս և կերկրի»։ զիշխան աշխարհիս դատապարտեալ, և զՀոգիսն՝ ի գժոխոցն վերածեալ, ըստ որում գրեացն Պետրոս. և առեալ զնոսա որ ցանկային տեսանել զօր նորա՝ ուրախացոյց, և ընդ ինքեան բարձրացոյց։

Այսպէս զարարտականսն դատաստանի՝ որպէս զՀոգումայեցիսն, եթող ազատ՝ ի չարչարանացն՝ մինչև՝ ի միւսանգամին իւր գալստեան, ըստ որում ասաց յաւետարանին. «Այսպէս ժամանակ՝ յորում ամենեքեան որ՝ ի գերեզմանս կայցեն՝ լսիցեն ձայնի իմում, և եկեսցեն արտաքս. որոց բարիս գործեալ է՝ ի յարուցիկն կենաց, և որոց չար արարեալ՝ ի յարուցիկն դատաստանաց. և որ հաւատայ յիս՝ ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեալ՝ ի մահուանէ՝ ի կեանս»։ Այսու ուսանիմք, զի ամենքեան որ յետ մահու ընդ իշխանութեանն գերծան, որպէս ետես Հոգին, ոչ մտանեն՝ ի դատաստան, այլ մնասականք և զայլը դատին ինքեանք. արդ

1 Զայս է թէ մարմնոյն չարչարանաց, որոց է չարչարել յետ հաւատարկոյ յարութեան. որպէս և յաջորդ բանքն զոյն յայտ առնեն. ուր զչարչարանս հոգւոյն իւրոյ ծանոյց և մեծատունն պատկերեալ՝ ի տառոյ գժոխոց։

և յամենի ապարեալ զաստանայ անբասիր կրօնաւորու-
թեամբն՝ Ա[1]րիոպէս և ամբարիշտք մեծամեծք՝ որ լը-
ցեալ է չարի պարտեաց նոցա, չէ ինչ պիտոյ թէ՝ ի դա-
տաստան մտանիցեն. այլ իբրև յառնեն, իսկ և իսկ դառ-
նան՝ ի դժոխս. ըստ այնմ, զոր Աւետիքն ասաց, «Արձ-
ակին մեզաւորք անդրէն՝ ի դժոխս, և ամենայն հեթա-
նոսք որք մոռացան զԱստուած,,։ Այս Աստուած ասէ. «Ա-
մենայն հեթանոսք իբրև զկաթիլ մի՝ ի դուլէ են, և
իբրև զմէտ մի՝ ի կշռոց համարեցան, և կղզիք ամենայն
իբրև զառաւօտս մերժեցան, և ամենայն հեթանոսք
իբրև զոչինչ են և յոչինչ համարեցան,,. զի ամենայն
հեթանոսք որ ոչ գիտեն զԱստուած և ոչ ունէին յոյս
յարութեան կամ՝ ի պէտս նորին ուշ բարեգործութեա՛,
իբրև զոչինչ համարեալ են նմա, և ոչ մտանեն՝ ի դա-
տաստան նորա, այլ իբրև յառնեն, իսկ և իսկ դառ-
նան՝ ի դժոխս. և այլ աշխարհս որք կոչին մեզաւորք,
նոքա մտանեն՝ ի դատաստան՝ և Աւա դատաստանն զինչ
այլ, եթէ ոչ յարդար դատաւորէն ինդիր իրաւանց ընդ
մեզ և ընդ մախացող Թշնամին սատանայ. քանզի որ
մեզաւորքս եմք, և սակս նորին՝ ի խաւարային իշխա-
նութեանցն որ՝ ի ներքոյ երկնից ըմբռնեցաք յետ մա-
հու, և նա կարծէ թէ թողեալ ներողութեանն Աստ-
ուածոյ, իբր զի ընդ իւր պատժիցին, յորժամ գայ Ա[2]րիս-
տոս և յարուցեալ՝ ի մեռելոց մտանեմք առաջի նորա՝ ի
դատաստան, նա որոյ գիտութիւնն սքանչելապէս զօ-
րացաւ յիս, մինչ զի ոչ հանդարտեմ, անհաս իմաստու-
թեամբն քննեալ որոշէ մինչև ցորոշումն հնոյ և ոգւոյ,
զոր առ՝ ի յինէն գործք, և զորս՝ ի չարէն արկածք, և
առ մեզս ծածուկ խայթուածովքն սատարութիւն. և
յայնժամ ասպա տիրապէս դատապարտէ զիշխան աշ-
խարհիս այսորիկ, որ այժմ այնու յուսովն՝ դատապար-
տեցաւ, Ա[3]ս այս և Ա[4]յլք ոչ դատի զոք, այլ զամենայն
դատաստան ետ Աստուծոյ իւրում. որպէս զի որ չարչարե-

1 Ա. յոմանքն՝ անհաւատք և յայտ-
նի չարագործք գրեցին անդրէն
՝ի դժոխս, առանց պէտս ունելոյ
նորուք քննութեան՝ ի գատաստա-
նին։ Իսկ մնացեալքն՝ որոց անյայտ
էին չարիքն, յայնմի դատաստա-
նեա առապէն վերասին՝ ի նոյն՝ ի
դժոխս՝ ըստ ծանրութեան մեզոց
իւրեանց կրել զպատուհաս։

2 Ա. յոմանքն աճեկալութեամբ
յետին պարտաւորութեան։

յան և զփորձ հատ Թշնամւոյն, անմեղ փորձելոյս և վտանգելոյց լեզի օգնական։ Յորում աւուր գայ կատարի՛ ի վերայ մարդկան հրամայեաըն, "Տուք ողորմութի՛, և ահա ամենայն ինչ ձեր սուրբ է... քանզի ասէ, եկայք օրհնեալք Հօր իմոյ, որ զբաղցեալն կերակրեցէք, և զծարաւիս արբուցէք, զհիւանդս տեսէք, և զօտարս ժողովեցէք։ Արդ զինչ պարտ է առ այս խորհրդաբար իմանալ, կամ ուր ինդրել զդասս առաքելոյն, որք ոչ ստացան անձանց կերակուր, և ոչ զայլս կերակրեցին. կամ զվկայն՝ որք ծարաւեցան միայն, և ոչ այլոց արբուցին. կամ զՀիւանդաւոր Հարսն՝ որք մերկացան յաշխարհէ, և ոչ զայլս զգեցուցին։ Հանզի այս կոչումն՝ միայն ողորմածացն է, և ոչ նոցա. յայտ է Թէ հատատացեալ Նոքա՝ այնչափ՛ ի մարտին քաջացան, մինչ զի ոչ մնանել՛ ի դատաստան, որպէս ասաց տէրն. "Ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ՛ ի մահուանէ՛ ի կեանս..։ Ուր ժամանեալք յոդ՝ սպառազինութիւնն Աստուծոյ՛ ի զիմի Հարկին չարին յաւուրն չարութեան, և յաղթեցին Նմարիցն սատանայի, որպէս ետես Նաոմն. և անցեալ՛ ի վերոյ քան զնոսա՝ ուր սահմանեաց Աստուած վայելչին՛ ի սէր Նորա և՛ ի գիտութիւն մինչև՛ ի յարութիւն. և յայնժամ լինի յարութիւն նոցա միայն կենաց, և ոչ դատաստանաց. իսկ որոց չար արարեալ էցէ խառն ընդ բարիսն և յերկուցն միջի, է յարութի՛ նոցա դատաստանաց, և՛ ի կեանս Թէ զնոսա վիճակ յայնպիսեացն արդար դատաւորն կամ՛ ի տանջանս, ինքն միայն գիտէ։ Ասացյ և մեզ փոքր ինչ զկատն իւր, այսինքն ստանալ բարեկամն՛ ի մանկանայէ անիրաւութե՛ մատակիցս՛ ի դատաստանին զդասս կարօտելոց։ Այս գիտելով սուրբքն՝ սահմանեցին ոմանց տալ զողորմութիւնն կենօք և յետ մահու, և ոմանց մաղթել անյապաղ վասն ողորմածացն Աստուծոյ, առ՛ ի սրբել զպատարագ նոցա, և՛ ի հոգ անուշից ընդունել։ Թէ կենդանիք են, յայս է նոցա վասն ողորմութեանն՝ որ յաղքատս և յեկեղեցիս՛ ի բանն յայն. "Որ արբուցէ ձեզ մի բաժակ ջուր յուրա՝ Թէ գուք Քրիստոսի էք, ամէն ասեմ ձեզ, ոչ կորուսցէ զվարձս իւր..։ Սակ եԹէ կենդանիք ոչ զօրեցին, և յետ մահու արձակին զձեռս յողորմութիւնն կամ անձամբ կամ՛ ի ձեռն ընտանեաց, յայս

է նոցա օգնութեամբ ողորմութեանն, և մեր բատ պատ-
ուոյ Հաւատոցն աղօթիւք ՚ի կչիռս գործոց իւրոց բա-
րեաց ծանրութիւն խառնեաւ՝ յաղթել չարին և զեր-
ծուցանել զնա ընդ իշխանութիւն օդոյն. ապա թէ առ
այն տկարանայ գործքն և միոյ ՚ի ստորև ըմբռնեալ ՚ի
մեղայն, մինչև յօրն դատաստանի Հաւատամբ լինել
ձեռնտու ողորմութեանն և աղօթից մերոց յայնժամ
առաջի Աբրահամայ, որպէս ինքն գիտէ կշռել՝ որ ամե-
նողորմն է ՚։ Արդ այս է դիտաւորութիւն աղօթից և
պատարագաց՝ զոր տան ՚ի փրկութիւն մեռելոց, գոր-
ծոց իւրոց զոր ՚ի կեանսն ապար՝ օգնականութիւն, և
ոչ տալայաբարոյ կարծիք՝ թէ մեղայն տիրապէս քա-
ւութիւն[2]. զի մեղաց քաւութիւն զմեզ գիրք ՚ի կեանս
ապաշխարութեամբ ուսուցին գտանել. յետ մահու ա-
սէ մարգարէն, «Ոչ թէ պատմեսցէ որ երբեք ՚ի գե-
բեզմանի զողորմութիւնս քո ... ոչ թէ վասն զի ոչ գի-
տէ չարատէ, այլ զի ոչ ունի զաշխատութիւն մարմնոյն
օգնական. վասն այսորիկ ոչ Հաւատայ ապաշխարութիւ
գտանել զողորմութիւն, և չէ. զի թէ անմարմին յան-
ցաւորի թողութիւն կայր, գիւք ոչ էին անյոյս ՚ի փրկ-
կութենէ. և անմարմին յանցաւոր զայն կոչեմք՝ որ ըզ-
մեզն զինի տարաւ առանց ապաշխարութեան։ Յու-
սայ ՚ի մեր աղօթքս, և չէ վայրապար առաջի ողորմա-
ծին Աստուծոյ, բայց և ոչ կատարեալ փրկանք յետ մա-
հու լինի ՚ի ձեռն այլոցն՝ առ որ ինքն հեղգացաւ. զի
իւրաքանչիւր զոր ժառանգէ զոր ինչ իւրն մարմնոյն գոր-
ծեաց՝ եթէ բարի և եթէ չար։ Օ այս և երանելին
Ակինեսիոս ուսուցանէ ՚ի տեսութիւն խորհրդոյ թաղ-
մանն ննջեցելոց՝ զոր ՚ի մէջ առնուլ ոչ կարծեմ վայրա-
պար, որպէս զի մի կարծեսցուք ստութեան ուսուցիչք,
այլ Հայրենի աւանդութեանն արձանացուցիչք։ Ըս ա-
սէ այսպէս. «Ունին զննջեցեալն ՚ի մէջ եկեղեցւոյն, և
քահանայապետն աղօթս առնէ ՚ի վերայ նորա ... Ան-

1 Ա. յոմնքն յաւուրն դատաս-
տանի յայտնի լինի, թէ օգնեացին
ննջեցելոց նպաստաք մատուցեալք
յ՚եկեղեցւոյ։

2 Ա. յոմնքն բուն քաւութիւն
մեղաց լինի զքաջայելոցն յառաջ
քան զմահն. իսկ ննջեցելոց թէ-
թևաց լինի աղօթիւք և պատարա-
գօք քաւութիւն ներելի մեղաց,
այլ եթէ ՚ի մահուանէ մեզ մեռ-
ցի ոչ չիք նմա յոյս քաւութեան։

զի ինքն սուրբն՝ որպէս զայլ կարգս եկեղեցւոյ, և զայս սահմանեաց։ Ասպա քննել թէ և զինչ յայտ առնէ ա-զօթեքն. «Վճռեսցի, ասէ, որ բոտ մարդկային տկա-րութեանէ մեզուցեալ ընդ եղեալսն՝ թողութիւն լինել, և կարգել զնա ի լոյս, և ի դաս կենդանեացն ի գոն Աբրահամու, Իսահակայ, և Յակովբայ ի տեղւոջ ուստի ի բաց փախուցեալ են տրտմութիւնք, ցաւք և հեծութիւնք»։ Ասա առ ի մէնջ կանխաւ առացելոյն կցորդ լինի երանելիս, զանազանութիւն տալով հան-գըստարանաց արդարոցն և մեղաւորաց։ Օ ի թէ դասք արդարոցն առանց տրտմութեան են և հեծութեան, յայտ է թէ ջոկք մեղաւորացն ի սոյնս վարակին։ Ա-յլ են առանց տրտմութեան, եթէ ոչ նոքա որք իշխա-նութեան օդոյս անցին գերակայ։ Ասրձեալ և զինչ այլ տրտմութիւն, եթէ ոչ ի նմանէ իբրև զգործակից ըմբռնիցին՝ անբերելի հեծութիւն և անտանելի տըրտ-մութիւն։ Օ այն զղջումն կամաց մեր կարծեմ, վասն այսորիկ թէ ի պատարագն խնդրուածք՝ թէ ի վերայ մարմնոյն աղօթք, յայտնեալ զերծանելոյ է հնար ի իշա-նարարին իշխանութենէն և ի տրտմութեան վայրէն. և նախ իւր գործն պիտոյ է ընթացիցն զօրութիւն, և ապա աղօթք մեր նմին օգնական բոտ որում հաստատ զայս տարակոյս յառաջընթացեալ բանիս երանելիս այսպէս. «Ասացես, ասէ, զայս ուղղակի առացեալ ի մէնջ. բայց տարակուսիս, էր աղագաւ յաստուածա-տական բարերարութեան խնդրէ քահանայապետն զմեղուցելոյն թողութիւն, և ընդ աստուածատեսա-կացն համակարգ և երանելի վիճակաղրութիւն. զի թէ փոխարէն հատուցումն առցէ ամենայն ոք յաստուածայ-նոյն արդարութենէ, որոց ի մերձակայ կենցաղս գոր-ծեաց՝ քաղցունց կամ այլ այսպիսեաց. և կատարեալ յայտ կենցաղի զիւր գործոն ընդլեցեալն, յո՞ր յայլ ան-կումն փոխեալ եկեսցէ քահանայականացն աղօթիւք առաւել քան զիւր արժանաւորութիւնն»։ Օ այս հար-ցական դնէ երանելիս, և պատասխանէ լուծեալ զտա-րակոյս ինքն դարձեալ, այսպէս ասելով. «Վանզի առ-առանց կենացս փոխարէն առցէ վիճակաւորութիւն իւ-րաքանչիւր որ, քանզ գիտեմ, առացելոյն հետևելով. քանզի փակեաց տէր, բոտ նորին և բելոյն իւրաքան-

չիւր ոք զորս ՚ի ձեռս մարմնոյն զոր ինչ գործեաց եթէ բարի և եթէ չար ,, ։ Յաւելու ապա դարձեալ, զի և աղ- գարոյն աղօթք ոչ միայն թէ յետ մահու չեն օգուտ յանցաւորաց ՚, այլ և ոչ յայսմ կենցաղի . քանզի զինչ օգտեցաւ սաւուղ ՚ի Սամուէլի աղօթիցն, կամ զինչ զՍդրայեցւոց ժողովուրդն օգտեցոյց մարգարէականքն աղօթք ։ Այլ յաղագս ասացելոցն աղօթից՝ զորս քա- հանայապետն առնէ ՚ի վերայ ննջեցելոցն, զոր ՚ի մեզն է եկեալ աւանդութիւն յաստուածայնոցն առաջնոր- դաց, կարեւոր է ասել, և պարտ է գիտել թէ առաջ- նորդս իւր ասէ զՊօղոս և զՇաբեթէոս ։ Աստուածային քահանայապետն յայտնաբանիչ է, որպէս ասացեալքն ասէն, աստուածականացն արդարութեանց . քանզի հրեշտակ տեառն ամենակալի է, ուսեալ յաստուածա- ւանդ ասացելոցն, թէ որ արբունութեամբ կենցաղավարե- ցան երեւելի ՚ և աստուածային կեանքն ըստ արժանա- ւորութեան արդարացի լծովք փոխարինին, անտես առ- նելով բարեբարութեամբքն աստուածպետականի մար- դասիրութեան զեղեալն ՚ի նոսա բիծ ՚ի մարդկային տկարութենէ . վասն զի ոչ ոք մեքուբ յաղտոյ, որպէս ասացեալքն ասէն . և գիտէ քահանայապետն, թէ այս խոստացեալ է կեանք արդարոց ՚ի Հնմարիտ աստ- ուածէն ։ Այնպէս զայս սրբազան ՀԱստուածն լինել և պարգեւել որոց սրբութեամբն կենցաղավարեցան, միան- գամայն և յաստուածանմանութիւնն կոյս աստուածա- տեսակաբար տպաւորեալ՝ զայնոցն պարգեւս որպէս զանձին իւրոց խնդրել ընդհս . քանզի ոչ ուրեք երբեք խնդրէ քահանայապետն յաստուածպետականին քա- րեբարութիւն զայն որ ոչն էր Աստուծոյ հաճոյ և տուեալ լինէր ՚ի նմանէ աստուածային խոստումն, վասն որոյ անարբանելին ննջեցելոցն ոչ առնէ զայս աղօթս ։ Ա- սա թէ յանդգնի նա որ ՚ի քահանայագործութիւնն յանդգնաբար շարժեցաւ՝ և ոչ ՚ի կատարողապետէն Աստուծոյ, ոչ թէ յաղօթիցն միայն վերիպեսցէ՝ արդա- րութեանն Աստուծոյ ոչ լսելով նմա, այլ և ՚ի քահա- նայական կարգէ անկցի այսու օտար օրինացն ծառայ- եալ, և ՚ի չարաչար խնդիրսն եկեալ . զի ՚ Խնդրեք, և

1 Նմա. ՚ի մեռելոցն մահու չափ մեղս։ 2 Մի պրն. Երեմիա.

ոչ առնուք, ասէ, վասն զի չարաչար ինդրէք ... : Ասոյն յարէ և մեկնիչ դրոյն զկար բանն այսպէս. "Տես, զի միայն արժանաւորաց գԹուԹեանն Աստուծոյ են ազօթք արդարոյն օգուտ, Թէ կենդանեաց և Թէ մեռելոց, և ոչ մեղաւորաց և արժանեաց դատապարտուԹեան ... : Հաւասիկ ընդարձակ բանիւ երանելոյ հօրս ցուցաւ արԹուն մատոյ, պրպտան և որպէս օգուտ են ննջեցելոցն ի յիշատակելոյ աղօԹիցն պատարագաց, և աւելորդ է ի վերայ սորին երկրորդել. այլ միայն զմերս զարտուղի և անհամեմատ սորա ընԹացս այսուհետև փոքր ինչ քննել. զի չէ բաւական ցուցանել զՀնմարտուԹիւնն, այլ կարևոր է և զտուԹիւնն ի նմանէ բացատրել. որպէս զի իւրաքանչիւրն ի վերայ իւրոյ սրմատոյ արձանասցի :

Աւրդ պարտ է դիտել, Թէ զուղիղ աւանդուԹիւնս սրար մեզ բանասիրացն ոչ ի չինուԹիւն, այլ ի գայԹակղուԹիւն. և պակասեցուցեալ զիմաստն՝ետ պարզմտուԹեամբ ի նոյն վարիլ: Ասէ՝ զի յետ մահու ԹուղուԹեան յոյս առաք, զոր ամենևին ամենայն ուրեք փակեցին զիրք սուրբք. և հարկ է յայս յուսացելոց ըզկեանս ի հեղգուԹիւն մատնել: Աւրկրորդ՝ զի հաւատն պակասեաց յաշխարհէս, և մոռացան Թէ կենդանեաց փրկանք է պատարագս, և ի նոցանէ պահանջէ իւր զընծայաբերուԹիւնն, այլ ամենեքեան կենօք անհաւատ և աննուէր սորա, յետ մահու հաւատան ի փրկուԹիւն, և տան զնուէրսն[1]: Աւրրորդ զի այսր աղագաւ ի տուրհաւատուԹիւն անկաւ ընդհս, և ի ԹուականուԹիւնս քառամնեռորդաց. որով գտաւ ի մէջ մեր անբեերելի անկարգուԹիւն, զի մի ասացից՝ անօրէնուԹիւն. քանզի ծանուցեալ եկեղեցւոյ վերակացուք Թէ ըստ բազմուԹեան ԹուցոյՆ է և վարձն և ի պէտս արծաԹախնուԹեան, բազմացուցին ի մի տեղ տասն՝ աւելի կամ պակաս ծախսեալ մատրունս խորանօք և սեզանովք. ըստ նմին և քահանայք ԹուցոյՆ լցուցիչք, և զվարձան առաստացուցիչք: Ի պէտս այսորիկ եմուտ ամենացին և մոլաբացին յեկեղեցին. և կրձատեալն յիմաստուԹե-

1 ԱչառուԹիւնս առ այնոսիկ է, որք ոչ ինչ հոգան ի կենդանուԹեան օգնել ի սրբոյ խորհրդոյն, այլ միայն յետ մահուն խորհին օգուտ գտանել:

նէ և մալեամն ՚ի չնորհաց եղև քահանայ. բարձաւ այլ դասակարգութիւն պաշտամնէից եկեղեցւոյ, սարկաւագաց և ի[1]սաստարկաւագաց՝ իբր զանկարգք և զանկատարք՝ յաղագս ոչ զիւն գլխաւորելոյ։ Ի ծանր աղէտս մատնեցաք, և յողբոյ արժանաւոր մեղս, և ոչ դոյ որ իմանայ, և ոչ այն որ ինդրէ զչնարտութիւնն Աստուծոյ. աստուածամաշառք եղաք, ՚ի մարմնական շահամաշառութեան պէտս քահանայացաք, և քահանայացուցաք։ Ո՛վ աղետից, ո՛վ յիմարութեանս. յա՛ բայելի միանգամ ՚ի տարւոջն մի քահանայ մատնէր աբեամբ օտարաւ ՚ի սրբութիւնան, և զամենայն ժողովուրդն քաւէր. իսկ մեք Երիստոսի ամենայն աւուր վասն մեր պատարագելոյն յամենայն տեղիս՝ տկարացաք հաւատալ թէ քաւէ. այլ գնացին ՚ի զանազան տեղիս և ՚ի մի վայրն անպատուեցաք. և մատուցաք յանձուկ և անպատիւ ծակոտեալ խորանն առանց սպասուրութեան սարկաւագի, առանց հպատակութեան դրպրի, առանց անուշահոտութեան խնկի, առանց լուսման ջահի, որ ՚ի հարցն մեր ամենայն սահմանեցաւ ՚ի պէտս նորին և ՚ի կատարումն։ Օ այսքան բարեկարգութ[2]ս զանց արարաք, և միայն հանդրոյն ծառայք եղեալ՝ զպատարագելն և զխաղողդութիւն քահանայիցն ՚ի միտանց պատահեցաք առանձին առանձին լինել և զթիւնան ամենեցուցանել։ Աղբատչեն զմեզ երկինք և երկիր, թէ առ որ խորհուրդ գնացաք խոտորնակ, և զքան մեծ չնորհ յանարգութիւն արկաք. և ՚ի պէտս այսորիկ թուոյ՝ յայն ձեռս մատնեցաք զԵրիստոս, ուստի մեք բազում անգամ դարձիք։ Յաղագս այսորիկ մանկանց դեռաբուսից ախմաթաց արարաք զնս խոզալիկ. որք այնչափ պաշտեն, մինչ ոչ գիտեն. և յորժամ փորք լինչ Աստուածն[1], բացուստ ՚ի բաց ՚ի հաւատացեալ գործոյն հրաժարեն, կամ թէ յանդգնաբար առ նոյնն բերին։ Աղձաւ լքաւ՝ յերկիր կործանեցաւ բարեկարգութիւն հրահանգութեան եկեղեցւոյ. և արմատ և նիւթ կործանման այս ախտ. և երանի թէ գոնեա անուգան Աստուածն[2] կամ ՚ի բժշկութիւն միտէաք, և ոչ խնդրողացն զչնարտութիւնն ընդդէմ գինեաք, քաւսա

1 Մի օրին. ծ-ուծ-ին։ 2 Մի օրին. ծ-ուդ-ութ-ս։

գով ՚ի բարեպաշտին կալեալ և ոչ զոք. և նոյնին բանից պատմողացն յամբրահաւատք, մանաւանդ թէ ամենևին անհաւանք։ Զի ՚ի հրեշտակաց էր եղեալ այս օրէնն Թուականութեան, պարտ էր լուծանել, յորժամ այսքան բիւրապատիկ չարեաց եղև գտակ. և ոչ թէ յայնց ոմանց՝ զորոց և ոչ բնաւ զանուանն գիտեմք, Թող թէ զերք կամ բան վկայ։ Զերևս անպատշաճ կարծես զատացեալդ բան. բայց ես բազում ունիմ վկայս։ Ի լուծին զօրէնն ուղիղս կատարեալ հասակին մկրտութեան, յորժամ ոչ մարդիկ առ նոյն ուղղապէս բերէին։ Ուղիղ թէ և ուղիղ է՝, այս օրէնք Թուելոյ գնորէն Քրիստոսի, յորժամ զայդքան վերոյգրեալ Թիւրութիւնդ եգիտ մեզ, լուծցի քակտեսցի քակտիչն բարեկարգութեան, և ձրին բաշխեսցի ձրի, և առյե զհատուցումն իւր ձրի. պաշտեցեալն ՚ի սերոյ բնից պաշտեսցի և ՚ի համակարգութենէ եկեղեցւոյ ըստ իւրաքանչիւր աստիճանի, և մի ՚ի բաժանմանէ. փորձեսցուք միշտ զառողջութիւնս, գնա որոյ կատարումն բարի է՝ ընկալցուք, և որ այսքան չարեաց պիտո է՝ ՚ի բաց կացցուք իշխանութեամբս, զոր ետ մեզ տէր ՚ի շինել, և ոչ ՚ի քակել, ՚ի փառս անուան իւրոյ որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն։

ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ ԱՒՐ ՄԻՄԵԱՆՑ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆՑ ԵԿԵՂԵՑՒՈՑ ՓՐԻՍՏՈՆԷԻՑ ՀՈՌՈՄՈՑ ՓՈՒԱՆԿԱՑ ԵՒ ՀԱՅՈՑ ԵՒ ԱՒՐ ՄԻ ԴԻՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՅՈՒՅԱԿ ՆՈՅՆ ԱԻԱՐՏՄԱՆ

Այժ նոցա՝ որ զգիրս սուրբս հինս կտակարանացն քննեցին և լեհեղեցի առանդեցին, Հարցն մերոց սրբոց, փոյթ եղև ՚ի պէտս ստուգութեան գրեցելոցն զիւրաքանչիւր որ ՚ի Թարգմանչացն անուամբ և բանիւ ՚ի մէջ առնուլ. այսինքն եօթանասունքն զայս այսպէս Թարգմանեցին, իսկ Ակիւղաս զայն այնպէս, և Ափոսիման այլով օրինակաւ. իսկ ՚ի վերինջեանսն այսպէս է գրեալ։ Ես այսքան խուզողութեամբս զմի ձշմարտութիւնն գտին, ոչ հրաժարեալ յատենէ՝ որ ոչ էին ձըշ-

1 Խմա, Թէ և ուղիղ լինէր։

մարտութեանն աշակերտք, զնոյն անպայթակղ ուսա-
նել. ապա և մեզ ոչ է վայրապար՝ որ եդաք առաջի
զևս բարձրագոյն խորհրդոյ զօրութիւն ուսանել, զիւ-
րաքանչիւր ումեք յաղագս քրիստոնէից զառ՝ի սոյն ա-
ւանդութիւնս՝ի մէջ առնուլ. Թերևս կարասցուք գո-
նեա այնպէս զանատերիւրն՝ի մէջ մեր ուղղել զՀնչմար-
տութիւնն, և զվայելուչ բարեկարգութիւն գիտելով,
հաստատապէս մի եկեղեցի Աքրիստոսի ըստ իւրա-
քանչիւր ազգաց քրիստոնէից բազմութիւն, և մի ան-
դամք են, ըստ իւրաքանչիւր պատուոյ յարմարեալ առ
իրեարս, և պատկանեալ՝ի հասարակաց գլուխն Աքրիս-
տոս, որ եղև մեզ խաղաղութիւն Աստուածոյ Հօրէ ար-
դարութիւն և սրբութիւն և փրկութիւն։ Աբեմին ա-
պա անկար է ոտին ասել ցձեռս՝ Թէ չես ինձ պիտոյ. և
կամ գլխոյ ցոտս՝ Թէ չես ինձ պիտոյ։ Այսու ամենայնի
խնամարկութեան վերնակեալ, որ ասէ՝ Թէ չեմ՝ի
մարմնոյ աստի. և ոչ կարէ տիրապէս զչքնեղն հաս-
տատել, գլուխ իւր զԱքրիստոս համարելով. զի Թէ գլ-
ուխ նա է, ապա հարկաւորապէս նուաճի լինել յան-
դամոց քրիստոնէից՝ի նեղբոյ միոյ գլխոյն եղեալ մի
մարմնոյ մնան։ Այսպէս Թէ որ առ այս խորհրդոյ գիտու-
թիւն կամակորի, այլ դնելով զինքն՝ի քրիստոնէից ե-
կեղեցւոյ, կամ զնոսա առ՝ի յիւրմէ՝ սակս բայից և բա-
ռից քննութեան, կամ վասն զանազան՝ աւանդութեց,
Աստուած աշխարհիս այսորիկ կուրացոյց զսիրտս այն-
պիսեացն, զի մի ծագեսցէ առ նոսա լուսաւորութիւն
գիտութեանն Աքրիստոսի։ Այլ ինձ և որոց ողջունեն
զՀնչմարտութեանն աշակերտութիւն, մի լեցի՝ի նեղբոյ
այսպիսի կարծեաց վարանել, որ բաժանէ՝ի Աքրիս-
տոսէ՝ առ որ տենչալոմն խառնիլ. կամ զազգ քրիստոնէից՝
ժպրհել և որպէս զմի մարդ յաչսդել, որ ուսոյ և՝ի
կատարեալն լինել՝ անձինս միայն տալ պարծանս, և ոչ
առ ընկերսն։ Այլ այսպէս կարծեաց անջրպետեմք՝ի
միմեանց ըստ իրաց փոքրկանց, այլ գոլով հաւատարն նո-
ցին քրիստոնէից, և յընտանութենէ մարմնոյ Հոգ, մի
եմ ընդ եղբարսն, և միոյ արգանդի ծնունդ, ուստի նո-
քա ստեղծան վերստին, և պատուեմ առաւելապէս

1 Մի օրին. Ձանազանեալ։

քան զկան մարմնոյ՝ զՊատուճոյ ծնանելն. և որ այն-պէս իմ եղբարք և մարմնակիցք՝ի Համասեռից և յայլազգեացս, և մի Քրիստոս և մի քրիստոնեայք։ Ոչ թէ որ յայտնեալ հրաժարէ, իբրև զկաթնկեր դատեմ և զոգիս բանին աղտաւորութեան. և ես ոչ խորհիմ, այլ զինի ընթանալ այնպիսւոյն. զի գրեալ է, «Ոչ մի յաղթիր՝ի չարէն, այլ յաղթեա բարեաւն չարին»։ Եւ զլուսաւոր ջուս խորհուրդ ամենեցուն ընձեռեմ՝ ըստ իւրաքանչիւր աղգաց, որոց կամին ըստ ձեմարտութեանն՝ի Քրիստոս մնալ. ոչ թէ վայրապար ուսումն կամ՝ի պարզմունութենէ յառաջ եկեալ, այլ՝ի խորագիտութենէ, զի այսպէս ասացից, և՝ի գիտութենէ հաստատել, և զամենայն յաչառանս նորագիւտս՝ի կեա ընթացուցել։ Այլ քանզի նախ՝ի հաւատս Քրիստոսի՝ և առաջին քան զամենայն աղգս Հելլենացւոցն է աղգ, որք կեցոյ առին զանուն Հռոմայեցւոց, և վասն այսորիկ և նախագահս սոքա դասեցան՝ի մէջ ամենայն քրիստոնէից. ուսանելով մեր զայս կեկեղեցւոյ գրոց բազմութենէ, որ՝ի զանազան ազգս է. զի նոցա բարբառովն ուրեք ուրեք եղեալ են բանք և անուանք, և ոչ կեղաշրջեալ, առ՝ի պատիւ ազգին. որպէս զՔրիստոս անուն, և զամէնն, զտէր ողորմեայն յայլ ազգս՝, և զպռօսխուսէն՝ի մերս. և նոքա կեկեղեցւոյն աւանդութեամբ զմեծին Հռոմայ պատուել զաթոռ, որպէս ծանեաք, ՝ի նոցին բարբառ զընթերցուածսն առնել՝ի Հանդիսական աւուրս՝ի մեծ եկեղեցին[2]. առ այս զառաքելականն պատուելով կամ, որ Հրամայէ՝ի պատիւ զմիմեանսիք ելանել. և դարձեալ ասէ, մի եղիցի ինչ ըստ գրգռութեան կամ ըստ մնապարծութեան, այլ զմիմեանս լաւ Համարել առաւել քան զանձինս։

Նոցին էր մերս եկեղեցի աւրնթեր և սահմանակից. առ որս և սուրբն Կղիմոս և իւրքն վարժեցան և ձեռնադրեցան, և ըստ նոցա կրօնից ընթացից և գմերս ուղղեցին բարեկարգութիւն։ Այսք կեա գիւտի գրոյն Թարգմանիչքն գՀմարիա գիրս առաւաձաշունչս առ՝ի նոցանէ բերին՝ի Հայաստանեայս։ Այլ ինչ և Պատրոց

1 Զի և Յաթինք և Ասորիքն վարժեցան և ձեռնադրեցան, և ըստ նոցա կրօնից ընթացան և զմերս ուղղեցին բարեկարգութիւն։

2 Քանզի և Յոյնք զհանդանակն կեղեցւոյ ասեն՝ ոչ միայն յուսնարէն, այլ և լատիներէն ասէին։

ընկալան տեղեկութիւն կարգաց։ Այլ որ Հռոմայեցւոցն էր ազգ և եկեղեցի, կոչեցեալն այժմ փոանդք, յաւուրն առաջինն բացակայ եղով ի մէնջ վիճակաւ և աշխարհաւ, կարծեմ չունել ինչ նոցին կարգացն հմտութիւն և տեղեկութիւն ի նախնեացն։ Այլ թէ այժմ յորժամ զօրացաւ բազուկ նոցա, և տիրեցին այսմ աշխարհի, ականատես մեր ունելով զաստուածայնութիւն իւրեանց և զառաքեալսն հրահանգից եկեղեցւոյ զերազանց յօրունց, ընդ որս և մերոցս կարգաց գտանեմ իւիք իւիք համեմատութիւն, թէ պէտ և ոչ զօրանդակին. նոյն և ընդ Յոյնս իրս իրս խառնեալ, և յոմանս որոշեալ։ Այլ չէ ինչ զարմանք զանազանութիւնն առ ի սոյն խորհուրդ. քանզի կամ մերոց հարցն հաճոյ Թուեցաւ առ ի մերս եկեղեցի առնել առաւելութիւն և նուազութիւն, և կամ նոցա որք յետոյ նստան յաջորդք աթոռոց՝ առաւելութիւն սահմանաց պատշաճ համարեցան յեկեղեցի մուծանել։ Այլ զինչ, պարտ է ընդդէմ գառնալ կամ խոտել. և ոչ երբէք. զի թէ զայս խորհիմք, որ պահի առաքելոց հրամանն, "Ոգիք մարգարէից՝ մարգարէից հնազանդին,,։ Այ այսորիկ թէ երկրորդին որ նստի՝ յայտնեսցի, առաջինն լռեսցէ։ Այսպիսոքօք են և տնօրէնք եկեղեցւոյ, զհաւատոյ շաւիղն ամբողջ պահելով զոր ինչ կարգաց առաւելութիւն առնեն կամ պակասութիւն, ի փառս անուանն Քրիստոսի է, և ի պէտս բարեձեւութեան կարգաց քրիստոնէից։ Այս զի՝ թէ որպէս ընկալաք յառաքելոցն, և չէր ինչ ձեռնհաս լեալ ի պայծառանալ բարեպաշտութեանն, առաքելական ասանդիցն առաւելութիւն վարկանելով, որ էին երգոցն քաղցրաձայնութիւն՝ որ այժմ եկեղեցի. որ տաճարացն պայծառութիւն. որ զանազանապէս ի նոսին ոճնախրմբութիւնք։ Այլ զի այս ամենայն առ նորօք ոչ էր, սակայն լցին հետևողքն և ձեռնտուցին. և դեռ ևս ձեռ և և պակասէ ի նոցանէ՝ որք վարձկանեցան յայգեգործութիւն եկեղեցւոյ. զի զոր օրինակ նա՝ որ այգեգործ միանգն է՝ բայ ժամանակին պիտոյից թողու զուռն ի յորթքն, և ոչ աւելի կամ պակաս. և տեսանէ, զի այն ուռն՝ որ յանցեալ աւն էտ զպատուն, յայսմ ամի չէ ինչ պիտանացու, այլ մանաւանդ և խափանումն այլոցն, յա-

պաւէ զնա, և զեռաբուսիցն տեղի պատրաստէ, զորմէն
խնամելով այնու. և ոչ վասն այնորիկ ինչ թէչնամանի,
այլ ի նորայն առնէն ապաստան յիմաստութիւն տե-
սողքն՝ յորժամ գիտեն զչմտութիւն արհեստին։ Այս-
պէս ի մէջ աշխարհի ծառ և որթն տնկեցաւ հաւա-
տոյն բան, և սաղարթք ի նմանէ յառաջ եկին պէս-
պէս բարեկարգութիւնք. իսկ գործողք նորա և միակք՝
առաջնորդք եկեղեցւոյ։ Արդէս նա ի պէտս զօրութե
և առոյգութեան որթոյն՝ զմանս ի հնացեալ բարու-
նակացն հատանէ, որք նախ էին պիտանացուք և այժմ
անպիտանք. այսպէս և սոքա ի պէտս զօրութեան հա-
ւատոյն՝ զմանս ի հին կարգացն յորժամ պատշաճ հա-
մարին բառնան, և այլոց ուժեղագունի քան զնա պատ-
րաստեն տեղի բուսանել։ Այլ էէ ինչ պարտ սակս այ-
սորիկ ի սոսա բամբասողական նետս ձգել, գիտելով
զչմտութիւն և զխոհականութիւն անձինն, եթէ յերբ
կիւղէ զայս յառաջ բերէ և յիմաստութենէ ծնանի,
զի մի ուստն զորթն խանգարեսցէ հնանալովն. այսինքն
կարգն զզօրութիւն հաւատոյն նուաղեցուսցէ. այլ պէս-
պէս զեռաբուսիւք բարունակօք կարգացն՝ որթոյ հա-
ւատոյն արմատ ևս ի խոր առաքեսցէ, և զպտուղ բա-
րեգործութեանն յերկինից արքայութէ հնձանն զեղ-
ցէ. ըստ այսմ զեռ ևս տեսանեմք զխոկումն հարց քրիս-
տոնէից եկեղեցւոյ։ Արդէս և Հռոմոյ առաջնորդք։
Վանգղի տեսին վասն փարթամութեան ազգին՝ տձև
պձնեալ զժառանգաւորս եկեղեցական զգեստու՝ մե-
տաքսեայ և ոսկեթել պատմուճանօք, բարձին զսովո-
րութիւն առաջնոցն՝ որք այսպէս զգենուին, և սահ-
մանեցին առնեցուն զմի նիւթ զգենուլ ի սպասաւո-
րութիւն սուրբ, այսինքն անպատմոյ ի տեւոյ ոչխա-
րայ։ Այ զովելի է յետոյ մտեալ օրէնքս ի փառս Աս-
տուծոյ։ Այնպէս և փոանգք՝ զի տեսին զժառանգա-
ւորս ի կանայս գինուելութեամբ փաղփեալ, և զնուէրս
եկեղեցւոյ ի պէտս որդւոցն ծախեալ, բարձին զունելն
նոցա կանայս. զի մի առն եկեղեցիս որ Քրիստոսի է
ժառանգութէ ընդ մարմնաւոր ընտանութեամբ գրա-
ւեսցի։ Այ պահէն արդ ևս զՀայրենի աւանդութիւնն՝
թէ և նեղին, որպէս լսեմք, ի մարմնոյս բնական պի-
տոյից. բայց ի կամ վերադունի հօրն թողուն զօրէնս

հանապատուին՝ Լսելին զարձեալ՝ ի յետին ժամանակս՝ ի հայրապետէ ումեմնէ ( )զոտտոս անուն՝ առին հրաման սափրելոյ զմեզս ժառանգաւորաց, խորհրդոյ աղագաւ առ հրեշտակս նմանութեան[1]. և զարձեալ զի հանապատուքն հաւատար երևեսցին, և մի ոք յալիս մեզուացն փառս որսասցէ: Սակ բարեբարոյ ազգն ընդդէմ քնութեան և սովորութեան՝ զհրամանս հօրն որպէս զորդիս մտերիմս սիրով ընկալան: Սահին և յորժամ յայս աշխարհս անցին՝ այլ օրէնս լինել եղբայրութէ կարգաք կրօնաւորաց՝ ի մէջ աշխարհի և զինուորական զգեստուք առ՝ ի պէտս հաւատարիմ մարտի ընդ թերահայ թշնամեացն[2]. և գովելի է սկիզբն, եթէ՝ ի կատարումն սատանայ զնուրն որոմն ընդ բարի սերմանն չխառնէ. որպէս և ունին մարտասէրքն[3] ընդդէմ իւրաքանչիւրոցս ասել. զիտեմք և մեք. բայց յետոյ, և ոչ՝ ի սկզբանն սահման կարգին այնպէս: Ա՛ւ թէ զինչ խառնեցաւ ընդ սոսին, ինձ՝ գատելն և զիմն ազգ ժպրըհումն է՝ որ օգտի՝ ի գատելոյն և յանդիմանելոյն. յայլ ազգս մի լեցի ձեռնարկել, որոց ոչ կարգեցայ քննիչ, և ոչ օգտեցուցանեմ՝ ի քննելն: Սակ որ քննեն՝ միայն զբաղց թշնամութեանն յագեցուցանեն, և նոցա բամբասանօքն զիւրեանց սխալանսն թեթևացուցանեն, իսկ օգտել և ոչ լինչ[4]: Ա՛յլ բանս յիւր կարգն դիմել յօժարի:

Սարձեալ՝ և Հռոմք, զի դժուարին և ոչ որպէս այժմ, քաղցրալուր ունէին զեղանակս յառաջնոցն. Սերմանս պատուական նոցա հայրապետ եղեալ՝ ի ժամանակս Հերակլի և Կոստանդեայ Ա՛ղբայից[5], հանդերձ Յովհաննու և Կոզմայիւ կրօնաւորօք՝ ի Սամասկոսէ յեզաշրջեցին զնոսն՝ ի դիւրալուր և յախորժակս լսողաց, և բազմապատկապէս աձեցուցին զերգս տօնականս: Ա՛յսպէս հաղքն իւրաքանչիւրոցն՝ ի ժամանակս

1 Ա՛յսպէս լուեալ է Լամբրոնացին յոմանց՝ ի լաւինացւոց ժամանակի իւրոյ, ոչ թէ՝ ի սրբոյն Օգոստինոսէ մուծեալ իցէ բանս:

2 Ա՛յն է կարգն ասպետաց սրբոյն Յովհաննու Երուսաղէմացւոց, որոց բարի սկիզբն յանբարին յանգեցաւ վախճան:

3 Մի օրին. Մ-ր-ր-ն-ե:

4 Տես, զի և Լամբրոնացին որ զազգն իւր խրատէ, գիտէ թէ նաև յայլ ազգս կայ ոչ սակաւ ինչ խրատելոյ արժանի. բայց զայդ հիւրաքանչիւր առաջնորդս ազգացն առնէ ապատան:

5 Իմա, միով գարու զինի:

իբրեանց զառաքելականն պահեցին օրէնս. «Լմե երկ-
րորդումն յայտնեսցի, ասէ, առաջինն լռեսցէ. և զա-
մենայն ինչ փորձեցէք և զբարին ընկալարուք, և յիրաց
չարաց՝ ի բաց կացէք ...» Եւ որպէսզի՝ այսինքն համայեղ
ազգն յառաջնորդացն ընթացակցութենէ ոչ խոտորե-
ցան, և ոչ հարցն հրամանի ընդդէմ գառնալ ժպրհե-
ցան, տեսեալ առ նմա զառաւած զանպատուութիւն նոցին
վերացեալ: Ահա մեր՝ որպէս ասացաւ, կանխագոյն ու-
բեմն ի Յունաց Թագաւորութեան գրեանք և կարգ, և
վաղվաղեալ զինի առատանայական հակառակութեանն,
ի մէջ արկաւ որոմն, որ վասն հաւատոյն բանի. դղըր-
դեալ տղայքն դեռաբոյսք ի գայլոց ծանուցից՝ տեղի
ետուն առելութեան ընդ հարսն առաջինս: Եւ ոչ գի-
տեմք, զիարդ փոխիմանամք ժամանակաց նոցին ասորա-
ցեալ՝ սին և ազազուն արար զառաքեթ սիրոյ և բարե-
կարգութենն, հրաժարական ողջոյն առիպեալ ետ տալ
ամենայն եկեղեցեաց քրիստոնէից, և յաշտարակ ամ-
բարտաւանութեանն հանեալ՝ զինքն միայն Աչմարիտ
ետ աղաղակել, մեռացուցեալ՝ զի այսպէս ասացից, ըզ-
գործոցն կրեալ ի Պօղոսէ հրամանս, և ի պարծանս
անձին տալ զնոսին՝ և մի առ ընկերաւն. այլ անդր ի
բարձրաւանդակին կացեալ աչխարհաւ և կամաք, ի ծաղ-
կեալն բնաւորական խմաստիւ նոցա եկեղեցեացն՝ խոնար-
հեցան և ոչ բնաւ, Թող Թէ Ձնշակել ոչ միայն և ըզ-
համեղութիւնն խմանալ, այլ և ոչ ի բացուստ կալ և
հոտոտել. զիտելով սկզբնաւորին՝ որ յայն աշտարակն
եհան զնոսա, զի Թէ զհոտն առնուին և ի համն վա-
փաքեին, և նորին փափաքմամբ և յաշտարակէն խո-
նարհեալ ողջոյն խաղաղութեան տային, և անգործ
իւրն լինէր մեքենայքն այնուհետև: Ա՛ան այսր երկեղի
ած բանդեակս զնոսա յառնուր մեխանացն, և կնիք եդ ի
վերայ նորա անլուծանելի զգործակցայ իւր կանոնա-
զրութիւն. յաղագս որոյ և Թերի մնայ ի բազում իրս
որ ըստ մերս եկեղեցւոյ վայելչութիւն սպառեալ և
պաքեալ, յաղագս անջրպետ ձգելոյ զձիշտամտութիւն
ի մէջ մեր և խմաստութեան աղբերն: Եւ Թուել զըս-
պառեցուցիչ պատճառսն հեղգանամ, կամ Թէ զձիմարիտն
ասել երկնչիմ. զի մի կարծելով ազդել՝ ի յանդգնու-
Թիւն զամանս ի տկարամիտ եղբարց իմոց ձգեցից:

Ազգս միայն առ մեզ դժուարալուծն ամենևին. և անփորձ գոլով անուշահամ պտղոցն՝ զդառնահաման ախորժելով ձաշակեմք։ Ակեղեցիք մաքսատունք այլազգեաց եղեն անմտութիւնք. ուստի զնոսա անխնամատութիւնն՝ պարապեաց. և՝ ի նեղքոյ միոյ ձեռին մի քրիստոնեայք գոլով մեք ծառայք և նոքին ազատք։ Հայիսկոպոսաց տնօրէնն լինել քաղաքաց և գաւառաց մոռացաւ, թէ այդ այլազգեաց է սովորութիւն, և ոչ մեր. աքեմ և կարգ կրօնաւորութեան աղաւաղեցաւ, և որպէս զծանր արհամարհեցաւ. և քահանայական պատիւն եղև կոխան անպատուիցն. աստիճանաց եկեղեցւոյ զանազանութիւն առաքելական աւանդութեամբ որպէս զաւետարդ ինչ՝ ի յետ ընթացողեցաւ. զգեստուց բարեձևութիւն անգոնեցաւ. պատարագն յանպատշաճ և յանպատիւ տեղիս անպատուեցաւ. թողի ասել և՝ ի տուբ ևառս ծախելն։ Ով անմատոյց աշտարակի յիմարութեանս ամրութեան՝ ուր նստեալ առանձինն՝ ի համակարգ եղբարցդ որիշ՝ զայսպիսի մանկունս չարեաց ստեղծեալ ծնաք, ի զուր դառելով և զնոսա մեղաւ՝ ի շաղաց Հաւատոյ կարծելով։ Այլ դիցուք թէ և յայս նոքաձևեցան, զկարգս եկեղեցւոյ և զառ՝ ի նոյն իմաստութիւնն թերևս ընդ այսմ մոռացան հաստատեալքն ածոռով և աչխարհաւ։ Ա՛ե թէ ոչ, ապա ընդէր հրաժարեմք ընդունել զոր Հարքն մեր պատուէրին, և մեզ աւանդեցին։ Այլ չունիմք ասել առ ատելութիւն, և ոչ զառ՝ ի նմանել չարեացն սահման կարող եմք գիտել՝ բազմութիւ լինելովս. զոր օրինակ և ոչ զսիրոյն բարիոք բողբոջս՝ ի հակառակատիպ ծաղկացն. զի սա առոգիւ իւր ունի զ[1]ստուած և զկամն նորա, և նա զհակառակն [1]ՀՌ զստուածոյ և զգաղտնի խայթոցս նորա։ [1]ՀՌ զանն ոգւոց՝ ի ծմակեցուցիչ այս ախտ բարձրացուցեալ, և զտապ ջերմութեան սիրոյ և խաղաղութեան յարդարութեան արեգակնէ՝ ի մեզ ծագեալ, բարիոք վարկանիմ առաջիկայ խորհրդոյս աւանդութեան, զոր հանդերձեալ եմք քննել, փոքր ինչ բաղդատութիւն առնել ընդ այլոց ազգաց քրիստոնէից ըստ այսմ մասին ահմանապրութեան, և սակաւուք՝ թէ իրաւունս վար-

1 Ա՛ի օրին. Ա՛ՀՀ-ՐԻՒՆ։

կանի բանս՝ լուսն առնուլ մերում Թերութեանս։ Ա.ըդ պարտ է գիտել Թէ մերս խորհրդածութի՛ պատարագի նախ Թարգմանեցաւ քան զՏատատեսն յԵկեղեցի սրբոյն Յովհաննու ոսկեբերանի առանդութեցն որ եղեալ Հայրապետ Կոստանդնուպօլսի՝ բազում կարգս աձեցոյց յեկեղեցի Հանդերձ աշխարհալոյս՝ վարդապետութեամբն. ընդ որս և կատարողութեան պատարագին առաւելութի՛ն արար քան զսովորութի՛ն առաջնոցն, զորս սահման մեք ոչ ունիմք և ոչ փոանգք, նաև ոչ Հռոմք ըստ այլ հարցն խորհրդոյ։ Ա.յլ Թէ Կատարելն է պատարագ, և Թէ Ա.Թանասին, նախ զԿիրակէ սրբոյն առեն մինչև՛ ի վերաբերումն ընծայիցն, և ապա զնոցան։ Կանգն որպէս և ասացաք՝ յետոյ նա Հաստատեաց բազմապատիկ քարոզութի՛նս սարկաւագին՛ի խորհրդականն ժամու և ըստ նոցին աղօթս։ Ա.յ զայս ոչ վայրապար, այլ ըստ այնմ՛ խորհրդոյ կարծեմ, քանզի առ առաջնոյնքն եռանդն գոլով բարեպաշտութեանն՝ սրտի մտօք ամենայն ժողովուրդն աղօթէր՛ի պատարագն. յետոյ սկսան հեղգանալ, մինչ քահանայն՛ի խորհրդեանն է՛՛ի շատխօսութի՛ն կամ՛ի դանդաղութի՛ն միտեալ։ Կրանելի հարս[1] տեսեալ զայս՝ սահմանեաց զհրամանն քարոզութեան սարկաւագին, որպէս զի հարկաւորապէս և անդանդաղ զամենեցուն միտս արթուն պահեսցէ, և՛ի խնդրուածս ողորմութե՛, և զկամն նոցա կցորդ քահանային կամաց, որ վասն նոցա աղօթէ. զի՛ի հրամայելն խիտ առ խիտ սարկաւագին հարկաւորապէս՝ թէ զտէր աղաչեսցուք, ասէ և որ դանդաղի՛ի յաղաչելոյն. բայց թէ ոչ զայս բռնադատութի՛ն լսէին, բազումք հեղգային։ Ա՛վ երանելի և քաղցր աստուածազգեացն հոգւոյ. այսպիսի վայելչեր մեզ քահանայապետ չարչարակից զգածեալ տկարութեամբ ժողովրդեանս. որք յորժամ կամք հեղգացաք, հարկիս բռնադատեալ ձգեաց յաղաչելն։ Ա.յս առանդութեամբս վարի Հռոմոյ եկեղեցին. քանզի առեն նախ քան զխորհուրդ պատարագին երիս սաղմոս և ըստ իւրաքանչիւրոյն քարոզութի՛ն և աղօթք առ՛ի սրբոյ հօրէս սահմանեալ։ Ա.պա յետ այնորիկ ընթերց-

1 Մի գրի. Ամբրոսիոս։ 2 Մի գրի. Երանելի հայր։

մանք մի ըստ միոջէ. և ոչ յետ աւետարանին ասէն զՀաւատոյն դաշն, այլ յառաջագոյացեալ զնա միևնոյն քահանայն՝ ի վերայ երախայիցն աղօթէ, և սարկաւագն զնոսին արտաքս առաքէ. և բերեալ սարկաւագն ըզնուէրսն՝ ի սեղանին՝ զսուրբ ողջոյնն աւարտեն, և միաբան զՀաւատոն երգեն։ Այս ոչ թէ վայրապար, այլ երանելին Կիւրեղիոս ըստ այսմ տայ մեզ տարաժոյց՝ թէ յետ արտաքս գնալոց երախայիցն՝ միայն հաւատացեալքն զՀաւատոյն դաշն երգեսցեն. որոյ հետեւեալ ողջունեալ միանձնանան, և միաբանութեամբ՝ ի մի բերան փառաւորեն զԱստուած, որպէս հրամայէ առաքեալ։ Այսոյիսի փառազանց կարձառօտ է քան զնոցայն, և կարի համեմատ մերում. քանզի նոքա յետ աւետարանին երգեն զխոստովանութիւն հաւատոյն, ըստ որում և մերս է սովորութիւն։ Այլ զի և՝ ի փառազանց մի երեց՝ ի ժամուն պատարագէ երկու պաշտօնէիւք՝ սարկաւագաւ և կիսատարկաւագաւ. և կացեալ՝ ի խորհրդեանն՝ տարածեալ ունի զձեռանն։ Ակ Հռոմայ բազմութիւ քահանայից՝ ի միասին. եպիսկոպոսապետն եպիսկոպոսաց՝ որ նախապատիւն է կացեալ առաջի սեղանոյն, և այլքն առընթեր նմին աղօթեն զսուրբ խորհուրդն, հաւանեալ և ըստ այսմ մասին սրբոյն Կիւրեղիոսի. քանզի նա այսպէս հրամայէ՝ ասելով. «Կացեալ առաջի աստուածայնոյն սեղանոյ, և շուրջ զնովաւ բազմութիւն քահանայիցն, և՝ ի սարկաւագացն որք ձախակողմնքն են»։ Այսոքիկ զայս վայելուչ կարծեմ և ընդ անաւերիւր պողոտայն շաւիղ. զի խորհուրդ հաղորդութեան անուանի, և պարտին հաղորդքն միաբան աղօթել, և հաւատարապէս առ միմեանս՝ ի նոյն վայելել։ Ակ խորհուրդ պատարագին համահաւասար է ամենայն աղգացս, դիտաւորութիւն բանիւ աղօթիցն և զնոյն՝ ի ծածուկ ասել, պրովլեհական երգն, աղօթքն տէրունական չունելով և ոչ մի ինչ զանազանութիւն։ Այլ միայն զի փառազանգ այժմ զտէրունական աղօթիսն պատարագիչ քահանայն երգէ միայն՝ ի լուր ամենայն ժողովրդեան, և ոչ որպէս զայլ աղգս ինքեանք զնոյն աղօթել։ Այսքան և այսպիսի ընդին զանազանութիւնս քրիստոնէիցս ոչ է առ՝ ի Կրիստոս Հաւատոյն համարեալ թերութի. նա և ոչ նուիրք

խորհրդածութեանն այլ և այլք, որք ունին ՚ի փառս Արիստոսի պատրաստակեալ ընդ հնգեամբ այլ և այլ խորհուրդս։ Այսինքն զի փառնդք և հայաստանեայքս զհաց նուիրացն բաղարջ առնեմք վասն պարկեշտ և զեղեցիկ այնպես լինելոյ առ ՚ի պաշտօնէիցն գործեալ, և ունիմք խորհուրդն օժանդակ՝ զի տէր մեր բաղարջ ՚ի բաղարջակերացն օր առեալ օրհնեաց սրբեաց և մարմին իւր անուանեաց։ Նոյնպէս խմորոն առնեն հոռոմք, և զնոյն ՚ի ժողովրդենէն վասն ընծայաբերը լինելոյ նոցա զհաց պատարագին փրկութեան իւրեանց աղագաւ. որպէս ՚ի հնումն որ զանբանիցն ջոկն տային ՚ի ձեռս քահանայիցն և նոքօք սրբէին. զի և զայս անմահ զենմանս փրկութեան նիւթ փրկեալքն սիրով մատուսցեն։ Այս ունին ապացոյց զառաքեալն տուրբս, որք ոչ փոյթ առնէին որոշել ՚ի միմեանց զտեսակ հացիցն որք հոռոմն սրբեին։ Վասնզի և զանազան մտածութիւնն ՚ի մի խորհուրդ փառացն Աստուծոյ. և ոչ ինչ վասն այսորիկ ունի թերութիւն պատարագն ՚ի կատարմանէ հոռոմին ըստ սահմանացն կարծեաց։

Վարձեալ զի և ջուր արկանեն ՚ի նոյն սոքա երկու ազգքս խառն ընդ գինին՝ յայտարարութիւն առ ՚ի կողից փրկչին կրկնավտակ աղբերացն. իսկ մեք ոչ արկանեմք՝ քննեալ թէ նա գինւով զխորհուրդն առանձեաց, և ՚ի բերոյ որթոյ այնուհետև ոչ ձաշակել առաց. և չէ ինչ վասն այսորիկ հակառակութիւն, զի գինին ՚ի ջրոյ ունի զնիւթ գոյացութեանն որպէս և քնարխօսքն քննեցին։ Այս և ջուրն որ յետոյ արկաւ ՚ի գինին, ոչ եթէ զնուրն ամբողջ պահեաց որակութիւն՝ այլ ՚ի նորայն փոխեցաւ բնութիւն։ Ելոյզ և մերս սոցա աղագաւ առ իրեարս գայթակղութիւն, և մեծի օրինաց՝ սիրոյն ընդդիմադրութիւն։ Վարձեալ զի և մեք զհացն ջերմն խնդրեմք զպատարագին, և հոռոմք զգինին, մտածելով մեր՝ թէ ՚ի հնումն ջերմն հաց գնէին ՚ի սեղանն առաջադրութեան. և նոցա՝ թէ կենդանութեան տեսակ է ջերմն ջրոյս խառնուած։ Յետոյն այս օրինադրութիւնք եկամուտք, և ոչ ՚ի հարցն առ մեզ ժամանեալ. այլ մերս ծնեալ յառաւել հպարտութէ

1 Մի օրէն. Օրինաւոյ։

և նոցայն՝ ի դանդաղ հեշտասիրութենէ՝ ոչ առաւելութիւն խորհրդոյս և ոչ նուաղութիւն։ Այլ վասն զի հինն ջերմն առնէր իբր՝ ի տիպ հոգւոյն, չունելով զնո դին մատակարար պաշտամանն։ Այլ մեր զկեանսն ունելով՝ պատկերը կենդանւոյ ջերմութեամբ առնել չէ հարկաւոր։ Այլ թերութիւն սորին վասն բազում, զի քահանայիցն եղև հարկ առնել զնոյն, և թերութիւն լինի հարկաւոր աղօթիցն վրդովումն մտաց և աչխատութիւն մարմնոյ, յորմէ խոյս տալն իրաւացի է և զբաբեձևութիւնն պատուել, զիրանդք ունելով ապացոյց. որք առնեն բաղարջ և ոչ ամենայն աւուր. և պատկառ կալ և ջան ունել միայն մտաց մաքրութեան աղօթողացն, և զոր ինչ այնմ՝ նեղհակ՝ առանց խորութեան յապաւել. զի յայս կոչեցաք հոգւով պաշտել զԱստուած Աստուծոյ, և ոչ մարմնական ինչ հպատակութեամբ. այլ մարմնոյքն հոգւոյն են օժանդակք, և ոչ հարկաւորին նորին կամացն լինել խափանիչք։ Այս ուրեմն մի է ամենայն քրիստոնէից եկեղեցի, և մի յուսով գնան՝ ի Հանապարհն հանդերձեալ կենացն. և ոչ է պարտ մտաւի բարբանջք իւրաքանչիւրոցս անձանց պատուամատոյց լինել և ազգի ջատագով, և զեղբայրն անգոմնել, և զխիղճ մտաց նոցա գայթակղեցուցանելով՝ ի Քրիստոս մեղանչել։ Այլ որպէս՝ ի մի Աստուած Այր է հաւատ մեր, և՝ ի մի տէր Յիսուս Քրիստոս Հրդին նորա, այսպէս լիցուք մի անձինք և մի նորա եկեղեցի՝ իւրաքանչիւր աւանդութեամբք որոշեալ, և յօդակապութեամբ սիրոյն ընդ միմեանս խառնեալ, և առ բաբեձևութիւնս իրերայ խոնարհեալ և օգտեալ, լուծանելով զբարաչարն՝ որ հակառակ այսմ՝ նեղգործութեան սատանայի՝ ի մէջ մեր. և զտեառն փառս որ՝ ի խաղաղութենէ անդամոց ուղղի՝ հրատարակեսցուք՝ ի յերկինս և՝ ի յերկրի։ Այլ զի ընդ երկնաւորսն արժանի գտաք խառնել և հաշտել, մի մեք՝ ի միմեանց քայքայեսցուք՝ առաջի նոցա ծաղր թշնամեացն լինելով, և նոցին տրտմեցուցիչք. մի քննութեամբ աւանդութեանցս լուծցուք զայն՝ վասն որոյ սոքա եղան, այսինքն զերկնն Աստուծոյ առ մեզ, և մեր առ իրեարս։ Ով ի վեր այլ

1 Մի օրին. Եւթանելով ընդ։

գժուարին քան Յ.ստուծոյ մարդ լինել. եթէ սկզբն զայս ապար նորաձեւութիւնս, և հաւատամք, չէք այլ ինչ որ Ձաշակոցաց նորին ոչ է դիւրահաւան։ Ի ունիմք Թըշնամի ընդ այն մարտիցուք, որ անմարմինն է մխացոց ի մարմնաւորացս, յամենեցունց պահանջէ Յ.ստուած միմեանց վշտակից լինել, և յիրերաց տկարութիւն սիրով խնամարկել և զմիմեանց բարեպաշտութիւնս յարգել։ Այս ես վասն զի հաւատացի, յաղագս որոյ խօսեցայ, և սուտ ասեմ զայսորիկ հակառակ մնացութիւնս, սիրալիր մտօք կարևոր համարեցայ նուաստս յոքունց Ալերսէս, զի ասել զանուն աստ իրաւացի է ի փառս խոշհըրդածութեան սրբոյ պատարագին, և խորհրդածութիւն առ մեզ աւանդեալ ի սրբոյն Յովհաննու ոսկեբերանի սահմանադրութեանցն։ Յաչեմ ընդունել սիրով՝ և թէ այլ ոք քան զմեզ այլ յետ մեր գեղեցկացուցանէ զնոյնս, և զնորայն ի փառս Քրիստոսի, և ի պարծանս եկեղեցւոյ. յորում օրհնի նա յաւիտեան։

1 Ի պատարագամատոյցն Յովհաննու ոսկեբերանի կոչեցեալ առ Յոյնս՝ կան ինչ ինչ, որ չեն ի մերս յաւելեալ։

ՕՐԻՆԱԿ ԸՐԿԸՆԵԼՈՅ

ՍՊԱՍԱ ԱՆԱՊԱՏՈՅ՝

ՅՈՐԱՄ կամեցեալ քահանայն պատարագ մատուցանել, պարտ է այսպէս խորհրդաբար զգեստաւորել։

Հանդերձ սարկաւագօքն մտանէ յաւանդատունն ուր զգեստն է պատարագին. և զգեցեալ պաշտօնէիցն ըստ իւրաքանչիւր աստիճանի, ասէն առա սաղմոս, Սիրեա տէր զԱաւիթ, տուն առ տուն աւենեքեան։

Վարդապետ սրբոցդ. Աւ ևս խաղաղութե՛ զտէր աղա։

Սաղմոսերգն ասէն. Տէր ողորմեա։

Սրբոցդ. Յիմաղրեացուք հաւատով և միաբանութե՛ի տեառնէ, զի զողորմութեան գնորհս իւր արասցէ՛ի վերայ մեր. ամենակալ տէր Աստուած մեր, կեցո և ողորմեա։

Սաղմ. Կեցո տէր։

Սրբ. Աղօթեսայ մեզ տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քումմ. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ, տէր ողորմեա։

Սաղմ. Տէր ողորմեա, ժ՛։

Վարդապետն խնամարհի և ասէ զաղօթս զայս. Որ զգեցեալ ես զշորս որպէս հանդերձ տէր մեր Յիսուս Քրիստոս, անձառելի խնամարհութեամբ՝ ի յերկրի երևեցեալ, և ընդ մարդկան շրջեցար. որ եղեր քահանայապետ ձգնաժամիտ ըստ կարգին Մելքիսեդեկի, և զարդարեցեր զեկեղեցի քո սուրբ. տէր որ պարգևեցեր և

մեզ զնոյն զերկնային հանդերձն զգենուլ. արժանի առնա և զիս ի ժամուս յայսմիկ զանպիտան զծառայս քո որ հանդրձակիմն և մերձենամ ի նոյն հոգևոր պաշտօն փառաց քոց, որպէս զի զամենայն ամբարշտութիւնս մերկացայց, որ ի հանդերձ պղծութեան, և զարդարեցայց լուսով քո: Կնկեա յինէն զբարիս իմ, և թօթափեա զյանցանս իմ, որպէս զի արժանի եղէց հանդերձեալ լուսոյդ առ ի քէն. ընդունելա ինձ քահանայական փառաք մնանել ի պաշտօն սրբութեանց քոց ընդ այնոսիկ ոչք անմեղութեամբ պահեցին զպատուիրանս քո. զի և ես պատրաստ գտայց երկնաւոր առագաստիդ ընդ իմաստուն կուսանան փառաւորել զքեզ Քրիստոս որ բարձեր զմեզս ամենեցուն: Ահա ես սրբութիւն անձանց մերոց և քեզ բարեբարիդ Աստուածոյ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս:

Այս մատուցեալ կիսատարկաւագքն զգեցուցանէ զհանդերձն սաղմոսելով. Ահա արա ինձ տէր, զի ես յանբծութեան:

Այ- ի ջէնոնէն ընդունէրյն ասէ. Օ գեցո ինձ տէր զհանդերձ փրկութեան և պատմուճան ուրախութիւն, և շուրջ պատեա զգեստուն փրկութիւն. ընդունելո ինձ մերոյ:

Այ- ածէ փօփ. Շուրջ պատեսցէ կամար հաւատոյ զմիջս սրտի իմոյ և զմտաց, և շինեսցէ ի սմանէ զիսոր հոտուտս աղտեղիս, և զօրութիւն ընդունայ քոց յամենայն ժամ բնակեսցէ ի սոսա. ընդունելո տեառն մերոյ:

Ա-բուրին. Օ գեցո տէր պարանոցի իմոյ զարդարութիւն, և սրբեա զսիրտ իմ յամենայն աղտեղութենէ մեղաց. ընդունելո տեառն մերոյ:

Ասպանին. Տուր տէր զօրութիւն ձեռին իմոյ, և լսա զամենայն աղաչելոյիս իմ, որպէս զի կարող լինիցիմ սպասաւորել քեզ անաղտեղութեամբ հոգւոյ և մարմնոյ. ընդունելո տեառն մերոյ:

Ակէորդին. Տէր ողորմութեամբ քո զգեցո ինձ զգեստ պայծառ, և պարապեա ընդդէմ ներգործութեանց չարին. զի արժանի եղէց փառաւորել զքո փառաւորեալ անունդ. ընդունելո տեառն մերոյ:

Յորժամ ելոյցն դնէ եպիսկոպոսն. Տէր, զիր սաղաւարտ փրկութեան ի գլուխ իմ պատերազմել ընդ զօրութիւնս չինաստնոյն. ընդունելո տեառն մերոյ:

Յակ եթէ կամի զայս ասացեալ ՚ի զգենուլն գՀանդերձն. ածէ գօտի ընդ մէջն, և արկանէ ուրար զուսովքն ասելով. Պահանայք քո զգեցցին զարդարութիւն, և սուրբք քո ցնծալով ցնծասցեն։

Պնակ զբազպանն, և զգենու զփիլոնն ասելով. Ընծասցէ անձն իմ ՚ի տէր, զի զգեցոյց ինձ Հանդերձ փրկութեան, և պատմուճանն ուրախութեան. իբրև փեսայի եդ ինձ պսակ, և որպէս Հարսն զարդու զարդս։

Յակ եթէ եպիսկոպոս լինի խորհրդածուն, առնու զսուրբ կոնքեանն, ածեալ ՚ի վերայ լանջացն և զպատուականն եմիփորոնն, և գայ առընթեր ընծայարանի սեղանոյն՝ լուացեալ զձեռս, և մատուցեալ անկանի առաջի սեղանոյն ՚ի վերայ երեսաց իւրոց լուռ և անմռունչ, և ասէ զաղօթս զայս առ սուրբ Հոգին տնօրէնն գործոյն.

Ամենակալ Աստուած բարերար ժողովեր, Ձ բոլորից յօրինող երեւութից և աներեւութից, փրկող և Հաստատող, խնամող խաղաղարար, Հօր Հզօրդի. Հայցեմք բազկատարած մեղթանօք՝ գոյանալ Հեծութեան յանդիման եղեալք ահաւորիդ։ Աստիճք մեծաւ զողութեամբ, սաստիկ երկեղիւ՝ մատուցանել նախ զբանականս զայս պատարագ քոյմ անբնին տերութեանդ, իբր ալծոռակցի, փառակցի և արարչակցի Հայրենի անկապուտ պատուոյդ, և քննողի ծածկութեանց խորոց խորհրդոց ամենակատար կամաց Հօր Աստուածոյ, և կենդանատուի և արարչի ամենայնի։ Ձեռն քո ծանուցաւ մեզ երբեակ անճառութիւն միանական աստուածութեանդ յորոց մի և դու Քրիստոս անհաս. քեզ և ՚ի ձեռն քո առաջինքն նահապետական առնմին շառաւեղք տեսանողք անուանակոչեալք, զանցեալն և զգալոցն, զեղեալն և զոչ գոյացեալն անստուերապար բանիւ վերապատմեցին։ Հոգի Աստուծոյ քարոզեալ զքեզ Մովսէսի՝ որ ՚ի գնալն քո ՚ի վերայ Ջրոցն անպարագիր զօրութեանդ, ահեղ շրջարկութեամբ թեւապարփակ տաճարականաւ պաշտպանողօրէն գԹաղթեալ ՚ի ծնունդս նորոգս, զաւազանին խորհուրդ ծանուցեալ՝ յոր կերպարան օրինակութեան նախ քան զկառուցանել զայդ մանուած վերջնում վարագուրիդ յո-

բինեցեր կարող տիրապէս զբովանդակ բնութիւնս ա-
մենից բնաւից գոյից բոլորից ամենայն էից յանէից, և
ստեղծանելն ի նորոգութիւն յարութեան ամենայն ե-
ղեալքս առ ի քէն, յայնմ ժամանակի՝ որ օր վերջին
է այսմ կենցաղի, և օր առաջին երկրին կենդանեաց.
քեզ հնազանդեցաւ միութիւն կամացն որպէս ։օր ի-
րում ազգակիցն քո՝ էակիցն ։օր անպրանիկին Յրդի մե-
ծով կերպիւ, զքեզ աւետարանեաց Ձնմարիտ Յստուած
հաւասար և համագոյ ։օրն իւր հզօրի. զառ ի քեզ
հայհոյութիւնն անքաւելի քարոզեաց, և իբր զաս-
տուածամարտից զի քէն հեստելոցն չարաբանական
բերանն կարկեաց, և զիւրն շնորհեաց արդարն և ան-
արատն՝ գիչ ամենայնի, որ վասն մեղաց մերոց մատ-
նեցաւ, և յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ. նմա
փառք ի ձեռն քո, և քեզ բարեբանութիւն ընդ ։օր
ամենակալի յաւիտենից յաւիտեանս, ամէն։

Վարձեալ կրկնեսցի ի նոյն կարգ բանի՝ մինչև ի
վերայ հայեցուածիւն լուսոյն հրաշապէս ազդեալ յայտ-
նեսցի, աւետարանել վերստին զկրկին խաղաղութիւն։

Յզայեմք և աղերսեմք արտասուալից հառաչմամբ
յամենայն անձնէ՝ զփառատրելի արարչութիւնն անեղծ
և անստեղծ անժամանակ ։ոգւոյդ գթածի, որ բարե-
խօսող ես վասն մեր յանմուռնչ հեծութիւնս առ ողոր-
մած ։այր, որ զսուրբսն պահես, և զմեղուցեալսն քա-
ւես՝ մաքրես և տառնարս կազմես կենդանիս կեցուցիչ
կամաց բարձրեալդ ։օր։ Յդր ազատեա զմեզ յամե-
նայն անմաքուր գործոց՝ որ ոչ է հաճոյ քումդ բնա-
կութեան, և մի շինցին առ ի մէնջ լուսոյդ շնորհայ
փայլմունք ի տեսականացս աչաց իմաստից. վասն զի
զքեզ ուսաք միանալ ի մեզ ի ձեռն աղօթից, և ըն-
տիր վարուց խնկելոց։ Յա քանզի մինդ Յհրեղդութիւդ
պատարագի, և միաղ ընդունի հաճեալ ընդ մեզ հաշտ-
արար արեամբ անդրանկի իւրոյ, իսկ դու ընկալեալս
զմեր պաղատանս, և յարդարեսցես զմեզ օթևանս պա-
տուականս ամենայն պատրաստութեամբ ի վայելումն
հաճակման երկնաւոր գառինդ՝ առանց պատժոյ դատա-
պարտութեան ընդունել զայս անմահացուցիչ մաներ-
նայս կենաց նորոյ փրկութեան։ Յա հալեսցի ի հրոյս
յայտնեալ գայթակղութիւնս մեր, որպէս մարգարէին

կենդանասպարոյկ կայծակամբն ի ձեռն ունելեացն մատուցմամբ, զի յայսմ ամենայնի քոյդ քարոզեսցի գըԹուԹիւն՝ ըստ որում Պրդուվդ Աստուծոյ Հօդ քաղցրուԹիւն, որ զանատակ որդին մերձեցոյց ի հայրենի ժառանգուԹիւնն, և զպոռնիկին յառաջեցոյց յերկնային արքայուԹիւնն արդարոյն երանուԹեան։ Այո՛ այո՛, և ես մի եմ ի նոցանէ. և զիս ընկալ ընդ նոսին իբր մարդասիրուԹեան կարօտեալ մեծի, չնորհօք քո ապրեալ, զի յայսմ ամենայնի՝ յամենայնի ծանիցի մարդասիրուԹիւն քո ընդ Հօր փառաւորեալ համապատուաբար ի մի կամ, և ի մի իշխանուԹիւն գովուԹեամբ. զի քո է գԹուԹիւն և կարողուԹիւն, զօրուԹիւն և փառք յաւիտեանս յաւիտենից։

Ապա յարուցեալ գայ առընԹեր ընծայարան սեղանոյն. առ որ մատուցեալ նախատարկաւագն զնչխարն որ է հայց, դնէ ի մաղզմայն ասելով. Ճիշատակ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Նա առեալ գինի արկանէ խառնիչ ի բաժակն՝ որ է սկիհն, ասելով. Յաղագս յիշատակի տնօրէնուԹեան տեառն Աստուծոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։

Նա քահանայն ասէ զաղօԹս զայս, սրբոյն Յովհաննու ոսկեբերանի. Աստուած Աստուած մեր, որ զերկնաւոր հայդ՝ զտէր մեր Յիսուս Քրիստոս զկերակուրդ ամենայն աշխարհի առաքեցեր փրկիչ և կեցուցիչ, բարերար և մարդասէր, օրհնել զմեզ, ինքնին դու օրհնեա և զառաջադրուԹիւնս զայս. յիշեա որպէս բարերար զմատուցողս և վասն որոյ մատուցանի, և զմեզ անպատասպարտ պահեա ի քահանայագործուԹիւն աստուածային խորհրդոյ քոց։ Օ ի սուրբ և փառաւորեալ է ամենապատիւ մեծվայելչուԹիւդ փառացդ Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս։

Ղեւէր. Ամէն։

Նա ապա սարկաւագն ծածկէ ասելով. Տէր Թագաւորեաց վայելչուԹիւն զգեցաւ։

Նա տեսեալ խառնիչ ի ձեռս քահանային, ինքն առնԹեր կալով ունելով զբուրվառն. և նա առեալ մատուցանէ խնկելով և ասէ. Խունկ՝ մատուցանեմ առա-

ջի քո Քրիստոս բուրումն հոգևորական : Ընկալ ՚ի սուրբ և յերկնային և յիմանալի քո մատուցարանդ ՚ի հոտ անուշից , և առաքեա առ մեզ փոխարէն պնդոյն և զպարգևս Հոգւոյդ սրբոյ : Զի քեզ փառս մատուցանեմք ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ . այժմ և միշտ ,

Եւ դնէ խունկ , խաչակնքէ երիցս անգամ երկրպագեալ , և ապա արկանէ շուրջ զսեղանովն Հայտատակաբար : Եւ առընթեր գոլով նմին սարկաւագն ինկիակալեան , և կիսատարկաւագն առաջի մտնեղինոք , իջանէ քահանայն ՚ի մէջ եկեղեցւոյն , և ինկէ ամենայն բազմութեան ժողովրդեանն ինքնին : Եւ վերստին դառնայ ՚ի խորանն սուրբ . զարձեալ արկանէ սեղանոյն , և տայ զբուրվառն ՚ի սարկաւագն . և նա ծխէ նմին , իսկ քահանայն երիցս երկրպագեալ համբուրէ զսեղանն : Եւ սարկաւագն հրամանն առեալ ելանէ ՚ի մէջ եկեղեցւոյն՝ կանգնի ձեռնամած , և ձայնէ ՚ի խորանն առ քահանայն . Օրհնեա տէր :

Քահանայն . Օրհնեալ թագաւորութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ , այժմ և միշտ և յաւիտ :

Ժողովուրդն . Ամէն :

Սարկաւագն քարոզէ ժողովրդեանն ասելով բարձր ՚ի ձիս . Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք :

Ժողովուրդն տէր ողորմեա :

Սարկաւագն . Ի ման ՚ի վերուստ խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց զտէր աղա :

Ի ման խաղաղութեան ամենայն աշխարհի և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ և ամենայն օրհներդութեան զտէր աղա :

Ի ման սրբոյ տաճարիս , և որոց հաւատով ընկալեալ զերկնեղ տեառն աղօթեն ՚ի սմա զտէր աղաչեսցուք :

Ի ման հայրապետին մերոյ կենաց և փրկութեան հոգւոյ զտէր աղա :

Ի ման պատուական քահանայից , և որոց ՚ի Քրիստոս սարկաւագաց և ամենայն ժառանգաւորաց եկեղեցւոյ զտէր աղա :

Ի ման բարեպաշտ և աստուածասիրաց թագաւորին մերոյ , և ամենայն պաղատանն և ամենայն զինուորաց նորա զտէր աղա :

Ա՛ման լինելոյ նորա յաղթող, և խորտակելոյ զամենայն թշնամիս առ ոտս նորա զտէր աղա։

Ա՛ման ամենայն քաղաքաց և գաւառաց, և որոց հաւատով բնակեալ են ՚ի նոսա զտէր աղա։

Ա՛ման պղպաբերութեան երկրի, և ժամանակաց զտէր աղա։

Ա՛ման Հանապարհորդաց, նաւորդաց, վաստակաւորաց, և վանն փրկութեան գերեաց զտէր աղա։

Ա՛ման փրկելոյ զմեզ ՚ի վշտաց, և ՚ի նեղութեանց զտէր աղա։

Ընկալ կեցո՛ և պահեա զմեզ տէր քոյին ընտրհիւդ։ Կեցո՛ տէր։

Օ՛ ամենասրբուհի աստուածածնին զամենօրհնեալ տիրուհին, և զմիշտ կոյսն Մարիամ, յիշեջ Քրիք և զամենայն սուրբս և նոքօք զտէր աղա։ Յիշեա։

Ա՛ւ և զս առաւել վանն միաբանից և միաբան Հնմարիտ և սուրբ հաւատոյս զտէր աղա։

Օ՛ անձինս մեր։ Ընդ տեսան յանձն եղիցուք։ Ողորմեաց մեզ տէր Ամէն։

Ա՛ւ քահանայն խորհրդաբար ասէ զաղօթս։ Ապայ պարտ է գիտել, զի զայս և զորս յետ այսորիկ աղօթանի՝ ոչ ինոյ մինչև յաւարտումն քարոզին. այլ մինչդեռ սարկաւագն ընդ ժողովուրդն խօսի բարձր, նա աղօթիւքս ՚ի ծածուկ ընդ Ամէն, և յաւարտելն նորա զքարոզն, քահանայն զիաւան աւարտէ՝ բարձրաձայնաբար ՚ի լուր ժողովրդեանն. որպէս զի միաձայն առասցեն զԱմէնն։ Ա՛յս է սահման բնաւիցդ։

Տէր Ամէն մեր, որոյ կարողութիւնդ անքնին է, և փառքդ անհասանելի. որոյ ողորմութիւնդ անչափ է, և գթութիւնդ անբաւ. դու ըստ առատ մարդասիրութեան քումմ նայեա ՚ի ժողովուրդս քո և ՚ի տաճարս քոյս սուրբ. և արա ընդ մեզ և ընդ աղօթակիցս մեր առատապէս զողորմութիւնս քո և զգթութիւն։ Խոյչ. Օ՛ի քեզ վայելէ ամենայն փառք, պատիւ և իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից։

Ժողով. Ամէն։

Յետ այսորիկ ասէն զաղաչանս զայս ՚ի ձայն դաս դաս՝

բատ ումէիկ ձայնիկ Յանարհեցոյիցն յեղանակաց .

Յարի ե խոստովան լինել տեառն , սաղմոս ասել ա-նուան քումդ բարձրեալ : Փառք քեզ Աստուած , ի բուն :

Ուղիղ ե տէր Աստուած մեր , և ոչ գոյ ի նմա անիրաւութիւն : Փառք քեզ Աստուած :

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ : Փառք քեզ Աստուած :

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից : Փառք :

Ա՛ւ միաձայնեալ երկու դասն ընդ մի բերան ասեն զայս ղինի . Հիանձին Որդի և բանդ Աստուած , և անմահ էութիւն , որ յանձն առեր մարմնանալ ի սուրբ աստուածածնէն , և ի միշտ կուսէն : Ընփոփոխելիդ մարդ եղեալ և խաչեցար , մինդ ի սրբոյ Երրորդութէն , փառակից ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ կեցո զմեզ :

Աւրհնութիւն . Ա՛ւ և խաղաղութէ զտէր աղա :

Օղորմութիւն . Ընկալ կեցո և ողորմեա , և պահեա զմեզ տէր քոյին շնորհիւդ :

Ո՛ սրբուհի աստուածածնին զօրհնեալ տիրուհին և միշտ կոյսն Մարիամ Ա՛ւ և ս միաբան : Ո՛ անձին : Ողորմ :

Պահանայն , մինչդեռ քարոզէ , ասէ խորհրդաբար . Տէր Աստուած մեր , կեցո զժողովուրդս քո , և օրհնեա զժառանգութիւնս քո , զլուսն եկեղեցւոյ քո պահեա . սրբեա զսոսա որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քո : Դու զմեզ փառաւորեա աստուածայինն զօրութեամբ քով , և մի թողուր զյուսացեալսդ ի քեզ :

Ի յայն . Ո՛ի քո է կարողութիւն և զօրութիւն և փառք այժմ և միշտ :

Աղաղութիւն :

Որ հասարակաց զայս , և միաձայն մեզ ամենեցուն ուսուցեր աղօթել , և զերկուց և զերից միաձայնելոյ յանուն քո զինդրուածս պարգևել խոստացար : Դու և այժմ զծառայից քոց զինդրուածս առ ի յօգուտն կատարեա , շնորհելով մեզ յայսմ յաւիտենից զգիտութիւն քումդ Աստուածութեան , և ի հանգերձեալսն զկեանս յաւիտենականս պարգևելով . զի բարերար և մարդասէր ես Աստուած , և քեզ վայելէ փառք իշխան :

Պարձեալ սաղմոս ըստ խորհրդոյ աւուրն դաս և դաս շաբականաւ ասեն.

Տէր թագաւորեաց։ Օգեցաւ տէր։ Ճ պարան, Ոսոյ ՚ՈԾ։ Բացան դր։ Ծնեք այսօր Կրնաղէմ, Պարկաւագն ձայնէ. Պռօսխոմէ։

Եւ ասեն զերեքսրբեանն ժողովուրդքն։

Բայց պարտ է գիտել, թէ յորժամ Հանդիսական ծոն լինի, կամ եպիսկոպոս ՚ի խորհրդեանն, այլով օրհնակաւ է հրահանգութիւնս մինչև յայս վայր ՚ի պատիւ աւուրն. այսինքն զի եպիսկոպոսին ոչ է անկ ՚ի սկզբան ժամուցն մտանել ՚ի խորանն, այլ այսպէս անօրինեացի. Բազ երէցն և մի ոք ՚ի սարկաւագացն կացեալ յեկեղեցին, և ասէ սարկաւագն որպէս վերոյ գրեալ է նմա սկսանել. ( )րհնեալ թագաւորութիւն։

Եւ մինչ սարկաւագն քարոզէ, և ժողովուրդն ասեն զՏէր ողորմեայն, գայ եպիսկոպոսն զգեստաւորիլ պատուականից քահանայիւքն, հանդերձ սարկաւագօքն և կից սասարկաւագօքն և այլ պաշտօնէիւքն՝ որք հպատակ են նմա ըստ իւրաքանչիւր գործոց. և չէ պարտ այլում յայլ աշխարհի գործ ձեռնամուխ լինել, որպէս ոչ փոքրն ՚ի մեծին՝ այսպէս և ոչ մեծն ՚ի փոքուն։ Այլ սարկաւագն առաջի նորա նախ կիսասարկաւագն զմամեղէնսն լուացեալ, յետ նորա ՚ի նոյն կարգէն զգաւազանսն խաչագլուխսն. և նախ սարկաւագքն ունիցին զաւետարանն և զբուրվառն, և յետոյ նոցա քահանայքն դասաւորկ գան. և յետոյ քահանայիցն գայ եպիսկոպոսն՝ երիս սարկաւագ ունելով պաշտօնեայս իւր, և մտեալ յեկեղեցին՝ յորում որք էնն յիւրեանց պաշտամանն անվրդով, սոքա եկեալ կանգնին առ դրունսն. որպէս և գային նախ մամեղինաւորքն, ապա որք զգաւազանսն ունին, և ապա սարկաւագքն, և յետ նոցա քահանայքն ոչ բոլոր, այլ մի զմիոյն կնի յերկայնան տող երիս դաս մինչև ՚ի դուռն՝ մէջն փողոց, և զէմք իւրեանց ՚ի միմեանս։ Եւ եպիսկոպոսն կանգնի ՚ի նախասրբունն հուպ առ սեամբն ՚ի մէջ, և ինքն անշարժ և անսխալ պաշտելով զառաջին սաղմոսն. Բարի է խոստովանն լինել տեառն. որպէս և գրեալ է։ Եւ ասէ եպիսկոպոսն և քահանայն զաղօթս նոցին. Տէր Ամենակալ մեր, կեցո զժողովուրդս քո։

Վարդ սարկաւագն այն՝ որ յառաջն էր եկեղեցին, և ոչ ի կարգս սոցա, այլ առ դուռն խորանին ըստ վերոյ գրելոցդ։ Եւ սոքա ասեն զերկրորդ սաղմոսն, Ցեր թագաւորեաց, խորհրդաւոր շարականաւն։ Եւ քարոզ զինի այն սարկաւագն, և սոքա ասեն զաղօթսն. և աւազ երէցն ի խորանն՝ Որ հասարակաց զայս, և միաձայն. զայն որ վերոյ փոխ է դրած առանձինն յայն օրն այս սաղմոսիս ասացեն։ Եւ յետ աւարտելոյն այսօր սաղմոս մի, այլ յաւելուն խորհրդապէս ի պատիւ աւուրն. և ասեն զայս ալէլուիա՝ ըստ ութ ձայնիցդ Երգեցողին եղանակի դաս և դաս։ Ակսեալ ցնծասցուք ի տէր. ալէլուիա. Կանխեսցի ալէլուիա. մինչև յաւարտ փառք Նոր և Որդ. ալէլուիա. այժմ և միշտ. ալէլուիա։

Եւ երբ զայս սաղմոս սկսանին, Թողու եպիսկոպոսն զիւր տեղն որ առ սեամն, և գայ ընդ մէջ երկուց դասուցն հեզութեամբ, և ընդ իւր երկու սարկաւագքն. և սոքա որպէս կային՝ ինան անվրդով, և չփոխիսին ընդ հետ նորա, այլ ինան մինչև նա գայ ի ծայր դասուցն ի մէջ տաճարին, և ապա շարժին քահանայքն յետուստ կուսէ՝ նախապատիւքն նախ, և այլն զինի։ Եւ գան ընդ հետ եպիսկոպոսին երկու երկու հաւասարք միմեանց, և երկուք յետ նոցա, և ապա սարկաւագն, և ապա կիսարկաւագն. որպէս զի լցցի այնմ որ բուն յառաջն էր կանգնեալ դէպ խորանին՝ բուն յետոյ շարժել ի գնալ. որպէս եպիսկոպոսին որ բուն յետոյ էր՝ բուն յառաջն եկն, և գնան և կանգնին առ դուրս խորանին՝ ըստ պատուոյ զինի եպիսկոպոսին, նախ քահանայքն, և ապա այլքն որպէս ասացաւ։ Ոչ ի լցցի այնմ որ յեկեղեցին յառաջ մտաւ ի խորանս բուն յետոյ մնեալ և եպիսկոպոսն անդ յետոյ, ասա յառաջամտէ. քանզի նախ քան զմտանելն մինչդեռ ամենայն եկեղեցին պաշտէ զսաղմոսն, խոնարհի և աղօթէ ի ծածուկ. նոյնպէս և քահանայք ընդ նմա զաղօթս զայս.

Ցեր Աստուած որ կարգեցեր յերկինս դասս, և զինուորութիւնս հրեշտակաց և հրեշտակապետաց ի սպասաւորութիւն փառացդ քոց, արա և այժմ ընդ մեզս մեր մտանել սրբոյ հրեշտակացդ, և լինել պաշտօնակից մեզ և փառաբանակից քոմ բարերարութեանդ, զի քո է կարողութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս, ամէն։

Այլ որք առընթեր են ասեն զԱՄՆ ։

Ապակ բովանդակ եկեղեցին զնուբեանց ասեն անմիջոց զսաղմոսդ, և նոքա զաղօթս յայնժամ ասասցեն՝ եթէ Ձեռք ՆՐ սահեցին զմեզ ։ Ապակ՝ ի փոխելն զմի ոտն մեռ եպիսկոպոսն նախ առաջին՝ ի խորանն, և ասցա այլ քահանայքն. սաղմոս, Ակայք երկիր պագցուք նմա և լաց ։ Այս ինքն է տեր Աստուած մեր. ։ բուն զսաղմոս շարականաւ, Աստ աստուածութիւնն զուարճանայ նոր. Աստ և մեք ցնծաս. Ամպայ և զուարճ ։

Ապա ընդ եկեղեցին զսաղմոն պաշտէ՝ մեռեալ եպիսկոպոսն՝ ի խորանն, և ընդ նմա քահանայն և սարկաւագն զկնի, և կիսարկաւագն որպէս վերոյ գրեցաւ երկու երկու՝ որք եկին ընդ նմա յեկեղեցիս և այլ աւելին, երկրպագեն սեղանոյն, և կանգնին ։ Ապա մատուցեալ սարկաւագն խունկ յեպիսկոպոսն, առնու և ասէ զաղօթս խնկոյն. և եդեալ զխունկն՝ առնու զնուբվառն և ինքնին խնկարկէ շուրջ զսրբով սեղանովն ։ Աջի ՆՐ ունելով կիսասարկաւագն զմմռղէնն, և սարկաւագն զկնի խնկանոցն, իսկ ապա նա գայ՝ ի գասս քահանայիցն և ծխէ նոցա. ապա ինքն միայն յեկեղեցին, և որք ընդ նմա մռղէնն և խունկն, և ծխէ ամենայն լսման եկեղեցոյն՝ մինչև ցյետին ժողովրդոյն, որպէս հրամայէ սուրբն Յովհաննէս ։ Ապակ պաշտօնեայքն արտաքոյ խոբանին պաշտեն զխորհրդական շարականան եկեղեցոյն, յերկարեալ մինչև նա աւարտէ զինկարկութիւնն, և դառնայ վերստին՝ ի խորանն, և ծխէ սրբոյ սեղանոյն ։

Ապա սարկաւագն որ ունի զգործ քարոզութեն՝ ի մէջ եկեղեցւոյն, ասէ Պաւսխառմ, և բարձրացուցանէ զաւետարանն ընդ բանին ։

Աղաչեսցուք. Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ. երիցս ասէ ։ Ապա անդէն առ նմին խոնարհի քահանայն և ասէ զաղօթս.

Աստուած սուրբ որ՝ ի սուրբս բնակեալ ես, և երեքսրբեան ձայնիւ սերովբէք գովեն զքեզ, և քերովբէք փառաբանեն, և ամենայն երկնային զօրութիւնք քեզ երկիր պագանեն ։ Որ՝ ի չգոյէ՝ ի գոյ ածեր զամենայն արարածս, որ արարեր զմարդն ըստ պատկերի

1 Ըստ նախկին Հայոց ։

քում և նմանութեան, և ամենայն չնորհիւ քո զարդարեցեր զնա, և ուսուցեր խնդրել զիմաստութիւն և զգօնութիւն. և ոչ անտես արարեր զմեղուցեալն, այլ եդեր 'ի վերայ նորա ապաշխարութիւն քաւութեան[1]։ Որ արժանի արարեր զմեզ զնուաստացեալ և զանարժան ծառայս քո և 'ի յայսմ ժամու կալ առաջի փառաց սրբութեան սեղանոյ քո, և զօրինաւոր երկրպագութիւն և զփառաբանութիւն մատուցանել քեզ։ Դու տէր ընկալ 'ի բերանոյ մեղաւորացս և զերեքօրեայն օրհնութիւնս, և պահեա զմեզ քոյին քաղցրութեամբ. Թող զամենայն յանցանս զկամայ և զակամայ. սրբեա զՀոգիս և զմարմինս մեր, և չնորհեա 'ի սրբութեան պաշտել զքեզ զամենայն աւուրս կենաց մերոց բարեխօսութիւք սուրբ աստուածածնիդ և ամենայն սրբոց որք յաւիտենից քեզ բարեհաճեցան. զի սուրբ ես Աստուած մեր, և քեզ փառք։

Այս կատարի աղօթքս և երեքօրեայնն միանգամայն։

Ամէն։ Ասացուք ամենեքեան միաբանութիւք, տէր ողորմեա։

Քրիստոս. Տէր ողորմեա։

Յամենայն անձնէ և յամենայն մտաց զտէր աղա։

Ընդունակ Աստուած հարցն մերոց, զքեզ աղա։ Լուր մեզ և ողորմեա։

Ամն սրբոյ տաճարիս և հաւատացելոց՝ որք են 'ի սմա երկեղիւ տեառն զտէր աղա։

Ամն փրկելոց զմեզ յամենայն վշտաց և 'ի նեղութենէ զտէր աղա։

Ամն բարեպաշտ թագաւորաց յաղթութեան և զօրութեան, հանապազորդ խաղաղութեան և առողջութեան, և որպէս զի տէր Աստուած մեր առաւել գործակից լինի նոցա զտէր աղա։

Ընկալ։ Ո սրբուհի աստուածածնին։ Այս ևս մի։ Ո անձինս մեր։ Ողորմեա։

Այս վանս եղբարցս մերոց, և համօրէն ամենայն ժողովրդեանս՝ որք եկին յամենապատուական 'ի տօնս տեառն մատուցմամբ աղօթել զտէր աղա։

1 Ի լուսանցան Փրկութեան։

Քահանայն բազկատարած ասէ զաղօթս. Տէր Աստուած մեր, զբազկատարած զաղաչանս ծառայից քոց վերընկալցիս և ողորմեացիս ըստ մեծի ողորմութեան քում. զգթութիւն քո առաքեա՛ ի վերայ մեր, և ամենայն ժողովրդեանս՝ որք ակն ունին առ՛ի քէն ողորմութեանդ. զի ողորմած և մարդասէր ես, և քեզ փառք։

Յետ այսորիկ երիցս երկրպագեալ Համբուրէն զսեղանն. և ասէ սարկաւագն ցքահանայն. Յաստիճանն ելցուք։ Նա ասէ սարկաւագն. Օրհնեա զաստիճանս զայս. և օրհնեալ բազմի, և տայ ի ձեռս նորա զաւետարանն։ Յետոյ խոնարհեալ առ ոտս նորա առնուն հրամանն, և ընդունի յինքն զնոյն ի ձեռանէ քահանային. ապա յետ ասելոյն ընթերցողին զառաքեալն և զաղելուսն, գայ հանդերձ աւետարանաւն առ դուրս խորանին, կամ յամպոնն, և պաշտամբ կիսասարկաւագի ընթեռնու սարկաւագն զաւետարանն։

Ապա թէ ըստ որում վերոյ գրեցաք, ելցեն ձեռնադրութիւն հանդերձեալ է առնել սարկաւագի, կամ քահանայի, կամ թէ արքեպիսկոպոսն եպիսկոպոսի, ամ հաստատութիւն պարտ է գիտել թէ այս է ժամանակն։ Օ ի թէ կիսասարկաւագի է՝ իւր զգեստովն և ուրարովն ի ընդ նոսա, և թէ սարկաւագ՝ և քահանայ կամի լինել, իւրովն, և թէ քահանայ՝ և եպիսկոպոս կամի լինել, իւրով նախորտամբն է։ Յետ ասելոյ եպիսկոպոսին զբազկատարած զաղօթսդ՝ ոչ նոսի։ Այլ սակայն որ զբարոզութիւն ունի յաւելու վերստին ասելով զքարոզ ձեռնադրութեանն կարգի. և որ ի խորանն էն սարկաւագքն առնուն զնուիրեալն ի զաստակարգութէնն, և քերեալ արկանեն առաջի սրբոյ սեղանոյն, և ի ներքոյ ձեռին եպիսկոպոսին։ Նա թէ սարկաւագ է՝ ի լինելն՝ ի վերայ ահեակ ծնկին, և թէ քահանայ՝ յերկուսին. իսկ եթէ եպիսկոպոս՝ զաւետարանն դնեն ի վերայ պարանոցին, և կատարէ ի վերայ նորա եպիսկոպոսն զաղօթս ձեռնադրութեան իւր փոխանն։

Յետ այնորիկ վերաձառէ սարկաւագն առ ժողովուրդն. Աստուածային և երկնաւոր շնորհն ի ձեռն առ-

նու զայս անուն յայս ինչ. և վկայեալ յամենեցունց, յաւելու եպիսկոպոսն զորս ըստ նմին աղօթիւք խորհրդապար։ Իսկ եթէ ձեռնադրեալն եպիսկոպոս է, այլ և սպիսկոպոսունքն զձեռս՝ ի վերայ դնիցեն և ձեռնադրողն՝ ի գլխոյն։

Յետ կատարելոյն զայս աղօթս փոխանի, թէ սար կատարած օծաւ, առնու եպիսկոպոսն զուրարն և ինքն դնէ՝ ի վերայ ահեակ ուսին. ապա թէ քահանայ՝ ինքն և սպիսկոպոսի փոխէ զուրարն՝ ի վերայ երկուց ուսոցն, և զգեցուցանէ զնուագորան. իսկ եթէ եպիսկոպոս՝ արքեպիսկոպոսն ինքնին արկանէ զպատուական եմիփորիոնն զանգուվքն։ Իսկ անհնարին է և զաղփաղփուն և անկար զերկուս աշտիճանն՝ ի միում աւուր տալ. Թողցի ապա անհրաւորէութիւնն առ անօրէնսն։ Իսկ երէկաւ նատի արքեպիսկոպոսի յաթոռն, քահանայք ընդ նմա. իսկ ձեռնադրեալն ինայ առաջի սրբոյ սեղանոյն՝ ի ծունկս, թէ սարկաւագ է կամ քահանայ՝ մինչև կրկնեսցի՝ ի վերայ նորա աղօթքն։ Իսկ եթէ եպիսկոպոսի՝ ոչ, այլ ընդ համապատիւն նստցի. և յետ աւետարանին գայ առաջի սրբոյ սեղանոյն, և կատարեն զնոյն որպէս յառաջագունէ։

Ասացէ այժմ նատեալ նոցա՝ գայ առ սաղմոսերգուն՝ ի մէջ եկեղեցւոյն, և ինքն միայն առանց օգնականի ասէ. Սաղմոս ասացէք Թագաւորին մերոյ, սաղմոս ասացէք։

Իսկ առնու՝ ի նմանէ ամենայն եկեղեցին և ասէն. Սաղմոս ասացէք Աստուծոյ մեր։

Ինքն դարձեալ միայն երկրորդէ. Ցասխ հարէք ամէ։ Իսկ զայս ասացեալ երկրպագէ յայսկոյս և յայնկոյս և գնայ։ Կամ ընթեռնու զառաքեալն ըստ խորհրդեան աւուրն, կամ Թէ կամի զձեռնադրեալն ընթերցուածքն՝ Թէ օրն այնր խորհրդոյ է.

Պօղոսի առաքելոյն՝ ի Կորնթացւոց ընդհանր է ընթերցուածս։

Ղեւտացիք, զոմէմ զձեզ, զի զամենայն ինչ զիմ լիցիք, և որպէս առանցկի ձեզ՝ զառանցումենան ունիք. կամիմ զի գիտիցէք զոր եթէ առն ամենայնի գլուխ Քրիստոս է, և գլուխ կնոջ այր, և գլուխ Քրիստոսի Աստուած։ Ամենայն այր յորժամ յաղօթս կայ

ցէ, կամ մեղգասիրտացցէ, և զգլուխն ծածկեալ ունիցի՝ յամենի առնել զգլուխ իւր. և ամենայն կին յորժամ յաղօթս կացցէ, կամ մեղգասիրտացցէ բացաւ զգլխով՝ յամենի առնիցէ զգլուխ իւր, զի այնպէս համարի՝ եթէ զերծեալ իցէ։ Օ՛ի եթէ ոչ արօղեսցի կինն՝ փոքրեսցէ զնեղս իւր. ապա եթէ անպատեհ է կնոջ փոքրել կամ զերծուլ արօղեսցի։ Ո՛չն մեղգոյ չէ պարտ ծածկել զգլուխ իւր, զի պատկեր և փառք Ո՛ստուծոյ է. իսկ կինն փառք առնն է։ Օ՛ի ոչ եթէ այր՝ ի կնոջէ, այլ կինն յառնէ. քանզի ոչ իսկ Հաստատեցաւ այր վասն կնոջ, այլ կինն վասն առն. վասն այսորիկ կինն պարտի շուք դնել գլխոյն վասն հրեշտակաց, բայց ոչ կինն առանց առնն, և ոչ այր առանց կնոջ, բայց ամենայն յՈ՛ստուծոյ։ Ո՛յր գոք ձեզն տուք զիրաւդ. արժանի է կնոջ մեղգոյ Հոգւոյն յաղօթս կալ առաջի Ո՛ստուծոյ. և ոչ բնութիւնն իսկ ուսուցանէ ձեզ, զի այր եթէ զիաւուր է անարգանք են նմա, բայց կին եթէ զիաւուր է՝ փառք են նմա. զի զհոգ փոխանակ զգեստու տուեալ են նմա։ Ո՛պա եթէ ոք կամիցի հակառակող լինել, մեք չունիմք այնպիսի սովորութիւն, և ոչ եկեղեցիքն Ո՛ստուծոյ։

Յետ ընթերցուածոյս երկրպագէ։ Ա՛ւ դարձեալ սաղմոսերգին գայ, և սկսանի միայն ինքն՝ եթէ փոքր է կամ մեծ առանց օգնականի. Ո՛ղորմեա։

Ո՛ղջոյն ամենայն եկեղեցին զայն, և երկրորդէն, Ո՛ղորմեա. յաւելուն դարձեալ զայս միայն. Յաղթեաւ Ո՛ստուած և ցրուեցան։ Ա՛ւ՝ի կատարումն երգոյս երկրպագէ յայսկոյս և յայնկոյս, ապղեալ եթէ աւարտեցի։

Ապա նորա ամենեքեան երկրորդէն զնոյն զնախասացեալն, Ո՛ղորմեա, ողորմեա։

Ապա երգոյն առնու դարձեալ բարձրագոյն, Ո՛ղորմեա. և սարկաւագն ունելով առաջի զնուիրելիսն յեսայիէ՝ գայ առ դուռն խորանին աւետարանաւն, և՝ի կատարմանն ձայնէ՝ ոչ եզանակաւ, այլ միայն ինքն բարձրաձայնեալ. Ո՛ղորմեա։

Ո՛ճախանայ. ՝ի խորանէն գառնայ առ ժողովուրդն և խաչ հանէ առնել. Խաղաղութիւն ընդ ամենեսին։

Ո՛ղջո՛ւթիւն. Ա՛ւ հոգւոյդ քումմ։

Ա՛ր՛խա՛պն. Ա՛րկիր զանձուածոյ առաքեալ։

Ա՛հա՛ռն՝ Արդ առեսարանիս ։
Աբխազ՝ փա՛ռք ձո՛ց՝ Պատասխան ։
Ա՛ղաչեմ՝ Պատասխանեա ։
Աբխազ ընդեռնո՛ւ՝ Ցկե՛ր մեր Քրիստոս ասէ ։
Ա՛յ հանապազ եթէ եկի լուծանել զօրէնս ։ — Ա՛լ. նա մեծ կոչեսցի յարքայութեան երկնից ։
Ա՛ղաչե՛մ՝ Վասք քեզ տէր Ա՛ստուած մեր ։

Այս անդէն առ նմին սկսանին զՀաւատամն ։ Ասէ սարկաւագն տանի յետ ընթեռնոյն զառեսարանն ՚ի քահանայն հաճութիւն ։ և մինչ ժողովուրդն երգեն զՀաւատամն, մեկնի զխորհրդականն, ընդունի ՚ի վերայ սեղանոյն զգուշութեամբ, և եպիսկոպոսն կամ արքեպիսկոպոսն եպիսկոպոսակցօք ։ սարկաւագն հանէ զեմիփորոնն, զի մինչև ցայժմ ՚ի տեղին յորում նստեալ էին՝ էին կանգնեալ, և ոչ առաջի սեղանոյն ։ Այսպա յետ հանելոյն զնոյն առնու սարկաւագն յահեկ բազկին վերայ ձգի՝ որպէս եհան առանց ծալելոյ, և նա գայ առաջի սրբոյ սեղանոյն միայն նամիտրատաճկն ։ և թէ որ ձեռնադրի՝ անդ է առաջի սեղանոյն ՚ի ծունկս, և ինասցէ ևս ։

Հաւատամք ՚ի մի Ա՛ստուած Հայր ամենակալ, արարօղն երկնի և երկրի՝ երևելեաց և աներևութից ։ և ՚ի մի տէր Յիսուս Վրիստոս Միածին Ա՛ստուծոյ ծնեալն Ա՛ստուծոյ Հօրէ միածին, այսինքն յէութենէ Հօր ։ Ա՛ստուած Ա՛ստուծոյ, լոյս ՚ի լուսոյ, Ա՛ստուած ճշմարիտ Ա՛ստուծոյ ճշմարտէ ծնեալ և ոչ արարած ։ նոյն ինքն ՚ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս և ՚ի վերայ երկրի, երևելիք և աներևոյթք ։ որ յաղագս մեր մարդկան, և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարեալսէս ՚ի Ա՛ստուածածնէ սրբոյ կուսէն Հոգւով սրբով ։ որով էառ մարմին՝ հոգի և միտք, և զամենայն որ ինչ է ՚ի մարդ ճշմարտապէս և ոչ կարծիս ունելով ։ Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, երեալ յերկինս նստաւ ընդ աջմէ Հօր ։ Պատրաստ է նովին մարմնով և փառօք Հօր գալ զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութիւն ոչ գոյ վախճան ։ Հաւատամք և ՚ի սուրբ Հոգին, յանեղն

և ՚ի կատարեալ որ խօսեցաւ յօրէնս և ՚ի մարգարէս և յաւետարանս . որ էջն ՚ի Յորդանան , քարոզեաց յաղաքեաւն , և բնակեցաւ ՚ի սուրբն : Հաւատամք յայս միայն ընդհանրական և առաքելական եկեղեցի : Հաւատամք և ՚ի մի մկրտութիւն , յապաշխարութիւն , ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց , ՚ի յարութիւն մեռելոց , ՚ի դատաստանն յաւիտենից , յարքայութիւն երկնից , և ՚ի կեանսն յաւիտենականս . ամէն :

Վասն սոյն այս վերոյ գրեալքս և կատարեացին , թէ մի քահանայ է՝ կանգնի առաջի սեղանոյն . ապա թէ եպիսկոպոս քահանայիւք , եպիսկոպոսն կայ առաջի սեղանոյն , և քահանայքն դաս դաս ըստ պատուոյ կետոյ նմին , ՚ի մի եզրէ խորանին մինչև ցմիւսն :

Արքեպ— քարոզէ առ դուռն խորանին . Աչս ևս խաղաղութեան զտէր աղա :

Ժողովրդն . Տէր ողորմեա :

Աչս ևս հաւատով աղաչեսցուք և խնդրեսցուք ՚ի տեառնէ Աստուծոյ ՚ի փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ ՚ի ժամուս պաշտամանն և աղօթից . զի արժանի ընդունելութեան արասցէ , լուիցէ ձայնի աղաչանաց մերոց . ընկալցի զսխատս և զխնդրուածս սրտից մերոց , թողցէ զյանցանս մեր , ողորմեսցի ՚ի վերայ մեր . աղօթք մեր և խնդրուածք մտցեն առաջի մեծի տէրութեան նորա : Աչս նա տացէ մեզ միաբան միով հաւատով և արդարութեամբ վաստակել ՚ի գործս բարեաց . զի ղողորմութեան ընդունիմն արասցէ ՚ի վերայ մեր . տէր ամենակալ կեցո և ողորմեա :

Ժողովրդն . Կեցո տէր :

Արքեպ— . Օ ժամ պատարագիս , և զառաջիկայ օրս խաղաղութեամբ անցուցանել հաւատով ՚ի տեառնէ խնդրեսցուք :

Ժողովրդն . Շ նորհեա տէր :

Արքեպ— . Օ՝ հրեշտակ խաղաղութեն պահապան անձանց մերոց հաւատով ՚ի տեառնէ խնդրեսցուք :

Օ քաւութիւն և զթողութիւն մեղաց մերոց հաւատ :

Օ սրբոց խաչին մեծ զօրութիւն ՚ի պահպանութիւն անձանց մերոց , քրիստոնէութեամբ կատարել ըզ-

կեանս մեր անամօթ և բարի պատասխանատուութիւք առաջի ահաւոր բեմին Ի Քրիստոսէ խնդրեսցուք։ Այս ևս մի։ Ո՛նդունելոյ։ Ողորմի։

Ի՛ Քահանայն ասէ զաղօթս միանգեւնա քարոզէ. որ Ի կատարումն քարոզին փառս տայ, և ապա երկրպագէ ժողովուրդն յետ խաղաղաղութեան. և քահանայն խոնարհի և զփոխս ասէ. Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս, որ մեծ ես ողորմութեամբ, և առատ պարգեւօք բարերարութեան. որ դու քոյին կամաւ համբերեցեր Ի ժամուս յայսմիկ չարչարանաց խաչի և մահու յաղագս մեղաց մերոց, և պարգեւեցեր առատապէս զպարգեւս և զնորոգ Հոգւոյդ սրբոյ երանելի առաքելոցն։ Խաղորդս զայս զմեզ տէր աստուածային պարգեւացս այսոցիկ, Թողութեան մեղաց, ընդունելութե Հոգւոյդ սրբոյ. զի արժանի լիցուք փառաւորել զքեզ ընդ Հօր և Հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ։

Ժողովուրդն. Ամէն։

Քահանայն. Խաղաղութիւն ամենեցուն։

Ժողովուրդն. Եւ հոգւոյդ քումմ։

Սարկաւագն ասէ. Ընտուծոյ երկրպագեսցուք։

Ժողովուրդն. Ընդաջի քո՝ նոր. և խոնարհին ամենեքեան։

Խոնարհի քահանայն և ասէ. Խաղաղութեամբ քո Քրիստոս փրկիչ մեր՝ որ Ի վեր և քան զամենայն միտս և զբանս, ամբացո զմեզ և անեղկեղ պահեա յամենայն չարէ։ Հաւատարեցո զմեզ ընդ Աչմարիտ երկրպագուս քո՝ որք հոգւով և Աչմարտութեամբ քեզ երկիր պագանեն. վասն զի ամենատուրըն Ներողութեանդ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ։

Ժողովուրդն. Ամէն։

Քահանայն. Ողջունեալ տէր մեր Յիսուս Քրիստոս։

Ժողովուրդն. Ամէն։

Քահանայն զառնայ առ ժողովուրդն, և հրամանն տայ երախայիցն ելանել ասելով. Տէր Ընտուած օրհնեսցէ զամենեսեան։

Սարկաւագն ձայնէ բարձր բարբառով. Որ երախայքդ էք երթայք։ Ո՛ր որ յերախայից, մի որ Ի թերահաւատից, և մի որ յապաշխարողաց և յանմաքրից մերձեսցի յաստուածային խորհուրդս։

Ա՛ղաչեմ զքեզ, Տէր Աստուած իմ, զի դու ես որ զիս ածեր զծառայս քո ի սկիզբն աւուրց իմոց, եւ ասացեր ինձ եւ հաստատեր զիս, եւ ես հաւատացի զբանս քո, եւ ի վերջ աւուրց իմոց ելի առ քեզ, եւ ես ծառայ քո եմ, եւ ոչ ազատ. եւ ես ծառայ եմ քո, եւ ոչ ազատ. եւ ես ծառայ եմ քո, եւ ոչ ազատ. եւ ես ծառայ եմ քո

արատ մաքրինդ և զպատուական արիւնդ ։ Աչեզ խոնարհ հեծուցեալ զպարանոցս իմ և մաղթեմ, մի մերժեր զիս, և մի դարձուցաներ զերեսս քո յինէն, այլ արժանի առ քա մատուցանել քեզ զընծայս զայս ՝ի մեղուցեալ և յանարժան ծառայէս քումմէ . վասն զի դու ես որ մատուցանես և մատչիս և ընդունիս և տաս ։ Քրիստոս Յ։ տուած մեր, և քեզ փառք վերատաքեմք հանդերձ անսկիզբն քո Հարբդ, և ամենատուրբ Հոգւովդ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Աչ կատարի խորհրդաւոր աղօթքս, և սրտիբէական երգն միանգամայն . ապա սարկաւագն առ դուրս խորանին քարոզէ, և կիսասարկաւագն ջուր բերեալ քահանային լուանալ զձեռս առաջի սրբոյ սեղանոյն . և սարկաւագն, Աչ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք ։

Ժողովուրդն . Տէր ողորմեա ։

Աչ ևս հաւատով և սրբութեամբ կացցուք առաջի սրբոյ սեղանոյս Յ։ստուծոյ, և ահիւ . մի խղճիւ և գայթակղութեամբ, մի նենգութեամբ, խորամանկութիւք, մի երկմտութեամբ և թերահաւատութեամբ, մի պատրանօք և խաբէութեամբ ։ Այլ ուղիղ վարուք, սարկ միօք, միամիտ սրտիւ, կատարեալ հաւատով, լցեալ սիրով, առաւելեալ և լի ամենայն գործով բարութեան . կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս, և գոցուք զողորմութիւն յաւուր յայտնութեան, և ՝ի միւսանգամ գալստեան տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի ։ Յիշեսցէ տէր Յ։ստուած մեր կեցո ։

Աչ ՝ի հանգիստ օր զայս քարոզն որ վերոյ գրեալ է ։

Ահաւասիկ տարածեալ զձեռան, և ՝ի ծածուկ առ զաղօթս զայս .

Աղօթ։ Յ։ռաքեաց ։

Տէր Յ։ստուած զօրութեանց և արարիչ ամենայն լինելութեանց՝ որ յանէլութենէ զընտաս ՝ի գոյացութիւն ածեալ գոյացուցեր . որ և զմերս հողեզին բնութիւն պատուեալ մարդասիրապէս, այսպիսի ահաւոր և անպատում խորհրդոյս կարգեցեր սպասաւորս ։ Դու տէր որում պատարագեմք զպատարագիս, ընկալ առ ՝ի մէնջ զառաջադրութեան զայս, և աւարտեա զսա ՝ի խորհրդա-

կանուխ ինչն մարմնոյ և արեան միաձնի քո։ Վասն զի ա-
զդումն մարդապարտութեամբ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, ընդ որում Հօր
և Հոգւոյդ սրբոյ փառք այժմ և։

Ամէն։

Աւրհնեա. առ զրուանն քարոզէ. Ողջոյն տուք միմեանց։

Յակ եթէ ձեռնադրութիւն լինի, ոչ այժմ ասէն զՈղջոյն տուք, այլ յետոյ ասելոյն եպիսկոպոսին զաղօթսդ որ գրեցաւ. և նուիրեալն ցարդ ևս անշարժ առաջի սեղանոյն է։ Որ եպիսկոպոսին առընթերակայ սարկաւագն է՝ զեմիփորոնն պատուոյ դարձեալ զգեցուցանէ նմա. և սարկաւագն որ ունի զքարոզութիւնն՝ արտաքոյ քարոզէ այժմ զձեռնադրութեան քարոզն՝ որպէս և է յայն կարգն ըստ իւրաքանչիւր պատուոյ գրեալ. այսինքն քահանայն Յաստուած մեծն։ Իսկ կամիս ասա զոյն և սարկաւագութենէ ձեռնադրութեանն։ Ոչ միոյ նա զքարոզն ասէ և ժողովուրդն զՏէր ողորմեայն, նուիրեալն՝ի ծունկս է առաջի սեղանոյն և եպիսկոպոսին։ Ոչ գնէ եպիսկոպոսն զաչն՝ի վերայ զլխոյն որպէս կայ՝ի ծունկան և չարժի. և ասէ զաղօթսն ըստ պատշաձին, որպէս զի՝ի վախձան քարոզին սա զիսաւն երգեսցէ. իսկ յետ այնր տուեալ զնաղաղութիւնն, և երկրպագեալ ամենեցուն, խոնարհի և ինքն և ասէ ըզփոխ աղօթիցն, և աչն անշարժ՝ի գլուխն մինչև աւարտի աղօթքն։ Յետ փառացն սարկաւագն որ ունի զքարոզն, յիւր տեղն անշարժ է՝ի գուբան, յաւարտելն ձայնէ. Ողջոյն տուք միմեանց՝ի համբոյր սրբութեան. որք ոչ կարացին հաղորդել աստուածայինն խորհրդոյս, և առ զրուանս են՝ աղօթեացեն։ Յետ ասելոյ նորա զայս՝ խոնարհի եպիսկոպոսն, և զսեղանն համբուրէ և կանգնի. իսկ ձեռնադրեալն գայ, և յետ նորա համբուրէ զսեղանն և զեպիսկոպոսն։ Ոչ թէ քահանայ է կամ եպիսկոպոս ձեռնադրեալն, կանգնի յաջ անկիւն սեղանոյն, և նա՝ի ձախն, գէմք իւրեանց՝ի միմեանս. և գան այլքն որք են՝ի խորանն, և ողջունեն զամէն սեղանոյն և զնոսա, կանգնին զՅետ նոցա մի յայսկոյս և մի յայն. ապա թէ սարկաւագ է՝ առընթեր կանգնի եպիսկոպո-

սին, և ողջունի յամենեցուն որպէս զրեցաւ։ Ասէ եթէ օր պատուական առանց ձեռնադրութեան, ողջունեն զմիաբանս քահանայքն որ են ի խորհրդեանն. և մինչ նոքա ողջունեն, զպիրքն զայս յեղանակեն յեկեղեցին.

Վ. Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, որ էն Ա. աստուած աստ բազմեցաւ. եկեղեցիս մի անձն եղաւ, համբոյրըս յօդ լրման տուաւ. թշնամութիւնն հեռացաւ, սէր ընդհանուրըս սփռեցաւ։ Ա. զդ պաշտօնեայք բարձեալ ըզձայն՝ տուք օրհնութիւն ի մի բերան, միաձայնական աստուածութեան՝ որում սրտիկք են սրբբաբան։

Ա. Ի հանգամանի կատարի ողջոյնքն և երգս. յետ որոյ դառնան ի սեղանն, և հանէ զարձեալ եպիսկոպոսն զեմիփորոնն. իսկ ձեռնադրեալն՝ թէ եպիսկոպոս է ընդ այլն պատարագէ. ապա թէ քահանայ, ի հիւսիսոյ կուսէ կանգնի՝ ունելով զդէմն ի սեղանն, և դնէ զերկու ձեռն ի սեղանն ի վերայ միմեանց. և եպիսկոպոսն առնու զմաղզմայն հացոյն, և դնէ ի վերայ ձեռին նորա և անդր օրհնէ, և անդ մնայ անշարժ կրկնելով զնոյն մինչև ի կատարումն խորհրդոյն և հաղորդելոյն։ Ա. պա թէ սարկաւագ է, յետ ողջունին ամենեցունց զբարոզութիւնն ինքն արասցէ առ դուրս խոսանին ասելով.

Օ. դրունս, զդրունս խնամատութեամբ և զգուշութիւ։ (Օ. Հաւատացեալքն թէ կամիս առ առս։) Ա. փակին դրունք խորանին։

Ա. Բ. Ա. Ա. Ա

Յովհաննէս. Ինքեմք առ քեզ տէր ամենակալ։
Աբիաթար. Չէ գոհացարուք զնոսէ բոլորով սրտիւ։
Յովհաննէս. Երժան և իրաւ։
Ահաւասիկ ի ձեռն. Երժան է առուգապէս և իրաւ՝ ամենայորդոր փութով փառաւորել զքեզ Հայր ամենակալ. որ քոյին անզննելի և արարչակից բանիւդ զանհիմին բարձեր զկրձիմն։ Որ ժողովուրդ ինքեան զեկեղեցի առեալ սեփականեաց զՀաւատացեալս ի քեզ, և զննելի բնութեամբ ըստ ի կուսէն ամուսնութեանն հաձեցար բնակիլ ի մեզ, և նորագործ աստուածապէս Հարտարապետեալ զերկիրս երկին արար։ Ան զի որ ոչն Հանդուրժէին առաջի կալ զուարճնոյն ջնկքն զարհուրեալ ի փայլակնացայտ և յանմատոյց լուսոյ աստուածութեանդ, եղեալ այդպիսիդ մարդ յաղագս մերոյ փրկութեան, չնորհեաց և մեզ ընդ երկնայինան պարել զՀոգեղէնն պարսն. և ընդ սերովբէից և ընդ քերովբէից միաձայն սրբասացութիւք յօրինել նուագս, և Համարձակապէս գոչելով աղաղակել ընդ նոսին և ասել։

Յովհաննէս Հրամանն տայ սարկաւագն, և երգեն միաձայն. Սուրբ սուրբ սուրբ տէր զօրութեանց, լի են երկինք և երկիր փառաք քո. օրհնութիւն ի բարձունս. օրհնեալ որ եկիր և գալոց ես անուամբ տեառն. ովսաննա ի բարձունս։

Յորժամ նոքա սկսանին զսուրբս, և քահանայն զաղօթս սկսանի ցած և ոչ մեայ. Սուրբ, սուրբ, սուրբ ես Հնամարտապէս և ամենասուրբ. և ոմ որ պանծասցի բովանդակել բանիւ զքո ի մեզ զանբաւ բարեգործութեանդ զեղմունս. որ և անդէն իսկ ի նախնումն զանկեանն ընդ մեզօք զանապան եղանակօք խնամեալ սիրեցեր, մարգարէիւք, օրինացն տուչութեամբ, քահանայութեամբ և ատուերակերպ երնջոյն մատուցմամբ։ Յակ ի վախճան աւուրցս այսոցիկ զբովանդակ իսկ ըզպարտեաց մերոց խզեալ զդատակնիքն, ետուր մեզ զՈրդի քո միածին պարտապան և պարտս, զենուման և օձեալ, գառն և երկնաւոր Հաց, քահանայապետ և պատարագ. վասն զի ինքդ ես բաշխող, և նոյն ինքդ բաշխի ի մեզ միշտ անճախտապէս։ Ան զի եղեալ Հաւատ

տեառ, և առանց ցնորից մարդ, և անչափ միութեամբ մարմնացար ՚ի սուրբ և յաստուածածնին կուսէն Մարիամայ. Զանազարհորդեաց ընդ ամենայն կիրս մարդկային կենցաղոյս առանց մեղաց, և յաշխարհակեցոյց և յաւիտեն փրկութեան մերոյ եկեալ կամաւ ՚ի խաչն։ Ընդեալ զՀայն ՚ի սուրբ յաստուածայինն յանմահ յաբարչագործ ձեռս իւր, օրհնեաց, գոհացար, սրբեաց, եբեկ, եւ իւրոց ընտրեալ սուրբ և բազմեալ աշակերտացն ասելով. Ընդ կերայք ՚ի սմանէ ամենեքեան, այս է մարմին իմ՝ որ վասն ձեր է բաշխեալ ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց։

Ժողովուրդն. Ընդ։

Նոյնպէս օրինակի և զբաժակն առեալ օրհնեաց, գոհացար, սրբեաց, եւ իւրոց ընտրեալ սուրբ և բազմեալ աշակերտացն ասելով. Ընդ արբէք ՚ի սմանէ ամենեքեան. այս գինի նոր ուխտ է իմով արեամբս՝ որ վասն ձեր և բազմաց հեղու ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց։

Ժողովուրդն. Ընդ։

Վերափառաց. Նա զսոյն միշտ իւր յիշատակ առնել պատուիրան աւանդեաց մեզ բարերար Աստիւդ քո միածին. և խնդալ ՚ի ստորին վայրս մահու՝ մարմնովն զոր ՚ի մերմէս ընկալաւ յաղագակցութենէ, և զնիդս դժոխոցն ապարտեալ հզօրեղապէս, զքեզ միայն ծանոյց մեզ հաւատեաւ Աստուած Ճշմարիտ, զԱստուածդ կենդանեաց և մեռելոց։

Այժմ երկոքին ձեռաքն կալեալ զսպաս սրբութեան յառաջ մղեսցէ, և ունելով զնոյնն ասասցէ. Նա սրդ մեք տէր ըստ այսմ հրամանատրութեան յառաջ բերեալ զայս խորհուրդ փրկական մարմնոյ և արեան միածնիդ քո, յիշեմք զդերա որ վասն մեր զփրկագործ զպարտչարանն, զկենդանատու զխաչելութիւնն, զերեքօրեայ թաղումն, զերանելի յարութիւնն, զաստուածապէս համբարձումնն, զնստեալն ընդ աջմէ քո Հայր, զահաւոր և զմիւսանգամ գալուստն խոստովանութիւնք և օրհնութիւնք։ Օգոյս ՚ի քոյոց քեզ մատուցանեմք, ըստ ամենայնի և յաղագս ամենեցուն։

Ժողովուրդն երգեն հրամանաւ սարկաւագին. Յամի

օրհնեալ եւ տէր. օրհնեմք զքեզ, գովեմք զքեզ, գո-
հանամք զքէն, աղաչեմք զքեզ տէր Աստուած մեր:

ՎԱՀ. Օ քեզ արդարեւ տէր ՚ած մեր գովեմք, և զքէն գոհանամք Հանապազ, որ զանց արարեր զմերոյ անարժանութեամբս, այսպիսի ահաւոր և անպատում խորհրդոյս կարգեցեր զմեզ սպասաւորս. ոչ յաղագս մերոյ ինչ բարեգործութե՛ն յորոց յոյժ թափուր եմք, և միշտ ունայն գտանիմք Հանապազ. այլ ՚ի քո բազմագէղ ներողութիւնդ ցանգ ապաւինեալ, Համարձակիմք և մերձենամք ՚ի սպասաւորութիւն մարմնոյ և արեան միածնի քո:

Ամբ.—ափն. Աստուծոյ երկրպագեսցուք:

Ժողովրդն. Առաջի քո տէր:

ՎԱհաննայն Խոնարհէ Ի ասէ. Երկիրպագանեմք և աղաչեմք և խնդրեմք ՚ի քէն բարերար Աստուած, առաքեա ՚ի մեզ և յառաջի եղեալ յընծայս այս զՀոգի նաւորակից քո և զեակից սուրբ Հոգիդ:

Այս կանգնեալ սարկաւագն, ահիւ և դողութեամբ ձգեալ զձեռն առնու զծածկոյթն ՚ի սպասուցն, և խոնարհի ՚ի յանկիւն սեղանոյն: Ասէ քահանայն հնբէ զնուէրան յասելն զայս. և սարկաւագն ասէ զԱմէնն միայն՝ ոչ բարձր:

Ամէն զՀացս օրհնեալ մարմին Աստուծոյ մերոյ և փրկչիդ Յիսուսի Քրիստոսի:

Ամբ.—ափն. Ամէն:

Այս զգինիս օրհնեալ արիւն Աստուծոյ մերոյ և փրկչիդ Յիսուսի Քրիստոսի:

Ամբ.—ափն. Ամէն:

Ամպես զի եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս յանդգնատապարտութիւն, ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց:

Ամբ.—ափն. Ամէն:

Այս Համբուրէ քահանայն զսեղանն. և այսուհետև զձեռան Հաւասարնուիրացն խոնարհեցուցանէ, և զայն ՚ի նոյն յառեալ ասէ անհուն. Ամէն. Ամէն զՀաստատութիւն և զղձալի զհաղորդութիւն ամենայն աշխարհի, սրբոյ եկեղեցւոյ և ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց, քահանայից, Թագաւորաց աշխարհի,

իշխանաց, ժողովրդոց, Հանապարհորդաց, նաւելոց, կապելոց, վտանգելոց, աչխատելոց, գերելոց և ոչք՝ի պատերազմունս բալբարոսաց:

Սովաւ և օդոց չնորհեա բարեխառնութիւն, և անդոց զպտղաբերութիւն, և ախտացելոց՝ի պեսպես ցաւս զփութապես առողջութիւն:

Սովաւ հանգի՛ զամենեսեան՝ի Քրիստոս զննջեցեալ հարան, զսուրբ հայրապետսն, զառաքեալս, զմարգարէս, զվկայեալս, զեպիսկոպոսունն, զերիցունս, զարկաւագունս և զընաւ ուխտս եկեղեցւոյ քումմ սրբոյ, և զամենեսեան յաչխարհական կարգէ զարս և զկանայս հաւատով զվախճանեալս:

Ընդ որս և մեզ այց արասցես բարերար տէր աղաչեմք:

Ողորմեա՛ տէր. Յիշեա տէր և ողորմեա:

Քահանայն՝ի ձայն բարձր. Ընտուածածնի սրբոյ կուսին Մարիամու, և Յովհաննու Մկրտչին, սրբոյն Ստեփանոսի, և ամենայն սրբոց եղիցի յիշատակ՝ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Ողորմեա՛ տէր. Յիշեա տէր և ողորմեա.

Արկաւագն գայ այժմ յաջակողմ սեղանոյն զգեմանն ուղղեալ՝ի պատարագն, և զձեռանն տարածեալ ասէ զայս բարձր բարբառով՝ի լուր ժողովրդեան.

Ընաքելոց սրբոց, մարգարէից, մարտիրոսաց և ամենայն սրբոց Հայրապետաց, երիցանց, ուղղափառ սարկաւագաց և ամենայն սրբոց:

Ողորմեա՛ տէր. Յիշեա տէր և ողորմեա:

Արկաւագն. Սուրբ և աստուածահաճոյ Հայրապետ, վկայ, կուս. Ձգն. (այսք անուանն) զորոյ զվարշատակն կատարեցաք այսօր եղիցի յիշ:

Ընաջնորդաց մերոց և առաջին լուսաւորչացն սրբոց, Թադէոսի առաքելոյ, Գրիգորի լուսաւորչի, Ընտակսի, Ս ըԹանիսի, Յուսկանն, Գրիգորիսի, Ներսիսի, Սահակայ և Մեսրոպայ հովուաց և հովուապետաց հայաստանեայց եղիցի յիշատակ՝ի սուրբ պատարագս:

Մխանճնացելոց սրբոց, առաքինասէր կրօնաւորաց, Ընտանի, Մակարայ, Մեսրովբայ և Գրիգորի, և ամենայն սրբոց հարց և աշակերտելոց նոցին որք ընդ տիեզերս, եղիցի յիշ:

Ամապատրաց հաւատացելոց սրբոց Կոստանդիանոսի, Տրդատայ, Ամէոդոսիոյ, և ամենայն սրբոց Թագաւորաց և իշխանաց եղիցի յիշ։

Ընդհանուր ամենայն հաւատացելոց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, և ամենայն հաւատով՝ի Քրիստոս կատարելոց եղիցի յիշ։

Ա՛ստ խունկ արկանէ շուրջ զսեղանոյն. և քահանայն սկսանի զաղօթսն, Յիշեա տէր և ողորմեա և օրհնեա։ Նոյն նախաստարկաւագն յետ խնկարկութեանն գայ՝ի նոյն յաջակողմն սեղանոյն. դարձեալ կանգնի նոյնպէս, և յաւելու ասել զայս.

Եւ ևս գոհութիւն և փառաբանութիւն մատուսցուք տեառն Աստուծոյ մերոյ վասն սուրբ և անմահ պատարագիս որ՝ի վերայ սրբոյ սեղանոյս. զի զսա մեզ՝ի սրբութիւն կենդանութեան պարգևեաց։ Նովաւ ընդհեսցես զսէր զհաստատութիւն և զղձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի, սրբոյ եկեղեցւոյ և ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց. եպիսկոպոսապետին մերոյ, և եպիսկոպոսիս մերոյ, և քահանայիս որ զպատարագս մատուցանէ, եղիցի յիշ։

Եւ վասն փրկութեան և զօրութեան Թագաւորաց քրիստոնէից և իշխանին մերոյ։ Աստուած եղբարց մերոց գերելոց, և ընդհ առաջնիկայ ժողովրդեանս. հանդիպիստ հաւատով՝ի Քրիստոս ննջեցելոցն։

Ողղե-ւդ։ Որ ամենայնի, և յաղագս ամենեցուն։

Քահանայն, ինչգեռ սարկաւագն զայս ասէ, զաղօթան կատարէ խորհրդիւ. Յիշեա տէր և ողորմեա, և օրհնեա զսուրբ կաթողիկէ առաքելական եկեղեցի քո՝ զոր փրկեցեր պատուական մարմնով և արեամբ միածնի քո, և ազատեցեր իսաչիւն սրբով. ընդհեա սմա զանշարժ զխաղաղութիւն։ Յիշեա տէր և ողորմեա, և օրհնեա զամ ուղղափառ եպիսկոպոսունս՝ որք ուղիղ վարդապետութիւնք հաստատեն՝ի մեզ զբանն ճշմարտութե։ Նաև առաւել զեպիսկոպոսապետն մեր (կոչս անուն) ընդհեալ մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութիւնք։

Ողղե-ւդ. Ամէն։

Յիշեա տէր և ողորմեա, և օրհնեա զքո առաջի կացեալ ժողովուրդս, և զպատարագիս մատուցողքս, և

պարգևեա խրատաբանչիւրոյ սոցա զպիտոյս և զօգտակարս։ Յիշեա տէր և ողորմեա, և օրհնեա զուխտաւորս, և զպտղաբերիչս եկեղեցւոյ քումմ սրբոյ՝ որք յիշեն զաղքատս ողորմածութեամբ. և հատո՛ սոցա ըստ պարտս նոցա ըստ ընդարձոյս առատութեան քումմ հարբուխապատիկ աստ և՛ ի հանդերձելումդ։

Յիշեա տէր և ողորմեա և գթա՛ ի հոգիս հանգուցելոցն. դասաւորեա զնոսա այցելութեամբ՛ ի լոյս երեսաց քոյ ընդ սուրբս քո, և արժանաւորեա ողորմութեան քո։

Յիշեա տէր և զայնոսիկ՝ որք յանձնեցին մեզ զինքեանս յիշատակել յաղօթս զկենդանիս և զհանգուցեալս, և կատարեա զկամս հայցմանց նոցա և զմերս ընդ ուղղորդն և որ լինի ե փրկութեամբ, և վարձատրեա բոլորեցունց զանանց և զերանելի զբարութիւնդ. և զտեալ զխորհուրդս մեր տաձարացո ընդունելութեամբ մարմնոյ և արեան միածնի քո տեառն մերոյ և փրկչի Յիսուսի Քրիստոսի, ընդ որում քեզ Հօր միանգամայն և Հոգւոյդ սրբոյ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ։

Հաղորդ. Ամէն։

Քահանայ. Լո եղիցի ողորմութիւն մեծին Աստուծոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ ամենեսեան։

Հաղորդ. Լո Հոգւոյդ քումմ։

Սարկաւագն առ դուրս խորանին յետ այսր քարոզէ. և քահանայն ասէ զաղօթսն. Աստուած Հնմարտութե, ծածուկ զոյգ ընդ քարոզելոյն, որպէս զի՛ ի միասին առատեսցի։

Լո ևս խաղաղութեան զտէր աղա։

Հաղորդ. Տէր ողորմեա։

Ամենայն սրբովքս զորս յիշատակեցաք, ևս առաւել զտէր աղա։

Ման մատուցեալ սուրբ և պատուական պատարագիս տեառն Աստուծոյ մերոյ զտէր աղա։

Որ զի տէր Աստուած մեր որ ընկալաւ զսա՛ ի սուրբ և յերկնայինն և յիմանալի իւր մատուցարանն, փոխանակ առ մեզ առաքեսցէ զշնորհս և զպարգեւս Հոգւոյն սրբոյ զտէր աղա։

Լո ևս միա։ Ողջանձինս։ Ողորմ։

Վ. Քահանայն տարածեալ զձեռս, և ասէ՝ ի ծածուկ ընդ բարոզին. Ի՛ստուած Հնմարտութե՛ն, և Հայր ողորմութեան, գոհանամք զքէն որ՝ ի վեր քան զերանելի նահապետացն զմեր պարտաւորելոցս առաւել մեծարեցեր զընութիւնս. վասն զի նոցա Ի՛ստուած կոչեցար, իսկ մեզ Հայր Հաճեցար անուանիլ զթալով։ Ա՛յժմ տէր աղաչեմք զքեզ, զայսպիսի առ՝ ի քէն պատուական և վնտրոգ անուանադրութեանս Հնորհ օր ըստ օրէ պայծառացեալ ծաղկեցո՝ ի մէջ եկեղեցւոյ քո։

Ա՛յս տուր մեզ Համարձակաձայն բարբառով բանալ զբերանս մեր, երգել և ասել։

Ժողովուրդն. տարածեալ զձեռան երգէն բարձր. և քահանայն՝ ի ծածուկ։

Հայր մեր որ յերկինսդ ես, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի. զՀաց մեր Հանապազորդ տուր մեզ այսօր. Թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք Թողումք մերոց պարտապանաց. և մի տանիր զմեզ՝ ի փորձութիւն, այլ փրկեա՝ ի չարէ։

Ի յոյն. Օ՛ի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք այժմ։

Վ. Խաղաղութիւն ամենեցուն։

Ժողովուրդն. Ա՛ւ Հոգւոյդ քումն։

Սարկաւագն. Ի՛ստուծոյ երկրպագեսցուք։

Ժողովուրդն. Ի՛ռաջի քո տէր։

Վ. Քահանայն խոնարհի և ասէ. և ամենայն ժողովուրդն խոնարհի. Ո՛ր աղբիւրդ ես կենաց և բղխումն ողորմութեան, Հոգիդ սուրբ, ողորմեա ժողովրդեանս որ խոնարհեալ երկիրպագանեն առաջի ա՛ռատոր առատածութեանդ քո. պահպանեա զսոսա ամբողջս, տըպաւորեա յոգւոջ սոցա զձև մարմնոյ ցուցակի առ՝ ի ժառանգութիւն և՝ ի վիճակ Հանդերձելոցդ փառաց,

Վ. Ընդ հաստատս Ի՛նուսիս տերամբ մերով ընդ որում քեզ Հոգւոյդ սրբոյ և Հօր ամենակալի փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս։

Ա՛յս սարկաւագն բարձր բարբառով ասէ յետ այսր. Պատսխումն։

Վ. Քահանայն վերացուցանէ զընծայսն երկոքին ձեռօքն առաւել քան զգլուխ իւր և ասէ.

Աբրահամեան սրբոց ։

Յաղագս միաձայն աղաղակեն . Ի քայն սուրբ , միայն տէր Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր , ամէն ։

Ի Հանանայն ունելով զնոյն ի ձեռան ասէ բարձր ի լուր ժողովրդեան . Ողորմեալ Հայր որ Աչմարիտ Աստուած , Յաղթողդ . Ամէն ։

Ողորմեալ Որդիդ սուրբ Աչմարիտ Աստուած , Յաղթողդ . Ամէն ։

Ողորմեալ Հոգիդ սուրբ Աչմարիտ Աստուած , Յաղթողդ . Ամէն ։

Ողորմութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ ։

Ի Հանանայն դարձեալ խոնարհի , և աղօթէ խոր- հրդաբար . Այսպէս տէր մեր Յիսուս Քրիստոս յերկ- նից ի սրբութենէ քումմէ և յանթառոյ փառաց թագա- ւորութեան քո . եկ ի սրբել և ի կեցուցանել զմեզ որ ընդ Հօր նստիս , և աստ պատարագիս Աստուած ա- րա տալ մեզ յանապատ մարմնոյս քո և ի պատուական , արեանդ և ի ձեռն մեր ամենայն ժողովրդեան ։

Եւ զայս ասացեալ երկրպագէ , և համբուրէ զսե- ղանն . և յարուցեալ ձգէ զձեռն ի սուրբ մարմինն , և առեալ զնոյն ողջ Թանայ յանապական արիւնն ։ Եւ ա- պա բարձրացուցանէ ամենեւին ժողովրդեանն , և ասէ առ նոսա բարձր .

Ի սուրբ ի սուրբ պատուական մարմնոյ և յարե- նէ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի Աստուածոյ մերոյ , սաղմոս ասացէք Աստուածոյ մերոյ , սաղմոս ասացէք երկնաւոր Թագաւորիս մերոյ անմահի , որ նստի ի կառս քերովբէականս ։

Սկիզբ սաղմոսի . Սաղմոս ասացէք տեառն Աստուածոյ մերոյ դպիրք ձայնիւ քաղցրութեամբ զերգս հոգևորս . զի նման իսկ վայելէն սաղմոք , օրհնութիւնք , ակնածութեամբ , հանդերձ երգով սաղմոս ասացէք , և զտէր յերկինս օրհնեցէք ։

Յա սկսանին եկեղեցին եղանակել. Վրիստոս պատարագեալ բաշխի։ Խակ քահանայն, մինչ նոքա յերգն էին՝ առնու զմարմինն ի ձեռն, և համբուրէ արտասուօք զայս ասելով.

Խոստովանիմ և հաւատամ, զի դու ես Որդի Աստուծոյ որ բարձեր զմեզս աշխարհի։ Յա բեկեալ արկանէ ի բաժակն արեան ասելով. Լուսին Հոգւոյն սրբոյ։

Այսպա խնդրէ ի Տիմարիան Աստուծոյ զպէսպէս հայցուածս անձին և ժողովրդեանն՝ որչափ և կամի տալով յերկայնութիւն երջեցողացն։ Ետ այսր առեալ Ձաշակէ ասելով.

Մարմին պատուական եղիցի մեզ ի կեանս. և սուրբ արիւն քո ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց։

Ընու և ի բաժակէ արեանն Ձաշակ մի. և մինչ նա յայս է, դպիրքն պաշտեն։ Հաղորդեցուցանէ եպիսկոպոսն զնոր ձեռնադրեալն, ոչ ի բերանն՝ այլ յաճին տալով զարբութիւն. նոյն և զայլ քահանայսն։

Վրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում, ալէլուիա։ Մարմին իւր տայ մեզ կերակուր, ալէլուիա։ Յա սուրբ զարիւն իւր ցօղեաց ի մեզ, ալէլուիա։ Մատիք առ տէր և առէք զլոյս, ալէլուիա։

Զայս Ձմարիտ և Ձառագայթ Հօր, Ծագումն և Կնիք, բան և Ծնունդ, որ կանգնեցեր յեօթեանց սեանց զեկեղեցի սուրբ, ածեալ ի սպանդ զերն պարարակ։ Ընդունէա մեզ կերակրիլ յիմաստութեան քում սեղանոյս. Աղաչեմք։

Ձաշակեցէք և տեսէք, զի քաղցր է տէր. ալէլ։

Հայց կենաց և անմահութեան Ձաշակ, սուրբ և անՁառ սոսկալի խորհուրդ, որ ի յերկինից իջեր կենդանութիւն մարդկան, կենդանի և կենդանարար. պարգեւեա քաղցրացս զքաղցրութիւնէ քում Ձաշակումն. Աղաչեմք։

Ընդունեցէք զտէր յերկինս, ալէլուիա։

Ծուռն երկնից և Ձանապարհ արքայութեան, տէր երկնի, յերկնայնոյն օրհնեալ դասուց, որ զմարմին քո և զարիւն բաշխեցեր առաքելոցն. մնքրեա զմեզ հաղորդիլ սրբութեան քում խորհրդոյս. Աղաչեմք։

Ընդունեցէք զնա ի բարձունս. ալէլուիա։

Յան Հօր և քահանայապետ սուրբ, յանանցինոց

գովեալ՝ի բարձունս. որ՝ի վերայ խաչին պատարագեալ մաքրեալ հեղեր զարիւնդ՝ի փրկութիւն. սրբեա զմեզս մեր կենարար և փրկական քաւիչ քո արեամբդ. Ո-ղորմեա։

Երկնեցէք զնա հրեշտակք նորա, ալէլուիա։

Եմ հոգևոր և գլուխ անկեան օծեալ, բարեբա-նեալ՝ի հրեշտակաց. որ՝ի խաչին բացեր զկողահոս աղբիւրդ, զանմահութիւն յօղեալ տիեզերաց. արբո մեզ ծարաւեացս զբաժակ քո փրկութեան. Ողորմեա։

Երկնեցէք զնա ամենայն զօրութիւնք նորա, ալէ-լուիա։

Կառն Աստուծոյ զենեալ միշտ և կենդանի, անմեղ եկեալ՝ի պատարագ, որ՝ի հաշտութիւն Հօր պատա-րագեալ բառնաս զմեզս աշխարհի, յանմահից զօրաց փառաւորեալ. յիշեա զհոգիս հաւատով՝ի քեզ ննջե-ցելոց մերոց. Ողորմեա։

Այս երգս ոչ եթէ հարկաւոր յամենայն աւուր պարտ է ասել՝ի լման, այլ ըստ պատշաճին. գիտել պարտ է զժամանակն, և զկամս քահանային՝ որչափ կա-մի՝ի ձայակելն զսոյն յերկարել։ Լաւ զօրհնեալդ ա-սել պարտ է, և զորս զկնի նոցին մի տուն կամ երկու կամ երեք, որչափ ժամանակն խնդրէ։

Այլա սարկաւագն առնու զբաժակն նուիրեալն, և դառնայ՝ի ժողովուրդն ասելով.

Յրկեղիւ և հաւատով յառաջ մատիք։

Պահանջեայն որ զկնի գայ՝ կնքէ զնոսա ասելով. Կեցո տէր զժողովուրդս քո, և օրհնեա զժառանգութիւնս քո, հովուեա և բարձրացո յայսմ հետէ մինչև յաւիտեան։

Ժողովուրդն համբարձեալ զձեռս միաբան ասէն. Երկնեալ եկեալ անուամբ տեառն. Աստուած մեր երևեցաւ մեզ։

Ա՛ հաղորդին արժանաւորքն։ Յետ հաղորդութե-երգեն.

Ցաք՝ի բարութեանց քոց տէր, ձաշակելով զմար-մին քո և զարիւն. փառք՝ի բարձունս կերակրողիդ ըզ-մեզ։ Որ հանապազ կերակրես զմեզ, առաքեա՝ի մեզ զհոգևոր քո օրհնութիւն, փառք՝ի բար։

Ա՛ լուանայ քահանայն ձեռս. սարկաւագն՝ մինչ նո-քա պաշտեն՝ խոնարհ արկանէ շուրջ զսեղանովքն. Ա՛

առեալ զսպասն տանի ՚ի սարկաւագատունն. և թէ եպիսկոպոս՝ ՚ի սոյն ժամ դարձեալ զգենու զեմիփորոնն, և քարոզէ սարկաւագն արտաքոյ, և նա ասէ զաղօթս Վահանանաց։

Յե և սա խաղաղութեան զտէր աղաչեսցուք։

Յե և հաւատով ընկալեալք յաստուածայինն սուրբ յանմահ խորհրդոյս, զտեառնէ գոհացարուք։

Վահանայն ընդ նմին ասէ ցած. Վահանանաց զքէն տէր, որ զայսպիսի Ճաշակումն բարութեան ընդրկեցեր մեզ ՚ի փրկութիւն կենդանութեան. սովիմբ պահեա զմեզ սուրբս և անարատս, բնակեալ զմեօք քո աստուածայինն խնամովդ, հովուել զմեզ, և հանգուցանել յանդաստանի կամաց քոց սրբոց և բարեսիրաց, որով ամենայնիւ յամենայն բանասարկուին ընդդիմութեանց՝ քում՝ ևեթ եղիցուք արժանի լսել ձայնի, և քեզ միայնոյ քաջայաղթ և Ճշմարիտ հովուիդ հետևեալ, և առ ՚ի քէն ընդունել զպատրաստեալ տեղի արքայութեան քո, Յստուած մեր և տէր մեր և փրկիչ Յիսուս Վրիստոս որ ես օրհնեալ ընդ Հօր և սուրբ Հոգւոյդ, այժմ և։

Խաղաղութիւն ամենեցուն։

Ամէն. Յստուծոյ երկրպագեսցուք։

Ընդունին անհաս երրեակ ինքնութեդ, հաստիչ, անբաժին և անքակ տէրութեանդ սրբոյ Յերրորդութեդ, և միանականաստուածութեանդ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ։

Յե երկրպագեալ համբուրէ զսեղանն, և ՚ի ձեռն ՚ի մէջ եկեղեցւոյն, ասէ զաղօթս բարձրաձայն.

Որ օրհնես զայնոսիկ՝ որ օրհնեն զքեզ տէր, և սուրբ առնես զյուսացեալս ՚ի քեզ. կեցո տէր զժողովուրդս քո, և օրհնեա զժառանգութիւնս, զլուսն եկեղեցւոյ քո պահեա, սուրբ արա զնոսա՝ ոչ ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քո, և մի թողուր զյուսացեալսն ՚ի քեզ։ Խաղաղութի պարգևեա ամենայն աշխարհի, եկեղեցւոյ, քահանայից, թագաւորաց քրիստոնէից, և զինուորեալ մանկանց նոցին[1]. զի ամենայն տուրք և բարիք, և ամենայն պարգևք կատարեալք ՚ի

1 Ի լուսանցան խրէաց։

վերուստ են իջեալ առ ՚ի քէն՝ որ ես հայր լուսոյ, և քեզ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ։

Ղազարոս ասէն միաբան. Աղեցի անուն տեառն օրհնեալ յայսմհետէ մինչև յաւիտեան։ Աղեցի անուն տեառն։ Աղեցի անուն տեառն։ Ալէլս ասէն։

Ցահանայն գառնայ ՚ի վերայ նոցա, և ասէ. Ա-տաւմն օրինաց և մարգարէից դու ես Քրիստոս փըր-կիչ մեր՝ որ լցուցեր զամենայն հայրական անօրէնու-թիւնս քո. լցո զմեզ Հոգւովդ քով սրբով։

Ղազարոս. Ամէն։

Ի սկանելն. Որ հնեցիլ զտեր յամենայն ժամ։

Ա-ւ կիսասարկաւագն նշխար բերէ առաջի քահա-նային, և նա օրհնեալ բաշխէ ամենեցուն՝ մինչև ասէն զսաղմոսն Որ հնեցիլ զտեր յամենայն։ Ի տէր պար-ծեսցի։ Լեծ արարէք զտեր։ Ընդրեցի ՚ի տեառնէ։ Ա-ատիք առ տեր։ Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Ցահանայն կնքեալ արձակէ զժողովուրդն ասելով. Որ հնեալ եղերուք ՚ի հնարհայ սուրբ Հոգւոյն, եր-թայք խաղաղութիւ, և տէր եղիցի ընդ ամենեսեան։

Ղազարոս. Ամէն։

ԽՐԱՏ ԵՒ ՈՒՍՄԱՆ

ՎԵՐՈՑ ԳՐԵԱՒ ԳՈՐԾՈՑՍ

ԲԱՐԵՁԵՒ ՍՊԱՍՈՒ ։

Վասն զի բազում եղեալ բանս հրահանգումն գործ սարկաւագացն առեալ, և առ մեօք այս կարգ բնաջինջ է յեկեղեցւոյ, ոչ է պարտ սակս այսր թերումն և զայլ բարեձեւութիւնս լուծանել. այլ ուր չէ՛ի մէջ սարկաւագ, քահանայ հանապատիս իւր քահանային որ ունի զգործ պատարագելոյն՝ արասցէ պաշտօն՝ լցեալ զթերութիւն սարկաւագին. և չէ անձահ. զի թէ տէր մեր ոչ եկն պաշտօն առնուլ այլ պաշտել, և էր՛ի միջի մերում որպէս սպասաւոր, մեր նորա խորհրդոյն պաշտօն սարկաւագութեան տանել՝ նմին է համանմանութիւն։ Այս զայս պարէս. քահանայ որ որիշ կամի զպատարագն առնել, մի զատցի՛ի խաւարային ամբոխէն, այլ մնասցէ՛ի մեծ եկեղեցին, և աւագերիցուն պաշտօն արասցէ, և ընդ նմին հաղորդեսցի։ Այդ պատասխանի՝ զինչ ասաց ընդ կցորդակից եղբայրն, և զինչ առանձինն. Թողի այսմ առաւելութիւն մաքուր մտաց գիտելի։ Այդ թէ և ոչ կէս սարկաւագ է՝ որ՛ի քահանայիցն, զի այս է առաջի այսօր, զնորին գործ ապասցէ. որիշ և մի ամենեքեան խառնակեացեն զգործ աստիճանին զալելոյն և զառաքեալն. այլ որպէս և գրեալ է՝ միայն միոյն։ Այս և զայս պարտ է գիտել՝ թէ չունիմք հրաման և իշխանութիւն յԱստուծոյ յայսմանիկ գործառնութիւնս ծածուկ գլխով կամ կնկղով մերձենալ. և թէ առնեմք, դատիմք որպէս զառաքելական օրինացն անհաւատս և քակտիչս. և լինիմք Աբրահամի ամնէծոյցիչ, և զնա մեզ ամբի հատուցանել, որպէս եղոյց Պօղոս։ Այլ ամենայն հաստատութեամբ նախ քան

1 Յորինակս ինչ Աղաւաւրութեան։

զգգենուլ զքահանայական զգեստ՝ զկնկուղն ՚ի բայ պարտ է ձգել և զգտակն, և մերկ գլխով զամենայն պաշտամունսն կատարել, զընթեռնուլն առաքեալ և աւետարան, զասելն ալէլու, զաղօթելն [1], և միանգամայն ասեմ, զինչ գործ է որ դու իշխանութի՚ առեր առնել զինքն յեկեղեցի, և աշխարհականն ոչ իշխէ, և ոչ կրօնաւոր սոսկ, թէ դու զինքն ծածկեալ գլխով կատարես, զՔրիստոս նախատեցեր և հայհոյեցեր. և թէ քեզ նախատինք և ամօթ համարեցար զբանալ գլխոյդ, զքո գլուխն զՔրիստոս համարեցար քեզ ամօթ. և թէ դանդաղեցար և հեղգացար բանալ զգլուխդ ՚ի ցրտոյ կամ ՚ի խորշակէ, և վասն այսր չդանդաղեցար ՚ի պաշտամանէն համարձակիլ ՚ի նա, ՚ի պիղծ ձեռաց է քո նուիրագործութիւնն։ Այս եթէ զայս օրէնս՝ որ ՚ի Քրիստոսէ Պօղոսիւ եղաւ՝ երբեք զնեմք և զայնչ անպոռնեմք, և ոչ կատարեմք, անէծք տեառն եկեսցէ ՚ի վերայ մեր, ասացեալն, "Նիզծեալ որ ոչ կայցէ յամենայն ՚ի գրեալս ՚ի գիրս օրինացս այսոցիկ՝ առնել զամենայն,,. և եթէ որ զայս բարեկարգութիւնս [2] երբեք զփոքր յանձն կամ յայլս լուծանէ, փոքր կոչեսցի յարքայութեան երկնից. որպէս ասացն [3] որ եղն. ինձ թուի՝ թէ վասն այսր անպոռնեալ է օրէնս, որ նեմք է և դիւրատար [4]։ Ի՚վ անբանութեանս. զգտակդ ՚ի գլխոյդ հեշտ է առնուլ՝ թէ բան մի հանել ընդ քեզ բանդ և զՔրիստոս Յաստուած ասել. բանն է հեշտ, և թէ չասէիր զայս բանս, պղծան մեզաւ [5], Ի՚րդ ծանիր, զի հեթանոսացդ առաքեալն Պօղոս որ զայդ հաւատ սահմանեաց մեզ հեշտ, և զայս օրէնս հեշտս. եթէ ՚ի ծանր օրէնսն մեզանչեմք, ներելի եմք վասն մարմնոյս տկարութեան. իսկ յորժամ յայս մեզանչեմք՝ ոչ տկարութիւնն ստիպեաց, զի զինչ տկարութիւն բանալ զգլուխ, այլ արհամարհութիւն օրինացն. և եմք ՚ի յանցանելն այնուհետև [6] անսներելիք. զի չիք տկարութիւն մարմնոյ, որ մեզ զնոյն ներելի առնէ, Ի՚րդ զարթուցեալ ծանեռուք զոլբանութիւն մեզացդ, և մի հակա-

1 Մի օրին. յաւելու. Ջդո-ղ-ղեալ։
2 Մի օրին. Բ-ղ-ղ-ղ-ղ-ղ-ղ։
3 Երկք օրին. Ա-ղ-ղ-ղ։
4 Չորք օրին. թէ ինձ է և դիւրատար։
5 Մի օրին. Ա-ղ-ղ-ղ-ղ։

ռակիք ընդդէմ բնութեան օրինացն, և Աքրիտոսի փառացն, և Պօղոսի հրամանացն, և եկեղեցեացն Աստուծոյ սովորութեց. զի մի՛ ի քահանայապետէն և ժողովոյ հարկանիցիք՝ լուեալ, "Նկեր, զիարդ մեզ այսր՝ ոչ ունելով հանդերձ հարսանեաց,,։

ՍՐՒՈՑՆ ԴԻՈՆԵՍԻՈՍԻ ՑԱՂԱԳՈՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԵԱՆ [1] ԵՒ ԴԻՏՈՒՄՆ ՆՈՑԻՒ [2]

Ա՛ՐԴ քանզի որ մերս է քահանայապետութիւն, ոմ սրբազանդ Տիմոթէոս, Աստուծոյ է աւանդեալ, և որք առին զաստիճան պատուոյ յեկեղեցի Աստուծոյ, գործակիցք կարգեցան աստ աստուածայնաբար գործով պաշտաման, ցուցանել պատշաճ համարիմ զսրբոյ խորհրդոյս կատարման գիտութիւն յառաքելական խորհրդոյն և աւանդութեանցն զոր ի նոցանէ ընկալաք։ Ա՛յլ տես, որպէս զի մի արտաքս փայլեցուացես զորս հանդերձեալ բանս ցուցանէ, որք են պատրուակելիք որպէս զսրբութիւն սրբութեանց. այլ երկիւղիւ պահպանեալ, և քո զխորին խորհուրդս տէրունեան իմանալով՝ հոգւով և մտօք պատուեացես, անարատ և անկցորդ պահելով զսա ի յանարժանէն։ Ա՛նզի սրբոյն միայն վայելէ առ սրբութիւնս յայս կցորդութիւն գիտութեն, և յանմաքրիցն պահել զգուշութեամբ. որպէս և ընկալաք զտէրունական խրատն՝ ասացեալ. "Մի տայք զսրբութիւն շանց, և մի արկանէք զմարգարիտան առաջի խոզից,,։

Ա՛րդ զայս սկիզբն արասցուք բանիս՝ ասելով, թէ աստուածութիւնն որ գերագոյն է էութեամբ երկնաւորաց, լինի անձառ սիրովն և ողորմութեամբն և նոցա աստուածանմանութեան և սրբութեան սկիզբն և պատճառ. սակայն երանելեաց և քան զմեզ լաւագունից էութեանց հրեշտակացն յայտնագոյն միանգամայն և իմանալի երևմամբ զլուսաւորութիւն իւր փայլեցուցանէ. իսկ մարդկան՝ որք վիճակեցան Թանձրութեան մարմնոյ և աղցաւոր կրից և այլայլական բարուց, ան-

1 Մի օրին. Կարճառօրեակ։ Ուն կարճ առակրեակ։
2 Մի օրին. Ցաղագս երեցոյ.

կարելի է առ ամենամաքուր մերձ կացուցանել՝ ըզբազմծառութիւնս մեր, բայց միայն առաքինութեաբ և պարկեշտ և անարատ կրօնաւորութեամբ։ Եւ ասն այսորիկ եթէ խորհեացի ոք՝ ի մէնջ առ Աստուած հայել, և ըստ կարողութեան միաւորել ընդ նմա, պարտ է նախ զակն հոգւոյ, այսինքն զմիտս, յաշխարհական իրաց յետս դարձուցանել. և բոլորապէս արտաքս ելանել՝ ի զգայարանացս հաճութենէ, և առ ինքն ժողովել. զի աշխարհական հոգս՝ ի բազում մասունս ցնդէ զինա՝ ախորժակօք և հեշտութեամբ մարմնոյ։ Եւ զդ եթէ միաբն բոլորապէս՝ ի ներքս դառնայ յայցցանէ, և միայնակ առանձնանայ յինքեան մաքրութեամբ, կարէ այնուհետև բուռն հարկանել զտեսութենէ աստուածայինն ձառագայթիցն։ Եւ այս ոչ՝ ի ձեռն զգալեաց աչաց, քանզի ոչ հասանէ յայս մարմնոյս խոնարհութի, այլ մաքրութեամբ մտաց հպատրեալ յամենավայելուչ մաքրութիւնն, և յանձն իւր ստացեալ՝ ինայ անփոփոխելի՝ ի նոյն մաքրութիւն։ Եւ յասիսի մաքրեալն և այսպէս յաշխարհական ցնդմանէ ամփոփեալն՝ ապա կարողանայ՝ ի սուրբ գործ պաշտամանն քահանայական աստիճանաց ելանել. որով մերձենայ յաստուածայինն սպասաւորութէ պաշտօն, նմանութեամբ հրեշտակացն՝ գերագունիցն քան զմեզ էութեանց. հայի սա անձին՝ յարակայ և անփոփոխ սրբութեամբ առ սբանչելի և աստուածայինն լոյսն Քիստոսի, որքան հասանելի է հայել և տեսանել, և գիտութեամբ նորին տեսութեանն լուսաւորել զխորհրդական իւր իմաստութիւն։ Եւ այսպէս կարող լինի կալ՝ ի սարկաւագութեան, և զանմարքուրն՝ ի հեթանոսաց մաքրել վարդապետութեամբն և ուսուցանել. առնուլ զպատիւ լուսատեսակ քահանայութեան՝, և մկրտել և լուսաւորել զսրբեալսն, երանել՝ ի պատիւ քահանայապետութեան և կատարել և աստուածագործել զմկրտեալսն Հոգւոյն պարգեւօք։ Եւ ակ եթէ զինչ է հրեշտակայն և հրեշտակապետացն և պետութեանցն քահանայապետութիւն, գերագու-

1 Մի օրին. Մերկեցուցանել։
2 Մի օրին. Ընթերի։
3 Մի օրին. Լոյս ճշմին։
4 Մի օրին. Առնուլ զլուսատեսակ քահանայութեան դասէ։

նիցն իշխանութեանց, զօրութեանց և տէրութեանց, և կամ համակարգիցն աթոռոցն էութեանց, տէրութիւնից և քերովբէիցն, զորս միշտ հաստ գոլ Աստուծոյ ուսաք լինել, թէպէտ և ոչ արժանապէս՝ սակայն որպէս հասանելի էր, և որքան՝ ի զրոց տեղեկացաք զնոցանէ, կարգաւ պատմեցաք, բայց սակայն այսքան կաբևոր է ասել, որպէս զի նոյն ինքն՝ որ նոցա է երկնաւորացն, և որ այժմ պատմի առ՝ ի մէնջ դասակարգութիւն երկրաւորացս, մի և զնոյն ունի զօրութիւն ըստ ամենայն քահանայական իրողութեան: Այլ քանզի էութիւն աստուածութեանն վեհագոյն գոլով ամենեցուն նոցա, ըստ հպատակութեան դասուցն միջնորդութեան զամենեսեան զնոսա առ ինքն վերացուցանէ, այսպէս և որ մերս է քահանայապետ, որպէս մնոլդկան հասանելի է՝ նախակատարեալ, և համեմատեալ սրբութեանն Աստուծոյ և աստուածացեալ՝ կարող է և ըզնուաստագոյնան առ ինքն բարձրացուցանել վարդապետութեամբն, մկրտութեամբն, կատարողութեամբն և ձեռնադրութեամբն, որպէս զի քահանայք եղեալ՝ հետևեսցին քահանայապետին, և սարկաւագք՝ քահանայիցն, և ժողովուրդն սուրբ՝ նոցա, և երախայքն կոչեցեալք՝ ժողովրդոցն. և աստուածայինն և սուրբ կցորդութեամբ արդարև էին լաւխմաստնոյ և բարւոյ հաղորդ լինել իւրաքանչիւր ումեք ըստ կարողութեէ: Այդ գերագոյն էութեանցն կարգ՝ որոց այժմ յիշումն առաքեալ՝ անհամեմին է, վասն այսորիկ վեհագոյն և իմանալի է քահանայապետութիւնն. իսկ զմեզ տեսանելիք համեմատաբար մեզ զդայական նշանակօք զանազանեալ գասուցն՝ ի միմեանց և որոշեալ. սակայն միաւորակ յաստուածանալն ըստ մերում չափաւորութեան համբառնամք: Կարձեալ զԱստուած և զաստուածայինն առաքինութեանն՝ նոցա անխիթ գոլով յայտնապէս իմանան որպէս արարած է, այլ մեք զգալեօք պատկերովքս առ աստուածայինն տեսութիւնս համբառնամք ըստ կարողութեան՝ Լա և զայս ձանաչել է ձեմարտապէս, զի մի է Աստուած, որում զանազան դասք անմարմնոցն հետևին. բայց հաղորդ լինին ոչ միապէս միոյ և նորին, այլ իւրաքանչիւր որ՝ որպէս և աստուածայինն կարգն բաժանեաց ըստ արժանաւորութեան զսափն:

Եւ զայս մանրամասնաբար յայլում վայրի Ճառեցաք. բայց այժմ զմերս քահանայապետութիւն սկիզբն և էութեան ասել փորձեցայց, զամենայն քահանայապետութեան սկիզբն և կատարումն զՅիսուս կարգալով։ Որդի է քահանայապետութիւն՝ ըստ բարեպաշտ առանդութեանս մերոյ՝ որոց ընդ նովաւ են սահմանեալ բոլորովիմբք հանդիպելոյն միահամուռ պետ և գլուխ և կատարումն։ Եւ սոյն այսորիկ և սոյ և է քահանայապետութիւնս մեր պարունակող ամենայն կարգացն սրբազանից, ընդ ինքեանք ունելով զաստիճան քահանայից և սարկաւագաց, և զդասս ժողովրդոյն և երախայից. և ինքն վեհագոյն գոլով նոցա՝ կատարեալ պատուոյն ունի զհաղորդութիւն. զոր և մնականութիւնն յայտնէ՝ ամենեցուն ունելով նորա կարգաց զպետութիւն, յայտնի նշանակելով մնակադրութիւն անուանս զԱստուածով և զաստուածային սրբոն և կրօնիւք առաքինութեան բնաւից վեհագոյն գոլ, և ամենայն աստուածայնոյ գիտութեանն տեղեակ և ուսուցիչ։ Վասնզի այսպէս գոլով մնքուր և բոլ տեառն կամացն կատարէ զվերակացութիւնն. և Ճանապէ այսորիկ սրբութեան սկիզբն և աղբիւր մի՝ պատճառն ամենայն էից էութիւն բարերար Արարչութեան. յորմէ գոն և բարի գոն է ամենայն էից վասն բարերարութեանն։ Այս աստուածութիւն, որ գերագոյն է քան զամենայն եղականսն, երեք անձնաւորութիւն և մի աստուածութիւն, արդարև մեզ անհասանելի է, սակայն ինքեան գիտելի. որոյ և կամք են բանաւորացս փրկութիւն՝ երկրայնոցս մեր և գերագունիցն էութեանց երկնայնոց։ Եւ այս անկար է լինել յեղականսս, եթէ ոչ աստուածայնոյն սպրեալքն. իսկ աստուածանալն է առ Աստուած միութիւն, որպէս հասանելի է, և նմանութիւն. յաղագս որոյ և մարդկան զանազան օրինօք զգուշութիւն սահմանեցաւ, պատուարիլ նոքօք, և ի ներհակաց մեզացն փախչել. որպէս զի Ճշմարիտ հանձարոյն տեղեկացի, և մնքութեամբ մտաց յաստուածական լուսաւորութիւնն հայեցցի, կերակրելով զինքն ի հոգևոյ Ճաշակայն. և այնպէս կարող լինիցի զաստուածութեանն նմանութիւն ի յանձն բերել ըստ չափոյ մարդկան։ Սակ բնութեամբ աստուածութիւնն, յորմէ ընդհի

աստուածանալ մաքրելոյն, զողորմութիւն իւր և զբա-
րերարութիւն նախ՝ի փրկութիւն և յաստուածանալն
բանականացն և իմանալեացն էութեանցն պարգևեաց,
ոլոց բարեկարգապէս յաստուածութենէն կատարումն
անմարմին և իմանալի է. քանզի ոչ արտաքուստ շար-
ժէ զնոսա Աստուած՝ի յաստուածայինան, այլ իմացո-
զայն ինքն իմացումն եղեալ՝ի ներքուստ լուսաւորէ ըզ-
նոսա և մաքրէ աննիւթ մաքրութեամբ։ Այլ մեզ
ըստ նոցա նմանութեան՝ ծածկապէս է պարգևեալն.
այսինքն աստուածաւանդ օրինօք, յորոց սահմանեալ
պատշաճեցաւ զանազան կարգ եկեղեցւոյ նիւթական
նշանակօք ըստ մերոյ հասողութեան։ Այս զայս աւան-
դութիւն Ճշմարիտ կարգաւորութեանս՝ որքան ինչ կա-
տարեմք, յաստուածայնոց հարցն մերոց գրով և ա-
ռանց գրոյ հաստատեցաւ՝ի մեզ։ Վանզի նոքա երա-
նելի հարքն անմարմնապէս մաքրութեամբ՝ի յերկրի
հոսպ գոլով հրեշտակաց՝ կարող եղեն զերկնայնոցն կար-
գաւորութիւն մաքուր մտօք Ճանաչել, և՝ի ձեռն միջ-
նորդութեան բանի և գրոյ աշակերտաց իւրեանց աւան-
դել։ Այս զի անկար էր մարմնաւորացս և յաչխարհի վի-
Ճակելոցս զվերնականացն գիտութիւն՝ նոցա նման որք
վարուք հպեցան՝ի հրեշտակս իմացականապէս՝ ուսա-
նել, կարևոր համարեցան մարմնաւոր նշանակօք մեզ
զնոյն տալ. քանզի ոչ ամենայն որ կարող է, և ոչ ամե-
նեցուն Ճշմարիտն գիտութիւն, որպէս ասացաւ։ Այս
վայելչապէս դասք սուրբ առաքելոյն՝ որք եղեն սկիզբն
մերոյս քահանայութեան՝ նախ անձամբ զնորին Տե-
ղւոյն սրբոյ ընկալան, և յետ այնորիկ առաքեցան ընդ
աշխարհս յառաջ ածել զմարգիկ՝ի հաւատս, և զնոյն
Տոգի ընձեռել նոցա. որք և աննախանձ սիրով հա-
Ճեալք ընդ քարոզութիւն՝ աշակերտեցոյն հաւատովք
ուսուցին Ճանաչել զգալեօք պատկերովք զերկնայինան,
և բազմազանութեամբ զծածուկն, և նիւթովք զան-
նիւթն, և մերովքս զգերագոյնն։ Այս զայս գրով և
առանց գրոյ ետուն մեզ, խորհրդազգածս արարեալ
զհաւատացեալս սրբոյ օրինադրութեանն՝. ոչ վասն զե-
կեղեցի՝ի հեթանոսական սովորութենէն որոշելոյ միայն,

1 Մի օրին. Բև-ՒՒ-ԱՆ։
2 Յօրինակս ինչ. Հ-ԱՒՒ-ՒՒ։
3 Մի օրին. Աւ-ու Եւ-ՒՒ-ՒՒՆ։

զոր և ոչ խորհել ամենևին պարտ է, այլ որպէս յա-
ռաջագոյն ասացի՝ մեր համեմատ զդայական իրօք սահ-
մանել զաւանդութիւն կարգաց եկեղեցւոյ երկնայնոցն
նմանութիւն։ Վասնզի կարօտացաք այսպիսեաքս յիմա-
նալի աստուածայինն կոյս համբառնալ։ Այլ թէ ոչք են
օրինակք, կամ յորոց նմանութիւն սահմանեցաւ, յա-
ռաջակայ բանիւս հանդերձեալ եմք ցուցանել. թէ որ-
պէս աստուածայինն աւանդութեան օրինադիրքն՝ ան-
մարմին դասուց հրեշտակաց հաստատուն կայուք, և նո-
ցա անչափ կարգօք, և իւրաքանչիւր աստիճանաց զա-
նազանութեամբ կարգեցին զպաշտօն եկեղեցականաց,
յաղագակցութիւն իմանալեացն վերացուցեալ զմարմնա-
ւորացս նմանակերպութիւն։ Վասն որոյ և քոյդ սրբա-
զան արժանաւորութեան հաւանեալ, քանզի պարտ է
վերատին յիշել զդմա, որպէս զի ամենագերագոյն աւան-
դութեանս ոչ հաղորդեցուացես զոր յանմաքրիցն և
յանարժանիցն, բայց միայն զՀամակարգս քո քահա-
նայապետս. մանաւանդ թէ և զնոսա հաւանեցուացես՝
նախ ըստ առաքելական օրինադրութեանն խոստովա-
նել հաւատ, և յետ այնր մաքրութեան՝ի մաքուրս մեր
ձեռնադ, այսինքն քահանայից հրեշտակացելոց միայն՝
հպել յաստուածագործական օրէնս, և եպիսկոպոսաց
կատարելոց՝ի կատարեալս, և սարկաւագաց սրբոց
յամենայն սուրբս, ըստ քեզ մաքրութեամբ այսպի-
սի աստուածային պարգևիս հաղորդութեան արժանա-
ցեալք։

Վայս ամենայն և այսպէս երանելի հայրս՝ ուսուցանէ մեզ
եկեղեցական կարգաւորութիւն, ոչ վայրապար և պարզ
տեսութիւն կամ արհամարհանաց գործ, այլ յառա-
քելոյն ի քէն աւանդութեան խորհուրդ հրեշտակա-
կան կարգաւորութեանն, և ախորժելի ձեմարտասի-
բացն. զոր կարևոր համարեցաք ըստ կարի խուզողու-
թեամբ և փնտռելով առաքի այնոցիկ որք ինդրեն զի-
մացութիւնն, ժպրհութեի մեծ ունելով անձամբ զանձն
՝ի սոյն շարժել՝ եթէ ոչ յեղբարց բռնադատեալ կաք
հայցուածոց. որոց զՀնազանդելն կարևոր վարկայ և

1 Սուրբն Դիոնէսիոս։

գործել, քան թէ արհամարհութեամբ ի դանդաղութեան մահիճն ննջել։

Աչ պարտ է նախ զայս իմանալ թէ երանելի հայրս՝ որում փոյթ եղև զայս սահման կարգացս քննել, մանաւանդ զմշակութեան զնոյն թագուցանէ։ Աչ որպէս առաջ վերագոյնդ առ Տիմոթէոս, որում աւանդեաց զնոյն պատասպարել, զի մի ամենեցուն լիցի համարձակելի. այսինքն զի խորհուրդք են աստուածայինք, և պարտ է խորհրդածուացն միայն զնորին զօրութիւնն գիտել։ Ա. Յլ քանզի մեք վերջինք՝ վերջին եղաք ժամանակի ծնունդք, պաքեալք և ծարաւիք՝ վարժողական աղբերացն առեալ զպատիւ, և զգործ խորհրդածութեան, և ի զօրութենէ խորհրդոյն զոր գործեմք՝ ապէտք և անհնաստք, կարևոր համարեցայ յօգուտ եղբարց հակառակ շաւղօք առ խորհրդոյս քննութիւն գնալ, և զգանձս իմաստից զոր երանելիքն ի խնդրողաց և ի սիրողաց մանուածով բառից թաքուցին, զի յառաջել երկասիրութիւնն առաւելապէս առ ի նոյն փափաքն աձեսցէ նոցա, ես սպառեցելոցս ի սիրոյ նորին և յուսահատելոցս ի խնդրոյ՝ մերկ և յայտնի բանիւ յուցանեմ, թէրևս գոնեա ակներև տեսեալ ձգիցիմք առ ի փափաք ըղձալոյն. և մի ոք զմեզ այպանեսցէ՝ տեսեալ միայն ի ընչին իրաց լջեալ ի քննութիւն. այլ զպատճառն ուսցի, զի վասն այսորիկ քննեցաք զփոքունս ընդ մեծամեծացն, և խորհրդածեցաք զմանուանն, որպէս զի մի նորին որպէս զչարևանոյն ինչ իրս արհամարհեսցին, և մեք զտցուք պարտական դատաստանի ասողին. "Ամ ոք լուծցէ մի ինչ ի պատուիրանաց յայսցանէ ի փոքունց, և ուսուսցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայութեան երկնից,, ։ Յայտնեմք տիրական հրամանէ սարտուցեալ տարտամ առ ի նորին կատարումն՝ ցանկացայ զչարցն գործակատարսն պահել սովորութիւն. առ որս տեսանեմք, զի կամենակեր ունելով զմանկունս և անկիրթ ձաշակելիս կատարեալ կերակրոց, նախ ինքեանք առնուն զնացիկն և յատամունս մանրեն, և ապա եդեալ ի բերան նոցա՝ առ ի նոյնպիսի կերակրոց ձաշակումն զտղայն դաստիարակեն։ Ա. յսպէս և վարդապետացդ՝ որոց պաշտօն բանին հաւատացաւ ի Ճոգւոյն, հարկաւոր է առնուլ զկատարեալ հոգւոցն կերակուր

գրաւորական վարդապետութեան, և զնոյն յատամնոց խուզողութեան մանրել և դիւրաձաշակելի և ախորժ առնել որոց կարևոր է առ ի նոյն մնունդ և աճումն. զի այնպէս յառաջանալով աւուրցն՝ և ինքեանք զնոյն զօրացին ընդունել: Այսպա Թէ ոչ էր այս հարկ և սէր ընդ աստուածայինն մնանելոյ եղբարց, և փախագ յառաջատելոյ նոցին ի կաթնկեր լինելոյ, որոց կատարեալն է կերակուր, որքան տմարդութիւն էր հասակի և ախտապաշար մնաց և Թերաւարժ աշակերտի՝ առ ի յաստուածային խորհրդոյս ձեռնարկել քննութիւն. կամ զիաՀրդ հաւատալի է անձամբ յանձին զայս գործ վճարել՝ եթէ ոչ զՀոգին Այստուծոյ հաւատացեալք ունել պաշտպան: Կամ զիաՀրդ գործի մեծաբանել կարէ ի գործելն, կռան ի ձուլելն, կամ մանգաղ ի հնձելն, կամ գրիչ ի գրելն, որ յիմաստութէ մարդկան պատշաձեցան առ պէտս գործոյն: Կամ զինչ շահ ինձ յաւետարանելս կամաւ կամ ակամայ, յորժամ անտեսութիւն անօրինութեան յանձն արարեալ ինձ:

ՉԻՆՉ ՑԱՑՑ ԱՒՆԻ ՓԱՀԱՆԱՑԻՑՆ ՀԱՆԴԵՐՁ ՍԱՐԿԱՒԱԳՕՓՆ ՑԱՒԱՆԴԱՏՈՒՆՆ ՊԱՅԾԱՌԱԶԳԵՑԱԻ։

Ա՛ԿԵՂԵՑԻՍ տաճար և տուն Ա՛ստուծոյ է, որպէս գրեաց Պօղոս. "Ա՞չ է տուն տեառն տեղի ձեզ Հայց ուտելոյ ,,. և սոքա իշխանք կարգեցան առաջի Ա՛ստուծոյ ի սոյնա գիւրաբանչիւր գործ կատարել։ Իշխանին անմարթ է յարքունական ապարանն և նորին առաջի [2] զգեստուց փոփոխումն առնել. այլ պարտ է որպէս զի առաջի նորա միայն իշխանականաւն երևեսցի փառօք, և աստ զտէրունին կատարեսցէ պաշտօն գործոյ, և ոչ զանձին. վասն այսորիկ Հանդերձեալք կատարել զգործն Ա՛ստուծոյ, այսինքն զպատարագն սուրբ, յարտաքին գաւիթն զարդարին, և ի տաճարս Ա՛ստուծոյ իւրաքանչիւր պատուոյ կերպարանօք զանազանապէս ներգործեն զայլ և այլ պաշտօն անօրէնութեանէ աստուածային խորհուրդն։ Այլ դու տես ինձ և զայս, զի զգենուն և մնանեն առաջի Ա՛ստուծոյ նոցա է՝ որոյ սիրտն է ուղիղ ընդ նմա. և Հաւատարմութիւն կամաց ծառային առնէ զպաճուճանս նորա ըղձալի արքային. ապա թէ զնեղքին պայծառութիւնն մնաց՝ որոյ ապացոյց է մարմինն՝ ոչ ունի Հաւատար նմին պայծառ և առ Ա՛ստուած բարձրացեալ, կարծեմ՝ յանդգնութիւն մեզ և դատապարտութիւն զարտաքինս. այսպէս և ոչ նեղքին պայծառութիւնն առանց արտաքոյս [3] է կատարեալ՝ի մարմնոյ Հոգիացելոցս։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԻՆ ՈՐ ՆԱԽ ՔԱՆ ԶԳԵՆՈՒԼՆ

"ՅԻՇԵԱ տէր զԻսրաէլ և զամենայն հեզութիւն նորա ,,։ Իսրաէլ անուամբ զորդին Իսրաէլի կոչեաց զՅիսուս, որ Թագաւորեաց՝ի վերայ տան նորա՝ի յաւիտեան, և խնդրեաց՝ի նմանէ զՀեթանոսս՝ի ժա-

1 Մի օրին. Զգենուրդ։
2 Այսինքն առաջի արքայի։
3 Մի օրին. Աչքառնոյս է խօսք։

ռանգութիւն, յորժամ ծնաւ այսօր ըստ մարմնոյ, և հեզ երևեցաւ քան զամենայն որդիս մարդկան. մինչ զի ձայնել բարձրաձայն. "Աստուած լինիցի, զի հեզ եմ և խոնարհ սրտիւ: Ակնկալ առ իս աշխատեալք, և առէք զլուծ իմ քաղցր՝ հանգերուք ...: Ա՛ն նա ամրացաւ եկեղեցի, և այսպիսի քաղցր տեառն անուն կոչեցեալ է՝ ի վերայ մեր. վասն այսորիկ հանդերձեալ խօսել ընդ Աստուած Հայր, և խնդրուածս՝ ի նմանէ առնուլ, ոչ զիւր ինչ յիշէ առաջի նորա բարեգործութիւն, այլ զօծելոյ տեառն իւրոյ Յիսուսի՝ ասելով. յիշեա տէր Աստուած Հայր զՔրիստոս, որ ըստ մարմնոյ Դաւիթ, և տես զանչափ հեզութիւն նորա և զխոնարհութիւնն՝ ի մարդանալն վասն մեր և վասն մերոյ փրկութեան, Ա՛յս այս թէ ծրչափ՝ յաջորդ բանիւս յայտնէ. "Արպէս երդուաւ տեառն և ուխտս եդ Աստուծոյ Յակովբայ ...: Ա՛յս ո՞ր երդուաւ Քրիստոս, Աստուծոյ Հօր, Թերևս ասիցէ ոք: Այդումն մարդկային՝ ի մէջ համեմատ աստուածութեանն ոչ է. բայց այս գործ անօրինութեան իբրու զուխտադրութիւն է Որդւոյ առ Հայրն. ըստ այնմ զոր ասէր, զգործն զոր ետ ինձ Հայր՝ պարտական եմ իբրև զուխտադիր առնել և կատարել:

"Մի ոչ մտից՝ ի յարկս տան իմոյ, թէ ելից յանկողինս մահճաց իմոց, թէ տայ քուն աչաց իմոց կամ նինջ արտեւանաց իմոց, կամ հանգիստ իրանաց իմոց, մինչև գտից զտեղի յարկի տեառն Աստուծոյ Յակովբայ ...: Տուն և յարկ և մահիճք Քրիստոսի էր հայրական ծոյն, իսկ քուն և նինջ էր անտես առնելն ողորմութեամբ զմարդիկ, և հանգիստ էր փառք աստուածութեանն: Ի ծոյոյ և՝ ի տանէ հանգստեանէ երկնից եւ և եկն յաշխարհս. և նա որ նախ նինջէր՝ ի խնամելոյ զստուա, կանխեաց հանապազ վարդապետութեամբն և բժշկութեամբն՝ ի մարմնոյ և՝ ի հոգւոյ նախախնամութիւնն: Այ այնչափ աշխատեցաւ խաչիւ և չարչարանօք, մինչև եգիտ զտեղին և զյարկն՝ ուր Աստուած հանգչէր, այսինքն զՀոգւս և զխոնարհս, և զոր զոցան՝ ի բանից նորա: Որ ծանուցեալ Աստուածքեղէն Պօղոսի ասէր. "Ոտք տաճարի էք Աստուծոյ...: Այ ինքն տէրն յորժամ եգիտ զտեղի բնակութեանն

ասէր , " Այս և Հայր եկեսցուք և օթևանս առ նմա արասցուք ,, : Արդ զայս ամենայն աշխատութիւնս Աբդւային՝ կամաց Հաձութեամբ Հօրն՝ նմին յուշ առնել , և զնորոգ չարի հնազանդութիւն նմին հեզոյն ի գործոյն հրատարակեալ , պատմէ և զեղանակ մեր ընդոյն աստուածային խորհրդոյն ուսուցանելոյ :

" Հայ լուաք զնմանէ Աբրահամայ , և գտաք զնա ի գաւառս Մայրեայ ,, : Այլ եմք ասել իբրև զանմիտ հեթանոս անտիոքն Հայոպիսի աստուածագործակ տնօրինութեանց , այլ լուաք զմարմնով երևումն Աստուծոյ ի վերայ աշխարհի , և ի պետս խաղաղութեան երկնի և երկրի՝ զծնունդն Աբրահամայ Աեթզկեմի . և յորժամ լուաք , Հաւատացաք ի նա բոլորով սրտիւ , և գտաք զնա իսկական էութեամբն՝ ոչ միայն ի ծոց քո , որ է տուն և մնհիձք իւր սեփական , և յաթոռ փառացդ Հայրական , այլ և ի Հարթ ի խոնարհ գաւառս երկրի մարմնով երևեալ ի մէջ մարդկան , և Հաձեալ և բնակեալ ըստ Հոգիս յատակեալս խոնարհութիւնք , և բուսուցանողս ծառոց և սաղարթուց առաքինութեն . զի յորժամ այնպիսի ծառքն յայնպիսի գաւառս անտառանան՝ այն է նորա Հանգիստ Հովանւոյ , և ընդ այնպիսի գերանաքն բազմի՝ որպէս և ասաց առ Հարսնն :

" Ածուք ի յարկս նորա և երկիր պագցուք ի տեղւոջ ուր կայեալ էն ոտք նորա ,, : Յարկս Աբրիատոսի բանս զՀայրական ծնոյն ստուգեաց . արդ որպէս զայն մնրդիկ խնդրեն մնանել , ուր ոչ ոք եմուտ բայց միայն Աբդին , անցեալ ի նեղբէն կողմն վարագուրին : Արդ վասն զի նա եմուտ , վասն այնորիկ և մեք խնդրեմք մնանել . զի Թէ զառհաւատչեայն ոչ ունէաք , անյոյս էաք . բայց որովհետև նա քահանայապետ է մեզ , անդադար եղև և սրբելոցս նովաւ մնանելն Հանարձակելի . և զի այսպէս է , Պօղոս խրախուսէ . " Ածուք , ասէ , առաջի աթոռոյ շնորհայ նորա ,, : Ասկ մնանելն զինչ այլ է , եթէ ոչ խնայական աղօթիւք Հպելն յիմնալին : Այս մնիցս , խնդրեմք Հայր Աստուած , վասն Հեզութեն Աբրիատոսի քո և մերոյ յուսոյ , արժանի արա զմեզ բարձրանալ ի յերկրէ , և մնանելով ի յերկինս՝ կախիլ զսրտից յուսոյդ մերոյ , և Հոգւով Աչնարհաւութեամբ երկիր պագանել ի վե-

բին տեղիդ՝ ուր Հանգեաւ ոտք նորա[1], յետ անքուն աշխատութեանն որ յերկրի։

"Արի տէր՝ի Հանգիստ քո, դու և տապանակ կտակի սրբութեան քո,, ։ Ով թէ որքան էաւ բանս Համար ձակութիւն՝ ապաւինեալ՝ի հեզութիւնն Աբիատառի, զոր մինչև ցայժմ զնորայն առաքինութիւն որ ըստ մարմնոյ վասն իւր Հօրն նուիրէր, իսկ այժմ կախեալ զոտիցն՝ զնոյն ինքն զտէրն յաղուցանէ՝ի տեղին, ուր կայ լինել իւր աղօթակից. արի, ասէ, տէր, այդր՝ի Հայրական աթոռոյդ, ուր Հանգեար, և բարեխօսեա վասն մեր որպէս խոստացար, առնուլ՝ի դմանէ զՀոգին և տալ մեզ. և ոչ դու միայն աստուածութեանդ փառաք, այլ և տապանակաւ մարմնոյդ՝ որ երկրպագեցար Աստուած մի դուռաւ յերկնաւորաց և յերկրաւորաց. քանզի այդ է որ ստիպէ Հանապազ առնուլ մեզ զողորմութիւն. և դուռաւ յանդիման երեսաց Հօրդ քահանայապետեա մեզ։ Ա՛ւ այս թէ ոչ զաղաչեաւ, ինքն յայտնէ ասելով։

"Արիցուք քո զգեցցին զարդարութիւն, և սուրբք քո ցնծալով ցնծասցեն,, ։ Սուրբք են ամենայն դասք քրիստոնէից, և երիցունք առաջնորդք նոցա քահանայքն. արդ վասն այսորիկ, ասէ, յարուցեալ մարմնով քո բարեխօսեա, որպէս զի նախ առաջին առաջնորդք ժողովրդեանս զսրբութիւն և զարդարութիւն և զՀնարս Հոգւոյդ որպէս զպատմուճան արկցուք զանձամբ, և լիցուք այդու Հանդերձակ կալ՝ի մէջ ժողովրդեանն, որք՝ի զանազան մեղաց ըմբռնեանք վարանեալ են տրտմութեամբ. որոց պարտուցն փոխան արժանացեալք զբեզ պատարագել, յամենեսեան՝ի նոսա զցնծութիւն և զուրախութիւն տարածեմք, ծանուցեալ զմինդ փոխան ամենեցուն մեզաց մեռեալ[2]։

"Ա՛ման Աստուած սիրելոյ քո մի դարձուցաներ զերեսս՝ քո յօծելոյ քումմէ,, ։ Ա՛ետ էր խնդրուածն զոր Հայցեաց, արդարութիւն և ցնծութիւն՝ երիցանցն և ժողովրդոյն[3]. վասն այնորիկ դարձեալ զԱրդուցն միջնորդութենէ բուռն Հարկանէ՝ յարուցեալ զնա

1 Ա՛ի տրին. Ուր հանգուցեալ է ոտք նորա։
2 Ա՛ի տրին. կենաց գործել։
3 Ա՛ի տրին. ժողովրդեանն։

առաջի Հօրն . և այս նա , որում ինքն Հայրն վկայեաց . " Դա է , ասէ , որդի իմ սիրելի ,, . արդ վասն սիրելի Աբդեայդ Աբրիատոսի քո օծելոյ , մի զարձուցաներ զերեսս քո յօծակից անդամոց նորին քրիստոնէիցս , առ ի դերև առնել զինդրուածս մեր ։ Աստղի բաւական է սիրելոյդ արդարութեանն յիշատակ զամենեսեան զմեզ զմեղուցեալքս մաքրել ի պարտեաց , և զքեզ յողորմութիւն շարժել ի վերայ մեր . քանզի և զայս ինքն խոստացաւ մեզ , Թէ " Զոր ինչ խնդրիցէք յանուն իմ ի Հօրէ իմմէ , առնուցուք ,, . և զի նա խոստացաւ , յայտ է Թէ զքո կամքդ յայտնեաց , զի որպէս լսէ ի քէն՝ զատի . և ահա դու երդուար ի փառս քո՝ նուաւա զմեզ փրկել . ըստ որում ասէ .

" Երդուաւ տէր Դաւթի Ճշմարտութեամբ և ոչ ստեայ նմա , ի պտղոյ որովայնէ նորա նստուցանել յաթոռ նորա ,, ։ Պատուղ որովայնի Աբրիատոսի են ծնեալքն ի վարդապետութենէ նորա Հաւատովք , ըստ որում ասէր առ առաքեալն , " Որդեակք իմ ,, . արդ Աբրիատոս վասն նոցա և վասն ամենայն Հաւատացելոց բանիւն նոցա աղօթեաց . " Հայր , կամիմ զի ուր եմն իցեմ , և սոքա ընդ իս իցեն ,, ։ Հայրն ապար զկամն նորա . այն իսկ ՝ , զի զնա եդ իշխան ի վերայ երկնաւորացդ և երկրաւորացդ . իսկ նա փոխանակ իւր եդ զդասս առաքելոցն՝ ասելով . " Որպէս առաքեաց զիս Հայր իմ , և ես առաքեմ զձեզ ,, ։ Արդ զայս ի մէջ առնու , որպէս զի ցուցցէ Աստուծոյ՝ Թէ իբր ի պարտականէ խնդրեմք ի քէն զողորմութիւն , որ կարգեցաք յաթոռ Որդւոյ քո յաջորդք առաքելոցն սրբոց ։

" Ով պահեացեն որդիք քո զօրէնս իմ , և զվկայութիւնս իմ զոր ուսուցից նոցա , որդիք նոցա նստցին յաթոռեանս յաւիտենից յաթոռ քո ,, ։ Ովսպէտ և զԱստուած պարտական ողորմութեանց դառեաց բանս , ոչ դանդաղի և զորպէսն օգնականութեան նորին ցուցանել . այսինքն երդուայ իմ միածնին , նստուցանել յաթոռ նորա զմարդիկ , բայց ոչ Թէ վայրապար նրատին ՝ , այլ յարաժամ ընդ Հետս չաւղաց արդարութեան նորա ընթանան . իսկ ապա Թէ ի Հանանման-

1 Մի որն . Ց-ՆԳԻ ։ 2 Մի որն . ՆՈՂԻՒ ։

նուիրէ վերջանան, և յաթոռոյն կորանան, և Աբրիս առ որ հնազանդ եղև Նոր մահու չափ և մահու խաչի՝ առ ի նմանել անուն ի վեր քան զամենայն անուն, և մեզ փրկութեան ընդ, ոչ վայրապար, այլ յորժամ որդիքս վարդապետին՝ որպէս զնա ջանասցուք պահել զօրէնս և զվկայութիւնան Աստուծոյ։ Ով այս կատարի ի մէնջ, միանձնաւորապէս խոստանայ մեզ զփառացն ժառանգութիւն. և ոչ երբէք հետևողքս յետնեալ գտանին յառաքելական պատուոյն՝ նոցին գործոցն հաւասարեալք. այլ միշտ պտուղ վարդապետութեան վերջնոցն նատցին յաթոռ առաջնոցն. Էր վասն. քանզի

“Նաձեցաւ տէր ընդ Աբիմն և ընտրեաց զնակել ի նմա. ասէ. այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից. ի սմա բնակեցայց, զի հաձեցայ ընդ սա,,։ Նաձեցաւ Արդեոյն արեամբն, որ ետ զանձն իւր վասն մեր, և ջնջեաց զձեռագիրս յանցանացս մերոց. յորժամ այն պատառեցաւ մահուամբն Աբրիստոսի, Աստուած Հայր հաձեցաւ ի մարդիկ, ըստ որում գրէ Պօղոս. “Աստ հաձութեան կամաց իւրոց եղև այս ամենայն ի գովեստ փառաց շնորհաց իւրոց,,. զայս ցուցանէ և մարգարէս. նա և ոչ միայն հաձեցաւ ի նոր Աբիմն լեկեղեցի հեթանոսաց, այլ և ընտրեաց զսա յամենայն ազգաց իւր ի բնակութիւն. ըստ որում ասաց տէրն, “Ով Հայր ի յիս և ես ի քեզ, զի և սոքա ի մեզ իցեն,,. և այս ոչ եթէ յայժմու յաւիտենից միայն որ անցաւոր է, այլ բնակէ ի սուրբս իւր ի միանձնաւոր յարութեանն՝ առ ի լինել Աստուած ամենայնիւ յամենայնի։

“Օրդ սորա օրհնելով օրհնեցից, և զաղքատս սորա լցուցից հացիւ,,։ Օրս ի դիմաց Աստուծոյ առնու այսուհետև ասել բանս. դուք ասէ խնդրէք, ով մարդիկ, վասն իմոյ սիրելւոյս չդարձուցանել զերեսս ի ձէնջ, որք անդամք էք սորա. այլ ծանիք՝, զի ես ոչ թէ սորա վասն զայս միայն արարի ձեզ, այլ և զաշխարհք զձեզ աթոռակից սմին արարի, վասն մեծի նուիրացս մահուն զոր փոխան ձեր պատա-

1 Մի օրին. Յովհաննէս։ 2 Մի օրին. Գաւիթ։

բագեաց ինձ կամաւ . յետ այնորիկ և հաճութեամբ ընտրեցի զձեզ ինձ աթոռ լինել քերովբէից հաւատոյ ։ Յաւելի և զոր սորա անուամբ անուանիք , օրհնութեամբն որ ոչ անցանէ՝ հոգևորաւն օրհնել , և զաղբատացեալս ի ձէնջ՝ յիմաստութեան և յարդարութեան հացէն կերակրել ։ Այլ զի այսմ արժանաւորեցաք , տես թէ որպէս շնորհակալ լինի առաքեալ . " Օրհնեալ է Աստուած , ասէ , որ օրհնեաց զմեզ ամենայն հոգևոր օրհնութեամբ յերկնաւորս ի Քրիստոս ,, , զի Քրիստոսիւ և որպէս զնորա օրհնեցաք ի նմանէ ։

" Ահաննայից սորա զգեցուցից զփրկութիւն , և սուրբք սորա ցնծալով ցնծասցեն ,, ։ Տես զանբաւ մարդասիրութեանն չնորհ . զի զոր մեք ի սկզբանն Քրիստոսիւ և վասն նորա ինդրեցաք ի նմանէ , յետ այլ պարգևացն և զայս առատապէս ընձեռէ . քանզի անդ զՔրիստոս տապանակաւ մարմնոյն յարոյց առաջի նմանէն , և կացուցեալ զնա յանդիման՝ ինդրեր ։ վասն նորա ոչ դարձուցանել զերեսս , այլ զգեցուցանել երիցանց զարդարութիւն . իսկ հայրն տեսեալ զնա յաղաչանս վասն իւրոցն՝ ակնարկէ յՈրդին , ասելով . քահանայից սորա՝ որ ինդրեցիք ։ զարդարութի , վասն սորին ոչ միայն զայդ զգեցուցանեմ, այլ պատարագաւն զոր մատուցանէք՝ նախ առաջին զձեզ փրկեմ, և ապա զամենայն ժողով սրբոցդ ի ցնծութիւն արդարութեամբ փոխեմ։

" Ընդ ծագեցից եղջիւր ի Դաւիթ , պատրաստ առարիից զՔրիստ օծելոյ իմոյ ,, ։ Ընդ , ասէ , յայտ է թէ ի Սիոն , ուր հաճեցաւ բնակիլ , ծագեցից եղջիւր ի Դաւիթ . եղջիւրն ուժգնութեան ապացոյց ։ և զէն հարկանող թշնամեաց . ըստ այնմ , " Ահն են եղջիւրքն որ ցրուեցին զՅուդայ և զԻսրայէլ ,, ։ Ընդ անդ ի միջ նոր Սիոնի՝ ուր բնակել հաճեցայ, օրհնեցի և փրկեցի , տաց նոցա և ի նոսա եղջիւր և զօրութիւն ըզմիաճինս իմ Որդի , որով կարողանայք խոցոտել զթշնամիան ։ Այլ զայս ո՞ է որ առնէ , եթէ ոչ մեհ նորին

1 Մի օրին . Խնդրէ ։
2 Մի օրին . Խնդրիցէք ։
3 Մի օրին . Եղէնուր --ջիւնս-- Քէտ է տարօրոյս ։

'ի մէջ մեր և յիշատակ : «Պատրաստ արարից ասէ զՔրիստոս օծելոյ իմոյ ,, . այսինքն զլոյս իմաստութեան և գիտութեան , որ ծագի սովաւ ձեզ միշտ առանց խնայելոյ , պատրաստեմ առաջի նոցա որք կամին տեսանել :

«Անդամեաց նորա զգեցուցից զամենի , այլ 'ի վերայ նորա ծաղկեացի պրկութիւն իմ ,, : [1] և այլ Թըշնամի եկեղեցւոյ Քրիստոսի , և որոց նա է եղջիւր զօրութեան , եթէ ոչ խոտորին իշխան և լուսոյն հակառակ . նորա ասէ ամենի զգեցուցանեմ : Արդարև մեծ ամենի է նորա և պատկառանք տկարութեանն , յորժամ տեսանէ զմարդիկ՝ զորս ինքն մեծաւ ջանիւ գթեցոյց և որտմեցոյց , մահուամբն Քրիստոսի և ողորմութեամբն՝ զարձեալ հաստատեալս և զուարճացեալս , յետ այնորիկ և նովաւ զօրացեալս և լուսաւորեալս , վասն այսորիկ ասէ . Ձեզ զփրկութիւն զգեցուցանելով՝ Թշնամեաց ձերոց ամենի և տրտմութիւն տարածի 'ի վերայ . այլ 'ի վերայ ձեր ոչ միայն այս , այլ և իմ սրբութիւնս ծաղկի , զի աստուածահաճոյսդ լինիցիք՝ յԱրդւոյն Աստուծոյ սեղանոյ վայելեալք , որում փառք յաւիտեանս յաւիտենից . ամէն :

ՉԻՆՉ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆ ՍԱՐԿԱՒԱԳԻՆ ՑԵՏ ԱՅՍՕՐԻԿ

Սարկաւագն յորժամ զայսչափ առաւելութիւնս սիրոյ և խոստմանցն Աստուծոյ ծանեաւ՝ 'ի սաղմոսէն ամենեքեան , ապա հրամանն տայ ամենեցուն . ամ եղբարք , ծանեայք մարգարէիս , Թէ որչափ գթութիւնն Աստուծոյ 'ի ձեռն Քրիստոսի հեղաւ 'ի վերայ մեր . արդ քաջալերեալք այսու յուսով , «Խնդրեսցուք հաւատով և միաբանութեամբ 'ի տեառնէ , զի զողորմութեան զնորհն արասցէ 'ի վերայ մեր՝ տէրն ամենակալ , կեցուսցէ և ողորմեսցի ,, : Այսինքն լուայք , զի խոստացաւ տէրն , եթէ երկու 'ի ձէնջ միաբանեալք , զոր ինչ խնդրեն հաւատով՝ առնուցուն . արդ մեք կը յորդեալք մարմնով՝ ըմեսցուք և զիղձս հոգւոց և զհաւատս կամաց 'ի միաբանութիւն , և խնդրեսցուք 'ի

1 Մի օրին . հմմտ. Ես.

տեառնէ, ընդէ՞ս մեզ՝ զմեծ զողորմութիւն նորա, որ կարող է զառաջարկութիւնս տնօրինել՝ի բարի։ "Ո՛ւ մենակեալ տէր Աստուած մեր, կեաց և ողորմեա.։ Յորժամ ուսոյց նոցա զձանապարհս աղօթիցն իբրև զվերակացու և զդաստիարակ, ապա Աստուած՝ դարձուցանէ զբանն. տէր, ասէ, որ ամենեցուն տիրես, և զամենեսեան նախախնամես, կեաց զմեզ ողորմութ՛ի կոչմանմանէ մեղաց և՛ի սայթաքելոյ խորհրդոց։ Ոչ եղբարցն ծանուցեալ, թէ զայս արժան է խնդրել Աստուծոյ՝ զկեցուցանելն, կցորդին և ինքեանք վարդապետին բանից՝ զնոյն երկրորդեալ ասելով. Կեաց տէր։ Օ՛ի յորժամ դու պարապեալ խնամովք կեցուցանես, չիք ոք որ համարձակի կոչմանել։ "Ողորմեաց մեզ տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութ՛ե քումմ.։ Օ՛այս և որոց ըստ սմա զօրութիւնք, վերադոյն ուսիր դարձեալ՛ի քարոզութեան սարկաւագին։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԲԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԱՂՕԹԻՑՆ

Ո՛Ր ԱՀԱՆԱՑՆ, մինչդեռ նորա բարձրաձայն աղօթէն, ընտանեբար և խորհրդապէս խօսի ընդ Աբրահամայ, ասելով. "Որ զգեցեալ ես զայս որպէս զՀանդերձ, տէր մեր Յիսուս, անձառելի խոնարհութեամբ՛ի յերկրի երևեցար և ընդ մարդկան շրջեցար.։ Մեծ էր և անչափ խոնարհութիւնն Աբրահամայ՛ի մարդ լինելն, զոր սկիզբն բանիս կարգէ. զի թէ զայս ասէ ընկալաք՛ի քէն մինչ ոչ ինդրեցաք, Հաւատամք այսու և Հայցուածոյս ոչ գտանալ ունայն։ "Որ եղեր քահանայապետ ըստ կարգին Մելքիսեդեկի, և զարգարեցեր զեկեղեցի քո սուրբ.։ Կարգ Մելքիսեդեկի էր՝ միանձնաւորելն՛ի քահանայապետութեան, որպէս ասէ Պօղոս. ըստ նորա ընթացիկն երևեալ Աբրահամայ՝ ձգմարտեաց զՄելքիսեդեկ՛ի տառերական ապացոյցն, և եմուտ յերկինս՝ մեզ ձգմարիտ քահանայապետ և բարիչ. որ և քառեալ զեկեղեցի իւրով պատարագաւն՝ զարգարեաց զսա Հնոյհօր Հոգւովն, զոր առ՛ի Հօրէ յետ Հաչտութեան, և առաքեալ

1 Մի օրին. ԱՀ ԱՀՀՀՀՀ. 2 Մի օրին. Է.

յերկիր՝ զարդարեաց նովաւ զՀաւատացեալս զանապան
ընդհանց պսակօք, ըստ այնմ. "Ասեմն ի Հոգւոյն
առեալ է բան իմաստութե՛ն, այլում բան գիտութե՛ն,,,
և որ զհետ այսոցիկ՝ "Զեր առնեսակալ, որ պարգևե-
ցեր մեզ ընդ ձեռին զերկնային զհանդերձ զգենուլ,,՝ Լու-
սինայիսն հանդերձ դարձեալ զընդհանս Հոգւոյն ասէ, որով
զարդարեցաք. զի զնա նախ Քրիստոս յինքն ընկա-
լաւ և ապա ի մեզ սփռեաց, մինչ զի լինել մկրտելոցս
ի Քրիստոս Հոգւովն զՔրիստոս զգենուլ. զայս ընդհ
յիշէ՝ "Ըրժանի արա և զիս ի ժամուս յայսմիկ՝
զանպիտան ծառայս քո, որ համարձակիմն և մերձե-
նամ ի հոգևոր պաշտօն փառաց քոց, որպէս զի զամե-
նայն ամբարշտութիւնս մերկացայց, և զարդարեցայց
լուսով քո,,՝ Դու, ասէ, որ զայսոսիկ զորս յիշատա-
կեցի՝ արարեր, այժմ և զիս արժանացո ընդհանց քոց.
խառնեալ ընդ առաջին երախտիսն իմաստութեամբ և
զիւր Թախանձանսն. քանզի այս դիւրաւ ածել կարէ
զտէրն յումնկնդրութիւն, յորժամ նորա զծայրագոյն
ընդհանն խոստովանի, և ինքն զյետին խոնարհութիւն
ողջունէ. զանպիտան ծառայս քո ասէ, ըստ այնմ,
"Յորժամ զամենայն ինչ կատարիցէք՝ ասասջիք ծառայս
անպիտանս գձեզ գոլ,,. այլ զի հոգևոր պաշտօն դնէ,
ցուցեալ Թէ գոյր և մարմնաւոր պաշտօն Աստուծոյ ի
հնումն, որք ոչ կարէին ըստ միտս քահանայագործել.
այլ միայն կերակրովք և մարմնոյ արդարութեամբ,
այսինքն զի ի զոհել քահանայիւն՝ միայն զմարմնական
նշանակսն կատարէր, և ոչ իմայականապէս առ Աս-
տուած հարկաւորէր ձկտել. իսկ մերս գերազանցէ քան
զնոցայն, զի հարկ է այնմ որ զմարմնական նշանակսն
ունի առաջի՝ մնաւոր աղօթիւքն առ Աստուած մտա-
նել. և առ Աստուած զիմարդ կարէ մերձենալ, Թէ ոչ
պարզեսցի ի շաղախմանէ մեղացն սրբեալ. վասն այ-
սորիկ, ասէ, Հոգևորիս եմ գործառոր և պաշտօնեայ,
և անձամբ զանձն մաքրել տկարացայ. ազաչեմ տէր,
նախ դու լեր ինձ քահանայ և սրբիչ ընդհօք քո, և
մերկացո զիս յամենայն Թիաստիսէ մեղաց, որով տգե-
ղացար Հոգիս ի սիրոջ հանդերձիցն, և ապա ընդ զգե-
նուլ մարմնոյս զլուսաստեակ պատմուճանս՝ զգեցո և
Հոգւոյս զլոյս իմաստութե՛ն և գիտութե՛ն և սրբութեան,

«Ահաւասիկ լինիմ ձեռաւք իմ, և թօթափիցէ զյանցանս իմ, զի արժանի եղէց հանդերձեալ լուսոյդ առ ի քէն ,, ։ Պատմեալ թախանձանք մաքրութեան. քանզի գիտէ հաստատութեամբ, թէ սուրբ Հոգին իմաստութեան փախչի յայսպիսի կրից, սակս այսորիկ և ժամ նախ ի նոցանէ սրբիլ, և ապա զոյս Հոգւոյն ընդգրկել, զի կարող լիցի զՀոգևոր պաշտօն Հոգիընկալ մտօք կատարել։ «Ո՛ նորհեա ինձ քահանայական փառօք մտանել ի պաշտօն սրբութեանց քոց ընդ այնոսիկ՝ ոյք անմեղութեամբ պահեցին զպատուիրանս քո ,, ։ Լեաճ են փառք քահանայութեանն յարժանապէս ունողն, ընդ Աստուած և ընդ մարդիկ միջնորդ լինել, և Աստուծոյ առնուլ զնուիրս և ի նոսա բաշխել. վասն այսորիկ յետ մաքրութենն և զայս երկրորդ ընծայ ի նմանէ խնդրէ առ ի կարող լինել մաքուր մտօք մտանել ի սրբութիւնն երկնից, և մարմնով ի պաշտօն սրբոյ և տէրունի սեղանոյն։

«Ընդ այնոսիկ, ասէ, ոյք պահեցին զօրէնս քո ,, ։ Օ՛ի ոչ եթէ ինձ միայն խնդրեմ զայս պարգև, այլ բազումք նախ քան զիս զօրացեալք և անմեղութեամբ ի փառս անուան քո զայն գործեցին։

«Օ՛ի և ես պատրաստ գտայց երկնաւոր առաքաւորիդ ընդ իմաստուն կուսանսն փառաւորել զքեզ Աբրիստոս՝ որ բարձեր զմեղս ամենեցուն ,, ։ Յորժամ իմաստնոցն, ասէ, լինիմ ընդօք գործակից, ապա իշխեմ և նոցին առագաստին աւն ունել. արդ եթէ զայս այժմ ինձ ընծայեացես ըստ նոցա գործել, հաւատամ և այնմ լինել ժառանգակից ի ձեռն քո, որ ոչ թէ զոմանց, այլ զամենեցուն մեղս բարձեր Աբրիստոս։ Սակ կուսանք ընդ որս փափագէ մտանել, էն հաստատակից նորա ժառանգաւորք եկեղեցւոյ՝ առաքեալք ի կուսանք վասն անապական ընծրհի պատուոյն որով հնքեցան, և հինգ հինգ չարք լիմարքն, և բաւ լիքն իմաստունք։ Այլ հինգ թիւ, եպիսկոպոս, քահանայ, սարկաւագ, կէս սարկաւագ, գրաքարոզ. իսկ ընդ առաջ փեսային ելանել լապտերօքն՝ պատիւ և իշխանութիւն գործոյն իւրաքանչիւրոցն է՝ զոր ընկալան առաջի նորա յայսմ աշխարհի, և ընծանան նմա ի հանդերձեալ կեանքն։ «Յիմարքն առին

զլապտերան , և ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին ... , այս ինքն՝ զի ոմանք ՚ի սոցանէ ՚ի հինգ դասուցս զշնորհն զոր ընկալան , և զձէթ իւրեանց չայսմ աշխարհի ծախեցին , զի ոչ փութացան նովաւ ՚ի փառն Աստուծոյ՝ ըստ որում և ուխտեցին , այլ եպիսկոպոս փոխանակ գործելոյ զառաջնորդութիւնն միայն փառաւորէր և պատուէր , և քահանայն զպատիւն ունելով՝ ՚ի քահանայագործելն դրժէր , նոյն և այլքն . զի ծախեցին զհանդերձեալ փառն և զհեշտութիւնն , և գնեցին նովաւ զառժամանակեայս , այսինքն զի ՚ի պատիւն որով ՚ի հանդերձեալն էր նոցա խոստացեալ փայլել , չաշխարհ փայլեցան . և ՚ի պէտս այսր փառացն զնոյն ստացան . վասն այսորիկ տարան ընդ ինքեանս ՚ի հանդերձեալն սոսկ զլապտերն առանց ձիթոյ , այսինքն միայն զանունն առանց Հոգւոյն . իսկ իմաստունքն տարան ձէթ ընդ ինքեանս , զի ՚ի հինգ դասուցս բազումք զշորհն զոր ընկալան՝ երկիւղիւ և զգուշութեամբ պահեցին , և ոչ ՚ի մարդկանէ նորին վասն փառաւորեցան . այլ բազումք որպէս և ծանեաք զսորքոյն՝ աբսորեցան և անարգեցան , և զայս ամենայն արհամարհեալ՝ միայն իւղոյն պատկառ կացեալ՝ զնոյն պահեցին . վասն այսորիկ և ՚ի հանդերձեալն տարեալ լուցին , և ընդ փեսային սիրելոյ նովաւ պաՀուՀեալ ՚ի յառագաստն մտին , որպէս ուսուցանէ զայս ընդարձակագոյն Հայրն մեր Եփրեմ ՚ի Նաւ մանանխին և գտակի , որոց լեցուք իմաստութեան արժանի և մեք ՚ի Քրիստոսէ Նոցին զօրացուցանողէ , որ է օրհնեալ յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

ՋԻՆՁ ՑԱՅՑ ԱՒՆԷ ՑԵՏ ՁԳԵՆԼՈՑՆ ԱՒ ՀՈԳԻՆ ՍՈՒՐԲ ԱՂՕԹԵԼՆ

Հոգին սուրբ յետ Քրիստոսի տնօրէնութեանն եղև վերակացու մեզ և պաշտպան , ըստ այնմ. «Նա ձեզ բնակեսցէ , և ընդ ձեզ եղիցի յաւիտեան ... քանզի ՚ի նմանէ գրկեցաւ առաջին մարդն յանցանաւքն , և դարձեալ ընկալաք զնա ՚ի Քրիստոսի շնորհաւքն ։

1 Մի օրէն . Ձ՝ն ։

Այս Յոգիս է որ զօրացուցանէ զդասս հրեշտակացն միջնորդութեամբ իրերաց առ ի գիտութիւն և ի փառ փագ Աստուծոյ, և ի ձեռն նոցին սրբոց՝ զուարճնոցն սպասաւորութեան իջանել և ի մեզ, և կատարել մեզ զպէսպէս անօրէնութիւն եկեղեցական գործոց։ Այն ասն այսորիկ յետ խնդրելոյ ի Աբրիատոսէ զսրբութիւնն որպէս ի հարազատէ և ի բնութենակից վշտակից, և զգենոյց մարմնով զմաքուր պատմուճանն, և հաւատոյոյ ընդ նմին Յոգւոյն մաքրութեան Աբրիատոսիւ, այնուհետև առ Յոգին մատչի աղերսել. զի մի արգելցէ զՀեզութիւն իւր, զնորհս և գործակցութիւն յաոաջիկայ գործոյն. և զայս անկեալ ի վերայ երեսաց մատուցանէ, զայն յայտ առնելով, թէ միևդեռ չև եմ ի քէն զօրացեալ, կորագլուխ եմ և անհամարձակ ընդ Աստուած խօսելոյ. իսկ յորժամ դու հաշտ առկամբ հայեսցիս յիմն խոնարհութիւն անձին և յաղերսանս բանից, գաս որպէս և սովոր ես, և զօրացուցանես, ապա է ինձ համարձակելի և քեզ և ի ձեռն քո զպարանոցս բարձրացուցանել, և զբազուկս առ Աստուած խնդրուածովք տարածել. վասն այսորիկ ի վերայ երեսաց անկեալ զայս աղաչանք անմռունչ ձայնիւ ի սկզբանէ մինչև ցկատար աւարտէ։ Օ՜ի զձայն բարձրացուցանել Հարկաւոր է յորժամ առ ժողովուրդն լեցի բանն, որպէս զի միջնորդութեամբ ձայնին տեղեկասցին զնոյնն. իսկ այս աղօթելս առ Աստուած է, որ զծածուկս տեսանէ, և առ Յոգին որ զսիրտս քննէ, վասն այսորիկ ըստ տեառն հրամանին ի սենեակ մտաւ նոյն ամիսիւ զբանական միտս, և փակէ ի վերայ նորա զդրունս շրթանցն, և այսպէս կայ յաղօթս առ նա ի ծածուկ. իսկ նա, զի ամենատես է, տեսանէ աստուածաբար զծածուկս մեր, և հատուցանէ զխնդիրսն յայտնապէս։

1 Մի տրին · Ս՝՝էէ ։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՂՕԹԻՑՆ ՈՐ ԱՒՐԱ ՍՈՒՐԲ ՀՈԳՒՆ ԱՍԷ ՓԱՀԱՆԱՑՆ [1]

"Ի՛ՄԵՆԱԿԱԼ Ի՛ստուած, բարեբար, մարդասէր,, : Ի՛մեռակալ է Հոգին սուրբ, վասն զի ընդ Հօր և ընդ Որդւոյ իշխէ [2] երկնաւորացն և երկրաւորացս, և կալեալ ունի զսոսա ի ներքոյ զօրութեանն : Ի՛արեբար, զի որոյ տիրէ՝ նոցա միշտ զբարին տնօրինէ և մատակարարէ, որպէս առ հրեշտակս զլուսափայլութիւնն Ի՛ստուծոյ՝ որում կարօտին, և առ երկրաւորսն զպէս-պէս նախախնամութիւնս : Ի՛արդասէր, զի Թէպէտ և վայելչին ամենեքեան ի ընդհանուր նորա, բայց առաւել առ մարդիկ առատացաւ սիրով :

"Ի՛ստուած բոլորից՝ յօրինօղ երևութից և աներևութից,, : Ի՛ստուածն արարչական անուն է. վասն այսորիկ աճ ի վերայ սորին և զարարչութիւն. և սոքա ոչք. երևելի արարածս և զդալիք, և աներևոյթք դասք հրեշտակաց, և հոգիք մարդկան. զի ընդ Հօր և ընդ Որդւոյ և Հոգւոյն խոստովանիմք զսոսա ստեղծեալս :

"Փրկօղ և հաստատօղ, խնամող և խաղաղարար,, : Ա՛յս է տիրական [3] արարչութիւն, զի ոչ միայն արար, այլ և փրկէ, և զփրկեալսն խնամովն ի նոյն էութիւնն հաստատուն պահէ, և միշտ խաղաղութեան լինի միջնորդ Ի՛ստուծոյ առ արարածս, և սոցա առ միմեանս :

"Հոգի հզօր Հոգի,, : Օ՛ի բազումք կոչին հոգիք, որպէս և հրեշտակք, և հոգիք մարդկան, և չար հոգիքն. անջրպետել զսա ի բնաւիցս, զի որպէս Որդին Հօր միածին, նոյն և Հոգիս նմին առանձինն [4] :

"Հայցեմք բազկատարած մաղթանօք գոչմամբ հեծութեան, յանդիման եղեալ քեզ ահաւորիդ,, : Ահի մտացս ընթացիւք առ քեզ, և Հոգւոյ աչօք նկատեմ

1 Երկու առաջնիկայ ազօթքս, զորս եպիսկոպոսն մատուցանէ առ միաք, առեալն ի կարգէ ազօթից սրբոյ Նարեկացւոյն :

2 Մի օրին. Իշխան է :

3 Մի օրին. Տիրոդեա :

4 Զի Թէպէտ և Հոգի Հօր և Որդւոյ ասի և է, և անխախիտ երկոսին է միոյն և միւսոյն, բայց սկզբնապատճառ Հանապազ Հայր, և Որդին պատճառակից նմին :

զտելոյ ահաւոր և սքանչելի. վասն այսորիկ անկեալ մարմնով զսրտիս բազուկս տարածեմ առ քեզ, գոչելով ձայնիւ և հեծեծելով խորհրդովք զօգնականութիւնդ հայցեմ, զամենեցուն կառավարդ։

"Ա՛ատչիմք մեծաւ դողութեամբ սաստիկ երկիւղիւ, մատուցանել նախ զբանականս զայս պատարագ քոմ անջնին տէրութեանդ,,։ Դողումն և երկիւղ՝ մնացն է որ նայի՛ ի նա, ուստի և ցուցանէ զկիրսն. իսկ բանական պատարագ՝ գոհութիւն և փառաբանութիւն, շնորհակալութեանն է, զոր վասն պէսպէս արարչութեանն հանդերձեալ է տալ նմին. և այս նախ քան զպատարագել միածնին առ նա խօսք, ըստ որում ասաց իբր առ գործակից և զօրացուցիչ։

"Իբր աթոռակցի փառակցի և արարչակցի, հայրենի անկապուտ պատուոյդ,,։ Օ՛ի ոչ թէ որպէս առ մի ոք յեղելոցս գործի և սպասաւոր խօսիմք առ քեզ ըստ չարափառացն, այլ նախ աթոռակից և արարչակից՝ օր խոստովանիմք, յորմէ ոչ ոք կարէ զքեզ արտաքս որոշել. թէպէտ և ժպրհեցան անմիտք՛ ի մարդկանէ եղկելի յիմարութեամբ, սակայն նոքա ըստ յանցանացն պատժին, և դու՛ ի քոյդ միշտ անձողպրեալ ես։

"Կենդող ծածկութեան խորոց ամենակատար կամաց օր Յանձնուելի, զքեզ առաքչի, փրկչի և կենդանատուի՛ և արարչի ամենայնի,,։ Օ առաքեալն առնու ասել. ոչ ոք գիտէ զՅայն եթէ ոչ՝ Հոգին որ քննէ զխորս Նորա. զի ոչ միայն թէ արարիչ ես, այլ և զկամս և զխորս խորհրդոց՝ օր, գոլով ընդ նմա անձնաւոր հարաձատապէս, քննես, և անտի էառ զքեզ՛ ի հայրական գրկացն Հոգին, և առաքեաց վերակացու մեզ ողորմութեամբ և փրկչարար։

"Ո՛ ձեռն քո ծանուցաւ մեզ երրեակ անձնաւորութիւն միանական աստուածութեանդ, յորոց մի և դու Յանայիս անհաս,,։ Յայտնի են բանական պատարագքն զոր խոստացաւ տալ նմա, այսինքն պէսպէս ընդհանուր գոհաբանութիւնքս. և նախ զծայրագոյնն զնէ, թէպէտ և ժամանակաւ անագան քան զայլսն. այս է գիտութիւն Հրոյդութեանն. զի զայս՝ Հոգին յայտնեաց առաքելոցն և նոքօք աշխարհի, և զՆրիս-

տոսի վարդապետութիւնն վերատին յիշողութեամբ արմատացոյց ՚ի սիրտս նոցա ։

՚՚Եւ և ՚ի ձեռն քո առաջինքն նահապետական տոհմին շառաւեղք , տեսանողք անուանակոչեալք , զանցեալ և զգալոցն , զեղեալսն և զոչ գոյացեալսն անստուերաբար բարբառով բանի վերապատմեցին ՚՚ ։ Օ մարդարէիցն ասէ , որք բուսան ՚ի սերմանէ Աբրահամու և Իւրոյն . և զօրացեալք Հոգւով աւետին զեղեալսն և զկինելոցն որպէս Մովսէս . զի առ ՚ի մէջ անագան ուրեմն , Ձառեալ զկինելութիւն , արարածոցս զորս ոչ էր մարմնոյ աչօք տեսեալ կամ ունկամբ լուեալ . նոյնպէս և Եսայի զկործանումն սատանայի ՚ի դէմ իշխանին Տիրոսի . սոքա և զառ յապա կինելոցն ուսուցին , զի զոր չև է եղեալ , որպէս զգալոստ նեռինն , ուսանիմք ՚ի Դանիէլէ ։

՚՚ Հոգի Աստուծոյ քարոզեալ զքեզ Մովսէսի .. ։ Օ՞ր գրեաց , ՚՚ Հոգի Աստուծոյ շրջէր ՚ի վերայ ջրոց .. ։ բացայայտ զխորհրդոյն զօրութիւն այսպէս . ՚՚ Որ ՚ի գնալն քո ՚ի վերայ ջրոցն՝ անպարագիր զօրութիւն ահեղ շրջարկութեամբ տաճոզականաստեղծական պաշտպանողօրէն զմասիրեալ ՚ի ծրնունդս նորոգս զաւազանին խորհուրդ ծանուցեր .. ։ Օ՞ ՚ի մի յորժամ լսիցես՝ կարծիցես թէ Հոգին շրջէր ՚ի վերայ ջուրցն , նախ ուսուցանէ՝ թէ էութիւնն Հոգւոյն շրջէր ՚ի վերայ ջուրցն , նախ ուսուցանէ՝ թէ էութիւնն անհաս է և անպարագիր , և զօրութիւնն ըմբռնել զջուրսն . և այն որ ասէ թէ Հոգին շրջէր , ստուգաբանի՝ թէ բարձեալ ունէր զտարերսն ՚ի ներքոյ իւրոց իւրոց զօրութեան , և այնպէս պաշտպանեալ զօրութեամբ , որպէս թէ ազ պահէր զիսկզբանէ արարեալսն ՚ի հաստատութեան , մինչև կատարեցաւ աստուածութեամբն զգոյսն ՚ի նոցանէ առեղծանել , և յետ գոյութեանն դարձեալ նովին իմաստիւքն նոքին ՚՚ ։ Իակ որ ՚ասացաւ շրջել ՚ի վերայ ջուրց , նոր խորհուրդոյս էր ապացոյց . զի որպէս անդ շրջելով ՚ի ջուրսն՝ յառաջ էած ՚ի նոցանէ զէքս աւենայն , և ասա նոյն ինքն շրջի յարգանդ եկեղեցւոյ յաւազանն , և ծնանի որդիս Աստուծոյ զմարդիկ ։

1 Երեք գրին . իսկ ասացաւ շրջէր ՚ի վերայ ջուրց ։

«Յոր կերպարան օրինակութեան նախ քան զկառուցանել զլոյծ մածուած՝ վերջնումն վարագուրիդ՝ յօրինեցեր կաթող տիրապէս զբովանդակ բնութիւն ամենից բնաւից գոյից բոլորից ամենայն էից յանէից»։ Այսպէս ասացաք՝ աւազանին խորհուրդ՝ ի սկզբանն նկատեցաւ Նոգուն, զի միանչ չև էր անջրպետեալ ջուրն, և անուանեալ հաստատութիւն, որ եղև վարագոյր՝ ի մէջ երկնի և երկրի, Նոգին խնամէր զտարերքս, և չնորհէր՝ նոցա զօրութիւն, նիւթ ստեղծման լինել ամենայն էից։

«Եւ ստեղծանին՝ ի նորոգութիւն յարութեան ամենեցուքս առ՝ ի քէն, յայնմ ժամանակի՝ որ է օր վերջին այսմ կենցաղի, և օր առաջին երկրին կենդանեաց»։ Այս զԱւետիսն առնու ասել, թէ «Արդարեւս զՆոգի քո և ստանաս զնոսա, և նորոգես զերեսս երկրի»։ քանզի ինքն Նոգին՝ որ ինամեաց և ստեղծ և պահեաց և ծածկեաց, նոյն ինքն դարձեալ նորոգէ յօրն՝ որ է վախճան ապականացու ժամանակիս, և սկիզբն անապականն կենաց. քանզի ապականեալքն վասն այնորիկ նորոգին, որպէս զի՝ ի միանձնաւորութիւն յարակայեսցին։

«Եւ Հնազանդեցաւ միութեամբ կամացն՝ որպէս Նօրն իւրում, ազգակիցն քո և էակիցն Նօր անդրանկին Աստի մերում կերպիւ»։ Որպէս զայս Հնազանդութիւնս ուսանիմք, եթէ ոչ այսպէս. կամ էր Արտուծոյ Նօր մարդկայինս փրկութիւն՝ ստեղծանելոցս՝ ի նմանէ, կամ էր և Նոգուոյն խնամելոցս իւրոց. Արիստոս հաւասար նոցին ոչ թէ կամեցաւ միայն, այլ և զփրկագործութենէ եհար բուռն՝ ի մարմնանալն, և մահու խայտ փոխանակ սոցա համբերեալ որպէս ըզՆօր կամն կատարեաց փրկելովն, նոյնպէս և զՆոգուոյն։

«Օ քեզ աւետարանեաց Զքմարիա Արտուած հաւասար և համագոյ Նօրն իւրոյ հզօրի»։ Արծեմ զոր առ կինն Սամարացի ասաց, «Նոգի է Արտուած»։

«Օ առ՝ ի քեզ հայհոյութիւնն անքաւելի քարոզեաց՝, և իբր զաստուածամարտից զի՝ քէն հեստելոցն

1 Մի օրին · Մ------ի ։ 2 Մի որին · Ն- ----։

չարաբանական բերանն կարկեաց , և զիւրն չնորհեաց արդարն և անարատն՝ գոհչն ամենայնի ,, ։ Վանղէ այսպէս ասաց տէրն . “ Որ ոք ասիցէ բան զՈրդւոյ մարդոյ , թողցի նմա . բայց որ զՅոգին սուրբ հայհոյեսցէ , մի թողցի նմա ,, . իսկ իւր ոչ եղև վրէժխընդիր , և այն զի անմեղ դատապարտիւր ՝ . իսկ հանգոյին կարի սաստիկ , որպէս զի հաստատեսցէ առ մեզ զաստուածութիւն Յոգւոյն ։

“ Որ վասն մեղաց մերոց մատնեցաւ , և յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ ,, ։ Ասա որում գրեաց Պաւղի . նա վասն մեղաց մերոց մատնի ։ Ընդար և կատարեաց և յարեաւ , և զմեզ ընդ իւր նորոգեաց ։

“ Այս փառք ՚ի ձեռն քո , և քեզ բարեբանութիւն ընդ Յօր ամենակալի ,, ։ Օ ի Յոգին է որ զօրացուցանէ զլեզուս մեր ՚ի փառաբանութիւնն Քրիստոսի , ըստ առաքելոյ . “ Ոչ ոք կարէ ասել տէր զՅիսուս , եթէ ոչ Յոգւովն սրբով ,, . վասն այսորիկ ասէ ՚ի ձեռն քո , և քեզ ընդ Յօր , որպէս հաւասար նմին Ընտուած առ ՚ի միոջ խոստովանելոյ անստգիւտ մտաց՝ այժմ և յաւիտեանս ։

“ Պարձեալ կրկնեսցի ՚ի նոյն կարգ բանի , մինչև վերահայեցութիւն [2] լուսոյն հրաշապէս ազդեալ յայտնեսցի , աւետարանել վերատին զկրկին խաղաղութիւնն ,, ։

Վանք աղօթիցս մինչև ցայս վայր ոչ խնդրուածք էր , այլ յիշատակ Յոգւոյն պէսպէս աքանչելեաց , և փառատրութիւն նմա ՚ի վերայ այնոցիկ բարեբանութեամբ . զոր աւարտեալ՝ ասէ . Ընդ ոչ է բաւական առ քեզ խօսակցութեանս . այլ թէպէտ և վախձան ածի , սակայն կարօտիմ վերատին զնոյն բանիցն ոձոյ բուռն հարկանել , մինչև կարացից բազմապատիկ թախանձանօքս զլոյս զօրութեանդ՝ որ դեռ ևս ՚ի վեր հայիմ իմացականապէս և բացակայ լինելն տեսանեմ , խոնարհեցուցանել , և հրաշալի ազդմամբ առ իս ձգել . որոյ յայտնութիւնդ յանձն իմ այնու Ճանաչի , յորժամ խոտվեալ խորհրդոյս խաղաղութիւն և հանդարտութիւն աւետարանեսցի . որպէս և գիտեմ զփորձ

1 Ցօրինակ ինչ Դ-ոյ ։ 2 Մի օրին . վէրահայեցողութիւն ։

ընդհատցի՝ մաղթեմ, մինչև դարձեալ վերստին Աստուած կեցից ի դմանէ. և ապա սկսանի ասել.

"Ջանեցէք և աղերսեցէք արտասուալից Հառաչմամբ յամենայն անձնէ զփառատրելի արարչութիւնդ՝ անեղ և անտեղծ անժամանակ Հոգւոյդ զԹաճի,[1] Նմանութիւն և անկար է ուրուք զաղօթից բան մեկնել. զի նա իւր լծակից և աղ Համեղութեան ունի զիղձ տուիման տուչման Հոգւոյն ասողին՝ որում քաղցրանայ յաւէտ. իսկ զայն բանիւ մարմնացուցանել չիք Հնար, և զայս առանց նորին որոնել ունայն է. արդ ոպիսի կարողանամք զարտասուալից Հառաչումն ամենայն անձինն մեկնել կամ ուսուցանել, բայց թէ փոքձիս ոք ընդ կիրճ նորին անցեալ ծանիցէ. յոր Աստուած վայելեալ, ամենայն պատրանաց աշխարհիս ի ստիպոյ սրտին ողջոյն տուեալ հրաժարէ, և միայն յայն Հառաչմանէն միշտ զանձն իւր կերակրէ: Հառաչումն այն է՝ որ զբոց սիրոյն Յստուծոյ արծարծէ, և արտասուքն է՝ որ զՀոգւոյն աչս վճիտ ներգործէ. մարմնական Հառաչանք և արտասուքն ի հեռանալ սիրոյն և յաձել տրտմական կրիցն զօրէ. իսկ այս Հակառակ նմին. զի որչափ զերեսս բաղձալոյն նկատէ, և առաւելապէս բոցով սիրոյն Հառաչէ. և որչափ մերձենայ ի նա՝ յորդառատ զգետս արտասուացն հեղեղէ, և միշտ զաւուրսն յոյս անձհաշակ էր ի սմանէ՝ ապաշաւէ, և յառաջիկայն զնոյն աղօթիւ ունել: Այս է ուրախութիւն՝ որում բնաւ զղջումն ոչ տիրէ, և տրտմութիւն՝ որ զանապաշաւ ցնծութիւն բխէ. զսա ի բան ձգել և պատմել՝ անարգութիւն է Հնարհին, և ուսմանք զսոյն Հանդէս անկարութիւն է լսողին. այլ թէ լսես արտասուալից Հառաչումն յամենայն անձնէ, մի կարծես գիտել բնաւ կամ ուսանել յօտարաց, մինչ չև ի քէն է սորին տեղեկութիւն բղխեալ. և յորժամ ուսանիս, ապա Հաստատես յանձն թէ ոչ գիտես: Այսպէս կանխէ երանելիս առ Հոգին, և այսու ըղձիւքս, և ոչ թէ սոսկ բանիւքս Հաւատոյ զվերահայեցութիւն Հոգւոյն ի յանձն տանել:

1 Մի օրին. ի Թէոդեսէ:
2 Մի օրին. Աստուած ի քէն սորին

"Ալ բարեխօսդ ես վասն մեր յանմահունչ հեծու-
թիւնս առ ողորմածդ Աստ ,, : Այս յառաքելոյ ու-
սաք զնորհուրդս , որպէս գրէ . "Ոչ որ կամքն յաղօթս ,
որպէս արժանն իցէ՝ ոչ գիտեմք , այլ ինքն Հոգին բա-
րեխօս լինի ի հեծութիւնս անմահունչս ,, . այսինքն զի
ոչ եթէ ձայնիք մեր և աղաղակ առ նա ազդեն զիղձս
հոգւոցս , այլ միայն մտաւոր թախանձանքս . զի յոր-
ժամ արգելուս ի ներս զազդեցութիւն հոգւոյդ ի ըզ-
գայարանացդ , և սկսեալ այդրէն ի քեզ անմահունչ հե-
ծեծես , թէպէտ և դու տգէտ ես՝ թէ հասանէ այդ
առ Աստուած , սակայն ընորհ Հոգւոյն որ է ի քեզ՝
տեսանէ զիղձկումն հոգւոյդ քո , և ծանուցեալ զնոյն
և նիւթ առեալ ի քէն՝ ինքն ի տեղն ուր ոչ կարացեր
բարձրանալ՝ մտանէ , և վասն քո բարեխօսէ , զի հեզ
է և մարդասէր ։

"Ալ զսուրբսն պահես , և զմեղուցեալսն մաքրես ,
և տաճարս կազմես կենդանիս կեցուցիչ կամաց բար-
ձրեալդ Աստ ,, : Որպէս լոյս արեգականն զգալի էիցս
է դաստիարակ , զոմանս հասուցանէ ի պտղոց , զայլս
բուսուցանէ , և ամենեցուն զէութիւնն տնօրինէ , այս-
պէս և Հոգին սուրբ բխեալ ի Հօրէ՝ զիմանալի էու-
թիւնս կառավարէ , նախ առաջին զՀրեշտակացն , և
յետ նոցա և նոքօք զմարդկան . զսուրբսն պահէ ան-
վթար և օր ըստ օրէ զօրացուցանէ , զմեղուցեալսն ուղ-
ղէ , և խղճմտութեամբ յանդիմանեալ կշտամբէ ի , մին-
չև զղջմամբն մաքրէ . և փոյթ ունի անդադար զամե-
նայն Հոգիս երկնայնոց և երկրայնոց տաճար Աստու-
ծոյ առնել , ըստ որում գրէ առաքեալ . "Դուք տաճար
էք Աստուծոյ , և Հոգի Աստուծոյ բնակեալ է ի ձեզ ,
մի տրտմեցուցանէք զնա ,, ։

"Աղդ ազատեա զմեզ յամենայն անմաքուր գոր-
ծոց , որ ոչ է հաճոյ քում բնակութեանդ ,, : Հա-
ւասիկ սկիզբն արար խնդրուածոյ . և այս զի՞նչ ,
նախ առաջին մաքրելոյ աղերս , զի աղցաւոր գոլով
նախ պրկել կարօտիմք , և ապա զՀոգին սուրբ տանել .
վասն որոյ ասէ . արդ զի մինչև ցայս կէտ ժամուս գրա-

1 Ի մի օրին . ի- Խզճմտութեամբն
խրատեալ յանդիմանէ .

2 Ի մի օրին . Գործ-վ .

ւեալ եմ ընդ սխալանօք մարմին գոլով, յորոց ազատել ժտիմ, և որոշել զիս ի շաւղացն՝ ուստի քոյդ չնորհ տրտմի ։

" Այլ մի շինջին առ ի մէնջ լուսոյդ չնորհաց փայլմունք՝ ի տեսականացս աչաց իմոստից ,, ։ Ցիս , զի ոչ ընդունել նորոգ խնդրէ , այլ զինչ . մի շինջանել . քանզի ընկալաք զնա ի մեզ , յորժամ յաւազանէն ծնաք ։ Այս պա ընդէր ոչ ներգործէ ասես . վասն զի շինջուցանեմք զչնորհն . որովք . այնոքիւք յորոց Պօղոս զգուշացոյց ասելով . " Օ՜ոգին մի շինջուցանէք ,, . քանզի ամենայն մեղք միանչէ ի դատարկաբանութիւնն՝ մարտակից է նմին և հակառակ , վասն այսր Թախանձէ զի ես որպէս մարդ զՀեղեղս մեղաց յարձակեցի ի վերայ մտացս , և շինջուցի զլոյս սորա առ ի քեզ նկատելն . այլդու որպէս Աստուած ողորմած՝ ծագեա վերստին զքաղցր Ճառագայթդ՝ զտեսականիս Հայեցողութիւն ։

" Ա՜ան զի զքեզ ուսաք միանալ ի մեզ ի ձեռն աղօթից և ընտիր վարուց խնկելոց ,, ։ Ասաք ոչ յայլ ումեքէ , բայց միայն ի Քրիստոսէ և յառաքելոց նոցին՝ որ ասաց . " Ի ձեզ բնակեսցի և ընդ ձեզ եղիցի յաւիտեան ,, ։ Այլ բնակիլ ոչ յամենեսեան , այլ յորս զիսունկ անուշութիւն՝ վարուց ծխեն նմա . քանզի ասաց առքն . " Օ՜ր աչխարհս ոչ կարէ ընդունել ,, . էր վասն . քանզի ոչ Հաձոյանայ նմին . զի շնչէ ինքնիշխանութիւք ուր կամի , և կամի զայնոսիկ՝ որք խնդրեն զնա ըղձիւք . ըստ այնմ . " Աղօթս արարէք զի ինձ տացի բան ի բանալ բերանոյս ,, . արդ զի մեք այսպէս ուսաք զքո քաղցրութիւնդ ասէ , վասն այսորիկ զտերդ Թախանձեմք աղօթիւք՝ միութիւն քո ընդ մեզ փափագել ։

" Այ քանզի միով Հաղորդութենէդ պատարագի , և միաւոր ընդունի՝ Հաձեալ ընդ մեզ Հաչտարար արեամբ անպրանկին իւրոյ ,, ։ Ասեմք ընդ Օ՜ոգին խնդրեաց . այս կարի բարձրագոյն Հայցուած՝ Այ ընդ մարդկան խառնել . վ՞ այսորիկ ասէ , ոմ աէր , մի կշտամբեցայց վ՞ Համարձակաբարբառ քեզ խօսելոյս և միութիւն խընդրել , քանզի քո աստուածութիւնդ յայս զմեզ սովորեցոյց Համարձակութիւն , այնու զի միածին Որդիդ ոչ

միայն գայ առ մեզ, այլ և մեր փոխանակ մեռանի, և Հայրդ ոչ թէ զնա մեռեալ տեսեալ բարկանայ մարդկան, այլ և այնու վասն ընդ մեզ հաշտի. արդ այս եթէ այսպէս է, ըստ որում և է հաւաստեաւ, "Լաւ և դու որպէս զհամակամ ընկալցիս զմեր պաղատանս, և յարդարեսցես զմեզ օթևանս պատուականս ամենայն պատրաստութեամբ 'ի վայելումն Հաշակման երկնաւոր գառինն,, : Յարդարիմք 'ի Հոգւոյն, յորժամ 'ի մեզաց տգեղութենէ որոշէ զմեզ, և զնեըքինս մարդ՝ իմաստութեամբն լուսաւորէ, յայնժամ կարեմք 'ի սպանդ գառինն զհամեղութիւն անուշութեան Հաշակել:

"Զանց պատժոց դատապարտութեան ընդունել զայս անմահացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութեանս,, : Օ՛ի մեծ երկեղ է 'ի նա անմաքրապէս մերձենալ, ըստ որում դրեաց առաքեալ. "Որ անարժանութեամբ ուտէ, դատաստան անձին իւրոյ Հաշակէ,, . վասն այսր չետ զղջութիւն խնդրելոց 'ի Հոգւոյն՝ և զայս թախանձէ, զի մի ասէ կենաց դեղս՝ վասն անպատրաստութիւն ինձ պատժոց լինիցի առիթ. այլ զի անմահ էս՝ անմահացայց, և անմահանալն անկար է՝ եթէ ոչ նախ առաջին դու զմահու խայթոցս չինէն սրբեացես:

"Լո հալեացի 'ի հրոյս յայտնեալ գայթակղութիւնս մեր, որպէս մարդարէին կենդանախաղոյկ կայծակամբն 'ի ձեռն ունելեացն մատուցման,, : Յոյժ համեմատ օրինակաւ վարի առ խորհրդոյս զօրութիւն. զի որպէս մարդիկ սիրելեաց այլ և այլ սեղանովք առատանան, և սպասէս կերակրոյն համովք զմարմինն պարարեն, այսպէս և Հոգին տուրբ զիմբն զրոյն զանազան չնորհօք պարարէ, որ կարեն զազդեցութիւնք Համեղութեան նոցին պարզութիւն մտացն Հաշակել. այլ մարգարէն տուրբ ունէր միտս, վասն այսր և տոկալի տեսլեանն պատահեաց. բայց 'ի կայծականց սեղանոյն և մաքրեցաւ, յայտ է թէ և 'ի չրթանց սխալանաց. այսպէս և սա թէպէտ և Հոգւոյն Հաւատաց զանձն մաքրել, և 'ի սպասաւորութիւն առաւածային տեսութեան պատարագին զօրացուցանել, սակայն կրկին մաքրութիւն նովաւ առնուլ ազերսէ՝ ըստ մարգարէին, և այլ անուշութիւն ցնծութեան յայնր Հաշակմանէն:

«Օ՛ի յայսմ ամենայնի քոյդ քարոզեացի գԹուԹի՛, ըստ որում Պրպտող Իւտուծոյ Հօրդ քաղցրուԹի՛»։ Վ՛ա՛, ասէ, պէսպէս շնորհօք զՀօրն ողորմուԹիւն որ՝ի վերայ մարդկան՝ հռչակելի արար. հանդոյն նմին և դու գԹալով յաղերս բանից՝ զանուն քո տէր փառաւորեա՝ի մէջ մեր։

«Ար զանառակ որդին մերձեցոյց՝ի հայրենի ժառանգուԹիւնն, և զլոմնիկան յառաջեցոյց յերկնից արքայուԹիւնն, արդարոցն երանուԹե՛»։ Օ՛Վրիտոսին՝ի մէջ առնու ապացոյց, ցուցանելով զի ոչ ես, ասէ, յիմ բնուԹենակից մեղաւորացն եմ օտար, և ոչ դու՝ի քո բնուԹենակցին ողորմուԹենէն հեռի. այլ որպէս ես Հաւատոյ նոցին յանցաւոր, և դու զոյգ նորին արդարացուցիչ։

«Ա՛յո՛ այո՛, և ես մի եմ՝ի նոցանէ. և զիս ընկալ ընդ նոսին, իբր մարդասիրուԹեան կարօտեալ մեծի»։ Արկին Թախանձելովն՝ զստուգուԹիւն աղերսին հաստատէ. մի եմ ասէ՝ի նոցանէ, Թէպէտ ոչ գործովք, սակայն կամօք, և կարօտ սիրոյ, եԹէ սիրես դու՝ որպէս և սիրեաց Վ՛րիստոս, և Թէ ընդունի Հոգիդ՝ որպէս ընկալաւ Արդէն։

«Ճ՛նորհօք քո ապրեալ զարեամբ Վ՛րիստոսի ստացեալս, զի յայսմ ամենայնի՝ յամենայնի ծանիցի մարդասիրուԹիւն քո»։ Վ՛րիստոս արեամբն գնեաց և ստացաւ, և դարձեալ գերեցոյց և հիւանդացոյց. այսուհետև քոյդ կարօտիմ շնորհաց օգնականուԹեան՝, յոր աւանդեաց նա զիս պահել. արդ յայտնեա զմեզ դասիրուԹիդ երկնաւորաց և երկրաւորաց առ իս ողորմուԹեամբ, և ստացիր այսու փառս յամենեցունց։

Ա՛յսքան է զօրուԹիւն բանից խորհրդական աղօԹիցս Համառօտեալ, բայց ոչ և ըղձականուԹիւնն. այլ աշխատիմք տեղեկուԹեամբ բանից՝ ըղձիցն և փափագմանն, Հառաչմանն և արտասուացն Ձնծապարշ Հորդել յանձինս, զի մի լիցի լեզուաւ կալ՝ի յաղօԹս, և մտաց անպտուղ առ՝ի նմանէ լինել. այլ քրքրելով զվայելչուԹիւն սորին առաջի տեսուԹեան մտացն ԹէԹև ըղձացուք գնել զսոյն մաքրուԹեամբ մտաց Հա-

1 Մի պրին. Մ՝արդ-իչ-ՆԷՆ։

ուշմամբ և արտասուօք ։ Այսպա մինչ չև զայս գինս առաքաբար տուեալ եմք , մի հաւատասցուք մեզ սեփականել զսոյն . այլ զինչ . զոր օրինակ որ ի վաճառականս մտանէ , տեսանելով զզանազան հանդերձս կերակրոցն և ըմպելեացն , և ինքն ծարաւի և սովեալ , ոչ ինչ օգտի ի տեսութենէն , այսպէս և մեր յեկեղեցի Աստուծոյ ընթեռնուլով և լսելով զաստուածաշունչ գիրս՝ միայն ի բացուստ տեսանելով զնոսա , և ինամբ սովեալ ։ Ոչ յառեալ ընդ երկար ի գեղ նոցա քննութեամբ ցանկամբ , և ի ցանկութենէն ստիպեալք՝ գինս յառաջ բերեմք զիղձն և զարտասուսն , և ապա առեալ զսոյն ի մէնջ ստացող նորին Հոգին՝ տայ զնոսին ի կերակուր և ըմպելի հոգւոց մերոց ի միանջենաւոր ուրախութիւն ի փառս Աստուծոյ , որ է օրհնեալ յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

ՋԻՆՋ ՆՇԱՆԱԿԻՔ ՋԱՒԱՆՋԱՏՐՈՒԹԻՒՆ ՆՈՒՐԱՑՆ ՅԻՇԱՏԱԿ ԿՈՉԵԼ ՓՐԻՍՏՈՍԻ ։

Այս իւր աստուածեղէն պատուիրանին՝ Թէ զայսոսիկ արարէք ինձ յիշատակ ։ Այլ խնդրելի է , Թէ ոյր առաջի յիշողութիւնն լինի , ոմա ուստք . բայց եթէ Հօրն նորա , զորմէ ի յուշ ածեմք զարչարանս միածնին միջնորդ մեզ ողորմութեան , որպէս և խրատեցաք ի Վարիստոսէ առակաւ խնդրելոյ որդւոյն ի հօրէն հաց կամ ձուկն . ի վերայ որոյ բերէ . եթէ դուք մարդիկ ի խնդրելն որդւոյն բարիք՝ գնոյն տայք նոցա , որչափ ևս առաւել Հայրն ձեր երկնաւոր տայէ բարիս այնոցիկ որ խնդրեն ի նմանէ ։ Արդ եթէ մեր սովորութիւն է ի յիշելն մեզուցելոյն որոյ բարկանամք՝ զանուն որդւոյ խանդաղատել . և ի յիշատակ նոցա , և վասն նոցա , Թէ ապառաժ որ է , ի վերայ յանցաւորին ի քաղցրութիւն նուաճել , և վասն նորա ներել սիսաանացն չարացս , քանիօն առաւել ամենաբարի բնութիւնն Աստուծոյ զիջանի յարդար պատուհասիցն սպառնալեաց՝ ի յիշատակել մարդկան և միջնորդ ունել զմեզ Որդւոյն սիրելւոյ առաջի նորա որ մեռաւ . ոչ

1 Մի օրին . Յոյժ յիշատակ ունել Քրիստոսի ։

վայրապար, այլ փոխանակ մեր, և մահ ոչ սոակ, այլ նաև խաւտանաց և խաչի։ Որդ չափեսցուք զի որչափ մեծ է Ոչ քան զմարդ, այնչափ և սէրն Նորա և գութն առ իւրն Որդի, որ վասն մեր ոչ խնայեաց. և զայս գիտելով Որդւոյն որ զմեզ այնչափ սիրեաց՝ զայս ետ պիւրա-դայեթ բնութեանս փրկութեան հնար, իբր թէ ասէ-լով. զայս արարէք ինձ յիշատակ միշտ առաջի Հօրն, և զմահ իմ որ վասն ձեր՝ պատմեցէք նմա. ես գիտեմ հաստատուն զի զմահ Որդւոյս սիրելոյ լուեալ, ՚ի խանդաղատանաց գԹոյն ստիպեալ՝ վասն իմ զամենայն ընդ ինձ արձակէ ձեզ։ Որանզի ծոցածին էր, և գիտէր զամենայն կամն Հօրն հաւաստեաւ. յոր հաւատա-ցեալքս առնումք զՀայդն և զգինին և գնեմք ՚ի սպաս սրբութեանն ասելով. այս նիւթք որ որոշեցան և ար-կան յայս ամանս, ոչ վայրապար՝ այլ որպէս զի ընդ-հօք սուրբ Հոգւոյն՝ Որբիստոսի մահուան առաջի Հօրն իւրոյ լիցի յիշեցուիչ. առ ՚ի յայտ առնել, թէ որպէս այս հացս և գինիս Աչմարիտ առաջի քո մարմին է, այսպէս և Որդիդ քո Աչմարտապէս առաջի քո փո-խանակ մեր մեռաւ. արդ նայեա ՚ի դորա երկիր աչխա-տանացն, և վասն իւր մահուն ներեա մեզ։ Այլ այս խնդիրս ՚ի վերայ սրբոյ սեղանոյն Հանդերձեալ է լինել, իսկ աստ միայն առ յայսպա խորհրդոյն վասն որոշեալ եղան։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՂՕԹԻՑՆ ԶՈՐ ՓԱՀԱՆԱՑՆ ԱՍԷ ՑԸՆԾԱՑԱՐԱՆ ՍԵՂԱՆՈՑՆ։

«Այցուքն Աստուած մեր, որ զերկնաւոր Հացդ զտէր մեր Յիսուս Որբիստոս զկերակուրդ ամենայն աչխարհի առաքեցեր փրկիչ և կեցուցիչ և բարերար՝ օրհնել և սրբել զմեզ.., Հոգւովն և Նորա զօրութեամբ զոր ունիմք, ընդհեցաք ՚ի յառաջակայ սպասաւորու-Թիւնս, և սպասաւորեմք ոմ այլ ումեք, քան թէ այնմ որ ոչ ամօթ Համարեցաւ եղբայր մեր անուա-նել. այնու՝ զի որ սրբէն և որ սրբին՝ ՚ի միոջէ են

1 Մի օրին. Մեկնութիւն սրբոյ Հայրապետին Ներսէսի Շնորհալւոյ։ 2 Մի օրին. Հաւքնեցաք։

ամենեքեան , ապա զՔրիստոս եղբայր ունելով , և զՀոգին գործակից , և զՔրիստոս պատարագ , և զՀոգին նուիրիչ , յայտ է թէ հաշտելոյ սոքօք ընդ Հայր կարօտիմք , և աղերսակիցք են մեզ սոքա առ Հայրն պաղատանաց ։ Յաղագս որոյ և սկիզբն բանիս առ նա կարգէ ասելով . “Յոտուած Յոտուած մեր , Հայր սուրբ , որ զերկնաւոր հացդ զայդ ,, որ ինքն ասաց , “Ես եմ հացն որ ի՛ յերկնից և կեանս տամ աշխարհի ,, ։ Ես զինչ ձեզ ակն աշխարհ ի՛ նմանել , ասիցես . զբաղցրութիւն կամացն և զառատութիւն գթոյն . զի որպէս հայ զգալի զմարմինս զօրացուցանէ , այսպէս և նորա երախտեացն յիշատակ զհոգիս . զի օրհնեաց զմեզ յինքն յանխծիոյն Յաստուած , սրբեաց ի՛ մեղացն տգեղութենէ ։

“Ընկնին դու տէր օրհնեա զառաջադրութիւնս զայս ,, ։ Ընկնին դու որ զմեծ և զանզուգական սէրն առանց խնդրելոյ ետուր՝ նախ քան զմեր թախանձելն . զայս առ քեզ ոչ վայրապար , այլ թախանձանօք խօսիմք . օրհնեա զբոս առաջի քո որոշեցաք զնիւթս , և քեզ հանդերձեալ եմք նուիրել ։ Յառաջադրութիւն ասէ , ցուցանելով զի թէպէտ դեռ չև է տուեալ , սակայն քո առաջի եդաւ , որ զամենայն ինչ տեսանես ։

“Ընկալ զսա յերկնային քո սեղանդ ,, ։ Երկնային սեղան՝ զսեղանն սուրբ որ ի՛ տաճարին խորան է՝ անուանէ , և այժմ զայն խնդրէ՝ արժանի առնել զսոյն ելանել ի՛ վերայ նորին ։

“Որպէս բարերար և մարդասէր զմատուցողքս , և վասն որոյ ի՛ մատուցանի ,, ։ Ի՛նչ ի՛ մէջ առաք սկիզբն առնել մեհու Աղաչող քո յիշատակի . սկսիր այսուհետև և դու՝ որ եաղ մարդասէր , յիշել զմարդիկ ողորմութեամբ և գթութեամբ , որք հաւատոյ ձակիւք վասն մեր և վասն համահաւատարակից մեր մարդկան զսա քեզ հաշտութեան նուէր մատուցանել ։

“Եւ զմեզ անդատապարտ պահեա ի՛ քահանայագործութեան աստուածային խորհրդոց քոց ,, ։ Օ՜ անուն և զգօրութիւն խորհրդոյն նախ ցուցեալ ընդա-

1 Մի օրին . վասն որոյ ։

ձակ, արդ ուսիր այնու թէ որպէս սիրելի և հանդամ խորհրդակից է Յաուածոյ քահանայապետին, և քանզի տեղեակ կանոց նորա, նոյն և գործակից ի պատերազմին ժողովրդեանն. վասն այսորիկ երկնչի, մանդ եմ ասէ, և ի վեր քան զչափ իմ ձկտիմ քեզ անհաս բնութեանդ ծածուկ խորհրդով խօսակցել[1]. աղաչեմ մի դատապարտեցայց ի ժպրհելս ի սոյն դրուագիս տկարութեամբ։

«Օ՛ի սուրբ ես Յաուածոյ մեր, և քեզ վայել է փառք»։ Սուրբ ես բնութեամբ, և կամիս զմեր սրբելն և ընդ քեզ խառնել ողորմութեամբ, և չիք ի քէն արգելեալ մեզ ընդդէմ. վասն որոյ քեզ փառք։

ԸՆԴԻՄ ՍԱՐԿԱՒԱԳՆ ԾԱԾԿԻ ՉՍՊԱՍՄՆ ԵՒ ՆԱ ԲԵՐԻ Ի ՍԵՂԱՆՆ ԵՒ ՆՈՑՆ ԴԱՐՁԵԱԼ ԲԱՆԱՅ ՑԵՏ ԿԱՏԱՐՄԱՆՆ ԵՒ ՄԱՒՐԻ

Սարկաւագն պաշտօնեայ Թարգմանչի և սպասաւոր. և պաշտօնեայ է սա ոչ մարդոյ, այլ Յաուածոյ, նորին սեզանոյն, և նորին բանին. և են յաստիճան Աաեփանոսի և իւրոցն. քանզի ասէ պատուհասիւն գործոց[2] առաքելոցն. ոչ է պարտ մեզ, ասացին առաքեալքն, Թողուլ զբանն ԱՅ և պաշտել զսեղանան[3]. ընտրեցէ՛ք եղբարս վկայեալս ի ձէնջ, զորս կացուցցուք ի վերայ պիտոյիցս այսոցիկ, և մեք աղօթից և բանին հպատակ լիցուք. և ընտրեցին զՍտեփանոս և զՓիլբոս, և ձեռնադրեցին առաքեալքն զնոսա ի պէտս այսորիկ։ Յարդ յորժամ պատարագէրն Պետրոս, Աստեփանոսի հարկ եր բերել զպատան, և զՎայն առաջի նորա դնել, բանալ և ծածկել, մաքրել և պահել, և նա միայն զաղօթսն կատարէր ի վերայ, որպէս ասացն, և զնոյնն սրբէր։ Ա՛ ասն այսորիկ սոքա զնացա[4] գործն կատարեն՝ զպատասխանութիւնն. և քահանայքն զՊետրոսին միայն, զաղօթեն և օրհնել։ Արկրորդ՝ քահանայս պատգամ է առ Յաուածոյ ի ժողովրդենէն, և պատարագն նուէր և ընծայս ընդ նմա, ի նոցանէ ա-

1 Մի օրին. Խօսիցեալ։
2 Մի օրին. Գործ։
3 Երկու օրին. Ձեզանն։
4 Մի օրին. Ձնորս։

ռեալ՝, անմարթ է պատգամին իւրովի ունել զընծայսն, և խօսել զբանն, որպէս և մարգկան այս է սովորութիւն. այլ միայն նա զհրեշտակութիւն բանիցն առնէ, իսկ սա զնուէրսն բերէ մինչև ՚ի նա. և առեալ ինքնին քահանայն դնէ առաջի Աստուծոյ ՚ի սեղանն։ Այլ և սարկաւագն պաշտօնեայ տէրունական սեղանոյն և նորին սպասուցն[1]. իսկ կէս սարկաւագն՝ քահանային և նորին[2] զգեստուցն. վասն այսր չէ համարձակելի սմա ՚ի տէրունիան ձկտիլ, և ոչ քահանային որ աղօթիցն է հպատակիչ, պարտ է ՚ի գործ ձեռնարկել, այլ զհպատակութիւնն սպասաւորութեան մարմնական նշանակացն կատարէ սարկաւագն՝ առնելթէր նորին համարձակաբար, ծածկել և բանալ, աճել և տանել, և զորս ՚ի սոյն յարին գործք։

ՉԻՆՉ Է ԽՆԿԵԼՆ ՉԸՆԾԱՅՄՆ[4], ԵՒ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՆՈՐԻՆ ԱՂՕԹԻՑՆ

Խոնկն է զգալի անուշահոտութիւն, ըստ որում աղօթքն իմանալի. արդ յետ ծխելոյ զաղօթսն ոչ բաւական համարի, այլ որպէս իմանալի և մարմնաւոր՝ տայ Աստուծոյ և զմարմնական անուշահոտութիւնն. ըստ որում և աղօթիւքն յայտ առնէ. «Խոնկ մատուցանեմ առաջի քո Վրիատոս Աստուած բուրումն հոգևորական»։ այսինքն ընդ զգալի իմկոյս և զհոգւոյս ծուխ արծարծման կայծականց սիրոյս աղօթիւք նուիրեմ քեզ։

«Ընկալ ՚ի սուրբ և յերկնային և յիմանալի քո մատուցարանս ՚ի հոտ անուշից»։ Ա՚ի երկին կոչէ ըզտաճարս և զերկինս. վասն որոյ ասէ՝ զգալի խոնկս ՚ի զգալի մատուցարանս, ուր զգալի մարմին մատուցար, ընկալ և զիմանալի աղօթս իմանալի սրբարանդ, ուր միշտ կենդանի ես՝ լինել բարեխօս վասն մեր, առ քեզ բուրումն անուշից։ «Ընդաքեա առ մեզ փոխարէն ըզընծայսդ և զպարգևս հոգւոյդ սրբոյ»։ Ո՚ի այսմ կարօտի այժմ զհոգին ունել գործակից։

1 Երկք օրին. Աստուածոյ։
2 Երկք օրին. Քահանային։
3 Մի օրին Խոր։
4 Այլք. Չինչ խունկն ընծայ։

ԶԻՆԶ ՆՇԱՆԱԿԻՑ ՔԱՀԱՆԱՅԻՆ ՆՈՑՆ ԵՒ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ ՇՈՒՐՋ ԳԱԼՆ ԽՆԿԱՐԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՄԲՆԵՔՈՒՄԲՔ ԵՒ ԴԱՐՁԵԱԼ Ի ԲԵՄՆ Ի ՍՈՒՐԲ ԴԱՒԻԹԱ, ԵՒ ՄՏԱՆԵԼ Ի ԽՈՐԱՆ

ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ սկիզբն առնել խնկարկութիւն սեղանոյն, և մինչև ցյետինս ժողովրդոյն զանուշահոտութիւնն ընդունել, և անդրէն ի նոյն կոյս դառնալն, այսորիկ խորհրդոյ է նշանակ. քանզի գերագոյն գոլով քան զամենայն աստուածայինն երանութիւնն, թէպէտ և յառաջ գայ բարեբարութեամբն ի կցորդութիւն մարդուս բնութեանն հրեշտակայ, զօրութեամբ է այս. իսկ ըստ էութեան՝ և ոչ երբէք շարժի յանշարժականէ փառաց աթոռոյն՝ տալով զլուսափայլութեան Աստուածայնոցս յոր շուրջ զնուբեաւ են դասաւորեալ հրեշտակքն, և յիսկական էութենէն ոչ երբէք տապալի։ Այսմ այսմ համեմատութեան տեսցես և զնորհս սրբոյ պատարագիս կատարման. որոյ սկիզբն գոլով Աստուած բանն, որ թէպէտ և ծածուկ է ի մէնջ և անհաս, պարզ և անձառ, սակայն շարժեալ ի մարդասիրութենէն՝ տպաւորէ զինքնութիւն փառաց իւրոյ էութեան յառաջագրեալ նշանակ հայիս և բաժակիս, և ի ձեռն Աշակմանն իմացականապէս բնակի ոչ միայն ի քահանայիդ դասն, այլ և յամենայն լրումն սուրբ գնդի եկեղեցւոյն, և միացուցեալ ընդ ինքեան զսրբութեամբ համարձակեալսն, միանայ և ի սոցա սրբութիւնն, որովք դարձեալ յիւր միութիւնն ժողովի, փոփոխեալ զանճմանան ի նմանութիւն մարքրութեան և աստուածութեան իւրոյ. և ըստ որում անմարմնապէս փառօք ի հրեշտական մերձենայ կինքեան մնալովն, և վերբերէ զնոսա առ իւր գիտութիւնն, այսպէս և մարմնատեսակ երևմամբ ի ձեռն սրբոյ գոհութեանս՝ և մարդկան հաղորդի, և առ իւր միութիւնն զմեզ դարձուցանէ։ Աստի և քահանայապետն ըստ սոյն աստուածատեսակ օրինակի խնկարկութեամբն շուրջ գայ զամենեքումբք, ուսուցանելով

1 Մի օրին. Ցնծութ [illegible]։ 2 Մի օրին. Ձ[illegible]։

այսու, Թէ որպէս Յ[1]ստուած զլուսափայլութիւն իւր՝ ի հրեշտակս տայ և յինքեան ձեայ, և տէրն զնարմին իւր մարդկան՝ զորս առ ինքն միացուցանէ, այսպէս և քահանայապետն՝ որ է պատկեր Յստուծոյ, խնկարկութեամբն նշանակէ, Թէ և սա զինքեան պարգևան իջուցանէ մինչև՝ ի նուաստագոյնսն. որպէս զբան վարդապետութեանն, զկնիքն և զձեռնադրութիւնն, զորս միւս մատակարարել ամենեցուն ըստ իւրաքանչիւր արժանեաց առատապէս և ազատ կամաք. ըստ յորում ցույի ինկոցն՝ զանուշահոտ ընծայսն յամենեսեան իմանայականապէս սիրէ, որպէս և զխունկն մարմնապէս, որովք յիւր մաքրութեանն տիպ զարձուցանէ զնոսա, և ինքն յետ այսորիկ որպէս անբծբծնելի՝ ի նուաստագունիցն՝ յիշխանական տեղ կայանին իւրոյ աննուազ զաբար գառնայ. քանզի այս պաշտամունք սպասաւորութեան երկրորդ են պատուոյ նորա։

Յորդ կատարեալ զնախախնամութիւնս զայսոսիկ՝ որպէս Յստուած՝ ի հրեշտակս, և սա առ եկեղեցին, զոր խնկարկութեամբն նշանակէ, զարձեալ ելանէ՝ ի բեմն. և որպէս Յստուած ճեայ յիւրում ինքնութեն, յայտ առնելով նշանակութեամբն Թէ զայսոսիկ սպասաւորութիւնսս սակս փրկութեան Ժողովրդեանն կատարեաց, բայց ոչ՝ ի բաց եկաց յինքնիշխան պատուոյն, այլ յառաջին տեղին վերացաւ, այսինքն յաստուածտեսութեան բարձրութիւն բեմին, Յանդի և զՅստուծոյ ասացաք, Թէ միայն լուսափայլութեամբն ծագի՝ ի հրեշտակս, և ոչ էութեամբ. զորոյ ձեղրիտ պատկեր բերէ քահանայապետն, և ուսուցանելովն խոնարհեալ և խնկարկութեամբն առ ամենեսեան ընծայեալ, և ապա յետ այսորիկ յինքնական պատուին վերադարձեալ անշարժ սերտութեամբ՝ ճեալով՝ ի բեմն սուրբ, յայտնի կացուցեալ նշանակաւն զայս՝ Թէ զայսոսիկ յառաջ եկեալ նախախնամութեամբ՝ ի յերկրորդն պատուոյ իւրոյ, այսինքն՝ ի գործելն և՝ ի խրճկարելն՝ Ժողովրդեանն փրկութեան աղագաւ արար։ Սակայն ոչ՝ ի բաց եկաց՝ ի վերուն գործելոյ և յիւրում գոլոյն, այսինքն յաստուածտեսութեանցն բարձրու-

1 Մի օրին. Տէ---ին՝ ։

թէնէ , այլ յաստուածայնոյն յիշխայինան դարձաւ . որպէս թէ մինչ 'ի փրկագործուԹէնէ պաշտման ' իբրև կարկուԹեանն յաստուածաբնակ տեսուԹեանն բարձրուԹիւն դարձեալ , ըստ կամաց Հոգւոյն սրբոյ իջեալ , և անդրէն վերացեալ ։

ՉԻՆՉ ՍԱՐԿԱՒԱԳՈՒԻՆ ԱՒ ՓԱՌԱՒՈՐՑՆ ՉԱՑՆԵԼՆ ՈՐՊԷՍ ԶԻ ՕՐՀՆԵՍՑԷ ԶՍԿԻԶԲՆ ԱՂՕԹՒՑՆ

ՈՐՊԷՍ եցոյց բանս Ձմարիա [1] խուզողացն՝ քահանայն զսպասաւորուԹիւն գործոյ անօրէնուԹեանն կատարեաց յերկրի առ մարդիկ , այսինքն 'ի տաճարին , և եմուտ յերկինս 'ի խորանն . ըստ որում ՚Քրիստոս յետ անօրէնուԹեանն վերացաւ անդր՝ քահանայապետ մեզ և բարեխօս ։ Պարտ Թէպէտ և է ՚Քրիստոս մեզ բարեխօս , սակայն պահանջէ և 'ի մէնջ ինդրել աղերսիւ զիւրն բարեխօսել . այսպէս և սա 'ի պատկեր ՚Քրիստոսի եմուտ յերկինս իմացականապէս առաջի Աստուծոյ , կալ մեզ բարեխօս արտաքոյ կացեալ ժողովրդեանն . սակայն անկ է նոցա հայցել զմաղԹէնն և զբարեխօսելն և զմիջնորդելն . վասն այսորիկ սարկաւագն , որ է վարդապետ ուսուցիչ և դաստիարակ ժողովրդեանն , 'ի մէջ կացեալ՝ բերան լինի ամենեցուն , և 'ի դիմաց հանուր եկեղեցւոյն ձայնէ առ նա որպէս յերկրէս առ ՚Քրիստոս , այսպէս և 'ի տաճարին առ քահանայն . " ( )րհնեա տէր ,, ։ Պայմանն զու ես տէր մեր փոխանակ ՚Քրիստոսի և յետ նորա . արդ օրհնեա և մատո զաղաչանս մեր առաջի աստուածուԹեանդ , որպէս և ՚Քրիստոս միշտ բարեխօսէ վասն մեր առ Հայր . ըստ այնմ , " ԵԹէ 'ի ձեռագործ սրբուԹիւնն եմուտ ՚Քրիստոս , այլ 'ի բուն իսկ յերկինս՝ յանդիման լինել առաջի երեսաց Աստուծոյ վասն մեր ,, . առ որ մատչել Ձմարիա սրտիւ լրումԹեամբ հաւատոյ առաքհրաման , և մատչիմք ոչ ամենևքեան , այլ սա փոխանակ բնաւիցս , առ որ ձայնեմք Թախանձանօք . օրհնեա

1 Երկու սրբն . Պաւղոս . 2 Մի սրբն . Ստեփ .

և խառնեա՝ առաջի Աստուծոյ զպաղատանս մեր. իսկ նա ակամբ ասպա.

"Որչափ թագաւորութիւնն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ", Ի մեծամեծ ինդրուածս հանդերձեալ է ինդրել, նախ օրհնէ, քանզի օրհնութիւն է՝ յէից բարեաց մերոց եղեալ Աստուծոյ բարեբանութիւն. այսինքն զորոց ունիմք նախ ընդունակալութիւն, և ապա կարզաւորապէս յետ այնր՝ այլոց խնդիր. վասն այսր՝ ի սկզբանս օրհնէ՝ ընդունել տուեալոց[2] բարեացն, որ՝ ի տերութենէն Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն ընձեռեցաւ մեզ.

"Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից", Այժմ զնեերկայս ցուցանէ, այսինքն զժամանակս որ՝ ի մէջ[3] է, իսկ միշտն զապառնին որ գալոցն է, և յաւիտեանս յաւիտենից զանհատն և զանկէտն. քանզի յաւիտեան ոչ ժամանակ, և ոչ ժամանակի մասն ինչ, յորում յամենայնն ասէ օրհնութիւն Աստուծոյ. ոչ միայն՝ ի մէնջ որ այժմ եմք և օրհնեմք, այլ և յիւրաքանչիւր եկեղեցւոյն[4], յիւրաքանչիւր աւուրս. իսկ ժողովուրդն կոչի նմին ասելով. Ամէն. այս ինքն թարգմանեալ և է, թէ զոր ինչ ասացեր օրհնութիւն փոխանակ մեր միջնորդ և հրեշտակ առ Աստուած քահանայ, այդպէս է[5] Ճշմարիտ, և է միշտ օրհնութեան արժանի սուրբ Երրորդութիւն յամենայն ժամանակս.

ԸՆԴԻՐ Ի ՄԻԱՒՒՆ ՍԿՍԱՆԻՆ ՍԱՐԿԱՒԱԳԻՆ Ի ՄԻՋ ԵԿԵՂԵՑՒՈՑՆ ԶՔԱՐՈԶԵԼՆ ԵՒ ԶՈՅԳ ՆՄԻՆ ՓԱՌԱՆԱՑՆ Ի ԽՈՐԱՆՆ ՍՈՒՐԲ ԶԱՂՕԹԵԼՆ

Ա՛ր՝ որ կարծեսցէ վայրապար և կամ երագութեան վասն զսահման զոյգ միմեանց լինելոց քարոզութեան սարկաւագին և աղօթից քահանային, և կամ երազ ունայն զատեսցի միայն լուել՝ մինչև յաւարտել միւսոյն, այսինքն քահանային՝ մինչև սարկաւագն լուէ, և ապա սկսանել. այլ պարտ է գիտել, թէ զուգընթաց միմեանց լինել՝ այսր աղագաւ սահմանեցաւ, քանզի նոյն

1 Երկու օրին. խօ-է։
2 Երկու օրին. Տ--էշէլ։
3 Երկու օրին. Ի ՄՀՒ։
4 Մի օրին. ՑԷ|Է-էշ--ԸՒ։
5 Մի օրին. ԱՇ է։

է խորհրդոյն զօրութիւն, զոր ինչ քահանայն խորհըրդաբար ինդրէ, և զոր ինչ սարկաւագն ժողովրդեանն բարձրաձայն հրամայէ աղաչել։ Եւ ամն այսորիկ համաձայն նոցա պարտ է լինել միաբանց, որպէս զի ցուցցեն ժողովուրդքն Ս. հոգւոյ՝ ըստ հրամանի դաստիարակին սարկաւագին աղաչելով՝, թէ զոյգ է մեր իղձք կամաց քահանային, որ եմուտ ամենեցուն մեր փոխանակ առաջի քո. և թէպէտ տղայք եմք յիմաստից, և ոչ կարեմք այդպէս հարազատաբար աղաչել զքեզ, սակայն զտէր ողորմեայս ձայնելովս՝ թախանձեմք ողորմած կամօք տալ զինդիրդ, զոր խորհրդապէս մաղթէ քահանայդ, և սարկաւագին յորդորելն վարդապետութեամբ քարոզութեանն գնոսա՝ ի սոյնս հայի։ Ս. պատ ամենայն իրօք պարտ է դիտել, թէ որպէս ամենայն քարոզից զանազանութիւն առ այս հային խորհուրդ՝ սահմանուն ժողովրդեանն աղօթակից լինել քահանային, զոյգ պարտին միաբանց աղօթել, և ի միասին առարտել, քահանային ծածուկ խօսելով, և նոցա միաձայն և յայտնի։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆ ՍԵՐԿԱՒԱԳԻՆ

ՍՈՐԱՆՆ սուրբ է նեղբին կողմն վարագուրին, որ է նոյն ինքն աստուածութիւնն՝ ուր եմուտ պատկերն Ս. հոգւոյ քահանայն, անցեալ ընդ երկինս ըստ կարգաւորին մերոյ Ս. Քրիստոսի, յանդիման եղեալ երեսաց Ս. հոգւոյ լինել բարեխօս վասն մեր։ Ահա եկեալ ցեցիս երկրորդն որ յետ նորա երկին, ուր մարդիկ հաւատարմ հրեշտակաց եղեալ՝ կան ի պաշտօն փառատրութեան անձրպետապէս առաջի Ս. հոգւոյ, և սարկաւագն բերէ յինքեան զտիպ իմանալի զուարճանոցն. զի որպէս նոքա երկատեսակաբար առնուն յՍ. հոգւոյ զգիտութիւնն, և տան միաբանց ըստ չափոյ կարողութեան ընդունելոյ խոնարհ դասուցն, այսպէս և սա մտանելովն ի վերին տեղն ի խորանն սուրբ անընդմիջաբար հպելով յՍ. հոգւոյ, որպէս զքերովբէից, և ի պատկերն Ս. Քրիստոսի քահանայն, և ծանեալ զկան

1 Մի օրին. Աղաչելով։ 2 Մի օրին. Փառաբանութեան։

քահանային որպէս հրեշտակ ՚Ի՚սուսին՝ թէ մերոյ փրկութեան վասն մտքին, որ ապտաքոյս եմք, բարեմտութիւն բերէ յինքն հաւատալ սուրբ զաւրութեանցն. և ըստ որում նոքա զիրեարս, նա և զմեզ զարթուցանէն ՚ի սէրն ՚Ի՚սուսծոյ, այսպէս և սա եկեալ յեկեղեցին՝ զանձնաւ գիտութիւն խորհրդոյն զոր ինքն կալաւ թագնաբար, որպէս և սերովբէն՝, ըստ կարի ժողովրդեանս տանելոյ ազդէ նոցա որպէս և հրեշտակաց՝ ասելով. միջնորդն ձեր և քարոզչեան քահանային՝ որ անց ընդ երկինս իմանալի մտօք վասն ձեր ամենեցուն յանդիման կայ ՚Ի՚սուսծոյ՝, և խնդրէ զփրկութիւն բնաւիցդ թախանձանօք. զարթիք և դուք, ըզգաստացիք, և ըստ կարի հաւատարեցէք նմին աղօթիւք, որպէս զի մի նորայն լոյծ՝ ի դերև՝ զձերդ օտար ունելով յինքեանէ զընթացս կամաց. և թէ զմրս և որպիսիս՝ խնդրէք, ձայնակցել նմին ուսուցանեմ՝ ձեզ՝

“ Լաւ ևս խաղաղութիւն զտեր աղաչեսցուք ,, ՝ Լայց պարտ է գիտել. զոր խաղաղութիւն և ևս առաւելապէս հրամայեէ հայցել ժողովրդեանն, մի արդեօք ըզմարդկայինս՝ որ առ իրեարս ՚ի խռովութենէ թշնամութեանն նուաճումն սիրով. և ոչ երբէք. այլ այժմ զայն խաղաղութիւնն մաղթել հրամայէ՝ որոյ վասն և քահանայն ժամ, և նորա մաղթանքն է՝ ՚Ի՚սուսծոյ առ մարդիկ ունել խաղաղութիւն, զոր ծանուցեալ սովրեցոյց ասելով յետ խնդրելոյ սոցին. “ Խաղաղութիւն ամենեցուն ,, . այսինքն թէ խաղաղութիւնն զոր խընդրեցիք հրամանաւ սարկաւագիդ՝ տուաւ ձեզ ամենեցուն ; ՚Լրդ չև ևս առեալ զայն խաղաղութիւն սաքաւագս յորդորէ զնոսա խնդրել աղաչանօք զխաղաղութիւնս զայս, զոր ՚Լրիստոս հաստատեաց մահուամբն իւր, և ետ ՚ի ձեռն աշակերտաց իւրոց հաւատացելոցս . “ Խաղաղութիւն զիմ տամ ձեզ, զխաղաղութիւն զիմ թողում ձեզ ,, . այսինքն զի ՚Ի՚սուսած մերձ է առ ամենեսեան, և տեսող բնաւիցս գործոց և անգործից. բայց մեք խորոց թշնամութեան արկանեմք զմեզ և զայնցանս ՚ի միջ մեր և նորա, և անտես

1 Մի օրին . Որոյ- -երբ-էբէ :
2 Մի օրին . Ա-ա-ջէ Ա-ա--ծոյ :
3 Մի օրին . Ո-գի-ի էր- :
4 Մի օրին . Ո----յանէմ :

լինիմք մեք և աղաչանք մեր. վասն այսորիկ ասէ, յանցանօք մեր Թշնամութիւն եղաւ ընդ մեզ և ընդ տէրն մեր. Նախ զայս աղաչեցէք, և ՚ի յիրաւամբք խռովութենէն ՚ի հաշտութիւն գալ ընդ ձեզ՝. որպէս զի այնուհետև և այլ խնդիրքն զոր հայցեմք՝ նմին քաղցր կամօք լսելի լինիցի. և զայս մի դանդաղելով, կամ որպէս զհալևանցի իրս խնդրէք, այլ ևս առաւել ապէս. յայտ է ամենայն զօրութեամբ, և ամենայն կամօք բախեցէք նախ՝ և զդրունս սիրոյն բացէք, խաղաղութեամբ և հաշտութեամբ նայել ՚ի մեզ. Թէ զայս առնուք, հաւատացէք զամենայն խնդիրսն ընդունել, զի առատ և մարդասէր է տէր սիրողացն իւրոց. արդ աղաչեցէք ասէ առաւելապէս զտէր, Ոակ նոքա որպէս դաստիարակի և վարժապետի չօժար կամօք հաւանեալ, և միաձայն՝ ասեն. "Ցէր ողորմեա,,, ՚ի փոքր բանս յայս զոր ասացին առ Ա՛ստուած՝ պարունակեալ զամենայն Թախանձանս կամաց իւրեանց. քանզի յորժամ Ա՛ստուած ողորմի, զամենայն ինչ ընդարձակ առնէ այնոցիկ որոց ողորմի, զի կարող է. բայց ախորժեմ փոքր ինչ և զզօրութիւն ողորմածութեանն սահմանել, զի պարզապէս յայտնեսցի բանս՝ միշտ աղաղակել յեկեղեցի, Ողորմութեան հայցումն է՝ բժշկական զօրութեամբ ՚ի Թշուառութիւնս մեր մերձենալ առ Ա՛ստուած, և սիրոյն ստիպումն՝ հայցուածովքս խառնել ընդ մեր կարօտութեանս Թշուառութիւն՝ զախտակցութիւն կամացն, լինել և նմա կամօք ՚ի տրտմութեանս դժուարութեան լծակից՝ յոր մեք վտանգիմք ՚ի հարկէ. և է ողորմութիւն ըստ ձըշմարիտ սահմանի՝ կամաւոր տրտմութեան ստիպումն նմա՝ վասն ծառայից վշտաց չարչարակից՝ տեառն, Ա՛ւ ևս յայտնագոյնս առնելով ասեմք. ողորմութիւն ստուգի՝ դժուարակրացն և վտանգելոցն ՚ի բացուստ տեսութիւն և ախտակցութիւն ՚ի բնաւորական սիրոյն շարժմանէ խանդաղատեալ, և յողորմելի տեսութենէն՝ որպէս ՚ի կրից վշտակցեալ. արդ զայսպիսի ախտակցութիւնս Թախանձեմք ունել տեառն մերոյ առ իւրա-

1 Ներկու օրին. Գ-ու ընդ ձեզ։ 3 Մի օրին. Ձ-ըշմ-արիտ։
2 Ներք օրին. Մի-յ-նե-ս։ 4 Ներք օրին. Սուխտ։

քանզիւր Հայցուածս մեր յատեն, "Տէր ողորմեա ,, ։ Օ՛ թէպէտ և՝ ի բացեայ ես՝ ասելով՝ ի մէնջ, և՝ ի մերս աղցատոր կրից ըստ բնութեան օտար, սակայն անձառաբար տեսանես, և միշտ քննես տկար և վշտա ցեալ ղողորմելիքս, և քո օգնականութեանդ առ իւրա քանչիւր Հայցուածոդ կարօտեալ ։ Այդ աղաչեմք, խառնեա զառատագութ՝ կամդ ընդ նեղութիւնս մեր, և տես ողորմութեամբ զիւրաքանչիւրդ՝ ի Հայ ցուածոդդ ախտակցութեամբ, և որպէս ամենակարող՝ արա մեծ այցելութիւն ըստ բազմապատիկ Հայցուա ծոցդ բազում ողորմութիւնդ կատարելով զինդրուածս, զոր համաձայնութեամբ ամենեքեան կցորդեալ դաս տիարակիս մեր և առաջնորդիս՝ աղաչեմք, և իբր թէ ասելով. տէր, տեսեալ զմեզ յայսպիսի վտանգս՝ լաց ընդ մեզ, տրտմակից լեր մեզ, կարօտակից լեր. զի այսոքիկ և այսպիսիք են ողորմութեանն պտուղք ։

"Ա՛ման՝ ի վերուստ խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց զտեր աղաչեսցուք ,, ։ Տես, զի զխաղա ղութիւն ոչ զոր յերկրէ ասաց վերադոյնն, այլ զեր կնայինն, ըստ որում և յատելոյած բանիս զնոյն տնտե սէ ։ Խաղի Հայր է Աստուած, և հայրաբար գութ ունի առ եկեղեցիս, ո՞ այլ որ արգելու զնոյն, եթէ ոչ մեր ըմբոստանայն, և անհնազանդութիւն օրինաց նորին. սակս որոյ և խռովի, ոչ յինքեանէ, այլ՝ի մէնջ զպատճառն ունելով։ Այդ մեք, ասէ սարկաւագն, եղբարք, զղջացաք յըմբոստանալոյն, և եկաք՝ ի միա սին ասա խնդրել զերեսս Հօրն մերոյ Աստուծոյ, և Հայցել՝ի նմանէ զփրկութիւն. նախ աղաչեցէք լինել իւր ընդ մեզ Հաշտութեամբ[1], և ապա առաքել՝ի վերուստ զնախախնամական զօրութիւնն. և խաղա ղացուցանել զմեզ յամենայն խռովարար ներգործու թեանց թշնամւոյն, որով զանազ թշնամութիւն առ նել՝ի մէջ մարդկան և Աստուծոյ ։ Տալ մեզ աղաչե ցէք զվերին խաղաղութիւնն, զայն որ՝ի մէջ հրեշտա կացն է և աստուածութեանն. զի մեք այնպէս ունի ցիմք ընդ Աստուած համակամութիւն. խնդրեցէք զի

1 Մի օրին. Հաշտութեամբ։ 3 Երեք օրին. Հաշտութիւն։
2 Մի օրին. Աղեաւթ։

փրկեացին անձինք մեր յայսմ խափանողաց արկածից։ Լակ նոքա զնոյն բան երկրորդեալ, և ըստ այսմ մանրին զվճռակցութիւն Յ՚սուածոյ պահանջեն առեալով, "Տէր ողորմեա ,, ։

" Ա՚ան խաղաղութեան ամենայն աշխարհի, և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ, և ամենեցուն օրհնեցութեան ՝, զտէր աղաչեսցուք ,, ։ Յետ զերկնայինն ունելոյ խաղաղութիւն՝ ըստ կարգի եկեալ և ամենայն աշխարհի պահանջեն, այսինքն հաւատացելոց և անհաւատից ։ Ի՚ստ այսմ մասին ոչ թէ միայն ՚ի սատանայական խռովութեանց, այլ և ՚ի մարդկանէ՝ որք զինեալ՚ի նմանէ [2] ընդ միմեանս ՚ի թշնամութիւն պատերազմեա յառնեն, զմիմեանս գազանաբար սպանանեն, զբնաւորական գութն ունայնացուցանեն, զանբնական ատելութիւնն ներդործեն, ուստի զըղխեալ չարիսն ո՞ կարէ թուել ։ Ի՚նտի սպանումն, ՚ի նմանէ գերութիւն, զրկումն, ծառայութիւն, ՚ի պէտս այնր աշխատութիւն պարապայ, պատրաստութիւն զինուց, խրոխտումն երիվարաց. նորին վասն անձաւք բնակութիւն մարդկան, քարակոշտք հանպատարանք, հարթ և գեղեցիկ տեղ՝ ատելի ։ Օ՚ի թէ խաղաղութիւնն ՚ի մէջ էր, ոչ գժուարինքն բնակութիւնք, և սիրոյ տեղք ամայիք, ոչ ումն ծառայ և այլ ոք բանդեալ. ուստի կարևոր քան զամենայն ինչ զայս խնդրէ աշխարհի ամենայնի. յաւելու և զՀաստատութիւն եկեղեցւոյ, քանզի արմատ նորա [3] հաստատութեանն արտաքոյն է խաղաղութիւն ։ Օ՚ի յորժամ թշնամեացն յարձակումն կարճի, սուր և գերութիւն խափանի, եկեղեցի պայծառութեամբ հաստատի, և իւրաքանչիւր ոք ՚ի բարեպաշտութիւն յորդորի. ընդ որ լծէ ամենեցուն օրհնեցութեան. քանզի որպէս ՚ի խաղաղութենէն հաստատութիւն գայ յառաջ, այսպէս ըստ կարգի հաստատութեամբն օր ըստ օրէ յամենեցուն բերանն օրհնեցութիւն Յ՚սուածոյ առատանայ, զոր պարտական եմք միշտ հատուցանել նմա, ըստ այնմ. " ( )րհնեցից զտէր յամենայն ժամ ,, . և դարձեալ, " ( )րհնել միշտ ՚ի սիրտս ձեր զՅ՚սուած ,, ։

1 Երկու օրին · Օրհնէրգութիւն ։ 3 Մի օրին · Սուտ ։
2 Մի օրին · Ի մարդկանէ ։

«Ա՝ան սուրբ տանս այսմիկ, և որոց Հաւատով ընկալեալ զերկեզ տեառն աղօթեն՝ ի սմա, զտէր աղաչեսցուք»։ Տես դարձեալ թէ ոչպէս բարեկարգութեամբ տանի զընթացս բանին. նախ երկնի և երկրի խնդրեալ զհաղորդութիւն, և ապա աշխարհի առ միմեանս. յետ որոց եղականապէս որոշէ զժողովեալ տաճարս՝ ի հանուրցն, և առաւել սորին վասն թախանձել յորդորէ։ Այլ ասա մեզ ոմն երանելի պաշտօնեայ, զիարդ մեզ որք՝ ի տանս եմք մարդկան հրամայես այնչափ փութով՝ վասն անձանոյ աղերսել։ Այս ասէ ոչ միայն զձեզ զիտեմ ասա, այլ և համաձայն ձեզ զդասս հրեշտակաց. զի եթէ տէրն հրեշտակաց ըստ անսուտ խոստմանն է՝ ի մէջ ժողովելոցս յանուն նորա, ընդ նմա են և լեգէոնք իւրոցն սպասաւորաց. և թէ աղօթս մեր տեսանել զերեսս Հօր մերոյ, յայտ է թէ հրեշտակքն մեր առնուն և բարձրացուցանեն զնոսա, որոց առաւել հրամայեմ աղաչակից ինձ լինել քան թէ ձեզ, և նոցա մտերմաբար վասն՝ ի տանս ժողովելոցս զտէր թախանձել, ըստ որում են մարդասէրք և աստուածասէրք։ Այլ թէ զորպէսն այսմ հաւատալ կամիք յինէն պահանջել, ընթացիք՝ ի պատմութիւն սրբոյ Հօրն Ապիւռիգեայ, և գտանիք զասացելոցս յայտնաբանին. քանզի յորժամ սարկաւագակից իմ՝ հեզգայաւ ըստ եպիսկոպոսին հրամանի լուցանել զկանթեղն՝ նայեցեալ՝ ի սակաւութիւն ժողովոյն, հրեշտակք պատասխանէին նմա՝ ի քարոզութեանն զՏէր ողորմեա, կշտամբեալ՝ զլերադաւաւթիւնն, Այն եկեղեցի զոլով և նոյն պաշտօն, հաւատացեալք զՀաւատով և ընդ մեզ ունել զնոսին երգակիցս և աղաչակից առ Աստուած կցորդ։

«Ա՝ան հայրապետին մերոյ կենաց և փրկութեան զտէր աղաչեսցուք»։ Արդէս առացեալ, կարգ ունի հետեւումն հրամանական աղօթից. զի յորժամ զտաճարս Աստուծոյ և զընտակիչս առ Համանգամայն, ապա սկսանի յանուանէ յիշել զիւրաքանչիւր որ՝ ըստ չափոյ պատուոյն նախապատեալ. և ո՞ ունի յեկեղեցին զառա-

1 Երկաս սրին · Փ--ի--։ 3 Մի պրին · Ա--ր|---փ ՝ր։
2 Երկաս սրին · ժողովրդոց։ 4 Մի սրին · Կշ--ի՛ե։

ջին տեղն եթէ ոչ եպիսկոպոսն, որ է փոխան Քրիստոսի՝ առաջնորդ հոգւոց, և նորա փրկութեանն և ողջութեանն ջնորհ յամենեսին ազդէ. ուստի նախ նորին վանն աղօթեացուք՝ նմա ասէ, զի մի երբէք այլ թաղաքեալ հովուին, ընդ նմին հօտքս լինցուք գահավէժ։

"Ա՝ առն պատուական քահանայից, և որոց՝ ի Քրիստոս սուրբ առաքեալացդ, և ամենայն ժառանգաւորաց եկեղեցւոյ զտեր աղաչեացուք.,, Որքա զերկրորդ և զերրորդ կարգ պատուոյ յեկեղեցիս ունին յետ եպիսկոպոսին, ըստ իւրաքանչիւր աստիճանի ժառանգակիցք Քրիստոսի և իշխանք հոգւոց. որոց փրկութիւնն ոչ անձանց միայն է օգուտ, այլ և ամենայն ժողովրդեանն, սակս այսր վանն նոցա աղաչէն։ Այլ մի եղբարք հպարտացուք վասն նախադասութեանս, այլ զայն ածցուք զմտաւ, թէ "Որում շատ տուաւ՝ շատ խընդրեսցի՝ ի նմանէ.,, և ոչ թողու Աստուած զպատիւս իւր ընդ վայր, առ՝ ի յոչ պահանջել զկշիռ պաղոյ գործոյն՝ որ հատատացաւ նմա. այսինքն որոց Քրիստոսի ժառանգակիցք են և անուանին, ոչ միայն՝ անձանց լինել լաւ, այլ և զայլս լուսաւորել ըստ իւրաքանչիւր պաշտաման գործոյ. ապա թէ հեղգամ, ուրեմն՝ ի ձեռին հատատատութեամբ զպատիժ չար և վատ ծառային։

"Ա՝ առն բարեպաշտ և աստուածասիրաց թագաւորին մերոյ՝ և ամենայն պաղատանն և ամենայն զինուորաց նորա զտէր աղաչեացուք.,, Յետ ժառանգաւորացս և հոգւոց առաջնորդաց՝ ի հասարակ ժողովուրդն իջանէ, որոց նախապատիւք են թագաւորք. սոցա վասն Պօղոս մեզ առաւելապէս հրամայէ աղօթել քան ամենայն մարդկան. էր վասն. զի խաղաղութիւնք, ասէ, զկեանս մեր վարեսցուք, քանզի հոգւոյ և մարմնոյ կենաց ցանկամբ. արդ որպէս եպիսկոպոսք՝ ի պէտս հոգւոց խաղաղութեան տքնին, և թագաւորք՝ ի մարմնոյ, և ըստ որում քահանայք և սարկաւագք նորա են գործակիցք, և իշխանք պաղատին զինուորքն՝ սորա. և՝ ի մարմնական գործն կանխեալ, և այնու զմեզ ինամեալ՝

1 Երկու տող. Մ—ԷՒ։

պարտական աղաչին զեկեղեցի հոգւոց նոցա փրկու-
թիւն խնամակալս լինել աղօթիւք . ըստ այմմ, ,,Արդ
առաւելութիւնն ի ձեր պակասութիւնն , և ձեր պա-
կասութիւնն ի նոցա առաւելութեանն . զի իցէք կա-
տարեալք ի մի ,, ։

,,Եւ ան լինելոց նորա յաղթող , և խորտակելոց զա-
մենայն թշնամիս առ ոտս նորա զտեր աղաչեսցուք ,, ։
,,Զանգի յաղթութիւն նորա ամբողջ պահէ զմեզս
խաղաղութիւն , և խորտակելն նորա զթշնամին՝ ըզ-
մեզ ի սրոյ նոցա պարսպէ , կարևոր է ի պետս մեր և
զայս աղաչել ։

,,Եւ ան ամենայն քաղաքաց և գաւառաց , և որոց
հաւատով բնակեալ են ի նոսա , զտեր աղաչեսցուք ,, ։
,,Օ՛ի մի այլոց փրկութեան մախանաց տացուք կարծիս՝
մեր թագաւորիս յաղթութիւն խնդրելով , առնու զա-
զաչանսն և սիրէ ի վերայ տիեզերաց , և առաւել-
պէս հաւատացելոցն ի նոսա , զի այլքն մարմնակիցք են
մեր , և հաւատացեալքն ընդ ամենայն աշխարհ ան-
ձնակիցք և եղբարք ։

,,Եւ ան պաղաքերութեան երկրի և ժամանակաց
զտեր աղաչեսցուք ,, ։ ,,Օ՛պատուն ոչ միայն երկիրն տայ ,
այլ և հոգևաւէն ի վերայ ժամանակք եղանակաց տա-
բուսն՝ որք խառնեն ընդ նա զքաղցրութիւն օդոյն . գա-
րունն զխառնաւութիւնն , և ամառն զցամաքութիւն
խոշակին . ամն մնուցանէ , և ամն կատարէ , և զնաւ-
կաւոր կարիս մարմնոյս պատրաստէ , իրաւացի է զնորս
սոցին խնդրել յ՛Աստուծոյ ։

,,Եւ ան Ճանապարհորդաց , նաւորդաց , վաստակա-
ւորաց , և վասն գերեաց փրկութեան զտեր աղաչես-
ցուք ,, ։ ,,Արի կարօտ են ձեռնտուութեան յ՛Աստուծոյ
առանց յիւրաքանչիւր ընթացս , և դիւրագթելիք հար-
կաւոր փորձանօքն , կամ նաւաբեկութեամբ , կամ ա-
ւազակաց դրժանօք , կամ թէ այլ ինչ վտանգիւք ։
,,Օ՛ինչ պարտ է և զգերեացն թշուառութիւն երկրող-
դել՝ որք յոյժ մանաւանդ կարօտին ձեռնին յ՛Աստուծոյ
օգնականութեան . տալին վասն ՝ հաստարակաց անդա-
մոց անկ է մեզ աղաչել ։


1 Երկու օրին . Ա՝ին չտ ։

«Ա՛ստո փրկելոյ զմեզ ՚ի վշտաց և ՚ի նեղութեանց զտէր աղաչեսցուք ,, ։ Ա՛ստ և նեղութիւն՝ զոր մատ-
ուցանես և հոգւոց պատահի՝ ներգործութեամբ չարին առ-
նու . քանզի փորձութիւն է վարք մարդոյ ՚ի վերայ եր-
կրի , ըստ որում առացաւ , և միշտ կարօտիմք յայսմանէ
փրկիլ Ա՛ստուծով , զոր խնդրեն իրաւացի է . զի մի տացէ
՚ի փորձութիւն առաւել քան զկար մեր , և ՚ի տալն՝
արասցէ և զելան ։

«Ա՛նկաւ կեցո և ողորմեա , և պահեա զմեզ տէր
քոյին Ընտրեալդ ,, ։ Ա՛յր , և գաստիարակ և ուսու-
ցիչ է ժողովրդեանն սարկաւագն . արդ յորժամ որ-
դիքն հաւանութեամբ զոր ինչ ուսոյց՝ աղաչեցին ,
առնու զպատուղ աղօթից նոցա , և ՚ի ձեռս մտաց և
բարբառոյ իւրոյ և ըղձականութեամբ սրտի իւրոյ
նուիրէ առաջի Ա՛ստուծոյ ասելով , ընկալ . զի . զայս
զոր ինչ սոքա հրամանաւ իմով զքեզ թախանձեցին
քաղցր և սիրալիր ընկալ ՚ի ձեռս քո տէր , որ պա-
տարագ քեզ հաճոյ խնդրեցեր զայս ասելով , «Ա՛տո
Ա՛ստուծոյ պատարագ օրհնութեան , և կատարեա
բարձրելոյն զուխտս քո . կարդացեա դու առ իս յա-
ւուր նեղութեան քո , և ես փրկեցից զքեզ ,, ։ Ա՛րդ մեք
՚ի նեղութենէն ստիպեալ կարդացաք առ քեզ աղա-
չանօք . դու այսուհետև ըստ քումդ խոստման արաս-
ցես զփրկութիւն , այսինքն կեցուցանել զմեզ անվրդով
՚ի սահեցմանէ չարին կենցաղոյս , և ողորմեա ։ Ա՛նպա-
պատկաբար խնդրեաց ժողովուրդս զողորմին քո , տուր
և մի արգելուր մարդասէր , և «Պահեա զմեզ տէր քոյին
Ընտրեալդ ,, , զի գաղտամարտ ունիմք թշնամի ընդ խա-
ւար խոցոտող զայնոսիկ որ ուղիղ են սրտիւք ։ Ի՛ քեզ
յուսացաք ես և սոքա , առ որ և կողկողիմք ձայնիւ .
պահեա զմեզ տէր Ընտրեալդ քո , և մի խնդրեր ըզ-
փոխարէն ծառայական հպատակութեանն ՚ առ որ
տկարացաք , քանզի բարիք իմ քեզ չեն ինչ պիտոյ , ան-
կարօտ բնութիւն և ամենակալ ։

«Ո՛րբուհի աստուածածնին զօրհնեալ տիրուհին
և զմիշտ կոյսն Ա՛ստուած . յիշեսջիք և զամենայն
սուրբս , և նոքօք զտէր աղաչեսցուք ,, ։ Ա՛վ Թէ ողբան

1 Ա՛ի տրին . Հնդոեւրոպական ծագումից է։



է գուշ գորովոյ սորա՝ ի վերայ եկեղեցւոյս. զի ոչ զայն բաւական համարեցաւ զկնի բնաւիցս վանս մաղթել, այլ և զսրբոցն ոտից բռնադատեալ բուռն հարկանել. զոր օրինակ որ առաջի Թագաւորին մտանեն, իշխանացն որ շուրջ են զնովաւ ակնարկեն՝ համարձակութեամբն զոր ունին առ արքային՝ կցորդել հայցուածոցն, այսպէս ասէ և գուք յետ ամենայնի զսիրայիցդ ձեր և զամենայն սուրբս յիշեսջիք առաջի Աստուծոյ։ Հաւատամք զի Թէպէտ և մեք անարժան եմք, նոցա սուիպուին աղաչանացն չարժէ զղեաձն յողորմութիւն, որպէս ասաց. "Վերակացու եղէց քաղաքիդ այդմիկ վասն իմ և վասն Պաւղի ծառայի իմոյ"։ իսկ սոքա յաւելուն դարձեալ. "Յիշեա տէր և ողորմեա"։ Յայնքան՝ զառաքինութիւն սրբոց քոց և զհաճոյական վարս որ տեառնդ նուիրեցին՝ զմտաւ ածեալ յիշեա, և Թէ ոչ վասն մեր՝ յաղագս նոցին սիրոյ ողորմեա մեզ տէր, որպէս և ստիպիս միշտ ի նոցանէ՝ ոչ անտես առնել զգործս ձեռաց քոց։

"Աչս և միաբան վասն Ջմարիտ և սուրբ Հաւատոյս զտէր աղաչեսցուք"։ Ջմարիտ և սուրբ Հաւատ ոչ միայն զխոստովանութիւն սուրբ Երրորդութեանն ասէ, այլ և զՀաւատացն եկեղեցական բարեկարգ առանդութեանցս, և զՍտուած առաջի աչաց ունել աստանօր Հաւատով յունկնդրութիւն խնդրուածոցս, զի մի Թերահաւատութեամբ անյոյս եղեալ հեղգանայցեն յաշխատութենէ աղօթիցն, այլ որպէս զի տացէ Աստուած առաւելապէս զօրութիւն առ իւր գիտութիւնն բարձրանալ։

"Օ անձինս մեր և զմիմեանս տեառն Աստուծոյ ամենակալի յանձն արասցուք"։ Արդ մինչև ցայժմ հաւատարիօրէն աղօթեցիք՝ զեղբարսդն վրկութիւն նախապատուելով[2] քան զանձանց, այժմ և զձեր անձինս և զմարմինս Աստուծոյ յանձն արարէք[3] նախախնամել յամենայն գործս չարին։

"Աղօթեցայ մեզ տէր Աստուած մեր բոլ մեծի ողորմութեան քումմ"։ Ետ և ողորմութիւնն Աստու-

1 Մի օրին. Գործ-ք-ին-ն-ր-ս։ 3 Մի օրին. Յ-ձ-յ-ն ա-ր-ա-ր-ք։
2 Մի օրին. Ն-ա-խ-ա-գ-ա-ս-ե-լ։

ծոյ , և առաւել մեծ և բազմապատիկ , քան որում՝ ա-
մենայն ուրեք գիրք վկայեն . երբեմն " Ողորմեա ինձ
Աստուած քան մեծի ողորմութեան քում ,, . երբեմն
" Աստուած որ մեծն ես ողորմութեամբ ,, . և մեծ վասն
այնր , զի և որոց ոչ խնդրեն չիմարեալ տգիտութեամբ ,
նայեցեալ ի թշուառութիւնն՝ առանց խնդրելոյ ողոր-
մի և օգնէ գիտալով ի ստեղծուածն իւր . քան որում
յաւելու առաքեալ . " Ինչգեռ մեռեալն էաք ի մեղս
մեր՝ կենդանիս արար ի Քրիստոս ,, . իսկ ես և բազում
քան սաղմոսերգողին , " Արկ զի բազում արարեր
զողորմութիւն քո Աստուած ,, . զի արդարապէս կրէ
քան իւրաքանչիւր արժանեաց զչնորհն , մեծի հաւա-
տոյն և աշխատութեանն՝ մեծ , և փոքուն փոքր . վրի-
պի և ոչ ոք բնաւ յողորմութենէ որ ապաւինի Աս-
տուած . վասն այսորիկ ասէ , խնդրեցաք բազում անգամ
զողորմութիւն , և դու հարուստ ես դովաւ տէր ա-
րարիչ մեր . տուր մեզ զդոյն քան չափոյ արժանեաց
մեր , և առաւել քան զնոյնն , և մի անտես առնել
զայսքան աղաղակ ի քէզ ապաւինելոցս : Եթող դար-
ձեալ ստիպէ զաշակերտան . ասացէք , մի հեղգայք , բա-
խեցէք և բացցի ձեզ , ժտեցէք , թախանձեցէք . թէ ոչ
վասն բարեկամութեան՝ յորմէ յետնեալ գտաք , հա-
ւատացուք զի վասն ժտութեանս յառնէ տէրն մեր .
և տայ զխնդրեալ ողորմութիւնս . իսկ նոքա սրտառուչ
կամօք , որպէս ընկալան հրամանն՝ բազմապատկաբար
զնոյն կրկնեն առ Աստուած :

Զդէպ եկայք եղբարք որք տգիտանայք զնորհուրդ
Քրիստոսի պատարագելոյս , և ի մեռելոց սակս միայն
զնա գնէք , որոց միայն յուսայք գտանել սուաւ օգնու-
թիւն , ուսարուք հաւատարմութեամբ զնորհրդոյս զօ-
րութիւն . այսինքն զի զոր ինչ սարկաւագս խրատեաց
զեկեղեցին աղաչել բարձրեալն , զնոյն քահանայն
հանդերձեալ է խնդրել խորհրդաբար՝ պատարագին
միջնորդութեամբ , և սա նորա կամացն զտոսա զուգ-
ընթաց լինել յորդորեաց , զոր բաղդատելով ընդ ի-
րեարս միմեանց գտանես հաւասար : Աստ սարկա-
ւագն խնդրել քեզ զիաղաղութիւն , զնոյն խնդրէ և
քահանայն ասելով . " Սովաւ ընդհեա զսէր , զիա-
ղաղութիւն աշխարհի ,, . ասաց սա խնդրել զեպիսկո-

պոսաց, զԹագաւորաց, զաշխարհի, և զոգւոց՝ փրկութիւն. զսոցանէ մաղթէ և քահանայն միջնորդութիւբ պատարագին, և մեք ինչ կարծիք զանազանութեան Հմմարիտ քննողաց։ Այսպա պարտիմք՝ ի սկզբանս գիտՀըրդոյս զօրութիւն ձանաչել՝ ըստ որում ուսաք, որպէս զի քահանայքս այսպիսի մտաք գնոյն մատուցաբք, և ժողովրդականք վասն իւրեանց և վասն ամենեցուն ստուգեսցեն զբանն զոյն կատարել, առ՝ ի յարձանագնալ[2] յուսոյ մեր՝ ի հնորհացս առատութիւն անատելիւր հաստատութեամբ, Թէ միւն ամենեցուն փոխան մեռանի[3]. քանզի ամենեքեան մեռեալ էաք, և վասն ամենեցուն մեռանի. էր վասն. որպէս զի կենդանիքն ելով այսուհետև՝ մի անձանց լիցուք կենդանիք, այլ այնմ որ՝ ի վերայ մեր մեռաւ և յարեաւ, որում փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։

ԸՆԴԻՐ ՓԱՌԱՒՈՐԱՑՆ ԾԱՆՕՒԿ ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԱՍԷ ՁՆՂՕԹՍ

ՅովՀաննէս՝ ի ծառայական կարգ են Այսուծոյ, և ոչ յիշխանական կամ բարեկամական խորհրդակցութեան. իսկ քահանայք վասն մեերիմ հաւատարմութեան՝ Այսուծոյ գործակիցք եղեն, առեալ իշխանութիւն՝ ի վերայ սոցա՝ աստուածաբար կապել և արձակել և հնորհս բաշխել. են և յաստուածակոչ կոչին, ըստ որում ասաց առ նոսա տէրն, "Ով ձեզ ոչ և ես կոչեցից ծառայս, զի ծառայն ոչ գիտէ զինչ գործէ տէրն նորա. այլ զձեզ կոչեցից բարեկամս, զի զամենայն զոր լուայ՝ ի Հօրէ իմմէ՝ ծանուցի ձեզ"։ Այսպա յայտ է Թէ հաղարապետք են խորհրդոյն Այսուծոյ, և Համարձակ առ նա որպէս զգործակից և զիշխանակից. ուստի և ոչ աղաչեն զնա ծառայաբար աղաղակաւ, այլ՝ ի խորհուրդ մտանեն Թագնաբար ընդ տեառնն, ի ձեռն պարզ դիմացն և Համարձակութեանն, իրաւունս դատելով՝ զոր՝ ի փառս

1 Մի օրին. Եւ ստոյգ էրիւռիթեան։
2 Մի օրին. Առէ՝ ի յարձանագնալ։
3 Մի օրին. փոխանակ ամենեցուն
4 Մի օրին. վասն հաւատարմութեան։

իւր և ըստ հաճոյից կամացն Աստուծոյ խնդրէ կատարել. զի յաղագակէն՝ ստիպէ զմեզ ծանրալուրն լինել ումեք. և ծանրալուր է Աստուած ժողովրդեանս, որք վասն՝ ի Հրիսաոս տղայութեանն խորոց արկին ըզմեղսն՝ ի մէջ ինքեանց և նորա. ուստի և աղաղակէն՝ իբր բռնադատեալ առ հայցուածոյն լռութիւն. իսկ սա որ քահանայս է, հարազատապէս մերձենայ առ նա իբր խորհրդակից Աստուծոյ և վերակացու ժողովրդեանս մաղթել առ Աստուած և մխիթարապէս անմռունչ գոչմամբ աղաղակէ առ նա, որով գիտէ զանէր իւր զինջուցանել՝ ի բարկութենէն, խոնարհել՝ ի սիրոյն աղերս. իսկ եթէ ասիցես գրաւեալ զքահանայս ընդ տգիտութեամբ կամ ընդ մեղաւք՝ որպէս զմի ոք յօտարացն, բանս այսպիսի ելով մեր և ոչ զյաղթելն հաստատակէտ զքահանայական աղօթիցն, զի մի լուիցուք, «Աստ ընդէր պատմես զարդարութիւն իմ, կամ առնուս զուխտ իմ՝ ի բերան քո ...», մեղաւոր ելով և մերժող, և տգէտ բանից բերանոյ իմոյ: Այս դարձեալ և ոչ ըզփառսն բարձրացուցանել՝ ի լուր ժողովրդեանն է վայրապար. քանզի յառաքելոյ՝ ի սոյնս խրատիմք, յորմէ առ կորնթացիսն վասն ընտրութեան ընծայիցն գրեցելոյն, ընդ որս ասէ, «Եթէ դու օրհնեսցես օտար լեզուաւ, զիա՞րդ որ կայցէ՝ ի տեղւոջ տգիտին՝ ասիցէ՝ ի քումմ գոլութենն զամէնն ... որով տայ տարացոյց աղօթիցն տգէտ լինել մերձակայիցն, և փառատրութեանն հաղորդ՝ զամէնն ասելով, որպէս զի վկայութեամբ առմենեցուն օրհնեսցի անուանն Աստուծոյ: Ինքն և ըզլուսաւորչէ աղօթելս ուսոյց մեզ. «Ո՞ր կամքն յաղօթս, ասէ՝, որպէս արժանն է ոչ գիտեմք, այլ ինքն Հոգին բարեխօս լինի՝ ի հեծութիւս անմռունչս ... տես զի անմռունչ, այսինքն անբարբառ բանիւ գիտէ նա զքահանայական աղօթիցն, որ՝ ի սրբոյ Հոգւոյն սպասաւորութենէ բարձրանայ առաջի Աստուծոյ, ըստ որում ետես աւետարանիչն. ապա զրժելով սահմանի օրինացս՝ յայտ է մեզ յառաքելական շաւղացն մոլորիմք:

1 Երկու օրին. Յաղաղակն այն: Ընդ առաքել:
2 Երիք օրին. Լուռ և լռեալ: 3 Մի օրին. Ասել:

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԱՒԶԻՆ ԱՂՕԹՑՆ

"Տէր Աստուած մեր, որոյ կարողութիւնդ անքննին է, և փառքդ անհասանելի ... : Օ անուն Նորին որպիսի և ծառայքն միապէս անուանեն, սակայն նա զանկնդրուելիւնն զանազանաբար ձայնիւդ մատուցանէ. արդ տայ և սա զտէրն անուն Աստուծոյ 'ի սկիզբն բանիս հաւասար ժողովրդեանն, սակայն աչք նորա և ականջք 'ի վերայ է աղօթից սորա որպէս առ որդի, և ինքն գիտակցութեամբ մտաց այսմ վկայէ, և իմացականապէս առ իմանալին մտեալ է, առ որ սկսանի առել մերձաւոր հպմամբ ', "Կարողութիդ անքննին է ... : Այլ զարև անքննելի կարողութեամբ այն ² որ չափէ զերկինս թզաւ, և զերկիրս ամենայն քլաւ, որ կշռէ զլերինս կշռովք և զդաշտս կշռորդովք, որ զանգործան տեսանէ, և զշունչ և զոգի քննութեամբ սրոյն բաժանէ. անհասանելի է հաւասար այսմ և փառք նորա, այն որ զերկինս և զերկիր ընտ, և 'ի սրովբէից անհաս համբառնալ պարտուրի:

"Ուրոյ ողորմութիւնդ անչափ է, և գթութիւնդ անբաւ ... : Ո՛վ ընտրեալն առաստութեան. զի ըստ մեծութեան փառացն մեծ է և զինչութեան ողորմութեանն. ոչ գրի և ոչ պատմի, նա և փորձիւ բազում անգամ այսպէս ձանաչի գոլ, ըստ որում 'ի մարդանալն, յ ետայնոր և 'ի խաչն, ուր զառաստութիւն գթութեն տեսին երկինք և երկիր. "Օ ի մինչ դեռ մեզ ատելորքն էաք, Արիս տոս 'ի վերայ ամբարշտացս մեռաւ ... զորոյ գթոյ առատութիւն այսու ծանուցեալ խորհրդակիցս նորին ասէ.

"Այս ըստ առատ մարդասիրութեան քում նայեա 'ի ժողովուրդս քո և 'ի տաճարս յայս ... : Այ զինչ է ասելն և խնդրելն նայեա. թերևս է ինչ թաքուն Աստուծոյ, առ որս ոչ նայի, այն որ զամենայն ինչ գրեալ ունի զանգործս մարդկան. և ոչ երբեք. բայց սակայն այսքան հայեցողս և ինձէ բազում անգամ. ըստ այնմ, "Օ արիք աչք վասն անուան քո. զարիք վասն

1 Երկու օրին. համբառնամբ: 2 Երիք օրին. ընդունելի է ի[ր]

մեծութեան փառաց քոց, և զարթիր տէր և մի մերժեր զմեզ,, : Որոց հայել՝ զինաւորեն ուսանիմք և զպահել, և ննջել՝ զանտես առնելն բան մեղաց. վասն այսր և ըստ այսմ ձհայելն խնդրէ իբր յիւր ժողովուրդ, և յարեան իւրոյ գին հարկաւորապէս :

,, Նա արա ընդ մեզ և ընդ աղօթակիցս մեր առատասպէս զողորմութիւն քո և զթութիւն,, : Տեսանես, զի իւր աղօթակից կոչէ զժողովուրդն՝ յաղագս ընդ մի շաւիղ խնդրոց գնալոյ սմա և նոցա հրամանաւ տարակաւոգին. և զի նոքա զտէր ողորմեա ձայնեցին, սա առնել զայն Աստուծոյ իրաւունս դատի՝ ի վերայ ժողովրդեանն իւրոյ :

,, Օ՜ի սուրբ ես Աստուած մեր, և քեզ փառք յաւիտեանս,, : Սուրբ ոչ միայն վասն ամենաբաւ պարզութեանն ասէ, այլ թէ և՝ ի մեր պարտեացն անկցորդ ես, յաղագս վարժելոյ և միշտ խրատելոյ և խնամելոյ. ըստ այնմ, ,, Նա զանձն իմ սուրբ առնեմ՝ ի վերայ սոցա,,. արդ որպէս արարեր և ես սուրբ, միշտ ողորմելով, ասէ, սուրբ լեր՝ ի մէջ մեր, և քեզ փառք հաստուցանեմ՝ ի տկարացելոցս վասն առատութեան՝ ի վերայ մեր ընծրհիդ :

ՋԻՆՁ ՆՇԱՆԱԿԻ ՍԱՂՄՈՍԱՑՆ ՓԱՌԱՅՐԱՁԱՅՆՈՒԹԻՒՆՔ ՆՈՑՆ ԵՒ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՔՆ ՑԵՑ ԱՅՆՈՐԻԿ

Սաղմոսքս մի ըստ միոջէ խորհրդոյս զօրութեան են նախագուշակք, զորս եղանակելով յայտ առնեմք՝ թէ առ մի դիտաւորութիւն հայի մարգարէիցն նախաձառութիւն և եկեղեցականացս խորհրդոց կատարումն. թէպէտ և ըստ դատման բառից և ժամանակաւ զանազանին՝ ի միմեանց, սակայն մի է էութեանն զօրութիւն, այսինքն մարդկան փրկութիւն. ուստի և զաղաչմանեարգութիւնս և զընթերցմունքս սրբոյ պատարագին՝ եկեղեցւոյ օրէնք սկիզբն արար, նշանակելով թէ վասն զի աստուածաշունչ գիրք օրինաց և հրամանացն Աստուծոյ էն հանդերձ աբանէլի գործովքն պատմաբանք, զոր քաղցրացուցանեմք՝ ի յոյնին լսողացդ եղանակաց վայելչութեամբ սաղմոսիս, և՝ ի բաց վարեալ՝ ի մտաց ձերոց զարկածս սատանայական խորհրդոց, երաժշտական հնուազաւս մաքրեմք զնոյն, և

առ բարձրագոյն տեսութիւնն պատրաստեմք ։ Վասնզի է այս ընդհ զօրութեան սաղմոսիս՝ յերգելն փախուցանել զխորհուրդս դիւականս , և զչոկս նոցա , որպէս յայտ է ՚ի պատմութենէ անտի թագաւորութեանցն . զի յորժամ երգէր Դաւիթ , դիւրէր Սաուղի ՚ի լուր երգոց ՚ի չարչարանաց այսոցն . նոյն լինի և յեկեղեցիս , Վասնզի ամենեքեան գալով յարտաքին խուճապմանց , ոմն ՚ի վաճառուց տուրեւառից , ոմն յաշխատութենէ մարմնական գործոց , այլ որ ՚ի զինուորականն կարգէ , իշխանն յիշխանականն սաստէ՝ եկիր մերձ յեկեղեցիս , և դեռ ևս ամբոխեալ են ՚ի խորհուրդս իւրեանց՝ յիշատակաւ զբաղանացն . վասն որոյ նախ զհեշտալուր երգս սաղմոսացս երգեալ՝ մաքրեն ՚ի մտաց նոցա զկմախական տիպն , և երգովքս յափշտակեալ զբաղեցուցանեն զմիտս նոցին յաստուածայինսն . և յորժամ բովանդակ երգ սաղմոսացս կատարի ՚ի հնոց կատակարանաց ընթերցմունք , և զմտաց մեր նեղգործութիւնք առաքինութեանն ունակութիւն ՝ փոփոխէ , յետ այսորիկ սրբազան գիրք առաքելականք համաձայնին ընդ մարգարէիցն , որպէս զի ցուցցի մի դիտաւորութիւն սոցա և նոցա ունելոյ . և որպէս միով բանիւ խրատեն զմարդիկ , յաղագս որոյ և առ ՚ի միաբանս յարակցին ընթերցմանք ։ Վարձեալ զի և որ համառօտն և ՚ի ծածուկ էր ՚ի սաղմոսն , և ՚ի տառս մարգարէիցն , ՚ի ձեռն հաւատարիմ առաքելական պատմութեանն ընդարձակ և յայտնապէս վերաձառնի . և թէ որ ՚ի շարադրութեանն խորհուրդ ընթերցուածոցն նայեցի՝ միաբեսակս և համաձայնս գտայ իրեարս , որպէս միոյ աստուածապետական հոգւոյ շարժեցեալս . յաղագս որոյ վայելչապէս յեկեղեցի սուրբ յետ հնոց կատակարանացն և սաղմոսացն՝ նորոցն ընթերցուածն լինի կարգ տուչութեանն , ուսուցանելով մեզ՝ թէ մարգարէքն կանխագուշակութեամբ զառյապայ եղեալ Քրիստոսի փրկագործութիւնս առացին յառաջագոյն . իսկ առաքեալքն յետ այնորիկ ականատես գոլով նմին՝ զկատարումն իրին պատմեցին մեզ . բայց սակայն գլուխ աստուածաբանութեան հնոյն և նորոյս

1 Երեք օրին . Ըստ աստուածաբանութեան հնոյ ։

է աստուածազործին մեր, որ յետ սրբելոյ և խրատե-
լոյ զմեզ սոցա, հանդերձեալ է խորհրդածութեամբ
պատարագին սրբոյ երևիլ։ Այլ այժմ իրաւունս հա-
մարիմ և զիւրաքանչիւր ուրուք սաղմոսացն զօրութիւն
քննել, առ՝ի հաստատութիւն ասացելոցս աստուածա-
սէր մտաց արկեալ առաջի։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԱՆՁՆՈՒՄ ՍԱՂՄՈՍԻՑ։

«Նախ է խոստովան լինել տեառնդ, սաղմոս ասել
անուան քումմ բարձրեալ.»։ Ի՞նչ ոք կարծեսցէ տգէտս
զմնորգարէսն նորոյ խորհրդոյս, կամ՝ի բացուստ տե-
սողս. զի թէ Հոգին էր որ խօսէր՝ի նոսա, և Հոգին
զամենայն քննէ և զխորս Աստուծոյ, և Աստուած կոչէ
զգոյն իրրև զգոյ, որ յառաջագոյն սահմանեալ էր
զայս՝ի փառս մեր, ապա յայտ է թէ որպէս այժմ՝
նոյն և յայնժամ Հոգին գիտէր զիրկութիւնս նորա,
այլ ըստ պատշաճ ժամանակին ձեւացուցանէ զբանս իւր
՝ի մարգարէսն պատրուակաւ. իսկ եթէ կէզակարծիս
մնօք առ՝ի սոյն հաւատ՝ էկ միայն յայս սաղմոս, նիստ
առնեմք զԴաւիթ, և ուսիր թէ որպէս պատմէ քեզ
առ Աստուած գոհութեամբ զընդորհակալութիւն Ա-
րիմաթեայ ընդորհացս եղելոց, որպէս վայելող՝ի նոյն և ու-
րախացեալ, և մեզ առ յապա եկելոցս և պայծառացե-
լոցս պարզևօքն ուսուցանէ զսոյն երգել, ըստ որում
նշանակէ՝ի վերնագիրս՝ Սաղմոս օրհնութեան յաւուր
շաբաթու։ Այլ ո՞ր է օր շաբաթու եթէ ոչ այսօրս ա-
ռաջի կացեալս, յորում եբարձ Աստուած զարթօսր
յամենայն աչաց, և շաբաթացոյց զմեզ յամենայն աշ-
խատութենէ մեզաց, որպէս ասէ Պօղոս. քանզի՝ի
նոցանէն յարարեալ նուազեցաւ շաբաթանալն, վասն
այսր այլ օր շաբաթու սահմանէ Դաւիթ, յետ այն-
չափ ժամանակաց, և՝ի նոյն՝ ինքն ձնգրիտ շաբաթ
այս ժամանակ սրբոյ պատարագիս, յորում խոյս
տուեալ՝ի մարմնական աշխատութենէ՝ եկաք՝ի տուրբ
եկեղեցիս ձնաշակել զԱրիմաթեայ խորհուրդն և հանգ-

1 Երկու տրին. Ա—ՀԻՆ տան. 2 Երեք տրին. Նոյն։
տան։ Այլ տ. Ա—ՀԻՆ տանին։

չել ՚ի մեզաց , զոր ծանուցեալ մարգարէիս՝ եկեալ ՚ի մէջ ժողովելոցս երգակիցս առնու զմեզ ՚ի սաղմոս , ոչ յաղօթից և ոչ յարտասուաց երգ , որպէս մինչ ասէ . “ Տէր մի սրտմտութեամբ քո յանդիմաներ զիս , և մի բարկութեամբ քո խրատեր զիս ,, . կամ “ Ողորմեա ինձ Աստուած , զի կոխեաց զիս մարդ զօրհանապազ ,, . այլ զինչ . սաղմոս օրհնութեանց ։ Անդր գիտէ զայս ժամանակ գոհութեան և ոչ ապաշխարութեան , ուրախութեան և ոչ արտասուաց կամ սրտմտութեան . զի ողբ յուսամբ այժմ Ողբոյն Աստուծոյ վասն մեր պատարագիլ՝ փարատեցաք գերկեզ մեզացն , և մնացաք ՚ի մտաց մերոց , և զօրհնութիւնս զայս ընդհողին աձեցուցանեմք առ նա բարեյուսութեամբ առաջիկայ պարգևին սպասելով . ուստի և առաջնորդէ մեզ երգել , “ Նայրի և խոստովան լինել տեառնդ ,, ։ Ընդարև այս ՚ի ժամանակ բարի և պատշաճ գոհանալոյ գքէն , ասէ , Աստուած , քան զայլ ընթացս հոլովմանն աւուրն . էր վասն . զի յուսամբ զմիածին Ողջիդ տալ փոխանակ մեր ՚ի մահ , յաղագս որոյ և մեզ իրաւունս վարկանիմք բարձրաձայն սաղմոսերգութիւք խոստովանել զնորս քո որ առ մարդիկ ՚ի լուր երկնի և երկրի ։ Նայց զինչ է անուն սաղմոսին , զի ասէ . “ Սաղմոս ասել անուան քում բարձրեալ ,, . սաղմոս առանձինն է յօրհնութենէ , այսպէս և օրհնութիւն որոշի ՚ի գովութենէ . քանզի օրհնութիւնն է յէից բարեաց մեր եղեալ Աստուծոյ բարեբանութիւն , իբր թէ ասելով . դու արարեր զմեզ քեզ պատկերակից , մեք փոխանակ այդորիկ օրհնեմք զքեզ , և գովեսան վասն հրաշիցն գովասանութիւն . որպէս մինչ ասէ , “ Ամենայն հրեշտակք իմ գովեցին զիս յորժամ եղէն աստեղք ցկրքք ,, . իսկ սաղմոս է երաժշտական նուագարանաց գործոյ յարակցութիւն բարբառոյ , իբր տանուազոյ կամ փողոյ կամ այլոց . այսպիսովք բարիոք վարկանի այժմ մարգարէս զԱստուած օրհնել ասելով . “ Սաղմոս ասել անուան քում բարձրեալ ,, , յայտ առնելով թէ զի մանալիք Աստուած ոչ միայն իմանալի մտօք պարտական եմք օրհնել , այլ և գանուան գործիս մարմնոյ ձայ-

1 Մի տպ. Աձի։ 2 Մի տպ. Ուրէ։

հակից նմին տամք, և քանիս հոգւոյ և ձայնիս մարձնոյ, որպէս քնարի և եղանակի յարմարութեամբ՝ սաղմոսեմք ի բարիոք ժամանակս՝ բարձրացեալք մեր Աստուծոյ անուան, և ոչ բնութեան. քանզի էութիւնդ անհաս է ի սահմանս աստուածոցս, միայն առ տէրութեանդ անուն իշխեմք օրհնութեամբքս ձկտիլ։

«Պատմել առաւօտու զողորմութիւն քո, և զճշմարտութիւնս քո ի գիշերի»։ «Գիշեր միշտ սորա սովորութիւն է ի սաղմոսիս զաղջամուղջ մեղայն կոչել, ըստ այնմ, «Աստի, խաւար ուրեմն արդեօք ծածկեաց զիս», կամ «Գիշեր փախիցէ թեան՝ զոր ընտրեցի փոխանակ լուսոյ». իսկ առաւօտ զդարձն ի նմանէ, և մերձենալ ի լոյս գիտութենն Աստուծոյ. որպէս ասէ յայտնապէս յութաներորդ յեւթնեերորդ սաղմոսին, «Ի՞թէ պատմեսցէ ոք ի գերեզմանի զողորմութիւնս քո, կամ զճշմարտութիւնս». մինչդեռ ի գիշերի մեղայն է։ Աչս փոքր ինչ յառաջ ընթացեալ՝ յաւելու. ես առ քեզ տէր առաւօտուս աղաղակեմ ի նորոգ դարձս. նոյնպէս և այժմ ըստ այնմ խորհրդոյ առնու ասել զնեերդործութիւն կամացն Աստուծոյ առ իւրաքանչիւր ընթացս մեր գուշակեալ. այսինքն, այժմ միայն է բարի խոստովան լինել առ քեզ տէր, և գովել զանուն քո, բայց և ոչ ամենայն ժամանակ. զի որ ի գիշերոյ մեղացն պաշարեալ է, նորա լեզուն անարժան է գովութեամբ խօսել ընդ քեզ, գոլով ի գերեզման ախտիցն. այլ զինչ. զճշմարտութիւն քո յիշել, այսինքն զանաչառ դատաստանացդ երկեղն ի մտի ունել, և ի ձգմանիս քո իրաւանցն գոլալ և սարսափել. իսկ զերծեալքն յայնմանէ, և չև ևս ի լոյս մաքրութեան հասեալ՝ այլ է ի մէջ երկուցն. յառաւօտն դատիլ՝ ի խղճէ մտացն՝ տկարանայ և յայնժամ պարզ դիմօք զքեզ խոստովանել, այլ միայն զառաջ ողորմութիւնդ առաջի աչացն կէրպարանէ և ի նա արձանացեալ ի լոյն դիմէ։ Այլ մեք ընդհանրապէս զերծեալ ի մեղաց գիշերոյն, և անցեալ ընդ առաւօտ ապաշխարութեանն, ծանեաք ի միոնն զճշմարտութիւն իրաւանցդ, և յերկրորդն զառաջ մեծութիւն ողորմութեանդ, և այժմ ի ներ-

1 Մի տրին. Դ--ե--։

քուստ ՚ի վեր դիմեալ՝ բարիոք վարկանիմք ձրիցդ փա-
ռաբանիչ և խոստովանող լինել ։ ՚Ւանզի անցուցեր ընդ
ալիս մեղացն , և հատուցեր յեկեղեցւոյս նաւահան-
գիստ՝ որք նախ զողորմութիւնն ինդրէաք վտան-
գեալք , և զօգնութիւն տառապանացն կոծեալք , այժմ
հանգուցեալ խոստովանիմք և շնորհակալ եմք ունկն-
դրութեան քո ։

“ Տառնաղեաւ սաղմնաարանաւ ՚ի ձայն օրհնութեան
գովել ,, ։ Տառնաղն տիրապէս իմանամք զհոգի և զմ-
մարմին ըստ վերապրելոյն , իւրաքանչիւրոյն հինգ զգ-
գայարանօք , որովք յայտ առնէ՝ թէ այնքան առատա-
յաւ շնորհք քո ՚ի վերայ մեր՝ որ ոչ թէ միայն հոգւով
ստիպիմք գովել զքեզ ըստ նմանութեան հոգեղինացդ ,
այլ խառնեմք զլարս իմաստից սորա ընդ զգայարանս
մարմնոյ , և որպէս զտառնաղն երգարան զոյգս արա-
րեալ զհոգի և զմարմին տուն զգայարանաւքս , բարձրա-
յուցանեմք զձայն՝ մարմնոցս ապդեցութեամբ և բա-
նիւ հոգւոց , և այսպիսի օրինակաւ իրաւունս համա-
րիմք զքեզ Ա՚ստուած՝ օրհնութեամբք գովել ։ Ա՛ռ ո՞ է
որ զքեզ յայսքան ստիպէ շնորհ , ոմ երանելի , աղդեա
երգակցաց . Թերևս եկեն Ա՚գիպտոսէ տոհմի քո ,
կամ ժառանգեն զերկիրդ . ոչ բնաւ . ապա զինչ .

“ Ուրախ արարեր զիս տէր յարարածս քո , և ՚ի
գործս ձեռաց քոց ցնծացայց ,, ։ Ա՚յդ զո՞ր իմանաս ա-
րարած ուրախացուցիչ մարդկան Ա՚ստուծոյ՝ ՚ի սմանէ
ասացեալ . մի արդեօք զառաջինն . և ահա յայն՝ քըր-
ատանց և տրտմութեանց վիճակեցաք , և ոչ ուրախու-
թեան . այլ ուրախացաք՝ յորժամ եղոյծ զնոյն խաչիւն
Ա՚քրիստոս , ՚ի սոյն հաւատար մեր և սա ուրախացաւ ։
Ա՛յս զիա՞րդ ասիցես նախ զլինելն . որպէս Ա՚բրահամ
հառես զօր նորա , և ուրախ եղև , ՚ի տեառնէ վկայեալ .
ուրախ եղև ՚ի նոյն արարածն նովին Հոգւովն և Ա՚ա-
ւրիթ կանխաւ . և ուրախանամք մեք տիրապէս այժմ ,
տեսեալ զՄրդին Ա՚ստուծոյ առաջի Հօր մեր փոխան
պատարագ . զոր ծանուցեալ Պօղոսի՝ խրախոյս տայ առ
՚ի նոյն ընդոր . “ Ուրախ լերուք ՚ի տէր յամենայն
ժամ ,, ։ “ Ա՛յս ՚ի գործս ձեռաց քոց ցնծացայց ,, ։ Պարծք
ձեռաց է Ա՚քրիստոսի այն , զի միանգամ ինքն զինքն
մատոյց պատարագ Ա՚ստուծոյ , որով զյաւիտենական

եպիտ մեզ փրկութիւն։ Եւ զդէմ եթէ մի անգամ էր ասէ քո ընդէն՝ ի վերայ մեր, ցնծացեալքս՝ ի նոյն ոչ այլ զուարճանայաք. ապա թէ միշտ և յաւիտեան փրկես պատարագի քո յիշատակաւ, միշտ հանապազ ցնծամք՝ ի գործս ձեռաց քոց, այսինքն յօր ըստ օրէ պատարագելդ, և զմեզ՝ ի տրտմութենէ մեղացն՝ ի զուարճութիւն ցնծութեամբ փոխել։

«Մրպէս զի մեծ են գործք քո տէր, և յոյժ խոր են խորհուրդք քո»։ Գործք ձեռաց Աստուծոյ ասաց վերագոյնն. զի մի թուեսցի հարևանցի ինչ, յաւելուածովն զառաւելութիւնն ցուցանէ. վասն այսորիկ ցնծայ՝ ի դոյն, զի մեծ և անհաս գործ արարեր՝ Աստուծոյ մարդանալ և վասն մարդկան միշտ փրկանք մատչել։ Եւթէ եթէ կարծես մեծ գործ Աստուծոյ ստեղծումն արարչութիւնն, այսմ ոչ եբեր՝ ի վերայ՝ թէ խոր է և թագուն խորհուրդ, և յանդգնամտին անծանօթ. զի ահա զայս ամենեքեան տեսանեն՝ որ մեծ է, զերկնի պայծառութիւն, զերկրի լայնութիւն, զարեգական ընթացք, անդգամք և խնամատունք, և ոչ է խոր՝ այլ յայտնի։ Այլ խոր է ամենայն իրօք յոյժ և անհաս խաչին խորհուրդ՝ որ Ադեից գայթակղութիւն եղև և հեթանոսաց յիմարութիւն, և միայն կոչեցելոցս՝ ի նմանէ զօրութիւն և իմաստութիւն. զայն խորհուրդ ասէ՝ զոր ընդունի, քանզի յիմարութիւն է նմա։

«Այլ անդգամ զայս ոչ ծանիցէ, և անմիտն զայս ոչ առնու՝ ի միտ»։ Տեսանես յաւելուածովս զչգըրտութիւն ասացելոցդ. զի ահա յայս խորհրդոյս հրաժարէն հաղորդ լինել անդգամք՝ ի մարդկանէ և անմիտք. էր վասն. զի հաւատովք ձանձրի և ոչ այլ իւիք։ Օ՛ի այժմ ոչ եհան զմեզ՝ ի մեղաց, որպէս զԱրրայէլն Յ[1]զիսուսէ, զգալի նշանօք՝ որ ամենեցուն եղև յայտնի հաւատացելոց և անհաւատից. այլ կամելով Աստուծոյ փրկել զմարդիկ, ոչ զիշխանական զօրութիւնն, այլ զկրաւունս և զարդարութիւն առ՝ ի ձեռս։ Անդի մարմին առ, և զնոյն անմեղ ծանեաւ. առիթ մեղաց զանասարկուն յայտնեաց, և զնոյն խաչիւ նշաւակեաց. զմեզ հաւատով որդիս Աստուծոյ ստեղծ, և մարմնով

1 Երկու օրին. ՃԽՁ՚։ 3 Մի օրին. Բէրեր։
2 Մի օրին. Աբուդեր։

Թշուառական և չարչարեալ. եւ փրկանս զմարմին իւր՝ որով միշտ փրկիմք ասա խորհրդապէս, և զզօրութիւն փրկութեանն երևելաբար՝ ի հանդերձեալ աշխարհն իմանամք։ Զի՞ թէ ոքան խոր է խորհուրդս՝ զոր անզգամն ոչ կարէ ձանաչել. էր վասն. զի ոչ կարէ հոգւոյ աչօք քննել, այլ մարմնոյ զգայարանօք, որոյ առաջի ոչինչ արկեալ քո սքանչելի՝ ոչ առնու՝ ի միտ զնոքա շնորհն. ըստ որում ասէ. "Լա անմիտն զայս ոչ առնու՝ ի միտ"։ Ի յորժամ տեսանէ՝ ի քէն զհացն մարմին Քրստոսոյ անուանեալ, և զգինին արիւն, և՝ ի զգալի աչս իւր ոչ ցոլանայ՝ ի նմանէ հուր կամ փայլատակունք, ծիծաղի զասացելովքն. քանզի Թանձրացուցեալ զներքին հայեցուածսն արտաքինոյն ետ ծառայ։ Լակ որ գիտէ Թէ հոգի է Քրստոսած, և հոգեպէս ըզշնորհս նորա քննէ, իմանայ զամենայն հաւատովք, և՝ ի միտ առնու զառաւելութիւնն, գիտելով Թէ այս սերմանելոյ ժամանակ է, և ոչ հնձելոյ. զոր օրինակ Թէ երկուք ոմանք մարդիկ կենակիցք իրերայ Նանդիպեալք, մինն իմաստութեամբ գիտէ զառաւելութիւն շահիւ յերկրագործութենէն, զամբար ցորենոյ իւրոյ յերկիր սփռէ. իսկ երկրորդն անհմուտ գոլով ծիծաղի զնովաւ որպէս զանմտաւ, և ինքն զիւրն շռայլութեամբ ծախէ. իսկ՝ ի ժամ հնձոյն սա ամաչէ, և նա բաղմապատիկ ժողովէ։ Նյսպէս խորհուրդ տեառն զառօրեայ կեանքս սերմանելոյ սահմանեաց ժամանակ, քանզի ձմեռն մահուն՝ ամենեցուն կայ առաջի. իսկ անզգամն և անմիտն՝ անհաւատ գոլով գարնայնոյն, ոչ առնու՝ ի միտ զկորուստն իմաստիցն, այլ միայն զառօրեայս ընտրէ իւր հեշտութիւն։

"Ի բուսանել մեղաւորաց որպէս խոտ, ՝ի ծաղկել այնպիսիկ ոչք գործեն զանօրէնութիւն"։ Վեղքն սատակ նայի է ներգործութիւն. քանզի՝ ի սկզբանէ, ասաց, սատանայ մեղանչէ, և զնա սատանայ յանձինս մեր բուսուցանէ՝ ինքն ընդ չարիքն իւր զուարճացեալ։ Վ ան այսպիսիկ յորժամ զմեծ և զուրախացուցիչ գործն Նչ ասայ, և զխորհուրդն կամի ցուցանել մեզ՝ Թէ զինչ է նորա պտուղն. յաղագս որոյ և զայս առ՝ ի մէջ՝

1 Երկու օրին · Ե- -· է-- ՝ի ձէ։ Մի օրին · Ը- ՝ի ձէ։

'ի բուսուցանել սատանայի յանձինս մեր՝ 'ի մէջ սերմանցն [1]չարաճոյ՝ զխոտ և զորոմն մեղացն 'ի խորհուրդս. քանզի ասա բուսանի նախ առաջին և ծաղկի՝ յորժամ մեք զկամն և զյաջաղուժիւն տամք նմին օգնական, և կցորդ լինիմք չարին սերմանց՝ անէծքացանելոյ զնա հեղգութեամբն և հեշտութեամբք. իսկ պտուղ տայ, յորժամ գործով կատարի մեղքն 'ի մէնջ։ [2]Զդ տէր մեր զայս գիտելով՝ եւս մեզ զձառագայթ մարմնոյ և արեան իւրոյ՝ իբր թէ ասելով, ես գիտեմ փորձիւ զպատերազմակիցն ձեր, զի միշտ բուսուցանէ 'ի սիրտս ձեր զմեղսն, և բազում անգամ և դուք ծաղկեցուցանէք զնա. արդ առէք զայս ջերմութիւն հնարհի, օր ըստ օրէ ձաշակեցէք՝ քաւութիւն բուսելոյ մեղացն և ծաղկելոյ, և մինչդեռ չև լինի պտուղ բերեալ 'ի կատարումն և զմահն, այսու սպառեցուցեալ սատակեցէք զնա։

"Սատակեացին յաւիտեանս յաւիտենից, և դու բարձրեալ ես յաւիտեանս տէր.,, ։ [3]Է թէ միայն այսօր սատակին բոյսք մեղացն և անօրէնութեան մշակին 'ի քո ծագմանէդ, այլ յաւիտեանս յաւիտենից, այժմ և առ յապա. զի ոչքան դու բարձրեալ և զօրաւոր տէր [4], ՚Ի՛նչ դու բարձրեալ յաւիտեանս. նա յաւիտեան սատակեալ և սատակեցի 'ի զօրութենէ քումդ ընդհայց։

"Օ ի ահա Թշնամիք քո տէր, զի ահա Թշնամիք քո կորիցեն, սատակեացին ամենեքեան ոչք գործեն զանօրէնութիւն.,, ։ [5]Վ Թէ ոչքան խանդաղատանօք առնու զյաւելուած բանիս ընդ նախասացելոյն. և զի ասաց Թէ բուսեալ և ծաղկեալ 'ի մեզ մեղք՝ սատակին 'ի բարձրեալ տեառնէդ, զի մի Համարիցիս [6] Թէ առ յապա ժամանակս այս լինելոց է, կամ անազան ուրեմն, սրտաճմլեալ յուսոյն ասէ առ [7]սատուած. ահա տէր, ահա յայսմ ժամու Թշնամիք քո կորիցեն բուսեալքն և ծաղկեալքն. զի պատարագի միածինդ քո, և զտապ Ձառագայթի զօրութեան արեան իւրոյ ծագեալ 'ի խիղճ մտաց Հաւատացելոցս իւրոց, սատա-

1 Մի օրին. Տ--է-ւ դ--ղ։ 3 Երկու օրին. Թէ ո- ս- ս--է-ւ
2 Մի օրին. Բ-ղ-է-ւ է- զ-- և ծ-ղկ-ւ... էի ի համարեցի-
-ր տէր։

կէ և կորուսանել ՚ի միջոյ սուտ զամենայն բայս անօրէնութեան և զծաղիկ մեղայ ։

՚՚ Ասացեր եղիցի պարկս միեղջերուի եղջիւր իմ, և ծերութիւն իմ ՚ի ձէթ պատարագութեան ,, ։ Օ՜ինչ միեղջերու , կամ զինչ նորա բարձրութիւնն , եթէ պարզ տեսութեամբ հայիցիմք ՚ի բանս . կամ պարկս մարդ բանաւոր եղջիւրաւոր՝ որ անբանիցն տուաւ զէն և ոչ սմա . այլ պարտ է զձգմարտութիւն իրացս խոստովել ։ Եղջիւր յորժամ ասեն զիրք , զզօրութիւնն նըշանակեն . որպէս և Դանիէլ տեսանէր , և Օ՜ աքարիա լսէր . այս եղջիւրք էն՝ որ ցրուեցին զՅուդայ և զԻսրայէլ ։ Սակ միեղջերու լոտ առ Յովբայ ասացելոյն զՎրիատոս իմանամք , որ միով անմատչելի զօրութիւն յաղթեաց հակառակամարտին ։ Սակ մի եղջիւր պարկս իբր զնորայն բարձրացի , ասիցէ ոք . այնպէս լոտ պատմ Պօղոս գրեաց . ՚՚ Ոչացն զոր բնկանեմք՝ հաղորդութիւն է մարմնոյն Վրիատոսի . զի մի հաց մի մարմին եմք բազումքս , մեք Վրիատոսի և Վրիատոս մեր ,, . արդ զայս ասէ և սա , թէ ոչ միայն մեռեալ Որդին Աստուծոյ զձէնամիան իմ կորուսանէ և սատակէ , այլ և զնա իբր հաղորդ և կցորդ առեալ , զիմ զօրութիւնս պարկս զնովն զօրացուցանէ մարտնչել ընդդէմ ձէնամեցոյն իմոյ սատանային . զի ընդ իւր հաղորդեալ՝ և զօրութեանն յայտ է թէ հաւատարիմք ։

՚՚ Ա՜ծերութիւն իմ ՚ի ձէթ պատարագութեան ,, ։ Որք գիտեն զսովորութիւն գրոց , ծերս զկատարեալսն յաստիճանութիւն ձանաչեն , որպէս և զկաթնկերս զնոսին տղայս . արդ իմ աստիճանութեանս կատարեալութիւնն ձուշակմամբ քս՝ Յոգւոյն սրբոյ ընդոհայն հաղորդեալ , պատարիս սովաւ և բերկրին , զոր օրինակ մարմին ուրուք ձիւծուլ . քանզի ձէթ և մեռան և անուանք սոցին՝ ընդհայ Յոգւոյն են ասացոյց , և նոյն Յոգին զաչերանական խորհուրդս կատարեալ մեզ ընդհէ . որով առէ պատարեալ և զօրացեալ իմաստ գիտութեան իմ, ուրախ եմ ։

՚՚ Աստես ակն իմ ՚ի ձէնամիան իմ, և ոչ լսեցեալք են ՚ի վերայ իմ չարութեամբ՝ ՚ի նոսա լսիցէ ունկն իմ ,, ։ Այժ այլ ՚ի վերայ իմ ձէնամիք լսեցեալք՝ եթէ ոչ անզէղջ մնասանօք պատերազմակիցքն .

'ի նոսա ետես ակն իմ. զինչ. զի խաչիւն կործանեցան, կենդանարարին կրիւք յիշխանութենէն և 'ի պետութենէն մերկացան, կոխան 'ի ներքոյ ոտից մարդկան տուան, անպարծ էզև խայթոց չարեացն օր ըստ օրէ Թողութիւն զոր ընդունիմք. զամենայն ետես հոգւոյ ակն իմ 'ի նոսա և հաւատաց, սակս որոյ և ուրախ եմ. "Ա՛ւ ոչք յարուցեալք էն 'ի վերայ իմ չարութեամբ, 'ի նոսա լուիցէ ունկն իմ.,, ։ Օ՛ չարութեամբ և զրպարտութիւն յառնէին նոցա 'ի վերայ մարդկան՝ Թէ կամիս, ամենայն բանք սաղմոսիս ցուցանեն քեզ. որպէս մինչ ասէ. "Յարեան 'ի վերայ իմ վկայք մեղաց, զոր ինչ ոչ գիտէի հարցանէին ցիս. բացին 'ի վերայ իմ զբերանս իւրեանց, և ասացին, այո այո տեսին աչք մեր.,, ։ նոսա հանդերձէ ունկն իմ լսել զկործանումն և զանկումն ։ Որպէս. յորժամ ձայնէ որդին Աստուծոյ, "Ա՛յս է մարմին իմ բաշխեալ, և արիւն իմ նոր ուխտ ձեզ քաւութեան և Թողութեան.,, յայնժամ իմ սրբութեանքն նա պարտաւորի, և զիմ քաւութիւնն լսելով զնա լսեմ զատապարտեալ մեղացն այնոցիկ՝ զոր 'ի վերայ իմ ասէր տեսանել, և ինձ վկայէր լինել ։ "Ա՛րդարքն որպէս զարմանայիս ծաղկեցայն. որպէս մայրքն Իբանանու բազումք եղիցին.,, ։ Ո՛ր Թէպէտ նամին մեղաւոր զփուշ բուսուցանէր և զդժնիկ անօրինութեան ծաղկեցուցանէր, այսուհետև արդարացեալք Աբրահամի շնորհօքն՝ ծաղկեալ բուսանին, ոչ ժահահոտ մեղօք երկրային խորհրդոց, այլ որպէս զարմանալիս. զի որպէս նա միշտ աձելովն՝ 'ի վեր ընթանայ, այսպէս և սորա աղաղակեն. յետ այսորիկ մեռանք, և կեանքն մեր է յերկինս ընդ Աբրահամի առ Աստուած. անդ է և մեր առաքինութիւնն, ուսուն և փրկչին ակն ունիմք. զայն ծաղիկն ծաղկին՝ յոր երկնաւոր Հայրն հոտոտի ։ "Ա՛ւ որպէս մայրքն Իբանանու բազումք եղիցին.,, ։ Իբանան միշտ 'ի գրոց հակառակամարտ Հնդիմի դնի, որ է մարդկան ընդունելոց 'ի սատանայէ նշանակ. բայց այնմ, "Վշրեայէ տեր զմայրսն Իբանանու.,. զոր վշրեաց, և չինեաց նոքօք զեկեղեցի իւր յամենայն ազգաց հեթանոսաց ։ Ա՛րդ ասէ, Թէ որպէս անհաւատութեամբ ամբարձեալքն և ծառայեալքն սատանայի բազումք էին բոլ մայրիցն

Լ ի բանանալ մարդիկ, այսպէս փչրեալք նոքա և խոնարհեալք և արդարացեալք Քրիստոսի շնորհօքն, և ծաղկեալք առաքինութեամբք բազմապատիկ լինիցին։ Եւ զի եղև այս, յառաքելոյ ուսիր՝ որ զերեաց զանմեռնայն միտս ի Լ ի բանանել, և ած Աչէմ ի հնազանդութիւնն Քրիստոսի, և շինեաց զնոսա տաճար հոգևոր, յանապատ քահանայութիւն։

"Ընկեալք եղիցին ի տան տեառն, և ի գաւիթս Աստուծոյ մերոյ ծաղկեսցին,, ։ Որ տուն. ի Լ ի բանանել կուսապաշտութեանն յեկեղեցի հաւատացելոց ամենայն հեթանոսք մտկեցան և մտկին Քրիստոսի մահուամբն յայս գաւիթս, և ծաղկեսցին նոքա այնուհետև, ոմանք մարտիրոսական արեամբ, այլք խոստովանողական դաւանութեամբ, այլք ձգնաւոր ժուժկալութեամբ. կէսք բանիւ և վարդապետութեամբ, բազումք ունկնդրութեամբ և առաքինութեամբ, զորոց ծաղիկն նա միայն գիտէ թուել՝ որ հոտոտեցաւ և հոտոտի յիւրաքանչիւրան, և ըստ նոցին գՀատուցմունն կշռէ։

"Աչս և բազումք եղիցին ի ծերութիւն պարարտութեան,, ։ Օ ի մի կարծեսցես՝ թէ յերբեմն ժամանակ եղև ծաղկեալ աստուածպաշտութեանն, և ի Քրիստոսի շնորհացն ի մէջ եկեղեցւոյ և դադարեաց, ուսուցանէ թէ օր ըստ օրէ առաւելապէս բազմանան և ծերքն, այսինքն առաքինիքն և իմաստունքն երբ և լինիցին՝ պարարին Հոգւոյն շնորհօք, և միշտ նոյն է Քրիստոս և իւր պարգևքն, որպէս առաքելովքն, և յառաջին ժամ՝ առ իւր սիրելիսն ծաղկեալ։ "Պիրգ և փափուկք եղիցին ի պատմել. ուղեղ է տէր Աստուած մեր, և ոչ գոյ ի նմա անիրաւութիւն,, ։ Պատձեալ ուսիր, զի մարմնապէս բանիւքս զՀոգևոր շնորհն ձևացուցանէ. ապա թէ ոչ՝ ըստ մարմնոյ գիրքն և փափուկն՝ ոչ զուղղութիւնն Աստուծոյ ձանաչէ, այլ և զոր ունէր մոռացի. ըստ այնմ, "Պիրացաւ Յակովբ, սունքացաւ ի պարարտութենէն, և եթող զտէր Աստուած իւր,, ։ Արդ որպէս նա որ մարմնովն գրգիռ մանայ, այսպէս որ մարմնով ձնչեալ գրգռէ զՀոգին,

1 Երկու օրին. Յովհան Քաղքեդ.

զԱստուծոյ սիրոյն յիշատակին օր ըստ օրէ առատացուցանէ յանձն իւր . վասն այսորիկ ասէ , յորժամ բազմանայ եկեղեցի և յառաջանայ հատակաւ առաքինութեամբն , ծեր և կատարեալ լեցի խնամատիսն Աստուծոյ պարարեալ՝ ձգնութեամբն , և զրգեալ ապա փափկանայ առաքինութեամբն , յետ այնորիկ ոչբան խեղանուտ լինի շաւղացն Աստուծոյ , և լսէ պատմել զնորա ուղղութիւնն . և զայս թէ կամիս ուսանել , տես զառաքելական օրէնսն առ նորատունկսն , զինչ է՝ի բաց կալ՝ի զոհելոյ կռոց , ՚ի պոռնկութենէ և ՚ի հեղձուցելոյ : Տե՛ս թէ յետ այնորիկ ՚ի բազմանալն և ՚ի պարարիլն և ՚ի պատմել զուղղութիւն երկեղին Աստուծոյ՝ ոչբան աձեալ ՚ի հետևողաց նոցին զանազան զգուշութիւն առաքինութեան : Օ այս ամենայն ընթացս և շնորհս եկեղեցւոյ ՚ի սկզբանէ մինչև ցկատարած՝ նախ Հոգին Աստուծոյ յայս նուագս սաղմոսի ՚ի ձեռն մարգարէիս ուսոյց մեզ , զոր յորդառատ սիրով սկիզբն աստուածային խորհրդոյն կարգեցին հարքն , հիմն և արմատ մեծի շնորհին որ հանդերձեալ է կատարել . ընդ որ և զխոստովանութիւնն յայտնի ածէն ՚ի վերայ . “Ի՛մածին որդի և բանդ Աստուած ,, , որ զայս ամենայն կատարեցեր ՚ի փառս անուան քո , որ ես փառաւորեալ յաւիտեանս . ամէն :

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՂՕԹԻՑՆ ՈՐ ՅԵՏ ԱՒՒԱՂԻՆ ՍԱՂՄՈՍԻՆ ԱՍԻ [2]

“ Տէր Աստուած մեր կեցո՛ զժողովուրդս քո , և օրհնեա զժառանգութիւնս քո ,, : Ժողովուրդք մեք անուանեմք զԱբրիատոսի սեպհական , գնեալք արեամբ նորա , ըստ որում ասէր Պօղոս առ երիցունս Ասիացւոց . “ Օ ձեզ լերուք հօտիւք՝ յորում եդ զձեզ Հոգին սուրբ տեառնէս՝ հովուել զժողովուրդ տեառն , զոր գնեաց արեամբն իւրով ,, : Զդի զի այսպէս զձեզ կալ հրաման առին , ՚ի նոյն ինքն ՚ի Քրիստոս աղերսեն զպահպանութիւն՝ որոյ և ժառանգութիւն վիճակի հօտս :

1 Մի տրին . պ-ր-դե-լ : -ֆ- -ֆ : Մի տր . ն--ջ- -ղ-
2 Երկու տրին . ն--ջ-ն- -մ- ֆ-ֆ- :

«Օ լսուն եկեղեցւոյ քո պահեա ,, , այսինքն թէ մի զրկեսցուք ի սատանայէ , յափշտակել զոք ի բազմաձեւ մեղս մերում ժողովոյս , այլ պահեա անվրդով ։

«Արբեա զնոսա որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քո ,, ։ Ի պէտս սրբելոյ ժողովեցան սոքա՝ ապաւինեալք յօձառ՝ աղօթից մերոց . արդ դու որպէս առաքինաբաւական Հատ՛ր լսեա Հաւատոց խրեանց , և առաւել քան զնոսին ։

«Դու զմեզ փառաւորեա աստուածային զօրութիւնդ քո , և մի թողուր զյուսացեալքս ի քեզ ,, ։ Օ՛ի քեզ սպասեալ յուսամք , և դու ես կարապետ փրկութեան մերոյ . զաղքատացեալքս Հարստացո աստուածեղէն առատ կամօքդ , և մի առներ անտես , որպէս բազում ողորմ և փառաւորեալ յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ ՍԱՂՄՈՍԻ ԵՐԳՈՑՆ ՈՐ ՅԵՏ ԱՒԱՂՆՈՑՆ

Տեսեալ զվերնագիրս սաղմոսիս՝ բաւական Համարիմ առ ի զօրութիւն նորին յայտնել իմաստնոց և առանց քննութեան . զի գրեալ է . «Որ նուիրեցին երգ Դաւթի՝ յօր միաշաբաթու , յորում երկիր Հաստատեցաւ ,, ։ Վասնզի ահա տեսանեմք Հաստատութիւն երկրի՝ զոր ի Վրիստոսէ ընկալաւ ընդհօք մարդեղութեան . ապա թէ վասն առաջին արարչութեանն էր օրհնութիւնս , ոչ սակս Հաստատութիւն որպէս[1] զրգռելոյ , այլ ստեղծուած և գոյութիւն . բայց յայտնի թէ այն ստեղծեալ երկիրն և բնակիչք նորա և բոլ մեղացն Ադամայ անիծեալ և զրգռեալ , այսօր ի նոր Ադամն Վրիստոս օրհնեցաւ և Հաստատեցաւ . սակս որոյ և մարգարէս ընդհակառակ և գովասան և նախրողիչ լինի նմա օրհնութեամբ երգոյս ասելով .

«Տէր թագաւորեաց , վայելչութիւն զգեցաւ ,, ։ Արկուս թագաւորութիւնս գիրք ասացանեն մեզ Վրիստոսի . մի զիմանջէնասւորապէսն ընդ[2] օր տե-

1 Մի օրին . ց–ս– ։ 2 Մի օրին . Իբր ։

բութիւնն Աղուոյ՝ որ նախ քան զամենայն բլուրս ծնաւ ի ծոցոյ նորին անպրանիկ . և երկրորդ յորժամ ըստ մարմնոյ եկաց նա թագաւոր ի վերայ Աիոնի լերինն սրբոյ նորա , յորժամ և խնդրեաց զհեթանոսս ի ժառանգութիւն . զայս թագաւորութիւնս գնէ մարգարէս եզական՝ ասելով , « Տէր թագաւորեաց .. . քանզի ի յեսին ժամանակս յայտնեցաւ Քրիստոս յանարգութիւն մեզայ , յօրում և վայելչութիւն զգեցաւ : Օ՛ինչ այլ նման վայելչութիւն և փառք , բայց թէ ամենասուրբ մարմինն միացեալ ընդ աստուածութեանն զոր զգեցաւ յորժամ կամեցաւ , տիրել ի վերայ աշխարհի իրաւամբք , և վայելեցաւ և չքեղացաւ , փոքր մի խոնարհեալ քան զհրեշտակս Ոխսուս՝ իւրով նուաստանալովն :

« Օ գեղեցաւ տէր զօրութիւն , ընդ մէջ իւր ածաւ .. , Աստուծոյ զգենուլ զոր ոչ ունէր զօրութիւն՝ ոչ ասի , զի նա միշտ է զօրաւոր , այլ յայտ է թէ՝ի մարմնաւորութիւնն՝ ասի այս՝ի վերայ նորա՝ որ զգեցաւ զօրութիւն , և ած ընդ մէջ իւր : Օ՛ր զօրութիւն , թերևս հրաշանութիւն կամ սաստ , կամ պատուհաս , որով զօրացաւն . ոչ բնաւ . այլ զինչ . զտկարութիւն . քանզի զտկարութիւնն և զչարչարանս ած ընդ մէջ իւր , և այնու սպառազինեալ՝ մարտեաւ ընդ թշնամին մարդկան , և յաղթեաց նմա : Աո՛ր լուաւ , ո՛ր եռես զնէն արքայի որպէս զմերում տեառնս և թագաւորի զօրաւոր , որ՝ի մարտ դիմեալ ինքն անէծք եղև , և զանէծսն ելոյծ . ինքն չարչարեցաւ , և զչարչարանսն խափանեաց . ինքն դատեցաւ , և զթշնամին դատապարտեաց . ինքն արտաքոյ դրանն մեռաւ , և զիշխան աշխարհիս յաշխարհէ արտաքս ընկէց : Այս է զօրութիւն զոր եռես վայելչապէս ընդ մէջ նորա ածեալ մարգարէս :

« Հաստատեաց զաշխարհս՝ զի մի սասանեսցի .. , Աւ թէ ոչքան ըստ կարգի ածէ զվայելչութիւնս ընդարձային Քրիստոսի . քանզի յայնժամ հաստատեցաւ աշխարհ , յորժամ նա խարխիս մեր յերկինս ընդ

1 Ներկու օրին . Մարմնաւորու- 2 Մի օրին . Վայելչութիւն .
թիւն : Մի օրին . Մարմնաւորութիւն :

աջմէ Հօր նստաւ . վրդովեալ էր և տասանեալ , իբրա-
քանչիւր ոք ՚ի Հանապարհս իւր տարակուսեալ՝ թէ
զինչ յետ մահու ունի պատահել մեզ . յայսպիսի
խռովութենէս Հաստատեաց զամենեսեան , յոյս և
կարապետ մնալ ՚ի ներքին կողմ վարագուրին՝ ուր
հրաւիրեաց զամենեսեան Հանգուցանել : ՚Ի զուր որպէս
՚Ի լրիտոսի չիք կրկին մեռելութիւն , և ոչ աշխարհի
՚ի Հաստատութենէ յուսոյս տասանումն կամ այլայլու-
թիւն . յաղագս որոյ և ասէ , այնպէս Հաստատեաց , զի
մի բնաւ տասանեսցի , զոր գիտելով առաքեալ ասէ .
“ Պինտ կալցուք զխոստովանութիւն անշարժ և Հաս-
տատուն յուսոյն . քանզի Հաւատարիմ է որ խոստա-
ցաւն ,, :

“ Պատրաստ է աթոռ քո , ՚ի սկզբանէ յաւիտեանս
դու ես ,, : ՚Ցստ առ ինքն Թագաւորն շրջէ զբանս՝ զորոյ
ընդհանուր Հաստատութիւնն եղև խոստովան . և դու տես
զնրբութիւն ասացելոցս ՚. քեզ աթոռ պատրաստեցաւ
ասէ , որ ՚ի սկզբանէ ես և յաւիտեան . և թէ ՚ի սկզբա-
նէ Թագաւոր , այժմ զաթոռն զիաւրդ ընդունի որպէս
նորոգ օծեալ արքայ , և ՚ի պատրաստեալ տեղն բազ-
մեալ : ՚Ի լրջանալ միութիւն մարմնոյն ընդ աստուա-
ծութեանն նշանակէ . և ըստ որում էր մի , իբր ընդ մի
խօսի ընդ զգալին և ընդ խանդալին՝ թէ որ ՚ի սկզբա-
նէ ես ՚ի յաւիտեան՝ առեր մարմին , և նովաւ յա-
թոռդ Հայրական նստար , գոլով դու նոյն մի ՚Ցստուած՝
որպէս ՚ի սկզբանէ , և այժմ մարմնով և յաւիտեանս
անփոփոխ . ըստ այնմ . “ ՚Ցայց տէր ցտէր իմ , նիստ
ընդ աջմէ իմմէ ,, . որ և էր միշտ , բայց յետ մարմնա-
ւորութենանն այս ասացաւ առ նա՝ որով և զանուն ըն-
կալաւ ՚ի վեր քան զամենայն անուն : ՚Ի զուր որպէս ա-
նուանն տուաւ նմա յետոյ՝ որ ունէր զնոյն յաւուրջ , այս-
պէս և աթոռն պատրաստեցաւ նմա յետ Հաստատե-
լոյն զաշխարհս՝ որ ՚ի սկզբանէ ունէր զնոյն , ըստ որում
և ասաց . “ Ցուաւ ինձ ամենայն իշխանութիւն յեր-
կինս և յերկրի ,, :

“ ՚Ի քարձան գետք ՚ի տէր , և ամբարձին գետք ըզ-
ձայնս իւրեանց , և յարիցեն գետք ՚ի գնացս իւրեանց ,, :

1 Մի օրին . Ընդհանուր :

Այնուհետև զարթուցանէ զմեզ ոչ հայել՝ի պարզ յօդուածս բանիցս. զի զինչ գետք կամ գնացք նոցա, ձայնք կամ ամբառնալ առ տէր առնլի. ապա թէ զզօրութիւնն քննեմք՝ ի բաց առեալ զպատրուակ ապացուցիս, ամբողջ պահէ զընթացս բանիդ իւրոց. քանզի նախ ասաց թագաւորել նմա, զմարմնանալն, և զօրութեամբ հաստատութիւն երկրի զիսաչն. յետ որոյ՝ի պատրաստական աշխոյն գնատեղն, ՝ի համբառնալն։ Այդ ըստ կարգի ածէ և զիջումն ՚Հոգւոյն որ յետ այնորիկ եղև, ասելով. "Ամբարձան գետք՝ի տէր.," ։ Վասն և ջրոյ անուամբ միշտ զընորհս ՚Հոգւոյն է գրոց սովորութիւն առնուլ. ըստ այնմ, "Ամ հաւատայ յիս, գետք յորովայնէ նորա բխեսցեն ջրոց կենդանութեան.." զի ըստ որում ջուր մշտաբուխ է, այնպէս և ՚Հոգին. և որպէս նա զիւրաքանչիւր յորս մերձենայ՝ գտեալ արմատ կենաց և զօրութեան՝ կենսացուցանէ, այսպէս և ՚Հոգին առ հոգիս ներգործէ։ Յաղագս որոյ գետոյ առնուամբ առնու գնա ասելով. "Ամբարձան գետք՝ի տէր.," զի ՚Հոգին ամբարձեալ՝ի ՚Հօրէ՝ի Քրիստոս՝ տուաւ փոխարէն իւրն աշխատութեան՝ի տէրն մեր, և նա առեալ գնոյն եհեղ յաշխարհ առատապէս՝ի վերայ աշակերտաց իւրոց սաստիկ ձայնիւ ըստ ասացելոցս. "Ամբարձին գետք զձայնս իւրեանց.," զոգ ամին և պատմութիւնն ասէ, "Ահն հնչիւն իբրև սաստիկ հողմոյ.," ։ Ահ բազմաւորական անուամբ դնէ յաղագս զանազան շնորհացն զոր յաջողէ մի և նոյն ՚Հոգին, զիւրաքանչիւր յաջողուածսն նորին անուամբն գետք առեալ. "Երիցեն գետք՝ի գնացս իւրեանց.," զի այսուհետև ասէ յորժամ ձայնիւ գետօրէն եկն ՚Հոգին՝ յերկիր, որ պատրաստէ զանձն իւր գնացից նորա Քրիստոսի, անդ յառնէ հանգչել, և զանձն նորա գնացիւք իւրովք առագել։ Աւ ո՞ լինի նորա գնացից Քրիստոսի, եթէ ոչ որ նախ ընդ Քրիստոսի մեռանիմն մկրտութեամբն, նոքա կարեն զօծութեի սրբոյն տանել, և զորդեգրութեան Հոգին ընդունել։

"Ի ձայնէ ջուրց բազմաց սքանչելի եղեն զբօսանք ծովու.," ։ Ով այժմ ծով առակաւ ասէ, յետ փոքու

1 Երեք պրն. նմն ետ հոգւոյն։

հանդերձեալ է տուն Աստուծոյ անուանել, որ է եկեղեցի սուրբ. սորա աբանչելի և ուրախարար զբօսանք դնէ զբազմապատիկ ջուրցն ձայնք. և ձայն ջրոյն է ազդումն Հոգւոյն յիւրաքանչիւր ոք ի սրբոցն, որով գնացս և ձանապարհ արարեալ յեկեղեցի՝ պէսպէս և բազմաձայնս շնորհաց Ժողովեաց աստ և ծով արար։ Ի որպէս ի ծովն ոչ մի գետ, այլ բազումք մտանեն, այսպէս և յեկեղեցի ոչ մի շնորհ Հոգւոյն, այլ բազում և զանազան է Ժողովեալ. և որպէս նոքա թէպէտ և գետքն զանազանին, սակայն բնութիւն ջրոյն մի է, այսպէս և սորա թէպէտ իւրաքանչիւր ոք ի սրբոցն որիշ են ժամանակաւ և բանիւ, սակայն ջուր Հոգւոյն՝ որ նոքօք ձանապարհ արար յեկեղեցի, մի է և ի Հոգւոյն շարժեալ։ Այլ օրինակաւ զձայն մարգարէիցն լսաք, և այլով զառաքելոցն. այլ զհետևողացն, և այլ զհայրապետացն. և այսպէս այս բազմապատիկ ջուրքս եկեալ ի մի վայր եկեղեցւոյս՝ ծովացան ի սմա, և աբանչելի զբօսանօք ուրախ առնեն և հեշտացուցեալ զուարձացուցանեն զմիտս հաւատացելոց հայեցողաց ի նոսին։ Ի բօսնուն և զարհնուն ի թմբրութենէ մեղայն, նայեցեալ յայս ծովս, և ըմպեն ի սմանէ, և զիւրաքանչիւր ծարաւ զովացուցանեն. ումն ապաշխարութեան պատճառել, և եկեալ ի ծովս՝ ըմպէ ի ջրոյ սորա, և զբօսեալ հեշտանայ. այլ ոք խմաստութեան, միւսն գինոյ, այլ ոք ջրոյ, միւսն կաթին, ամենեցուն է բաւական տալ զբօսանք միխթարութեան։ Արդարև աբանչելի է այս ծով հասարակաց ցնծութեան առիթ։

«Աբանչելի ես դու տէր ի բարձունս. վկայութիք քո մեք յոյժ հաւատացաք»։ Ցեսանեմ, զի զսնուն գետոյն և ջրոյն այժմ վկայութիւն փոխեալ, յայտնեաց զստուգութիւն բարառնութեանն. և զինչ ասէ. «Աբանչելի ես դու տէր ի բարձունս»։ որպէս ծով քո և եկեղեցի յերկինս՝ է աբանչելի զբօսանք մարդկան ըստ ասացելոցս, այսպէս և դու ի բարձունսդ ես աբանչելի տէր, անհաս ի հրեշտակաց և ուրախութիւն նոցին։ Ա՛ւ որպէս մեք ի ծովէս ըմպեմք, և զանազան

1 Մի օրէն. Յեր[illegible]։

ընդհանուր միութեամբ՝ զոլքանն խորութեան եկեղեցական խորհրդոցս՝ ոչ գտանեմք, այլ յետ ամենայնի սքանչելի և անհաս զսա գնեմք, այսպէս և դոքա՝ ի քէն զանազան ընդհանուր զօրացեալ և զուարճացեալ՝ յոլքանն խորութիւն գիտութեանդ տեառն ոչ հասանեն, այլ յետ ամենայն հասմանս՝ սքանչելի և անհաս՝ ի ծառայիդ զտէրդ հաւատան։ «Ա կայութեանդ քոյ մեք յոյժ հաւատացաք ,, . վկայութիւն զընդհանուր ՚ոգւոյն ասէ՝ որ գրովք ամբարեալ է՝ ի մէջ եկեղեցւոյ վկայ աստուածութեանն նորա ճշմարտութեան, և առ մարդիկ բազմապատիկ մարդասիրութեանն. մեք ասէ զքեզ ճանաչեալ՝ ի լուր սոցա՝ ոչ կեղակարծ մտօք թերահաւատութեամբ, այլ յոյժ անստերիւր աւետարով հաւատամք՝ յորժամ պատմէ ոմն սրտիւրէ զքեզ, ոմն վկայէ ծննդեան քո, այլ ոք խաչին, այլ ոմն աստուածութեան, միւսն համբառնալոյն, և այլ ոմն կրկնակի գալստեանն։ «Յաքան վկայիցս քո տէր հաւատացաք յոյժ, և աքանչացաք ընդ ընդհանս քո, որպէս և հրեշտակքդ՝ ի բարձունս։

«Ցան քում վայել է սրբութիւն, տէր, ընդ երկայն աւուրս ,, ։ Որպէս զգեան սուգ գաբանեաց տիրապէս կոչմամբն վերագոյն, և վկայութիւնս անուանեաց, այսպէս զծոմն ՚ի նոցանէ եղեալ զեկեղեցի՝ տուն տեառն այժմ կոչէ. «Ցան քում, ասէ, վայել է սրբութիւն, տէր ,, . այսինքն թէ այս տանս՝ որ յայսքան բազմապատիկ հիմանցս շինեցաւ յառաքելոց և ՚ի մարգարէից, ՚ի վկայից և ՚ի վարդապետաց՝ ոլք խաղաղանան ՚ի մէջ տանս և առոգանեն զսոյն, յամենայն աղտեղութենէ և ՚ի պղծութենէ սուրբ և մաքուր լինելն վայելուչ է. քանզի որ գլուխ անկեանդ ես՝ սուրբ ես, և հիմունքն ՚ի քեզ պատկանեալ՝ սուրբ են ամենեքեան որպէս վկայեցեր, վայել է և մեզ ՚ի ձեզ յարմարեալ որմոյս սուրբ լինել ։ Ա՛ ոչ այլոք որ սրբէ զմեզ, եթէ ոչ քոյդ սուրբ մարմինդ և պատուական արիւնդ. քանզի նա է քաւութիւն և սրբութիւն մերոց, և մեք մեղօք ապականեալ և աղտեղացեալ ։ Ա՛դ

1 Ա՛ի տրին . Ջ-ուրաքո-ի՛ն էին ։ Ա՛ի տրին . Ա-ուրաքո-ի՛ն ։
2 Ա՛ի տրին . Ա-ուրաքո-ի՛ն ։

տուր զօձսա սրբութեան զսրբարար քո պարգեա, և որպէս վայել է տաճարիս քո և տան եկեղեցւոյս, մաքրեա զսա ընդ երկնաւորս [1]. մի այսօր միայն կամ վաղիւն, այլ զամենայն երկայնութիւն առաքելական կեաց կենացս կալցուք զայդ շնորհ և միսիթարութիւն ըստ քումդ, Աստուած մեր, անուտոտ խաստման՝ որ ասացեր. "Այս է հեղեալ վասն բազմաց ,, : Այսքան ետ քան փանաքիմաց մատց մեր Հոգին Աստուծոյ 'ի պէտս սաղմոսին քննութեանն՝ զոր երգէ եկեղեցի խորհրդապէս, նախ 'ի սկիզբն սրբոյ պատարագին. ընդ որ և շարական յարմարէն պատշաճապէս 'ի փառս Աստուծոյ : Ընկալցուք ապա զՀայրենի աւանդութիւնս, ծանուցեալ զզօրութիւն սորա սահմանեալ Յաստուծոյ յառաջագոյն 'ի փառս մեր, և ծանիցուք ապաւինեալքս 'ի Քրիստոս զայս՝ զոր ոչ ոք յիշխանաց աշխարհիս այսորիկ ծանեաւ. իսկ մեզ յայտնեցաւ Քրիստոսի փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն :

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ ԱՂՕԹՔՆ

"Ար հասարակաց զայս և միաձայն մեզ առնեցուն ուսուցեր աղօթել, և զերկուց և զերից միաձայնելոց [2] յանուն քո խոստացար ընձեռել զՀայցուածս ,, : Պարզաբար զՀրամանն Քրիստոսի նմին յուշ ածէ [3] զասացեալն. "Որթէ երկու 'ի ձէնջ միաբանեսցին, զոր ինչ խնդրեսցեն՝ եղիցի նոցա. զի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես 'ի մէջ նոցա ,, : Զդայս ժողովելս, ասէ, և զաղօթելս 'ի քէն ուսաք, և ոչ թէ անձամբ անձին ժպրհիմք մատղիկ ընդ Աստուած խօսել. այլ զի լուաք [4] ասացեալ, զոր ինչ խնդրէք՝ եղիցի ձեզ,

"Ասա տէր և այժմ զձառայից քոց զխնդրուածս առ 'ի յօգուտն կատարեա ,, : Ի քէն խնդրեմք՝ որ զխնդրելս ուսուցեր. վայելուչ է և քեզ զքո խոստումն կատարել ըստ այնմ, որպէս և դու քննես զօգուտն մեր.

1 Առաք. Ընդ երկոսին սուրբս :
2 Երկու օրին. Միաբանելոց :
3 Առաք. Պարզաբար զՀրամանն Քրիստոսի յուշ ածէ :
4 Երկու օրին. Ունուր :

«Ը նորհելով մեզ յայսմ յաւիտենից գթութիւն քում Աստուածութեանդ, և յապառնիդ զկեանս յաւիտենականս»։ Այսու այնմ կարօտիմք, զկամն Աստուծոյ գիտել, և ի հանապարհս վկայութեց նորա լինել իմաստուն՝ զոր և խնդրէ. քանզի այսոքիկ են որ առաջնորդեն մեզ ի յաւիտենական կեանսն։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ ՍԱՂՄՈՍԻՆ ՈՐ Ի ՏՈՒՆՍ ԵՐԳԻ։

«Արկանցե գնծասցուք ի տէր, աղաղակեսցուք առ Աստուած փրկիչ մեր»։ Օ այս սաղմոս Աստուածային երանելի առաքեալն առ ի ձեռնէն որ առ Հրայեցիսն. ուր և ցուցանէ նա Պօղոս՝ թէ առ եկեղեցի է ասացեալ. վասն որոյ ոչ եմք կարօտ սորին վասն բանիս տալ հաստատութիւն. քանզի ասէ՝ թէ այսու սաղմոսիս եմք աւետարանեալ ի պատրաստել ընկալեալ զայնմին Քրիստոսի. որպէս և նորա ի Մովսեսէ ընկալան ըզգուշութիւն առ հրամանս Աստուծոյ. և զի աւետարանութիւն է սաղմոս և ուրախութեան կարապետ, նորին աղագաւ ի սկիզբն սորա առաքելաբար հրամանաւ ի ցնծութիւն կոչէ զմեզ ասելով.

«Արկայք ցնծասցուք ի տէր»։ Օ ո՞ր կոչէ ի ցնծութիւն՝ եթէ ոչ զքեզ եկեղեցի հեթանոսաց. դու ես սեպհական փրկչին քո ժողովուրդ՝ գնեալ արեամբ ամբիծ և անարատ գառինն։ Արկայք ամենեքեան ժողովեսցուք ի միասին, եկեղեցասցուք ի Քրիստոս և ցնծասցուք ի նա, յիշատակեալ զբազմապատիկ ընդ նորա առ մեզ։ Ալան մեր եհար զԳիպտոս զծառայեցուցիչն[1] բանսարկուն. մեզ պատառեաց զծոցն մերոց, և անցոյց ընդ նոյնն խաղաղութեամբ. զայս ժողովրդեանս[2] հետևեալ Փարաւոնն՝ նշանակեալ ընկղմեաց ի ծով խաչին[3], և մերկացոյց յիշխանութենէ և ի պետութենէ. քեզ առաջնորդէ սիւն հուրն, քեզ առաջնորդէ մինջևնաբուխ վէմն աւետարանական Քրիստոս. դու ձայնակից զնոյց երկնից զՀայր

1 Ա. յոյք. Ուխ.
2 Երկու պրին. Ժողովրդեանս։ Ալեաց ի ծով խաչին։
3 Մի պրին. Ժողովրդեանս։ 4 Երկու պրին. Նշանակեալ ընկղմեաց

բիա , զու ընձեռնաս յերկիրն պարգեւաց յերկնային Հանդիսեան . նոքա քեզ եղիցին առենայնիս օրինակ . վասն որոյ Աչմարտութեան վայելող եկեղեցի քրիստոնէից , մի հեղգանար , մի դանդաղիր , այլ եկեսցուք ՚ի միասին և ցնծասցուք ՚ի տէրն՝ յորմէ զայսքան գոհաք փըրկութիւն ։

՚՚ Աղաղակեսցուք առ Աստուած փրկիչ մեր ,, ։ Աղաղակին ցնծութեան է ծնունդ . քանզի յորժամ ոք ՚ի միտս և ՚ի խորհուրդս առատանայ՝ առատելութեամբ ուրախութեանն ՚ , ոչ կարէ ՚ի նեղըս թաքուցանել զնոյնն , այլ արտաքս ՚ի զգայարանս ձգէ , յայնժամ իւրաքանչիւր ոք ՚ի նոցանէ շարժին ՚ի գործակցութիւն ուրախութեանն . Հայեցուածք աչացն զուարթանայ , ձեռքն ծափս հարկանէ , բերանն ծիծաղի , լեզուն աղաղակէ , և ամ մարմինն ներգործութեան հոգւոյն կցորդի ՚ ։ ԱՀեք ասէ այնպէս սրտի մտօք տարփմամբ սիրոյ տեառն մերոյ ցնծասցուք , մինչ զի ոչ հանդուրժեալ առատելութեանն ՚ի զգայարանս զնոյն ձգեսցուք , և յայտնաբար արասցուք Աստուծոյ մերոյ՝ զառ նա ուրախութիւնս աղաղակաւ լեզուացս . ՚՚ Աղաղակեսցուք ասէ , առ Աստուած փրկիչ մեր ,, ։ Աի ստուգաբանի առ Աստուած Յիսուս , զի նա է որ փրկեաց զժողովուրդ իւր ՚ի մեղաց իւրեանց ։

՚՚ Կանխեսցուք առաջի նորա խոստովանութեամբ ,, ։ Աղաղակել հրամայեաց ցնծացելոցս՝ զի մի տարակուսեսցուք՝ եթէ զինչ աղաղակեմք , ուսուցանէ և զնոյնն . ՚՚ Կանխեսցուք ասէ ,, , այսինքն փութասցուք մտօքս՝ զոք ժողովեցաք , կացցուք առաջի նորա խոստովանութեամբ . խոստովանել զի այլ , եթէ ոչ զպակասն տնօրինութիւնս նորա ՚ի պէտս փրկութեան մարդկան , Կամիս ասէ ուսանել եկեղեցի , եթէ յորժամ եկեալ կանխես ցնծալ առ փրկիչն քո , եթէ զինչ աղաղակես առ նա . ես յուցից քեզ . խոստովանեսցայ վերահասին զոր առեր ՚ի ձեռանէ նորա՝ սաղմոսիւք և եղանակաւոր աղաղակաւ ՚ եթէ վասն մեր մարդացար , զմեզ սիրեցեր . ՚ի պէտս փրկութեան մեր չարչարեցար , յաղագս

1 Ա՛ի տրին . Ց———ե——ր——.
Թ՛ին ։
2 Ա՛ի տրին . կ՛ր՛է ։
3 Ա՛ի տրին . Ն՛շ՛——.

զմարդիկ կենդանացուցանելոյ խաչեցար, մեզ քահանայապետ, յոյս և բարեխօս ընդ աջմէ Հօր նստար. այս ժողովրդեանս զընդ քեզ լինելն աղօթեցեր, և կամիս միշտ։

Աղաչեմք աղաղակեսցուք առ նա, զ՚ո. առ փրկիչն մեր. զայսպիսի խոստովանութիւնս յեզանակ սաղմոսերգութեան նուագի խառնեալ՝ միշտ առ նա աղաղակեսցուք։

Օ՚ի յաուած մեծ է, և տէր, Թագաւոր մեծ՝ի վերոյ ամենայն երկրի, զ՚այս է՝ որ զմեզ փրկեաց երկրորդ արարչութեամբն. ոչ եթէ յայնժամ արար ըզպէսպէս աբանելիս զոր խոստովանիմք, և այժմ տկարացաւ, կամ ոչ եթէ յայնժամ կամեցաւ զփրկութիւն մարդկան և արդ ոչ. այլ նոյն մեծն է և ամենազօրն և Թագաւոր բարձրաբազուկ՝ի վերոյ ամենայն երկրի. զոր ինչ կամի իշխանական ուժգնութեամբն և այսօր կատարէ՝ի սոյն։

Ի ձեռն նորա են ամենայն սիեզերք երկրի, և բարձրութիւնք լերանց նորա են, զ՚ի՞թէ սիեզերք՝ի ձեռս նորա են, զինչ պարտ էր՝ զլերինս երկրորդել որք՝ի յեզերաց են պարփակեալ. այլ ուսցուք, զի ամենայն մարգարէիս սովորութիւն է անուամբ լերանց միշտ ըզհրեշտակս առնուլ, որպէս մինչ ասէ, Լերինք շուրջ են զնովաւ. և Ակը յուսայ՝ի տէր որպէս լեառն. ՝ի սոյն միտս առնէ և զասացեալսն, զի փրկիչն մեր, ասէ, և Թագաւորն ոչ թէ սուակ մեծ է որպէս զմի ոք՝ի մարդկանէ, այլ զեզերս աչխարհի՝ի ներքոյ զօրութեանն ձեռինն ունի գրաւեալ, և զերկիր զամենայն չափէ քաւ իշխանութեանն. նորա են և բարձրութիւնք լերանց, հրեշտակայն յաւիտենական լերինքն, առ որս և զձեզ մերձ կացոյց ընդ՚ոք, և զնոսա պահապանս զձեզ։

Զորա է ծով, և նա արար զնա, և զցամաքն ձեռք նորա առեզծին։ Ընդարձակ զիշխանութիւն փրկչին մերոյ ընդ երկինս և ընդ երկիր, ՝ի ծով և՝ի ցամաք, որպէս զի յայսմ ամենայն՝ի մեծութենէ նորին և՝ի փառաց նորա տայցուք փրկեալքս նորա գովաբանութիւն, խոստովանութիւն և փառաւորութիւն. զի մի միայն մեք, այլ

1 Երկու տրին. խոստովանել։ 2 Մի տրին. պատ է։

և զծով և զցամաք կոչեսցուք ՚ի կցորդութիէ օրհնութիէն նորա ։ Այսպա թէ ՚ի միտս ՚ոք առնու զսոյն , և ոչ այնպէս վրիպէ ՚ի ձշմարտութենէն . ծով զիմաստութիւն մտաց , և ցամաք առոգեալ ՚ի նմանէ զատեղծեալս ձեռամբն Աստուծոյ մարմին , որոց թագաւորեալ տիրէ ընդ հրեշտակաց և ընդ երկրի . քանզի նորա առաջի ամենայն ծունր կրկնեսցի , երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց , և ամենայն լեզու խոստովան լինի տէր զՅիսուս Քրիստոս ՚ի փառս Աստուծոյ Հօր ։ “ Արկայք երկիրպագցուք նմա , անկցուք և լացցուք առաջի տեառն արարչին մերոյ .. ։ Արդարև այս կոչումն և վայելուչ՝ նմա երկիրպագանել որ յերկնաւորաց և յերկրաւորաց զնոյն պահանջէ . ապա թէ այս պատշաճ պատիւ է նմա , և արժանաւոր է երկրպագութեան յերկնաւորաց և յերկրաւորաց , մեք Քրիստոսի եկեղեցի՝ մի միայն սակ տացուք փրկչին մերոյ և Աստուծոյ զերկրպագութիւն , այլ յառաւելութենէ սիրոյն և չըղձութենէ սրտին և ՚ի փղձկելոց գթոյն՝ զառաս արտասուաց արձակեսցուք , և անկեալ առաջի տեառն արարչին մերոյ՝ լացցուք ուժգնակի , և եղկցի լսել մեր՝ ոչ վասն գործոյ մեղաց այժմ, և ոչ վասն ապաշխարութեան յանցանաց , այլ զինչ . պտուղ սիրոյն տեառն ՚ի սիրոյ պարտականաց ։ Ձիշատակեալ զերախտիս նորա առաջի նորա , և խոստովանել զպարտութիէ ասէ , խոստովանեսցուք . քանզի զինչ մեք , կամ զինչ բնութիւն մեր . զի նա որոյ է ծով և ցամաք , լերինք և երկիր , փրկել կամելով ըղձարձիկ՝ ոչ միայն մարդացաւ վասն մեր , այլ և չարչարեցաւ . և ոչ թէ չարչարեցաւ միայն , այլ և մեռաւ ։ Որ ապառաժ սիրտ , որ յիմարեալ միտք , որ թանձրացեալ խորհուրդք , որ ՚ի յիշատակէն զայս ոչ երկրպագէ առաջի նորա , և անկեալ արտասուօք զընորհն խոստովանի ։ Այս տէս ինձ զգեղեցկութիւն ընթացից սաղմոսիս . զի նախ ՚ի ցնծութիւն կոչեաց զմեզ , և ՚ի խոստովանել զընորհն Աստուծոյ մերոյ՝ յորժամ խոստովանեցաք թէ նա որ մեծն էր Աստուած տէր թագաւոր՝ զայսքանս կրեաց փոխանակ մեր չարչարանս և

1 Ա յսինքն յայլ միաս , խորհրդապար ։

անօրէնութիւն . ապա գիտէ զի այլ ոչ ժուժամբ ՚ի խոստովանելոյ զչնորհսն ՚ի խաղաղութիւն , այլ առաւացեալ նովաւ փղձկիմբ ընդ արտասուս . վասն այսր բիկ և ասէ . ոչ ունիմք այլ ինչ , եղբարք , այս բազմապատիկ երախտեացս փոխարէն . միայն զայս կարեմք հատուցանել , զաչերն և զարտասուս ։ Զի եկայք երկիր պագցուք չնորհակալութեամբ մեծամեծ չնորհացն , անկցուք առաջի աեառն արարչին մերոյ և նորոգողի ։

" Այս ինքն է տէր Աստուած մեր , մեք ժողովուրդք ՚ի ձեռին նորա , և խաչն արօտի նորա ,, ։ Այս . ո . որոյ ծով է և ցամաք , երկինք և երկիր . նոյն է տէր մեր և փրկիչ , նա մեծ թագաւորն , ոչ գՀրեշտակայ բուռն եՀար , այլ զմարդկայինս բնութենէ . սոցա եղև եղբայր և ողորմած քահանայապետ յաստուածակոյս կողմանէ . ապա թէ նա քահանայապետ է մեր , յայտ է թէ մեք ժողովուրդք նորա եմք . եթէ նա հովիւ քաջ է , որ եդ ՚զանձն ՚ի վերայ հօտիս , մեք հօտ եմք և խաչն արօտի նորա ։ Այլ զինչ է ասելն , մեք ժողովուրդք նորա . ոչ վայրապար , այլ և խաչն արօտի նորա . արօտ մեզ դնէ զաստուածաչունչ բանս գրոց սրբոց , որովք միշտ կերակրէն զոգիս մեր Հարքն սուրբք . ըստ որում և այլուր ասէ սա . " Ի վայրի դալարոյ բնակեցոյց զիս , և առ ջուրս Հանդստեան սնոյց զիս ,, . զի այս խաչին բանական բնութեանս չէք այլ ինչ սեպհական արօտ քան Հատնքուն նորին բանն և խնամոտութիւնն . ուստի և յաւելուածով բանիս զնոյն անտեսէ ։

" Այսօր եթէ ձայնի նորա լուիցէք , մի խստացուցանէք զսիրտս ձեր որպէս ՚ի դառնութեն ,, ։ Արք արածիք խաչինք ՚ի մնրդս և յարօտս բանից Հովուին ձերոյ և առաջնորդին , այժմ յայտ կենցաղոյս օր՝ թէ կամիք յայտ առնել թէ լուեալ ունին դնէք ՚ և կամիք կատարել զձայնդ և զՀրահանգ որով կերակրիք , մի խստացուցանէք զսիրտս ձեր անՀաւատութեամբ , թերութիւք և կեղակարծութիւք , որպէս և Ասրայէլացիքն ՚ի դառնացուցանելն զԱստուած յանապատն ։ Զորժամ լսէք զՍ-

1 Մի պրն . Ոչ դ՚ն ։ այլ պրն . թէ նէ ուն դ՚ն ։
2 Մի պրն . թէ նէ ուն դ՚ն ։ միւս այլն , թէ նուս ուն դ՚ն ։

առաւած մարդ, զտէրն ՚ի կերպարանս ծառայի, զնա որ կարողեաւք խաչեալ, զերկինս ձեզ խոստացեալ, մի խոստացուցանէք զսիրտս ձեր՝, և յայտնեալ երկմտիք, ՚ի քննութիւն ձգեալ զորպիսութեի խորհրդոյս, և կալ մեցեալ հասանել իմաստիցն Ա՚ստուծոյ. այլ զհաւատս տուք ամենայնի նեցուկ, և տալաւ զամբողիսեալ գառնութիւն խորհրդոյ հանդարտացուցէք ՚ի խաղաղութիւն,

«Յաւուրն փորձութեան յանապատին՝ ուր փորձեցին զիս հարքն ձեր, քննեցին զիս, և տեսին զգործս իմ զքառասուն ամ»։ Ով որպէս փորձեցին զԱ՚ստուած Իսրայէլացիքն, կամ որպէս տկարութիւն տեսեալ զօրութեան նորա պատժեցան, երկայն կաթոտանամբ բանից ասել. բայց այս միայն ցուցցի, զի նոքա որք փորձեցին զԱ՚ստուած և ասացին, որպէս կարէ աճել ջուր յերկիրն պարզևայ, որոյ քննակիչքն այնքան զօրաւորք էն քան պատմութեան լուեսացս, յանապատն սատակեցան, և ոչ եղեն արժանի անդ մտանել։ Ա՚յդ ասէ մարգարէս, նոյն և առաքեալն Պօղոս ՚ի դիմաց Ա՚ստուծոյ առ մեզ. ոմ նոր ժողովուրդ իմ որդի Աիոնի եկեղեցի հեթանոսաց, առանց քննելոյ զպատուիրանս իմ և զձայնն զոր լսես, կատարեա՝ ՚ի մարմնական կենացդ օր. և թէ տկարանաս յուսոյն առ իս՝, և հնորհօք իմովք զօրացիր, և քննեա զգործսն իմ, կամ զիմ խոստումն. քանզի ես հաւատարիմ եմ յամենայն բանս իմ, և արդար յամենայն գործս իմ ապա թէ խոտանայ սիրտ քո և յորդորէ փորձել զԱ՚ստուած, հայեաց յօրինակն քո Աիսրայէլ, թէ որք փորձեցին և քննեցին զզօրութիւն Ա՚ստուծոյ, որպէս զնա գառնացուցին ՚ի վերայ ինքեանց. զքառասուն ամ՝ ջրկեալ ընդ անապատն՝ անդ սատակեցան, և մնացին արտաքոյ երկրին պարգևայ. այսպէս և դու թէ քննեա՝ յորժամ լսես զձայն նորա, և զորպիսին պահանջես փորձիւ ուսանել, յերկրի սատ տագնապեալ սատակիս, և ոչ մտանես ՚ի հանգիստն երկնից,

«Յանապատ ընդ ապրին այնմիկ և ասացի, միշտ մոլորեալ են սրտիւք, և նոքա ոչ ծանեան զճանապարհս

1 Երեք օրին · Ջնորհուրդ յԵ։ 2 Մի օրին · կարծես։
Մի օրին · Ջնորհուրդ յԵ։ 3 Մի օրին · Յ------ը -- խ։

իմ.,, ։ Ա.յն ազգն որ քո օրինակ էր, տաղտկացոյց զիս անհաւատութեամբն և միշտ մեղսութեամբն. իսկ ես զքաւասուն ամ պէսպէս նշանօք և աքանչելի գործովք ջանայի ածել զնոսա ՚ի հաւատս և ՚ի գիտութիւն զօրութեան իմոյ, և նոքա բնաւ ոչ կամեցան ձանաչել զձանաչարկս իմ. “ Արդէս երդուայ ՚ի բարկութեան իմում, թէ մտցեն ՚ի հանգիստ իմ.,, ։ Այլ թէ ուրան ժամգոհ լինի զնոցանէ Աստուած. այնքան ասէ տաղտկացուցին զիս, և այնքան ձանձրացուցին ՚ի ինդրելն զքանչելիս և ՚ի փորձելն զզօրութիւն իմ նշանօք, մինչ զի բարկացուցին զիս ՚ի վերայ ինքեանց՝ երդմամբ հաստատել զոչ մտանելն նոցա յերկիրն պարգևաց ։

Արդ մեք ասէ, որք ցնծացաք յԱստուած, և ուրախացաք ՚ի փրկութիւն նորա, ընդ քաղցրութեանն և զանաչառութիւն զմտաւ ածցուք, և օրինակաւ Ապրայէլացւոցն զգաստացեալ ՚ի հաւատոն արձանացուք, և այնպէս փութացուք մտանել յերկինից արքայութեանն հանգիստ, զոր խոստացաւ մեզ տէր մեր Յիսուս Քրիստոս, որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

ԸՆԴԵՐ ՓԱՌԱՆԱՅԱՊԵՏՆ ՅԵՏՈՑ ԳԱՑ Ի ՄԻՋ
ԺՈՂՈՎՐԴԵԱՆՆ
ԿԱՄ ԶԻՆՁ ՆՇԱՆԱԿԻ ՆՈՐԱ Ի ԴՐՈՒՆՔՈՒ ԿԱՆԳՆԵԼ,
Ի ՅԵՏՈՑ ՏԵՂԻՆ ԵԻ ԱՊԱ Ի ԽՈՐԱՆՆ ՍՈՒՐԲ ՄՏԱՆԵԼ,
ԵԻ ՅԱՄՈՒՆՋԻՆ ԱՔՈՒՈՒՆ ԲԱՆՁՄԵԼ,

Ահաւասիկ անգամ եղոյց բանս զքահանայապետն պատկեր և նման Քրիստոսի, նոյն և յաջորդ աթոռոյ նորա ՚ի յերկրի. հաստատեցաք և զսրբութիւն սրբոց գիտրանն անջրպետեալ երկնից երկիր և տեղի Աստուծոյ. իսկ զտաճարս երկնից հաւատալ, և զանարգիկ հաւատալ հրեշտակաց ըստ իւրաքանչիւր գաւառ յօրինութիւն ՚ի սմա պարապեալ։ Օ այս ամենայն, որպէս կարծեմ, ընդարձակագոյն ցուցի ՚ի բազում տեղիս, և այժմ ոչ պարապեմ երկրորդել։

Արդ գայ քահանայապետն՝ որ է պատկեր Քրիստոսի, հանդերձ հաւատարմիւ քահանայիւքն և գաւառք

պաշտօնէիցն, մինչ դեռ եկեղեցիս ի սաղմոսերգութիւն են և ի փառատրութիւն Աստուծոյ, և կայ ոչ եկեղեցիս և ի տաճարս, և ոչ ի խորանն սուրբ և ի բեմն, այլ ի յետին տեղին ի դրունս տաճարին, Կիրիտոսի եղեալ այսու ապացոյց՝ որ ի կերպարանս Աստուծոյ և Նոր գոլով Հաւատոյ, նմին և փառակից, տեղի բնակութեան ունելով զծոցն Հայրենի՝ վերագոյն հրեշտակաց և հրեշտակապետաց և ամենայն անուան անուանելոց. և յայսմիսի փառաց սակս փրկութեան մերոյ ինքնակամութեամբ զանձն խոնարհեցոյց, և ի յետին տեղին քան զամենայն դասս հրեշտակաց եկն և եկաց, այսինքն յերկիրը, որ է դրունք երկնից, և երկրորդ յետ նորա. այսպէս և քահանայապետն՝ նորա պատկեր, և նման յամենայն ժողովրդենէս փրկչին մերոյ Կիրիտոսի՝ միայն նա է, և տեղի իւր սեպհական ունի զներքին տեղ սրբոյ խորանին, և անդ հանդչէր միայն ի քահանայապետականն աթոռ՝ վեհագոյն քահանայից և սարկաւագաց և ամենայն լրման եկեղեցւոյս: Նմանեալ Կիրիտոսի խոնարհութեանն, որպէս նա ի մարդեղութեանն փոքր մի խոնարհեցաւ քան զհրեշտակս, այսպէս և սա յայս սակաւ ժամանակս. յետոյ և ի խոնարհ կանգնի քան զամենայն լրումն եկեղեցւոյս՝ որք ի կերպարանս հրեշտակաց փառաբանեն զԱստուած ի տաճարս որ է յարացոյց երկնից: Ոչ ի եկեալ կանգնի ոչ ի տաճարն, այլ ի դրունսն որ է օրինակ երկրի՝ ուր երևեցաւ Կիրիտոս. որպէս նա մարդացեալ ոչ խոնարհ միայն քան զսերովբէս և քերովբէս, այլ և քան զհրեշտակս. այսպէս և սա ոչ միայն քան զքահանայն յետոյ, այլ և քան զսարկաւագունսն և զկէս սարկաւագունսն: Իբրև Կիրիտոս յորժամ մարմին զգեցաւ, ասէ Պօղոս՝ թէ աղօթս և պաղատանս առ Աստուած մատուցանէր ի վերայ երկրիս. և աւետարանիչքն բազում անգամ նշանակեն վասն աղօթելոյ նորա. աղօթէր ոչ եթէ վասն իւր որ ամենասրբն է, այլ վասն մեր. որպէս և ուսանիմք յաղօթից անտի. "Այլ, վասն յիս հաւատացելոցս աղաչեմ.." այսպէս և քահանայապետն մինչ դեռ է ի յետին տեղին եկեղեցւոյն, հանդոյն Կիրիտոսի զաղօթսն մատուցանէ փրկութե

սոցա վասն, և խնդրէ Յ՚ստուծոյ կեցուցանել զժողովուրդն, և ընդունել զօրհնութիւն նորա՝ զոր երդէն ՚ի գովեստ փառաց նորա և անուան։ Զատ որում Քրիստոս յետ կատարելոյ զամենայն խնամարկութիւն տնօրէնութեանն յերկրի՝ ապա յերկինս եմուտ, և ոչ եկաց միայ անդանօր, այլ անց ընդ երկինս, որպէս ասէ Պօղոս. «Հնխիմք մեք քահանայապետ մեծ անցեալ ընդ երկինս», և դարձեալ ասէ. «Օատեալ ՚ի մեղաւորաց, և բարձրացեալ քան զերկինս Քրիստոս՝ էանց ընդ այն, և եմուտ ՚ի ներքին կողմն վարագուրին վեհագոյն իշխանութեանց և պետութեանց, և նստաւ ընդ աջմէ Հօրն յիւրն սեպհական տեղի ժառանգութեան»։ այսպէս և քահանայապետս յառաջագոյ ՚ի պատրաստ ժամու ՚ի խնարհ տեղոյն՝ ուր տնօրինութեամբ խնարհութեանն կանգնեցաւ, և անցանէր ընդ մէջ ժողովրդեանս, որպէս և Քրիստոս ընդ հրեշտակացն. և ոչ կայ և միայ ՚ի միում ՚ի սոցանէ ՚ի դասակարգութիւն, որպէս և ոչ Քրիստոս յերկինսնոյն, այլ սլացեալ ՚ի միջոյ սոցա՝ ինքնիշխանութեամբ մտանէ ՚ի խորանն վեհագոյն, որպէս և Քրիստոս ՚ի ներքին կողմն վարագուրին ՚ի ծոյն հայրենի. և ըստ որում Քրիստոս յիւր սեպհական և ՚ի ծանօթ տեղին եմուտ, այսպէս և սա յիւր սեպհական կայարանն ՚ի տեղն և յաթոռն բարձրացաւ։ Այլ Քրիստոս յետ մտանելոյ յերկինս իւր նախ և առաջին, ապա կարապետ եղև ամենեցուն գնալ յայն տեղին, և հորդեաց մեզ Հանապարհ նորոգ և կենդանի ելանել յերկինս, որոյ հետևեցան նախ առաքեալքն, և յետ այնորիկ սուրբքն ըստ իւրաքանչիւր կարգի. այսպէս և սա նախ ինքն եմուտ ՚ի խորանն սուրբ յօրինակ Քրիստոսի, և հորդեաց Հանապարհ գնալ ՚ի սոյն եկեղեցական դասուց, որոյ հետևին նախ քահանայքն ըստ նմանութեանն առաքելոցն, և ապա իւրաքանչիւրքն դասք պաշտօնէիցն ըստ պատուոյ և աստիճանի։ Այս ըստ որում Քրիստոս և սուրբքն իւր յերկրի գոլով՝ խնարհք էին և հատասարք բնաւից, իսկ յերկինս ելեալ նա զիւրն տեղ ընդ աջմէ Հօր առեալ բազմեցաւ, և սուրբքն զիւրաքանչիւր կարգ որպէս պատուեցան Յ՚ստուծոյ, այսպէս և սոքա արտաքոյ խորանին կալով անընտիր էին զանա-

զանուն Աեառն, զոր կոչեսցէ, քահանայապետն յետոյ և յետինսն յառաջոյ։ Նայց յորժամ մտիցեն ի պատկերն երկնից խորանն, յիւրաքանչիւր տեղ ժամանակս արժանապէս որոշմամբ բազմեցան, քահանայապետն ի վերնագոյն աթոռն ապացոյց Քրիստոսի, և քահանայքն ընդ նմա պատկեր առաքելոցն, և այլ պաշտօնեայքն ըստ պատուոյ ընդ նոսա զետեղին։ Այս որպէս Քրիստոս միշտ բարեխօսէ վասն մեր՝ ըստ հրամանին առաքելոյ՝ առ Ջատուած, քանզի գրէ. «Միշտ կենդանի է լինել բարեխօս վասն մեր, և ըզփորձ առեալ՝ օգնական լինի փորձանաւորացս»։ այսպէս և սոքա յետ այսր գան առընթեր սրբոյ սեղանոյն, և ըստ նմանութեան Քրիստոսի նուիրօք մատչեսցեն նորա և խորհրդական աղօթիւքն մաղթեն առ Ջատուած և Ջայր՝ վշտակցութեամբ վասն ամենայն ժողովրդեանս, ուստի և ընդունին զՀայցուածսն որ խնդրեն. «Ջանզի զամենեսեան կամի զի կեցցեն և ի գիտութիւն Ճշմարտութեան եկեսցեն»։

ՋԻՆՁ ՍՐԲԵՐԳԵՆՈՒԹԻՒՆՆ ՅԵՏ ՄՏԱՆԵԼՈՑ Ի ԽՈՐԱՆՆ

ՋՅԱՓԵՆԱՆՆ Պօղոս ի խոնարհութիւն կամելով կրթել զԿիլիկեցիսն՝ զՔրիստոս առնու ապացոյց ի մէջ, ասելով. «Օ այն խորհեսցի իւրաքանչիւր որ ի ձէնջ որ և ի Քրիստոս Յիսուս. ի կերպարանս Ջաստուածոյ գոլով նորա՝ զանձն ունայնացոյց, հնազանդեալ Հօր մինչուհատ և մինչու խաչի. վասն որոյ Ջատուած գնա առաւել բարձրացոյց, շնորհեալ նմա անուն որ ի վեր է քան զամենայն անուն. զի յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի (յայտ է թէ խաչելոյն), և ամենայն լեզու խոստովան լիցի տէր զՅիսուս Քրիստոս ի փառս Ջատուածոյ Հօր»։ Ջդգայամ զոր ասաց առաքեալ բանիս վասն Քրիստոսի, քահանայապետս գործով պատկերացաւ՝ ի կերպարանս Քրիստոսի գոլով, և փոխան նորա վեհագոյն ամենայն ժողովրդեանն, ոչ անարգութիւն համարեալ իւր զանփառութիւնն և զինքանել ի բարձրագոյն վայրէ խորանին, այլ նուաստացոյց զանձն ըստ Քրիստոսի նմանութեանն, և իջեալ յիշխանական աթո-

ոյն, մի՛ ի հասարակաց ժողովրդենէն երևեցաւ՛ ի մէջ նոցա. մանաւանդ թէ ընդ բուն յետինն առ դրունսն հնազանդեալ եկայ, որպէս և Քրիստոս՛ ի բուն իսկ անարգանսն մահն, և ապա բառ նմանութեամբ նորա ազգեցութեամբ Հոգւոյն Աստուծոյ բարձրացաւ առաւել քան զբնաւսն, և անցեալ ընդ մէջ երկինս նման եկեղեցւոյն՝ եմուտ՛ ի նեբբին կողմն վարագուրին, յանդիման եղեալ երեսացն Աստուծոյ, այսինքն սեղանոյն։ Յաղագս որոյ յետ այնորիկ բարձեալ զձայն աւետեացն լսման եկեղեցւոյս, երախայից, Հաւատացելոց և կղերիկոսաց, ՛ի նմանութիւն երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց, աղաղակաւ խոստովանին տէր զՅիսուս Քրիստոս՛ ի փառս Աստուծոյ Հօր, ասելով, "Որբք Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ՝ որ մարմնացար և խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ՛"։ Այսինքն դու Աստուած, որոյ պատկեր ձևացար քահանայապետս. զի բառ որում սա վեհ քան զբնաւս, դու Աստուած մեծ և հզօր, և անմահ էութիւն, և ոչ յարիշտակութիւն համարեցար քեզ զնոյն. այլ որպէս սա զկեանն տեղին կալաւ յեկեղեցիս, նոյնպէս և դու զկեանն մահն խաչիւ մեռար վասն մեր, և որպէս սա եմուտ յետ այնր՛ ի յիւր սեպհական տեղն՛ ի խորանն սուրբ, նոյնպէս և դու մերով բնութեամբս որով մեռար՝ մտեր յերկինս մեզ քաւութիւն միջնորդ և կենաց կարապետ։ Զի որ խոնարհեցար վասն մարդկան այնչափ, և բարձրացար յոյս նոցին անհաս, զքեզ աղաչեմք, ողորմեա մեզ։ Այսպէս և այսքան եկեղեցին աղաղակէն առ Քրիստոս մինչ դեռ քահանայապետն աղօթէ։ Իսկ եթէ Հոգւոյն այսու երգով զանազանին՛ ի մէնջ, ոչ է պարտ հակառակել. քանզի՛ ի խաղաղութիւն կոչեաց զմեզ Աստուած, և նա ոչ է Աստուած խռովութեան՝ այլ խաղաղութեան. քանզի և նորա յառաջ այսպէս երգէին[1], սակայն յաղագս ծեքելոյ զօրհնութիւնս հերձուածողացն, և սակ աստուածութեանն զհաչն հանարելոյ, այլտիս

1 Ըստ վերաբերելոյ զսուրբ Աստուածն՛ ի գէմս Քրիստոսի. ըստ նմին և զանարիւնայարն և զհաչեցեալն և խոնարհ։

2 Խնա բառ սովորութեան առ զեաց առ գեաց՝ միշտ ոգնաւորիր։

3 Ա.յլք. Ուրուեր։

խեցին ՚ի դէմս Հրեշտակութեանն , Հաւ ոչ նոցա արժան է սորին վասն առարկու մեզ յառնել , և զխոտորելին անջրպետ սիրոյն ձգել . զի մեր ապաշաւակ և սրբասացութիւնս առ Քրիստոս է՝ որ խաչեալ վասն մեր , դեռ ևս քահանայապետ է նովին մարմնովն ժողովրդեանս իւրոյ ընդ աջմէ Հօր , որպէս ուսաք և հաւատամք՝ առնելիք և պատկերանամք . զի թէ Հոգեկէ հինն՝ առակաւ և օրինակաւ երկնաւորացն պաշտէր , որպէս գրէ առաքեալ , քանի առաւել եղելոցս նովաւ երկնաւոր՝ պարտ է երկնայնոցն սրբասացութեամբ պաշտել , և փառաբանել զտէրն մեր Յիսուս սեպհականն իւր ժողովրդեանս :

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍՐԱՎՐԻԱՍԱՑՈՒԹԵՒՆՆ ՂՈՀՈՒՑ

" Յատուկն սուրբ՝ որ ՚ի սուրբս բնակեալ ՚ես , և երեքսրբեան ձայնիւ ՚ի սրովբէից գովիս , և ՚ի քրովբէից փառաբանիս , և յամենայն երկնային զօրացդ երկրպագիս ,, : Կոչդի քահանայս ժողովրդեանն սրբասացութեան խորհրդական աղօթիւքս , և վկայէ զնախասացութիւն մարգարէին՝ որք տեսին զնա ՚ի սրովբէիցն սրբասանեալ , և ՚ի քրովբէից փառաբանեալ , Հասայի և Հզեկիէլ , ՚ի ձեռն որոց և մեք , ասէ , ուսաք զայս երգել քեզ :

" Որ ՚ի չգոյէ ՚ի գոյ ածեր զարարածս ամենայն , որ առեղծեր զմնորդն ըստ պատկերի քումմէ և նմանութեանէ , և ամենայն շնորհիւ քո զարդարեցեր զնա , և ուսուցեր խնդրել զիմաստութիւն և զգօնութիւն ,, : Զեռ հրեշտակացն գոյացութեան՝ արարածս զգալի առեղծան , և ապա մարդն իշխան նոցա , ըստ որում ուսուցանէ զայս մեզ Հոբէլ . " Որ արար զհրեշտակս իւր ՚ի հոգիս ,, . և ապա յաւելու . " Որ հաստատեաց զերկիրս ՚ի վերայ հաստատութեան իւրոյ ,, : Օ՛ոյն ՚ի միջ առնու և քահանայս . յետ հրեշտակաց զարարածոց լինելութիւն գնէ , և ապա զմնորդն առեղծանելն , որոյ ասէ ուսուցեր խնդրել զիմաստութիւն . քանզի դրախտ ամենապատիկ ծառովք՝ զիմաստութիւն առակէ ,

1 Մի տիւն . Հոգեւոր :

և գործել մարդոյն և պահել զինդրելն և պահել անդրժելի զնոյն օրինակի ։

“ Այլ ոչ անտես արարեր զմեղուցեալն , այլ եղեր ՚ի վերայ նորա ապաշխարութիւն փրկութեան ,, ։ Այժմ չնորհ եղև այս Աստուածոյ , գիտելն զապաշխարութիւն յետ յանցանացն սակս մարմնոյն , որում ոչ գոյաւ արժանի բանաւարկուն . քանզի որդիք աշխարհիս այսորիկ իմաստնացան քան զնոսա ։

“ Որ արժանի արարեր զմեզ զնուաստացեալ և զանարժան ծառայքս քո ՚ի յայսմ ժամու կալ առաջի փառաց սրբութեան սեզանոյ քո , և զօրինաւոր երկրպագութիւն և զփառաբանութիւնն մատուցանել քեզ ,, ։ Ո՛ քէն , ասէ , տուաւ մեզ այս զգաստութիւն աղօթից խօսակցութեան ընդ Աստուծոյ , որ զնախապատմեալ չնորհս արարեր մարդկան . ապա թէ ոչ , մեք ուր զօրեաք ՚ի թանձրութենէ մարմնոյ ելանել , և խնայակառնապէս ՚ի յերկրէ ՚ի յերկինս խօսել ։ Այլ տէս , առաջի սեզանոյս այժմ սկսաւ ասել թէ կամք . քանզի մինչև ցայժմ ՚ի մէջ ժողովրդեանն և առ դուրան աղօթէր ։

“ Ոտն տէր ընկալ ՚ի բերանոյ մեղաւորացս և զերբեքորբեան օրհնութիւնս , և պահեա զմեզ քոյին քաղցրութեամբդ ,, ։ Ոտն որ կցորդս զմեզ հրեշտակաց արարեր , և նոցին երգոցն երգակից , ընկալ ՚ի բերանոյ մեր զհրեշտակական երգս ։

“ Ոտղ մեզ զամենայն յանցանս մեր՝ զկամայ և զակամայ , զգիտութեան և զանգիտութեան . սրբեա զհոգի և զմիտս մեր , և չնորհեա ՚ի սրբութեան պահել զքեզ զամենայն աւուրս կենաց մերոց ,, ։ Այսպէս զփառաբանութիւնն ընդունել աղօթեաց , և ապա յետ այնր փոխարէն երգոցացս , և չնորհել Թողութիւն մեղաց և զսրբութիւն մտաց . զի զայս կարօտանամք , ասէ , առնել , և ապա զքեզ արժանապէս պաշտել ։

“ Արեխօսութեամբ սրբուհւոյ աստուածածնիդ , և ամենայն սրբոց որք յաւիտենից քեզ բարեհաճեցան , զի սուրբ էս Աստուած մեր ,, ։ Ո չնորհից են մեզ և բարեխօս առ Քրիստոս սուրբք ամենայն , և մանաւանդ օրհնեալ տիրամայրն , զորս ՚ի մէջ առնու միշտորդ և խնդրող առ ՚ի յընդունակ լինելոյ աղօթիցն՝ որ ՚ի փառս Աստուծոյ , որ է օրհնեալ յաւիտեանս ։

ՋԻՆՋ ՆՇՈՒՆԱԿԵ ԱՅՍ ԱՅՍՈՐԻԿ Ի ՓԱՌԱՍՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱՔՈՒՈՆ ՋԵՏԵՂՈՒՄՆ ԱԻԵՏԱՐԱՆԱՆ

Ի՛ՄՐՈՂՋ պահելով զսահման խորհրդածութեանն՝ ուսանիմք և զայս ևս ըստ նմին Ձանապարհի . քանզի պատկեր Աբրահամի մեռեալ առաջի սրբոյ սեղանոյս , որպէս և նա առաջի Նոր , պարտ էր զի նախ աղօթեսցէ առընթեր սմա , և ապա յանձն իշխանութեան իւրոյ և պատուոյ հանգչիցի : Ասաի և զայս մատուցեալ աղօթս զոյգ ընդ սրբասացութեանն , և համբուրեալ զսեղանն ըստ նմանութեան աստուածոյ կարգաւոր օրինաց , յետ այնր ի տեղի իշխանութեանն և պատուոյն երթեալ զետեղի՝ յինքն ունելով զաւետարանն սուրբ , իբր թէ ասելով , թէ այս պատիւս և աստուածայնաբար փառքս և իշխանութիւնս և նստեալս վեհագոյն բնաւիցէ՝ ոչ է իմ , այլ Աբրահամի , որ առացաւ զձեզ արեամբն իւրով Ժողովուրդ . իսկ ես միայն ապագոյց նորին և պաշտօնեայ կերպարանեալ առաջի զգալի աչաց ձերոց . որք տեսանելով զպատգամն Աբրահամի ի վերայ լանջաց իմոց , զնոյն ինքն զաւրն ձեր սուաղ նայեցարուք բազմեալ ի յաթոռ իւր , և մի զիս զծաղայ նորա և սպասաւոր : Քանզի նա որպէս ի մէջ երկնաւորացն իմացականապէս առնու զպաշտօնն և զփառաբանութիւն , այսպէս և ի մէջ ձեր երկրաւորացդ Ժողովելոց յանուն նորա՝ երևի վեհագոյն բազմեալ յանդիման երկրպագուացդ ընդ սրբոյ աւետարանիս իւրոյ , և ես Թանձր և մնջմնական աչաց ձերոց այնր իմանալի խորհրդոյն՝ Թանձր յարացոյց կերպացայ : Ամին հաստատութիւն ունիմք զսրբոյ Հայրապետին Գրեգորեանդրոյ զՊետրոսի բան . քանզի նա մնջութ ունելով զհայեցուածսն՝ յայտնի տեսանէր ի յաթոռն զԱբրահամ . ուստի և ինքն զի պատուանդանն հանդիսէին ժպրհութիւն համարէր : Օ՜ այն յայտնեաց Աստուած երանելոյն , որպէս զի ուսցուք յընդհանրական եկեղեցիս հաստատելոց զնոյն շնորհ հանդուցեալ ի մէջ Ժողովրդեանն իւրոյ : Քանզի հաստատուք է այժմ ամենայն պիտութիւն ազգիս քրիստոնէից , այսինքն

մոայ աչայ տեսութեամբ և հաստատով, և ոչ մոր-
ձոյ աչայ . " Օ ի մէք այսուհետև ոչ զոք գիտեմք մոր-
ձով ... , ասայ Պօղոս :

ՋԻՆՁ ՆՇԱՆԱԿ ՄԻԱՅՆԱՅ ԱՍԵԼ ՍԱՂՄՈՍԵՐԳՈՂԻՆ
ՋՄԵՍԵԴԻ ԱՒՈՒՐԵԼՈՑՆ ԵԻ ՋԱՂԵԼՈՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

Ի ՁԱՓ և 'ի սահման ' երկնաւորացն զաստուց յա-
յսաք բազում անգամ զորշուեմ աստիճանաց եկեղե-
ցւոյ . Նա և ոչ թէ մէրա միայն՝ որք Ձեմարտութեանն
աշակերտեցաք , այլ և ատուեր հանդերձելոց բարեացն՝
Ա'արայելի քահանայապետութեանն . որպէս և գրէ Պօ-
ղոս վասն նոցա՝ որք առակաւ և օրինակաւ երկնաւորացն
պաշտէին , որպէս և ասացաւ Ա'ովսեսի . " Ձեսջիր ,
ասէ , արասցես զամենայն ըստ օրինակին ցուցեալ քեզ
'ի սուրբ լերինն .. : Ա'պա յայտ է թէ առ մեզ և գերա-
զանց Հաստատեցաւ նոցին Ձեմարտութիւն՝ որք առնուն
զգիտութիւնն Ա'ստուծոյ երկատեսակութեամբ 'ի մի-
մեանց , և իմացանեն առ իրեարս . այսպէս և աստ քա-
հանայն տայ զգիտութիւնն Ա'ստուծոյ առ սարկաւագն .
իսկ նա ընկալեալ զնոյն՝ հրամայէ իւրաքանչիւր կարգի
ժառանգաւորացն , և նորա հրամայեն եկեղեցւոյն ,
Ա'ոյզ որպէս սարկաւագն վարդապետութեամբ քարո-
զութեանն զիւրն առաքինաւորութիւն և-
ցոյց , նոյնպէս սաղմոսերգուն զիւրն կատարէ գործ՝ եր-
գելովն , և ընթերցողն ընթեռնլովն . ապա թէ ամե-
նեքեան զաւակէցին նման յերգեն , անկարգութիւն
տիրէ , և ոչ որոշի առանձնաւորութիւն պատուոյն . այլ
պարտ է , զի որպէս սարկաւագն միայն տայ զքարոզու-
թիւնն ժողովրդեանն , և ընթերցողն զընթերցողու-
թիւնն , այսպէս և սա զսաղմոսողութիւնն ' և զայլ-
սոսն , և ապա 'ի նմանէ հրամանաւ և առաջնորդու-
թեամբ նորին սիրեալի քաղցրութիւն եղանակին յա-
ւետնոյն լսուին եկեղեցւոյն , զի կատարեալք պահել ըզ-
հրամանսն . " Ա'ետնոյն ինչ ձեր , ասէ , բարեձեւութիւ
և ըստ կարգի լինիցի , նա և ըստ եկեղեցեացն Ա'յ .. '

1 Երկու տրին . Ուշադ ե 'ի ... 2 Մի տրին . Ընդհան ...

Ո՛ՐՔ ՎԱՅԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՅՆՈՑ ԳՐՈՑ ՎԵՐԾՈՒՆՈՒԹԻՒՆՔ

Լոկ աստուածային գրոց ընթերցողութիւնք՝ զաստուածային կամն և զիւորհուրդն վարդապետեն եկեղեցւոյն, առ՛ի գործով կատարել զնոսին ըստ չափոյ և ըստ ջօրութեան իւրաքանչիւր ումեք. և որպէս զի զսրբոցն երանելեաց Աստուածեան Հանապարհս ուսցուք, թէ որպէս աշխատութեամբ և երկար արժանի գոան քրիստոսեան պատկացն՝ ի Հանդերձեալ կեանսն՝ մնալով վճռացեալքն.

ԸՆԴԻՐ ՆԱԽ ՔԱՆ ԶԱԻԵՏԱՐԱՆՆ ՔԱՀԱՆԱՅՑ ԽՆԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՏՑՑ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ Ի ՆԵՐՔՈՒՍՏ Ի ԲԵԹԻՆ

ՎՐՈՒՍՏՈՍ ասաց՝ ի գէմ առաքելոյն պրպ. «Օ՛ խաղաղութիւն զիմ տամ ձեզ, զխաղաղութիւն զիմ թողում ձեզ», տամ առելով զայն յայտ առնէ՝ թէ միշտ տամ և հանապազ. և խաղաղութիւն ասա զՔրիստոս և զմարդկան հաշտեղն նշանակէ[1]։ Ապրդ յայտ բարի յոյս ապաւինեալ որ՝ ի առառնէ խրեանց, միշտ և նախ քան զամենայն ինդիրս՝ եկեղեցիս զայս ազաչեաց Հրամանատար սարկաւագին, և ևս առաւելապէս ունել զխաղաղութիւն՝ զոր ետ Վրիստոս իւրոց Հաւատացելոց։ Լոկ քահանայս իշխանութեամբն զոր ունի, և աստուածայնապէս պատուոյն տայ զայն Հայցուածս նոցա՝ ի ներքուստ՝ ի խորանէն՝ ի դիմաց Վրիստոսի, որով ուսուցանէ թէ ընդ զգալի ձայնիս իմոյ խառնեալ է և իմանալի զօրութիւն Հոգւոյն, որ աւետարանէ՝ ի դիմաց Վրիստոսի. «Խաղաղութիւն ձեզ Հետաւորաց և խաղաղութիւն ձեզ մերձաւորաց», Ընծեցուն խաղաղութիւն է ընդ Ընտրեալ, որք Հաշտեցան ընդ նմա մահուամբ Որդւոյ նորա։ Ընդ Վրիստոսի յետ զխաղաղութիւնն տալոյ, ապա և

[1] Մի գրի. Հաշտ լինել Աստուծոյ։

Համարձակելի արար նոցա զընդ Աստուած խօսակցելն, զի միջնորմն մեղացն որ որոշէր ի մէջ մեր և Աստուծոյ՝ քակտեցաւ։

ՋԻՆՁ ՈՒՍԱՆԻՄՔ Ի ՍՐԲՈՑ ԱՒԵՏԱՐԱՆԻ ԸՆԹԵՌՈՒԱԾՔՆ

Երեցունք յորժամ երևեցան ի ծննդեանն Քրիստոսի, զայս բարձեալ ձայն աղաղակէին. «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ընդ մարդիկ հաճոյութիւն»։ և յետ այնորիկ Քրիստոս սկսաւ քարոզել զաւետարանն արքայութեան երկնից աշխարհի և զկերպարանս հաճոյութեանն ցուցանել։ Արդ ըստ այսմ նմանութեան լինի հանապազ յեկեղեցիս. Նախ խառնեալքս ընդ Աստուծոյ մեղօքն՝ զխաղաղութիւնն մաղթեցաք ունել. իսկ յորժամ զայն ընտրհեաց մեզ քահանայն, ապա գոյ սարկաւագն ի մէջ եկեղեցւոյն, և ընթեռնուլով զաւետարանն՝ ուսուցանէ նոսա, թէ պրպտե՛ք առաքութիւն սիրոյն Աստուծոյ և խաղաղութեանն ընդ մարդիկ, որ ետ ոչա ոչ ըզխաղաղութիւնն, այլ և զմիածինն Որդին իւրով պէս պէս անօրէնութեամբն, վարդապետութեքն և սքանչելեօքն, զորս պատմէ աւետարանն։

ՋԻՆՁ ԵՒ ԱՅԼ ԱՋԳԱՑ ՔՐԻՍՏՈՆԵԻՑ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ ՑԵՏ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

Պարտ է գիտել զգեղեցիկ օրինացն սովորութիւն, որովք վարին զանազան բարեկարգութեամբ ազգք քրիստոնէից. քանզի Հռոմք ոչ եթէ յետ աւետարանին վաղվաղակի զնիկիականն դաւանեն հաւատս. այլ զինչ. եթէ հանդիսական օր լինի կամ տոնախմբութիւն և ժողովրդոց բազմութիւն, եպիսկոպոսն մինչ գեռ է ի քահանայապետական յաթոռն՝ անդրադառնայ խօսել ապտաքոյ ուսուցանէ ժողովրդեանն զօրէնսն Աստուծոյ բացայայտ վարդապետութեամբ որչափ և կամի. այսպէս առնեն և Վռանկք. բայց այսմ ծանեալք զառաջինն սրբոցն սովորութի՝ Վանդի աւրքն Կրիգոր Աստուածաբանին գյարութեան աւուր Զատն կարձառօտ բանիւ յայս ժամն է առացեալ, և երանե-

լին Յորեկ՝ զՆարիւբ և տասնեւչորս սաղմոսին մեկ-նեալ՝ի վկային ասն յորժամ տարաժամեալ էր օրն, և եկեալ յեկեղեցին առ՝ի զպատարագն մատու-ցանել, և այժմ ասաց, վաղ ժամնեալ ձեր՝ի քահա-նայականս յայս տեղ ուր մեք անապան եկաք. և զաղ-մանն որ՝ի պատարագն ասացաւ առաքելոյն ըստ խոր-հըրդեան աւուրն մեկնեաց։

Յետ որոյ գայ ասպա յաճոռն, առաջի սրբոյ սեղա-նոյն աղօթէ՝ի վերայ եբախայից, և արձակեալ զնո-սա, սկիզբն առնէ սրբոյ խորհրդոյն. այս Նոռոնոց է սովորութիւն։ Այլոց եկ գու և զՅանպատոյն ուսուք բարեպաշտութիւն. քանզի և նոքա որպէս զմեզ՝ ըզ-Հաւատոն յետ աւետարանին խոստովանին. բայց թէ աւրնական օր լինի կամ Հանդիսական, ասեն վաղ-վաղակի զայն, և ասպա զինչ. ՚ի քաղաքական եկեղե-ցիս և՝ի ժողովարանս ասեն զՀաւատոյքն յետ աւե-տարանին. և ասպա ոճրանիթ առնեն ժողովուրդքն, Նչ զինչ ոճրանիթն. կեղեցիկ և աստուածահաճոյ օրէնք՝ի Պօղոսէ հրամայեալ եկեղեցւոյ քրիստոնէից, ըստ որում գրէ առ Կորընթացիսն. "Ա ան Հաշուին որ՝ի սուրբսն է, որպէս պատուէր ետու եկեղեցեացն Գաղատացւոց, նոյնպէս առնիջիք և դուք. ըստ իւրա-քանչիւր միաշաբաթուց իւրաքանչիւր ոք՝ի ձէնջ ան-ձին իւրում գանձեսցէ որ ինչ և յաջողեսցի.,։ Ա.յս հրամանաւս վարին Պառանկք մինչև ցայսօր և մինչև յաւիտեան. քանզի յամենայն կիւրակէ, նա և յա-մենայն օր՝ յետ աւետարանին գառնոյ քահանայն՝ի ժողովուրդն, և ասրիկաւարն առընթեր նմին. իսկ նա-քա յառաջ եկեալ՝ համբուրեն զսէջ նորա, այնպէս ջերմն Հաւատով որպէս զԱ.ստուծոյն. և տեսեալ էք ա-մենեքեան. և զոր ինչ կամի և ունի ըստ կարի պատուղ Հաւատոյ իւրեանց գնեն՝ի ձեռս նորա. այսպէս առ-նեն յամենայն օր և՝ի կիւրակէ և՝ի տօն, ամենայն ժողովուրդն արք և կանայք գանձեն՝ի ձեռանն նորա՝ որ-պէս հրամայեաց Պօղոս, անձանց և ոչ քահանային. քանզի տան զնամենայն անիրաւ, և առնուն զերկնից արքայութիւն. տան տուրս զուարթասաստ, որպէս և սիրէ Ա.ստուած. տան իբրև զօրհնութիւն և ոչ որպէս զպահպանութիւն. սերմանեն առատութեամբ, զի յա-

սան և առատութեամբ հնձել. Քրիստոսի հնձողացն տան նուէր, ծանուցեալ զի վասն նոցա աղքատացաւ նա՝ որ մեծատունն էր. հաւատան՝ զի և ինքեանք նոքա աղքատութեամբն մեծասցին։ Եւ ասն այսորիկ ոչ պոյ ի մէջ նոցա տուրեւառ, ոչ գին և ոչ վաճառ, ոչ թիւ աւուրց և ոչ վաճառաշահութիւն, ոչ փայտ ծառ կառեալ և թուոց բազմութիւն, ոչ մեռելոց միայն յոյս յարկութեան Քրիստոսիւ, ոչ ի մի հոգի հասարակաց յարկութեանն քանակութիւն, այլ գիտեն թէ մէկ ամենեցուն յարկութիւն պատարագի Քրիստոս. վասն այսորիկ հասարակաց ամենեքեան տան նմա Քրիստոսի զնուէրսն պատարագին ի ձեռս քահանային համ արձակ պանծանօք, և ոչ գաղտագողի և թագնաբար, պակս և քոյդ սոխրութիւն է հայաստան ազգ՝ յիմարեալ առ սէրն Աստուծոյ և թշուառական[1], որ ի տալն՝ զիս գող առնես, արծաթասէր և վաճառական, և զքեզ ցուցանես անհաւատ, մարդոյ տուող և ոչ Աստուծոյ՝ յորմէ և զսակ հանարոյ հատուցանին ձեզ[2] պահանջես։ Այլ անհաւան, եկ թշուառական, եկ և նայեցեալ ընդ քրիստոսասէր ազգն, ուսիր զաստուածսիրութեան ձանապարհ, և նմանեալ նոցա՝ զԱստուած արա քեզ հաշուընկեր, և մի զմարդ. Աստուծոյ տուր պատուղ քո և մի մարդոյ, պարծանօք և մի ի ծածուկ. նա կարէ թողուլ զմեզս ի ձեռն իմ, և ոչ ես։ Այլ նա ոչ կարօտանայ բազմութիւն աւուրց և ժամանակաց ի ձեռս առեալ ի քէն զուղիղ հաւատս. ծանիր ի բարեբարոյ ազգէն, զի բազմացդ, և ոչ թէ միոյ բաշխի ընդհան։ Այր յամառիս, էր պնդիս, էր խափանիս նուէր մատուցանել Աստուծոյ, և զփոքրն որ տան՝ էր տաս անհաւատութեամբ, ոչ ի քո պէտս, այլ միայն ի մեռելոց[3]։ Մինչև յերբ մնասեաց ծառայք, մինչև յերբ յիմարութեան գինովքն թմբրեալ, մինչև

1 Աստակութիւն բանիցս կոչ գեալ է ընդդէմ անկարգութեան ոմանց ի ժամանակին, որ ոչն պահասեաց երբեմն և յայլ ազգս. որպէս և ամենայն վարդապետք զառանձին անկարգութիւնս ազգի իւրաքանչ հայրաբար և ախրաբար կշտամբեն ի զգուշութիւն երկիւղածից։

2 Ար պրն. Ընծայել։

3 Ն յապէս վարին սխալով յամենայն ազգս քրիստոնէից, որպէս թէ վասն ննջեցելոց միայն պիտի տալ զպատարագիս, ի մտացոնս արկեալ զկնդրանիս համ զանձինս։

յերբ կուգան գալշամեաններ[1], այս ունելով և ոչ տեսանել սովաս, ականջք են և ոչ լսեմք, սիրտ և ոչ խնամանք. յայսմհետէ աչիւերս տեսանեմք զբրիստոնէից բարեկարգութիւն և գովեմք, և մեք խորեմք նոքին հաղորդել և կամ նմանիլ. արդ եթէ էաք յայսմ մասին պարծանաց, բարիոք էր զմեզն ամբողջ պահել. իսկ եթէ նոքա ուղիղ և մեք ծուռ, ի գրոց սրբոց և ի պիտակցութենէ մտաց յանդիմանեալ՝ էր վասն հեղգամբ դառնալ, և ընդ ուղիղն գնալ պողոտայ. ոչ տեսանեմք, ոչ գովեմք զնոցա սոսկալի գողմանքն գնալ յոխրանեցն, և զքահանայիսն աչն որպէս զԱստուած ողջունելն, իբր թէ ասելով, այս սուրբ ձեռնս է՝ որ վասն իմ հանդերձեալ է զԱրիստոս Աստուծոյ Հօր պատարագ մատուցանել. այս աչ է՝ որ ընդ իմ հանդերձեալ է առաջի Աստուծոյ համարս տալ. այս բազուկ է՝ որ զբարկութիւնն Աստուծոյ ամբառնալոյն իւրով արգելու կինէն. այս մատունք է՝ որ շօշափէ զԱնուն կենսայ համարձակութեամբ. Օ սա ողջունեմ սիրով և համբուրեմ հաւատով, և տամ ի քեզ համբուրիս շրթամբս զմեզս իմ, աչ աստուածաբաշխս. բայց գնա ի ձեռս քո, և քաւեա զԱրիստոսիս՝ որպէս հաւատամ. ի քո ձեռսդ գանձեմ և ի գանձանակն Աստուծոյ զպատուղ հաւատոյ իմոյ զնարինական նուէրդ, քաւիչ իմ քահանայ և միջնորդ. տուր զիմոբրդ կինէն Աստուծոյ, և առ ի նմանէ զմեծն իւր զողորմութիւն, Որպէս վասն ընդ երկար պիտոյ էր բան՝ մերս օտար և թիւր ձանձրալարչիս ի դադրումանք, և նոցա ուղիղ և ճշմարիտ հաւատոցն ի գովութիւն. սակայն ըզփոքրս տուեալ պատճառ զարթուցաք զիմաստնոցն զիտակցութիւն մտաց՝ որք կարող էն ընդ սակաւս և այլ բազում ինչ ի պէտս այսորիկ խնամալ, և գիտել թէ վասն այսր վտարեալ զմեզ Աստուած ի հայրենի աշխարհէն, որպէս զի պանդխտելովս ի մէջ այլ ազգաց բրիստոնէից՝ ուսցուք ի նոցանէ զբարեպաշտութիւնն, Իսկ մեք ուսցաք ի նոցանէ միայն զընդարձակ կեանս և զքաղաքավարութիւնս. և զհաւատս և զյոյսն զոր նոքա թերութեանն լուսին ունին՝ բնաւ ոչ կամեցաք

1 Երկու օրին. Նմմնլ.

ողջունել. ոչ ժողովրդական ըստ իւրն ձանապարհի, և ոչ քահանայ ըստ իւրումն, այլ եղաք եպիսկոպոսաբս փոխուկք և պաձուձեալ զգեստուք, ձիովք և ջորովք յօրացեալք [1] որպէս զվռանգս, և զբարեպաշտութիւնն, զողորմածութիւնն, զեկեղեցւոյ օրինաց վրէժխնդրութիւնն, զպաշտամանն Աստուծոյ հպատակութիւնն, բնաւ և ոչ ուսաք ի նոցանէ. նա և ոչ ծանեաք թէ ընդ սաքա յաշխարհական քահանայից ձեռնադրին եպիսկոպոսք՝ որոց հանդերձակ է մետաքսեիւք պաձուձել, և ոչ ի կրճնաւորաց. զի թէ յաբեղայից լինի առ նոսա եպիսկոպոս, որպէս և մեր է սովորութիւն, չունի իշխանութիւն արտաքոյ կրճնաւորական կերպին պերձանալ: Վարձեալ և աշխարհականք ուսան ի նոցանէ զանխարութիւն կերակրոց և զպռնկութեան անխափր չաղախուժն. և հաւատոյն և յուսոյն և հնազանդութեան առաջնորդի, և նուիրաց եկեղեցւոյ, հանդարտութեանն և պարկեշտախոհութեանն [2], որովք նոքա զայն մեզն քաւեն, բնաւ և ոչ էտուն տեղի յանձինս: Այլ սա՝ այս՝ որ զգեստուքն վռանգ է ձեւացեալ, մնեալ ընդ վռանգին յեկեղեցին, նա ջերմն արտասուօքն խոսի հանդարտ աղօթիւքն առ Աստուած, և սա որպէս զանբան անասուն կայ առընթեր նմին [3]: Ով լսոյ թշուառութեանս և անմարդութեանս, որ հակառակ վարժեցի զանձն հրամանացն Պօղոսի. նա ասաց թէ. «Ո՛ ամենայն ինչ փորձեցէք և զբարին ընկալարուք». մեք փորձեցաք զանձինս, և ի չարն կրթեցաք, և ի բարեկարգութենէ քրիստոնէից ամենևին տեղի տուեալ խուսեցաք: Աստուծոյ միայն կարելի զմեզ մնհու չափ հիւանդութեի առողջացուցանել՝ որ կենդանի առնէ զմեռեալս. նմա փառք յաւիտեանս, ամէն:

1 Մի օրին. Յ-էր-նէ-ս: Ալ. օրին. Յ-ր-նէ-ս:
2 Մի օրին. Պ-րկեշ-տախ-հն-ն:
3 Սովիրք չկամի յուցանել.

Թէ չայլ ազգս ևս չկայցեն վատ ի-ոք, այլ զնաս ի նոցանէ ընդ-նակէ, զի բարւոյն նմանութիւ-ն չ-ոք, և ոչ չարի:

ԸՆԴԻՄ ՓԱՀԱՆԱՑԱՊԵՏՆ ՅԻՑ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՆԴԵՐՁԵԼ ԻՄԱՆԻ ՅԱՓՈՒՈՑՆ ԱՌԱՔՅԻ ՄՐՈՑ ՍԵՂԱՆՈՑՆ ՆԱԽ Ի ԲԱՑ ՀԱՆԻ ԶՊԱՏՈՒԱԿԱՆ ԵՄԻՓՈՐՈՆՆ ԵԻ ԱՊԱ ԵԿԵԱԼ ԱՂՕԹԻ ԶԽՈՐՀՈՒՐԴ ՊԱՏԱՐԱԳԻՒ

Օ փահանացապետն բազում անգամ էառ բանս պատկեր Աբրիատոսի, բացատրելով ի մէջ ժողովրդեանս, որ ունի ի վերայ իւր զպատուական եմիփորանն ի փառս, որպէս և Աբրիատոս զիտայն. քանզի զայս նման աւետարանին անուանէ փառք, զիտայն, որով և սա է զարդարեալ խաչանկար եմիփորոնովն, զպատկեր Աբրիատոսի յանձն ձեւացուցեալ. վասն որոյ և ըստ նմանութեան նորա խոնարհեցաւ անօրինապէս առ դրունսն, և յետ այնր համբարձաւ հաւատալ նման, և յիշխանական աթոռն զետեղեցաւ։ Արդ այսուհետև վախձան էառ լինել սորա ապացոյց Աբրիատոսի. քանզի հանդերձեալ է իւրն Քրմարտութեան խորհուրդ ելանել, այսինքն սուրբ և աստուածային մարմնոյ նորին և արեան յիշատակ, զի կատարեսցի։ Ալ ասն այսորիկ ի բաց հանել զեմիփորոնն՝ որով ինքն պատկեր Աբրիատոսի ձեւացաւ, և գայ առաջի սրբոյ սեղանոյս՝ Քրմարտութեան խորհրդոյ նորին լինել սպասաւոր, յայտ առնելով թէ իմն ձեւ պատկերի մինչև ցայժմ զօրացեալ առաջի ժողովրդեանդ մարմնական աչաց զաչքն ձեր կեղծաբանեալ. որ ըստ որում տեսէքդ վիս, խոնարհեցաւ յերկիր, և բարձրացաւ ի յերկինս, և նստաւ ընդ աջմէ Աստուծոյ՝ վեհապոյն իշխանութեանց և պետութեանց, որպէս և եաս վեհապոյն ամենայն եկեղեցականաց գասուց։ Արդ այսուհետև պատրաստեցէք զիմանալի այս ձեր ի հայեցողութիւն՝ զնա ըզտէրն իմանալի հաւատովք տեսանել ի մէջ մեր, որոյ առաջի ես իջեալ հպատակութեամբ պաշտեմ իբրև զծառայ և զպատաւոր. վասն այսորիկ և ի բաց հանեմ զարքունականս նմանութիւն, զի ծառայիս տէրութիւնն այլ ոչ զօրէ ի գալ տեսանն, այլ որ նախ բան զնա տէր, այժմ յերևել տեսանն՝ ծառայ։ Օ այս նշանակելով ի բաց հանէ զպատուական եմիփորոնն, որով ձեւացաւ պատկեր Աբրիատոսի, և գայ այնուհետև

առաջի սրբոյ սեղանոյն սպասաւոր նմին՝ կատարել ըզ-
մեծն խորհրդածութիւն։ Օ այս թէ կամիք և ի հնուա-
ւանութիւնք նախագուշակել՝։ քանզի հրամայեաց Աս-
տուած Ահարոնի զպչելեաւր պատմուճանն ի պատիւ
և ի փառս զգենուլ միայն ի սուրբ խորանն առաջի
Ժողովրդեանն. իսկ յորժամ ի սուրբ սրբոցն մտանելոր
նա՝ քահանայապետն, զայն ի բաց հանել, և միայն
կտաւեայ պատմուճանաւն անդանօր մտեալ աղօթել.
այն ստուերն, այս Ջնմարտութեանս նախագաղափար
յարացոյց առացաւ ի Պօղոսէ։ Ալ ասն այնորիկ որպէս
նա զպչելեաւրն ակամբք զարդարեալ զգենոյր առաջի
Ժողովրդեանն ի պատիւ և ի փառս և ի նմանութիւն
Աստուծոյ, սա զեմիխորոնն ունի խաչիւք զարդարեալ,
որով Քրիստոս փառաւորեցաւ, և զբնութիւնս մեր
պատուեալ մեծարեաց. և որպէս նա ի մտանելն ի
սուրբ սրբոցն առաջի Աստուծոյ զնմանութիւնն Աս-
տուծոյ հանէր, և սպասաւորի պատկերաւ կերպանայր,
այսպէս և սա ի քահանայագործելն զՔրիստոս՝ ըզ-
նմանութիւն նորին ստուերապէս պատկառէ առաջի
Ջնմարտութեանն բերել. այլ սպասաւորի և պաշտօնեի
կերպարանօք կացեալ առաջի նորա աղօթէ, և զՋնմա-
րիան Աստուած փոխանակ մեր՝ Հօրն իւրում ներկէ։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՂՕԹԻՑՆ
ԶՈՐ ՊԱՏԱՀԷ ՍՐԲՈՑ ՍԵՂԱՆՈՑՆ ԱՅՍ

Այս իւրաքանչիւր աղօթից է և քարոզութիւն
սարկաւագին, սակայն ամենեքեան զմի զօրութիւն ու-
նին, որպէս և ցուցաք ի սկզբանն, և տաղտկութիւն
է լսողաց կրկնաբանութիւնն. այլ միայն պիտէ է ար-
ժան՝ թէ որչափ քահանայս աղօթէ, նա քարոզու-
թեամբն կցորդ կամի ունել զԺողովուրդն կամաց սո-
ւրս, որ վասն ինքեանց խնդրէ. վասն այսորիկ և սաի-
պէ զտէր աղաչել։ Իսկ քահանայն կացեալ առաջի սե-
ղանոյն՝ աղօթէ առ Քրիստոս. քանզի ամենայն քա-
հանայական աղօթք որ նախ քան զայս, և այս՝ առ
Քրիստոս է և ոչ առ Հայր. և ապա յորժամ զնո մար-

1 Մի տրն · Ն-Ի-Ֆ-Ր-Ի-Ե։

ինոյ և սրեանն նշանակէին՝ բերեալ դնէին առաջի, փախարկէ զիօսակցութիւն աղօթիցն առ Հայր, և զնա փոխանակ մեր նմին նուիրէ։ Արդ չև և ս բերեալ զնուէր պատարագին սարկաւագացն, և զեռ և առ Քրիստոս է աղօթիցս բան, որպէս և այլն առնացն։ "Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս, որ մեծդ ես ողորմութեամբ, և առատ պարգևօք բարերարութեան քո,, ։ Ո մեծութիւն ողորմութեան նորա առ մեզ՝ի պղծոյ սիրոյն կարող եմք ձանաչել, ըստ որում ասէրն. այսպիսի սէր ոչ ոք ունիցի, որպէս և ես ցուցանեմ, զի զանձն իմ դնեմ՝ի վերայ բարեկամաց իմոց. ուստի և զայնպիսի առատութիւն բարերարութեան նմին յուշ ածէ ասելով.

"Որ զու քոյին՝կամաւ համբերեցեր՝ի ժամուս յայսմիկ չարչարանաց խաչի և մահու յաղագս մերոց մերոց,, ։ Ո սէրդ այսու ծանեաք անչափ, և զողորմութիւնդ առատ, զի նախ վկայեցեր՝ թէ մարմինս տկար է՝ հաւատոյ առնոյն մարմնոյ չարչարելի, և ապա զնոյնդ՝ի ցաւս չարչարանաց և՝ի մահ խաչի մատնեցեր փոխանակ մեր, և ընդ մեր մեղացն նուէր հաշտութեան Հօր քում Աստուծոյ. ոչ առատ չնորհիդ անչափութեան, ուր և ոչ միտք զօրէ հասանել։

"Նա պարգևեցեր առատապէս զպարգևս և զչնորհս Հոգւոյդ սրբոյ երանելի առաքելոցն,, ։ Կանգի յորժամ Քրիստոս զգրաւ մերոց մեղացն մեր պատառեաց, ապա զձիր Հոգւոյն առ՝ի Հօրէ յառաքեալն արձակեաց, զորոյ զառատութեան բխումն ցանկայիս գնահ ընդ աղօթս առեալ հրեշտակք, որպէս գրեաց Պետրոս։

"Հաղորդս արա զմեզ տէր, աղաչեմք զքեզ, աստուածային պարգևացս այսոցիկ, Թողութեան մեղաց, ընդունելութեան Հոգւոյդ սրբոյ,, ։ Կոյնդ ես, ասէ՝ Յիսուս Քրիստոս երեկ և այսօր, և նոյնպէս անփոփոխ քո սէրդ՝ որպէս յառաջինն և առ յետինս. վասն այսորիկ և մեղաձանչս առ քեզ հաւատով մատչի. առ զմեզ կոյսդ քո չարչարանացդ, և սրբեա՝ի մեզաց՝

1 Մի օրին. ՅԻՇՈՒԽ։ Կու օրին. ՆՈՅՆԻՆ ՈՒՆ։
2 Մի օրին. ՆՈՅՆ Է ՈՒՆ։ Ուր.

որպէս կամեցաւ, և տուաւ զՅովիդ առաջիկայ գործոյն գործակից, որպէս և առաքելոյն որբոց։ Եւ զայն կամէին առնել՝ խաղաղութիւն տայ ժողովրդեանն, զորոյ զօրութիւնն նախ ազդեցաք. և սարկաւագն հրամայէ նոցին երկիրպագանել, «Աստուծոյ, ասէ, երկրպագեսցուք». իբր թէ առնելով, խաղաղութեան վասն աղաչեցաք զամէր, և նա եւս զայն ձեզ՝ ի ձեռն քահանային. արդ երկրպագութեամբ հնարհակալ լերուք արիւն պարգևացն։

Եւ որոյ դարձեալ յաւելու յաղօթս իւր քահանայն. «Խաղաղութեամբ քո Քրիստոս փրկիչ մեր, որ ի վեր և քան զմիտս և զբանս». և Քրդարև ի վեր և անհաս է նորա խաղաղութեանն նախախնամութիւն՝ որով կառավարէ աշխարհի, և զիւրաքանչիւր որ յէից ըստ իւրում ընթացիցն ուղղէ։ Ամէն զէքս ապա, և ի մարդիկ դարձիր. զոմն աստ պատժէ, և անդ պահակէ. այլումն զփոքր բարեացն Հատուցումն աստէն հնարէ, զզօրաւորն փորձութեամբքն երևելի առնէ, և զանզօրն խնամովքն պարսպէ, և ոչ որ ի Քէս Քէհէս նորա իմաստից հասանէ։

«Քրացո զմեզ, և աներկիւղ պահեա յամենայն չարէ». և ի նորա խնամոյն կարօտիմք յամենայն ժամ, ընթերակայ ունելով Քշնամի, և պատրաստ է միշտ ի չարչարելն և ի վիրաւորել։

«Հաւատացեալ ընդ Քնմարիտ երկրպագուս քո, որք Հոգւով և Քնմարտութիւնք քեզ երկիրպագանեն». Քյսց սարկաւագն ժողովրդեանն Քյ երկիրպագանել, և նորա պագին. արդ զտոհս, ասէ քահանայն, որք երկրպագեցին՝ քո սիրելեացն և Քնմարիտ երկրպագուացն կղօրդս արա. զի ոչ Քէ մարմնովք միայն խոնարհեցաք, այլ զՀոգի և զկամն Քնմարտութեան մտաց ընդ մարմնոյս պատրանացն առաջի քո կորացուցաք, ըստ որում և ի տեառնէդ մերմէ պատուէր ընկալաք, որ ասացեր. «Հոգի է Քստուած, և երկրպագուացն նորա Հոգւով և Քնմարտութեամբ պարտ է երկիրպագանել». արդ մեք այսպիսի երկրպագութեամբ տուրս զԱրարչութիւնդ յաւիտեանս փառաւորեմք։ Եւ այս ասացեալ օրհնէ զՀ-

1 Մի տրն. Մէհ.

ժողովուրդն , որպէս զի արտաքս գնասցէն երախայքն ։ Այլ պարտ է գիտել, զի սուրբն Յովհան յեկեղեցիս Հռոմոյ և քարոզութիւն և աղօթս է առհմնեալ առնել այժմ՝ի վերայ երախայիցն , և ապա արտաքս գգնալն հրամայէ սարկաւագին . այլ իմ երկուցեալ՝ի տկարամիտ մարդկանէ՝ ոչ եղի գնոյն՝ի առհման օրինացս։ Յորժամ այս հաստատի , հաւատամ այլ ուժգ գալ յեա մեր հզօրագունի , և զլուսին Թերութեան ընալ ։

ԸՆԴԻՐ ՉՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՒՈՑ ԱՍՏ ՄԻԱՑՆ ԲԱՆԻ ՊԱՀԵՄՔ ԱՄԵԼՈՎ ՄԻ ՈՔ ՑԵՐԱԽԱՑԻՑ ԵԻ ՈՉ ՉՈՔ ԱՐՏԱՔՍ ԱԻՆՔԵՄՔ ՑԵՏ ԱՅՆՐ Ի ՏԱՆԱՐԷՍ ՍՐՒՈՑ ՑՆԱՄԱՆԻՑՆ

ՅԱՑՍՄ ժամանակի երախայ ոչ գոյ՝ի մէջ քրիստոնէից , որպէս և յառաջնումն՝ յորժամ աւանդութիւնս հաստատեցաւ յառաքելոցն . քանզի երանելիքն Նարսէզ և Պղիգոր Նստուածարան լուծին զսովորութիւնս , տեսեալ զի այսու Ձանապարհաւ խոտորիլին բազումք՝ի հեշտութիւնս մեզաց . այլ զի ապաշխարողացն և անմաքրիցն հրամայէ սուրբն Պետրոս ընդ երախայիցն արտաքս գնալ , մեք ոչ հանեմք . էր վասն . զի մի զրկեսցուք՝ի աստանայէ , Որպէս . քանզի նուաղեցաւ ջերմութիւն հաւատոյ քրիստոնէից , և սէրն որ առ Նստուած . և ոչք յայնժամ արտաքս գնալոյն զամենի հարկանէին , և վասն անպատժանութեանն տրտմէին և սգային , այժմ սառնացեալ՝ի սիրոյն Նստուծոյ՝ չառնեն ինչ փոյթ զայսմանէ . այլ մեծաւ Թախանձանաւք Թէ աստանաւր կարելիք աճել զնոսա , որ ոչ ընդ միասին ուրախանան , և ոչ ընդ եւանելն տրտմին , այլ մանաւանդ Թեթևութիւն ինքեանց համարին զարտաքս գնալն յիւրաքանչիւր գործ և յաշխատութիւն . Ո այսպիսի տարտամութիւն տեսեալ իմաստուն առաջնորդացս եկեղեցւոյ , եթէ՝ի բարիոք աւանդութիւնն չարն զմեքենայ իւր Թագոյց , տեղի եառն՝ի սմանէ , և զմիասն ապաշխարողացն յեկեղեցիս հրամայեցին , զիջեալ բան մերում տկարութեան , և զյաւտահաստութեանն կոթող ողջմանդ

կամեր տապալեալ, որպէս և նախ զերեմնաժեայ մերոյ ազգիս ի բարիոք պէտս լուծին, այսպէս և զայս. քանզի զգիշեր արդարութեան ունէին ի ձեռս յաջ և յահեակ ընդ հակառակամարտն մրցել։ Օ՛ի թէ այս էր յայսմ ժամանակի, ապաստանիս մարդիկ գյանցաւորն բռնի արտաքս մղել յեկեղեցւոյ, և ոչ բնաւ այլ յանձն առնոյր զմտանելն ի նոյն. այլ բեկեալ զանձս հնազանդութեանն՝ որպէս զիստերախ ձի՝ արտաքոյ ապաւիզին ընթանայր. սակս որոյ բարիոք համարեցան մեզաւոր զայնպիսին յիւրեանց պահել գաւթի, քան թէ յանհնազանդութեան խորխորատն ընկղմել և զրկել ի սատանայէ, զի աւերակ էին և սոքա որպէս զնա չարին խորհրդոյ։

ՋԻՆՋ ՑԱՑՑ ԱՌՆԷ ԱՑԺՄ ՎԵՐԱՐԵՐԵԼ ՍԱՐԿԱՒԱԳՈՑՆ ՑԸՆԹԱՑԱՆՈՑ ՍԵՂԱՆՈՑՆ ՉՆՈՒԻՐՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ի ՍԵՂԱՆՆ ՍՈՒՐԲ

Յ՛ԱՏՈՒԱԾԱՎԱՑԵԼՈՒՆ և ամենապայծառ տեսանելւոյ զայս խորհրդոյ յայտնութիւն, այսինքն սարկաւագացն վերաբերել զնուէր հային և բաժակին, և դնել առաջի քահանային. զոր փոքր ինչ պարտ է՝ քննել ապաւինելով ի Հոգին Յ՛ստուծոյ, Յ՛որ զինչ ուսաք զաարկաւագն մինչև ցայժմ, սաս ինձ. յայտ է թէ պայեակ, դաստիարակ, ուսուցիչ և վերակացու ժողովրդեանն. քանզի սա հայր նոցա և իրատուիչ, որ միշտ զկամն Յ՛ստուծոյ քարոզութեամբն վարդապետէ նոցա, և ինքն խորհրդազգած լինելով օրինացն Յ՛ստուծոյ՝ ի նոյն զարթուցանէ զընթերակայ մանկունսն։ Յ՛որ սա որչափ տեսանէր զքահանայապետն պետն պատուական եմխիթարեալն պատկեր Յ՛քրիստոսի ի մէջ ժողովրդեանն և ի քահանայապետականն աթոռ, յորդորէր զամենեսեան առ Յ՛քրիստոս աղօթել, և զնա վասն պէտսէս ողորմութեանն իւրեալ աղաչել տեղեակ և գիտուն ունելով՝, թէ և նա եպիսկոպոսն զնոյն յանդիման, և զժողովուրդն նման կցորդ և հա-

1 Մի պին. Զոր ինչ ի՞ր
ոչ դրէր է։

2 Մի պին. Եւս. երկու պին.
ոչ ունի։

մնձայն սարիկը լինել ։ Ոչ յորժամ ետես , եթէ ե-
պիսկոպոսն զձև նահատակութեանն Աբրահամայ ի բաց եդ ,
և ի սպասաւորի և ի պաշտօնեի կերպարանս՝ եկն
եկաց առաջի սեղանոյն , նա և տիրապէս ասել՝ ի
հրեշտակի և պատգամաւորի . քանզի քահանայն հրեշ-
տակ է Աստուծոյ առ ժողովուրդն՝ որում՝ սա ձեռամբ
զգեստոյն հաւասարեցաւ . ծանուցեալ զայս սարկա-
ւագն՝ գիտաց եթէ խորհրդոյ է այսուհետև ժամա-
նակ , զաղօթամիտ երեխայսն զոր մուցանէր՝ արտաքս
վարեաց ի խորհրդակցութենէն ։ Եւ ապա ինքն ա-
ռեալ զդասակից պաշտօնեայն՝ զգուշական պատուով
երթեալ բերէն զընծայսն , և տան ի ձեռս քահա-
նայապետին ի դիմաց ժողովրդեանն , իբր թէ ասելով .
դու եկիր առաջի սրբոյ սեղանոյդ խօսել ընդ Աստու-
ծոյ , և խորհուրդ առնուլ ընդ նմա սակս փրկութեան
ժողովրդեանս , պարտ է զի նուէր ընծայից և պատա-
րագաց ունիցիս ի ձեռին՝ դնել առաջի նորա , և մեք
չունիմք այլ ինչ նախապատիւ և պատուական քան զա-
նուանակս գլխոյն մերոյ Աբրահամայ և զհրեշտակ նո-
րին ։ Ահա ածեալ տամք ի ձեռս քո՝ հրեշտակ և
պատգամաւորդ ի մէնջ , զի փրկանք փոխանակ ամե-
նայն ժողովրդեանս տացես Աստուծոյ Հօր , և մեք ա-
մենեքեան մնասիմն սորա և ասկերք՝ ընդ գլխոյդ եմք
նմին հնազանդ . զի որպէս զդա ի ձեռս քո դնեմք ի
սեղանդ առաջի Աստուծոյ , այսպէս զկամս և զխոստո-
վանութիւն ժողովրդեանս մեք վերակացուք նոցին
դնեմք առաջի Աստուծոյ ։

Այսքան և այսպիսի խորհրդով , որպէս ի ժողովը-
դենէն առնուն սարկաւագքն զնուէր պատարագին՝ որ
փոխանակ նոցին մնասցի , և շքեղ հպատակութեամբ ,
բուրմունք խնկոց և օրհնութեամբ յարտաքին վայրէն՝
որպէս ի միջոց նոցա ածեն ի նեղքին վայր սրբոյ խո-
րանին , և տան ի ձեռս պատգամաւոր քահանային ,
փոխանակ ամենեցուն նուիրել Աստուծոյ , այսպէս տե-
սանեմք զանօրէնութիւնն Աբրահամայ , Հանգի ի մի-
ջոյ աշխարհի , և որպէս թէ ի մէնջ նուիրեցաւ ի
սպանդ խաչին փոխանակ ամենեցուն պատարագ հաշ-
տութեան Հօր , և սրբեաց զմեզս մեր ի մէջոյ , իբր
թէ ածեալ զնա յայն սեղան մարգարէին՝ սրբ նախա-

գուշակեցին զայս խորհուրդ . այսպէս և լսա այսմ խորհուրդ մարմնոյ և արեան Նորա ՚ի Ժողովրդենէն և ՚ի վերակացուաց նոցին նուէրք ՚ի ձեռս քահանայապետին ՚ի սպանդ սեղանոյն սրբոյ՝ պատարագ Հաշտութեան Աստուծոյ Հօր ։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԳՈՑՆ ԶՈՐ ԴՊՒՐՔՆ ՊԱՅՄ ԵՂԱՆԱՅԻՆ

« Արդ զքրովբէիցն խորհրդաբար կերպարանիմք ,, ։ Տես , թէ արդէն նախապատմեալ խորհրդոյդ երդ դպրացս Համաձայնի . քանզի ոչ ասէ թէ քահանայքն կամ սարկաւագունքն միայն , այլ և մեք ամենեքեան Ժողովուրդքս ընդ սարկաւագացն քրովբէապէս ձեռնամք , և զԱստուած բարձեալ բերեմք ՚ի միջոյ մեր և տամք ՚ի ձեռս նուիրակատար քահանային ։ Այլ զինչ էր քրովբէիցն կերպարան , որոյ պատկեր ձեւանան . այն , զի կառք չորեքդիմի երևեցան Աստուծոյ գոլ քրովբէքն մարգարէին Եզեկիէլի , և բարձեալ բերէին զնա ՚ի հիւսիսոյ ՚ի հարաւ ։ Արդ մեք , ասէ , զայն խորհուրդ այժմ կերպարանեցաք , և վերածեմք զխորհրդածութիւնն ։ Արիաոսի ՚ի մեղօք սառնացեալ վայրէս ՚ի միջոյ մեր ՚ի լուսատեսակ կողմն հարաւոյ աստուածային խորանին և սեղանոյն . և որպէս անդ յայնժամ շուրջ զփառօքն Աստուծոյ եռեա մարգարէն ծիածանն լուսոյ և սանդ լուսատոր , այսպէս և մեք խորհրդապէս կերպարանիմք , զլուցեալ ջահս շուրջ զսուրբ որպէս զծիածանն և զփայլատակունքն , զլուսոյն ինկոցս իբրև զամպն ածեալ ընդ նմին , և զպաշտօնեայսն բարձողս հաւատարմեք չորեքկերպեան կենդանեացն աթոռոյն Աստուծոյ , և առնեմք զգալի իրօք իմանալի խորհրդոյն հաւատարեմք ։

« Այլ կենդանագործ Երրորդութեանն զերեքսրբութեան օրհնութիւնս մատուցանեմք ,, ։ Օ երեքսրբեան օրհնութիւնն ոչ եթէ Եզեկիէլ լուաւ՝ որ զքրովբէիցն եռեա , այլ Յայր ՚ի սրովբէիցն . սակայն մեք հաւատարեալք հրեշտակաց՝ զտէր նոցին ունելով ՚ի մէջ մեր , որպէս զքրովբէիցն և որպէս զսրովբէիցն սրբաբանեմք , ոչ թէ ձեռներիս Համարձակութեամբ , այլ զի նա որ առնէ թոռթոռ յանդիմութիւն պաշտեցս՝ նիւթակա-

նաց Հաղորդեալ՝ զմեզ անխիթ թիւն փառատրութեան կոչեցից. վասն որոյ և մեք ի ձեռն Աբրիամոսի Աղբորդութիւնն Հպեալ՝ արբանեակեմք որպէս զպատուական

«Ո՛ ամենայն կենցաղականաս ի բաց գնելով զգործ»,

Ո՛ գուշութիւն Հպատակութեանն ցուցանէ՝ թէ ոչ վայրապար եկաք ի խորհուրդ կցորդութեան անմար միին հրեշտակաց, այլ նախ զամենայն մարմնական գործ ի միջ ի բաց ձգեալ՝ մաքրեցաք զմիտս և զխորհուրդս, և եմք ըստ չափոյ մարմնաւորաց հոգեղէն ի հոգևորս գործառնութիւն։ Աղ վասն, յաջորդ բանս ցուցանէ,

«Արդեօք ի զեղագաւորն ամենեցուն ընդունիցիմք»,

Ո՛ ի այսմ ամենայնի գիտաւորութիւն, քրովբէ կերպարանել և ընդ պրովբէան երգել, և զմիտս մաքրել, ոչ է վայրապար. այլ զի Աչմարիտ յուսով Հաւատամք զնա որ ամենեցուն Թագաւորէ, և զհրեշտակս իմացականապէս միջնորդութեամբ միմեանց մաքրէ և ի նոսին բնակէ, յանձինս մեր զգալի նշանակօքս ընդունել, և իմանալի և զգալի բնութեանս մեր ի ձեռն աստուածեղէն լուսափայլութեան սրբել։

«Ո՛ զհրեշտակացն Հանդիսապէս ընծայեալ բերեմք զկարգ»։ Աչ է ասէ վայրապար գաւառակարգութիւն եկեղեցւոյս՝ որք բերանաբաց յուսով սպասեմք ընդունելութեան արքային մերոյ. այլ առակաւ և օրինակաւ երկնաւորացն պաշտեմք, և կարգեալ զետեղիմք Հաւատոյ սերովբէիցն, և անընդմիջաբար Հուպ գոլով առ Աստուած քահանայիցն, և ի նոցանէ իմանէ գիտութիւնն և լուսափայլութիւնն առ սարկաւագան, և սարկաւագօքն յայլ պաշտօնեայս, և ապա նոքօք ի ժողովուրդն. այսպէս Հանդէս մեր երկնայնոցն գաւուց Համեմատի հրեշտակաց։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՂՈՂՕԹՑՆ ԶՈՐ ԱՑԺՄ ԽՈՆԱՐՀԵԱԼ, ԱՒԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՑՆ

Ո՛ ՂՈՂՕԹՍ զայս ոչ եթէ ի պէտս ժողովրդեանն մատուցանէ, որպէս և զայլսն զամենեսեան, այլ միայն իւր վասն խօսի ընդ Աբրիամոսի, առ որ մինչև ցայժմ աղօթէր, զի միջնորդ և բարեխօս լիցի և զօրացուսցէ զսա խօսել ընդ Տէրն իւրում զնորին անօրինութեան

իւրոյ, և նաւիլել զինքն ի դիմաց մեր, որպէս և ընկալաք հրաման. ուստի և զմնաւ ածեալ ինքն առ ինքեան զսուկալի խորհրդոյս անհասութիւնն՝ սարսափէ՝, մնաւանդ և լուեալ զլռձալի եղանակ գպրացն, և տեսեալ զպարկեշտ հպատակութիւնն սարկաւագացն, և յայսմ ժամու զայլափոխել նմա ժողովրդեանն յերկիւղ և ի զղջումն, սքանչացեալ ամիսոփէ զվիտան ի զգայականացն ցնդմանէ, և խոնարհեցուցեալ զպարանոցն՝ ի վեր ուղերձէ զաչս մտացն, առ այն քահանայապետն՝ որ միայն կենդանի է ընդ աջմէ Որդւոյ լինել բարեխօս վասն մեր, Որոյ ընդ նա համարձակութեամբ զանձին իւրոյ զտկարութիւն, որպէս առ փորձ և չարչարակից բնութեան տկարութեանս առանց մեղաց. առ որ և ասէ իսկ.

«Ո՞ր արժանի է յմբռնելոցս մարմնաւոր ախտիւք կամ ցանկութեամբ մատչել ի սեղան քո, կամ սպասաւորել ալքուներական փառաց քոց. զի պաշտել զքեզ մեծ և ահաւոր երկնաւոր զօրութեանդ իսկ է, ...» Զդալարապէս խոստովանի զայս ի սկզբանէ, որպէս և Յբրահամն զի ասէր, «Կիսզն կալայ խօսել ընդ տեառն, այլ ես հող եմ և մոխիր ...» և վասն որ մարթաբար ի յաղտոյ մարդ, թէ և միօրեայ իցէ կեանք նորա ի վերայ երկրի, և առաջի Որդւոյ և ոչ հրեշտակք չարդարանան, որպէս և ասէ Յոբ, Թող թէ մեզն որ, Ոսան այսորիկ ասէ սա. ես ոչ յանձին արժանաւորութիւնն ապաստանեալ կամ առաջի Որդւոյ քո՝ պատարագել զքեզ, որ անմաքուր եմ և ըմբռնեալ յախտից մեղաց մարմնոյս բնաւորականաց, և ծառայաբար հետևեալ մտացս չարաչար ցանկութեանց. քանզի մեզ որ այսոքիւք միշտ վարանիմք՝ անմարթ էր ընդ քեզ խօսել, կամ երկնաւորացդ պաշտամանն խորհրդաբար՝ որպէս և երգեն դպիրքն հառաստարել. ապա թէ անմարթ էր, և անարժան եմք ըմբռնեալք մեղօք և անհամարձակելի, էր վասն ժպրհեցաք յայս գործ. դու համարձակեցուցեր ինձ. որպէս՝

«Սակայն վասն անչափ բարերարութեանդ քո անպարագրելի բանդ Որդի եղեր մարդ, և քահանայապետ մեր երևեցար, և իբր տէր ամենեցուն այսմ ապաստա-

1 Մի պրն. Ուսումնասիրութիւն

բումեան և անարիւն զնումն զքահանայութիւն ա-
ւանդեցեր մեզ ,, ։ [1]Նպատ հնարհօք ասէ առաւտապար առ
մարդիկ . ոչ զհրեշտակաց որք որբապէս զքեզ պաշտեն՝
հարեր բառն , այլ զմերմէ բնութենէս ամենայն
կրիւք եղբարցս նմանեցեր բարերար . վասն ուսուցա-
նելոյ զմեզ՝ թէ ողորմած ես և հաւատարիմ , որբիչ և
մարդիչ՝ մարդկան , որք՝ ի քեզ յուսան յաւտուածա-
կոյս կողմ այդր ։ [2]Վ առատ հնարիվք և զեղուն սի-
րոյդ . վասն որոյ ոչ դու միայն զքեզ հաշտութեան մեր
նուէր մատուցեր , այլ որպէս մարդասէր տէր՝ և մեզ
զբո սպասաւորութիւնդ ուսուցեր , և ընդ Հայր քո՝ ի
ձեռն փրկչիդ մերոյ համարձակութեամբ խօսել . քան-
զի և մեր տէր ես , որպէս և հրեշտակաց . զի թէ օտար
էաք՝ ի քէն , անհաւատալի էր մարդկան յայս պատիւ
վերանալ . ապա թէ ամենեցուն տիրես , ոչ է զարմա-
նալի՝ որպէս զնոսա հրեղէնս և զմեզ նիւթեղէնս քեզ
սպասաւոր կարգել , զի՝ ի հոգեղինաց և՝ ի նիւթե-
ղինաց փառաւորեսցիս ։ [1]Յառաւածդ երկնի և երկրի ։

,, [2]Ան զի դու ես տէր [1]Յառաւած մեր , որ տիրես
երկնաւորաց և երկրաւորաց , որ՝ ի վերայ քերովբէա-
կան աթոռոյ բազմիս՝ սերովբէից տէր և Թագաւոր
Իսրայէլի , որ միայն սուրբ ես , և՝ ի սուրբս հանգու-
ցեալ ,, ։ [2]Յաղագս այնր կամք՝ ի պաշտօն առաջի քո տէր ,
զի ոչ միայն երկնաւորացդ տիրես , այլ և երկրաւորաց .
ոչ միայն՝ ի քերովբէս նստիս , այլ և՝ ի մարդկանէ ժո-
ղովրդեան քում Թագաւորես . ոչ միայն սերովբէից
սուրբդ տիրես , այլ և՝ ի սուրբս և՝ ի հեզս և՝ ի խո-
նարհս ուսաք զքեզ զի հանգչիս ։ [1]Յա յոյս համար-
ձակեցոյց զմիմեանեալքս յախտից՝ կալ առաջի քո , և
ոչ թէ մեր ինչ արժանութիւն սրտի , որք բնաւ և ոչ պար-
ծիմք զայս ունել ։

,, [1]Զաչեմք զքեզ այժմ միայն բարերար և հեշտա-
լուր , նայեա յիս՝ ի մեղուցեալ և յանպիտան ծառայս
քո ,, ։ [2]Ե թէ վայրապար խնդրէ զհայեցն ։ [1]Աբիատար ,
առ որ այսքան գոհաբանեաց , այլ գիտէ զի յունելն
զհայեցուածս նորա ուղիղ առ մեզ՝ ամենակատար սիրբ
բումեամբ սրբիմք . և ո՞ է որ ուսուցանէ զնա՝ թէ ոչ

1 Ա՛ի տրին . Փ--է։ 2 Ա՛ի տրին . փ---ր-ե-ի ։

հայի յիս Կրիստոս . նեղբին խիղճ մտացս այս՝ որ անառաքեալ առգտանէ , սա և Ձանաչէ միշտ ազօթիւքն ըզնեբոզութիւնն Կրիստոսի , զդառնալն ի խռովութենէն և զհայելն : Այլ մինչև սա ոչ վկայէ՝ թէ հայի նա , և այլ ինն տեսութիւն տեսանէ քաղցրութեան տեսիլ և զուարձութեան , մի հաւատասցուք թէ հայի . անօսր է խորհուրդս և անմարմին , մարմնաւոր բանիւ ոչ յայտնի . փոքձով և առաջնորդութեամբ դրոց՝ որ աշխատի ուսանիլ : Այսինքն , զի այժմ յորժամ հայիմ ի խիղճ մտացս իմոյ , և ի գիտակցութիւն սորին , և տեսանեմ զսա ցնդեալ ընդ աչխարհ , հարցեալ թէ հայիս դու ի Կրիստոս , կամ նա ի քեզ . և յիմանալ՝ ոչ վկայէ զհայելն . վասն այսր պարտական եմ դառնալ ի ցնդմանէն , և հանգարտել ի խռովութենէն , և ամիսթել զիս յամենայնի , և յետ այնորիկ այնուամ հայել աղօթիւք , և մտացս աչօք ի Կրիստոս , մինչև սա ինձ վկայէ՝ թէ այսուհետև յիս հայի . և երբ զիս տեսանեմ և զնա տակաւ մի , կամ բնաւ իսկ ոչ , ապա Ձանաչեմ զմեզն յորոց սրբել կարօտիմ . իսկ մինչ դեռ չէ յայս որոշումն ընտրողութեան եկեալ , այլ յաշխարհական ցնորս ամբոխեալ , ոչ զնայելն կարող եմ Ձանաչել և ոչ զսրբելն :

" Այս սրբեա զհոգի և զմիտս իմ յամենայն պղծութենէ չարէն .. : Ցես զի ոչ մարմնոյ որ նախ առբր , այլ դիւրագիտելեացն խնդրէ զսրբութիւն՝ հոգւոյ և մտաց և խորհրդոց . քանզի ծանրացեալն մարմնոյ պղծութեամբ՝ ոչ կարէ յայս թեթևութիւն խորհրդոյ համբառնալ :

" Այս բառականայն զիս զօրութեամբ առբր Հոգւոյդ , որ զգեցեալս եմ զքահանայական շնորհ , կալ առաջի սրբոյ սեղանոյս , և քահանայագործել զքո անարատ մարմինդ և զպատուական արիւնդ .. : Վասնև ասիցես զայս լուեալ . և ոչ նախ էառ զհոգին յառ նա աղօթելն . այո , առ Ձնմարտապէս . ապա ընդէր վերատին խնդրէ . քանզի զայն՝ այնմ խորհրդոյ առ օժանդակ , և զայս այսմ . քանզի զհոգին ոչ չափով Ստուած Կրիստոսի էառ . իսկ մեք ընդունիմք զնա ի ձեռն նորա չափով բաս խնդրոյն և կարօտութեան : Այս զայս օրինակաւ պարտ է ուսանել . զոր օրի-

նակ աշակերտ ընթերակայ վարդապետին գործ կատարել, կարօտի նախ ուսանիլ ի նմանե, թէ որպէս արկից գխիճնա. յետ զոյն խրատատուութեամբ վարդապետին առնոյց, ապա և զտեսակ որմոյն խնդրե ուսանել և գձեզունս յարկացն. այսպէս առաք գՅոգին վարդապետ և ուսուցիչ. կարօտիմք յիշեցուցանելոյ նորա մեզ հանապազ զզօրութիւն խորհրդոյն Քրիստոսի, Աստի և միշտ հարցեալ ինդրեմք աշակերտեաքս ի նմանե, զի մի իւիք սխալեսցուք. և նա տայ մեզ չափով զգիտութիւն իւրաքանչիւրոյն յիւրում ժամանակի, որպէս և տէրն ասէր առաքելոցն. "Յոգին սուրբ ի նմին ժամու տացէ ձեզ և ուսուցէ զինչ պարտ իցէ խօսել.." Սակայն տանել ոչ կարեմք գնա ապտեղեալ մտօք. ուստի նախ զարբութիւն սորին խընդրեաց, և ապա զՅոգւոյն զօրութիւն. և այս ոյր ասգաստ.

"Ահանապագործել, ասէ, գքո անապատ մարմինդ և զպատուական արիւնդ.." Արդարև կարօտիմք զայս խորհրդոյ զօրութիւն ուսանել ի Յոգւոյն, թէ մարմին և արիւնն Քրիստոսի՝ զոր նախ նուիրեմք Յօր, այս է յիշատակ նորա մարմին լինելոյն և մարմնաւորացս կրից հաղորդ, և այս է որ գմիտս մեր ի պատմելն կերակրէ, և զՊատուճոյ Յօր կամն քաղցրացուցանէ, յորժամ պատմեմք նմա, թէ Թագաւորդ վանն աղքատացս աղքատ, անմահդ վանն մեղաւորացս մեռեալ, անմեղդ վանն անիծելոցս՝ անէծք. անկարօտդ վանն սխալանացս միշտ առաջի քո բարեխօս. և զի այս այսպէս է հնարհօք դորա, սուրբ մեք լեցուք ի ձեռն դորին, այս է մարմնոյն Քրիստոսի՝ նախաձաշակ մատուցողին և քաղցրութիւն, և Յօր Պատուճոյ նուէր և հաշտութիւն։ Այս ապա յետ այսորիկ և վանն այսպիսի պատմութեանս գկամն իւր խանդագատելոյ ի քաղցրութիւն՝ առաքէ զՅոգին յառաջադրեալ նշանակս, և տայ զսա մեզ ի սրբութիւն. յաղագս որոյ այնքան թախանձանօք խնդրէ ի սոյն գործ իւր քահանային ի քահանայապետէն Քրիստոսէ զօրութիւն։

"Զեզ խնամարհեցուցեալ զպարանոցս իմ, և մաղ-

1 Մի օրին · Մէջ-տեղ։

Թէմ, մի մեղմէր զիս և մի գարձուցաներ զերեսս քո յինէն ,, ։ Կարձեալ Թախանձանք առ ինքն ունի ըզ-Հայեցուածս աչաց առնետասիին . զայս և մարգարէին Կաւիթ Հանապազ յաղօթելն իւրում խնդրէր . ,,Մինչև յեղբ , ասէ , գարձուցանես զերեսս քո յինէն , նայեաց և լուր ինձ տէր Աստուած իմ ,, ։ Այլ ինձ , մեք և ոչ զորպիսութիւն Հայելոյն՝ բազում՝ անգամ կՀայելն խնդրելովն՝ գիտեմք , Թող Թէ զՀայեցուածսն Ձանաչել . բայց մի դանդաղեսցուք . ունիմք ի բնութիւնս զօրութիւն գիտելոյ զսոսին , միայն Թէ զջան տացուք ՝ կցորդ զօրութեանն , և Հաւանեսցուք մնացս խղձի դատապարտութեանն ։

,,Կալ արժանի ապա մատուցանել քեզ զընծայս զոյս յինէն ի ձեղուցեալ և յանարժան ծառայէս քումմէ ,, ։ Ընպէս մատուցանէ Կբրիատոսի զինքն . այո , նման մատուցանէ , և նոքաւ և ի ձեռն նորա Հօր . Թերեւս դու ոչ մատուցեր սիրելոյ քո բազում անգամ զակն իւր , և այնու ի Հաշտութիւն նուաձեցեր ի խռովութենէն . քանզի յորժամ կարօտիմք խնդրել պարգև ի Թագաւորէ , նախածանօթ և բարեկամ Համարեաց Թէ ունիցիս զորդի նորա . նախ առ որդին մատուցեալ առես , յիշեա զքո առաջին սէրն առ իս և զիմ վերոյ աշխատելն , և ընդ իմ վառն իմ մինչև ծառայի՝ ըզտառապելն . և այն սիրոյն յիշատակաւ մուտ բարեխօս սակս խնդրոյ առ Հայրն քո ալքայն ։ Կայ որ այսպիսի օրինակաւ մատուցանեմք զԿբրիատոս իւր Հաշտութեան մէջ նուէր , այսինքն զնախ սէրն իւր յիշատակել , և ի պէտս փրկութեան մեր վերստին ընծայել ։

,,Այ ան զի դու ես , որ մատուցանես և մատչիս , և ընդունիս և տաս Կբրիատոս Աստուած մեր ,, ։ Կախ իւր ընդունի , և ապա Հօր մատուցանէ . որպէս և որդի Թագաւորին զյիշատակ սիրոյն իւրոյ նախ ինքն ընկալաւ , և ապա առ Հայր իւր ի պէտս ողորմութեան մերոյ զնոյն մատեալ պատմէ , Թէ զորս ես այնքան սիրեցի և այնչափ ի վերոյ նոցին աշխատեցայ , մի յորժամ գան առաջի քո՝ անտես առնես ։ Հաւասիկ յես ընդ-

ունելոյ յինքն զընծայեալն ՚ի մէնջ յիշատակ սիրոյ իւրոյ՝ ինքն զինքն մատոյց Հօր , ինքն հանդերձեալ յետ այսորիկ զՀոգին սուրբ ընդունել և տալ առաքելից յառաջիկայ նշանակս մարմնոյ և արեան իւրոյ , և ինքն զնոյն սովաւ տայ մեզ . վասն այսորիկ ասէ . յետ մատուցանելոյն զքեզ Հօր՝ մեր աղօթիւք և քո կամօք ընդունիս և տաս . ընդունիս , այսինքն է զՀոգին ՚ի նշանակս մարմնոյ և արեան քո , և տաս զնոյն մեզ ՚ի թողութիւն և ՚ի սրբութիւն ՚ի ձեռն քո ՝Քրիստոս Լ՚ծ մեր , և քեզ փառք ։ Լ՚յսպէս զկորստեան զօրութիւն աղօթիւք զմեռաւ ածէ քահանայն՝ մինչ դեռ պաշտօնեայքն զնուէրսն վերաբերեն , և այսպիսի թախանձանօք խօսի նախ ընդ միջնորդն իւր ընդ ՝Քրիստոս , մատուցեալ առաջի աթոռոյ շնորհաց իւրոց , որպէս զի բան արուեստ մարդասէր՝ նախ ինքն մտցէ առաջի Հօր , և գալստեանն մերոյ առ նա և խօսակցութեան անդիմիսք . և միջնորդ լինի , զի մի ձեռներէց համարձակութեամբ իբրև զանծանօթ արտաքս ելցուք յերեսաց նորա . այլ զի ՝Քրիստոս՝ որ ողորմածն է և հաւատարիմ յաստուածակոյս կոչմանէն Լ՚ստուած և ՚ի մարմնաւորացս եղև մարդ , մտցէ նախ ՚ի մէնջ առ Լ՚ստուած և յուսոյ մեր , և աղօթից Ամենապարհ Հոգեւոցդ կատարեսցի Քահանայ ՚ի նեղբին կողմն վարագուրին նախ , և ապա զմեզ խօսակցութիւք աղօթիցն մատուցանէ առաջի նորա ։

ԶԻՆՉ ՑԵՏ ԱՅՍՈՐԻԿ ԼՈՒԱՆԱԼ ԶՁԵՌՆ ԱՌԱՋԻ ՍՐԲՈՑ ՍԵՂԱՆՈՑՆ ԱՂԴԻՒ ԽՈՐՀՈՒՐԴՆ , Ի ԴԻՈՆԵՍԻՈՍԷ

Յետ կատարման աղօթիցն , և վերաբերելոյ սպիտակազգեստն զնուէրսն ՚ի սեղանն սուրբ , ապա առաջի սրբոյ սեղանոյն զձեռն իւր լուանայ քահանայապետն հանդերձ պսակիչեաւ կարգօքն քահանայիցն ։ Այլ առ ինչ հայի այժմ սոցա մաքրութիւն ձեռացն՝ եթէ ոչ բան տեառն առ Պետրոս ասելոյն . Լուացեալն չէ ինչ պիտոյ , բայց միայն ծայրիցն , զի դուք սուրբ էք ։ Այլն նշանակէ զընկալն իւրա բնութեան և խորհրդոյ՝

զոր մաքրեաց տէրն յաշակերտացն ընդ լուանալոյ ոտից, և ապա առհնասրբապէս վնասա ի հաղորդութիւն մարմնոյ և արեանն իւր կոչեաց. քանզի լուաց զոտս նոցա, և ապա զհորհուրդ պատարագին բաշխեաց ի նոսա. և լուաց ոչ միայն զանեղեցիկ միտան, այլ և զմարմինան, և ընդ մարմնոցն և զմիտան. քանզի այսմ ապացուցի և սոքա Թէպէտ և ունէին սրբութիւն քահանայապետ եղեալ և քահանայք, սակայն աղօթիւքն զոր մատուցին առ Քրիստոս հաւատով, և խորհրդովք և մօտ սրբեցան. ընդ որս և զմարմնոյ ծայրն նշանակ հաւատարիմ սրբութեան մտացն մաքրեն, Քանզի զի առաջի սրբոյ սեղանոյն և տէրունի նշանակացն լուանան զձեռս, զայն յայտ առնեն այսու՝ Թէ ոչ կերպարանօք միայն որպէս զսուրբս ձեւացեալ յաչս ժողովրդեանդ, այլ առաջի Քրիստոսի տեսողին զգաղտնիս սրտից՝ մերոց յուցանեմք և զծայրագոյն սրբութիւն հոգւոց, որպէս և ձեռն ակնարկ զծայր մատանոյ մարմնոյ. Քանզի ընկալաք զայս նախ աղօթական աղերսիւն ի հնարից Հոգւոյն, որպէս և մարմինս յառոգմանէ ջրոյ. այսպէս մտօք և մարմնով միաւորի քահանայապետն յաստուածայինան, և յետ այնորիկ սուրբ և անարատ հայեցուածովք իմանալի մատոյն վերանայ առ Ստուած Հայր, և սկսանի զգոհաբանութիւն աղօթիցս ակնարկ տեսութեամբ մտաց ընդ նմա բարբառել. յետ որոյ և այլոց հաւատացելոց յաստուածակոյս կոչին միջնորդք որք ոչ կարացին ժամանել ի տիրապէս նորա սրբութիւնն, որպէս զի ի ձեռն նոցա բոլոր լուսիւն եկեղեցւոյն յաստուածատեսութիւն վիճակեսցի։ Յաղագս որոյ ասա պարտ է ասել՝ որք ի տեառնէն մարմնոյ և արեան սրբազնագործութիւն գան, Հանել յանձանց և զստա երևոյթս մերազգ, և Յիսուսի նմանութեամբ բան կարողութիւն մարդկան սպասաւորել նմա, զի կարող լինիցին առնել յանձինս վնորս աստուածայինն գիտութեանն Ձնորհագայթս. և ոչ միայն առ ինքեանս առնիցեն, այլ ի բոլոր լուսին եկեղեցւոյն Թափանցիկ փայլեցուցանել։ Սմին էր նախագուշակութիւն և լուացարանն՝ որ ըստ

1 Մի օրն. Մտթ։

քահանայապետին, ուր նախ պրբեալք՝ ապա մոտ նէին ի պրբութիւնն. բայց նոքա մարմնաւորք՝ զսովորական մարմինն վասն այնորիկ և մարբէին. մեք հոգևորք՝ զծայրս մարմնոյն, և զսպառուած նորին զհոգիս և զմիտս մաքրեմք, նախ մեռեալ ունելով զմարմինս վասն մեզայ, որպէս և առաք հրամանն ի Պօղոսէ.

ԸՆԴԷՄ ԱՅՍՈՒհԵՏԵՒ ԱՒ հԱՅՐ ՄԱՏԶԻ ԱՂՕԹԻՒՔՆ ԵՋԱԿԱՆԱՑԱԼՈՅ ԵՒ ՈՉ ԱՒ ԱՐԻՒ ԿԱՄ ԱՒ հՈԳԻ

ԱՂՕՐՀՈՒԹԻՒՆՆ սուրբ համարուն է՝ և հաւատոյ, պարզ և անձաւ, անհաս յերկեղոյս և անքանակ, անտես բոլ պրբանութեն և անմերձ՝ ոչ միայն ի մէնջ, այլ և ի վերհագուսիցն քան զմեզ հրեշտակաց. ապա թէ առ մարդիկ իջանես, տեսանես բազում անգամ պետռոն նորին՝ կարօտ առաւելագոյն նորին գթութեան. բոլ այնմ զոր ասէրն Ա՛ովսէս յետ խօսակցութեան ընդ Ա՛ստուծոյ, "Ա՛յժմ գտի շնորհս առաջի քո, ցոյց ինձ զդէմս քո.," Ա՛սակ երևմանիք զի ասի Ա՛ստուծոյ ի գլոյ բազում անգամ, ոչ բոլ բնութեան չափոյ, այլ ի զօրութենէն և ի գիտութենէ կամացն ի ձեռն սպասաւորի հոգւոցն Հաստատեալ, որպէս ունի խորհրդական աւանդութիւնս մեր, բոլ այնմ. "Ա՛յք առաք զօրէնս ի հրամանս հրեշտակաց, և ոչ պահեցիք.," և Պօղոս գրէ, եթէ "Ա՛ր ի ձեռն հրեշտակաց խօսեցաւ բանն հաստատուն եղև, և ամէն յանցաւորութիւն և անհնազանդութիւն ընկալաւ զպատիժ պատուհասի.," ապա պարտ է գիտել թէ յորժամ լսեաւ Ա՛ստուծոյ, "Ա՛ստուած մերձաւոր եմ ես.," և "Ա՛երևեցայ առ քս, և ես մերձեցայ առ ձեզ.," ոչ բոլ բնութեան է առացեալ մերձաւորութիւնն, այլ բոլ քաղցրութեան կամացն, Ա՛ոգիեալ և յորժամ ասէ, մոլպարկն առ նա. "Ա՛ւհ, եթէ անեմ յերկինս, դու անդ ես. եթէ իջանեմ ի դժոխս, և անդ ի մօտ ես. և եթէ թռչիմ յեզերս ծովու, և անդ ձեռն քո տիրէ

1 Ա՛ի տրին. Համբոյր քան զ. 2 Ա՛ի տրին. Սպասաւորք հոգւոյն.

ինձ ... ոչ ըստ բնութեանն, այլ ըստ զօրութեանն և առնահայեաց գիտութեանն. զոր և մարմնական օրինակաւ ուսանիմք փոքր ինչ, թէպէտ և ոչ տիրապէս: Վասպուրոյն յիւր գահոյս է յարքունական քաղաքն՝ բնութեամբ անտես և ի քաղաքականացն ի բազմաց, բայց զօրութիւնն տեսանի և յեւս հեռաւորացն, և ի մէջ նոցա ներգործէ զոր ինչ կամի, և ինքն առանձն զհեռաւորսն, և խօսի ընդ նոսա ի ձեռն միջնորդ սպասաւորացն: Այսպէս է օրինակիս զօրութիւն, զոր ժպրհեցայ ածել ի մէջ. սակայն Աչմնարտութիւնն ան՝ բառութեբ գերազասի. զի Ձ՝ ընդ որ միջնորդօքն խօսի, և ինքն առնահայեաց գիտութեամբն առ նա մերձ է, ըստ յարացուցի արեգականդ Նառագայթից. զի որպէս սա զարտաքին էքս լուսաւիայլութեամբն պարփակէ, նա զորոշումն ընդ ոգւոյ քննութեամբն որանէ, որպէս գրէ առաքեալ: Զոդ այսպէս իմանամք փանաքսպէս յաղագս Ստուծոյ նախ քան զմարմնանալն Լոգոյ. իսկ յորժամ զիորհուրդն որ ծածկեալ էր յաւիտեանից և յազգաց՝ կամեցաւ երկրաւորացս և երկնաւորացն յայտնել, ոչ զօրութիւն, այլ իսկութիւնն Լոգոյ զղաւակէն Քրահամու բառն եհար, զի լիցի սերբ բողն յայնցանէ որ սրբին, և անուամբ կոչեացէ զնոսա էղբարս իւր՝ ըստ առաքելոյ. զի ըստ արեան մարդկան և մարմնոյ Աչմարտապէս կցորդեցաւ սոցա՝ իսկութիւնն իւրով Աստուած, անձնաւ և անհաս խառնմամբ, Աչ այս ոչր աղագաւ. ինքն առաքեալ յայտնէ մեզ զիորհրդոյս զօրութիւն. զի ողորմած լիցի և հաւատարիմ քահանայապետ յաստուածակոյս կողմ անդր՝ առ ի քաւել զմեղս ժողովրդեանն, և քահանայապետ ծիցէ. զոր ասիցես արդեօք. զչարչարանսն՝ որ մերով բնութեամբս ընկալաւ. քանզի զայն մատուցանէ Ստուծոյ Հօր բարեխօս, և այն փորձիւն միշտ ի փորձանս մատնելոցս օգնական լինի: Ան այսորիկ մեք մարդիկ եղբայր ունելով զԱրիստոս, բնութենակից և չարչարակից, ոչ անձամբ յանձին, այլ նոսիւս հանդերձ մատչիմք առաջի Հօր. ուստի և ոչ ընդ նմա, այլ ընդ Հօրն իւրում խօսիմք՝ զնա վշտակից ունելով ի մեզս կողմանէ և քահանայապետ մեզ յաստուածակոյս կողմն և բարեխօս, իսկ զՀոգին մատուցող աղօ-

Թիցս մեր առ Աբիաթար, ըստ այնմ. "Տերն Յովին բա-
րեխօսէ՛ ի հեծութիւնս անմեռնութ.." : Այս ասելով
ոչ ևթէ հանդարտն Աղբոգոսթեանն կամաց տամբ ինչ
զանազանութիւն, զոր մի լոյծ ածել զմտաւ, այլ այս-
պէս իմանալք զնա՛ ի պէտս մերոյ փրկութեան անօրի-
նեալ՝ զնեբգործութիւն խորհրդոյս :

Յաղագս որոյ յետ ըստ Աբիաթարայ կերպարանելոյ քահանայապետին, ապա առաջի եդեալ զնշանակս մարմնոյ նորին և արեանն՝ սկսանի պատարագաւն Աղ-
գոյ և բարեխօսութեամբ Յովսէփ զՅայրն՛ ի հաշտու-
թիւն Թախանձել, և առաջի նորա զանօրէնութիւն սիրելի Աղգոյն հաշտութեան պատարագ և նուէր ընծայել, և այնպէս՛ ի գթութիւն ստիպել. զոր ոչ՝ դանդաղելի է մարմնական յարացուցիւ երևելի առնել, Աշխ դիպի առաջի մտոց մեր այր Թագաւոր հզօր և աշխարհակալ, յորոյ բազմութենէ մասանց աշխար-
հին գաւաճանեցաւ կողմն մի՛ ի Թշնամեաց, և պատ-
րանօք նոցին և խաբէութեամբ բանից՝ իջեալ յամուր աշտարակէ բնակութեանն անձնասանան եղեն՛ ի ձեռս նոցա, զոր առեալ Թշնամեացն մախանօքն որ ընդ Թա-
գաւորն՝ չարաչար ծառայեցուցանեն. իսկ որդի Թա-
գաւորին տեսեալ զնոցա տարագիպ փորձանան՛ ի Թըշ-
նամեացն, և զՀօրն անտես առնելն զգաւառն յաղագս անձնասանան լինելոյ յանցանացն, փրկիչ նոցա կարո-
ղապէս լինի, զՀօրն կամաց լուսին այսու տիրապէս ա-
ւարտեալ՝ զՀետ ընթանայ, զթշնամին խորտակէ, և զգերեզմն տառապանս՝ սկանատես լինելովին Ձանայէ, և զնոսա՛ ի ձեռաց նեղչացն զերծուցեալ՝ զառաջին աշ-
խարհն նոցա՛ ի Հօրէն առնուլ ուխտ գնէ, և նոցա մինչև՛ ի կրկին իւր գարձն զգուշանալն՛ ի գերիչ և՛ ի նախանձաբեկ Թշնամեացն ուսուցանէ : Սակ ևթէ իւիք դժուէն ձեզ, ասէ, գիս որ փորձեցի զթոյնս նոցա գառ-
նութեանն, ՛ի խօսելն ընդ Հօր իմում զնեգութիւնն՝ միջնորդ՛ ի ձերդ կողմանէ առաքէ[3], և ես՛ ի Չմարիա տեղեկութենէ ծանուցանեմ նմա զորքանութիւն չա-
րեաց Թշնամեացն, և զձերդ պարզմտութեամբ խաղա-

1 Մի օրին · Յունիսի։
2 Մի օրին · Յուլ ևթնի։
3 Մի օրին · Ընդ հոր իմ։

ամուսնի՝ ի նմանէ ։ Յակ նոցա զայս յոյժ առեալ՝ յորժամ տագնապին ի նեղացան, որդւոյն յանդիման ըզհայրն Թախանձէն, ի դմանէ ասելով լուր զմեզ նեզամիւն՝ որ էառես զայնպիսի գառն Թշնամիան ։ Յարձեալ և զնա առաջի հօրն արկանելով՝ ասէն. մի անառես առներ զայդքան սիրեցեալդ որդւոյդ քո զբազմապատիկ աշխատանսն ի վերայ ծառայիցս. վասն մեր եկին անմեղդ և մեռաւ, աննիւթդ մարդացաւ, մեծդ աղքատացաւ. և միոչ նոքա զայս ասեն, որպին վշտակցի սոցա կամօք՝ յիշելով զառաջինն իւր զաշխատանսն, և զհայրն Թախանձէ այսպիսի յիշատակաւս օգնական եղեալ սոցա։ Եւ հայրն նայեցեալ յորդւոյն իւրոյ աչերն ի վերայ ծառայիցս, և յաշխատանսն մեծամեծս ի վերայ սոցին, ի ձեռն նորա անտես առնէ զսխալանսն, և նեղէ խեթկելոցն ի նեղացան ։ Յ. յապէս արիւնն Յիսուսի սրբէ զմեզ յամենայն մեղաց՝ ի Հօրն տեսանելն զնշանակս նորին, և զխանդաղատանէն ի վերայ աշխարհի. այսպէս ունիմք բարեխօս առ Յստուած զՅիսուս Քրիստոս զարդարն և զանարատն՝ որ է քաւութիւն մեղաց մերոց, զի քաւիմք մեղուցեալքս զնոքա անմեղ չարչարանսն որ վասն մեր՝ առաջի Հօրն նոաւս Հանդերձ բարեխօս արկեալ ։ Յ. յապէս ունիմք Համարձակութիւն, ի մեռս սրբութեանցն, զարիւնն Յիսուսի ունելով նախաշաւիղ և առաջնորդ, և զմարմինն նորա վարագոյր և կարապետ. յայս Հայեմ[3], այսինքն ի յուսոյս ի քաղցրութենէս և ի Հաւատոյս, առաց ինքն զուսոցան ոչ մեռանել ի յաւիտեան ։ Օ՛ զիարդ մեռանի՝ զկենաց գեղն անհաս ունելով որչափ է ի մարմնի. այլ Թէպէտ և հիւանդանայ բան տկարս բնութեան, զնանէ բուռն հարեալ Նաշակէ և առողջանայ. և Նաշակումն և քաղցրութիւն Նաշակման յորժամ լսես, մի միայն ի մարմնոյն նշանակս կենաց, այլ որպէս զառ մարմնոյդ բերանով հանդերձեալ ես Նաշակել և սրբիլ, այսպէս պատրաս նախ բերանով մտացդ զքաղցրութիւն խորհրդոյ մարմնոյ նորին ու-

1 Մի օրին. Ուրեմն վերոյիշեալ Նոյս խոսեր։

2 Նշանակ ասին այնու մասք, որով առաուած սրանք զառաջի խոր- հուրդն սովորեցին ասել՝ ըստ որ- առիս հայի Ե գիրոյ։

3 Մի օրին. Յայս հանդիս։

տել, և այնպէս անսասելիս ի Տէր առաց համարձակու-
թեամբ զնոյն ընդ Հայրն խօսել. զի այնպէս առա կա-
րէս հաւատալ սիրոյն զանձն քո, և զՀոգին խոնար-
հեցուցանել, և խօսիս զանձն աղօթիցն։ Այս, որ-
պէս. ըստ որում զօրինակդ ուսար, այնպէս կերպա-
րանէ զՀնամարտութիւն խորհրդոյն՝ իմանալի աչաց ա-
ռաջի՝. Թագաւոր զՀայրն Յաւուած. որդի նորա ըզ-
միածինն Աստուած. մանն աչխարհի գերեալ՝ ի թշնա-
մեաց՝ զմարդկային բնութիւնս ի հարիւրորդ թուէն
մեղրեալ, զորոյ տեսեալ զտառապանս գԹագ Աստուած
Յաւուծոյ՝ ի վերայ նոցա, եկն և նկուն արարեալ ըզ-
թշնամին՝ փրկեաց՝ ի ձեռաց նոցա, և ածեալ յե-
կեղեցի իւր՝ ինքն դարձաւ առ Հայրն՝ ի յերկինս, և
զառաջին փառսն խոստացաւ տոցա ժառանգել։ Այս
մարդիկ գեռ ևս ընթերակայ ունելով զթշնամին և
զրժող, յորժամ դաւաճանին՝ ի նոցանէն՝ առ արդարա-
դատն Յաւուած ձեռնտուութեամբ փրկչի Աստուծոյն
մտանեն, և տուեալ՝ ի ձեռս քահանային զՀացն և ըզ-
գինին նշանակ մարմնոյ նորա և արեան, նուաւ հան-
դերձ աւետեան եկեղեցիս՝ հրեշտակ առ Յաւուած
Հայր զնա առաքեն, խնդրել՝ ի նմանէ զներումն և զո-
դորմութիւն։ Օ որ եդեալ առաջի Յաւուծոյ՝ ի վերայ
սրբոյ սեղանոյն՝ Համբառնայ զիմանալի աչս մտացն ա-
ռաջի Հօր և Աստուծոյ առաջնորդութեամբ Հոգւոյն
սրբոյ, և սկսեալ պատմէ Հօրն զպէսպէս տնօրինու-
թիւն Աստուծոյն՝ ի ներմարդութեանն տակս փրկութեան
մերոյ, և Հաստատէ զառաջին եդեալ նշա-
նակաւն։ Յսինքն որպէս Հայց Հնամարտ մարմին եր-
կնայինն և նիւթ, այսպէս և քո Աստուծ Հնամարտութիւ
մերս նիւթական մարմնոյ հաղորդեալ՝ զայսոսիկ զխոր-
հուրդս կատարեաց, և առ քահանայս որպէս մարմնոյ
աչօք զգալի նիւթս կատարէ, այսպէս և մտացն աչօք
՝ի խօսելն՝ զքահանայապետն իւր Քրիստոս վկայ ա-
ռացելոյն, և բարեխօս ընդ աջմէ Հօր առեանէ. զորոյ
մեծամեծ շնորհն առ բնութիւնս ոչ անտես առնել
Հօրն Յաստանէ, այլ միշտ սրբել զմեզս՝ նորա հեղ-
մամբ արեանն յիշատակաւ։ Այսպէս Հայրն նայեցեալ

1 Մի պին. Աստուած —ելի։

Աբրահամ անձնառելի ընծային, և ի պատմութենէ բանին լուեալ զբազմապատիկ ի վերայ մարդկան գութ խաւսութիւնն՝ տայ զինդրուածսն, որպէս ուսոյց մեզ. «Ամենայն զոր ինչ խնդրիք ի Տեառնէ յանուն իմ, առնուցուք. զի և ինքն իսկ Տայր սիրէ զձեզ չափումն որով դուք զնա սիրեցիք», և տայ զինչ. նախ զթողութիւն մեզայն, և զհաշտութիւն ի խռովութենէն՝ որպէս ի սկզբանն, և ապա զՈգւոյն ընծայ բաշխէ յամենեսեան ի ձեռն սուրբ հաղորդութեան. Խրատ և այսպիսի է աւանդութիւն եկեղեցւոյ, զիւորիրգականս խաւսակցութիւն առ Որդւոյն Տալ, և միջնորդութիւն Աբրէոյն զնա թախանձել, ըստ մերս փանաքի սեսութեան. իսկ ի բազմաց հզօրագոյն իմաստնոց իմանալի է և այլ բազում ինչ ի սոյն խորհուրդ ազդեցութիւն բանիւ՝ յօգուտ մեզ և ամենայն լսողաց որք ցանկան զսէրն և զդիտութիւն Որդւոյ աձեցուցանել ի յանձինս.

Օ այս գիտելով տէր մեր ասէր. «Ա՛յս եմ Հանապարհ և Ճշմարտութիւն և կեանք. ոչ ոք գայ առ Տայր եթէ ոչ ինէ». զի միով չէ եմք զնորա մարմնաւորութեան խորհուրդ և զսէր յիմանալիս մեր կոկորդ ծաքեալ, և Հոգւոյ կերակուր և զօրութիւն զնոյն ընձեռեալ, ոչ կարէ նորա հայեցողութիւնն առ Տայր նայել. քանզի զիարդ այս լինի առանց ազգակցին Որդւոյ, զոյց քաղցրութիւն սիրոյն մարմնագէս Աստուածոյ շակեցաք, առ իմանալին մտանել Տայր՝ ընդ որ չառաք զատոպիսի Համարձակութիւն, Հակ նովաւ Հանդերձ գիւր և Հեշտ է առ նոյն մարդկան Հանապարհ. մի ամենայն ուրեք ծանուցեալ զկամն Տօրն և Որդւոյն, զի «Ա՛յս են, ասէ, կամք Տօր իմոյ, զի զամենայն զոր ետ ինձ Տայր՝ ոչ կորուսից ի նոցանէ». և զի Տայր այսպէս կամէր զկեանն Հօտին, Որդին քաջ Հովիւն ի պէտս կեցուցանելոյ զնոսին մեռաւ ի վերայ նոցա։ Ջեռանեաս անձնառ միութեամբ Հաւասար կամն. բայց առակին կարապետ մեզ Տօրն գիտութեան եղև Որդին միածին, տնօրինական ներգործութեամբ, ըստ այնմ.

1 Մի օրին · Ո-նէլ։ 3 Մի օրին · Ընդ-- գ--թիւն։
2 Մի օրին · Ընդ-ունի Ա--ծ։

եթէ զիս գիտէիր, այսինքն՝ ոչ զբնութիւնն, զոր և ոչ հրեշտակք ոչ գիտեն, այլ զառաւելութիւն քաղցրութեան սիրոյն, և զՅայրն իմ, ասէ, թերեւս այնու կարող լինէիք ձանաչել. զի ձեզ դիւրահաւատալի է մարմնաւոր աչաց հայեցուածք, որով զիս նկատէիք քան իմանալի մտաց՝ որով առնա համբառնայք ինձ, ապա թերեւս այսուհետեւ կարէիք զինա ձանաչել. յորժամ յիս խորհրդոց լինիք վերահասու, զնա գիտասջիք։ Ասաէ և զնորա խորհուրդն մարմնապէս կերպարանեալ քահանայն, և եդեալ առաջի աչաց իւրոց և Յօրն առ՝ի ստոյգ և անաւելիւք գիտութիւն Աստուծոյն, նորա ձանապարհատն, նորա գիտութեամբն, միջնորդութեամբն և առաջնորդութեամբն մտանէ առաջի Յօրն, ըստ որում և առ Հրաման. "Աչ ոք ասէ գայ առ Յայրն, եթէ ոչ ինձ", և Այս խնդրէ՝ի Յօրէ զՀայցուածն միջնորդութեամբ Աստուծոյն, զոր նոյն ինքն Աստուծն տայ, ըստ որում ասաց. "Այս առ Յայրն երթամ, և զոր ինչ խնդրիցէք՝ի Յօրէ իմում յանուն իմ" արարիչ զայն, զի փառաւորեսցի Յայր յԱստուծ". Այ՛վ տէր իմ, և թէ դու էս խնդրոյն կատարողն առ Յայրն քո յիշատակաւս և անուամբս, ոյր աղագաւ առաքեաս զմեզ՝ի Հայցուածս։ Օ՛ի յիս և ինձ հանդերձ Յայրն իմ փառաւորեսցի՝ի ձէնջ. քանզի վասն այնորիկ արարի զպատուիրանս նորա և մեռանիմ, որպէս զի զձեզ նորա փառաբանիչս Հաստատեցից։ Այ՛րդ թէպէտ և էս եմ խնդրոյն կատարիչ, սակայն Հօտդ իմ և անդամք՝ ինձ հանդերձ Յօրն իմ լինիք պատուանդանոյց, և զանուն իմ և զանօրէնութիւն նմին պատարագեալ՝ՀՀ նմանիլ Հայցեցէք զինդիրն, զոր կատարեմ Հանապազ նորին ձեզ։ Օ այսպիսի պատուիրանս ընկալեալ՝ գնեմք առաջի զմարմնոյ նորին նշանակ Յօրն ըզգայապէս, և զխորհուրդն բանաւորապէս, և այնպէս բուռն Հարեալ զյուսոյն մերմէ՝ զՀաստատուն խարբխիչն, զյաւիտենական քահանայապետէն՝ զկարապետն զՅիսուս, նովաւ Հանդերձ մնանեմք՝ի ներքին կոչին վարագուրին իմանալի Հայեցողութեամբ առաջի Յօրն, առ որ և խօսիմք՝ ընտանեբար, իբրև Հաղորդք

1 Մի օրն. Հ-յիս.

նորին՝ Աղաւոյ իւրով Յիսուսիւ Քրիստոսիւ , սահեալ այսպէս .

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԱՆՋԻՆ ԱՂՕԹԻՑ ՊԱՏԱՐԱԳԻՆ ԱՔԱՆԱՍԻ

“ Տէր Աստուած զօրութեանց , և արարիչ ամենայն լինելութեանց , որ յանէութենէ զբնաւս ի գոյացուցեր թիւն ածեալ գոյացուցեր ,, : Արդէս բազում անգամ, առաւելապէս աստ զպարտութիւն խոստովանիմք , առ ի յոչ կարել մեկնութիւն աստուածային և երկրպագելի աղօթից առնել . քանզի անհնար է , այսինքն՝ զի սա ունի զիղձս և զառփուճն հոգւոյ՝ իւր լծակից մնացն բերանոյ ընդ զգալի բանիս՝ առ իմանալի Աստուած առձայնեալ , զոր սիրապէս քանակել ի գիր անկար է . և թէ ջանամք , բազմաբանութեան կարօտիմք . իսկ առանց այնր զնոյն քննել ժպրհութիւն է և անպատուութիւն խորհրդոյս . զոր օրինակ եթէ ոք կին առաջի ունելով զմեռեալ որդի , աղէխարշ գորովոյն տագնապեալ գնա՝ բանս տայ բարբառել ի զուարճութիւն հրաժարեալ ջերմութեան սրտին՝ հառաչմամբ և արտասուաք . իսկ որք ոչ յախտակցութեան սրտին լծակցին , զբանքն՝ որ նորա արտասուացն էն առատացուցիչ , ծաղր և կատականաց առնուն նմա . այսպէսի տոչորութիւն սիրոյ և տափուճն գթոյ և բաղձանք սրտի է տեսանել սարսափելի բանից աղօթիցս բուրիչ . եթէ առանց այսր լինի քննութիւն խնամոցիս , յայպանութիւն երգիծանելոյ տացի անմտաց : Արդ զինջանել առ տկարութենս աղաչեմ , որ յոյժ հեռի յարժանաւորութենէն՝ զարհեստ քննութեանս խնամատարեմ , և ոչ ձգել ընդ մեղադրանաք զժպրհութիւնս , որ նման իւր՝ զսերն եղբարց և զօգուտ նոցին ունի առաջի :

Սակայն առ քեզ բանիմ դարձցի , երկրպագելի և հանճարեղ Հօր սուրբ Հոգի , որ մնատակարար և Տնօրէնս եղեր ինձ յարհեստ բանի . ցոյս առ այժմ , աղաչեմ զքեզ , կրկին ընդոյ լուսատեսլութենէ ի խառնեալս Հոգի : Ով ահեղ և գաստիարակ , հեզ և խնամող Աստուած իմ Հոգի , ընդ մրրկեալ ծովս խորհրդոյս

զսիբ ընդհիզ՝ որով խաղալի . և որպէս միտ եբաս տիւք քո սատարար զիս քեզ պարտական գովեսոյ , լից և այժմ զբերան իմ օրհնութեամբ քո , տէր յինծալի , Ովպէտ և ես անարժան՝ տաճար լինել քումդ հանդըստի , այլ դու առատ , սո միայն զիս գործի հնչման քո ձայնի , և զանձնատ խորհրդոց քո հանձար տարփալի բացեալ փայլեցո խնդրողաց նորին առաջի , ՚ի փառս պատուոյ մեծի քո անուան տուրբդ սիրելի , և ինձ կշտամբանս բարբառ բերանոյս ժխտողս ծառայի ։

Ի՛րդ պարտ է գիտել , թէ նախահինաւմեծիւնն Ի՛սուսոյ ՚ի վերայ մարդկան և ամենայն էից՝ ոչ տիրապէս պատճի արարածոյս բանիւ . զի է բազում ինչ՝ որում եղաք մեք խորհրդոց նորին խորհրդազգածս , և է ևս առաւելապէս՝ որ անհաս միաց ՚ի միջ և անձառ ։ Սակայն յորս վայելեցաք , և որոց եղաքս տեղեակ , ոչ է պարտ անբանաբար ընդունել և անշնորհակալ կամաք , այլ հատուցանել այնմ ամենայնի փոխարէն զգոհութիւնն և զօրհնութիւն , ըստ այնմ . ՚՚ Օ՛ինչ տայ տրիսուր տեառն ընդ ամենայնի զոր և ետ ինձ . բայց թէ զաղօթս իմ առաջի ամենայն ժողովրդեանն նորա , ՚ի գաւիթս տան տեառն և ՚ի միջ քո Երուսաղէմ .. ։ Ո՛տա այսմ խորհրդոց քահանայապետն ՚ի գիմաց ամենայն ժողովրդեանն մեծաւոյ առաջի Ի՛սուսոյ , զակսակս նախահինաւմեծիւն և զերախտիսն որ առ մարդիկ եղեալ՝ յիշէ , և ընդհակառակումեծաւոյ փոխարէն զգոհութիւնն մատուցանել ընդ ամենեցուն . քանզի գիտէ զնա ընդ այսպիսի պատարագս հաճեալ , ըստ այնմ . ՚՚ Ա՛տա Ի՛սուսոյ պատարագ օրհնութեան , կամ կատարեա բարձրելոյն ուխտ քեզ .. ։ Ի՛ջալէ և Պօղոս զքաւսիւբ պատարագս և պաշտօնս մատուցանել . պահանջէ և տէրն յերկրպագութեան զհոգևորն փառատրութիւն ։ Ձայգպէս այսորիկ սկսանի ըստ կարգի զնորէն Ի՛սուսոյ գոհաբանութեամբ նմին յուշ առնել , գիտելով զայս միայն նմին ըղձալի ։

՚՚ Տէր Ի՛սուսա , ասէ , զօրութեանց , և արարիչ ամենայն լինելութեանց .. ։ Ա՛յսխ զանուանն Ի՛սուսոյ զոր գոհն մարդիկ՝ նմին անուանէ . անուն առեմ , ոչ բնութեան՝ որ է աբանչելի և անհաս , այլ փառացն և

նէրգործութեան. քանզի ստեղծիչ արարածոց փոփոխական միայն գնա, այլ աղագաւ յարդեանց իրացն կոչեցաք զարարիչն Աստուած, այսինքն աստ ածող, զոչ էն յէութիւն և ի գոյութիւն գերիւնաւորն և գերիւրաւորս։ Ասէ զի ոչ ստեղծ միայն, այլ և նախախնամութեամբն պահէ անվթար, և տիրէ ի վերայ սոցին զօրեղապէս, կոչեմք գնա տէր եղելոցս. և տիրէ նա առաւել քան զամենեցուն հրեշտակացն գաւուց, այսինքն զի նոքա ոչ թէ միայն ծառայաբար ակամայ կամօք գրաւեալ են ընդ իշխանութեամբ նորա, այլ և ինքեանք անձնիշխանութեամբ և նախայօժար կամօք սիրեն և տուփան ծառայել նմին, ըստ այնմ. «Որ նեցուկք զտէր ամենայն զօրութիւնք նորա, պատճառեալք նորա և որպորդք կամայ նորա»։ Ասէ և ինքն Աստուած՝ ի բազմացն միայն զիւր սիրելին կոչել ծառայ, ըստ այնմ. «Աւասիկ ծառայ իմ վախճանեցաւ»։ Զի առ այս հայելով, իբր սեփհական և ընտանի ծառայիցս ի սկիզբն բանից, տէր և Աստուած գնա հրեշտակացն զօրաց կոչէ, որոց առնէն զբանն նորա, և լսեն ձայնի պատգամաց նորա. զի երկրաւորքս բազում անգամ յայսպիսի հպատակութենէ լծընկէցս լինիմք՝ որք արարած ի նմանէ։ Արձեալ և էն բազմաք զբաղեալք յիմաստութենէ տէրութեան գիտութեան, վասն այսորիկ սոցա արարիչ կոչէ, և արարիչ ամենայն լինելութեանց։ Վասն զի ընդ բանիս զերկինս և զերկիր և զոր ի նոսա, զի որք եղեն, ասէ, ամենայնս միայն յանեզեզ արարան։

«Ոչ յանէութենէ զընտաւս ի գոյացութիւն ածեալ գոյացուցեր»։ Արդիւնք առեղծանեն բազում ինչ, սակայն ոչ յանէութենէ, այլ զէն յայլ ինն էութիւն յեղաշրջեն կցորդակից տարերաւն, որպէս ըզփոյտ ի հող, և զքարն ի հող. իսկ Աստուած ոչ այսպէս, այլ միայն չէ եղեալ էին էքս՝ էացոյց զնոսա. նախ զերկինս և զերկիր հիւթովքն, և ապա զգոյացութիւն բարեվայելութեան սոցին տարերովքն։

«Ոչ և զամեր հողեղէն բնութիւնս պատուեալ մարդասիրապէս՝ այսպիսի ահաւոր և անպատում խորհրդոյս կարգեցեր սպասաւորս»։ Զիրաւի ասաց՝ որ և զմեզս, քանզի ի հողեղինոց այլ և ոչ ոք է Աստուա-

ծոյ խորհրդոյն խորհրդազգած , բայց միայն մարդն , Աւ գիտեն գիտունքն նորա հոգեղէնքն , ըստ իւրաքանչիւր գաւառ և ասութեանի արժանաւորութեան , որպէս ցուցեալ է բազում անգամ. իսկ հոգեղէնքս առնային եղեն ի զարդ երկրի , և ոչ յիմաստութեանն Աստուծոյ տեղեկութիւն , քան որում էն իսկ գազանք և անասունք , սողունք և թռչունք . այլ որչեցաւ ի սգանել մարդն միայն , և մնալումն ընդ խնամալի բնութեի խառնեցաւ , քան ասեմ. " Զոքը ինչ խնամարկ ասացեր գնա քան զկենդանիս քո ,, : Ա ան այսորիկ այսմ պատուի լինին գոհաբան , որ յառաջութենէ ընտրեցան Աստուծոյ առաւ մաքրգիան , բանական և խնամառուն լինել , և այսու գեր ի վերոյ ամենայն մարմնաւոր բաց նաւել , զԱստուծոյ խորհուրդն գիտել , և գնա արարիչ ի ձեռն բնաւորական բանին ճանաչել : Եւ այսորիկ և վերայնն նորոգմանս որ ի ձեռն Քրիստոսի յանզգական ընտրիս վայելել , և զանապատում խորհուրդն գիտել եթէ Քրիստոսիւ և կամաք Հօր մարմին ընդ աստուածութենէն խառնեցաւ , և մեր առնեցուն յոյս անդ՝ ուր հիմն է արձանացաւ : Ցեա եթէ պրպտան սկսաւ խորհրդոյս զօրութիւն , և անպատմելի ընտրիս , հաւատոյ միայն տեսանելի , և ի մարմնական աչաց խորհուրդ ծածուկ և անճառելի : Որոց սպասաւորեալք բանականքս մարգիկ , և նորին վասն Աստուծոյ պաշտօն և երկրպագութիւն մատուցանեալք . զի այս խորհրդական մեծս յաւուրս առեալ գնեղբինս աշխարհ խաչեցաք ընդ Քրիստոսի , և սպասեալք Աստուծոյ ,

" Գոտ ասէր , որում պատարագեալք զպատարագիս , ընկալ առ ի մէնջ զառաջադրութիւնս զայս ,, : Պատարագիս և պատարագել՝ բանիցս անգամ լուեալ մեր , մի միայն ի նաւէր նշանակաց Հայիս և գինոյս զաչս յառեալ խնացուք , այլ պատարագ սուրբ Հանդերձ պատարագիս Աստուծոյ Հօր զՔրիստոսի խորհուրդն , որում ի սոքա եղան ընծայեալք ի հաստատութիւն . և զայն խնամալի հայեցողութեամբ և խորհրդական բանաւորութեամբ , որում և սպասաւոր գինոյն խառնակեցաւ կարգեալ : Արդ եգեալ առաջի Աստուծոյ Հօր գնալումն նշանակս , և եղ առաջի նորա զՔրիստոսի մարմնով անօրէնութիւնն պատկս և զա-

նազանս, որք եղեն ի պէտս մեր փրկութեան, և զնո-
սա նաեւ հաշատութեան, մաղթէ ի միջնէ Աստուծոյ
Հօր ընդունել, որպէս և ընկալաւ, և միշտ ընկալցի։

«Ոչ առաքեաս զսա ի խորհրդականութեանդ մարմնոյ
և արեան միածնի քո.», «Անդր գեռ և ոչ է բանիւ
և աղօթիւք առեալ նման նաեւ պիտորդ չարչարա-
նացն Քրիստոսի, զոր հանդերձեալ է տալ, որով ձը-
գեալ ի մեզ զկամս Հօրն՝ ի ձեռն Հոգւոյն կենդանի
զսուրս մարմին և արիւն Քրիստոսի. վասն այսորիկ
զկատարումն առաջիկայ խորհրդոյն որպէս սպասաւո-
րէ՝ ծանուցանէ, առաքեա ասէ զսա, այսինքն կատա-
րեա Հոգւովդ։ Այլ ընդէր ոչ ասէ պարզ, կատարեա
զսա մարմին և արիւն Քրիստոսի քո, այլ ի խորհըր-
դականութիւնն մարմնոյ և արեան։ Անդր խորհրդա-
կանապէս լինի սա մարմին և արիւն Քրիստոսի և ոչ
երեւելապէս. Հաւատոյն աչօք առաջի, և ոչ մարմնոյն։
Այսինքն, որպէս. եկ և մաղթեացուք Հոգւոյն Աստու-
ծոյ զիպիտորդս յայտնել։ Քրիստոս բան անմնարմին
ի Հօրէ առաքեցաւ, և ի պէտս փրկութեան մարդ-
կան ընդ մարմին երկրային միացաւ, և ծնեալ նոքա-
ի կուսէն՝ մնաց անհաս ի գիտութենէ երկնաւորացն
և երկրաւորացս, այլ միայն երեւեալ որպէս զմարդ՝ ա-
զատ ի կրից մեղաց՝ որով մարդիկ ըմբռնին, ընկալեալ
զօծումն Հոգւոյն ըստ մարմնոյ, զոր կորոյս Ադամ ի
սկզբանն, և պայծառացուցեալ նոքա զբնութիւնս,
անեւանեցաւ յարդեանցն խորհրդոյ Քրիստոս. զի
որպէս վասն մեր մարդ, այսպէս և ըստ մարդկան օ-
ծեալ, անցոյց ի մարդիկ զօծութեան Հոգւոյն շնորհս.
զի օծ առատապատր իւրով Հոգւովն զի նա հաւա-
տացեալս, և անեւանեաց քրիստոնեայս, որպէս ան-
դամք և հանգոյն գլխոյն Քրիստոսի։ Այդ անեւանի
եկեղեցի՝ մարմին Քրիստոսի և արիւն յոսկերայ նո-
ցա ըստ առաքելոյ, ի ձեռն յօգակատարութեան սրբոյ
Հոգւոյն, որով կենդանի ընդ նա խառնեցաք և մեք, ըստ
էութեան մարմնոյ այլ ի նմանէ, բայց զմի Հոգի ընկա-
լեալ՝ մարմին նորա անեւանիմք. այսպէս առցես ինձ և
զառաջիկայ ղեկտակս խորհրդապէս կատարեալ. զան-

1 Երկու պին. ի Հոգւոյն Աստուծոյ։

զի յորժամ տամք զսա Հոգի, և սովաւ զպէսպէս անօրինութիւն սիրոյ առ մարդիկ միածնին իւր Աստուծոյ, հնարեալ օրինել և կենդանացուցանել զոյն Հոգւով Քրիստոսի իւրոյ, և առնել զսա մարմին նորա և արիւն, ոչ համաբաւ՝, այլ համազօր, զի Թողու և այժմ՝ի մարմինս նորա զմեզ աստուածաբար, ընդ մի Հոգին Աստուծոյ անձառ խառնմամբ միացեալ, որպէս գրեցաւ. "Քրիստոս [1]մխուսի սրբէ զմեզ յամէ մեղաց,, . և դարձեալ, "Հոգւոյն յաւիտենականէն սրբեսցէ զնիզդ մտաց ձերոց՝ի մեռելոտի գործոցն,, . վասն այսորիկ և ասէ .

"Ուր Թողութեան մեղաց պարգևեա Ձաշակողացս զհացս զայս և զգինիս,, : Ուր ասէ, քանզի հիւանդացաք՝ի կենդանութենէն զոր՝ի մկրտութեանն առաջացաք, հոսանուտ վիճակեալ բնութեան . վասն այսորիկ տամ քեզ նուէր նախ զհացս և զգինիս խորհրդով միածնիդ քո չարչարանաց, որպէս զի զու լինկալեալ զսա՝ի մէնջ հաշտ ակամբ՝ Թողութեան մեզ դեզ Հոգւովդ զայն լինձեռնացես : Այս որպէս լինիցի ասիցես՝ սա Թողութեան դեզ : Սատ որում և Քրիստոս եղև . զի նա հաւատովք զմեզ սրբեաց յորժամ ընդ իւր Թաղեցաք . այսպէս նոյն ինքն զարձեալ այժմ լինի հաւատացելոցս իւր դեզ Թողութեան և սրբութեան, յուսով և հաւատով, և ոչ մարմնապէս աչաց առաջի, որպէս և նշանաբն Տարակելի . զի նշանն ոչ հաւատացելոց, այլ անհաւատից . իսկ զի մեք հաւատացաք զԱստուած ամենակալ, և զսա գրաւ լինկալաք՝ի նմանել օձառ Թողութեան . զինչ կարօտանամք՝ի մարմնոյ գիտութիւն նշանաց ազդեցութեան . այլ միայն սրտապինդ լինցուք՝ի Ձաշակելն հաւատով, զմեռաւ աճեալ, զի Թէ մինչ Թշնամիքն էաք՝ հաշտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ Աստուծոյ նորա, որչափ և առաւել՝ի հաշտելս մերում ապրեսցուք կենօք նորա՝ի բարկութենէ անտի . որում փառք յաւիտեանս :

1 Ոչ համաբնական օրինակաւ և զգալի, այլնովին գոյացութեամբ. վասն որոյ և համազօր :

ԶԻՆՋ ՍԱՐԿԱՒԱԳԻՆ ՅԵՏ ԱՅՍՈՐԻԿ ՀՐԱՄԱՆ ՏԱՆ. ՈՂՋՈՒՆԻՑՆ ԵԻ ՈՂՋՈՒՆԵԼՆ ԶՄԻՄԵԱՆՍ

Արդէս ամենայն բարեձեւութիւն եկեղեցւոյս Հոգեւոր է և մարմնաւոր, և մարմնականքն ապացոյցք և յայտնաբանք հոգեւորացն, այսպէս և զայսոսիկ է տեսանել զխորհուրդս. քանզի հայեալ՝ի միմեանս մարմնով և շաղկապեալ բազմութիւն՝ի միութի մարմնոյն համբուրիւ, զիութի հոգեպէս խառնմանն և զհաստատութիւնն այսու յայտ առնեն, ըստ այնմ. "Կո բազմութեան հաւատացելոցն սիրտ և անձն մի ,, : Նա միանայ ոք աղագաւ, եթէ ոչ առ՝ի ցուցանել զայն՝ թէ առ ընդհ պարգեւաց քոց որ հանդերձեալ է բաշխել՝ միով յուսով և հաւատով սպասեմք, և որպէս զմի անձն համակամութեամբ և սիրով բազմութիւնս լինիմք, զի մի լոյսի ինչ երկպառակութեան կարծիք կամ անջատումն յուսոյ յառաջիկայս խորհուրդ. ուստի և նախ հրամանաւն զանկատարսն և զանջատողսկան մեղաք բաժանեալս արտաքս եհան, և ապա կատարելոցս և միով տուիմամբ լցելոցս տայ զհրաման ողջունին և սիրոյն միութեան:

ԶԻՆՋ ԴՐԱՆՑՆ ՅԵՏ ՈՂՋՈՒՆԻՆ ՀՐԱՄԱՆ ՏԱՆՆ ԱՍԵԼՈՎ, ԶԴՐՈՒՆՍ ԻՄԱՑՈՒԹԵԱՄԲ ԵԻ ԶԳՈՒՇՈՒԹԵԱՄԲ

Ո գոհութիւնն դրանցն յայտ առնէ՝ թէ՝ի խորհուրդ եմք ժողովեալ, առ որ ոչ է համաբաձակելի օտարացն հպել, այլ միայն մեզ որ համբուրիւս զհամակամութիւնն հաւակեցաք. արդ եթէ ոք յայս կցորդութենէս օտար է, մի հաղորդեսցի խորհրդոյս, այլ զգուշութեամբ դրանդպ անկցորդ ամին լինիցի: Արդ թէպէտ և այս մարմնապէս բոլ այսմ կատարի, սակայն հաւասար այլոցն ունի ընդ հնչեան խորհրդոյ զօրութիւն. այսինքն զի դրունք և պատուհանք է առ մեզ զգայարանք մարմնոյս, որ ածեն զանապատակս համբաւս խոհուրդ ընդ հնչեանս նելբինս մարդոյ, որպէս ասաց Երեմիա. "Պատուհանքն՝ ընդ որ

եմուտ մահ ... և Պաւիլէ , "Պվր տէր կնիք դրանց բերանոց իմոյ ... և տէրն , "Մուտ ի սենեակ քո և փակեա զդրուռնս քո ... Սոցա տայ Ձայնիւն զգուշութիւն սարկաւագն՝ թէ այսուհետև խնաստութեամբ զգուշացիք դրանց մարմնոյ ձերոյ , ակից և ընկերաց , բերանոյ և շրջափելեաց , զի մի ոք ի դուռանէ ի սուրկալիս ժամու զբաղեալ՝ խոտորութիւն մերոց ընդ իւր արասցէ . այլ փակեցէք , ամրացուցէք , պարսպեցէք , ասէ , խնաստութեամբ և զգուշութիբ : Այս տեսս զկարևոր պահանջումն , զի ոչ միանգամ , այլ երկիցս յաւելու՝ առ ի հաստատութիւն ասացելոցն . գիտելով զի թէ սոքա ոչ պարսպին , հարկաւորապէս իւրեանց ի ծառայութիւն զմիտան ձգեն . և յորժամ միտքն ընդ սոքօք զբաղի , և ոչ բնաւ յիմանալի խորհրդոցն օգտի . արդ զի մի զայս ասկետից կրեսցուք զկիրս՝ աղաղակէ . զդրուռնս , զդրուռնս խնաստութեամբ և գիտութեամբ պարսպեցէք :

ԸՆԴԻՐ ՀԱՒԱՏՈՑՆ ԴԱՒԸՆ ՑԵՏ ԱՅՍՈՐԻԿ ԵՐԳԻ ՑԵԿԵՑԵՑՈՒՈՑՆ [1]

Յորժամ զրանցն զգուշացան և տաճարի մարմնոցն , ապա միաբան զդաւանութիւն հաւատոցն խոստովանին , որով ցուցանեն թէ որք կամօք ի ձեռն նշանակի համ բուրին մի եմք , այսպէս և ուղղափառ դաւանութեամբ հաւատոց , և վնք որ յայնցանէ ոչ այսմ հաղորդին ի մերս կցորդութիւն : Պարձեալ և նուիրեն Աստուծոյ զհաւատս և զխոստովանութիւնն , յայտ առնելով թէ այսպիսի յուսով խառնեալ միացաք ընդ քեզ՝ ոչ ինչ ունելով թերութիւն ակնկրտութեանդ գիտութենէ , այլ զի և ակն ունիմք մեծամեծ բարեաց չընթերակայ ժամանակս գտանել . և Քրիստոս առհաւատչեայ տրիցն ի մէնջ զհաւատսն պահանջեաց՝ ասելով առ իւրաքանչիւր բժշկեալսն . "Հաւատայք , եթէ կարող եմ առնել ձեզ զայդ ... վասն այսորիկ և սոքա նախ զանօրէնութեան նորա հնարս և զաստուածութեան փառս միաձայն բարբառով հռչակեն , և խոստովանին

1 Մի պրն . Երբէ էիեչեյ :

հաւատալ ամենայնին բոլորով սրտիւ, և ապա զնոյն խորհուրդ որում ամենեքեան հաւատացին՝ քահանայն առնու, և ի դիմաց ամենայն ժողովրդեանն նուիրէ Աստուծոյ Հօր։ Այլ զոր օրինակ զհայն ի նոցանէ և նոցա փրկանք ի սեղանն ածին՝ սարկաւագքն, այսպէս և զհաւատս Քրիստոսի մարմնոյն խորհրդոյն ի նոցանէ և վասն նոցա փրկութեան քահանայն առնու և նուիրէ Աստուծոյ Հօր մնացն ձեռօք. յայտ առնելով թէ յոր սոքա հաւատացին զՅիսուս Քրիստոս զԱրդին Աստուծոյ վասն մեր փրկութիւն մարմնացեալ, խաչեալ, չարչարեալ, թաղեալ, յերրորդ յաւուր յարուցեալ, երեալ յերկինս և նստեալ ընդ աջմէ Հօր, զայն՝ զնոյն ինքն և զնորին խորհուրդն որ վասն սոցա փրկութեան եղև՝ ունիմ ես ի ձեռս առաջի քո Աստուած Հայր, պատարագ և նուէր հաշտութեան կատուց քոց, ի վերայ ամենայն արեամբ դորա ստացեալ ժողովրդոց, և գթութեամբ քոջ հովուիդ փրկելոցս։

ՋԻՆՁ ԶԳՈՒՇՈՒԹԵԱՄԲ ԿԱՂՈՑ ՎԵՐԱՁԱՑՆՈՒԹԻՒՆ ՍԱՐԿԱՒԱԳԻՆ, ԱՑՍԻՆՔՆ ԲԱՐՒՈՒ ԿԱՑՑՈՒՆ

Ի ՁԵՌՆ հրեշտակին իբրեւ զոր առաքեցին առ Աստուած, այսինքն քահանային, եւ բազմութիւն սրբոյ ժողովրդեանն զառ ի Քրիստոս խոստովանութիւնն մարմնոյ նորին և աստուածութեանն, զմարճնոյն հաւատ հաստատեալ նշանակաւ հացին և գինոյն, զոր վերածին ի սեղանն սուրբ ի միջոյ սոցա սարկաւագքն, հաստատեալ թէ որպէս այս տարր ըզգալի և չօշափելի, այսպէս և Արդին Աստուծոյ վասն մեր զգալի մարմին զգեցաւ, և զաստուածութեանն հաւատ եւտուն ի նա բարձրաձայն և խոստովանողական դաւանութեամբ։ Արդ առեալ քահանայն ըստ իմանալի և ըստ զգալի էութեանն ի սոցանէ ի ձեռս իւր պատարագ զՔրիստոս քահանայն՝ հանդերձեալ է տալ Աստուծոյ Հօր, և սուաւ զնա յողորմութիւն աղերսել, և հատուցանել զփոխարէն նուիրացս, այսինքն զՀո-

1 Մի տրն · Աստուծոյ ·

գին սուրբ , որպէս և ՚ի սկզբանն : Եւ այս խորհրդոյ զօրութիւն ազդեցաւ սարկաւագին , որ համարձակապէս մտանէ ՚ի խորանն սուրբ , և առնու զգիտութիւն լուսափայլութեանն ՚Աստուծոյ՝ միջնորդութեամբ քահանային . ուստի և բարիոք մտածութեամբ ախորժէ ըզնոյն լուսափայլութիւնս սիրել ՚ի խոնարհ դասս ժողովրդեանն՝ ըստ կարողութեանն իւրեանց ընդունելոց , որպէս և միշտ սովոր էր զայս առնել . յաղագս որոյ եկեալ ՚ի մէջ նոցա՝ վերաձայնէ ՚ի լուր ամենեցուն ոչ զխորհրդոյն զօրութիւն , այլ զինչ . միայն զգուշութիւն :

" ՚Տիւ , ասէ , կացցուք , երկիւղիւ կացցուք , բարիոք կացցուք և նայեցարուք զգուշութեամբ ,, : ՚Յայնժամ՝ մեծ խորհուրդ ազդեցաւ ինձ , ահ եղբարք , որ հանդերձեալ է ՚ի մէջ ձեր կատարել . սոսկալի և զուարճալուսաւն երկեղի պատահեցեալ՝ յորժամ ՚ի մէջ քահանային ՚ի սրբութիւն սրբոյն մտի , հրաշափառ ազդումն և խորհրդոյ կատարումն ՚ի ներքին վայրս սրբոյ խորանին ես տեսի . արդ աղաչեմ զամենեսեան , որպէս միշտ զգուշական բանիւ խնդալուք ՚Աբիատասակեր ժողովուրդք , այժմ առաւելապէս զանձն և զերկեղն ՚Աստուծոյ յանձինս բերեալ՝ ընթերակայ սրբոյ խորհրդոյս կացէք . առ որ և զգուշապէս մտաւորական աչօք նայեցեալ տեսէք՝ թէ զինչ և որքան հրաշակերտ և սարսափելի հանդերձեալ է ձեզ ազդել խորհուրդ . նայեցարուք յիմանալին՝ ոչ մարմնական աչօք , այլ իմացող և վերահայեաց մտօք զնա նկատեալ տեսէք : Ահ նոքա պատասխանեն , ոչ սմա ՝ այլ ՚Աստուծոյ , որպէս և միշտ սովոր են . քանզի և նախ քան զայս սա հրամայէր աղաչել , և նոքա ուսեալք ՚ի սմանէ՝ ՚ի տեառնէ զողորմութիւնն հայցէին . այսպէս և այժմ առաց և հրամայեաց նոցա նայել զգուշութիւ յետ երկեղիւ կալոյն . իսկ հաւատացելոյն ամփոփեալ զինքեանս երկեղիւ և ուղերձեալ զտեսութիւն մտացն ՚ի նպատակն ՚Աստուած , վկայեն կամաց՝ մտացն բերանովք՝ և ասեն . նայիմք՝ որպէս և հրամայեն առաք՝ զգուշաբար առ քեզ ՚Աստուած , առ որ և հաւատացաք և սիրեցաք :

1 Երկու պին . ՚ն՝ :

ՋԱՀԱ ԳԱՐՁԵԱԼ, ՅԱՏԵԼՈՒԱԾ ԱՋԴՈՂԱՏԱՆ ՀՐԱՄԱՆԻ ՍՄԿԱՆԱԳԻՒ

ՅՈՐԱՄ մեծահրաշ ձայնիւ արկ՝ զերկեղ և զսքանչելագուսանս՝ ի վերայ ամենեցուն սրբազանն պաշտօնեայ, և պարապեաց՝ ի խորհրդարանութենէ չարին զՀանուր ժողովրդոյն, նուաւ ուղղեաց և զգուշութիւն տեսութենէ նոցա առ Աստուած, յետ այնորիկ իրաւունս վարկանի զխորհրդոյն զօրութիւն Համառօտ բանիւ ազդել նոցա, զի մի ինեանցն անձնաշահ և պատճառ՝ ի քաղցրութենէն՝ որ՝ ի ներքին վայրս սրբոյ խորանին խորհրդածի. ուստի և յաւելու. Ո՛վ եղբարք և որդիք, ոմն մանկունք սիրեցեալք, և զտեսիս վարդապետութեան իմոյ միշտ՝ ի Հաշակումն ձգողք, ոչ թէ վայրապար արկի ձեզ զահն և զերկեղն, ոչ թէ ընդ վայր պահանջեցի՝ ի ձէնջ զբարիսք կեանն, ոչ թէ նանիր աղաչեցի զձեզ զգուշութեամբ նայել. այլ զի մեծ և անտանելի ազգումն ընկալայ, զի՝ ի նախակարգեալ դասէ քահանայիցն աքանչելի էջ առ իս լուսաւորութիւն գիտութենէ, և թէ զինչ է՝ ոչ կարէիք վազվազակի տանել կամ հարևանցի ուսանել. Այլ այժմ տեսեալ զամենեսեան՝ ի զգուշութեան՝ փախաքեմ զնոյն ազգումն և՝ ի սիրեցեալդ իմ հօտդ սփռել և տարածել. ծաներուք եղբարք, անձառ մատղասիրութիւն, ծաներուք մեզ բարձրագոյն շնորհ, լուարուք և կայծեցէք հոգւով, անզգջական գոհութեամբ։

«Պատարագ Աբրիատոս մատչի զառն Աստուծոյ», Արդէն Աստուծոյ Հօրն իւր՝ ի պէտս հաշտելոյ ընդ ձեզ նուէր պատարագի մատչի. զառն Աստուծոյ մեծ և անզուգական գԹոյն զմեզ ձեր՝ ի յինքն բառնայ, և փոխանակ ամենեցուն մեր որ պարտական եմք՝ մատուս մեռանի. խոտովութեան մեր ընդ Աստուծոյ յանցանօքն և Թշնամութեանն՝ նուէր հաշտութեան զանձն իւր դնէ. աստ առաջի աչաց ձերոց այս ամենայն կատարի, խրախ լերուք՝ ի սէր Նորա, և պատրաստեցէք ընդունել զնորն Նոյա։ Արդ զայս լուեալ, և ընդ ա-

ռաջին ան՛ն և երկեղն զցնծութիւն խառնեալ, և ըստ բնաւորական կրից յարտասուս հարեալ, քանզի սովոր է երկեղն և ցնծութիւն շարժել զընութիւնս յարտասուս և յուրախութիւն, վասն յանկարծակի փոփոխմանն՝ ի տրտմականացն յուրախականսն, ուստի և պատասխանեն այսպիսի աւետեացս կարապետի սարկաւագին՝ ի սրտաձիլեալ սրտէ զբանս. «Ողորմութիւն և խաղաղութիւն և պատարագ օրհնութեան»։ Այսինքն, ով աստուածային խորհրդոյն պաշտօնեայ սրբազան սարկաւագ, լուր աւետեացդ՝ զոր հնչեցեր Հրիստոսի վասն մեր պատարագել, ոչ է ըստ արժանեաց տուր մարդկան կամ ըստ պարտեաց հատուցումն, այլ գերազանց յոսոյ ընդ՛, և՝ ի վեր քան զակնկալութիւն պարգև՝ յողորմածն տեառնէ մեր ողորմութի՛ն մեզ. քանզի բազում անգամ՝ ի սաղրելոյ քո իննդրեցաք աղաղակաւ, «Տէր ողորմեա»։ իսկ նա զինչ այլ մեծ ողորմութիւն կարօտելոցս իւրոց ծառայից ընդհէր քան զինքն. զինչ այլ քաղցելոցս կերակուր և կարօտելոցս փարթամութիւն քան զմարմին իւր, Վարձեալ զի և խաղաղութիւն Հրստուծոյ մեր ըստ հրամանի քո իննդրեցաք բազում անգամ, գոհանամք զՀեշտալար տեառնէն՝ յորմէ վաղվաղակի ընկալաք զլուսին աղօթիցն՝ ի վեր քան զոր խնամեայաք և խընդրեաք. զի մեք սոսկ խաղաղութեան վասն աղաչեցաք զնա, իսկ նա՝ ի պէտս այսորիկ զանձն իւր տայ պատարագ Հօրն իւրոյ. ուստի և ծանեաք ահա Ձեմարտապէս, թէ այս պատարագ է որ օրհնէ զմեզ յամենայն անիծադրութենէ մեզայ. զլուխն մեր Հրիստոս փոխանակ ամենեցուն մեր պատարագի, որպէս զի յամենայն յանդաւթս զՀոգևորն օրհնութիւն սիրեալ տարածեսցէ. երկրպագութի՛ն իւրում ողորմութեանն։

ԸՆԴԵՐ ԱՑԺՄ ՓԱԽԱՆԱՑՆ ԴԱՒՒՆԱՑ ԵՒ ՇՆՈՐՀՍ ԲԱՇԽԻ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ

Օ ԾԱԾՈՒԿ խորհրդոյն զօրութիւն սարկաւագն նոցին ազդեալ, եռեա զամենեցուն Հաւատով և միաձայն զգոհաբանութիւնն. այսուհետև կարօտին զՀատուցումն նորին՝ ի պատգամաւոր Հրեշտակէն՝ ի քա-

հանապէն ընդունել, զի անատգիւտ լիցի ուրախութիւն. ուստի և սա գառնայ ի ժողովուրդն ասելով. մի կարծէք հարևանցի զբարբառ սարկաւագին՝ որ առեալ բանեաց զՆբիստոսի պատարագելն ի լսելիս ձեր, այլ հաստատուն մտօք հաւատացէք. զի ահա ես հանդերձեալ եմ մատուցանել զնա վասն մեր Նստուածոյ Նօր, և ընդ զգալի նշանակաց նուիրեմ նմա պատարագ զտեառն մերոյ ՆՅիսուսի վասն մեր մարդեղութեանն՝ անօրինութիւն. արդ զգոյշ կացէք, ամիրափեցէք զանձինս, պարապեցէք զգայարանս, կցորդ և համաձայն լինիմ յառաջնոյ խորհուրդս լինել՝ որոյ սակս և բաշխեմ ձեզ զօրութիւն։

"Ը նորՀ սէր և աստուածային սրբարար զօրութիւն Նօր և Նրդւոյ և Նոգւոյն սքանչելի եղիցի ընդ ձեզ ամենեսեան,,։ Նըք մեծ այս խորհրդոյս կցորդ էք և ընթերակայ, ընորՀն և սէրն Նստուածոյ սփռեսցի ի վերայ ամենեցուն ձեր անձանց և մտաց, որպէս զի նորա զօրութեամբն պարապեալ՝ կարողապէս նկրտիցիք տեսանել՝ թէ զինչ և ուրբան բարձրագոյն է այս խորհուրդ, որ ի ձեռն իմ՝ ի պէտս փրկութեան ամենեցուն կատարի. քանզի զՆրդին Նստուածոյ զՆբիստոս և զմարհնորա անմեղ փոխանակ մեր Նօրն իւրում տամ, և յուսամ առնուլ ի նմանէ ըստ այսմանէ՝ պարգև, ոչ միայն զմեզսց թողութիւն, այլ և զբաշխումն Նոգւոյն առատապէս։

Նրդ զօրացիք ընորՀօք, առատացէք սիրով, սրբեցարուք մտօք, և այնպէս զօրութեամբ Նչրոյրդութեանն կարողացեալք՝ հաղորդք լինիք խորհրդոյս։ Նակ նորա պատասխանեն քահանայքն. "Նյս ընդ Նոգւոյդ քում,,. այսինքն, զոր դու աստուածայնապէս միջնորդութեդ սփռեցեր ի վերայ ամենեցուն ընորՀ և զօրութիւն, մաղթեմք զի և ընդ Նոգւոյդ քում լինիցի միշտ ի սպառ կնիք և պահապան։

1 Ա յլք. Ներմերութեան։ 2 Մի պրն. ընդ ոյմանէ։

ՋԻՆՋ ՑԵՏ ԱՅՍՈՐԻԿ ԳԱՐՁԵԱԼ ՋԳՈՒՇԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱՆ Ի ՍԱՐԿԱՒԱԳՈՒԹԻՒՆ ԱՒՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ

Ինկալան ամենեքեան հաւատով զօրութիւն ի քահանայական օրհնութենէ և ընդհարաշխութենէ. յետ այսորիկ որ դասատիարակն է նոցա սարկաւագն՝ ըստ կարգի ևս յառաջ մատչել յորդորէ ի ընդհարաշխութենէ, Ասէ. քանզի յառաջագոյն առաջեալ էր նոցա Թէ համբարձէք զմիտս, անկարելի էր այսմ լինել. նախ զի ցնդեալ էին խորհրդովք. երկրորդ՝ զի ոչ գիտէին՝ Թէ առ ո՞ կամ յինչ խորհուրդ զմիտս համբարձցեն. երրորդ՝ զի ոչ ունէին այսմ օժանդակ զզօրութիւնն Աստուծոյ, Ահա յորժամ եղեն այսքիկ, ապա տրամայէ նոցին զմիտս ի վեր ամբառնալ. քանզի նախ աչիւ և երկեղիւն պարապեցան, և ապա արկաւ ի զարհուրեալ միտան ուրախութիւն գիտութեան պատարագելոյն Քրիստոսի. յետ այնր ընկալան ի հանձարոյ նորին զընդոծ զօրութեանն ի քահանայէն, Այդ այսքան արհեստիւք պրպեալ և ուղղեալ մտաց նոցա, ասէ ապա. զմիտս զոր բարիոք երկեղիւ ամիոփեցաք, և ուրախական գիտութեամբ զուարձացուցաք, և քահանայական օրհնութեամբ զօրացուցաք, այսուհետև եղբարք՝ կամիմ զի ի վեր առնուած բարձրացուսցուք, և զիմանալի և զանհաս նորա էութիւն խնայող մտօք՝ որքան կարող եմք տեսցուք. քանզի անդ է և քահանայիցն միտք որ ի նեղքին վայրս սրբոյ խորանին կան. արդ որպէս մարմնով եմք ընդ նոսա, և մտօք վերացուք, զի մի լոկի մարմնոցս միայն հաղորդութեամբ կցորդութիւնս, այլ և հոգւոյ ի վերին տեղն ընթացակցութիւն, Ահա նոքա զինչ առ այս. վկայեն բերանովք մտացն վերահայեցողութեանն՝ ասելով առ Քրիստոս. "Հնարիմք առ քեզ տէր ամենակալ,,. յայտ արարեալ այսու՝ Թէ զքեզ ունիմք առաջի աչաց մերոց ի ժամ այս. և որպէս մարմնոյ աչքն՝ զգալի քո նշանակս ընկրտիմք, տեսանեմք և փափաքեմք ողջունել, այսպէս և զաչս մտաց անդր ի

նեղբին կողմն վարագուրին հանդերձակապէս ածաք ընդ Հանապարհն զոր նորոգեցեր մեզ Յիսուս մարմնով քո վարագուրաւ . և տեսանեմք պարկէս աստ զբեզ մարմնով ի սպանդ սրբոյ սեղանոյս պատարագ հաշտութեան մեր , այսպէս և այդր զմարմին քո ի վերայ սեղանոյ աստուածութեանդ՝ կենդանի և բարեխօս վասն մեր . և բարեխօս ոչ վայրապար , այլ փորձիւ տկարութեանս փորձանաւորացս օգնական ։

ՋԻՆՁ ՀՐԱՄԱՆՆ ԴԱՄՁԵԱԼ ԳՈՀԱՆԱԼՈՅ ՋՏԵՒՓՒՆԻ ԲՈԼՈՐՈՎ ՍՐՏԻՒ

ԱՐՊԷՍ վերագոյն յուցաւ՝ կարգաւորապէս բերել զՀրամանն վարդապետութեան իւրոյ սարկաւագն . քանզի որպէս յետ զօրանալոյն զզօրացեալ միտն համբառնալ հրամայեաց ի վեր , այսպէս և յետ համբառնալոյն գոհանալ օրինադրէ զտեառնէ բոլորով սրտիւ ։ Ուանզի խոստովան եղեն՝ թէ ունիմք զՀայեցուածս աչաց մտաց առ ամենակալ տէրն . վասն այսորիկ ասէ , ոմ եղբարք , յորժամ համբարձայք և հայել Ա՛ստուած արժանի գտայք , մի վայրապար և անբանապէս նայիք յանձառ սիրոյն տեսութիւն և յամենապայծառ փառացն վայելչութիւն , այլ գոհացարուք զնմանէ բոլորով սրտիւ . զի մեծ արար տէր զառնել իւր ընդ մեզ . զի լցոյց զբերանս մեր ինդութեամբ և զլեզուս մեր ցնծութեամբ , և գոհացարուք զնմանէ , զի զանձն իւր եւս փոխանակ ամենեցուն մեր բոլորով սրտիւ . զի տեսանէք զնա մարմնաւոր բնութեամբս անչարժ խաչիսխ յուսոյ մեր ընդ աջմէ Հօր նստեալ ։ Գոհացարուք զտեառնէ , զի քահանայագործէ զչարչարանս իւր ընդ մեզ Հօրն իւրոյ սրբութեան պատարագ . չիք այսպիսի գոհութեան արժանի տէր որպէս զսա՝ որ փոխանակ ծառայիցս մեռանի . վասն այսորիկ կամիմ զի բոլորով սրտիւք բացեալ զբերանս՝ ընդհակալ լցուք նմին գոհութեամբ ։ Պրում պատասխանեն . Ա՛րժան և իրաւ .. ։ Երանելի գոհանալոյդ զոր ընկալաք ի քէն ,

1 Ա՛ստ . Ընդ[բ]եալ։

հայր մեր և առաջնորդ, ամենավայելչապէս արժան է զի կատարեսցի ի մէջ մեր, և իրաւացի է և արդար՝ զայնպիսի քաղցր և ողորմած տեառնէ գոհանալ ամենեցուն։ Այլ պարտ է քննել թէ ընդէր այժմ ոչ գոհանան և կատարեն զՀրամանս վարդապետին, այլ միայն իրաւունս զգոհութիւնն վարկանին, և լռեալ դադարեն։ Վասնզի յայլսն ամենայն ոչ վարեցան այսպիսի օրինակաւ, այլ ընդ հրամանին և առնէին զոր ինչ լսէին. քանզի յորժամ ասէր. "Օ տէր աղաչեցուք", աղաչէին. և յորժամ ասացց զմիտս համբառնալ, համբարձին. իսկ այժմ ասացեալ՝ գոհացարուք զտեառնէ, ոչ գոհացան, այլ իրաւունս դատեալ զգոհանալն՝ լռեցին։

Ո՛վ աստուածասիրելոյ և ամենապայծառ վայելչութեանս եկեղեցական խորհրդածութեանս. արդարև ոչ մարդ՝ այլ քննիչ խորոցն Աստուծոյ սուրբ Հոգին զսա մեզ աւանդեաց, որպէս Հաւատամք։ Արդ զինչ ուսանիմք ի նմանէ՝ արկեալ տարակուսանացս լուծումն։ Ահաւասիկ առաքեցաւ հրեշտակ ի ժողովրդենէս առ Աստուած, և ի ձեռս նորա էտուն ամենեքեան զխոստովանութիւն Հաւատոյ անօրինութեանն Արիոսի, և զմարմնոյն նորին նշանակս, և զարեանն ուխտ կտակի առ ի նուիրել Աստուծոյ Հօր. քանզի անկար էր ամենեցուն սոցա տեսանել զնա անընդմիջաբար՝ որ ոչ անձնաւորապէս Հաղորդեցաւ բնութեան, այլ միայն կամաւք և ողորմութեամբ ի ձեռն Համախառն Արդւոյ։ Իսկ քահանայքն առեալ ի ձեռս և զդաշն ուղղափառ Հաւատոյն, և զնշանակ նորին մարմնաւոր, առաջնորդութեամբն Արիոսի և նուաւ եմուտ ի ներքին կողմն վարագուրին առաջի Աստուծոյ Հօր հրեշտակ ժողովրդեանն և պատարագիչ Արիոսի. և մինչդեռ չև ևս նա տուեալ էր ի ձեռս Հօր Աստուծոյ զպատարագն բանաւոր, այսինքն զխորհուրդ փրկագործ անօրինութեանն Արդւոյ, սարկաւագն երագեալ փութացաւ, և պեսպէս զգուշութի ետ ժողովրդեանն գթական սիրով՝. մինչև զնոսա ըստ կարի իւրեանց ընդ քահանային վերացոյց, ոչ առաջի Աստուծոյ Հօր,

1 Ա՛ի սրին. Սիրելոյն գթով։

զի և ոչ կարէին զնորա հայեցողութիւն լուսոյն տեսանել, այլ առ քահանայապետն իւրեանց Քրիստոս՝ որ մարմնաւորութեամբն վշտակից է տկարութեանն սո-ցա. առ որ և հայեցան, զորոյ և զողորմութիւնն ի պատարագելն Ծանեան, յոր և զաչս մտաց ամբարձին։ Լակ հրաման գոհանալոյ առեալ՝ չև ևս գոհանան, մինչ դեռ ոչ է քահանայն գոհացեալ, և ապա ըստ կարգի սոքա յետինքս յետ առաջնոցն գոհանալոյ գոհացին, որպէս և յետ նորա մտայն համբառնալոց ապա զմիտս բարձրացուցին։ Այլ սակայն և գոհութիւնն ոչ ընդ մի գնայ շաւիղ, զի քահանայքն հանդերձ Քրիստոսի պատարագաւն՝ զոր բարձեալ ունին ի ձեռս մտաց և մարմնոյ, առաջի Աստուծոյ ընդ մտանեն, և զնանեն գոհանան յաղագս միածնիս ընդ հաց։ Լակ ժողովուրդս անջրպետութեամբ քահանայիցն և Քրիստոսի՝ բացակայ գոլով ի տեղւոջ՝ ոչ կարեն առնա ձկտել. այլ զՔրիստոսէ գոհանան, որում և ընթերակայ են յարտաքին վայր սրբոյ տաձարին։ Ադդ այժմ չև ևս քահանայիցն գոհացեալ՝ ժողովուրդն իրաւացի վարկանին միայն զգոհութիւնն, և միանձն համբերութեամբ մինչև քահանայքն զպէսպէս տնօրէնութիւնն Քրիստոսի գոհութեամբ ընդ նուիրեսցեն, և ապա ինքեանք զնանեն որ զայսքան ընդ հաց իւրեանց՝ գոհացին. ուստի և այժմ ասեն առ սարկաւագն. գոհանալ զտեառնէ մեր հրամայեցեր մեզ, և այս արժան է և արդար. բայց միանձք մինչև խորհրդածեն քահանայքն զպատճառս գոհութեանն, և ապա բացեալ զբերանս՝ լի սրտիւ օրհնեսցուք զնա, և գոհացուք վասն ամենայնի։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԱՂՕԹԻՑՆ ԶՈՐ ԱՍԷ ՔԱՀԱՆԱՅՆ

«Այժմ է ստուգապէս և իրաւ՝ ամենայորդոր փութով միշտ երկիր պագանելով փառաւորել զքեզ Աստուած ամենակալ»։ Ժողովրդեանն բանի համաձայնի ի սկզբանն, և ի նոցանէ առնու և այժմ զնիւթս աղօ-

Թիւս որ վասն նոցին մատուցանէ Աստուծոյ Հօր . ապ-
ժանի , ասէ , զքեզ դատեցան գոհանալոյ , և արդարա-
պէս զմտաւ ածեալ խորհեցան զայս . զի իրաւացի է
ոչ միայն գոհանալ զքէն Հայր սուրբ , այլ և յորդորել
՚ի սոյն նպատակ աղօթիւդ զմիմեանս փութով , և լծա-
կից տալ զկորացումն պարանոցի երկրպագութեան ընդ
գոհութեամբն փառատրութեան . էր վասն . յաջորդ
բանիւս ցուցանէ ,

" Ալ քոյին անքննելի և արարչակից բանիւդ զանի-
ծիցն բարձեր զկրձիին ,, , Եղաւ , ասէ , մարդն առա-
ջին խորհրդակցութիք չարին , և ըստ արժանի իւրում
անիծիւք դատապարտեալ՝ մահուամբ մեղացն մեռաւ ,
և փշովք ախտից մարմնոյն միշտ խոցոտեցաւ , և փո-
խանակ աստուածային գիտութեանդ հացի զվայրի
բանջար չար խորհրդոց և երկրային հեշտութեանցն
կերակուր ընկալաւ ։ Ակ գու ամենագութ տէր , ոչ ՚ի
սպառ թողեր զպատժեալն ընդ դատապարտութեամբ ,
նա և ոչ ՚ի փրկեցն զկիզեանականդ արկեր ՚ի գործ զօ-
րութիւն . այլ զինչ . զանզնին և անհաս բանդ քո՝
զննելի ՚ և խոնարհ բնութեամբ մարմնացուցեր . և ըզ-
մեզանչական մարմինս յօտարին նեաւից՝ ՚ի ձեռն նորա
բնաւորական կրիւքն արդար ծանուցեալ գիտացեր , և
տուեալ զանմեղն փոխանակ մեր ՚ի մահ՝ զկրձիին ա-
նիծից դատապարտութեանն մեր՝ նորա մահուամբն
պատառեցեր . ուստի և արժան է զայդքան երախտեացդ
շնորհէ գոհանալ ։

" Ալ Ժողովուրդ ՚ ինքեան առեալ զեկեղեցի սէփհա-
կանեաց զհաւատացեալսն ՚ի քեզ ,, , Հանդ , ասէ , որ զա-
նէիս մեր երթայր , ոչ միայն զայս կատարեաց յաշխարհի
և գնաց ՚ի միջոց մեր , այլ իւր Ժողովուրդ ընտրեաց յամ
աղգաց զմի եկեղեցի քրիստոնէից՝ միով հաւատով առ
քեզ Աստուած զսա ձնհացուցեալ , և իւր անուամբն
սէփհական յատկեցոյց աղգաց զսա պատկեալ ։

" Ալ զննելի բնութեամբ ըստ ՚ի կատարն տնտեսու-
թեան հաձեցար բնակիլ ՚ի մեզ ,, , Ալս անքննելի
դատաստանաց գնա և բան , որպէս և Ժողովուրդն ՚ի դաշն
հաւատոյն խոստովանեցան . ապա զեղջանակ մարդանա-

1 Ընկեր . ջնեն ։ 2 Երկու պին . նոր թուղթ ։

լոյն ՚ի մէջ առնու , առ ՚ի ցուցանել՝ թէ որպէս սահ-
ցաւ զհակեղեցի Հաւատացելոց . անշնչելիդ ասէ՝ զինելի
բնութիւն ընկալաւ ՚ի սպասաւորութենէ կուսական
արեանն , և այնպէս ընդ մարմին անձառ միութեամբ
խառնեցաւ ։ ՚Այլ տես զասելս , ՚՚Հաձեցաւ բնակիլ ՚ի
մեզ ,, . քանզի նուրբ է խորհուրդս , այսինքն զի ՚Որիս-
տոս ոչ եթէ հաձութեամբ բնակեցաւ ՚ի մարմինն իւր ,
այլ բնութեամբ խառնեցաւ . ապա ընդդէմ ասէ , Հա-
ձեցաւ բնակիլ ՚ի մեզ ։ ՚Ո՛նախ քան զմարմնանալն գնէ
զկամն ՚Որդւոյ . քանզի որպէս և ՚Հայր՝ նոյնպէս և նա
ինքնահաձոյ կամօք ՚ի պէտս փրկութեան մեր ախոր-
ժեաց զմարմնանալն . իսկ յորժամ մարմնացաւ՝ ոչ հա-
ձութեամբ ՚ի մարմինն բնակեցաւ , այլ բնութեամբ
ընդ նա խառնեցաւ . քանզի այս գիտէր լինելը բան չար
կարծեացն ՚Արեստորի , ուր յառաջ աստուածութիւն
Հանդեաւ ՚ի կոյսն , և ապա բնութիւն մարմնոյն նովաւ
և ընդ նմին խառնեալ կերպացաւ ։

՚՚Ա՛ւ նորագործ աստուածապէս Հարտարապետեալ
զերկիրս երկին արար ,, ։ ՚Ըդարև աստուածային Հար-
տարութիւն , և գերազանց ամենայն էղականացս՝ նորա
Հնարագործութիւնն զքանչելի , և միայն որպէս և
վայել էր ՚Որդւոյ գործ . զի արիեալ զբազմապատիկ
իմաստութիւնն ՚ի վար՝ զերկիրս երկին յեղաշրջեալ
դարձոյց ։ ՚Որպէս , որպէս . զի զմարմինս աստուածա-
յոյց ։ ՚Ըդ յորժամ երկրային տարրն աստուածացաւ
՚ի մէջ մեր , երկիրս երկին եղև , և երկրաւորքս եր-
կնաւորք . զի ուր Թագաւորն է՝ նոյն վայր և Թագաւո-
րութիւնն ։ ՚Այնպէս ոչ թէ երկին վասն այնորիկ է եր-
կին և փառաւոր , զի անօսր է , այլ զի իսկութեամբ՝
արարչին տեղի Հանդստեան է . ապա նոյն ՚ի յերկիր
էութիւնն էացոյց լինել երկին և սմա , և եղև յերկիր
որպէս կարդ բանիս տնտեսէ ։

՚՚Ո՛ւ սան զի որում ոչն Հանդուրժէին առաջի կալ
զաւրութեանցն ջոկքն , զարհուրեալ ՚ի փայլակնացայտ և
յանմատոյց լուսոյ աստուածութեանդ , եղեալ այդ-
պիսիդ մարդ յաղագս մերոյ փրկութեան ,, ։ ՚Ւսաք
զանՀանդուրժելի երկեղ նոցա յաստուածութենէն՝ ՚ի
Հեւաքօղելոյ դիմաց սերովբէիցն , որպէս պատմեաց
մարգարէն ՚Եսայի . արդ նոյն որ այնպէս սոսկալի ՚ի

մէջ նոցա, վասն մերոյ փրկութեանէ մարգասիրեալ՝ի վերայ երկրի տեսաւ Յովանիւթեամ մարմնով համարձակելի և դիւրաւերձենալի երկրաւորացս քան երկնաւորացն։

Ընդ նորհեաց մեզ ընդ երկնայինսն պարել զՅոգեղէն զպարս. և ընդ սերովբէս և ընդ քերովբէս միաձայն սրբասացութեամբ յօրինել նուագս, և համարձակապէս՝ գոչելով աղաղակել ընդ նոսին, և ասել.։

Ամէն վայրապար ժպրհիմք ասէ՝ի սրբաբանութեան, այլ զի ընդրկնակալք եղաք՝ի մարմնաւորութեան միաձեռիդ բարձրագոյն այս ընդհայ սերովբէիցդ սրբերգենութեանն համաձայնեալ. քանզի միով է Աստուած՝ որ երկնաւոր նոյն և երկրաւոր, ի միաձայնութիւն փառաց իւրոց զտոսա ածեալ ծանկցեաց, երգել զսրբասացութիւնս և ասել.

ԸՆԴԵՐ ԱՑԱՄ ԶՍՐՈՎՔԻՒԱՆ ԵՐԳՆ ԱՂԱՂԱԿԻ ԵԿԵՂԵՑԻ

Յոյժ ևս յառաջագոյն՝ի խորհրդածութեան զքահանայսն Նոր Խօսակիչ, և զժողովուրդն Հրեայ. զնոյն է և այժմ տեսանել. քանզի պատուեալ նորա խորհրդաբար զտնօրէնութիւն ներմնրդութեանն Քրիստոսի Նոր, և նա զեռ զիսային Ձառ և զարշարանացն որով փրկեցաք՝ի մէջ առեալ, այլ միայն զմարմնով երևեալ Յանին՝ի յերկրի յիշատակեալ, սկսանին ժողովուրդն ազդեցութեամբ քահանային, որ կոչէր խորհրդոյս, ասել առ Քրիստոս. Սուրբ սուրբ սուրբ, տէր զօրութեանց.։ Լկայ լինին և հաստատեն զքահանս քահանային՝ որ խոստովանեցան զերկիրս երկին լինել, և սկսանին համաձայն սերովբէիցն զերգս՝ի մէջ իւրեանց՝ հաւատով տեսեալ զփառան Աստուծոյ. քանզի էութեանն հասուն ոչ նոցա է յայտնի յերկինս, և ոչ մեզ յերկիրս. իսկ փառացն առաւելութեամբն և նախախնամութեանն ազգմամբ, որպէս երկինքն է լի և երկիրս եղև Քրիստոսիւ. վասն այսորիկ և ասեն երկրաւորքս.

1 Մի տրին. Հմմտ. Յով.

«Լի են երկինք և երկիր փառօք քո ..։ Յայսմ է Յուտաճ մերձաւոր, զի որպէս Ձառագայթ արեգականն զգալի տարերքս ընու, այսպէս և իմանալի լուսաւորութիւն փառաց Նորա զիմացող էութիւն երկնաւորացն և երկրաւորացս։

«Օրհնութիւն ի բարձունս ..։ Ասէ Քրիստոսի մեր փրկութեանդ պատարագի՝ ոչ միայն ի միջնջ օրհնութիւն ի յերկիրս, այլ և ի բարձունս երկնից ի հրեշտակացդ։

«Օրհնեալ որ եկիր և գալոց ես անուամբ տեառն. ովսաննա ի բարձունս ..։ Օրհնեալ ասէ, որ եկիր նախ, և զերկիրս երկին արարեր, և զմեզ փրկեցեր անուամբ և կամօք Հօր, և գալոցդ ես դարձեալ, և զատացեալ ժողովուրդս վերստին նորոգել. քեզ, ասէ, առաւելապէս օրհնութիւն ի բարձունս երկնից, ուր եղեալ աստուածապէս՝ զմեզ ընդ քեզ վերածեր։ Օ այսոսիկ ազդեցութեամբ սարկաւագին եղանակեն ժողովուրդքն առ Քրիստոս սրբասացութիւն՝ որ ի միջ նոցա պատարագի փրկութի, կեանք և նորոգութիւն. իսկ քահանայն և ըստ այմ նոցին համաձայնի առ Հայր աղօթիւքն։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԱՂՕԹԻՑՆ

«Ամէն սուրբ սուրբ ես Աչմարտապէս և ամենասուրբ ..։ Ցեառնէս, զերեք սուրբն՝ զոր ժողովուրդքն Աղուց եռուն, քահանայն Հօր գնէ. իսկ Պօղոս ի գործս առաքելոցն՝ սուրբ Հոգւոյն, ոչ ինչ այսու յատուկ անձնաւորութեանն Աստուծոյ չփոթումն խորհեալ, այլ կրկնաբանութեամբն զևս հաստատութիւնն առացելոյ սրբութեանն արձանացուցեալ։

«Այս ամէն զի պանծացի բովանդակել բանիւ զքո ի մեզ զանբաւ բարեգործութեանդ՝ զեղմունս ..։ Աստէպս ցուցեալ է յառաջագոյն, զայն այժմ երկրորդէ՝ թէ ոչ եմք կարող եղականքս զարարչիդ ի վերայ մեր նախախնամութեան Ձանապարհս կատարեալապէս նկա-

1 Մի օրին · Բուէ-ուլ-Ղինդ։

առել. ով որ ասէ պանծայ զքո գործոյդ առաստապէս զեղումն ողորմութեանն գրել. սրդարև ոչ որ, բայ այնմ. "Ո՞ գիտայ զմիտս տեառն, կամ ո՞ եղև նմա խորհրդակից ,, ։

"Որ և անդէն իսկ ի նախնումն զանկեամն ընդ մեզ զանազան եղանակօք խնամեալ սիրեցեր ,, ։ Տես, թէ արդէս մերձաւոր հարազատութեամբ սկսաւ խորհրդակցել Աբրահամ քահանայս, անդուստ ի վերուստ զերախտեացն յիշատակաց սկիզբն արարեալ՝ որ առ մնորդիկ։ Օ անազան, ասէ, յեղանակօք զվիճակեալ արտաքսութեան և մեղայ զննութիւնս սիրեցեր. և թէ արբան են յեղանակքս, համառօտ բանիւն նըշանակէ.

"Արդարեւիք, օրինացն տուչութեամբ, քահանայութիւ, և ստուերակերպ երկնային մատուցմամբ ,, ։ Արդարեւս այժմ տիրապէս զՈվսէս և զիւրան խնամն՝ որք ընկալան զօրէնսն նեցուկ ամրութեան առաջնեալս բնութեան. սա յարոյց զքահանայութիւնն՝ օրինակ Մելքիսեդեկ քահանայութեան, և զզոհսն ողջակիզաց՝ ապացոյց Աբրահամ պատարագի, ըստ որում և առաքեալ ի Թուղթն որ առ Հերբայեցիսն կարգաւորապէս առնէ սոցին բաղդատութիւն. որ որ կամի վերահասու սոցին լինել, զառաքելականն մատենի ծանոյզ զգօրութիւն ։

"Իսկ ի վախձան աւուրցս այսոցիկ զովանդակ իսկ զպարտեացն մերոց խղեալ զդատաւճիռք ,, ։ Յոբիկ տուան յառաջագոյն, բայց տկարացան զոր արդարացուցանել, զի փակեաց օրէնքն զամենեսեան ընդ անիծիւք և ամենեքեան գտան նմա յանցաւորք. վասն այսորիկ ի վախձան յաւիտեանցն յանապատութիւն մեզայ Աբիսաս կամաք Հօր՝ իւրով պատարագաւն քաւիչ աշխարհի յայտնեցաւ, և ըստ որում ասէ, "Օ զովանդակ պարտեացն խղեալ զդատաւճիռք ,, ։ այսինքն զի արդարացոյց զմարդիկ, ոչ ի ձեռն գործոց, այլ ի ձեռն հաւատոց, ի մեզացն զոր ըստ նախահօրն յանցանաց պարտէաք, և զոր ըստ օրինացն, և յորմէ ըստ իւրաքանչիւր մեղսութեան ։

"Աւուր մեզ զՈրիդ քո միածին՝ պարտապան և պարտս, զինուեալ և օծեալ, գառն և երկնաւոր Հայ ,, ։

Արեծ և առատ մարդասիրութեանն՝ լինի յիշատակիչ առ Աստուած խորհրդոյս. զի տեսեալ զմեզ ասէ յայսքան վտանգս՝ ոչ անտես ապարեր բատ մեզացն, այլ եառաւ մեզ փրկիչ, ոչ զպատգամաւոր ոք և ոչ զհրեշտակ, այլ զԱրդիւդ քո զմինդ և զմիածինդ, և զառաքեացդ սիրելեաւդ զձշուառացեալքս. այն զի եղիւ պարտապան քեզ ընդ մեր, և պարտս փոխանակ մեր։ Եւ այս պատճառս. քանզի անմեղ գոլով Քրիստոսի, որպէս զպարտական անիծիցին Աստուծոյ դատապարտեցաւ՝ ի վերայ խաչին. վասն այսորիկ ասէ պարտապան, զի ինքն հատոյց զպարտս մահուն զոր մեք պարտէաքս. իսկ եղև պարտս, զի մեք ամենեքեան օր բատ օրէ զնա տանք նուէր հաշտութեան փոխանակ պարտուց մեղացդ մերոց. և նա յորժամ ասեմ, զխորհուրդ չարչարանացդ նորին ծանիր առաջի քո եղեալ նշանակօքս պատարագեալ։

«Օ՛հնութեան և օծեալ»։ Յսինքն զի զհնաւ պատգէս զպատարագ, և նուիրեաց զհնութեան իւր Աստուծոյ՝ օր որպէս զօծեալ և զքահանայ։

«Վառն, և երկնաւոր հայ»։ Վառն բատ մարմնոյն ամբծութեանէ, և հայ երկնային բատ անձնաւ միացելոյն ընդ նմին աստուածութենն. քանզի այսպէս երևեցաւ՝ ի մէջ մեր. մարմնոյն չարչարանօք որպէս գառն զմեզս մեր եբարձ, և զաստուածութեանն սէր որպէս զՀայ ետ մեզ կեբակաւր և միխիթարութիւն, բատ այնմ. «Ո՛ ուտէ՝ ի հացէս որ էջն՝ ի յերկնից, մի մեռցի»։, այսինքն՝ ի գիտութենէ սիրոյս զոր ես ձեզ բերի։

«Քահանայապետ և պատարագ»։ Օ՛ի պատարագ քահանայագործեաց վասն մեղաց մեր ոչ զօտար արիւն, այլ զիւրն անարատ և անապական։

«Ո՛ասն զի ինքդ է բաշխող, և նոյն ինքդ բաշխի՝ ի միջի մերում միշտ անճախապէս»։ Զետ ասելոյն քահանայապետ, ապա և բաշխիչ պատարագին զնոյն նշանակէ. և զայս որպէս իմանացուք. այսինքն զի ոչ թէ այնու բաւականացաւ տալ միայն Աստուած զմանն իւր նուէր հաշտութեան ապաքէն, և ոչ թէ միայն հանապատիս ծնողին զանձնաւ սիրոյն խորհուրդ առ փրկեալքս

1 Երկու օրին. Մ-ըդ-ու-ր-ն-ն։

յայտնեաց . այլ զինչ . և մեզ զնորին գիտութիւնն բաշխեաց յասելն , այսպիսի սէր ոչ ոք կալցի իբրև զիմն՝ որ զանձն իմ եդի ՚ի վերայ բարեկամաց իմոց , և Տովիւ քաջ զանձն իւր դնէ ՚ի վերայ ոչխարաց . Տեսանեմ թէ որպէս առատապէս բաշխէ զգիտութիւն սիրոյ իւրոյ ամենեցուն ։ Ա՝ան այսորիկ ասէ . " Ընդդէ բաշխող ,, . ինքն միածին քո Աբդիւդ բաշխեաց մեզ զայսքան աստուածական խորհրդոյ գիտութիւն ։ " Ո՛չ նոյն ինքդ բաշխէ ՚ի միջի մերում միշտ անծախապէս ,, ։ Ոչն ինքդ է ասէ այդքան առատութիւն խորհրդականն սիրոյդ և գթութեանդ , զոր ՚ի մարմնաւորութենէն իւրում ետ իշխանական մտաց մերոց Ճաշակել , միշտ բաշխի ՚ի մեզ յիւրաքանչիւր ժամանակս , և զմայլեալ յագեցուցանէ զամենայն կերօղս՝ ծախեալ և ոչ քնաւ . զի զինդդ իմանալի կերակրոյ ծախումն ։ Օ՜սա կերան առաքեալքն և անմահացան , վկայքն և յո՛ժարութեամբ մեռան , Ճգնաւորքն և աշխատեցան ։ Ո՛չ որ զայսքան բազմութիւնն կերակրեաց ՚ի սեղանոյ մարմնոյ և արեան իւրոյ , բաշխի և այսօր նոյն , և ոչ ծախի . քանզի ուտեմք զգալի նշանակօքս զիմանալի խորհուրդ սիրոյ մարմնացելոյն , և իմացականապէս՝ յորմէ միշտ ծառկելոյին քաղցնումք , և նա ՚ի յաւէտ կերակրելն մեզ անծախելի ՚ ։ Ուստի եթէ ո՞ է կերակուրն մեր , կամ Աստուծոյ Որդի պատարագն , արդ և՛ս կարգաւորապէս ուսանիմ ։

" Ա՝ան զի եղև Հաւատեաւ և առանց ցնորից մարդ , և անչփոթ միութեամբ մարմնացեալ ՚ի սուրբ և յաստուածածնին կուսէն Աստուած ,, ։ Օ՜այս ասէ քեզ պատարագեմք , Աստուած և Տայր , զոյն և մեք քաղցելաբար Ճաշակեմք , զի Աբդիւդ քո Հաւատոյապէս մեզ Հաւատար մարդ երևեցաւ , և անչփոթ խառնմամբ ընդ մարդկայինս բնութիւն միացաւ . արդ զայս առ քեզ նուէր , այս սիրոյս յիշատակաւ ընդ մեզ Հաշտեաց ։

" Ո՛անապարհորդեաց ընդ ամենայն կիրս մարդկային կենցաղոյս առանց մեղաց ,, ։ Տես պատարագ , տես կաշառս զօրաւոր , զարդար սասան ՚ի քաղցրու-

թիւն յեղաշրջող . զա , ասէ , Ձանապարհ Հոգեւոց ընդ կիրս մեր և ոչ մեզաւ , մեք կրեցաք զնոյն , և ի կրելն բնաւորապէս արտաքոյ բնութեանս Ձանապարհի՝ իսպէսութիւք Թշնամւոյն որոգայթեալ կորացաք . արդ Հայեաց տէր ի զորս Ձանապարհն և ի մեզն . զի թէ ոչ էր Թշնամին պատրեալ , անմեղ էաք բոլ բնութես կրից , որպէս և տէրդ մեր եղև . ապա ուրեմն պատիժ յանցանացն ոչ մեզ , այլ Թշնամւոյն փորձողի , ի ձեռն փորձանաւորիդ օգնականութեանն Համարեացի , և ի մեր վերայ տեառնդ անմեղութիւնն սիրեալ Հանգիցէ : Այս անձաւ խորհուրդ և արդար իրաւանց բացերևութիւն , զի անմեղիդ ասէ կրիւքն՝ մեր մեղանչական կիրքն ի յանցուցանողին գլուխն դարձի , լոյս այնմ . " Իչխան աշխարհիս այսորիկ դատապարտեալ է ... և զի դատաստան մեղաց մարդկան իմն անմեղ մաքՁեալ ի գլուխ նորին կուտեցաւ , վասն այսորիկ և դատաստանի պարտական միայն նա գտաւ ։

" Եւ յաշխարհակեցոյց և յաւիրէն փրկութեան մերոյ եկեալ կամաւ ի խաչն .. ։ Օ ինչ է խորհուրդ խաչին՝ որ զաշխարհս կեցոյց , զի ասէ , յաշխարհակեցոյցն եկն ի խաչն ։ Արիաւոս երևեցաւ մարմնով , Ձնապարհորդեաց նովաւ ընդ անմեղութեանն չաւիղ , և ինքն միայն երևեցաւ արդար . իսկ աշխարհս ամենայն ի խոտս դատապարտութեանն անիծիցն Ադամայ էին կոփծանեալ , և հնար փրկութեանն լոտ արդար իրաւանցն Աստուծոյ էր փակեալ . վասն այնորիկ նա ըզբազմապատիկ խնդաւորութիւնն արկեալ ի գործ՝ ետ զնոսիկ իւր ի խաչն փոխանակ ամենայն աշխարհի՝ Աստուծոյ Որդի ։ Այսպէս նա առեալ ի ձեռս զԱրդւոյն անմեղ մեռանելն , որպէս վասն միոյն Ադամայ զամենեսեան զանմեղսն լոտ նորա յանցանացն մահուամբ կործանեաց , այսպէս և վասն միոյ անմեղին Արիաւոսի մահուն՝ զամենեսեան զմեղանչականքս վերածեալ ի մահուանէ ի կեանս՝ կեցոյց ։ Յաղագս այսորիկ զխաչն վայելապէս աւիթ փրկութեան մերոյ կոչէ . զի ի նա մեռաւ Արիաւոս և փրկեաց , մահ կամաւորապէս և ոչ ի Հարկէ . զի " Իշխանութիւն ունիմ , ասէ , դնել զանձն իմ , և իշխանութիւն ունիմ միւսանգամ առնուլ զնա .. ։

«Լուեալ զԵսայի ի սուրբ, յաստուածայինն, յանմահ, յանապատ, յարարչագործ ի ձեռն՝ իւր, օրհնեաց, գոհացաւ, սրբեաց», Լաբեանն Պօղոս գրէ, «Մինայն արարածք Լուսոյ բարի են ի բարի արարչէն ստեղծեալ», իսկ եթէ բարի են, պակս և ենն ձգնաթոռապէս, զինչ նշանակէր տեառնն ըզհայն օրհնել յայնժամ, զոր այժմ ի խորհրդեանս Նօր պատմէ քահանայս։ Լուրարև էր բարի հայն, իսկ օրհնելով տեառնն՝ սպասաւորեաց ի նա զգօրութիւն աստուածայինն մարմնոյ իւրոյ, զի օրհնելով զոր՝ ընդոհ կատարման լսա այնմ իրի առանգեալ նման՝ առ որ կեր պացեալն է, որպէս ասէին ի քահանայութիւնն, և այլումին յառաջնորդութիւնն օրհնեալ տանէր ընդոհս. այսպէս և նա զհայն էառ յաստուածայինն ձեռն. սոակ հայ միայն կերակուր մարմնոյ, իսկ օրհնելովն՝ առանգեաց ի նա որպէս առ և արարիչ զՆոգին ընդոհոյ, առնել զգօրութիւն ներգործութեան կարողութեան մարմնոյ իւրոյ, առ ի կերակրելոյ ընդ զգալիսս և զիմանալի հոգիս քաղցրաձաշակ իւրն խորհրդոյ գիտութեամբ. իսկ գոհացաւ զՆօրէ որպէս զմի ոք ի միջոջ, և ի միում մեր ընդոհակալ եղեալ նման՝ վասն տալոյ զՄարգին իւր ի փրկութիւն մեզ կամօք իւրովք և գիտութեամբ, և ասացեալ իւրոցս զխորհրդոյ իւրոյ կատարումն ի փառս և ի գոհութիւն Նօրն նուիրել։

«Լսեկ», Ո՞ասացի միտն իւր ի վերոյ աշխարհի յայտ արարեալ, որպէս զի մի վարկցուք հարևանցի ինչ խորհուրդ, այլ որպէս ձգնացին եբեկ, այսպէս և զմարմինն իւր ասան ի պէտս մերն կենդանութեան. և ասա յետ այնորիկ եւս աշակերտացն, և ընդ նոսին ամենայն աշխարհի։

«Լա իւրոց սուրբ և բազմեալ աշակերտացն՝ ասելով. առէք կերայք ի սմանէ ամենեքեան, այս է մարմին իմ՝ որ վասն ձեր և բազմաց բաշխի ի քաւութիւն մեղաց», Պարտ է մեզ ըստ կարի զօրութեամբ սուրբ Նոգւոյն պարզել զխորհրդոյս զօրութիւնս. քանզի արդարև խորհուրդ է պատրաստակեալ ընդ բանիս քողով բաղումս. և նախ զայն քննել, եր վասն հուպ առ միմեանս

1 Մի օրէն. Ձեռ.

սրսոյ զայս Աբրահամ, և ուսոյց մեզ. յետ այնորիկ
թէ ոչխարս եղեւ առանձեալ նշանակեն մարմին իւր և
արիւն. երրորդ՝ թէ ոչխարս մեք կառավարմամբ խորհրդոյս
դոյս նմանիմք նմա, որպէս և հրամայեաց. և չորրորդ՝
թէ ոչխարս, և զինչ է մարմնոյ նորին և արեան էու-
թիւն և բնութիւն խորհրդոյն։ Այլ քանզի մեծաւոր
չարութեան նախանձուն սրեալ էր Սատանայ զնա, զի մի կարծեացեն աշակերտքն և աշխարհ՝ թէ
բուռ տարագիպ պատահմանն եղև այն նմա, առ զհայն
ի ձեռս և ետ նոցա յետ օրհնելոյն և գոհանալոյն,
յայտ արարեալ՝ թէ որպէս զայս հացս կամաք իմով
նուիրեցի Աստուծոյ գոհութիւն և բաշխեմ ձեզ, այսպէս և
զմարմին իմ կամաք իմով առաջի նմա պատարագ փոխա-
նակ աշխարհի թողութեան, և բաշխեմ՝ յետ ընդու-
նելոյ նորա և ողորմելոյն ձեզ ի ձեզ. զի որ ոք ձաշա-
կիւ զայն խորհրդոյն զօրութիւն հաւատալով և սիրով՝
սրբի ի մեղաց։ Այդ եղև այն մարմին իւր և արիւն՝
օրհնելութիւն. զի որպէս ինքն օրհնեաց զիւրն զմարմին
միութեամբ աստուածութեանն, այսպէս և ինքն օրհ-
նեաց զմարմինն իւրոյ նշանակ բուռ իւրում զօրութեն,
և ապա ետ զնա գոհութեամբն Աստուծոյ, որպէս զանձն
իւր ի վերայ խաչին, և յետ այնորիկ բաշխեաց աշակեր-
տացն, բուռ որում յետ մահուն փրկանաւք զնա էառ
ամենայն աշխարհ։ Այլ նման է և մեզ խորհրդոյ կա-
տարումն. քանզի զնեմք զհայն սուկ ի վերայ սպա-
սուցչին Աբրահամի սեղանոյն, որպէս ի վերայ ձեռաց
նորին, և օրհնեմք զնա այս խորհրդոցս պատմութեամբ
բուռ նմանութեան մարմնոյն Աբրահամի, և ապա յա-
ռաջ ածեալ գոհութեամբ նուիրեմք Աստուծոյ՝ որպէս
ի խաչն Աստուծոյ, բուռ ասելոյն. «Այդ արդ մեր աւր յա-
ռաջ բերեալ զայս խորհուրդ ... որովք գոհանամք զքէն
և փառաւորեմք, և յետ այնորիկ ի մեզ բաշխեալ
ձաշակեմք։ Այլ թէ զինչ է բնութիւն խորհրդոյ նո-
րին և արեան՝ ասէլի է։ Այդ թէ սուկ հայս և գինիս,
այլ զի հայս քարոզէ մեզ և ունի յինքեան հաստա-
տեալ, թէ որպէս ես Աստուածս բեկանիմ, այսպէս և
Աբրահամ Աստուածապէս վասն ձեր մեռաւ, և մեք ի

1 Ա՛ի տրն. Ջմ.-Քշ. 2 երկու տրն. Ան.

Հայերէն՝ ի նա նկատեմք ընդ ինքեան զԱբիատառի նեղ մարդութեանն անօրէնութիւն մուտս հայեցողութիւն, որ միացեալ է հզօրապէս՝ ընդ հայկին, բատ որում և ասացն. «Առէք կերայք՝ ի սմանէ, այս է մարմին իմ, որ վասն ձեր և բազմաց բաշխի»։ Արդ զի՞ խնայեցուք հրամանաւն ուտել մեզ, զի ասէ, «Առէք կերայք». եթէ սուկ հաց լցուցիչ մարմնոյս, ոչ դիցուք զբանական հոգւոյս մաքրութիւն՝ որ բանիւ և ոչ հացիւ կերակրի. և զիա՞րդ նա որ զամենայն ընդրկս հոգւոց և ոչ մարմնոց կատարեաց, այժմ զգալի կերակրովս՝ ի զգալի մարմնոյս միայն պարապեաց սրբութիւն. ապա թէ և հոգւոյ սա տուաւ քաւութիւն, զիա՞րդ առանց բանին որով կերակրի նա. ուրեմն և ոչ բնաւ. վասն այսր և մեզ բանաւորապէս պարտ է՝ ի խորհուրդս յառել, այսինքն՝ զի ասաց, առէք կերայք ընդ հացիդ և զգիտութիւն իմոյ մարմնին և արիւնն լինելոյս, և՝ ի վերայ երկրի հաւասար ձեզ մարդ երևելոյս, զի այն Ճաշակ է որ քաղցրացուցանէ զբիմս ձերոց մուտս՝ ի յուտելն, նա և զօրացուցեալ պարարէ զնիւթական ձեր հոգի, որպէս և հաց զմարմին. առէք կերայք մուտք միշտ զայս կերակուր, զի Աստուած մարդ եղև և վասն ձեր մեռաւ, Եթէ զայս արար, զինչ է զոր ոչ շնորհեսցէ ձեզ. վասն այսորիկ ասէր. «Հացն զոր ես տաց, մարմին իմ է, զոր ես տաց վասն կենաց աշխարհի»։ այսինքն զոր ես դնեմ՝ ի մահ վասն յաշխարհի յուսոյ և մարդասիրութեան իմոյ գիտութեան. զայս հաց ասաց և՝ ի յերկնից իջեալ՝ առ՝ ի կեանս տալ աշխարհի, «Որ վասն ձեր, ասէ, բաշխի՝ ի քաւութիւն և՝ ի թողութիւն մեղաց»։ Այլ որպէս բաշխեցաւ վասն մեր. կամ զինչ էր որ բաշխեցաւ, Պէսպէս չարչարանքն, այն էր որ բաշխեցաւ մեզ կերակուր թողութեան, ապստամն, Թուքն, եղէգն, նախատանքն, խաչն, և որ բատ նմին։ Օ այս ամենայն մարդասիրութեան ցոյցս՝ ի մարմնոյ իւրոյ բաշխեաց աշխարհի. որպէս զի մեք կերկրիցուք զնոսին մուտս բերանով, և քաղցրացեալ՝ ի յիշատակս նորին՝ նուիրեսցուք Աստուծոյ Հօր, և ընկալցուք այնու յուսով զթողութիւն մեղաց, որ և կարող

1 Ա. յայտ. Ջ. ուրեք։ 2 Մի որին. կերէք։

է զՆաշակողն իւր հաւատարմացուցանել առ ՚ի սոյն ընդհ , Ո՛պա թէ որ առանց Նաշակման ՚ի բացուստ ՚ի սոյն յառի խորհուրդս , յիմարութիւն նմին երևի . վասն այսորիկ պատարագողքն նախ ուտել զսա կարօտին , և ապա վասն այլոց նուէր հաշտութեանն ընծայել , զի մի լիցի ասել , խիստ է բանդ , ո՞ կարէ լսել զմա . այլ զի ծանիցեն խոհականապէս ՚ , թէ բանք և խորհուրդք Ո՛րիստոսի հոգի են և կեանք ձեռնտուութիւնք մարմնական նշանակաց ՚ , և հոգին կենդանարար զհոգիս կերակրեալ կենդանացուցանէ ՚ի մեղացն մահուանէ , և ապա նովաւ և ընդ նմին զմարմինն , Ո՛պա թէ հոգւով զսա ոչ ուտեմք , և զօրութեամբ խորհրդոյս զհոգիս ոչ պարարեմք , ասաց տէրն՝ թէ մարմնական նշանակք առանց հոգւոյն ինչ ոչ օգնէ . այսպէս իմանամք և մի պատարագ զսա ՚ի սկզբանէ մինչև ցկատարած ըստ առաքելոյ , զի զմի բանաւոր խորհուրդ նորա մահուն ամենեքեան նուիրեմք , և միովն կերակրով հոգիք մեր սրբին , Ո՛վ է որ քաղցնու սիրոյն Ո՛ստուծոյ , և ոչ վազվազակի ՚ի բաշխել կերակրոյն յագենայ , ծասկեալ զքաջն և զաղքատն . ո՛վ է որ ծարաւի Թողութեան մեղաց , և ոչ պռունկին խորհրդով , և աւազակին ողորմութեամբ , և խաչահանուացն ներոզութեամբ սրբի . ո՛վ է որ փափագ հանդերձեալ կենացն , և ոչ ՚ի խարխին Ո՛րիստոս յեցեալ հաստատի , Ո այսքանս [3] կերակուրս քաւութեան բաշխեաց նա մեզ ՚ի մարմնոյն իւրոյ՝ զոր տամք Ո՛ստուծոյ և հաշտիմք , ուտեմք և մեք և միսիթարիմք ։

«՚Նոյնպէս և զբաժակն առեալ՝ օրհնեաց , գոհացաւ , էարբ , ետ իւրոց ընտրեալ սուրբ և բազմաւ աշակերտացն ասելով . առէք արբէք ՚ի սմանէ ամենեքեան , այս է արիւն իմ նորոյ ուխտի՝ որ յաղագս ձեր հեղու ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց .. ։ Ո օրհնելն և զգոհանալն նոյնպէս և աստ է առնել , որպէս ասացաւն . իսկ զի արբ , յայտ արարեալ՝ թէ այսպէս ախորժելով ընդունիմ յաղագս ձեր զմահ . արդ առէք արբէք և դուք յիմն մահուանէ , զի և ընդ-

1 Մի տրին . Խորհրդաւորապէս ։ 3 Երկու տրին . Զայսոսիկ ։
2 Երկու տրին . Նշանօք ։

իս կենդանասջիք, ըստ որում ասաց առ որդին Օ եբե-
դեայ, և առաքեալ գրէ. "Լեր մեռաբ ընդ նմին, ընդ
նմին և կենդանանաս.,, ։ Այլ իւր արիւն կոչէ դար-
ձեալ զայն, զհեղումն արեանն կամեցաւ նշանակօքն մար-
մնական անապօտ արձանացուցանել՝ի սիրտս՝ մեր,
զի միշտ բացեալ զբերանս հոգւոց՝ զնոյն տացուք պատ-
քեալ սրտից մերոց յարբուման. մի երբէք՝ի յուսահա-
տութեան խորշակին չորանալ, այլ յօդով արեան նորա
միշտ զբոյս առողանելով ծաղկեցուցանել, այսինքն յու-
սովն և սիրովն. զոր օրինակ և՝ի միմեանց բարեգոր-
ծութենէ ձաշակեալ՝ այնու գոանեմք առ իրեարս հա-
մարձակութիւն. ապա պէտք և առաւել ընկալաք
առ Այտուած առատութիւն սիրոյ, զարիւն նորա՝ի
պետս մերն փրկութեան՝ բերանով մտացս ընկալեալ,
արբեալ և զմայլեալ. յորմէ ձաշակողն աղաղակէր,
ոչ ոք կարէ մեկնել՝ի սիրոյն Քրիստոսի՝ յաստեացս
կամ՝ի հանդերձելոցն։ Ասէ զի ասէ, նոր ուխտ,
քանզի գոյր և հին ուխտ Այտուծոյ ընդ մարդիկ, այս-
ինքն կտակարանացն որ սրբեցաւ և հաստատեցաւ՝ի
Սինայէ արեամբ երինջոյն, զոր սրսկեալ գամենե-
քումբք՝ ասէր. "Այս է արիւն կտակին՝ զոր ետ ձեզ
Այտուած.,. և այս ուխտիս մերոց անջինջ խաղաղու-
թիւնն ընդ Այտուած և ընդ Արարչէ ըստ մարմնաւոր
ժառանգութեանն նախահինառութեան, և յերկիրն
աճեալ պարգևաց ուխտիս հաստատութեամբ, որպէս
և խոստացաւ։ Այլ քանզի մարմնաւոր նոքա ժառան-
գութեան ակն ունէին, մարմնաւոր արեամբ և գաշինս
կռեցին. իսկ զմեզ զի Քրիստոս՝ի մարմնաւոր աչխար-
հէս յերկինս հրաւիրեաց, պարտ էր զի երկնայինն լի-
նի մեզ ուխտ և դաշինք առհաւատչէի. վասն այսորիկ
ասէ. "Այս է արիւն իմ նորոյ ուխտի.,։ Իմ երկնա-
ւորիս որ յերկնից եկի, և անդր երթալոց եմ, իմն
արիւն առ ձեզ ուխտ և գրաւական յուսոյ հանդերձեալն
կենաց՝ զոր ձեր ասէ վասն հեղումն, և զաղտեղեալսդ՝ի
յանցանացն անմեղ՝ օձառաւս մաքրեմ։ Այլ գաշնա-
կից արար զմեզ այսու իւր՝ միշտ յուխտ արեանն հայել
մեզ և նորա, և ոչ մեզ զինքն մոռանալ և զերկնից ժա-

1 Երկու օրին. ի գլ.։ 2 Երկու օրին. հ-գլ։

ռանգութիւնն , և ոչ նորա զմեզ և զմեզացն մերոց
Թողութիւն . վասն այսորիկ և ասաց . " Օ այս արա-
րեք առ իմոյ յիշատակի ,, ։ Ա յսինքն ՝ի հացս հայե-
լով՝ զմարմնանալոյս երախտիքն յիշեցէք , և ՝ի գինիս՝
զարեամբ խաչի վասն ձեր մեռանելն ։

" Ա՛ զսոյն միշտ իւր յիշատակ առնել պատուիրան
աւանդեաց մեզ բարերար Աղիդ քո միածին ,, ։ Ը
Ա՛ստուած Հայր զայս ասէ քահանայս , Թէ ոչ յան-
ձանց շարժեցաք ՝ի գործառնութիւնս , այլ ՝ի դմանէ ըն-
կալաք հրաման զհաց և զգինիս դնել առաջի , և ըզ-
մարմնոյ և արեան խորհուրդ օր ըստ օրէ յիշատակաւ ՝ի
միտս մեր նորոգել . զի ասաց , զայս առեալ ՝ի ձեռս՝ զիս
յիշատակեցէք և զանօրէնութիւն իմ պատմեցէք ,
որ մարմնովս ՝ խնամ իբրև հացիւ կերակրեցի զտա-
րակուսեալ քաղց ոգւոց ձերոց , և արեամբս հեղմամբ
իբր գինւով զուարձացուցի զսիրտս ձեր քաւութիւն մե-
ղաց , և հանդերձեալ կենացն յուսով ։ Ա՛արձեալ ըզ-
սոյն պատուիրեաց մեզ իւր յիշատակ առնել բարերար
Աղիդ քո , առ քեզ Հայր և քո առաջի . ոյր աղաչա-
որպէս զի ձնհեղուցեալ խանդաղատեցուսցուք զաստուա-
ծային կամացդ սաստն ՝ի զիջումն և յողորմութիւն .
որպէս . ըստ այնմ՝ զոր ասաց Ա՛ստուած մարգարէին .
" Ա՛ երակացու եղէց քաղաքիդ այդմիկ , (ոչ ըստ ձեր
արժանեաց ,) այլ վասն իմ և վասն Դաւթի ծառայի
իմոյ ,, ։ Ա՛ազում անգամ Ա՛քրահամու և Յահա-
կայ սիրոյն յիշատակ՝ Ա՛ստուած զարժան պատուհան
՝ի նոցանէ անցուցանէր . արդ չափէ ՝ի Դաւթէ մինչև
՝ի Ա՛քրիստոս զառաւելութիւնն , և ՝ի միածին Աղւոյն
սիրոյն մինչև Ա՛քրահամուն . վասն այսր զայս իւր
յիշատակ առնել առաջի Ա՛ստուծոյ Հօր աւանդեաց
Ա՛քրիստոս , որպէս զի նորա տալով զԱղւոյն առ մեզ
սիրոյ պատմութիւն՝ հաւատասցուք սրտիւ , " Օ ի թէ
յիւր Աղիդն ոչ խնայեաց , այլ վասն մեր ամենեցուն
մատնեաց զնա , զիարդ ոչ նոսա զամենայն ընդհան-
ցէ մեզ ,, ։ Ա՛յս և Ա՛քրիստոս Ա՛ստուծոյ զօրութիւնն
և խնամատութիւնն՝ գիտելով զանձնաւ խորս Հօր
իւրոյ , ընդարձակութեամբ գՅոյն որ առ մարդիկ՝

1 Երկու օրին . Մարճանալովն ։

յայտնեաց զնոյնն ոտքս . այսինքն Թէ իմ մահուս յիշատակաւն՝ որպէս պարտական բռնեցիք ձեզ զՔրիստոս իմ, և ծանուցէք նմա սիրով, զի Թէ զԱրդիւդ քո՝ի պէտս մեր փրկութեան որպէս զՀայս զայս և զգինիս Ձմմարիտ մարմին և արիւն ապարէր, Հարկաւոր և իրաւացի է այգպիսի մեծ սիրոյդ և վասն սորա՝ զգԹելն մեզ՝ի պատուիրանաց քոց սրբոց՝ներողութեամբ Թողուլ, և զայս մեր ուսեալ՝ այսպիսի յուսով և Հաւատով յիշեմք զԱրդին բարեբար առաջի Քրիստոսի ։

" Եւ իջեալ՝ի ստորին վայրս մահու մարմնովն զոր՝ի մերմէս ընկալաւ յաղգակցութենէ , և զնիգս դժոխոյն ազատեալ հզօրեղապէս , զքեզ միայն ծանոյց մեզ Ձմարտապէս Քրիստոս՝ուստուած կենդանեաց և մեռելոց ,, ։ Քսու Հաստատէ՝ի միտս մեր բանս զառաքելականն գրութիւն՝ի Պետրոսէ զասացեալն , " Որոյն որ՝ի բանդին էին , յետ չարչարանացն Քրիստոս՝ի մահուն երթեալ քարոզեաց ,, . զի ասէ , զքեզ ծանոյց և՝ի դժոխսն Քրիստոս՝ուստուած մեռելոցն՝ որպէս և կենդանեացն՝ի յերկրիս . ուսանիմք զայս և՝ի նոյն ինքն՝ի տեառնէն խորհրդաբար ասացեալ . " Այժ իշխան աշխարհիս այսորիկ , և յիս ինչ ոչ գտանէ Քրիստոս ,, . որպէս Թէ ոչ վասն այնորիկ մեռանիմ իբր զգամայ պարտական . քանզի ես ոչ մեղայ , այլ մեռանիմ որպէս պատուէր ետ ինձ Հայր , այսինքն փոխանակ ամենայն աշխարհի փրկութեան . զոր Թէպէտ և յայնժամ ոչ ծանեան , սակայն ուսանիմք և յիշողութեամբ Հոգւոյն յետոյ Հաստատեցին ։ Եւ սոն այսորիկ և գրեաց Պետրոս . որովք ուսանիմք՝ Հարցն մերոց Հետևելով , Թէ յետ կամաւոր մահուն՝ Քրիստոս ընդ առաջ նորա Քրիստոս ընդ Հոգին . " Հայր , ասէ , ՚ի ձեռս քո աւանդեմ զՀոգի իմ ,, . և եղեալ մարմնական Հոգին անձնաւոր միութեամբ աստուածութեանն , ըստ Հրամանին առ Հայրն ընծայեաց . իսկ իշխան օդոյս այսորիկ եկն ընդ առաջ նորա որպէս և ամենայն Հոգւոց , և զի անՀաս էր՝ի նմանէ աստուածութեանն միութենն , պահանջէր՝ի մարմնական Հոգւոյն պարտս , և քննեալ որոնէր , և գտանէր և ոչ ինչ , ըստ նախ Հրամանին՝ , " Այժ իշխան աշխարհ

1 Մի օրին . Նոյնպէս :

հիս այսորիկ, և յիս ինչ ոչ գտանիմ ... յայնժամ ծա-
նեաւ չարն՝ թէ անմեղն ըստ սիրոյ և ըստ պատուի-
րանի Աստուծոյն արար զմեռանելն, և ոչ եթէ ըստ պար-
տեաց. իսկ Տէրն որ վայելեաց յԱրդուոյն սէրն, և՝ ի
մահու խաչի հնազանդութիւնն, ետ նմա իշխանութիւն
յերկինս և յերկրի փոխանակ այնորիկ, այսինքն նմա
ըստ մարմնոյ՝ որ միշտ ունէր ըստ աստուածութեանն,
Յաւ զի արդար լիցի Յստուծոյ դատաստանն, և մար-
դոյ արդարութեամբ՝ մարդկան յանցանացն թողու-
թիւն, ուստի և առեալ Քրիստոս զիշխանութիւնն՝
յետ ամաչեցուցանելոյն զսատանայ, էջ՝ ի տորին վայրս
մահու, առ կապեալ հոգիս արդարոցն, և քարոզեալ
ծանոյց ամենեցուն զաստուածութիւնն, և զնորհեաց
Աստուած, և աղատեալ զամենեսեան յիշխանութենէ սա-
տանայի՝ աղարտեաց զնիպս դժոխոյն հզօրն զապիս, և
եթող ձեալ՝ ի ներքոյ խնամոյն Յստուծոյ՝ միայնէ յար-
դարն դատաստան. իսկ զարդարան՝ որ ըստ պարտեացն
Յդամայ, և ոչ ըստ ինքեանց էին ըմբռնեալ, ընդ իւր
վերացեաց՝ առելով, ծն արիք գնասցուք աստի, այսինքն
առ Աստուած. վասն որոյ և ասէ. "Օ քեզ ծանոյց Յս-
տուած կենդանեաց և մեռելոց ...", Օ՛ի որպէս յաշ-
խարհի զամենայն չնորհս գործոց առ Աստուած վերացաւ
յաղագս համակամութեանն, այսպէս և առ մեռեալսն
եցոյց՝ ի դժոխս զնոյն տնօրինութիւնն Աստուծոյ հնազան-
դութիւն՝ մարդկան և դիւաց, ըստ ասացելումն. "Յաւ
զի ծանիցէ աշխարհ, եթէ սիրեմ զԱստուած, և որպէս
ետ ինձ իշխանութիւն և պատուէր այնպէս առնեմ ...",
Օայս ամենայն ընդ զգալի պատարագին նշանակաց՝
որ՝ ի վերայ զգալի սեղանոյն եդ ձեռօքն առաջի Յս-
տուծոյ, քահանայն բանաւոր և իմանալի պատարագ եդ
՝ի վերայ իմանալի սեղանոյն առաջի Յստուծոյ Աստուծոյ՝
մտացն տեսիմամբ, և ըղձիւ և փափագմանն ձեռօք, և
մտացն վճիռ և մաքուր հայեցողութեամբ՝ որ տեսանէ
զիւրն լոյս, որպէս պարտ է տեսանել աւետարանին հաս-
տատութեամբ, և ներքին իւր մարդոյն վկայութեամբ:

1 Սովին ուշադրացուցանէ ըզ-
կարծիս ոմանց՝ ի սխմարաց, որք
համարէին այցելութիւն ինչ լի-
նել և մեզաւորաց՝ ի դժոխս:
Իսկ զայն ամենայն իմանալի է յա-
ղագս բոլորական հաստատման ըստ
այժմու պայծառ և անելքնայելի
վարդապետութեան սուրբ եկե-
ղեցւոյ, որ երբեմն մինչեն էր առ
նախնիսն հարս ոմանս:

Ա՛ր զհատատան պրպէս պահանջէ բանս . այնպէս հատատառն՝ իբր եթէ զգալի աչօք տեսանելիք վերատակիցն , և զգալի պատուարագաւ զնա եթարանձելիք . զի այնպէս իմանալիս միտք յատեսցի Ա՛ստուած՝ որպէս աչօք զգալի ՚ի եթագաւոր հանդարձակութեամբ . արդ քանզի ցուցաք ՚ի սկզբան բանիս մարմնական օրինակաւ զհատատառութիւն իմանալի խորհրդոյս ըստ կարի մեր՝ եթէ զԱրդին և զերախտիս նորա ՚ի պէտս փրկութեան մերս առաջի Հօրն ածելիք , և զմեր վիշտս նուաստ առնել եթարանձելիք , զայս մինչև ցայս կէտ բանի իմանալականապէս կատարեաց քահանայս Մ՛ի առեալ ՚ի ժողովրդենէն զմարմնոյն Ա՛րիտասի նշանակս , և զխորհուրդ նորին հատատոյն , որպէս հանդարձակ ծառայ և անամօթ , գործով հրեշտակ եղև ՚ի ազգանէ առն Ա՛ծ , և եղեալ առաջի գնաւէրն՝ պատմեաց զպատգամանաւորութիւնն ՚ի գիմաց ամենեցուն կարգաւորապէս , այսինքն զպէսպէս վերոյ եղեալ երախտիցդ՝ զորս ՚ի ձեռս Ա՛րդոյն գտին ՚ի նմանել մարդիկ ։ Ա՛յս յորժամ զայս ամենայն ասաց , և բարձրացոյց զնորհնեալ Ա՛ստուծոյ և զսէրն , մանաւանդ և պարտականն ողորմելոյ գնա դառնալոյ , բուռն հարկանէ ձեռամբն զնշանակաց խորհրդոյն , և մնացն իմացականութեամբ , որ է յերկինսն առաջի Ա՛ստուծոյ զԱրիտասէ և գնորին խորհրդոյն . և զայն որ մինչև ցայժմ առաջի էր եղեալ , և խօսէր հանդարձակապէս աւետարանին , այժմ ՚ի ձեռս Հօրն գնէ առնելով . արդ յետ ծանուցանելոյ գխորհուրդ մեր պատարագ առաջի քո գալոյս , եթէ ըստ որմէ՛ հրամանի , կամ այլ ազագաւ եղև , ժամ է զի գնայիս զոր առաջի եղաք և խօսեցաք՝ զի ՚ի ձեռս քո դիցաք ։ Ա՛նգղի որպէս գիտացեալ զորքանութիւն մեծութեան սորա՝ եթէ ոչ առեալ ՚ի ձեռս չօշափեսցես , և քննեսցես . վասն այսորիկ ըստ հրամանի պատուիրանաց ՝ առաքեալ մեր ՚ի ձեռն քո յառաջ բերեմք և գնեմք զգա և գխորհուրդս գորա . առ ՚ի քեզ և որս նեա , և տես ՚ի քո միաժինդ , ՚ի քո սիրելիդ , ՚ի քո ծոցածինդ վասն մեր զպէսպէս ապիսդ չարչարանացն . նայեա ՚ի գեմն գորա , և ՚ի նայն տես և լինդ իմ վասն

1 Երկու սրին . Պ–ոչ–Լ–ն–Ի ։

իմ զաղտակին և զԹուքն . յառեալ՝ ի ձեռան և յոտն , և տես զխոցուածս բևեռացն ՝ի պէտս ներելոյ քո իմ ՝ի ծառն ձեռացս ձգման : Առնեա զկողն , և տես անդր բեբանացեալ զխոցուածս սիրոյն յանապարհ Թըշնամանոյն ընկալեալ . զկր զձեռս ՝ի վերայ քոյ սիրեցեալ Աղուցդ գլխոյ , զոր ետու այժմ ՝ի քեզ , և տես ՝ի դմա զիշանութիւն պատկին նախատինս՝ զոր վասն իմ այսպանեցաւ անպարտականն : Ահ զգուշ լիր քո զգա բան անձառդ սիրոյ , և ՝ի Թիկունսն յառիս տէր , տես անձնագոյ զոզորածեծն առնելոյ զառն խոցուածոն . զայն ամենայն կրեաց նա անմեռուն խոնարհութեամբ , այսքան անմէղ այսպանեցաւ և ոչ ինչ բարբառեցաւ , որպէս զի իմում ամբարտաւանութեանն դու Հայր ներեսցես . այսքան չարչարեցաւ և ոչ գԺգիմեցաւ , զի զիմ հեշտութիւն մեզայն Թողցես . վասն այսորիկ և ետու ՝ի ձեռս քո այժմ, զի զիրկեալ գովաս ժողովուրդս ընկալցիս : Ահ եղբարցս անենչումն և բարեկամացս գեղեցումն՝ այսքան փղձկի ՝ի գորս ողորմելիդ որ վասն իմ կեբպարանք , զու Աստուած գԹոյ աղբեր օրհնան Հոգւդ ներեցեալ , և ՝ի գորս կիրան վասն մարդկան Թշուառացեալ մեղաց ժողովրդեանս՝ լիցիս ողորմած : Աչքան և այսպիսի բեբանով մռայն ՝ի տեառնել Հոգւոյ աչացն՝ ընդ տալ ՝ի ձեռս Աստուծոյ ըզնուէր խորհրդոյս , բարբառի Հրեշտակն և պատարագիչ քահանայն առեալ .

«Ահ արդ մեք տէր քոյ այսմ Հրամանատարութեան յառաջ բերեալ զայս խորհուրդ փրկական մարմնոյ և արեան միածնի քո ,, : Օ այն յայտ առնէ Թէ ինքն որ գիտէր զնորս կանոյ քոյ , որպէս սիրեցեալ ծառայիդ զայս յայտնեաց , և մեք յառաջ բերեալ զսոյն տուէք ՝ի ձեռս քո . զո . զխորհուրդն փրկական ՝ մարմնոյ և արեան միածնի քո . և խորհուրդն զինչ է . կիրպէ չարչարանաց նորա զոր տասցաք և Հանդերձեալ եմք ուսանել : Ահ սա խորհուրդ այր ազգաս կոչի . այս ինքն զի բան պարզ և տակ տեսութեան մարդկան և դիւաց կրէր զնոյն իրրև զմի որ ՝ի մարդկանէ չարչարանաց ակամայ , և ինքն ծածուկ և խորհրդական Թաք-

1 Աի օրն · Փրկչական ,

նու Թեամբ զմի մի ՚ի նոցանէ գնեը ՚ի ձեռս խորհրդա-
կից Հօր փոխանակ պատուոյն Քրիստոսի և ծննդոց
նորա որովք և փրկեցաք իսկ և զօրացաք և կցորդեցաք
յիմնատ խորհրդոյն Աստուծոյ գիտութեամբ ։ Այլ
որք ոչ գիտացին Հրեայք և հեթանոսք ՚ի Քրիստոս խա-
չին իմաստութիւն և նշանս հայցեն , և յիմարին ՚ի
քննելն՝ ոչ տեղեկացեալ . իսկ առ որ նորա յիմարին ,
մեք խորհրդակից և անհատ յանհատութիւն զփրկու-
թիւն մեր ընդգրկեմք . որպէս . զի յիշեմք առաջի Հօր ,
և սովաւ միշտ հաշտիմք ընդ նմա . ըստ որում ասէ .

“ Յիշեմք զդորա որ վասն մեր զփրկագործ զաշ-
շարանն , զկենդանատու զխաչելութիւնն , զերկր-
րեայ թաղումն , զերանելի յարութիւնն , զաստուա-
ծապէս համբարձումնն ,, ։ Այս ամենայն կիրքս Քրիստ
ոչ թէ միայն յայնժամ , այլ մինչև ցկատարած աշխար-
հի յիշատակեալ՝ զփրկութիւն մարդկան տնօրինէ . զի
թէ յայնժամ միայն էր , և առ այն ժամանակի մար-
դիկ , անիբաւութեան տայ այս կարծիք արդար իրա-
ւանցն Աստուծոյ . և ուր դիցուք զառաքելոյ ասելն ,
“ Քանզի Քրիստոս երիկ և այսօր , նոյն և յաւի-
տեանս ,, . ուրեմն միշտ է փրկութիւնս ՚ի Քրիստոսէ ,
Որպէս . ՚ի ձեռն հաւատոյն , որպէս զի մի ընդ կա-
տեսցուք ՚ի մեզանէնէն յուսահատութեամբ , այլ զգ-
փրկագործ միջնորդիս բուռն հարցուք տկարացեալք՝
և առողջանալոյ . և բուռն հարկանելն է այս , Աստու-
ծոյ Հօր տալ զնուէր հաշտութեան փրկագործն չար-
չարանաւք , որպէս ասէ այժմ . “ Յիշեմք զդորա որ վասն
մեր զփրկագործ զաշչարանն ,, ։ Ա յորժամ յի-
շեմք , զինչ . ամենայն իրաւք մերում նեղութեան լինի ըստ
հաւատոյն . զի վասն այնորիկ նա անմեղ չարչարեալ ,
որպէս զի մեք նովաւ՝ որ մեղուցեալքս եմք , լինչաւք ար-
դարացեալ , “ Ո կենդանատու զխաչելութիւնն ,, ։
Վասնզի մահ նորա մարմնով ՚ի խաչին՝ զկեանս հոգւոց
երեր հոգւով մեռելոցս և բերէ միշտ . քանզի այս
վիճակ լինիցի , եթէ առաջի Աստուծոյ խորհուրդ չնոր
հաց իւրոց հնանայ կամ աղօտանայ . այլ թէ կարծեմք
աղօտ մեր մնացս հնութեամբ սխտիւն վարակելոց .
ապա թէ մաքրիմք յայնցանէ , ոչ թէ միայն Աստու-
ծոյ կարծեմք զայս խորհուրդ յայտնի , այլ և մեք զօ-

բանամբ երևելապէս հաւատովք զնոյն Աստուածէ։ «Ով ընքօրեայ Թագուհին, զերանելի յարութիւնն ... ։ Ի Թագմանս Հատ և զյարութեանն, ոչ եթէ վայրապար առնու՝ ի մէջ, այլ որպէս զի ցուցցէ՝ թէ չէր դա այսմ ամենայնի կարօտ. զի զինչ էր Թագելին նման հարկաւոր՝ որ յատկանութենէ ոչ ըմբռնի բան մեզայ. ապա հայն կրեաց՝ որպէս ամենեցուն վասն մեր. նոյնպէս և զայս՝ առաջի քո և քեզ նուէր Հաշտութեան տուեալ զանօրէնութեանն խոնարհութիւն։

«Ով աստուածապէս Համբարձումն, զնաւելն ընդ աջմէ քո, Հայր, զահաւոր և զմիանգամ գալուստն խոստովանիմք և օրհնեմք ...։ Յի որ միոյն ցայժմ աստացաւ՝ անօրինաբար խոնարհութիւնն էր, զոր կրեաց Քրիստոս ըստ պարտեայ մերոց և ընդ ամենեցուն. իսկ յարութիւնն և Համբարձումն, ընդ աջմէ Հօր նստուելն և գալուն, շնորհն և փառքն է՝ զոր փոխանակ այնորիկ ի լիութիւն մարմին ընկալաւ մեզ. այլ որպէս զչարչարանսն ոչ վասն իւր, այլ վասն մեր ընկալաւ, այսպէս և զփառսն ոչ որպէս կարօտ, այլ մեզ ի նոյնն գրաւական և առհաւատչեայ երևեցաւ. ապա թէ ոչ՝ նա որ յառաջ քան զարուսեակ ծնեալ՝ էր ընդ աջմէ, որպէս նորոգապէս նստաւ՝ եթէ ոչ առ ի հաստատութիւն իմն պատուոյ առաւելութեանն։ Ասաւ և զայսոսիկ զնորն պատարագէ Յարուցեալ Հօր տալ քահանային, թէ յանդուգնական պատիւ Հաստատեաց զայս մարդկան Հրդէպ քո և առ մեր։

«Ով քոյս ի քոյոցս քեզ մատուցանեմք, ըստ ամենայնի և յատկագս ամենեցուն ...։ Յորժամ ետ ի ձեռս զխորհուրդն, և առ ի նմանէ յինքն զանառարս պատարագ Յարուցեալն իւր և Թագաւոր, ապա յաւելու թէ նուէրդ զոր իբրև զմեր մարմնակից և ի մէնջ մարդ եառս առեալոյդ, քո է անձնատարար ծնունդ և Հրդէպ. և մեք որ ծառայք եմք քո, թէպէտ իբրև զմեր և ի մէնջ մատուցանեմք, ոչ իբրև ի մէնջ զդա ունիմք, այլ Յարուցեալ Հաւատար քեզ զաւանեմք, որ անօրինեաց զայս ամենայն՝ ոչ վայրապար, այլ ըստ մեր ամենայնի կարօտութեան, և յատկագս ամենեցուն մեր

1 Մի գիր. Կոտրիեց։

փրկութեան . և մեք այժմ որպէս զբո Աբդի և ի քէն մեզ առեալ , զարձեալ ի մէնջ տամք զդա քեզ նուէր փոխանակ ամենայնի , և ընծայ հաշտութեան փոխանակ ամենայն աշխարհի ի ձեռս Տօրդ առանդեալ ։

ԸՆԴԻՍՐ ԱՅԺՄ ԱՊԱՍ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԳՈՀԱՑԱՍՆԵՆ ՈՐՔ ՆԱԽ ԱՐԺԱՆ ՋՆՈՑՆ ԴԱՏԵՑԱՆ

Յորժամ հրեշտակ նոցա քահանային գնուէր ընծայիցն զոր ետուն ի ձեռս նորա համաբուն հաւատովին և երևելի նշանակաբն ՝ մատոյց առաջի Աստուծոյ Տօր , և գոհացաւ ի դիմաց ամենեցուն պէսպէս և զանազան շնորհակալութեամբ . և յետ այնորիկ ետ ի ձեռս Աստուծոյ գնոյն հաւատոցն և մատոյն այնօր , և նա առեալ ընդդրկեաց սիրական ողջունիւ զԱբդին ծոցածին մարդկայինս էութեամբ , ի վերայ որոյ հաստատեաց հրեշտակս եթէ ետու զդա ի քեզ ոչ վայրապար , այլ ըստ ամենայնի և փոխանակ [1] ամենեցուն , սարկաւագս որ հայր է ժողովրդեանն և դաստիարակ , ընթերակայ քահանայիս և խորհրդադգած , տեղեկացաւ այժմ ի նեղ քին վայր սրբոյ խորանիս այսմ ամենայնի , որպէս և երկրորդ դաս յետ քրովբէիցն սրովբէիցն գիտութեանց , որք անընդմիջապար են շուրջ զԱստուածով . այդ քահանայս որպէս զսրովբէ անընդմիջապար խօսեցաւ ընդ Աստ , և սարկաւագն որպէս զդաստապետութեանցն [2] ա ոին ի սոցա երկատեսակութենէն զդիտութիւն խորհրդոյն ըստ չափոյ կարողութեան իւրեանոյ . վասն այնորիկ որպէս նոքա ոչ պահեն , այլ իջուցանեն ի հրեշտակացն դաս , այսպէս և սա՝ զոր ուսաւ ոչ թաքուցանէ , այլ բարիոք սիրով յայտնէ ժողովրդեանն , թէ գնուէրն զոր տուաք եղբարք ի ձեռն քահանայիս , մատոյց Աստուծոյ . և ծանեաց զի նա սիրով և հաշտութեամբ ընկալաւ գնոյնն ։ Աստղի քահանայիս ձայն ոչ իջանէ մինչև ի ժողովուրդն , այլ ի սարկաւագն , և նորայն ապա ի նոսա . որպէս զի բարիոք պահեսցուք զմանրամասնութիւն հրեշտակական կարգաւորութեանն .

1 Մի օրին . Նշանաւոր :
2 Երկու օրին . Յաջորդ :
3 Մի օրին . Յաջորդութեանն .
այլ օրին . Յաջորդութեանցն :

Աստուած զոր տեղեկացաւ սարկաւագն անմռունչ ազդմամբ, յայտնէ Ժողովրդեանն, այսինքն թէ գոհութեանն զոր իրաւունս դատեցայք՝ եկին ժամանակն, և ահա ընկալաւ Աստուած զպատարագ հաշտութեանն ձեր։ Օ որ ծանուցեալ միաձայն աղաղակեն.

«Յամենայնի օրհնեալ ես տէր, օրհնեմք զքեզ, գովեմք զքեզ, գոհանամք զքէն, աղաչեմք զքեզ», Արդէս ասացաք ի սերովբէական երգն, Ժողովրդեանս օրհնութիւնն ոչ է առ Հայր, այլ առ Որդին, այսինքն զի թէ սոցա ամենեցուն կարելի էր բանն դատել զառ Հայր ձգտելն, և ընդ նմա խօսելն, զինչ կարօտանային միջնորդութեանն քահանային, զոր ի դիմաց իւրեանց առ Աստուած առաքեցին. ապա յայտ է թէ նոքա առ նա հասանել ոչ կարեն, այլ միայն մերձ են ի Խրիստոս, ուստի զօրհնութիւնն նմա տան ասելով. «Յամենայնի օրհնեմք զքեզ». այսինքն մեծ և բազմապատիկ է քո երախտիքդ և չնորհդ առ մեզ, տէր մեր Յիսուս, զոր տուաք ի ձեռս քահանայիդդ, և դոքա մատուցին վասն մեր զնոյնն պատարագ Հօր քումմ Աստուծոյ՝ մեր անհամարձակելի առ նա մտանել. այլ միայն զքեզ վասն ամենայնի զոր կրեցեր, և դոքա Հօր քումմ զնայն մատուցին, Օրհնեմք զքեզ վասն ամենայնին՝ որով Հայր քո ընդ մեզ հաշտեցաւ. գովեմք զմիջնորդդ խաղաղութեան յաղագս ամենայն չարչարանացդ քոց՝ որով մեք յուսամք այժմ ողորմութիւն գտանել։ Գոհանամք զբարերար մեր տեառնէդ, և աղաչեմք տէր Յիսուս, Աստուած մեր դու ես, և առեղծուածն և նորոգութիւն ի քէն ընկալաք. մի անտես առներ, այլ վերակացեա և օժանդակ լեր քահանայիդդ պաղատանաց՝ զոր քեւ ի ձեռն քո Հօր և Աստուծոյ մերոյ նուիրեն։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԱՂՕԹՑՆ ԶՈՐ ԱՅԺՄ ԱՍԷ ՓԱՌԱՆԱՑՆ

«Օ փեջ արդարև տէր Աստուած մեր գովեմք, և զքէն գոհանամք հանապազ», Տեսանես այսուհետև, զի այլ ոչ պատարագէ, այլ գոհանայ, վասն սիրով ընդունելոյ Աստուծոյ զպատարագն որ մատուցեալ.

այժմ խմանալի Հայեցողութեամբ տեսանել զնուէրն մատուցեալ՝ խանդակաթ [1] սիրով՝ ի Հօրէն իւրմէ ողջունեալ. յաղագս որոյ որ նախ տայր զնոյն և զՀաճութեամբ զառնուլն աղերսէր, այժմ յետ առնոյն Որ. տուածոյ սիրով զխորհուրդ յիշատակի Հրդուին և ողջագուրելոյն գԼծով Համակամութենն զնորայն որ վասն մեր տնօրինութիւն՝ ի ներմարդութեանն [2], գոհանայ զնմանէ մատուցողս։ "Օ քեզ արդարև տէր Որ. տուած մեր գովեմք, և զքէն գոհանամք,, ։ Ասղաւորդս, ասէ, որ նախ իրաւունս գատեցաւ զգոհանալն, այժմ նայեցեալ՝ ի ընդՀ միածնիդ քո գոհացան. և արդարև վայելչապէս է մեզ միշտ Հայր զքէն գոհանալ, որ զայս քան տնօրինութիւնս փրկագործութեան [3] սիրելի Հրդուդ ուղևորեցեր մեզ անարժանիցս և անմաքրիցս։

"Անգի զանց արարեր զմերովք չար գործովքն, այսպիսի ահաւոր և անպատում խորհրդոյս կարգեցեր սպասաւորս,, ։ Ով ոքան էր մարդկան չար գործք, յառաջագոյն գիտեմք ամենայն իրօք, և Որ. տուած որ մեծն է ողորմութեամբ ըստ Պօղոսի, զայնմ ամենայնիւ զանց արարեալ, միևդեռ մեռեալն էաք՝ ի մեզս մեր՝ կենդանիս արար զմեզ՝ ի Քրիստոս ։ Այս կենդանութենն ընդՀ ոքան. ինքն առաքեալ պատմէ. "Ընդ նմին յարոյց և ընդ նմին նստոյց յերկնաւորս՝ ի վերոյ ամենայն իշխանութեան և պետութեան և զօրութեան և տէրութեան և ամենայն անուան անուանելոյ,, ։ Օ՛. զմարգիկ, զգերեալն և զկոխեալն՝ ի սատանայէ. քանզի նոքա այժմ ընդ Քրիստոսի են յառաջ վեհագոյն հրեշտակաց՝ ըստ նորին աղօթելոյ. "Հայր, կամիմ զի ուր եմ ես իցեմ, և սոքա ընդ իս լինիցին,, ։ ասէ արդարև ահաւոր խորհուրդ, որոյ տնօրէնն և կրօղ կարգեցաւ՝ ընդ Որ. տուած խառնեալ զմեզ հաւատացեալ, և վեհագոյն հրեշտակաց վերացեալ, մանաւանդ և յաստի կեանս, միշտ նորա յերկինս քահանայագործելովն՝ մեր՝ ի յերկիրս հաւատովքն մաքրեալ. աւ որ նայեցեալ քահանային ասէ. այս ամենայն ընդՀ ես, տէր,

1 Երկաս գրին. խանդաղաթ։ 3 Երկք գրին. փրկութեան։
2 Երկաս գրին. ներմարդութեանն։

՝ Ա՛ւ յաղագս մերոյ ինչ արժանաւորութեան, յո-
րոց յոյժ թափուր եմք, և միշտ ունայն գտանիմք
հանապազ ,, ։ Արդարև Ձեմարիտ խոստովանի զմարդ-
կային զանգուածոյ կիրս . այսինքն զի ոչ կարէ սե-
փական պահել զարարին , այլ միշտ զտացեալն վերստին
մեղանչելովն աղաւաղէ , և յար և հանապազ կրէ ընդ
ինքեան՝ ոչ զարարին զոր աշխատութեամբ ստանայ ,
այլ զմեղսն առ որ ինքնայօժար կամօքն միտէ . զոր զմե-
տաս ածեալ՝ զպարտութիւն խոստովանի առաջի Ա՛ս-
տուծոյ , այսինքն ընդ քո ծայրագոյն ընդարձակ կըշ-
ռեմք ասէ և զմերս բնութեան յետին անարգութիւնն
նուաստութիւն , և ունայն՝ ի բարեգործութենէ միտ
զերևելն . յաղագս որոյ գտանեմք զտուրս քո ըստ
ընդարձակին , և ոչ ըստ պարտեաց . ձիր , և ոչ պարգև .
ողորմութիւն , և ոչ հատուցումն ։

՝ Ա՛յլ՝ի քո բազմազեղ ներողութիւնդ ցանգ ապա-
շխարելով՝ համարձակիմք մերձենալ՝ի սպասաւորութիւն
մարմնոյ և արեան միածնի քո ,, ։ ( )րինակաւ ասէ հա-
մարձակիմք՝ի ընդունիլ քո , զմեռաւ ածեալ ։ Ո՛ի թէ մինչ
թէնտաւիքն էաք , հաշտեցաք ընդ Ա՛ստուծոյ մահուամբ
Որդւոյ նորա , որչափ ևս առաւել՝ի հաշտելս մերում
ապրեսցուք կենօքն նորա ,, ։ վասն այսորիկ և պարծիմք
՝ի քեզ Ա՛ստուած՝ ի ձեռն տեառնս , որով զհաշտու-
թիւնս ընդ քեզ ընկալաք . և այսպէս զոտս յուսոյ՝ի
բազմազեղ ներողութիւնդ արձանացուցեալ՝ համար-
ձակիմք սպասաւորել մարմնոյ և արեան միածնի քո ։
Սպասաւոր զանձն իւր կոչէ և համարձակող , իսկ սպա-
սաւորութիւն զպատարագէն զՔրիստոս փոխանակ
ամենեցուն ։ օր . քանզի այս գործ պաշտամանն և սպա-
սաւորութեանն է , միջնորդութիւն առնել՝ի մէջ Ա՛ս-
տուծոյ և մարդկան . իսկ ասէըն մարմնոյ և արեան
միածնի քո սպասաւորեցի , այսինքն թէ զխորհուրդ
մարմնանալոյ նորա և զգործս փրկութեան այժմ նուի-
րեցի . և զի ընկալար սիրով զոհանամ՝ , ոչ որպէս զար-
ժանաւոր , այլ իբրև՝ի վեր և առաւել քան զարժանս
իմ՝ի քո ընդունդ վայելող ։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՂՕԹԻՆ ՀԱՐ ԽՈՆԱՐՀՈՒ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԵՒ ԱՅԼ

"ԱՐԿԻՒ պագանեմք և աղաչեմք և խնդրեմք ՚ի քէն բարերար Աստուած ,, : Պարտ է գիտել, թէպէտ ա-մենայն բանք աղօթից որ մինչև ցայժմ պատմեցան՝ պատմութիւն էր Հնոցեայն Վրիհատոսի , և յիշատակ առաջի Նորա , ըստ նմին և գոհաբանութիւն . և այս ոչ վայրապար , այլ բարիոք և ամենավայելուչ կարգա-ւորութեամբ՝ զոր իրաւունս վարկանիմ գնել համա-ռօտ . այսինքն զի նախ մարդ երևեցաւ Վրիհատոս և Աստուած ՚ի մէջ երկրի , վասն որոյ և եղեն երկրա-ւորքս երկնայնոցն ՝ կցորդ . զայսր խորհուրդ ունէր ա-ռաջին աղօթքն և գյիշատակ , ուստի և շարժեաց տար-կաւագն զամենայն եկեղեցին ՚ի սրբասացութիւն : Յետ այնորիկ գտնօրէնութիւն փրկագործ չարչարանացն և գիսաչին կատարեաց , զոր պարտնակեաց երկրորդ աղօ-թիցն յիշատակ խորհրդածութեան՝ տալով գնոյն նուէր Աստուծոյ Նորա քահանային . յաղագս որոյ և ըստ ա-մենայնի այնորիկ գոհացան , և օրհնեցին ազգամբ սարկաւագին ժողովուրդն զՎրիհատոս : Այս գի յետ խաչին և յարութեանն՝ առ նա գխիթարիչ Հոգին փոխարէն իւրոցն աշխատութեանց , և բաշխեաց ՚ի յաշխարհս . վասն այսորիկ և քահանայս՝ յետ տալոյ զայս խորհրդոյս յիշատակ նուէր Աստուծոյ Նորա , և նորա սիրով ընդունելոյն , և ամէն ՚ի վերայ ամենայնին գոհանալոյն , ապա կարգաւորապէս համարձակի խընդրել գնորս Հոգւոյն . գի մինչ չև էր մեռեալ Յի-սուս , ոչ ունէք ետ Հայր զՀոգին , ըստ այմմ . " Չև էր Հոգի , քանզի Յիսուս չև էր փառաւորեալ ,, : Արդ սա այժմ պատկեր Թէ այսօր եղև մարդանալն և խաչն և յարութիւնն , ետ գնոսին ըստ կարգի Նորա նուէր , և ապա փոխարէն Վրիհատոսի մահուն և չարչարանացն զոր ետ՝ խնդրէ ՚ի Նորէ երկրպագութեամբ զՀոգին սուրբ . պատկեր և յայնժամ, գի հեղ յառաքելսն , Այս գու տես , գի նոքա որ ՚ի Վրիհատոսի առատ վար-

1 Մի պրն. Եղիազարեան :

դասեւտութիւնն ոչ բնաւ զղջացան, զաստեւամբ Հո-
գւոյն ի մի ձայնէն [1] Պետրոսի երեք հազարքն հաւա-
տացին։ Այսպա յայտ է՝ թէ մահն Քրիստոսի վասն դշնու-
հըս Հոգւոյն առնոյ մեզ եղև. բայց քանզի մեք որ
այսօր եմք յաշխարհի մարդիկ, չէաք յայն ժամանակս,
թէ նոքա միայն էին վայելեալ ի շնորհս խաչին համ
ի պարգեւաց Հոգւոյն, Աստուծոյ դատաստանն աչառա-
նոք էր, և մեք առանց մեղապրութեան։ Ա՛ան այնո-
քիկ նոյն խաչին յիշատակն զոր ուսաք ի տեառնէ՝
այսօր կատարեալ, զայն զառաջին մահուն ունի զօրու-
թիւն. և որպէս յայնժամ յետ խաչելութեանն տուաւ
մարդկան Հոգին ի Հօրէ, նոյնպէս և այսօր կատա-
րեալ յետ յիշատակի խաչին խորհրդոյ զնոյն ընդու-
նիմք. զի լցի Աստուած անապատ ի պարգեւս իւր, և
մարդիկ հասարակաբար ի նոյն վայելուչ. ուստի և յետ
խաչին երկրպագեալ՝ զՀոգին խնդրեմք ի Հօրէ միջնոր-
դութեամբ և աղերսանօք Քրիստոս իւր մահու։ Ա՛ար-
ձեալ կամիմ և այլ տարակուսանաց զուծումն պահան-
ջել. քանզի կարծեն ոմանք թէ որպէս Հոգին ներգոր-
ծէ զՀայս Քրիստոս մարմին, այսինքն Եկեղեցի.
քանզի ինքանէ Հոգին ի վերայ սորին, և լինի սոյն՝ ոչ
Հոգւոյն, այլ Քրիստոսի մարմին. որ զայս զմտաւ ածէ
ի վերայ եկեղեցական խորհրդածութեան և ոչ բնաւ
ուսաւ զկանն [2], ոչ ծանուցեալ եթէ Քրիստոս միայն մար-
մնանալն էր և փրկելն. իսկ յետ այնորիկ Հոգւոյն
տուաւ մատակարարութիւն [3], և ամենայն շնորհ առ
մեզ ի նմանէ ներգործի։ Ա՛արձեալ և զայս մի ոք սը-
դիտասցի՝ թէ նոյն ինքն զՔրիստոսն անուն տէրն մեր
Հոգւոյն սեփականեալ ներգործութեամբն, որ եկայծ
ի վերայ նորին մարմնոյ ի Յորդանան, որպէս և ուսա-
նիմք ի մկրտութենէ անտի սրբոյն Աւետեաց. և Հո-
գւոյն զօրութեամբ սկիզբն արար նշանացն, ոչ եթէ իբր
զկարօտ կամ զտկար ընկալեալ, զոր մի լցի կարծել,
այլ զի մարդն զՀոգւոյն փչումն ունէր Աստուծոյ ի
սկզբանն և կորոյս ընդ յանցանացն, զնոյն տէրն վե-
րըստին յիւր մարմինն առ ըստ ամենապայծառ անմե-

1 Մի օրին. ի միում տեղի։
2 Մի օրին. Խորհրդածութենէն, և ոչ բնաւ ուսաւ զկնէն. այլ օրին.
3 Ընդ. Մատակարարութեան։ Խորհրդածութենէն։

զուարճանան . և ըստ որում կրճիկն եղեալ Յգամայ ար-
գել զնա յամենայն ծննդոցս , մեռեալ Քրիստոս՝ սրբո-
ւեաց զնա ի վերայ ամենայն եկեղեցւոյ . և զսա զեկե-
ղեցի մարմին անուանէ Քրիստոսի Պօղոս , և յոսկե-
րաց նորա որ տարրանայ ի գլուխն Քրիստոս , ոչ այլ
իւիք՝ բայց յօդակապուարեամբ Հոգւոյն ։ Այսպա պարտ
է գիտել՝ եթէ զՀոգին տուրբ Քրիստոս անօրինապէս
նախ ի յինքն ընկալաւ , և նովաւ և ի նմանէ ի մեզ
հեղաւ , ըստ այնմ . " Եթէ ոք զՀոգին Քրիստոսի ոչ
ունի՝ սա չէ նորա ,, . և ոչ չափով տայ Հայր Աստուծ
զՀոգին . և մեք յորժամ խնդրեմք զնոյնն ի Հօրէ , ի
գլուխն Քրիստոս ինքանէ , և նովաւ և ի նմանէ յոս-
կերս տարածի և կենդանասիարուկէ . ուստի և ասէ .
" Արկիը պագանեմք և աղաչեմք և խնդրեմք ի քէն
բարերար Աստ , առաքեա ի մեզ և յառաջի եղեալ
յընծայս յայս զհանդիսաւորակից քո ՝ և զհակից սո-
Հոգիդ ,, ։ Ընծայքս , որպէս բազում անգամ ասացաք ,
նշանակ տուաւ ի ձեռս սորա ի ժողովրդենէն մարմնոյն
Քրիստոսի , և խոստովանութիւն հաւատոյն հաստա-
տութիւն սորին Աստուածութեանն . զայս առեալ մա-
տոյց քահանայն գոհացողական պատմութեամբն փո-
խանակ ամենեցունց . և յորժամ զայս առ Հայր ի
ձեռաց սորա հաշտութեամբ , և եթող սոսկալի յիշա-
տակաւ խորհրդոյս զմեզս եկեղեցւոյս , որպէս ի խա-
չելութեանն պատառեաց զձեռագիրն սոցա յանցա-
նացն , ապա խոնարհեալ ընդհակառակ լինի Թողու-
եան և հաշտութեանն քահանայս , և զՀոգին խնդրէ . ըստ
որում և առ մարդիկ է տեսանել . քանզի յորժամ
պատարագաւ գնամք զումեք բարկութիւն անցուցանել
ի մէնջ , նախ գկաշառան առնուլ յօժարիմք , որով վանի
և աղաչեմք զնա . իսկ առնուն յետ այնր խոստվելոյն
զպատարագն ի ձեռաց մեր՝ նշանակ հաշտութեան
տայ . և մեր տեսեալ զնա ի հաշտութիւնն , նախ գո-
հանամք և շնորհ ունիմք զինքանելոյն գործեալ ի
մէնջ , և ապա առնումք համարձակութիւն խնդրել նո-
ի նմանէ . այսպէս արար սա առ Աստուած՝ զոր խոս-
վեցուցեալ էաք բան մեզաց մերոց , հրեշտակ առա-

1 Երիք օրին . Զմանջնաւոր .

քեալ խաղաղարար պատարագաւն՝ նախ զպատարագս
եաս ՚ի ձեռս Աստուծոյ Թագաւորին մերոյ, այսինքն
զկիւրատակ չարչարանացն վասն մեր միածինն Աստուծոյ.
և յորժամ նա ընկալաւ սիրով և հաշտեցաւ ողոր-
մութեամբ, սա երագեաց և վաղվաղակի գոհացաւ ըզ-
հաշտութենէն՝ ասելով. «Օ քեզ արդարև տէր Աս-
տուած մեր գովեմք և զքէն գոհանամք», ։ Իսկ յետ
գոհութեանն յառաջ գայ ասպա ՚ի խնդրուածսն օգտի
մատուցողաց պատարագիս. և նախ ծայրագոյն խնդիր
է Հոգին սուրբ, որ տնօրէնն է մեր և մատակարար.
«Աւրաքեա ՚ի մեզ՝ ասէ», այսինքն ՚ի դասս քահանայ-
ութեան և սարկաւագացն որք են ՚ի պաշտօն խորհրդոյն.
և ընդէր նախ յինքեանս խնդրէ. ցուցանելով թէ մեք
՚ի ծայրագոյնն ժամանեցաք մաքրութիւն, և կարող
եմք զփայլուձն նշուլից շնորհացն Հոգւոյդ առանց ՚ի քէն
նորդի յանձինս պարփակել. իսկ ժողովուրդքս յայս-
պիսի կատարելութենս ոչ ժամանեաք, կարօտ են
միջնորդութեամբ նշանակացս զնոյն ընդունել. որպէս
և առաքեալքն յանկատարութեանն՝ նախ քան ըզ-
համբարձումն միջնորդութեամբ Քրիստոսի. քանզի
փչեաց ՚ի նոսա և ասէ. «Աւրէք Հոգի սուրբ», առ ՚ի
յիւրմէ իմացեալ զզօրութիւն Հոգւոյն ՚ի նոսա ։ Այս-
պէս և այժմ. «Աւրաքեա ասէ զՀոգիդ սուրբ ՚ի մեզ,
և յառաջի եղեալ յընծայս յայս», Արդէս զի տպաւո-
րեալով Հոգւոյն ՚ի սա, ըստ որում ՚ի մարմինն Քրիս-
տոսի հանդիպեմք. առ որ մերձենալով ժողովրդեանս ընդ
զգայական ձայակման ծորա՝ և զիմանալի զօրութիւն
Հոգւոյն ընկալցին հոգւոց շնորհ և զօրութիւն։

«Արով զհացս օրհնեալ՝ մարմին Քրիստոսի արաս-
ցես ՚ առեան մերոյ Յիսուսի Քրիստոսի. և զգինիս օրհնեալ՝

1 Մի օրին. Յանիւրդեան։

2 Ձիր ամենևին երկբայութիւն զի և բան հայասանանելոյս ահե-
զեցոյ գաւանութեան՝ բանիւն ևեթ Քրիստոսի Աստուծոյ, և
որ ՚ի կարգին, կատարի փոխար-
կութիւն հացին և գինւոյ ՚ի մար-
մին և յարիւն առեան, որպէս և
՚ի յետագայ աղօթիցն ևս ուշ ա-
նէր այլովքն հանգերձ լիով յայտ
է։ Բայց քանզի ՚ի պատճառս ա-
պառնի ժամանակի սրտոյն բոյ-
ից, և վասն ազատ վարդապետու-
թեան ոմանց ՚ի սրբոց հարց, որ-
պէս Յուստինոսի, Եղեսացոյ,
Կիւրղի և այլոց, որպէս և մերոյս
այսորիկ վարդապետի, չիմեզ բա-
զումք ծագկցին երբեմն յուզա-
փառս յաշխագաւանս և հայագա-
նաս, և առ մեզ խակ առ յաս-

արիւն ստուգապէս արասցես տեառն մերոյ «Յիսուսի Քրիստոսի»։ Օ՜ ինչ սաեմք առ այս. և մինչև ցայժմ ոչ էր սա մարմին և արիւն Քրիստոսի. եթէ ոչ էր, ապա ընդէր դու յառաջ բերեր, և որպէս զնոյն ետուր զսա ի ձեռս Նօր՝ ասելով, այժմ մեք տէր յառաջ բերեմք զմիածինն քո և ըստ նորին հրամանի տամք ի քեզ մեր փոխան պատարագ։ Այո, ասէ, արարի ես զայս ամենայն, եղի առաջի Աստուծոյ, և ետու յետ այնորիկ ի ձեռս նորա։ Այայց ուսիր, եղբայր, զվայելուչ խորհրդոյս զգօրութիւն, զի զայս մարմնաւոր նշանակս ես հաստատութիւն ունէի առընթեր իմն բանաւոր պատարագի՝ զոր մատուցանէի. որովք վկայութիւն գնէի առաջի Նօր՝ թէ զայս հայցս առ ի ձեռս միածինդ քո, և օրհնեաց և մարմին իւր կատարեաց, և զայս գինիս սրբեաց և արեամբ ուխտ նոր ընդ մարդիկ կռեաց, և որպէս զհաց և զգինի ետ մեզ զյիշատակ տնօրէնութեան իւրոյ կերակուր և ըմպելի, և ըստ որում այս Աշմարիտ մարմին զգալի, այսպէս և դա հաստատապէս մարմնովս իմով մեռանի։ Այակ յորժամ զայս ամենայն բանաւոր նուէրս, և պատարագ օրհնութեան հաստատութեամբ նշանակացս մատուցի, և զԱստուած հաւատով ընդ սրարածս այս նուիրացս յիշատակօք հաշտեցուցի, ապա զոյն որ յինէն նշանակ մարմնոյն Քրիստոսի և ապացոյց մատուցաս, ինձանք Նոգւոյն՝ նմին մարմին Աշմարտապէս փոխարկել յօրինակէ և կատարել թախանձեմ. քանզի ահաւասիկ զհաց՝ զոր ես օրինակ մարմնոյն Քրիստոսի եդի առաջի, և սուաւ զՀշմարիտ նորին խորհուրդն ցուցի, դու այսուհետև օծ Նոգւովդ, և յօրինակէն ի Հշմարտութիւն վերափոխեա։ Այս որպէս լինիցի սա յօրինակէն ի Հշմարտութիւն, օրինակաւ հաստատես-

Նոգաւանս Աստիճանի եկեղեցւոյն ընդ կատարումն խորհրդոյն բանեան Քրիստոսի. Պիտս Ի սրբազան քահանայապետ առ ի խաղաղել զամենեսեան՝ ՀՀան կոնդակ յամին 1822, յորում զուգաձայն մերոյ մատենագրիս բացատրութիւն այսպէս. «Քրիստոսի միայն են սրբացուցիչք խորհրդոյ սեղանոյն»։ Ի սոյն հային ամենայնիւ և բանիք մեծին խոսրովու ի մեկն. պատարագի, զի ասէ. «Ջքո մի և սիրելի Աստիճ եառուր մեզ փրկանք և փոխանակ. և զնոյն ինքնիգ ի սեղան դնես, և կերակրես զմեզ դովիմբ. վասն որոյ ապաւինեալ յանդրան քո բարեբարութիւնդ ընդ Նոգիդ քո առաքել խնդրեմք ի

ցաք՝ . այսինքն զի մարդ մարմին գոլով առանց Հոգւոյ՝ օրինակ մարդոյ ասի , և ոչ տիրապէս մարդ . իսկ յորժամ կամօքն Աստուծոյ՝ ընդ մեռեալ մարմինն Հոգի բանաւոր խառնի , ասի սա Ջմարիտ մարդ և կենդանի , և Հոգին որ միացաւ ընդ սմա՝ ոչ եթէ զգալի աչաց մեր երևեցաւ , կամ տեսանելի եղև ՚ի նոյն մարմնոյ առաւելութեէ , այլ միայն գնոյն տեսանելիք զմարմինն նոավաւ կենդանի : Յայտ և նշանակ մարմնոյն և արեանն Քրիստոսի մինչև ցայժմ ապացոյց էր առաջի Աստուծոյ եղեալ ՚ի քահանայէս , և բանաւորն պատարագի նշանակ Հաստատութեան . իսկ առեալ Աստուծոյ Հոգի ընդ բանաւորն պատարագի և զօրինակս նորին , և իբր զԱստուած կարող՝ տիրապէս չընչեաց զկենդանարարն Հոգի յանեղունչս մարմին , և արար զսա որ նախ զգալի մարմին , այժմ Հոգւովն սրբով Քրիստոսի մարմին , և միութեամբ ընդ գինիս Հոգւոյն՝ Քրիստոսի զսա արիւն նմին էացուցեալ՝ կատարեաց . և որպէս ՚ի մեռեալ մարմինն խառնեալ Հոգին՝ չէութիւն մարմնոյն ոչ լինի նիւթականին՝ առաւելութիւն , այլ միայն զի նիւթն նոավաւ զօրանայ և ներգործէ որպէս կենդանի , ըստ այսմ և ՚ի սմա միացեալ Հոգւոյն Աստ , և արարեալ մարմին Քրիստոսի , նիւթոյս ոչ ինչ լինի այլայլութիւն կամ առաւելութի , այլ միայն զի իմանալի զօրութի ընկալաւ , և ՚ի Հաշակողն զիւրն կատարէ ներգործութիւն , Այլ զինչ է ներգործութի սորին տեառն կենդանւոյ . քաւութիւն և թողութիւն մեղաց , ըստ որում և յաջորդ բանիւս ցուցանէ ,

մեզ և ՚ի պատարագս , զի և զմեզ Հոգիդ քո սրբեսցէ : Վասն որոյ զմեկնութիւն ապաշնոյ բարս յառաջագոյն արարեալ ապաստան առնեմք , որք ընդ կատարումն խորհրդոյ պատարագին և ընդ լուսաւ փոխարկութեանն խաչիւ ինչ խառնան , զորմէ տես ՚ի Լ՚ըպրէան և ՚ի փուլգենտիոս : Բայց Թէպէտև Հռունացն և այլոց արևելեան ազգաց ապաշնի եղանակ բանին կալ յայն մեկնութենէն այնոցիկ առաջաւագարանից , սակայն զմերս և առանց խոչ այնոցիկ մարթէ քաջ ուղղափառապէս խմանալ ըստ յաջորդ մեկնութեան վարդապետիս , յարելով զարտացեան ՚ի բանն , Որդե- ւի էդնի . իբր առել . ա Աբրացես , զի մարմինս այս և արիւն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ամենեցուն մեզ յանդաստապարտութիւն ՝ այլովքն հանգերձ :

1 Մի օրին . Կատարեցաւ :

2 Մի օրին . Նմանեցաւ . այլ օրին . Նման ցուցեալ . միւս այլ Նման էցուցեալ :

3 Մի օրին . Նէ-ձոյն :

“Արդեւս զի եղիցի սա ամենեցուն մեզ մերձենալոցս յանդաստապարտութիւն, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց ,, : Տես եղբայր, թէպէտ և արտաքոյ է բանիս, զի մերձենալոցն է սա թողութիւն, որպէս և խնդրեմք, և ոչ մեռելոցն՝ ըստ որում կարծեմք. բայց զինչ է ասելն՝ անդաստապարտութիւն. այսինքն զի մի լիցուք վասն սորին՝ դատաստանի պարտական. և պարտական եմք յորժամ ոչ փորձեմք ըզչար անձանց, ըստ խրատուն Պօղոսի, նախ քան զձաշակելն. զի ասէ. “Ար ուտէ և ըմպէ անարժանութեամբ, դատաստան անձին իւրում ուտէ և ըմպէ ,,. էր վասն. “Օ՛ի ոչ խորէ զմարմինն տեառն : Այլ զինչ է ոչ խորելն. այսինքն ոչ պատուելն. և ոչ պատուելն է ոչ հաւատալն : Յայսմիսի մեզաւորացս արգելու ըզնորս Պօղոս, և ի թերահաւատից, և ոչ թէ յայնցանէ որք օձառ սրբութեան մեղաց զոյն ընդունին հաւատով յուսացեալք, եթէ արիւնն Յիսուսի սրբէ զմեզ յամենայն մեղաց : Այլ ոչ որք են որք ոչ փորձեցին զանձինս և ոչ խորեցին զմարմինն տեառն. զինչ թուին նոքա՝ որք զիւորհրդոյս զօրութիւն նախ հաւատով ոչ ձաշակեցին. յաղագս որոյ և ստուերք թուի յաչս այնպիսւոյն ամենայն զգուշութիւնքս : Այլ տեսեալ զի հացս յետ բազմապատիկ օրհնութեանցն ինոց և այնպէս ի քնութիւն իւր [2], մերձենայ ի սոյն անփորձ խորհրդով և անարժան անձամբ իբր ի լոկ հաց. յաղագս որոյ և ըստ անխորութեանն դատապարտի, այսինքն զի ոչ խորեաց զսա հաւատովք մտացն ի հասարակական սեղանոյ : Արձեալ և ոչ փորձեաց զանձն իւր՝ որ կատարեաց զսա ի պէտս հանգրոց և պաթառուց մեռելոց : Ինձ մի որ մեղապրեսցէ, քանզի ոչ եթէ ըզք դատապարտեմ, այլ աղէխարշ կրթով ի դատապարտութենէ գործոց կորզել յաժարեմ. զի այն է դատապարտող՝ ուր ի թիւրն խրատ այժմ, և Ոչ տուեալ առնելն մեռանել առաքեալ խաղաղութեամբս, քանզի՝ որ այժմ յանդիմանեալ խոովեցուսանէ խաղաղօք և խոցուածով բանիւն, և ի Քրիստ

1 Խմա, և ոչ մեռելոցն միայն որպէս ոմանք ի սխալուցս կարծէին, և ոչ յիմնեան բացատրէ:

2 Ի յինքն ըստ արտաքին առակաց՝ նոյնի ձևով և հասով:

3 Մի օրէն. Մատթ:

անապատ առեալն յուսոյ զերծուցանել : Այլ տես թէ որպէս ոչ փորձեաց զանձն իւր՝ որ զպարտս մեռելոյ եղ առաջի խորհրդոյս կատարումն . զի փորձելն՝ որ առաց Պօղոս , քննելն է անձին , և քննել զհաւատսն և զգիտութիւնն : Որպէս զի գիտասցէ իմասցի և իմաստնասցի և զգաստացեալ ծանիցէ , այր աղագաւ այս խորհուրդս , կամ զինչ գիտաւորութիւն սորա . փորձէ և որոնէ , որպէս հայցս և գինեխս մատիճն և ածիւն Աբրահամոյ , և կամ զինչ չնորհ ի նահանջ առմէդ իջանէ : Այլ որ զայս փորձութեամբ անձին իւրոյ ուսուցանէ , նա խարեալ պատուէ զմատիճնն տեառն . և արդարև որպէս յաստուածային սեղան ի սոյն մերձենայ . իսկ որ միայն ի մեռելոց պէտս և ի լուսն Թուոց զնոյն կատարեաց , երբ փորձեաց , երբ քննեաց , երբ որոնեաց և ուսոյց անձին իւրոյ զխորհրդոյս զօրութիւն : Այլ երբ ծանեաւ զայսքան և զբիւրապատիկ սորա առաւելութիւն . այլ դեռ և սա կասկնկեր է , դեռ և սա տգէտ է բանին արդարութէ , դեռ և ոչ է կրթեալ զձաշակելին յընտրութիւն բարւոյ և չարի : Այս է թէ իւր ձաշակելիքն չկարէ տանել զկատարելոցն կերակուր , մանրէ որպէս զնոյն , և տղայոցն առնէ ախորժելի : Այհաւասիկ տեսանես , զի ոչ խարեմբ այսպիսի մտօք զմատիճնն տեառն . քանզի որպէս ունն արհամարհեաց զսա իբր զմատիճնական սեղան , և այնպէս կերակուր անարժանաբար , ես արհամարհեմ զնոյն իբրև զտուրս աստուածութիւն վաճառոց և մեռելոց տակ ՝ համարոյ հատուցման մերձենալոյ ՝ի սա , և նուիրեմ ՝ի պէտս վաճառուց անխտիր համարձակութեամբ՝ անփորձ և անարժան կամաք , և ոչ որպէս ՝ի տեառն իմոյ յիշատակ՝ աշխարհի հաշտութիւն և ձաշակողացն քաւութիւն . վասն այսորիկ որպէս զանփորձ անխտիր և զաստուածավաճառ դատապարտիմ , անզեղջ մնալով ՝ի մոլորութենն . իսկ եթէ զղջանամ , դիւրաւ քաւիմ . որպէս . բայ առակողին ասելոյ , «Ձանազնէն զքեզ բոլանդակ արդարութէ է , և իմանալն զքեզ՝ արմատ անմահութէ ,» : Ձանզի յորժամ ձանազնեմք փորձիւ անձանց զհաւատացեալ մեզ խորհրդոյս զօրութիւն , և որպէս

պարտն է զսա կատարեացուք , վաղվաղակի առանց միջնորդի , սովաւ և ի սոքին ձեռն քաւիմք , զի տուաւ սա մեզ բաւ իշխդրոյս՝ անդատապարտութիւն , ի քաւութիւն , և ի մեղաց թողութիւն : Այլ պարկէս քաւէ զմեզն . յորժամ անսպիւտ Հաւատովք զսոյն ձաշակեմք . յորժամ մեզ փրկանք , և ապա օտարացս նուիրեմք . յորժամ գիտութեամբ և իմանալով զսոյն ի զօրութիւն խորհրդոյս արձանացուցանեմք . յորժամ ոչ կարծեացուք զ՚Քրիստոս՝ որ նոյն է , հնացեալ յամենաամբէն զօրութենէ . յորժամ ոչ քննութեամբ , այլ Հաւատով հաղորդիմք չարչարանաց նորա խորհրդածութեանս . յորժամ նեքքին մարդս առաջի աչաց իւրոց ունիցի զ՚Քրիստոս , և սիրով գոն գործէ զնոյն արմատացուցանել . յորժամ ոչ պարզ Հաւատով , այլ իմացականաւն առ նա զսէրն վերացուացուք , յայնժամ կարողապէս ձաշակեմք , որպէս լինի սա մեզ քաւութիւն կամ մեզացն մերոց թողութիւն : Այսպա մինչ ոչ ընդ այսպիսի ձանապարհս Հաւատոց իմաստութիւք և առաքինութեամբ՝ հետևեալ եմք , և ի նպատակ աստուածգիտութեանն ժամանեալ , թէպէտ և բանս աղաղակէ զորպէսն լինել քաւութիւն , գիտակցութիւն մատց մերոց ոչ կարէ Հաւատալ , ոչ անցեալ դեռ ընդ կիրթ տեսութեան որպիսութեանն . զի Հոգևոր խորհուրդ է . և ոչ մարմնաւոր : Ո՛չ Հոգւոյն կամ պարտ է սոքին Հաւատոց Հաւանեցուցանել , և ոչ զբաբբառ բերանոց . և Հոգին ոչ Հաւատայ առանց Հոգեպէս տեսութեան , և Հոգևոր տեսութիւնն ոչ լինի առանց իմաստութեանն , և իմաստութիւնն ոչ Հաստատի առանց բանաւորապէս առաքինութեանն , և բանաւորն առաքինութիւն ոչ ուղղի առանց մարմնոյս Հանգստեան և փառաց արհամարհութեանն . ուրեմն արդարանայ ի բանս իւր տէր մեր . « Ալ ոչ առնու զիսաչ իւր և գայ զհետ իմ , ոչ է ինձ արժանի .. . զի մինչ դեռ կենդանի եմ աշխարհի , անկար եմ արժանապէս որպէս պարտն է իմանալ : Ակ ապա ոչ միայն կենդանի լինել , այլ և զնոյն ի պետս աշխարհական շահիլ և փառաց վաձառել , քանի ողոց յերկնաւորաց և ի սրբոց հրեշ-

1 Լրիւ օրին . Իմաստութեան և առաքինութեան .

տակայն տեսանողացն զնախատինս իմ գտանիմ արժա-
նի . մանաւանդ թէ ոչ ողբոց՝ այլ նախատելոց տիրա-
պէս , որ կամաւորութեամբս իմով զտեառն իմոյ անուն
նախատեցի ՚ի մէջ դիւացն գնդից ։ Ա՛յ ինձ . ոչ գի-
տեմք՝ թէ այս ամենայն յանդիմանապէս կալոց է ա-
ռաջի աչաց մեր յաւուրն յետնում ՚ի չարաչար դա-
տողաց թշնամեացն , և ՚ի չարեաց մերոց վկայիցն , որք
ոչ միայն թէ զոր գիտեմքս մեզք , այլ և զորս ոչ գի-
տեմք խորամանգ մեքենայիւքն յիշէն . յորմէ զգու-
շանալն է վայելուչ եղբարք , որքան ՚ի սեաւ և ՚ի մուր ՚
կեանքս պանդխտիմք ։ Այլ խառնել ընդ մեզ , և մի
անձամբ անձին դրժողս[1] լինել . այլ իմանալ՝ թէ ունիմք
հանապազորդ թշնամի , յորմէ փրկեացուք տերամբ մե-
ծով ։ Ահաւասիկ ՚Ինձ , որ է օրհնեալ յաւիտեանս ։

ԸՆԴԻՐ ԱՅՍՈՒՀԵՏԻՒ ՈՉ ԲԱՒԱԿԱՆ ԳԱՏԱՐԱԳ . ԱՅԼ ԵՐԵՒԵԼԻ ՆՈՒԻՐՕՔՍ ԱՂՕՉՔ

Կանանաւորական պատարագին նուիրագործութիւն
՚ի քահանայէս լուծին էառ , այսինքն խորհուրդ և յի-
շատակ չարչարանացն ՚Ի Քրիստոսի . զոր նշանակացս
հաստատութեամբ ետ ՚ի ձեռս Աստուծոյ ։ Օր՝ վերա-
հայեցողութեամբ իմացողականին աչաց . որով և ընկա-
լաւ փոխարէն զիջումն ազգման և զօրութեան ։ Ոգւոյն
՚Ի Քրիստոսի ՚ի վերայ ընծայիցն . որով մեռեալ նիւթն
կենդանացաւ , և անշունչն հոգիացաւ , և ապականեցեալն
Ճշմարտեցաւ , և նշանակ մարմնոյն ՚Ի Քրիստոսի անբաժ-
գիւտ հաստատութեամբ մարմին ՚Ի Քրիստոսի կատա-
րեցաւ[2] ։ Լակ մարմին ՚Ի Քրիստոսի յորժամ լսես , բա-
նաւորապէս իմն զխորհրդոյս զօրութիւն , և մի տարա-
կուսանիջ յանբաժան հաւատն յետնուր , ըստ արտաքին
բարբառոյ հաւատալ , և իմացողական մտաց հաւատով
ինամս անհատան , տեսեալ զի զոր մարմին և արիւն ա-
նուանեմ՝ ոչ է միս և արիւն , այլ հոգի և կենդ . այլ գի-
տեա զի մարմին ՚Ի Քրիստոսի հաւատամբ զսա՝ յաղագս
Ոգւոյն ՚Ի Քրիստոսի ՚ի նոյն բնակելոյ , և զՈգին ՚Ի Տէր

1 Ա՛ի օրին . Մ[illegible] ։
2 Ա՛ի օրին . ՚Ի՛ն՛ն՛ . երկու անգր աստղաբ . էջ 391 ։
3 Տես որ ինչ գայ[illegible] ՚ի վեր
օրին . ՚Ի՛ն՛ն՛ ։

աւեմք, ոչ թէ իբրև ի նմանէ[1] յառաջ սկիզբն առեալ և բղխեալ՝ որ է անձնաւոր Հաւատոյ նմին, և հանապատ բղխումն, այլ ի Հօրէ։ Այլ զի Քրիստոս զնա նախ ընկալաւ յինքն ըստ մարդկեղոյ նորին Հոգւոյ պայծառացեալ փչմամբն, զոր կորոյս առաջինն Ադամ, և ի մէջ հնարէն ի ձեռն Քրիստոսի նովաւ և ի նմանէ տարածեցաւ. վասն այսորիկ և Հոգի Քրիստոսի ասեմք[2]. ըստ այսմ և առաքեալ զանազանի Քրիստոսի տաճար անուանէ Հոգւոյն Սուրբ. այսպէս և տէրն առ առաքեալսն եղ, «Ի՝նչ ի՛նչ արիջ Հոգին սուրբ զոր առաքեսցէ Հայր յանուն իմ», այսինքն թէ իմոյս լինի անուանն առ ձեզ հաստատիչ։ Այլ ըստ կարի մերում այսպէս երևելի առնեմք զիարհրդոյս զօրութիւն. Հայր և Որդի և սուրբ Հոգին մի են ըստ կամաց աստուածութեան բնութեան և փառաց, և որիշ ըստ անձնաւորութեան և դիմաց. իսկ գիտութիւն բաչխէ և չընորհս իմացանէ ի հրեշտակս և ի մարդիկ կամաք Հօր և Որդւոյ Հոգին Սուրբ, Օնա ընդունելը և առաջին մարդն՝ հաւատոյ հրեշտակաց իմանալի լուսաւորութիւն. իսկ յետ յանցանացն բարձաւ ի նմանէ շնորհն. զոր յորժամ կամեցաւ Սուրբ յառաջին փառսն հանել, ոչ Հոգուովն՝ այլ Որդուովն անօրինեաց զբխորհուրդն. և զայս ոչ յայտնի, այլ անհաս ի հրեշտակաց և ի մարդկանէ և ի դիւաց։ Վանզի եկն Որդին Սուրբ, անձնաւ խառնմամբ՝ յօդեաց իւր մարմին ի կուսէն, և ծնաւ նովաւ. և առանայ ոչ ծանեաւ՝ թէ աստուածութիւնն Որդւոյ խառնեալ էր ընդ մարմինն, այլ ի կարծիս մնաց. էր վասն. զի մի զաւաքինութիւն մարմնոյն՝ զօրութեանն Սուրբ տացէ, և զարդարութեամբ փրկութիւն մարդկան՝ իչխանութեամբ գաւեսցի. վասն այսորիկ լոյս աստուածութեանն ի խաւար մարմնոյն լուսաւորէր, և խաւար

1 Պարձեալ և առաւանօթ զգօ-ւատարար առացեալքս ի վարդապետէս՝ իմս ըստ պայծառ վարդապետութեան սուրբ եկեղեցւոյ. այսինքն զի ոչ թէ իբրև յարբրէ և ի սկզբնական պատճառէ բղխեալ է Հոգին ի Հարէ, այլ ի Հօրէ նախկնաբար, և Որդւոյ միանդամայն։

2 Քանզի Հոգի Քրիստոսի ասի՝ նախ ըստ ներքին բղխման, և երկրորդ՝ ըստ ծառայման յանգամն Քրիստոսի։

բին արարիչ և մեղայն՝ նման ոչ եղև հասանելի, և ոչ իշխան աշխարհի զնա ծանեաւ. այլ միոյ. անհաս էր ի նմանել աստուածութիւնն որ ի մարմնին՝, և զմարմինն մատնեաց ի ձեռս նորա բնաւորականն կրիւք, [1]ակ նա ոչ ինչ կարաց ընդ կրից մարմնոյն յիւրոցն նեղ գործութեանց խառնել. քանզի լոյս որ ի նմա էր ձրշմարտապէս՝ որովք զբնաւորապէս մարմնոյն խառար, և զարտաքինն՝ զոր չարն ընդ նմին խառնել մեքենայէր. ուստի և զնուն կրէր ստուգութեամբ, իսկ ի նորայն և ոչ բնաւ հպել արժանի առնէր, այլ միայն տեսանէր։ [1]ակ սատանայ զայս ոչ կարէր տեսանել՝ թէ զայս արկածքս զոր ես ջանամ՝ ի մարմինս [1]ստուծոյ արկանել, աստուածութիւնն որ ի սմա է՝ իմանայ, և զմարմինն իւր ի բնաւորական ապարէշն անապատ կառավարէ, ըստ այնմ. "[1]ԹԷ էր ծանուցեալ, ոչ արդեօք զտէր փառացն ի խաչ հանէին ,,. այլ որքան պարտ էր՝ և՛ առաւել ջանիւ զպատերազմական հնարս ժողովէր, և ոչ ինչ բնաւ կարաց ներգործել ի տէրն մեր, ոչ թէ ըստ մարմնոյ միայն, այլ և ոչ ըստ խորհրդոյ. քանզի աստուածութիւնն քննիչ խորհրդոյ ընդ անմարմնական հոգին միացեալ՝ զնա կառավարէր, և նովաւ զմարմինն. յաղագս այնորիկ և նա միայն արդար ի մարդկանէ, զի զխորհուրդս կառավարեաց արդարութեամբ և անմեղութեամբ, որ այլ ումեք անհաս էր. ապա թէ ոչ՝ մարմնով բազումք եղեն արդարք, բայց ոչ փրկեցաք նոքօք, զի ի հոգիս միեցաւ չար արկածիցն նեաւք ի բնաւիցս, բայց ի նմանէ՝ որ զամենայն մերկ տեսանէր և զգուշաբար պարապէր։ [1]ակ յորժամ կատարեցաւ մարմնական հասակաւն, եկն առ [1]ովհաննէս ի մկրտութիւն. ոչ աղագաւ. զի նա վըկայ լինի եթէ ելից նա մարմնով զամենայն արդարութիւն, և ոչ մեղաւ։ [1]ւ վկայեաց ոչպէս. քանզի որք մկրտէին ինքեաւ ի Յուրդան՝ խոստովանէին [1]ովհաննու զմեղս իւրեանց, և ապա ելանէին. իսկ տէր մեր վազվազակի էջ ի Յուրդն և ել, ոչինչ գիտեալ զանձին խիղճ՝ մարմնովն [1]ստուծոյ, այն մարմնովն որ մինչև ի նա խաղալիկ էր դիւաց, որք միայն ի նմանել պատե-

1 Երկու պին. Ու ի հոգին։

յան, վասն այսորիկ և բացան նմա երկինքն, և էջ Հո-
գին Յստուծոյ, այն որ հեռացեալ էր յԱդամայ, վե-
րըստին դարձեալ՝ի վերայ մարմնոյն Քրիստոսի. ոչ չա-
փով և ոչ զօրութիւն տալով, այլ անօրինաբար, զի
զիւրն ընդհ ընկալցի դարձեալ մարդկութիւնս Յս-
տուծոյ, այսինքն Աստուածն զՀոգին, որով և վարեցաւ
՝ի փորձութիւնն, և յետ յաղթութեանն դարձաւ՝ի
նշանագործութիւնն՝ նորին զօրութեամբ, զոր ծանեաւ
ստանալ արժանապէս ընկալեալ ըստ ամենապայծառ
մաքրութեանն զՀոգին։ Այլ զԱստուած ստուածու-
թիւնն միացեալ ընդ մարմինն և ոչ այժմ իմացաւ, այլ
գործէր՝ զնշանսն որպէս զմի ոք՝ի մարգարէիցն անօ-
րինաբար զօրութեամբ Հոգւոյն, ոչ թէ իբր զտկար,
այլ խորհրդոյ արդարութեանն իւրոյ ուղղիչ առ մեզն
փրկութիւն. ապա թէ ոչ, ըստ որում գրեաց Յստուա-
ծաբան, ոչ տայ Հայր Աստուած զՀոգին և ոչ չափէ,
սակայն անօրինաբար ետ նմա, և սա ընկալաւ։ Յետ
այսորիկ և արդարն՝ի վերայ անարդարոցս[1] մեռաւ.
էր վասն. զի ինքն միայն եղև արդար առաջի Յստու-
ծոյ, և զմարմնոյս եցոյց մաքրութիւն։ Պարտ էր զի և
մեք նոքաւ փրկեսցուք, և փրկեցաք՝ ոչ ձրի, այլ գա-
րիւն Աստուծոյն ընկալեալ գինս Հօրն. և անմեղին մա-
հուամբն՝ հայր մեղաց մարդկան նշաւակեալ խայտա-
ռակեցաւ և դատապարտեցաւ, այսինքն բանսարկուն.
և պատառեալ Հօր վասն մահուան Աստուծոյն զձեռագիրս
մերոյ հակառակութեանն՝ ետ դարձեալ նոքաւ և՝ի
նմանէ մարդկան զհնարհ օծութեանն Հոգւոյն։ Օ որ
համբարձեալ Քրիստոսի յերկինս, և յինքն ընկա-
լեալ՝ի Հօրէ վարձ իւրոյ աշխատութեանն՝ սիրեաց
յարարածս. այսպէս Հոգին տարբացուցանէ զմեզ՝ի
Քրիստոս, իբր զկենդանութիւն սիրեալ՝ի գլխոյն՝ի
յանդամն։ Ստ այսմ օրինակի և այժմ եղև. քանզի
տալով քահանային զԱստուած՝ի դիմաց մարդկութեանս
Հօրն, ընկալաւ սիրով, և ետ՝ի նա՝ի Քրիստոս
զփոխարէն հատուցումն պատարագին զՀոգին, այս-
ինքն՝ զի աղաչանօք նորա և բարեխօսութեամբ առա-
քեաց զնա յանուն նորա, ըստ այմմ. Հոգին Տէրնջ

1 Երկու տրին. Նեբեդրեբ։ 2 Մի տրին. Ընդդատեալ։

առեալ՝ զոր առաքեսցէ Հայր յանուն իմ. . իսկ
նա եկեալ յանուն Աբրիատոսի և նոսա և ի նմանել,
զհայց արար մարմին Աբրիատոսի [1]. այսինքն ոչ բան
որակութեան փոխեալ ի միս և յարիւն, այլ զինչ-
հանդերձեալ անուանին և են մարմինք ի չորից տա-
րերց բաղկացեալք, որպէս միսն և հայն, և որպէս գի-
նին և արիւնն. և չէ ի նոսա բնութեանց զանազանու-
թիւն, այլ որակութեանց միայն [2]: Այդ նոյն Հոգին,
որ էջ եկաց ի վերայ մարմնոյն Աբրիատոսի անօրինա-
բար, և օծ զինա Աբրիատոս ըստ մարմնոյ զիւրա օ-
ծութեանն անձնաւ միութեանն Աստուծոյ, նոյն ինքն և
այժմ էջ յառաջի եղեալ նշանակս մարմնոյ և արեան
ի հացս և ի գինիս, և օծ զօրութեամբ զհամագոյա
մարմնոյն Աբրիատոսի, Հոգին Աբրիատոսի, մարմին Յի-
Հոգի Աբրիատոսի ասեմ, իբր անօրինաբար առեալ ի
Հօրէ և ոչ եթէ ի նմանել բղխեալ [3], յաղագս որոյ և
զսոյն մարմին Աբրիատոսի կատարեալ ըստ բնութեան
մարմնոյ և ըստ հոգւոյ և զօրութեան եղեալ մարմին
Աբրիատոսի, և ոչ բան գոնոյ կամ որակութեան. այլ
զի Հոգին Աբրիատոսի ի սոյն չնմարտապէս մարմին
Աբրիատոսի, որպէս և լոյս արեգական ի յօդ խառ-
նեալ՝ օդն ի լոյս փոխոխի. և զի մի Հոգի է՝ որ զամե-
նայն տիեզերաց պատարագս ընդ և կենդանացուցանէ,
մի մարմին Աբրիատոսի ասին ամենայնքն. ուստի և ա-
զօթք նոցա որ սուաւ՝ հանդչին ի վերայ իւրեաց, յոր-
ժամ հաւատան ի միաւանս սիրոյ: Այդ այժմ աս-
տուածացեալ Հոգւոյն նշանակքս, և չնմարիտ մարմին
և արիւն Աբրիատոսի եղեալ օրինակքս, և միջնորդու-
թեամբ մանկուն Աբրիատոսի յիշատակաւն Հոգիացեալ
պատարագս, և աստուածութեանն վերահայեցողու-
թիւն ի ստորինս ցուցեալ, այսուհետև յառաջ բերէ

1 Խնա, ձեզ պիծ լինի ի պանդ-
անգ քահանայապետութենէ յն-
ուէ կերպէն: Տես որ ինչ ի վեր
անգր գրամանէ առացաւ 391:

2 Ընդինքն ոչ զանազանութիւն
բան էրեսութեն, այլ բան ձևերին
խառնութեան միայն:

3 Ոչ ինչ էն գարմանք ընդ իրեն
ձեզ [illegible] ի ստորինս գրեցաւ
ի ստիճանել յարանապետ գործ
խաւեն Հոգւոյն սրոյ և ի յորդ-
ւոյ. քանզի երբեցուցն է նա ժա-
մանակաւ քան զմարդին փրկեն
աւետ, յորում պարբերաբար ստե-
մանել գաւ վարդապետութիւնս այս:

քահանային ըստ կարգի զինդիրս Հայկազանց իւրոց, որոց աղագաւ և զբանաւոր պատարագն ընծայեաց։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԱՂՕԹՅՆ

«Ամէնայն հնարհեա զսէր, զհաստատութիւն և զզգաստութիւն ամենայն աշխարհի»։ Ասաւ ասէ, այս ինքն մարմնով Աբրահամոյ, զոր ընկալաք ի քէն հնարհ և պարգեւ՝ փոխանակ մեր զնոյն պատասխանելոյն։ Այլ զոմանք ասեն մի կարծեսցուք միջնորդութեամբ ասել կամ աղաչանօք. այլ զինչ. յայտ է թէ սոյն լցոյն մեզ զայսոսիկ զինդիրս՝ որ է ի միջի մերում. քանզի միջնորդ նախ ետ զխորհրդածութիւն բանաւոր պատարագի չարչարանացն Աբրահամոյ, յետ որոյ մաղթեաց երկրպագութեամբ և աղաչանօք, եթէ ման այդ մեծ պատարագիդ՝ զոր առեր ի ձեռանէ մերմէ՝ հաշտութեամբ՝ առաքեա ի մեզ և ի նշանակ ընծայիցս զՀոգիդ սուրբ։ Այդ եկեալ Հոգւոյն ըստ աղաչանացն, և կատարեալ զմարմին և զարիւնն Աբրահամոյ, ասէ, թէ այսուհետև այն պարգեւք՝ որ էջ ի քէն ի մէջ մեր, կամօք քո լիցի խաղաղութիւն և սէր աշխարհի։ Օ՜ որ օրինակ թէ ոք ուներ կենդանաստարար դեղ սոյ և անդեղայ մահաբար դեղոյ՝ փոխանակ իւրն խնդրոյ և աղաչանաց, իսկ նա բարեմիտ ոք դոյզ ասէ, կամօք քո տացի սա ի պէտս կենդանութեան և այլոց բազմաց, և ոչ ինձ միայն. այսպէս և սա առնէ յաւելս, սուրբ հնարհեա զսէր. իբրև թէ ասելով, ինքնա որ առաջի կայ՝ ունի զօրութիւն զամենայն ինչ անձնիշխան կամօք կատարել, բայց յանձնէ ինչ ոչ առնէ, այլ զոր ինչ ի կամ Հօրդ տեսանէ զնոյն համանման զօրութեամբդ[1] ի մէջ մեր գործէ, և քո կամքդ է հաստատակաց աշխարհի փրկութիւն։ Արդ աղաչեմք զքեզ, զմնօքինութիւն կամացդ նեղգործեա ի մեզ՝ մարմնով քո Արգելոյս, և զօրութեամբ որ ի սմա Հոգւոյս, և հնարհեա ի ձեռն սորա զսէր, զհաստատութիւն և զզգաստութիւն ամենայն

1 Ուղղ. Խմբ.։ 2 Ար. օրին. Ջերմերեան։

աշխարհի ։ Այլ ոչ թէ զմարդկան առ իրեարս խըն-
դրէ առաստացուցանել, կամ նոցա ընդ միմեանս խա-
ղաղել, այլ զինչ . զԱստուծոյն առ մարդիկ իջանել,
քանզի այսմ եղև յայտնաբար և միջնորդ Քրիստոս,
և ի նոցա ձեռն զՀօրն սէր ի վերայ աշխարհի ծա-
նեաք . ըստ այնմ, «Յայտնեաց Աստուած զսէրն իւր
ի մեզ մահուամբ Որդւոյն, և Քրիստոս է խաղաղու-
թիւնն մեր և Աստուծոյ, որ զմիջնորմ ցանգոյն քա-
կեաց, և զՀնամանութիւնն ի մարմինն իւր նահան-
ջեաց ,, ։ Օ այս սէր և զխաղաղութիւն զոր յառաջն
ծանեաք, միջնորդութեամբ սորա ընդ քեզ և ընդ
աշխարհ, ուղղեալ վերստին՝ ասէ, սովաւ հաստա-
տեա ։ Այլ էր վասն միանգամ ուղղեալն կարօտի
դարձեալ հաստատութեան . քանզի երդուեալ խոս-
տեամբ զնա միշտ յանցանացն Հնամանութեամբ, ըստ
այնմ. «Ուղիք ձեր որոշեն ի մէջ ձեր և ի մէջ Աս-
տուծոյ ,, ։ Արդ զի մի ի սպառ ինասցէ Հնամանութիւն,
ընկալաք միանձնեաւոր զայս խորհուրդ սիրոյ և խա-
ղաղութեան՝ ի պէտս օր ըստ օրէ Հնամանութեանն
լուծմանն . ըստ այնմ զոր գրէ առաքեալ առ Կողոսա-
յին . «Օ ձեզ որ երբեմն օտարացեալն էիք, և թըշ-
նամիք խորհրդովք ի գործսն չարութեան, այժմ աւա-
դիկ հաշտեցոյց անդամօք մարմնոյ իւրոյ, յանդիման
կացուցանել զձեզ սուրբս և ամբիծս և անարատս առա-
ջի նորա ,, ։ Աստ մեզ ոչ երանելի Պօղոս, և գինչ է
որ ուսուցանէ մեզ՝ եթէ այժմ աւադիկ ի ձեռն յիշա-
տակի մահուանն Քրիստոսի, և Հաշտեմամբ անդա-
մոց մարմնոյն նորա հաշտեցաք ընդ Աստուծոյ ։ Կամ ո
է որ հաւատարիմ առնէ՝ թէ Հնամանութիւնն զոր ու-
նէաք ընդ նմա խորհրդովք և չար գործովքն՝ լուծաւ
սովաւ . կամ ո է որ հաստատէ այսուհետև զմիտս
մեր, թէ այսուհետև սուրբ և ամբիծ է առաջի Աս-
տուծոյ, զի ահա նոյն մարդիկն եմք, ոյնիսկ բնաւորա-
կան փոփոխումն ընկալեալ մարմնոյս Հաղորդութեամբ
չնորհիս, զի Հաւանեսցուք որպէս երկաթ հրով հրա-
նայ, կամ օգ լուսով պայծառանայ, այլ եմք նոյնն՝ որ-
պէս նախ քան զՀաշտութիւնն և յետ Հաշտութեն ։

1 Մի պին . Հատուած-ին ։

Պատասխանեալ առաքեալ ըստ կարգի ասացելոցս, բնութեամբ ոչ փոփոխիք, այլ հաւատով սրբիք. քանզի ասէ յետ այսորիկ, «Արի կայցէք ի նոյն հաւատս արմատացեալք, հաստատեալք և անշարժ ի յուսոյ աւետարանին՝ զոր լսեարուք»։ Այս նոյն հաւատս զիա՞ ասէ, այսինքն զիկրտութիւնն. զի ի միրտելն բնութեամբ ոչ փոփոխեցար, բայց հաւատով հաւատացեր՝ թէ ընդ զգալի մարմնոյս լուանալոյ՝ և հոգիս մաքրեցար։ Այսպէս յոյս, ասէ, թէ արմատացեալ ես և հաստատեալ, հաւատս անշարժ մնաք թէ և այժմ անդամք մարմնոյս Քրիստոսի և մեհուամբ նորա պատարագաւ՝ հաստեցար ընդ նմա հաղորդութեամբն ի յիշատակութենէն՝ զոր ի յաղագս գործոյն գոտար, և ես այսուհետև ի ձեզն Քրիստոսի յանպիտան կացեալ Աստուծոյ սուրբ և ամբիծ։ Այսպէս թէ ոչ հաւատաս, զիաւեա զի մեր առնոյն ինչ հաւատովք է, և ոչ նշանօք, խորհուրդ՝ իբր բարեկամաց, և ոչ նշան՝ բռնի ձգող յիշատակաց. իսկ որ ի խորհուրդս նայելով՝ ոչ հաւատայ՝ մեզանէ, զի «Առնոյն ինչ որ ոչ ի հաւատոց են՝ մեղք են»։ Այսպէս ուրեմն որոց հաւատան՝ հնարին սէր և խաղաղութիւն՝ զորս աշխարհի խնդրեաց. քանզի ասէ, «Ճ նորհեա զսէր, զհաստատութիւն, և զըղձալի զխաղաղութիւն առնոյն աշխարհի»։ Այս արդարև առնոյն աշխարհի հնարհեաց, և ոչ որպէս ի հնումն Իսրայէլի միայն. իսկ որք ոչ ընկալան, կամաւ զայս կափուցին. ապա թէ ոչ՝ յաստուածակոյս կողմանէն առնոյն ինչ ուղղեցաւ և միշտ ուղղի։

«Արդ եկեղեցւոյ և առնոյն ուղղափառ եպիսկոպոսաց, քահանայից, Աստուածորդւոյ աշխարհի, իշխանաց, ժողովրդոց, Ձանազանարհորդելոց, վանդելոց, աշխատելոց ի պատերազմունս բարբարոսաց»։ Յորժամ խնդրեաց զհաստատակաց հնարհն՝ պարզէ զեկեղեցի քրիստոնէից, իբր զսեպհական հօտ տեառն իւրոյ ի հանուր աշխարհ, և ըստ կարգի պատուոց դասեալ՝ առնեցուն զայցելութիւնն մաղթէ, քանզի սոքա զոր Աստուած, ըստ իւրաքանչիւր ընդաւոյիկ կարօտին ձեռնտուութեանն Աստուծոյ առաքելիկոյ գործոյն հանդիսս։

1 Մի պրն. հաւատով։

Ա՛ր անօրինի առնոյին կամաց Նո՛ր, և քահանայապետութեամբ Արդւոյ ի ձեռն ինամոցն և շնորհաց Նո՛ւոյն՝ եպիսկոպոսաց իմաստութեամբ առաջնորդելն, քահանայից արժանապէս հովուելն, ժողովրդոցն օրինաց հնազանդելն, Աստուածհոգւոյ ի վտանգիցն փրկել։ Ասէ՝ եթէ զայս մաղթէ միշտ, ընդէր առ բաղում ի դերև ելանեն աղօթքն սորա։ Արանցի ինքեանք ոչ կամեցան անձնիշխան կամաց զնոյնն խնդրել, վասն այսորիկ և զրկին. այսինքն զի սա յատուածակոյս կոչմանէն աղօթիւքս ուղղէ զհաղաղութիւնն, պարտին և մարդիկ առ Աստուած լինել խաղաղ, և ապա յերկոցունցս կամաց ուղղի շնորհն։ Արանցի սա զԹագաւորի կամքն համոզէ ի խաղաղութիւն. որպէս զի Թէ և ի պատժապարտ և ի Թիւր ծառայից իցեմք, միշնորդութիւնդ սորա յորժամ գառնամք յուղղութիւն, ներէ մեզ սիրոյն, ապա Թէ ոչ գառնամք ոչ խնդրեմք կրկին վասն խաղաղութիւն ունելոյ ի նորա կոչմանէն՝, և ոչ առնոյն փութալոյ՝ գատապարտիմք։ "Աւաւ և օգոյ շնորհէա զբարեխառնութիւն, և անդոյ զպտղաբերութի, և ախտասչելոյ ի պէսպէս ցաւս զփութապէս առողջութիւն.," ։ Իհանգամ քննեալ զսուտ ասէին՝ բառնան համարիմ, որով և զօդոյ զբարեխառնութիւնն մաղթէ՝ որք փոփոխին բազում անգամ ի սաստ մեզ և ի բարկութիւն Աստուծոյ, ըստ այնմ զոր Յովելէն ասէ մարգարէ. "Նարի զձեզ անպտղութեամբ, և ածի ի վերայ ձեր կարկուտ, Ջօրեակ և Թրթուր, սակայն և ոչ այնպէս զարձարուք ի կիս, ասէ տէր.," ։

"Աւաւ հանգո զամենեսեան զյառաջագոյն զի Արիաոս ննջեցեալն, զսուրբ Հարս, զՀայրապետս, զառաքեալս, զմարգարէս, զվկայեալս, զեպիսկոպոսունս, զերիցունս, զսարկաւագունս, և զընտա ուխտ եկեղեցւոյ քումդ սրբոյ, և զամենեսեան յաշխարհս կան կարգէ զարս և զկանայս հաւատով զվախճանեալս։ Արդ որս և մեզ այդ արասցես բարեբար տէր, աղաչեմք.," ։ Ի Արիաոս ասէ, զննջեցեալն հանգո,

1 Երկու՝ օրին. կոմանէն ։

որոշելով զեկեղեցի հեթանոսաց՝ որք անուանքն Քրիստոսի են ինքեաւ յանհաւատից. և ընդէր պիտաղութիւնն ամենայն աշխարհի ինդրեաց, իսկ Հնդկաստան միայն քրիստոնէից յետ մնաց։ Աւասցանելով բանաւորապէս՝ եթէ որչափ էին անհաւատքն ի կեանս աշխարհիս, կայր նոցա յոյս փրկութեան ի ձեռն դարձին և հաւատոյն, իսկ մեռեալք՝ խափանեցաւ այն յոյսն, և Յուդայոյ մատնեցան արդար դատաստանին և պատուհասիցն. իսկ եկեղեցի հաւատացելոց՝ որք ի Քրիստոս յուսոյն ննջեցին, նոցա միայն պատշաճապէս ըզհնդկաստան ինդրէ՝ ըստ անաւուտ խոստմանն, «Հայր կամիմ զի ուր եմն իցեմ, և սոքա ընդ իս իցեն, ոչ սոքա միայն, այլ և ամենայն հաւատացեալքն բանիւ սոցա յիս»։ Այլ ընդէր առաքելոց և մարգարէից հանդիպեալ աղերսէ՝ զորս յետ այսորիկ ընդ Քրիստոսի ի պետս փրկութեան մերոյ է յիշատակելոց. Թէպէտ և դնելոյ է զանդամանն ընդ գլխոյն Քրիստոսի վասն մեր յիշատակաւն, բայց սակայն նախ առաջինն սուրբ, այլ ինքն Քրիստոսիւ նոցա ինդրէ զողորմութիւն և զհանդիստ. վասն զի Թէպէտ և փառաւորեցան և հանդեան, սակայն և ոչ բնաւ ի լրումն փառացն հասին[1], այլ օրըստօրէ քաղցնուն և զառաւելութիւնն խնդրեն, ըստ որում և հրեշտակք. քանզի գիտութիւն է որ բաշխի նոցա և լուսաւորչութիւն Յուդայոյ, և այսօքիւք հոգի և ոչ բնաւ յագեցեալ, ըստ այնմ «Եւ յագի աչն առնելով, և ոչ ունկն լսելով», ուրեմն ապա ի ինդրելս մեր զնոյն սրբոցն ի ձեռն Քրիստոսի՝ կարօտին նոքա, որպէս և մեք նոցին բարեխօսութեան. զի որպէս և մեք ըստ մերումն չափոյ եմք անհաս Յուդայոյ, այսպէս և նոքա ըստ իւրեանցն, Քանզի Թէպէտ և բազում ունին տեղեկութիւն՝ յորքանն ոչ բնաւ հասին, այլ միշտ փափագեն նորոգ տուիմն ընդհանի Յ. զի Հայր միայն Աղբիւր զամենայն ինչ ցուցանէ, ապա յայտ է թէ ի ձեռն նորին

1 Լրումն փառաց սրբոց է յարութիւն մարմնոց, որում բնաւ բաժան կարօտով փափաքելովնեան, Թէպէտ նոքա ամենայն փառաց արդ պերճացեալ էին, Թող զպատահական կոչեցեալ փառան, կամ զանձուն այնպէս փառացի ձրից։

դրոյս սովաւ և առ սուրբսն առաւելուԹիւն ողորմուԹեան և շնորհաց իջանել, մանաւանդ և իսկին սովաւ պարգևաց նոցին ընձեռի, ըստ որում և գտան արժանի. իսկ մեզ ըստ մերում տարտամուԹեանս բանալոյ զբերանս և ձգելոյ զշնորհսն։

Ա՛ռայց տես, զի նախ և առաջին կենդանիքս գտեցան ի հայրաւածս, և ապա հնձեցեալքն, և այն սուրբքն և արդարքն, որով ձշգրտապէս հաստատի ձշմարտուԹիւն և յաճախ լինի ուռայնաձայնուԹիւն այնոցիկ՝ որք զայս բարձրագոյն շնորհս ի պէտս մեռելոց միայն հաւատոյն և բաշխեն, ընդ որով տեսանեմք մոլորուԹեամբ այսօր զբաւական գրաւեալ, այսինքն զի չիք ուրեք յոյս. ի ժամանակիս յայսմիկ չարի ի մէջ մեր՝ վասն իւր փրկուԹեան ընծայաբերեալ լինելոյ յեկեղեցի, կամ յայս փրկանսայ՝ Թէ շնորհ ընդունի հաւանել. այլ զինչ, կամ տայ զոհիժտ և զձիշտ տուրսն ի պէտս մեռելոց, և զսակ հանարոյն վաձառողն ի շնորհավաձառացս ի միջնէ ձգիւ պահանջէ. և կամ տայ կենաց, և ի կեանսն անյոյս է ամենևին Ա՛ստուծոյ. վասն այնորիկ գտանել ողորմուԹիւն, այլ գրով և հաստատուԹեամբ յեա մնահաւ անստերիւր զԹիւսն ունել աղերսէ։ Ա՛վ ԹըշուառԹ և անբան իմաստուԹեանս. որքան տեսանեմք Թիւր ընԹացք ԹերահաւատուԹեան ի մէջ ազխարհի, քանզի զոր պարտաւեմն՝ եպերանօք, և ես բազում անգամ արարի զտուրևառուԹիւնս, ոչ ապիտուԹեամբ որպէս զամենս, այլ զի գիտէի և յայնժամ զուղիղն և զԹիւրն, բայց ոչ երբէք կարացի զմիտս ուրուք ընդ ձշմարտուԹեանն լծով համոզել. այլ ԹէպետԹ և զուղիղն յուցանէի, նոքա զպիտակ գրոյն Թախանձէին ունել։ Ա՛ռայց զի ահա գտի տեղի՝ հաստատել զձշմարտուԹիւնն ի նոյն ինքն ի խորհրդական բանիցն՝ որով զսրբիլն յուսամք, պայծառ է ինձ այսօր վարդապետուԹիւնս քան զանցեալ աւուրց քննուԹիւնն. ձեռն ձգեալ կոչեմ և զբեզ՝ տուրևառուԹեան իմոյ, կամ ձշմարտապէս ասել, յանցանաց իմ լծակից. եկեալ ձգեա փորը ինչ և ի քո մտաց աչօդ ի լուսաւորուԹենէս, և հաստատակաբար լեցուք զգաստացեալք ի

1 Երեք օրին. Պ–ՓՆ։

խելագարութեանէ, եա՛ւ ի վանատեղին զ[1]յառաջ, և դու՛ի գնելոյն։ Վանզի զուգահաւասար է չար՝ [2]յուդայի և քահանայիցն Երկիւղ զոհոյ հաղորդել. յետ այսորիկ ուսուցաք և ընդ շաւիղ աստուածպաշտութեանն ըստ ձշմարտութեանն գնալ, և մի թիւր և մոլար հետս անխմաստիցն կոխել, և մի յաջակոզմն զգիտելն ախորժել, որ առաջի ունիմք արբունական պողոտայ։ Այս ո՛, ասես, ինձ զձշմարիտն վարդապետէ։ Այլ ես և ոչ այլ ոք՛ի մարդկանէ՝ մեծ կամ փոքր, այլ նոյն ինքն խորհուրդս առաջիկայ առ որ զյուսոյ ապագ յառեցեր, նոյն ինքն բանք պատարագիս՝ զոր փրկանս ունիս հաւատով. Թէ զիա՞ր ինչ բան ասէի, կեղակարծ հաւանութեամբ ընկալջիր, իսկ եթէ զայս՝ որով չնորհս բաշխի գնեմ առանց յաւելուածոյ առաջի՛ մի այլ յապաղեր գալ առ ստուգութիւն։

Այս զինչ ասեմ զոր լսեալ յառաջագոյն։ Որ մեռեալ խաղաղութեան աշխարհի կարօտի, զոր նախ և առաջին բանս մաղթեաց։ Որ մեռեալ Թագաւորութեամբ տիրէ։ Որ մեռեալ իշխանութիւն վարէ, Այրը և նոցա ժողովուն։ Այրը հանապարհորդութիւն։ Այրը նաւաստութիւն։ Այրը աշխատութիւն։ Այրը ընդդէմ բարբարոսաց մարտակցութիւն։ Օ՛ ինչ օգուտ է նոցին օգոյ բարեխառնութիւն, կամ որ շահ՝ յանդոյ պաղաբերութենէ, կամ երբ գոյ նա յին ախտին առողջութիւն։ Օ՛ այս ամենայն քո վասն՝ որ կենդանի եա՛ Թախանձէ քահանայս։ Օ՛ այսքան բազմօրինակ՝ ժառանգ քո ազգդ նուիրէ, առանց գնոյ տայ քեզ զայսքան օգնականութիւն աղօթից, և ոչ վաճառէ. ոչ գինս պահանջէ, զի և ոչ ինքն գնով ընկալաւ. ձրի առ և միշտ ձրի տայ, Թէ խնդրես՝ և Թէ ոչ։ Այս՝ ի հանապարհորդութիւն, և սա ընդ քեզ։ Այս՝ ի նաւատութիւն, և սա քեզ ուղեկից։ Այս յիշխանութիւն, և սա քեզ ձեռնտու։ Այս՝ ի պատերազմ, և սա քեզ մարտակից։ Այս յաշխատութիւն երկրագործութեան, և սա օգոյն անօրէն ազօթիւք։ Այսոկ յայսքան չնորհս Աբրահամի վայելեալ՝ ի ձեռն նորա, ոչ միայն անչնորհակալ լինիս, այլ և՝ ի

1 Երկու տրին. Չնորհ։ 2 Երկու տրին. Բազմագոյիւ։

փոքր և ի չնչին տուրն զնա ընդ առատաձեռնա-
ռութեան յանցանօքն ձգես, և դու որպէս ձեղ գնող՝
շնորհացն՝ հանարս պահանջես, և որ այսքան և այս-
պիսի օրինակաւ ը Քրիստոսի պատարագս ուղեկից քեզ
ունիս յաւիտեան ընթացս և զօրաւիգն, միշտ անհա-
ւատ և անյոյս ինեա կենօք ի սմանէ, և յետ մահու
ի գերեզմանն ունել բաղձասցես։ Աչ զինչ առաւելու-
թիւն ազօթիցս մեռելոց քան կենդանեաց, ցոյց և
յաճախ արա զձեմարտութիւնն. ապա թէ հաւարա-
կաց բաշխի շնորհս, և առաւել և նախադասութեամբ՝
կենդանեաց քան մեռելոց, ունայնահաւատ՝ զառանց
գնոց ձիրս ոչը աղագաւ ի գինս ձգել յօժարես, տաս
Ը:ստուծոյ և ոչ հաւատաս՝ թէ զբաժակ ջուրն աշա-
կերտացս արբուցեալ ի քէն՝ ոչ ծողու առանց վար-
ձու, այլ յինէն հաւատարմութիւն պահանջես, մա-
նաւանդ թէ և զիս Ը:ստուած կարծես, զի ասացից ինչ
և ծաղրականս, քանզի տրոյն զոր Ը:ստուծոյ ասես տալ,
յինէն՝ որ մարդ եմ հաճար և հատուցումն խնդրես։
Աչ զինչ, մոռացաւ Ը:ստուած զանուն քո, և յիմ
բազմապատկելոյն կարօտ ի վերստին յիշել, թերևս
ոչ խոստացաւ յառաջագոյն քան զիմ յիշելն հատու-
ցանել. " Ալշատ արարէք, ասէ, միւմ ի փոքրկանցս
յայսցանէ, ինձ արարէք. և թէ արբուցանէք աշա-
կերտի իմոյ ջուր, ոչ կորուսջիք զվարձն ,, ։ Չեսանես զի
նախ քան զտալդ՝ առեր զհատուցումն ի Ը:րիստոսէ ։
Ը:նենես զի նախ քան զքո տալդ ետ նա զվարձս տրից
քոց, զոր դու այսօր պահանջես ։ Ետարձրացո զաչսդ, և
յայն խոստումնն հայեա՝ զոր նախ կանխաւ եդ քո
առաջի, և մի ի համարս իմ՝ յորոյ անուն դու զղրամդ
տաս, և կեղակարծես ի յուսոյ հատուցմանն ։ Վի-
տեա, զի նա և զբաժակ ջրոյն զոր արբուցեր ինձ վասն
նորա՝ խոստացաւ ոչ առնել անտես, նախ քան զիմ յի-
շելն յիշեաց, մի թերահաւատիր, առնեսառես ունի
աչս՝ երիկամանց և սրտից քննող, յանգործան հայե-
ցող, զգործեալն ձչգրիտ գլող. եթէ այսպիսւոյ
տեառն զպտուղ հաւատոց քոց տաս, մարդկան յիշե-
ցուցանելոյ՝ նմա ոյր աղագաւ կարօտիս ։ Ա՞րդեօք է զի
Ը:ստուծոյ ուսուցանէ՝ թէ դու նմա պատարագ բերեր,
և հատուցումն խնդրես, մանաւանդ թէ և դու ոչ

լաւար՝ թէ նախ քան դիր տալդ Հատոյց . «Որ պա-
տուցանէ , ձայնեաց առ աշակերտան , ձեզ բաժակ մի ջուր
ցուրա յանուն իմոյ՝ թէ դուք Քրիստոսի էք , ոչ կորուսցէ
զվարձս իւր .. » Արդ ես յաշակերտութեանն եմ կարգ ,
և դու յարքունանողին . և զոր ինչ առնես ինձ , վասն
տեառն խոստանաս արա , և մի վասն առ իս յուսոյս ,
Այլ կարօտիմ , ասէ , ես և մեռեալն իմ օգնականու-
թեան աղօթից քահանային առաջի պատարագին .
բարիոք . և նա զկարօտութիւն քո միշտ լցուցանել
կարգեցաւ Այսուծոյ , ի կեանս և յետ մահու , ի
Ձնոտապարհորդութեան և յաշխատութենն , ի նստել
և յառնել . ամենեցուն վասն ժամ՝ որպէս լաւար , և
վասն ամենեցուն մաղթէ , իշխանի և քաղաքացւոյ ,
ժողովրդականի և շինականի , ձիաւորի և սոկակա-
նի , և ոչ խնդրէ վարձս . Ընչ երախտէ քեզ , ոչ պա-
հանջէ հատուցումն . թէ տաս՝ աղօթէ , և թէ ոչ տաս՝
աղօթէ , Այսուծոյ բարեգործութեանն առ Այսուած
աղօթիւքն նմանիլ , զամենեցուն զփրկութիւն ի պա-
տարագէն հայցէ , և ի պէտս հատարակաց օգտի զմահ
հատարակաց փրկչին նուիրէ , Արդ թէ նա այսպէս ա-
ռատացեալ է յիւր պաշտօն ապատատութենէն՝ միշտ
և յամենայն ընթացս քո աղօթիւքն օգնելով , դու
զայն սակաւ պատուէն զոր ունիս աղօթիւք նորին , և
պաշտպան լինիս մարմնական պիտոյիցն , անհատատու-
թեամբ վաճառես նմին , և հանապա պահանջես , և
զպատարագն Քրիստոսի որ զտիեզերս փրկէ՝ քեզ
միայն տաս գրել և հանգիստ , Այս վասն կարօտութենն
մարմնոյն յանցանել և զինքանի գինի քում մնդրու-
թեանդ , և զու մեծապատես , ունչ առնես , երախտես ,
և հալես գնաւելդան Այսուծոյ երախտիքն , և անվարձ
պատաքս գնաս . զի յոյժ համ ինձ հետս և երախտե-
ցեր , և յինէն հոգեհանգստութիւն պահանջեցեր և ըն-
կալար , յայտ է թէ ես վճարեցի զվարձն քո , և Այ-
սուծոյ ոչ ինչ ունիս , Այ ասն այսորիկ եկեալ յան-
ձինս զգաստասցուք ի մնդրութենէս , ծանուցեալ թէ
միշտ վայելեմք ի շնորհն Այսուծոյ և ի քահանայա-
կան աղօթս . և յոյժ համ կամիմք ինչ տալ նոցա իբրև

1 Երկու պին. ՈՒ---ր։

պարտականք տացուք, և ոչ որպէս պարտական առնել-
լով. զի նախ զնացին ունիմք և հանապազ, և յետ այ-
նորիկ զմերն տամք յերբեմն երբեմն ժամանակս. այս-
ինքն զի պատարագն յամ օր լինի քեզ, և դու պատա-
րագին ոչ տաս յամենայն օր հատուցումն։ Ա ասն այսո-
րիկ և երբ տաս, մի հաշուիր՝, այլ Ա՛ստուծոյ տուր,
և անձինդ գանձ լաւ իրատուն Պօղոսի։ Ա՛ր ինչ և
յաջողեսցի Ա՛ստուծոյ՝ ի մեր վերայ՝ անմարթ է հա-
մարել, եա քեզ զայս ետու, և դու ինձ զայն հատո։
Ա՛ւ թէ չէր անուն Ա՛ստուծոյ՝ ի վերայ իմ, և առ՝ ի
նմանէ իշխանութիւնն՝ ոչ տայիր զատացուածս քո չիս,
ապա յայտ է՝ թէ Ա՛ստուծոյ տաս. մի երախտեր, մի
դիր պահանջեր, այլ հաւատոյ թէ յօրն որ ետուր,
՝ի նմանէ զՀատուցումն առեր, ինքն գրէ յանշնջելի
կտակն և՝ ի միանձնաւորն։ Ա՛յթէ զմեղս հաւատամբ զի
առանց յիշեցուցանելոյ գիտէ, և զպատիժն հատուցա-
նէ, զբարեգործութիւնն՝ ի բարւոյ տեառնէն էր վասն
վարկանիմք մուռացեալ, և՝ ի մարդկանէ պահանջեմք
յիշել. և այն զի սոքա առանց տալոյ զմեզ յիշեն Հար-
կաւորապէս։ Ա՛ստէպ և այլ խորհուրդ քեզ յայտ-
նեմ, զոր ոչ գիտես. եկ եղբայր, և լուր սիրով, զի
մի դու վասն մեղացդ դատապարտեսցիս, և ես վասն
ոչ զգուշացուցանելոյս։ Ա՛ի Ա՛յրիատա պաշտեմք ա-
մենայն քրիստոնէից ազգք՝ ի զանազան լեզուս, և մի
Ա՛յրիատակ եկեղեցի անուանիմք ամենայն քրիստո-
նեայք, և մի սովորութիւն ունիմք ամենեքեան զՍ՛յրիս-
տոս պատարագելոյս, և միասէս խնդրեմք ամենեքեան
պատարագաւս զիրկութիւն ամենեցուն. այսինքն զի
որպէս Հայս յիւր լեզուն խնդրէ զխաղաղութիւն աշ-
խարհի, զինաւտն եկեղեցւոյ, զառաջնորդութիւն ա-
մենեցուն, զբարեխառնութիւն օդոց և զՀանգիստ
ընծայելոյ, նոյնպէս և զնոյնօրինակն և Յունգն յիւրն
խնդրէ, և Հռոմն յիւրն՝ ՝ի միոյ Ա՛յրիատակ զմի
Թախտնձանք. և յայտ է այսու թէ դու որ յուսով
և հաւատով յայս եկեղեցիս պատուդ ընծայեցեր, ընդ-
Հանրական եկեղեցւոյ որ ընդ տիեզերս՝ աղօթիցն Հա-
ղորդ գտար։ Ա՛նզի ոչ եթէ մեք աւեմք եթէ ողոր-

1 Մի տրին. Հ՝ուր։

մեռա և օգնեա Հայ իշխանին կամ Հայ Նահապար-
հորդին և կամ Հայ մեռելին, պակաս զի քեզ միայն
պարփակեսցի աղօթքս, կամ թէ նոքա Քաւանդին միայն
աղօթեն, այլ քրիստոնէից գոլով առաջնորդք՝ վասն
ամենայն քրիստոնէից եկեղեցւոյ սրբոյ աղօթեմք, և
քո քրիստոնեայ գոլով՝ կենդանի կամ մեռեալ, գրա-
եցար ի նեղբոյ իմոյ աղօթիցս և նորա, և ամենայն
եկեղեցւոյ յորժամ հաւատաս, և որ ի Պարսից
աղօթք քրիստոնէից լինի՝ իմ է, զի եմ իբրև զնոսա
քրիստոնեայ. և որ ի Կիւլիկիա իմն՝ նոցա, զի և նո-
քա որպէս զիս հաւատան։

Այդ զայս գեղեցիկ իմաստս ի քո բազմապատիկ
նեղելոյդ և թիւ պահանջելոյդ գոլ. զինչ այլ բազմա-
պատիկ՝ թիւք ուզես՝ քան զամենայն տիեզերաց ե-
կեղեցւոյ աղօթք, որ զննչին արիցդ պարտան հաւատա-
նեն՝ յորժամ հաւատաս. ապա թէ չհաւատաս այժմ,
և միայն զքոյդ պինդ ունիս զմոլորութիւն, ոչ ինչ քնաւ
ոչ օգտիս, զի և ոչ ինքն Քրիստոս է կարող օգնել
քեզ առանց քոյդ հաւատոյ. քան այնմ, "Լէ կարեր
առնել անդ զօրութիւնս վասն անհաւատութեան նոցա.,,
Լաւ հաւատաս՝ զամենայն տիեզերաց աղօթս ունիս
ընդ իմոյս. և թէ առանց հաւատոյ գնել ախորժես, և
յիմոյս իսկ վերսիս։ Օ այս և առաքեալ հաւատիւ
կանխաւ՝ գրելով առ Կորնթացիսն ի սկզբան Թղթին
ասելով. "Եկեղեցւոյդ Աստուծոյ որ ի Կորնթոս, ա-
մենեքումբք հանդերձ որ կարդան զանուն տեառն մե-
ծոյ Յիսուսի Քրիստոսի՝ յամենայն տիեզերս նոցա և
մեր.,, Այսինքն թէ յամենայն տեղի՝ ուր զանունն
Քրիստոսի կարդան՝ մեր տեղի է, և աղօթք նոցա
մեր, և մեր տեղիս ուր զանունն Քրիստոսի անուա-
նեմք՝ նոցա է, և աղօթք մեր նոցա. և այսպէս շաղ-
կապութեամբ պատկանեալ են առ իրեարս անդամքս
Քրիստոսի, միմեանց վշտակից գոլով, և միմեանց օգ-
նական, և զթերութիւն իրեարց լցուցանողք սիրով։
Դու մի ինձ այժմ զյաչախանս ոմանց ի մէջ բերեր,
և զհերձուածողական իրեարց անուանապղծութիւն.
քանզի գիտեմ և ես զամենայնն, բայց մարդկան զի-

1 Մի պրն. Բաշխ.։

տեմք զայն կամք, և ոչ Աստուծոյ։ Հերձեալ ի մէնջ զայն հաստիւք[1] և է ձշմարիտ, որ չէ քրիստոնեայ։ Իսկ որ զԱրիստոսի անուանն թագ պարծանաց ունի ի վերայ գլխոյ իւրոյ, ես ի նա եմ խոստեալ իմով աստուածեսութեամբս, և նա յիս իւրովք ընթացիւքն, և առնեքեան ի գլուխն Արիստոս. և "Ալ կարէ ասել ոան ցձեռն՝ Թէ չես ինձ պիտոյ, կամ ոան ցակին ,, . քանզի առնեքեան եմք պիտանի գլխոյն, և առնեանդն ի Արիստոս, և յառնեանդնի Արիստոս, և չիք ի մէջ մեր Պօղոս կամ Ապօղոս, Հային կամ Յունեաց, այլ գաղտիմք անգամբս Արիստոսի ի նոցա անուանցն և ի գործոցն, և պարծիմք ի Արիստոս և ի քրիստոնեայ անուն, որով առնեքեան եմք պայծառացեալք։ Ա. Յո. եթէ այս այսպէս է ասեն, և զառնեցուն աղօթս ունիմք, զինչ հարկ է մեզ պատուղ տալ քահանայից, կամ նուէր պատարագի՝ յորժամ առանց այնորիկ վայելեմք ի իւրաքանչիւր աղօթից նոցին։ Եթէ այսպէս է, աչխ ուսար ի նոյն ինքն ի խորհրդական բանիդ, զի վասն առնեցուն մատուցանի. այլ թէ զինչ հարկ է քեզ պաշտպանելն քահանայիցն[2], փող եկեղեցւոյ առաքեանն Պօղոս ուսուցանէ. "Անդադիր լերուք առաջնորդաց ձերոց և հպատակ կացէք նոցա, զի նոքա տքնին վասն ոգւոց ձերոց որպէս թէ հաշիս տալոց իցեն ընդ ձեր. զի խնդութեամբ արասցեն զայն, և մի յոգւոց հանելով., Տես, զի նա որ զհաւատս ուսոյց մեզ, յորդորեաց և առաջնորդաց հպատակել, և ոչ թէ նոքա է կամ եկամուտ օրէնք. և հպատակութիւն է օժանդակ լինել պարապելոցն ի գործն Աստուծոյ մարդկական պիտոյիցն[3], Ալ վասն. զի նոքա տքնին առ վասն ոգւոց ձերոց. տես, զի ոչ ասէ, թէ տուր որ քեզ ժամ առնէ, այլ թէ նախ քան զքո տալն է տքնութիւն, յառաջ քան զքո հպատակելն մարմնոյ նոքա՝ նա միշտ և հանապազ հոգւոյ քում հպատակէ, զի հանապազ աղօթէ, յառնեանդն աւուր պատարագէ, առանց ասելոյ՝ զհամար մեզոց

1 Ար է ասել, ձշմարիտ և ոչ ջամիա կամ ուզափառ քրիստոնեայ, թէ և իցէ տովտութեամբ իւիք տարբերեալ կամ ազգային առանձնութեամբ։

2 Ար պրեն. Քահանայիցն։

3 Ընդդէմ ազատէ նոսա ի պատմարմնութեան, և զպահս հարատեւս պատուի՝ ձեռն տալ հարց հոգեկրի՝ ոչ ինչ ընդդեմ նոցա ի մարմնաւորն։

քոյ՝ ի ձեռս ունի, և առաջի Աստուծոյ զնեբուին իմն պղծ, Աղբ եմ առա, եմ օգնես մարմնոյն, եմ կցորդ լինիս տրիւքն ազօթիցն, իսկութեամբ առնէ զգուանս քո աղաչանաց. ապա մի՝ յոգւոց հանելով, Աբրեմն ապա առեն արծաթասէր է, զի յորժամ տամք՝ խնդայ, և յորժամ ոչ տամք տրտմի և յոգւոց հանէ, Եւ է արծաթասէր պակս գառաես անհատանդ, այլ մարմնաւոր, կարօտ հարկաւոր պիտոյից մարմնոյս. և Աստուած՝ հոգի, և ոչ մարմին. և սա ընդ Աստուած խօսելովն՝ կարօտի զմնքուր հոգի ընդ անխիւթ խորհուրդն համեմատել։ Յորժամ դու ոչ հպատակես, կարօտի սա վասն հարկաւոր պիտոյից մարմնոյն գործել, աշխատել, տուրեսս առնել, գնել վաճառել, ի ձանապարհ գնալ, և յայսպիսի զբաղմունքս խառնեալ՝ մնքրութիւն մտացն ապականեալ, և եկեալ ի պատարագելն և յաղօթելն՝ ծանրացեալ ի հոգոյն և յաշխատութենէն՝ ոչ խնդայ ընդ Աստուած խօսելովն, այլ տրտմի և յոգւոց հանէ, խեթեալ ի խղճէ մտացն՝ որ գառէ զնա անարժան աստուածխօսութեանն վասն զբաղմանացն։ Յայնժամ և վասն քո խնդրելովն և ազօթելովն, քեզ գառապարտութի է ազօթքն, որ ոչ հպատակեցեր նմա, և ոչ փրկութի՝ կայծակունք հրոյ կուտեալ ի գլուխդ՝ և ոչ ի հրոյ զերծուին, ըստ այնմ. "Լեթ քաղցեալ է թշնամին քո՝ հաց տուր նմա, և եթ ծարաւի՝ ջուր տուր, զայս արարեալ՝ կայծակունս հրոյ կուտեացես ի գլուխ նորա ..։ Եւ նա զհաց ազօթիցն և զջուր տքնութեանն՝ եթ միշտ անդադար ջամբէ քեզ, և գու ոչ իւիք նմին հպատակես, նա զնոր հատուցումն մեծապէս ընդունի Աստուծոյ, և գու կրկին գառապարտութիւնն։ Աստ եթ ծուլանայ, Նեղգանայ[1], և ոչ ազօթէ վասն մարմնական հարկաւոր զբաղանացն, գու գառնիս մեզայ նորա պարտական, որ ըստ օրինացն Աստուծոյ ոչ լցեր զպաշտօն հրապատակութեանն, պակս և հրաման ընկալար. ուստի և նա հարկեալ անկաւ ընդ զբաղանացն, զի պակս նա գատի՝ եթ ոչ ազօթէ վասն քո և ոչ զգուշացուցանէ, գու գատիս՝ եթ ոչ հպատակ կաս նմին և պաշտպան

1 Ա. Հրամանակ. Ե. Ը. Ի. Ն. Ս. Տ. Ր. Ց. Ւ. Փ.

լինիս մարմնոյն : Արդ ես ի նորա ոչ զգուշացուցանեմ
լայն՝ քո կոծանեալ զարիւն կոծանելոյդ Աստուած
ի ձեռաց դիտին խնդրէ . այսպէս ի քո ոչ հպատակե-
լայն , և նորա ի զբաղումն կոծանելոյն , զարիւն նորա
Աստուած ի քո ձեռացդ ի ժողովրդականէդ խնդրէ ,
զի արդար է դատաւորն և ոչ աչառու : Արդ ես զնա
հոգւոյ քո կարգեաց պաշտօնեայ հոգևոր գործոյն , զբ-
քեզ մարմնոյ նորին կարգեաց՝ մարմնական՝ գործոյդ .
էր ասեն . Պօղոս յայտ առնէ . « Օ՛ի լեալ քո առաւե-
լութիւնդ ի նորա պակասութեանն , և նորա առաւե-
լութիւնն ի քում պակասութեանդ , և հաւասարու-
թիւն ի մի ,, : Ազբատ եմ ասէ , և ասեն այնորիկ ոչ
կարեմ տալ , և ոչ եթէ անհաւատութեամբ : Ողջ-
ոյիկ , և տուր յաղքատութենէդ Աստուծոյ զմեծն . ու-
նիս և դու քեզ օրինակ ի առաւնէն , այրին այն ասէ
շատ արկ ի գանձանակին զերկու խերևէն քան զամե-
նեսեան : Ա՛յ գիտես թէ աղքատութիւնդ քեզ Աս-
տուծոյ պատահեաց , հան նմա պտուղ ի չքաւորու-
թենէդ , և առ ի նմանէ զբազումն , որպէս յառաջէ .
մի կարծեր թէ և աստ ոչ հաւատացանէ քեզ . թէ այն-
պէս աղքատամիտ ես , և զաստիս խնդրես , կալ առաջի
աչաց զկինն այրի , որ պակասեցոյց յոտղեկացն , և կե-
րակրեաց զԱղիա , և այն զի ոչ գիտէր զնա կինն թէ
մարգարէն էր , այլ իբրև զմի ի հասարակաց մարդկա-
նէ . բայց զի հաւատաւոր էր ի ձեռս նորա՝ Աստուծոյ ,
վաղվաղակի ընկալաւ զփոխարէնն : Ծուր և դու այն-
պէս ի ձեռս սորա՝ Աստուծոյ և ոչ մարդոյ , և հա-
ւատացանէ քեզ . ապա թէ յամառիս , ոչ գիտես թէ
աղքատ վասն այնորիկ ես , զի ոչ տաս Աստուծոյ տուր-
դին քեզ : Ա՛ծեմ և այլ օրինակ ի մէջ՝ գժուարալուծ
ունկանդ , թէպէս կարացիս հաւատարիմ առնել քեզ
թէ Աստուած կայ , և արդարադատ է . քանզի զԱ-
դիային գիտեմ , զի որպէս զնին ժամանակի բան կեզա-
կարծաբար ընդունիս , Հայեաց յամենայն աղջս քրիս-
առնէից , Հայեաց ի քեզ և ի բոյդ աղգ . էր վասն
նորա ի միջա պատարագէն Աստուծոյ ոչ աղքատանան ,
և դու հանապազորդ աժդահեամբ՝ ճնաս և այնպէս

1 Մի պին . Ա-ջնուր ։

աղքատ : Տես , և որպէս եա տէսի բազում անգամ, զի նոքա ուր և բնակէն՝ ունին զխարհամանութիւնն , և մեք ընդ ամենայն աշխարհս սեփական ունիմք ընդ սարկութեանս և զաղքատութիւն : Օ իրիչ այլ այսմ պատճառ , բայց թէ զի նոքա հաւան են օրինացն Աստուծոյ , և մեք անհաւանք . նոքա Աստուծոյ տան , և ի նմանէ առնուն զհատուցումն աստ և առ յապա , մեք մարդկան վաճառեմք , և զթիւս ինդրեմք փոխարէն : Ուանզբն զալ քահանային ողջունել , և ի նա ամբառնայ ըզպատարագն , և զինդիրան տանել առաջի Աստուծոյ . Հայն ի մէնջն տուն զօդէ ' , և որպէս յատազակ ի նա զտուրն առնդէ , մեծաբանութեամբ և երախտանօք . և յորժամ զայս քննեմք , բամբասեն թէ զազգս ատէ . բամբասէ ապա և զբժիշկն , որ զվէրս հիւանդին խարէ . ապա թէ ոչ ծանիր , զի զազգս կալի քաջ սիրեմ, և զվէրն՝ որով ազգս տառապի՝ թշնամանեմ, ոչ միայն զարմանան , այլ և զհարակումն չար ախտիս տեսեալ , զի այսպիսի անհաւատութիւն ժողովրդականաց և անպտղութիւն՝ արար զեպիսկոպոսս անօրինաց մնքասուրս , զքահանայս երկրագործս , զկրօնաւորս այգեգործս : Ահա է այսքան չարեացս արմատ , յաղագս այսպիսի անհաւատութեան՝ բարձաւ ի քաղաքաց մերոց այցելութիւն եպիսկոպոսաց , եկեղեցւոյ պայծառութիւն , ժառանգաւորաց բազմութիւն , աստուածպաշտութեանն հաստատութիւն , որոյ խափտեալ՝ չարժեաց ընդ իւր և զմարմնական իշխանութիւն . և նոքա որք անարգեցին զկենդանի ընդ տէրութեամբն Աստուծոյ , և ի նեղութ Հոգևոր իշխանութեանն , անկան ի մարմնական տէրութենէն , և ծառայք եղեն տերանց չարաց : Աստ թէ զղջայեալ էաք այժմ, կամ ծանուցեալ զվէրն և ի բժշկութիւնն փութացեալ , անանցել էր քննեն . իսկ թէ դեռ եա վտանգիմք նոր , մի ոք առողջարար դեղոց ընդդիմ պատասխանեսցէ , որ վկայութեամբ մեռաց և տէսութեամբ աչաց զպատմութիւն բանիցս դիտէ , այլ ծանիցուք , զի անկարգութեամբն քակտեցաք և քակտիմք : Օ արդի-

1 Ա. յս անկարգութիւնք էին ի Նակի - այլ խրատ | ամփոփացուցին մտանեալ տէրս յայնմ ժամա- յուզութիւն ած զիտասրեալսն :

ցուք և զգուշասցուք, զշաւիղս ոտից մերոց ուղղեսցուք, աստի ուղղութեամբս ի հանդերձեալ կեանսն ժամանել հաւատասցուք. ի պետս այսորիկ բաւականապէս տուաւ բանս, փառք Աստուծոյ և տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ որ է օրհնեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

ՉԻՆԱՀ ՑԱՑՏ ԱՒՆԷ ԱՅԺՄ ՉՍՐԲՈՑՆ ԱՆՈՒԱՆՑ ՉՑԻՐԱՏԱԿՍ ԱՒՐՆԹԵՐ ՍԵՂԱՆՈՑՆ ՎԵՐԱՃԱՒԻԼ, ՍԱՐԿԱՒԱԳԻՒՆ Ի ԼՈՒԻՐ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՆ։

Հացն մեր երանելին Ստեփանէոս, բացայայտապէս տայ մեզ զայսր խորհրդոյ հաստատութիւն. ուսաւ ընկալեալ զօրութիւն, զառաջակայ բանս պատկանեմք ի նախապրելոցդ յարմարութիւն՝ թէ որը աղագաւ սրբոց յիշատակ այժմ ձառի. և էր վանն սարկաւագն որ զամենայն քարոզութիւնսն յարտաքին վայրս տաճարին ի մէջ ժողովրդեանն առնէր, զայս ոչ անդ՝ այլ ի խորանն սուրբ առընթեր սրբոյ սեղանոյն, և որ ի վերոյ նորա աստուածայինն պատարագի։ Աստ ցուցեալ է բազում անգամ զեկեղեցիս ի գծագրութեի դասակարգութեան հրեշտակաց, և նախապրութիւնդ կրկնաբանութեամբ բաւականապէս տայ զիմաստ այսոցիկ. բայց զի ամենայարմար ըստ նոցա կերպարանացն ընթռնոյ ամենայն կարգաւորութիւն եկեղեցւոյ, կարօտեմք խիտ առ խիտ զապացուցէ չնմարտութեանն բուռն հարկանել։ Ա՛ւ քանզի սերովբէքն և քերովբէքն և աթոռք են անընդմիջաբար շուրջ զԱստուածով, և անմըպետապէս հաղորդք նորին լուսաւորութեանն՝ որք ի ջուցանեն յերկրորդ պարանակն զինի իւրեանց զնոյնն, և նոքա յերրորդն. այսպէս քահանայապետն և քահանայիցն պարանակ հաղորդեալք Աստուծոյ սրովբէաբար՝ տան յաւընթերակայ պարանակ սարկաւագացն զգիտութիւնն, և նորա ժողովրդեանն։ Օ այս մինչև ցայժմ արար սարկաւագն, և իջոյց զամենայն իմաստ ի ներքին վայրէս զոր ուսաւ առ ժողովուրդն։ Ա՛ւ և նորին իսկ սոքա իբրև զՀարս նոցա և զառաջնորդս բերին, և ի զիմաց ժողովրդեանն եւան

զխաստովանութիւն հաւատոյն և զնշանակ նորին ըզ-
նաւէրս ՚ի ձեռս մատուցող քահանայիցս [1], զոր առեալ
սոցա՝ մատուցին փոխանակ ամենայն ժողովրդեանն ըզ-
բանական պատարագն հաստատութեանն նշանակացն [2].
Յետ որոյ և նշանակքն էացաւ և կատարեցաւ մարմին
և արիւն Քրիստոսի, որով ինդրեաց քահանայն իջա-
նել պէսպէս շնորհս ՚ի վերայ մատուցողաց ժողովըր-
դեանն։ Յակ յորժամ Քրիստոսի պատարագելն կա-
տարեցաւ, և որ նուաստ հայցուածքն էր քահանայիցն՝
՚ի գլուխ ել և աւարտեցաւ, գայ սարկաւագն և դար-
ձեալ ՚ի դիմաց ժողովրդեանն առընթեր Քրիստոսի՝
մատուցանէ Աստուծոյ Նոր պատարագ և նուէր զսուր-
բըս ամենայն և զնոցա Հիմնութիւնն և զառաքինու-
թիւնն։ Այլ էր վասն առընթեր Քրիստոսի. քանզի
սա գլուխ է, և նորա անդամք, պարտ է զի ընդ
պատարագել գլխոյն՝ և անդամքն ՚ի պէտս հաշտու-
թեան մեր նուիրեսցին։ Այլ քանզի ասաց Քրիստոս,
“Կամիմ Ես այլ, զի ուր եմն եմ, և սոքա ընդ իս լինի-
ցին ...”. և անդ ուր է Քրիստոս յերկինս՝ հաւատամք
զի և նորա ըստ կամելոյն իւր առնեմն են. արդ որպէս
զնորա յիշատակն տուաք Աստուծոյ Նոր վասն մեր
հաշտութեան, նոյնպէս և զսրբոցն իւրոց որ առ իւր
են. քանզի բաւական են և սոցա առաքինութեանն
յիշատակքն զնջուցանել զնա ՚ի վերայ մեր յողորմու-
թիւն, ըստ այնմ. “Ով երանելոցս եղեց քաղաքիդ այդ-
միկ վասն իմ և վասն Կաւթի ծառայի իմոյ ...”։ Այլ ոչ
աղագաւ ոչ ՚ի սկզբանն, այլ յետ կատարման պատա-
րագին յիշատակին. քանզի նախ և առաջին Քրիս-
տոսի առաքինութիւնն և մահն [3] եղև մեզ հաշտութիւն
ընդ Աստուած միջնորդ, և ապա սրբոց նորին՝ ըստ իւ-
րումն շաւղաց. յաղագս որոյ նախ զՔրիստոսին դնեմք,
և ապա ըստ կարգի զսրբոցն յիշատակ առ նմա և
ընդ նմին. քանզի նոցա աշխատութիւնն՝ Աստուծոյ
Նոր՝ Քրիստոսիս և նորա միջնորդ լինելոյն եղև սիրե-
լի, վասն այսորիկ նուաստ սուրբքն ՚ի պէտս փրկութեան
մեր նուիրին։ Կարձեալ տեսս զբարեխոսելութիւնս,

1 Մխ օրին. Քահանայիս։ 3 Մխ օրին. Խաչն։
2 Երեք օրին. Նշանացն։

զի զՔրիստոսի յիշատակն քահանայն կատարեալ պատարագեաց, և զսրբոցն սարկաւագս առընթեր նմին, ուսուցանելով զառաւելութիւն պատուոյն՝ թէ նմա որ թագաւորին յիշատակին է պաշտօնեայ և սպասաւոր՝ ոչ է պարտ ծառայակցացն զնոյն կատարել, այլ պաշտին և յիշատակին նոքա՝ ի խոնարհագոյն դասէ սարկաւագացն՝ նուիրեալ ընդ Քրիստոսի Պատուոյ Հօր։ Այլ զինչ էր նուէրն և պատարագն Քրիստոսի, բայց եթէ յիշատակ չարչարանացն նորա որ վասն մեր, հաստատութեամբ զգալի նշանակացն. այսպէս նուիրէ՝ և ըզսրբոցն չարչարանք և զաշխատութիւն ընդ Քրիստոսի պատարագ վասն ժողովրդեանն և բարեխօս, հաստատութեամբ նշանակի խնկարկութէ, քանզի խունկ արկանէ շուրջ զսեղանոյնն ընդ բանիցն, յայտ առնելով՝ թէ որպէս զայս զգալի անուշահոտութիւն շուրջ արկանեմ զինչանակաւ աստուածութեանդ զսեղանովս, այսպէս և զդրոցս բազմապատիկ առաքինութիւնն ծըխեմք բարբառով բանական բերանոյս քեզ բուրումն հաշտութեան՝ ի յերկինսդ. և որպէս շուրջ զսեղանովս է խունկ՝ և ոչ՝ ի վերայ նորին, և իմ յիշատակելս զանուն սրբոցն՝ առընթեր պատարագիս Քրիստոսի, և ոչ ընդ նմին. այսպէս և զսուրբսն հաւատամբ շուրջ զաստուածութեամբդ կարգեալս, և ոչ՝ ի ծոց քո ընդ միածնիդ առընթեր Քրիստոսի, և ոչ՝ ի փառս նորին հաւասարք և համապատիւք։ Այս մեք յուսամք թէ որպէս գլուխդ Քրիստոս իշխանական համարձակութեամբ զփրկութիւն մեր քահանայագործէ, այսպէս և սուրբքն որք գործով և աշխատութեամբ ցուցին մեզ զշաւիղս աստուածպաշտութեան, ըստ իւրաքանչիւր համարձակութեան կացեալք առաջի աստուածութեանն՝ միշտ մաղթեն վասն եկեղեցւոյ քրիստոնէից՝ Լակ թէ ընդէր բարձրաձայն կոչէ զանուանս նոցա սարկաւագն՝ ի լուր ժողովրդեանն, և ոչ խորհրդաբար որպէս քահանայն. ասելի է։ Խորհուրդ միայն Քրիստոսին է՝ մանն՝ Պատուոյ վասն մարդկան մեռանել, զոր բարեկամապէս Հօրն իւրում նուիրէ քահանայն. իսկ սուրբքն՝ որպէս պարտն էր վասն սիրոյն տեառն

1 Մի պին · Ս–;|–––+։ 2 Երկու պին · Էր։

իւրեանց Քրիստոսի մեռան, զորոց զանուանցն չիշելովն բարձր՝ ասացոյց տայ զնոսին և օրինակ ժողովրդ տեսանել, թէ ոչքան չնորհաց արժանիք գտան, վասն սակաւ աչխատութեան ընդ Քրիստոսի լինել կենաց, և ընդ նմին չիշատակիլ անուամբ։ Յարձեալ զի և ժողովուրդս՝ ի Քրիստոսի մահուան խորհուրդն և՝ ի պատարագելոյն Նոր տկարք էին, և ոչ կարացին հաղորդել թէ որպէս տայ զնա քահանայն Նոր, կամ զինարդ առնու փոխանակ այնորիկ զՆոգին. վասն որոյ միայն առ պատարագեալն Քրիստոս էր սոցա օրհնութիւնն և գոհութիւնն, և ոչ եթէ առ ընդունող պատարագին Նայրն։ Սակ սուրբքս համազգիք են ժողովրդոցն և բնութենակիցք, սոցին վշտացն կցորդք և հաղորդք, կարող է ժողովուրդս զսոցանէ բուռն հարկանել իբր զգործակցաց ընտանեաց և մերձաւորաց. վասն այսորիկ և՝ ի լուր նոցին նուիրէ զնոսա Նստուածոյ Նոր՝ առաքինութեամբք իւրեանց ընդ Քրիստոսի վասն մեր պատարագ և բարեխօս սարկաւագն։ Նա մի ոք կարծեսցէ թէ չիշին այժմ իբր զօգնականութեան կարօտ. քանզի արդարև են կարօտ չնորհի սրբոյ՝ խորհրդոյս, բայց զայս նախ քահանայն ետ նոցին խորհրդական աղօթիւքն ասելով, "Նովաւ հանդո ըզսուրբ առաքեալսն, զմարգարէս, զՀարս և զՀայրապետս.,։ Սակ այժմ՝ ի սարկաւագին նուիրի անուանքըն, և ոչ թէ՝ ի քահանային՝ ի պետս փրկութեան ժողովրդեանն, և ոչ թէ ինքեանց. քանզի ասէ,

"Նստուածոյն սրբոյ կուսին Նմարիամու, և Նովհաննու մկրտչին, սրբոյն Նստեփանոսի, և ամենայն սրբոյ եղիցի չիշատակ՝ ի սուրբ պատարագս, աղաչեմք.,։ Նչխինքն թէ սրբով պատարագաւս և ընդ ամին չիշատակեացի և ամենայն սրբոց առաքինութիւն՝ ի պետս փրկութեան մեր բարեխօսութեան, և որ Քրիստոսիս Հաշտեցար ընդ մեզ և ողորմեցար աչխարհի, նոյնպէս ողորմեաց և՝ ի ձեռն նորին անդադանց և սրբոց, աղաչեմք։ Նզաչեմք ասելով՝ զայն յայտ առնէ, թէ ընդ իս և ամենայն ժողովուրդն՝ որոց փոխան բերան առեալ խօսիմ, աղաչեն զայս. զինչ. այսինքն միջնորդու-

1 Տես որ ինչ գայսմանէ՝ ի վեր անգր առացաւ. չէջ 379։

Թեամբ Աբրահամայ, և զսրբոյն որ վասն մեր մատչին յերկինս աղաչանք՝ լիլել քեզ և ընդունել. իսկ ժողովուրդն որպէս միշտ. և այժմ կցորդին առաջնորդին իւրեանց՝ ասելով, «Լիցեա՛ ձեր և ողորմեա՛ ...» «Այսպէս առնելով Թէ զգոսա՝ զոր սարկաւագդ Հայր մեր և վարդապետ առաջի քո անուանեաց, լիցեա՛ տէր, և նոքօք վասն սոցին Ձգնութեան և բարեխօսութեան ողորմեա մեզ. այսպէս ըստ կարգի բերել զիւրաքանչիւրն ի սրբոցն, և նոքօք աղաչել կցորդութեամբ ժողովրդեանն. լիլել և զսուրբսն, որոց յիշատակն և տօնախմբութիւնն լինի, զի նոցա առաւել տուաւ յայնմ աւուր Հանդիսակութիւն առաջի Արարչոյ և Աբրահամայ նոքա. քանզի զայս ուսուցանէ մեզ և տօնելն յօր վկայութեան իւրեանց և ունելն բարեխօս։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՓԱՌԱՆՑԱԿԱՆ ԱՂՕԹԻՑՆ ԶՈՐ ԸՆԴ ԱՅՍՐ ՄԱՏՈՒՑԱՆԷ ԽՈՐՀՐԴԱԲԱՐ։

«Յիշեա՛ տէր և ողորմեա և օրհնեա զսուրբ կաթողիկէ առաքելական եկեղեցի քո՝ զոր փրկեցեր պատուական արեամբ միածնի քո և ազատեցեր խաչիւն սրբով, շնորհեա սմա զանշարժ զիաղաղութիւն ...» Օ՜ն այս ամենս ասէ յիշել այսուհետև և ողորմել. զԱբրահամ և զսուրբսն իւր. զԱբրահամ իւրով գործովքն զոր նախ ինքն յիշատակեաց, և զսուրբսն զոր առընթեր նմին սարկաւագն վերաձառեաց։ Այս տես ինձ զվայելուչն խորհրդոյս, քանզի միևդեռ զԱբրահամ միայն ունէր առաջի, ոչ ասէր՝ Թէ յիշեա և ողորմեա. այլ իբրև ամենակարող տէրամբ, նուաւ և ի ձեռն նորա զՀայրապետական կատարել Թախանձէր՝ ասելով, սուաւ շնորհեա զայս ինչ և զայս, որ կարէ զամենայն ինչ զօրեղապէս[1] անօրինել։ Ապա այսուհետև կցորդ առեալ Աբրահամայ զսուրբսն, և պատկանեալ ընդ զԼոյն զանդամանն, վայելապէս կրկնաբանէ զաղօթսն. և զոր Աբրահամու միայն ինդրեաց, երկրորդէ վերատին նոքա և սրբովք նորին Թախանձէ՝ ասելով, յիշեա տէր

1 Մի օրին. Ն-ր։ 2 Մի օրին. Կ-ր-ը-ե։

և ողորմեա. այսինքն՝ յիշեա տէր վասն Քրիստոսի զսուրբս իւր, և վասն նոցա զմեզ, և ողորմեա մեզ. յայտ է ողորմելն՝ թէ ախտակցաբար օգնեա մեզ։ Այլ խնդրելի է. զինչ է ասելս, յիշեա տէր. և թերևս ախտ մոռացմանն տիրէ ամենահայեաց բնութեանն զի զյիշելն խնդրէ, մանաւանդ և զսուրբսն իւր զորոց վկայէ բանն, «Յանեաւ տէր զայնոսիկ որ իւրն են»։ Ոչ բնաւ, այլ յիշել խնդրեմք Աստուծոյ՝ ի պէտս մերն փրկութեան. իբր թէ ասելով, մեք ոչ եմք արժանի, բայց նոցա արժանաւորութեանն՝ յիշատակն՝ որք են առաջի քո անջնջելի, շարժեսցէ զտէրդ յողորմութիւն՝ ի վերայ ծառայիցս։ Երկնեա, ասէ, զկաթողիկէ եկեղեցի առաքելական, այսինքն զժողովուրդս հաւատացեալոց՝ որք ընդ տիեզերս ամենայն՝ ի յառաքելոցն աշակերտեցան։ Երկնեա, օրհնութիւն է առատութենն Աստուծոյ բարերարութեանն խնդրուածք՝ ի վերայ նոցա։ Տես զարձեալ և աստ, զի դու վասն ամենայն քրիստոնէից աղաչես, և ամենայն քրիստոնէից եկեղեցիք՝ վասն քո. և հաղորդիմք միմեանց ըստ Քրիստոսի։

«Որ փրկեցեր պատուական արեամբ միածնի քո, և ազատեցեր խաչիւն սրբով»։ Իբր զպարտական բուռն հարկանէ հարազատ սիրովն զտէրն Աստուծոյ. փրկեցեր ասէ, վասն այնորիկ և նախախնամիլ փրկելոցս՝ ի քէն իրաւացի էր։ Այլ ուստի՞ փրկեցաք. ի՝ ձեռանէն սատանայի որ չարածական մոլորութեամբն ծառայեցուցանէր զմեզ, և մեք սակս նմա հետևելոյն անձնիշխան կամաց՝ արտաքոյ էաք օգնականութենէն Աստուծոյ և շնորհաց Հոգւոյն. ետ զնովաւ արիւնն Քրիստոս հօր փոխանակ ամենեցուն նուէր հաշտութեան, և այնպէս փրկեցաք Աստուծով՝ ի ձեռաց չարին։ Այլ ազատեաց և խաչիւն. ուստի՞. ի դատակնքէն Դամայ, քանզի նորա մեղօքն ամենեքեան դատապարտեցաք մահու. վասն զի անմեղ մեռաւ՝ զամենեսեան ազատեաց խաչիւն։ Այլ տես թէ որպէս զամենայն շնորհս Հոգւոյն առ Հայրն վերածեալ՝ զհամակատարութիւնն ցուցանէ, և ըստ Քրիստոսի խրատուն՝ Հոգւոյն անուամբն՝ ի Հօրէն

1 Մի օրին. Աւետաւորութեամբն։

զինգիրան մաղթէ, քանզի ասաց, "Ո՛ր ինչ խնդրէք յանուն իմ՝ ի Հօրէ իմմէ՝, առնուցուք ,, :

"Ը նորհեա սմա զանչարժ զհաղաղութիւն ,, : Յայտ առնէ թէ խաղաղութիւնն ընդ քեզ և ընդ մեզ անագան ուրեմն հաստատեցաւ . բայց մեք նիգ եդեալ զզանազան տեսակս մեղաց և յանցանաց՝ շարժեալ խախտեմք զնոյնն, և՝ ի թշնամանս դրդեալ՝ ի թշնամութիւն՝ նոքօք սիրելոյդ ընդդէմ յառնեմք . այլ դու որպէս բարերար տէր անտես արա, և մի երբէք յանարգութիւն մեր ընթացից շարժեր զարեամբ և խաչիւ սիրեցեալ Որդւոյ հաստատեալ զհաղաղութիւնն՝ ի մէջ մարդկան և քո, Ստուած մեր :

"Յիշեա տէր և ողորմեա և օրհնեա զամենայն ուղղափառ եպիսկոպոսունս՝ որք ուղիղ վարդապետութիւք համառօտեն մեզ զբանն Ճշմարտութեան, և առաւել զեպիսկոպոսապետն մեր՝ հնորհելով մեզ ընդ երկայն աւուրս ,, : Ո՛չ յիշելն բաւականապէս եդեալ յառաջագոյն և զպատճառ նորին, կարօտիմք վերստին գնոյն հաստատել՝ թէ ոչ է անվայելուչ ընդ մարմնոյս Քրիստոսի՝ մարմնակցաց իւրոց սրբոցն կցորդութիք լծակցել . և այսմ ուստի մեզ տացի նիւթ, բայց եթէ՝ ի նոյն ինքն՝ ի տեառն բանից . "Արա՝ ի Հօր իմում, ասէ, և դուք՝ ի յիս, և ես՝ ի ձեզ ,, : Ցեսանեմ շաղկապութիւն անդամոց . և դարձեալ զտեղ կայանի սոցին խնդրէ ուսանել . "Ուր եմն եմ, ասէ, և դուք անդ իցէք . և ուր երթամն գիտիցէք ,, : Եւ Պօղոս ասէ, "Մինչև հասցուք ամենեքեան՝ ի մի միաբանութիւն յուսոյ և սիրոյ՝ յայր կատարեալ, ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի ,, : Այս ուսար հասակ գլխոյն Քրիստոսի սոքա իցեն՝ որք առ նա ժամանեցին . և զիմդ ունիցիմք առանց հասակին զգլուխն միջնորդ՝ որք հասին առ նա և յօդեցան յոսկերս նորա և խառնեցան յանդամս նորին . ուրեմն վայելչապէս ասպա նուիրեցաւ գլուխն՝ ի գլխաւոր դասէ քահանայիցն, և հասակն՝ յերկրորդ կարգէ սարկաւագացն . և այժմ յիշեալ զլի կատարեալ մարմինն Քրիստոսի, խնդրէ սա և վասն նորին ողորմել : Այլ զինչ պտուղ ողորմութենն . օրհնեա, ասէ, զեպիսկոպոս . և ո՛չ նախ խնդրե-

ցեր Աբրիատոսիւ վասն նոցին . այո՛ , ասէ , բայց զայն Աբրիատոսիւ միայն իմդրեցի ընդունել , իսկ այժմ դա- սեալ՝ սարկաւագին ընդ նմա և ընդ սուրբսն իւր , և որպէս երբեմն ետ՝ի ձեռս իմ զպատարագն Աբրիա- տոսի նշանակօք նուիրացն և դաշամբք հաւատոցն մա- տուցանել , այսպէս և այժմ ետ զպրբոցն ամենից նուէրն վերաձառութեամբ անտանցն , և խնկարկութեանն նշանակաւ . վասն այսորիկ կարօտիմ ընդ Աբրիատոսի , և նոքօք դարձեալ զիսորհուրդ աղօթիցս երկրորդել՝ Այս էր վասն նախադասին միշտ եպիսկոպոսաբն . զի այց- ելուք և գլուխ են ժողովրդոցն , հովիւ և առաջնորդք . եթէ նոքա ուղիղ գնան , ամենեքեան հետևեալքն ան- խոտոր ձանապարհորդեն . ապա թէ թիւրեն , կուրացն հետևող տգէտքն՝ի խորխորատ մոլորութեան ընդ նո- սին կործանին . “Այր կուրի , ասէ , յորժամ առաջնոր- դէ՝ սխալէ , և երկոքեան՝ի խորխորատ անգանին ,, :

“Ցիշեա տէր և ողորմեա և օրհնեա զքո առաջի կացեալ ժողովուրդս և զպատարագիս մատուցօղս , և պարգևեա իւրաքանչիւրոց ոգւոց զպիտոյն և զօգտա- կարն ,, : Ասա կարգի ըներ յետ եպիսկոպոսացն և զառընթեր ժողովրդեանն հայցուածք՝ որ՝ի նոցանէ հովուին : Զքո առաջի կացեալ ասէ . քանզի առաջի Աստուծոյ կան յեկեղեցին առընթեր նորին խոսա- կցացն քահանայիցն : Օրհնեա ասէ , քանզի և նորին վասն դեգերին , օրհնութիւն ընդունել Աստուծոյ ըստ իւրաքանչիւր օգտի և արժանաւորութեան . իսկ մատուցողք պատարագին կոչէ , զորս ընդ ինքեան քա- հանայքն և սարկաւագունքն էն՝ի պաշտամանն և կէս սարկաւագունք . քանզի ամենեքեան նոքա ըստ իւրա- քանչիւր գործոյ մատուցման պատարագին հպատակէն , որպէս յուցեալ է : Արդ ուսանիմ իմացողքն թէ մինչ- չև չար սիտիդ ընդհաւաձառութեան տիրեալ էր , այսպէս մատչէր պատարագն բազմութիբ քահանայիցն՝ հաղորդութեամբ , և զանազան պաշտօնէիցդ հպատա- կութեամբ . ըստ որում և ունէին զօրէնս անփոփոխ ամ քրիստոնեայք . մանաւանդ զի և ժողովուրդքն լինէին առընթեր քահանայիցն և առաջի Աստուծոյ . զոր

1 Երկու տրին . Ընդ նմա և զսուրբսն իւր :

այսօր ոչ ունիմք այսպիսւ մերոց ընթացողաց ի հայրապետական շաւղաց ։

«Պարգևեա իւրաքանչիւրոցն զպիտոյն և զօգտակարսն ... ։ Յոմինքն ժողովրդեանն զիւրեանց պիտոյն, և քահանայիցն զիւրեանցն ։

«Յիշեա տէր և ողորմեա զուխտաւորս և զպտղաբերիչս եկեղեցւոյ քումմէ սրբոյ, և սրք յիշեն զաղքատս ողորմածութեամբ, և հատո նոցա զպարտս նոցին հարիւրապատիկ, ըստ ընդաբոյս առատութեանդ քումմէ աստ և ի հանդերձելումնդ ... ։ Յհաւատիկ փակեաց ի ներքոյ բանիս զառնեսեան, որք յանուն Քրիստոսի յեկեղեցիս և ի քահանայս ընծայաբերք լինին, և հատոյց թերահաւատութեամբ վաճառողաց աստ զպարտսն ընդհանրական եկեղեցւոյ պատարագ. քանզի ոչ ասէ, յիշեա զնոսա՝ որք առ իս լինին պտղաբերք, այլ զորս ընդ տիեզերս առնեսցին նուիրեն ի գոյից իւրեանց Աստուծոյ ։ Տեսանես թէ որպէս վճարեն զվաճառողդ քահանայք եկեղեցւոյ, միմեանց ձեռնտուութեամբ ։ Այլ որ ուխտաւորն, կամ ոչ սք պտղաբերիչք. ուխտաւորս կարծեմ զայնոսիկ լինել՝ որք դաշամբք վանն փրկութեան իւրեանց ընծայաբերք լինին Աստուծոյ. կամ վանն յանցանսոյ իրիք տան ի ձեռս Աստուծոյ պատարագ, ըստ այնմ. «Ուխտս դիք և կատարեցէք տեառն Աստուծոյ մերոյ. մատուցէք պատարագ ահաւորին ... ։ Սակ պտղաբերիչք են հաստարակաց ժողովուրդ՝ որք զպտուղ վաստակոց իւրեանց գանձեն աստ որ ինչ և յաջողի անձանց իւրեանց, ըստ հրամանին Պօղոսի. «Յամենայն միաշաբաթի ասէ, իւրաքանչիւր ոք անձին իւրում գանձեսցէ որ ինչ և յաջողեսցէ ... ։ Այլ առ ինչ հայեցեալ՝ կոչէ պտղաբերիչս. քանզի զոր օրինակ այգեգործն միակէ զայգին, յօտէ և բրէ, առատանէ և ստածէ, թէպէտ և զվարձ աշխատութեանն ակն ունի ի տեառնէ այգոյն գտանել, բայց սակայն և ինքն զանփառս պէտս մարմնոյն ոչ խորհ լնուլ ի պտղոյ այգւոյն, այսպէս և առաքնորդք զհաւատացեալ տունկս բանաւոր, զեկեղեցւոյս բազմութիւն՝ մշակագործեն, և վարձուց հատուցմանն ակն ի տեառնէ իբեանց ունին՝ որ կոչէ ասելով. «Ո՛կ ծառայ բարի և հաւատարիմ ... . բայց սակայն և զհարկաւոր պիտոյս մար-

ՀՈՎՆ՝ Հարկաւորապէս ընտն ՚ի ժողովրդեանն անդոյ, ըստ այնմ. «Ո՞ անկիցէ այդի, և ՚ի պտղոյ նոցա ոչ ուտիցէ։ Հոգնակս և տէր Հրամանն ետ որոց զաւետարանն աւետարանեն՝ յաւետարանէ անտի կեալ»։ Այլ զի կեան ՚ի նուիրեայ սոցա, Հարկաւորապէս առաջի Աստուծոյ յիշեն. զի նա Հատուցէ որում տան սոքա՝ և յորոյ անունն տան, քանզի Աստուած տան, և ոչ մարդոյ. և սոքա ծառայք գոլով Աստուծոյ՝ ՚ի նմանէ առնուն, և ոչ ՚ի տուողացն. ըստ որում յայրբունիսն է տեսանել, զի ոմանք երկրագործք են ընդ ձեռամբ Թագաւորին, և ոմանք զինուորք. զինուորքն ընդդիմամարտութեամբ Թշնամեացն ՚ի խաղաղութեան պահեն զաշխարհն, և սոքա գործեն. բայց ոչ աշխարհն զինուորացն հպատակեն, այլ ՚ի ձեռս արքային տան զՀարկսն, և նա ՚ի զօրականան իւր մատակարարել, և աշխատութեամբ սոցա և մարտիւ զաշխարհն ՚ի խաղաղութեան պահէ. այսպէս և Աստուած առնէ, ինքն Հրամայեաց աւետարանչացն յաւետարանէ անտի կեալ, և տուողացն զբաժակի ջրոյն խոստացաւ զՀատուցումն. վասն այնորիկ ասէ, Հատո նոցա զպարտսն իւր զկանխաւ անհատ քո խոստումն։

«Այլ զի յիշեն զաղքատսն ողորմածութեամբ, Հատո նոցա զպարտս նոցա Հարիւրապատիկ ըստ ընդարձոյս առատութեան քումմ աստ և ՚ի Հանդերձեալսդ»։ Ընդարձակ ընդարձոյս է Աստուծոյ առատութիւնն, և յաստիս վայելեմք ՚ի չնորհս նորա առատապէս, և ՚ի Հանդերձեալսն՝ անճառ բարեացն ակն ունիմք։ Ասպա Թէ այսպէս է ասէ, ընդէր ոչ ամենեքեան փարթամք, այլ աղքատք՝ կարօտ մեծատանց։ Այլ ՚ի նուազութենէ կարողութենն Աստուծոյ այս անօրինեալ՝ որ զկարևորսն ետ առատ, զլոյս, զօդ և զջուր. այլ յառատութենէ նախախնամութենէն, զի միանգամ Հաղորդականք լիցուք սիրով վասն պիտոյիցն, և այնպէս Աստուծոյ նմանք լիցուք, ոմն՝ ՚ողորմութեամբն, և ոմն Արդւոյ՝ աղքատութեամբն, և ապա ՚ի Հանդերձեալն իւրաքանչիւր որ զիւր վարձան առնու ըստ իւրում վաստակոյն՝ որպէս խոստացաւ Քրիստոս։

1 Ա՛ի օրին. ի հանդերձեալ ։

"Ելիցես տէր և ողորմեա և գթա՛ ի հոգիս հանգուցելոցն. հանգո զամենեսեան և լուսաւորեա և դասաւորեա ընդ սուրբս քո՝ յարքայութեդ երկնից, և արժանի արա ողորմութեան քում.. : Եւ կենդանեացս ըստ կարգի դասէ և վասն մեռելոցն զնաղթանս, որոց հանգիստ և գթութիւն աղերսէ առ Ա՛Ջ. քանզի նահատակեալքն և հաւատարիմ սոցայն է փրկութիւն՝ որոց գեռ և այս օր առաջանակեայ կենացս առաջի կայ, որք են՛ ի ժամանակս ընդունելի և յօր փրկութեան. իսկ վասն ննջեցելոցն ասէ սոյն առաքեալ. "Աւրաքանչիւր ոք ժառանգէ՝ զոր ինչ՛ ի կեանսն իւրով մարմնովն գործեաց, եթէ բարի և եթէ չար.. : Այլ սակայն ունիմք յոյս հայրենի աւանդութեամբ՝ գտանել և յետ մահու ողորմութիւն և ներողութիւն՛ ի մարդասիրութենէն Աստուծոյ, բայց սակաւ՝ և ոչ տիրապէս որպէս՛ ի կեանս, զի այն հատուցման վայր, և այս շրջանորհաց և ողորմութեան. ուստի և հանդիստ խնդրէ նոցա՛ ի բարերարէն Աստուծոյ ընդ սուրբսն : Վասնզի որպէս ցուցեալ է բազում անգամ, որիշ՛ ի միմեանց և հայրապետ Հոգւոց մեռելոցն՝, և ևս յայտնի է՛ ի մեծատանն և՛ ի Ղազարու առակէ, արդ ասէ թէ զՀոգիսն՝ զորս այժմ ըմբռնեաց սատանայ իշխան օդոյս ըստ պարտեաց իւրեանց, և ոչ եթող՛ ի տէր սրբոցն ժամանել՝ ըստ որում ետեսն Ա՛ստուած. գթա՛ ի վերայ նոցա և՛ ի միասանգամ գալստեանդ արդար դատաստանաւդ, զերծո յիշխանութենէ չարին և դասաւորեա ընդ սուրբսդ, որք այժմ են զերծեալք յարքայութեանդ երկնից: Ո այս խորհուրդ ընդարձակագոյն ցուցեալ է յառաջին Ճառն, յորում զորչափն օգուտ յետ մահու յաղօթից յայտնեալ եմք. բայց են ոմանք՝ որ յայսմ վայրի անմտաբար յաւելուած առնեն աղօթիցս՝ կարծելով առաւել ևս զնորհ իջուցանել՛ ի վերայ ուրուք մեռելոյ՝ որոց պարտական զանձինս վարկանին. քանզի ասեն, և մանաւանդ՝ յորոց անուն՝ զսուրբ և զանմահ պատարագս մատուցանեմք. անգիտացեալ՝ թէ այս զօրութիւն բա-

1 Ա՛յս ինքն. Ընդայութիւն, զի լսի ասելն յանուն այսր կամ գԺողով և քաւարան: այնր ննջեցելոյ, փոխանակ ասելոյ՝

2 Քանզի Աստուծոյ անուն միայն մատչի պատարագ, ոչ ումեք՝ ըստ՛ ի յիշատակ և՛ ի նպաստ ուրուք, որպէս ասակաւ պարզաբանէ.

նի, ոչ և առ մի ոք ի ննջեցելոց սահմանի, այլ առ Աստուած Հայր. քանզի պատարագս ի նորա յանուն մատչի, և նմին նուէր ի միջնէ ի մարդկանէ Քրիստոս՝ ի պէտս փրկութեանն ամենեցուն նախ կենդանեաց և ի ձեռն նոցին մեռելոց։ Արդ ասելով թէ յորոց անուն զսուրբ պատարագս մատուցանեմք, ընդ հնգին ասես ընդ Աստուած, թէ զքեզ Հանգո։ Յապիսի է անխթատութեանն մելորութիւն, ապա թէ կեղակարծես՝, զօրինակէ բուռն հար և զպարզ բանէ. փայտ հարկանելով, գիր գրելով, այլ ինչ գործ կատարելով, ոչ սովորաբար ասես՝ յանուն Աստուծոյ, յայտ արա բեալ թէ ի նորա յանուն և ի փառս գործս կատարեմ. նա և Պօղոս ոչ խրատէ. «Ամէն ուտիցէք, եթէ ըմպիցէք, եթէ զինչ և գործիցէք, յանուն և ի փառս Աստուծոյ արասջիք»։ Արդ որ հրաման առաք զուտէն հաստատակաց սեղանոյ՝ Աստուծոյ անուանն նուիրել, զիաւրհրդական սեղանս՝ մարդոյ անուանն տալով, զքան ողջոյ չգտանիմք արժանի. մանաւանդ թէ՝ և ոչ ասէ ինքն Աստ, յորոց անուն մատուցանես զդա, նա թէպէտ շնորհէ դմին Հոգի, Աստուածութիւն յաղթիմ յամօթոյ անկարգութեանս, սակայն պարտ է գիտել՝ թէ զայս յետոյ մուծին հայս ոձ՝ ախտացեալքն ի համարս պատարագացն, Վանգղի իմ մանուկ գոլով մտաւածէ, քննեցի զորին վասն զպատարագամատոյց աղօթս ի կաթողիկոսարանն և ի բազում տեղիս ի հին օրինական, և ոչ գտի բնաւ զբանս զայս, նա և ոչ յայլ ազգաց ապացոյցս՝ յորոց և մերս է թարգմանեալ. այլ պարտ է ախորժոցն յիշել առանձինն զկենդանի ոք կամ զմեռեալ, յաւելուլ առանձինն բան առ և յառաջնումն աղօթից, «Յիշեա տէր և զծառայս քո՝ զայս անուն, թէ կենդանի է՝ փրկեա, և թէ մեռեալ է՝ Հանգո»։ Արդ զի՞նչ սէր նորա և հաւատ ուսուցանէ քեզ զվասն նորին աղօթիցն, յառաջ բէր բանս և առա առաջի Աստուծոյ, և մի մելորութեամբ զտէրս իմ, որ յանուն Աստուծոյ իւրոյ եկին, ըստ այմմ. «Ահա եկի յանուն Տեառն իմոյ»։ Նոյն և որ զնորին պատուիրանն կատարեալ՝ մեռաւ, ասելով, «Ո՛վ ծանիցէ աշխարհ, եթէ սի-

1 Մի օրին. կէտադրէ։

լեմ զ՝Հայր , և որպէս եւ ինձ պատուէր , այնպէս առնեմ ,, . այսինքն զի մեռանիմ՝ ||՝Եթէ՝ ի մարդոյ անուն պատարագեալ՝ պարտական պատաստանի գոյութ . այլ ես ասէ , ոչ եթէ՝ ի մարդոյ անուն առնեմ , այլ յիշատակեմ . ապա եղբայր , թէ յիշատակես , մի այդպէս թիւր բանիւք զ՝Որուած բարկացուցանես , այլ ըստ որում զայր յիշել նման յանձն արարեր և ողորմել , ա սելով , ՝՝ Յիշեա տէր զեպիսկոպոսս , զԺողովուրդս , և ողորմեա սոցին և օրհնեա ,, . այսպէս յիշել՝ Որուածոյ աղաչեա զայն այր , թէ կենդանի կամ մեռեալ , և ողորմել նմին պատարագաւս որ յիւր անուն մատչի . քանզի թէ ես այսպէս տաղտկանամ ընդ այդր բանի թիւրութիւն , քանիօն առաւել՝ Որուած ։ Եւ ոմանք՝ որք այլ ինչ յաւելուն՝ ստերիւրեալ և թիւր մեօք ասելով , և ողորմեա ամենայն անյիշատակաց ։ ||՝Վ քո զօրութեանդ , զի զարթուցիչ թերևս և այսպանելոյս . ՝ի ծայրն հասեր իմաստին , փրկեցեր զոգի քո՝ զայս ասելով . ասա ինձ , ով է անյիշատակն՝ զոր դու յիշատակես , աղքատն , տառապեալն , վասն ՝Որիատոի կենցաղոյս արհամարհողն , որք ՝ի լերինս և ՝ի ծերպս վիմաց մեռան անհաղորդք ՝ի մարդկանէ ։ Ոչ յիշատակաւորք . որք աթծաթի ժողովեցին , և ոչ կարացեալ զկնի յետ մահու տանել , ՝ի մեզ եւտուն , զորոց զանունսն վարձկանաբս հռչակեմք յաղօթս մեր ։ ||՝Վ անթե՛ լելի յիմարութեանս . ապա թէ նոքա ՝Որիատոի խաչակիցքն և կենցաղոյս թշնամիքն՝ անյիշատակք են , յիշելն ոչ է Որուածոյ , այլ մեր . և սուտ ասացաք , թէ յիշեա զայս անուն և զայն . զի թէ նա յիշողութիւն ունէր , զնոսա նախ յիշէր՝ որ զինքն սիրեցին , և ոչ զոր դու անուանես , և նա բան գործոց իւրոց տաղտկանայ յանուանցն լուր ։ Ապա թէ յիշելն Որուածոյ է , և ոչ մեր , և նման մաղթեմք յիշել և ողորմել , զի՛ք են՝ զորս արտաքոյ ամենատես յիշողութեանն Հոմանելիք և անյիշատակս կոչեմք , ցոյց ինձ ։

՝Այ՛ որ չունէր ինչ յաշխարհէս , և չեա ՝ի ձեռս իմ գանձ ։ Ապա թէ այդ այդպէս է , մի ձայնակցեր ՝Վրիատոի և գովելի գաղքատութիւնն . քարոզեացուք ամենեցուն ակն և արծաթոյ փոյթ տանել , և նոքօք մեծայիշատակ լինել առաջի Որուածոյ . և ոչ ապա

գնեմք զիմոյն Քրիստոսի ազգատուԹիւնն, ուր և գնա
րա վարդապետուԹիւնն։ «Որ բարձր է, ասէ, առաջի
մարդկան, պիղծ է առաջի Աստուծոյ»։ յայտ է ԹԷ
որ ցած է առաջի մարդկան, որչափ աստ ցած է, այն
չափ առաջի Աստուծոյ բարձր է. և ԹԷ բարձր է և յի
շեալ է, անյիշատակն ապա ո՞ է. զի զմեծատունն
յանձնեմք Աստուծոյ՝ յիշել վասն ոսկւոյն, և զաղքա
տն ինքն յիշէ վասն Ի յերկինս գանձելոյն. գտցուք
զայն՝ որ արտաքոյ մնաց յիշմանն և հայեցողուԹեան
Աստուծոյ. յայտ է ԹԷ՝ և ոչ ոք։ Արեմն ԹԷպէ է և
այս կարծիք յաւելուածոյ ընդ սուրբ բանս խառնեալ, զի
պատարագս սիեզերաց է հաշտուԹեան նուէր՝ Քրիս
տոսի յիշատակաւս. լոյս իմանալի սիրեալ յաշխար
հըս, որ զաչս հոգւոյն մաքուր ունի՝ բան չափոյ մաքրու
Թեանն ձգէ յինքն զպայծառուԹիւնն։ Վասնեալ
զինչ պարտ է ասել և զերծորդն՝ որ ընդ սոքօք անմոռ
ԹիւնՀ, զի հարցանէն ոմանք զիմաստունս մեր. կէն
դանոյն լինի պատարագ, ԹԷ ոչ. իսկ որ բուն կատա
րեալքն են, պատասխանեն, ոչ բնաւ. այլք ասեն, ԹԷ
սուրբ կենայ այնուհետև, և որպէս զմեռեալ լինի։
Օ այս և Ի կանոնս մեր գոյ գրով հարցեալ, և ասեմ
ձիճաղելով, աչխարեցէք սուրբ հրեշտակք զայսպանելի
իմաստուԹիւնս մեր, և զմտայ Թշուառական կուրու
ԹիւնՀ. զի ինքն որ զայս հարցանէ կամ պատասխանէ,
զիարդ վարկանի զանձն հաղորդ ընծայացս Քրիստոսի
կամ պատարագող. զի ԹԷ պատարագեալ էր, գոնէ
սակաւիկ ինչ իմացեալ էր, ԹԷ Ի սկզբանէ մինչև ցվախ
ճան խորհուրդ պատարագիս վասն կենդանեացս կա
տարի. զի կենդանիքս՝ են եպիսկոպոսք, որոց զաչքն և
զնորն խնդրեաց, կենդանիքս և քահանայք, Թագա
ւորք, ձանապարհորդք, նաւորդք, վաստակաւորք, առ
ընԹերակայ ժողովուրդք պաղատուք և ուխտաւորք,
ողջմանք և հաւատացեալք. ապա այս ամենայն՝ կամ
ընդ վայր եղան աստ, կամ ինքն ոչ կարաց Ի տուա
հայել՝ խաւ և կոյր գոլով։ Այս և ինքն դիտաւորու
ԹիւնՀ պատարագիս Ի սկզբանէ մինչև ցկատարած առ
ո՞ հայի, բայց ԹԷ աս կէնդանիքս։ Այս ինձ արդ,
քո այս մին բանն՝ զոր խօսեցար վասն մեռելոյն, յայտ
Թեաց բովանդակ պատարագիս խորհրդոյ, և չնորհս

'ի նա 'ի մի հոգին դրաւեցաւ սեփական, և մեռցին ամենեքին ամենայն թափուր 'ի տանէ։ ասպա և Աբիաթոմի մահն՝ որոյ սա յիշատակ է, ոչ կենդանեաց, այլ մեռելոց եղև փրկանք։ ¶Ի անբերելի յիմարութեանս. զտարակուսական հարցումնս 'ի հակառակն են փոխեալ. զորօրինակ թէ որ 'ի տան բնակեալ՝ ընդ ծերպ ինչ ձգէ զլոյս արեգականն, իսկ որ 'ի նեղքս կայ՝ հարցանէ յիմարաբար, թէ այս լոյս է արտաքոյ տանս, թէ առ մեզ միայն, և նա ևս խելագար գոլով, ասէ. ոչ, մեզ միայն է։ Այսպէս է և այս հարցումնս ընդ հակառակն պատասխանեաւն չրջմոլիկ, զոր պարտ էր ուսուիղ չրջել, հարցանել թէ պատարագս՝ որ վասն կենդանեաց մատչի, լինի մեռելոցն ինչ օգուտ, թէ ոչ. և դնել զնոյն պատասխանին՝ կամ զոչն, և կամ ներողութեամբ թէ յորժամ բարի գործովք վախճանին։ Այլ պարտ է ամենայն իրօք զհարցումնս այսպէս չրջել, և ոչ զգլուխն 'ի վայր դնել և զոտն 'ի վեր, և հարցանել թէ գլուխն կարէ լոյս տեսանել թէ ոչ։ Այլ պարտ է զոտն՝ դնել 'ի խոնարհ և զգլուխն 'ի վեր. և հարցանել, թէ ոտքն կարէ լոյս տեսանել՝ թէ ոչ։ Ո՛ր պատասխանեմք. 'ի ձեռն ազդողութեան գլխոյն, նեարդից և ջլոց կարող է զգալ, այսինքն՝ զի մեռեալքն ոտք են, և կենդանիքս գլուխ. որպէս 'ի գլխոյն յոտսն իջանէ լոյսն, և գիտութիւնն և զօրութիւնն՝ զոր ինքն առատապէս ունի, և նախադասութեամբ վայելէ, և ապա տայ 'ի խոնարհ, այսպէս և կենդանիք առատապէս ունին զչնորհս ինքեանց սեփական, և ինքեանք վայելեն, սորին զօրութեամբ, թէ կամին այնուհետև իմացանեն զսոյն զօրութիւն 'ի ձեռն ինքեանց հաւատոցն և աղօթիցն և առ մեռեալսն լոստ արժանեաց իւրեանց, որչափ և կարեն տանել. զի թէ յետ մահու յոյս կայր փրկութեան կենաց, և ոչ բնաւ աչխատէաք, այլ պատուղ գործոց մեր՝ այս է, զոր կենաց մերովք պատրաստեմք՝ աստուածաշունչ գրովք հաստատեալ, և պատարագս Աբիաթոմի որ ընդ սրեզերս կատարի, միշտ և հանապազօր վասն կենդանեացս ամենեցուն մատչի, և 'ի ձեռս սոցա առ մեռեալսն սփոի, 'ի գլխոյն

1 Մի սրին. Ի Հանէ։ 2 Ալք. Գործոյ գերոյ։

յոտս իջեալ զօրութիւնն ։ Ա. յլ ասէ , և ոչպէս որ կեն-
դանիս եմ ես , ոտն առնել վասն իմ պատարագ ։ Ա՛սա
որում վասն մեռելոյն տուս առնել , եղբայր . զի պատա-
րագս՝ թէ տուս դու նուէր , թէ ոչ , ըստ Ա՛քրիստոսի
Տրամանացն վասն ամենայն աշխարհի փրկութեան կա-
տարի ։ Ասա թէ լինիս ընծայաբեր վասն մեղաց քոց
քաւութեան , կամ վասն Ձանազարկի աջողութեան ,
կամ վասն ՚ի բանդէ ազատութեան , կամ վասն ցաւոց
առողջութեան , կամ վասն մեռելոց Հանգստեան , Ա՛յ-
տուած առեալ զպտուղ Հաւատոց քոց ՚ի ձեռն տրից ,
որպէս յոտսաս և Հաւատաս , Հաստուցանէ քեզ սովաւ ։
Ա՛թէ չունիս իրք և չտաս , այլ միայն Հաւատաս և ա-
ղօթես , և ոտառել առնուս ողորմութիւն . զի թէ այս
ոչ էր այսպէս , ապա Հաւատարակաց չնորհս ՚ի մեծատունս
փակեցաւ ՚ , զոր մի լուցի քնաւ զմտաւ ածել , և արդա-
րութեանն Ա՛յտուծոյ անիրաւութիւն տալ , որ զգալի
լոյս Հաւատարակաց էս , թէ զիմանալի լոյսն ՚ի վաճառս
նիւթոց ձգէը . այլ վաճառի նա արդարև՝ ոչ արծա-
թոյ ՚ , այլ Հաւատոց և սիրոյ , որպէս արեգակինս՝ մա-
քուր աչաց ։ Հաւատոց գնոյն է յայտնաբան նուէրն
քո Ա՛յտուծոյ , որպէս և Ա՛բրահամայն պատարագելն
Հաւհակայ . ապա թէ առանց սիրոյ և Հաւատոց նուի-
րես , յոսկւոյն ելանես , և ՚ի չնորհացս և ոչ բնաւ շա-
հիս . և այլ ոք թէ զայդ արհամարհեաց վասն Ա՛բրա-
տոսի , և զսէրն և զՀաւատն նուիրէ նմին , նա ընդգըր-
կեալ ամիտով զչնորհս որչափ և կամի ։

" Ցիշեա տէր և զայնոսիկ՝ որք յանձն արարին
մեզ յիշատակել յաղօթս զկենդանիս և զՀանգու-
ցեալս , կառավարեա զկամս Հայցմանց նոցին՝ և ըզ-
մեզ ընդ ուղղորդն և որ լինի ՚ի փրկութեամբ , և վար-
ձատրեա բազմութեամբ զանանց և զերանելի բազում-
թիւնդ ։ ։ Ա այնչափս առնու ՚ի մէջ Հանուրս քա-
նիս զամենեսեան՝ որք աղօթից նորա կարօտեալ ըզ-
նոյն խնդրեցին օգնական . քանզի գիտեն ամենեքեան
զսա միջնորդ ընդ Ա՛յտուած , և զինքեանս կարօտ չնոր-
հացն զոր բաշխէ , վասն այսորիկ և յանձն արարին ։
Ա՛ակ գիւր յանձն արարեալսն , Ա՛յտուծոյ յիշմանն յա-

1 Ա՛ի գրին · փրկեցոս ։ 2 Ա՛յլում գրին · Ա՛ի ։

ռաջ բերեալ առանդէ ։ Այլ զինչ հայցէ լինել նոցին . «Կառավարեա , ասէ , զկամս հայցմանց նոցա ընդ ուղղորդն ,, . այսինքն զի բազում ինչ է զոր մեք ուղիղ կարծեմք , և ոչ է այնպէս համարեալ առաջի Աստուծոյ , այլ ձգեալ ի կամաց ըղձից խնդրեմք հաւատով զանօգուտն մեր . զայս ասէ , Թէ նոքա խնդրեցին ի քէն ընծայիլ հայցուածոյ՝ զոր ինչ և իցէ . այլ դու որ զերեսանակ կամաց առենեցուն ի ձեռին ունիս , մի որպէս մեք կամիմք՝ որ ոչինչ գիտեմք , այլ որպէս դու և զուղիղն տեսանես , բաց այնմ և զհայցուածան կատարեա ։ «Այ որ լինի է փրկութեամբ ,, . այս ինքն զի Աստուած զամենեսեան կամի զի կեցցեն և փրկեսցին ։ Այլ մեք բազում անգամ զհակառակն փրկութեանն համարիմք փրկութիւն՝ և առնեմք , զսկիզբն գործոյն բարի տեսեալ՝ որ բազում անգամ ի հակառակն աւարտի . դու ասէ , որ ընդ սկզբանն և զվախճանն տեսանես , զկամ առենեցուն ի Նահապարտ փրկութեան իւրեանց ուղղեա ։ «Այ վարձատրեա բոլորեցուցս զանանց և զերանելի բարութիւնդ ,, ։ Այլ զեղեցիկ և առենաչնորհ հայցուածոյս , զի զանազան են ընծայք բարեգործութեան մարդկան . ոմն ողորմած է՝ զի ունի , այլ ոմն ոչ ունի՝ աղքատութենէն համբերէ . միւսն Նահապարտ ընծանայ վասն Աստուծոյ , այլ ոմն կրօնաւորի . ոմն զկուսութիւն ընտրեաց , իսկ ոմն զպսակաբերութիւնն . միւն ի ծոմէ օգնէ աղքատին , այլ ոմն ի ցանկէն ։ Այս ո՞ կարէ զընծայս զանազան բարեգործութեանն Թուել . և զի անթիւք են , վասն այսորիկ համառօտ բանիւս պարտեսակէ՝ Թէ որոյ վասն առ քեզ յուսոյդ զինչ և և իցէ բարեգործութեամբ աշխատին , մի առներ անտես , այլ ընկալ քաղցրութեամբ , և զանանց բարութիւնդ հատո առենեցուն աշխատութեանն փոխարէն . այսինքն զի մի ումեք մարմնական կենացս պանդխտութիւն առանց վարձուց հատուցման լինիցի , այլ առնեքեան ի ձեռն Աստուածոյ ի հանդերձեալ կեանն մնացեն վայելել ։ Այլ է սրբելն քահանային , և վասն այսորիկ Թարգմանի անուն նորա մաքրող , քանզի առնու զամենեցուն զգործս , լուանայ յաղտոյ արեամբն Աստուածոյ , և նուիրէ Տէր . բաց այնմ . «Խոնարհեցուցի զսիրտ իմ առնել զարդարութիւնս քո վասն հա-

տուցանն ,, ։ Այլ առնէին իւրաքանչիւր ոք զարդարութիւն, բայց սատանայ խառնէ ընդ բարեգործութիւնս զիւրն ներգործութիւն [1] . ընդ ուժեին սրբութեան զնախահաւատութիւն, ընդ այլում ողորմածութեան զմարդահաճութիւն, ընդ միաւսին աշխատութեան զհեղգութիւն ։ Ոակ իբրև խնամատուն մաքրող՝ առնու զբարեգործութիւն ժողովրդեանն, և ձգեալ ի հրաշէկ հալոց Վրիաստոսի պատարագիս, մաքրէ արտաշիկագոյն արեամբն յաղտոյն, և պայծառ նուիրէ Այտուծոյ Հօր վասն հատուցմանն մաղթելով. “Ա արձատրեա, ասէ, բոլորեցուսս զանանց և զերանելի զբանութիւնդ ,, ։ Այգարև մեծ չնորհ երախտեաց դնէ ի վերայ մեր՝ հարկաւորապէս պահանջեալ Այտուծոյ զվարձ աշխատութեան մերոյ, որում չեմք տիրապէս արժանի, քանզի նորա արարածք եմք ասէ Պօղոս, հաստատեալ ի գործս բարութեանն ։ Այլ երբ ժպրհի ծառայն վասն հարկաւոր պաշտամանն ի ստացող տեառնէն հատուցումն պահանջել ։ Այգ թէպէտ և մեք ոչ, սակայն սա հայրենի գիծէն որ առ մեզ, և հարազատ համարձակութեամբն որ առ Այտուած, պահանջէ զնոյնն ։

“Այլ զտեալ զխորհուրդս մեր՝ տաձարացս յընդունակութիւն մարմնոյ և արեան միածնի քո տեառն մերոյ և փրկիս Յիսուսի Վրիաստոսի ,, ։ Ամրակս զամենայն ինդրուածս իւր վասն ժողովրդեանն արար, նոյնպէս և զայս ինդրէ նոցա, այսինքն զուտ և մաքուր լինել խորհրդոյն յընդունակութիւն առաջադրեալ պարգևին, որով զտիրապէտն են առնլոց մաքրութիւն. բայց տեսն [2] թէ որքան մաքրութիւն պիտոյ է յայս սեղան համարձակելոյն. քանզի սրբեալ զխորհուրդս ասէ, յայտ արարեալ [3] է ի մարմնական ախտից չաղախմանց նախնական սրբութեամբ են բնութք ուղղեալք, և կարօտին միայն դիւրագիտելի մտացն ի չարչին արկածից զուտ լինելոյ, որպէս զի արժանապէս ընդ իմանալի խորհուրդ մարմնոյն և արեանն Վրիստոսի խառնեսցին ։ Վանզի [4] թէ մարմնոյն միայն ձաշակելի եր զգալիս հայ, բառական էր մարմնոյ սրբու-

1 Ա՛ի պին . Ներգործութեան գործ .

թիւն տանել զսա տիրապէս. բայց յայտ է թէ ընդ զգալոյն և զիմանալի խորհուրդ սորին՝ պարտ է հաւատոց մնացն Ճաշակել, այսինքն գիտել թէ վասն եբաթեացն Քրիստոսի յիշատակին՝ զիս Աստուած Հայր օր ըստ օրէ այս խորհրդոյս հաղորդութեամբն մաքրէ. և յառաջակայ հանդիսս ընդդէմ սատանայի զօրացուցանէ, հաւատալ և գիտել թէ սրպէս մարմինս զզգալի մարմին հացիս ուտէ, և զարիւն գինեայս ընկէ և ուրախանայ, զօրանայ, այսպէս և իմացողս միտք՝ ընդ ամին Ճաշակեալ զխորհուրդ որ վասն իմ քաւութեան մահուանն Քրիստոսի՝ զօրացի, և զարթումն հոգւոյ նորա արբեալ՝ ընդ բաժակի արեանս զուարճացի։ Աստ թէպէտ և փոքր բանիւ Ճառեցաւ, սակայն երկոց և մեծաց հաւատոց կարօտիմք ստացողքըս զգիտութիւն սորին՝ որպէս պարտն է, զորոյ Ճանապարհն ուսուցանել երկայն կարօտիմք բանից, մանաւանդ թէ և չէ ինչ հարկաւոր. քանզի ամենայն աստուածաշունչ գիրք առ ի նոյն հետս առաջնորդեն, հաւատ ուսուցանելով մեզ և գործոց ուղղութիւն. և նախ է հաւատն քան զգործսն, այսինքն գործն ծնունդ է հաւատոյն, և հարկաւոր է ի գործն այսպէս շարժել առաջնորդութեամբ հաւատոյն. ապա թէ այսպէս ոչ լիցի, անբան են գործք առաքինութեանն, ոչ կարեն տալ զպտուղ սիրոյն Աստուծոյ, և ոչ զմեզ ի յառաջադիմութիւնն ուղղել. զի բան իմացութեան պարտ է ընդ ամենայն ընթացս մեր խառնել, այսինքն միշտ քննել խոհականութեամբ մնալ և որոնել՝ զինչ է այս գործ, էր վասն աւանդեցաւ, կամ ուր յանգի կատարումն սորա, որ և միով դիմաւորութեամբ յայտնեսցի։ Ո՞րինչ է կուսութիւնն, և էր վասն. քանզի ամենայնութիւնն վասն բնական հեշտութեան խառնիմ զմեզ ի պատաղումն և ի սէր աշխարհի՝ կնոջ և որդւոց, և ձգեալ ի նոսա սիրոյն՝ ոչ կարէ որպէս պարտն է առ Աստուած դառնալ։ Այն այսորիկ սահմանեցաւ կուսութիւն, զի անզբաղ մտօք կանխեսցուք ի սէրն Աստուծոյ։ Որդ եթէ Թողեալ զսէր ամենայնութեան՝ այլ ինչ գրաւեսցէ, զիտաս մեր ի ներքոյ իւր,

1 Մի սրին. Ոչ սրին։

ազատումիւն կամ փառասիրութիւն, յայտ է թէ մոլորեցաք ի Հանապարհէ կուսութեանն, և ոչ կարեմք տալ զպատուդ նորա զսէրն Աստուծոյ. ուստի բարիք էր մեզ ամուսնութիւնն և ընդ օրինաւոր հնազանդութեամբ կապիլ, քան կոյս անուանեալ լինել և ի նախատապատիս առնելոյ զսէրն Աստուծոյ վերիպիլ։ Արձեալ զինչ է աղօթք. խօսակցութիւն Աստուծոյ. և որ խօսի ընդ ումեք՝ վասն այնորիկ խօսի, զի զանկրնդիր խօսակիցն առաջի աչաց ունի, և ինքն պիտէ զինչ ընդ նմա բարբառի. ապա թէ զայս ոչ ունիցի, ոչ ընդ խօսակիցն առաջի և ոչ զտեղեկութիւն իւրոց խօսիցն, ունայն և մնոտի աշխատի, զայն ինչ ասելով զոր ոչ գիտէ, և ընդ այն խօսելով զոր ոչ տեսանէ։ Ասասի Հարկաւոր է խօսակցացն Աստուծոյ պատարագաւս՝ այնչափ աշխատել և ամփոփել զմիտս ի հայեցուածոց աշխարհիս, մինչև զԱստուած իմանալն այլոք մնացն տեսանէ, և տեսութիւն այնպիսի, որպէս զի յորժամ հարցանիցէ ընդ գիտակցութիւն մնաց իւրոց, թէ ես առ Աստուած, զայն պատասխանէ. յետ այնորիկ և իւր գիտել զոր ինչ ընդ նմա բարբառի, և կամ որոյ վասն խօսի, և ապա զպատուդ աղօթիցն ձաշակեալ օր ըստ օրէ՝ ի հասակ կատարման առաքինութեանն զուարճացեալ զարգանայ։ Այլ այժմ զայս այսպէս հաստատեալ, զինչպէս կարելիք հասանել թէ նոքա գիտացին՝ զոր ինչ խօսէին, որք ի կենդանեաց հանեալ գերեզմանս պատարագիս՝ առ մեռեալս պարփակեցին, և թերևս ոչ որպէս զանշունչ ձայն տայր միշտ ասելովն, «Միշեա տէր զորս յանձն արարին ինձ յիշել յաղօթս՝ նախ զկենդանիս և ապա զհանգուցեալս»։ Կամ ումի իմանալոյ զկատարածութիւն կամաց նորին ուղղութիւն, զտումն խորհրդոց՝ մարմնոյն Քրիստոսի ընդունելութիւն[1]. մեռելոց եթէ կենդանեաց։ Արդարև այսպիսի իմացողս ոչ գիտակիցն կարեմ հասանել թէ տեսանէր, և ոչ զոր ինչ խօսէրն գիտէր Աստուածպէս. որպէս զանշունչս բարբառէր. և չէ ինչ մեզադրելի զայս այսպէս խորհողացն, կամ վասն կրպակք խորհանացն բազմութեան, կամ յաղագս գբահանայս նորին վա-

1 Երկու տրին. Դիմեն։ 2 Երկու տրին. Ընդունելութիւն։

Ջառիչս՝ յաձախութեան, կամ՝ վասն պաշտօնէիդ խոր-
հըրդոյս նուաղութեան. զի յորժամ զպատարագս մե-
ռելոց և ոչ կենդանեաց գիտեր փրկանք, անկար է՝ ի
նմանել տորին սպասահարկութեան պահանջել ուղղու-
թիւն. այլ պարտ է նախ զմիտան յայս կարծեացս սըր-
բել, և ապա բան կարգի զիարատ պաշտամանն վարդա-
պետել։ Այլ արդ ուստի բերցուք քեզ բան հաւանա-
կան, զժուարուղղելի եղբայր և անհաւան, ուստի ած-
ցուք դատաւոր՝ կշռամբել զառ օրէնսն Աստուծոյ անի-
րաւութիւնդ։ Ան յերկինս և ոչ յերկրի, ոչ օրինա-
կաւ վարիմք և ոչ բաղդատութեամբ այլոց ուղղու-
թեամբն պահպարակեմք. այլ՝ի նոյն ինքն՝ի բերանոյ
քո դատեցուք զքեզ, ոչ իբրև զծառայ չար, այլ իբրև
զտառհակ եղբայր հարազատ, զի չար նման է զիս
կամ զքեզ կոչել՝ որ իշխէ մեզ տիրապէս. բարբառ
քո եկեալ՝ի մէջ լեցի քեզ ոսոխ, աղօթիդ զոր օտա-
րացոյ համարիս տալ՝ եկեալ յարիցէ առարկու՞, թէ ոչ
նոցա, այլ մերձակայիցս է սեպհական։ Ո՞ւր՝ի ձեռս
քո զՀայեն, ո՞չ ապաքէն կենդանիքս. ո՞ զՀաւատան, ոչ
սոքա։ Որո՞յ առաքելոյր առ Աստուած հրեշտակ, եթէ
ոչ՝ի կենդանեացս. լուայ զի սոցա հրամայեցեր ահիւ
կալ ընդ քեզ, և ոչ մեռելոցն. սոցա և զընծորէն և զօ-
րութիւնն բաշխեցեր՝ի կցորդութիւն աղօթիցդ զօ-
րանալ. սրովբէիցն կցորդ ոչ սոքա եղեն, զիարս՝ի վեր
ոչ սոքա ընծայեցին ըստ հրամանի քումմ. յամենայնի
մեռեալքն օրհնեցին, թէ սոքա։ Այլ թերևս ասես,
սոքա զայս ամենայն վասն մեռելոցն երգեն և ասեն։
բայց տար զչարաչար կարծիդ. զի նախ ինքեանց ընդ-
հրա՝ որ վայելեն՝ի սոյն, և ապա՝ի ձեռն սոցա մեռե-
լոցն. նոցայն զկեզակարծ ընդրկս, և սոցայն ձնմարիտ.
այլ և դու զքոյն քննեա աղօթից զօրութիւն։ Ակր առ
վաւ ունմ ինդրեցեր. Հաստատութիւն խաղաղութեան
Աստուծոյ առ որս լինել հայցեցեր. զօդս բարեխառն
վասն գերեզմանականացն մաղթեցեր։ Ո՞չ յանձն առ-
նեն քո Աստուծոյ յիշողութեանն զեպիսկոպոսս, ըզ-
ժողովուրդն, զպատարագիչսն, զողորմածսն՝ առ ոչինչ

1 Մխ օրին. Ի վանօքն։ 3 Մխ օրին. Խնդրեցեր։
2 Մխ օրին. Անօրէնութիւն։

հանարիս, և միայն ՚ի մին եա փակեալ բան զնորին զոր ուսան մեռելոցն խնդրեցեր. և զայս ոչ հասարակաց՝ այլ միոյ հոգւոյ, որում և զնշան կետիցն բազմացուցանես։ Օ՜ինչ է այսքան խաւար՝ տգիտութեանս որ մածեալ է զմեզ։ Կնդէր այս ունելով և ականջս՝ ոչ տեսանեմք և ոչ լսեմք։ Կանի ասպարէզ է ՚ի բերանոյ մինչև ցունկն, զի զբարբառ սորին ոչ ներեմք ունկանն լսել և տեղի տալ. այսքան էր խաւարեցուցաք զպայծառութիւն եկեղեցւոյ վանն մնոտի յուսոյ։ Ի պետս այսորիկ մի հայն ՚ի Պօղոսէ աւանդեալ մեզ ամենեցուն ՚ի վայելումն՝ ՚ի բազում սեղանս բաժանեցաւ։ ,, Հայն, ասէ առաքեալ, զոր բեկանեմք, ոչ ապաքէն հաղորդութիւն է մարմնոյն Քրիստոսի, զի ամենեքին ՚ի միոջէ հացէ անտի վայելեմք ,, ։ Իսկ այսօր Պօղոս՝ ոչ մի հաց, որպէս դու ուսուցեր առաուաձընկալ հոգի, այլ բազում. և ոչ կենաց նմին հաղորդութիւն, կամ վայելումն ըստ քումդ հրամանի, այլ յետ մահու։ Ուղեա դու այդպէսի զնմին Քրիստոսէ և զժողովրդեան իմոյ։ Ընդէր զարտուղի գնամք ՚ի հնմարտութեան առաջնորդիդ հետոց։ Կանգի գնայ ՚ի մէնջ աւանդեալն ՚ի քէն բարեկարգութիւն. և թէպէտ դու համարձակութիւն ետուր արեամբն Քրիստոսի ՚ի մուտս սրբութեանցն, մեք ոչ հաւատամք, ոչ հնմարտեմք զսիրտս, և ոչ առ ՚ի նոյնն մատչիմք, այլ արարաք զտունս սրբութեան վաճառատան. մեք խորհիմք ՚ի նոյնն մտանել, և զմանկունս անխիտաստ ածեմք, ոչ բաշխել մեզ զգիտութիւն մարմնոյն Քրիստոսի, այլ օտարացն զնոյն վաճառել։ Կրիստոսն քո, Պօղոս, զոր դու այնքան փառաւորեցեր, և մեզ զնոյն ուսուցեր, չունի ՚ի մէնջ ոչ սարկաւագ պաշտօնեայ, ոչ կէս սարկաւագ դռնապան, ոչ դպիր երգեցող, ոչ ընթերցող վերծանող [1], ոչ ջահս լապտերաց, ոչ բուրմունս խնկոց, ոչ ժողովուրդ սիրալիր։ Այլ զինչ. զտունս ՚ի բազում անկիւնս բաժանեցաք, և զմի հացն ՚ի բազում սեղանս պատակտեցաք. ածեմք զմանկունսն ՚ի տունն՝ վաճառել զնոյն մեռելոցն, և մեք զդրունսն փակեալ անցեալ գնամք յիւրաքանչիւր գործս և յաշխատու-

1 Երկու օրին. խա։ 2 Ալլք վերծանող։

թիւն . և պատճառ այսմ ոչ ջնեղգութիւնն մեր դնեմք , և կամ զանհաւատութիւն , այլ զերկեղածութիւնն . ի վաճառէն զ՚ստուած աներկիւղ եմք , և ի մերձենալ ի նոյն կամ առընթեր լինել՝ երկիւղածք : Այս այն քո սիրուն Աբրիատոն այսպիսի մեռելոտի հաւատով առ ի մինչ պաշտի . չգիտեմք զիւր սէրն . ծերանամք , մեռանիմք , և ոչ բնաւ զնորին գըթոյ ձաշակն առնումք . նա և ոչ ձաշակեմք , երբ ըզդուռն ձաշակմանն այդպիսի փակովք պնդեմք . մի թէ ոչ մերձենալ ի խորհուրդ Աբրիատոսի քո , այլ և ոչ ի բացուստ ներեմք տեսանել : Ամդ լաց զմեզ , որպէս երբեմն զՅաղատասային . անկծ չարաչար և զմերն խոստվեցուցիչս , ըստ որում երբեմն զնոցայն . զի մեզ ոչ թէ հրեշտակ կամ մարդ անուանի աւանդեաց աւելի քան զոր ի քէնն ընկալաք , այլ մարդք զորոց և ոչ զանուանսն գիտեմք՝ եկին զազատութիւնս մեր ծառայեցուցին , զբարեկարգութիւս մեր քակտեցին , և այնչափ մոլորեցուցին՝ մինչ զի ոչ հաւանիմք առ քեզ ի տեղդ կապանաց նայել , կամ յաշակերտաց քոց զՀնմարտութիւն ուսանել . վասն այսորիկ և անյոյս եմք ի փրկութենէ . մոլորութեանս որպէս Հնմարտութեան լինել վրէժխնդիր յօժարիմք : Ամարի վշտակից , վշտակցեա մեզ քաղցրը արտասուօքդ՝ որպէս և Յորնեթացւոյն :

Ահագ եղբարք գոնեայ անագան և մեք զանձինս աշխարեացուք . անկծ ցաւագինս ի վերայ մերոց խոստվեցուցողացն հանցուք , որք այնչափ ունայնասուցին յաչս մեր զԱբրիատոսի մարմնաւորութիւնն , որք այնչաւի ծանր և դժուարապատանելի ուսուցին մեզ զվշտակից փրկչին զողորմածութիւն , որք այսքան երկիւղ խուսափմանն արկին մեզ ի նորա հարազատն սիրելութենէ : Օ ինչ պարտ է ասել . որ բան բաւական է զմեր թշուառութի աչխարել : Օ եկեղեցիս՝ Աստի անդամոցս ընդդէմ փակեցին , և անօրինաց մաքսատուն արարին : Օ պատարագիս հաղորդութիւն ի կենդանեացս հանին , և ի մեռեալս վաճառեցին : Օ պաշտօնէից բազմութիւն բարձին , և ի քահանայութիւն զամենեսեան վերածին , քահանայանալ՝ ոչ Աստուծոյ , այլ Թուոյն Հանդոյ . ուստի և վաղվաղակի քահանայացեալ , ոչ բնաւ գիտեմք զինչ դպրութիւն

կամ գործ նորին, զինչ սարկաւագութիւն կամ պաշտօն նորին. այլ միայն մնեալ գաղտագողի ՚ի ձերպս խորանացն ծակուց՝ ամբարիակեմք զդրունս, և անդ շուտափոյթ երագմամբ գյաւիտեանն ասեմք և զաղմկեմս։ Հրամայեմք և առնեմք, և փութապէս արտաքս ելանեմք. իսկ յորժամ արտաքս գամք, ժողովրդեանն որոց պէսպէս աղօթիւք՝ և ոչ զմի ոք առընթեր մեզ գտանեմք, այլ այսր անդր ՚ի գործս իւրեանց ընթացեալ. քանզի ոչ ինքեանց Հաւատան զփրկանաքս՝ այլ մեռելոցն, վասն այսորիկ և ոչ ինան. թէ տօն լինի, մինչև ՚ի պատարագն է խրախուճիւնն, և պատարագն ՚ի խաւարի. և թէ ոչ տօն՝ նոյնպէս նորին գործառնութիւնն այսպանելի։ Վասնասուն տարւոյ պատարագողն գեռ ևս տկարանայ գիտել, թէ ո՞ր է ՚ի պատարագս սարկաւագին բան, և ո՞ր ժողովրդեանն. քանզի և ոչ բնաւ կացեալ է նմա առընթեր կամ սարկաւագ պաշտել կամ ժողովուրդ աղօթել, այլ ինքն միայն ՚ի ներքոյ փակեալ դրանցն է զգործն կատարեալ. մարմնով Հաշակեալ, և մտօք անհաղորդ ՚ի խորհրդոյն ինացեալ. և թէ ոք առընթեր կացցէ, թէպէտ և կատարեալ ոք է, զի անաւոլոր է՝ գայթէ և տկարանայ յաղօթելն։ Ի՛վ թշուառութեանս. պակասեաց թերևս ոտին ՚ի Վաղայադէ, լինել առողջութի՛ բեկման ժողովրդեանս իմոյ. ոչ երբէք, զի զեղու առատապէս, բայց մեք ոչ խոնարհիմք առ առողջարար դեղն. այլ մոլորեալ Համարիմք զտիեզերս որք ընդ ուղիղն գնան, և մեք Հաձեալ եմք ընդ անձանց թիւր ընթացս. բամբասեմք և յայտնեմք զեկեղեցիս քրիստոնէից վասն ընդարձակ գործոցն, և զանձինս ոչ բնաւ կշռեմք, և ոչ Հանապազեմք թէ նոքա ընդ օրինօքն մեղաւոր լինին առաջի Աստուծոյ, իսկ մեք օրինացն կոխիչք և անօրէնք. նոքա պռոնկին և յիւրեանց մարմինն մեղանչեն, մեք զօրէնսն լուծեալ՝ զՀաստատակաց ազգս կործանեցաք։ Ընկամք եմ լուեալ ՚ի Հաւատարիմ մարդոց, և ոչ աչօք տեսեալ, թէ ո՛րքան չարիք գործի այսօր յարևելս ՚ի Հաւատ և ՚ի կարգս եկեղեցւոյ, մինչ զի և անօրինաց եղաք նախատինս և իրաւամբք գարշելիս։ Ձուրքն չառնու կապալ, և եպիսկոպոսքն վաճառեալ զչնորհն Քրիստոսի՝ բռնութեամբ զնոյն

յաձախեն : Յոր Հոռոմ կամ ի փոանգ տեսաք զայս անմոռնալիսնս . են և նոցա եկեղեցիքն ի բազում տեղիս ընդ անօրինօք , այլ ազատք և ի խաղաղութեան . զԱյսորսդն զինչ պարտ է ասել զփոքունցն և զիմաստնոցն : Ի Ամրղանդ քրիստոնեայքն ազատք են եկեղեցեօք , և մեք ի Հայաստանս Հարկաց ծառայք . ապա նախ զմերս քննեսցուք ախտ , թէպէտ և ելաւ ընդ բժշկութիւնն . ծանիցուք թէ մեք միայն ի քրիստոնէից անօրէնք , իսկ այլք ի ներքոյ օրինացն մեղաւորք : Ո՛ր քրիստոնէի աձոռ եպիսկոպոսութեանն ժառանգութիւն . որ այսօր ի մէնջ իբր զարեգործութիւն՝ անհնարին յանցանքս պաշտի : Ո՛ր քրիստոնէից վանք յետ մահու առաջնորդին՝ քուերորդւոյն ախտարի աւանդի : Ո՛ր եկեղեցի յետ մահու քահանային՝ կնոջ նորին պարգևի : Յայսքան մեծամեծ յանցանացս ոչ տեսանեմք առ այլ քրիստոնեայս . իսկ զպոռնկութիւն որով գնոսին բամբասեմք՝ բազում անգամ ի մէջ մեր գտանեմք : Ընդ ընդէր մեր յանցանացն զորս կարեմք բժշկել թէ կամիմք՝ հեղգալուր լինիմք , և նոցայոցն որոց ոչ ինչ կարեմք օգտել , արագախօս և արագալուր . յայտ է , որպէս զի մեք գնոսա այպանելոյին՝ արդար եբևեսցուք , շահ օգտի ունելով և ոչ ինչ : Այլ ես զիմս քննեմ վէր , որպէս զի մի թուեցայց բամբասել , այլ ի բժշկութիւնն յօժարել , զի զկար անձինն ոք ոչ կամաւ , այլ ակամայ բամբասէ առ բժիշկս՝ որպէս զի առողջութիւնն հնարեսցի . անձն իմ , ազգս իմ , բամբասելոյս ոչ այպանեմ , այլ բժշկացդ զվէրս ցուցանեմ . փութացիք , եղբարք , վասն սիրոյն Քրիստոսի ի բժշկել զվէրս իմ . դուք բուռն հարէք , և Աստուած լիցի գործակից , զի մի ի սպառ կորիցուք : Գնաց բարձաւ ամենայն բարեկարգութիւն հանուր ի յազգէս , և տեսանէ և ոչ ոք . բացցուք զաչս մտաց և տեսցուք . մանաւանդ հարկաւոր է մեզ բանալ , զի անձամբ զանձինս տեսանելի գործոյն մատուցարար կարգեցաք . առաջի աչաց կալցուք զանաչառն ատեան , և զմեր պատասխանատուութեանն ձանապարհ՝ մինչդեռ ժամանակս ի ձեռս է՝ հոգեսցուք . մի կեղակարծ լինցուք առ գիտութիւնն Աստուծոյ , որով գիւրաւ ուղղի մեղանչելն : Ա՛ն Աստուած , վկայեն երկինքն և երկիր . թէ

և Աստուած, և և նորին գատաստան. անդր որք բան մարմնոյս Տարկաւոր Հեշտութեան մեզան, նեբելիք են քան զմեզ՝ որ զօրինս նորա առ ոտն Տարեալ կոխեցաք։ Աւր մեզանէ՝ օրինազանց է, իսկ որ զօրինան լուծանէ՝ զինչ է անուն նորա. ես պատկառեմ ասել, մանաւանդ թէ երկնչիմ, զի մի աղէկիզ բժշկութեամբս վասն՝ ի խոր Տարմանս զգեղ բանիս՝ երևեցայց թշնամի. այլ տէր մեր զսոյն առ բժշկեն արասցէ պիտանի, բան որում Տաւատամ, և ոչ նիւթ խռովութեան, որպէս չարն՝ ի միտս յաչաղկոտացն ազդէ. այլ պատրիմք խոնարհել նայել, թէ արդեան՝ ի ընդհաց Հոգւոյն լուսաւորեցաւ՝ ի գիտութիւն մեր՝ պատարագիս փրկագործութիւն, և ոչ ունայն և թեթև յաչս մեր զմեծս կարծել ընդհ փրկութեանն, և ջանալ կարձել զչար սովորութիւնն սորին արհամարհութեան՝ որք այժմու ծացեալ՝ եմք՝ ի սիրոյ սորին խորհրդոյ, որպէս և յարդեանցն ցուցանի. քանզի յորժամ քահանային զայսչափ վշտակցութիւնս աղօթիւք ժողովրդեանն կատարէ, ոչ զի՝ ի նոցանէ Տանդիպի նմին մերձակայ, որոյ վասն և աղաւաղի ողորմելի կերպարանօք պայծառութիւն խորհրդոյս։ Օ՛ի ոչ սահման հրեշտակական բարեկարգութեն՝ ի յերկրի՝ որպէս առաք հրամանն՝ կատարի. ոչ սարկաւագացն դաս, որպէս զպետութիւնն և զիշխանութիւնն՝ ի սրովբէատիպ դասէ քահանայիցն զգիտութիւնն ընդունի, և ոչ առ մեզ մարդասիրապէս քարոզութեամբն որպէս յերրորդ պարունակ զնոյն իմաստնի. այլ Տաղորդի գիտութեանն քահանայն միայն, և մեր գոլով՝ ի կարգ երախայիցն և անհաւատիցն՝ նմին անհաղորդք. և այս օրինք ընդդէմ պատարագիս խորհրդոյս զինի։ Օ՛ի թէ քահանային միայն անկ էր զնոյն կատարել, ոչ առաջին սուրբքն զայս այսպէս էին սահմանեալ՝ որոյ Տակառակն այսօր՝ ի մէջ մեր լինի. զի տայ իւր միայն զխաղաղութիւնն, և ինքն իւր պատասխանէ ասելով, "Աւ Հոգւոյդ քում..." և ժողովուրդն որոյ անկ էր առնուլ զնոյն և պատասխանել, արտաքոյ՝ ի շատախօսութիւն զբազեալ՝ Աւրդ ամ աշակերտեացւք. չարաչար ասանդութեանս զոր յետոյ ընկա-

1 Երկու օրին. Ընթմ. ծանոյց.

լաք, թէ տահմանի պատարագիս զոր ՚ի սկզբանէ ու-
նիմք, Պարտ էր անմիտ առնեն, ես զանուն ոչ գիտեմ,
որ զմեզ արտաքոյ եկեղեցւոյ եհան, և զկարգն առա-
ջին եղծեաց, և զաստիճան սարկաւագութեան էլոյծ,
փոխել զբանք և զտահման պատարագիս, միայն քա-
հանային լինել հարկաւոր, և ոչ այլոց ընդ նմին լինել
գործակից, Պարտ էր փոխել և զանուն, և ոչ կոչել
հաղորդութիւն, այլ բաժանողութիւն, ըստ որում և
լինի. քանզի որ, յայլ յաղօթս հաղորդիմք իբրեաց,
յայնժամ քակտիմք և բաժանիմք ՚ի միմեանց, ամենք
արտաքոյ և ոմանք ՚ի ներքոյ. և ՚ի ներքոյ դարձեալ
բաժանեալ, ոմն յայս ծակ և ոմն յայն. ապա թէ
անուանն նոյն է որպէս ՚ի սրբոցն, և տահման աղօթիցն
նոյն՝ ըստ որում յառաջնոցն, մեք ծիծաղելի և աշ-
խարելի կամիք ընդ հակառակս նոցին այլ ազագաւ բե-
րիմք, խաղաղութիւն տալով ամենեցուն, և զխաղաղ-
արար հրամանն ոչ ոք է որ լսէ յամենեցունց. քանզի
նոքա արտաքոյ էն, և դրունքս փակեալ. այլ ես ինձէն
պատասխանեմ, "Լ՚ս հոգւոյդ քում.. հրամայեմ
այլոց ընդ իս Լ՚ստուծոյ երկրպագել, և ես միայն երկր-
պագեմ. դարձեալ սաղմոսելոյ տամ հրամանն, և ես
սաղմոսեմ՝ Լ՚ինչափ վաստակաւք, մինչ զի անյոյս
գոլով յառողջութենէ՝ գարշիմ և անձկեմ ՚ի վերացս
քննութիւն՝ Լ՚ո՞ր է որ հրեշտակ և միջնորդ առ
Աստուածն առաքէ, և ինքն ոչ առընթեր նմին կացեալ
ընդ բարեխօսին Աստուծոյ, և զբանսն բարիս լուեալ՝
խնդամտութեամբն հրձուի. այլ մեք զսա առ երկնա-
ւորն առաքեմք Աստուծոյ հրեշտակ, և փակեալ զդ-
դրունս տաճարին՝ յիւրաքանչիւր երագեմք ՚ի գործ, և
յայնչափ քաղցրութենէ պայծառութեան պաշտամանն
անհաղորդ մնամք՝ զանարժանութիւնն բազդաղելով,
և զհին սովորութիւնն կարծել պահելով՝ Լ՚ինքն զան-
հաւատսն հանէին, որպէս զի մի տգէտ մնօքն այսպա-
նեսցեն զքրիստոնէից խորհրդածութիւնն. ես կամ
դու երբ եմք սորին այսպանողք, կամ երբ տանէիր նա-
խատանացն՝ Աստ թէ ասէի, անհաւատ ես ՚ի տեղ անհա-
ւատից կացեալ: Պարձեալ Աստ թէ ոչ սոսկ, այլ զօրա-
ւոր զայս փրկանք ՚ի համարէիր, երբ զքո վրիպելն հան-

1 Ա. յաջ Փրկ.

դուրժէիր . երկնչեին ՚ի քէն և դէպ և սարսին . զեր-
կիւղդ միայն մի քեզ պարծանս համարիր , այլ խառ-
նեա ընդ երկիւղդ և սէր առ նա , զի մի լուիցես , ՚՚ Լմի
ջամբիցեմ զամենայն ինչս իմ աղքատաց , և մնանի-
ցեմ զմարմինս իմ յայրուածն , և սէր ոչ ունիցիմ , ոչ ինչ
օգտիմ ,, . զի մի ասասցէ առ քեզ Տ՚տուածաբանն ,
՚՚ Լրկնչելովդ՝ ոչ ես կատարեալ ՚ի սէրն ,, : Ամէն և
տուիսն վերածէ զմեզ առ Պ՚երիատոս , որպէս և զնա
առ մեզ էած . միշտ ընդ երկիւղիւդ կացեալ՝ ոչ ձերկ-
տիս առ նա . բայց սէրն և ընդ լանջովքն ածել ձեռն-
արկէ ՚ . ոչ ունիս սէր , վասն այսորիկ արժանաւորու-
թեամբ և հեղգութեամբ մնաս ՚ի նեղքոյ երկիւղին
արտաքոյ . թէ ունէիր զՀուր սիրոյն , պոռնկիդ ձեռն-
արկել ՚ի գլուխն յօժարէր . երկիւղին ես ծառայ , և
ոչ յետ բազում ապաշխարութեանդ Թողութեան հա-
ւատաս թէ սիրոյն տոչորէիր , և մի արտասուքն սփո-
փեալ մխիթարէր և ՚ի խաղաղութիւն զքեզ արձակէր :
Յետ մնդու ՚ի չնորհս լինիս ապաստան՝ ունել Թողու-
թիւն . վասն այնորիկ կենօք զսոյն լքեալ Թողեալ է-
լանես , և մոռացեալ ես թէ ՚ի տէր տէր ձայնելն՝ զոչ
գիտելն զքեզ պատասխանէ . էր վասն . զի ՚ի հրա-
պարակս քո ուսոյց , և ոչ ՚ի գուբ տուիմանդ [2] հան-
գեաւ : Ա՚յլ ինձ այն ոք ընդ հակառակս առեալ ըզ-
բանս այսպանեսցէ . քանզի որպէս դու ՚ի սիրոյն զար-
համարհութիւնն գիտես ծնեալ , և ես յերկիւղէն զան-
հաւատութիւնն գիտեմ յառաջեալ [3] : Պ՚ատճառ է ընդ
մի ոք բերել ՚ի չարեացդ , և բարւոք՝ զուղիղ ձանա-
պարհս ողջունել ուղղութեամբ : Ա՚ի ոք զիս և յանձն-
ապատան գտանեցէ՝ յայսպէս բարբառելն , որ և
կշտամբելոց եմ ոչ յօտարաց , այլ ՚ի բերանոյ իմոյ ,
իբրև զչար և զվատ ծառայ անպիտան . քանզի որով
դատեմ զընկերն՝ զանձն իմ դատապարտեմ , գործող
զնոյն՝ որով դատիմ . այլ յօժարիմ յասելս , զի ծանե-
ցուք թէ չեմք ապրելոց ՚ի սատիկ դատաստանացն
Ա՚ստուծոյ , և զխստութիւն արտից մերոց կակղացուս-

1 Մի օրին . Ածե-լ յե-ռնե-ւլի : 3 Մի օրին . Ց-ե-ւե-լ : Ա-յլ օր .
2 Մի օրին . Տ-ե-ռաց : Երկու Ց-ե-ւ Բերե-լ :
օրին . Տ-ե-ւմանդ :

յուք, և զանզգջական երկեղածութիւնս ի գլխուն և ի սէր փոխեսցուք, թերևս լիցի զանձել անձանց ըզփրկութիւն և մի զբարկութիւն՝ յաւուր դատաստանին Աստուծոյ, յորժամ հատուցանէ բոլոր գործս մեր, որպէս հաւատամք։ Աղաչեմ զամենեսեան, և զոմն եղբարցդ սրբոց արտասուօք սիրոյն Համբուրեմ. Ներեցէք իմոյ անզգամութեանս, և իբրև վշտակից ծառայակից ընկալարուք զիս, և զձեզ ընկալցի Քրիստոս Յիսուս տէր մեր, որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԸՆԴԵՐ ՅԵՏ ԱՅՍՈՐԻԿ ԴԱՐՁԵԱԼ ՓԱՐՈՋՈՒԹԵԱՆ ՍԱՐԿԱՒԱԳԻՆ ԵՒԱՅ ԺԱՄԱՆԱԿ

Պատ է գիտել, թէ այսուհետև վախձան էառ խորհուրդ պատարագիս՝ հանդերձ պէսպէս աղերսանօք ի քահանայէն. և մինչդեռ ոչ էր այս կատարեալ, ոչ ինչ ունէր համարձակութիւն սարկաւագն ազդել ժողովրդեանն. վասն այնորիկ լռեալ դադարեաց։ Այսօքա քահանայքս եւս խորհրդապէս զՔրիստոս Հօր, առին ի նանիւ և զՀոգին, հայցեցին զպէսպէս ողորմութիւն. իսկ յորժամ ի լուծին զխորհուրդս ածեալ յանգեցին, սարկաւագն ազդէ նոցա քարոզութիւն ժողովրդեան, եթէ ձեր փրկութիւն նուէրն զոր եսուք ի քահանայն՝ մատեալ առաջի Աստուծոյ, և նա ընկալաւ հաշտ և քաղցր կամօք. արդ պատրաստ լերուք, զի ի պատարագին ձեր փոխարէն՝ ի շնորհն Հոգւոյ՝ զոր քահանայքն առին յԱստուծոյ՝ վայելիցէք. և այսպէս զգուշութիւն տայ նոցա զի պատրաստիցին առ հանդերձեալ շնորհն որ իջանելոց է ի մէջ նոցա. այսինքն զի ընդ Աստուած Հայր գեռ ևս ոչ համարձակեալ էին ժողովուրդս խօսել. նա և ոչ զՀոգւոյն իջումն ի վերայ պատարագին խնայեալ, զի այս ամենայն ծառ ծառիկ և խորհրդաբար ի ներքին վայր սրբոյ խորանին կատարեցաւ ի մէջ քահանայիցն, և ժողովուրդն միայն Քրիստոսի լինէր խօսակից, զօրավէպական երգն և զամենայնի գոհութիւնն երգելով[1], որպէս և անդր է

1 Երկու տրին. ե- շարունակ ի փոխարինութեան երգելով։

յայտնեալ։ Ա՛րդ այսուհետեւ հանդերձեալ են զՀո-
գին տէրունական մարմնոյն ընդունել, և պարտ է զի
որպէս քահանայքն նախ ընդ Հայր խօսեցան և ապա
զՀոգին ՚ի ձեռն Ա՛րիստոսի ՚ի նմանէ ընկալան, զի
այսպէս լինի և մոցա նախ համարձակել և առ Ա՛ստուած
Հայր աղօթել, և ապա զպարգեւ Հոգւոյն ՚ի նմանէ
ընդունել։ արդ զի այսմ, ըստ որում ասացաւ, պատրաստ
լինիցին, դասուիարակ նոցին սարկաւագն նախ զգուշա-
թիւն տայ քարոզութեամբն ՚։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԱՂՕԹՑՆ ԶՈՐ ԸՆԴ ՓՈՐՁՈՒԹԻՒՆՆ ՓԱՀԱՆԱՑԻՆ ՄԱՏՈՒՑԱՆԷ

«Ա՛ՅՍՈՒՆԱՆ Ձեմնարտութեան և Հայր ողորմութիւն,
պահանամբ զքէն...» Եթաւրն դարձեալ սկիզբն դնէ ընդ
Ա՛ստուած խօսելոյ. Էր վասն. քանզի յայլ Հայցուա-
ծոց խորհուրդ զանախ փոխէ զընթացս. այսինքն զի
մինչև ցայժմ զպատարագն ետ, և զպէսպէս նուէրս ու-
նել մաղթեաց զինդիրս. իսկ այսուհետև կամի զի
Ա՛ստուծոյ, առ որ ինքն միայն պատարագատուն խօսէր,
ընդհանուր ժողովուրդն յետ Հաշտութեանն լինիցին
խօսակից ՚։ Ա՛յսր ապացոյց և զմարդկան է գտանել սո-
վորութիւն. քանզի յորժամ խնդիր առեալ անձին ու-
նեցի ՚ի մէջ ծառայից և տեառնն, ոչ վաղվաղակի
ժպրհին ընդ նա խօսակցել, այլ նախ զոք ՚ի Հաւա-
տարիմ ծառայիցն կաշառօք պատարագին Հրեշտակ
խաղաղութեան առ Թագաւորն առաքեն. իսկ յոր-
ժամ նա պատարագատուն և իւրով Թախանձելովն նուա-
ճէ զկամն տեառնն, և ուղղէ զառաջինն սէրն, յետ այ-
նորիկ ազդէ ասցա գալ, և խօսել խաղաղութեամբ ընդ
տեառն իւրեանց. յայտ արարեալ Թէ ՚ի ձեռն նուի-
րացն առաջինն սէր Հաստատեցաւ ընդ ձեզ և ընդ Թա-
գաւորն՝ իմովս Թախանձելի միջնորդութեամբ ՚։ Յա-
պէս արար և քահանայս. նախ եմուտ պատարագատուն
ինքն միայն առաջի Ա՛ստուծոյ՝ վասն ամենայն ժողո-
վըրդեանն. իսկ նա բարեհաճոյ կամաքն ընկալաւ, և
զՀաշտութիւն խաղաղութեանն ընդ ժողովուրդս ուղ-

1 Մի պրն. Ք=ըսփ=ը։

ղեաց . այժմ կարօտի միջնորդս վերատին Թախանձել՝ Թէ որոց ներելեցեր ողորմելԹեամբ և հաշտեցար ընդ նոսին քաղցրուԹեամբ , տուր բարերար կամՀդ համարձակուԹիւն այսուհետև գալ առաջի քո , և ընդ քեզ խօսակցել . յաղագս որոյ և նորոգ սկիզբն կարգէ աղօԹիցս ասելով . " Ա՛ստուած Ա՛շմարտուԹե և Հայր ողորմուԹեան , գոՀանամք զքէն .. : Ա՛յսպէս և մարգարէն օրՀնէ զԱ՛ստուած յողորմուԹիւն և յիրաւունս . զոսին վկայէ և առաջի երեսացն Ա՛ստուծոյ ընԹացեալ՝ ասելով , " ՅարդարուԹիւն և յիրաւունս Հաստատեալ է աԹոռ քո . ողորմուԹիւն և Ա՛շմարտուԹիւն գնասցեն առաջի երեսաց քոյ .. : Ա՛յլ կարօտիմք ուսանել զբացատրուԹիւնս սոցա Ի միմեանց՝ առ առաջիկայ խորհրդոցս ՀաստատուԹիւն . և գիտեմք այսպէս , Ա՛շմարիտ է Ա՛ստուած և արդար , զի ոչ ումեք ողորմի առանց անձնիշխան կամՀք Հայցելոյն . և փակեալ է ողորմուԹիւն նորա Ի Ա՛շմարտուԹենէն , մինչ չև է մեր զղջումն բախեալ : Իսկ յորժամ մեք զբանալի Հաւատոյն և աղօԹիցն Ի վերայ ձգեմք Ա՛շմարտուԹեանն , վազվազակի Ի բաց փեռեկէ զնա , և Հեղեալ զեղու զողորմուԹիւնն Ի վերայ խնդրողին՝ առաւել քան զոր խնդրեմքն և իմանամք : Ա՛յսպէս է առ Ա՛ստուած Ա՛շմարտուԹիւնն և ողորմուԹիւնն , զոր նոյն գոՀանայ սա , բայ կարգի դասեալ նախ զԱ՛շմարտուԹիւնն և ապա զողորմուԹիւնն , որպէս ասացաւ . իսկ Թէ այլ աղագաւ եդ զայս սկիզբն բանիս՝ ուսցուք ,

" Ա՛ր Ի վեր քան զերանելի նահապետացն զմեր ըզպարտաւորելոցս մեծարեցեր զընտուԹիւնս . վասն զի նոցա Ա՛ծ կոչեցար , իսկ մեզ Հայր Հաճեցար անուանել զԹաղալով .. : Ա՛վ երանելի նուիրեալ աղօԹիցս , լոյծ մեզ զտարակուսանս բանիցս . և զիարդ կարասցուք այսպէս Ա՛շմարիտ և արդար զԱ՛ստուած իմանալ , և ոչ ողորմած միայն՝ զրկեալ յարդարուԹենէ . քանզի նոցա որ երանելիք էին և սուրբք՝ նահապետացն , միայն Ա՛ստուած արժանի արար կոչել . իսկ մեզ որ պարտաւորք և յանցուցեալք , զընտանի անունն Հնարհեաց , և Հայր Հաճեցաւ կոչել . Թերևս արդարուԹեան այս գործ . այո Ա՛շմարտապէս , և Թէ զիարդ՝ ես ցուցից : Ա՛բրահամ ծառայ էր Ա՛ստուծոյ և արարած . Հաւա

տաց միայն Յ[ս]տուած , վասն այնորիկ պատուեաց [Ս]տուած զամենայն տոհմ նորա , և իւր ժողովուրդ առնուանեաց , և ինքն [Ս]տուած նոցին կոչեցաւ . որպէս և Նոր նոցին [Ա]բրահամու , որոյ հաւատով բարգաւաձեալ Ձեռ Ձոխացան : Իսկ Վ[Ա]բիատոս բնութիւնակից էր և Որդի էր [Ս]տուծոյ , եկն և ընդ մերս բնութիւն անձառ խառնմամբ միացաւ , և մի Որդի մարմնոյն իւրով Ի Ձօրէն իւր գաւանեցաւ . վասն այսորիկ և որք ծնան ընդ նմա հաւատովք , որդիք [Ս]տուծոյ կոչեցան , որպէս Որդիք ծառային՝ ծառայք , որդիք Որդւոյն՝ որդիք [Ս]տուծոյ : Ցեսանեմ զՁնմարտութեանն [Ս]տուծոյ պայծառազարդութիւն . իմա և Հայեաց , զի ոչ վայրապար որդիութեանն արար զքեզ անուան արժանի , այլ զի մարմնակից ես Որդւոյն , Հարկաւորապէս Ձայնեա և զանունն [Ս]տուծոյ Ձայր . Համձեցաւ նա Ձայր քո անուանիլ , զի և Որդին իւր մարմնոյն վասն քո մեռաւ : Իսկ սակ գործ , այլ մանն [Ս]տուծոյ արար զքեզ որդի [Ս]տուծոյ . նախ զմանն իւր Վ[Ա]բիատոս նուիրեաց Ձօր , և ապա մեզ աւետարանեաց , Ձայրն իմ է Ձայր Ձեր , և [Ս]տուածն իմ [Ս]տուած Ձեր : Արտի և ես նախ զայնր եւոս Ձօրն զյիշատակ հաղորդութեանն , և ապա ժողովրդեանս զանուն Ձօր համարձակեալ խընդրեմ անուանել : [Ա]պա յայտ է Թէ ըստ Ձնմարտութեանն եղև այս մեզ շնորհ Ի յողորմածէն . զի որպէս [Ա]բրահամ հաւատովն իւր բաշխեաց զՁնմարտութիւնն , և զ[Ս]տուած անունն ընկալաւ տոհմին իւր յողորմածէն , Վ[Ա]բիատոս բաշխեաց ոչ հաւատով միայն , այլ մանկութեամբ , և մանկութեամբ խաչի , և զՁայրն անուն [Ս]տուծոյ իւրոյ՝ հաւատացելոյ սեպհականեաց . փառք նմին յերկինս և յերկրի . սորին վասն և Ձոգին վկայէ Ձոգւոյս մերում , եթէ եմք որդիք [Ս]տուծոյ :

" Ա՛ւ այժմ տէր , ազատեմք զքեզ , զայսպիսի առ Ի բէն պատուական և գնորոգ անուանագրութեամբ շնորհ օր ըստ օրէ պայծառացուցեալ ծաղկեցս Ի մէջ սուրբ եկեղեցւոյ քո : Ա՛ւ տուր մեզ համարձակաձայն բարբառով բանալ զբերանս մեր , երգել և ասել ,, : [Հ]աւատիկ յայտ արար Թէ այս աղօթքս ասկս այսր խորհրդոյ է , որպէս զի ժողովուրդն առցին համարձակութիւն առ [Ս]տուած կարդալ . զի այժմ ասէ , ոչ վասն

այլ ինչ խորհրդոյ , այլ վասն սորին աղաչեմ , տալ մեզ համարձակութիւն զպատուական և զսուրբ Հայրենի անունդ ի վերայ մեր կոչել : Արդարև, մեծ խնդիրք , զպաշտեցեալ անունն ի հրեշտակաց գողութեամբ՝ մարդկան հպատոր մերձաւորութեամբ Հայր իւրեանոյ կոչել : Այլ բարիոք խորհի յասելս , զոր տուր առ այս մեզ համարձակութիւն՝ զերծանս բանալ . քանզի զի- սիրդ ուժգ համարձակելի՝ անձամբ անձին ի նոյն ժպրհել . յաղագս որոյ որպէս ամենաբարի տէր՝ տայ զինդիրս հաւատարիմ իւրոյ ծառային :

ԸՆԴԻՄ ԱՊԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴՈՑ ՉՏԻՐՈՒՆԱՊԱՏ ԱՂՕԹՍ ՀՕՐ ՆՈՒԻՐԵՆ

ՎԱՐՈՍՏՈՍ յորժամ զկտակն Հաստատուն Հուպ ի ընդարձանն իւրոց աշակերտացն ընդհէր , յասել առ նոսին ասել . " Ահա եմ եմ, և դուք իցէք . և ուր երթասին գիտիցէք , և զճանապարհն գիտիցէք .. : Այս ցնա Թովմաս . " Տէր ոչ գիտեմք յո երթաս , և զիարդ զճանապարհն կարասցուք գիտել .. : Այս ցնա տէրն . " Ահա եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք . ոչ ոք գայ առ Հայրն եթէ ոչ ինէն . եթէ զիս գիտէիք , ապա և զՀայրն իմ թերևս գիտէիք , և այսուհետև գիտասջիք զնա .. : Արդ զայս եղաք առ ի ցուցանել մեզ ոչ միայն զօրութեամբ , այլ և բարեկարգութեամբ ընթանալ խորհրդածութիւնս . քանզի առ Հօր գիտութիւն նա ինքն տէր մեր եղև ճանապարհ աշխարհի , որպէս և ասաց . " Եթէ զիս գիտէիք , ապա և զՀայրն իմ թերևս կարող լինէիք գիտել .. . այսմիջոցս զի ես մարմնով երևեցայ ի մէջ ձեր , դիւրահասանելի առ մեզ եղուցն . յորժամ զիս և զիմ տէրն ճանաչէք , ապա իմ ճշմարիտ տէրս զոր ցուցի առ ձեզ , ճանապարհ լինի և ածէ զմիտս ձեր առ Հօր տէրն , որ առաքեաց զիս յաշխարհ . քանզի գիտել էութիւն սիրոյն իւր և Հօրն [1] ասէ , և ոչ որպիսութիւն բնութեանն . և զի զայն դեռ ոչ գիտէին առաքեալքն [2] , թէ առ որ խո-

1 Ա.յլք . Հոգեկանն և միւոյն իւր և Հօրն :

ծառ Ճանաչին , թէպէտ և գաւառ Հացան ընդ Պետրոսի :

2 Ա.յսինքն ոչ ամբարտաւան և պարզ

սիս՝ Պօտուած է մարմնացեալ, վասն այնորիկ ասաց, եթէ զիս այժմ գիտէիք, Թերեւս կարէիք ինեւ զՅայրն Նանաչել։ Յետ որոյ և յաւելու, և այսուհետեւ գիտասջիք զնա. յայտ է Թէ յետ իմ փոխանակ ձեր մեռանելոյն, և զՅոգին յերկիր առաքելոյ՝ զոր նախ քան զմահն Թերեւս զԺուառաւ կարէիք Նանաչել, այսուհետեւ յետ մահուս՝ զօրութեամբ Յոգւոյն գիտասջիք զնա։ Ո այսպիսի սահման անստերիւր տարաւ եկեղեցիս, նախ զՊրիստոս ծանուցեալ օրհներգութեամբն, և ապա յետ նորա մնհոն յիշատակի Նանապարհ լինելոյ և Յոգւոյն իջանելոյ՝ առ Յօրն գիտութիւն վերանան. որովք ուսանիմք Թէ բովանդակ անօրէնութիւնն ի խորհրդածութիւնս կատարի։ Ո այս և յառաջագոյն ցուցաք բազում անգամ, բայց ոչ դանդաղիմ զնոյն ի վերատին երկրորդել։ Նախ քահանայքս զմարդկութիւնն նորա խորհրդաբար աղօթիւքն Յօր նուիրեցին, և ժողովուրդն տեսեալ զնա հաւատոյն աչօք՝ մնդղ զերծուիէին Պօտուած հաւատար մեզ ի մէջ մեր, ուստի և զորբերգենութիւնն ձայնակցեալ երկնայնոցն աղաղակեցին։ Յետ մնդղն լինելոյն խաչեցաւ և յարչարեցաւ Պրիստոս. զայն քահանայքն աղօթիւքն ի կիր առեալ ցուցին Յօր. յաշագս որոյ տեսեալ ժողովուրդն հաւատոյն աչօք ըզառնն իւրեանց վասն ինքեանց ի չարչարանս, սկսան միաձայն աղաղակել. "Յամենայնի օրհնեմք զքեզ,, Պրդ չարչարեալ և յարուցեալ առ Յայրն վերացաւ, և եղև ասացս Չնմարտապէս առ Յայրն՝ Նանապարհ. և ծանեան հաւատարմապէս Թէ ուր մեր մարմնակիցն է, և մեք անդ եմք յուսով և հաւատով. գիտացին Թէ սա որ վասն մեր չարչարեցաւ, առ Յայր վերացաւ, ըստ ասելոյն. "Ուր երթայն գիտիցէք,, Պան այսորիկ առաջնորդութեամբն Պրիստոսի Նանապարհ ապարին առ Յայր, և այնուհետեւ գիտացին զնա, այսինքն յետ զիտելն և զչարչարանսն, զյարութիւնն և զհամբարձումն Պրիստոսի օրհնաբանելոյն, և վերացեալ ընդ մարմնակից իւրեանց Պօտուծոյն առ Յայրն, այսօր սոքա որպէս յայնժամ առաքեալքն՝

սկսան աղօթել առ նա, և զՀոգւոյն խոստումն խընդրել՝ ասելով, Զհայց մեր տուր մեզ, և եկեսցէ Հոգիդ սուրբ, որ է մարմին և արիւնս Քրիստոսի Հոգւովն իւրով կենդանացեալ՝, զոր ունին դեռ ևս առ իւրեանս խորհրդաբար քահանայքն՝ անմատչելի՝ ի ժողովրդենէն։ Ապա յորժամ սոքա աղաղակեն առ Հայրն, և զնոյն Հայցն կենաց՝ ի նմանէ խնդրեն, զորդեգրութեան պայման յիշեցուցանեն, և զԹողութիւն պարտուցն Հայցեն, յետ այսորիկ լինի Համարձակութիւն քահանայիցն՝ զծածուկ խորհուրդն երևելի սոցին առնել բարձրացուցանելովն, և յետ տեսութեանն՝ ի կցորդութիւն կոչել նմին Հաղորդութեամբն։ Որդ չև ևս այսոցիկ խորհրդոց անօրինեալ, նախ առ Հայրն աղօթելոյ սոցին էառ Հրաման. և սոքա ըստ նախանշանակեալ կարգաւորութեանդ այժմ սկսանին զաղօթս տէրունական բազկատարած աղօթել։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՒՑՆ ԶՈՐ ԱՂՕԹԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՔՆ

«Հայր մեր որ յերկինսդ», Օ աստուածայինն աղօթս՝ ի փրկչէն մեր աւանդեալ իւրոց ժառանգակցաց, բազումք՝ ի Հոգեկրացն ընդարձակ քննութեամբ եդին առաջի խնդրողաց՝ որ զմեզ միշտ օգտեցուցանէ, և զամենեսեան որք յընթերցումն աշխատասիրաբար դեգերին, յաղագս որոյ չէ ինչ Հարկաւոր զսոյն որոնել նոցայն առաջի կացեալ մեզ, այլ սուղ ինչ ընթացիք զկարգ բանիս միայն պահեցուք ամբողջ։

«Հայր մեր, որ յերկինս», Որ Հայր դառանէ, զինքն՝ ի նեղբոյ որդիութեանն սահմանին գրաւէ. ի սոցա մէջն ոևք թէնամութեան ոչ արմատանայ, այլ թէ լինի ստահակութիւն որդւոյն՝ Հայրն բնական զԹոյին և իմաստութեամբն ներէ, և նէրողութեամբն զնա ընդ իւրև միշտ նահանջեալ պահէ։ Այսմ Հայրենի կամացս ընդարձակութեան ծանօթ է՝ որդիս.

1 Առ՝ ի բացատրել զդարձա- կցութիւն Հոգւոյն սրբոյ՝ ի սուրբ խորհրդեանս՝ սովին ձևով խա-

նալի անուսից առնէ զրանն։ Տես զառաջեալսս զայսմանէ յէջ 391։ 2 Երկու օրին. Նահէս։

վան այսորիկ ոչ զսիրոյն կապ ընդ ստանձակելոյն և յուսահատութեամբն խոզէ , այլ զինչ . որպէս մնծուկ մեղանչէ , և զարձեալ դեմ եդեալ զՀայրն անուն դաւանէ , և նա ներողութեամբն ի ներքոյ Թևոյն ընդգրկեալ պարուրէ : Ակ ի վերոյ ծառայի ոչ պահէ զայս սահման սովորութեանս . քանզի ոչ ունելով տեառն և ծառայի զբնական գԹոյն շաղկապ , ի միասդամ մեղանչեն՝ սա զարհուրի , և նա պատուհասէ : Այլ եկեղեցիս Քրիստոսի Աստուծոյ Որդի՝ ոչ են ի կարգ ծառայութեան , այլ յորդեգրութեան , զի Հայր իմ սակ և Հայր ձեր . ուստի և ոչ ի յատկատամբ բերլոյն մեղօք զարհուրի , այլ զբնական գութն յիչեալ՝ աներկիւղ պատկառանօք առ Հայրն դիմեալ ասէ , " Հայր մեր որ յերկինս ,, : Այս ինքն զի Թէպէտ փառօք և զօրութիւք լի է երկին և երկիր , սակայն ինքնութիւն անհատ յեռութեան ի սեպհական քո աԹոռ ի յերկինսդ բազմի : Այդանօր լուր զնմա Հառաչանք յերկինսդ , ուր և մնրմնակից մեր քո Աղիդ եմուտ վանս մեր քահանայ և բարեխօս . լուր զդրոյդ վանիս իմ , և զնմա որ վանս դորա առաջնորդ լինելոյդ առ քեզ կանխեալ խօսակցիմ՝ Այ զինչ է խնդիրսդ , զոր Հայցես յամենաբաւական կամսն Աստուծոյ , զոր և Հայր դառանեցեր , ոմ մարդ , յայտ արա . եԹէ զսուտ կալիդ հրեշտակաց ընդանի անուամբ ի վերոյ քո արժանի գտար անուանել , առ խնդրուածոդ մի լինիր հետզհետէ , այլ սիրեա առաջի նորա համարձակապէս : " Սուրբ եղիցի անուն քո ,, : Այս ոչ միայն դասիւ է առաջին ի Հայցուածս , այլ և զօրութեամբ . այս ինքն զի կարգ ընԹացից ունի ամենայն բանիք աղօԹից , որպէս և Տանդերձեալ եմք ուսանել . քանզի աղբիւրն բարեկարգութեան զիարդ առ յիւրն սովորութենէն վրիպեր . ուստի և զայս նախ առաջին ուսոյց խնդրել ի Հօրէն . " Սուրբ եղիցի անուն քո ,, : Այս լուծումն բանիս և պիտութիւն խորհրդոյս ոչ կարեմք ածել այլուստ , բայց եԹէ զնորին տեառն բուռն Հարցուք այլոր զվարդապետութենէ , Թերևս ընդ միմեանս բախելով զնսեին՝ զկայծակն խնառոյս կարող լինիմք առ մեզ փայլեցուցանել : Յօրժամ աղօԹէր Քրիստոս առ Հայր վանն առաքելոյն և ընդ նոքօք աշխար-

հի, յաւել և զայս ասել առ Հայրն իւր. "Արդեօք զիս առաքեցեր յաշխարհ, և ես զնոսա առաքեցի, և ի վերայ նոցա ես սուրբ առնեմ զանձն իմ, զի եղիցին և նոքա սրբեալք ճշմարտութեամբ ,,: Ա Պօղոս վասն իւր ասէր առ երիցունսն Ասիոյ. "Արդ եմ ես այսուհետև յարենէ ձեր, զի ոչ խորշեցայ ի պատմել զօգտակարսն ,,: Ա ահաւասիկ յայտ եղև յառաքելոյ՝ տեառնն սուրբ լինելն ի վերայ աշակերտացն, և ի տեառնէ մեր խնդրուածս ի Հօրէ. զի սուրբ լինելն Հրիստոսի ի վերայ աշակերտացն այն էր, զի ուսոյց և վարժեաց զնոսա ամենայն խնամատութեամբ, յետ որոյ և աղօթեաց նոցին. Թէ այնուհետև յանցանէին, անձամբ զանձինս դատապարտէին: Պետրոս և Պօղոս քարոզ առաքեցան. Թէ չէր զԱսիոյին ուսուցեալ, ոչ էր սուրբ յարենէ նոցա. քանզի դէտ էր՝, յոչ զգուշացուցանելն զնոսա՝ զարիւն նոցա ի ձեռաց իւրոց խնդրէր Աստուած. իսկ յետ զգուշացուցանելոյն սրբեցաւ: Պետրոս և տէր մեր ուսոյց մեզ առ Հայր ասել, Թէ որպէս քահանային Հրեաստեցեր միշտ զգուշացուցանել զմեղաւորն ի չար Հանապարհէն բանիւն և խնամատութեամբն զոր ունի, և սրբել զինքն յարենէ, այսպէս և դու դէտ ես ի վերայ մեր, և միշտ տեսանես զարիւածս չարին ամենայն Հայեաց այսօրդ՝ զոր սերմանէ ի տկարս բնութիւն, զի տես և վասն այնորիկ զքո պատուհասիդ որքանութիւն: Ապա մեք խաւարեալքս ի զբաղումն մարմնոյ՝ ոչ զիմանալի Թշնամւոյն տեսանեմք զարկածս նետից, և ոչ զքո պատուհասիդ չափ: Ա ան որոյ աղաչեմք, ողորմեա սրբեա զքո անուն ի ժողովրդեան քում յարենէ՝ միշտ զարթուցանելով զմեզ նախախնամութեամբդ առ քո փառացդ սէր, և պատուհասիդ երկիւղ. իսկ առ Թշնամւոյն գաղտնի նետիցն՝ գիտութիւն և պատեհապահմին տալով զօրութիւն: Ա Թէ զայսոսիկ ունիցիմք Հայցուածով մերով Աստուծոյ, սուրբ է անուն նորա յարենէ մեր ի պատուհասէն, յորժամ վայելողքս ի նոյն մեղանչեմք. որպէս և Հրիստոսին հիւրն յան-

1 Երկու օրն. Գ Խ Ե Ր:
2 Մի օրն. Գ Խ Ե:
3 Մի օրն. Ա Ր Ի Ւ Ս Ա Ն Ե Ա Ց:

ցուցեալ աշակերտին վերայ սրբեցաւ ՚ի Յուդայի ։ Այլ և ունելով զսոյն հաւատարիմ խնդրողաց՝ գԺուռբաւ պատահէ մեզանչելն , որպէս և անձամբ զանձն ՚ի հուր արկանել ։

“Սուրբ եղիցի անուն քո ,, , Հայր , ՚ի մեր պարտեացն զգուշացուցանելովն և նախախնամելովն . և տէս զյարակայութիւն ՚ի խորհրդոյս . զի եղիցի ասէ , այսինքն թէ ոչ այսօր կամ վաղիւն , այլ միշտ և հանապազ ։ Օ այս և որգւոյ սովորութիւն է առ Հայր աւսել . քո խնամքդ Հայրաբար լիցի ՚ի վերայ իմ միշտ . այնուհետև թէ սխալեմ՝ արժանապէս գատապարտեա ։ Այդ զայս ուսոյց տէրն իբրև զբանալիս ձգել աղօթիւքս ՚ի վերայ արդարութեանն Աստուծոյ , և պարտական զնա ողորմութեան և խնամոյն գատել . թէպէտ և մեք անարժան նմին գտանիմք , զի նա զիւրն առանց խնայելոյ հանապազորդ սիրեացէ զնորս ։

“Ակնեցէք արքայութիւն քո ,, ։ Տէս ինձ զբարեկարգութիւնս . քանզի յետ ՚ի ներքոյ խնամոյն առանց հրաժարելոյ պահելոյ , և ՚ի բարձրագոյն մտաչխն խընդրուածս , այսինքն ՚ի վերայ որոյ սրբեցեր զանուն քո ուսուցանելովդ՝ տիրեա և դու հանապազորդ ։ Ա՛ն նա տէր ՚ի վերայ ամենայնի նախ ՚ քան զմեր խնդրելս , բան այնմ. “Տէր Թագաւոր մեծ ՚ի վերայ ամենայն երկրի ,, ։ Այլ աղերսանօք զնոյն խնդրելս՝ ոչ է վայրապար , այլ զինչ . Աստուած պիտէ զինքն տէր ամենայնի , բայց բազումք ՚ի մարդկանէ տգիտանան զԱստուծոյ տիրելն կամ զինքեանս տեսանելն . վասն այնորիկ կամ բնաւ ոչ անուանեն զանուն նորա , կամ ՚ի գիտելն՝ գործովք ուրանան զնոյն . սա ասէ , եկեսցէ հոգիդ խնաստութեան և հանճարոյ յանձն իմ, և ուսուսցէ զիս գիտել զահարկութիւն քոյմ Թագաւորութեանդ , և զսիրոյդ առ իս զառատութիւն ։ Օ ի եկեսցէ ասէ , այսինքն յիմ միտս , արքայութիւն քո , գիտել Հոգւովդ սրբով զտէրութիւն քո՝ որպէս պարտն է գիտութեամբ , այսինքն որպէս մարմնական աչաց Հայեցուածոյ առաջի՝ ունել հանապազ առաջի խնամալի մտացս Հայեցողութեան նպատակ՝ զիմանալիդ

1 Մի օրն . Ցերեկոյթիւն ։ 2 Մի օրն . Ցաւոք ։

թագաւոր : Օ այս թէ այսպէս ունիցիմք , որպէս և հայցեմք , անհնար է կամակար մնօք մեզ գթել . որպէս և ոչ առաջի թագաւորի և հանդիսական նորա հրապարակի խայտառակ մերկանալն : Այլ և զայս իմասցուք ՚ի նոյն կարգս , զի վայելչապէս նախ զսուրբ լինել անուանն ՚ի նդրեաց . քանզի որոգայթադիր բանաարկուն բազում անգամ մեզ և չարակոծին տայ գթել , այսինքն զմեղն՝ որպէս զկամս [1]սատածոյ կերպարանել . և այնպէս իբրև առ Աստուածութիւն ՚ի նոյն պատրեալ՝ զմարդիկ արկանէ : Սակ մեք եթէ զ[1]սուտած առաջի աչաց ունիմք՝ ՚ի ներքին մարդս մեր բնակեալ , զօրութեամբ նորա կարողանամք ընտրող որոշմամբ առ մեքենայիցն գիտութիւն . վասն այսորիկ ասէ , “ Սուրբ եղիցի անուն քո ,, : Եւ որպէս ասէ [2]ծ ցիս՝ սուրբ եղիցի [3]անուն իմ. պատասխանեմ. յորժամ գիտութիւն քում թագաւորութեանդ եկեալ բնակեսցէ յիս , և միտս ահարկու արքայութիւնդ առաջի մտացս աչաց լոյսի կերպացեալ . ըստ այնմ. “ Յառաջագոյն տեսանէի զտէր առաջի իմ յամենայն ժամ, զի մի սասանեցայց .. : Սրբեսին ապա զկերպարանս սուրբ լինելոյ անուանն [1]սատածոյ , զոր յառաջագոյն խնդրեաց , ինքն ուսուցանէ նմին ըստ կարգի բանիւքս , և նախ զայս թէ եկեսցէ արքայութիւն քո , գիտութիւն քում տէրութեանդ յանձն իմ: Սակ երկրորդ՝

“ Լղիցին , տէր , կամք քո որպէս յերկինս և յերկրի ,, : Սվ թէ ընդ ո՞ր աբանչացայց երկուց խորհրդոցս՝ զհայեցուած մտացս յինքեանս բաժանելով . այսինքն վայելչական կարգ բանիցս , և մեծանձնութիւն առաջիկայ խորհրդոյս : Օ՞ի յետ թագաւորելոյն և զկամն խնդրէ , որպէս և ՚ի մարդկան մէջ պահի այս սահման . քանզի նախ տիրէ ոք ումեք , և ապա զկամն ՚ի վերայ նորին ՚ի գործ արկանէ : Լթէ քաղաք է՝ շինէ , եթէ ծառայ՝ կերակրէ , եթէ աշակերտ՝ ուսուցանէ . այսպէս և սա նախ ընդ արքունական տէրութիւնն [1]սատածոյ արկ զանձն լինել , և ապա որպէս ՚ի սեպհական տեառնէ զհոգարկուն զինքն անօրինութեամբ

1 Մի օրին . Աստուած :
2 Մի օրին . Պարտէս :
3 Երկք օրին . Լինի տուր :

կամացն պահանջէ : Ա՛յս գայթ ոչբան . որպէս յերկինս, ասէ, է կամք քո, եղիցի և յերկիրս : Ա՛վ մարդ, և դու ելեր յերկինս, և անդր զանօրէնութիւն կամացն Աստուծոյ գիտացեր, զի այնպէս ունել զնոյն պահանջէս : Ո՞րչափ են կամք նորա յերկինս : Ամբ և զոր կամիցն կատարեալ, որպէս և առ նոսա անօրէնութիւն կամացն : Ա՛յս ոչ գիտեմ, ասէ, բայց որ ինձ յերկինից՝ նա ուսոյց ինձ զոյն աղերսել : Ա՛յս որպէս ուսոյց . քանզի մատեան աշակերտացն առ տէրն, և ուսո՛ մեզ, ասեն, քո աշակերտացս՝ աղօթել, որպէս և Յովհաննէս ուսոյց իւրոցն . իսկ նա ուսոյց նոցա որպէս ինքն գիտեր աղօթել, և ոչ բան որում նոքա խնդրեցին : Ո՞ր օրինակ եթէ ոմանք ի գեհենիկ արանց գոլով ի հեռաւոր աշխարհէ՝ անկիրթ Հռովմայեցւոցն բարբառոյ ազգի և սովորութեան, ոչ և քնաւ տեսեալ կամ տեղեկացեալ զարքունական պաղատանն բարեկարգութիւն, երթան ի պալատն Թագաւորին ողորմութիւն աղերսել, և ապա Հասեալ անդր տարակուսին յանձինս իւրեանց, ոչ գիտելով զորպէսն մտանել առաջի Թագաւորին, կամ Թէ զինչ իւրեանց վայելչական խնդիրքն ի նմանէ լինիցին . և մինչ նոքա յայս տարակոյս կան վարանեալ, պատահէ նոցին որդի Թագաւորին՝ որպէս զմի ի Հասարակաց զինուորաց, զոր տեսեալ՝ երագեալ յընթացս առ նա Հասանէն ասելով . Ա՛վ եղբայր, ուսո՛ մեզ, Թէ ո՞ւր մտցուք առաջի արքային : Իսկ նորա բարեմիտ գոլով՝ ոչ անգոհանէ, կամ այպանէ զամարտութիւնն, այլ սիրով ողորմեալ նոցա՝ պատասխանէ . ես ուսուցանեմ զձեզ . յորժամ մտանէք առաջի արքային, երկիր պագէք վաղվաղակի, և ասացէք նմա ՝ . տո՛ւր մեզ զպատիւ սենեկղիտացն՝ որք առաջինն են ի պաղատ քո . և նոքա ոչ զսենեկղիտացն առնուն գիտեն և ոչ զզօրութիւն նորա, ոչ զպաղատան և ոչ զգաւառակարգութիւն նորին . այլ մտեալ առաջի Թագաւորին՝ վաղվաղակի զոր ուսանին բան՝ աղաղակեն : Իսկ գաւառակարգութիւն ամենայն արքունական ապարանիցն նայեցեալ ի բարբառ նոցա զի օտար է, և ի ձեռն զի շինական է, ի դէմն զի գեհենիկ է, ի կերպարանս

հանդերձիցն պի անպատճոյ է , պատչանան յինքեանս ։ Ասաի դիտեն սոքա կամ յումիք ուսան զանուն սինկղիտոսութեան և զպատիս , այսպէս օտար գոլով յարքունական ապարանիցս ։ Յայսպէս և տէր մեր՝ անհաս ի հրեշտակաց և ի մարդկանէ սրբոյ զնարինաւորութեանն խորհուրդ , որպէս ասէ Պօղոս . առ որ մահեան աշակերտքն , ոչ իբրև Յ՛աստուծոյ՝ այլ որպէս ի Յովհաննէ ուսանել զահմանն աղօթից ։ Կակ նա զբաց ասել ի նոսա ամենագութեն սիրով , ոչ որպէս տանէին՝ ուսոյց նոցին , այլ զերկնային անձառ և անհաս խոր խաղաղութիւնն ուսոյց նոցա աղօթիւքն ի Հօրէն հայցել . « Աղեցին կամք քո , որպէս յերկինս և յերկրի » ։ Զդ զայս խնդրելով մեր Յ՛աստուծոյ , արդարև ոչ գիտեմք տիրապէս զգօրութիւն հայցուածոյս , սակայն զերկնայինան զարհուրեցուցանեմք մեծաբանութեամբ ' աղօթից . զի զոր ոչ գիտեաք զպատիս նոցա՝ տեղեկացեալ , մեզ ։ Հրեշտոսիս խնդրեմք ունել սեպհական . քանզի կան ասելով՝ զամենայն իմ ունին հնարհայն Յ՛աստուծոյ ընդ բանիւս պարունակեալ ունել հաւատալ նոցա , այսինքն զի կամացն այլայլութիւն արգելու ի միջ զփառս նոցա ։ Կանգի առ նոսա ունի զկամ իրրև առ կամարարս քաղցր և առատ , և առ մեզ իրրև առ յանցաւորս . ըստ այնմ . « Արդեակ , դու հանապազ ընդ իս ես , և ամենայն որ ինչ իմ է՝ քո է » ։ Զդ եղեալ այսպէս կամացն և ի վերայ երկրիս , եղև և մնդրկան նոցա ամենայն ինչ՝ որպէս և հրեշտակացն ։ Օ ինչ տացուք տրիտուր տեառն , ոմ եղբարք , զայսպիսի միմիայն վկրկական բաժակ աղօթիցս մեզ արբուցանողի . զոր տամք հանապազ առաջի Յ՛աստուծոյ Հօր , առաջի բազմութեան ժողովոյ հրեշտակացն ի գտութիւս վերինն Երուսաղէմի . զինչ այլ , բայց եթէ զմաճուն երեսաց ի վերայ երկրի գոհութեամբ ։ Զդարև առաւ առանեմ զամենայն կարծիս մեռոյ զբաղանացս մնդրկան , յորժամ առ որ խօսիմ նայեցեալ մնացս աչօք՝ հաւատամ զՅ՛աստուած ունել ի վերայ իմ քաղցր որպէս ի հրեշտակաց , և զիս որպէս զնոսին նմին խօսակից , և աղօթքս առնեաւարի կատարն ախորժակ ։ Ա այ ինձ ,

1 Երկու օրին . Մէջ-[illegible]-ին ։

և ես թողեալ զայս՝ յանկայուն կենցաղս զառնեմ. որ և թէ կայուն էր, պարտ էր ըստ բնական սովորութեանն ապահել, և զփոքրս ընդ մեծն փոխանակել. այլ յայտ է թէ խաբիմ, ոչ ունելով զուշ իմաստից առ իս ամիթսիեալ։

"Օ՜հայ մեր հանապազորդ տուր մեզ այսօր,, Ա՛վ մարդ, եթէ որպէս՝ի վերայ հրեշտակացն իղձդ զկամն քեզ լինել Աստուծոյ, անուն հայր վաղվաղակի ընդէր սմին յարմարես, որ ոչ՝ի մէջ նոցա իմանի. քանզի նոքա իմանալի են բնութիւն՝, և գիտութեան կերակրոյն միշտ քաղցեալ փափագին, առ որս չիք տեսանել՝ սերմանել կամ հնձել, խահապարութիւն կամ մարմնական ձաշակումն, այլ ուտեն զսէրն Աստուծոյ և յագենան. ընդէն զհեղումն բբխման Հոգւոյն և զմնայլեալ զուարճանան։ Ա՛յս, ասէ, զիմ կարդ աղօթիցս ամբողջ պահեմ. քանզի հայ ոչ զդիւրածախելին իղձդեմ, այլ զհանապազորդն. զկամն վասն այնորիկ իղձդեցի ունել որպէս՝ի վերայ երկնաւորացն, զի և զերկնաւորացն հայ՝ի նմանել առից յայս օր կենցաղոյս։ Ա՛յլ լուար զհայ հրեշտակաց կերեալ մարդկան. զայն կերակուրն ունել աղօթեմ, որ հանապազորդ՝ի յուտելն ոչ ծախի, և յրմպելն ոչ նուազի. զկերոյն յագեցուցանէ, և ինքն յինքնութիւն ամբողջ մնայ։ "Օ՜հայ մեր զհանապազորդն տուր մեզ այսօր,, Ա՛յս ընդէր ասէ մեր. քանզի էր երբեմն և մեր՝ հրեշտակական իմաստից կերակուր, յայնժամ մինչ՝ի դրախտին փափկութեան գնոյն կերէաք. խանդացաւ չարն, և զրկեաց՝ի սերութենէ կամացն Աստուծոյ և՝ի հացէն, զոր անջար վայրենի պատրաստեալ մեզ կերակուր. այս է մարմնոյս զգայարանացն՝ի յօտար աշխարհիս հեշտութիւն. իսկ զհայն Աստուծոյ թերևս կարացին ունկնք քրտամբք երեսաց և բխմամբ արտասուաց իւրեանց ձաշակել։ Ա՛րդ այժմ հայր եղեալ մեր Աստուած զարձեալ և թագաւոր քաղցր կամեցաւն, ունել զմեր առաջին հայն աղերսեմք՝ի նմանէ, մինչդեռ յայս օր կենցաղոյս պանդխտիմք։ Ա՛յս հայն զինչ է, բայց եթէ գիտութիւն և սէր նորին՝ որով

1 Մի օրին. Բնութենէ։ 2 Մի օրին. Տեսել։

փափագ Հոգւոյս կերակրի . այն սեղանն՝ ուր տէրն զիւր աշակերտան հրաւիրեաց . "Առէջիք , ասէ , 'ի սեղան իմ յարքայութեան իմում ,, : Այլ որոց 'ի մարմնոյս պատրաստին է կամքն մնալոցեալ՝ առանց փափագելոյ Թուի այս կերակուր , և անհաւատալի 'ի հանապազ ուտելն ոչ լինելն ծախելի . զորս զարհուրանել օրինակաւ հարկաւորիմք ։

Եւ հաւատաս ' անծախ լինել կերակուր . զիրք սուրբք ոչ հանապազ զմեզ կերակրեալ սէապէս գիտութեամբ , 'ի նոյնութեան մնան ։ Պատձեալ և ոչ Թուի քեզ հեշտ լինել զգիտութիւնն . յոակիմաձոյլ ապարանիցն , 'ի յոակէթել կերպասուցն , յականեակապ բազմականացն զինչ օգտի մարմնոյս , ընդէր հեշտանայ 'ի տեսութիւն՝ նոցին քան 'ի կերակուր առաւել . երգք և եղանակք ընդէր զուարձացուցանեն զաս առաւել քան զըմպելի . տեսութիւն և յիշատակ եղբարց և որդւոց ոչ քաղցրանայ կարօտելոցն որպէս զդինի . և զի և աս 'ի Թանձրագոյնն միտեցիս , զպակչոտեալն տուիմամբ զինչ օգտեցուցանէ համբոյր ողջունին ։ Այսպէս չեն հաց կամ գինի , որովք մարմնոյս ընու Թերութիւն . այլ զհոգեկան իղձ քաղցոյն յուցեալ զմայլեցուցանեն զմեզ գիտութեամբն ։ Այսպէս տկար մտաց մերոց առաջի Թանձրացուցեալ զյիշատակ սիրոյն Աստուծոյ , և ծանիցուք զի անտեղեակ եմք նմին , վասն այնորիկ և ոչ ըղձանամք . ապա Թէ տեղեկանայաք , որքան պայծառ է փառքն Աստուծոյ քան զտկուցն՝ այնքան ըղձակատարութիւն նորին առաւել է քան զնիւթոյ . վասն այնորիկ 'ի նմանէ մաղԹէ ունել զնոյն՝ առելով . "Օ Հայր մեր , զանծախն և զհանապազորդն տուր մեզ ,, : Ուր ընդէր ասէ այսօր . այսօր զբովանդակ մարմնոյս զկեանս գնէ , յոր պանդխտելով բազում ունիմք բնութեամբ և արտաքուստ ներհակ հոգեւոր կերակրոյն . Թէ յայտնէ արտաքս գնամք՝ անաչխատ 'ի նոյն վայելեմք ։ Ուստի ապա մինչդեռ 'ի պանդխտութեան եմք կեանք , քրտամբք արտասուաց ' և աշխատութեամբ աղօԹից հարկաւոր է զնոյն ձեռնակել , որպէս և հրա-

1 Մի օրին. յաւելու Ո՛ւ Խութ. 2 Ուստի. նորոգ. հաւատալ։

ման ընկալաք . բազումք որք առին զսոյն կերակուր , զհամեղութիւնն ազատակէն . որպէս այն որ ասէ . " Ադաղը են ի քիմն իմ բանք քո՝ քան զմեղր բերա- նոյ իմոյ ,, . և դարձեալ . " Յանկալի է քան զոսկի և քան զականս պատուականս բազումս , և քաղցր է քան զվորիսխս մեղու ,, : Նա Ադայի ասէ . " Ուխտեցէք և յա- գեօջիք , և կշտասկինդ վայելիցեք ի առեանց միսե- թարութեան սորա ,, : Զայնէ և Իմաստութիւնն . " Ակայք կերայք ի հացէ աստի իմմէ , և արբէք զգի- նիս զոր խառնեցի . ուսարէ զօրանայք առել զանզգա- մութիւն և կեալ , խնդրել զիմաստութիւն և ապրել ,, : " Ոտղ մեզ զպարտս մեր , որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց ,, : Ցիրապէս խնդրեաց Ա- ուծոյ զամենայն ինչ նախակարգեալ համառօտ բա- նիւք . այսուհետև յառաջ գայ զանձին կրից խոստո- վանութիւն սիրել նորին առաջի : Ադայց դու տէս ինձ զամենաբարի ընդարձակութիւն կամաց աղօթից ու- սուցանողի . զի ոչ նախ զմեղան թողուլ ուսոյց խնդրել , և ապա ընդ Ադատած խօսել , որպէս և մարդկան է սովորութիւն . քանզի նախ ներումն խնդրեմք ի Թա- գաւորէ , և ապա զհայցուածս ընդ նմա բարբառիմք : Ադայս ոչ այսպէս , այլ զհակառակն սորին . նախ ըզ- պարգևան խնդրեաց , և ապա զներումն . ուսուցանե- լով բանականապէս , զի Թէպէտ և ի խորս չարեաց հասանեմք , երկրորդ են յանցանք մեր խառազութէն և զթութեանն զոր ունի Ադատած ի վերայ մարդ- կայինս բնութեան . վասն որոյ նախ զկարևորն և ըզ- մեծն ունել աղօթեաց , և ապա յետ զայն ունելոյ՝ դիւրաւ զոցուք ի բարեբար կամացն մարդկապէս զը- թելոյն զներումն :

" Ոտղ մեզ , ասէ , զպարտիս մեր ... արդարև պարտք . քանզի յայսքան ընդրկս նորա վայելեալ մարմնով և հոգւով , զիարդ ոչ գոանիմք պարտական հրա- մանին տեառն կալ հպատակ . ուսարէ և ի յանցանէն զնուաւս , վայելչապէս և ուղիղ խոստովանութեամբ պարտական զանձինս գտանել՝ զներումն խնդրեմք ա- սելով . Թոյլ արա պարտուցն զոր ընդ սխալեցն ամենա- տես գիտութեամբդ համբարեալ անիսկիս և Թողուս : Ադ վասն . զի մարմնաւորք եմք , զի դիւրապատիր կա-

մեքս խաբխիք, զի՝ ի խաւար կենցաղոյս չորխիք, զի օրէնս ունիմք բնականս հակառակ օրինացս մտաց, և գերող զիս ականայ՝ ի յօրէնս մեղացն. վասն այսորիկ և ներելն է քեզ վայելչական, որպէս բարերար տակաւին, որպէս ողորմած ողորմելոց, որպէս զԹագաւոր կարօտից, որպէս և ես ներեմ իմումն պարտաւորի։ Այլ Թերևս ասիցէ ոք ընդդէմ ասացելոցս. Ես Հողեղէն մարդ զիարդ կարացից նմանել Աստուծոյ, և ոչ միայն նմանել, այլ և զանձն ապացոյց նմին ընծայել, յասելն՝ որպէս ես այլոց, և դու ինձ արասցես. սակայն պարտ է գիտել Թէ վարդապետն մեր և օրէնսուսոյցն Քրիստոս՝ ոչ արտաքոյ բնութեանս զոր ստեղծ, կամ սորին հակառակաւ խրատու զմեզ վարժեալ կրԹէր. ապա Թէ և օրէնքս ախորժելի բնութեանս, ամենայն իրօք հարկաւոր է և կատարելն գնոյն. և արդ ո՞է՝ի մարդկանէ որ ոչ զսէրն կամի, ո՞է որ ընդ Թշնամութիւնն ոչ դիժաւարի. էն այլ տեսակք մեղաց, որ յանցանելովն՝ մարմնոյս հեշտութիւն ընձեռանեն, որպէս զպոռնկութիւնն և որկրամոլութիւն. բայց այս ախտ Թշնամութեան և ոչ բնաւ. զի՝ ի սիրելն և՝ի վերայ մեր՝ ՝ի հոգս և՝ի ծուխս արկանել, յերկիւղ և՝ի տարակուսանս։ Ա՛ր ընդէր ոչ զիջանելովն՝ յանգուցանեմք զանձինս, և շահիմք զերջանսն. քանզի յամբարտաւանութենէն ըմբռնիմք, ոչ զիջանելով առ յանցաւորսն սիրով. իսկ ամբարտաւանութիւնն հակառակ գինի Աստուծոյ, և ոչ Թէ՝ի նմանել գնեբսումն խնդրէ։ Աստի սիրեաց ամենայն անկարգութիւն՝ի յաւիտեանս, զորս ոչ ներել բանս Թուել՝ ի զպարտան ունելոյ և ոչ Թողլոյ. սա արար զանձաւս բնակութիւն, զբաղաքս ամրութիւն, զգինս՝ի սպանութիւն։ Ա՛ սոյն այսորիկ ասէ. դու Թող, քանզի ես ոչ կարեմ Թողուլ ըզԹշնամութիւնդ, զոր դու անձնիշխան կամաք ըմբռնեալ պահես։ Ա՛յդ լոյծ զամբարտաւանութիւնն որ հակառակ է Աստուծոյ, և զԹշնամութիւն որ ընդդէմ է բնութեանդ, և Թող ընկերին զպարտսն. արա դու զքո կարելին, որպէս և Աստուծոյ պահանջես առնել զիւրն կարելի. Թող դու եղբօրն, և Թողցի

1 Երկու տող՝ Ջ.Ինչպես ասվեցավ։

քեզ Տայլն քո երկնաւոր ։ Կամացդ է աշխատութիւնդ ի Թողուն , և ոչ եթէ մարմնոյդ . իսկ եթէ զայս ոչ կամիս , զիա՞րդ զՅաստուած յայն ինչ բռնադատես , զոր դու ոչ Թէ տկարանաս , այլ ոչ կամիս կատարել ։ Յդդ ծանիցուք զերկոսեանս ի մեր օգուտն լինել . մեր Թողուն՝ խաղաղութեան մեզ կենաց լինի անօրէն . և Յաստուծոյն զոր վասն մեր Թողցին Թողու , անվախձան կենաց կարապետ . եթէ ի սոցանէ վրիպիմք սակս մեռոյ ոխակալութեանն , անձամբ զանձինս դրժեմք ։

“ Ոչ մի տանիր զմեզ ի փորձութիւն , այլ փրկեա զմեզ ի չարէն ,, ։ Փորձութիւն ասա զներգործութիւն չարին խմանամբ՝ որ հանապազ ընդ մեզ մարտնչի ։ Այլ ընդէր ոչ ասաց՝ մի՛ տար կամ պատերազմ, այլ փորձութիւն . յայտ արարեալ Թէ ոչ ունի իշխանութիւն անձամբ անձին ընդ մեզ մարտնչել . այլ զինչ . ի մերոց կամացս և ի խորհրդոց առնու զինուն պատերազմին . ըստ այնմ . “ Որում պատրաստէք զանձինս ձեր ի հնազանդութիւն , ծառայ էք որում հնազանդիքն , եթէ մեղայ , և եթէ ի հնազանդութիւն արդարութեան ,, ։ Ա՛ւ Յակովբոս գրէ . “ Ապրանքդիւր որ ի ձէնջ փորձի յիւրոյն ցանկութեանցն ձգեալ և պատրեալ ,, . ապա յայտ է Թէ ի մէնջ առնու զինուն փորձելոյն ։ Ընդէ՞ր . քանզի ի ցանկութիւն կերակրոյն խորհրդակցի , և սերմանէ զորկրամոլութիւն . ի ցանկութիւն փառացն Յաստուծոյ կցորդի , և սերմանէ ըզմնաբառութիւն . և այսպէս յաճենացն կիրս մեք զըսկիզբն խորհրդոյն բարիոք դնեմք , իսկ նա ընդ նմին զչարն նիւթէ . և մինչև է առեալ ի մէնջ զնիւթն , իւր մեքենայքն անպտուղ մնայ . որպէս յայտ է յաւետարանէն , զի յորժամ դևերապարանս քաղցոյն եղոյց աէրն , ապա մնառեալ առ նա փորձիչն ։

Այլ ընդէր ասի փորձութիւն . քանզի ցուցեալ մեր զհարկաւորն կարօտութիւն , զոյ նա , և ըստ այնմ մնասին չարժլեալ՝ փորձէ զմեզ Թէ եմք հաստատուն ի սէրն Յաստուծոյ Թէ ոչ . և խառնէ ընդ բնաւորական կրիցն զաւելորդացն ցանկութիւն ։ Օ որ օրինակ վէմ ինչ ունելով առաջի , որչափ հաստատուն է՝ անյոյս

1 Մի՛ գրին . Շ-րթէ ։ Երկու գրին . Շ-րթէ-ւ ։

եմք ՝ի շարժմանէն . իսկ եթէ զրդուի յայսկոյս յայնկոյս շրջեալ , նայիմք տեսանել և փորձել թէ կարեմք զշարժեալն կոթծանել ։ Զրդ շարժուածն է մեզ ցանկութիւն կեբակրոց , ցանկութիւն հարկաւոր պիտոյից , ցանկութիւն փառացն ։ Այ . իսկ նա յորժամ տեսանէ ՝ի միոք ՝ի սոցանէ շարժեալ , զայ փորձէ , և ընդ բարի խորհուրդն զնուքն խառնէ մեքենայս . թէ կարեմք ընտրութիւն առնել օտարին և բնականին , չնորհաքն Այ փրկիմք . ապա թէ ոչ կարեմք , և փորձութեան խորհրդոյն իրք բարւոյ հաւանիմք , ՝ի զոծոյն կոթծանել կատարումն . կեբակրոցն ցանկութեամբ ՝ի պոռնկութիւն , հարկաւոր պիտոյիքն յարծաթասիրութիւն , ցանկութեամբ փառացն Աստուծոյ ՝ի մնախառութիւն ։ Ոչ մեք ըստ մերոց ցանկութեանցն խաբեալ պատրեցաք , որպէս զրեաց Յակովբոս , ձգեալ զանձինս ՝ի խորխորատ մեղացն , և փորձելովն անփորձ գտաք ՝ի մարտս Քրիստոսին ։ Ասա՛ ի զուշացեալ հարկաւորապէս՝ զայս ուսոյց տէր մեր աղօթել . « Ո՛չ տանիր զմեզ ՝ի փորձութիւն .. » Ո՛չ իրք թէ Աստուած տանի , քանզի « Աստուած անփորձ է , ասէ , ՝ի չարեաց .. . այլ թէ յոր մեք գնամք խարդաւանութեամբ զաւաձանողին ընդ չարն իրրև ընդ բարի , զու որ տեսանես զկերպարանացն բնութիւն՝ որ չար է , և մեզ թուի բարի՝ և ոչ է տիրապէս , մի թո զուր զմեզ ականջ կամօք զանձինս ՝ի նմին կոթծանել ։ Օ որ օրինակ թէ որ երկնչի յոմանց , թէ ընդ բարիոք կեբակուբ խառնեալ զնահարար դեղ արբուցանեն նմին ՝ի սպանուիս , ասէ ցոք ՝ի բժշկաց . զու որ Նանաւէս՝ միշտ ընդ իս լինիցիս , զի մի վասն հարկաւոր պիտոյիցն պատրեալ սպանցիմ . այսպէս և սա ասէ . ՝ի հարկաւորն զոր կարօտութիւն մարմնոյս պահանջէ , զու աՄենահայեաց՝ մի թողուր զիս փորձել , և արտաքոյ նորին սասանեցուցանել ։ Ընդ այս կիրս անցանելով Յովք զրեր . « Փորձութիւն են վարք մարդկան ՝ի վերայ երկրի .. » Ա՛ւ տէրն ասէ . « Հարկ է գալ գայթագղութեան .. » Ա՛ւ վասն զի զգայթագղեցուցիչն ընթացակից ունիմք յամենայն կեանս . բայց ոչ իրք զամենայն թնաւ աչն Աստուծոյ , յորժամ խնդրեմք ՝ի նմանէ ոչ տալ զմեզ ՝ի փորձութիւն . ըստ այնմ . « Ընկեցին ՝ի կողմանէ քումմէ հազարք .. . բայց մի երկնչիր , ոչ

մերձենային առ քեզ, քանզի «Խիզք են ընդ յաջմէ քումմէ»։

«Եւ վրկեա զմեզ ի չարէն»։ Օ վրկութիւնս առելով ի չարէն, ոչ թէ սակ ի փորձութենէ, այլ Համանգամայն առեալ յամենայն մեքենայից նորա խնդրէ զերծանել։ «Զանգի պատահէ բազում անգամ, զի ոչ ունելով նիւթ զկամս մեր՝ յարուցանէ ի վերայ մարդկան զարկածս վտանգից. ըստ որում առ Յոբն է տեսանել, և առ վկայն զորս ի ձեռս Թագաւորացն մատնէր։ Այդն և առ երանելի Հարսն. զի երբ ունէր զկամսն նիւթ Սատանի ի չարաչարն զնա Հարկանելն։ Սերզործէ և այժմ զչարութիւնն իւր առ բազումս այսպէս, յորս մատնիմք ըստ ներողութեանն Աստուծոյ. կամ զի առաքինութիւնք սրբոցն նորին յաղթանակ լիցին՝ անձանց ի փառս և Քրիստոնէից յաճմէ, և կամ զի փորձանօք նորա զղջացեալք ընդ պատուհասեն Աստուծոյ, ի չար սովորութենէ ի բարի փոխեսցուք։ «Լոյծ յայցանէ», ասէ, վրկեա զմեզ. եր վասն. զի Թէ մեղաւորք եմք, դու պատուհասեալ ուղղեա, և մի ի ձեռս Թշնամւոյն. և եթէ արդարք, որպէս կամիս ընկալ, և մի փորձեր. մի գուցէ ըստ տկար բնութեանս անփորձ գտեալ՝ կորիցուք. զի ոչ ամենայն ինչ որ ասկի՝ անփորձ ի բոլ մտեալ ելանէ, այլ բազում անգամ փորձելովն, և յառաջինն գտանայն[2] զժգունի։ Օ այս գիտելով առաքեալ՝ գրէր առ Կորնթացիսն. «Հաւատարիմ է Աստուած որ ոչ տայ զձեզ ի փորձութիւն առաւել քան զկար ձեր, այլ արասցէ ընդ փորձութեանն և զելսն, զի Համբերել մարթասջիք»։ «Ընդ զայս Հաւատարմութիւնս պահանջէ Աստուծոյ ունել, ի փորձողէն զվրկութիւն[3] մաղթելով. «Վրկեա զմեզ ասէ ի չարէն». յայտ ասի բարեաւ, զի Թէպէտ և դու զօգուտն մեր տնօրինես փորձանաւքն, և զպատկին բազմացուցանես ի մարտին յաղթութեամբն, այլ իմ տկար և դիւրապատիր մարմինդ վհատակեալ՝ ոչ անձամբ անձին զնոյն պահանջեմ, այլ միայն զվրկութիւնն ունել աղօթեմ։ Ասդարև Հաւ

1 Ի օրին. Յ-յուռնէ-ցոյս։ 3 Ի օրին. Ջ-ք-ցուխն։
2 Երկու օրին. Գնէցն։

զփորձ տկար մարդկութեանս՝ ամենայնիւ տէր մեր ըստ նմանութեան մեր առանց մեզայ . եղև Չնմարտապէս չարչարակից , զփորձ առեալ փորձանաւորացս . և զի այսմ հաւատոյն տիրապէս՝ ի նախակարգեալ աղօթիցս վճռակցութենէ , վասն այսորիկ և զօդնականութիւնն առեալ՝ ի ձեռս հաւատոցս , միշտ Ճշմարիտ տկարութեան հոգւոյս ընդհեմք՝ որպէս զրեաց առաքեալ . " Հաւատարիմ է Աստուած ոչ տալ զձեզ՝ ի փորձութիւն ,, : Այսինքն աւատալի է այս թէ չտայ . ոտաի . յիւրոյն կրից չարչարանաց . զի թէ լցան՝ ի խաւարէն հալածեցաւ , խաւարն զինչ կրեսցէ . իւր ոչ եհաս , զի լցս էր , այլ զմեզ ծանեաւ , զի հասանէ . քանզի դիւրագայթ եմք : Այս ոչ մոլորեցաւ , զի Աստուած էր , այլ զմերն իմացաւ մոլորութիւն , զի մարդիկ եմք . եղբարցս նմանեաց , զի ողորմած լինիցի . և հաւատարիմ է յողորմութիւնն , զի չարչարակից է . փորձեաց , զի փորձանակից լինիցի , և կարողապէս օգնեաց , զի զփրկելն մեզ ուսցէ աղօթել :

Փրկութիւն դու ես Քրիստոս , և առ ի այլ յենուցումք . փորձանակից դու ես , և առ ի այլ ապաւինեցուք . ոչ տալն քո է , առ ի այլ ապաստանեացուք . ողորմած դու ես , և զմեզ այլ ոտից նմին կարօտեալքս բուռն Հարցուք : Այեաց տէր՝ ի փորձեալքս և կործանեալքս , ՝ի մատնեալքս և չարչարեալքս , ՝ի խոցեալքս և դիշատեալքս , ՝ի յաղբեալքս և յիմարեալքս : Վրդկիր , որ զփրկութիւն ուսուցեր խնդրել , քոյովս զքեզ Թախանձեմք , փրկեա զմեզ յորոգիչն . որ ես օրհնեալ յաւիտեանս , ամէն :

ԸՆԴԻՐ ԶԱՒԱՐՏՈՒՄՆ ՏԻՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՈՑՍ ՓԱՌԱՆԱՅՆ ԱՍԷ . ԵՒ ՈՉ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ՈՐՔ ԱՂՕԹԵՑԻՆ

Ի վԱԽՃԱՆ ածեալ զաղօթս տէրունականս Համագումար եկեղեցւոյն՝ լռեալ դադարէն , զաւարտումն փառաւորութեանն՝ ի քահանայն ապաստան արարեալ : Այր վանս . որպէս զի նա՝ որ՝ ի պաշտօն ապաստանորու-

1 Մի տրին . Տէրունական :
2 Երկու տրին . Ու :
3 Մի տրին . Փրկիչ :
4 Երկու տրին . Ձ ի նոր :

թեանն կայ՝ փոխանակ ամենեցուն գոհասցի, իբրև Հայը զառ որդիս երախտեացն չնորհակալութիւն՝ ինքեան փառատրութեամբն հատուցանել. զի նախ՝ ինքն խնդրեաց Աստուծոյ յայս՝ զսոցա բերանս բանալ և աղօթել, Լոդ յորժամ ետ[2], և սոքա միաձայն բարբառով վայելեցին ի պարգևս, ինքն զարձեալ գոհանայ յաղագս զՀայցուած աղօթիցն առ ժողովուրդն կատարելոյ, և ասէ. «Ցնծեր տերանց, Ո՛ստուածոց, Թագաւոր յաւիտենից, Հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.» Ո՛վ աստուածընկալ և չնորհազարդ հոգւոյ աղօթողիս՝ քանիցդ, թէ ոչքան զլուսաւոր պայծառութիւնս ի քննութիւնս փայլէ: Ո՛վ տէր իմ քահանայ, և ո՞չ նախ զՀայր անուանն խոստովանեցար առեալ Աստուծոյ, ո՞չ և ժողովրդեանս զնոյն և հանապազակ ձայնիւ ետուր անուանել. արդ զինչդ այժմ ըզկարդ բանիցդ փոխես, և զՀայրն ոչ միայն տէր, այլ և տերանց տէր վերաձայնես. և ոչ սոսկ Աստուած, այլ և աստուածոց, Հայր ոչ մեր այլ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Քանզայսաւ ասէ, յիս գիտութիւնս, որդեակ, զօրացաւ, և ոչ կարեմ հանդարտել. զինչդ յայսքան պատիւս վերացաք Հոդ գոլով, ոչպէս բարիոք և անձառ չնորհիս վինակեցաք՝ երկրաւորք եղեալ. ուստի և առատացեալ զեղմամբ պարգևացս՝ զպարտութիւն խոստովանիմ, սաիպեալ ի յերգից մեծերեալ սրտի իմոյ սիրոյ: Ո՛վ մեք, ով քննութիւն մեր, զի դու մեր Հայր. ո՛ր գործոց փոխարէն զայս չնորհ ընկալաք, զի տէրդ տերութեանդ հրեշտակաց, և Աստուածդ աստուածոցդ երկնայնոց՝ մեզ Հայր, և ոչ տէր կամ Աստուած միայն. յաղագս պոյ և զՀնմարիան նորա բերբեալ անուանս յառաջ, մեծացուցանեմ զառ մեզ տուրս չնորհի. գաւանեմ զնա Հայր տեառն մերոյ տիրապէս, Թէպէտ և մեզ չնորհօք: Յայսիսի և զօրինակն ամենայն հեղութեան զԱւաւիթ տեսանեմք երբեմն արարեալ. քանզի յածելն զտապանակն Աստուածադէմ, շուրջ Հայեցեալ ի բազմութիւն ժողովրդեանն, ի խընջոյսն և ի պարան և յիւր փառատրութիւնն ի հան-

1 Մի օրին. ՀԸ։
2 Մի օրին. Ե։
3 Մի օրին. Աշխիդ։

դիմին, աղաղակեաց առ Յուսուաճ. «Ա՛վ ես, տէր, կամ ոչ տուն հօր իմոյ, զի մեծացուցեր զիս այսքան»։ Այս օրինակ գոհութեան առնէ և քահանայս, ի լսելն զհամաձայնութեան ժողովրդեանն Հայր անուանելն զՅուսուաճ, հրձուեալ՝ խնդարհութեամբ. զոր ասէ՝ զոր Հայր գոյաք արժանի կոչել, տէր էս տերանց, Յուսուաճ աստուածոց, Հայր Աշմարիա տեառն Ցխուսի Վրբիատոսի, և զմեզ վասն նորա տեսանեմք ի յայս հնարհ բարձրացեալ։

«Ա՛ի տանիր զմեզ ի փորձութիւն, և մի՛ ի դատապարտութիւն, այլ փրկեա ի չարէն, և ապրեցո ի փորձութենէն»։ Ա՛ի ասէ վասն փորձութեան մեղաց դատապարտեր զմեզ բարերար, և յայսմ՝ ի մեծ հնարհիս պայմանի՝ յորդեգրութեանս անուանէ զրկեր։

«Ո՛ի քո է արքայութիւն և զօրութիւն, և փառք յաւիտեանս»։ Ցկե՛ր, ասէ, դու ես՝ ի վերայ մեր. ի ներքոյ քումդ թագաւորութեան եմք գրաւեալ. մի տար իշխանութիւն չարին զծառայս քում թագաւորութեանդ վտանգել։ Այլ տես, թէ ոչ պակաս չարմանրի ընդ բանք աղօթիցն և նորին կատարումնս. զի յետ առելոյն մի տար՝ ի փորձութիւն, այլ փրկեա՝ ի չարէն, յաւելու. «Ո՛ի քո է արքայութիւն և զօրութիւն». այսինքն՝ թէ փոյթ և վտանգ զոք այն՝ որ իշխանութիւն ունիցի՝ ի վերայ նորին, և չարչարէ այն՝ որ զօրութիւն ունի չարչարելոյ. մեք քո եմք ծառայութեամբ և արարածք. ի ներքոյ քում տէրութեանդ, և ոչ չարին. զօրութիւն ամենայն քո է, և ոչ չարին՝. թէ փորձելոյ գոանիմք արժանի, մատնեացուք՝ ի ձեռս տեառն, և մի՛ ի ձեռս թշնամւոյն. զի թէ Պաւիթ զմարդկան փորձանսն թողեալ՝ հրաժարեաց՝ ի նմանէ, և աղաղակեաց, «Ա՛ատնեցայց՝ ի ձեռս տեառն, և մի՛ ի ձեռս մարդկան»,, մեզ քանիօն առաւել հրաժարելի է մախացող թշնամւոյն անզեղջ փորձանացն մարսն։ Քո է զօրութիւն և տէրութիւն՝ ի վերայ մեր. որպէս ինամես միշտ, յորժամ կամիս՝ դու պատուհասես տէրդ զծառայս. և քեզ փառք այժմ և առ յապա յաւիտեանս յաւիտենից, ամէն։

1 Մի օրին. Հրեշտակ։ 2 Ա՛յլ. Նոյն։

ՈՐՊԷՍ ԷՐԱՒ ԱՌ ՀԱՅՐ ԱՂՕԹԵԼՅ ԶՎԱԽՃԱՆ

Խոհրդակցութիւն որ առ Նոյր աղօթից քահանայիս՝ առաւօտ ասարտեցաւ, և զբուժն էառ առնա հրեշտակ մտանելն սորա ի ժողովրդենէս. իսկ եթէ արդեօք՝ յարդեանց անտի ծանիցուք։ Օ պատասխանի զոր ետուն ի ձեռս նորա գաշամբք հաւատոյն՝ և նշանակացն, հաստատութեամբ մնեալ առաջի Աստուծոյ նուիրեաց, զԱրդին փոխանակ ամենեցուն ընծայ ի ձեռս Նոյին աւանդեաց, զՆոգին փոխարէն նմին՝ ի կենդանութիւն նշանակացն սորին, նովաւ ապա զսէրն Աստուծոյ և զհաղորդութիւնն առմարդիկ ուղղեաց, ընթերակայ եկեղեցւոյ զպէսպէս շնորհս պարգեւաց ունել նովաւ աղօթեաց։ Յետ այնորիկ և Նոյր ունել եկեղեցւոյն զԱստուած առ ձեռն պատրաստ թախանձեաց։ Արդ յորժամ այս տուաւ, և ամենեքեան հաշտեալք ի խոստովանէնն՝ արժանի գտան ընդ Նոյին խօսել, գոհացաւ ի վերայ այսր շնորհիս տրից մեծապէս. և այնուհետեւ ախորժէ, զպարգեւն զոր առ Աստուծոյ՝ պատարագին իւրոյ զոր մատոյց փոխարէն՝ հաստակաց[1] ժողովրդեանս բաշխել, որք Նոյր արժանի գտան զնա անուանել. զի սոքա որք ետուն զԱրիատոս պատարագ՝ առցեն զՆոգին Արիատոսի մարմնոյն իւրով ինքեանց կերակուր. և մի միայն ի քահանայիցն դաս մնասցէ շնորհին զօրութիւն, այլ և զսոսա իջեալ սրբեսցէ, Օ ի որպէս քահանայքն Աստուծոյ հաղորդեցան միջնորդութեամբն Արիատոսի, սոքա միջնորդութեամբ քահանայիցն հաղորդեսցին Արիատոսի՝ առ Աստուած հաղորդեսցին յօդակապութեամբ Նոյ գոյն. զի այսպէս զուգահաւասար սրբոց հրեշտակացն

1 Մի օրին. հաստատուն։ 2 Մի օրին. ի հաստատէ։

առ Աստուած մերձենային. քան այնմ զոր Յովհաննէս գրեաց. «Զերք մեր շշափեցին՝ ի վերայ բանին կեանց. և տեսաք և լուաք և պատմեմք ձեզ, զի և դուք հաղորդութիւն ունիցիք ընդ մեզ, և մեր հաղորդութիւնն է ընդ Հօր և ընդ Որդւոյ իւրում Յիսուսի Քրիստոսի ... այսպէս և սոքա տեսին զԱստուած՝ դասք քահանայիցս իմանալի հայեցողութեամբ հատատոց. շոշափեցին և զբանն կենաց իմացողութեամբն ձեռօք։ Աստ զոր տեսին և շոշափեցին, կամին պատմել և ցուցանել բազմութեան եկեղեցւոյն, զի և սոքա հաղորդք լինիցին ինքեանց՝ գիտութեամբ խորհրդոյս, որք են հաղորդք Հօր և Որդւոյ իւրում Յիսուսի Քրիստոսի. և որպէս զի տիրապէս հաւատասցեն ասացելոցն՝ ի Քրիստոս. «Նա՝ ի Հօր իմում, և դուք՝ ի յիս, և ես՝ ի ձեզ ... քանզի լինի այս միշտ և օր ըստ օրէ՝ ի մէջ հաւատացելոց ըստ այսմ խորհրդոյ։ Որպէս. զի նա Հօր՝ իւրում տուաւ՝ ի մէնջ մարմնովն ըստ աստուածութեանն՝ ի ձեռն քահանայիցն. և մեք միանգամ ցայժմ էաք՝ ի նա ամենայն եկեղեցիս ըստ հայեցողութեան մտաց և փառատրութեան. արդ այսուհետև ինքն գայ և լինի՝ ի մեզ հաղորդութեամբ մարմնոյ իւրոյ և արեան, և կատարի յայսմ աւուր ասացեալն. «Յայնմ աւուր գիտասջիք, եթէ ես՝ ի Հօր իմում, և դուք՝ ի յիս, և ես՝ ի ձեզ ...։

ԸՆԴԷՐ ԱՅԺՄ ԽՈՆԱՐՀԵԱԼ ՔԱՀԱՆԱՅԻՑՆ ԱՂՕԹՔ ԱՒՐՀՆԻՒՆ ՍՈՒՐԲ. ԵՒ ԱՄԲԵՆԱՅՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԸՆԴ ՆՄԻՆ ՀՐԱՄԱՆԱՒ ՍԱՐԿԱՒԱԳԻՆ

ՅԱՐՄԱՐՈՒՄՆ խորհրդոյս անատերիւր ուղղութիւն ընթանայ. ՝ի վերայ որոյ որք կացուցանեն զմիտս՝ կարող են բաւականապէս ՝ի նախակարգեալդ բանից ուսանել, թէ զինչդ եղև տուեալ՝ ՝ի մէնջ խորհուրդ մարհուն Քրիստոսի պատարագ՝ հաստատութեամբ նշանակացն, և որպէս փոխանակ այնորիկ առաքեաց Հայր

1 Երկու տրին. ի հրտ.

զՅոգին, և զՀաց և զգինիս նոքա մարմին և արիւն Քրիստոսի կատարեաց։ Այլ զայս Հաւանական քննութեամբ յիւրում տեղւոջն եդաք ընդարձակ բանիւ. իսկ այժմ որպէս ասացաք, զառ Յայր աղօթեցեալն աւարտեաց, և կամի զընծորհ մարմնոյ և արեանն Քրիստոսի ցուցանել ամենայն ժողովրդեանն՝ զոր եբեր նոցին՝ ի վերուստ միջնորդութեամբն իւրով քահանայս. ուստի նախ առաջին խաղաղութիւն տայ նոցա, և սարկաւագն հրամայէ՝ Պատուծոյ երկրպագել ամենեցուն։ Վասն որոյ զաղագսն ընծորհիս որ հանդերձեալ է երևել նոցա, պահանջէ նախ զերկրպագութիւնն, որպէս զի մի հարևանցի յանկարծագէպ հայեցմամբ զաչերն իւրեանց տեսցեն, այլ զի նախ երկրպագութեամբ թափանձեալ՝ զերևումն երեսաց նորին հայցեսցեն։ Վարձեալ զի թէ յորժամ տեսցեն՝ երկրպագեն, վրիպին՝ ի տեսութենէն, վասն այսորիկ նախ երկրպագել հրամայէ, և ապա՝ ի տեսութիւնն մատչել. իսկ քահանայն զի խոնարհի ընդ նոսին և առ Յոգին աղօթէ, բազում անգամ յուցեալ է թէ ամենայն մատակարարութիւն ընծորհացս որ բաշխի յեկեղեցի Պատուծոյ՝ Յոգւոյն ներգործութեան՝ է հաւատացեալ։ Որդւոյն միայն էր մարմնանալն, և յերկինս միշտ մեզ քահանայապործելն. իսկ այժմ զպարգևս իւր յերկրի աստ անօրինեալ կատարէ Յոգւոյն՝ որ՝ ի Յօրէ ելանէ և՝ ի Քրիստոսէ առ մեզ իջանէ. ըստ որում ասացն, «Յորժամ եկեսցէ մխիթարին՝ զոր ես առաքեցից ձեզ յառնէն Յօր իմոյ, զՅոգին Ճշմարտութեան՝ որ՝ ի Յօրէ ելանէ»։ Այս և զնշանակս՝ մարմին և արիւն Քրիստոսի կատարեաց. սոյն և ընդ զգալոյս մարմնոյ իմացական նապէս՝ ի մեզ բաշխեալ՝ հաղորդ զեկեղեցիս Քրիստոսի և միմեանց կատարէ. վասն այսորիկ մինչ դեռ խոնարհեալ ժողովուրդն ընծորհաց նորին սպասեն, խոնարհի քահանայն, և առ նա վասն նոցին զաղօթս խօսի։

1 Ms. օրին. ‘ներգործելն’։ 2 Ms. օրին. ելիչէ՛։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՂՕԹԻՑՆ ՈՐՈՎ, ԽՈՆԱՐՀԵԱԼ, ՔԱՀԱՆԱՅԻՆ ԸՆԴ ՄՐՌՈՑ ՀՈԳԻՈՑՆ ԽՕՍԱԿՑԻ

"Ար աղբեւրդ ես կենաց և բխումն ողորմութեան, ողորմեա ժողովրդեանս՝ որք խոնարհեալ երկիրպագանեն առաջի աստուածութեանդ քո ,, : Աղբեւր կենաց միշտ զ՚ոգին սուրբ գիրք սուրբք անուանեն . ըստ որում ասէր տէր վասն նորին . "Ար հաւատայ յիս, գետք յորովայնէ նորա բխեսցեն ջրոց կենդանութե՛ն ,, . և մարգարէքն՝ ի բազում տեղիս . սակայն մեզ առաջի կայ քննել զպատճառն , որոյ աղագաւ նա աղբեւր և գետ՝ ի գրոց կոչեցաւ : Ո՞ Ա՛յ բնութիւնն որ՝ ի յարաբածոցս ոչ բնաւ՝ կարաց ձանաչել . ոչ զբնութի՛ւն , ոչ զանուն նորին տիրապէս . այլ անուանեւք զնա բազմապատիկ անուամբք ըստ ներգործութեան կամացն : Ա՛ճ է և զ՚ոգին սուրբ , հաւատալ ՝օր անճնաւոր , և նմին հաւասար . զանունն ոչ գիտեմք , այլ անուանեւմք զնա ըստ ներգործութեանն աղբեւր : Արպէս զ՚այր հուր՝ վասն կիզողական զօրութեանն , զԱրդի գառն՝ վասն անմեղութեանն , այսպէս և զ՚ոգին աղբեւր՝ վասն զանազան ընդհարաշխութեանն զոր բաշխէ տիրապէս , և ոչ բաշխի յայլոց էութենէն ծախմամբ իրը զջուր . քանզի աղբեւր ասէ զնա , և առ՝ի յինքենէ զբղխումն : Ապա զոր օրինակ աղբեւրն որ առողանէ զպրսխատ՝ զիւրաքանչիւր ծառ ըստ իւրում որակութեանն արբուցեալ պայծառացուցանէ , և մի ջուր գոլով՝ ի մէրան այլ հոտոյ զօրութի՛ւ տայ , ՝ի մանիշակն այլ . ՝ի թզենին զիւր պտուղն գոյացուցանէ , և յատմանենին զիւրն , այսպէս և զ՚ոգին սուրբ ներգործէ իմանալի առողմանէն՝ ի զանազան հասակս մարդկան և՝ի զոյծ նոցին . մի գոլով զօրութիւն, բայց սակայն զզօրայեալսն յինքենէ՝ ոչ միով օրինակաւ զօրացուցանէ , այլ ըստ բանալոյ զբերան հաւատոցն , և օգտի իւր և գործոյ . այսինքն զի ոչ կարէ տանել զնա միով օրինակաւ քահանայն և ժողովուրդն , որպէս և ոչ զջուրն ծառքն զանազանք . վասն այսորիկ ներգործէ՝ ի նոսա ըստ իւրաքանչիւր չափոյ : Այլ ոչ մի է առենայն

1 Մի տրին . ու երբեք :

ընդունողացս ներդործութիւն, որպէս և ոչ ծառոյն պտուղք. յաղագս որոյ զիւրաքանչիւր որ բան իւրում որակութիւն արդուցանելոյն՝ առնէ պտղատու. զքահանայն՝ ի քահանայագործելն, զիշխանն՝ ի գատելն, զպարթաւն յողորմելն, զաղքատն՝ ի համբերելն, զկրօնաւորն յաղօթելն, զկոյսն՝ ի ժուժկալելն. և ո՞ կարէ թուել կամ զնուիրս նոցին զանազանս, և կամ զընդունողացն բազմութիւնն։ Արդ սա աղբեւրս կենաց՝ որ զայս ամենայն կատարէ, հանդերձեալ է տեսութեամբ և հաղորդութիւք մարմնոյ և արեանն Քրիստոսի առնգանել զժողովուրդս, բան որում առացաւ. վասն այսորիկ նախ խոնարհեալ խնդրէ զնուիրս զայսոսիկ քահանայս ժողովրդեանն որք երկրպագեալ նմին սպասէն, ասելով. «Աղօթեա ժողովրդեանս որք խոնարհեալ երկիր պագանեն առաջի աստուածութեանդ քո.»։ Աղօթութիւն վայելչապէս՝ ի նմանէ, զի բղխումն է, ոչ արդար իրաւանց միայն՝ այլ տիրապէս ողորմութեան. քանզի ոչ գարշի յումեքէ, այլ առ ամենեսեան խոնարհի բան իւրաքանչիւր չափոյ և առաքինի։ Քանզի այժմ, ասէ, ժողովուրդս վասն այնպիսիկ խոնարհեցան առաջի աստուածութեանդ քո, զի զնուիրս միսիթարութեանդ կարօտին ընդունել. տուր նոցա որպէս բարերար Աստուած։

«Պահպանեա զոտս ամբողջս, տպատուեա յոգւոջ սուրբ զձեւ մարմնոյ ցուցակի.»։ Ցիրաւի ասէ, պահպանեա. քանզի նորա նախախնամութեանն Քրիստոս զմեզ հաւատաց. «Ի ձեզ, ասէ, բնակեսցէ, ընդ ձեզ եղիցի՝ ի յաւիտեան.»։ Ահա ձեզն զմարմնոյն զերկրպագելն նշանակէ. զի Աստուած զՀոգւոյ երկրպագութիւնն խնդրէ, և ոչ զմարմնոյ, բան առեալն բանի. «Հոգի է Աստուած, և երկրպագուաց նորա պարտ է Հոգւով և Ճշմարտութիւք երկիր պագանել.»։ Ասաի մարմնոյս պարանոցի կորացումն՝ ներդործութեան Հոգւոյն պարտ է զի լինի բացայայտիչ։ Արդ, ասէ, յայս զօրացս զասելն. զի որպէս մարմնով կան առաջի աստուածութեանդ քո, և մեռք լինիցին. և որպէս այժմ զպարտեցան խոնարհեցուցին, և զանձնիշխան Հոգին ընդ կամս հրամանի քոնեաձեացեն. և այս ոչ վայրապար կամ մեռաի աչխատութիւն, այլ զինչ. «Ի՛ ի ժառանգութիւն և ի վիճակ հանդերձեալ բարեացդ.»։

Պարձեալ, «Ջպատուիրեա յոգւոջ սոցա զձև մարմնոյ ցուցակի», տիրապէս իմանամք յաղագս հաղորդութեան ասացեալ. քանզի սոքա, ասէ, կենդանացոյց զբաղանաց ծառայքն, և աշխարհական հոգոյքն խաւարեալք, տկար են իմացողական հայեցողութեամբ զբեզ տեսանել, որպէս և զդասս քահանայիցս ոչք ընկալան զքեզ յանձինս և՝ ի պատարագս։ Այլ աղաչեմ՝ ներել ողորմութիք ժողովրդեանս, և չընդունելն՝ ի բերանս խրբանոյ զաէրունի մարմնոյս ձաշակումն՝ հաւատարատիպ սուրբին ընդ զհոգիս նոցա հոգևորական քո շնորհիւ. և որպէս մարմինքն զձև մարմնոյս Քրիստոսի ցուցակ՝ ձաշակեն և ըմպեն, հոգիքն ընդ սմին զՀոգիդ Քրիստոսի ձաշակեալ և արբեալ զմայլեալ խրախացին։ «Ո՛՛ի ժառանգութիւն և՝ ի վիճակ հանդերձեալն բարեաց Քրիստոսիւ Յեսու տերամբ մերով, ընդ որում քեզ փառք...» Այսինքն թէ ժառանգութեան հանդերձեալ բարեացդ՝ վիճակի՝ այս տուաւ մեզ առհաւատչեայ և գրաւական, քո՛ի յանձինս մեր բնակութիւն՝ի ձեռն Քրիստոսի. ըստ այնմ. «Որ յաջողեացն մեզ՝ի սոյն, Աստուած է, որ եւս զառհաւատչեայ Հոգւոյն՝ի սիրտս մեր...»

ՋԻՆՉ Է ՑԵՏ ԱՅՍՐ ՁԱՑՆԵԼ ՍԱՐԿԱՒԱԳԻՆ ՊՈՕՍԽՈՒՄԷՆ, ԵՒ ՈՐ ՑԵՏ ԱՅՆՈՐԻԿ ԿԱՏԱՐԻ

Նաև բարբառոյս՝ի յաճախանն է լեզու. վասն հնազանդութեան աթոռոյն եդեալ է՝ի մեզս անյեղաշրջելի. այլ զի արդիմանալ թէ սորին ունի ասէ՝ նայեցուք, և այլոք՝ զգուշութեամբ. որք՝ի մի հային դիտաւորութիւն ասացեալքս, քանզի զմի ունին զօրութիւ։ Այլ խնդրելի է, էր վասն այժմ զայս ձայնէ սարկաւագն. այսինքն քանզի ժողովուրդն որպէս առին՝ի նմանէ հրաման երկրպագել, դեռ և սա խոնարհեալ կան. և քահանայն հանդերձեալ է այժմ զաէրունական մարմինն որում սպասեալ յուսան՝ նոցին ցուցանել, սարկաւագն նախ զգուշութիւն տայ ժողովրդեանն, որպէս և սովոր է, ասելով. «Պատսպասէն...» Այսինքն երկիւղիւ, եղբարք,

1 Երկու տրին. Փ———ր։

սիրալիր ոգեակք, հաւատով ժողովուրդք, զգուշութեամբ եկեղեցի, բարձրացուցեալ զպարանոց ձեր, նայեցարուք, տեսէք և գոհացարուք, հայեցարուք և փառս մատուցէք։ Իսկ նոցա զսուակալի բարբառ առեալ լուեալ, վաղվաղակի զկորացեալ պարանոցն բարձրացուցանեն, զարտօսրալից աչսն մաքրեն, զխոնարհեալ սիրտն հաստատեն, զտարակուսեալ միտսն զուարթացուցանեն, և թէ ուր հայեցին ոչ գիտեն. քանզի սարկաւագն միայն զնայելն նոցին աւետարանեաց. զբարբառն ծանեան զի աւետեաց էր, այլ զխորհուրդ աւետեացն ոչ ծանեան ի նմանել, զի միայն զգուշութիւն էր. ընդ զգուշութեանն պատրաստեցին զհայեցուածսն, զի կարօտեալք էին, և թէ զփափագելին արժանի լինիցին տեսանել կամ ոչ՝ դեռ ևս յերկբայս են, Մի ձայնս զբազմութեն ժողովրդեանն ոչ զմի անձն յակձիռս արար առ դաստ քահանայիցն. և թէ զփափագելին լիցին տեսանել կամ ոչ, դեռ ևս սրտակատար թօթափին. ի յուսոյն յուշ ձգեաց զաչս նոցին սարկաւագն, և զլուսին յուսոյն ոչ ազդեաց նոցին իմանալ։ Զգուշացիք լուեալ՝ ծանեան զի ուրախութեանն եկաս ժամանակ. իսկ զառիթ ուրախութեանն դեռ ևս սրտաթափ ակն ունէին տեսանել. նայեացուք ձայնեալ զամենեցուն հայեցուածս զարթոյց, և զնայելին սիրելի ոչ ազդեաց նոցին ընդ բանին. ինքն իւրում հօտին զաւետիսն կարապետեաց, և զերն ի մտերիմ՝ ծառայիցն տեղի տայ նոցին ցուցանել։ Ասաի և քահանայն վերացուցեալ զփրկական մարմինն, ասէ բարձրաբարբառ. «Ի սրբութիւնս սրբոց»։ Իսկ զգուշացայք ասէ, զնոսա ընկալարուք. ոչ նայեցայք, աչօք զսա տեսեալ ցնծացէք. ցանկայիք, տեսէք զփափագելիս. զի տուած ձեր ի մարմնի ախորժելիք տեսանել, անդադար յանդիման ձեր փայլեցուցանեմ. հրեշտակ առաքեցիք զիս խաղաղութեան, և ես զնոյն ինքն զխաղաղարարն անդադար ցուցանեմ։ Անդադար զերն տուած ծոյ կամեցայք, և անդադար զիսն սիրելի գրաւական առեալ ձեզ բերեմ ի նմանել. մեղայ Թողութիւն ի ձեռն իմ խնդրեցէք, արդ զսուրբս սրբոց առեալ ձեզ

1 Ա.շտ. եւ։ 2 Երկու տրին. Ե- գրեր Խ, տեր Խ.

բաշխեմ։ Ի սրբութիւնս սրբոց նայեցարուք որք արժանի գտայք ամին հաղորդել. սուրբ է բնութիւն, բայց ոչ ամենեցունն սրբարար, այլ որոց հաւատով զոյն տեսանեն. սուրբ է ոչ ամենեցունն, այլ իւրոց անդամոց առաքեալ սրբութիւն. սուրբ է՝ բայց ոչ զարտաքինան, այլ զսրբեալս բանիւն սրբէ։ Ահա նոքա առ այս գինչ պատասխանեն նմա.

“Միայն սուրբ, միայն տէր, Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր։ Օպարտութիւն խոստովանին բանիւս յառաստութենէ ուրախութեանն, որ ի սոսկալի տեսլենէն առ նոսա գեղաւ։ Ահանգի այս է մարդկան սովորութիւն. յորժամ անյաւսալի ուրախութեան որք վաղվաղակի պատահէ, յառաւել սիրոյն ի կարծիսն միտէ, այսպէս ընդ հրաշալի տեսութեանն, ընդ սքանչելի բանին՝ եկեղեցւոյս պատահեաց։ Ասա որում և ի մատուռն կուսանքն ասէին. տէր երբ մեք զայդոսիկ արարաք որում դուն վկայես, կերակրեալ զքեզ կամ ըմպեցուցեալ, ժողովեալ կամ միխիթարեալ. այսպէս և սոցա լուեալ ի քահանային թէ առ սուրբս Աստուած ձեզ սրբոցդ՝ սրբութեան հնարհ ընձեռեցաւ ի Հօրէ, պատասխանեն նմին. ով տէր մեր քահանայ, մեզ ուստի սրբութիւն։ Հոդածնեալոցս. մեք զիարդ վկայիմք սուրբք ախտից վհատակեալքս. մեզ անկար է սրբութիւն ընդ մարմին կապելոցս, այլ սուրբ միդ, մաքուր միայնակդ, անախտ մարմնով միդ միայն ի մարմնաւորացս, պարծանք մեր յերկինս երկնից դա միայն վերացաւ՝ զոր բարձեալ կրես ի ձեռին. առ որ կարօտեալքս նայեցեալ ցնծացաք, յոր հայեցուածովքս միայն սրբեցաք, ընդ որ ի պչնալս երբէք ոչ յագենամք. միայն սուրբ դա է մարմնով, միայն դոյն մեզ տիրէ, Յիսուս Քրիստոս Աստուածդ մեր և փրկիչ որ ի փառս Աստուծոյ Հօր միշտ հանդուցեալ և յաւէտ է։ Ահաւասիկ զսրբութիւն բում սպասաւորութեան ընդունել, այդ սրբութեանդ յուսով առընթեր կացեալ դեգերիմք, ետրին տեառնդ ակն կալեալ այսքան ժամանակս առէն տաւաղիմք, ի տերդ ապաւինեալ՝ սրովբէականս առէն խարուկիմք. զդա սպասեմք ունելեօք ձեռինդ սրբոյ՝

1 Մի օրին. Հ---ոյն։ 2 Մի օրին. Ո--- ի ---ն---ն։

մաքրութիւն անձանց մերոց ձեռաց ։ Այդ կայծակին
է որ զմերս պզծեալ մեղաց զշրեթունս կիզէ . իսկ զայլ
մի տառապեալ կամաց բազմութիւնս ընդ սոսկալի տե-
սիլդ , որ առաջի աչաց մերոց փայլեաց . հիացեալ աքան-
չանամբ ամենեքեան , զիարդ զտեր զօրաց երկնից՝ ի կառս
հիւթեղէն ձեռացդ տեսանելոյ բազմեալ . փառք դորին
անձառդ սիրոյ ։ Իսկ քահանայն զինչ յետ այսորիկ .
ոչ հանդուրժէ , այլ զգոհացողական օրհնութիւնն ՝ի
սենեակ սրտին մերելոյ՝ հեղու զխորհրդական աղօթսն
առաջի բազմութեան . եթէ զընդունողս աղօթիցս , ա-
սէ , տեսանել արժանաւորեցան , ընդէր ես այսուհետև
զաղօթս ՝ի սոցանէ ծածկեալ պատրուակեմ . մինչև
ցայժմ խորհրդապէս խօսէի , զի ես միայն զԱստուած
տեսանէի . իսկ եթէ ծածուկ տեսութիւնն յամենայն
հրապարակս փայլեցաւ , յայտնեացի և իղձք պաղա-
տանաց իմոց ընդ սմին . եթէ ինձ միայն էր շնորհիս պի-
տութիւն , պարտ էր ինձ միայն գոհանալ . իսկ եթէ
ընդ իս և ժողովուրդս ամենայն զնոյն գիտացին , լսցին
և փառատրութեան իմոյ վկայութեամբն հաւատասցէ .
յաղագս որոյ և ասէ բարձրաձայն .

“ Օրհնեալ Հայր սուրբ Աչմարիա Ա . օրհնեալ
Որդի սուրբ Աչմարիա Ա . օրհնեալ Հոգիդ սուրբ
Աչմարիա Ասուած ։ Օրհնութիւն և փառք Հօր և
Որդւոյ և Հոգւոյն սրբոյ ,, ։ Երրորդութենէն ընկա-
լեալ զնորս՝ յիրաւի զերիսն եղականապէս անաւասմբ
՝ի մի փառս և ՝ի մի պատիւ օրհնաբանէ . այսինքն
Հայր օրհնեալ , որ զպատարագս հաշտութեամբ ըն-
կալաւ . և Որդին օրհնեալ , որ փոխանակ եղբարցս մե-
ռեալ պատարագեցաւ . իսկ Հոգին օրհնեալ , որ խոնար-
հեալ՝ հատուցումն մեզ փոխանակ պատարագիս շնոր-
հեցաւ ։ Այս ժողովուրդքն որ տեսութենն արժանացան
այժմ , զոր նախ ոչ գիտէին , ընդ նմին և քահանայիս
գոհացողական օրհնութեան կցորդին , որում նախ ոչն
հաղորդին՝ ըստ իւրաքանչիւրոցն զամենն վկայելով . յայտ
արարեալ Թէ է Աչմարիա հաւանութեամբ մտաց մե-
րոց առ ՝ի քէն առացեալդ ։ Այս ամենայն խորհրդա-
ծութիւնք՝ աւատաղին աչաց սիրալի , իսկ անհաւա-
տութեանն ծիծաղելի . վասն այսորիկ և սարկաւագն
հրամանաւ ՝ի սկզբանն յերախայիցն ամիրոփի , ոչ իբր

յանարժանից, այլ որպէս յանհաւատից. եթէ հաւատս առ ի սոյն ունիցիմք, ոչ երբէք անարժանութիւն խորչիմք. բայց զի ոչ հաւատամք, յիրաւի ընդ երկիւղին ի դրունն պարսպիմք։ Այլբարք զհաւատն աձեցուցեք առ Ն։, և զսէրն զոր և պահանջէ ի մարմնաւորացս, և դիւրաւ գիտէ ի մէնջ կատարել՝. իսկ զմարքրութիւնն ի պահանջելն՝ զպարտութիւն խոստովանեացուք որպէս զմարմին. հաւատոյն և սիրոյն չունիմք պատճառ, զի անաչխատ է. սրբութեանն ունիմք, քանզի աղցաւոր եմք։

Ով հաւատ, սրբան բարձր ձկտիս. ով սէր, սրբան յանհասն ժպրհիս. ով երկիւղ, սրբան ի ստորինս նայիս[1]։ Հաւատն զգլուխ Երկնին ելեալ եւղարկեաց, և երկիւղն ի քղանցից նորա կեղակարծ զպարգևսն ամփոփեաց, սէրն ի լանջսն Քիստոսի զպարանոցն ձգեաց, և երկիւղն ի բացուստ սարսելով նմին ակնարկեաց։ Ձեռս զոտս ընդ միմեանս, և ել կառօք առ Ն։. ապա թէ տկարացար, բարիոք է յերկեւղին խոստովանեալ քան ի հաւատոյն և ի սիրոյն. հաւատն դիւրաւ կարէ ձգել զքեզ առ երկիւղն, երկիւղն ոչ կարէ քնաւ վերածել ի հաւատն։ Ընտանի է երկիւղն հաւատոյն, Թոռն է երկոցունց սէրն։ Ոչ կայրն Ն։ ի քեզ և զորդիան ծնանի, զարմացան և զպտուղն ընծիւղէ. հաւատս որոց տեսանես, եմի կեղակարծեր. աստուածայինն է աւանդութիւնս, և ոչ մարդկայինն. տէրունի խորհուրդս և ոչ երկրայինն. եթէ հաւատաս, ապա երկնչիս. եթէ երկնչիս՝ դիւրաւ սրբիս. բազմամեայ երկիւղածութիւնդ ոչ երկիւղի[2], այլ անհաւատութենէ մերոյ տայ զտարացոյց. մի չար է հաւատոյն և սիրոյն արհամարհութի, և երկեղին անհաւատութի[3]. բայց հանարիմ փոքր տեսանն զյանցանս արհամարհութեան քան զանհաւատութենէ. նա յանդգնեցաւ արհամարհել զմեզն՝ զի զՆ։ստուած հաւատաց տկարութեան մարմնոյն սրբութիւն. ես զի հրաժարիմ բազում ամն, զի ոչ ի նորայն՝ այլ յիմն հաւատամ սրբութեան կարօտութիւն։ Ո՛տայր

1 Մի օրին. Գիտէ ի վերջ խօսրնել։ Ալլ օր. Գիտէին ի՛ վերջ։
2 Երկու օրին. Ի սարսուռս հայիս։
3 Մի օրին. Ուն է երկիւղ։ Երկու օր. Ուն է երկիւղ։
4 Մի օրին. Անհաւանութենէն։

ինձ զՀաւատան և զերկիւղն և զսէրն ընդ միմեանս լծել ։ Ոչայց զի յերկոցն վերպեցայ , նախ զթարիսին եղեալ զբակտեալ տազատար առաքինութեանն ի վերայ նոցին չինեցից ։ Հաւատան է հիմն , Հաւատան արմատ , աւատալ թէ զայսքան ջնորհս ի սէտս փրկութեանն մեր փրկիչն մեր անօրինեաց . չունիմք այսօր զնոյն , մոլորութեամբ յերկիւղն պանծամք , ոչ եմք արտիւ Հաւատացեալ . ատացեալ զնոյն , վասնզի արեսցուք զմիտս երկիւղիւ ատատնեալ , ջնորհօքն Աստուծոյ , որում փառք յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՂՕԹՒՑՆ ԶՈՐ ՑԵՏ ԱՅՍՐ ԽՈՆԱՐՀՒ ՓԱՀԱՆԱՅՆ ԵՒ ԱՌ ՔՐԻՍՏՈՍ ԱՍԻ

«Լացեա , տէր մեր Յիսուս Աստուած , յերկնից ի սրբութենէ քումմէ , և յամենայն փառաց թագաւորութեան քո . եկ ի սրբել և ի կեցուցանել զմեզ որ ընդ Հօր նստիս , և աստ պատարագիս ։» Որք ոչ գիտեն զքրիստոնէից խորհրդոցս բարեպաշտութիւն՝ երկուս ունին պատճառս , կամ զտգիտութիւնն կամ զանհաւատութիւնն . ի տոյանէ ոք յորժամ լսէ զաւացեալ աղօթիցս քան , կամ անհաւատութեամբն այպանէ , կամ տգիտութեամբն տարակուսի . զինքզ յերկինս նստի էութիւնն Աստուած , և աստ պատարագի , կամ ոչպէս որ ի մէջ մեր է՝ յերկինքին նայի ։ Այսոքեցս պարտ է երկիւղածութեամբ ձգել ի միտս զգիտութիւն խորհրդոցս զօրութեան՝ , որպէս և ցուցաք ըստ կարի Հայրենի աւանդութեանցն ընթացիք . այսինքն զի Աստուած ընդ Հօր նստի ի սրբութեան աթոռն՝ մերս մարմնոյ էութեամբ , և մեք պատարագեցաք զնորա խորհուրդն որ վասն մեր չարչարանացն աստ խնայողականս Հայեցողութեամբ . զի Հաւատացաք՝ թէ այս գործառնութիւնս և աղօթքս առաջի Աստուծոյ է՝ որոյ փառաքն լի է երկինք և երկիր , և այնպիսի յուսով առաք աստ պատարագ Հօր զԱստուծոյ չարչարանացն զխորհուրդ , և անդր ի յերկինս խնայող մտօքս Հաւատացաք զնոյն ինքն զԱստուած տալ ,

1 Մի օրն . Ջոր.-Բէթ ։

որ առ քահանայապետն էլոն իբր զՅովին ի Յորդ փոխանակ պատարագիս մահուն, և առաքեաց ի նշանակս մարմնոյ և արեանն իւրոյ, և օծ զսա անօրհնութեամբ Յոսեայն տէր և Քրիստոս՝ որպէս և զիւրն մարմին. և մի Յովին որ ի նա էջ ի Յորդ, էջ ի Քրիստոսէ ի նուէրս՝, և արար զսա[3] մի մարմին Քրիստոսի, այլ և այլ որակութեամբ նիւթոցս. վասն այսորիկ ասէ.

«Աղաչեմ արա տալ մեզ յանապատ մարմնոյ քո և ի պատուական արենէս, և ի ձեռս մեր ամենայն ժողովրդեանս»։ Ով ի մեք ըստ մերոց գործոցն ոչ ունիմք համարձակութիւն ի քեզ մերձենալ. դու տուր, որ ըստ քում ազատ և անմեղ մարմնոյդ ընկալաք զայս ընդ ի Յորդ քումմէ մարդկայինս բնութեան առնուլ ի քեզ և ի մարմին քո զՅովիդ քո անչափ. և միջնորդութեամբ մարմնոյ քո և արեան անցուցանես զնոսին ի մեզ՝ ըստ իւրաքանչիւր չափոյ և արժանաւորութեան։ Ասատի աղաչեմք, զի տայցես դու անընդմիջաբար մեզ, և ի ձեռն մեր ամենայն ժողովրդեանս, որպէս զի բովանդակ անդամքս հաղորդ լինիմք ի գլխոյդ ընդ Հայս իջելոյ։

ԸՆԴԵՐ ՅԵՏ ԱՂՕԹԻՑՍ ԵՐԿՐՊԱԳԵԱՆ, ՀԱՄԲՈՒՐՄ ԶՍԵՂԱՆՆ

Արտ անգամ այս երկրպագութիւն քահանայի և համբոյր սրբոյ սեղանոյն. և թէպէս վայրապար. ոչ բնաւ. զի ոչ ինչ ի բարեկարգութեանցս եկեղեցւոյ հարևանցի կամ առանց խորհրդոյ։ Նախ քան զկիզբն պաշտաման երկրպագեաց, և ապա ասաց նմա սարկաւագն օրհնել. երկրորդ յետ առնլոյ զՅովին յառաջագրեալ նուէրսն. և երրորդ յետ զպատարագն յինքն առնուլ[2] խնդրելոյ. և թէ զինչ են սոքա՝ մարմնական յարատեւիւ հաստատեսցուք։ Ով որպէս հրեշտակ մնեալ առաջի Թագաւորի՝ նախ երկրպագէ, և ապա զպատգամաւորութիւնն պատմէ, այսպէս և սա նախ երկրպագեալ՝ համբուրեաց զտեղի փառացն

1 Ա.յլք. Ի նուէրս։ Զ...ն։
2 Մի պին. Զ...ս։ Երկ որ։ 3 Մի պին. Ցնուեան առնել։

Աստուծոյ, և ապա սկսաւ զաղօթս ժողովրդեանն մատուցանել. և պատճառ նա յորժամ առնու պարգեւս՝ ըստ իւրաքանչիւրոյն երկրպագեալ շնորհ ունիցի, ըստ այսմ և սա. Նախ յորժամ էառ՝ զՅովկին ըստ իննդրոյն՝ի պատարագն երկրպագեալ շնորհակալ եղև. և յայլ իննդիրս զբանն փոխեաց, այսինքն նուաճ զպէսպէս հայցուածս ունել Աստ. իսկ յորժամ այն առաքեցաւ, աղօթեաց վնասն ինքն զբաշխիչ պարգեւացն յանձն իւր ընդունել, և ինքեամբ՝ի ժողովրդեանն. եղեալ արժանի և այսմ շնորհի, զարձեալ երկրպագութիւնք շնորհ ունի տրիցս պարգեւաց. զի մեր այս է փոխարէն զոր տամք Աստուծոյ փոխանակ ամենայն շնորհաց որ՝ի նմանէ առ մեզ իջանէ. ըստ այնմ, «Զատո Աստուծոյ պատարագ զօրհնութիւն, կատարեա բարձրելոյն զաւետ զքեզ». այսինքն զերկրպագելն,

ՉՒՆՉ ՆՇԱՆԱԿԷ ՑԵՏ ԱՅՍՐ ԿՐԿԻՆ ԴԱՐՁԵԱԼ ՓԱՌԱՆԱՅԻՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՑԱՆԵԼ ՉՏԻՐՈՒՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆ Ի ՏԵՍՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՒՈՑՆ

Ծանօթ է ամենեսեան զննողաց՝ թէ ով ըստ միոջէ՝ի բարձրագոյնն նկրտի գիտութիւն ժողովրդեանս. այսինքն զի որ նախ առ Աբրահամ աղօթէին, ձգեցան նուաճ՝ի Հօրն գիտութիւն որդեգրութեան աղօթիցն պայմանաւ. յետ այնորիկ արժանի եղեն և զխորհրդաբար՝ի մէջ դասու քահանայից իջեալ շնորհն ամենեսեան տեսանել ամենեքեան՝ի ձեռն քահանային։ Արդ այժմ զոր տեսին զպարգեւս՝ քահանայն իննդրեաց աղօթիւք՝ի Աբրահամէ բաշխել և տալ իւր և նոցա՝ի ձեռակուքն. վասն այսորիկ և վերստին զնոյն բարձրացուցանէ, յայտ առնելով թէ որք՝ի բացուստ միայն աչօք զպատեսիք և զուարձացայք՝ յառաջ ողորմութենէն Աստուծոյ արժանի գտայք ձեռակել զնոյն և սրբել. ուստի և որ՝ի նախ բարձրացուցանէին երկիւղ արկ ժողովրդեանն ընդ տեսութեանն առեալ, «՝ի սրբութիւնս նայեցարուք[1]», որ սրբոյն է սրբարար, յայժ-

1 Երկ. օրին. Ե՛։ 2 Մի օրին. Սբբեցարուք։

մեռ վերերևութիւնս ի վերայ երկիւղիս տարակուսեալ սրտիցն զոյս խնդութեան արկանէ . զի այս է բարիոք կարգաւորութիւն , որպէս զի երկիւղիւն մաքրեացին սիրոյն ընդունողքն , որպէս զի սէրն առանց արհամարհանաց մնասցէ առ նոսա : Այլ զի՞նչ է այժմ ասացուածս՝ զոր ընդ բարձրացուցանելոյ խորհրդոյն բարբառեալ զոյսն ի նոսա ձգէ յնծութեամբ . « Ի սուրբ ի սուրբ մարմնոյ և յարենէ տեառն մերոյ և փրկչին Յսի Քրիստոսի Աստուածոյ սրբութիւ , որ ինքեալ յերկնից՝ բաշխէ ի միջի մերում : Այս է կեանք , յոյս յարութեան , քաւութիւն և թողութիւն մեղաց » : Ո՛վ սքանչելի և աստուածահրաշ բարբառոյս , որ և զանչափս տարերս կարող է ի յոյն սփոփել . մի ասէ , եկեղեցի Քրիստոսի , զարհուրիր եթէ սրբութի սրբոց լուար զսա չինէն ասացեալ . քանզի արդարև սուրբ սա միայն , ըստ որում զսա ի քէն վկայութիւնն լուեալ երկրորդեմ : Ականջ ոչ թէ միայն չինքեան պահէ զմաքրութիւնն , այլ և ի մեզ անցուցանէ զնոյնն շնորհօք : Եկայք ամենեքեան վայելչացուք ի սրբութիւնս սիրով . եկայք Աստուածպաշտութիւնս հաւատով . եկայք մահկանացուք , կերիցուք զկեանս երկիւղիւ . եկայք տատանեալք , ամրասջիք ի յոյսս անաշխատ . եկայք մեռեալք , կերիցուք զյարութեանն յիշատակս : Այս է կեանք՝ ոչ մարմնոյ այլ հոգւոց . սա է յոյս ոչ ապականացու փառաց , այլ անապականին . սա է քաւութիւն աղաչելոցն ի Հաւատոյ վիշապին . սա է լուացարան թխաւիպ գունոյն հնոյն Ադամայ : Ի դանդաղիլ եկեղեցի՝ սորա սեպհական , եկ յարեաց ի գլուխ քո սիրով , և լեր կենդանի . մի հեղգանար , եկ Աստուածպաշտ զհոգս իմ քեզ յերկինից : Ճ տապեա փութացիր , և եկեալ Աստուածպաշտ զարիւնս Քրիստոսի ի լուացումն հոգւոյ քո աղտից . եթէ ոչ մեղաւ , երագ մերձեցիր ի սուրբս սրբոց . եթէ մեղաւ՝ արիւնս այս մաքրէ զքեզ ի յաղտոյն : Ի՞նչ հաւատա սրբութեանն , միայն սիրով եկ առ քո բաղձալիս , միայն խանդակաթ առ սա հայեացիս , միայն բաղձմամբ ողջունի զսա Աստուածպաշտ միայն ըղձիւք տենչանաց զսա Աստուածպաշտ միայն սրտիւ մտիւք գոլովոյ արեամբս զնոյնեաց ,

Օ այս աղաղակեալ յոյս ցնծութեան քահանային ՚ի լուր ամենայն եկեղեցւոյն, աձեցուցեալ զտարփանս նոցա խանդաղատանաւք բարեհոչակ բարբառոյն՝ ձգէ զկաման ամենեցուն ՚ի խորհրդոյն սրբոյ Ճաշակումն։ Ո՛ր որ չունին ինչ պատասխանի այսուհետև ժողովուրդքն, որպէս և նախ քան զայս սովոր էին ասել. զի ողորմութիւնն զոր խնդրեին՝ զեղաւ. ընդէն զոր հայցէին ՚ի տեառնէ, ծաւալեցաւ. հացն հանապազաղոյդ ընծայեցաւ՚, պարտեաց թողութիւնն խոնարհեցաւ, ահարկուն փորձողին ՚ի փրկութիւն նոցին պարգեւեցաւ. միայն սուրբն Յիսուս Քրիստոս՝ ամենեցուն սրբութիւն բաշխեցաւ, ՚ի փառս Հօրն Աստուծոյ տէրն հաղորդ զեկեղեցի սիրելի ընկալաւ։ Օ՛ որ ծանուցեալ զոյս տէրն արժանի արար Ճանաչել, զան յաժարամիտ բաղձանօք ՚ի յայսքան ընդհացս հաղորդութիւն, ածեալ ընդ ինքեանս ընծայ սմին զՀաւատն, զյոյսն և զսէրն. և Ճաշակեալ զլուսին Հաւատոյ և զյուսոյն և զսէր տուիանացն, այնուհետև բոցակիզութեամբ սրտիցն աձեցուցեալ տաղտիկ։

ՉԻՆՉ ՍԱՐԿԱՒԱԳԻՆ ԱՑՍՈՒՀԵՏԵՒ ԴՊՐԱՑՆ ԴԱՒՈՒ ՀՐԱՄԱՆԱՏՐՈՒԹԻՒՆ

Ա՛ՑՍ որոմ յառաջնումն մինչ վերաբերիւր պատարագն ՚ի ժողովրդենէն ՚ի սեղանն, զպրացին հրամանն տայ եղանակել սարկաւագն, այսպէս և այժմ առնէ յորժամ հանդերձեալ է նոյն ընդհս իջանել առ ժողովուրդն ՚ի բաշխումն։ Ա՛ւ այս ոյր աղագաւ. զի ազդումն երաժշտական եղանակին ըստ որում ունի զօրութիւն՝ ընդոստուցեալ զարթուսցէ զմիտս ամենեցուն առ ՚ի տենչումն ընդհսին. քանզի չիք ինչ որ ըզկաման մեր յեղաշրջէ յուրախութիւն կամ ՚ի տրտմութիւն՝ որպէս զերգոցն ձայն, յորժամ որպէս պարտն է՝ լինիցի. վասն այսորիկ և եկեղեցական աւանդութիւն ընկալաւ զայն յարտաքնոյն։

1 երկու օրին. ընդ-եղաւ։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԳՈՑՆ ՈՐՈՎ ԴՊԻՐԻՆ ՊԱՀՏԵՑ

«ՅՐԻՍՏՈՍ պատարագեալ բաշխի՛ ի միջի մերում», Տեսանէս թէ ո՛րպէս ՚ի քահանայէն առեալ զբանն աւետեաց՝ ընդ եղանակս արկեալ դեղգեղէն, և զմիտս և զմարմին առնելոյն բանիւն և եղանակաւն ՚ի խորհս նոցա ցնծութեանն շարժէն։ Այլ եկ և զզօրութիւն ասացելոցս քննեալ ծանիցուք։ «ՅՔրիստոս պատարագեալ բաշխի՛ ի միջի մերում». այսինքն թէ ամէն եկեղեցի, ծանիր սոսկալի խորհուրդ. զի «Յն այն գոր՛ ՚ի միջոյ մեր վերածեալ քրովբէականս տուաք ՚ի ձեռս քահանային՝ պատարագ մատուցանել։ Յստուծոյ Նօր փոխանակ առնելոյն, նոյն ինքն մատեաւ ՚ի յերկինս, և գՀաշտութիւնն առ Յստուած և առ մարդիկ ուղղեալ, այժմ դարձեալ գայ ՚ի մէջ մեր պարգև ՚ի Նօրէ, և դեղ կենացդ բաշխի ամենեցուն։

«Օ մարմին իւր տայ մեզ կերակուր, և զսուրբ զարիւնն իւր ցօղէ ՚ի մեզ», Ո՞րպէս ասացաք, զառ ՚ի քահանայէն ասացեալն սոքա վերստին առեալ եղանակաւս Հաւատոյ ցանեն. զի նա ՚ի սուրբ մարմնոյ և յարենէս Քրիստոսի ասաց՝ եկայք Ձաշակեցուք, սոքա առեալ զնոյն, ծափս Հարեալ սրտիւք, կայթելով նուագեն։ Նակ թէ ո՛րպէս տայ զմարմին իւր և զարիւն, բազում անգամ ասացեալ է։

«Ա՛ստիք առ ա՛ւր, և առէք ըզյս», Քահանայն ասաց, եկայք Ձաշակեցուք սրբութեամբ. սոքա ընդ նմին յորդորեն զեկեղեցւոյն բազմութիւն. մատիք, ասեն, ՚ի կոչումն քահանային առանց Հեղգալոյ։ Այլ զինչ է զօրութիւն մարգարէականս բանի։ Այս՝ Հանապազ զիւրք զիմանալի գիտութիւնն կոչէն, որպէս և Քրիստոս զանձն անուանէր և զառաքեալսն. արդ սոյն իմացողացն լոյս է ո՛րպէս՝ որք այնպէս մատչին ընդունել, զի պիտեն Հաւատով թէ ՚ի մերձենալն ՚ի սա՝ ըստ անսուտ խոստմանն յամենայն մեղաց մեր սրբիմք։ «Ձաշակեցէք և տեսէք, զի քաղցր է տէր», Օ՞ն

1 Երկու օրին. Ոչ։ 2 Մէ օրն. Մատթէոսի։

ինձ . զլոյն . զի թէ զլոյն մտաք ընդ զգալի հայիս ոչ ուտեմք , զտեառնն քաղցրութիւնն ոչ կարեմք ճաշակել՝ . ապա թէ ունիցիմք առաջի՝ սորա զոր վասն մերմահուն , և զ[1]օր նուաւա հաշտութիւնն , և զ[2]ոգւոյն սրբոյ վասն այնր յիշատակի՝ մարմնոյս Քրիստոսի՝ ի մեզ անցանելն , արդարև՝ ի վեր ձանձրեալ տեսանեմք քան զարժանս մեր զտեառնն առ մեզ քաղցրութիւնն , որպէս ցուցեալ է ընդարձակ բանիւ : Նմանապէս այնուհետև թէ ոչ երբեք զանզուգականն ընդհրի եմք [3]կարող հատուցանել փոխարէն . և սա որ զայս եղանակաւս աւետարանի , զի զայս ճաշակեալ է զլոյս և տեսեալ զտեառնն քաղցրութեանն առատութիւն , վասն այսորիկ և տկարանայ իւրովին հատուցանել նմին փոխարէն : Այլ զինչ . զերկնաւոր գառապետութիւնն ի գոհաբանութեանս կցորդութիւն , ասելով .

„ Գոհնեցէք զտէր յերկինս „ : Այո՛ , ասէն , ծառայակիցք և պաշտօնեայք հոգւոյ հարկաւորք , զիարդ կարեմք երկնաւորիս ընդհրի երկրաւոր երգով հատուցանել փոխարէն , իմանալի բնութեանն զգալի լեզուով պաշտպանել : Այո՛ գոհնեցէք , գոհ հատուցէք նմին ընդ մեր զհանդիսնաւոր փառատրութիւն փոխարէն :

„ Գոհնեցէք զնա ի բարձունս „ : Այլ թէ պիտի զեղեալ ընդհրի գործ պարգևացս ոչ միայն յերկինս՝ այլ և ի յեւս բարձրագոյն կայանս զուարթնոցն ելեալ հրաւիրէ զնոսա ի կցորդութիւն գոհութեանս . որք արդարև սովոր են վասն առ մեզ ընդհրին՝ լինել [4]գառաջնոյ օրհնաբանք . բայ որում և ի ծննդեանն ծանուցին սիրապէս . և Քրիստոս՝ թէ ուրախութիւն է առաջի հրեշտակաց՝ մարդկան փրկութիւն : Այդ զի այսպէս ծանեալք գթութեամբ զնոսա առ մարդիկ , յիրաւի՝ ի բարձունս ձկտեալ բնակչաց նմին օրհնել ընդ մեզ հրամայեմք :

„ Գոհնեցէք զնա հրեշտակք նորա „ : Հրեշտակք անուանին ամենայն երկնայինք գառաջնութիւնքն հանդերձնաբար . վասն զի միջնորդութեամբ իրեաց իջուցանեն ի վերուստ ի խոնարհ զգուստիայլութիւն

1 Մի օրին . Ա՛ռաքել :
2 Երկու օրին . Ընդհրի :
3 Մի օրին . Երբեմն :

գիտութեանն Աստուծոյ, և միանգամայն միջնորդ և պատգամաւոր առ ի նոցունն լինին. սոցա ամենեցուն ընդ մէջ օրհնել զտէրն՝ աղերսեն։

«Օրհնեցէք զնա ամենայն զօրութիւնք նորա...»։ Վարձեալ և զօրութիւքս անուն Եհովա և ի մի դասու վերայ մակադրի, այսինքն ի միջին պարունակին միջին կարգի, սակայն զիրք համանուանաբար ի վերայ ամենայն երկնայնոցն զարդու առնուլ սովոր են. ըստ այնմ. «Օ՛ օրք զօրութեանց՝ որ առնեն զբան նորա...». և «Տէր Սաբաւովթ...». այսինքն զօրութեան։ Աստուածն վան. քանզի ամենեքեան նոքա էութիւնք են զօրաւորք և ներգործականք, և զօրանան ոչ յանձանց, այլ յակնարկութենէ տեառնն իւրեանց Աստուծոյ. վասն այնորիկ և նոքա զօրութիւնք անուանին՝ իբր նովաւ զօրացեալք։ Յօդիս զամենայն երկնային դասապետութիւնքն զանազան անուանադրութեամբքս հաղորդ առնուն օրհնաբանող գոհութեանն՝ իբր համաձակից պաշտօնեայք ի միում տեառն փառատրութիւն. զի եղեալ տեսին զերկնեցիս երկին, և զոր շուրջ կան՝ հրեշտակք, որպէս և գրեաց Հայրն մեր Աթիրեմ։ Ընդ որս և զալելուիայն յարակցեն ըստ իւրաքանչիւր տանցդ, որ է ըստ եբրայականին յամենայն լեզուս ազգաց քրիստոնէից՝ օրհնութիւն Աստուծոյ. Համաձայն բարբառովն վստահացեալք թէ կարող է այսպիսի հնչմունք երգոց հեշտալուր մարմնոյ՝ վերածել զմիտս առնեցուն առ խնացողութիւն լուսոյն, առ որ մատչել հրամայեն առին՝ առնուլ և ձաշակմամբ իմաստութեանն ի քաղցրութիւն սիրոյ տեառն բերկրել։ Ացաւեմ զամենեսեան, բացեալ զաչս մտաց՝ զառաւելութիւն չնորհիս տեսցուք, և մի ի նանիր զաստուածամայելուչս ունիցիմք օրինադրութիւն, կամ զպարզ մտօք տեղեկանալն սմին վարկցուք բաւական. այլ զիմաստացեալ թէ որպէս յարեգականն լոյն՝ այն մատչի և վայելէ որ զաչն ունի պայծառ զնաբնոյն, այսպէս և յիմանալի լուսոյս այն ձաշակէ և քաղցրանայ որ իմացող մտօք ի սոյն մերձենայ։

1 Մի օրին. Աստուածաբան-Բանիչ։ 2 Մի օրին. Բերիբեռ։

ԸՆԴԻՆ ԿԱՄ Ո՞Ր ԱՂԱԳԱՒ ՍԱՐԿԱՒԱԳՆ ԱՅԺՄ ՉԺՈՂՈՎՈՒՐԴՆ ՅԱՒԱՂ ԿՈՉԷ Ի ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Օ ԳՈՒՇԱԿԱՆ վարդապետութեանցն որովք վարժեաց զնոսա՝ վախճան եհաս. և ողորմութիւն և չարչն զոր խնդրէին ժողովուրդքն՝ եկին եհաս. զոր ծանուցեալ յառաջ կոչէ զաշակերտեալ մանկունքն.

“Արկիւղիս, ասէ, և հաւատով յառաջ մատիք.,, Օ ի սոքա երկոքեան են սանձք գաստիարակիչք ստահակութեան անձնիշխանս կամաց, երկիւղն և հաւատն. մին առ Աստուած ձգէ հանդարձակ, և միւսն պահէ ընդ նոսա որպէս պարան է. թէ երկիւղն միայն լինի, ուծանեալք ի նմանէ. և թէ հաւատն առանց երկիւղին, յանդգնիմք առաւել քան զարժանն։ Այսու այսորիկ ասէ, լծեալ զերկիւղն և զհաւատն, այնպիսի երապաքայլ թևօք ամբարձեալ զմիտս ի հաղորդս լինել Աստուծով վերածէք հաւատալ, թէ է սա աստուածային մարմին վասն ձեր բաշխեալ, որպէս և է. Ընդմարտապէս, և մերձենալ ի սա որպէս ի հուր զգուշութեամբ՝ որով մաքրի առնայն ձեր անօրէնութիւնք և մեղքն սրբի. զի ահա սպիակ այս մերձեալ՝ ի շրթունս ձեր՝ լուանայ զանձնայն անօրէնութիւնս, և զմեղս ձեր սրբէ ի ձէնջ, որպէս և զաստուածաբանն մարգարէի։ Օ այս ասէ սարկաւագն, որպէս զի հրամանաւ և կոչմամբ և մի անձնական կամօք յառաջեսցեն ի հաղորդութիւն. ըստ այնմ։ “Աբաբեաց զծառայսն իւր բարձր քարոզութիւ կոչել ի խառնելիս իւր, և ասէ. որ ոք իցէ անզգամ, եկեսցէ առ իս և սրբեցէ. և ցպակասամիտսն ասէ. եկայք կերայք ի հացէ աստի իմմէ, և արբէք զգինիս զոր խառնեցի,,. և ուտեն, այր վասն. որպէս զի Թողեալ, ասէ, զանզգամութիւնդ՝ կեցջիք։ Ի որ լինէ այլ իմաստութիւն քան զսա անուսանելոցէ սեղան. քանզի արգելու որ ուտէ Աշակերտելոք իմացութեանն զնորհրդոյս զօրութիւն ընդ մարմնոյս զգայականի, Թէպէտ և ան-

1 Երկու օրին. Մեղմեցաւ։ 3 Մի օրին. Ի։
2 Ակն. Ցասուկ եկեղեն։

զդամ է կամ պակասամիտ, վաղվաղակի փոփոխի զօրու-
թեամբ Հաշակմանն. ասպա թէ միայն զմարմնով մեր-
ձենալն Համարի բաւական, մնայ քաղցեալ և ծարաւ և
պակասամիտն կոկորդ. զի տէր մեր Յիսուս Քրիստոս
հոգի է, և հոգւոյ կեանք, հոգւոյ կերակուր և հոգևոր
հայց. յերկնից իջեալ և յերկիր մարմնով զդալեաւ ե-
լեւեալ՝ առ ի զհոգի այժմ կենսացուցանել։

ՍՐԲՈՑ ՀՕՐՆ ՄԵՐՈՑ ՅՈՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ
ՅԵՓԵՍԱՑԻՈՑ ԳՐՈՑՆ ԽՐԱՏ ՅՈՐԴՈՐԱԿԱՆ
ՎԱՍՆ ԶԳՈՒՇԱԲԱՐ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ.
ԶՈՐ ԿԱՐԵՒՈՐ ՀԱՄԱՐԵՑԱՑ ԱՍՑ ԴՆԵԼ ԵՒ ՓՈՓՐ ՓՈՓՐ
ԶՉՕՐՈՒԹՒՆ ԱԱՌՑԵԼՈՑՍ ՅԱՑՑՆԵԼ

«ՊԱՏԿԱՌԵՍՑՈՒՔ՝ ի մերձաւորութենէ, ակն
ածեացուք յապրականութենէ, երկիցուք գուցէ կըտ-
րիցի ոք ի մարմնոյն. գուցէ քակիցի և անսրժան
երևեսցի, Կամէ Թագ ոք մեզ ոսկի դնէը, և պակ
ոսկի՝ ի վարսից վերայ, ոչ ապաքէն զամենայն հնարս
հնարէաք, զի անչուշ ականակալ պսակին արժանի
գտանիցիմք։ Կակ այժմ ոչ եթէ Թագ՝ ի գլուխս ունիմք,
այլ Քրիստոս իսկ գլուխ մեր եղև՝ որ առաւել նա
մեծ է քան զամենայն, և մեք չհամարիմք ինչ. հրեշ-
տակք սարսեն՝ ի նմանէ, հրեշտակապետք և վերին
զօրութիւնքն, և մեք մարմին և եմք նորա, և ոչ այ-
նիւ և ոչ այսիւ պատկառեմք. և ո՞ր յոյս փրկու-
թեան կայցէ մեզ։ Կայեաց ընդ աթոռն արքունա-
կան, ի միտ առ զպատուոյն առաւելութիւն. զի այն
և քաջ կարէ քան զդեհեանն երկեցուցանել զմեզ
եթէ կամիք. եթէ բնաւ գեհենն չէր, պատուիրն այն
պիսի պատուով և յետոյ յանարժանութիւն գտա-
նել, քան զորպիսի ասենջանս չիցէ անհնարին, քան
զոր պատիժս՝ ի միտ առ. առ ոչ ընթեր նատի քո
գլուխն, ընդ ոչ աջմէ. և այն իսկ բաւական է քեզ
ընդ ամենայնի, ի վերոյ քան զպետութիւնս և զիշխա-
նութիւնս և զզօրութիւնս. և նորա մարմինն՝ ի դի-

ւաց կոխի, այլ քաւ լինի եթէ այնպիսին մարմին իցէ այնուհետեւ։ Եւ ընտիր ծառայքն իցեն՝ զարհուրին, և դու զմարմինդ ապստամբաց կոխանս արկանես, որպիսի պատժոց չիցես արժանի։ Եթէ զոտն Թագաւորի որ կապիցէ և կարեսցէ և շանց ընկենուցու՝ ոչ ապաքէն անհնարին պատժոյք չարալուկ դառնամահ մեռանիցի. և դու զամենայն իսկ մարմինն՝ չարաչար գազանաց արկանես կերակուր, և ոչ զարհուրիս, և չգողաս։ Եւ քանզի զտէրունական մարմինդն անկաւ Հոռ, ոն առեալ և զայն չիշեացուք՝ որ խաչեցաւն և բևեռեցաւն և զերեաւ։ Եւ արմին ես Քրիստոսի, համբեր խաչի, որպէս նայն տարաւ. առ յերեսս Թուք, ընկալաւ և ապտակ, համբեր բևեռացաւ, այդպիսի մարմին էր և այն մարմինն և չարար մեզս, և ոչ նենգութիւն ամենևին գտաւ ի բերան նորա. ձեռք նորա ի բարեբարութիւնս հասեալ ձգեալ՝ օգուտ ևեթ գործէին, չհոգան երբեք ինչ անպիտան ընդ բերան, զի դիւահար կոչէին և չասէր ինչ։ Օ մարմնոյն դէռ են բանք, և յայն մարմնոյն չէ ինչ ընդհատ մեր մարմինս և ոչ հեռի. մանաւանդ որք հաղորդիցիմք ևս մարմնոյն, և Հաշակիցեմք յարենէն, ի միտ առեալք զի ի նորա մարմնոյն որ ընդ աջմէ նստի և ի հրեշտակաց փառաւորի՝ Հաշակեմք։ Եւ այ է ինձ և եղբարկ եմ ես. Հանապարհ փրկութիւն կայ մեր առաջի, մարմին արար զմեզ իւր, և զիւր մարմինն ետ մեզ կերակուր, և ոչ ինչ յայնցանէ դարձուցանէ զմեզ ի չարեաց։

Ո՛ խաւար և անհնարին խորք ամբարշտութեան. ո՛ այնպիսի անկասկածութեանս, և ոչ աճելով գնաս զայնպիսի ահագինս։ Օ՛ վերինն, ասէ, խորհեցարուք, ուր Քրիստոս է նստեալ ընդ աջմէ Աստուծոյ։ և զայն Թողեալ ամենեքեան՝ զընչիւք զբազեալ էն, և այլք զիմաստից չհետ երթան, և ոմանց ի ցանկութենէ և ի կարեաց ընծռնեալք։ Տեսանէք զի և ի մարմնոյ մերոյ և ի ցանկութենէ որ ինչ անպիտան իցէ՝ կորի և ի բաց պարուրի, և չիք ինչ անտի շահ՝ Թէպէտ և ի մարմնոյն իցէ, քանզի մեռեալ է, և չէ ինչ օգուտ՝ յորժամ մեռեալ և փտեալ իցէ, յորժամ և այլումն ապականութիւն ևս իցէ։ Ի ինչ յայն ապաստան լինիցիմք՝ եթէ միանգամ եղաք անպտուղ մար-

ինոյն . եթէ բնութեան անդամին որ չիցէ պիտանացու մարմնոյն՝ ի բաց կտրի , իսկ կամաց անդամին եթէ ոչ յարեւոյթ ի մարմինն , որպիսի ինչ անհնարին անցս չարչարանաց կրեսցէ ,, ։

ՄԵԿՆ . Տէս զայս զի կամաք եմք անդամք Վրիստոսի , բնութենական միոյ մարմնոյ Վրիստոսի եկեղեցիս ։

ԲՆԱՒ . ,, Յորժամ չառնուցու խիւս մարմնոյն , յորժամ գնացք երակացն խնուցուն , յայնժամ մեռանի . նոյնպէս և մեք յորժամ խնուցումք զլսելիս , յորժամ վարի ընդդէմ գլխոյն մարմնոյ , յորժամ չձառակիւցեմք ի հոգևոր կերակրոյն , յորժամ չարիքն փոխանակ մաղասոյ եղծանիցեն զմտացն ատամունքն , անտի ծնանին ամենայն ցաւք , և ի ցաւոցն փուտ գործի , և պիտոյ լինի այնուհետև այն հուր ի սրբել , որ հարկանէ և ընդ մէջ կտրէ , քանզի ոչ առնու յանձն Վրիստոս ընդ այնպիսի մարմնոյ մտանել յառագաստն Աթոռ որ զհանդերձս աղտեղիս զգեցեալ էր՝ ի բաց եհան ի հարսանեացն , որ զմարմին աղտով ձրդեալ իցէ՝ ընդ այնպիսին զորպիսի անցս չանցուցանիցէ ։ Աղաւթս տեսանեմ զի վայրապար և անխոհեր և ըստ սովորութեան իմն հաղորդին մարմնոյն Վրիստոսի ։ Աթէ եկեսցէ ասէ , ժամանակ քառասնեքորդացն և յայտնութեանն , բարիոք է ասեն հաղորդել , մերձենալ յօրէնս . Թէպէտ և ժամանակ մատչելոց ոչ յայտնութիւնն է և ոչ քառասնեքորդքն , այլ հոգւոյն հասատատութիւնն և սրբութի . այնու հանդերձ հանապազ մերձեցիր , և առանց այնր մի երբէք ժտեսցիս ։ ,, Վանիկա անգամ եթէ առնուցուք , ասէ , զմահն տեսան ձերոյ պատմութիւք ,, . այս ինքն եթէ յիշատակ առնիջիք ձերոյ փրկութեանն և իմոյ բարեբարութեանն ։ Ա միտ առ , որ ի զոն հնոյն մերձենային՝ որպիսի սրբութեամբ պարկեշտանային . ոչխատի անկնաճութեամբ մատչէին , զինչ չառնէին , զոր հնարս ոչ հնարէին , զի ամենայն իւիք սուրբ գոա նիկին . գու յայն զննուն և ի պատարագ մերձենաս՝ յորմէ և հրեշտակք զոզան և հրեշտակապետք սարսին , և ժամանակաւ զիրան սահմանես ,, ։

ՄԵԿՆ . Տէս զկան երանելոյս , զի ոչ կամի զմեզ ժամանակաւ , այլ միշտ ջանալ և մերձենալ սրբութի՝ ի սուրբ հաղորդութիւնս , և այն զի իւր մեծվայելչ

չաթիւնն ձգեսցէ զմեզ ի սէր իւր , և ոչ հարկք ժամանակաց ։

ԲՆԱԲ . “Այս զիսաթղ կարասցես յանդիման լինել առաջի բեմին Կրիստոսի ։ Կատարեալ և պիղծ շըրթամբք ժխիցիս ի մարմինն . դու որ զԹագաւոր ոք չիշխէիր համբուրել եթէ չար ինչ ի բերանոյդ գայր , և զերկնաւոր Թագաւորն հոտեալ հոգւով համբուրես , մեծի Թշնամանաց իրք են ։ Զի՛ ասա , անլուայ ձեռօք յօժարիցիս մերձենալ ի պատարագն . Թուի ինձ Թէ լաւ համարէիր բնաւ չմերձենալ , քան Թէ աղտեղի ձեռօք մատչիցիս . փոքուն այնչափ երկիւղած ես , և աղտեղի ոգւով անխտիր ժամս հաղորդել . Թէպէտ և ձեռայ աղտ առ ժամանակ մի է , և հոգւոյն ամենևին ներկեալ ,, ։

ՄԵԿՆ . Աղօթեցէք վարդապետս՝ զայս ոչ սահման դնէ զբանս կսկծելի , այլ ահ արկանէ վարդապետութեամբս իւրում ժողովրդեանն , որպ օրէնն է ցանկն հաղորդել . մեք մի՛ զվարդապետութիւնս որպէս զկանոնագրութիւն ըմբռնեալ՝ յայս ապաստան խոշնդիմք ։

ԲՆԱԲ . “Ունեսանիցէս , զիսաթղ զսպան սրբեմք և ջինջ և մաքուր առնեմք . առաւել քան զայն զոգիս մեր պարտիմք սրբել . քանզի այն վասն մեր սրբի , և ոչ ինչ հաղորդի ընդ որ ի մեզ ի ներքս մտանէ . քանզի ոչ եթէ զգայուն ինչ է սպասն . և եթէ սպասն աղտեղի էր , չառնուիր յանձն նուաւս զսրբութիւնն մատուցանել , և ոգւով աղտեղեաւ անխտիր մատուցանես ,, ։

ՄԵԿՆ . Այս զքահանայական զգեստն ասէ , զսկիհն և զմաղզմայն և զծածկոյթս սեղանոյն . բայց մեք զայս չեմք տեսեալ , զոր ասէ երանելիս եթէ հարկաւոր է այնոցիկ սրբկիկ լինել . այլ զինչ կոչէն և աղբն քան տարոյ կամ առելի հին կայ ի վերայ սկոյն , և մեք չտանամք և չարբեմք . նախ զի սպասուցն չունիմք սպասաւոր սարկաւագ , և ապա զի յառաւել զգուշութենէն մնալոցեալ գնամք . սա ասէ՝ Թէ որպէս հոգւոյդ է հարկ սուրբ լինելն , նոյնպէս և մարմնոյն զգեստուց քահանայիդ և սպասուցն որով պատարագես ։

ԲՆԱԲ . “Կայց կարի իմն անհարթ և անձնահ և այլ ազգ զիրան տեսանեմք . յայլ ժամանակս Թէպէտ

և տուրբ իցեն՝ չմերձենան, և զատկի Թէպետ և կարի իսկ յանդգնեալ՝ի չարս իցէ՝ անխտիր մատչի։ Ո՛չ չար սովորութեանս և կանխակալ անմտութեան. ՚ի զուր ապերնի Հանապազորդ զննութիւն լինի ,, ։

ՄԵԿՆ. Ո՛չ քանս առ Հոռոմոց սովորութիւնն է, զատկի անպատճառ Հաղորդելն, զորս զգուշացուցանէ միշտ Հաղորդել. իսկ Հայք զայս զգուշութիւս լուեալ, ամենևին ՚ի բաց կացին ՚ի նմանէ, աչքաթարկանք և կրօնաւորք բազումք։ Ո՛ր օրինակ Թէ վարդապետ զմանուկն վասն սխալելոց յուսումն՝ Հարկանէ. իսկ այլ որ ՚ի բացուստ տեսեալ զՀարուածան, երկուցեալ՝ ամենևին Հրաժարէ յուսանելէն. վասն որոյ նա Հարկանի և սա մնայ անխրատ և առանց Հարուածոց։ Ո՛րդ որ լաւ էր, ուսանելն և սակաւ Հարուածովն զմեծ օգուտն շահել, Թէ անՀարուած մնալ՝ և անուսումն անասունն. այսպէս և Հայք տեսեալ զի Յոհան զիւր ժողովուրդն վասն սխալելոց յուսումն Հաղորդութեան խրատէ սաստիւ, յերկիւղէ սաստիւ՝ և զՀաղորդելն Թողուն ամենևին, և զանխիղ երկեղն. և չիմանան Թէ Հեռի են Ո՛ստուածոյ որպէս և ցուցանելոցս է. լաւ էր մեզ Ո՛ստուած ծեծուիլ՝, քան ՚ի նմանէ Հեռի լինել. զի Թէ բարի է չՀաղորդելն, ՚ի նոյն են Հեթանոսք. սա տրտնջէ Թէ միշտ էր չէք այժմ ՚ի պատրաստել՝։

ԲՆՒԹ. “Ո՛յրապարի լինչ կայցեմք առաջի սեղանոյն. չէք ոք որ՝ Հաղորդի, չէ ոք որ յօրէնսն մերձենայ. ոչ զայն լինչ ասեմ զի անխտիր ոք մերձենայցէ, այլ զի արժանի զանձինս յօրինեսցուք. չիցես արժանի պատարագին և ոչ մերձենալոյ ՚ի սրբութիւնն, Թէ այնպէս իցէ՝ և ոչ ազօթիցն. չլսիցես, զինչ աղաղակէ քարոզն, եԹէ երախայք յաղօթս կացէք, և որ ոչն Հաղորդի՝ ընդ երախայսն է. զի կայցես ՚ի ներքոյ՝ որ ընդ երախայսդ իցես. ընդէր ասես Թէ որ երախայքդ էք երԹայք, և դու ժպրհեալ անցեալ կաս իբրև զտուրբ ոք։ Ո՛չ չիցես յայնպիսեացն, այլ ՚ի կարգացն. և ընդէր չիտԹայցես Հաղորդել. ոչ ապաքէն զի ոչ Համարիս լինչ զիրան։

1 Մի օրէն. Ս---ին։ 3 Մի օրէն. Ի ---ն---ել ։
2 Երկու օրէն. Ա---ել։

ՄԵԿՆ. Ցեսանեա, զի ամենայն ջան երանելոյս և սպառնալիս մե՛ի հաղորդելն փութացուցանելոյն է, և ոչ թէ արտաքոյ եկեղեցւոյ հանել, որպէս և կարծեմք. այլ զինչ. զոր օրինակ իշխան տեսանէ զծառայ հեզս՝ի սպասաւորութեան, բարկացեալ ասէ. Թէ այդպէս կամիս ծառայել, գնա և մի՛ մնար առ իս. զայն մեռ ասէ, զի նա յերկեղչէն փութացի՛ի պաշտօնն. Թէ ծառայն խնամառուն լինի՝ ժրէ, ապա Թէ անմիտ՝ փախչի ընդ բանին, և լինի ընդ հեզոքութեանն և անհասատ. այսպէս և առ սպառնալով ասէ. չես արժանի պատարագին, ապա և ոչ եկեղեցւոյս. որպէս զի ջանասցեն ընդ եկեղեցւոյն և հաղորդին լինել պատրաստ. ապա Թէ նոքա որք զայս լուան ելին յեկեղեցւոյն՝ Թէ եպիսկոպոսն վասն ոչ հաղորդելոյն սահմանեաց մեզ չմնանել յեկեղեցին, մին այլ օրն՝ տաճն մարդ չէր կալեալ ունկնդիր իւր բանին. բայց զայս վասն այնր ասէ, զի անհնար էր քրիստոնէի արտաքոյ եկեղեցւոյ աղօթել. զու անմոռութեամբ զսպառնալիս օրէնք ընկալար, և զանօրէնութիւնդ օրինօք դործել, համարիս Թէ Յոհան ասաց. Յոհան սպառնացաւ, որ բուն՝ի նեբս մնաս։

ՌՆԱՒ. "Այիտ զէր աղաչեմ. աղքատական սեղան է, հրեշտակք սպասաւորք սեղանոյն, ինքնին խակ Թագաւորն եկեալ հասեալ՝ի սեղանն, և զու կաս, յօրանչես և ձկտիս, և աղտեղի հանդերձս ունիս, և չհամարիս ինչ ինեա. այս սուրբ հանդերձս ունիցիս. եԹէ այնպէս ինչ իցէ, ապա բազմեա և վայելեա՛՛։

ՄԵԿՆ. Լաւ, մի՛ խոցեր զականջսդ, զի՛ի Յոհաննու պատարագն շուրջ էին աղք և կանայք. ձկտէին, յօրանչէին. զու՛ի քոյոյդ ուսոյն ուսոյ գՀանեն և գբաժանել զանդամքն՝ի գլխոյն, ո՛ անմիտ։

ՌՆԱՒ. "Հանապազ զաւ շրջել զբազմականաւքդ, և ընդ ամենեսեան միշտ խօսի, և ասէ, ցիպէնականն Թէ ընկեր, գիա՞րդ կաս ատա՝ որ ոչ ունիս հանդերձ հաղասանեաց. չասաց Թէ ընդէր բազմեցար, այլ յառաջ քան զբազմելն և մնանելն և ատարժան հանդերեցաւ. քանզի չասաց՝ Թէ ընդէր բազմեցար, այլ Թէ ընդէր մնար. զայն և այժմ ընդ ամենեսին մեզ խօսի, որք անամօԹութեամբ և յանդգնութեաբ այսր մնանելք.

ամենայն ոք ոչ հաղորդի խորհրդոյս՝ անամօթաբարեամբ և ժպրհութեամբ կայ, և չէ նման պարտ կալ ,, ։

ՄԵԿՆ . ՝՝Ի զպատառնալիս օրհնս համարիս , և արտաքս գնաս . զի վասն այնր ասէ , չէ պարտ կալ , քանզի զկալն հարկաւորք գիտէ . կամի զի և հաղորդեսցիս հարկաւորապէս . ապա թէ սա զի ոչ հաղորդիս՝ բարկանայ , դու թողուս և զառնս և գնաս , յայտ է թէ ասես թէ ես ՚ի քո գնդէդ եղայ , ոչ այլ ՚ի տունդ մնանեմ, և ոչ ՚ի սպատնալեացդ զարհուրիմ. և ես այնուհետև յայլ դաս ։

ԲՆԱՒ . ՝՝ Ա՛ն այսորիկ զերախայն յառաջագոյն որոշեմք ՚ի բաց , և ապա զհորհուրդն կատարեմք ,, ։

ՄԵԿՆ . Օ երախայն որոշէ և ոչ զքրիստոնեայն ։

ԲՆԱՒ . ՝՝ Այս և ասէն իսկ յորժամ այր տէր՝ ՚ի հայ կամիցի լինել , որ զք յանցաւոր ՚ի ծառայիցն իցէ՝ մեկուսի գնայ . նոյնպէս և աստ , յորժամ պատարագն եղանիցէ ՚ի սեղանն , և ՚Ի բրիստոս ՚ի վերայ գնիցի գառն անարատ , և լիցես եթէ ամենեքեան աղօթս արասցուք , յորժամ տեսանիցես զդրունս ՚ի միմեանս ածեալ ,, ։

ՄԵԿՆ . Դրունք ասա ՚ի միմեանս ածեալ , ոչ զեկեղեցին ասէ , այլ զխորանին սրբոյ , զոր արամ Նոառմանն սովորութիւն . քանզի յիւր աթոռն դեռ այն եկեղեցին չէին կայ՝ ուր սա զայս բանքս ասաց , և սովորութիւնն զոր աւանդեալ է՝ անշարժ է ։

ԲՆԱՒ . ՝՝ Ի՛ միտ առնուցուս եթէ երկինք ՚ի վերոյսն բանին , և հրեշտակք իջանեն . զոր օրինակ երանելի ումեք չէ պարտ ՚ի նեղքս ճնալ , նոյնպէս և ոչ հնաբաւորացն աղտեղեալ ,, ։

ՄԵԿՆ . Աղիւղ հասակացիր , զի ՚ի նեղքս էր հնաբաւորն աղտեղի , և սա ոչ զայն օրհնան լուծանէ , այլ երկեցուցանելով ՚ի հաղորդէն յօժարութեացանէ . դու մի զայս լսելով՝ զգաստիդ զրեալ չարաչար ընթեռնուս ։

ԲՆԱՒ . ՝՝ Ի՛նչ ասա , եթէ զք ՚ի ձնչ կոչեսցի , ընձեռա լուսոյն , և բազմեսցի , և մատչել չկամեսցի ՚ի սեղանն և չձնչակէ ինչ , ոչ թէ հնաւանդիցէ զկոչելն . ոչ ապաքէն լաւ էր այնպիսոյն թէ բնաւ իսկ չէր եկեալ ,, ։

ՄԵԿՆ . Այս լաւս ոչ եթէ սիրասիս լաւ գնի , այլ գինչ . հեթանոսին լաւ էր թէ չէր լեալ քրիստոնեայ ,

քան լինել և զՔրիստոսի կամեն չառնել. զայս վասն այնր ասէ, որպէս զի քրիստոնեայ գոլով երկնչիցի. այսպէս և քեզ ասէ սպառնալիս, ոչ զի եղցես, այլ զի Տաղտրդեացիս, դու ընդ այսմ լսելն և՝ ի տանէս և եղանես։

ԲՆԱՒ. "Գնասցես և դու մտեր՝ ի նեղըս, զօրհնութիւնն ընդ առնեսեան օրհնեցար, քայտ արարեր զի յարժանաւորացն իցես, այնու զի ոչ ընդ անարժանն արտաքս գնացեր ,,։

ՄԵԿՆ. Ձես զի իմ չէ բանս որ երկիւղիս ցուցանեմ, Աստուածորդին է. զի մեծին յեհեղեցին արժանաւորքն և անարժանքն զիշեր և ցերեկ յամենայն աղօթս. և ապա՝ ի խորհուրդ պատարագին՝ միայն երախայքն արտաքս առաքէին. այժմ մեք՝ ի պատարագէն ոչ թէ միայն պատճառաւ անարժանաւորութեանն խորշիմք, այլ՝ի տանէն ուր կատարի գիշեր և ցերեկ. զորթութիւնն զոր սա խորհրդոյ պատարագին դնէ, մեք տանն տաճր մնդորեապս։

ԲՆԱՒ. "Օ իմոյդ Տնացեր՝ ի նեղըս, և ոչ հաղորդիս սեղանոյս։ Ոչ եմ, ասէ, արժանի. թէ այնպէս իցէ, և ոչ աղօթիցն հաղորդութեան. քանզի ոչ միայն՝ ի պատարագն, այլ և յօրհնութիւնն իջանէ Հոգին ,,։

ՄԵԿՆ. Աղօթիցն ասէ, և ոչ տանն։

ԲՆԱՒ. "Օ՛ի որ միշտ՝ ի տունս աղօթից, քայտ ժամն չէս սմին արժանի ,,։

ՄԵԿՆ. Ասասէ, և ոչ օրհնս դնէ. մեք բնաւ ոչ ըզտունն պիտեմք և ոչ զաղօթն, միշտ արտաքոյ գոլով։

ԲՆԱՒ. "Ոտեսանեա, զիարդ սակաւիկ զսեղանն լուանան, լուանան և զտունն, սրբեն և զկտեղն՝ և զբաժակն յօրինեն և դնեն, և այն քաղօթիցն ժամն լինի ,,։

ՄԵԿՆ. Լուանան ասէ, քայտ է թէ սարկաւագքն և կէս սարկաւագքն, և ոչ աւագերիցն՝ զսեղանն սրբեն և զկտեղն[1]. չաւիղն զտունն և զփուշին՝ ի սեղանն կուտեն, և զսպասն քաղտն մաքրել խորշին անպատիւ զգուշութիւն[2]։ Աղքատ եմ ասէ. բարիոք. լիցուք աղքատ և՝ ի սեղանոց, կալցուք մի սեղան, զոր կարող

1 Երկու օրէն. Ջ-ԻՀԱՒ։ 2 Երկու օրէն. Ջ-ԻՀԱՒ։

լինիմք վայելչապէս պաշտել, և ոչ կրպակս վաճառուց բազմացուցանել։

ԲՆԱՒ. «Ինչ դէտ քարոզն աղաղակիցէ, իբրև սանդուխք շուրջ լուսացուք զեկեղեցի, զի 'ի տուրբ եւ կեղեցւոջ յօրինեսցի ամենայն ինչ, և մի ինչ իցէ անդ սպի կամ խոշ և կամ աղտ. չէն արժանի և ոչ աչք անարժանիցն հայել յայնպիսի սրբութիւնն, և ոչ ականջք լսել զայնպիսի բարբառսն զահագինս.,։

ՄԵԿՆ. Ասատ է և ոչ օրէնք. իսկ եթէ օրէնս համարիս, կալ որպէս պարտն է. գիշեր և ցերեկ աղօթիլ յեկեղեցիս համարձակ, և յայնժամ միայն եղ. որպէս զի ծանիցուք թէ խորհրդոյն առնես զպատիւն ըստ հրամանի սրբոյս. ապա թէ միշտ ես 'ի դուրս՝ տգէտ ես, վասն որոյ և անհաւատ։

ԲՆԱՒ. «Ովպէտ և պազան, ասէ, մերձեսցի՝ քառասրբք քարկոծեսցի. և այնպէս հպելոյ անգամ 'ի լեառն չէին արժանի. թէպէտ և յեաս մատչէին և տեսանէին ուր կայրն Աստուած՝ չհամարձակէին տեսանել։ Ինչ դէտ չէ եկեալ հասեալ նա՝ 'ի բաց գնա. չէ քեզ իշխանութիւն անդ կալ առաւել քան զերախայրին. քանզի չէ հասարակ բնաւ չհպել 'ի խորհուրդն, և հպել, և յետոյ անցանել և արհամարհել.,։

ՄԵԿՆ. Այրն զորդիդ վարէ. մի գնար, թէ և բիւր ասէ թէ գնա, այլ ծանիր թէ 'ի ծոցն կոչէ սատուա. ապա թէ գնաս, չհասկացար գՆօր քո բան որպէս պարտն է, թէ քնքշութեամբ վարի առ որդիդ, և ոչ ուղղութեամբ. ապա թէ ոչ, լուր։

ԲՆԱՒ. «Լաւ և այլ ինչ բազում ասել ահագինս. այլ զի մի ծանրաբեռնիցեմ զմիտս ձեր, բաւական համարիմ և այսչափ միայն ասել. զի որ սակաւուք ոչ ըզգաստանայցեն. և ոչ բազմօքն խրատեսցին, զի մի առաւել դատապարտութիւն գործիցեմք ձեզ.,։

ՄԵԿՆ. Տէս, չէ օրէնք ահագին[1], բանք է ահաբեկու, զի ընդ յանդգնութեանն և զգուշութիւն խառնեսցուք. մի դու փոխանակ այսր զփախուստն ընտրեր, լաւ համարել զոչ մնալն կենդանի, քան թէ այսպէս յանդիմանիլ. որպէս և ասէ ուրեմն Ծածաման զայս։

1 Մի պրն. Ա՞ֆ-ՀԲ։

ԲՆԱԲ. "Ելա՛ր զամենեսեան, մի միայն ՚ի գալ փութայցէք, այլ հանդերձ գալուն և մերձենալոյ արժանի զանձինս պատրաստեսջի՛ք ,, :

ՄԵԿՆ. Այեաց զի զոր վարեաց բազում անգամ, զարձեալ վաղուն նոցին գալոյ Յանապարհ հորդէ. որպէս զի ուսցիս Թէ հայր է. զուղղեն կամի սատեւոյն՝ և ոչ զգնանն:

ԲՆԱԲ. "Ելի՛ ասա, Թէ Թագաւոր հրաման տայր, եԹէ որ զայս ինչ գործեաց՝ յիմ սեղանոյս ՚ի բաց կայցէ, ոչ ապաքէն զամենայն հնարս հնարէիք զի մի ՚ի բաց կացցէք ՚ի սեղանոյն ,, :

ՄԵԿՆ. Ուրեմն և դու սուրբ հայր, վասն հնարս ուսուցանելոյ վարես զմեզ ՚ի քէն առ ՚ի միջոն մերձենալ, և ոչ Թէ զի հեռացուք. բայց սակայն բազումք տգիտացեալք՝ զաստղ հայրենի որպէս զօրէնս պահեն և գնան:

ԲՆԱԲ. "Լսի՛ր նա աւանիկ յերկինս կոչեաց զմեզ յարքունական սեղանն ՚ի մեծն և ՚ի սքանչելի, և մեք հեղգամբ և յապաղեմբ, և չփութանբ և գուն ՚ի վեր այլ իրացն գործեմբ. և զինչ յոյս փրկութեան կացցէ մեզ. չէք պատճառ զտկարութիւն դնել և ոչ զլնութիւն. ծուլութիւնն միայն անարժան կացուցանէ ,, :

ՄԵԿՆ. ԵԹէ զայս ՚ի պէտս զծուլութիւնն ուղղելոյ խօսեցար, և ոչ զայսոյն հատանելոյ, իսկ մեք ընդհակառակն եղեալ՝ նիւթ առնումբ զվարդապետութիւնս առաւել ծուլութեան, և ասեմբ. դու ՚ի հաղորդն կոչես Ճաշակել, ես և ոչ յեկեղեցիս Ճնամ: Եւ դարև չունիմբ յոյս փրկութեան, ոչ միայն մեղուցեալք, այլ և օրինօք մեղանչել. այսինքն ՚ի յանցանելն ըստ օրէնն՝ զօրէնն համարիմբ կատարել:

ԲՆԱԲ. "Եայ ՚ի մէնջ ասացար. բայց որ բանայ ըզսիրտս և տայ զհոգին յորդորման, յորդորեսցէ զսիրտս ձեր և տնկեսցէ զՂ՚ի խոր սերմանիս. զի այսեամբ նորա յղասջիք ծնանել զհոգին փրկութե, և գալ այսր համարձակութե սրտի և աչալուրջ երեսօք. ըստ այնմ, եԹէ "Որդիք քո որպէս նորատունկ ձիթենւոց շուրջ զսեղանով քո ,, : Այ աւելորդ ինչ և մի դաժանագոյն, և մի խակ և տհաս. զի այնպիսի սեղանոյ նորատունկք պիտանացու են, ոտղաբերիչք զարմանալի պտղոյն ,, :

ՄԵԿՆ. Պարձեալ լսեր զի հորդէ գալոյ Հանապարհ հայրս որդւոյն վաղորդեան աւուրն, որոց այսօր զսաստս երևեցոյց. և զորս նախ ընդ երախայն հանէր, այժմ ձիթենի շուրջ զարքունական սեղանոյն կոչէ։

ԲՆԱԲ. "Ո՛ձիթենւոյն ասեմ, որպէս զի ամենեցուն լինելի շուրջ զարքով սեղանոյն պսակիլ, և մի՛ ի զուր ինչ և ընդ վայր ժողովել այր"։

ՄԵԿՆ. Այս ոչ սոսկ կամի զժողովելն, զու փախուցեալ և զժողովետըն Թողուս. սա՛ ի սեղանն ձգէ բրնի, զու և յեկեղեցւոյս ելանես. սա խրատուս ուղղել ջանայ, զու երկուցեալ՛ ի խրատէս՝ ՛ի վախից մղիս։

ԲՆԱԲ. "Պատահիւ և երկիւղիւ, այնպէս զի և զՊրիստոս տեսանիցէք համարձակութեամբ, որում լեցի ամենեցուն մեզ արժանի լինել, շնորհօք և մարդասիրութեամբ տեառնն և փրկչին Յիսուսի Պրիստոսի, որում վայել փառք, իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն"։

ԶԻՆՁ ԾԱՆԵԱՒ ԶՓՈՒԱՆԳԱՅ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ Ի ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ ԽՈՐՀՐԴՈՅՍ

Ձզ ԻՆՁ անպատշաճ վարկանիմ յետ՛ի հաւատալոյ զիմ վկայութենէդ սրբոյ հօրս ուսանելոյ զՀոգւոյ յորդորուածն հաղորդութեան, քննել և զՓրանգացն։ Վասնզի նոքա նուրբ և անօսր ընթանան զայս շաւիղ, և բազմաց անգիտելի. այսինքն զի ոչ տիրապէս ձաշակեն՛ ի տէրունական սեղանոյն ժողովուրդքն՝ բաշխեալ քահանային, այլ՝ այլ ինչ նորաձև ունին օրէնք օտար յայլ քրիստոնէից ազգաց շաւղաց. վասն զի քահանայն որ պատարագէ՛ ի մէջ ժողովրդեան, յետ ձաշակման սուրբ մարմնոյ և արեանն՝ զաւարկաւադն համբուրէ. իսկ նա ինքն և համբուրէ զմի ոք՛ ի ժողովրդենէն, և՛ ի նմանէ ընդ ամենեսեան տարածի համբոյրն երկեւղիւ և հաւատով, և այսպէս միանան ամենեքեան ընդ քահանային, և նովաւ ընդ Հոգւոյն Սրտոյ։ Զինձ թուի թէ՛ ի չարտարութենէ իմաստութեան գտեալ զայս՝ հանձաւրեղ նոցին առաջնորդից. զի յորժամ տեսին զեկեղեցի օր ըստ օրէ հեղգացեալս առ սրբոյ մարմնոյն ձաշակումն, որպէս և զրեացդ Յոհան, որոց հարկ է հանապազ՛ ի

սան վայելել, նայեցեալ ՚ի տկարութիւնն՝ ոչ կամեցան ժողովեալսն անբաժին ՚ի ժողովրդենէն առնել, այլ հաղորդին Քրիստոսի և միմեանց համբուրիւն. քանզի և նոյն ինքն տուեալ անուանեալ՝ զտալ բացոյց խորհուրդս մեզ յայտնել[1]. համբուր. Համին՝ մի տուպի, այսինքն թէ բազումքն այսպէս հաղորդեալ իրերայ միանան[2], ուստի Ճաշակեալ քահանային Քրիստոս միացաւ ընդ նմա, և հաղորդեցուցանէ իւր ըզսարկաւագն համբուրիւն, ձգեալ և ՚ի նա զշաղկապ հոգւոյն զոր ընկալաւ ընդ մաքրնական ողջունին, որպէս և ինքն առ զնմանէնն Քրիստոսի Ճաշակմանէն։ Իսկ սարկաւագն նմին հոգւոյն հաղորդեցուցանէ զամենեսեան ժողովուրդն, իրերայ և գլխոյն Քրիստոսի. այսպէս կամեցան նոքա զտկարութիւն ժողովրդեանն կցորդս առնուլ հաղորդութեանն։

Իսկ Հոտումք ոչ այսպէս, այլ այլով օրինակաւ։ Զանգի զնշխար մեացուածոյ պատարագին բաշխէ քահանայն եկեղեցւոյն՝ առ ՚ի նոյն միտս հայելով, այսինքն ՚ի հաղորդութիւնն. զի որք ոչ ՚ի սեզանն, գէթ նշխարի մեացուածոյն լեցին արժանի, և մի Քրիստոսի եկեղեցւոյն սակս մեզայն զատեալ՝ մեկնեսցի ՚ի հաղորդութենէ գլխոյն. այլ լեցին այսու փոքրկացեալքն յառաքինութենէ՝ փոքր ինչ նմին հաղորդեալք։ Իսկ որք մաքրեն զանձինս որպէս պարտ է, և յօժարամիտ բաղձանօք ՚ի տէրունական սեզանն ընթանան, երկոքին ազգդ հաղորդեցուցանեն սրբոյ մարմնոյ և արեանն։ Այլ մուծին երկրորդ օրէնք՝ զիջանելով առ տկարութիւն ժողովրդեանն. քանզի ՚ի սկզբանն ամենեքեան հաղորդէին պատարագին յամէ օր, որպէս յայտ է յառաքելոց և ՚ի սրբոց Հարցն բանից. յետոյ նուազեցաւ սրբութիւն և սէրն՝ ըստ որում[3] ուսաւ ՚ի Յովհաննէ. և խորհին ՚ի սեզանոյս բազումք, հայեցեալ ՚ի խիղճս մտաց իւրեանց. և նոքա որ խորհին՝ չեն օտարք, այլ միաւորեալքն Հարկաւորապէս անդամք Քրիստոսի. Հեռանալ ոչ կարեն՝ զի չեն անձանց տէրքն, թէպէտ և գրաւեն ՚ի մեզայ. սորին վասն

1 Երկու օրին. Ատէ։

2 Ըստ յարմարութեան իրացս դնէ զատուգաբանութիւն. ապա թէ ոչ՝ ըստ ինքեան համբուրիւն է իրր համարուրիւ, բուրիլ առ միմեանս զնշան սիրոյ, որ և այս ՚ի գէպ գայ առաքինեալ բանիցն։

3 Մի օրին. Ուրէ։

քարեփորձ հաղքն այսու ամբողջ հաստատեցին զառաջնոցն օրինաք հաղորդութեան, զի մի ամենևին սոքա անբաժին գնասցեն ի ընդհաց հոգւոյն Քրիստոսի։ Ա. յորժամն սրբեաւ յոգիս ազգին իւրոյ զնոգին սուրբ իջեալ յինքեանս մարմնոյն համբուրիւ, և ումն տայ նոցին զնոյն ընդոհ նշխարովք սեղանոյն, և պահէն հաղորդ զարդարս և զմեղաւորս հանապազ ընթացակցութեամբ գլխոյն իւրեանց Քրիստոսի։

ԸՆԴԵՂՐ ՅԵՏ ՃԱՇԱԿԱՄԱՆՆ ՍԱՐԿԱՒԱԳԻՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ԳՈՀԱՆԱՑ, ՀՐԱՄԱՑԵԼ, ԵՒ ՔԱՀԱՆԱՑՆ ԾԱՆՕՒԿ ԱՂՕԹԻՒՔՆ ԳՈՀԱՆԱՑ

Փոքր լինչ և ընկին ունին ի միմեանց զանազանութիւն ընթացք բանի գոհութեանն և օրհնութեան. քանզի օրհնութիւնն է յէից բարեացս Աստուծոյ փառաւորութիւն. իսկ գոհութիւնն՝ նորոգ առելոյն ընդհակառակութիւն։ Արդ մինչև ցայժմ յաղագս որոյ ունէին ընդոհ Աստուծոյ՝ օրհնէին. իսկ այժմ զարձեալ նորոգ ընկալեալ զհաստատակաց պարգևիս բարեաւն, ի վերայ որոյ գոհանալ հրամայէ զաստիարակ նոցին սարկաւագն. որպէս զի ըստ այմ հաղորդք լինին քահանայական սահմանի, որ խորհրդաբարն գոհանայ անդր ի նեղբին վայրս սրբոյ խորանին։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՔԱՀԱՆԱՑԱԿԱՆ ԱՂՕԹԻՑ ԳՈՀՈՒԹԵԱՆ

«Գոհանանամք զքէն տէր, որ զայսպիսի Ձառայութիւն բարութեան ընդունեցեր ի մէնջ ի փրկութիւն կենդանեաց»։ Յետ կատարման խորհրդոյս վերստին զարձեալ առ Քրիստոս զառնայ աղօթիւքս՝ որպէս ի սկզբանն, առ որ և զգոհութիւնս նուիրագործէ. զոր առեալ, ընդունեցեր մեզ. այսինքն զի ինքն պատարագեալ փրկանակ մեր առ զնոգին սուրբ, և իջոյց յառաջագրեալ նշանակս իւրոյ խորհրդոյ, զոր Ձառակեալ կենդանացաք հոգւով ի Հեռն հաւատոյն՝ ի մեռելութենէ վտանգի մեզայն։

"Սովիմք պահեա զմեզ սուրբս և անարատս, բնակեալ զմեօք ՚ի ձայնին խնամովդ, Տովմեա յանդաստանի կանաչ քոց սրբոց և բարեխրատ,, : Օ՛ի յառաջին ազգն ասէ, Հաւատամք առեալ սրբութեի կենդանարար ոձառաւս. բայց զի գոլով յաչխարհի՝ միշտ՚ի յուզմանէ մեզային ալեաց տարաբերիմք, կարօտիմք ունել զսրբարար դեղս կնիք և պահապան հանապազ մեզ: Այս այս պիպես լինիցի. յորժամ նա Քրիստոս, ըստ սրամ խընդրէ, իւրովք խնամովքն շուրջանակի պահեսցէ զմեզ, և լիցի Ձարակ արօտի մնաց մերոց ոչ զբաղուեն աչխարհի և պատրանք, այլ կամք և պատուիրանք օրինացն Քի: Ըստ ասէ, Տովիւդ քաջ որ զանձնդ քո եդեր այժմ ՚ի վերայ ոչխարացս, Տովանա զմեզ ՚ի քո պատուիրանացդ անդաստանն կերակրեալ զմիաս. որ բարին և մեզ՝ անօրինեա զնոսն:

"Արուի ամրացեալք յամենայն բանսարկուին ընդդիմութեանց, քոմ աեին եղիցուք արժանի լսել ձայնի,,: Ահիա և ընդդիմամարտ մարդկան բանսարկուն, և հանապազ ջանայ ՚ի պատրեին զմեզ. այս սպառազէն լիցի ամուր, ասէ, ընդդէմ նորին մարտի: Այլ քննելի է, զի պիս ամրութիւնն. նախ քան զայս յուսահատ էաք ՚ի փրկութենէ ըստ իւրաքանչիւր յանցանացս. իսկ այժմ Ձաշակեալ զչնորհս սիրոյն Քրի, զի մեր փոխան մեռեալ՝ զամենեսեան արդարացոյց, և զՀոգին պիտութեե առեալ յինքն մարմնոյն իւրով՝ ՚ի մարմին և յանդամ իւր յեկեղեցիս սիրեաց. Թերևս փոքր ամրութիւն է այս ընդդէմ խաբէութեան հեշտութենն՝ զոր սերմանէ ՚ի մեզ բանսարկուն. կամ Թէ տկարանայ այս ընորհ Ձաշակոցացն մտօքն՝ առաջնորդել զհետ Քրիստոսի, և նորա առնել Ձայնին ունկնդիր. Ինձ Թուի ոչ բնաւ:

"Այլ քեզ միայնոյ քաջայաղթ և Ձմարիտ Տովիւդ հետևել, և առ ՚ի քէն ընդունել զպատրաստեալ տեղի արքայութեանդ երկնից, Ըստուած մեր և տէր և փրկիչդ Յիսուս Քրիստոս,,: "Ախտարբն իմ, ասաց Քրիստոս, Ձայնի իմ լսեն, և ես Ճանաչեմ զնոսա. զկնի իմ գան, և ես տամ նոցա զկեանան յաւիտենական,,. զայս խոստումն ՚ի կիր առեալ՝ նմին յիշե-

1 Երկու օրին. Հանդիպելով։

ցուցանէ, աղօթիւքս, թէ որք այժմ մարմնոյ քոյ հաղորդիմք ՝ և չարչարակցութեանդ, հաւատով և սիրով ընդ հետս առաջնորդիդ եկեալ յարքայութիւնդ երկնից, այդր փառացդ լիցուք կցորդութեան արժանի, և միանձնաւորդ ուրախութեան։

ԸՆԴԻՐ ԴԻՄԶԵՒԱ ՓԱՒԱՆԱՅԱՊԵՏՆ ԶԳԻՑԵՒԱ ԶԵՄԻՓՈՐՈՆՆ ՊԱՏՈՒԻՈՑ Ի ՄԻՋ ԵԿԵՂԵՑԻՈՑՆ ԻՋԵԱ, ԱՂՕԹԻ

Այժ զառաջինն որ յաղագս այսր բանի ամբողջ ունիմք ամբարեալ ՝ի յիշողական միտս, կարողապէս և զայսր ըստ կարգի ուսանիմք զիսորհուրդ · արդ քանզի ցուցաք զքահանայապետն պատկեր Քրիստոսի ըստ մարմնաւորութեանն՝ կացեալ ՝ի գրունս եկեղեցւոյն, և ապացոյց նմին ՝ի խորանն համբարձեալ և ՝ի վեհադոյն աթոռն բազմեալ, յետ որոյ և յանդիման եղեալ Աստուծոյ ՝օր ըստ Քրիստոսի ՝ի ներքին կողմն վարագուրին, կատարեաց զվասն մեր բարեխօսութեանն սպասաւորութիւն յերկրի, որպէս և Քրիստոս կատարէ յերկինս. և ետ նուէր Աստուծոյ ՝օր զմարմինն Քրիստոսի իւրովք խորհրդածութեամբք՝ զոր նուիրէ Քրիստոսի ՝ի յերկինս, որով հաշտեալ ՝օրն՝ ետ ՝ի նա զ՝ոգին սուրբ · և նա առեալ զնոյն առանց չափելոյ ՝ի մարմինն իւր, բաշխեաց եկեղեցւոյս ըստ իւրաքանչիւր չափոյ և արժանաւորութեան · այսմ աստենայինս զնկարագրութիւն փրկչին մերոյ կերպացոյց առաջի մեր՝ իւրս քահանայապետ, և սպասաւորեաց ամենեցուն փրկութեան, որպէս և Քրիստոս սպասաւորէ մինչ ՝ի վախձան աշխարհի ։ Այլ սա այժմ և զմիւսանգամ նորա փառաւոր գալստեանն տայ մեզ տեսանել, կրկին գարձեալ ՝ի մէջ եկեղեցւոյս գալով սպասաւորական եմիփորոնաւն · որպէս և նա, զի յետ յերկրէ յերկինս վերանալոյն հանդերձեալ է գարձեալ յերկինէ գալ, և իւրաքանչիւր ումեք ըստ իւրում գործոց զվարձս աշխատութեանցս հատուցանել, այսպէս և

1 Երկու օրին · Տ՝ուրէ եմ։

սա՝ որ եւ յապագայսն երկնի՝ ի խորանն, յետ կատարելոյ զամենայն անօրինութիւն բարեխօսութեան՝ գայ զարձեալ ի տոմարս, և զվարձս աշխատութեանն գործոյ աղօթից ժողովրդեանն հատուցանէ բարձրեալն աղօթիւքն։ Այս էր վասն բարձրեալն. քանզի այս օրհնութիւն է, զոր առեալ Այսուծոյ բաշխէ սոցա, և ոչ ի դիմաց սոցին ալաչանաց. յորժամ ի նոցանէ առ Այսուած մտանէր հրեշտակ, խնկարկ ձայնիւ և աղերսիւ գնայր. իսկ յորժամ Այսուծոյ առ սոսա գայ, օրհնութիւն իշխանութեան զոր էառ ի նմանէ՝ բարձր բարբառաւ բնաւիցս բաշխէ։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԲՆՐՁՐՈՒԶԱՑՆ ԱՂՕԹԻՑՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԶՈՐ ԻՋԵԱԼ Ի ԴՐՈՒՆՆ ԵԿԵՂԵՑԻՈՑՆ ՕՐՀՆԻ ՓԱՀԱՆԱՑՆ

“Որ օրհնես զայնոսիկ որ օրհնեն զքեզ տէր, և սուրբ առնես զյուսացեալսն ի քեզ.,։ Ըստ Վրիտոս ասէ, յոր օրհնեցան ամենայն ազգ երկրի, սակս որոյ և ամենայն աղինք երանեն նմին բան մնջգարեին. բայց զինչ յայտ առնէ զուգակցութիւն թէ որ զքեզ օրհնեն՝ ապա ի քէն օրհնին։ Ցուցանէ այսու ոչ ըզկարօտութիւնն Այսուծոյ առ ի մերն օրհնութիւն, այլ զմեր սէրն առ նոյն և զհաւատս. զի օրհնութիւնն յայտնանէ գայ յառաջ, և մեք օրհնեմք զնա՝ զծայրագոյն հասուածն կամայ մերոյ տալով նմին. իսկ նա զոր մեք սակ բանիւ տուաք՝ արդեամբք զարձուցանէ ի վերոյ տուողացն։ Արսիսի օրինակաւ. այս ինքն մարդիկ ցուցանեն զյօժարութիւն կամացն՝ օրհնելով զԱյսուծած, թէ ինձ եթէ կարելի էր գործն, սիրաս բազձայ վասն սիրոյս զոր ունիմ՝ ի վերոյ քո օրհնութեանդ այլ յաւելուլ քեզ, և՝ ի վերոյ փառացդ այլ փառս բազմացուցանել։ Իսկ Այսուածն առեալ զսորա[1] յօժարութիւնն՝ որպէս զամենայն ի տիարէ, և զսէրն ծանուցեալ՝ ի պտղոյ բանիցն՝ ամն զնայն օրհնութիւնն զարձուցանէ արդեամբք բարեացն և ողորմութեանց։ Այս-

1 Երկու օրին. ի սոցանէ։ 2 Մի օրին. Զսոցա։

պէս է և սուրբ առնելն մեր. սրբասացութիւնն զսէրն ցուցանէ, և նա ընդ հատուցման սիրոյն և զսրբութիւն շնորհէ։

«Ելեցո տէր զժողովուրդս քո, և օրհնեա զժառանգութիւն քո»։ Ժողովուրդ է Իսրայէլի սեպհական եկեղեցիս և ժառանգութիւն նորին, զի զիւրն ետ զաբրահամ և գնեաց. զայս ժողովուրդս այսօր մեք ի բաց հանեմք ի նմանէ, և եպիսկոպոսաք և քահանայք որպէս զմեր ծառայեցուցանեմք, և յետ մեր աղգատոհմին ժառանգեցուցանեմք. մեղս ոչ առ մարդ այսու՝ այլ առ Իսրաէլ մեղուցեալ, որում չիք քաւութիւն առանց զղջման. զի զոր նա իւր գնեաց, ոչ վայրապար այլ առաքեամբ, և զմեզ կարգեաց նմին ոչ տէր, այլ պաշտօնեայս, ըստ այնմ. «Իբրեւ եղէք որ ի ձեզ հատ է Իսրաէլ տուծոյ», և ոչ ձեր. զի զարաձելոյն վարձն յերևել հօտապետին առնուցուք, մեք ի յաղգ մարդոյ և ի տոհմին ժառանգութիւն արկաք՝ Թողեալ զամենայն քրիստոնէից աղգաց ձանապարհ և ըստ այսմ մասին. զի նոքա չնորհիւն Իսրաէլ տուծոյ և ցայսօր դէռ ոչ բնաւ մեզան յայս տեսակ անհնարին յանցանաց։

«Ո՛ լուսն եկեղեցւոյ քո պահեա. սուրբ արա զոսա որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քո. դու զմեզ փառաւորեա աստուածային զօրութեամբ քո, և մի Թողուր զյուսացեալքս ի քեզ»։ Լուսն եկեղեցւոյ է բազմութիւն հաւատացելոցս ըստ իւրաքանչիւր չափոյ և աստիճանի, որք շուրջ կան զնովաւ՝ յաղօթեալ. զոսա ասէ պահեա, զի մի զոք յափշտակեալ ի լռանէս զրկեսցէ զմեզ սատանայ. իսկ սրբութիւն հայցէ, քանզի քահանայ է, որ Թարգմանի մաքրող կամ սրբող, և սրբէ զժողովուրդս աղօթիւքն. վասն այսորիկ ասէ, սուրբ արա զոսա որք ի տուն քո սիրով ժողովեցան։

«Իշխանութիւն պարգևեա աշխարհի, եկեղեցեաց, քահանայից, Թագաւորաց մերոց, և զինուորեալ մանկանց նոցա, և ամենայն ժողովրդեանս»։ Ո՛ պէսպէս խորհրդական իննդրուածոն զոր խնդրեաց Իսրաէլ տուծոյ և հաւատոյն ընկալաւ, բերեալ այժմ սրեռ ի վերայ

1 Մի գրի. Ս-ՀՈ։

ամենեցուն, զառեալ ընդՀ օրհնութեանն տալով ի ձեռս այսոցիկ, յորոց առաքեցաւն հրեշտակ։

"Օ՛ի՛ համ տուըք բարիք և համ պարգևք կատարեալք ի վերուստ ի քէն են իջեալ որ ես Հայր լուսոյ ,, ։ Տուըք բարիք են պէսպէս նախախնամութիւնքն՝ որովք կառավարէ Ա՛ստուած զարարածս, ըստ այնմ։ "Ա՛ւրհնեա կեամբ և շարժիմք և եմք ,, ։ Ա՛յն և պարգևս առաքէ ի վերայ իւրաքանչիւրոցս ըստ զօրութեան հայցուածոյն և օգտի խնդրողին. այս ամենայն, ասէ, ի քէն միշտ ի ստորև հոսի՝ որ ես Հայր լուսոյ. և միշտ գիտնալի գիտութիւնն որ ընդՀ Ա՛ստուած խնացողացս մեզ և հրեշտակացն՝ ուսանիմք. քանզի որպէս զգալի լոյս մարմնոյ աչացս, խնաստութիւն մտացս՝ ընդՀ Ա՛ստուածոյ, ըստ որում բազում անգամ ասացաւ. արդ ի նմանէ յորում ամենայն գանձք խնաստութեան ծածկեալ կան, իջանէ ի մեզ պարգև խնաստութեանս Հոգևոր և մարմնական գործոյն տնօրէնութեան։

"Աւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ ,, ։ Ա՛յժմ ամենայնի զոր ընդունիմք ընդՀ նմանէ չտնիմք այլ փոխարէնս, բայց միայն փառատրութիւնս. որ է ոչ փառաց քոց առաւելութիւն, այլ մերոյն սիրոյ ցուցանութեան բացերևութիւն։

ԶԻ՞ՆՉ ԱՁԺՄ ԵԿԵՂԵՑԻՈՑՆ ԱՍԵԼ, ԵՂԻՑԻ ԱՆՈՒՆ ՑԵՍԱՒՆ ՕՐՀՆԵԱԼ, ՑԱՑՄՄ ՀԵՏԻ ՄԻՆՉԵՒ ՑԱՒԻՏԵԱՆ

Ընդ որում՝ լուան զի քահանայն մեծ և բարձրագոյնս ետ նուագս ընդՀ փոխանակ օրհնութեանն, և յորդորին ի նոյն բազձանօք սրտիւ, յայտ արարեալ թէ անուն տեառն մերոյ ոչ միայն այժմ օրհնեցաւ ի մէջ մեր, որպէս վկայեաց Հայրդ տուըք, այլ և յայսմ հետէ օրհնեսցի մինչև յաւիտեան, այսինքն յանկեան և յանսահմանն ժամանակին. զի յաւիտեան ի վեր քան զժամանակն և ոչ մնան ժամանակի։

1 Մի օրին. Ցուրեմ։ Ա՛յլ օրին. Ցուրամ լսեաք։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՂՕԹԻՑՆ ՋՈՐ Ի ՎԵՐԱՑ ՀՈՂՄՎՐԴԵՒՆՆ ԵՒՍ ՓԱՀԱՆԱՑՆ

«ԱՏԱՐՈՒԻՄՆ օրինաց և մարգարէից դու ես վՆ փրկիչ մեր որ լցուցեր զամենայն հայրակամ տնօրէնութիւնս, լցո զմեզ Հոգւովդ քո սրբով»։ Ասանդակէ ի բանս չափաւոր՝ զամենայն տնօրէնութիւնս խորհրդոց որ մինչև ցայժմ կատարեցաւ. քանզի սկսեալ ի կանխագուշակութենէ մարգարէիցն՝ յառաջ եբեր Վրիստոս ի գալստեանն իւրում զամենայն բանս նոցա, և կարգաւորապէս կատարեաց. նոյն և այժմ այսօր եղև ի մէջ մեր և նոցին յիշատակք անբաժանելի. քանզի նախ խօսեցաք մարգարէիւքն, յետ այնորիկ հաստատեցաք և զխորհրդոց տնօրէնութեանն Վրիստոսի բացերևութիւնն։ Ասացը ընդէր ասէ հայրական տնօրէնութիւն. քանզի ոչ անձամբ անձին, այլ կամօք Հօր և իւր ըստ աստուածութեանն ՎՆ պաշտպանեաց մարդկայինս փրկութե՛ն. ըստ այնմ. «Ա՛ր յանձնէ լինչ ոչ խօսիմ, այլ Հայրն ետ ինձ պատուէր՝ զինչ ասացից և զինչ խօսեցայց»։ «Ա՛ջ զմեզ, ասէ, Հոգւով քո սրբով»։ Օ՛ի քո, ասէ, ամենայն տնօրէնութեան դիտաւորութիւնն առ այս հայերս, որպէս զի զՀոգին զոր բարձեր ի մէնջ ըստ պարտեացն Ադամայ, արդարութիւնդ նոր Ադամդ ընկալեալ՝ ի մեզ անցուցես։ Ադդ զի տնօրէնութեանդ յիշատակ լի կատարեալ աւարտեցաւ, լցուք ամենեքեան ոգւով ի սոյնս աշխատեցաք և պարգևաբ Հոգւոյդ, զոր քո այսպիսի ներգործութեամբ աստուածեղէն մարմնովդ ի մեզ ընկալաբ։

1 Մի օրին. Փրկութե՛ն։

ՋԻՆՁ ՆՇԱՆԱԿԻ ԱՅԺՄ ԲԱՀԵԼՆԵԼՈՒ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՆ

Յուձաւ յառաջագոյն այսմ խորհրդոյ զօրութիւն եթէ ոչ է վայրապար, այլ հաղորդս առնու զամենայն՝ եկեղեցին՝ նշխարաց սեղանոյն, որք՝ ի սկզբանէ Ձաշակումն ոչ եղեն զօրաւորք վայելել. զի որք օրհնութեանն կցորդեցան չափաւորապէս, ըստ արժանեաց իւրեանց հոգեպէս, լիցին և սեղանոյն նշխարաց մասնիապէս. ոչ որպէս սոսկ ընկալեալ զայն կերակուր՝ ի քահանայական ձեռաց, այլ իբրև վնշխար հոգևոր և առաւաձայնն բաշխեալ սեղանոյն՝ որ կարող է տալ ընդհնուր հաւատով Ձաշակողացն՝ ըստ յուսոյն և սիրոյն ո՛րով ընդունին։ Օ այս և կինն քանանացի՝ ի տեառնէն ապացուցիւ՝ ի մէջ առեալ արժանի զանձինս անմաքրիցն այսմ ընորհի վարկանէր. "Ցէր, ասէ, և շունք կերակրին՝ ի փշրանաց անկելոց՝ ի սեղանոյն տեառն իւրեանց"։ ըստ այնմ յարացուցի և եկեղեցիս՝ ի սեղանն տերունի ոչ Համարձակեալ, ըստ տկարութեան՝ փշրանացն դեգերեալ ապաստաց. և ընկալեալ զնոյն քահանայական օրհնութեամբ բարեյոյս կացեալ առողջանալ աւրն՝ Ձաշակել,

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍՈՂՈՄՈՍԻ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՋՈՐ ԱՅԺՄ Ի ԲԱՀԵԼՆ ԱՍԵՆ

Այս սաղմոս ոչ եթէ վայրապար ասի յայսմ վայրի, այլ քանզի զօրութիւն և միաբ սաղմոսիս ընդ առաջիկայ խորհուրդս միաբանի. և որ է սոյնն միաբն, Այն զոր տէրն ասաց յառեւտրականին. "Յորժամ պիտոյ եղիւ, և քաղցեաւ Ղազարէ, ինքն և որք ընդ նմանն էին, զիարդ եմուտ՝ ի տուն Աստուծոյ առ Աբիաթարաւ քահանայիւ, և զհացն զառաջաւորութեան եկեր, և ետ այնոցիկ որ ընդ իւրն էին"։ քանզի ծանուցեալ Ղազարի զթոյն զառնութեան Սաւուղի՝ փախեաւ՝ ի նմանէ, և եկեալ առ քահանայապետն քաղ-

1 Երկու օրին. Հ-ԴՒԼ-Ե-Ա։ 2 Ա.ՅԼ. Կ-Ր-Ղ-Ե-Ա։

յեալ՝ Թագուհյանէր զփախուստն, այլագունեալ առաջի նորա՝ որպէս Թէ՝ ի Պաւուղայ պատգամաւոր է առաքեալ յիրս ինչ. և խնդրեալ հաց՝ ոչ դառնէր, բայց միայն զՀացն սրբութեան յոր ըստ օրինացն քահանայիցն միայն արժան էր մերձենալ։ Ո՛ր առեալ քահանայապետին՝ ետ Պաւղայ և որոց ընդ նմա էին, նախ հարցեալ զսուրբ լինելն նոցա՝ ի կանանց. և զայս ոչ վայրապար արարեալ, այլ նշանակեաց զնորս հնարսն զեբրէական սեղանոյս առաստութիւն, որ ամենեցուն բաշխի հաւասար։ Պանզի յայնժամ երբայց զղրունս հաւատոյս այսոցիկ քահանայապետն առ Պաւղոս, Թէ ոչ միայն քահանայքն՝ այլ և ամենեքեան՝ ի քահանայական սեղանոյս նշխարս վայելեսցեն. ուստի և Պաւղոս սկսաւ զաղաղոս աստուածբեղէն Հոգւոյն նոցա՝ որում եղեն ապացոյց մարգարէութիւնն։

“( )րհնեցից զտէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն նորա՝ ի բերան իմ.,։ Պրպէս ասացաւ՝ նախատես եղև հնարհացս, որում և զհացն սուրբ ուտել եղև օրինակ. վասն այսորիկ ըստ մեր խորհրդոյս կարգի՝ զմարգարէութիւնս դնէ, ապա և մեզ պարտ է քննութեամբ յառաջակայ նպատակս զոյն յայտնել։ Պրդ քանզի բազմապատկաբար օրհնեաց եղկելոցս մինչև ցայս վայր զիրկիչն իւր, որոց և ընկալաւ փոխարէն զքահանայականն օրհնութիւն. իսկ այժմ կոչեալ զնոսա՝ ի կցորդութիւն սրբութեան սեղանոյն նշխարաց՝ կրկին գոհանան, ՝ի վեր քան զարժանն խրեանց գիտեալ զեղուամն տրիցս. վասն որոյ և ասէն. “( )րհնեցից զտէր յամենայն ժամ,.. էր վասն. զի յամենայն ժամ վայելեմ յողորմութիւնս նոր, և չունիմ այլ ինչ այժմ փոխարէն, բայց միայն զօրհնութիւնս, Պախ քան զայս պատարագեսցէ՝ ի վերայ իմ, վասն այնորիկ և օրհնեցի. յետ այնր և օրհնեաց զնա հոգևոր օրհնութեամբ, սակս որոյ օրհնեցի. իսկ այժմ՝ ի նշխար քաւութեան սեղանոյն զնա հպեցուցանէ, յաղագս որոյ և յայս ժամս առանց յաւելման գեղջ է օրհնութիւն նորա՝ ի բերան իմ. որպէս զի մի լեցի առ իս ընդարձակ առանց դիտութեան

կամ ընդհակառակն եթէ, և այնպէս յանցաւոր լինիմ տուողին. սորին վասն քանիցս զձիրսն առնում, և բերանս զպարսան օրհնութեամբք հատուցանէ։

"Ի տէր պարծեսցի անձն իմ, լուիցեն հեզք և ուրախ եղիցին,,։ Արդարև պարծել յայնպիսի տեառնն սէրն է արժան, որ օր ըստ օրէ զպարտս ծառայիցն յանձն իւր ընդունի, և վասն նոցին մեռանի. և տէս զի որ միանգամ չէր վայելեալ ի ընդրէս՝ աղերսիս խօսակը, այժմ յագեալ նուաւ՝ մեծաբանէ ի վերայ թշնամեացն, և խրախակից կոչէ զսիրելիսն։ "Լուիցեն, ասէ, հեզք և ուրախ եղիցին,,. հեզ ինձ թուի որ ըզսուրբ հրեշտակսն ասէ, որոց ուրախութիւն է մերն փրկութիւն։

"Եծ արարէք զտէր ինձ, և բարձր արասցուք զանուն նորա ի միասին,,։ Այս և փոքր ինչ յառաջ դարձեալ ասաց առ նոսա. "Որ՝նեցէք զտէր յերկինս հրեշտակք նորա և զօրութիւնք,,. զի մեծացուցանէն, օրհնէն և փառաւորէն առ մի հայր խորհուրդ, ոչ թէ լիութեան Աստուծոյ առաւելութիւն յարարածոցս, այլ սիրոյն մեր առ նա ցուցակ ծայրագոյն. զի զոր սիրեմք՝ յորժամ ձեռնհաս լինիմք բարձրացուցանեմք։ Այս տանք Աստուծոյ կամք և ոչ գործով, քանզի անկարօտ է. արդ ես ասէ, միայն չեմ բաւական՝ յաղթահարեալ ի ընդհացս. այլ՝ և դուք, խնամալի զօրութիւնք, վասն իմ կցորդ լերուք ինձ ի ընդհակառակութիւնս Աստուծոյ. և ձեզ ես բարձր արասցուք զանուն նորա ի միասին։

"Ընդրեցի ի տեառնէ և լուաւ ինձ, յամենայն նեղութենէ իմմէ փրկեաց զիս,,։ Այ փրկութեանն ընթացք ընդարձակ բանիւ է ցուցեալ վերագոյն. զայս մեք ինդրեցաք բազում անգամ յաղաղակելն՝ տէր ողորմեա։ Ընաւ, ասէ, զինդրուածսն և ողորմեցաւ. իսկ տեսակ ողորմութեանն օրպիսի. զի Աստուած փոխանակ իմ պատարագեցաւ, և այնպէս յանմեղացն մեզացն որով խոցոտեալ նեղեի՝ փրկեաց զիս. սակս այսորիկ զձեզ ի զնա բարձրացուցանել հրաւիրեմ օրհնութեամբքս։ Այս պարտ է գիտել եթէ ոչ

1 Աստ. ե- տր։

էր վայրապար բազմապատիկ հրաման քարոզութեան սարկաւագին առ ի զաէր աղաչելն, այլ որպէս զի նախ մեք ինդրեսցուք կարգաւորապէս, և ապա նա ողորմեացի, և մեր բախելովն զդրունս հնարհացն բացցէ, ըստ որում ասէ. "Ինդրեցի ի տեառնէ և լուաւ ինձ",,։

"Հատիք առ տէր, և առէք զլոյս, և երեսք ձեր մի ամաչեսցեն",։ Օ՞ր օրինակ որ մտանէք առաջի թագաւորի յանապատս, և խնդրէ ի նմանէ հնարին ողորմութիւն. իսկ նա լուեալ զինդիրն՝ ոչ զայն միայն տայ, այլ և զթագն առեալ դնէ ի գլուխ նորա, և ընդ իւր նստուցանէ. իսկ նորա բարեմիտ գոլով՝ եղեալ աղաղակ կէ. եկայք ամենեքեան առ այս թագաւոր որ իմ տարաժամութեանս զայս արար, չարգելու ի ձէնջ զնարհս իւր. այսպէս առնէ եկեղեցիս. ի պարգևն յոր վայելեաց՝ զամենեսեան կոչէ. "Հատիք, ասէ, առ տէր, և առէք զլոյս",։ Այս՝ զգիտութիւն անբաւ զթութեն և ողորմութեն Աստուծոյ առգնէ. զի զոր, ասէ, մեզաւորք՝ զհաւատս փառաց միայն տեսանէք ի բացուստ, և ի նմանել երկուցեալ խուսափիք. արդ այսուհետև մի ինայք անկոյս, այլ մատիք և առէք ձեզ լոյս իմաստից զնոն փրկութիւն, ուսեալք թէ որպէս զնս ապրեցոյց ի վեր քան զարժանն հնարհիւ, այնպէս և ձեզ արասցէ։ "Եւ երեսք ձեր մի ամաչեսցեն",. այսինքն ի պատկառանաց մեզացդ որով շաղախեալ էք՝ մի աստանէք ի մատչելն առաջի Աստուծոյ. էր վասն. ինքն զպատձառն յուցանէ։

"Այս աղքատ կարդաց առ տէր, և տէր լուաւ նմա. յամենայն նեղութենէ տուա փրկեաց զնա",։ Այս. ասէ, ձեզ ապացոյց, ես ձեզ մատչելոյ առ տէր առաջնորդ և ուսուցիչ լոյս։ Այս ձեզ ոչ ամաչելոյ վասն մեզաց նշանակ, զի էի և ես այդպէս աղքատ, յամրաչհաւատ լինելի ի յուսոյ ողորմութենէն Աստուծոյ, ոչ ունելով բարեգործութիւն դնել առաջի նորա. բայց յորժամ սրատապնդեցայ և կարդացի յաղքատութենէս, վաղվաղակի լուաւ ինձ և ի նեղութեանցն փրկեաց։

1 Ա. յաջ. նո-ի խտրեալ ե ուղ-
լուաւ ինձ։

2 Մի տրի. Ուղղութեամբ։

կեաց զնա ։ Ա՛յդ զնմ փրկութիւնս զիք առաջի ամենայն ցոյս և ցոյս , և այնպէս առ Յ՛ստուած անաւմբ ընթա-ցարուք ։

" Ա՛նառակք հրեշտակաց տեառն շուրջ ի զերկեղա-ծաք իւրովք , և պահէ զնոսա ,, ։ Ա՛յս թուի թէ ոչ յարմարի ընդ առացեալոց վերագոյն , սակայն քննե-լով զզօրութիւնն՝ կարի ուղիղ զկարգ բանիցս ընթա-նայ . այսինքն զի ասաց , թէ մնտիք առ տէր , և մատ-չեն առ Յ՛ստուած՝ ազօթիւքն է ։ Գ՛արձեալ ասաց , թէ զնս փրկեաց , և գործ փրկութեանն սպասաւորաք հոգւովքն կատարի . արդ զի մի վարանեսցիս ասել , թէ Յ՛ստուած յերկինս ՚ի վեր է , և ես յերկիր ՚ի խոնարհ , որպէս և գրէն Մոզսէն , զիաթդ լսէ զաղօթս իմ , կամ ՚որպէս փրկէ , լուծանէ զայս տարակոյս՝ ասելով . " Ա՛նառակք հրեշտակաց տեառն շուրջ ի զերկեղածաք իւրովք և պահէ զնոսա ,, ։ Օ այս ոչ միայն Գ՛աւիթ , այլ և տէրն Յաստատէ . " Ա՛՚ի ասէ , արհամարհէք զմի ՚ի փոքրկանցս յայսցանէ . զի հրեշտակք նոցա տես-սանեն զերեսս Հօր իմոյ որ յերկինս է ,, ։ Ա՛մէն միա-բան է և նահապետն Յակովբ . " Հրեշտակն իմ , ա-սէ , որ պահէր զնս ՚ի մանկութենէ իմմէ ,, ։ Օ՛ինչ ա-սեմք և զորոց Յարցն մերոց՝ որք տեսին բազում ան-գամ զանառակ նոցին , և գրեցին . արդ սորա ասէ պա-հէն զմեզ , և հրեշտակ և պատգամաւոր լինին յորժամ մատչիմք ազօթիւք առաջի Յ՛ստուծոյ ։

" Ճաշակեցէք և տեսէք , զի քաղցր է տէր . երա-նեալ է այր որ յուսայ ՚ի նա ,, ։ Օ՛ն հրամայես մեզ Ճաշակել աստուածընկալ Հոգւի , և զտեառնն քաղցրու-թիւն տեսանել ։ Օ՛ իմ փրկութիւնն ասէ , զիմ ազքա-տութեանս ունկնդրութիւն , զհրեշտակաց բանակացն շուրջ զմեզ պահպանութիւն ։ Ա՛ր զայսոսիկ ուտէ մնացն բերանով , գիտէ այնուհետև զտեառն մեր տես-սանել զքաղցրութիւն , և ոչ յուսահատութեան ամ-թոնէն յամրահասատ լինի առ վնաս ինդրել ։

" Ա՛նառակ է , ասէ , այր որ յուսայ ՚ի նա ,, ։ Ցեն զաղտմութեանն Յ՛ստուծոյ բարձրաձայն փոխ . ոչ ասէ նա , երանի որ զկան Յ՛ստուծոյ առնէ գործով . այլ զինչ . որ միայն յուսայ ՚ի նա սիրով և հաւատով . և յոյս է՝ զտէրն զոր հաւատայ թէ է՝ ՚ի յուշ մնացն

ունել Հանապազ, և առաջի նորա զընթացս իւր տեսանել. երանել է, զի կարձէ սոսկալի գիտութեամբն զյանցաւորն լինել։

«Երկերուք՝ ի տեառնէ ամենայն սուրբք նորա. զի ոչինչ է պակասութիւն երկեղածաց նորա»։ Զոր կարգի տեսանեմ ամենևին զընթացս երդոյս, այսինքն զի յետ յուսոյն դասէ զերկեղն. քանզի այսպէս է սկիզբն շաւղաց առաքինութեան, որպէս և ուսոյց առաքեալն։ յետ զամենեցն ձգելոց զմեղսոյն, և առնուած մատչի աղօթիւքն. Հաւատն Հաստատի առաջինն սրբոցն օրինակաւ, յորմէ յառաջեալ՝ի յոյսն նկրտի. ինքն զՍտուած տեսեալ խնայողապէս, և զիւր ընթացքն առաջի նորա տեսեալ Հաւանական մտօք. իսկ յորժամ յայս ուշ նպատակի ժամանէ յառաքինութիւն ընթացողն Հոգի, բազում երկեղ տիրէ նմա, և նա՝ի նորոգն դառնալ՝ քաղցր զաերն Ձայակեաց. յաձել երանելի յուսոյն՝ զահարկութիւն Ձրնմարտութեանն տեսեալ՝ բազում երկիւղիւ զարհուրեալ տատանի։ Իսկ յայսմ աստիճանէ պնդութեամբն փոխեալ յանցաւութիւն՝ սիրոյն ելանէ, Զդ չև և՝ի սէրն ժամանեալ, որոյ յոյսն տիրեաց՝ յերկեղն յորդորէ, որով գտանի այն որ իւրով կատարելութեամբն՝ի բաց մերժէ զերկեղն, որպէս և որ կրեացն, գրեաց. «Ոչ ինչ պակասութիւն երկեղածաց նորա»։ այսինքն՝ի սիրոյն աստիճանէ ոչ պակասէք սուրբք, թէ պնդիք երկիւղիւդ։

«Ակնածամբք աղքատացան և քաղցեան. բայց ոչ խնդրեն զաեր՝ մի պակասեսցէ՝ի նոցանէ ամենայն բարութիւն»։ Զի ասէ, երկիւղածք Ստուծոյ, որք կոխեցիք զորկրամոլութիւն և զՀեշտութիւն, պարտիք և՝ի մնախառնութենէն, որով յետ այսր Հանդիսի վտանգիք. զի որ մարմնական փառաց բորբոսանՁի, յայդ կերակրոյդ զոր դուք ուտէք՝ աղքատ և քաղցեալ է։ Զոր զինչ է ասացա կերակուրն. այն որոյ վանսա զերկինս և զերկիր արՀանարհէ՝ յաւետն. «Ամէն որ զՋինչ ձեռանէ իմմէ, և՝ի խորհուրդս քո առաջի նորոգեսցէ ինձ. այսուհետև զինչ կայ իմ բնաւ յերկ

1 Աւյ. Ցանգուրութիւն։

կինա կամ՝ ի քէն զինչ և ինդրեցիս յերկրէ ,, ։ Ա.րդ զայս խորհրդոյ Ճաշակ ուաեն երկեզածք Աստուծոյ՝ ի լուսաւորութիւն իւրեանց . իսկ հեշտասիրացքն՝ ի փառս մեծութեան պատրանաց՝ հեղձուցանեն զնոսին աչխարհական հոգոյն փշովք . զգուշացուցանէ թէ մի տայք ընձեզ ծառայս մնափառութեանն խորհրդոց . զի այն առ որ ձգէ զերկեզածսդ չարն՝ պատրանօք ցանկութեան , աղքատ և քաղցեալ են ձեր իմանալի կերակրոյդ . բայց դուք եթէ ինդրէք զտէր , ոչ պակասէ՝ ի ձէնջ ամենայն բարութիւն . այս ինքն զի ժառանգէք զփառսն՝ ի հանդերձելումն յաւիտեան՝ փոխանակ զապականացուս արհամարհելոյ , և գտանէք յետ երկեղիդ զնաւապարհ սիրոյն Աստ , որով ստիպիք աղաղակել . ,, Ես որ կանս և ոչ հանդերձեալքն կարեն մեկնել զմեզ՝ ի սիրոյ անտի Աստ որ՝ ի Քրիստոս Յես՝ ի տէր մեր ,, ։

,, Արկայք , որդեակք իմ, լուարուք ինձ , և զերկեղ տեառն ուսուցից ձեզ ,, ։ Այսպէս վերադոյնն յորդորէլով՝ թէ երկերուք . այժմ առ ինքն կոչէ զաւազանօք ունկնդիրսն . խոստանայ և զնաւապարհ երկեղին ցուցանել . և զայս ոչ սակաւու կամ հրամանաւ , այլ որպէս հայր որդւոց .

,, Ո՞վ է մարդ որ կամի զկեանս , սիրէ զաւուրս տեսանել՝ ի բարութեան ,, ։ Ցնա զնայրաբար ուսուցանելն , զի ոչ հարկիւ պահանջէ զգործն , այլ նախ՝ ի մեր ազատատան առնէ՝ ի կամս ։ ,, Ո՞վ է մարդ որ կամի ընկեանս ,, . յայտ է թէ ամենայն մարդ , և չիք ոք աստաբոյ կենաց կամ բարութեան աւուրց զոր խոստանաս ունել՝ զնէ զախորժակս . բայց կեանս մի զպանդխտութեան նշդեհութեան վարկանիցիմք , թէպէտ և առ այս կարի օգուտ գործէ խրատս ։ Ա.րդ կամիմք , հայր սուրբ , զկեանն մնանջենաւորս , սիրեմք որդիքս զանվախձան աւուրցն բարութիւն , ցոյց մեզ զնաւապարհս նորա ։

,, Լռեցո զլեզու քո՝ ի չարութենէ , և շրթունք քո մի խօսեսցին զնենգութիւն ,, . այս է սկիզբն գիտութեան երկիւղին Աստուծոյ , որ է նոյն ինքն և կենաց Ճանապարհ . սահման դնել բերանոյ . որպէս և առնն

1 Մի տրին . Պատճէն ։

առաց . " Ի բանից քոց արդարասցիս , և ի բանից քոց պարտաւորեսցիս ,, : Զոր ուսաք վնախաւկիզքն երկիւղս ի քէն , որում և տէրն մեր համաձայնեաց , և զի սեմք եթէ բարիոք է սա . այլ զոր ինչ յետ սորին արժան է գործել՝ ծանո՛ :

" Խոտորեա ի չարէ , և արա զբարի , խնդրեա զխաղաղութիւն և երթ զհետ նորա ,, : Ընդհանար է մինչև ցվերջն ի ներքոյ սահմանի դաստիարակեալ է , ընտրութիւն առնել բարւոյ և չարի . վասն որոյ նախ զայն խրատեաց , և ապա ըստ կարգի բերէ զասացեալսն . " Խոտորեա , ասէ , ի չարէ , և արա զբարի ,, . և ո՞ ուսուցանէ մեզ զընտրութի՛ն սոցա՝ թէ այն չար է և կամ այս բարի . քո անձնիշխան միտք յորժամ ոչ ամբոխի ի հոգմակոծութենէ՝ լեզուիդ . յետ զայդ լեզուցանելոյ՝ ի ներքս ունիս զվարդապետդ . միայն յայն ըզգուշացիր , որպէս զի զոր ինչ հրամայէ՝ ոչ արհամարհեսցես , այլ զնոր խորհուրդն թողեալ՝ որոյ վասն ի սրտիդ ատգտանիս , զանըստգտանելին խնդրեա և կատարեա .

" Խնդրեա , ասէ , զհաղաղութի՛ն ,, . ընդ ո՞ . ընդ միտս քո և ընդ Աստուած . " Ո՛ի յորժամ սիրտք մեր , ասէ Աստուածաբանն , ոչ ատգտանիցեն զմեզ , հանդիսակութիւնն ունիմք առ նա , և զոր ինչ խնդրեմք՝ լսէ մեզ ,, :

" Աչք տեառն ի վերայ արդարոց , և ականջք նորա ի վերայ աղօթից նոցա ,, : Աչք և ականջք Աստուծոյ զգեղապէս տեսակ նախախնամութեանն որ ի վերայ երկեզածացն ասէ . և զայս ոչ եթէ վայրապար դնէ յայտ վայրի , այլ քանզի յորժամ սկսանին՝ հեռանել բարւոյն՝ յարուցանէ ի վերայ նոցա փորձիչն զպատրանս մեքենայիցն , և նորա զօգնութենէն Աստուծոյ միտ աղօթիւքն բուռն հարկանեն : Զոր զի մի վայրապար համարիցին կամ զինքեանց կիրս փորձանացն կամ զաղօթիցն հայցուած , ցուցանէ թէ աչք Աստուծոյ տեսանեն զամենայն , որոյ ապշումն սիրոյն չջանչ և զգի որոշէ՝ ըստ առաքելոյ . և ականջք նորա լսէ զաղօթս ձեր , որ քննէ զսիրտս և զերիկամունս՝ արդարութեան իրաւամբքն :

1 Մի տրին . Հանդիպեսցին : 2 Երկու տրին . Աստուծոյ :

“ Արեաք տեառն ’ի վերայ հաւատացեալսն՝ սատակել յերկրի զհիւսատակս նոցա ,, : Արեգ հաստատակաց մարդկան է խրատս , ’ի նոցանէ մի զոք հաւատացեալ տեսցուք՝ կամ սատակեալ , այլ զկարգ բանիս ամբողջ պահեցուք . արդ քանզի աչք Աստուծոյ ոչ միայն զմեղ տեառնէ հայեցեալ փոխանակ , այլ և զնեղութիւնն՝ զոր կրեմք ’ի հաւատացելոցն , վասն այսորիկ ասէ . մի յուսահատիք ’ի նեղութեան խորհրդոց դոցա՝ որով հիւսատակէ ’ի միտս ձեր հաւատացելոցն զտեսակս մեղաց . զի ’ի յերկարելն ձեր յաղթեսցէ վտիտ զակի սատակէ զնոսա Աստուած , և չքացուցեալ պահեցուցանէ ’ի մտաց ձեր երկրէ . ըստ այսմ յարմարի և յաջորդ բանիս .

“ Կարգացին արդարքն առ տէր , և տէր լուաւ նոցա , յամենայն նեղութենէ փրկեաց զնոսա ,, : Այս զինչ կարգացին . զհաւատացեալսն հիւսատակս որով նեղեալսն՝ ցուցին , որ բազմապատիկս է և զանազանս . զայս լուաւ նոցա Երեր . յորժամ արդի մնոք կարգացին և ոչ վատ Թարացան ’ի փորձութիւնսն յորս մնանեցան՝ ընտրեաք երևեալ . յետ այնորիկ լուաւ նոցա տէր և փրկեաց ’ի զանազան նեղութեանցն : Որք լսեն և զփորձութիւն նեղութեանցն չհանուէն , նոքին և ’ի կարգալն առ Աստուած , և զձայակ լսելոյն և փրկութեանն կերակրին . իսկ չև ևս անցեալ ընդ հանդիսն , ’ի կարծիս լինիմք պատուհասն մարտիս :

“ Արդ է տէր առ ամենեսեան որք մաշեալ են սրբութիւք , և զհանարձս հոգւով կեցուցանէ ,, : Ըստ մեչեալն մերձ՝ որք քակեցին զամենայն բարձրութիւն հպարտացեալ խորհրդոց ’ի վերայ գիտութեանն Աստուծոյ , և գերեցին զամենայն միտս ’ի հնազանդութիւնն Քրիստոսի . ապա ուրեմն պարտ է նախ զսիրտս մաշել , և ապա զմերձ լինելն Աստուծոյ հնարել : Այս սիրտ մի զջնութիւն մարմնոյս խնամարկ , այլ զամենայն խորհուրդս որ ’ի սմա ստեղծանին , զոր մաշեն և հարկաւոր երկիւղածացն Աստուծոյ : Այս տես , զի ապա ասէ , թէ “ Օ խոնարհս հոգւով կեցուցանէ ,, . քանզի որ ամենայն խորհրդոց յաղթէ , ’ի մնափառութենէ անտի նեղի , թէպէտ և ոչ գործով սակայն խորհրդով . զայսպիսիս ասէ , կեցուցանէ Աս-

տուած , յորժամ ոչ տայ տէղի Հալածուելեան , այլ գուն գործէ ՚ի խոնարհութիւնն Հոգեկան խորհըրդովքն :

՚Ի հազուագ նեղութիւնք են արդարոց . յամենայնի փրկէ զնոսա տէր , և պահէ զամենայն ոսկերս նոցա , և մի ՚ի նոցանէ ոչ կոտրիցէ .. : Այլ , ասէ , կարծեր դիւրաւ ընդդրկել զերկեղ տէն Աստուծոյ զոր ուսուցանեմ . այլ ծանիր , զի յորժամ սկսանիս սոսկալ արդարութիւն տանել զընկերացս կենաց քոց , բազում նեղութեամբք փորձիս . էր վասն . որպէս զի ընտրէ երևեսցիս , որպէս զի օրինաւք մարտուցեալ պսակեսցիս : Ընդ այս նեղութիւնս կրթեցաւ առաջին նահատակն Կիպրիանոս , և նորին հետևողքն առնէայն սուրբքն , որպէս ասաց Պօղոս . « Պարտ է մեզ բազում նեղութեամբ մտանել յայն Հանգիստ .. : Ասդ զի նոքա մարտի խորհրդոյն Յաղթեցին , յարտաքսին թշնամանացն նեղեցան . իսկ մեր առաջի կայ մարտ և նեղութիւն՝ յանձանց տապալեզս , վասն այսորիկ քաջալերի ոչ վատասրտել . « Յաճախեայնէ , ասէ , փրկէ զնոսա տէր .. . և փրկէ երբ . յորժամ տեսանէ զխորհրդոյն Հաստատութիւն ՚ի նեղչելն անխնայարհելի , յայնժամ արագ ժամանեցուցանէ զփրկութիւնն : « Պահէ , ասէ , զամենայն ոսկերս նոցա .. . այսինքն զխորհուրդն որովք սկզբ զնդ թշնամին արկածս մարտնչել , նախահնամէ՝ ասէ՝ Աստուած և ուղղէ , առ ՚ի յոչ կոտծանել հետևողութեամբ խորհրդակցութեան թշնամւոյն :

« Այ՝ տէր զաւազորին չար է , և ոչք առեն զարգարն զղջասցին .. : Այ՝ տէր մի զընաւազորականն , այլ զնեզան չէոյն իմա . զի այս է սոյա սոսկութիւն՝ անուանել մահ և հիւանդութիւն . ըստ այնմ . « Այ՝ի՛մ մեռելոց ոչ առնիցես զարձանութիւն .. . քանզի զընթացս ուղիղ վարէ զանտես : Ասդ քանզի ասաց , թէ որ արատաւորէ զնեխ ՚ի բազմապատիկ նեղութիւնս թշնամւոյն՝ փրկի նա ՚ի աւետանէ , կամի ցուցանել այսու հետև զհակառակն՝ թէ որ ոչ կարէ մարտնչել և մեղկացեալ թուլանայ , զինչ պատահէ նմա . « Այ՝ տէր մեռաւորին , ասէ , չար է .. . այսինքն որ մեղաւն սպանանէ զիւր ըստ Աստուծոյ արդարութեանն կենդանութիւն , և ՚ի բազմապատիկ մարտէն յողդողդեալ խոցոտի , չար մահ մեռանի .

Էր վասն. զի յատեղն զարդարութենն՝ փոքր ինչ հեշտանայ ի մեղանչելն, և այնուհետև սիրէ նորա անտանելի զղջումն և ապաշաւ, կշտամբանք մնայն խղճի և նախատինք, վիշտ ի ներքուստ և անվախչելի տանջանք, զոր ոչք կրենն՝ խնդութենաւք Աստուծոյ, և զմահն ընտրեն կամօք քան զայսպիսի կեանս խղճի. վասն այսորիկ չար է նոցին այսպիսի մահ սակաւ հեշտութեան, որ զանբերելիս պատանէ մեղուցեալսն զերկուսեան։

“Վրէկ տէր զանձինս ծառայից իւրոց. մի զղջասցին ամենևքեան ոչք յուսացեալ են ի նա.,։ Յուսիկ կարող եմք Աստուծել, թէ ի ստածել զարութիւնս թիւնն ստեղծեալ եմք, և օտար է ի մէնջ մեղայն կիրք. զի ի յուսայն Աստուած, և ի փութան ի կան նորա, թէպէտ և բազում աշխատիմք, զղջանամք և ոչ բնաւ. իսկ ի մեղանչելն փոքու կամ մեծաւ՝ վազվաղակի զղջումն և խղճ մնայն կշտամբանք զկնի ընթանայ. քանզի որ ի ծերոյ ծակու մի մեռեալ վասն Աստուծոյ, ուրախ է ի կեանս սիրապես ուրախութենաւքն՝ քան թէ թագաւորէր. և նա որ թագաւորէ՝ եկեալ ի միտս իւր, ոչ ինքեան՝ այլ սմա տայ երանի. յայտ է ապա թէ ընդ իւր ընթացս կենացն զղջացեալ է՝ զայլոց կեանս երանելով։ Իսկ սա որ յոսոնի ի տէր աշխատի՝ զղջանայ ընդ իւրն և ոչ բնաւ. ապա թէ գթէ և խոստովի, ընդ թուլանալն ի սնդութենէ զղջանայ, որպէս ասաց վերագոյնն զայսպիսի երկիւղիս և յուսոյս ապաստանեալ Աստուած, և յերկս առաքինութեան կանխեալս միշտ, ասէ, վրէկ Աստուած, և պահէ անատերիւր յանզղջականն իւր ծառայութիւն. որ և զմեզ նախախնամեսցէ ողորմութեամբն իւրով, վրէկեսցէ որպէս յուսացաք, և հանցէ ի բազմապատիկ նեղութենէս յանցաւութիւն սիրոյն զառ ի յինքենէ երկիւղածս. թերևս և յայն արժանի լիցուք ժամանել ի կեանս, ուր ոչ սիրէ նեղութիւն չարեացն։

ՀԱՐՑԱՐՈՒՆՈՒԹԻՒՆ

ԱՒՐ ՕՐԵՆՍ ՔՐԻՍՏՈՍԻ

ԵՒ

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԹԷ ՈՉ Ի ՊԱՐՏ ԶՎԻՃԱԿ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
ԱՍՏԻՃԱՆԻ ՁԳԵԼ ԸՆԴ ՄԱՐՄՆԱԿԱՆ ՏԻՀՄՈՒԹԵԱՄԲ

Շ ՆՈՐՀՕՔՆ Աստուծոյ որում՝ ի վեր քան զար-
ժանն եղաքն ընդունակ, ի կէտ ժամանակաց յընթացս
բանիս տէրունի խորհրդոյս քննութիւնն՝ յոր վայելել
զմէզ Աստուած զօրացոյց մեզ և ոչ թէ զործով, բա-
նիւ և ոչ թէ արդեամբք, իմացականապէս և ոչ մար-
միապէս, անձին միայն՝ ի յօգուտ՝ և ոչ թէ յայլ
սիրեալսն վասն. քանզի անկար է յայլս ձգել այսօր
զիմաստութիւնն՝ այնու զի գերեալ տեսանելիք զեկեղեցի
Քրիստոսի որ՝ ի մեզ ըստ մարմնոյ՝ ի մարմնական ժա-
ռանգութիւն. և գերեալ ոչ յօտարաց կամ հեթա-
նոսաց, այլ յանմիտ մերոց կանոյ և՝ ի տանրգի վերա-
կացուսց, որք քարչեն տառապեցուցանեն զնա, և
առեալ բռնի՝ ի կուր բարբարոսաց առանձնոյն ձգեն.
Այլ աղեաւիցս, ոմն աշխարելի իմաստնոյն զործոց.
Տայց սակայն և ոչ ողբալոյ տան Թղայ, զոմս՝ ի բերան
եդեալ խփեն զջատագովաց Քրիստոսի զեղծուս.
կամ այսպանելով երգիծանեն, կամ սաստիւ կափարա-
րեն. միայն զի մի՝ ի տառութիւն սուրբ երևեսցին, և
կամ՝ ի թիւրն շաւղոյ՝ ի յանդիմանութենէ անտի
զամենի հարեալ զղջասցին, այլ զի լցին չափ մեղացն
Քանան, և Աստուած յորիցէ՝ ի վրէժխնդրութիւն
արագիժեն. մանաւանդ և զնորայն՝ ի մոռացօնս զար-
ձուցեալ նշխարէն, և օր ըստ օրէ յարհամարհութիւն
օրինացն ընթացք ազգիս մերոյ յառաջին: Այս արդ
զինչ. լուսցուք զայս մանր անբժշկելի յանցանոյ այ-
պանել, և աչն առցուք մարդկան առաւել քան օրի-

նայն Աստուծոյ . և ոչ խօսիցիմք զկռփանս անձին նա-
խապատուեալ , և զփառս ոչ բնաւ ։ Կնտրելի է ինձ
տեսանն իմոյ երանութիւն զոր Հաւատոյդ փոխարէն նա-
խատանացն , և ախորժելի վասն նորին մարդկան չարա-
խօսութիւն ։

Օ ամենականն աղաղակեմ բարբառ . " Ընդ-
ունի զոգի , և ահ է որ ոչ սպասեսցի . տէր Աստուած խօսեցաւ ,
և ով է որ ոչ մարգարէասցի՞ Դէթ ոք իցէ Աստիա-
առաքեսցէ զիս ի Խեթելէլ Հրէաստանէմ վասն նո-
րայն լինելոյ օրինաց Քառատոմ ։ Վասնզի գիտեմ զի
բազումք ունչ առնելով [2] բանիցս զայս բարբառին ցս .
" Տեսանողդ, տեղն տուր ի Հրէաստան, զորոյ և զօրէնսն
պատմես . Խեթելէլ սրբութիւն Թագաւորաց է . ատ
Ջնոռալել զՆռնապարհս քո ոչ կամիմք ,, ։ Կա զոր ծա-
նեայ գուշակեմ . ի լերինն բարձու կացուցի զգարշա-
պար յուսոյս , վասն այսորիկ և առանց երկիւղի գո-
չեմ . " Որ արհամարհելոցն է , արհամարհեսցէ , և որ
անօրինելոցն է , անօրինեսցի ,, . քանզի պատգամ եմ
առ ազգ մի՝ որ ոչ ինչ օգուտ է նմա բանքս , այլ յառնել
և ի նախատինս ։ Որքա զոք ասեն ցմարգարէսն Թէ մի
պատմէք մեզ , այլ խօսեցարուք մեզ և պատմեցէք մեզ
այլ մոլորութիւն , ըստ որում ասէ ուրեմն Կատյան ։
Կայց ես պատասխանեմ . " Եթէ տակաւին մարդկան
հաճոյ լինիմ , ապա Քրիստոսի ծառայ ոչ եմ ,, . դար-
ձեալ և փափաքեմ նզով լինել վասն Աստուծոյ՝ ժողո-
վեալ և ի Պօղոսի սիրոյն աստիճանն . զիարդ ապա և
զբանս անխոյեցից յատահատութեամբ բերնեալ .
կարող է Աստուած և ի քարանցս յարուցանել որդիս
Աբրահամու , և Հաւատամ . իսկ զի Հաւատամ այսմ ,
վասն այսորիկ և խօսիմ ։

Զդէպ եկայք իշխանք ժողովրդեան իմոյ , Հարցցուք
օրէնս ի քահանայից մերոց՝ որպէս երբեմն ի դիմաց
Աստուծոյ Հարցանէր Աղաւքիաս . այսինքն յառաջին
քահանայապետէն Քրիստոս և ի նորին աճառոյն
Ժառանգաւորաց Հետևաբար . մի գուցէ ի զուր դա-
տիցք ի նախակարգեալ բանէ յանցաւորք , ուսուցէք
մեզ խնամատութիւնն Հօր՝ զՆշդիսեան շաւիղ ի վերսպա-

1 Երկու օր . Նմն ո ոչ էին ։ 2 Երկու օր . Ուն ուռնելով ։

կէս վերածէալ։ Ո՛տէր մեր, պատմեա ծառայիդ քոց զուղիղն։ Ի՞ արժան զգնեալ քո արեամբ ևկեղեցի՝ հօր ի յորդի որպէս զմարմնական ժառանգութիւնն առնդել։ Պատասխանեի Վրբիստոս։ զկանխատեսեալն ընդ՚ի մոռացօնս դարձուցեալ վերստին հարցանէս։ Ո՞չ լաւ զի ասացի, մայր իմ և եղբարք՝ ոչ որ ծնաւն զիս, այլ որ լսեն զբանս Աստուծոյ և առնեն։ Աղդ գայդ ժո զովուրդ ես ոչ վայրապար ստացայ, այլ խաչիւ և արեամբ։ զկայլակս արեան իմոյ նուիրեցի Հօրն իմոյ փրկանն՝ և ասէ։ վասն այնորիկ և աշխատութեամբ ստացեալդ՝ սիրելի է ինձ, և սեպհական ժառանգու թիւն՝ իմ միայն և ոչ մարդոյ։ զի հնձան հարի ես միայն, և կոխեալ զինամին զգերիդ զարձուցի։ տամ զդա ոչ ումեք սեպհական, այլ և կացուցանեմ յա ջորդս յաճող իմ զայնոսիկ որ լսեն զբանն Աստուծոյ և առնեն։ ոչ սիրել վիճակիւն, այլ զանձն օրինակ տա լով առաջնորդել հօտին։ Ալ յորժամ կոչեմ զնա առ իս, քննել և ըստ աշխատութեանն պահել, յիմ տունդ և ի ժողովուրդդ զայլ ոք իշխան կալցել, իմ ընտրութիւն է, տեառնս՝ և ոչ նորա որ հրամանաց իմոյ կարգեցաւ պաշտօնեայ։ ապա թէ նա զնա ժպրհի առ նել որ յաճոյն էր փոխանակ իմ, յայտ է թէ յա փըշտակեաց կինէն զինն արեամբ ստացեալ ժառան գութիւն։ անիրաւեաց յիս, զրկեաց զիս, վերկս քըր տանց իմոց եհան կինէն և իւր անուանեաց։ Ալաչիւ ստացայ, և որպէս ի ծառայ պաշտել հաւատացի։ իսկ նա հակառակամարտ ինձ տիրեաց։ մատնեաց ի ձեռս այնոցիկ որ զինքն սիրեաց՝ և ոչ զոր ես։ յիւրոց եղբարց հատոյց յաճոյ իմ՝ և ոչ յիմոյն։ զինչ վասն այդորիկ կամիս ուսանել։ ոչ առ մարդ մի դալ այնպիսին, այլ առ Աստուած, և ոմ ժպրհի աղօթել վասն նորա։

Որդեքն Հեղեայ զմիս ի կամասայն առնուին իշ խանաբար, և ես զժողովուրդն և զառապահն յայլազ գիս մատնեցի վասն նոցին յանցանացն։ զու ոմ մարդ, ընդէր սբանչանաս, թէ որ զիմ արեամբ ստացեալ ևկե ղեցին ի ժառանգութիւն ինքեանց ձգեցին, լքեալ Թողան ի ծառայութեանն ստրկութիւն պղաղեցաց, Ո՞չ գիտես թէ ախորժելի է ինձ արհամարհութիւնն յօտարաց՝ քան թէ յիմոցն։ ոչ խնամաս թէ կամիմ

ինալ նոցին ասելի, քան թէ յիմ ժառանգութիւնն և յանձն՝ ժառանգութեամբ ունիք հակառակասպառ խնդ կանացս էլանել և բազմել, ունել զինն որպէս աւր և ոչ որպէս ծառայ, որպէս իշխան և ոչ որպէս պաշտօնեայ. իբր 'ի հօրէ իւրմէ պարգև՝ և ոչ որպէս 'ի յինէն. իբր 'ի յերկիր ժառանգաւոր՝ և ոչ որպէս վանս առ 'ի յերկինս յուսոյն աչխատեալ. իբր յաչխարհս փառաց Հպատակեալ՝ և ոչ որպէս փախստական առ իս ընթացեալ. 'ի բաց տար, այս օրինացս և ոչ բնաւ յինէն Հրաման ընկալայք։ Այս պատասխանին է Վրիստոսի, և ոչ յինէն՝ այլ առ 'ի նմանել առացեալ. քանզի Թէպետ և տարազ բանիս այլապէս է, սակայն Հինն և արմատ սորին և նորին Չմնարտութիւն. և կարծեմ ոչ ումեք է կար սակերևցել զսա 'ի Վրիստոսէ և 'ի նոսա բին բարբառոյն։

Այդ եկեալսուք այսու Հետև ըստ կարգի 'ի դասս արդարոյն, մի զուցէ մոլար նոքա Հանէն զմեզ 'ի Հնամաս պարհէ տեառն և վարդապետին Վրիստոսի։ Այսկսրդ յետ Վրիստոսի զբեզ ասաք, ով Պետրոս. գլուխ յետ գլխոյն զու նստար աչակերտացս. վկայ Հաստատութեան բնաւիցս զբեզ կարկ 'ի Հինն տաճարիս. բզգաւհնան և զոչխարան 'ի ձեռս քո աւանդեաց արածել, յետ առնոյց զգրաւական սիրոյդ. լցիր մեզ զայս տարակոյս ապաւեանք։ Այդրէն, ասէ, 'ի բանդ քո զարձիր քննութեանդն և Հաստատես, փոքուդ Թէ Հաւատաս՝ Հաւանիս։ Օ ինչ է զոր ասացն առ իս Վրիստոս, յիշեա վերստին. ոչ նախ եՀարդ Թէ սիրես զիս, և կրկնեաց զսիրելն զինքն, և երեքկնեաց Թէ սիրես զիս. յորժամ երիցս ըմբռնեաց առ ինքն զսէր բերանով խնով, եղբայր, ապա Հաւատաց ինձ զայդ պՀօտ արածել, և ոչ վայրապար։ Այս յորժամ աւանդեաց, ոչ ասաց Թէ Պետրոս, արածեա զոչխարս իմ, զոր տամ 'ի քեզ արածել և ոչ ժառանգել, Հովութեամբ տաճել և ոչ իշխանաբար [1] տիրել։ Այս ես այնպէս ընկալայ և այնպէս արածեցի. զանցս չարչարանաց փախատական նոցին յանձն իմ կրեցի. և յորժամ տէրն իմ ելոյց զերկնանալն յինէն մարմնոյս, զրեցի Թուղթ ընդ-

1 Երիս օր. Իշխանութեամբ։

Հանրահան առ ամենեսին ձեզ, և զայս Ճանապարհս ուսնել աղաչեցի ։ Ես լսար զի կինք զրելոյն առ երիցուսոդ կարգեցի զաղաչանաւք՝ զորս Հանդերձեալ փառացն որ յայտնելոցն է՝ Հաղորդս ինձ առ՝ի արածել Թախանձեցի զՀօտդ որ Աստուծոյ է և ոչ ձեր • զի այսպէս ասաց և առ խս, արածեա զՀօտդ իմ և ոչ զքոյդ • Հրամայեցի ոչ տիրել վիճակիդ, այլ լինել օրինակ Հօտին • որպ վասն խոստացայ՝ի Հօտապետին երևելն առնուլ ձեզ պսակ՝ որպ կամացն Հնազանդեալ աշխատեիք ։ Արդ եթէ զՀօտդ ձեզ Համարիք, և որպէս՝ի ձեր տիրիք, և ոմ կամիք ժառանգեցուցանէք, ոչ վասն նորա վաստակեցէք, այլ ձեզ և ձերոց որդւոցն • ՝ի նմանէ մի ակն կալէիք պսակաց՝՝ի սէտս ժառանգաւորաց աշխատեալդ և ոչ վասն ՀԱիսոսի ։

Ա՛ք քեզ գամք անօթի ընտրութեան այսուհետև, խորհրդոյն Աստուծոյ Հաղարապետ Պօղոս, Հեթանոսաց եկեղեցւոյ սեպհական առաքեալ, մի արդեօք դու գտեալ զայս օտար չարիդ ցուցեր մեզ՝ի կարծեալս անձն օտար՝ի Ճանապարհէ • եթէ քո է՝ Հաւանութեամբ ընդունիմք • ապա թէ ոչ՝ տուր զխորչելդդ վերայութիւնն Հաւատոյ ։ Ա՛ս զայդ Ճանապարհ, ասէ, վաղ ուրեմն խցեալ վակեցի, և զՀնչակատութեանն բացի յայժամ՝՝ յորժամ կապեալ ՀԱրուսաղէմ յօժարութեամբ վասն Քրիստոսի գնացի ։ Վանզի խորհեա՛ գէտ էի, և ոչ անտեղեակ խորհրդոյն աստանայի • վասն այսորիկ գադարեալ՝՝ի Աելիսէ կղզի, զերիցուն սրն Ափեսացւոց եկեղեցւոյ կոչեցի, և նոքօք վկայութեամբ զՀնչակատութիւնն յանձնեհան՝՝ի ձեզ ասան դեցի ։ Ես լսար, զի տուրբ զիս յանձնեցուն ձեր յաբեանն որարի յաւուրն յայնմիկ • եր վասն • քանզի բնաւ ոչ խորչեցայ՝ի պատմելոյ ձեզ զկամն Աստուծոյ ։ Ա՛ք զինչ ասացի, երկրորդեա առաջի իմ • զգոյշ լինել պատուիրեցի անձանց և Հօտիդ՝ որում եղ զձեզ Հոգին տուրբ տեսուչս՝ և ոչ տեսոս, Հոմանել զԺողովուրդն տեառն՝ և ոչ զձեր, զոր ապրեցոյց արեամբ իւրով՝ և ոչ ձեր աշխատութեամբ ։ Ա՛եթէ իմ ոչ եր Հօտդ այդ, ձեզ պարէս տայի • եթէ ես զՀարկաւոր պիտոյն ոչ Համաձայեցայ՝՝ի տոցանել առնուլ, այլ ձեռօքս վաստակէի, ձեզ Ժառանգութիւն ունել զնոյն պարէս Համար-

ձակեցուցանել ։ Օ՛ մի՛ ձեռքս իմ պաշտեցին յաւետա-
րանին. իսկ դու՛ ի նոյն գործ կանխեալ՝ ոչ միայն ու-
սեա՛ ի նոցանէ, այլ և այլոց յետ քո՛ հարչեա, որպէս
Թէ քո՛ իցէ՝ և ոչ սեաոյն իմոյ արեան գինք ։ Լա՛
երկիւղիւ և դողութեամբ քարոզի առ՛ ի յոչ գեղ-
ծանել խղճմտութեամբ զոր ետս ինձ ասէր՛ ի շինել և
ոչ՛ ի քակել. իսկ դու բռնութեամբ յափշտակես և
այլոց հարչեակս ընձեռես ։ Լա՛ ոչ տիրեի իմով հաւա-
տով, այլ միայն գործակից եի հարչոյն. իսկ դու ոչ
կենաք միայն, այլ և յետ մահու տիրես ։ Լա՛ կապեալ
վասն եկեղեցւոյ հեթանոսաց, և աղերսիս նոցին հրա-
մայող. դու ոչ կապեալ, և որպէս գքո՛ ստացող ։ Մո՛զ-
գիք զայդ զմտաւ ածելով, ստերբիգիք՛ ի ձչմարտու-
թենէ թաղմանս առ՛ ի յինէն գրեցելոց ։

Օ՛ գոյր լերուք, ոչ եք միայն, այլ և յան-
ցաւոր. յանցաւոր ոչ առ մարդ, այլ Աստուած. չա-
գիք ինչ այդմ յանցանաց պատասխանի, անձամբ ան-
ձին եղեալ գտակը չարեաց ։ Ունիք ոչ անհնչիք՛ ի
Վրիստոսէ գնորա ժառանգութենէն՝ ի ձեզ գբաւե-
լով. եր վասն յիմարեցայք, ոչ անձամբ անձին եղեալ
պատուող, այլ և օտարաց ։ Վրիստոս ոչ եդ շուք լինել
անձին քահանայապետ, այլ կանխապրութեանն Հայ-
տաևեաց. և դու ծառայ նորա, ոչ ինաս՛ ի տեղի ծա-
ռայիդ տեառն ժառանգութեան՝ զոր յետ քո՛ վիճա-
կել, այլ ազգատոհմի քո՛ հարչեա ։ Օ՛ կրկզանացն սո-
վորութիւն յառաջ բերես. զննացեալ և զծերացեալ
օրինացն գաստիարակութենէն զարձեալ բուռն հար-
կանես. տոհմի և ազգի որոշմունք զարձեալ որմնես ։
Ուզա կացուցեալ զոտս յաւետարանին յօրինս՝ քա-
րոզեա Թլփատութիւն և խոտութիւն, և մի՛ հե-
տևիր խաչին Վրիստոսի. հոգւով սկսար և մարմնով
վախձանիս. այդչափ անցս կրեր զուր, և ոչ խնայեր ։
Փոփոխեցայք յաւետարանէ իմմէ, և ոչ ձանաչէք. ես
Եթէ այդմ սովորութեան եի ջատագով, ապա ընդ-
եր հալածիմ. Եթէ զոր քակեցի գնոյն վերստին շի-
նեմ, ապա յանցաւոր զանձն իմ ես ինձէն երևեցու-
ցանեմ. որ օրինացն մեռայ, զօրինացն սովորութիւն
զնովր վարդապետեմ. Ուզա Թէ վարդապետեմ կամ
ես կամ հրեշտակ յերկնից աւելի քան զոր կանխառն
աւետարանեցի, նզովեալ եղիցի ։

Աստուածային երկու և երեք վկայք հաստատային զՀրաշս մարտութիւնն, և յոմանք արարին զաստուածութիւնն. և վկայք այսպիսի ըստ որում և տեսաք, Հրիստոս և իւր եկեղեցւոյ հաստատութիւն սիւնք։ Այլ զի մի երբեք վտանգեցուսցեն զմեզ այպանողքն[1] իմացուք ըստ կարգի և առ սոցին պատուիրանացն պահողսն. այս ինքն հաստատութիւն ընդ կարգս հայրապետաց. զորս թէ կարգաւորապէս առնում[2] ի մէջ հանդերձ ժողովրդովքն՝ զոր արարին, և կանոնական տաճմանութեամբն զոր հաստատեցին, ծանրատաղտուկ լինի Աստուածութեամբ. այլ առ գիրսն որ վասն նոցին պատճառի միայն առաքեմ զհակառակողսն անհաւանութեամբ, այսինքն յեկեղեցական պատմութիւնն։

Վասնզի թէ հայրապետացն զոր առեալ բերէք ըստ իւրաքանչիւր որ ընդ տիեզերս ամենայն, ոչ տայ բնաւ տարացոյց թէ երեց կամ եպիսկոպոս յեկեղեցի կամ յամենայն իշխանութիւն ունէր՝ զոր յետ իւր յաջորդ յարուցանել. այլ երիցունքն ննջեալ, ժողովն զեկեղեցին ի կամ Հրիստոսի և եպիսկոպոսին. և եպիսկոպոսն ի կամ Հրիստոսի և ժողովրդեանն և եկեղեցւոյ ժառանգաւորացն և Տանուպատու եպիսկոպոսացն կոչման յոք ապատանն արարեալ զամենն։ Որք զմին յապարակէ՝ տեսութեամբն Աստուծոյ առեալ նատուցին յամենն Հռովմայ, և զայլ ոմն ի մանկական խաղացն յամենն Ղեբսանդրու. Ալեքսանդրոս յեպոքսոսութենէ կոչեցաւ եպիսկոպոս Կեդիոզու. վասն այնորիկ չարարեալ փոյթ անարգութեանն իւրոյ՝ անաչառութեամբ անարգեր զմեզ։ և Յովհան Ալեքսանդրացի ժառանգէ զկատանդութիւնսն. ուստի և ոչ տեսեալ զնոյն իւր Հայրենիս, էջ վասն օրինացն Աստուծոյ ի յաբսորս։ Եթէ իւր էր Տանարեալ զազգ մարդատիկ իշխանութիւնն, ներէր արդեօք Աստուածն՝ որ անտի զնա վրիպեցուցանէր։ Այլ զոյն անդամանել, ի հետ վերին պատկանն փութայր, և ոչ յոչ ներն որպէս իւր հրաժարեր, և ոչ ի չուներն տարակուսեր։ Այսպէս ընթացան և այսպիսի մեզ Աստուածպէտ

1 Ա՛յլք, ծաղրէրեն. երաք 2 Մի օր. ժողովէր։
ըստ լուս. Ասոյ օրինակի։

հոդեցին, և սիեզերք ամենայն ընդ նոսին պողոտայս անբասիբիւք ընթանան այսօր առաջի աչաց մեր, ըզհետս Տարցն շաւղաց կոխելով. իսկ մեք օտար ամենևին և յիմարեալ, և ոչ գիտեմ զինչդ՝ ի խեղաթիւրելն ըմբռնեալ։ Այրէցին մատուռս մի չինել, և ըզԱբիատոսի ժողովուրդն վէր այսորիկ որդեացն և հնոցն ծառայ Թողու յաւիտեան, Թէ Տալումն և Թէ ոչ. և աբեղային վանք չինել, և զեղբայրութիւնն որ ի Աբիատոսի անուն ժողովին՝ քաւերդուցն ի գերեզմանին մնանել, և զայն իրաւանքն առնել Տանտրի։ Այ եպիսկոպոսքն այժմ ոչ մինչև ի մահն Տաճեբերէն, այլ բազումք կենօք զաՅոն ընտանեացն վիճակին՝ արպես զինքեանց սեպհական. ի վերայ որոյ ոչ գոյ որ նայի և ոչ որ խնդրէ զիրաւունս Պատճոյ։ Այայլ ազգ օրէնս որ սովին արատաբոյ գնան՝ ոչ Տամարիքն իրաւունս Տայել, Թէ մնդրեալ են. և մեզին գՀնամարտութիւնն Տամ ախտանամբ խնդրել, և Տամ բնաւ անփոյթ արարեալ Թողութ. և որոյին չար օր ըստ օրէ առնել զարգանդ, և զանմանն ի խոր արձակեալ առաքանդ, և զգայեն յինքեանն զաղաչաւոր գիւտս զանազան մեզ զոյ։ Ի մի տեղն ուր բաւական էր մի Տամ երկու եկեղեցի ժողովարան, այժմ տեսանի բազումն և անթիւս ծախտեալ ամբոխս, ոչ ի փառս Պատճոյ, այլ անՏնազանդութեանն և Թշնամութեանն երիցանց աշակերտս. որպէս զի միմեանց Տակառակս կացեալ զժողովուրդն յերբեմն քեզեսցին. և այսպէս զմնացեալ Թշնամութեանն ածեցուսցեն, և իբր զի Տայրենիս որգուոյն գնոյն Թողուցու։ Ոչիք մեր բնաւ կամ ոչիկ եկեղեցի ի գեօղ կամ ի քաղաք՝ բաց որում զայլ քրիստոնէից սովորութիւնս տեսանեմք, և ոչ անգր երիցանց և կղերիկոսաց բաց արժանեաց վիճակ աստիճանաց, այլ միայն եկեղեցիքն աշակերտք անՏնազանդութեամբ իրերաց։ Ի տեղ ուր ազգ Տայոց բաց Թողուն չափ բազում ի քան զայլս սահմանսուր ազգն ի կարգ և ի Տնազանդութեան. վասն այսորիկ և ոչ պատուղ ժողովրդոց և ոչ Տաւատոց նոցին առ Պատուած զարգացումն, ոչ ածնից պայծառութիւն և ոչ անուանն Պատուածոյ ի մէջ մեր փառաւորութիւն. զինքդ այս չինեսցի՝ յորժամ Տինն խորխորատել է։ Այսիկսպոսք

ձեռնադրիմք, և բնաւ ոչ վիճեմք զդործ այցելութեան. աթոռոյ վիճակիմք, և ոչ ամենևին ծանօթ եմք աթոռոյն, կամ թէ միոչ է աթոռ մեր և ոք զետեղի: Օ ի աթոռ եպիսկոպոսին յայլ քրիստոնէից զոյն լսեմք և տեսանեմք, որ ի խորանն սուրբ իցի Հաստատեալ ի կաթողիկէ եկեղեցւոջն, ուր Հանդիսի փոխանակ Աքրիստոսի ի մէջ եկեղեցւոյ իւր ժողովրդեանն: Այնք չունիմք ոչ կաթողիկէ, ոչ աթոռ, ոչ ժողովուրդ, և ոչ ի մէջ նոցա գոլ Հարկաւոր ուսաք լինել եպիսկոպոսի, այլ ժողովուրդքն են մանաւանդ ի ձեռս երիցանցն այդպիսի Հանդանակութիւնք և մխիթարք, և եպիսկոպոսք բացակայ ի նոցանէ ի ծերպս վիմաց աքսորեալք. յորժամ գայցէ ի մէջ իւրեանց ժողովրդեանն որպէս յօտարաց իւր միայն զերիցունն գիտէ, և ոչ զժողովուրդն. գաղտագող զսակաւիկ տուրսն ձգէն ի նա և արտաքս առաքեն: Այն ոմն է, չտեսանէ ժողովուրդն գնա. Թէ Հանդիսական օր է, ոչ փառաւորի անուն Աստուծոյ ի ձեռս սորա ի մէջ նոցա: Այսպէս մնաձեալ է ի վերայ մեր միայն՝ որպէս երբեմն Յ Հրդիսոս ի մէջ Արապետին. նա և ինքն որ եպիսկոպոս Թէ և ի կատարելոցն է՝ բնաւ և երբ գիտէ հարկաւոր իւր զայս գործադնուԹիւնս, կամ ժողովրդեանն ՀոդաբարձուԹիւն կամ գոհութիւն փառաւորուԹիւն, կամ երբ մտէ յեկեղեցի Աստուծոյ, կամ այլոց ի նոցն ձեռնադրՀորդ. բայց Թէ ի պէտս ձեռնադրուԹեան, և զայն զԸԺամանակս Արապետել: Արգելմ մնգամ ձեռնադրեմք և ոչ պատարագեմք: պատարագիչս կատարեմք, և մեք զանձինս անարժան առնեմք. Հոգիս ժողովրդեան կոչեմք, և վանօրէիկ Հայրութիւն առնեմք. զվիճակս աշխարհս պիւղից և քաղաքաց վանօրէից ծառայեցուցանեմք, և աշխարՀէս մեր սոսկալ և պատճառ ի գիտուԹենէն Աստուծոյ և փառաց:

Այսպիսի է ընթացք մեր այժմ, ընդ որ ոչ զառաջինն տեսաք կամ լուաք ընթացեալս, և ոչ զաշակերտս տեսաք սոցին քրիստոնեայս մտրթեալս: Այլ մեք միայն գոյք զայս ձնռասպարէս. այժմ և ոչ ի սկզբանէ այսպէս էաք. զի Թէ այսպիսի էր լեալ ընթացք մեր, ոչ էաք ունացեալ ի ՀաստատուԹեան. բայց ոչ էր այսպէս, այլ լսեմք մեծամեծ և բարձրաբերձ գոլ եկեղե-

ցիք յաշխարհն Հայոց՝ ի վնաս և յապականս, և երե-
լիս պես ես նշանագիր կայսեր Թագկապատաց՝ ի դա-
սին. և մանաւանդ ի Ժամհանակս Կապրատաւեանցն և
Կոթզբաւեանց Թագաւորութեան, որը զամենայն կարգ
սատաւածպաշտութիւնն իբրեւանց ուղեցին։ Եւ էր առ
նոքօք, որպէս տարացոյց տան պատմութիւնք Ժամա-
նակաց, եկեղեցիք Ժառանգութիւնք, և ոչ Ժողովրդին
առանց հոգաւոց տաճկին, և ոչ վանորայք ի քահա-
նայիցն պատապարիլին։

Եւ ես այս չարիք չունի բազում ինչ Ժամանակ դի
սկսաւ ընձիւղել. գրեթէ հարիւր ամ առելի կամ պա-
կաս՝ յորմէ հետէ տագնապեցաւ խրխատութիւնն, օր
ըստ օրէ սկսաւ զարգանալ, և բնաւ փոյթ ումեք չեղե-
աւ ի կալչել զայն աչխատել. այլ մանաւանդ քանի
ընդերկարութեամբ հնանայ՝ որպէս զօրինս բնականաբ
գյանցանս. քանզի այս մանրակրկիտ բնաւթեան սոփ-
րութիւն, չ՝ նուազեալ աղօտացեալ այժմ յաչին կո-
րըստեան հասեալ Ժամանակացս. քանզի ամենայն հայ-
րենի աշխարհն մեր՝ ոչ միայն յանկարգութեան է,
այլ և ի չար և ի գառն Ծատացութեան. ոչ սակաւ ըստ
մարմնոյ՝ յոր Աստուած մանուկաց ըստ մեզոյ մեծաց,
այլ ըստ հոգւոյ՝ յոր մեք եզաք անձամբ զանձինս ան-
մոռութեամբ։

Օ՛ի լսեմք ձեզ Աստուածն զգործ եպիսկո-
պոսաց, և ընդս տան Հրամանն եպիսկոպոսաց ձեռնա-
դրել, և զարձանձն յինքեանս ընդունիլ. և ուրախ են
առաւելապէս աչխարհն ի նոսա՝ քան ի բրիստոնեայսն
որ զնոյն գործ կատարեն. զի ընդս խեղանիւտ գործ մինչև
ի ձեռինն տուգանին, իսկ ի հեթանոսացն բազում-
ինչ զանխղճացեալ Թաղչի. մանաւանդ և օրինաց չար-
չարին, հնազանդ գործ իբրեւանց իրաւանցն։

Այլ ինձ, և եղուկ եմ ես. մեռեալք մեռանեին և
զառ ըս անհաղ ինան՝ յորոց ոչ ունիմք գրաւ՝ այլ
անհրաժեշտ ինան Հարկին, և մանկանք առանց միրթ-
աւեան։ Այլ ինքեանք իշխանք խոտոռամտաբար ա-
զատակին, մեք ի մէնջ գոռ այս Հարկաց բաժնեձի՝
և ոչ ի մէնջ. դա և արդար են ամենեին։ Զանգի և
պահպանք զմիմեանս զգուշալ յիշխանութեանց յա-
ջողհաւատութեան՝ զոմն զայս, և օր ըստ օրէ ամէնցուին

և ամենայնիւ, Հայանալ թէ զինչ և որպէս զիս ա-
չարեաց ծառային՝ ո՛ Տէրն լուսոյ ընտրեալ սատակացի, Որ ա-
մենայն ամենապէս խոտորեցեան ի վերայ եկեղեցւոյ
զեղծեալ օրինօքն՝ ով բառնալոցի ուզղել. կամ զը-
նորա պայծառութիւնն՝ կարասցէ, նոցին քաղցրացու-
ցանել. Այսուհետև միայն ես կարելի՛ որ հինգամեայ առնել
զհեռաւոր,

Այսպիսիկ ո՛ր ի քրիստոնէից ազգաց միջի եմք, ու-
նիմք ցաղգ և սակաւաւոր իշխանս քրիստոնեայս, մեր-
ում Հայրապետական իշխանութիւն և ընդհանրակոյ
նմին, զինչ. ունիմք Տէրս զաբեթպաշտութեան
չարիքն անասելի. ոչ բնաւ. և զի ոչ ունիմք, ոչ
եթէ կարծեաք ասել, այլ ի մերձակայ քրիստոնէից
դառնալ յօրինացն զանիրիք զատապարտաբար. ընդ
որս Համեմատական, լակ միայն՝ հաւատով և անուանի
անուանիրիք քրիստոնեայք՝ Ձախալ ի գործոյ բան իւ-
րաքանչիւր Ձնորհապարհն. այս ինքն զի ոչ ունի ևօվա-
ռատն տէր այսօր լինելիք Հայոցդ յայս աշխարհս՝
որում տիրեցին զօրք Ձառածոյ. և նորա յոր-
ժամ եկին ի եր տէր Ի՛ջնադեաք և Ի՛զմիր, Ի՛ւ բիա
և Ի՛ւ միկիա, Պամփիլիա և Կապադովկիա և տէր Կա-
միքն՝ Հայոց ազգաս, որք ունէին յայնժամ իշխանս
և կրօնաւորանս բան չափ իւրեանց, և չէ պահանջել
իշխանութիւնն միանգ յայժմ. ապայն յայսքան ժա-
մանակս ոչ չինեալ է ուրուք ի նոցանէ ի քաղաք ի-
բեանց կամ յատան եկեղեցի Ձառածոյ կամ եպիսկո-
պոսարան՝ վասն առ ի Ի՛շխատս յաւուրն և սիրոյն.
բայ յայնմանէ զոր Ձնձրանէրն և վանականքն իշ-
խանքն բարեպաշտք արարեալ են ի Ի՛նքատիս ի Ձո-
ռանոյ առաքեան, Ի՛րչափ նորա բարձան՝ կարգ մեր ան-
նման ի մերում ի գարձաս. ոչ եթէ անհարգատեն
է միայն, այլ և բան անհնաւանութեան է, Ոչ Ձիաւորք
ի սակաւ առաքս լցին զամենայն աշխարհն բարեպաշ-
տութիւն. ի տէրն զոր Հայոց իշխանքն անկնին զգազան
ժանիսակս առանց եկեղեցւոյ և եպիսկոպոսի, նորա ա-
ռեալ նախ առաջին զեկեղեցական կարգ ի նմա ազ-
գին, որպէս և առեալ եմ այսօր և լուեալ ականջօք,

1 Մի պին · նոր գոյ---թեան · 2 Նրման որ · Լ՝ի Գ ·

փոքր ինչ և առել յոժարիմ. Այսպէս քաղաք մեծ և լցեալ բազմութեամբ՝ Հայոց կը, առանց ամենայն և եկեղեցւոյ · Յառանդն յորժամ էառ, զասրիմաքեբեցն չինեաց ՚ի նա եկեղեցի և ամենայն ՚Կոյսիակս և ՚Կեան ՚Կոզ Ա ասլին որ ընդ բազմապատան յիշատակի · և ոչ ամենառ ՚ի նմանս ՚Կրիստոսի՝ և ոչ ժառանգութիւն · իսկ Յառանգայ սիրեալ՝ արքեպիսկոպոսական ՚ի նոյն ուղղեցին, և յամենայն առանն ՚ որ շուրջ գնացաւ եկեղեցիս և պաշտօնեայս · Իսկ զՀարգապետս և զԱիս և զայլ ընդ նոքօք աշխարհն գինչ առեալ, որ միանգ ցայսօր ընդ Հայոց տէրութեամբ են բազում աշխարհօք, և առանց Հովուութեան և Հովանոյ ՚Կոչ, և առանց եկեղեցւոյ և նորին պայծառութեան · քանզի եպիսկոպոսքն ՚ի վանորայս են, և Հայն առանց Հովանոյ տանջի ։

Ոչ գիտեմ ուստի զայս օրինս այժմ գտեալ մեր · ՚ի նախնեացն ոչ առնեմք, զի ահա ցուցաւ վերագոյն · և յայլ ազգս ոչ տեսանեմք, և նոր առաքեալ չգոյանեցաւ մեզ որ խոստացաց զառաքելոցն սահմանն · գայս և ՚Ի ունեմք յանխնամութենէ և յարհամարհութենէ օրինացն Աստուծոյ, և յոչ փութալոյ առնելոյն առաջնորդացդ ՚ի վերնոյ շնորհութիւն օրինացն, և յոչ ծառայելոյ տեառն մերոյ Յիսուսի Կրիստոսի, այլ խրախանոյ պատճառին և անեղկից ցածութեանն · որք իբր զգարկեշտ ՚ի վանս նոտիքն, և զՀօտան ՚ի խառնոյ ապիրատութեան լքեալ Թողաք ։

Յանդգնեալ Հայոց իշխանքն եկեղեցի են չինեալ · Հառանք առին գտեղին մի անգամ և երկիցս, և ՚ի Հայոց եկեղեցին եպիսկոպոսք կարգեցին և յարխարհէն նոտեր եկեղեցւոյն · Իսկ Հայոց իշխանքն առեալ գնոյն վերատին՝ զՀառանցն եպիսկոպոս վարկցին, և զեկեղեցին այրի և ունայն Թողին, և ի նոցունց ՝Կայսիս և ի ՝Կուհա, Նոյեակս և Յանտասար և առնոյն Ա՚ԻՀագոբ · զի բան ներողութեան Աստուծոյ էառ կնոքանցն զարհարն, և զեկեղեցիսն առնելոյն Թողին Հայք յաջորդեցին ՚ի Յառանգայ · Էին են եկեղեցիքն Հարաբ , կամ ոտիկեքն ՚ի պաշտամունս, և քահանայքն պատահական ՚ի միանգ ծառայեցուցին

1 Մի պ · կոչեան ։

զժողովուրդն . և 'ի նոյն տեղն Աստիճն 'ի Հանդէս և 'ի փառաւորութիւն Աստուծոյ ։

Ասէ Աիս որ իշխանութիւնն է քաղաք մեր՝ այժմ լցեալ իշխանաւք և ժողովրդոք , առանց այցելութեան և այցելուի . ոչ եկեղեցիք և ոչ 'ի նոյն ժողովրդեանն բնաւացք , և ոչ բնաւ գիտեն եթէ հարկաւոր է մեզ ունել զայս ։ Աարմնական իշխանութիւնն՝ բազում ինչ բանեւութիւն նախանձեալ առիւ 'ի Յաւանգաց , և չգիտեն անհագորդ ամենեին . քանզի բազմութիւն քրիստոնէիցն որ 'ի նմա՝ ոգիտութեամբ կոչնչին , պատքեալ օրինացն Աստուծոյ և եկեղեցական օրինաց ։ Յայտ և ամենայն դղեակք և գաւառակերաք ընդ նոցին իշխանութեամբ . զի եպիսկոպոսքն 'ի վանէսէն են , միայն ձեռնադրութեանն գիտեն զնոքեանս գործառոյթ ։

Պարտ էր բառնամ քրիստոնէից օրինաց՝ նոսել եպիսկոպոսին 'ի գլխաւոր տեղիս , իւրաքանչիւրոցն ունել կանոնիկ եկեղեցի , և զոմանս պայծառացուցանել , զՀանդիսան գործոցն , զեկեղեցին 'ի սէրն Յիսուսի քարոզութեացուցանել , և զնոսա Հոգեւոր կերակրովն մեռցուցանել . Իակ այժմ բարձեալ է այս 'ի միջոյ , և տիրեալ է յաւազանիք և բանբասանք , այգանմանիք միմեանց և արհամարհութիւն . և բնաւ չՏատատանքն իրերաց , եթէ 'ի փառս Աստուծոյ գործ կատարի , այնու զի միք ոչ կատարեմք , այլ զամենայն ինչ մնդրկացին ախտի ծառայեցուցաք : Յրբեմն յորժամ՝ Ժողով Հանդիսական ածն լինէ 'ի միջ նոցա , և գան եպիսկոպոսքն 'ի պատարագ իշխանին , խորչին առաքինեքն և տեղի տան 'ի պատարագելոյ զԱրիստոս վասն փրկութեան ժողովրդեան . մանաւանդ և առնեն զայն իբրեւ զայն Հանդիսին՝ առնելն Արիստոսի սպասաւորել , և զնոսա անուանն 'ի միջ ժողովրդեան փառաւորել . իակ որ Ժարտին յառաջ գայ 'ի գործառութիւնն , յամենեցունց բամբասի , յայտարի . էր վասն . զի ոչ , ասէն , 'ի փառս Աստուծոյ կատարէ զգործն , այլ 'ի մարդկան . և ասաւ գու գիտես զայդ . այնու , ասէ , զի չիւբ եկեղեցին զան ոգւոյն չէ փոյթ պարակալ զԱրիստոս պատարագելոյ . եթէ այդ այդպէս է , ապա պղպատանաս 'ի բանս քո . զի որ ասա առնէ անասնոյպարար՝ 'ի մարդահաճութենէ չարժի ։

Քայց սակայն ամենեքեան դուք մեզանչէք մարգա-
հատմելեամբ . զի որպէս նա որոց զիսառս պատա-
սխանէն , դուք որոյք հրաժարմանքդ : Քակ ընդէր այդ-
քան լքեալ թողիք զՀնոցհոգ Քրիստոսի . եթէ ոչ
կիք արժանի , էր առիք . և եթէ առէք , այր աղագաւ
ոչ պաշտէք : Քէ զիտէք եթէ հարկաւոր է ձեզ զոյն
գործ առանց դանդաղելոյ կատարել , և բնութեամբ
զպաշտօնս եկեղեցւոյ սիրել : Քոր վասն նախապատուէք
զմարմնական գործ քան զտեառն ձերոյ , և սիրէք զը-
փառս մարդկան առաւել քան զփառս Քստուծոյ . և
հեշտութեամբ գարշութեան զրկիք զձեզ ի հեշտու-
թենէ մեքուր սիրոյն Քրիստոսի :

Ծանեք զի որպէս տուն իշխանիդ չէ առանց իւր
փառաւոր , այսպէս և ոչ եկեղեցիս առանց ձեր՝ որ փո-
խան ' կք Քրիստոսի : Ըրպէս գորս զամենայն օր
հանդիսական պարտ է պատուել , այսպէս և ձեզ զա-
մենայն տօնս տէրունական պարտ է ձերով պատարա-
գան և պաշտամանքն փառաւորել : Ծառայն ոչ գոմի
յորժամ վասն սխալանացն ի սպասաւորութենէ տեառն
խորշի , այլ անարգի թէ ընդէր սխալեաց կամ հեղ-
գայաւ . այսպէս և դուք թէ սխալանօք հեղգանայք ,
բարկութեան տեառն ձերոյ ակնկալքք , և թէ հեղ-
գութեամբ՝ և առաւել ստոյի , և թէ մարգահատմու-
թեամբ՝ աստուածամարտութեան :

Քայլ չունիմք ձմարտութիւն , քարձաւ ստուգու-
թիւն , գնաց քաղցրութիւն սիրոյն Քստուծոյ . ամե-
նեքեան ² իրերաց դատաւորք , և ուղղեալ և ոչ ոք : Ծի
սրեալ են զլեզուս առաջնորդք զիրեարս դատել , և
ժողովուրդն զնոսա , ոչ որպէս զի ուղղեսցեն՝ այլ զի
այպանեսցեն . վասն այսորիկ և ամենայն օրինացն
Քստուծոյ մոռացօնս արարաք ³ : Հարկաւոր գործ զեր-
կրագործութիւնն ստացաք Քրիստոսի պաշտօնեայքս .
և սէր մեր ի ստացուածս դարձաւ , և ոչ ի փրկութիւն
մեր կամ յայլոց : Ծ եկեղեցիս ժառանգութիւն մեզ
առաք՝ և այլոց ընդհեցաք . զՔրիստոսի փոխան լինելն
օտարութիւն ի նմանէ հանդիսեցաք՝ և այնպէս առաք ,

1 Մի օր . փոխանակ :
2 Երկու օր . Որ :
3 Երկու օր . Ուրուբ :

Աչսիակսպոսք յառնախեն, և այցելութիւն նուաղի. վանողացք չինին և բազմանան, և ժառանգութիւն ազգականաց չտարհին, և բաժանմանն ժողովրդեանն կայացքանք չտարհին։ Ասկս որպ բազումն յաւէ ինձ. և յառաջ քան զՀասակ իմ ձգէ զնս գորով սիրոյն բարբառել, և դատաւոր առնէ զմանուկ կրասեր՝ծերոցն տանդութիւն։ Աչ անպարտ ստիպէ առնել ազդելով բանիս յաբենէ արդարոյն [1] անապատն դատաստան. և խօսիմ խորշատեալ, թէպէտ և ոչինչ օգտիմ [2]. Ծանրաբեռնութեամբ փակելոց տամ վկայութիւն Աստուածութեանն Աստուծոյ՝ և ոչ առնչեմ. մայրենի գթով ստիպեմ զանենեսեան ձգել զառիւս քաղցրաձայնակս բանից. ոչ թէ զի մայրաբար ծնայ կամ մնացի, և կամ առի իշխանութիւն բժշկել որոց ախտակցիմն, այլ զի միայն տեսանել արժանի գտայ զանձին իմոյ վէրս որով կեղեքիմն։

Աղաչեմ զձեզ, ներեցէք փոքր ինչ և իմոյ անզգամութեանս եղբարք, որք մնացուիբութեամբ անապատ նոցա՝ որոց նեղեանն և տառապեցուցանեն զՀնմարտութիւնն։ Յանգի գայս և Պօղոս ինդրէր էրբեանի՝ ի Կորնթացւոցն՝ ի չար մեակացն պատրելոց, երապահաս բժիշկս, հանձարեղ ուղղիչն, խորագիտութեամբ բմբռնողն. նման այսոր կարօտի ձայրակ վիրացս մերոց առ՝ի բժիշկս կել. որ հիւանդանալն ուրուք հիւանդակցութեամբն առողջացուցանէր, ՝ի գայթակղիլն ուրուք տապանալովք վազվզեալ կազդուրէր։ Այլ մեք բժիշկք մեզանչականք, բան որում ասէ ուրեմն Տէր, մխիթարիչք չարեաց ամենեքեան, չայսպանումն միայն նստեալ բանիս ընդգէմ Աբրհատսի եկեղեցւոյ, և ոչ զվէրն մնհոգ չաի սիրով՝ի չանձն առեալ, որպէս Տրհանն բնկաղաք։ Հոլիւ ոչ քաջ, այլ վատթար. ոչ զանձն՝ի վերայ ոչխարացն եդեալ՝ այլ փախուցեալ. վարձկան ամարդի արդարև՝ և ոչ՝ի հետս Հնմարիտ Հովուին ընթացեալ. արդեամբք ոչ փութացեալ վանն ոչխարացն, միայն զբանս չանձեմ։ Կայրն չարչարակի և ցրուէ, և ես չաշտարակիս միայն խնամարհեալ նկատեմ, ՝ի բացեայ կալով զբժշկիլս Տնարիմ, և ձեռն ձգեալ

1 Մի օր. Ճարենէ արքեպ-ին։ 2 Մի օր. Ու օգտիմ։

հասարակաց վիրաբոյն վտանգիմ. այսօր մնաքուր հոգեկիր, և վաղիւ մոլի խելագար ։ Ա՝ սոյն այսորիկ ասէ ցիս Ա՛ըշ-մարտութիւնն, որպէս առ արդարն Յոբ, առ անաար դարս իրաւամբ ։ ՚՚ Ա՝Ինչպէս կերբը խօսեսցիս զայդ՝ և ոգի մեծաբանութեան ի բերան քո . մի՛ թէ անիրաւ դա-տեսցի տէր, կամ որ զամենայն արար սպրտրեսցէ՞ զի-բաւունս . եթէ որդիքն քո մեղան առաջի նորա, առա-քեաց ի ձեռին զանօրէնութիւնս նոցա ։ Ա՝այլ դու կանխեա առ տէր ամենակալ աղօթիւք . եթէ սուրբ և Ձշմարիտ իցես, աղօթից քոց լուիցէ ՚՚ ։ Ա՝ես ահա հե-ռի եմ յայսմանէ, և գիտեմ զի ոչ լսէ . քանզի ըստ-գտանիմ ի սրտի իմում, որպէս ասէ Ա՝ստուածաբանն, սորին վասն և ոչ ունիմ համարձակութիւն [2] առ նա աղօթել . և թէ ստգտանիմ, ապա ունիմ և ես ի հին մարգոյն . և թէ ունիմ, ոչ կարեմ դատապարտեալս զայլս դատել, այլ տամ գբան խնամարհութեամբ, զբօ-սանս առ գիտութեան խնամոյից որոց ախորժեն, և տե-ղեկութիւն բարեպաշտութեանն՝ որոց փափագին ։ Ա՝ակ եթէ օր յաջանաօք վարի առ իս յայտգս զայսոսիկ քննելոյ, ընդունիմ սիրով . քանզի և ես անձամբ զբաղ անձինս կշռեալ գիտեմ, և եթէ ի վեր է այս քան զբ-հասանն իմ և զարժանս՝ Ձանաչեմ։ Ա՝ սոյն որոյ և նե-ղողութեամբ ունել զկշտամբանող աղաչեմ, ծանու-ցեալ թէ ի սիրոյն որ ոչ ամաչէ և ոչ խնդրէ զկերն՝ ըմբռնեալ ես բերիմ։

ՎԵՐՍՏԻՒՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ՈՁ ԹԱՓԱՆԳՈՒԹԻՒՆՆԵԼՈՑ ԱՋԳԱՏՈՀԻՄ ՉԱՓԱՒՈՐՈՒԱՆ ՊԱՏԻՒ, Ի ՊԱՏՄՈՒԹԵՆԷ ՀԲՐՑՆ ՄԵՐՈՑ

ՎԱՆՉԻ ի Ա՝բիստոսէ և յիւրոցն բաւականապէս ուսաք զառաջադիմ [3] խօրհուրդս, ոչ ունելոյ զՀոգեկիր իշխանութիւնն ժառանգաւորութեան, այսուհետև կարօտիմք ուսանել զինչն և ի մերոց Հարցն առաջնոց՝ որք գնացին զկնի փրկչին մերոյ, և մեզ զինչն շահիլս

1 Մի օր · Լյե ։
2 Երկու օր · Համարձակութիւն ։
3 Մի օր · Զ---ա-ջ-ա-դ-ի-մ ։

ցուցին ։ Օ՛ի Թէ՛ի սոցանէ կարելւոյ տիրապէս հաս-
տատել զկամ բանիս , ամենևին յամենի եղեալ կրճ-
տամբէին որք ստերբելոն զՀնչմարտութիւնն ։ մանաւանդ
զի և բազումք ՛ի սոցանէ զնիւթ գործոյս ունէլ վկայէն
ասելով Թէ՛ի սրբոյն Վրիգորէ որդիքն և ցեղք նոցին
զաճառն ժառանգեցին ՛ ։ և զի Հայրապետական առնն
այսօր այսու անուամբ և գործով Ճոխանայ ։ վասն այ-
սորիկ և բովանդակ ազգս նախանձաբեկ եղեալ ընդ
նոյն գնալ սովորեցան ։ ցուսամ որպէս զիւր ունէլ զՀն-
գևւոր գործոյ պաշտօնն , և որպէս զիւր ՛ի ձեռս այլոց
աւանդել ։

Ա՛րդ քննեսցուք նախ զի մի պարզմտութեամբ ՛ի
կարծիս կործանիցիմք ։ Լ՛Թէ՛ի նոցանէ ունիմք զսովո-
րութիւնս՝ անպատասխան եմք ՛ի հակառակելս ։ Թէ-
Թէտ և այլ ազգք քրիստոնէից ոչ այսմ վկայեն , ան-
նաւանդ և նոքա յորոց նոյն ինքն սուրբն Վրիգոր և
որդիքն եկեալ առ մեզ Հասին ։ Այլ բաւական եմք ՛ի
սրբոյն Վրիգորէ զայս ուսանել , և յիւրոցն այսրէն ՛ի
մեզ կալով , և ոչ յայլ ազգս ձկտելով ։ Լ՛ս արդ զինչ
ասեմք , ինքն սուրբն Վրիգոր անձամբ անձին էառ
զայն պատիւ՝ որ իւրում ցեղին չնորհէր ։ ոչ յետ բազ-
մապատիկ իւրոց երկոց չարչարանացն խորչէր և տեղի
տայր ՛ի ծանր գործոյն ։ տեսիլ հրեշտակին ոչ քանի եղ
զպարանոց նորա ՛ի ներքոյ ընդոյն ։ և Թէ ժառանգութեի
կամէր առանել որդուցն , ինքն ընդէր ոչ փոյթ առնէր
և զնոսա ընդ իւր ածէր ։ Ա՛՛ի զանախտ Հոգին , եղ-
բարբ , ՛ի ներքոյ մարմնական ախտի դատէք ։ մի զնա-
չեալ աշխարհի ՛ի մարդկային սովորութիւն ձգէք ։ մի
զանհնայն սրբոց գերագոյնն՝ վերջին ամենեցուն ան-
մարդի ° գործակց ցուցանէք ։ Ա՛ն ներեալ այդքան զպարտ-
ութեան Հայրն , Թէպետ և երկայնամիտ է ։ Լ՛րա-
քինութիւնք որդւոց սրբոյն Վրիգորի զնոսին չարգե-
ցին , և ոչ սրբոյն Վրիգորի որդիութիւնն ։ Հրաժա-
րեն նոցա ՛ի Հօրէ և ՛ի պատուոյն՝ պատուեաց զնոսա ,
և ոչ գարշելի և մեղսասէր անուն Պահլաւին ։ զի
Յայնքան փառս Հօրն ոչ ձգեցան , այլ աստուածային
տեսչութեամբն ածան բռնութեամբ ժառանգ աթո-

1 Երկու օր ։ 2 Մի օր ։ Ա՛մարի ։

ոգին Քրիստոսի և ոչ սրբոյն Կղիմղոսի , զպակս զդիմք Քրիստոսի և ոչ Կղիմղոսի ։

Իսկ յորժամ աղջս առ ի նմին ախտացաւ , և տգիտութեամբ չընդունէին ցեղիցն Ձգեցին զՀայրապետաց կան աձոռն ըստ հնոյ օրինացն , տէս զտեսչութիւն նախախնամութեանն Աստուծոյ Թէ զինչ անօրինեաց . արգել և փակեաց ոչ տալով զաւակ արու սրբոյն Ա՝ Հակաց ։ Իսկ նա զինչ . զպակս մանուկ զՀայր՝ Թախանձեր յանօգուտ խնդիրսն զկանէն Աստուծոյ , զի մի ասէ աձոռս Հայրապետութեանս յետ իմ անժառանգ մնասցէ ։ Յայտներ ապա տէրն իւրում ծառային զնախնութիւն աղերսին սուրբն անպտղի անպտղութեան . և նկուն առնէր զնա , զպակս երբեմն զՊօղոս յանօգուտ աղօթիցն ։ Օ իմ , ասէ , ժառանգութիւնս քեզ կամիս առնել . և զարեան խնդ դինս՝ զգուշ քոց անպտղել ։ Ի բաց տար , ոչ գիտես զինչ խնդրես . զի Թէ առանց ժառանգութեան այդքան վտանգ մնայ ժողովրդեան քում՝ ի յապա ժամանակս , ժառանգաւորաց ծառայելով զինչ ոչ պատահէ ։ Իսկ նա ծածկեալ Թագուցանէր զնորհուրդն . քանզի և ինքն յաբբևիս աղգիս իշխանաց յայնժամ եղև անպտղեալ ։ Այսպս յորժամ զղջացան և եկեալ Հնարհուկս տային ցեղն նորա զՀայրապետական աձոռն , պայազատեացն , ասէն , տունքն քո ազգէ յազգ զայդ պատիւ , միայն Թող մեզ զայս նուագ յանցանաց քումդ անպտղութեան , զինչ ասպս եթանելի աստուածազգեացն . յարտասուս , ասէ պատուհիրեն , Հարա՝ նախ քան զպատասխանեալն անխնամոյ բանգալմանդն . շարժեաց ապա Հայ զի զբաղդատեսս շրթունսն , բարբառեցաւ պատասուք զՀնմարտութեան . Ինձ ասէ , տպաք զՔրիստոսի եկեղեցին , ազգին իմոյ զնահգնեալսդ քահանայապետին զժառանգութեան . ոչ գիտէք որոյ Հոգւոյ եք , կամ Թէ զինչ խնդրէք . ապիտանալ Թէ յերբեմն խորհրդոյ կործանմանն ի ձեռն այսր խնդրոյ զանձինս ձեր ձգէք ։ Այ ապա սկսեալ մի ըստ միոջէ պատմեաց ըզգիւտս չարեաց այսմ յանցանաց ։ Յետ որոյ պատասխանեաց . Քրիստոս լսցի ձեզ քահանայ , որ գնեաց զբեռամբ , և ոչ ազգ իմ և ցեղ . փակեաց և ընդ պատմամբ Նզովից՝ զառ ի յիւրոց օրինացն յանցեալսդն . ուստի և սաբանալ զարձան զոզացեալ ։

Նա սկսեալ ի սրբոյն Յահակայ մինչև ի տէր Պետրոս , ոչ բնաւ վարեցին զՀայրապետական աթոռն ժառանգութեամբ , այլ աստուածային ընտրութեամբ . յաղագս որոյ և ոչ եպիսկոպոսք զիւրեանց վիճակն , և ոչ Հարք վանից զվանորայս , այլ բարեպաշտ և քրիստոնէական օրինօք ընթանային . և քանք սրբոյ Հոգւոյն կրձիճն և ցանգ եղաւ ցեղըմտիւք լինելոյն զայնքան ժամանակս ։

Իսկ ի ժամանակս Վռամայ բազրատունւոյ՝ տէր Պետրոս իբր զարժանաւոր ընտրեցաւ , և ոչ որպէս զառաջնան , և յեղբօրէ իւրմէ ի տէր Յովհաննէս ընկալաւ ։ Նա խոտեալ ասաս ընթացաւ . և ոչ յիւրոյն , այլ Վռամայորդոյն Գագկայ յաթոռն նստաւ , մինչև վերստին տէր Պետրոս քննեալ յառաջինն պատուիրս հաստատեցաւ ։ Նա խրատեաց զօրէնսն . ոչ զիտեմ արդեօք և զբաւերորդին իւր զտէր Յովհաննէս ձեռնադրեաց . բայց կարծեմ թէ վասն զի Հայոց աշխարհն առ նովաւ տապալեցաւ՝ այս եղև ։ Յետ որոյ Հռոմոյ տիրեալ աշխարհային , ի ներքոյ Տրամիանոսի իւրեանց փակելոյին զառաջնորդութիւն աթոռոյն , և առ ի նոցանէ Տրամիանոս և խորհրդեամբ՝ յետ չորից ամաց անառաջնորդութեանն , բարեպաշտ Պարսիս Յազուհին նստոյց զտէր Վ Ներսէս , որ և Աշիզորիս , ոչ որպէս զԱդիաբացոսի որդի կամ զՊահլաւունի , այլ որպէս զՆժդեհոյ և վասն Աբրիսամայ աղքատացեալ ։ Իսկ առ նովաւ ազ այլազգեացն բարձրացաւ ի վերայ քրիստոնէից , և նա տապրեցեալ , և Հակառակաժողովրդեան կամք իւրովք և ակամայ բազմացան ։ Յետ որոյ տէր Կարապետ՝ ազգիս և Գլուանից ընտրութեան . և տէր Պետրոս , և եղբայր նորին տէր Աբէլ՝ ամենեցուն կոչեցաւ վկայեալ եմք ։ Նա որ առ ժամս տէր Պետրոս , թէպէտ և ազգ նորին՝ սակայն ի ձեր եպիսկոպոսացդ ընտրութենէ յաջորդեալ ։

Սակայն թէպէտ և այս այսպէս , չար սխրոս յայտնեալ առեալ վիճի՝ սկսաւ Նաւարակէ . և ոչ ասեն թէ տէր Աբէլ արժանի յաջորդեաց յեղբօրէն , այլ զի եղբայր՝ վասն այսորիկ և եղբօրն փոխան . ուստի և առնեքեան ի նոցունս կործանեալ Հարան , և ասն ի վեհագոյն աթոռն տան՝ ունելոյ զմեզաց պատձառ . եպիս-

կոպոսը զվիճակս , Տալը զվանորայս , քահանայիք զեկեղեցիս՝ մարմնական ընտանեացն գրէն որպէս զնոր-ինական ժառանգութիւն . և բարձաւ աստուածային ընտրութիւնն , կամ խնամանոյ կոչումն , կամ պատուոյ անարգողն պատիւ . այլ որ զանձն ընծայեցուցանէ՝ ընծայի , և զոր տէր ընծայեցուցանէ՝ անարգի . սակս որոյ և ՚ի վերայ միմեանց յարուցմունք , կաշառք իշխանացդ և տոկոսիք վասն վիճակացդ և վանորէից : Զանձրացուցաք ընդ Վրիստոսի խաչեալ կրծտաւորքս զիշխանս՝ առ ՚ի ինդրել զառաջնորդական պատիւ , և ոչ առնէին : Վաքրն գարձեալ տաղտկացուցին զանձինն կամաղիկոսի վասն եպիսկոպոսութեանն , և ոչ վերհերին . Տայր՝ ոչ եթէ անհայր ՚ վանիցին լինել , այլ որպէս զի զոր կայն կործանեսցէ և ինքն նացի . և երիսկոպոս ոչ այրի եկեղեցւոյն , այլ որպէս զի յորմէ ունի՝ յամէրակեսցէ զպատիւն :

Վ ապէրիս . և ապա զինչ . այսպանի անուն քրիստոնէից ՚ի մէջ աշխարհի . Տայոց վասն մեր անունն Վստուծոյ ՚ի մէջ հեթանոսաց . քանզի Տարի է սմա ըզհամառականութեանն չարախօսել , որպէս զի իրաւ կալ ճշոյն յանիրաւութեանն , և նա զրկեալ եկեալ զզըրկիչն բամբասէ . ծիծաղին և այսպանին իշխանք հեթանոսաց զմեր Թշուառութիւն , և ոչ համանեցան ՚ի զրպարտելն զմիմեանս , այլ զղուեալ ՚ի նախանձէն կայ չառս խոստացան [2] , իսկ կաշառն բարձրացեալ ՚ի համառականութեան կապալ եղև : Վյս այսպէս ամենայն եկեղեցիք արևելից յանզերծ ծառայութիւն մնանեցան ՚ի չարագործ հովուացն . ուստի այժմ տագնապին , չարչարին , և ՚ի բազմութենէ Տարկացն զզուեալ տառապին : Վ՚ահմէտ լիւր օրէնսն զեկեղեցի և զվանք ազատ գրեաց , և ժողովուրդն իւր զնոյն անսպիաթաք պահեցին ՚ի տիրէն քրիստոնէից . իսկ մեք յամենայն քրիստոնէից միայն բռնադատեալ՝ զեկեղեցի առանց ինդրելոյ ծառայ նոցին ընծրհեցաք : Վ՚վ է այնքան առնագործն որ ոչ զայսպիսի յիմարութիւնս ողորմք արտասուէ [3] . մեզ ողորմել է պարտ վասն յանցանացս

1 Մի օր . Ա՝նձոր :
2 Մի օրին . Խոսքանան :
3 Մի օրին . Ա՝ր՝պ՝ոս՝ե՝ն՝ք :

իբրև խելագարելոց, և ոչ որպէս զինամատնա կրտամ
բնել. զի որ խնամատն է, որ կամաւ զեկեղեցի Քրիս-
տոսի՝ ծառայ մատնէ. այլ մեք մատնեցաք, և զեւ և ս
ըստ իւրանքանչիւր կարի մատնեմք, և զՏարի կապալայն
բարձրացուցանեմք, և զամառ մեր ոչ յայտնացուցանեմք,
և կրտաճիկ յանցանացս ոչ որ լինի, քանզի ամենե-
քեան եմք ընդ խաւարատւս մնձեալ. զի այսօր ի մէջ
քրիստոնէից եմք, յաւիտեանել միտս տալոցիսք զամա-
նիս իբրեայց. ի տեղիս տեղիս և առ առս եղոյք Տար-
կատու, և յայլս կաշառս առատացուցաք. ոչ վասն ա-
վոյ՝ որ մաքնոյս չարիք է, և ոչ վասն պատնկուեն որ
դնի և այն ի տարին Տարիկ պիտոյիս, թէպէտև ոչ Տար-
կատոր. այլ միայն վասն մտաւ իշխանութեան և ան-
օգուտ փառաց, Քրիստոսի խաչակիցքս այսպէս չարա-
չար ի Քրիստոս մեղանչեմք. զի մեք զնիրէ մտաց
տկարաց միայն ի կերակուր գայթակղեցուցանելոյն
առաքեալ զնէ ի Քրիստոս մեղանչել, ապա ևս անօ-
բինեն այսպանեն գօրինաւորացս անօրինութիւն, և աշ-
խարհականքն բանբասեն զկրօնաւորացս խայտառա-
կութիւն, զինչ լինիցի. ոչ ապաքեն լու կր գնաւ չնա-
նալ զայսպիսի ձևոյ Աստուածպարտ, քան Աստուած և
չհաս զառնալ ի սուրբ պատուիրանին որ մեզ ասա-
դեցաւ, որպէս ասէ Պետրոս Թէ "Շ ան զառնայ ի
փոխած իւր, և խող լուացեալ ընդ տիւղ թաւալեալ,,՝
Վասզի արդարև մեզ է, ի դէպ չհնարիս ասակ. զի որ-
պէս զկերակուր փախեցաք զսէր աշխարհի առ Քրիս-
տոս մեռելութեամբս, և իբրև զաղտ տղմոյ լուացաք
զցանկութիւն մարմնոյ սպասու ձևոյս, և ապա վե-
րըստին ի նոյնն դարձեալ անիրաւաբար՝ զիարդ ոչ լի-
նիցի ասէլի մարդկան և Քրիստոյ. և զարձ այսպիսի՝
զի ոչ ի ցանկութենէ մնալոյ պատրիսք, որ նեբելի
է, այլ ի փառաց որ առանց Տարիկ է. եղբարբս անուն՝
արդեամբք ասեմս ընդդէմ իրեարց յառնեմք. զպար-
կեշտութիւնն մեր վասն թշնամանութեանն ի մէջ աշ-
խարհի Հրատարակեմք, որք առ ասն կոխելոյ երգիծա-
նէն զՏարոյն սրբոց որ ի մեզ բարեգործութիւն, Պօ-
զոս առ աշխարհի բնակիչս որ ի մէջ հեթանոսաց զրեր.
"Ինչեկ որ ի ձէնջ եթէ իրք ինչ իցեն ընդ ընկերին գա-
տել առաջի անիրաւաց և ոչ առաջի սրբոց ,, . յետ որոյ

յաւելու. "Ո՛վ դատաստանաք դուն՝ ի միջի ձերում. ընդէր ոչ դուք զիրիկ և նեղիք ,, : Իսկ մեք՝ որ ապրիմ հրա- ժարման տուաք աշխարհի , ձանձրացուցաք զիւրեան դատարանի՝ իշխանաց՝ ի դատաստանս խնդրելիս , և այն՝ ի վերայ միմեանց և ոչ յօտարաց . զինչ այլ այսմ առիթ քան հայրենիս և ժառանգութիւն համարելիս ունել յաշխարհի . ընտրեսք ընտրիսք , եթէ օտար էաք՝ ի սմանէ՝ զիւրաւ ընտրեսք զզրկիլն և զնեղիլն վասն հանդերձեալ յուսոյն , քան իրաւունս խնդրել վասն մտոյ կենացս . բայց անուամբ միայն օտարա- ցեալ , և գործով վերացաք սատարացաք հնացեալքս ի՛ ի չար սովորութիւնս , և յիր այսուհետև յոյս առող- ջութեան . ընդ փուշ մեղայն որպէս ընդ շուշանս հովտաց խառնեալ անախիր մնաք , և ընդ սուր յանցա- նայն կամաւ զձեռս բերեալ յօժար կամօք , և ՚ի վախս կորստեան անձամբ զանձինս ձգեալ սրտի բաղձանաք : Վերևս ծիծաղելի ոմանց թուի ասացեալս . արդարև ծիծաղելի որոց ոչ հատանան անուշաւ դատաստանին Քրիստոսի . ապա թէ զայն կերպարանեսցուք առաջի ա- չաց , գտանեսք զառհատուածայ գիհենին այսօր զմեզ տօղորող ՚ի ձեռն խղճի մերոյ . զայս ամենայն ոչ հա- րեւանցի շաղակրատանս լեզուի , որք վայելեցաք ՚ի գի- տութիւն տեառն "Արբև ՚ի Քրիստոս ՚ որք ծածկեն զծուխ ,, . անխորհ տգիտութեամբ մի մեղսցուք մեզ- հոտ չափ . մահ է հեթանոսական անգիտութիւնն , և մահու չափ մեզք է քրիստոնէին անգիտացողի յանցանելն : Իսկ այժմ ո՞ր է ՚ի մէջ մեր որ յանցանս իւր հանարի զկեղեցի Քրիստոսի ժառանգութիւն ստանալ և պլոյ հնարել . ո՞ր է որ ականջ ՚ի պատիւ հոգևոր իշխանութեան լսա որում օրէն է վերացաւ . ո՞ր է որ ծանր և գժուարին որպէս է՝ զառաջնոր- դականն պատիւ համարեցաւ . մի և ես եմ յայդպիսի յանցապարտից , և անձամբ անձին մեծարող . զիշատակ բանս բանիս նախ յանձն իմ և ապա յայլս ձգեմ . մեղաւոր եմ և ես , և լսա այսմ մտին հատասար յո- գոյնց . սակայն զղջացեալ՝ ողորմութիւն և տեղի ապաշ- խարութեան գտի ՚ի բարերար տեառնէն . ոչ եթէ իբր

1 Մի օրին . Դատաստան : 2 Մի օրին . Զիշատս բաղմա :

արդար՝ յանցաւոր գտանեմ զայլը, այլ յանցաւորս զանեսակ յանցանացն զգայեալ խորհիմ, և այլոց քարոզեմ. իբրև ընդ փորձ անցեալ՝ փորձանաւորացդ ի յայս տեսակ մեզաց լինիմ օգնական։ Կենացի և ես, որպէս ասէ ուրեմն Ժողովողն, ձգել մարմնոյս զպիտո իմ յայս տեսակ զբաղանաց. և տեսի զի զբաղումն չար ետ Թըշնամին ազգի կրճնաւորաց զբաւղալ ի նոսա, և առեցի միանգամայն զկեանս իմ, վասն զի չար էր ի վերայ իմ արարածն ի ներքոյ արեգական։ Կրկին վասն. ինքն Աստուած ասացը և ուսուցանէ ասելով. "Ոչ արձայ և տեսի ընդունայնութիւն ի ներքոյ արեգական, զի մի է և ոչ կրկին, և որդի և եղբայր ոչ դոյ նոցա, և ոչ է վախճան ամենայն վաստակոյ նոցա, և տակաւին աչին նոցա ոչ յագի մեծութեամբ ..." Կեա որպ է ասէ առ այսպիսիս. "Ոչ արդ ուժ ջանաս և զրկես զանձն քո ի բարութենէ, և զի այդ ընդունայնութիւն է և զբաղումն չար ..." Կարդ ոչ ապաքէն ի մեզ ի կրճնաւորս տեսանէ խնամատանս կանխաւ զայս ընդունայնութիւն. զի մի և ոչ կրկին մեք եմք ի մարմնական կեանս. որպէս ունելոյ՝ ըստ մարմնոյ և եղբայր՝ մեք հրաժարեցաք՝ ըստ հետ Աբրհատոսի հետևմանեալ. ընդէր, եղբարք, դարձաք վերստին ի զբաղումն չար, և ոչ յագեցուցանեմք զաչս մեր նանիր մեծութեամբ։ Ի ասեր թէ չունիմ՝ վասն այսորիկ յագեալ եմ, այլ զկամն գիտեացուք ըզմեր. զի թէ գոաներ զկերակուր մեծութեանն՝ ասէր բնաւ յագուրդ ունել մտափառութեանն սրտիցն թէ ոչ. կարծեմ և ոչ բնաւ, և զկարծիս ի փորձոյ հաստատեմ. զի որ պետաղատութեան և գՀնազանդութեան կեանս իւր մատնէ յերկիս և յաշխատութիւնս և ի ծուխ վասն Քրիստոսի գոանէրցէ, և ուրախ է, միայն զի այլոց իշխեսցէ, նա թէ և առանց աշխատութեան փառս և մեծութիւն գոանէր՝ յագեցուցանէր բնաւ զանկ կանոց իւրոց. ինձ թուի ոչ երբէք։ Տեսանեմ զի ամենեքեան անյագ եմք մեծութեամբ. վասն այսորիկ և գժուարաւ մատանեմք յաբբայութիւնն երկնից, որպէս ասաց տէրն. զի մեծատուն կամքն է և յաժարութիւնն, և ազքատ. վասն այսորիկ և նա երա-

1 Մի օրէն. Ընդօրինակ։

նեաց ոչ զսոսկ ազբատսն, այլ զՀոգւոյն. այսինքն որ Հոգւոյն բաղձանօք Թէ և 'ի մեծութիւն է 'ի խնարէն նկրտի, և Թէ ազբատ՝ զևս խնարհութիւն ազբատութեանն սիրէ, որով դիւրաւ զՔրիստոս գտանէ. խակ մեք ոչ այսպէս. այլ ազբատութեամբս անցագ եմք մեծութիւք, և միշտ յիշխանութիւն սիրեմք եղանել. խափանէ զմեզ միայն անպատեհութիւն հասակի և ընարհագ. Թէ յայս միտեմք լինել կատարեալ, վաղվաղակի իշխել այնց յօժարիմք. մինչև հնազանդեալ՝ զայլս հնազանդեցուցանել յանդուգն նատիմք։ Քրիստոս նախ մեզ ետ հնազանդեցաւ ' յօրինակ մեզ, և ապա իշխանութիւն նմա յերկինս և յերկրի տուաւ. և մեք նորան մանչկիք 'ի նպատակ հնազանդութեան և մնչուն բնաւ ոչ հայիմք, այլ միայն 'ի պատիւն բաղձամք. որք ոչ բնաւ ուսաք ընդ իշխանութեամբ կալ, իշխանութեան բաղձամք և լինիմք. և զինքդ կարացից ես զոք 'ի չնազանդութեան ուղղել, ընդ որ ես ոչ գիտացի ։ Քրիստոս փոձեցաւ, և ապա փոձանաւորացս օգնական եղև. ես յիմարս առանց փորձելոյ և ժամանակի՝ զնոյն գործ ձեռնարկեց լրբութեամբ խլեցի. որ զմեռաւ ածեալ զարմանամ ընդ Աստուծոյ 'ի վերայ իմ երկայնմտութիւն, զի զիմ զանաս առացից, ընդէր ոչ հնրբ կիզեալ նշուսկեցայ որ այսպիսի յանդգնութիւք 'ի գժտարին իշխանութիւն համարձակեցայ. վասն այսորիկ և ոչ կարացի ունել գործակից գտուողն սպառուցս՝ յորմէ բոնի յափշտակեցի, այլ կամելով առնել զնոյն հոգևորապէս՝ ծաղր կատակասոց լինելի յաչս տեսողացն. 'ի շատ իրս ձչմարտութեան կացուցեալ զոտս, օտար ամենեցունց ունել շուրիզ Թուէի. մինչ զնեալ Թուէի մնչգնելոյն վերՀիմնդրութեամբ օրինացն, այնու զի տեղի ետ այս 'ի վաղ ժամանակաց, և ազգք աւուրցս անծանօթ և անցագս են Թէ որ 'ի պէտս փառացն Աստուծոյ զգործս Աստուծոյ կատարէ. և կարճեն զայս՝ վասն զի զայսքան անհարթութեանս երեալ 'ի մէնջ տեսանեն։

Օ՞ր և Աստուած նախ տեսեալ աշխարհաց զարմացմանէ. եԹէ կրկին էիր, ասէ, ունելով եղբարս և

1 Մի օրին. խնարհեցաւ։

որպիս , հեբեալ երբ ձգելով զանձն ի վախս զբազմանց , զսա ընտանին ունելով զգումս պատճառ . իսկ յորժամ ի էս և ոչ կրկին , անօրդի ոչ ունելով կին , անեղբայր հրաժարեալդ ի տանէ , ընդեր տապիս ի զբաղումն , ընդեր տագնապիս յանձայուելութիւն , ընդ էր սակաւ պարենիս բաւականացեալդ ոչ առնես վախ Ձան վաստակոդ , ընդեր զանձնդ ի սուգ արկեալդ զունելդ տուող ոչ յադեցուցանես զակն քո ի մեծութեանն . ոմ ջանաս , ոմ նիւթես , ոմ ժողովես , ոյր ազագաս զրկես զանձն քո ի յաւիտենական բարութենէ յանցանաջք : Երդարև յընդունայնութիւն էս , ասէ , որպէս զմի ոք ի մոլորելոյն ի հեշտութիւն աշխարհի և ի զբաղումն չար . զի նոքա զբաղին և բզմարին պարարեն . քոդ է չար որ զբաղանօքդ և ի հեշտութենէ մարմնոդ ես որիշ , որ կոյս եղեր մարմնով , զի և հոգւով լինիցիս անհող . հոգիդ զբաղանօքդ ծառայեալ երերի , և մարմնդ անբանապէս կուսութիդ Ձնդի : Եէ գիտես , ասէ , զի ամենայն ինչ արար Երտուած բարի ի ժամանակի իւրում . և ժամանակ է ամենայն իրաց և սահման , այսինքն կուսին զտեառնն հոգալ , և ամուսնացելոյն զաշխարհի . նման աղօթիւք սրբել և ողորմութեամբ . կուսին զբանաւոր պատրաստն Երտուծոյ նուիրել , և սմա զմարմնաւորն . կոյս լինել զի հոգւով սուրբ լինի , և ամուսնացեալ՝ զի մարմնով . եթէ զբաղեցար կոյսդ յաշխարհի , ելեր ընդ քո բարի ժամանակն . եթէ ծիլեցար ի փառս , պրոպոդ սահմանի գտար . եթէ զլուծ հնազանդութեան արկեալ յերկիր կոխեցեր , անգուշեցեր սիրելոյն սմանց ցեալ . զգոյշ լեր զքո սահմանն Ձանալել . արժանն լեր զաշակերտութեան օրէնագ պահել , մի գուցէ ծանրացի սիրտ քո շուայտութեամբ և արբեցութեամբ և հոգւոք աշխարհականաջք , և յանկարծակի հասանիցէ ի վերայ օրն այն : Եր օր . այն որ իբրև զորոգայթ հասանիցէ ի վերայ ամենայն մարդկան որ բնակեալք են ընդ երեսս երկրի . այն՝ յորմէ եղբայրք ոչ փրկէ և ոչ մարդ , այլ վաստակքն : Ա աստակք որպիսիք . զոր Տէրս մարդ մեզ մարգարէս աւուրն պատրաստել ասելով՝ վաստակս յաւիտեան : Օ ինչ այլ , բայց թէ զոր ակրն մեր ուսոյց . Երթան կացէք , ասէ , և յամենայն ժամ

աղօթս արարէք ,, · զոր Պատիլ պատրուակաւ միայն վաստակել խրատեաց Յաւիտեան , սա երևեւթապէս մերկացոյց , և զաղօթս առնէին՝ վաստակ Յաւիտեան , և զայս ոչ վայրապար՝ այլ արձնամէմբ · Թերևս ՚ի բնաւորական կարծես քնոյ , ոչ երբեք , այլ ՚ի շուայտութենէ աշխարհի , յարբեցութենէն սիրոյ սորա և ՚ի մեռոի հոգւոյն զբաղմանց · յորժամ զայսպիսի քունս Թէ և ացուցանեմք ՚ի մէնջ , ապա Թէ կարեմք արթուն լինել և աղօթից պարապիլ · և պատուղ աղօթիցն զինչ · զերծանիլ ՚ի փորձանացն սատանայի և կալ յանվախ Ձան կեանն առաջի յոտոյն մերոյ Քհստոսի ՚Ի՚ն ։

Պպա այսպիսի հրամանօք վարժեալքս , եղբարք , այսքան լուսով պայծառացեալքս , սիրելիք , այսքան զգուշանալեամբ խրատեալ՝ կրճնակիցք , ջանասցուք ոչ նմջել զքուն զառ ՚ի մահ , զուն գործեսցուք ոչ յաղթիլ ՚ի Թշնամւոյն ։ ՊԹշ զէն ունի ՚ի ձեռս իւր զնաս փառաւթիւնն · զդոյշ լինցուք՝ որպէս հրաման ընկալաք՝ ոչ խոսիլ ՚ի հոգի · անմատչելի ունի վահան զրուայս տալ թիւն հեղգութեանն , արթուն լինցուք ոչ մոռանալ զիրկչին մերոյ պատուիրանս · խառար ունի ձգել ՚ի վերայ մեր զՏոգս աչխարհիս , Թօթափեալ զնոյն՝ զՏետոց լուսոյն շաւղաց հարցուք բուռն ։ ,, Լրեմ , որ գայ , ասէ , զինի իմ , ուրասցի զանձն ,, · իսկ մեք գոնէ զմտոի զբազումն աչխարհիս ուրասցուք , զնուարհուԹիւնն սիրելոլ ուր Պստուած հոգի , զՏեգութիւնն պատուելոլ՝ ուր նա հանդչի , զՏնազանդութիւն աղջուներելոլ՝ զոր նա ոչ առնէ անտես , սրբութիւն սրտի ստանալոլ՝ որով զՊստուած տեսանեմք ։ Եւ ընդ ացան հարցն մեր ընդ վայր · ոչ նանիր աչխատեցան այս ձեռս և կրծից աչխատողքն , ոչ վայրապար զրեցին որդւոցս բանսիսպատիկ խրատս · յաւետացուք աղաչեմ երբեմն երբեմն ՚ի վարս նոցա և ՚ի բանս , Թերևս ամնչեսցուք ընդ օտար մեր ընծայս և ընդ գործս · կացուցցուք միշտ ժամանակս ՚ի ձեռս է , զնպատակն դատաստան մերոյ առաջի աչաց և աչխարեսցուք ՚ , զի մի ՚ի ՚Քրիստոսէ յարդարն որ եդեալ ընդդէմ մեր դատապարտեսցեն զնոստանայն գժրոզքս , զձեռս նախատող-

1 Մի օրէն · Ասկաթեղոս ։

քըս , զօրինաց սրբոյն այսպանոգըս , զկամակար մնօք յանցաւորըս , զչնմարտութիւնն գիտութեամբ զայցոր-քըս . քանզի բանն Քրիստոսի և ձև զգեստուցս և գործք Հարցն՝ դատելոց է զդատապարտեալքս յաւուրն յետնում։

Այլ մեք այսքան սարսափելի իրաւանցս առաջի կա-յեալ , ընդ ծաղու զւօսանօք զիրկութեան աւուրըս անցուցանեմք , ընդ խեղկատակութեամբ զընդունելի ժամանակս ծախեմք , ընդ մտոտի փառաց զիրկութե օրս վատնեմք : Այի եղբարք , պատգամատրեալ Յու-տուծոյ Պօղոս աղաչէ զմեզ . “Յայտեմ , ասէ , վասն Քրիստոսի հաշտեցարուք ընդ Յստուծոյ ,, . և որ է հանապարհ հաշտութեն , ուստ մեզ առաքեալ : “ Ոչ իւիք , ասէ , տալ պատճառս , զի մի պատեսցի պաշ-տօնն . այլ յամենայնի ընծայեցուցեք զանձինս ձեր համբերութեամբ բազում 'ի նեղութիւնս , 'ի վիշտս , յաչխատութիւնս , 'ի սրբութիւն , 'ի հսկմունս , 'ի պահս սրբութեամբ , 'ի գիտութիւն երկայնամտութեամբ , 'ի քաղցրութեան , 'ի Հոգին սուրբ , 'ի սէր առանց կեղ-ծաւորութեան , 'ի բանս ճշմարտութեան , 'ի զօրու-թեան Յստուծոյ , վասն զինուն արդարութեան որ ընդ աջմէն և ընդ ահեկին է . փառաց և անարգու-թեամբ , գովութեամբ և պարսաւանաց ,, : Այդ զայն զէն արդարութեան տայէ Հոգին սուրբ Յստուծոյ 'ի ձեռս մեր . զփառս յաջմէ և զանարգանս յահեկէ վասն սէրոյն Քրիստոսի Տարկանել զգովութիւնս կո-խել , և պարսաւանացն զեր 'ի վերոյ ելեալ յանքոյթն ժամանել Հանդիստ առ սուրբ Հարսն մեր Հնորհօքն Քրիստոսի , որում փառք յաւիտեանս . ամէն։

ԻՆՉՊԵՍ ԽՈՐՀՈՒՐԴ ԴԱՐՁԵԼ, ՅՈՐՄԻՄ ԹԷ ԵՒ ՁՄԵՐ ԱՋԴԻՍ ՈՒՆԻՄՔ ԻՐԱՒՈՒՆՔԻՒՆ ԴԱՏԵԼ, ԵՒ ՈՉ ՁԱՁԱՆ

Այնր երբեմն երանելին Յոբ՝ տագնապեալ՝ի վըշտացն յաւելցուցանելոյ և՝ի բարեկամացն զԱստուծոյ արդարութեան զընկենոյց. «Աստաւրօք, եղբարք, և մի՛ ինչ լսցի անիրաւութիւն. դատաստան արդար դատեցարուք՝ի միջի ձերում՛,, . կուգեմ և ես հաւատալ նմին զեղբարս իմ դատաստանաւ ուղղել զիրաւունս Աստուծոյ մերոյ, մինչև եմք մնանեալ՝ի նորին աւետեանն անաչառ։ Աստեղացուք դատեցցուք, դատաւորք արդար դատաստան. նատցուք խնամարկութեամբ՝ի խնդրել զվրէժն Աստուծոյ, և մի՛ ինչ լսցի՝ի մէջ ձեր անիրաւութիւն։ Աչնմ իշխանութեան ծառայ Թագաւորին և պատուհասիչ՝ փոխանակ Տօմն՝ի գործն արքունի յետ մնալոյ զոք յիշխանական պատիւն իւր Տանել. է կարելի նմա զբազաքն արքունի՝ի ժառանգութեան որդւոյն գրել. Տամարձակելի է առանց փորձելոյ արքային զեղբայր իւր՝ի տէրունական աթոռն կարգել. ոչ ապաքէն զայս գործելով յինքն սեպհական նմ՛ զՏաւատացեալ գործն. և է այսուհետև ոչ ծառայ արքային և պատուոյ, այլ Տակառակամարտ նմին ինքն իշխան. Տարկ է այսուհետև Թագաւորին մնորհակից նմին եղանել որպէս Թշնամոյ. Թշնամի ոչ վայրապար, այլ չար առաւել, զի՛ի տանել բուսաւ և ոչ յարտաքնոյն. վերահասին գլուխ զաւէրն անգամնեաց, և զպատիւն յինքն գրաւեաց։ Աանաւկան է ընթացք օրինակիս յուսալ խորհրդոյս. ընդէր ոչ յարմարիլք գլուխս ընդ Քրիստոսի և պատուհասիչք նորոց կտակարանացս, Տաղարապետք տէրունի խորհրդոյն և զօրացն, և ոչ տեսլիք. այլ ալագաւ Տամարձակիլք յաջորդել զոք փոխանակ մեր առանց Տրամանի նորին ընտրութեանն։ Աչնա որպէս ընտրէ, ասիցես. այնոքիւք զոք վերհագոյն քո պատիւ ընկալան. քեզ բնաւ ոչ տուաւ այդ իշխանութիւն, զտէրունիսդ որպէս զանձին քո ունել. այլ

զինչ. Տարիւրապետ կարգէ Հազարապետան, և Հազարապետ դուքսն, իսկ դուքս արքային։ Ցուք տեղի չընծառութեանն՝ Հաւատական յարացուցիւս. եղեցի գնեմ օրինքս մեր որպէս զնաւորացն, որք յետ բարձր և անօսք գործ վերացաք. Ժառանգեցուցէ ըզքահանայ Ժողովրդեանն փոխանակ քո՝ զոր եպիսկոպոսն ընտրէ և մի զոր զուս։

Ազ քո՝ Աբրիտասի արեամբ գնեալ Ժողովրդդ. մի տար որդւոյն յետ մահու. ապա թէ ոչ, առ դատաւորին գնացեալ առնչես, որպէս արժէմ. իսկ զեպիսկոպոսութիւն՝ եպիսկոպոսապետն. և մի երագեր զօծումն ընտանւոյն. Աբրիտասի է աթոռն՝ ի պարտուն քեզ Հաւատացեալ, և ոչ Հայբենիս տուեալ. և զարքեպիսկոպոսութիւնն Աբրիտաս և նորին ընտրութիւնն, և ոչ մարդկային անհաւութիւնն։ Օ՛ի կարացուք այսպիսի ընտրութեամբ զօրաւորացս՝ մարտիկքս օրինօք մարտնչել, որպէս Հրամայն ընկալաք. զի կարացուք զանձինս սուրբ պահել յօտարացն մեզաց, միաբանց վահանակիցք լինել սպառազինքս և մի կործանիչք. միաբանց մարտակիցք և մի ընթացորիչք. չէ այդ օրէն Հակառակել զօրացն զևր զինակիցն սպանանել, այլ Հակառակարտին աթոյեան յառնել։ ԵՒս է այդ օրէն քրիստոնէից, զնզայրն կործանել, այլ ընդ ատտանալի զօրսն Հակառակաբար մարտնչել. զինչ այլ այսպիսի չար և ազգային կործանութեան, զի ստիպեմ կործանիլ ոչ յիմ մեղացն՝ այլ յօտարացն. ոչ յիմ սխալէն թշուառացեալ, այլ յեղբօրէն։ Ի. յս պրպէս. Պօղոս նախահօգակ Հոգւոյն մեզ ուսուցանէ. «Ձեռս վաղվաղակի յոյրոք վերայ մի դնիցես, և մի կցորդ լինիցիս մեղացն օտարաց»։ Ձեռանէս, զի որ սխալես զնս՝ ի վաղվաղել ձեռնադրութիւնս, ձգես՝ ի գուբ օտար մեզաց և ոչ յիմ. զնմանդ. քանզի ոչ փորձ ուսեալ զեղբայրն, օրինացն տեղեկութեան և անձին մաքրութեան, այլ տամ շուտափոյթ կանոք նմին զսպատիւն, կցորդիմ առ՝ ի նմանել մեզացն գործելոց. զի յինէն առ զնչխանութիւն պատուագելոց, զմեզս Թողոց, մկրտելոց, Հաղորդելոց. Թէ առ այսոսիկ անարժանութեամբ և հեղգութեամբ

1 Ա՛Ա. օրին. ձեռնադրան։

գնայ, ոչ ապաքէն ես կղօրդ եմ մեզասն որ Հաւատացի անսիրտ անձին զգործն Աստուծոյ. իբրև զբար մնատ կալար արքունի գանձուցն գտատպարտիմ։ Այլ ո՛չ որ զայս ստիպել մեզ առնել. օրհնէք ժառանգաւորութիւնն, ունել զվիճակս Հոգևորական պատուոյ. զի յայսմ մոլորեալքն զղջալ չկարտուիմեն. Հայրենիսն իմ է, ասէ, աշխոյն և եկեղեցին, զի մի օտարաց լծցի ի կեղակուր։ Ով անմտութեամբ. և զու կամ այն օտարն կարծեք վայրապար զայդ ուտել կերակուր. ոչ գիտեք թէ գատաւոր ունիմք որ գատելոց է խոյ առ խոյ և ոչխար առ ոչխար, ըստ որում ասէր առ քահանայս Նա բայելի Աստուա, այք ուտէին և ոչ փոյթ առնէին բեկմանն Ժողովրդեանն և Հոգևոյին։ Այն արդար իրաւունքն կայ մնայ և մեզ. Որում շատ տուաւ, ասէ, շատ խնդրեսցի ի նմանէ։ և այսմ ոչ Հաւատաս վասն մտոտի կենացս յոտոյ, անձամբ զանձն ի յաւիտեանս պատիժն ձգես։

Պարտ է Հաւատալ թէ կայ Աստուած, կայ և նորա արդար իրաւունք գատաստանի, և ոչ այսպէս անձնիշխան կամօք արտաքոյ օրինացն յանհոգս արշաւել, այլ տալ զԱստուծոյն Աստուծոյ, և ոչ զնորայն իբր զմեր սեպհական ունելոյն պանծալ։

Օ՜ինչ կամ որ բան բերէ զմեր կործանմունքս որ յայսմ մնանել յանցանացս գտաւ, կամ զնաթդ թէսի, կամ որպէս ի Հնամարտութիւն բանիցս՝ քանակէ, կամ երբ կարող է տանել ակամբ լծոյն, կամ զնաթդ ժպրհիմ պատմութեաբ զնիոյ մնաց տկարաց զպրացուցանել։ Այս էր ինձ զլուս լինելիս Հանդրիլ խնամատութիւն, քան այսպէս զնամանգ ժամանակիս ծնողոցս խոյտառակել։ Էր վասն. քանզի օգտի և ոչ ոք, ունկնդիրք բանիցս ոչ բնաւ, ապաշաւ զղջմանն ոչ ումեք. ծանրացուցցաք առ Հասարակ զնիրտս՝ զնանրութիւն խնդրել. ոչ բնաւ կամեցաք զբանչելի սրբոյն Հնամանել զշաւիղս, յանդիմանելով զմիմեանս որպէս զանամիտ՝ զատելութիւն յաւելուք։ Ասաց մի զանգատելոյն բանս. որ սերմանէրն ոչ միայն յերկինն բարի, այլ և ի վերայ փշոյն ուսոյց զմեզ սերմանել. իբրև փշոյք

1 Մի օրէն. Ուրդիսի Հմարտութիւն խնամքիս։

արդարև աշխարհական հոգւովք և պատրանօք մեծա-
թեան զառեալ ընդհ՚ն ի Հոգւոյն հեղձուցեալ՝ արա-
րած անպատուղ. գնելոյ և վաճառելոյ եղև եկեղեցիս
կրօսակ՝ ձրի ընդհ՚ացս սուրբ Հոգւոյն. չիք ուսումն ի
սա և ոչ վարդապետութիւն, որպէս լսեմք թէ առնէին
առաջինքն, և ոչ բնաւ գիտեն զայս գործ ինքեանց ա-
ռաջնորդք հարիւրաւոր: Այլ զայ յառաջ ի պատիւ
վանն Վրիստոսի, և ոչ պատուի յումեքէ իբր գնորին
պաշտօնեայ. կոթեաք ի խորհրդատան պատրանայ, ըն-
կղմեցյաք, ապիք մոլորութեան ի վեր քան զչլուխ
գեհաւարայց եկեղեցւոյ նաև բարձրացաւ. որպէս ի
խաւարէ, ի լոյս այնպէս յառնեմք ի մեր անհարթու-
թենէս յայլ աղգայ քրիստոնէից բարեկարգութիւնս:
Յամենայն տեղիս նոցա եկեղեցիք վիճակաւ տուեալ
եպիսկոպոսաց ժառանգութեամբ, պատշաճեալք ընդ
ձեռամբ նորին, ժողովուրդքն ընդ նոքօք, և այսպէս
արչաւի կարող էն՚ի վերջինս ժամանակ զանունն Վրիս-
տոսի մեծացուցանեն. և մեզ բնաւ և ոչ ուրեք եպիս-
կոպոսարան կամ աթոռ, և հնաբ ժողովրդոյ կապէնք
պատկութեամբ հովուացն ի ձեռս հեթանոսացն տը-
ւեալ: Ալեմ յանուանէ, զի մի թուեցայց վայրապար
շաղակրատել. ի Նաբելոն Աղեքսոնի քրիս-
տոնեայքն, ի Ամերզանդ Հռոմոյ հաւատոյն, Ա-
գիպ-
տոս, Ա-
լբաբիա, ի Պատմական հռչակաւոր եկեղեցիք
և բազմութիւն ժողովրդոյն ընդ ձեռամբ անօրինացն
ապստամբեալ պարտին գՏոգևարն պաշտօն. և մեք
ի ձեռն անմիտ առաջնորդաց օր ըստ օրէ ի տարու-
թիւն հարիւրաց տարիւք, և գղջալն ոչ բնաւ, կամ
հնաբ ելից, և չարաց փառամոլացն կարձումն: Այլ
լինիմք է որ ոչ նախանձի, որ արբեալ է որ ոչ գլարի,
որ խելագար է որ ոչ ի վերայ ճշմարտութեանս վտա-
կօք արտասուաց տապտապի. ընդ միով ձեռամբ մի
քրիստոնէից եկեղեցի, մին աղատ և միւսն ծառայ.
նա ի խաղաղութեան և սա ի խռովութեան. նա կե-
նեզեցին նստեալ գժողովրդն հովուէ, և սա յաշխար-
հըն շրջեալ՝ գնորհն վաճառէ և հարկս գանձուց իշ-
խանաց ժողովէ. Հռոմէ առաջին քան զմեզ և ա-
զատ, և Կարիք լեռնին և ազատ. և սորուկ սեպհական
Վրիստոսի ի ձեռն մեր միայն: Ասեն այս չարիք. ո

անիրաւութեան առնուտ՝ եթէ ոչ մերն տմարդութիւն, զի ոչ անաչառ իրաւամբք, այլ աչառանօք կաշառացն ընտրեմք զՅովհաննս, որք լինին վերնժնդիրք իւրեանց զրկանաց և ոչ Քրիստոսի օրինացն. տան զանձինս հարկաց, զի ոչ զգոյծն Աստուծոյ, այլ զիւր զահատն մեծարեմ. «Քրիստոս ասաց, բարեկամն արարէք ի մամոնայէ վասն երկրաւորացն», մեք երկնային ընդհացն ընտանեհատեմք վասն մամոնային. եղբարք, յորժամ այն նուաղի զինչ լինիցիմք. որ չարիկ ընկալեալ հանդուցանեն զմեր աշխատութիւնն յետ մնջոյ. վայ ինձ. որպէս թէ ի կարծիս ձգեցաք զՀանդերձեալ կեանացն յոյս, վասն այնորիկ անխոհիր ատեն մեզանչեմք. «Երկիցուք արբցուք, քանզի վաղիւ մեռանիմք»։ «Ի խաբէիք, ազաղակէ առաքեալ, ապականեն ըղբարս քաղցունս բանք չարք։ Օ՜ որ սերմանէ որ զնայն և հնձեսցէ. եթէ ի մարմին զապականութիւն, և թէ ի հոգի զկեանս յաւիտենից». ապա ընդէր սերմանեմք ի մարմին այսքան նախահոգութեամբ դաստիարակեալք, և սերմն չար քան զնարմնոյ հեշտութիւն։ «Ո՞ր պտղիկի, ասէ, յիւր մարմնին մեզանչէ». կարօղ է զարձեալ զոր յիւր մարմնին մեզաւ՝ իւրոյ մարմնոյն ձգնութեամբն վերստին բժշկել. քան որպէս արար կոյսն ազի պտղիկէն, վասն որոյ գրեաց զայս Պօղոս. իսկ որ Աստուած մեզանչէ և յօրհնս նորա, ո՞վ է որ աղօթեսցէ վասն նորա. «Ո՞վ եղբ տանն Հեղեայ, ասէ, ոչ բաւեցի զոհիւք և պատարագօք». այսինքն զի զօրինան իրամատուցին ինքնխոհանութեամբ առնուլ միս ի կաթնայէն. բայց մեզքն Դաւթի սպանութիւնն և պոռնկութիւնն՝ վաղվաղակի քաւեցաւ. և թէ պրպէս՝ ասելի է. որ շնայ կամ զրկէ՝ զնարմնին հեշտացոյց արատաբոյ օրինացն և զեղծարին տրտմեցոյց. նա որ շնայցաւ՝ յորժամ զղջանայ և տառապեցուցանէ զանձին Աստուծոյ զայն մարմնին որ հեշտացաւ, մարդասիրութիւնն Աստուծոյ նեղէ նման և թագաւ. և այն որ զբռկեաց՝ յորժամ զՕ՜ արեւսին գնդաւ ածէ, և դարձուցանէ, ի վերայ զրկելոյն զինչս իւր խնդրեալ նեբանի, ընդ նորա նեղելն և Աստուած նեղէ յանցանացն. և արարին տգա այսպէս պտուղ արժանի ապաշխարու-

1 Մի օրն. Եբրեից։

թեան ։ Ասայ որ զգանգ օրինացն Աստուծոյ՝ զոր արկին առաջին սուրբքն պարիսպ շուրջ զսուրբ վեհվեհեաւ՝ վասն իւրոց ախտին քակէ , ոչ իւր միայն եթող զձա- նապարհ յանցանացն , այլ և բազմոց որ գան վկնի նո- ա , որոց համարձակելի արար զնուա մեղացն իւր առաջ- նորդութեամբն , զիարդ քաւի մեզք այնպիսւոյն զո- հիւք և պատարագօք ։ բայց թէ զնոյն ցանգ զոր պա- տառեաց և կոխեաց՝ վերստին կալեալ պարսպէ ։ որպէս և պոռնիկին որ ձգնեցաւ , և զլիսոյն որ ողորմեցաւ , ըստ մեղացն արարեալ զապաշխարութիւն , այսպէս և սմա ըստ յանցանացն պիտոյ է ապաշխարութիւն , զպատա- ռեալ օրէնսն դարձեալ կարկատել և հնբել Աստ մե- զաք մեք և հարքն մեր ոչ ՚ի մարմնիս մեր՝ որ զղջմանբն քաւի , այլ յօրէնս Աստուծոյ , որպէս և տումն Հե- զեայ , յանցանքն՝ որ ոչ զոհիւք և պատարագօք քաւի ։ վասն այնորիկ հաճեցաւ Աստուած որպէս առ նոքօք զտապանարն , և առ մեզ զեհեղեցիս մեր մանանել յայլազգիս և ՚ի տումն Պատրոյ ։ սակայն մեր ըս չա- րիք այսու զերազանցեցաք քան զնոցայն , զի նոքա յետ մեծամեծ կործանմանն վաղվաղակի զղջացան և աղա- ղակեցին առ Աստուած , սակս որոյ և յաջորդեաց զա- ռաջորդութիւնն վրէժխնդիրն Աստուծոյ Ասանել ։ իսկ մեզ զղջումն յայսքան ընդերկարութիւն ժամանա- կացս և ամացս ոչ բնաւ , այլ օր ըստ օրէ ՚ի չարն նկերք- տիմք ։ Զար ասեմ՝ ոչ զնարմնոյս մեզս որ նեբելիւ է , այլ զբակաւսին օրինացն՝ որ առանց նեբողութեան ցուցաք , և բարձաք ամենևին քննութիւն կամ բարւոյն առա- ջարկութիւն , այլ միայն այլոց աղգաց նատիք դաստա- տրք ։ Ա բէժխնդիր Հաւատոյս և ազգիս նա անուանի ՚ի մէջ մեր և զովի յամենեցունց , որ զՀոռոմոց աղգն և զվրանգացն նախատէ ։ իսկ որ զմեր՝ իբրև զձե- րահաւաս Համարին և առ ոսն Հարեալ այսպանեն ։ Ա վ անանութեանն ։ և ոչ զուղիղն քննելոց և ըստ այսմ մնասին տան տեղի ։ Աղաւաղը , ընդեր խոչեալ զահանձս ոչ լսել զձայն Թովչի , և ոչ առնուլ դեղ ՚ի դեղատուէ իմաստնոյ ։ Ա ասն այսր խորհրդոյ զձեզ Հարցիկ , տուք հնձ պատասխանի ։ ՚ր ըստ Ձնմարիտ զԹոյ անուանի որդեսէր Հայր , այն որ միշտ զիւր որդին ընդ երեսն զո- վէ , Թէ այն որ զբարեաբեն որ ՚ի նմա կայ զանց արա-

բեալ, զնոսունս չարին ի մէջ բերել և խրատել ուղիղ զայլս ի մտիկանց՝ օրինակ առնուլ. և Թէպէտ և զբաժառելի մնասուին, ոչ քննել Հայրն, զոգուտ նմին խորհելով։ Ո՞չ տապաքէն յորժամ զովի Հայրն զզրկին, բարի և ուղիղ անուանեալով զնա՝ երկուս չարիս մեծամեծս ի նմա բուսուցանէ. առաջինն զկապուտութիւն, և յետ այնր զի ոչ Հանէ զչարն զոր ունի, Հօրն բանի Հատանեալ որ բարի նմին վկայեաց լինել. իսկ որ յանդիմանի՝ Հատանի ասացելոյն. "Յանդիմանելով յանդիմանեացես զեզբայր քո, և ոչ առցես վասն նորա մեղս ,,։ Երկրորդ՝ ոչ տապաքէն անմնուելութիւն և ամենևին Հօր և առաջնորդի Հոգւոյ՝ զնոր ազգն գովել և զօտարն յանդիմանել։ Եւ՝ զի՝ զի ոչ կարգեաց զնա Աստուած նմին վերակացու և ուսուցիչ, և ես յորժամ ըստ իմ չարին ելանեմ անմնուելութիւն է. երկրորդ՝ զի Թշնամելեացն ախտս ի մէջ ածէ, յորժամ ես զՀոռոմն բամբասեմ, Թէ և ուղիղ ասեմ. Թշնամելեացն ախտին տայ զխրատն, և ոչ բնդունի և տայ բանիցն ի չանձն տեղի, և զնի ի Նանիր իմ աշխատութիւնն և խրատն զայ Թակղութիւն. պատ էր նախ առաջին զԹշնամելեացն բժշկել, և ապա սիրով և աղեկիզութեամբ խրատել, և Թէ այնուհետև տայր բանիցն տեղի։ Երկրորդ՝ զի յորժամ խրատեմ, զնս և զնմն ազգ, ասէ, նախ ուղղել, և ապա առ հնգեն ձեռն ձգել. ապա ուրեմն մնասի և ունայն է զայլ ազգ խրատել մեզ. զի որովհետև Հակառակութիւնս ի մէջ է, Թշնամելեացն տան և ոչ սիրոյ, բամբասանք Համարին և ոչ խրատ։

Անուանդ զի և որք խօսեալ են առ նս այսպիսի օրինակաւ՝ տեսանելեք զկրութիւնս. ոչ տապաքէն յորժամ խրատեմ զայլ ազգս, ասէ ցիս տէրն իմ. կեղծաւոր, նախ ի քում ականդ այսինքն ի ժողովրդենդ Հանն զգերանդ. յայտ է ամենայն իրօք Թէ անօգուտ և աւելորդ է մեզ խրատել կամ ջանալ ուղղել զայլ ազգ և կամ ի սէտս այսորիկ զկրութիւնս առնել. մանաւանդ զի և բամբասանք եւանկ յանդիմանութիւնն, և ասողին ի զատապարտութիւն. իսկ յորժամ առ մեզ պահելեք զխրատս և զսաստս, ի նեղբոյ օրինացն

1 Մի օրին. Մահմանացուաց։

նահանջիմք որ ասէ . “Վա՛ս կացուցի զքեզ որպէս մար-
գոյ զգուշացուցանել զնա չկնէն ,, . և դարձեալ , “Այ
է ինձ թէ ոչ աւետասանեմ . եթէ կամիս զայն առ-
նեմ՝ վարձք են ինձ , և եթէ ակամայ՝ անաւետութիւն
յանձն է ինձ ,, : Որ զաւետասանութիւնս և զգու-
շութիւնս գովելեաւն ազգիս ասնել և ոչ պարսաւանք
և յանդիմանութի՛ որ մարգարէ կամ առաքեալ խրա-
տէ զմեզ առ այս : Այսպէ՛ , որ զիշխանս ազգին իւրոյ
իշխանք Աղամայեաց կոչեաց , և զժողովուրդն Աման-
բայիք . թէ Դատեցէ՛ որ ազգ չար և դառնացող գնասս
անուանեաց . թէ Սոդոմեա՛ որ խորհրդակցեալ և թիւր .
թէ Հղեկիել՛ որ զԱղոտմ արգարացուցեալ առեր Նա-
բայելի . “Ո՛չ չարեաք քո , ասէ , արդարացաւ քոյրն քո
Սոդոմ ,, . Նա և բոլոր գունդ մարգարէիցն այսպէս գնա-
յին : Երկինքիմ և ի սուտ մարգարէից շաւղացն ոչք ըզ-
խաղաղութիւն մարգարէականին Նարայելի , և ոչ գոյր
խաղաղութիւն . և յեղջերայն Հզեկիայ որով Հար-
կաներ ընդ այլազգեացն և զվատագոյնն Ձմարտութե՛
զՍիբեաս : Տէր մեր թէ գովելի էր լեալ Նարայելի՝
երբ էր խաչեալ և նա ոչ զբարի ասացն մարդկան սուտ
մարգարէից Հարցն Համեմատեաց . և ամենևին օտար
է ի Ձմարտութեանն շաւղաց՝ առաջնորդի գովել զազգ
իւր և զժողովուրդ . իսկ զօտարսն ի պէտս նոցա Նա-
ւացի , որպէս զի ի նախանձ բարւոյ զնոսա շարժեսցէ ,
որպէս և արար զայս Ներհատոս , զՁիբեաս և զՍիդոն
առ ի կշտամբանս քաղաքացն՝ զորս ոչ կարաց մեծամեծ
գործովքն ուղղել :

Զայս մի՛ ոք Հարկեցուսցէ զմեզ զարտուղի ի Հայրե-
նի շաւղացն գնալ , որպէս երբեմն ժողովուրդն Նարայե-
լի զմարգարէին՝ խաղաղութիւն ասէն մեզ մարգարէա-
յիք : Այսպէս ասէն և այժմ բազումք . զբո ազգս գո-
վեա և զօտարն բամբասեա . եթէ բամբասող եմ՝ և
զօտարն և զնոս բամբասելովս մեղանչեմ . ապա թէ
յանդիմանութեամբս՝ Չան իմ ուղղութեան է , յոր-
ժամ զնոս տիրապէս ուղեմ՝ ապա Հարկաւոր է
ինձ նոցին քարոզ լինել . իսկ ձերդ խնդիրք այսպէս է՝
զոր օրինակ թէ ասէ մանուկ ցՀայրն , միշտ գովեա զնա ,

1 Մի օրէն . Յովհաննէսէ :

և զայլս յանդիմանեա և խրատեա . իսկ նա անմոռաբեմ մանկանն հանդերձ զինդիրսն , որպէս և յուսանել կանխաւ օրինակն :

Ա՛րդ յորժամ գովեմ զազգս որպէս հրամայէք , չնմանիմ լինել սոցին վկայեմ: իսկ յորժամ աշակերտեցն ի վարդապետէն ի թիւրն վկայութիւն առնուն , երբ բնաւ զուղղեն ախորժէն . մանաւանդ և հպարտանան : Ա՛յլասեն , մի զմեզ յանդիմանելով՝ զայլ ազգս գովեր . և ապա որպէս լինի յանդիմանութիւնս հաւանական , թէ ոչ ակնհարև օրինակօքն կսկծեցուացոք . բայց ի նմ այլ բազմապատիկ չարիք ասեն գոյ , յորմէ մեք սուբբ եմք . բարւոք թէ ես : Ա՛ռ ես երբ զչարիսն ի մէջ առեալ՝ ամմ ասեմ նմանիլ , կամ երբ կարգեցայ նոցին չարեացն քննիչ . զբարիսն զոյս ունին դնեմ առաջի , զայս ընկալեալ գովեսցուք և օգտեսցուք . զմեզս նոցա թէ զօր հանապազ բամբասեմք , զինչ մեզ առաւելու թիւն կամ նոցին օգուտ . իսկ ի մերս բամբասելոյ և յանդիմանելոյ բազում օգուտ . նախ զի անաչառ լինցուք ի յուսուցանելս և մի մարդահաճոյ դատիցիմք Ա՛ստուծոյ . երկրորդ՝ զի որ խնամատարեան են վինանկեալ , ոչ համարի զնս յանդիմանելովս և յուղղութիւն ջանալովս՝ խիստ ազգիս թէնամի , այլ բժիշկ վիրացն , քննիչ և յառաջդիմութիւն փութացուղ . զի թէ չպինաս պատիւ էաք ըստ մարմնոյ և հոգւոյ քան զամենայն ազգս , հաւանաբար գիտէ խնամատարն թէ իմ կամ էր զի և ես ընդ նոսա լինէի : Երրորդ՝ զի թէ գովեմ , ապա ոչ եմ դէտ և զգուշացուիչ , այլ գովող և պատուիչ . և յետ այնորիկ որպէս կարելի զգուշանալ՝ յորժամ ոչ ազգի սոցա : Չորրորդ՝ զի զիմ ազգս գովելով և զայլս բամբասելով՝ անձնահաճութեան տամ կարծիս և ամբարտաւանութեան . ոչ բնաւ խոնարհիմ օգտի յորոց առ նոսա բարեպաշտութեանց : Հինգերորդ՝ զի զոսոսա բամբասելով և նախատելով , յանդիմանիչ անտանելիմ և ատելիչ . իսկ զնոսա՝ դատարկաբան և բամբասող , ընդ որոց հանապա պահանջիմ տալ առաջի դատաստանին Ա՛ստուծոյ : Ա՛ եցերորդ՝ զի թէ զոր առ նոսա բարին յայտնեմ , և զմերս չար պատրուակեմ , Հայայի բարբառով վայիս հարկանել զդէմս իմ. “Ա՛յ որ ասէ զչարն բարի և զբարին չար , որ դնէ

գնասարն լայն և զլայն խաւար ... : Աղօթեցերբդ՝ զի թէ յանդիմանութիւնս թիւս թիւր է, ասէ, կամ՝ ի նուաս զբարն եմ գոլել զոր ունին և ոչ զբարին, որպէս զվանաստա-կան որ խաւնէ զջուրն ընդ գինին զտախմ. ապա թէ մեր յանդիմանութիւնս ուղիղ է, և զնոցա ուղղութինն ցուցեալ եմ ոչ վայրապար, այլ մեզ առ բարին զար-թուցիչ, որ զմեզ առ ի սոյն մեղադրէ՝ յայտ է թէ զազատութիւնս զոր ունիմք ի Քրիստոս՝ ծառայ չա-նայ առնել ախտին իւրոյ . որում՝ ոչ բնաւ անուանք և ոչ ժամանակ մի , ունելով առ ի սոյն զերջանկին Պօ-ղոս ապացոյց . այլ ասացաք զօրինս Աստուծոյ , հաս-տատեցաք և վկայութեամբ այլոց ազգաց , որք ունին զնոյն այսօր և կատարեն առաջի մեր . ունիմք վկայ մեր ի սոյն յանցանացն զխիղճ մտաց իւրաքանչիւրոցս . Թէ անգամանի այս ի մէնջ և յառաջնորդաց մերոց, յեր-կուց և յերից վկայիչ հաստատեալ զատապարտիմք . այսինքն յօտարացն և ի մերայնոցն վկայ լինելոցս և ի խղճէ, մտաց իւրաքանչիւրոցս . և այնուհետև չէք պատ-ճառ վասն մերացս մերոց , որպէս ասաց ուրեմն Քրիս-տոս :

Այսպա եղբարք , զարթիցուք զգաստացուք մինչ-դեռ ունիմք ժամանակս ընդունելի և զօրս փրկութե՛, և մի զկեանս յայլոց գատերն ծախելով անօգուտ՝ մեր գատաստանն չափով նորին անաչառն Աստուծոյ յատեան չափել . " Որով չափով , ասէ , չափիք , չափեսցի ձեզ ... : Այլ գատեցարջ զանձինս՝ որք ոչ կարգեցաք այլոց գա-տաւոր կամ ուսուցիչ . իսկ որք յայս վերացան ասաք-Ջան , յետ զանձն գատելոյ ձգտեցուցաք զբնութեան ի տունն մեր և յաղքս , և մի յօտարս. այլ ի սուս զորս և գատելովն օգտեցուցանել կարեմք . և քննեալ ծանիր-ցուք զայսբան բիւրապատիկ արհամարհութիւն օրի-նացս , զորս գտաք և գտանեմք , և երբեք յուղղին ոչ ջանամք . Եր վասն . զի միշտ զմեզ գոլեմք առանց զգործան կշռելոյ , անխրատ ձեացեալ յատաքելոյ որ ասէ . " Օ գործս իւր կշռեսցէ իւրաքանչիւր որ ... և ապա զինչ . " անձնին իւրամբ տացէ պարծանս և մի առ ընկե-րան ... : Որքան գտանիմք աղեխոց արժանի , որք ա-նանց զգործս կշռելոյ պարծիմք ի վերայ ընկերացն . և թէ կշռեցաք , երբ տեսաք զմերն քան զնոցայն գերա-

զանց . որք զօրինս կոխեցաք՝ զորս նոքա պահէին այսօր հաստատուն . որք ըստ մեզոյ մերոյ տարապրեցաք ՚ի հայրենի աշխարհէն՝ յորս նոքա վայելէին . որք նախ ղՅայրապետութիւնն և ապա զամենայն եկեղեցիս գրաւեցաք ընդ ժառանգութիւր , յորս նոքա վիճակաւ ընտրեալ եան կարգին . որք բարձաք զայգեբերթիւնն եպիս կոպոսաց ՚ի ժողովրդոց , որոց նոքա արդ և Հովուէն . որք սահմանեալ զերկն Աստուծոյ ընդ երկիւղիւ գրաւեալ յեկեղեցւոյ սրբոյ ասպաքս ելաք , ՚ի յորս նոքա աղօթեն . որք փակեցաք զդիտութիւնն յուսոյ և սիրոյն Աստուծոյ ժողովրդոց , զորս նոքա փեռեկեն . որք բարձաք զզրաշնութիւն ասելիացոյ յեկեղեցւոյ , որովք նոքա միշտ պարէն . որք լուծաք զքեմ օրհնութեանն կրօնաւորութեանս կարգի , որով նոքա միշտ հնքեն . որք բաժանեցաք ՚ի հաւատարմութենէն տճկից , որովք նոքա կցորդին . որք արհամարհեցաք զաբեձիւթիւնն եկեղեցական զգեստուց , որովք նոքա ՚ի փառս Աստուծոյ զարդարին . որք խորեցաք զաբարածս Աստուծոյ հրեաբար , զորս նոքա աղօթիւքն սրբեն ։

Այս ամենայն առ օրինս Աստուծոյ է մեզանչական նութիւն , և ոչ ՚ի մարմինս մեր կամ յանձինս . հաստատակաց ազգիս մերոյ , և ոչ ումեմն վասն տկար հնչութեան հաձելի , և ումեմն վասն պարկեշտութեան խոտելի ։ Օ այսոսիկ յորժամ կշռեալ որ յիւրմէ կողմանէն պահաս գտանէ , զնմանէ ՚ի վերայ լի և անթեր ի ունողին պարծել ժպրէի , որ ոչ և յումենէ հրամանս էառ պարծիլ , այլ միայն անձին տալ պարծանս և ոչ առ ընկերսն ։ Այս բանիւ ասողական նեաւ մեր զմեզ խոցոտեացուն , որպէս զի վիրաբոյն բժշկեցուք յետ տրտմութեան ։ “ Խրատ , ասէ , առ ժամանակին տրտմութիւն է , բայց յետոյ պտուղ խաղաղութեան նուաստ կրթելոցն հատուցանի յարդարութիւն ,, ։ Այս և քրիստ նութիւն մեր աստէն առ մեզ ձնարհակեսցի , հաւատոյ՝ ինձ գտանէ կերակուր որով բորբոքի , թերևս և ուսուել զնոյն զօրեսցէ . բայց այժմ ոչ ինամ այսմ լինել , քանզի զատանին գտաք Հոյակապքս կանխաս զկորսուեանն ։ Աստուծոյ ամենայն ինչ հնարաւոր է , որ զի-

1 Մի՛ օրին . հատոր Բ։

տէ զձեռն իւր բարձրացուցանել, յորժամ մարդկային հնարք վերջանայ առ՝ի վրկութիւն։ Օրըց զգրուռնս աղօթիւք բախեալ զողորմութեանն, աստանօր կինքեմք զընթացս բանիս՝ի փառս անուան նորա սրբոյ. յորս ապաւինեալ բուռն հարաք, և նուաճ զօրացեալ կատաբեցաք Քրիստոսիւ Յիսուսիւ տերամբ մերով և Հո-գւովն նորա սրբով, որում յերկնաւորացն վերից և յամենայն ազգաց քրիստոնէից և՝ի մէնջ հայասեռից, համբուրիւ սիրոյս և միութեամբ հոգւոյս, անարժանիս բերանով փառք պատիւ և իշխանութիւն, այժմ և յեկեղեցին անպրանկաց յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՆՈՐՈՆ

ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԵՍԻ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Յ30 բանիւ և աստուածային օրինադրութիւնք՝ սպա-
սաւորութեան մնաց և ձեռին իմոյ Թշուառ Կերսէսի
ասացաւ ի Հոգւոյն Սրտուծոյ ի նախադրեալ Թուա-
կանդ՝ վեցհարիւր քսան և վեցին, և ի ժամանակ կե-
նաց մերոց մինչ էի քսան և չորս ամաց, և կայի ի լու-
թեան և միայնութեան ի մէջ լերանցն Տօրոսի, հակ յետ
ամաց ինչ դարձեալ յաճախ կենդեցական պատուոյ, և ի
մարմնական հոգածոյ ըստացուածս և ցհնուր տուչութեան սրտի
իմոյ որ ի բանիւն յուսայ՝ հնարիւք և յայլ բազմագիտ
և բան ի զրօսն գիտասիրեաց և անկատարացն այս.
քանզի մի անգամ և երիցս Տանի զսոյն յասեան և ի
ժողովս եպիսկոպոսաց և իշխանաց, և ոչ եղև պատաս-
պանի գոնէ ընդ երցման կամ անկդրութեան, Այլ
ի սոյն ժամանակս ի Թուականութեանս վեցհարիւր
և յերեսուն և վեցին յաւիտենական սուրբ քաղաքն
Յրուսադէմ ի Մաւրքաց ազգէ, և եկեղեցականքն և
իշխանքն որք սպասաւորին սուրբ տեղացն՝ գերե-
ցան. և Համբաւս այս Հասեալ յարևմուտս՝ զենաս
ազգին Թագաւորաց և իշխանաց՝ ըստ հրամանի Հռով-
մայ հայրապետին շարժեալ գալ յայս աշխարհ. և
մինչ նոքա հեղուին անթիւ բազմութիւնք նաւաք ի
ծովէ անտի ի Պաղեստիդեայ, ի Թուականութեան ի
վեցհարիւր յերեսուն և ութին, յղեաց իշխողս մեր
մեծ Լևոն զմեզ առ կաթուղիկոսն սուրբ տեր Պետ-
րոս յանուն հայրապետական որ կոչի Հռոմի կլայ ի
վերայ Յորիատայ. և ի գնալ մեր յաւուրս պենտակոս-

առէից յայսկոյս Աարաչայ, յարձակեցան ի վերայ մեր Թաւրքաց Աորը, և սրով ձարակէին զարս ընդ մեզ կռո-
նատորք և աշխարհականք՝ ոչխք իրրև քսան. յայնըժ-
ամակէցին ընդ այլ կինսն և զբեանքս, ի վերայ պրպ
սպայի անախեղաթ չտնելով զհատասարն։ Յակ ապա ի
տեսանելն զթուրեանն Աստուծոյ ի թուին վեց-
հարիւր քառասուն և մէկ, քննեալ սար վանձառեալ
էին՝ զարձուցաք զսոյն ի գերութենէն. քանզի գտա-
ի գառատն չ աշխոյ, և սատարութեամբ եպիսկոպոսի
գառատին Աբեսեսի և Աղգանայ արգանայ կրծատորի՝ ածաւ սոյն
առ իս վերստին, և եղև վշտակնեալ ոգւոյ իմոյ մեծ
սիսիանք և միխթարութիւնք, և առ Աստուած երկրը-
պագութեան գոհութիւն։ Փառք ամենասորը Ար-
ղորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

1 Մի օրն. Բ-ճանաչ։



ՀԱՅԿ. ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԾՈՒՆՂԱՄԵՅՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

6-36
557
1187

ՄՏՈՒԳՎԱԾ Է 1971 Թ.

